ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Նվիրվում է Արցախի պետական համալսարանի*
*հիմնադրման 50-ամյակին*

# ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

## ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ 7 (7)

*Աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ բ.գ.թ., դոցենտ,*
*ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Արմեն Յուրիկի Սարգսյանի*

Ստեփանակերտ
2022

ՀՏԴ 398
ԳՄԴ 82.3
Ա 948

*Տպագրվում է Արցախի պետական համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ*

***Խմբագրական խորհուրդ*** - Սարգսյան Ա. Յու. (նախագահ),
Դավթյան Ն. Ռ., Հարությունյան Ե.Լ., Հովհաննիսյան Լ. Լ.,
Մարգարյան Լ. Գ., Մինասյան Շ. Մ., Սաղյան Շ. Պ., Սառաջյան Զ.Գ.

***Հատորի պատասխանատուներ*** – Մարգարյան Լ.Գ.
Մինասյան Շ.Մ.

Արցախի ժողովրդագիտություն.-Ստեփանակերտ: Արցախի պետական
Ա 948 համալսարան, 2022. Հատոր 7(7): Բանահյուսություն. - 736 էջ:

*Մատենաշարը ներառում է Արցախի ժողովրդագիտության երեք բնագավառներին՝ ազգագրությանը, բանահյուսությանն ու բարբառին վերաբերող և առնչվող այն հիմնական նյութերը, որոնք գրառվել ու հրատարակվել են 19-րդ դարի կեսերից առ այսօր կամ դեռևս ձեռագիր վիճակում պահվում են տարբեր արխիվներում ու թանգարաններում:*

*Յոթերորդ՝ սույն հատորում ընդգրկված են բանահավաք Մարգարիտա Գրիգորյան-Սպանդարյանի՝ 1922-1953 թվականներին Շուշուց եւ Արցախի այլ բնակավայրերից հավաքած հեքիաթները: Ներածական մասում ներկայացվում է Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրության պատմությունը:*

ՀՏԴ 398
ԳՄԴ 82.3

ISBN 978-9939-1-1495-8

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

***«Արցախի ժողովրդագիտություն»*** մատենաշարը, որը հիմնադրվել է Արցախի պետական համալսարանի գիտխորհրդի որոշմամբ և նվիրվում է մայր բուհի հիմնադրման 50-ամյակին, ընդգրկում է Արցախի ժողովրդագիտության երեք բնագավառներին՝ ազգագրությանը, բանահյուսությանն ու բարբառին վերաբերող և առնչվող այն հիմնական ուսումնասիրությունները, աշխատությունները, ժողովածուները, հոդվածները, գիտական զեկուցումները, ճանապարհորդական նոթերը, հուշագրությունները և այլ նյութերը, որոնք գրառվել ու հրատարակվել են հայ և օտարազգի տարբեր ազգագրագետների, բանագետների ու բանահավաքների, բարբառագետների, այլ բնագավառների գիտնականների, հասարակական ու եկեղեցական գործիչների, ճանապարհորդների, գրողների, Շուշի քաղաքի և որոշ գյուղերի ուսումնական հաստատությունների ուսուցիչների ու տեսուչների կողմից 19-րդ դարի կեսերից առ այսօր:

Յուրաքանչյուր բնագավառին վերաբերող առաջին հատորի առաջաբանում տրվում է տվյալ բնագավառի նյութերի գրառման, հրատարակման և ուսումնասիրության պատմությունը, իսկ եզրափակող հատորի վերջում՝ ամբողջական մատենագիտական ցանկը՝ ամփոփ նկարագրություններով:

Նյութերը կներկայացվում են որոշակի խմբագրությամբ և սրբագրությամբ՝ ընդհանուր առմամբ պահպանելով հեղինակների տառադարձությունը: Բնօրինակներում ընդգրկված լուսանկարները, այլ բնույթի պատկերները, վերջում տրված ցանկերը հատորաշարում հիմնականում չեն ներառվում:

Մատենաշարի յոթերորդ՝ սույն հատորում (նախորդ վեց հատորներում ներկայացվել են ազգագրական նյութերը), որը բանահյուսությանը նվիրված առաջին հատորն է, ընդգրկված են բանահավաք Մարգարիտա Գրիգորյան-Սպանդարյանի՝ 1922-1953 թվականներին Շուշից եւ Արցախի այլ բնակավայրերից հավաքած ու հրատարակած ***(«Հայ ժողովրդական հեքիաթներ», հ.V** (Բնագիրը և ծանոթագրությունները Ա. Նազինյանի և Մ. Գրիգորյանի (Սպանդարյան), նախաբանը գրեց Ա. Նազինյանը), 758 էջ)* հեքիաթները:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդական բանահյուսության հարուստ ժառանգության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Արցախը, որի արմատները թաղված են խոր հնադարում: Լինելով հարազատ ժողովրդի մտքի ու հոգու վառ արտահայտություններ՝ ժողովրդական տարբեր ժանրերի ստեղծագործությունները մշտապես ուղեկցել են արցախահայությանը՝ ներկայացնելով նրա նիստն ու կացը, հոգեկան ապրումներն ու երեւակայությունը, անցյալն ու ներկան՝ հաճախ լուսաբանելով մի շարք հարցեր, որոնք պատմության եւ այլ գիտությունների համար անլուծելի են: Դժբախտաբար, հազարամյակների ընթացքում ստեղծված ճոխ բանահյուսության միայն մի մասն է մեզ հասել՝ ժամանակին գրի չառնվելու պատճառով:

Արցախյան ժողովրդական ստեղծագործությունների հավաքմանն առաջին անգամ ձեռնամուխ են լինում ժամանակի շուշեցի նշանավոր մտավորականներ Առաքել, Ալեքսանդր եւ Գրիգոր Բահաթրյանները, ովքեր 1860թ. մայիսի 6-ից օգոստոսի 6-ը Շուշիում գրի են առնում հեքիաթներ, զրույցներ, անեկդոտներ, խաղիկներ: Այդ գրառումներում առանձնապես արժեքավոր են հեքիաթները, որոնք ընդհանրապես հայկական հեքիաթների գրառման անդրանիկ նմուշներն են: Սակայն Բահաթրյանները որեւէ վկայություն չեն թողել բանասացների ու գրառման վայրի մասին, ինչը կասկածելի է դարձնում դրանց՝ անմիջապես բանասացից, թե հիշողությամբ վերարտադրելու միջոցով գրառվելու հանգամանքը: Հավաքածուի բնագրի մեջ պահպանված է *«Հաքյաթին ընտրությունը»* խորհրդածությունը, որտեղ ասվում է. *«Հաքյաթին ընտրությունը էն ա, որ մին հաքյաթի մեջի տուրուստ պան ինի: Հաքյաթեն ամենը սոտ պանէր ա, ուրուր քցած, էրկանացրած: Ամմա կյիրիլիս վախտը հինչ ինի, պետում ա կյիրենքյ: Բայց մունք մեր խելքին ընորա պետում ա փռնըքընենք, տեսնանք՝ որըն ա լափ շինովի, որըն ա ճշմարիտից մոտի, որըն ա լափ ճշմարիտ»*[1]:

Իրենց պակասություններով հանդերձ՝ այս հեքիաթները բովանդակության եւ պատմելաձեւի տեսակետից մեծ արժեք ունեն, մանավանդ, եթե

[1] *Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երեւան, 1973, էջ 706*

հաշվի առնենք այդ ժամանակի բանահավաքչական աշխատանքների ընթացքը եւ մակարդակը:

Դեռեւս 19-րդ դարի 70-ական թվականներին, ձեռնամուխ լինելով հայ բանահյուսության գրառմանը, երիտասարդ բանահավաք, հրատարակիչ Տիգրան Նավասարդյանը հրապարակավ դիմում է հայ հասարակությանը՝ կոչ անելով փրկելու եւ հրատարակելու ժողովրդի հոգեւոր մշակույթի գանձերը[1]: Արձագանքելով այդ կոչին՝ Առաքել Բահաթրյանը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում պաշտոնավարելիս (1881- 1882թթ.) նրան է հանձնում վերոհիշյալ գրառումները, որոնք մասամբ տպագրվում են Տ.Նավասարդյանի կողմից[2], իսկ ամբողջությամբ՝ 1973 թվականին[3]:

Ընդհանուր առմամբ, Նավասարդյանի կոչը լայն արձագանք է գտնում հայ մտավորականների շրջանում: Շուշու թեմական դպրոցի շրջանավարտ, Վարանդայի (ներկայումս՝ Մարտունու) Նոր շեն գյուղի ուսուցիչ Միքայել Տեր-Հովհաննիսյանը գրի է առնում մի շարք հեքիաթներ, հանելուկներ, երգեր, անեծք-օրհնանքներ, առած-ասացվածքներ եւ այլ ժանրերի նմուշներ՝ ուղարկելով Տ.Նավասարդյանին, ով դրանց մեծ մասը հրատարակում է[4], իսկ որոշ նյութեր հրատարակվում են 20-րդ դարի 70-ական թվականներին[5]: Ուշագրավ է այն փաստը, որ բանահավաքը իր նյութերին կցել է նաեւ ազգագրական բովանդակությամբ բարբառային բառերի բառարան:

Բահաթրյանների, Մ. Տեր-Հովհաննիսյանի ձեռագրերը, ինչպես նաև Հարություն Թավրիզյանի՝ Շուշու խոսվածքով Մոսկվայում գրառած հեքիաթներն ու այլ բանահավաքների որոշ գրառումներ պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի Տ. Նավասարդյանի ֆոնդում:

Այս շրջանում լայն տարածում է ստանում երգիծական ժանրի ստեղծագործությունների հավաքումը: Գալուստ Շերմազանյանը առաջին անգամ հավաքում եւ հրատարակում է Արցախի նշանավոր զվարճախոս

---

[1] *«Մշակ», 1882, N 4, 222, 1883, N 79, 1884, N 10, 1890, N 109*

[2] *Նավասարդեան Տ., Հայ ժողովրդական հեքիաթներ, պրակ 8, 9, 10, Թիֆլիս, 1894, 1902,1903*

[3] *Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երեւան, 1973*

[4] *Նավասարդեան Տ., Հայ ժողովրդական հեքիաթներ, պրակ 1, Վաղարշապատ, 1882*

[5] *Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական մանկական երգեր ու խաղերգեր, Երեւան, 1970, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երեւան, 1973*

Պըլը-Պուղու, ինչպես նաեւ Արցախում ապրած եւ գործած պատմական որոշ դեմքերի ու դեպքերի շուրջ ստեղծված զրույցները[1], որոնք հեղինակի կողմից ենթարկվել են որոշակի մշակման եւ չունեն գրառման հանգամանքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ: Հեղինակը մինչեւ այդ տպագրել էր նաեւ *«Ասրի բէգ և Գիքի»* պիեսը[2]՝ այն համարելով Ղարաբաղի բարբառով գրված, բայց իրականում ե՛ւ գրվածքի լեզուն, ե՛ւ բացատրությունները կիսագրական են, եղած բարբառայինն էլ՝ ավելի շուտ Ջուղայի բարբառով[3]:

Արցախի բանահյուսության հավաքման ու հրատարակման գործում նշանակալից է Մակար Բարխուդարյանի դերը: Քաջատեղյակ լինելով մայրենի բարբառին եւ շրջելով պատմական Արցախը՝ նա գրառել է տարբեր ժանրերի նմուշներ, հատկապես ավանդություններ, զրույցներ, առած-ասացվածքներ, հանելուկներ՝ դրանք ամփոփելով *«Բարոյական, առածներ»* ժողովածուում[4]: 1883 թվականին հրատարակվում է նրա *«Պըլը Պուղի»* ժողովածուն, որն ընդգրկում է զվարճախոսի շուրջը ստեղծված բանահյուսությունը[5]: Ժողովածուն ունի առաջաբան, որտեղ ներկայացվում է Պըլը-Պուղու կենսագրությունը, ինչպես նաեւ քերականական ծանոթագրություններ եւ բառարան: Միաժամանակ Բարխուդարյանը բարբառով գրել է նաեւ գեղարվեստական ստեղծագործություններ [6]: Նշանավոր է նրա *«Արցախ»* պատմագիտական աշխատությունը[7], որը ներառում է բանահյուսական որոշ նմուշներ:

Արցախյան բառուբանով հարուստ ֆելիետոններով ասպարեզ եկավ Կոնստանդին Մելիք-Շահնազարյանը՝ Տմբլաչի Խաչանը: 1900-1901թթ. Բաքվում[8], ապա 1907 և 1908թթ. Վաղարշապատում[9] հրատարակվեցին

---

*[1] Շերմազանեանց Գ., Անեկդօտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դեպքեր եւ առակներ մեծ մասամբ ազգային կեանքից առած, Թիֆլիս, 1878*

*[2] Շերմազանեան Գ., Ասրի բէգ եւ Գիքի, «Կռունկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1862, 1863*

*[3] Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երեւան, 1966, էջ 8*

*[4] Բարխուտարեանց Գ., Բարոյական առածներ, Թիֆլիս, 1898 (Մ. Բարխուդարյանը եւ Գ. Բարխուդարյանը նույն անձն են)*

*[5] Բարխուդարեանց Մ., Պըլը Պուղի, Թիֆլիս, 1883*

*[6] Բարխուդարեանց Գ., Արագը տարին կտարի, Շուշի, 1883, Չոբանն ու նշանածը, Թիֆլիս, 1896, Միրզա եւ Աննա, Զմյուռնիա, 1876*

*[7] Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895*

*[8] Մելիք-Շահնազարեանց Կ. (Տմբլաչի Խաչան), Զուռնա-Տմբլա, հ. 1-3, Բաքու, 1900-1901*

*[9] Մելիք-Շահնազարեանց Կ. (Տմբլաչի Խաչան), Զուռնա-Տմբլա, գիրք Ա-Բ, Վաղարշապատ, 1907-1908*

նրա *«Զուռնա-Տմբլա»* ժողովածուի գրքերը, որտեղ ամփոփված են հեղինակի՝ 1879-1907թթ. *«Նոր Դար»* եւ այլ թերթերում տպագրած ֆելիետոնները, եւ որոնք, քաղված լինելով Շուշու ընտանեկան ու հասարակական կյանքից, որոշակի աշխուժություն են առաջացնում հայ պատմաազգագրական շրջանակներում եւ խթանում բանահավաքչական աշխատանքները: *«Բ»* գրքի վերջում հեղինակը տվել է քերականական ծանոթագրություններ եւ դժվարիմաց բառերի բացատրություններ:

Լինելով բնիկ շուշեցի, ուսանելով Շուշու թեմական դպրոցում, Էջմիածնի Գեւորգյան ճեմարանում եւ ապա բարձրագույն կրթություն ստանալով Ֆրանսիայում՝ մասնագիտությամբ գյուղատնտես Կ. Մելիք-Շահնազարյանը իր ողջ կյանքում զբաղվում է ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի նյութեր[1], որոնց մի մասը հրատարակվում է[2], իսկ ամբողջ հավաքածուն պահվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում եւ Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանի՝ հեղինակի անունը կրող ֆոնդում:

19-րդ դարի երկրորդ կեսերին Շուշին դարձել էր գիտամշակութային, ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման խոշոր կենտրոն[3], որտեղ ապրում եւ գործում էին բազմաթիվ նշանավոր մտավորականներ: Եվ պատահական չէ, որ հենց այստեղ հայ ազգագրության մեծ երախտավոր Երվանդ Լալայանը 1895թ. հիմնադրեց *«Ազգագրական հանդեսը»*, որտեղ ազգագրական եւ տեղագրական նյութերը ներկայացվում էին բանահյուսականի հետ միասին[4]՝ ընդգրկելով հատկապես ավանդություններ, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ, երգեր եւ

---

[1] *Հայրապետյան Թ, Կոնստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբլաչի Խաչան). Կյանքն ու գործը, «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն», հ. 24, Երեւան, 2007, գլուխ 5*

[2] *Մելիք-Շահնազարեանց Կ., Առակներ Ղարաբաղի բարբառով, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1930, 1931, Հանելուկներ Ղարաբաղի լեզուով «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1930, Ղարաբաղի բարքերեն, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1928, Ղըլըցէ կնանոց պընը-փեշակը, Թիֆլիս, 1882, Շօշվա դալին խերն ու շառը, Թիֆլիս, 1887, Ղանալանյան Ա., Առածանի, Երեւան, 1960, Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1965, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երեւան, 1973*

[3] *Խեմչյան Է., ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչեւ XX դարի 60-ական թվականները), «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան» գիտաժողովի հոդվածներ, Երեւան, 2007*

[4] *Սարգսյան Ա., Արցախի ազգագրությունը, բանահյուսությունը և բարբառը «Ազգագրական հանդեսի» էջերում, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2017, էջ 59-66*

այլ նմուշներ: Հանդեսի հրատարակչությունը Թիֆլիս տեղափոխվելուց հետո էլ այնտեղ շարունակվում էր արցախյան ժողովրդագիտական նյութերի տպագրումը: Հանդեսում է տպագրվել նաեւ Ե. Լալայանի նշանավոր *«Վարանդա»* աշխատությունը[1], որը հագեցած է բանահյուսական նյութերով՝ հատկապես ավանդություններով[2]:

19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին առանձին ուշադրություն է դարձվում Արցախի քնարական բանահյուսությանը: 1895թ. Խաչիկ Դադյանը՝ Վարանդայի Վերին Թաղավարդ գյուղից, լույս է ընծայում *«Ղարաբաղի ժողովրդական ջորհնեաց երգերից»* խորագրով մի շարք՝ արժեքավոր ծանոթագրություններով[3], իսկ 1908- 1910թթ. *«Ազգագրական հանդեսի»* տարբեր գրքերում Ա. Դադյանի հետ տպագրում 1885-1903թթ. Վարանդայի տարբեր գյուղերում գրառած խաղիկները՝ հակիրճ ծանոթագրություններով եւ բարբառային բառերի բացատրությամբ[4]: Խ. Դադյանը 1878-1920 թվականներին Արցախի տարբեր բնակավայրերից հավաքել է նաև բանահյուսական այլ նյութեր՝ հեքիաթներ, ավանդություններ, զվարճախոսություններ, աշխատանքային, սգո, օրորոցային, հարսանեկան, մանկական, ծիսական, վիճակի երգեր, խաղերգեր, ծաղրերգեր, հանելուկներ, կենաց-բարեմաղթություններ ևն, որոնք պահվում են ՀՀ ազգային արխիվի՝ հեղինակի անունը կրող ֆոնդում *(N 319):*

20-րդ դարի սկզբին նվազում է հետաքրքրությունը դեպի բանահյուսությունը՝ կապված քաղաքական բարդ իրավիճակի հետ: Այս շրջանում բանահավաքչական աշխատանքներ է ծավալում Սարգիս Իսրայելյանը՝ Վարանդայի Նախիջեւանիկ գյուղից: Նա ոչ միայն Արցախի, այլեւ Շամշադինի եւ Զանգեզուրի տարբեր բնակավայրերից գրառում է հեքիաթներ, ավանդություններ, զրույցներ, մանրապատումներ, երգեր, խաղիկներ եւ այլ ժանրերի ստեղծագործություններ, կազմում բարբառային բառերի

---

*[1] Լալաեան Ե., Վարանդա. նյութեր ապագայ ուսումնասիրութեան համար, «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, 1897, Վարանդա. Նշանավոր տօներ, «Ազգագրական հանդես», գիրք Գ., Թիֆլիս, 1898*

*[2] Վարդանյան Ս., Վարանդայի բանավոր մշակույթը Երվանդ Լալայանի և նրա թղթակից-բանահավաքների գրառումներում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2015, N 2, էջ 356-367*

*[3] Դադեան Խ., Ղարաբաղի ժողովրդական ջորհնեաց երգերից, «Արարատ», Վաղարշապատ, 1895, N 12*

*[4] Դադեան Ա., Վարանդայի բանաւոր գրականութիւնից, «Ազգագրական հանդես», գգ. 17, 18, 19, Թիֆլիս, 1908-1910*

բացատրական բառարան: Մ. Իսրայելյանի գրառումների մի մասը տպագրվում է առանձին գրքով[1], մի մասը՝ համահավաք ժողովածուներում[2], որոշներն էլ ձեռագիր վիճակում պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի՝ հեղինակի անունը կրող ֆոնդում:

20-րդ դարի կեսերին Արցախի բանահյուսության գրառման աշխատանքները նորից աշխուժանում են: Երախտագիտությամբ պետք է հիշել ծննդով շուշեցի, Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի անունը, որի՝ 1920-60-ական թվականներին Շուշուց եւ Արցախի տարբեր գյուղերից հավաքած նյութերը ամփոփվեցին *«Հայ ժողովրդական հեքիաթներ»*[3] եւ *«Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը*[4] ժողովածուներում: Սրանցից առաջինում ընդգրկված է 156 հեքիաթ, որ ամբողջությամբ գրի է առել Մ. Գրիգորյանը 1922-56թթ. ընթացքում: Մյուս ժողովածուն աչքի է ընկնում բազմաժանրությամբ՝ ժողովրդական վիճակի երգեր (ջանգյուլումներ), հեքիաթներ, զրույցներ, ավանդություններ, բանաձեւային բանահյուսության նյութեր:

Հեղինակը, երկար տարիներ շրջագայելով պատմական Արցախի Վարանդա, Գյուլիստան, Խաչեն, Դիզակ եւ Ջրաբերդ գավառների բնակավայրերը, եռանդուն ջանասիրությամբ, անձնվեր սիրով ու հմտությամբ է գրի առել բոլոր այդ ստեղծագործությունները: Ժողովածուներին կցված են բացատրական բառարաններ եւ ծանոթագրություններ: Մ.Գրիգորյանի ձեռագրերը ներկայումս պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում:

1960-70-ական թվականներին Արցախի ժողովրդական բանահյուսությունը հարստացվում է նոր բանահավաքների գրառումներով (Բ. Ղազիյան, Ա. Ղազիյան, Մ. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան, Մ. Մխիթարյան, Մ. Օհանջանյան, Լ. Հարությունյան):

---

[1] *Իսրայելյան Մ., Ղարաբաղի զվարճախոս Պըլը Պուղին, Երեւան, 1956*

[2] *Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1965, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երեւան, 1973*

[3] *Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 5, Երեւան, 1966*

[4] *Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը (գրառումը, բնագրի պատրաստումը եւ ծանոթագրությունները Մ. Գրիգորյան-Սպանդարյանի), Երեւան, 1971*

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Միքայել Առաքելյանը 1960-ական թվականներին Արցախի տարբեր գյուղերից հավաքում է բանահյուսական բազմաթիվ նյութեր, որոնց մեծ մասը տպագրվում է[1]:

1960թ. Ստեփանակերտում բացվում է ժողովրդական ստեղծագործության մարզային տունը, որի աշխատակիցների՝ մարզի տասնյակ գյուղերից գրառած բազմաթիվ հեքիաթների, առակների, զրույցների, ավանդությունների, առած-ասացվածքների, ժողովրդական խաղիկների եւ այլ ժանրերի նյութերի մի մասը հրատարակվում է[2]:

1983թ. լույս է տեսնում Ալվարդ Ղազիյանի *«Արցախ»* խորագրով բանահյուսական ժողովածուն[3], որն ամփոփում է հիմնականում հեղինակի եւ Բարխուդար Ղազիյանի կողմից 1966, 1970-78 թթ. ընթացքում Արցախի եւ Շահումյանի շրջանի 25 բնակավայրերից գրառված նյութերը՝ հեքիաթներ, զրույցներ, առակներ, զվարճախոսություններ, ավանդություններ, երգեր, խաղերգեր, մականուններ, առած-ասացվածքներ, անեծք-օրհնանքներ, երդումներ, սպառնալիքներ: Ժողովածուի վերջում կան ծանոթագրություններ եւ բարբառային բառերի բացատրություններ: Ծանոթագրություններում տրվում են բանահյուսական ստեղծագործությունների սերման ու կենցաղավարման հանգամանքները, բանասացների կենսագրական տվյալները, հայացքները, մեկնաբանություններն ու գնահատականները պատմվող նյութի վերաբերյալ, նյութերի գրանցման վայրն ու ժամանակը: Ժողովածուն ունի առաջաբան, որտեղ արժեւորվում են մինչեւ այդ հրատարակված աշխատանքները, ներկայացվում տվյալ ժողովածուն կազմելու հանգամանքները եւ սկզբունքները: Հետաքրքիր է այն փաստը, որ հեքիաթների շարքում զետեղված է նաեւ հայ ժողովրդական էպոսի առաջին ճյուղի մի պատումը՝ *«Սանասար նան Բաղդասարը»:* Ալվարդ Ղազիյանը բանագետ Սվետլանա Վարդանյանի հետ կազմել է նաեւ *«Բաքվի հայոց բանահյուսությունը»* ժողովածուն[4],

---

[1] *Հայ ժողովրդական հեքիաթներ, հ.6,7, Երեւան, 1973, 1979*

[2] *Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից (կազմողներ՝ Մ. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան), Երեւան, 1978*

[3] *Ղազիյան Ա, Արցախ, «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», հ.15, Երեւան, 1983*

[4] *Բաքվի հայոց բանահյուսությունը (կազմել, ներածությունը գրել եւ ծանոթագրել են Ա. Ղազիյանը, Ս. Վարդանյանը), Երեւան, 2004*

որի նյութերի զգալի մասը գրառված է Բաքվում բնակվող արցախցի բանասացներից:

Արցախի բանահյուսության հավաքման գործընթացին նոր թափ հաղորդեց Մարտունու շրջանի Աշան գյուղի վաստակաշատ ուսուցիչ, բանահավաք Լեւոն Հարությունյանի՝ 1991թ. հրատարակած *«Նշխարներ Արցախի բանահյուսության»* ժողովածուն[1], որտեղ բացի բանահյուսական վերոհիշյալ ժանրերից, հեղինակն ուշադրություն է դարձրել նաեւ ասույթաբանական բանահյուսության ամենատարբեր տեսակների՝ կենացներ, խրատ, սուգ, ծիսական արտահայտություններ, դարձվածներ, անձնանուններ եւ այլն: Միաժամանակ տրվում են տեղեկություններ ժողովրդական որոշ խաղատեսակների, բուսական եւ կենդանական աշխարհի, ուտեստի, սովորությունների, ծիսական երգերի, պարերի վերաբերյալ: Ընդարձակ առաջաբանում ներկայացվում է արցախյան բանահյուսության էությունը՝ որպես արցախցու հոգու եւ մտքի արտահայտություն: Ժողովածուն ունի բացատրական բառարան եւ ծանոթագրություններ: Բանահյուսական եւ ազգագրական բազմաթիվ նյութեր են ընդգրկված հեղինակի՝ նույն խորագիրը կրող հաջորդ[2] ու *«Կաթնակոբեկ»*[3] ժողովածուներում:

Արցախի տարածքից նյութեր են գրառվել ու հրատարակվել նաեւ այլ հեղինակների կողմից[4]: Բազմաթիվ նմուշներ են ընդգրկված հայ բանա-

*[1] Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, Երեւան, 1991*

*[2] Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, 2-րդ մաս, Ստեփանակերտ, 2004, 3-րդ մաս, Ստեփանակերտ, 2007, 4-րդ մաս, Ստեփանակերտ, 2009, 5-րդ մաս, Ստեփանակերտ, 2011*

*[3] Հարությունյան Լ., Կաթնակոբեկ, Երեւան, 1998*

*[4] Ալեքսանյան Ն., Հայացք ի ներս, Ստեփանակերտ, 1995, Աիյան Մ., Ծիծաղի հարյուր ակնթարթ, Ստեփանակերտ, 1995, Գրիգորյան Գ., Մոխրաթաղյան ժպիտներ, Ստեփանակերտ, 1998, Խաչատրյան Ա., Մեր գյուղի մարդիկ (Արցախյան զվարճապատումներ), Երևան, 2014, Հախումեանց Ս., Առակ ի բարբառ արցախեցւոց, «Արարատ», Ս. Էջմիածին, 1877, թիւ ԺԲ, էջ 460-461, Հայրապետյան Թ., Երգինքան իրեք խնձոր վեր ընգավ ու տասը խրատ, Երևան, 2014, Հայրապետյան Հ., Ականջդ կանչի, Պուղի, Ստեփանակերտ, 2013, Հայրապետյան Ռ., Ղարաբաղյան խաղիկներ, Ստեփանակերտ, 2000, Ղահրամանյան Կ., Վարդուտ գավառի բառ ու բանը, Երևան, 2011, Ղահրամանյան Ռ., Առածանի, Ստեփանակերտ, 2003, Արցախյան զվարճախոսություններ, Ստեփանակերտ, 2011, Խաղիկներ, Ստեփանակերտ, 2005, Ղուկասյան Ս., Արցախյան պատումներ, Ստեփանակերտ, 2010, Մարկոսյան Ս., Արցախյան անեկդոտներ, Երևան, 2004, Պետրոսյան Մ., Արցախյան առածանի, ասածանի, Ստեփանակերտ, 1999 են*

հյուսական համահավաք ժողովածուներում[1], ինչպես նաև Արցախի ու նրա տարբեր բնակավայրերի պատմությանը, ազգագրությանը, բարբառին նվիրված և այլ աշխատանքներում[2]: Ոչ պակաս ուշագրավ են տարբեր արձակագիրների ու բանաստեղծների կողմից կատարված մշակումները[3]:

Նշված բոլոր բանահավաքների գործունեությունը, անշուշտ, լուրջ ներդրում է Արցախի բանահյուսական ժառանգությունը կորստից փրկելու գործում, սակայն, պետք է ասել, որ նրանք հաճախ են անտեսել Ղարաբաղի բարբառի, հատկապես կոնկրետ խոսվածքների յուրահատկությունները՝ հավաքած նյութերը եւ հրատարակած ժողովածուները բարբառի ուսումնասիրման համար հաճախ դարձնելով ոչ հուսալի աղբյուր[4]: Եվ եթե որոշ աշխատանքներ տպագրվել են գրական կամ ժողովրդախոսակցական լեզվով, ապա մյուսների մեջ էլ ակնհայտ են բարբառային օրինաչափությունների աղավաղումներ, որոնք հանդես են գալիս լեզվական տարբեր մակարդակներում[5]: Հնչյունաբանական մակարդակում բանահավաքները հաճախ են անտեսել քմային ձայնավորների ու բաղաձայնների, *ըէ*, *ըի* երկբարբառակերպերի, զաղտնավանկի *ը*-ի

---

[1] *Աբեղյան Մ., Ժողովրդական խաղիկներ, Երևան, 1940, Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, Ղանալանյան Ա., Առածանի, Երևան, 1960, Ավանդապատում, Երևան, 1969, Карапетян Г., Армянский фольклор, Москва, 1967, Забавные и назидательные истории армянского народа, Москва, 1975, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6,7, Երեւան, 1973, 1979 նն*

[2] *Աբրահամյան Հ., Քերթ, Երևան, 2010, Աղաջանյան Մ., Հաթերք, Ստեփանակերտ, 2012, Բաբախանեան Ա., Ուխտավորի հիշատակարանը, Շուշի, 1890, Գալստյան Ա., Հաղթանակ, Ստեփանակերտ, 2000, Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, Լիսիցյան Ստ., Լեռնային Ղարաբաղի հայերը(Ազգագրական ակնարկ), «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1981, հ. 12, էջ 9-84, Ղազարյան Խ., Տումի, Ղահրամանյան Կ., Արցունքոտ ժպիտներ, հ.2, Երևան, 2006, Օջախի գիրք. Նշխարներ, Երևան, 2002, Պողոսյան Ա., Հադրութի բարբառը, Երևան, 1965, Սարգսյան Ա., Շաղախի ենթաբարբառը Հադրութի ենթաբարբառի միջավայրում, Ստեփանակերտ, 2009, Патканов К., Исследование о диалектах армянского языка, Санкт-Петербург, 1869 նն*

[3] *Ավետիսյան Ն., Իմ Պըլը Պուղին, Ստեփանակերտ, 2002, Բեգլարյան Հ., Կատակում է Պըլը Պուղին, Ստեփանակերտ, 1998, Գաբրիելյան Գ., Ղարաբաղի հորովել, Ստեփանակերտ, 2003, Խանզադյան Ս., Պըլը Պուղի, Երևան, 1988, Օվյան Վ., Եվ Պըլը-Պուղին մի առակ պատմեց, Ստեփանակերտ, 1993 նն*

[4] *Սարգսյան Ա., Տառադարձության կարեւորությունը բանահյուսության մեջ, «Միջազգային գիտաժողովի նյութեր. Մեսրոպ Մաշտոց համալսարան», Ստեփանակերտ, 2007, Սարգսյան Ա., Բարբառային օրինաչափությունների պահպանման կարեւորությունը բանահյուսական ժողովածուներում (Ղարաբաղի բարբառի օրինակով), «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2012, № 1*

[5] *Մարգարյան Լ., Արցախի բանահյուսության լեզուն, Ստեփանակերտ, 2011, էջ 118*

տառադարձումը: Որոշ դեպքերում հանդիպում ենք Ղարաբաղի բարբառին խորթ *ֆ* բաղաձայնի գործածությանը, հաճախակի են բառասկզբի դիրքում գրաբարյան ձայնեղ պայթականների եւ կիսաշփականների պահպանման դեպքերը, չնայած բարբառում դրանք հիմնականում խլանում են: Բառապաշարային մակարդակում բարբառային օրինաչափությունների աղավաղումները պայմանավորված են բարբառին ոչ հատուկ՝ գրական հայերենի բազմաթիվ բառերի գործածությամբ, ինչպես *անգամ, բոլորովին, զույգ, երիտասարդ, թեկուզ, ձկնորս, սրամիտ:* Քիչ չեն նաեւ քերականական օրինաչափությունների խախտումները. ժողովածուների մեծ մասում նկատելի են բացառական եւ գործիական հոլովաձեւերի, դասական թվականների, օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի եւ մի շարք այլ գրականաձեւ կազմություններ: Ընդհանուր առմամբ բոլոր ժողովածուներում անտեսված է բարբառագիտության մեջ ընդունված ուղղագրության միասնական սկզբունքը՝ գրել այնպես, ինչպես արտասանվում է: Նման աղավաղումները, մեր կարծիքով, պայմանավորված են հետեւյալ գործոններով.

1. Բանահավաքները, կարեւորելով բանահյուսական նմուշների բովանդակային կողմը եւ բարբառի գիտական քննումը նպատակ չհամարելով, առաջնորդվել են բանահյուսական ժառանգությունը ընթերցող լայն շրջաններին հասու դարձնելու սկզբունքով: Այդ մասին նշված է որոշ ժողովածուների առաջաբաններում եւ ծանոթագրություններում:

2. Բանահավաքները, բավարար չափով չտիրապետելով տվյալ խոսվածքի նրբություններին, դրանք հարմարեցրել են գրական հայերենի կամ մայրենի խոսվածքի առանձնահատկություններին: Չի բացառվում, որ բազմաթիվ նյութեր գրառվել են վերհիշելով, որի դեպքում գրառողը հանդես է եկել նաեւ որպես բանասաց:

3. Հաճախ նյութը հնչյունաքերականական օրինաչափությունների խախտումներով են ներկայացնում նաեւ բանասացները՝ ձգտելով այն գրականացնել:

4. Որոշ դեպքերում էլ, անշուշտ, խախտումների պատճառները տեխնիկական են՝ պայմանավորված բարբառային տառադարձությամբ նյութերի տպագրության դժվարություններով:

Թերեւս այդ թերությունները հաշվի առնելով է կազմված և հրատարակված տողերիս հեղինակի *«Արցախի բանահյուսությունը»* ժողովածուն[1], որի մեջ ներառված են նաև հեղինակի նախորդ ժողովածուները[2]: Ժողովածուի ընդարձակ առաջաբանում ներկայացվում են Արցախի համառոտ պատմությունը, Արցախի բանահյուսության հավաքման, հրատարակման պատմությունը, նյութերի բանագիտական վերլուծությունը, Ղարաբաղի բարբառի հնչյունաբառաքերականական օրինաչափությունները: Բուն ժողովածուն, որն ընդգրկում է հեղինակի կողմից 1992-2014թթ. Արցախի Հանրապետության 163 բնակավայրերի հարյուրավոր բանասացներից գրառված բանահյուսական 8078 նմուշ, բաղկացած է երեք բաժնից՝ *Վիպական բանահյուսություն* (1.Հեքիաթներ, 2.Ավանդություններ, 3.Առակներ, 4.Զվարճախոսություններ), *Քնարական բանահյուսություն* (5.Խաղիկներ, 6.Չափածո այլ ստեղծագործություններ), *Ասույթաբանական բանահյուսություն* (7.Առած-ասացվածքներ, 8.Անեծքներ, 9.Օրհնանքներ և բարեմաղթանքներ, 10. Հանելուկներ, 11.Գյուղերի և քաղաքների մականուններ, 12.Մարդկանց մականուններ, 13.Շուտասելուկներ, 14.Հանգախաղեր): Բոլոր նյութերը բերվում են առանց բնագրերի փոփոխության՝ բարբառային տառադարձության և յուրաքանչյուր խոսվածքի առանձնահատկությունների խիստ պահպանմամբ, չնայած հարկ է նշել, որ երբեմն նույն բնակավայրի տարբեր բանասացների, անգամ նույն բանասացի հաղորդած տարբեր նյութերում երբեմն նկատվում են արտասանական զուգաձեւություններ:

Ժողովածուին կցված են նյութերի գրառման հանգամանքներն ու բանասացների կենսագրական տվյալները բացահայտող ծանոթագրություններ, ընդարձակ բառարան, անձնանունների, տեղանունների, նյութերն ըստ Ղարաբաղի բարբառի խոսվածքների ներկայացնող, տպագիր ու ձեռագիր աղբյուրների ցանկեր, ռուսերեն և անգլերեն լեզուներով անփոփումներ: Հեղինակը կազմել ու հրատարակել է նաև Արցախի

---

[1] *Սարգսյան Ա., Արցախի բանահյուսությունը, Երևան, 2015*

[2] *Սարգսյան Ա., Արցախյան հանելուկներ, Ստեփանակերտ, 2002, Արցախյան ավանդություններ, Ստեփանակերտ, 2007, Արցախի բանաձեւային բանահյուսությունը, Ստեփանակերտ, 2009, Արցախյան առակներ, Ստեփանակերտ, 2011, Արցախյան զվարճախոսություններ, Ստեփանակերտ, 2014*

բանահյուսության գրառման և ուսումնասիրության մատենագիտությունը[1], որտեղ ներկայացրել է Արցախի բանահյուսությանը լիովին կամ մասնակիորեն առնչվող տպագիր և ձեռագիր աշխատանքների ու նյութերի հնարավորինս ամբողջական ցանկերը՝ յուրաքանչյուր նյութի ամփոփ նկարագրությամբ:

Բանահյուսական նյութերի գրառմանն ու հրատարակմանը զուգընթաց տարբեր ժամանակներում հրատարակվել են նաև գիտական ուսումնասիրություններ: Արցախի բանահյուսության և առանձին ժանրերի վերաբերյալ բանագիտական աշխատանքներ, գրախոսություններ են հրատարակել Ա. Աթայանը[2], Ռ. Աթայանը[3], Մ. Առաքելյանը[4], Է. Բաղդասարյանը[5], Մ. Գրիգորյան-Սպանդարյանը[6], Է. Խեմչյանը[7], Ժ. Խուրշուդյանը[8],

---

[1] *Սարգսյան Ա., Մատենագիտություն Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրության, Երևան, 2019*

[2] *Աթայան Ա., Արցախի բանահյուսության հինգ նշխարները, «Մեսրոպ մաշտոց համալսարան. Լրատու», Ստեփանակերտ, 2013, N1, էջ 172-180, Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները Լ. Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» ժողովածուներում, «ԱրՊՀ. Հայագիտական ուսումնասիրություններ», Ստեփանակերտ, 2014, էջ 150-165, Լ. Հարությունյանի «Նշխարներ…»-ի հեքիաթային աշխարհը, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», Երևան, 2016, էջ 261-269,*

[3] *Աթայան Ռ., Ղարաբաղի հորովելները Կոմիտասի գրառումներում, «Սովետական Հայաստան», Երևան, 1988, N 7, էջ 29-30,*

[4] *Առաքելյան Մ., Օսմանյան արշավանքների արձագանքները Լեռնային Ղարաբաղի ավանդություններում, «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 1974-1975թթ. ազգագրական-բանահյուսական դաշտային աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջանի թեզիսներ, դեկտեմբերի 23-24, 1976», Երևան, 1976, էջ 18-19, Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1987, 30 սեպտեմբերի, Հայտնաբերել և գրի առնել ժողովրդական ավանդությունները, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1988, 22 հունվարի,*

[5] *Բաղդասարյան Է., Արցախյան բանահյուսական արվեստի գնահատության փորձ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1993, N2, էջ 187-192, Էթնոմանկավարժության գաղափարները արցախահայ բանահյուսության մեջ, «Կանթեղ», Երևան, 2007, N2, էջ 227-233*

[6] *Գրիգորյան-Սպանդարյան Մ., Ղարաբաղի հեքիաթները, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1973, 31 օգոստոսի, Ղարաբաղի ջանգյուլումները, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1973, 31 մայիսի*

[7] *Խեմչյան Է., Արմեն Սարգսյան, Արցախի բանահյուսությունը, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2016, օգոստոս, էջ 167-170, Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 335-351, Պատմական անձանց վիպական կերպավորումը Արցախի բանահյուսության մեջ, «ԼՂՀ. Անցյալը, ներկան, ապագան, Միջազգային գիտաժողով. Զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, 2006թ., Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 325-336*

[8] *Խուրշուդյան Ժ., Մարտակերտի շրջանի բանահյուսությունը (ըստ 1972-79թթ. գործուղման արդյունքների), «1978-1979թթ. ազգագրական և բանահյուսական դաշտային հետազոտությունների արդյունքները: Զեկուցումների թեզիսներ, մայիսի 5-7, 1980», Երևան, 1980, էջ 41-43*

Ա. Կալաշև[1], Թ. Հայրապետյանը[2], Ա. Ղազիյանը[3], Լ. Մարգարյանը[4], Ռ. Նահապետյանը[5], Ա. Սարգսյանը[6], Վ. Սվազլյանը[7], Ս. Վարդանյանը[8],

---

*[1] Калашев А., Вардавар (сел. Чайкенд, Елисаветпольской губернии, Шушинского уезда, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып, восемнадцатый, Тифлис, 1894, отд. второй, с.1-36*

*[2] Հայրապետյան Թ., Առասպելական տարրերը Բահաթրյանների գրառած հրաշապատում հեքիաթներում (Շուշի, XIX դարի երկրորդ կես), «Շուշին հայկական մշակույթի օջախ. Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ», Շուշի, 2014, էջ 107-116, Ծիսաառասպելական տարրերը Ղարաբաղում կենցաղավարող հրաշապատում հեքիաթներում՝ ըստ 2006-2008թթ. գրառած նյութերի (համեմատական ուսումնասիրություն), «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան, 2008, N3-4, էջ 31-39, Կոնստանդին Մելիք-Շահնազարյան. Կյանքն ու գործը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 2007, հ. 24, էջ 7-119, Ղարաբաղի զվարճախոս Պըլ Պուղին (ըստ 1991-2015թթ. Արցախում գրառած նյութերի), «ԱրՊՀ. Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու)», Ստեփանակերտ, 2016, պրակ II, էջ 142-146,*

*[3] Ղազիյան Ա., Ազատամարտի արտացոլումը Ղարաբաղի ժողովրդական բանահյուսության մեջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1996, N3, էջ 135-145, Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը 1970-1973թթ. գրառումների հիման վրա, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1974, N4, էջ 235-241, Խաչիկ Ծ. Վարդապետ Դադեանի ժողովրդագիտական-բանահավաքչական գործունէութիւնը, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1999, N1-12, էջ 387-402, Ղարաբաղի բանահյուսության գրառման, հրատարակման պատմություն, «ԼՂՀ. Անցյալը, ներկան, ապագան, Միջազգային գիտաժողով. Զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, 2006թ., Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 378-387, Ղարաբաղի զվարճախոս Պըլ Պուղին, «Լրաբեր հասարակական գիտությունների«, Երևան, 1978, N9, էջ 60-69, Устное народно-поетическое творчество Арцаха (обзор), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1990, N7, էջ 27-36*

*[4] Մարգարյան Լ., Ռուս-ղարաբաղյան փոխհարաբերությունները Արցախի բանահյուսության մեջ, «Մեսրոպ Մաշտոց համալսարան. Լրատու», Ստեփանակերտ, 2011, էջ 130-136*

*[5] Նահապետյան Ռ., Արմեն Սարգսյան. «Արցախի բանահյուսությունը», Երևան, 2015, 747 էջ (գրախոսություն), «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան, 2017, N3-4, էջ 135-137*

*[6] Սարգսյան Ա., Առած-ասացուածքները, անէծք-օրհնանքները և հանելուկները Արցախի բանահիւսութեան մէջ, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 2014, էջ 389-402, Արցախի ազգագրությունը, բանահյուսությունը և բարբառը «Ազգագրական հանդեսի» էջերում, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2017, էջ 59-66, Արցախյան ավանդությունների ժանրային և իմաստային առանձնահատկությունները, «ԱրՊՀ. Հայագիտական հանդես», Ստեփանակերտ, 2010, էջ156-173, Արցախյան ժողովրդական խաղիկները և նրանց լեզվական արվեստը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2003, N1-2, էջ 152-158,*

*[7] Սվազլյան Վ., Արցախյան բանահյուսությունն իմ ժողովրդագիտական գործունեության ոլորտում, «ԼՂՀ. Անցյալը, ներկան, ապագան, Միջազգային գիտաժողով. Զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 474-487*

*[8] Վարդանյան Ս., Արմեն Սարգսյան. Արցախի բանահյուսությունը, Երևան, Էդիթ Պրինտ, 2015, 748 էջ, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2017, N1, էջ 238-241, Բանահյուսական նյութերի կենցաղավարումը Շուշիի շրջանում (Ըստ 1970թ. Դաշտային նյութերի), «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ էջ 351-359, Բանահյուսական նյութեր Լեռնային Ղարաբաղից, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1971, N8, էջ 88-93, Ժողովրդական բանահյուսության դրսևորումները Արցախյան ազատամարտում, «ԼՂՀ. Անցյալը, ներկան, ապագան, Միջազգային գիտաժողով. Զեկուցումների հիմնադրույթներ, հունիսի 21-24, 2006թ., Ստեփանակերտ», Երևան, 2007, էջ 151-152, Պաշտամունքային տարրերը «Ալելույայի» արցախյան տարբերակներում, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2002, N2, էջ 148-156*

Ա. Փաշայանը[1] և ուրիշներ:

Հիշատակության արժանի է նաև Լուսինե Մարգարյանի ուսումնասիրությունը[2], որտեղ հանգամանորեն ներկայացվում են Արցախի բանահյուսության հնչյունական համակարգը, բառապաշարի շերտերը, բառիմաստային առանձնահատկությունները, հոմանիշության, խոսքի մասերի և նրանց քերականական կարգերի դրսևորումները, շարահյուսական որոշ յուրահատկություններ, տարբեր ժանրերի ոճական առանձնահատկությունները, գրականացման երևույթը և այն խթանող գործոնները, պայմաններն ու պատճառները:

Սրանցով չեն սպառվում Արցախի բանահյուսությանը վերաբերող և առնչվող տպագիր և ձեռագիր ժողովածուները, ուսումնասիրություններն ու նյութերը, որոնց թիվն իրականում ավելի մեծ է[3]:

*Արմեն Յուրիկի Սարգսյան,*
*բ.գ.թ., դոցենտ, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ*

---

*[1] Փաշայան Ա., Պըլը Պուղին հայ մշակույթի պատմության էջերում, Ստեփանակերտ, 2010*

*[2] Մարգարյան Լ., Արցախի բանահյուսության լեզուն, Ստեփանակերտ, 2011*

*[3] Ամբողջական ցանկը տե՛ս Սարգսյան Ա., Մատենագիտություն Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրության, Երևան, 2019, էջ 51-118*

# ՀԵՔԻԱԹՆԵՐ

## 1.ՎԸԵՍԿԵ ԽԸՆՁԸ՞ՐԸ

Ինը՞ւմ ա, չինը՞ւմ մին թաքավէր։ Էտ թաքավերին ինը՞ւմ ա իրեք տըղա, իրեքըն էլ մինը մինան դը̀շը̀նգյ, մինը մինան դոչչաղ, ամմա պուճուր տըղան լոխճան դոչչաղըն ա ինը՞ւմ, համ էլ լոխճան խելունքը։

Ըտրանց ինը՞ւմ ա մին գյը՞ւլլը՞ւ բաղ։ Բաղ, հի՛նչ բա՛ղ, վըեր աշխարքիս ամմեն ջուռա պըտուղ ըտրա մաչին կար, աշխարքիս ամմեն ջուռա ծաղիկնին ըտըեղ փըսնում ար, վըետը տամ չորս դոլին։ Նախշուն-նախշուն, ռը̀նգյ-ռը̀նգյ ծըտերը ծլվըլում ին, ը՞ւրը̀նց քախծըր ծենավը մարթի սըերտ փառավըե՛րըմ։

Ամմա էտ գյը՞ւլլը՞ւ բաղին մաչին լոխճան կյեղեցիկը, լոխճան դը̀շը̀նգյը մին վըեսկե խըրնձը՞րի ծառ ար։ Մին թըմը̀՛շը̀, մին պատիժ պըեն, մին արմա՛նք... էտ խըրնձը՞րին ծառը վըեր ծաղկըմ չա՛ր, ը՞ւրը̀ն պեց կյը̀րմը՞ւր նան սըպտըկռը̀նգյ ծաղիկներավը վըետը աշխարքըս օնըմ ար... Մարթ ասըմ ար օտիմ վըեչ, խըմիմ վըեչ, էտ խըրնձը՞րին ծաղկին վըետը քաշիմ... Ամմա դե հի՞նչ կանիս, վըեր էտ խըրնձը՞րնին հըսնըմ ար մըէծ-մըէծ, դը̀շը̀նգյ, պըծըպածին տալիս, ինքն էլ վըեսկե, խնձը՞րներավ լըցնըմ, քըշերը կյամ ին, կյուղանըմ, էլ թողըմ չին, թա տը̀րը մինն էլ ա, տըեսնա։ Վըեչ թա մինը̀կ թաքավերը, լը̀ն էն խըեղճ բաղվանչին, վըեր պահալ ա, մըծըցրալ, մինը տըեսնա։ Իտի ամմեն տարի կյամ ին, կյուղանըմ։

Վէրչը մին օր թաքավերը կանչըմ ա տըղորցը ը՞ւրը̀ն կոշտը, ասըմ. - Ա՛ խոխերք, ա՛ ասլանի ճըտեր բալեքյ, ախեր իտի պըեն չի ինիլ, վըեր ամմեն տարի կյան մըեր բաղին վըեսկե խըրնձը՞րը քաղին, տանին։ Ցըեկեքյ մին թահր անինք, մին պըեն անինք, էլ թողինք վըեչ, վըեր կյան կյուղանան։

Մըեծ տըղան ասըմ ա. - Ա՛ հը̀ր, մունք էլ ընք մը̀թը̀լ մընացալ, մըեր անըմին հետի էլ չի լավ, թող էս քըշեր յըես քյինիմ ղարավուլ կենամ, տըեսնամ, էտ հո՞ւ վա կյամ մըեր վըեսկե խըրնձը՞րը տանըմ։

Էն մին դը՞լան միշնը̀կ տըղան ասըմ ա. - Հազըր յըես կքյինիմ իլի՛։

Պուճուրըն էլ թա. - Չէ, յըես կըքյինիմ, խե՞, յըես ծըզանա, պակա՞ս ը՛մ։

Թաքավերն ասըմ ա. - Թող ծըեր մըեծ ախպերը քյինի՛, տուք կացեք։

Մըեծ ախպերը ը՞ւրը̀ն զենքը-զըահը կապըմ ա, ը՞ւրը՞ւգյը՞ւնատեմ քյընըմ

բաղըմը էտ վըսկե խընձո՞րին տակին ղարավուլ քաշըմ, վըեր կյողին փըռնի, մըեչան էրկու անի՛: Քըշերը ամառնան քըշեր ա ինո՞ւմ, երգինքը ասթխերավ լի՛քյը, ծըլծըլը՛մ, սարերան հով ա կյամ ծառերը ըրորըմ, ասիս լիա՛ ասըմ ըն. «Քո՛ն իլ, ա՛ տըղա, քո՛ն իլ»: Ամմա թաքավերին մըեծ տըղան քոն չի ինո՞ւմ: Անց ա կըենըմ մին խիլլա՛ վախտ, վախտը վէշ մին պըենի եշըմ չի, անց ա կըենըմ, տըեռնըմ ա քըշերվա կեսը: Քըշերվա կեսանը տըենը թաքավերին մըեծ տըղին քոնը տանըմ ա: Հիշքան օզըմ ա քոն չինի, էլիա ա՛մա՛լ չի կյամ, տա քընավ ա ընցնըմ:

Ուռութանա եր ա կըենըմ, տըեսնըմ վըեսկե խընձո՞րան մին խիլլա՛ քաղած, տարած:

Հըմընչիլավ, իրեսը սըեվ, քյընըմ ա հորը կոշտը, ասըմ. -Ա՛ հա՛ր, պա ասել չը՛ս, քըշերվա կեսին քընավ ըմ ընցալ, եկալ ըն խընձո՞րը քաղալ, տարալ:

Հա՛րը կըզնըվըմ ա, ասըմ. - Դե, քյինա աշկաս հեռու, քյըզանա պըեն չի տո՞ւս կյալ, լիա՛ մըեծ-մըեծ խոսըմ ըս, քյըեզ թա՛րիփ անըմ, անըմըտ կա, ըմանըմըտ չիկա՛ ...

Էն մին քըշերը միշնա՛կ տըղին ա ղարկըմ, վըեր վըեսկե խընձո՞րին ղարավուլ քաշի:

Միշնակ տըղան ո՞ւրա՛ն զենքերը յոր ա օնըմ, քյընըմ: Քըշերը զով, ծառերը ըրորվըմ, ասթխերը թա մըեծ, թա պուճո՞ւր լոխ տո՞ւս եկած, վարթերին վըետը ընդեղերք ընգած, բո՞ւլբո՞ւլը յըերքըմ... էտ տըղան միջև քըշերին կեսը կանանչ խուտերըմը թեքյ ընգած երգյինքին ա եշըմ, ամմա կես քըշերանը ետը քոնը տանըմ ա, հիշքան օզըմ ա, թա քոն չինի, կարըմ չի, աշկերը ինքյը-ինքյը հոփ ա կյա՛մ…

Ուռութանա վըեր եր ա կըենըմ, տըեսնըմ ա էլիա եկած, մին խիլլա՛ խընձո՞ր քաղած:

Տա մըտածըմ ա, թա հո՞ւնց քյինի ո՞ւրա՛ն հորը իրեսին եշի, համութ ա, մին էլ ճարը կըտրած քյընըմ ա, հորըն ասըմ, - Ա՛ հա՛ր, դե ինձ հինչ օզըմ ըս ըրա, հինչ պատիժ օզըմ ըս տո, կես քըշերին քոնըս տարալ ա, կըրեցալ չըմ ինձ պահիմ, դե կըներիս:

Հա՛րը կըզնըվըմ ա, ասըմ, - Տու նան քու մըեծ ախպերըտ լիա՛ մին ըք, ճոխտըտ էլ թո՞ւնի հարա՛յ ըք, դե համոթ ծըեզ հետի, դե տու վէլ աշկաս կորի… Մըղափուն էն հաց, վըեր տուք ըք կըերա՛լ...

Էն մին դո՞նըմըն էլ թաքավերին պուճուր տըղան ա քյընըմ ղարավուլ քաշըմ, էլիա ո՞ւրա՞ն զենքը-զրահը եր կալած: Քյնըմ ա թուշ, էտ ծառին քըշտի մին քոլի տակի խե՞ լա՞վ կանանչ խոտ կար, ընդեղ պըրանվըմ: Քըշեր, հի՞նչ քըշե՛ր, աստղերը կըրկըրթըմ օքըստոսի քըշե՛ր, երգյինքյը ծիր-կաթին կյոտեն կապած, լո՞ւսնընգյա՞ն սարին քըմական տո՞ւս կյալիս, հունցու մին թա՞զա՞ հարս, գյարդակին քըմական տո՞ւս կյալիս, ո՞ւրա՞ն լո՞ւսին տակին ծառերին տիրննին փըլըստրատին տալիս, մոք-փո՞ւրո՞ւզա՞ քըշե՛ր, հովը մին դոլան ա քոն պըերըմ, ծաղիկներին վըետը՝ մին դոլան:

Կես քըշերը վըեր անց ա կենըմ, թաքավերին պուճուր տըղին քոնը տանըմ ա: Հիշքան անըմ ա վըեր քոն չընի, էլիա քոնը տանըմ ա: Տա տենակը ջուրան հանըմ ա, մաննը կըտըրըմ, յրան աղ ածըմ, վըեր հըեռան քոնը տանե վրեչ: Մին էլ ա տըեսնըմ, վըեր մինը թըմփթըմփալավ, զըմփզըմփալավ, դըղըրդալավ, մըրթմըրթալա՞վ էս ա կյամ ա: Եշըմ ա տըեսնըմ մին մըեծ, օխտը կըլխանե դո՞վ ա, կյամ ա, թա վըեսկե խըընձո՞րնին կյուդանա:

Էտ տըղան եր ա թըռչըմ տըեղան, թորավը թըլխըմ, չորս կըլո՞խը կըտըըրըմ, մընըմ ա իրեք կըլո՞խը: Էտ դո՞վը փախչըմ ա, քյընըմ:

Թաքավերին պուճուր տըղան վախըմ չի, ըտրա հըետան քյընըմ ա, մին գյա՞հ հետքը կուրցունում ա, ամմա մին էլ ճարըմ ա, ա՞ռնին կըրկաթած տըեղերավը քյընըմ ա, տըեսնըմ, էտ դո՞վը նի մըտավ մին խոր վըեր: Թաքավերին տըղան ետ ա տըեռնըմ ո՞ւրա՞նց բաղը, վըեսկե խըրնձո՞րնին հըվաքըմ, պերըմ ո՞ւրա՞նց պալատը:

Թաքավերը տըեսնըմ ա, ուրխանըմ, տըղին իրեսան պաչըմ, ասըմ.- Շատ ապրիս, բալաս, թա իմ թախտըս ավաղ անիս, տու յըս ընելու, մընացածը մին կապեկ չա՞ժին:

Էքյսը ըխպըրըքըյ-ըխպերըքըյ հըվաքվըմ ըն, վըեր քյինին դո՞վյին ըսպանին: Ընդրանք ո՞ւրա՞նց նըհետ պաշար, զենք-զըրահ, քյանդիր, տես-տեն ըն յոր օնըմ, քյընըմ:

Էլիա ճընապարին վըեղին յրան ա՞ռնին կաթերին եշիլա՞վ քյընըմ ըն, քյընըմ, հըսնըմ էտ խոր վերին:

Մըեծ ախպերն ասըմ ա. - Առաչ ինձ կախ տվիք:

Մըեծ ախպորը մըեշկան քյա՞նդիր ըն կապըմ, կախ տամ: Հա՞լա՞ վըերին կեսին հըսած վըեչ, տա ճըղճըղոց ա տամ, թա. - էրվեցի՛,էրվեցի՛ տուս

պըերիք, տո՞ւս պըերի՛ք:

Ախպերքը տո՞ւս ըն պըերըմ:

Ընդրանա ետը միշնա՛կ ախպորը մըեշկան ըն կապըմ, վըերին մըեչան կախ տամ: Հա՛լա՛ վըերին կեսը հըսած վըեչ, բըղբըղոց ա տամ. - Վա՛յ, հարա՛յ, էրվեցի՛, էրվեցի՛, տո՞ւս պըերիք, շուտ ըրի՛ք վա՛յ էրվեցի՛:

Ախպերքը տո՞ւս ըն պըերըմ: Նոբաթը կյամ ա պուճուր ախպորը: Պուճուր ախպերը ասըմ ա. - Հիշքան յըես ասիմ՝ էրվեցի՛, էրվեցի՛, ինձ տո՞ւս չօնիքյ:

Պըերըմ ըն քյա՛նդիրը ընտրա մըեշկան պենդ կապըմ, կախ տամ: Հա՛լա՛ վըերին կեսին չըհըսած, տա ծենա տամ. - Վա՛յ ըրվեցի՛, ըրվեցի՛, հընեցիք ինձ, ըրվեցի՛, վա՛յ:

Ամմա ախպերքը հանըմ չըն, քըշըցնըմ ըն մինչև վերին տակը:

Թաքավերին պուճուր տըղան տըեսնըմ ա ո՞ւրա՛ն տիմացը մին տոռնը: Էտ տոռնը պըենըմ ա, նի մըննըմ, տըեսնըմ էտ օթախին վըեսկե թախտին մին կյեղեցիկ ախճիգյ նըստած, ընդրա ծո՞ւյնին էլ դո՞վը կըլո՞խը տիրած քոն ա իլա՛լ: Ըտրանց կոխ կին էլ մին արծաթի ըստո՞լ, ըտրա յրան էլ մին վըեսկե դա՛փա՛զըմ մին զառ բըլբո՞ւլ:

Էտ ախճիգյը վըեր տըեսնըմ ա թաքավերին պուճուր տըղին, ասըմ ա. - Ա՛յ դա՛շա՛նգյ տըղա, պա տու մեխկը չը՞ս, վըեր յըեկալ ըս ըստըեղ, շուտ ըրա ետ տըեռ, թա չէ դո՞վը քընուտըեղա եր կը կենա, քյըեզ կոլ տա:

Թաքավերին պուճուր տըղան ասըմ ա. - Յըես դըան վախըմ չըմ, եր կըցըրու, թող կյա նիետս կըռըեվ անի:

Ախճիգյը տըեսնըմ ա, վըեր էտ տըղան վախող ունջուվար չի, ճարը կըտրած՝դո՞վին եր ա կըցընըմ:

Դո՞վը օզըմ ա, թա էտ տըղին կո՞ տա՛, ամմա էտ տըղան թուրավըըմին հենցթըխըմ ա, վըեր էտ դո՞վին էն մընացած իրեք կըլո՞խը մին դո՞նըմ ա կըտրըըմ: Ըտրանա ետը թաքավերին պուճո՞ւր տըղան նի յա մըննըմ էտ օթախին մըեչավը պեցվող մին օրիշ օթախ, տըեսնըմ վըեսկե թախտին յրա մին ընդրանա էլ իվիլ կյեղեցիկ ախճիգյ ա նըստած, էնքան կյեղեցիկ , վըեր արևին ասըմ ա.» Տու տո՞ւս մի կյալ, յըես ըմ տո՞ւս կյալու», Ըտրա ծընգնին ո՞ւրա՛ն կըլո՞խը տըրած՛ քոն ա իլա՛լ մին դո՞վ, վըեր եկողին սըերտը կըճաքի, էնքան անճոռնի ար, ինքըն էլ քառասուն կըլխանի:

Էտ ախճիգյը վըեր տըեսնըմ ա թաքավերին պուճուր տըղին, ասըմ ա.-

Այ, խըեղճ տըղա, էտ hո՞ւնց ըստըեղ ընգիր, շուտ ըրա փախի, թա՛ չէ դո՛վը էր կըկէնա, քյեզ կոլ տա:

Թաքավըրին պուճուր տըղան ասըմ ա, - Ցըես ըտրանա վախողը չըմ, էր կըցըրու, ո՛ւրո՛ւր նըհետ կըռըեվ անինքյ:

Ախճիգյը ճարը կըտրած էր ա կըցընըմ: Ըսկըսըմ ըն ո՛ւրո՛ւր նըհետ կըռըեվ անելը, ըտրանց կըռվան էրգյիրը տո՛ւրո՛ւր ա կյամ, էրգյինքը թոզի թըխպէրավ ծասկվըմ: Ախրը-վըէրչը թաքավըրին տըղան ո՛ւրա՛ն թորավը էն քառասուն կըլոխն էլ կըտորըմ ա, դո՛վին էր քըցըմ: Ախճիգյը ուրխանըմ ա, վըէր ո՛ւրա՛ն ազադից էտ դո՛վին ճա՛նգյա՛ն:

Հա՛մին էտ օթախին մըեչավը մին օրիշ օթախ էլ ա պըենվըմ: Թաքավըրին տըղան նի յա մըննըմ էտ օթախը, տըեսնըմ, էլհա վըեսկէ թախտին նըստալ ա մին օրիշ ախճիգյ, վըէր ըտրա քըշտին էն էրկունը մին դոզ, էնքան կյեղեցիկ, սիպտա՛կ ճըրա՛քյ, արևի լո՛ւս, աշխարքիս օխտը կյեղեցկութունը:

Ընդրա քըշտին տիրած վըեսկէ ըստոլին յրան, մին վըեսկէ դա՛փա՛զըմ զա՛ռ բո՛ւլբո՛ւլը յըերք ա ասըմ: Քառասունըիրեք կըլխանէ մին դո՛վ, ծըեռքը չա՛նին տակավը տիրած՛ էտ ըխճըկանը ծընգնին քոն ա իլա՛լ:

Ախճիգյը վըէր էտ տըղին տըեսնըմ ա, ասըմ ա. - Ա՛յ ջա՛հիլ տըղա, պա տու մըեխկը չը՛ս, վըէր քու վըեննավըտ, քու ծըեռքավըտ, յըեկալ ըս էս դո՛վին կոշտը, վըէր քյըեզ կոլ տա: Շու՛տ ըրա, փախի՛, քյինի՛:

Թաքավըրին տըղան ասըմ ա.- Ցըես դո՛վան վախողը չըմ, զո՛ւրթ-նըցուրու, վըէր նըհետը կըռըեվ անիմ:

Ախճիգյը տըեսնըմ ա վըէր ճար չիկա, ասըմ ա. Ա՛յ դոչչաղ տըղա, դէ վըէր իտի յա, մըետըտ պահի, վըէր դո՛վին կըլխըընին կըտրիս, ինքյը ասի. «Մին էլ թըխի», էլ թըխիս վէչ, թա չէ դո՛վը սըղանալու յա, քյըեզ կոլ տա:

Ասըմ ա պըրծընըմ, դո՛վին էր կըցընըմ: Կըռըեվ անիլը ըսկըսըմ ըն:

Ընտրանց կըռվան աշխարքըս դղըրդըմ ա, էրգյինքը ըրոտըմ:

Թաքավըրին տըղան մին-մին դո՛վին կըլխնին կտրում ա, վէրչի կլո՛խն էլ վըէր կըտորըմ ա, դո՛վը էր ա ընգնըմ, համ էլ ասըմ.- Մին է՛լ թըխի, մին է՛լ թըխի:

Թաքավըրին պուճուր տըղան ասըմ ա. - Ցըես իմ մոր փորան մին hըետ ըմ ծընվալ, էլ թըխիլ չըմ:

Դո՛վը ըստակըմ ա: Թաքավըրին տըղան ա՛ռնոտ թորը սըրփըմ ա,

տընըմ ի̀րա̀ն տըեղը, կյամ նստըմ էտ ըխճըկանը կոխկին։ Ախճիգյը ուր-խոթունան խըտտըմ ա ընդրան, վըեր ի̀րա̀ն ազադալա դի̀վին ճա̀նգյերա̀ն։

Ըտրանա ետը էտ ախճիգյը նան թաքավերին տըղան, քյընըմ ըն էն մընացած օթախնին, էտ դների վըեսկե-արծաթը, հարըստոթունը լոխ յոր օնըմ, վըեսկե խընձո̀րնեն էլ յոր օնըմ, ետ տըեռնըմ, կյամ էտ էրկու ըխճը-կանը կոշտը, ընդրանց էլ յոր օնըմ, ընդրանց ստոլին զա̀ռ բի̀ւլբի̀ւլնին էլ յոր օնըմ ի̀րա̀նց վըեսկե դա̀փա̀զա̀վը, ընգնըմ քունջըպոճախ, լոխ հը-վաքըմ, կյամ էտ վըերին մըեչը։

Թաքավերին տըղան ախպորցը կանչըմա, վըեր քյա̀նդիրը կախ տան։ Կախ ըն տամ։ Առաչ հանըմ ըն էն առաչի օթախին կյեղեցիկ ըխճըկանը, ի̀րա̀ն  զա̀ռ բի̀ւլբի̀ւլավը, օթախին հարըստոթունավը, ետավ հանըմ ըն էրկունջի օթախին ըխճըկանը, ի̀րա̀ն զա̀ռ բի̀ւլբի̀ւլավը ի̀րա̀ն հարըստո-թունավը։ Նոբաթը կյամ ա իրեքինջի օթախին ըխճըկանը։

Ախճիգյն ասըմ ա. - Առաչ տու տի̀ւս եկ, ետավ յըես։

- Չէ ։ առաչ տո՛ւ տի̀ւս եկ, ետավ յըես։

-Ախեր յըես գյուղում ըմ, վըեր քի̀ւ ախպերք քյըեզ տի̀ւս չըն օնելու, քյըեզ նախանձվելու յըն, մընալու յըս էս վըերըմը։ Դե վըեր իտի յա, էս ա ըստըեղ մին տոռնը կա, պեց կանիս, կտըեսնաս ընդեղ էրկու վըեչխար ի̀րի̀ւր նըհետ կըռըեվ ըն անըմ, ի̀րի̀ւր դոչի յըն տամ։ Շի̀ւտ կանիս նըստիս սիպտա̀կ վեչխարին յըրան, վըեր սըեվ վեչխարին յըրան նըստե-ցիր, քյըեզ սըեվ աշխարքըն ա տանելու, ամմա վըեր սիպտա̀կ վըեչխարին յըրան նստեցիր, քյըեզ լի̀ւս աշխարքըն ա տանելու։

Էտ լի̀ւսի պատառ ախճիգյը ի̀րա̀ն մաննան մտանին հանըմ ա, տամ էս տըղին, ասըմ. - Ինք առ էս մըտանին, վըեր նըեղ տըեղ ընդնիս, քյըեզ քյի̀մագյ կանի։

Ասըմ ա, պըրծընըմ, թաքավերին պուճի̀ւր տըղան քյա̀նդիրը ըտրա մըեշկան կապըմ ա, եր հանըմ, ետավ էլ ըտրա զա̀ռ բի̀ւլբի̀ւլը, վըեսկե դա̀փա̀զըմ տիրա̀ծ, յըետավ էլ ի̀րա̀ն օթախին վըեսկեն, բըռըլյանդը, իլա̀ծ-չիլա̀ծը լոխ եր հանըմ, ինքյը մընըմ վըերըմը, ըսպասըմ, վըեր էս ա ախ-պերքը քա̀նդիրը կախ կըտան, վըեր ինքն էլ տի̀ւս կյա։ Ամմա ախպերքը քա̀նդիրը կախ չըն տամ, ի̀րի̀ւր նըհետ խոսկ ըն կապըմ, վըեր պուճի̀ւր ախպորը վըերըմը թողին, էտքան վըեսկեն, էտ քան հարըստոթունը, էտ իրեք ախճիգյը յոր օնին, տանին պալատը, ի̀րա̀նց հորը ասին, վըեր

ուրանք դուվին ըսպանալ, ուրանք ըն էտ քան հարըստոթունը, էտ ըխճըկերքը, զառ բուլբուլը, լոխ հին չու կա, ուրանք ըն պերալ, պուճուր ախպորըն էլ դուվը կոլ ա տըվալ: Իտի էլ անըմ ըն:

Ըտրանց թողինք ուրանց ճընապան քյինին, տըեղ հըսնին, կյանք թաքավերին պուճուր տըղան խոսինք:

Էտ տըղան վըեր տըեսնըմ ա, ախպերքը ուրան թողալ ըն, ետ ա տըետնըմ վըերին մաչին տես եշըմ, տեն եշըմ, տըեսնըմ մին տոռնը: Պենըմ ա տըեսնըմ երկու դոչ էն ըն ուրուր պըզըհարըմ, ուրուր դոչի տամ: Էս տըղան հիշքան օզըմ ա սիպտակ դոչին յըրան նըստի, ամալ չի կյամ, սըեվ դոչը տակըն ա տամ, էլհա հիշքան օզըմ ա սիպտակ դոչին յըրան նըստի, սըեվ դոչը տակըն ա տամ, ըտրան տանըմ սըեվ աշխարքը, ըշտեղ օրըքըշիր միշտ էլ մը թեն ա: Էտ տըղան շատ ա տըխըրվըմ, քյեփը կոտըրըմ ա, ամմա դե, էլ հի՞նչ, ընցածը ընցալ ա, ճարը կըտրած քյընըմ ա տըեսնա մին տըեղ կըճարի՛, վըեր ընդեղ պատառ դինջանա:

Տես ա ընզնըմ, տեն ա ընզնըմ, վերչը մին պառավի տոն ա ճարըմ: Պառավը օզըմ չար էտ տըղին ընթունի, ամմա էտ տըղան ըտրան մին հափուռ վըեսկե յա տամ, պառավը ընթունում ա:

Թաքավերին պուճուր տըղան խե շատ ծըրավըմ ա: Ասըմ ա. - Ա՛յա, մին մի փառչ, յա մին դոլչա ճուր տո խըմիմ, ծարավ ճիգյարս էրվըմ ա:

Պառավը ասըմ ա. - Ա՛ բալա, ճուր չօնինք:

Ասըմ ա. - Լհա մին խըեգյ, մին ջամ ճուր տո:

Ասըմ ա. - Ախեր վըեր ճուր չիկա, ըշտըղա՞ տամ:

Վըեր տըեսնըմ ա, ճար չիկա, էտ պառավը դոլչեն մաչին թաքուն կյուզում ա, պըերըմ տամ էտ տըղին: Տըղան խըմըմ ա, տըեսնում ախեր էտ ճուր չի՛: Ասըմ ա. - Այա, էտ հի՞նչ տըվիր ինձ, ախեր էտ ճուր չար:

Ասըմ ա. - Այան քյըեզ մատաղ, ըստուծանա թաքուն չի, քյըզանա հի՞նչ թաքուն ինի, էս քաղաքըմը լոխ ճըրի կարոտ ըն: Մին վարար ախպուր օնինք, էն էլ էն ա մին օխտը կըլխանի օշափ ակնը կալած, թողըմ չի ճուր յոր օնինք: Ամմեն ճուր յոր օնելավ բիդի մին ախճիգյ քըցինք ըռեխը, վըեր թողի ճուր յոր օնինք: Էտ օշափը հազարներավ մարթ ա կոլ տըվալ, ըսօր էլ էս քաղաքին թաքավերին ըխճըկանը նոբաթն ա, բիդի պըերին ըռեխը քըցին, վըեր թողի ճուր յոր օնինք:

Թաքավերին պուճուր տըղան սուսըփուս ըտըղան տուս ա կյամ,

քյընըմ էտ ըխպըրան մուտանըմ, տըեսնըմ էս ա լա̈ց, առքյ ընելավ թաքավերին պալատականնին, պարեկամնին, ծառեքյը ծըռքըներին խոնչեքյ, լա̈վ-լա̈վ պըեներավ լիքը, թաքավերին ախճիգյըն էլ եր կալած կյամ ըն: Ժողովուրթն էլ ամեգյը մին կոժ եր կալած հըվաքվալ ըն, թա ճո̈ւր տանին: Լիա̈ օշափը պըերանը պեց ըրավ, թա ըճխըկանը կոլ տա, թաքավերին պուճուր տըղան կըծծակի մընան յրա յա հըսնըմ, թորավը հենց թըխըմ, վըեր օշափը էրկու կես ա ընո̈ւմ:

Ճո̈ւրը ըսկըըսըմ ա վըրըխկալ, ամմա հա̈լա̈ ա̈ռնի նըհետ: Թաքավերին ախճիգյը ծըեռքը թաթախ ա անըմ օշափին ա̈ռնին մաչին, թաքուն էտ տըղին մըեշկին փիչատ թըխըմ: Ճո̈ւրը վըեր թըմըզվըմ ա, լոխ ժողովուրթը ո̈ւրա̈նց կոժերը լըցնըմ ըն, օրախ-օրախ ճո̈ւր տանըմ: Ժուղովուրթը շատ ա ուրխանըմ, վըեր ազադվեց էտ օշափան, վըեր ո̈ւրա̈նց խոխորցը էլ օշափը կոլ չի տալ, վըեր էլ ճրի նեղութուն չըն քաշիլ, վըեր ճո̈ւրը վարար կյամ ա, հիշքան օզըմ ըն յոր օնին: Թաքավերը վըեր տըեսնըմ ա ո̈ւրա̈ն ախճիգյը սաղ սալամաթ ետ ա տըեռալ, վըեր լըսում ա օշափին ըսպանալ ըն, ճո̈ւրն էլ վարար կյամ ա, աշխարքըս ո̈ւրա̈նն ա տըեռնըմ, էնքան ուրխանըմ ա:

Ասըմ ա. - Շո̈ւտ արիք էն տըղին քիթիք, պըերիք, տըեսնամ էտ քաջը հո՞ւ վա իլա̈լ:

Թաքավերին մեծամեծնին քյընըմ ըն տըես ման կյամ, տըեն ման կյամ, էտ տըղին ճարըմ չըն:

Ախճիգյն ասըմ ա.- Ա՛ հա̈ր, յըես ընդրա մըեշկին օշափին ա̈ռնան իմ ծըեռքավըս փիչատ ըմ տիրալ, թող էտ փիչատին յրան էտ տըղին ճընանչին, պըերին: Իտի էլ անըմ ըն:

Տըղին ճարըմ ըն, պըերըմ թաքավերին կոշտը: Թաքավերն ասըմ ա, - Ա՛ ղոչչաղ տըղա, քու էտ վարմունքիտ հետի հի՞նչ ըս օզըմ քյըեզ տամ:

Ասըմ ա. - Թաքավերը ապրած կըենա, վըեշ մին պեն օզըմ չըմ:

Թաքավերն ասըմ ա. - Չէ՛, վըեր չէ՛, քու ըրած լըվըթունըտ մըտաս քըցիլ չըմ, ամմա բիդի ասիս, թա հինչ ըս օզըմ: Օզըմ ը՞մ ախճիգյս քյըեզ տամ, օզըմ ըս թաքավերութունիս կեսը քյըեզ տամ, հի՞նչ վըեր օզըմ ըս, տամ:

Էտ տըղան ասըմ ա.- Թաքավերն ապրած կըենա, յըես օրիշ նպատակ օնիմ, յըես էտ նպատակին հետան ըմ քյընըմ, յըես կարիլ չըմ էս մըթեն

աշխարքըմըս կըենամ, թա օզըմ ըս ինձ լըվոթուն անիս, մին թա՛իր ըրա, էս մըթեն աշխարքան տո՛ւս կյամ, ընգնիմ լո՛ւս աշխարքը:

Թաքավերն ասըմ ա. - Տա շատ տըժեր պըեն ա, տա իմ օժաս վըեր պըեն ա, տա վըեչ յըես, վըեչ էլ իմ երգյիրիս իմաստուննին գյիդա՛լ չըն, մինա՛կ էտ պըենին թա՛իրը կըգյիդա՛ Ջո՛ւմրո՛ւտ դուշը: Էն էլ էն ա օխտը սարի քըմակի, օխտը ծո՛րի քըմակի, մին դալին, մըեծ ծըմակըմ, թա վըեր կըըեցիր ճարիս, էնա լա՛վ կինի, քյըեզ էլ, վըեր պըեն պըեթկը կյա, ինձանա օզիս:

Թաքավերին պուճուր տըղան շունըրակալ ա ընուս, քյընըմ:

Քյընըմ ա, քյընըմ, օխտը սարի, օխտը ծո՛րի քըմակի մին դալին, մըեծ ծըմակըմ, մին մըեծ ծառի տակի, վըեր ճըղները մինչև երգյինք ա հըսնըմ, տիրևնին էլ թողըմ չի թա տակը մին պատառ լո՛ւս ընգնի, թեքյ ընգնըմ, թա մին խըրեգյ դինջա՛նա՛: Մին էլ ա տըեսնըմ մին մըեծ, շահմար օխծը, մին աժդահա, մին սարի չաք, էս ա յըեկավ, էտ ծառավը պըցըացավ թա Ջո՛ւմրո՛ւտ դուշին ճոտերը կըլ տա:

Էտ տըղան յըեր ա թըռչըմ, էտ ճըտերին ծըվծըվոցան սա՛րսա՛րի իլա՛ծ, թորավը մին հենց թըխըմ էտ օխծեն, վըեր օխծը ծառան դա՛ստի եր ա ընգնըմ, ըստակըմ: Էտ տըղան էտ օխծեն լըեշը կտոր-կտոր ա անըմ, ծառին կոխկին կո՛ւյտ տամ, ինքը էլիա քյընըմ թեքյ ընգնըմ, քոն ինըմ:

Ջո՛ւմրո՛ւտ դուշը քյնա՛ցա՛լ ար ո՛ւրա՛ն ճըտերին հետի կոտ ճարի, ոտելի պըեն ճարի, պըերի: Վըեր կյամ ա տըեսնըմ ընդըեղերք լոխ արուն, պո՛ւնը ա՛ռնոտ, գյուղո՛ւմ ա, թա էտ ծառին տակին քոն իլա՛ծ տըղան ա ո՛ւրա՛ն թըշնամին, գյուղո՛ւմ ա, թա էտ տըղան ա ամմեն տարի կյամ ո՛ւրա՛ն ճոտերը կըլ տամ: Ջո՛ւմրո՛ւտ դուշը օզըմ ա էտ տըղին կուտուցավը պըտըռ-պատառ անի, ճոտերը ըսկըսըմ ըն ծըվծըվալ, ճըղճըղալ, մորը հըսկըցնըմ ըն, վըեր վեչ թա էտ տըղան ա ո՛ւրա՛նց դո՛ւշմա՛նը, ո՛ւրա՛նց դո՛ւ շմա՛նը էն շահմար օխծըն ա, վըեր յըեկալ ա, թա ո՛ւրա՛նց կըլ տա, էտ տըղան թըխալ ա, ըսպանալ:

Էն վախտը Ջո՛ւմրո՛ւտ դուշը ուրխանըմ ա, վըեր ազադվալ ա էտ աժդահա օխծան, վըեր ամմեն տարի կյամ ա իլա՛լ, ո՛ւրա՛ն ճոտերը կըլ տամ, աշկը թողըմ կոնյա լիա՛ մին ճըղի յրա:

Ջո՛ւմրո՛ւտ դուշը պըեց ա անըմ ո՛ւրա՛ն թևերը, էտ տըղին հով անըմ, վըեր քախծըը քոն ինի: Վըեր էտ տըղան զո՛ւրթնա՛նըմ ա, եր կենըմ,

Ջո̈ւմրո̈ւտ դուշը ասըմ ա. - Ա՛յ տըղա, տու վըեր իմ ճոտերըս ազադեցիր էն աժդահա օխծան, վըեր տու իմ դո̈ւշմա̈նիս ըստի կտոր-կտոր ըրիր, հի՞նչ ըս օզըմ - քյըեզ տամ:

Տըղան ասըմ ա.- Վըեշ մին պըեն չըմ օզըմ, լիա̈ թաքյ ինձ լո̈ւս աշխարք տո̈ւս պըերիս:

Ջո̈ւմրո̈ւտ դուշը ասըմ ա.- Էս իմ աշկիս յըրան, յըես քյըեզ լո̈ւս աշխարք տուս կօնիմ, մինա̈կ տու բիդի իմ մին թևիս օխտը վէչխարի տըմակ տինիս, էն մին թևիս էլ օխտը տեգյ ճո̈ւր, ամմեն մին կըռընչելավըս բիդի մին տըեգյ ճո̈ւր, մին վէչխարի տըմակ քըցիս պըերանըս:

Թաքավերին պուճուր տըղան խոսկ ա տամ, վըեր էտ լոխ կըճարի պըերի: Տա քյընըմ ա սըեվ աշխարքին թաքավերան օզըմ, լոխ պըերըմ ըտըեղ, Ջո̈ւմրո̈ւտ դուշին մին թևին օխտը տեգյ ճո̈ւր ա տընըմ, էն մին թևին էլ օխտը վէչխարի տըմակ, ինքն էլ մըեշ տըեղը նըստըմ, Ջո̈ւմրո̈ւտ դուշը յոր օնըմ, թըռչըմ բիդի լո̈ւս աշխարքը: Թըռչըմ ա, թըռչըմ, սուվըծացած տըեղը կըռընչըմ: էտ վըեր կըռընչըմ ա, էտ տըղան մին վըեչխարի տըմակ, մին տըեգյ ճո̈ւր ա քըցըմ պերանը: Իտի վեց հետ կըռընչըմ ա: Խըեգյ ար մընացալ, վըեր լո̈ւս աշխարքը տո̈ւս կյան, վըեր օխտինջի դո̈ւնըմը կըռընչըմ ա, մին էլ ա տըեսնըմ, վըեր օխտինջի տըմա̈կը ծըերքան եր ա ընգնըմ: Էտ տըղան ճարը կըտրած տենակը հանըմ ա, ո̈ւրա̈ն բուդան մին կըտորը կըտրըմ, քըցըմ դուշին պըերանը: Ջո̈ւմրո̈ւտ դուշը դա̈ստի գյուդում ա, էտ բուդին կտորը կոլ չի տամ, լո̈ւզվին տակին պահըմ ա:

Վըեր լո̈ւս աշխարք ըն տո̈ւս կյամ, Ջո̈ւմրո̈ւտ դուշըն ասըմ ա. - Դե քյինի, մին տըեսնամ հունց ըս քյընըմ: Էտ տըղան կըդըլըգյե տալա̈վա քյընըմ:

Ջո̈ւմրո̈ւտ դուշըն ասըմ ա.- Ինքյ առ բուդիտ մըեսը, յըես կոլ չըմ տըվալ, լո̈ւզվիս տակին պահալ ըմ: Էս թըեփուռըն էլ եր կալ, մըեսը տիր բուդիտ յրան, թեփուռավըս քըսի, լա̈վանալու յա: Ասըմ ա պըրծընըմ, ինքը ետ թըռչըմ:

Թաքավերին պուճուր տըղան իտի էլ անըմ ա: Յարան լըվանըմ ա էլ կըդըլըգի չի տամ:

Տա ըտըղան ճանապարվըմ ա բիդի ո̈ւրա̈նց պալատը, բիդի ո̈ւրա̈ն հայրենիքը: Տա օզից վըեչ բո̈ւրդան ո̈ւրա̈նց տոն քյինի:

Ասից հա̀լա̀ մին պատառ կենամ, տըեսնամ հի՞նչ կա, հի՞նչ չիկա մըեր քըղաքըմը:

Ըտրա հետի նա շո̀րերը փոխից, քյինից մին զա̀րգյարի քըշտի շա̀գյերդ նի մըտավ: Մին օր էտ ուստան ըտրան ասըմ ա.- Պա գյուղում ըս հինչ կա, էս քանի օրըս թաքավերին մըեծ տըղան օզըմ ա փըսակվէ ո̀ւրա̀նց պըերած էն լոխճան կյեղեցիկ ըխճըրկանը նհետ:Մըհենգյ էն ախճիգյը օզըմ չի, ասըմ ա, թա. «Ինձ հըետի մին վըեսկէ շոն, մին էլ մին կատու շինիլ տո, ամմա վըեր ո̀ւրո̀ւր նըհետ կըռեվ չանին, էն վախտը յըես քյըեզ կըկյամ»: Էտ մին շատ տըժեր կործ ա, էն էլ ինձ ըն տըվալ, վըեր անիմ, մըհենգյ մընացալ ըմ մա̀թա̀լ: Գյո̀ւղո̀ւմ չըմ, թա հինչ անիմ, վըեր էտ ղազաբան պըրծընիմ:

Թաքավերին պուճուր տըղան տըեսավ, վըեր ո̀ւրա̀ն ուստան շատ ա մըտածըմ, մըետը քըցից ո̀ւրա̀ն սիրած ըխճըրկանը մըտանին, ընդրա զորութունը:

Ասից.- Ա՛յ ուստա, քընենքյ մանիլ, քյինի ինձ հետի մին փութ տըլկողին առ պըեր, յըես էս քըշեր կըշինիմ...

Ուստան հա̀լա̀ հըվատըմ չի, ամմա մըթկըմը ասըմ ա.- Մին փութ տըլկողինը հի՞նչ ա, առնիմ տամ ո̀ւրա̀ն, տըեսնամ հի՞նչ ա անըմ:

Քըշերը էտ տըղան տըլկողին օտելավ շինըմ ա: Քըշերավ ուստան կյամ ա տըեսնըմ պադրաստ, յոր օնըմ, տանըմ պալատը, տամ ո̀ւրա̀նց :

Էտ իրեք ըխճըրկորցան լոխճան պուճուրը, էն լո̀ւսի պատառ ախճիգյը, դա̀ստի գյուղում ա, վըեր էտ թաքավերին պուճուր տըղին պըենն ա:

Հըրսանիքյը ըսկըսվըմ ա: Թաքավերին պուճուր տըղան ո̀ւրա̀ն ուստան թաքուն սըեվ շո̀րեր ա կյենըմ, սըեվ ծի նըստըմ, քյընըմ հըրսանիքյը խըռնգարըմ:

Մին քանի օրանը ետը ուստան էլիա բեքյեփ կյամ ա, ասըմ.

- Պա ասիլ չը՞ս, մըհենգյ էլ թաքավերը օզըմ ա էտ լո̀ւսի պատառ ըխճըրկանը ո̀ւրա̀ն մաշնա̀կ տըղին նըհետ փըսակի, ամմա ախճիգյը օզըմ չի, ասըմ ա. - «Ինձ հետի մին վըեսկէ կատու, մին վըեսկէ մոկըն շինիլ տա, վըեր ո̀ւրո̀ւր նըհետ խաղ անին, ամմա կատուն մոկնը օտի վըէչ»:

Թաքավերին տըղան ասըմ ա. -Ուստա, քընենքյ մի անիլ, էս քըշեր յըես կշինիմ, մինա̀կ ինձ հետի մին փութ շըմբալութ առ, վըեր օտիմ:

Ուստան քյընըմ ա բըզարան մին փութ շըմբալութ առնըմ, պըերում

ուրան տամ, քյընըմ տոն:

Էտ քըշեր ուստան նան ուրան կընէգյը կյամ ըն դուքյաննին տըռնին ծակյան թաքուն եշըմ, տըեսնան, հի՞նչ ա անելու էտ շանգյերդը: Ըտրանք կարըմ չըն մին պըեն տըեսնան, ըտըեղ էլ քունավ ըն ընցնըմ:

Քըշերավ ուստան զարթնըմ ա, տոռնը պըեց անըմ, տըեսնըմ վըեսկե կատուն նան մոկնը էնա պադրաստ: Ուստան մընըմ ա մաթ մընացած, ամմա պըեն չի ասըմ, լիա յոր ա օնըմ, տանըմ թաքավերին պալատը:

Էտ լուսի պատառ ախճիգյը էլիա գյուղում ա, թա էտ հուր ծըեռքի հունարա:

Ուրուլգյուլնը թաքավերին պուճուր տըղան ուստին անա թաքուն կյարմուր շորեր ա կյենըմ, կյարմուր ծի նըստըմ, քյընըմ պալատը, էլիա հըրսանիքյը խանգարըմ:

Էքյսը թաքավերը հրամմայըմ ա, վըեր էտ հըրսանիքյը խանգարող տըղին ճարին: Ման ըն կյամ, ման, կարըմ չըն ճարին:

Թաքավերին պուճուր տըղան գյիդալավ վըեր իտի յա, սիպտակ շորեր ա կյենըմ, ուստին անա թաքուն, սիպտակ ծի նըստըմ, քյընըմ պալատը, թուշ ուրան հորը կոշտը, լոխ հորը նաղլ անըմ:

Հարը ըտըեղ ուրխանըմ ա, վըեր տըեսնըմ ա տըղան սաղ-սալամաթ յըեկյալ ա, վըեր հունցը ասալ ին, դուվը կոլ չի տըվալ:

Թաքավերը իրավունք ա տամ էտ պուճուր տըղին, վըեր հինչ օզըմ ա անի, վըեր ուրան էտ փիս, նախանձկոտ ախպորցը հինչ պատիժ օզըմ ա, տա:

Թաքավերին պուճուր տըղան օզըմ ա ախպորցը ըսպանի, մին էլ սաղ ա թողըմ, հրամմայըմ ա, վըեր ախպերքը ուրանց էն էրկու կյեղեցիկ կընանոցը յոր օնին, ըշտըեղ քյընըմ ըն, քյինին:

Ախպերքը տըխուր, աշկըռունքան աղու կաթըմ, յոր ըն օնըմ ամեգյը ուրանց կընանեքյը, մըեծ ախպերը մըեծ ախճիգյը, միշնակը՝ միշնակ ախճիգյը, քյընըմ, հըռանըմ ուրանց երգյիրան:

Թաքավերը ուրան թախտան եր ա կյամ, ուրան պուճուր տըղին թախտին նստըցընըմ, ասըմ». - Մըհենգյանց տենը տու կինիս թաքավերը, յըես էս ա պըռավլ ըմ:

Պըերըմ ա տըղին մին էլ էն լուսի պատառ ըխճըկանը ուրուր նըհետ փըսակըմ, օխտը օր, օխտը քըշեր հըրսանիքյըն անըմ, սաղ ժողովուրթին

կանչըմ, ուտըցընըմ, խըմըցընըմ, կըլխըներին վըեսկե շաղ տամ: Իտի էլ թաքավերին պուճուր տըղան թաքավեր ա տըեռնըմ, էն լո̂ւսի պատառ ախճիգյըն էլ թաքուհի: Մին տըեղ մինչև ո̂ւրա̂նց էրգյան գյանքին վըերչը ապրըմ ըն սիրավ, լավ, ժողովուրթին էլ շատ ըն սիրըմ:

Ըտրանք հասին ո̂ւրա̂նց մուրազին, տուք էլ հասնիք ձեր մուրազին: Երգյինքան իրեք վըեսկե խընձո̂ր եր ընգավ. մինը՝ ըսո̂ղին, մինը՝ կյըրո̂ղին, մինը էլ՝ էս հա̂քյաթը լո̂ւս աշխարք հանողին:

## 2.ՍԻՆԱՆ ԹԱՔԱՎԵՐԸ

Ինըմ ա, չինըմ մին թաքավեր ա ինըմ: Ըտրան ինըմ ա իրեք տըղա: Թաքավերը ուրա̈ն տըղորցը նասյաթ ա տամ, վըեր ինքը մըեռնի, ուրա̈ն կյըրեզմանին յրան օխտը օր ղարավուլ կենան: Թաքավերը վըեր մըեռնըմ ա, մըեծ տըղան քըշերը փա̈նա̈րը յոր ա օնըմ, քյընըմ ղարավուլ քաշըմ:

Տըղան նըկատըմ ա, վեր մին վագր ա կյամ: Էտ վագրը կըտաղած կյա̈մ ա կյըրեզմանը քանդըմ, թաքավերին մեյիդը հանըմ, իրեսին իրեք հետ թըքըմ, էտ տըղին էլ մին լա̈վ կյոտըմ, քյընըմ:

Քըշերավ տըեսնըմ ըն, վըեր էտ տըղան կյամ չի, եր ըն կենըմ հետան քյընըմ, տըեսնըմ էտ տըղին օշը տարած, ըտըեղ եր ընգած, մեյիդն էլ էն ղոլին եր ընգած: Մեյիդը թաղըմ ըն, էտ տըղին էլ յոր օնըմ, կյամ:

Էն մին ուրուզյունը թաքավերին միշնա̈կ տըղան ա քյընըմ ղարավուլ կաղնըմ: Քըշերը էլիա էտ վագրը կյամ ա, կյըրեզմանը քանդըմ, մեյիդը հանըմ, իրեսին իրեք հետ թըքըմ, քյընըմ: Էտ տըղան էլ վախելան նըհետ օշը տանըմ ա: Էքսը կյամ ըն տըղին ետ պերըմ, մեյիդը թաղըմ, քյընըմ:

Իրեքինջի ուրուզյունը պուճուր տըղան ա քյընըմ:

Քըշերվա կեսին տըեսնըմ ա, վըեր վագրը կյամ ա: Տա կյողը կացած տըեղան թըվա̈նգյը թուշ ա օնըմ, թա ըսպանի, վըեր լհա̈ վագրը ըսկըսըմ ա կյերեզմանը քանդիլը, էտ տըղան գլուլլա̈ն յրայա անըմ թուշ ճըկատան տամ: Վագրըը հա̈լա̈ սատկըմ չի, փըչըմ ա թա էտ տըղան կորչի, ամմա տըղան մընըմ ա տըեղը կազնած, մինա̈կ ծըեռքին փա̈նա̈րը հանգյըմ ա: էտ տըղան մին էլ ա գյուլլա̈ն յրա անըմ, վագրը եր ա ընգնըմ, սատկըմ: Էտ տըղան վագրին մորթին մաշկըմ ա, յոր օնըմ, ետավ յեշըմ ա, տըեսնըմ մին հեռու տըեղ կրակ ա ըրվըմ, տա էտ մորթին թողըմ ա ըտըեղ, ճընապարվըմ բիդի կրակը, վըեր փա̈նա̈րը նի կըցընի: Ճընապարին պըտահըմ ա մին պառավ մարթի: Էտ մարթը նըստած, թիլ ար կըծկըմ, սըեվ թիլը պըռծած, օզըմ ար թա սիպտա̈կը ըսկըսի:

Էտ տըղան ասըմ ա. - Պարո՛վ, ա ղորփեր:

-Պարով, ա ախպոր տըղա:

- Հի՛նչ ըս անըմ:

- Կըծեզյ ըմ կըծկըմ:

- Ըտրանք էտ հի՛նչ կըծկընի յա՛:

- Էս սըեվը քըշերն ա, էս սիպտա̈կը ցիրեկը, քըշերը պըռծալ ա, մըհեզյ

էլ սիպտՙակըն ըմ կըծկըմ:
- Ա՛ ղորփեր, տու հՙալՙ քըշերը պահի, հՙալՙ սիպտՙակը կըծկիլ մի ես քյինիմ, էն հըեռու տըեղան կրակ յոր օնիմ, փՙանՙարը նի կըցընիմ, կյամ:
- Պահ քու տոնը շինվի՛, միչև տու ընդեղ քյինիս, կյաս, մին տարի կտըեռնա,հի՛նչա, օզըմ ըս ժողովուրթը մին տարի քոն ինի՛:
Ըտրանք ՙուրՙուր նըհետ հՙոջաթ ըն տամ: Էտ տըղին կոխկը հաստ ար, ՙուրՙան ասածի, պառը կո՛շտ: Տա էտ պառավ մարթին կըռները կապըմ ա, կըծկընին էլ կըտորըմ, թող անըմ քըցըմ մինը էս ղոլը, մինը էն ղոլը, ինքը քյընըմ կրակի:
Վըեր տըեղ ա հըսնըմ, տըեսնըմ ա էտ կրակին կոխկին չըրքըպՙուլոր քռասուն օշափ քոն իլՙած, մեշ տըեղըն էլ էտ մըեծ, ղըռ ղոռանչի նման կրակըն ա, յըրան էլ քառասուն ՙունգյնՙավեր մին ղազան, մըեչին քառասուն վեխճար ա իփում: Էտ թաքավերին պուճուր տըղան քյընըմ ա ըտրանց կըլխավը լոք տամ, ղազանը էրկու ծըեռքավ պըցըրցնըմ, էն ղոլին տընՙում, կըրակ յոր օնըմ, փՙանՙարը նի կըցընըմ, ղազանը կըրակին յրան տիրած քըսկարինքին տընՙում, թա ետ տըեռնա, էտ օշափներան մինը զՙարթնըմ ա հարայ տամ, թա. - Եր կացիք, հա՛, եր կացի՛ք, մըեր մուրազը կաղարողը յըեկալ ա...
Լոխ եր ըն կըենըմ էտ տըղին փըռնըմ, ասըմ.- Թա մըեր մուրազը կըկաղարիս, քյըեզ սաղ կթողինք, թա կաղարիլ չըս, քյըեզ կոլ ընք տալու:
Տըղան ասըմ ա. - Հի՞նչ ա ծեր մուրազը:
- Ըստըղան մոտե մին թաքավեր կա, ըտրան մին ախչիգյ օնի, մունք օզըմ ընք, տամ չի, բիղի քյինիս օղիս, պըերիս մըեզ տաս:
Էտ տըղան ճարը կըտրած խոսկ ա տամ: Եր ըն կըենըմ, քյընըմ էտ թաքավերին պալատին կոշտը:
Էտ տըղան ասըմ ա. - Քյըեցեքյ մըեծ-մըեծ մեխեր պըերիք էս պատին թըխինք, յըես պըցրՙանամ պալատին կըլոխը, ծըզ էլ մին-մին պըցըրցնիմ: Մեխերը թըխըմ ըն: Ամմա առաչ էն տըղան ա պըցրՙանըմ, ետավ էտ օշափնին մին-մին ըսկըսըմ ըն պըցրՙանալը: Էտ տըղան պըցրՙացածին կըլՙուխը կտրըմ ա, քըցըմ պատին էն դՙուլը. զըվՙաքիս թա անց ա կըցընըմ: Իտի էտ քառասուն օշափին կըլխընին կըտրըմ ա ըսպանըմ, ինքը քյընըմ, տըեսնըմ մին տոռնը: Տոռնը պըեց ա անըմ, տըեսնըմ մին նախշուն ախճիգյ ըտեղ քոն իլՙած: Վըններին նան կըլխին ղոլին մին-մին վըեսկե

կոլա, մաչին մըղըրաճո՛ւր: Էտ տըղան մըղըրաճո՛ւրը խըմըմ ա, էտ ըխճը-կանը մին լա՛վ պաչըմ, թա քյինի, մին էլ ա տըեսնըմ մին օշափի չանք օց պատան տո՛ւս յըեկավ, օզըմ ա թա էտ ըխճըկանը կոլ տա: Էտ տըղան վըեր թըխըմ ա էտ օցին, օցը նի յա խըրվըլըմ պատը:

Տա փա՛նա՛րը էլիա վառըմ ա, ետ տըեռնըմ հորը հա՛նգյիստը: Ճընա-պարին էլիա ջիհըմ ա համին էն պառավ մարթին, ասըմ, - Պարյօր ղորփեր:

Ասըմ ա.- Ասծու կրակը կըլխիտ:

Ասըմ ա. - Խե՞:

Ասըմ ա. Ժողովուրթը էս ա մին տարի յա կըտորվըմ ա առանց արևի լուսի:

Էտ պառավ մարթը վըեր իտի յա ասըմ, էտ թաքավերին պուճուր տըղան թիլերը հըվաքըմ ա, տամ էտ մարթին: Էտ մարթը կըծկընին յոր ա օնըմ թա կըծկի, տըեսնըմ ա տըեղ-տըեղ կըտորած:

Էտ տըղան ասըմ ա, - էս խե՞ յա իստի:

Էն պառավ մարթը ասըմ ա, - Հիշքան կըտորած տըեղեր կա, էնքան էլ մարթ ա մըեռալ: Էտ տըղան յոր ա օնըմ թա՛զա՛դան էտ թիլերը կապըմ, սիպտա՛կը՝ սիպտա՛կին նըհետ, սըեվը՝ սըեվին, էլիա առաչվա նման կոծը առաջ ա քյընըմ:

Տըղան քյընըմ ա, քյընըմ, հըսնըմ ո՛ւրա՛ն հորը հա՛նգյիստը: Լո՛ւսանըմ ա, ըտրանց պալատըմը գյուղում ըն, թա վազըը ըտրան կերալ ա, կյամ ըն տըեսնըմ փա՛նա՛րը ծըեռքին սաղ-սալամաթ կաղնած, վազրին մաշկած, մորթին ընդեղ եր ընգած: Ըտրան շատ ըն թա՛րիփ անըմ, տանըմ պալատը, քյըեփ անըմ: Մին քանի վախտանը ետը էտ տըղան մըետն ա քըցըմ են ըխճըկանը, համ էլ ախպորցը խնթրըմ ա, վեր քյինին ո՛ւրա՛նց համար ախճիգյ օզին: Ախպորցը յոր օնըմ, քյընըմ էն պալատը: Ըտեղ էն օցը պատավը քըշացալ ար, թա էն ըխճըկանը կոլ տա: Օցին սպանըմ ա:

Քյընըմ ա, տըեսնըմ մին խիլլա ժողովուրթ ըն հըվաքվալ, էտ ըխճը-կանը հո՛ւր թաքավերը ասըմ ա.-Ա՛յ ժողովուրթ, հուվըեր էն օցին սպանալ ա, թող տո՛ւս կյա, ախճիգյըս ընդրան ըմ տամ:

Ժողովուրթին մաչան մինն ասըմ ա, «Յըես ըմ ըսպանալ», էն մինն ասըմ ա. «Յըես ըմ ըսպանալ», լոխ սըտըրստ:

Էն թաքավերին պուճո՛ւր տըղան ղրաղ կաղնած լըսըմ ա, ետավ

մուտանըմ ա էտ թաքավերին, ասըմ. - Թաքավերը ապրած կընենա յըես ըմ ըսպանալ օցին:

Թաքավերն ասըմ ա. - Պա հու՞նց ըս ըսպանալ:

Տըղան լոխ նաղլ ա անըմ: Թաքավերն ասում ա դե վեր տու յըս ըսպանալ, էք օցը պատան տո՛ւս պըեր:

Տըղան քյընըմ ա օցը պատան տո՛ւս պերըմ: Թաքավերն ասըմ ա, - Ինձ իրեք ախճիգյ օնիմ, իրեքան էլ քյեզ ըմ տամ:

Թաքավերին պուճո՛ւր տըղան մըեծ ախճիգյը տամ ա մըեծ ախպորը, միշնա՛կ ախճիգյը տամ ա միշնա՛կ ախպորը, պուճո՛ւր ախճիգյըն էլ ինքն ա յոր օնըմ:

Էտ ըխճըկերքը յոր ըն օնըմ, եւտ տըեռնում բիդի ո՛ւրա՛նց հայրենիքը: Ճընապարին ըտրանք մին ծովի քըշտի չա՛դիր ըն յեր թողըմ, վըեր քըշերը կըենան: Քըշերավը մըեծ ախպերը եր ա կըենըմ, թա քյինի իրեսը լըվանա, տըեսնըմ ա, մին օշափի չանք օց չա՛դիրին չորս դո՛լավը փըըթաթվալ ա, կըլո՛խն էլ տիրալ տըռնին առաչին: Էտ մըեծ ախպերը մին էլ նի յա մընըմ չա՛դիրը, թեքյ ընգնըմ ո՛ւրա՛ն տըեղը:

Միշնա՛կ ախպերըն էլ ա իտի անըմ: Պուճուր ախպերը վըեր զուրթ-նանըմ ա, լոխճին եր ա կըցընըմ վըեր տո՛ւս կյան չա՛դիրը քանդին, քյընա՛ն:

Էտ օցը մըեծ ախպորը ո՛ւրա՛ն կընգանը նըհետ ա թողը մ, տուս ըն կյամ, քյընըմ: Միշնա՛կ ախպորը ո՛ւրա՛ն կընգանը նըհետ թողըմ ա, տո՛ւս ըն կյամ, քյընըմ: Պուճուր ախպերն էլ ո՛ւրա՛ն կընգանը նըհետ օզըմ ա թա տո՛ւս կյա, օցը թողըմ չի: Թաքավերին պուճուր տըղան ասըմ ա, - Խե՞ չըս թողըմ, քյընինք:

Օցը ասըմ ա. - Յըես մուրազ օնիմ, բիդի կադարիս:

- Հի՞նչ մուրազ ա:

Բիդի քյինիս Սինան թաքավերին թաքուն պըեները, սերը-սեկրետը, գյիդա՛ս, կյաս, ինձ ասիս: Վըեր գյիդա՛ս վըեչ, քյըեզ կո՛լ ըմ տալու:

Էտ տըղան ասըմ ա. - Բա կընե՞գյս:

- Կընգանըտ քըշերը յըես մարթ կըտըեռնամ, մարթութուն անիմ, ցերեկն էլ օց կըտըեռնամ:

Թաքավերին պուճո՛ւր տըղան մընըմ ա մա՛թա՛լ: Դե հինչ ա՞նի, յաղու ծըեռք ա ընգա՛լ:

Տա ճընապար ա ընգնըմ, քյընըմ: Քյընըմ ա, քյընըմ, շատ նան խըեգյը

աստուծ կգյիդա̀, քյընըմ ա հըսնըմ մին պառավ մարթի: Էտ պառավ մարթը ասըմ ա. - Ա՛ բալա, էտ ըշտըե՞ղ ըս քյընըմ:

Քյընըմ ըմ Սինան թաքավըրին սերը-սեկրետը պերիմ:

Վա՛յ, վա՛յ, խըե՛ղճ տըղա, տու կարիլ չըս Սինան թաքավըրին սերը-սեկրետը գյիդաս, եք կոշտըս, քյըեզ սըվըրցընիմ: Վըեր իտի քյինիս, քու առաչըտ ա կյալու մին դա̀լին ծըմակ, վըեր էտ ծըմակը տըեսնաս, կասիս. «Էս հի՛նչ լա̀վ ճընապար ա», վըեր ասիս վըեչ կարելու չըս անց կըենաս: Ետավ քյընա̀լո̀ւ յըս, քյըեզ պըտըհիելու յա Զո̀ւմրո̀ւղ դուշը: Էս ա քառասուն տարի յա էտ դուշին վըեննը քարկեծ ա տըեռալ: Ըտըեղ մին չա̀դիր եր կըթողիս, մաչին կըենաս: Վըեր էտ դուշը կյա, մին սոր փըեղավ վըեննը կծակիս, վահարը տո̀ւս կըկյա: Հա̀լա̀ առաչը ըսելու յա. «Էտ հո՞ւ վըս, տո̀ւս եք, քյըեզ հում-հում օտիմ...»: Ետավ վըեր վըեննը դինջանա, ըսելու յա. «Էտ հո՞ւ վըս, տո̀ւս եք, հինչու օզիս, քյըեզ ըմ տալու: Տո̀ւս կըկյաս, ասիս. «Յըես Սինան թաքավըրին սերը-սեկրետն ըմ օզըմ գյիդամ»: Վըեր իտի ասիս, Զո̀ւմրո̀ւղ դուշը ըսելու յա. «Քյըեզ սըվըրցնողին վիզը կոտրի՛»... Դե վըեր իտի յա քյինի, քու առաչըտ ա կյալու մին ծով: Էտ ծովին ճո̀ւրը վըետած ա ինելու: Կոզի վըետած, մին խըրեգյ կխմիս, ասիս. «Ուխաա՛յ, էս հի՛նչ լա̀վ ճո̀ւր ա»: Կասիս, պըրծընիս ճընապա ընգնիս, վըեր ասիս վըեչ, ծովը քյըեզ հըդե չի տալու: Ինք առ, քյըեզ մին թեփուռ էլ տամ, վըեր փիս տըեղ ընգնիս, թեփուռը վառի, կթռչիմ, հըսնիմ:

Թաքավըրին տըղան քյընըմ ա, Զո̀ւմրո̀ւղ դուշը հունցը ասալ ա, իտի յա անըմ, վերչը քյընըմ Սինան թաքավըրին պալատին քըշտին մին քարի յրա նըստըմ: Մարթ ա ղըրկըմ, թա. «Մին տըղա յա յեկալ, օզըմ ա քյըեզ տըեսնա»:

Սինան թաքավըրը ասըմ ա. - Թող կյա, բա էտ տըղան տըեսնըմ չի էս պալատին չորս դո̀լին վըեսկըռնի՛ն, պա ըտրան վախ չընի՞, ահ չըն, կըլխան ծըեռք ա յեր կալա՛լ:

Թաքավըրին պուճո̀ւր տըղան կյամ ա նի մննըմ, ասըմ. - Թաքավըրը ապրած կենա, իմ կըլո̀խըս կըտրիլը կըտրելու յըն, լա̀վն էն ա, տու կըտրիս: Խընթըըմ ըմ քու սերըտ-սեկրետըտ ասիս, ետավ կըտրիս: Թաքավըրն ասըմ ա. -Ինձ իլա̀լ ա մին կընեգյ, մին ախճիգ,մին զեմքուչ: Յըես հիշքան լա̀վ ծի պահողնի փըռնեցի, վըեր իմ ծիյանքըս լա̀վ պահի, էլհա քյընըմ ի տըեսնըմ ծիյանքըս լղար, նըղացած, էրկուսն էլ քըռթընքած:

Վըեր իըրցընըմ ի ծիյապահներին, թա. «Խե՛ յա իտի», սո՛ւս ին անըմ: Ցըես էլ ըտրանց կըլո՛խը կըտրիլ ի տամ: Նոբաթը կյամ ա մին քյասիբ տըղի, վըեր ծիյանքը պահի: Ցըես էլ էտ քշերը քյընըմ ըմ թաքուն ղարավուլ քաշըմ, տըեսնամ էտ խե՛ յա իտի: Մին էլ ըմ տըեսնըմ կընեգյըս նան զեմքուչս եկին, ծիյանքը եր իլին, քյեցին: Մինչև ծըքծըքո՛տելը տըեսնամ էս ա եկին, ծիյանքը կըպեցին, նի մըտին պալատը: Քյընըմ ըմ թա էտ տըղին կլո՛խը կտրիլ տամ, ասըմ ա. «Թաքավերը ապրած կըենա, իմ կըլո՛խըս կըտրիլ մի, էս քըշեր տու եք ծիանքը պահի, կգյիդա՛ս»: Էտ քըշեր յըես ծիյապահին շո՛րերը կյենըմ ըմ, քյընըմ, վըեր ծիյանքը պահիմ: Մին էլ ըմ տըեսնըմ լիա կընեգյս, զեմքուչս եկին ծիյանքը օզեցին: Ծիյանքը տըվի ըտրանց, յըես էլ մին օրիշ ծի նստեցի, ըտրանց հետան քյեցի: Քյընըմ ըմ տըեսնըմ մին մըեծ կարան, էտ կարանին մըեչին քառասուն ղաչաղնի, ըտրանք քյընըմ ըն լոխճին նըհետ ո՛ւրա՛նց գյըղա՛ցածը անըմ, ետ տըեռնըմ:

Ըստըեղ էտ թաքավերը սո՛ւս ա անըմ, թառանչ քաշըմ, մին հետ ո՛ւրա՛ն վըեսկե նախշերավ չուբուխը քաշըմ, թանձըր ծոխը նի քաշըմ, էլիա՛ նաղլ անըմ.- Վըեր էտ տըեսնըմ ըմ, հա՛լա՛ սուս ըմ անըմ: Ամմա զեմքուչս շատ օխծը կծածըն ար, խորամանգ աղվես, փա՛նդը-փիլ գյըղո՛ղ, լո՛ւզվավը օխծը պո՛ւնան հանող, մին օզզյա՛ պըե՛ն: Տա կըլխու յա ընգնըմ, վըեր յըես ո՛ւրա՛նց քըմական թաքուն քյեցալ ըմ: Տա էտ ղաչաղներին իմաց ա տամ, ըտրանք ինձ փըռնըմ ըն վըեննըրծեռքըս կապըմ, եր քըցըմ: Զեմքուչըս էլ ծըեռքին մին ճըպատ ա ինըմ, էտ ճըպատավը համ ինձ թըխըմ ա, համ էլ ասըմ. «Թաքավերը շոն տըեռնա, թաքավերը շոն տըեռնա ...»: Ցըես շոն ըմ տըեռնըմ:

Վըեր կյամ ըն պալատ, տըեսնըմ ըն ո՛ւրա՛նց հացթուխը հաց թըխելիս, ըտրա ախճիգյըն էլ խոնչին յրան պո՛ւլերը կըրելիս: Զեմքուչըս էտ ըխճըկանն ասըմ ա. «Ախճի՛, էտ շանը տար հաց տո, տար ծեր տանը պահի»: Էտ ախճիգյը շընը տոռն ա տանըմ, համ էլ ասըմ. «Ա մա՛ր, էս շանը աշկերը հենց ա մըեր Սինան թաքավերին աշկերը ինի: Մա՛րն ասըմ ա. Ծըենտ կըտրի, Սինան թաքավերը կըլսի, կկյա՛ քյեզ կըսպանի»: Էտ ախճիգյը կյամ ա պալատը, ման կյամ, ման, տըեսնըմ թաքավերը պալատըմը չի, մին օթախի տըռանը քըմակին էլ մին ճըպատ տիրա՛ծ: Էտ ախճիգյը շո՛ւտա՛նց լըսած ա ինո՛ւմ էտ ճըպատին մասին, գյուղո՛ւմ ա ինո՛ւմ ըտրա զորութո՛ւնը: Ճըպատը յօր օնըմ քյընըմ, քըթենըմ շանը, ճըպատավը

թըխըմ, ասըմ. «Մըեր թաքավերը հունցու շոն ա տըեռալ, ինդի էլ թաքա-վեր տըեռնա»:

Յըես, Սինան թաքավերս, թա̀զա̀դա̀ն մարթ ըմ տըեռնըմ, նըստըմ իմ թախտին: Էտ ծըպատը յոր օնըմ, կընգանս թըխըմ, ասըմ. «Մին սըեվ էշ տըեռ, մեշկիտ էլ մին մըեծ յարա»: Իտի էլ տըեռնըմ ա: Զեմքուչիս կանչըմ ըմ էտ ծըպատավը թըխըմ, ասըմ. «Ա՛ զեմքուչ, ազար-բըեզա՛ր , մին սըեվ ակռավ տըեռ, քյընա̀ ամեն օր ըխծըկանըտ մըեշկին յարան կըտկոտի»: Իտի էլ տըեռնըմ ա:

Ըստըեղ Սինան թաքավերը ո̀ւրա̀ն խոսկը պըրծընըմ ա, ասըմ. - Էս ա իմ սերս-սեկրետս, ա՛ ջա̀հիլ տըղա: Դե մըհեգյ էլ բիդի քու կլո̀խտ կըտրիլ տամ:

Թաքավերին պուծուր տըղան ասըմ ա. - Թաքավերը ապրած կըենա, թող տո̀ւս կյամ մին խըրեգյ ըշխարքիս եշիմ, էլհա կյամ:

Թաքավերը թողըմա: Էտ տըղան քյընըմ ա մին քյո̀ւնջ նի մըննըմ, Զո̀ւմըո̀ւտ դուշին թեփուռը ջուբան հանըմ, վառըմ: Վըեր վառըմ ա, Զո̀ւմ-ըո̀ւտ դուշը ծըեռաց կյամ ա, թաքավերին պուծուր տըղան նըստըմ ա ընդրա մըեշկին թևերին թափ ա տամ, թա թըռչի, Սինան թաքավերին ախճիգյը ասըմ ա. -Հինչ կինի ինձ էլ նըհետըտ տանիս, հունցու քու կընեգյըտ:

- Յըես կընեգյ օնիմ:

- Դե հո՞ւնց անինք, ինձ էլ տար:- Ըտրան էլ ա յոր օնըմ տինըմ թևերին, քյընըմ ըն:

Հարայը պալատըն ա ընգնըմ, թա թաքավերին սերը-սեկրետը տարին, ախճիգյը տարին: Էտ վըեր Սինան թաքավերը լըսըմ ա, ծըեռաց սըերտը ճաքըմ ա, մըեռնըմ:

Ըտրանք թըռչըմ ըն, քյընըմ հա̀մին էտ օցին կոշտը, թաքավերին պուծուր տըղան Սինան թաքավերին սերը-սեկրետը ըտրան նաղլ ա անըմ. օցըն էլ ըտրա կընեգյը տամ ա ո̀ւըո̀ւն, յոր ա օնըմ էտ ըխծըկանր նըհետ կյամ ո̀ւրա̀ն հայրենիքը, ո̀ւրա̀ն հորը պալատը: Ըտըեղ լա̀վ հըրսանիք ըն անըմ, լա̀վ էլ ախպերք-ախպերք ապրըմ, ժողովուրթին էլ լա̀վ եշըմ:

## 3.ՎԸԵՍԿԵ ՂՈՉԸ

Ինի՛մ ա, չինի՛մ մին թաքավեր ա ինի՛մ: Էտ թաքավերին ինի՛մ ա վեց տըղա. մինը մինան դյ՛շյ՛նգյ, մինը մինան օժավ: Անց ա կենըմ մին խիլլա վախտ, էտ տըղերքը մըծանըմ ըն, ըտրանց փըսակվելի վախտը կյամ ա:

Մին օր մըեծ տըղան հորըն ասըմ ա. - Ա՛ հյ՛ր, թող յըես քյինիմ յարմուկա , տըեսնամ՝ հինչ կա, հինչ չի կա:

Հյ՛րը ռազի յա կըենըմ: Էտ տըղան քյընըմ ա յարմուկա, ետ տըեռնալիս մըթեն ա ընգնըմ: Ճընապարին մին տոն ա ինըմ: Տա էտ տոնը ղոնաղ ա ընգնըմ: Քըշերը քոն ա ինըմ, ուռութանա եր ա կըենըմ, տի՛ւս կյամ հայաթը, թա իրեսը լըվանա, բի՛ւրդյ՛ն մին իշեղ ա ընգնըմ աշկավը, էլիա կորչըմ:

Տա գյուղում չի, թա էտ հի՞նչ ա, ասըմ ա. - Հյ՛լըփյ՛թ արևըն ա, տի՛ւս ա կյամ:

Տա իրեսը լըվընյ՛լյ՛նը ետը տոն ա նի մըննըմ: Տանտըրի՛ւչան հըրցընըմ:

Տընատարը ասըմ ա. - էտ թաքավերին ախճիգյն ա: Նա մինյ՛կ ամման ուռութանա յա տի՛ւս կյամ, էլիա իթտըըբաթտի ընի՛մ: Հիշքա՛ն տըղերքյ ըն եկալ թա օզի՛ն, ամմա կըրացալ չըն: Հյ՛րը էտ փըեսացուններին ժամանակ ա տըվալ, ասալ.«Թա կարիքյ իմ ախճիգյըս ճարիք, ծըեզ կըտամ, ծըեզ հալալ, թա չէ ծըեզ կըտորել ըմ տալու»:

Թաքավերին տըղան վըեր էտ լըըմ ա, դյ՛ստի քյընըմ ա էտ ըխճըկանը հորը կոշտը:

Էտ թաքավերը ըտրան վեց օր վախտ ա տամ: Վեցինջի օրը էտ տըղան ճարըմ չի ըխճըկանը: Էտ տըղին հունցու պայման ին կապալ, ինդի էլ անըմ ըն, տանըմ ըն ըսպանըմ:

Էտ տըղին թաքավեր հյ՛րը, ախպերքը շատ ըն մըտածըմ, թա խե չի կյամ, խե՞յա ետանըմ: Թաքավերը գյուղի՛մ ա, վըեր մին օրիշ թաքավեբոթունի մեչի մարթ ըն սպանըմ: Թաքավերը տըըըկյուսի՛մա:

Անց ա կըենըմ մին խիլլյ՛ վախտ: Թաքավերին էրկունջի տըղան էլիա ղաչանք ա անըմ հորը, վըեր ի՛ւրյ՛ն թողի, քյինի յարմուկա: Թաքավեր նան թագուհին թողըմ չըն, ամմա էտ տըղան զոռըմ ա, քյընըմ: Էտ տըղան էլիա ղոնաղ ա ընգնըմ էտ տոնը, էլիա համին էն ըխճըկանը դյ՛րդյ՛ն ըտրան սպանըմ ըն:

Իտի թաքավէրին հինգ տըղերքը քյընըմ ըն էտ ըխձըկանը դնըրդնն կըլխընին բաղա տամ:

Մընըմ ա լոխձան պուձուր տըղան:

Մին օր էտ պուձուր տըղան կյամ ա հորը կոշտը, ղաչանք անըմ, վըեր թողի, քյինի յարմուկա: Թաքավէրը թողըմ չի, էտ տըղան շատ ա ղաչանք անըմ, ասըմ, - Ա հնր, լնվա, թող քյինիմ տըեսնամ ախպէրքըս ըշտըեղ ըն, քյինիմ ընդրանց յա ազադիմ պըերիմ, յա ընդրանց նըհետ մինտըեղ մըեռնիմ:

Հնրը շատ կըզնըվըմ ա, ասըմ, - Քյընըմ ըս, քյինի, ջըհնննդնմը-գյոռը թա քյընըմ ըս, ըրեվ ատակը թա քյընըմ ըս, իստիբուջաղը թա քյընըմ ըս: Ցըես էլ կասիմ, թա իսկի տըղա չօնիմ… էտ տըղան հիշքան կարըմ ա, վըեսկէ յա յոր օնըմ, էն մին օրը հըղէ ինըմ յարմուկա:

Քյընըմ ա յարմուկա ետ տըեռնալիս մըթեն ա ընգնըմ, քյընըմ ա հնմին էտ տոնը ղոնաղ ընգնըմ, քըշէրը ըտըեղ կըենըմ, էքսը եր կենըմ, ուռութանա տՙըս կյամ տՙռնը, թա իրեսը լըվանա, մին շափաղ ա աշկավը ընգնըմ, մին էլ կորչըմ: Էտ տըղան գյուղում ա թա արևըն ա շոխկը քըցալ, մին էլ թըխպավ ծասկվալ: Կյամ ա տոն տընըրտըրՙւչըն անա հըրցընըմ: Տընատարը նաղլ ա անըմ էտ լոխ, հինչու մըեծ ախպորը նաղլ ա ըրալ: Ըտըեղ էտ թաքավէրին պուձուր տըղան դնստի կըլոխ ա ընգնըմ, վըեր ՙւրնն ախպէրքը ՙւրննց կըլՙխը ըտըեղ ըն բաղի տըվալ::

Էտ տըղան տՙըս ա կյամ, քյընըմ թաքավէրին կոշտը պայման կապում, վըեր չորս օրըմը կըձարի ընդրա ըխձըկանը, վըեր ձարի. նըհետը փըսակվէլու յա: Ըտըանա ետը կյամ ա հնմին էտ տոնը, վըեսկէն յոր օնըմ, քյընըմ մին զնրգյնրի կոշտ, ընդրան ասըմ, վըեր մին վըեսկէ ղոչ շինի, վըեր ինքը մէչին տըղվարվի, մէչի դՙլան էլ տՙռնը քըլլի:

Հունցը ասըմ ա, իտի էլ զնրգյնրը ղոչը շինըմ ա: Էտ տըղան մին խիլլն վըեսկի յա տամ, ղոչը յոր օնըմ, քյընըմ: Ետավ մին էրկու մարթի փող ա տամ, վըեր էտ էրկու մարթը էտ ղոչը էտ քաղաքին քՙւչՙցավը ման ածին: Ինքն էլ վախտին նիյա մընընըմ մէչը: էտ էրկու մարթը էտ ղոչը սաղ քյՙւչՙցավը ման ըն ածըմ, պըերըմ թաքավէրին պալատին կոխկավը թա տանի՛ն, թաքավէրին ծառէրը տՙըս ըն կյամ, թմաշա անըմ: Ըտրանցան մինը քյընըմ ա թաքավէրին ասըմ, թա իստի-իստի պըեն կա: Թաքավէրը տՙըս ա կյամ էտ ղոչը պըերիլ տամ ՙւրնն հայաթը թըմաշի հըետի:

Թաքավերին ախճիգյը, միշտ տափին տակին մին պալատ կար, ընդըեղ էր ապրըմ, վըեր վըեշ մինը ո̈ւրա̈ն տըեսնա վէչ: Նա մինա̈կ ո̈ւրա̈ն պալատին ըխճըկորցը, ո̈ւրա̈ն դուլլուղչոցը իրեսն ար տըեսնըմ: Ըտրանց նըհետ խոսըմ, ասըմ, ինքը տոն չար կյամ, քանի վըեր արնին նըման շըղշողըմ ար:

Վըեր ղոչը պըերըմ ըն, էտ ըխճըկորցան մինը կյամ ա, ասըմ. - Քու հա̈ր մին վըեսկէ ղոչ ա թողալ պըերին պալատին հայաթը, վըեր տըեսնաս քյեփըտ կկյա, էնքան ղաշանգյ ա, թող քյըեզ էլ թողի, տըեսնաս:

Ախճիգյը հորը խընթըրըմ ա, վըեր վըեսկէ ղոչը պըերին տըեսնա:

Հա̈րը էտ էրկու մարթին խիլլա̈ փող ա տամ, ասըմ. - Հի՞նչ կինի՛, վըեր էտ ղոչը էրկու օրավ թողիքյ իմ պալատըմըս: Էտ էրկու մարթը փողը յոր ըն օնըմ, վըեսկէ ղոչը թողըմ պալատըմը, քյընըմ:

Էտ ղոչը տանըմ ըն թաքավերին ըխճըկանը տափին տակին պալատը: Թաքավերին ախճիգյը մինչև քըշերվան կըեսը քոն չի ինըմ, էտ ղոչին ա եշըմ:

Էնքան ղա̈շա̈նգյ ար շինած, վըեր քըշերը լո̈ւս ար տամ: Էտ ախճիգյը էնքան հայիլ-մայիլ ա ինըմ, վըեր հաց չի օտըմ, կերակուրը մընըմ ա: Շատ եշիլանը ետը քոնը տանըմ ա:

Թաքավերին տըղան վըեսկէ ղոչին տո̈ռնը պըեց ա անըմ, տո̈ւս կյամ, թաքավերին ըխճըկանը պաժին հացը, կերակուրը օտըմ, էլիա նի մըննըմ ո̈ւրա̈ն տըեղը: Ուռութանա էտ ախճիգյը տըեսնըմ ա, վըեր կերակուրը կա վէչ, մընըմ ա մաթ մընցած, թա հո՞ւ կինի կերած:

Մըթկըմը տընըմ ա էն մին քըշերը բուսը պահի, տըեսնա էտ հու՞ վա, կյողին փըռնի:

Իտի էլ անըմ ա: -Քըշերվա կըեսին էտ տըղան տո̈ւս ա կյամ, թա կերակուրը օտի, էտ ախճիգյը ըտրան տըեսնըմ ա: Էտ տըղան էնքան կյեղեցիկ ա ընո̈ւմ, վըեր տըեսնալըն ըբա̈ստ սիրահարվըմ ա:

Էտ ախճիգյըն ասըմ ա, - Տու իմ սըերտըս հըմայալ ըս, ամմա իմ հա̈ր ինձ քյըեզ չի տալ, մինչև մին հարց էլ կա, պաղասխանը տաս վէչ: Իմ հա̈ր վեց ըխճըկա մին տեսակ շո̈ւրերըմ, մին տըռնա տո̈ւս ա օնելու, ասի. «Վըե րն ա իմ ախճիգյըս», տու բիդի գյիդա̈ս, թա վըեր գյիդա̈ցիր վէչ, էլիա քյըեզ ըսպանելու յա: Ցըես քյըեզ դո̈ւյո̈ւղ կանիմ, իմ աչ վըեննըս կըծըռիմ, տու ըտրանավ ինձ կը ճընանչիս, վըեր յրես ըմ:

Վըեր էրկու օրը անց ա կենըմ, կյամ ըն վըեսկե դոչը տանըմ: Թաքա-վերին տըղան պայմանին օրը կյամ ա: Տա քյընըմ ա թաքավերին կոշտը:

Թաքավերը հըրցընըմ ա. - Հը՞, ճարեցի՞ր, թա ըշտըեղ ա իմ ախճիգյըս:

Տըղան ասըմ ա. -Ճարեցի:

Թաքավերը մընըմ ա ըրմացած, թա էտ տըղան հու՞նց ա տըեղը գյիդացալ:

Ասըմ ա. - Կկարի՞ս նշանց տաս:

Թաքավերին տըղան ասըմ ա. - Կկարիմ: - Համ ասըմ ա, համ տանըմ նշանց տամ:

Թաքավերն ասըմ ա.- Լա̀վ, էտ գյիդա̀ցիր, մըհեկ քյըեզ մին հարց կըտամ, թա գյիդացի՛ր, համ ախճիգյըս , համ էլ թաքավերոթունիս կեսը քյըեզ կըտամ, թա գյիդացիր վեչ, էլիա քյըեզ ըսպանել ըմ տալու:

Թաքավերին տըղան ռազի յա կըենըմ:

Էն մին օրը թաքավերը ո̀ւրա̀ն ախճիգյը օրիշ վեց ըխճըկա նըհետ լոխ մին տեսակ շո̀րեր կյեցած, տո̀ւս ա պըերըմ պալատին հայաթը, ասըմ. – Կկարիս գյիդա̀ս, թա վըե՞րն ա իմ ախճիգյըս:

Ախճիգյը աչ վըեննը ծըռըմ ա: Թաքավերին տըղան դա̀ստի գյուղում ա, տանըմ ա դո̀ւզ ծըեռքն օսին տինըմ:

Ըտրանա ետը էտ թաքավերը տըրա̀ծ պայմանը կադարըմ ա: Օխտը օր, օխտը քըշեր հըրսանեքյ անըմ, մըեծ հարըստոթունով, մըեծ պեժինքյավ ըխճըկանը ճընապար տինըմ դիբի էտ տըղին հայրենիքը: Էտ տըղան վըեր ո̀ւրանց պալատըն ա կյամ, ըտրա հա̀րը նան մարը ուրխանըմ ըն, թա̀զա̀դան օխտը քըշեր, օխտը օր հըրսանիք ըն անըմ, սաղ ժողովուրթին կանչըմ, հարսին կըլխին վըեսկե շաղ տամ:

Ըտրանա ետը հա̀րը էտ տըղին կարքըմ ա թաքավեր, էտ ըխճըկանն էլ՝ թաքուհի:

Էն պարզ, դա̀շա̀նգյ երգյինքան իրեք խընձո̀ր ա եր ընգնըմ. մինը՝ ասողին, մինը՝ էս հա̀քյա̀թը կա̀րթողին, մինն էլ՝ տիպողին:

## 4.ՊԻՐԱՆԱՆ ՎԱՐԹ, ՄԱՆԻՇԱԿ ԹԱՓՎՈՂ ԱԽՃԻԳՅԸ

Մին շատ քյասիբ մարթ, մին կընեգյ ա ինում: Ըտրանց շընենըմը թողըմ չըն կենան, տուս ըն քըցըմ, հունց վեր քյասիբ: Տա քյընըմ ա օրիշ շեն:

Մին վեց ամիս ըտեղ կենըմ ա, ետավ կընեգյը երկալած, ըտըղան տուս ա կյամ, ասըմ ա. - Ա՛ կընեգյ, դե վըեր վըեչ մին տըեղ մըեզ թողըմ չըն կենանք, եք քյինինքյ ծըմակը, ընդըեղ կենանք: Հալըբաթ կաղեն, զըկեռ, սըեզնը, տըեզնը, ծըմակի տանձը, խընձոր, մըհասուր, մոշ, տես-տեն ուտելավ մին թահրավ կապրինք. յոլա կքյինինք:

Կընեգյըն ասըմ ա. -Հինչ կինի՛:

Ըտահանք քյընըմ ըն, քյընըմ մին ղալին ծըմակ ըն քյըթնըմ, մընըմ ըտեղ: Էս ծըմակըմը տիրև, խազալ, ճըղներ, տես-տեն ըն հըվաքըմ, ըտեղ մին պուճուր մարաքյի մնան տոն շինըմ, ապրըմ:

Շատ ըն կենըմ, թա խըրեգյ, վըերչը էտ կընեգյը մին խոխայա պըերըմ, ինքն էլ ախճիգյ: Էտ կընեգյը խոխին տիրևների մեչի պըտատըմ ա, պարուր շինըմ, տինըմ կոխկին: Իտի մին թահրավ պահըմ ըն:

Մին դունըմ տըեսնըմ ըն իրեք կընեգյ ըն կյամ էտ տոնը: Ամման մինը էտ խոխին մին լավ պըեն ա ասըմ:

Առաչին կընեգյը էտ խոխին ասըմ ա. - Յըես ըստրա մին հենց կյեղեցկոթուն կըտամ, վըեր հու վըեր տըեսնա, հայիլ-մայիլ ինի, ուրանան տուս կյա, էնքան սիրի էտ ըխճըկանը: Էրկունջի կընեգյը ասըմ ա. - Յըես էս ըխճըկանը մին հենց օժ տամ, վըեր մին օրըմը մին տարու չանք մըծանա, լաց ինելիս աշկերան մարքարիդ եր տըեռնա ըրտուսունքի տըեղ, ծըծըղելիս պիրանան վարթ, մանիշակ թափվի, ման եկած տըեղըն էլ վըեննըրտըեղերը վըեսկե քյարփուճնի տըեռնա:

Իրեքինջի կընեգյն էլ ասըմ ա. - Յըես ըտրան մին խաչ ըմ տամ, վըեր տա անմահ ինի, էտ խաչըն էլ ճիտըմը պահի:

Ըտրանք ասըմ ըն, պըրծընըմ, անհետ կորչըմ: Էս մարթն նան էս կընեգյը մընում ըն ուրուր իրեսի եշելիս, մաթ մընացած:

Էն օրանը ետը էտ խոխան լաց ինելիս աշկերան մարքարիդնի յա եր ածըմ:

Հարը նան մարը մընըմ ըն ըրմացած: Էս մարքարիդնին հըվաքըմ ըն մին պուլիգյ ածըմ, պահըմ:

Մին քանի օրանը ետը էտ կընեգյը ասըմ ա. - Էս մարքարիդը տար օրիշ

քաղաք ծախի, շո՞ր, տըեսըտըեն առ, պըեր:

Էտ մարթը պուլիգյը յոր ա օնըմ, քյինըմ մին քաղաք: Էտ քաղաքըմը մին առըտուրական տըեսնըմ ա, էտ մարթին կըռնան փըռնըմ, տենը տանըմ, ասըմ. - Ախպեր, եք էս ղոլը, հինչ ասիս քյըեզ կըտամ, ըտրանա մին խըրեգյ ինձ տու:

Էտ մարթը մին հափուռ տամ ա ըտրան: Էտ էլ շատ փող ա տամ ըտրան: Էտ մարթը մին ըրբա յա առնըմ ամմեն հինչան առնըմ, ածըմ մաչը, մընացած փողերն էլ ածըմ մաչը, տանըմ կընգանը կոշտը, վըեր էտ փողերավը տոն շինին: Իտի մին քանի հետ քյընըմ ա քաղաք, կյամ, խիլլա՜ փող թուփ անըմ: Մին հետ էլ ո՜ւրա՜ն նըհետ քաղաքան ուստա-փա՜հլա՜ յա պըերըմ, վըեր տոնը շինի: Տա շատ լա՜վ տըներ ա շինըմ: Պալատնի՜... էտ պալատներին քյարփո՜ւճնին լոխ վըեսկե յա ինո՜ւմ: Ըտրա հետի էլ հըեռու տըեղան ըլըվալավ ա անըմ, եշողին աշկերը ծկծկոտըմ: Ախճիգյըն էլ յավաշ-յավաշ մըծացալ ար, ինքն էլ էնքան նախշուն ա ինըմ, վըեր էլ խոսկավ ասվիլ չի:

Մին օր թաքավերին տըղան ո՜ւրա՜ն նա՜զիր-վա՜զիրավը վըերսի յա կյամ էտ ծըմակը: Հեռվան-հեռու տըեսնըմ ա, վըեր մին պըեն փըլըստրատին ա տամ:

Ո՜ւրա՜ն հընգյերունցը ասըմ ա.- Քյիննիք տըեսնանք, էն հի՞նչ ա արևին տակին ինդի շըղշողըմ, պըծըպածի անըմ: Կոզի հեռու տըեղ, ամմա լա՜վ պըեն ա ըրվըմ:

Ըտահանք քյընըմ ըն:

Շատ ըն քյընըմ, թա խըրեգյ, վըերչը հըսնըմ ըն էտ տոնը:

Թաքավերին տըղան շատ ա խընթըրըմ, վըեր թողին նի մըննի էտ տոնը տըեսնա: Ըտահանք համեցեքյ ըն անըմ: Թա քավերին տըղան նի յա մըննըմ էտ պալատը, էտ ըխճըկանը տըեսնալն ըրա՜ստ սիրահարվըմ ա, վըեչ մին պըեն չի կարըմ խոսի, օշը կուրցունում ա:

Վըերչը ասում ա. - Ցըես եկյալ ըմ ծըեր ախճիգյը օզիմ:

Էտ ըխճըկանը հարը-մարը ասըմ ըն. -Մունք ախճիգյ չօնինք քյըեզ տալի:

Տըղան ասըմ ա. - Զորք կիըվաքիմ, կյամ ծըեզ կըտորիմ:

Վըերչը մին խոսկի յըն կյամ: Իրեք օրան ետը բիդի կյան ախճիգյը տանին:Թաքավերին տըղան հորը նան մորը ասըմ ա լոխ:

Ընդրանք ռազի չըն կըենըմ, ասըմ ըն.- Մըեր անըմին լայըղ չի՛, վըեր մունք քյինինքյ ծըմակին ախճիգյը պըերինք մըեզ հարս:

Տղան ասըմ ա.- Չէ, էտ ախճիգյըն ա, օզըմ ըք, օզեցիք, օզըմ չըք, մին ա ես օզելու յըմ, կլո՛խ ըմ յոր օնելու, կորչիմ:

Անց ա կըենըմ ժամանակ: Թաքավերին տըղան լա՛վ-լա՛վ շորեր ա կարիլ տամ, լա՛վ-լա՛վ պըեններ ա առնըմ էտ ըխճըկանը հետի: Վերչը հա՛րը-մարը ղաբուլ ըն կըենում, եր ըն կըենըմ պաղրաստութուն քաշըմ, մարթիքյ ղարկըմ, վըեր քյինին իըրսնացուն պըերին: Էտ ղարկած մարթկանցը մեչին ա ինըմ թաքավերին պալատին ղուլլուղչին, ո՛ւրա՛ն սըեվտեզ ըխճըկանը նըհետ: Էտ ղուլլուղչուն աշկը շո՛ւտանց ար թաքավերին տըղին յրան, օզըմ ար ո՛ւրա՛ն ախճիգյը տա ընդրան: Տա աղի պիլիթ ա թըխըմ էտ ըխճըկանը ուտուցընըմ:

Վեր փայտոննին ո՛ւրո՛ւր հետա իըրսընքավերնին եր կալած քյնըմ ըն, էտ ղուլլուղչին ո՛ւրա՛նը փայտոնը մին խըըեգյ ետըցընըմ ա: Էտ պիրա՛նա՛ն վարթ-մա՛նիշա՛կ թափվող ախճիգյը շատ ա ծըրավըմ:

Ասըմ ա.- Հի՞նչ կինի՛, մին խըըեգյ ճո՛ւր տաք ինձ:

Էտ ղուլլուղչին ճո՛ւր չի տամ:

Վերչը վըեր էտ ախճիգյը շատ ա ղաչանք անըմ, էտ ղուլլուղչին ասըմ ա. - ճո՛ւրը աշկի լո՛ւսա՛վ ա, թող աշկըտ հանիմ, տըեղը ճո՛ւր տամ:

Էտ ախճիգյը ռազի յա կըենըմ, էնքան ծարավ ա ինըմ: Ղուլլուղչին աշկին մինը հանըմ ա, տինըմ ջուբո՛ւմը, էտ ըխճըկանը մին խըըեգյ ճո՛ւր տամ:

Քյընըմ ըն, քյընըմ, էտ ախճիգյը էլիա ծըրավում ա, ասըմ. - Հի՛նչ կինի, ինձ մին խըեգյ ճո՛ւր տաք:

Ղուլլուղչին ասըմ ա.

Ճո՛ւրը աշկի լո՛ւսավ ա, թող աշկըտ հանիմ, տըեղը ճո՛ւր տամ:

Էտ ախճիգյը ռազիյա կըենըմ: Ղուլլուղչին էն մին աշկըն էլ ա հանըմ, քըցըմ ջուբը, էլիա մին խըեգյ ճո՛ւր տամ:

Վըեր էրկու աշկավ քուռուցնըմ ա, պըրծնըմ, էտ ղուլլուղչին գյըրա՛վա՛յա քըցըմ էտ ըխճըկանը փըսակին շո՛րերը հանըմ, ո՛ւրա՛ն ըխճըկանը կյեց տամ, ըտրան էլ կուփի տամ, քըռի տամ, փայտոնան տըեն քըցըմ: Փայտոնը քըշըմ ըն, քյինըմ:

Էտ ախճիգյը մընըմ ա ճընապարին ղրաղի մի խա՛նդա՛կըմ, աշկերը

քոռ, լա̀ց ինելիս: Վըեր տըսնըմ ա սա̀ս-սա̀մո̀ւր չիկա, էտ ախճիգյը էտ մոշին քոլերը, էտ բիզի մնան տո̀ւս տեռած փոշերը- ծըեռքերավը տըես-տըեն ընելավ, փուրսող տալավ, մին թա̀իրա̀վ ըտըղան տո̀ւս ա կյամ, նի մընըմ ծըմակը, ծըերքերավը տըփտըփելավ քյընըմ ա մին ծառի տակի նըստըմ, էնքան լաց ինըմ, վեր էտ ծառին տակը լցնըվըմ ա մարքարիդավ, վըեսկե քյարփո̀ւճավ:

Մին էլ լըսըմ ա ծըմական մին կացնի սա̀ս ա կյամ: Տա էլիա տափերը չունգռոտելավ փուրսող քյընըմ ա մին խրեգյ մուտանըմ, ծեն տամ: Վէր շատ ծեն ա տամ, էտ ծենին յրա մին պառավ մարթ,. վըեր ծըմակն ար եկալ փա̀ղ անելք, լսըմ ա: Էտ սա̀սին յրա կյամ ա տըեսնըմ մին քոռ ախճիգյ, իրեսը ծըեռքերը չընգռոտած էն ա ըտեղ եր ընգա̀ծ:

Էտ ախճիգյը էտ պառավ մարթին նաղլ ա անըմ ո̀ւրա̀ն կյլխավը ընցածը, ասըմ. - Ա՛ հոր տըեղ հա̀ր, ինձ եր կալ տար ծըեր տոն, ես քյըեզ շատ օքութ կտամ, ինձ թողիլ մի էս յաբանա ծըմակըմը, ինձ կյուլի, կազանի պաժին մանիլ:

Էտ մարթը ասըմ ա. - Ա՛ բալա, մին կըտոր հաց օնիմ ինք առ քյըեզ տամ, ամմա կարիլ չըմ քյըեզ տոն տանիմ, էնա տանը օխտը ախճիգյ օնիմ, օխտեքան էլ կյըշըկյրո̀ղ: Մինա̀կ մըեչըներին մինն ա պատառ լա̀վ: Դե քու աշկերտ էլ քոռ ա, տանիմ քյըեզ հի՞նչ անիմ, հունց ապրիմ:

Էտ ախճիգյն ասըմ ա, - Ինձ վեչ մին պեն պետքը չի, թաքյ լիա̀ տոն տանիս, հա̀լա̀ ես ըմ ծըեզ պահելու, հենա էն խա̀նդա̀կըմն էլ, էն ծառին տակին էլ էնքան վըեսկե, մարքարիդ կա՛, քյինի եր կալ ինձ էլ նըհետըտ տիր արաքին յրան, տար:

Էտ պառավ մարթը ուրխանըմ ա, քյընըմ ա լոխ վըեսկին նան մարքարիդը յոր օնըմ, էտ ըխճըկանն էլ ըրբին տինըմ, տանըմ տոն:

Կընեգյը նան ըխճըկերքը վեր տըեսնըմ ըն, կըզնըվըմ ըն հորը յրան, ասըմ. - Էտ հո՞ր ըս էտ քոռը եր կալալ, պերալ, մունք իսկի կարըմ չընք ապրինք, ըտրան էլ կըլխավըն ըս պըերալ:

Լոխճան կուճի ախճիգյը ասըմ ա. - Լա̀վըս ըրալ, ա՛ հա̀ր, վըեր պերալ ըս, ես կպահիմ:

Հա̀րը ըխճըկորանցը յրան կըզնըվըմ ա, ասըմ. - Էտ ախճիգյը մըեզ լոխճիս էլ պահելու յա, մին տյեսեքյ հիշքան վըեսկե, մարքարիդ ըմ պըերա՛լ:

Էտ վըեր տըէնըմ ըն, ընկյըըմ ըն էտ ըխճըկանը առաչին ծառայոթուն անիլը: Ճո՛ւր ըն տինըմ, էտ ըխճըկանը լըղըցընըմ, թիմըզցնըմ, յորղան-դո՛շա̀կի մըէչի տինըմ: էտ վըեր վըեննը ըշտըղին տիրա̀լ ար, լոխ վըեսկե քյարփո՛ւճնի ար տըեռալ, էտ ըխճըկերքը հըվաքըմ ըն:

Անց ա կըենըմ մին խիլյա̀ վախտ, էտ ախճիգյը էտ պառավ մարթին մին քանի փոնջ վարթ, մա̀նիշա̀կ ա տամ, ասըմ. - Ա՛ հա̀ր,էս մին փոնջ մա̀նիշա̀կը նան վարթը տար քըղաքըմը թաքավերին պալատին քըշտին ծախի: Վըեր առնող ինի, ասի ես փողավ չըմ ծախըմ, աշկի լո՛ւսավ ըմ ծախըմ: Վըեր ասին, պա աշկի լո՛ւսավ պըեն կինի՛, ասի թա պա էս ծո՛ւնը մինչև կյոտկատըեղ եկած, ծո՛ւն ծըմեռնը վարթ, մա̀նիշա̀կ կինի՛, համ էլ լա̀վ եշի, տըես աշկը աչ ջուբան ա հանըմ, թա ծա̀խ, մըետըըտ պահի:

Էտ պառավ մարթը յոր ա օնըմ մին պուճո՛ւր զա̀նբո՛ւլի մէչի տինըմ, տանըմ քաղաք, թաքավերին պալատին քըշտին կանչըմ.- Ա՛յ լա՛վ վա՛րթ, այ լա՛վ մա̀նիշա̀՛կ:

Դա̀ստի էտ ղուլլուղչին տո՛ւս ա կյամ, ասըմ. - Ա՛յ վա՛րթ, մա̀նիշա̀կ ծախող, եք ըստեղ, քանի՞ յը՛ս տամ էտ վարթը նան մա̀նիշա̀կը:

Էտ պառավ մարթն ասըմ ա. - Յըես փողավ չըմ ծախը՛մ, աշկի լո՛ւսավ ըմ ծախը՛մ:

- Պա աշկի լո՛ւսավ պեն կինի՛:

- Պա էս ցորտ ծըմեռնը վարթ, մա̀նիշա̀կ կինի՛:

Ճարը կըտրած էտ ղուլլուղչին աչ ջուբան էտ ըխճըկանը աշկին մինը տո՛ւս ա օնըմ, տամ էտ պառավին, վարթը, մա̀նիշա̀կը տանըմ, թաքուն տամ ո՛ւրա̀ն սըեվտեզ ըճխըկանը, ասըմ. - Ինք առ, տիր քըթիտ տակի քըթկալին մէչին, վըեր թաքավերին տըղան կյա՛, սըտըըստ ծըծաղի, էտ վարթ նան մա̀նիշա̀կը եր քըցի, վըեր գյիղա̀, թա տու էն ախճիգյըն ըս:

Էտ պառավ մարթը էտ մին աշկը պըերըմ ա աչ տըեղը քըցըմ: Էտ աշկը սըղանըմ ա:

Մին քանի վախտան յետը, էլիա էտ ախճիգյը ծըծըղելիս պիրա̀նա̀ն եր տըեռած վարթը, մա̀նիշա̀կը տամ ա էտ պառավ մարթին, ասըմ.

- Ա՛ հա̀ր, տար քաղաքը, էլիա պալատին քըշտին ծախի, վըեր առնող ինի, ասի աշկի լո՛ւսավ ըմ ծախըմ:

Իտի էլ անըմ ա: Տանըմ ա քաղաք, պալատին քըշտին կանչըմ. - Ա՛յ լա̀վ վա՛րթ, մա̀նիշա̀կ :

Էտ ղուլլուղչին դեհա, դեհա, յրա պըրծած, թայղի, տո̀ւս ա կյամ, ասըմ.
- Ա՛յ վարթ, մա̀նիշա̀կ ծախող, եք ըստեղ։ Էտ պառավ մարթը քյինըմ ա կոշտը։

Էտ ղուլլուղչին ասըմ ա. - Քանի՞ յը՛ս ծախըմ։

- Աշկի լո̀ւսավ ըմ ծախըմ։

- Պա աշկի լո̀ւսավ պըեն կինի՛։

- Պա էս ծո̀ւն -ծըմեռնը վարթ, մա̀նիշա̀կ կինի։

- Ճարը կըտրած էն մին՝ ծա̀խ ջուբան աշկին լո̀ւսը հանըմ ա, տամ էտ պառավ մարթին, վարթը, մա̀նիշա̀կը տանըմ տամ ըխճըկանը, վըեր տինի քըթկալին մեչին, վըեր թաքավերին տըղան կոշտը կյա, ծիծաղի, եր քըցի։ Վըեր գյիդա̀, թա էն ախճիգյըն ա։

Էտ պառավ մարթը պըերըմ ա էն ծա̀խ աշկըն էլ տըեղը քըցըմ, էտ ախճիգյը լըվա̀նըմ ա։

Մին շա̀փտա̀նը ետը էտ ախճիգյը էտ պառավ մարթին շատ վըեսկե յա տամ, ասըմ, - Մեր քաղաքան մին խրեզյ հըեռու ինձ հետի մին պալատ շինիլ տո, վըեր թաքավերին պալատան լա̀վ ինի։

Էքսը պառավը ուստա-փա̀հլա̀ յա փըռնըմ, էտ ըճխըկանը վըեննին տական տո̀ւս եկած վըեսկե քյարփուճներան մին վըեսկե ամարաթ ա շինիլ տամ, վըեր արևի մընան ալավ-ալավա անըմ։ Էտ ախճիգյը ըսկըսըմ ա էտ պալատին երի ատաժըմը ապրիլը։ Տոնը լըցնըմ ա աշխարքիս լա̀վ-լա̀վ սարքերավը, լոխճան ղաշա̀նգյ պըեններավը։ Լա̀վ օտելի պեններավը... էտ պառավ մարթին ըխճըկորանցը մարթի յա տամ, էն պուճուրըն էլ պերում ո̀ւրա̀ն կոշտը։

Էտ պիրա̀նա̀ն վարթ նան մա̀նիշա̀կ եր տըեռնող ախճիգյը ցիրեկը բախրա յա տըեռնըմ, ընգնըմ ծըմակնին, քըշերը ախճիգյ ա տըեռնըմ, կյամ պալատը։

Նշանտիրիքյին վախտը թաքավերին տըղան էտ ըխճըկանը մին մըտանի յա ինըմ տրված։ Էտ մըտանին էն ա ինըմ են ղուլլուղչուն ըխճըկանը մաննըմը։ Էտ ղուլլուղչուն ախճիգյը էտ պըրա̀նա̀ն վարթ, մա̀նիշա̀կ եր տըեռնող ըխճըկանը անիցկ ա տամ, վըեր էտ ախճիգյը ամմեն օր շտափի, քանի վըեր ընդրա դա̀ռդա̀ն թաքավերին տըղան ո̀ւրա̀ն սիրըմ չի՛, ո̀ւրա̀ն կոշտը չի կյամ, էն կըլխան էլ գյո̀ւղո̀ւմ ար, վըեր տա ո̀ւրա̀ն նշանածը չի։ Ըտրա հետի էլ տա ո̀ւրա̀ն պալատին հայաթըմը մին չադիր

ար եր թողալ, ընդեղ ար ապրըմ: Ցիրեկըն էլ քյընըմ ար վըերսի:

Մին հետ ծըմակըմը թաքավերին տըղան մին բախրա յա տըեսնըմ, իիշքան քըմական ա ընգնըմ, թա փըռնի, կարըմ չի՛: Թըվյանգյը տըրըք-ցնըմ ա, գյուլլյան կյամ ա էտ բախրին վըեննան կըենըմ: Բախրան փախչըմ ա, կյամ էտ վըեսկե պալատը, ախճիգյ տըեռնըմ, քյինըմ երի ատաժին ուրյան օթախը, թեքյ ընգնըմ: Թաքավերին տըղան հետան վազ ա տամ, թա փըռնի, տըեսնըմ ա աշկան կորավ: Տա յառնին հետքավը քյինըմ ա, եր ինըմ էտ պալատին երի ատաժը, նի մըննըմ էտ ըխճըկանը օթախը, տըեսնըմ մին ախճիգյ վըեսկե կարավաթին յրան պառկած, օշը տարած, կըռնան էլ յարունն ա կյամ: Էտ տըղան տըեսնըմ ա, վըեր էտ ախճիգյը ուրյան նշանածին շատ նման ա: Տա ճյար ա շաղ տամ, էտ ըխճըկանը ետ պերըմ, ետավ էլ կըռնին յարան կապըմ: Ախճիգյը վըեր օշը կըլուխն ա հըվաքըմ, լոխ էտ տըղին նաղլ ա անըմ ուրյան կըլխավը ընցածը: Պատ-մելիս լյաց ա ինըմ, արտասունքնին մարքարիդ ա տըեռնըմ, վըեր ծիծա-ղըմա, պիրյաննյան վարթ, մյանիշյակ ա եր տըեռնըմ: Թաքավերին տըղան ճնանչըմ ա ուրյան սիրածին, ուրյան նշանածին: Էլ տոն չի քյընըմ, մըհեկ էլ էտ ըխճըկանը պալատին քըշտին մին չաղիր ա եր թողըմ, ըտեղ ապրըմ:

Հյարը ըտրա հետան ման ա կյամ: Հընգյերունքը տըեղը քըթնում ըն, օզըմ ըն պալատը տանին: Ամմա էտ տըղան ասըմ ա. - Իմ հոր ըսեցիք, վըեր յըես տոն չըմ կյալու, մինչև էս ըխճըկանը օզիմ վէչ, մինչև ըստրա սըերտը կըկըղցնիմ վըէչ:

Անց ա կըենըմ մին խիլլյա վախտ, վըերչը թաքավերին տըղան էտ ըխճըկանը սըերտը կըկըղցընըմ ա, մին հանգավ ըտրա նըհետ ապրըմ: Ըտրանա մին ախճիգյ ա ինըմ: Էտ ախճիգյը տըեռնըմ ա չորս տըրեկան: Մին հետ հորը նըհետ էտ խոխան քյընըմ ա թաքավերին պալատը: Ինքըն էլ մորը շատ նման ա ինըմ, դյաշյանգյ-սիրուն: Թաքավերը նան թաքուհին վըեր տըեսնըմ ըն, ուրխանըմ ըն:

Թաքավերը տըղին ասըմ ա, - Եկեք ըստեղ ապրեցեք:

Էն պըրյաննյան վարթ, մյանիշյակ թափվող ախճիգյը խոխին ասած ա ինըմ, վըեր ուրյան մուտանան թաքավերին հարսիգը օզի, պերի ուրյան տա:

Էտ պալատըմը էտ խոխին շատ բաղարկեք ըն տամ: Ամմա նա էտ մուտանան ա օզըմ:

Թաքավերին հարսը տամ չի, ամմա ըստըղան-ընդըղան էնքան ասըմ ըն՝ «Տո հա, տո» վըեր էտ սև տեզ հարսը մաննան հանըմ ա, տամ էտ խոխին:

Խոխան վըեր մտանին յոր ա օնըմ, ասըմ ա. - Էս իմ մոր մըտանին ա, քու ծըեռքիտ հի՞նչ ա անըմ, էլ քյըեզ չըմ տալու:

Թաքավերին կյեշ հարսը կըզնըվըմ ա մարթին յրան, վըեր իտի պեններ ա փըռնալ: Ամմա դե էլ ըշտե՛ղ: Թաքավերին տըղան լոխ ո̈ւրա̈ն հոր նան մորը նաղլ ա անըմ:

Թաքավերը վըեր լոխ ըսկանըմ ա, ասըմ ա.-Դե քյինա̈ հըվաքի պըեր ըստըեղ:

Նա շատ ա ուրխանըմ, վըեր ո̈ւրա̈ն հարսը ճարվալ ա: Մըեծ պադրաս-տոթուն ա քաշըմ, քյինըմ ըն վըեր պըերին: Վըեր էն կյեշ հարսը օզըմ չի մտանին տա, մըտանին մաննան ծիքյ-ծիքյ ընելիս էս կյեղեցիկ ըխճըկանը օշը տանըմ ա: Մըտանին իտի զորութուն օնար: Կյամ ըն տըեսնըմ օշը տարած, կարավաթին եր ընգա̈ծ: Էլիա վըեր մըտանին քըցըմ ըն մաննը, ծըեռաց եր ա կըենըմ, էլ շտափըմ չի:

Ըստրանք ո̈ւրա̈նց հարսը տոն ըն պըերըմ, քառասուն օր, քառասուն քըշեր հըրսանիք ըն անըմ, ուրխանըմ, քյեփ անըմ: Էն սըեվ տեզ հարսըն էլ ո̈ւրա̈ն չարութունան ճաքվըմ ա, մըեռնըմ:

Ըտըա մորն էլ ծիյին հա̈քյվան կապըմ ըն, քաշ-քաշ անըմ, մըեծ պատառը անգուճըն ա մընըմ:

Էտ ախճիգյը էն պառավ մարթին կուճուր ըխճըկանը պըերըմ ա պալատ, փըսակըմ թաքավերին տըղին հընգյեր մին տըղի նհետ: Էն պառավ մարթին էլ միչև ո̈ւրա̈ն գյանքին վերչը պալատըմը պահըմ ա:

Էտ պիրա̈նա̈ն վարթ, մա̈նիշա̈կ թափվող ախճիգլը ո̈ւրա̈ն մարթին, ո̈ւրա̈ն խոխին նըհետ ըտեղ ապըրըմ ա, օրախ, սիրավ, շատ-շատ տարինի:

Ընդրանք հասին ո̈ւրա̈նց մուրազին, մունք էլ հասնինք մեր մուրազին :

Էն պեցուր արևին անա վըսկըրշափաղ տըեռած երգինքան արևի օխտը շոխկ ընգնըմ. մինը ասողին, մինը լըսողին, մինը էս հա̈քյա̈թը լո̈ւս աշխարք հանողին, մինն էլ տիպողին: Էն իրեք արեվին շոխկըն էլ լա̈վ, սըերտը պեց մարթկանց, վեր դըլվըմը սար չունեցող մարթկանց քյոմագյ ա անըմ պարի խոսկավ: Արևին էդ շողերը թող տանին ամեգյը ո̈ւրա̈նց տըները լուսավըերին, օթախնին դաշանգյցընին, սարքին, վըեր ամմեն նի մըննելիս սըրտընին փառավերվի՜:

5.ԿՈՋՆԻ ՏՂԼԱՆ

Ինըմ ա, չինըմ մին մարթ, մին կընեգյ։ Ըտրանց խոխա չի ինըմ։ Ըտրանք շատ քյասիբ ըն ինըմ։ Ամմեն օր մարթը նան կընեգյը ո̈ւրո̈ւր իրեսի եշըմ ըն, սուս անըմ։ Լոխճան շատ քընենքյ ըն անըմ խուխի դա̈րդա̈։

Էտ մարթն ասըմ ա. -Բա մըեզ մին խոխա չինի՜, բա մըեր կոճին տակին մին խուխու ծեն չի կյա՜։

Անց ա կըենըմ մին խիլլա̈ վախտ։ Մին դո̈նըմ էլ էտ մարթը ծըմական ճըեխ պերելիս, ճընապարին, մին չըփարի տակի մին կոզնու ճոտ ա ճարըմ, յոր օնըմ, տոն պըերըմ։

Կոզնուն տանը թախտին տակին ըն պահըմ։ Մին օր էլ մարթը- կընեգյ խոսըմ ըն էլհա խոխի անա, վըեր ո̈ւրա̈նց խոխա չօնին, էտ կոզնին թախտին տական տո̈ւս ա կյամ, մարթի մնան խոսըմ, ասըմ. - Յըես ծըեր տըղան ըմ, վախիլ միք, յըես ծըեզ լա̈վ ըմ պըհելու։

Մարթըկնեգյ մընըմ ըն զարմացած, տափան կացած։ Կոզնին էլհա խոսըմ ա, ասըմ. - Յըես ծըեր տըղան ըմ, քյեցիք, թաքավըերին ախճիգյը ինձ մըհար օզեցիք։

Էտ կընեգյը ասըմ ա. - Բա թաքավըերը ո̈ւրա̈ն ախճիգյը կոզնուն կտա։

Մարթն ասըմ ա. - Քյինի օզի իլի՜, բա̈լքյա̈ս տըվավ։

Եր ըն կըենըմ մարթըկընեգյ քյընըմ թաքավըերին դա̈րբա̈զին հարսնը- քարին նըստըմ։

Կյամ ըն ըտրանց տանըմ թաքավըերին կոշտը։ Ըտրանք հըմընչելավ, կոչ-կոչ կյալավ, լո̈ւզո̈ւն փա̈լթա̈նգյ շինա̈ծ ասըմ ըն.- Թաքավըերը ապրած կենա, մունք եկյալ ընք ծըեր ախճիգյը օզինք մըեր տըղին հետի։

Թաքավըերը շատ ա ըջըղվըմ, կըզնըվըմ, օզըմ ա թա ըտրանց կլո̈խնին կըտրիլ տա, մին էլ մտածըմ ա, թա ըտրանք հի՞նչ ըն, վըեր հալա կըլ- խըընին կըտրելի հրամման էլ տա։ Վըճռըմ ա ըտրանց մին հենց պըեն ասի, վըեր քյինին, էլ կյան վըեչ։

Ըտրանց ասըմ ա.- Թա իմ պալատիս մընան մին դա̈շա̈նգյ պալատ կըշինիքյ, հա̈լա̈ իմ պալատաս էլ լավ, ախճիգյըս ծըեզ կըտամ։

Մարթըկընեգյ կյամ ըն տոն, նաղլ անըմ ո̈ւրա̈նց կոզնի տըղին։

Կոզնի տըղան ասըմ ա.- Վըեչի՜նչ, ա՜ հա̈ր, քյինի ըշտըղան ինձ եր ըս կալալ, ընդեղ ասի. «Կոզնին մին կտոր մա̈րմա̈ր ա օզըմ»։ Էտ մա̈րմա̈րը քյըեզ ըն տալու, եր կալ պըեր, թաքավըերին պալատին առաչին եր քըցի։

Էտ մարթը իտի էլ անըմ ա: Քըշերը թաքավերը եր ա կըենըմ, տըեսնըմ մին ո̀ւրա̀ն պալատան լա̀վ պալատ ա շինած ըտեղ: Մընըմ ա մաթ մընացած, փա̀ռթ տըեռած, կործը տանիլ տըված:

Էն մին օրը կոզնուն մարը էլիա քյընըմ ա հարսնըքարին նըստըմ: Կյամ ըն տանըմ թաքավերին կոշտը:

Մարն ասըմ ա. - Թաքավերը ապրած կենա, ասածըտ կադարալ ընք, մըհեկ հի՞նչ կասիս:

Թաքավերն ասըմ ա. - Մըհեկ էլ էս դա̀շա̀նգյ պալատին առաջին մին հենց բախչա-բաղ շինի, վըեր աշխարքիս բարը-նուբարը մեչին ինի, աշխարքիս ծաղիկնին, դուշերը մեչին ինին...

Կոզնուն մարը վըեր լըսըմ ա, քուռուփըեշմա̀ն եռ ա տըեռնըմ, կյամ տոն, լոխ կոզնուն նաղլ անըմ, ասըմ. - Մըհեկ էլ թաքավերը մին հենց բախչա յա օզըմ, վըեր աշխարքիս բարը-նուբարը մեչին ինի նախշուն դուշերը, ծաղիկնին մեչին ինին:

Կոզնին ասըմ ա.- Ա հա̀ր, եր կաց քյինի համին էն տըեղը, վըեր ինձ քըթա̀լ ըս, ընդեղ կաղնի, ասի. «Կոզնին մին տիրն ա օզալ»: Տիրնը եր կալ, պըեր քըցի թաքավերին տանը առաջին շինած մըեր պալատին հայաթը:

Իտի էլ անըմ ըն: Ըտեղ մին լա̀վ բաղ ա տըեռնըմ փանտաններավ, ծըլվըլալիս դուշերավ, հո՞ւ վա գյուղում էլ հինչերա՛վ: Վըեր թաքավերը էքսը տըեսնըմ ա, օզըմ ա, թա օշը տանի:

Էն մին օրը էտ կընեգյը էլիա քյընըմ ա թաքավերին դըրբըզին, հարսնըքարին նըստըմ: Ծառեքը կյամ ըն ըտրան տանըմ թաքավերին կոշտը:

Թաքավերն ասըմ ա. - Թա էտ պալատին լոխ պատերը կըծասկի թանգյակին գյաբոցավ, լա̀վ-լա̀վ սարքերավ, մա̀խմո̀ւր տըբըրո̀թկոցավ, լա̀վ ճուղուպրի ըստո̀լներավ, վըեսկավ, արծաթավ, էն վախտը ախճիգյըս քու տըղիտ կըտամ:

Մարը կյամ ա նաղլ անըմ լոխ: Կոզնին ասըմ ա.- Ա՛ հա̀ր, կքյինիս ինձ քըթած տեղը կաղնիս, ասիս. «Կոզնին մին կըտոր մա̀խմո̀ւր ա օզըմ»: Մա̀խմո̀ւրը պերելու յըն քյըեզ տան, յոր կոնիս պերիս, քըցիս էն պալատին մաչը:

Իտի էլ անըմ ըն: Պալատին օթախնին լցնըվըմ ա թանգյակին սարքե- րավ, իլա̀ծ-չիլա̀ծա̀վ: Կոզնուն մարը մին էլ ա քյընըմ հարսնըքարին նըս- տըմ: Կյամ ըն գյըդոտենքյը ըտրան տանըմ թաքավերին կոշտը:

Թաքավերն ասըմ ա. - Դե, մըհեկ ախճիգյս տամ ըմ, քյինա տըղիտ պըեր, տըեսնամ։

Էտ կընեգյը կյամ ա տոն, տըղին տինըմ մին մըժմՙահՙու յրա, տանըմ, ասըմ. - Թաքավերն ապրած կըենա, հեսե իմ տըղաս։

Թաքավերըն ասըմ ա. - Կոզնի յա, թա հու վա, վըեր խոսկ ըմ տըվալ, պիտի ախճիգյըս տամ։

Ըտահանք օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ։ Ամմեն քըշեր կոզնին մին կյեղեցիկ տըղա յա տըեռնըմ, ցիրեկը էլիա կոզնի լա տըեռնըմ։ Կոզնին հՙալՙա միչև ՙուրՙան կընգանը նըհետ կապվիլը ընդրան ասած ա ինըմ, թա մինըն ու մինը գյիդՙա էտ պըենը, վըեր ինքը մարթ ա տըեռնըմ, ինքը հավիդյան կորչելու յա։

Հունց ա պըտահըմ, թաքավերին ախճիգյը ՙուրՙան մարթին կյեղեցիկ ինիլը նաղլ ա անըմ ՙուրՙան հընգերունցը քըշտին, ըտրանավ օզըմ ա պարծանք համարի, վըեր ՙուրՙան մարթը քըշերը մին դՙաշՙանգյ տըղա յա տըեռնըմ, վըեր իստի, վըեր ինդի, հու վա գյուղում էլ հի՛նչ...

Ըտըանա ետը կոզնին քյընըմ ա, կորչըմ։

Ախճիգըը ման ա կյամ, ման, էլ քըթնըմ չի։ Էտ ախճիգըը արկաթի տըրեխնի յա շինիլ տամ, մին արկաթի կավազան էլ նըհետը յոր օնըմ, քյընըմ։

Քյընըմ ա քյընըմ ճընապարին հարցըփորց անըմ, վըեչ մինը տըեղը գյուղում չի։ Արկաթի տըրխնին վըեր մաշըմ ա, ետավ վընըըտեպիգյ ա շոռ կյամ մարթին հըետան։ Ըտրա շՙըրերը ճըրդոտվըմ ա, վըեններըը ճըքճըքռ-տըմ, իրեսը արնն էըմ, էլիա ետ չի տըեռնըմ, իտի սոված-ծարավ ման ա կյամ սարան՝ սար, ծՙորան՝ ծՙոր, անց ա կըենըմ փըշփըշոտ տեղերավ, նեղ կածաններավ, ծըմակներավ, կյետերավ, վըեչ մին տըեղ մարթին ճարըմ չի։ Ախըը վըերչը մին հեռու ճընապարի նըղացած եր ա ընգնըմ։ Մին էլ վըեր օշը կըլՙըխն ա կյամ, տըեսնըմ ա ՙուրՙան եր ընգած տըեղին քըշտին մին խոր փոս կա։ Էտ փոսըն ա նի մըննըմ, տըեսնըմ մին տոռնը։ Թաքավերին ախճիգյը տոռնը պենըմ ա, նի մըննըմ, տըեսնըմ մին օթախ, էրկու կարավաթ տիրՙած։

Ասըմ ա.- Բՙալքՙա իմ մարթըս ըստը՞ղ ա, նի մըննիմ էս կարավաթին տակը, թաքուն եշիմ։

Վըեր մըթնըմ ա, տըեսնըմ ա, էսա մարթը եկավ, ՙուրՙան կարավաթին

թեք ընգավ։ Թաքավերին ախճիգյը կյողլը կացած տըեղան տո՞ւս ա կյամ, մարթին վիզավըը ընգնըմ, ղաչանք-պըղատանք անըմ, վեր եռ տըեռնա, կյա պալատը։ Իտի մին կերպ համոզըմ ա։

Կոզնուն մարը ուռութանա տըեսնըմ ա, վըեր ո՞ւըմ՝ն տըղան փախալ ա։ Տըես ա շոռ կյամ, տըեն ա շոռ կյամ, ճարըմ չի։ Դ՝ւստի գյուղում ա, վըեր թաքավերին ախճիգյը կինի տարած։ Ըսկըսըմ ա ըտրանց հետան քյինիլը։

Թաքավերին ախճիգյը մին վերստ ա փախչըմ, մարը տասը վերստ ա յրա հըսնըմ։ Վըեր ըտրանք տըեսնըմ ըն՝ մարը յրա յա հըսալ, մինը ծառ ա տըեռնըմ, մին՝ օխծ, յրան փըթթաթված։ Ըտրանա եռը վըեր մարը հըռանըմ ա. էլհա ո՞ւըմ՝նց ճընապան շարունակըմ ըն։ Վըեր մարը էլհա կյամ ա, հըսնըմ, մինը ճեղաց ա տըեռնըմ, մինը՝ ճըղացպան։ Վըեր մարը հըռանըմ ա, էլհա մարթ ըն տըեռնըմ, փախչըմ։

Վըեր մարը էտ տըեսնըմ ա, ասըմ ա.-Կա՛ցիք, փախչի՛լ մի՛ք, էլհա մարթ տըեռիք, թա տուք ո՞ւըո՞ւը արժան ըք, յըես ծըեզ կփըսակիմ։

Ըղրանք կաղնըմ ըն։ Մարը տըեսնըմ ա, վըեր ո՞ւըո՞ւը արժանի յըն, ասըմ ա.- Քյն՝ցիք ծըեզ հետի բախտավեր ապրեցեք։

Մըեր էն սըրսարոտ, ղ՝շ՝նգյ Ղարաբաղին Ղըզղալա շենին կյին՝ն իրեք ըստաքան լըցած ա, տիրած ստոլին, եր կալիք, խմեցիք, էս մին ստաքանը՝ ասողին, էս մին ստաքանը՝ լսողին, էս մին ստաքանն էլ՝ էս հաքյ՝թնին լո՞ւս աշխարք քըցողին։ Էտ պըծըպածի անըմ, էտ արնին համ նան հոտը, մեչին կյին՝ն հու վըեր խմի, էլ մահ, մըեռնիլ չօնի, չո՞ւնքյի անմահական ա։

6.ՄԱՐԹ ՕՏՈՂ ԱԽՃԻԳՅԸ

Ինըմ ա, չինըմ մին կընեգյ։ Էտ կընգանը ինըմ ա մին տըղա, էրկու ախճիգյ։ Մըեծ ախճիգյը շատ օտող ար։

Մին օր ըտրանց մարը օզըմ ա հաց թխի։

Տըղին ասըմ ա. - Քյինի ճա՛խ պեր, տանինք թորենը վառինք։ Յըես էլ ճիրի յըմ քյինըմ։

Տանը վէչ մինը կար վէչ։ Էտ ախճիգյը ըրըրոցան տո՛ւս ա կյամ, քյինում մեզա՛րին յըա՛ն փըռած պո՛ւլերը լոխ օտըմ։

Ախպերը կյամ ա, տըեսնըմ, մընըմ մաթ մնացած։

Ասըմ ա, - Ա՛ մար, քանի էս վէչ մըծացած, տափան կացածը պուճուր ա, տար մին տեղ ռա՛ղ ըրա, էտ վեր մըծանա, մեր տոնը քանդիլու յա։

Մարը հըվատըմ չի։

Մին դո՛նըմ մարը կյոդլ ա կըենըմ, ըտրա բուսը պահըմ։ Տեսնըմ ա ախճիգյը ո՛ւրո՛ւրուցան տո՛ւս եկավ, ամաններին մածունը լոխ կերավ, էլհա նի մտավ ո՛ւրո՛ւրուցը։

Տըղան մորըն ասըմ ա. - Ա՛ մա՛ր, յըես էլ իստի կարիլ չըմ ապրիմ, էս վէչ մըխթա՛րա՛ծը մեր կըլո՛խը մին օյին ա պերելու, վերչը մըեզ օտելու յա։

Ասըմ ա, պըրծնըմ, մին չորքանի մըհակ յոր օնըմ, հըղե ինըմ, քյինըմ հեռու տեղեր։

Շատ ա քյինըմ, խըրեգյ ա քյինըմ, մին քյարվանի յա ջիհըմ։

Էտ քյարվանին մըեծը ըտրանա հըրցնըմ ա, ասըմ. - Ախպեր, ծեռքիտ մըհակը հի՞նչ փեդա յա, թա գյիդացիր, յըես քյըեզ մին օղտի պեռնը վըեսկէ կտամ։

Էտ տըղան վէչ մին պեն չի ասըմ, սուսըփուս ո՛ւրա՛ն ճընապարըն ա քյինըմ։

Քյինըմ ա, քյինըմ, տըեսնըմ մին ծո՛րըմ մին ծոխ ա եր ինըմ։ Մըթկըմը տինըմ ա, վեր հինչ էլ ինի, էտ ծոխին յըան քյինի։

Քյինըմ ա, տըեսնըմ էրկու քոռ մարթ, մին տան մեչի ապրըմ ըն։ Ըտրանք շատ հարուստ ըն ըրվըմ, վէչխարի սո՛ւրո՛ւնը տըռանը, ամմա պահող չի կա, ժա՛ռա՛նգյ էլ չօնին, թա ո՛ւրա՛նց վէչխարը պահի։

Էտ տըղան մըթկըմը տինըմ ա ըտրանց քըշտին կենա, ըտրանց վէչխարը պահի, ասի էլ վէչ, թա ինքյը հո՞ւ վա՛։

Անց ա կըենըմ մին խիլլա՛ վախտ։ Մին օր էտ քոռ մարթը ասըմ ա. - Ա՛

կընեգյ, համոթ չինի հըրցնիլը. էս ա շատ վախտ ա, փորըս քըշտանըմ չի։

Կընեգյըն էլ մարթին ա ասըմ, թա. - Ա՛ մարթ, բա ասիլ չը՞, իմ փորըս էլ չի քըշտանըմ։

Մարթըկնեգյ խոսկը մին ըն անըմ, փըռնին, գյիդա՛ն էտ հո՞ւ վա, վեր ո՛ւրա՛նց փայը թաքուն օտըմ ա։

Էտ տըղան էլ ա օզըմ, վեր գյիդա՛ն, թա ինքը հո՞ւ վա։

Վերչը տըղան նաղլ ա անըմ, թա ինքը հու վա, հունց ա ըտեղ ինգալ, ասըմ ա. - Ցըես ծըեզ օքուտ կտամ, թա՛ք լիա՛ ինձ յոր օնիք, հունցու ծեր վերթին։

Էտ պառավնին ռազի յըն կըենըմ, համ էլ ասըմ. - Ա՛ բալա, վեչխարին սո՛ւրո՛ւն ամմեն վախտ կըքշիս բիդի էն վեր արևը մա՛ր ա մըննըմ, էն դոլը, բիդի արևը տո՛ւս կյամ դո՛լը չի քըշիս։ Էտ դոլին շատ հարամիքյ կան։ Տըղան լըսըմ չի, քըշըմ ա բիդի արևը տո՛ւս կյալի դոլը։ Վեչխարը ըրըծըցնելավ տանըմ ա սարերը, ծըմակնին, տեսնըմ մին օռնոց ա կյամ։

Էտ օռնոցին յրան էտ տըղան քյինըմ ա, տըեսնըմ մին ծո՛ռըմ, մին կյո՛ւլ ծընըմ ա։

Էտ կյո՛ւլը ըտրան ասըմ ա. - Ա՛յ տըղա, վեր վըեննըտ քըցալ ըս ըստեղ, լա՛վչըս ըրալ։ Վեր ճոխտ ծընեցի, գյիդա՛ վեր քյըեզ օտիլ չըմ, վեր կենդ ծընեցի, քյըեզ կօտիմ։ Էտ տըղին սերտը օզըմ ա, թա ճաքի վըխնութունան։ Վեր էտ կյո՛ւլը ծընըմ ա, էտ տըղան մինը յոր ա օնըմ, քըցըմ ո՛ւրա՛ն թորբան։

Ըտրանա ետը կյո՛ւլը էրկուսըն էլ ա ծընըմ։ Էլ ետ տըղին օտըմ չի՛։

Էտ տըղան էրկու ծա՛քյ յոր ա օնըմ, կյամ տոն։ Ծըմակավը անց կըենալիս մին հըրսանիքի ծեն ա լըսըմ։

Ասըմա. - Մին մուտանամ, տըեսնամ, բա՛լքա՛ս էտ հըրսընքըմը ծանոթ մարթ ինի, մեր տանան հըրցնիմ։

Տըղան շատ ա քյինըմ, թա խըրեգյ, տըեսնըմ ա մին դո՛ւզ տեղ կյո՛ւլերին հըրսանիքն ա։

Էտ կյո՛ւլերը ըտրան ասըմ ըն. - Ցա բեղմա հում մես օտիս, ետավ էլ մեր ասած հարցերին ջողաբը տաս, յա թա չէ, քյըեզ օտելան ընք։

Էտ տըղան մին կոճ ա կտրըմ, ճըղըմ, սըեպը մեչին տընըմ ըտրանց, սըտըստ ասըմ. Լա՛վ, հի՞նչ կինի, մինա՛կ տուք ծըեր թաթերը պերեք տիրեք էս փեղին դաթըմը, էն սիպտա՛կ տեղը փափուկ ա, ծեր թաթերը լա՛վա ինելու։

Էտ կլո̀ւլերը ո̀ւրա̀նց թաթերը տանըմ ըն տինըմ փեդին դաթըմը: Էտ տըղան փեդին դաթան ըրեպը հանըմ ա:

Էտ կոճը ըտրանց թաթերը հոփ ա տամ ցըվըցնըմ: Կլո̀ւլերը դաչանք ըն անըմ, վեր ո̀ւրա̀նց պեց թողի:

Էտ տըղան պեց չի թողըմ, ասըմ ա. -Ծըեզ պեց կթողիմ էն վախտը, վեր տուք տաք իմ հոր նան իմ մոր աշկերը, համ էլ ասիք, թա հունց բեդմա լըվըցնինքյ: Էտ տըղան կյո̀ւլերին պեց ա թողըմ:

Ըտրանց մեծը քյինըմ ա, մին տիրնըմ փըրթաթած, աշկերը մին էլ մին թեփուռ պերըմ, տամ էտ տըղին, ասըմ. - Ինք առ, հեսե աշկերը, քյըեզ ընք տամ: Կըտանիս տեղերը տինիս, էս թեփուռն էլ կքսիս լվցնիս:

Տըղան օրախ-օրախ կյամ ա տոն, ըտրանց աշկերը տեղը քըցըմ, թեփուռավը քըսըմ, լիվըցնըմ, էտ քոռ մարթն նան կընեգյը լըվա̀նըմ ըն, աշխարքըս ո̀ւրա̀նցըն ա տըեռնըմ:

Էտ տըղան ո̀ւրա̀ն թորբան հանըմ ա էն էրկու կյո̀ւլին ծա̀քը, ասըմ. -Ա մար, ըստրանց լա̀վ եշի, թող մըծանան, մըեզ պեթկը կըկյան:

Տանն իլա̀ծ վախտըն էլ ինքըն ա ո̀ւրա̀ն ծեռքավը օտել տամ: Էտ ծա̀քերը ըտրա յրան ըըվերըմ ըն, մըծանալավ ըտրան քյո̀մա̀գյ ըն անըմ:

Անց ա կենըմ մին խիլլա̀ վախտ: Մին օր էլ էտ տղան ո̀ւրո̀ւգյո̀ւնը տանը նստած քընենքյ ա անըմ, մըետըն ա քըցըմ ո̀ւրա̀ն հարազաթ մորը, օզըմ ա քյինի ընդրանց տըեսնա, ամմա հըմանչըմ ա էտ էրկունջի ծընողներեն ասի, լիա̀ տըխուր նըստըմ ա:

Էտ պառավնին հըրցնըմ ըն, թա. - Ա՛ բալա, խե՞ ըս բեքյեփ:

Տըղան ասըմ ա. - Դե աստուծանա թաքուն չի, ծըզանա հի՞նչ թաքուն պահիմ, օզըմ ըմ մին էրկու օրավ քյինիմ տոն, մեր խալխին տըեսնամ: Ըտրանք համոզ ըն ինըմ:

Մարըն ասըմ ա. - Բա՛լա, քյինի, ամմա էրկու-իրեք օրան իվիլ կընենաս վեչ, մունք քյըեզ ըըվերալ ընք, կարիլ չընք առանց քյըեզ կըենանք:

Տըղան ո̀ւրա̀ն էն ա̀վա̀լի մըհակը յոր ա օնըմ, քյընըմ:

Հըսնըմ ա տոն, ո̀ւրա̀նց ակուշկավը եշըմ, տըեսնըմ քյուրը եխտոտ, շո̀րերը ճըրդոտած, մազերը թախկուճ տըեռած, հեն ա տանը նըստած:

Քյո̀ւրը վեր ախպորը տեսնըմ ա, ասըմ ա. - Ա՛յ ախպեր, պարով ըս եկալ, հազար պարի յըս եկալ, պեր վըեննավըտ մին կանանչ-կյա̀րմո̀ւր թիլ քըցիմ, վեր էքան վախտ եկալ չըս, մըհեկ եկալ ըս: Դե էք տոն, էք

նըստի դինջա̀ց: Յըես էլ քյինիմ ծիտ կապիմ: Ախպերը տանը նըստըմ ա: Մին խրեգյ ետը քյո̀ւրը կյամ ա, ասըմ. - Ա՛յ ախպեր, ծիտ չորս վըննանի յա իլա̀լ, թա̀ իրե՞ք:

Ախպերը դա̀ստի կըլո̀խ ա ընգնըմ, վեր ծիյին մին վըեննը կըերալ ա: Ճարը կըտրած ասըմ ա. - Զիս իրեք վըննանի յա իլա̀լ:

Քյո̀ւրը մին էլ ա քյինըմ ծիյին մին վըեննը օտըմ, կյամ ասըմ. - Ա՛յ ախպեր, ծիտ իրեք վըննանի յա իլա̀լ, թա̀ է՞րկու:

Ախպերը ճարը կըտրած էլիա ասըմ ա.- Ծիս էրկու վըննանի յա իլա̀լ:

Քյո̀ւրը մին էլ ա քյինըմ, ծիյին էն էրկու վըեննը օտըմ, կյամ ասըմ. - Ա՛յ ախպեր, ծիտ առանց վըեններ ա իլա̀լ, թա̀ վըննա՞վեր:

Ախպերը ասըմ ա. -Հա՛, ա՛ քյո̀ւր,- ծիս առանց վըեններ ա իլա̀լ:

Վեր քյուրը մին էլ ա քյինըմ, ըտրանց իըրևանը կյամա, էտ տըղին ասըմ. - Ծո̀ւտ ըրա, տո̀ւս եք, քյինի, ծիտ լոխ օտելու յա, կյա քյըեզ էլ օտի, փախի, ազադվի, քու մոր կըերալ ա, ամմեն հինչ կըերալ ա, քյըեզ էլ ա օտելու:

Ախպերը վըեր էտ լոխ ըսկանըմ ա, մին տոպրակ մոխերավ լըցնըմ ա, պատալոկան կախ տամ, վեր քյուրը կյա, գյիդա, թա ինքըն ա, օզի թա̀ օտի, աշկերը մոխրավ լըցնըվի, կարի վեչ շուտ հետան հըսնի:

Էտ ախճիգյը սաղ ծին օտըմ ա, կյամ, թա ախպորըն էլ օտի, տեսնըմ ա ախպերը տանը չի: Տա յրա յա ընգնըմ էտ մոխրավ լիգյը տոպրակին, զյուդում ա, թա էն ա ախպերը մեչին:

Վեր տոպրակը ճըղվըմ ա, մոխերը եր ա տըեռնըմ, տըեռնըմ աշկերը: Տա միչև աշկերը սըրփըմ ա, էտ տըղան խիլլա̀ տեղ փախչըմ ա: Ախճիգյը կըըռքընին սըած, կըըռքընին ղըռճըցընելավ, կյըզազած,կըտաղած ախպորը հետան վազ ա տամ, խե հու՞նց ա վազ տամ, թընչընա̀փա̀սը եր իլա̀ծ, տըհա̀նելավ, քըրտնընքթաթախ:

Ճընապարին քյինո̀ղ-եկողա հըրցնըմ ա:

Քյինող-եկողնին էլ վըխելան նըհետ ասըմ ըն տըեղը: Էտ ախճիգյը ախպորըն ա հըսնըմ էն վախտը, վեր ախպերը հըսած ա ինըմ մին դո̀ւզ տըեղ: Ըտեղ էլ ինըմ ա էրկու ծըերանի ծառ:

Ախպերը տեսնըմ ա, վեր քյո̀ւրը հըսալ ա ո̀ւրա̀ն, եր ա ինըմ մին ծըերանի ծառ:

Քյո̀ւրը կյամ ա, ըսկըըսըմ էտ ծըերանի ծառը կըռքըներավը կըռծկոռծիլը:

Էտ տըղան վախտին էն պառավ ծընողներին ասալ ա, վեր թա ուրան մին պեն պըտաիի, օրվան կըթած կաթնը սըվընալու յա, էն վախտը թող դանստի պեց թողի էն էրկու կյուլին ճոտերին:

Մարը եշըմ ա, տըեսնըմ, օրվան կըթած կաթնը սըվացալ ա:

Տա պեց ա թողըմ էտ կյուլին ճոտերին: Ըտրանք վազ տալավ, թանչոց տալավ, լուզունին հանած, կյամ ըն հըսնըմ էտ տըղին, համին էն վախտը, վեր քյուրը էտ ծառը կըռքըներավը կըտրալ ար եր քըցալ, ախպերըն էլ էն մին ծըերանի ծառին ճըղան փըռնելով անց ար կաց ալ էն մին ծառը, քյուրը էլիա կըռքըներավը էտ էրկունջի ծառըն էլ ա կըտրըմ, խրեկ ա մընըմ, թա եր քըցի, ախպորը օտի: Էտ կյուլին ճոտերը յրա ըն պըրծընըմ մին շընչըմ էտ ըխճըկանը պըտըռ-պատառ անըմ: Ախպերը ազադվըմ ա: Համ ազադվըմ ա, համ էլ քյըվորը մեխկըն ա կյամ, լհան մին տիրն ա յոր օնըմ, առնան թաթախ անըմ տինըմ ծոցըմը:

Էտ տըղան ետ ա տըեռնըմ հըղե ընգնըմ, վեր կյա տոն, էն պառավներին կոշտը: Ճընապարին էլիա էն քյարվանը ետ տըեռնըմ ա ինըմ:

Քյարվանին տանը էտ տըղին անա հըրցնըմ ա, ասըմ.- Ա՛յ տըղա, թան կարիս ասիս էտ ծըեռքիտ մըիակը հի՞նչ ծառա յա, լոխ քյարվանըս քըեզ կտամ, թան կարիս վեչ ասիս, կըլուխըտ պուք ըմ տալու:

Էտ տըղան էրգան մըեթկ ա անըմ, գյուդում չի, թան հինչ ասի: Էտ վախտը բիրդան քյըվորը առնան, էն վեր տիրնը թաթախ էր ըրալ, մին սան ա կյամ:

- Ճըռռ ճապկե, ճապկեճըլապկե:

Էտ տըղան իտի էլ ասըմ ա:

Տու մի ասիլ, մըիակը լհան ճապկե ծառան ա ինըմ:

Էտ տըղան ասըմ ա. - Մըիակըս ճապկե ծառան:

Էտ քյարվաննին տանը լոխ օղտերը ուրանց պըեռներավը էտ տըղեն ա տամ: Տա յոր ա օնըմ, քյինըմ: Վեր տոն ա հըսնըմ, էտ պառավնին ուրխանըմ ըն, պերըմ ըն ըտրա հետի մին լավ ախճիգյ օզըմ, փըսակըմ: Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ:

Ըտրանա ետը լոխ լավ ըն ապրըմ:

## 7.ԴԸՌԴՌ̀ՏՎԱԾ ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆԸ

Իլա̀լ ա, չիլա̀լ մին առուտուրական: Ըտրան իլա̀լ ա մին կընեգյ: Տահանք շատ հարուստ ըն իլա̀լ, համ էլ շատ սերավ ըն իլա̀լ:

Մին խիլլա̀ վախտանը ետը էտ վաճառականը քինում  ա խոիդի, ետ տըեռնում, կյամ տըեսնըմ էտ կընեգյը ո̀ւրա̀ն փոխալ ա:

Էտ առուտուրականը կընգանը հըղըցան տո̀ւս կյա̀լի հետի, բուսը պահըմ ա, տըեսնըմ դո̀ւզ ա: Տա ընըմավեր մարդ ա ինըմ, ստիպված կընգանը տո̀ւս ա քըցըմ:

Ըրփըրվերի մընալանը ետը, էրկան վախտ օրիշ կընգա նըհետ վախտ ա անց կըցնում: Էտ մին կընեգյըն էլ ա ըտրան փոխըմ:

Առուտուրականը շատ ա քնենքյ անըմ, ասըմ ա. - Պա՛, համ հարուստ ըմ, համ դաշանգյ, պըենը հինչո՛ւմն ա, վեր կընանեքյը ինձ փոխըմ ըն:

Էտ էրկունջի կընեգյը ո̀ւրա̀ն անըմը թա̀մո̀ւզ պըհելի հետե կեղծավերոթուն ա անում: Մարթը տըեսնում ա պենին թա̀հրը, էրկունջի կընգանն էլ ա խըռիգյ տամ, տո̀ւս քըցում, ա̀լլա̀թ-սա̀լա̀թ ինո̀ւմ: Էտ առու-տուրականը շատ ա մըտածում, նըստում ա, ընգնում մըթկեն դոնը:

Մին օր տանը նստած մըտածելիս, հըրևանը կյամ ա, ասըմ.- Պարյօր, ա՛ հըրևան, յաղուզ մտած՞ըմ ըս, յաղուզ օրփաթա̀խոս ըս տըեռալ, խոսըմ չը՛ս...

Առուտուրականը դըրդըհա̀ն ա ինո̀ւմ, համ էլ էտ վախտը մըթկավըն անց ա կըենում, վեր հըրևանին կընէգյը ըրկուհո̀ւքյիս ա: Առուտուրակա-նը էտ հըրևանեն ափաթը կտրում ա, թա̀ եք մին պայման կապինք: Ըսկա-ցալ ըմ, թա կընեգյըտ խուխավ ա, թա ախճիգյ պիրի, իմ բախտեւ, թա տըղա պիրի, քու բախտետ, հախը տամ ըմ, թա̀քյի վեց ըմսեկան ինձ տաս:

Առուտուրականը մտծիս ա, վեր ախճիգյը յոր օնե ինքյը դաստիրակե, մծըցնե, պահե ո̀ւրա̀ն հետե հունցու կնեգյ: Գյուղում ա, թա դըստըրա-կելան ա: Մին դա̀շա̀նգյ օր էտ կընեգյը ազադվում ա, մին ախճիգյ պիրում: Վեց ամեսը վեր թըմամում ա, էտ առուտուրականը մըեծ փողեր ա տամ, էտ ըխճըկանը յոր օնում, տանում ո̀ւրա̀նց տոն, էտ վաճառականը ամեն մի հարմարոթունը տամ ա, թաքուն պահըմ, վըեր աստուծուն լո̀ւսան էլ չի տըեսնա միչն մըծանալը:

Տասնըհենգյ-տասնըվեց տարե պահում ա, դաստիրակում:

Տասնըվեց տարե ախճիգյը մնում ա ախճիգյ: Առուտուրականը մին օր

քյնում ա առուտուրի: Ախճիգը բո՛ւրդյա՛ն կըլխի յա ընգնում, վեր հո՛ւրթա՛վը մին թիքյա լո՛ւս ա ըրվում:

Մըտածում ա. «Էս հի՞նչ ա, հի՞նչ պըեն ա»: Մըտածում ա, մըտածում, պիրում տաքուրետկեքյը տընում ո՛ւրո՛ւր յրա, եր ինո՛ւմ հո՛ւրթա՛վը տո՛ւս կյամ, հո՛ւրթեն ղըաղեն նըստում:

Մարթիքյը քյնա՛մ ըն, կյամ ըն, էտ ախճիգյը զըրմանըմ ա:

Ասում ա.- Էս հի՞նչեր ըն, հի՞նչ զատեր ըն, հի՞նչ պեներ ըն, ըն ջուվարը նան հեյվանը ճոկում չի:

Մին օր էլ չգյիդա՛լա՛վ մին քար ա յոր օնըմ, թող անում: Քարը քյնո՛ւմ ա, մին տըղու նի կյամ:

Տըղան էլ մին քար ա յրա անում, ըխճըկանան տամ:

Տըղան ասում ա. - Հա՛լբա՛թ ինձ սիրում ա, ա՛նդո՛ր ա քարավ տամ:

Մուտանում ա էս ըխճըկանը, ասում. - Տո՛ւ հո՞ւ վըս, հու՞ր ախճիգյ ը՞ս, խոսիլը կարում ը՞ս, թա չէ: Բալքյաս երգյինքան քշացած հրեշտակ ըս:

Էտ ախճիգյը խոսելը կարըմ չի, լիա՛ ծըեռքավը նշանը ա տամ, վեր հո՛ւրթա՛ն ա տո՛ւս եկալ:

Տըղան ըխճըկանը յոր ա օնըմ, քյնո՛ւմ տոն: Ըտրանք ապրըմ ըն մինչև առուտուրականին կյալը: Օխտանաասունինջի օրը առուտուրականը կյամ ա, տո՛ռնը պենում: Տըղան կյողղ ա կըենում: Առուտուրականը տըեսնում ա, դա՛ստի կըլո՛խ ա ընգնում, վեր ախճիգյը համինը չի, իրեսեն եշում ա, ամմա վեչ մին պեն չի հըրցնում, որոշում ա կլո՛խ յոր օնէ, կորչի, վեր ըխճըկա շոխկ էլ տըեսնա վեչ, վեր տի անքախտ ա: Իտի էլ անում ա, իրղե յա ընգնում, քյնո՛ւմ:

Շատ ա քյնո՛ւմ, խըեզ՛ ա քյնո՛ւմ, դըբբրո՛ւզյո՛ւն չախը հըսնում ա մին ախպո՛ւրի: Էն ալմաստ ճիրա՛ն, էն ցորտ-ցորտ վըրխկալի ճիրա՛ն մին լա՛վ խմում ա, սըերտը հուվըցնում, օղում ա թա թեքյ ընգնի, էն մոտէ ծառին տակին քոն ինի, մին էլ մտածում ա՝ ծառը պըցրա՛նա՛, ծառեն քոն ինի: Իտի էլ անըմ ա:

Ամմա օխծը կըծածեն քոն կըկյա, ըտրա աշկերեն քոն չի կյամ: Մին էլ տեսնում ա, մին մարթ կլո՛խը քաշ քիցած կյամ ա; Տրան բուսը պահում ա, տեսնում ա եկու, հա՛մա՛ն ըխպրին անա ճո՛ւր խմից, էտ ըխպրին քշտեն նստից, ջուբան մին յալլըեխ տո՛ւս կա՛լա՛վ, մեկնից, հաց, պաներ տըրավ, էն մին ջուբան մին խընձո՛ր տո՛ւս կալավ, ծըեռքումը հանց հըլլո՛րից

տըեռավ մին ղա̀շա̀նգյ ախճիգյ: Մին տըեղ նստեցեն, հաց կերեն, խուսեցեն: Էն ծառեն յրա առուտուրական մարթը վուրուվ̀ուրդ ա անում, ասում ա, վեր եր կյա, քյընա հըրցնի, տեսնա էն խընձ̀իրը ըշտղա̑ յա, մինն էլ ինքյը քյինի առնե, պիրի օտե:

Ըտրանք հացը կերին, մարթը կըլ̀ըխը տիրա̀վ կընգանը ծոյնին, քոն իլա̀վ:

Կընեգյը մարթին կըլ̀ըխը տինում ա տափեն, ծոցան մին ասեղ տ̀ուս օնում, հանց հըլլ̀իրում, հանց պըլլ̀իրում, վեր մին ղա̀շա̀նգյ տղա յա տըեռնում, էտ ըխճըկանը սիր ա տամ, սիր առնում:

Էտ առուտուրականը էտ լոխ տեսնում ա ծառեն յրան, մընում մաթ, ասում.- Չէ, կընանուցը ճար, հնար չինի՛լ, վեր ըղփա̀գում էլ տինիս, մին ա, մարթին կփոխե: Պա հո վըե,՛ էս հի̑նչ պեն ար, պա ծըեր մա̀սսա̀քը ճաքե՛ կընանե՛քյ, պա ծըեր օխտը պոռտը, պա ծըեր իստինը-ինդինը հա՛:

Էտ քոն իլա̀ծ մարթը հի՛նչ ա գյուղ̀ում, վեր կընեգյը օխծը կըծած ա, վեր կընեգյը մին քիմսամըեռ ա, մին ածու կրակըն ա, անջախ ասըմ ար, վըեր էն ա ̀ուրա̀ն կոխկեն, վըեր կընգանը տըեղը գյուղ̀ըղ չի կա, հինչ կա՛, մին ալլախ-մալլախ նի կապի, քոն ինի՛ ուզուն ախմախի նման, օղտին ընգուճումը քոն իլա̀ծի նման:

Էտ կընեգյը, վեր ̀ուրա̀ն մարթին եր կընալի վախտը կյամ ա, էտ ղաշանգյ, թշերը կյարմ̀ուր, ինքյը սիպտա̀կ տղին, էտ սըեվ մա̀զերավ, սըեվ աշկ-ունքավ, վըռվըռում տղին հանց հըլլ̀իրից , հանց պըլլ̀իրից վեր էլհա ասեղ շինից, կոխից ծոցը: Մարթին կլ̀ըխըն էլ պըցըրցըրա̀վ տիրա̀վ գյ̀ուրգյ̀ումը, նըստից, ասխ լի̀ա վէչ մին պեն չի գյուղ̀ում, ասխ լի̀ա աշխարքաս բէխաբար մին կըթնակեր ա՛, հա̀լա̀ թա̀զա̀ յա կըռքնեն տ̀ուս կյամ:

Մարթը եր ա կըենում, կընգանը պըչպըչորում, հըլլ̀իր-պըլլ̀իր անըմ, մին խընձ̀իր շինում, տինում ջուբումը, էլհա ̀ուրա̀ն հըղեն քյըն̀ում : Հիշտեղ քյըն̀ում ա, էտ առուտուրականը հետան: Վերչը հըսնում ա ընդրա հետան, հըրցնում. - Ախպեր, ըշտե՛ղ ըս քյըն̀ում:

Էտ մարթն ասում ա.- Ցըես էլ չըմ գյ̀ուղ̀ում, քյն̀ում ըմ իլի՛:

-Դե մին չինինք, էրկու ինինք, էք քյինինք:

-Հի̑նչ կինի:

Ըտրանք քյըն̀ում ըն, քյըն̀ում, հըսնում ըն թ̀ուշ էն առուտուրականեն շենը: Էտ մարթը մըտածում ա, թա հիշտեղ ղոնաղ ընգնին, քըշերը կըենան:

Էտ առուտուրականն ասում ա. - Ըստեղ կաց, յըես մին ծանոթ օնիմ, քյնա̈մ կոշտը, էլհա կյամ էս սհաթիս:

Առուտուրականը նի յա մըննում դըրբըզավը, էտ վախտը էտ ախճիգյը էտ տղին նհետ սիր ա տամ: Լհա̈ վեր տըռնեն չըխչըխկոցը լսում ըն, էտ տղան նի յա մննում տըխտատեղը: Առուտուրականը կյամ ա տոն, ըխճըկանը կարքատիրում,

վեր էն մունուտին մին խորագյ պըղըրաստե վեց աման, վեց քըթո̈ղ կոխկեն: Մին բոթուղ կյինի, վեց ստաքան կոխկեն, իտի մին սհաթանը ետը հազը̈ ինի:

Ասում ա, պըրծնում, տո̈ւս կյամ, քյընո̈ւմ էն մարթին կոշտը: Պատառ զըո̈ւց ա անում, ըտրան յոր օնըմ, կյամ տոն, տեսնում լըխ պադըրաստ:

Նստում ըն հաց օտին, էն ախճիգյն ասում ա. - Բա հոր ըն հնգյերունքտ:

Առուտուրականն ասում ա. - Նստե, կըրկյան: Ախճիգյն էլ ա նստում:

Առուտուրականն ասում ա. - Էն տըղան էլ կինի սոված, պեր հաց օտե:

Ախճիգյը լա̈ց ա ինո̈ւմ, ասում. - Հի՛նչ տղա յա, գյուղո̈ւմ չըմ, լո̈ւս աշխարք չըմ տո̈ւս եկալ, մըեռունը ճըկատիս, տու խե յըս իտի պեն ասըմ:

- Դե լա̈վա, կլկոնձի մի տալ, շուտ ըրա հանե: Ախճիգյը աթկազ ա անըմ:

Առուտուրականը օզում ա, թա էտ ըխճկանը սպանե: Վըխելան նըհետ էտ ախճիգյը սիրականեն տո̈ւս ա օնըմ:

Առուտուրականը ըտրան նըստըցնում ա ստո̈ղեն քըշտեն: Ետավ էտ մարթին ասում ա. - Ախպեր, նշանածտ էլ կինի սոված, քյըսօրին կերած- նետ ա, հանի պեր հաց ճտե:

Էտ մարթն ասում ա. - Հի՞նչ նշանած ա, հի՞նչ պեն:

Առուտուրականն ասում ա. - Յըես էլ ըմ գյո̈ւղո̈ւմ, պեր, ջուբետ պենը տո̈ւս կալ:

Հընգյերը տո̈ւս ա օնում, խըրնձո̈րը հըլլո̈րում-պըլլո̈րում, մին ախճիգյ ա տըեռնում, տնո̈ւմ ստո̈ղեն քըշտին:

Օզում ըն, թա հաց օտին, առուտուրականը էտ ըխճկանն ասում ա.- Դոշիտ ասեղը տո̈ւս կալ, սոված կինի, թող հաց օտե մըզնըհետ:

Էտ մարթը տեսնում ա, վեր առուտուրականը դո̈ւզ ա ասում, ինքյն էլ մին դո̈ղան ա ստիբում:

Կընեգյը ճըղճըղամ ա, մարթին ո̈ւշո̈ւնց ա տամ, մարթին հորը գյոռավ ասում, բըղըբըղամ, թա. - Մինչի օրս մինը գյուղում չի, թա մունք կանք:

Խե՞յըս պերալ էս ըխմախեն կոշտը:

Ստիբում ըն, վեր էտ կընեգյը ասեղը հանե: Ասեղը հանում ա, հըլլո՝-րում, պըլլո՝րում, մին նախշուն տղա շինում: Տարան էլ ըն նըստըցնում ստո՝լեն, վեր հաց օտի:

Էտ առուտուրականը յոր ա օնում բոթուլը, ըստաքաննին լըցնում, ասում. - Հիշտեղ միյամիտ մարթ կա, ընդրան կյենացը: Հիշքան չըրչըրվե-ցենք մըեզ հալալ չի տեռավ. էս ո՝ւրո՝ւգյո՝ւնըս մեզ բախտ չօնինք: Ուրեմնս ըստահանք թող մընան: Յըես ու տու տո՝ւս կյանք էս ըշխարքաս քյինինք:

Թա հըշտեղ ա օզըմ քյինի, մա՝հլում չի անում:

## 8.ԷՐԿՈՒ ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆ

Էրկու առուտուրական հընգյերանըմ ըն, ամմա̀ն դո̀նըմ առըտուրը մինտեղ ըն անըմ, ո̀ւրա̀նք էլ շատ սերավ ըն ինըմ:

Ըտրանք ո̀ւրո̀ւր խոսկ ըն տամ, վէր էս մինին թա տըղա ինի́, էն մինին ախճի́գյ, մըծընալանը ետը ո̀ւրո̀ւր նըհետ փսակին, պարեկամ տըեռնան, լիա̀ իտի էլ ինըմ ա:

Մինին ախճիգյ ա ինըմ, մինին՝ տըղա:

Պուճուր վըխտանց ախճիգյը նան տըղան մին տեղ ըն մըծանըմ: Ըտրանց փըսըկելի վախտը կյամ ա: Ըտրանց հա̀րերը լա̀վ հըրսանիք ըն անըմ, փըսակըմ:Ո̀ւրա̀նք էլ էնքան սերավ ըն ինըմ, վըեր էլ ասվիլ չի́:

Ըտրանք ամմեն օր ասծու ղաչանք ըն անըմ, վըեր էրկուսին միշտ էլ իտի սերավ պահի, մըռնելի վախտն էլ մին տըեղ տանի:

Ամմա ինդի յա պըտահըմ, վըեր աստուծ մին տըեղ չի տանըմ: Առաչ կընգանն ա տանըմ:

Տըղան վըեչ ուտըմ ա, վըեչ խմըմ, օզըմ էլ չի, թա լո̀ւս աշխարք տո̀ւս կյա: Նա թողըմ չի վըեր կընգանը թաղին հանգյիստարանըմը, թաղիլ ա տամ ո̀ւրա̀ն օթախին տեմացը, վըեր ամմեն օր ընդրա կյրեզմանը տըեսնա:

Մին քանի օրանը ետը նա լոմը յոր ա օնըմ, ո̀ւրա̀ն օթախան մի̀չև կընգանը հանգյիստը տափին տակավը քանդըմ: Քըշերնին քյընըմ ա կընգանը դութուն կոշտը, ցիրեկնին կյամ ո̀ւրա̀ն օթախը:

Մին դո̀նըմ ո̀ւրա̀ն կընգանը դութուն քըշտան վըեր կյամ ա ո̀ւրա̀ն օթախը, տըեսնըմ ա ստո̀լին յըրան մին կյիր տիրա̀ծ:

Էտ կյիրը յոր օնըմ, պեց անըմ կարթըմ, տըեսնըմ կյիրին յրան կյիրա̀ծ: «Էս կյիրը վըեր մըեռած մարթի քըշտի կարթիք, մըեռած մարթը կըսըղանա»:

Տըղան դա̀ստի կյիրը տանըմ ա դութուն կոշտը, իրեք օր ո̀ւրո̀ւր հետա կարթըմ, պըրծընըմ:

Մին էլ ա տըեսնըմ, վըեր կընեգյը մըեռած տըեղան եր կացավ: Ըտրանք էտ տափին տակին քանդած տըեղավը տո̀ւս ըն կյամ, կյամ ո̀ւրա̀նց օթախը: Տըղան հրամմայըմ ա ծառին, վըեր էրկու ֆայ ուտելի պըեն պըերի: Ծառան զարմանըմ ա, թա̀ խե̂յա էրկու փայ ուտըմ: Էտ հի̂նչ պըեն ա, առաչ իսկի մին պաժին էլ չար ուտըմ, մըհենգյ էրկու պաժին ա ուտըմ: Էտ ծառան թաքուն տըռա̀նը ծական եշըմ ա, տըեսնըմ, վըեր էտ

տըղան ո՛ւրա՛ն կընգանը նըհետ նստած հաց ա օտըմ: Տա դաստի քյընըմ ա էտ տըղին հորը ասըմ:

Տըղին հա՛րը կյամ ա տըեսնըմ դո՛ւզ: Մարթ ա ղըրկըմ ըխճկանը հարը կյամ ա, տըեսնըմ, ուրխանըմ: Էտ վախտը ինդի մին ա՛դա՛թ կար, վըեր մըեռած, մին էլ սըղացած մարթին նըհետ ապրիլ չըն, ժողովուրթըն էլ կլսի, լա՛վ չի՛: Ըտրա հետի էլ ըտրանց ասըմ ըն, վըեր մարթըկընեգյ եր կըենան քյինին մին օրիշ քաղաքըմ ապրին: Տըղան ռազի յա կըենըմ: Հա՛րերը լա՛վ փող ըն տամ, վըեսկե, ամման հինչ, ըտրանց ճընապա տընըմ:

Մին դո՛նըմ էտ քաղաքին թաքավերը ըտրանց տանը քըշտավը անց կըենալիս տըեսնըմ ա էտ կյեղեցիկ կընգանը, ասըմ. - Տու էտքան կյեղեցիկ, փըսակվալ ըս մին դո՛ւքյա՛նչու նըհետ, էն քյըեզ սազըմ չի, քյըեզ թաքավերական թախտ ա սազըմ: Թա օզըմ ըս, եք իմ կընեգյս տըեռ, յըես քյըեզ թաքուհու նման կըպահիմ, կըլխիտ էլ թա՛քյ կտինիմ: Էս քաղաքը իմն ա, էս ժողովուրթն էլ իմ գյաղեքս ըն:

Էտ կընեգյը փառքը-պառծանք սիրող ա ինըմ, ռազի յա կըենըմ, դա՛ստի ըտրա նըհետ փայտոն ա նըստում, քյընըմ, խոխան թողելավ հըետան լա՛ց ինելիս: -Քյըսօրին մարթը կյամ ա, թա հաց ուտի, տըեսնըմ կընեգյը կա վըեչ, տոնը լոխ եր ածած, խոխան լա՛ց ինելիս:

Հըրևաններան հըրցնըմ ա, թա կընեգյը հո՞ր ա, ըդրանք ասըմ ըն, վըեր թաքավերին նըհետ փայտոն նստած քյեցալ ա, համ էլ ասալ ա, վըեր տու ո՛ւրա՛ն ըսպասիս վըեչ:

Էտ մարթը մընըմ ա մա՛թա՛լ, տըեղը կաղնած: Էքսը դո՛ւքա՛նը քըլլըմ ա, տոն, տըեղ թողըմ, քյընըմ կընգանը հետան: Նըհետն էլ մին խիլլա՛ փող, վըեսկե յա յոր օնըմ:

Թաքավերը էտ կընգանը տանըմ ա ծովավը անց կըցնըմ դիբի տենը, հըրամման տամ, վյըեր վըեշ մինը էտ դո՛ւլերքը անց չի կըենան, քյինին վեչ:

Էտ առուտուրականը մին նավ ա առնըմ, ծովավը քյընըմ, քյընըմ, հըսնըմ մին օրիշ քաղաք: Էտ քաղաքըմը ման ա կյամ, մա՛ն, մին սապոժնիկի յա թուշ ինըմ:

Առուտուրականը ընդրան ասըմ ա. - Ախպե՛ր, օրը հի՞շքան ըս փող ըշխադըմ:

Սապոժնիկն ասըմ ա, - Եշած կործին, հիշքան տամ ըն, էնքան էլ յոր ըմ օնըմ:

Էտ առուտուրականն ասըմ ա, - Եք ըխպրանանք յըես նան տու, հիշքան փող ըս օզըմ, քյըեզ կըտամ, մինյա՛կ թյա՛ք լի՛ն ինձ դեմ չի քյընյա՛ս, թյա՛ք լի՛ն ինձ նըհետ մին խոսկի ինի՛ս, դո՛ւզ ինիս:

Էտ սապոժնիկը ռազի յա կըենըմ:

Առուտուրականը մին խիլյա՛ փող, վըեսկե ա տամ ըտրան, համ էլ ըտրան ա տամ էն մըեռալ սըղըցնող կյիրը, ասըմ. - Յըես լըսալ ըմ, վըեր իմ նյա՛մյա՛րդ կընեգյըս պերալ ըն ըստըեղ, էն ա թաքավերին ծըեռքին, յըես քյինալու յըմ պալատըմը գյա՛դյա՛ նի մըննիմ: Բալքաս ինձ նըհետ մին պըեն ա պըտահըմ, բյա՛լքյա՛ս ինձ սպանըմ ըն: Էս կյիրը կտինիս քըշտիս, կկարթիս կըլխանըս երը կաղնած, էն վախտը յըես եր ըմ կըենալու, սըղանալու յըմ:

Էտ առուտուրականը քյասիբի շո՛րեր ա կյենըմ, քյընըմ կաղնըմ քաղաքին մեյդանըմը, ըշտեղ հարուստնին կյամ ըն ո՛ւրյա՛նց հետի գյադյա՛-գյուդյա՛ փըռնըմ: Մին էլ ա տըեսնըմ թաքավերին վյա՛զիրը կյամ ա դիբի ո՛ւրյա՛ն, ասըմ. - Ա՛յ գյա՛դյա՛, կկարի՞ս փեդ կըտորիս, ճո՛ւր կըրիս, հայաթ սըրփիս:

- Խե՞չըմ կարիլ, հյա՛լյա՛ ջանըս էլ տո՛ւս կկյա:

Վյա՛զիրը ըտըան յոր ա օնըմ, տանըմ պալատը:

Կընեգյը վյըեր մին քանի օրանը ետը տըեսնըմ ա ո՛ւրյա՛ն մարթին, թաքավերին անա խնթըըմ ա, վեր էտ մարթին տո՛ւս քըցին, ամմա թաքավերը ասըմ ա. - Օզիլ չի՛, թող ըստեղ կենա գյադրթուն անի:

Մին հետ էլ թաքավերը էտ կընգանն ասըմ ա. - Ա՛ կընեգյ, էքան վախտ ա քյըեզ նըհետ ապրըմ ըմ, ամմա հյա՛լյա՛ իմ մըեծամըեծնիս գյուղում չըն, թա տու իմ կընեգյս ըս, եք մին լյա՛վ թաքավերական քյեփ սարքինքյ, կյան մըեզ շնհավեր անին:

Էն մին օրը ըսկըըմ ըն պադրաստոթուննի քաշիլը: Էտ գյադին էլ հրամմայըմ ըն, վըեր ճո՛րին առաչը քըցի, քյինի, առած տըեսը-տըենը կըրի: Գյա՛դյա՛ն իտի էլ անըմ ա: Ամմա էտ կընեգյը ըտրա պերածը թաքուն լոխ կյետն ա ածըմ:

Թաքավերը ո՛ւրո՛ւզյունը առոք-փառոք կյամ ա մըեծ զալըմը նստըմ, վըեր սեղան պեց անին, տըեսնըմ ա՝ զատ չի կա:

Կընգանան հըրցընըմ ա, թա.-էս հի՞նչ պըեն ա, էս հինչ կործ ա, բա խե՞յըք իմ անըմըս, իմ պաղըս տափը քըցըմ, պա հո՞ր ա սարքած ստո՛լը,

բա համոթ չի՞ , էս ա նա̀զիր-վա̀զիրնիս , մըեծամըեծնիս կյա̀լու յըն։

Էտ կընեգյը ասըմ ա. - Հի՞նչ պադրաստոթուն ըս քաշալ, հի՞նչ ինի։ Թաքավերը կանչըմ ա ծառաներին, գյդոտանցը, ասըմ. - Պա խե՞ չըք իմ հրամմանես կադարալ։

Ծըռոտենքը ասըմ ըն ,- Թաքավերը ապրած կըենա, հինչու հրամմայալ ըս, լոխ կադարալ ընք, օտելի պեները ճո̀րավը կըրողն էլ էս ա իլա̀։

Թաքավերը կըզնըվըմ ա, ասըմ.-Տարեք, էս սըհաթիս ըտրա կըլո̀խը կըտրեցեք։

Էտ մին գյա̀ղա̀ն թաքավերին վըեններն ա ընգնըմ, ասըմ. - Թաքավերը ապրած կըենա, հինչու առալ ըն ինձ տըվալ, ճո̀րո̀ւն յրան պեռնած լոխ կըրալ ըմ, պըերալ պալատը։

Թաքավերը հըվատըմ չի։ Ղոնաղնին սկսըմ ըն հըվաքվիլը։ Ճարը կըտրված թաքավերը հրամմայըմ ա՝ պալատին քաշի ըմբըներըմը հինչ օտելի, պըեն կա, ընդրանա աշպազնին իփին, պադրաստին, լա̀վ ստո̀ւլ պըեց անին։ Իտի էլ անըմ ըն։

Վըեր լոխ հըվաքվըմ ըն, ո̀ւրա̀նց տըեղերը նըստոտըմ, թաքավերը տըեղան եր ա կըենըմ, ասըմ.- Պատվըելի նա̀զիր-վա̀զիրնի,հարկելի մըեծամըեծնի, յըես հրամմայալ ըմ ծըեզ հետի մին լա̀վ քյեփ սարքին, մին ամման հինչավ լիգյը մըեծ ստոլ պըեց անին, ամմա մըեր անխելք գյա̀ղա̀ն հինչու առալ ընք, պալատը չի, պերալ, ինձ էլ ծըեր քըշտին թողալ ա համոթալի։ էտ գյա̀ղա̀ն մըհենգյ էն ա դուսաղխանըմը, ընդրան թողըմ ըմ ծըեր դադաստանին, հինչ պատիժ ասիք, ինդի յըմ անիլ տալու։

էտ ղոնաղ մըեծամըեծնին որոշըմ ըն էտ գյաղին էն մին օրը մեյդանըմը կախ տան, սաղ ժողովուրթին առաչին։ Քըշերավը թաքավերը հրամման ա տամ, վըեր մեյդանըմը մին սո̀ւն տընգին, էտ գյա̀ղին կախ տան։ Սաղ ժողովուրթը հըվաքվըմ ա։ Համին էն սապոժնիկն էլ ա կյամ։ Քյա̀նդիրը քըցըմ ըն էտ գյա̀ղին վիզը, կախ տամ։

Կընեգյը թաքավերին անա խընթըրըմ ա, վեր տանին մին հեռու տըեղ թաղին, յրան էլ պահակ կըղնցնին, տանին վըեչ հանգյիստարանը։ Էն մե-ռալ սըղըցնող կյիրին անա խոսըմ չի, թաքուն ա պահըմ։ Դե էտ թա-քավերը հի՞նչ ա գյո̀ւդում, թա էտ գյա̀ղա̀ն էտ կընգանը առաչվա մարթն ա։

Իտի էլ անըմ ըն։ Տանըմ ըն մին հեռու տըեղ թաղըմ, յրան էլ պահակ կըղնըցնըմ։

Սապոժնիկը էտ լոխ զյո՜ւղո՜ւմ ա: Մին բոթիլ ա՜րա՜ղ ա յոր օնըմ, քյընըմ էտ պահակին կոշտը, ասըմ.- խեր ինի ախպեր, խե՞ յըս ըտեղ կա զնած:

Պահակը ասըմ ա. - Մըեռալին յրան պահակ ըմ կաղնալ, վըեր փախչի վըեչ: Ըստրա զյոռը ըստի-ըստի... սաղ փըդացալ ըմ, էնքան ցորտ ա, հինչ ցորտ, այազ ա, ղըյամաթ ա, տըեսնըմ չը՞ս հունց ա ասթխերը փըլըստրատին տամ, այազ վախտը միշտ իտի յա ընը՛մ:

Էտ սապոժնիկն էլ ասըմ ա.-Բա յանի իտի պըեն կինի՛, իտի օյին կինի՛, վըեր մըեռալին էլ ղարավուլ քաշին: -Էլ ասիլ մի, մըեր թաքավերը էնքան հիմմարացալ ա, վըեր մըհենգյ էլ խուտուրու-մուտուրու հրամմաննի յա տամ, խելքը քամեն տարալ ա: Ասի, ա սարսաղ շան տըղա, բա յանի մըեռալին յրան էլ ղարավուլ կքաշին... Էտ էլ թաքավեր չի տըեռավ մըեզ յրա, մին ղա՜րդըըբալա տըեռավ, մին ծզզյա՜ բաբաթ պըեն տըեռավ:

- Ա՛րա, պըեն չօնի՛ս, ղարավուլըս վե՞րն ա, նըստի մին խըըրեգյ արաղ խըմինք, քյեփընիս պըեց անինք:

Սապոժնիկը համ ասըմ ա, համ էլ արաղը ո՜ւրո՜ւր հըետա ածըմ, էտ ղարավուլչուն խըմըցնըմ, հըրփըցնըմ: Ղարավուլչին կոնձելանը ետը թեքյ ա ընգնըմ, քոն ինըմ:

Սապոժնիկը ծըեռաց կյըրեզմանը քանդըմ ա, մեյիդը հանըմ, էտ կյըրեզմանը հունցը իլա՜լ ա թա՜զա՜ղա՜ն ինդի շինըմ, մեյիդը յոր օնըմ, տոն կյամ, մեյիդր թողըմ տանը, ինքը էլհա քյընըմ էն ղարավուլչուն կոշտը, տըեսնըմ հա՜լա՜ էն ա քոն իլա՜ծ:

Եր ա կըցնըմ ասըմ.- Ե՛ր կաց, ա՛րա, ե՛ր կաց, բա տըեսնըմ չը՞ս, լո՜ւսա՜նըմ ա, եր կաց տըեղտ կաղնի, թա չէ մըեռալը կփախչի, թաքավերն էլ քյըեզ կտինի էտ մըեռալին տըեղը:

Վըեր էտ ղարավուլչին եր ա կըենըմ, էտ սապոժնիկը ետ ա տըեռնըմ, կյամ ո՜ւրա՜ն տոնը: Էտ մեյիդին քըշտին իրեք օր էտ կյիրը կարթըմ ա, մեյիդը սըղանըմ ա, տըեղը կաղնըմ: Էտ առուտուրականը շատ շունըրակալ ա ինըմ էտ սապոժնիկան:

Մին քանի վախտանը ետը մին խա՜բա՜ր ա չավ ընգնըմ, թա՜ թաքավերին մաղար տըղան ծանդըր հիվանդ ա, հա՜քյիմնին կարըմ չըն, թա ճար անին: Թաքավերը հրամման ա տըվալ, վըեր հու վըեր ո՜ւրա՜ն տըղին լըվըցնի թաքավերոթունին կըեսը ընդրա կըտա:

Էտ առուտուրականը վըեր էտ խաբարը լըսըմ ա, իրեսը եր ա անըմ,

լա՜վ-լա՜վ շո՜րեր ա կըենըմ, կյիրն էլ յոր օնըմ, քյընըմ պալատը։

Թաքավերին գյա՜ղեքը ասըմ ըն, վըեր իստի-իստի մին մարթ ա եկալ։

Թաքավերը ո՜ւրա՜ն կոշտն ա կանչըմ, ասըմ. - Պարով, հազար պարի յըս եկալ, թա՜ կըրեցիր իմ տըղիս մին ճար անիս թաքավերոթունիս կըեսը քյըեզ ըմ տալու, թա՜ կըրեցիր վըեչ, կըլո՜խտ թըռցնելու յըմ։

Էհա՜ էտ խոսկին մըեչըմը, գյղո՜տենքը լա՜ց ինիլա՜վ կյամ ըն թաքավերին առաչին չոքըմ, ասըմ. - թաքավերը ապրած կըենա, վըեղը կըլխներիս ա տըեռալ, տըներնիս քանդվալ ա, բա ասիլ չը՛ս խոխան մըեռալ ա։

Թաքավերը սորը հանըմ ա, թա էտ ասողին կըլո՜խը կըտրի, էտ առուտուրականը բըլա՜կա՜ն փըռնըմ ա, թողըմ չի էտ գյա՜ղին սպանի, ասըմ ա. - Թաքավերը ապրած կըենա, վախիլ մի, յըես կըրղըըցընիմ, մինա՜կ մին պայմանավ, վըեր իրեք օր թողիս վըեչ էտ օթախան մինն էլ ա մո՜ւտանա։

Թաքավերը խոսկ ա տամ, վըեր թուղիլ չի...

Իրեք օրանը ետը թաքավերին տըղան սաղ-սալամաթ քյընըմ ա ո՜ւրա՜ն հորը առաչին կաղնըմ։

Թաքավերը էտ առուտուրականին ա տամ թաքավերոթանին կըեսը։ Ամմա էտ առուտուրականը օզըմ չի, ասըմ ա. - Տէր-թաքավեր, մինա՜կ լիա՜ իրեք օրավ քու թաքավերոթունըտ ինձ տո, ընդըրնա ետը քյըեզ ինի։

Թաքավերը ռազի յա կըենըմ։

Վեր էտ առուտուրականը թաքավերին թախտին նըստըմ ա, էն սապոժնիկին կանչըմ ա լա՜վ-լա՜վ բաղարկեք տամ, համ էլ թաքուն ասըմ. - Յըես էրկու օրանը ետը ժողով ըմ ընէլու, ժողովուրթը մէյդանըմը հվըք-վելու յըն։ Յըես ըսելու յըմ, թա էս թաքավերը հինչ փիս պըեներ օնի, ըսեցիք։ Տու կասիս, թա էտ թաքավերը ըստի-ըստի փիս պեներ ա ըրալ, գյա՜ղին կախ ա տըվալ, ետավ իտի փիս-փիս պըեներ կասիս։

Իտի էլ անըմ ըն։ Էտ առուտուրական-թաքավերը ժողովուրթին հըվաքըմ ա, հըրցնըմ, թա. - Ա՛յ ժողովուրթ, ասեցիք տեսնամ ծըեր թաքա-վերը ծըեզ հո՞ւնց ա պահալ, հու չըրչարալ չի՞ , հու ծըեր ջանին եղը քաշալ չի՞, հու ծըեզ մա՜նգյա՜նի տակ չի՞քըցալ, վախիլ մի՛ք, ասեցիք, հինչու գյո՜ւղո՜ւմ ըք։

Դէ հիշքան չինի ժողովուրթին աշկը վախած ա, էն հու՞ կը կարի մին խոսկ ասի, լոխ սուս ըն անըմ, կուրկուփ կյամ, թա ծո՜ւկնը կխոսի, ինդի էլ ո՜ւրա՜նք։

Հա̈մին էտ վախտը ժողովուրթին մեչան մինը ծայն ա խընթըըմ, էտ համին սապոժնիկն ա ինո̈ւմ, ասըմ ա. - Թա̈զա̈ թաքավէրը ապրած կըենա, տու գյո̈ւղո̈ւմ ըս էտ թաքավէրը հինչ սըէվ սըտանայա իլա̈լ, մին զուլում, մին պատիժ, աստուծ ըտրա յրան կըրակ էր ածի, հինչու օտի քըթըծըկերավը էր ածի́, տա մըէզ կըերալ ա, պըկին մընա մըզանա կըերա́ծը, տանը պէն չի մընա մըզանա տարածան... էն օրըն էլ ո̈ւրա̈ն գյա̈դին կախ տըվավ, հա̈լա̈ ղարավուլչի էլ տիրա̈վ կյըէզմանին քըշտին, վըէր էր չի կըենա, փախչի: Պա ըտրան աստուծ օնի́ :

Էտ վախտը էն իսկական թաքավէրը աշկերը էտ սապոժնիկին յրան պըլըզըմ ա, չըռըմ, ամմա էլիա սապոժնիկը ասըմ ա. - Պա ըտրան ինսափ օնի́ , հէնց ա լիա̈ կյա̈րմո̈ւր կյո̈ւլ ինի, էնքան կըերալ ա, մին առչ ա տըէռալ, հէնց ա լիա̈ մին տըռըըտոմբալ ինի́, մին քառասուն վըէղըանոց կյինու պոժկա ինի́: Ա́ ժողովուրթ, թող կյա հա̈լա̈ ծըէր առաչին կըըպընդըիկի տա́, վըէր լոխ ասըմ չը́մ, մին փարա պըէնէր կյեղըմ ը́մ:

Թա̈զա̈ թաքավէրն ասըմ ա.- Ա́ ժողովուրթ, պա հինչ պա̊տիժ տանք էս թաքավէրին:

Ժողովուրթը ասըմ ա. - Կախ տանք, կախ տանք էտ ա̈ռնա̈խումին:

Պըէրըմ ըն մէյդանըմը մին սո̈ւն տընգըմ, էտ առաչվա թաքավէրին կախ տամ, մէյիդըն էլ տանըմ համին էն «գյա̈դին» կյըէզմանին քըշտին թաղըմ:

Ըտրանա էտը էտ առուտուրական թաքավէրը քյընըմ ա ո̈ւրա̈ն կընգանը կոշտը, ասըմ. - Տու ինձ ճընանչըմ ը̊ս:»

Էտ կընէգյը ո̈ւրա̈ն ինդի յա նշանց տամ, գյվաքիս ճընանչըմ չի:

Էտ առուտուրականը կըզնըվըմ ա, ասըմ. - Ա́յ հարամ կաթնակըեր, ա́յ իրեսը սըէվ, պա տու ինձ ճընանչըմ չը́ս, քու ըստինըտ- ինդինըտ: Ասըմ ա, սոըը հանըմ, էտ կընգանը կըլո̈խը թըռցնըմ:

Ըտրանա էտը էն թաքավէրին թախտը մընըմ ա տըէռտակ, ժողո-վուրթը ո̈ւրա̈ն մըէչան արժանի մարթ ա ճօկըմ, վըէր կառավարի: Էլ վըէչ մին մարթ վախըմ չի, ըսկըըսըմ ըն ազադ ապրիլը, ազադ խոսիլը:

Էտ առուտուրականըն էլ ո̈ւրա̈ն հէտի մին լավ, հավադարիմ կընէգյ ա ճարըմ, նըհէտը փըսակվըմ, բախտավէր ապրըմ:

## 9.ԱՂՎԵՍԸ

Ինո՛ւմ ա, չինո՛ւմ մին թաքավեր ա ինո՛ւմ էտ թաքավերին ինո՛ւմ ա իրեք տըղա։

Մին օր մին պառավ մարթ կյամ ա թաքավերին կօշտը, ասում. - Մըեծ թաքավերը ապրած կենա, քու պալատըմըտ ամմեն հինչ կա, մինակ վըեսկե դուշը չիկա, հունցը օգում ա ինի, բեղմա ծըեռք պիրիս։ Էտ վըեսկե դուշը էն ա օխտը սարի քըմակի։

Էտ խոսկը թաքավերին շատ ա տանջում, մըեթկ ա անում, մըեթկ, տըեսնում էս ա տըղերքը եկին։

Ա՛ հա՜ր, յաղուզ իտի բեքյեփ ըս, դա՜րդը-դեյիդտ հի՞նչ ա, ասի, մունք էս ընք սարի մնան դըլվումտ կաղնած, մունք կըքյինինք, ճարինք հինչ էլ ինի։

Թաքավերը տըղորցը լոխ նաղլ ա անում։

Մըեծ տըղան ասում ա.-Ա՛ հա՜ր, յըես կքյինիմ, պըերիմ։

Տա ճընապարի պադրաստոթուն ա քաշում, հըղե ինո՛ւմ։ Ճընապարին մին Աղվես ա ջըհում, ասում. - Թաքավերի տըղա, ճընապարիտ էրկու տոն ըս տըեսնալու, մինը՝ մըթեն, մինը՝ լո՜ւս։ Էտ լո՜ւս տանը քյեփ ա ինելու։ Նի կըմըննիս մըթեն տոնը, վեր դինջանաս, վեր կարիս էքսը քըշերավ հըղետ քյինիս։

Էտ տըղան ըջըղվում ա, Աղվեսին թըխում, քյընո՛ւմ։ Քյընո՛ւմ ա, քյընո՛ւմ, շատ ա քյընո՛ւմ, թա խըեգյ, ինքյը կըգյիդա՜, վերչը հըսնում ա Աղվեսին ասած տըներին։ Նի յա մըննում մըթեն տոնը, թա կենա, ամմա էն մին տանը ծափը-ծիծաղը, յըերքը-պարը, զուռնա-դավալին ծենը թողում չի, թա էտ մըթեն տանը կենա, տո՛ւս ա կյամ, նի մըննում էն լո՜ւս տոնը, ըշտեղ քյեփ ին անում։

Տա ըտեղ լոխ մըտան քըցո՛ւմ ա, համ վըեսկե դուշը, համ հորը խոսկը, մընում ըտեղ։

Մին քանե վախտ ընցնելանը եաը, թաքավերը տըեսնում ա, վըեր տըղան կյամ չի, միշնա՜կ տըղին ա ղարկում։ Էս հինչ վըեր էտ մըեծ տըղին կըլո՜խն ա յըեկալ, էտ լոխ էլ միշնա՜կ տըղին կըլո՜խն ա կյամ։

Թաքավերը տըեսնում ա, վեր ո՛ւրան մըեծ նան միշնա՜կ տըղեքը կյամ չըն, շատ բըքյըրփանում ա։

Հա՜մին էտ վախտը պուճո՜ւր տըղան կյամ ա, ասում. - Ա՛ հա՜ր, թող յըես քյինիմ իմ ախպորց հետան, տըեսնամ հի՞նչ տըեռին, համ էլ վըեսկե դուշը պըերիմ։

Հա՛րը ռազի չի կըենում, ամմա տըղան ղաչանք ա անըմ: Էտ վախտը թաքավէրը ասըմ ա. - Քյընում ըս, քյինի, մըեծ նան միշնա՛կ ախպերքըտ հի՞նչ տըեռին, վըեր տու հինչ տըեռնաս, ծըռքընէրավտ պըեն եկող տըղերք չը՛ք, ծերը էն ա պարապ-սարապ ման կյաք, մըեշտըեղ օտիք, դրաղ շոռ կյաք:

Պուճուր տըղան ճընապարվըմ ա. Աղվեսը էլհա առաչըն ա տո՛ւս կյամ, էն հինչ վըեր մըեծ նան միշնա՛կ ախպորցը ասալ ար, ըտրան էլ ա ասըմ: Էտ տըղան Աղվեսին խոսկը լսում ա, քյընո՛ւմ :

Շատ ա քյինո՛ւմ, խըրըեզյ ա քյինո՛ւմ, շատ նան խըրըեզյը ինքն ա զո՛ւղո՛ւմ, մին էլ ա տըեսնում՝ Աղվեսը էլհա առաչը տո՛ւս եկավ, ասից: - Դե վըեր տու իմ խոսկըս լսալ ըս, եք հա՛քյվիս նստե, քյըեզ տանիմ վըեսկե դուշին կոշտը:

Էտ տըղան իտի էլ անըմ ա:

Քինո՛ւմ ըն, հըսնըմ մին պալատ, ըշտեղ վըեր էտ վըեսկե դուշըն ար:

Աղվեսը ասըմ ա. - Վըեր նի մըննիս պալատը, դարավուլչիքյը քոն իլա՛ծ ըն ինիլու, վըեսկե դուշը էն ա ինիլու մին ստո՛լի տըրա՛ծ: Էտ Ստո՛լին էրկու դա՛փա՛զա՛ յա ինիլու, մինը վըեսկե, մինը՝ փա՛ղի: Զա՛հտ կանիս, դուշը տինիս փա՛ղի դա՛փա՛զումը, վըեր վըեսկե դա՛փա՛զումը տիրիր, դուշը ծեն ա հանիլու դարավուլչոցը եր կըցնե: Էն վախտը քյըեզ փըռնելու յըն:

Էտ տըղան շիլ ա ընգնում, դուշը տինո՛ւմ վըեսկե դա՛փա՛զումը: Դուշը ծըեն ա հանըմ, դարավուլչոցը եր կըցըընըմ, ըտրանք էտ տըղին փըռնըմ ըն:

Ամմա տըեսնըմ ըն ջա՛հիլ, դա՛շա՛նգյ տըղա յա, էլ սպանըմ չըն, ամմա ասըմ ըն, - Մունք քյըեզ սպանըմ չընք, ամմա ըտրան ա՛վա՛զը տու քյինիլ բեղիս վըեսկե ծին ո՛ւրա՛ն սարքավը պերիս մըեզ տաս: Էն վախտը վըեկսե դուշը մունք քյըեզ կըտանք, կըտանիս:

Թաքավէրին պուճուր տըղան տո՛ւս ա կյամ, ո՛ւրա՛ն ճընապարը ընգնում, քյընո՛ւմ:

Մին էլ ա տըեսնըմ էտ Աղվեսը էլհա առաչը տո՛ւս եկավ, ասից, - Բա յըես քյըեզ խըելքըխրատ չի տվի՛, խե՞ ինձ չըսեցիր վըեչ: Դե հա՛քյվիս նստե, քյըեզ հըսցընիմ վըեսկե ծիյին կոշտը:- Աղվեսն ասըմ ա.- Վըեր կյումը նի մըննիս, դարավուլչիքյը քոն իլա՛ծ ըն ինիլու: Վըեսկե ծին էն ա ինիլու ընդեղ: Ընդրա կոխկեն էն ա ինիլու մին փա՛ղի թա՛մք, մին էլ մին վըեսկե թա՛մք, թա վըեսկե թա՛մքը տինի՛ս, ծին սա՛ս ա հանելու, դարավուլչիքյը յըեր ըն կընալու քյըեզ փըռնին, ամմա թա փա՛ղի թա՛մքը տինիս, վեչ մին պեն չի ինելու:

Տըղան նի յա մըննըմ կյումը, վըեսկե թա̀մքը տըեսնըմ, վըեսկե ծին տըեսնըմ, աշկերը ծիլի-վիլի յա անըմ, թամահը զոռ ա անըմ, էտ տըղան վըեսկե թա̀մքըն ա յոր օնըմ, թա տինի ծիյին մըեշկեն, ամմա ծին սա̀ս ա անըմ, ղարավուլչիքյը եր ըն կըենըմ, էտ տըղին փըռնըմ:

Տըղին սպանըմ չըն, ամմա մին հենց տըեղ ըն ըղըրկըմ, վըեր սպընելան փիս ա:

Ասըմ ըն, -Քըինի մըեզ հետի տափեն կըլխան ա, թա տափեն տական ա օշափին կյեղեցիկ ախճիգյը պեր, էն վախտը վըեսկե ծին ի̀ւրա̀ն վըեսկե սարքավը քյըեզ կըտանք, կըտանիս:

Թաքավերին պուճուր տըղան տի̀ւս ա կյամ, քյինըմ: Քյինըմ ա, քյինըմ, շատա քյինըմ, թա խըրեգյ, շատ նան խըրեգյը ինքն ա գյի̀ւղի̀ւմ, մին էլ ա տըեսնում էլհա Աղվեսը ի̀ւրա̀ն առաչը տի̀ւս յըեկավ, ասից, - Կոզի տու ինձ լըսեցիր վըեչ, ամմա էլհա հաքյվիս նըստե քյըեզ տանիմ օշափին ըխճըկանը կոշտը:

-Քյինըմ ըն, քյինըմ, վերչը հասնըմ ըն էտ ըխճըկանը տանը կոշտը:

Էտ դա̀րըմը էտ ախճիգյը տի̀ւս ա յըեկալ, վըեր կյետըմը լըղանա:

Աղվեսը էտ տըղին ասըմ ա,- Քյինի սուսըփուս էտ ըխճըկանը կոռնան փըռնի, պեր: Հիշքան խուսուցնի, խոսիս վըեչ:

Թաքավերին պուճուր տըղան քյինըմ ա, իտի էլ անըմ: Ախճիգյը ընգնըմ ա էտ տըղին հըետան, կյամ:

Ճընապարին էտ ախճիգյն ասըմ ա, - Ցըետ տըեռ քյինա̀նք իմ հոր, իմ մոր տըեսնանք, ետավ կյամ:

Էտ տըղան սխալըմ ա, յըետ տըեռնըմ, հենց վըեր տոն ըն քինի̀ւմ, էտ ըխճըկանը հա̀ր-մարը էտ տըղին փըռնըմ ըն, ասըմ.- Էն ա մըեր քըվորը տոնը օխտը սարի քըմակե, թա կարիս էտ օխտը սարը հենց ղի̀ւզի̀ւցնիս, վըեր ըստըղան միչն մըեր քըվորը տոնը ըրվա, ախճիգյը քյըեզ կըտանք, թա կարեցիր վըեչ ղի̀ւզի̀ւցընիս, էն վախտը քյըեզ սպանիլու յընք:

Էն մին օրը տըղան ըսկըըմ ա վըեղը քանդիլը: Վեց օր վըեղը քանդըմ ա, զոռավ մին խըրեգյ վըեղ ա ինի̀ւմ քանդածը:

Օխտինջի օրը Աղվեսը կյամ ա տըղին տըեսնըմ էտ ղազաբին մաչին, տըղին անա լոխ հըրցնըմ, գյուղի̀ւմ, էտ տըղին ասըմ. - Տու քյինի դինջ քոն իլ, քյըեզ կործ չօնիս:

Էքսը տըղան եր ա կըենըմ, տըեսնըմ, վըեր օխտը սարը կա վըեչ, քըվորը տոնն էլ ըրվամ ա:

Մարթ ըն ղարկըմ տըղին հետան։ Տըղան կյամ ա, օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ, էտ ախճիգյը տամ էտ տըղին։

Տըղան էտ ախճիգյը յոր ա օնըմ, ճընապար ընգնըմ։ Էլհա պըտահըմ ա հ՞ամին էն Աղվեսին։

Աղվեսն ասըմ ա. - Ա՛յ տըղա, հենց պիտի անինք, վըեր ախճիգյը տանք վըեչ, ծին յոր օնինք, տանք քյըեզ, ղուշը յոր օնինք փախճինք։ Առաչ կտանիս ախճիգյը տաս, ծին յոր օնիս, ետավ կասիս. «Թուղեցեք էտ ըխճըկանը մնանք պարով ասիմ»։ թոդիլու յըն, էն վախտը ըխճըկանը ծըեռք կըտաս, քաշիս տինիս թամքետ, հայդա, փախճիս։ Վախիս վըեչ, ծիտ շ՞ուտ ա փախճելու, հետան հըսնելու չըն։ Ետավ ախճիգյը կթողիս իմ քըշտես, ծիտ քըշիս էն պալատը, ղուշը յոր օնիս, ետ փախճիս։

Էտ տըղան իտի էլ անըմ ա։ Մին խիլլ՞ա ճընապար քյինելանը ետը, Աղվեսը առաչըն ա տ՞ուս կյամ, ասըմ. - Յըես քյըեզ էսքան լըվոթուն ըմ անըմ, տու վէլ ինձ բեղմա լըվոթուն անիս, բեղմա իմ վըեններըս նան վիզըս կըտրիս։

Աղվեսն ասըմ ա. - Վեր օզըմ չըս, էն վախտը, յըես քյըեզ մին քանե խըրատ տամ։ Տըես, ճըր՞ավերի քըշտի նստիս վըեչ, կախաղան պըցր՞ացած մարթին ազադիս վըեչ։

Աղվեսը ասըմ ա, պըռծըընըմ, քյինըմ ՞ուր՞ան կործին։

Էտ տըղան ճընապար ա ընգնըմ, քյինըմ, հասնըմ էն տոնը, ըշտէղ ՞ուր՞ան ախպերքը քյեփի յըն նստած, կարտ ըն խաղ անըմ, ղումարի յըն տամ, տանիլ տամ։ Ըտրանք յա տանիլ տըված փողը բեղմա տան, յա կըլլխըննեն պուք ըն տալու։

Էտ պուճուր ախպերը էտ մըեծ կումարը տամ ա, ախպորցը ազադըմ, ըտրանց էլ յոր օնըմ, ճընապարվըմ։

Մըեծ նան միշն՞ակ ախպերքը թաքուն ՞ուր՞ուր խոսկ ըն տամ, վըեր պուճուր ախպորը սպանին։

Ըտրանք նըստըմ ըն մին ճըր՞ավերի քըշտի, վըեր հաց ոտին։ Ըտըեղ մըեծ նան միշն՞ակ ախպերքը էտ պուճուր ախպորը քըցըմ ըն ճըր՞ավերը, էտ ըխճըկանն էլ ասըմ ըն, վըեր վըեչ մինին ասի վըեչ։

Ըտրանք քյինըմ ըն, հասնըմ պալատը։

Հ՞արը հըրցնըմ ա, թա. - Բա հո՞ր ա ծեր պուճուր ախպերը։ Ըտրանք ասըմ ըն. - Ա՛ հ՞ար, մունք ընդրան տըեսալ չը՛նք։ Էն օրանը տըենը համ ախճիգյը, համ ծին, համ ղուշը մաշվըմ՛ ըն, մաքըռվըմ, հ՞ալ՞աք տըեռնըմ,

տըեռնըմ հունցը մին չոփ։

Շատ վախտ ա անց կըենըմ, թա խըրեգյ, մին օր էլ Աղվեսը կյամ ա էտ ճըրա̀վերեն կոշտը, մաչին եշըմ, տըեսնըմ էտ տըղան էն ա էտ վըերըմը։

Էտ տըղին անա լոխ հըրցնըմ ա, գյո̀ւղո̀ւմ։

Աղվեսը էտ տըղին ճըրա̀վերան հանըմ ա, ասըմ.- Շո̀րերտ կըփոխիս, վըեր քաղաքը նի մըննիս։

Տըղան իտի էլ անըմ ա։

Ետնան իտի օրիշ շո̀րում քյինըմ ա հորը պալատը, հորը կոշտը։ Էն սըհաթին ախճիգյը, ծին, դուշը ուրխանըմ ըն։

Տըղան լոխ հորը նաղլ ա անըմ։ Հա̀րը հրամմայըմ ա մըեծ նան միշնակ տըղին կախ տան։ Իտի էլ անըմ ըն։

Մին օր, մին էլ ըն տըեսնըմ Աղվեսը յըեկավ։ Էտ վախտը- թաքավերին պուճուր տըղան նան էն ախճիգյը ո̀ւրա̀նց բաղըմը ման ին կյամ։

Աղվեսը մուտանըմ ա տըրանց, պարյօր տամ, ասըմ. - Շատ ըմ դա-չանք, միննա̀թ անըմ, իմ վեզս վըեններըս կըտրեցիք։

Թաքավերին պուճուր տըղան օզըմ չի, ամմա էն ախճիգյը ռազի յա կըցընըմ։

Էտ տըղան Աղվեսին վիզ նան վըենները կըտրըմ ա։ Աղվեսը տրաքվըմ ա, ճըղվըմ, մին դաշանգյ տըղա տըեռնըմ, համին էտ ըխճըկանը ախպերն ա ինո̀ւ՛մ։

Ախպերը ըտըեղ օխտը օր, օխտը քըշեր քըվորը հըետի հըրսանիք ա անըմ, ինքը թողըմ, քյինըմ ո̀ւրա̀նց պալատը։

Թաքավերը շատ ա ինո̀ւմ պըռաված, եր ա ընգնըմ, մըեռնըմ։ Կահը մընըմ ա էտ պուճո̀ւր տըղին։ Պուճուր տըղան տըեռնըմ ա թաքավըեր, էտ ախճիգյը՝ թաքուհի։ Էտ տըղան լա̀վ-լա̀վ օրենքնի յա տո̀ւս պըերըմ, ժողովուրթին ազադըմ ա կոռը-բեգյառից, քյա̀սի-քյո̀ւսո̀ւրի օքնըմ ա, ազադոթուն ա տամ, իտի լա̀վ կառավարըմ ա երգյիրը։

Ո̀ւրանք էլ ո̀ւրո̀ւր նըհետ սէրավ ապրըմ ըն միչև ո̀ւրա̀նց գյանքին վերչը։

Էն կյարունքվա երգյինքան, էն պըեց կյա̀պո̀ւտ ռա̀նգյի երգյինքան իրեք խընձո̀ր ա եր ընգնըմ. մինը ասողին, մինը լըսողին, մինն էլ էս հա̀քյա̀թը լո̀ւս աշխարք քըցողի՛ն։

## 10.ԾՈՒԿՆԻՆ ԾԵԾԱՂԸ

Ինըմ ա, չինըմ մին շատ լոՒզոՒն սոր, խելունք տըղա յա ինըմ, ինքըն էլ ծոՒկնը փըռնող:

Մին օր կյետըմը թոռը քըցած ծոՒկուն փըռնելիս մին շատ ղաշանգյ վըեսկե ծոՒկըն ա փըռնըմ:

Ինքը ինքը ասըմ ա.- «Էս հի՛նչ լավ պեն տըեռավ: էս ծոՒկնան շատ օքութ կկյա, տանիմ մըեր թաքուհուն բաղարկա տամ: Իտի էլ անըմ ա:

Թաքուհին վեր տըեսնըմ ա էտ վըեսկե ծոՒկնը, էնքան ղաշանգյ, էնքան սոՒրոՒն, մին ալամաթ պըե՛ն, վեր մընանը կա վէչ, տըեսալ չի ոՒրան գյանքըմը՛, յոր ա օնըմ, վեր միշտ եշի, քյեփը կյա, վեր օրիշնին էլ տըեսնան նախանձվին , վըեր թաքուհին իտի լավ ծոՒկնը օնի:

Էտ թաքուհին էտ տըղին ասըմ ա. - էս ծոՒկնը յըես յոր կօնիմ, քյըեզ էլ վըեսկե կըտամ, մինակ ինձ ասի, սա էքյ ա, թա վըերգ: Թա վըերգ ա, պեթկը չի:

Էտ ծոՒկնը լըսըմ ա թա չէ, մին լավ, քա՛հ-քա՛հ ծըծաղըմ ա թաքուհուն խուսկերքին յրան:

Թաքուհին մաթ ա մընըմ, թա ծոՒկնը կծըծաղի՛, մին էլ ինքյը ոՒրան մըեչին, նըղանըմ ա, ասըմ, - էս ծոՒկնը հի՞նչ ա, վեր հալա յրաս էլ ծըծաղըմ ա:

Թաքուհին ըշըղվըմ ա էտ տըղին յրան, պալատան տոՒս քըցըմ, քյինըմ թաքավերին էլ կյենգյատ անըմ:

Թաքավերը կանչըմ ա էտ տըղին, հարցըփորց անըմ, ասըմ. - Էն խե՞յա վըեսկե ծոՒկնը ոՒրան թաքուհուն յրան ծըծաղալ, բալքյաս տընա՞զ ա տըվալ: Դե, շոՒտ ըրա ասի, թա չէ քյըեզ կախ տալ կըտամ:

Էտ տըղան ասըմ ա. - Հինչ օզըմ ըս ըրա, ամմա ասիլ չըմ:

Թաքավերը հրամմայըմ ա կախաղանը պըղըաստին:

Էտ տըղան թաքավերին ասըմ ա. - Թաքավերը ապրած կենա վեր ասիմ փիշմանելու յըս, վեր ասիմ վէչ, ինձ կախաղան պըըցըընին, էլհա յըս փիշմանելու:

Թաքավերը տըեսնըմ ա, վեր տա մին հետամընաց խոխա չի, խելունք ա, համ էլ մին պեն ա գյոՒղոՒմ, հրամմայըմ ա զընդանը քըցին:

Էքսը էլհա կանչըմ ա էտ տըղին, ասըմ. - Դե մըհեգյ ասի տըեսնամ խե՞ կփիշմանիմ, վեր քյըեզ կախ տալ տամ, խե՞ իտի ըսեցեր:

Էտ տըղան մին նաղլ ա ասըմ, էտ հարցին բաղասխանին տըեղը։

Ասըմ ա, «Ինըմ ա, չինըմ մին հարուստ մարթ։ Էտ հարուստ մարթը վըեսկավ լիքյը խուրջինը տինըմ ա ծիյին թամքին, ինքըն էլ յրան նըստըմ, հըղե ինըմ մին հըեռե տեղ։ Շոնըն էլ ընդրա հըետան ա քյընըմ, թըքըն-թաքուն, վեր տարը յըետ չի տա։ Ճընապարին էտ հարուստին վըեսկավ լիքյը խուրջինը եր ա ընգնըմ ծիյան, ինքը գյո՛ւղո՛ւմ չի, ծին քըշըմ ա, քյինըմ։ Շոնը էտ լոխ տըեսնըմ ա, հա՜չելա՜վ վազ ա տամ, ծիյին առաչը ընգնըմ, օզըմա կըղնըցնի, եստ տա ընդրան։ Շատ ա հաչըմ, կըղկոնձըմ, օռնըմ, ամմա տարը հըսկանըմ չի ընդրա մեթկը, հա՜լա՜ շանը յրան ըջըղվըմ ա, գյիդըմ ա, թա շոնը կըտաղալ ա տըեռած շոն ա, շաշկավը թըխըմ ա, ծանդըր յարալամիշ անըմ, թողըմ, քյինըմ։

Շատ ա քյինըմ, թա խըրեգյ ա քյինըմ, մըթկին դոնը ընգած քյինըմ ա, բիրդա՜ն խուրջինը մըետըն ա քըցըմ, ծիյին գյավակին եշըմ, տըեսնըմ խուրջինը կա վեչ։ Օշը կըլխան ընգնըմ ա, աշկերը չըռըմ, սըերտը փըռնըմ, գյո՛ւղո՛ւմ չի, թա հինչ անի։ Ետ ա տըեռնըմ, մին խիլլա՜ քյինո՛ւմ, տըեսնըմ խուրջինը ճընապարին մեչ տեղը եր ընգած, շոնն էլ տունչը տիրած յրան, սատկած։ Թազա յա հըսկանըմ, թա խե՞ յա շոնը հաչալ։ Էտ մարթը ո՛ւրա՜ն արածին յրան շատ ա փիշմա՜նըմ։ Լաց ա ինըմ, դե էլ ըշտե՞ղ, ըրածը ետ չի կյա՞լ։ Տու էլ, թաքավեր, շատ կըփիշմա՜ննիս քու ըրածիտ յրան։

Թաքավերը էլիա պեն չի կըլո՛խ ընգնըմ, ինքը ո՛ւրա՜ն ասըմ ա. - Էս սըամիտ, գյուղող տըղին անա շատ պեն տուս կըկյա, հրամմայըմ ա էլիա տանին զըընդանը քըցին։

Անց ա կենըմ մին քանի օր, թաքավերը հիշքան մըտածըմ ա, վեչ մին հընար չի քըթնըմ էտ տըղին սեկրետը գյիդա, էլիա հրամմայըմ ա ո՛ւրա՜ն կոշտը պերին էն տըղին։

Թա՜զա՜դա՜ն հարցըփորց ա անըմ, էտ տըղան վեչ մին պեն չի ասըմ, կոզի թաքավերը ընդրան համ պեցո՛ւր տեղ, համ պալատըմը օզըմ ա կործ տա, փող, վըեսկե տա, էլիա էտ տըղան պեն չի ասըմ, ճարը կըտրած լհա՜ մին օրիշ նաղլ ա ասըմ։

«Ինըմ ա, չինըմ մին թաքավեր։ Էտ թաքավերը սիրըմ ար վըերսի քյինիլը, ո՛ւրա՜ն դուզղուննին, ո՛ւրա՜ն վըերսի շըները, ո՛ւրա՜ն թեգյունքը պահողնին եր կալած։ Մի հետ տա վըերսի յա քյինըմ, շատ տըեսուտըեն ա ման կյամ, վըերսի շոռ կյամ, օրըն էլ արև ա ինըմ, տաք-կըրակ, տա

շատ ա ծըրավըմ, ո̀ւրա̀ն թեգյունքը պահողներան մինին ասըմ ա, վեր մին ստաքան ճո̀ւր ճարին, ըշտըղան օզըմ ա ինի: Էտ թեգյունքը պահողը ման ա կյամ, ման, ճո̀ւր չի ճարըմ:

Քյինըմ ա մին սարի տո̀շըմ տըեսնըմ մին քարա ճո̀ւր ա կաթըմ: Ստաքանը տեմ ա անըմ, մին խիլլա̀ կաղնըմ, միչև էտ ստաքանին կեսը էտ ճըրա̀վը լըցնըմ ա: Տա օզըմ ա, թա տանի տա թաքավերին, թաքավերըն էլ օզըմ ա, թա խըմի, բիրդա̀ն ղուզղունը թևավը թըխըմ ա, էտ ճո̀ւրը եր ածըմ: Թաքավերը կըտաղըմ ա, էտ ղուզղունին կըլո̀խը պուք տամ:

Թաքավերը մին օրիշ պալատական տըղի յա ղըրկըմ ճիրի: Էտ տըղան քյինըմ ա ճիրի ման կյամ, տըեսնըմ էտ սարին կըլխան վեչ թա ճո̀ւր ա կըթկաթըմ, մին մեծ օցի լըղի յա կըթկաթըմ տըեղին ռա̀նգյի: Էտ տըղան տըեսածը կյամ ա թաքավերին ասըմ: Թաքավերը էտ տըղին անա շունրակալ ա ինըմ, էն առաչին տըղին պատժըմ, ինքըն էլ շատ ա փիշմա̀նըմ, վեր սպանալ ա ո̀ւրա̀ն գյանքը ազադող ղուզղունին: Շատ ա փիշմա̀նըմ, լա̀ց ա ինըմ»:

Թաքավերը վեր էտ նաղլը լըսըմ ա, վերչը ո̀ւրա̀ն մըթկըմը տինըմ ա էտ տըղին անա հեռու կըենա: Լա̀վ մըտածելի հետի էտ թաքավերը իրամմայըմ ա էլիա էտ տըղին մին քանի օր զընդանըմը պահին: Մին քանի օրանը ետը էլիա կանչըմ ա էն տըղին ո̀ւրա̀ն կոշտը, էլիա օզըմ ա սեկրետը տո̀ւս քաշի, ամմա ա̀մա̀լ չի կյամ: Օզըմ ա էլիա կախաղան պըցըրցնի:

Ամմա էտ տըղան ասըմ ա. - Թաքավերն ապրած կըենա, տու փիշմա̀նիլու յըս, հունցու փիշմա̀նալ ա էն թաքավերին տըղան, վեր ղաչըմը խոխան թողալ ա ըրօրոցըմը, պառավ նանին քըշտին, ինքը կընգանը նըհետ կառնավալ քյինա̀ցալ: Մին մեծ օխծ նի յա մըտալ ակուշկավը էտ խոխին թա կո̀լ տա, էտ թաքավերին տըղին բո̀ւլդոկ շոնը պըտըռ-պատառ ա ըրալ օխծին, ո̀ւրո̀ւրոցին քըշտին եր ածալ: Էն պառավ նանին էլ նըստած տըեղը քոն իլա̀ծ ա իլա̀լ:

Ըտրանք վեր կառնավալան կյամ ըն, տըեսնըմ ըն ըրօրոցը ա̀ռնոտ, գյիղըմ ըն, թա շոնը խոխին կերալ ա: Թաքավերին տըղան թափանչան հանըմ ա, շոնը ըսպանըմ ղա̀ստի: Ամմա մին խըրեգյ ետավ տըեսնըմ ըն , վեր խոխան կոզի ա̀ռնոտ, ամմա էն ա սաղ-սալամաթ տըեղը մըշմըշալի քոն իլա̀ծ, օխծըն էլ պըտըռ-պատառ ըրած: Ըտըեղ էտ թաքավերին տըղան էնքան փիշմա̀նըմ ա, վեր էլ գյիդալ չը՛մ, լա̀ց ա ինը՛մ, ղե էլ ըշտե՛ղ:

Էտ լոխ վեր թաքավերը լըսըմ ա, ասըմ ա.-Ա՛յ տըղա, յըես քըզեզ սպա̀նիլ չըմ տալ, մինակ տու էտ սեկրետը ասի:

Էտ տըղան ասըմ ա. Թաքավերը ապրած կըենա, դե վեր էտքան ասըմ ըս, քու թաքավերական իրավունքնիտ մին սըհաթավ ինձ տո, յըես լոխ ասիմ քյըզեզ:

Թաքավերը շատ ա մըտածըմ, ո̀ւրա̀ն մըթկըմը ասըմ ա.- Հինչ պիտի անի մին սըհաթըմը մին տըղա, մին սըհաթավ թաքավերոթունըս տամ ո̀ւրա̀ն:

Իտի էլ անըմ ա:

Էտ տըղան իրամմայըմ ա թաքուհուն պերին կըղնըցնին, ո̀ւրա̀ն երեսուն կընեգյ ղուլլուղչոցը նըհետ: Լոխ կյամ ըն կաղնըմ. ըտրանց դիմացը կաղնըմ ա թաքավերը: Էտ տըղան իրամմայըմ ա լոխճին, վեր շո̀րերնին հանին: Թաքավերը հանըմ ա շո̀րերը, վեր թաքուհին տըեսնըմ ա ընդրա կյեշ ջանը, ծըծաղըմ ա:

Էտ տըղան հըրցընըմ ա, թա - Խե՞ յըս ծըծաղըմ:

Թաքուհին ասըմ ա, - Տըկլոր ա, ծըծաղըմ ըմ:

Էտ տըղան ասըմ ա, - Նա տըկլոր չի, քու աշկիտ ա իտի ըրվըմ, իմ վեսկե ծո̀ւկնին աշկին էլ տու վըս տկլոր ըրվացալ, էն էլ ծըծաղալ ա:

Թաքուհին հիշքան օզըմ ար ասի, հըսկըցնի, վեր ինքյը տըկլոր չի իլալ, ամալ չի կյամ:

Էտ տըղան իրամմայըմ ա, վեր թաքուհին էլ շո̀րերը հանի: Դե թաքավերը մինչև մին սըհաթը ըջըղվելի իրավունք չօնի: Թաքուհին շորերը հանըմ ա, լոխ տըեսնըմ ըն, վեր կընեգյ ա:

Հերթը հասնըմ ա էն երեսուն կընեգյ ղարավաշներին: Ըտահանց էլ ա իրամմայըմ, վեր շո̀րերնին հանին: Ըտահանք օզըմ չըն, ամմա էն տըղան ասըմ ա. - Վեր շո̀րերնիտ հանիք վեչ, ծըեզ էս սհաթիս կախ տալ կըտամ:

Ըտրանք շո̀րերնին հանըմ ըն: Լոխ տըեսնըմ ըն, վեր ըտահանք լոխ տըղերք ըն:

Էտ տըղան ասըմ ա. - Թաքավերը ապրած կըենա, մըհեգյ եշի տըես, վեր թաքուհուն ղուլլուղչոցը վեչ մինը կընեգյ չի, տըղամարթա կընգա շո̀րերըմ: Բա վեր իտի յա, հո՞ր ա հըրցընըմ. «ծո̀ւկնը էքյ ա՞, թա վըերց, թա վերց ա, օզըմ չըմ»:

Ըտրա հետի էլ ծո̀ւկնը ծըծաղալ ա:

Էտ տըղան ասըմ ա պըրծըընըմ, լոխճին աշկան կորչըմ:

## 11.ԾԱՂԿԱԾ ԲԱԽՉԱՆ

Ինըմ ա, չինըմ մին թաքավէր։ Էս թաքավէրին ուրան պալատին առաչին մին մըեծ, բարը-նուբարավ լիգյը, ծառէրավ, ծաղիկնէրավ լիգյը բաղ ա ինըմ։ Էտ բաղը էնքան լա՛վ, էնքան կյեղեցիկ ա ինըմ, վէր անց կէնողնին ծըեռքըէրնին ճըկատին տըրա՛ծ, վըէր արևը աշկըէրնին ծըկծըկոտի վըէչ, եշըմ ին, եշըմ էտ բաղին, էլիա քըշտանըմ չին։

Վըէր կյարունքը յասամաննին պըենվըմ չա՛ր, վըէտը աշխարքըս յոր ար օնըմ։ Էն սիպտա՛կ նան մա՛նիշա՛կի ռա՛նգյի յասամաննի՛ն... Բա վարթէ՛րը, ռա՛նգյ-ռա՛նգյ կյեղեցիկ, ասիս լիա՛ քաշովի յա՛, վըէտը, էտ թա՛զա՛ պեցված վարթէրին վըէտը, աշխարքըս օնըմ ար։

Թաքավէրը էնքան սկուպոյ ար, վէր ծըեռքին թըխիս կորէկ չար էր ընգնիլ, ծըեռքը՝ կարճ, լո՛ւզո՛ւՆ էրգյան, հէնց ար լիա՛ տըժոխկի տըռնա-պահ ինի՛, հէնց տըղտո՛ղըմ ար։ Էտքան բարէրան էտ դաղվածը վըէչ ինքն ար օտըմ, վէչ էլ թողըմ ար մին օրիշը օտի։

Մին հէտ էլ մին ախկաղ էկավ, մին բար օզից, ամմա թաքավէրը ասից. - Տու վիր պակա՛ս, վըէր կյաս իմ բախչաս, բար օզիս օտիս։

Էտ ախկաղը անէսկ տըրվավ, ասից. - Թող քու բաղըտ չուրանա, մին կանանչ ծառի հասրաթ մընաս, աշկըտ մընա մին բարի յրա։

Էտ անէսկանը յըէտը թաքավէրին բաղը յավաշ-յավաշ տըղնըմ ա, չուրանըմ։

Թաքավէրը կըզնըրվըմ ա, օզըմ ա, թա պըլանա, հրամմայըմ ա էտ ախկաղին փըռնին պըէրին ո՛ւրա՛ն կոշտը, վըէր կլո՛խը կըտրին, ամմա ծըռոտէնքը հիշքան ման ըն կյամ, ճարըմ չըն։ Քոռըփըէշմա՛ն էտ ըն տըէռնըմ, կյամ պալատը։

Թաքավէրը շատ ա մէթկ անըմ, քննքյ անըմ ո՛ւրա՛ն բաղին հէտի։ Նա ո՛ւրա՛ն կոշտն ա կանչըմ մէծամէծնէրին, գիդնականնէրին, վըէր մին ճար, մին հընար անին, վըէր բաղը-բախչան կընանչի։

Ըտրանք խորուրթ արին, խէլք խէլքի տըվին, թա. - Թաքավէրը ապրած կէնա, վըէր օզըմ ըս բաղը-բախչատ կընանչի, բիդի մին ժամ շինիս, վըէր ըտրա նմանը սաղ աշխարքըմըս ինի վըէչ։ Ժամը շինէլանը էտը նի մըննիս մէչը, աղոթկ անիս։

Թաքավէրը լա՛վ-լա՛վ ուստոց կանչիլ տըվավ, մին շատ դա՛շա՛նգյ ժամ շինիլ տըվավ, նի մըտավ ժամը վըէր աղոթկ անէ, աղոթկին կըէսըմը մին

ղուրուլթու աշկին ըրվաց, ասից. -Շինիլ տրված ժամըտ շատ դա̀շա̀նգյ ա ո̀ւրա̀ն շենքավ-շընորքավը, ամմա մին պըեն պըկասըմ ա:

Թաքավերը օզըմ ա ըտրանա մին խորուրթ հըրցընի, մըեթկը գյիդա̀, ամմա ղուրուլթուն աշկին առաչան կորչըմ ա: Թաքավերը շատ մըտածելանը ետը հրամման ա տամ, ժամը քանդին, թա̀զա̀զա̀ն մին ըտրանա լա̀վը շինին: Ըսկըըմ ըն ժամը շինիլը էնքան դա̀շա̀նգյ, պըեցո̀ւր, էնքան լա̀վ, քարերը լիա̀ կուրուժվավեր ինի՛, ասիս մին քա̀շա̀ծ պատկյեր ինի՛ տական միչև կըլո̀խ, վըսկըրվա̀րա̀ղ, պըծըպածի ընելիս, վըեսկե խաչըն էլ յրա՛ն:

Լիա̀ վըեր շինըմ ըն, պըրծընըմ, թաքավերը նի յա մըննըմ, թա աղոթկ անի, վըեր բաղը-բախչան կընանչի, էլիա աղոթկին կեսըմը էտ ղուրուլ-թուն ըրվըմ ա, ասըմ. - Թաքավերը ապրած կըենա, լոխ շատ լա̀վ ա շինած, քարերը թընգյանոց, լա̀վ տաշած, կըրուժվավեր, վըեսկե խաչըն էլ յրան, ամմա էլիա մին պըեն ա պըկասըմ:

Էտ մունուտին թաքավերը ըտրա արմունգան փըռնըմ ա, ասըմ. - Ա՛յ պարի ծերունի, ասի տըեսնամ հի՞նչն ա պըկասըմ, հի՞նչ ասիս, կան իմ, հինչ օզիս, կըտա՛մ, թա̀քյ լիա̀ բաղը-բախչաս կընան չի:

Էտ ծեր մարթը հրաժարվից ամմեն հինչան, ասից. - Վըեր օզըմ ըս բաղը-բախչըատ կընանչի, բիդի վըսկըշափաղ, էն լա̀վ յըերքող դուշը, զա̀ռ բո̀ւլբո̀ւլը պըերիս, տինիս բաղը-բախչըմըտ, վըեր յըերքի, բաղըտ կընանչելու յա: Ամմա ըտրան պերելի հետի շատ ըս չըրչարվելու: Ըտրան պերողը պիտի անց կըենա չոր անապատներավ, տըժեր տըեղերավ, հըրեշներին մաչավը, մեյիդներին կըլխավը, սարավ, քո̀լավ, կյետավ, ծո̀րավ: Ամմա լոխճան տըժերը զա̀ռ բո̀ւլբո̀ւլին յըերք ասել տալըն ա, վըեր յըերք ասից, դա̀ստի բաղըտ կընանչելու յա, էտ ղուրուլթուն ասըմ ա, էլիա կորչըմ:

Թաքավերը մընըմ ա մինա̀կ մըտածմունքի մըեչի: Նա էնքան շատ ար մըտածըմ, քընեքյ անըմ, վըեր հալվալ-մաշվալ ար, չոր չոփ տըեռալ, հըլավավը մին տեռա՛լ:

Էտ թաքավերը իրեք տըղա օնար: Մըեծը նան միշնա̀կը անըմնին խելունք ին եր ըրալ, ամմա պուճուրին կյիժ ին ասըմ, էտ պուճուրը սաղ օրերը խաղ ար անըմ էն գյդոտանցը, խոխորցը նըհետ, սաղ օրը տո̀ւսո̀ւմն ար ինըմ, թակըմ, թակվըմ, թա̀վիլ տամ, պըըը- կընդրիկի տա՛մ, կըռըեվ

անըմ, հախտըմ, հախտվըմ, կյեփերը ճըղոտըմ: Իտի էլ մըծանըմ ա: Հա̈րը կանչըմ ա իրեք տըղին էլ ո̈ւրա̈ն կոշտը, լոխ ասըմ, ո̈ւրա̈ն դա̈րդերը նաղլ անըմ, բաղին չուրանալին հրետի:

Մըեծ տըղան ասըմ ա. - Ա՛ հա̈ր, մըեր չուրացած բաղը կընընչացնելի հըետի կոզի հինչ ինի կոզի հըետե տըեղ ինի, ճընապեքյն էլ փի՛ս, յըես կըքյինիմ զա̈ռ բո̈ւլբո̈ւլը պըերիմ:

Էն էրկու ախպերքն էլ ըսեցեն. - Ա՛ հա̈ր, մունք հինչա՛վ ընք պակաս, մունք էլ կքյինինք:

Իտի թաքավերին իրեք տըղերքը ո̈ւրա̈նց զենքը-զըրահը, ճընապարին պաշարը յոր ըն օնըմ, իրեքան էլ ծիյըն նըստըմ, քյընըմ, քյընըմ ըն, քյընըմ, շատ ըն քյընըմ, խըեզյ ըն քյընըմ, շատ նան խըեզյը աստուծ ա զյուդըմ, անց ըն կենըմ հա̈լա̈ մարթի վըեննը չի կոխած տըեղերավ, հա̈լա̈ մարթի ծըեն լըսած վըեչ սարերավ, վըերչը հըսնըմ ըն մին տըեղ, ըշտըրղան իրեք ճընապար ա տո̈ւս կյամ: Ըտըեղ նստած ա ինո̈ւմ մին պառավ մարթ, էտ պառավ մարթին անա հըրցըփորց ըն անըմ, թա էտ ճընապարնին ըշտըեղ ա տանըմ:

Էտ պառավ մարթը ասըմ ա.- Ա՛յ բալեք, առաչին նան էրկունջի ճընապարնին պարի յա, ամմա իրեքինջինը շատ շառ ա, ըտըղավ անց կենողը ետ չի տըեռնըմ:

Իրեք ախպերքը տըես մըտածեցին, տըեն մըտածեցին, վըեր մըեծ նան միջնա̈կ ախպերքը քյինին էն էրկու պարի ճընապարներավը, ամմա պուճուր ախպերը քյինի էն շառ ճընապարավը:

Իտի էլ անըմ ըն: Մըեծ նան միջնա̈կ ախպերքը ուրխանըմ ըն, վըեր իտի իլա̈վ, համ ո̈ւրա̈նց չի մին պըեն ինիլ, համ էլ էտ կյիժ ախպորըն անա կազադվին:

Իրեքան էլ ո̈ւրո̈ւր խոսկ ըն տամ, վըեր հու. շո̈ւտ ետ տըեռնա, ըտըեղ ըսպասի էն մնացած ախպորցը: Ըտըեղ ո̈ւրո̈ւր պարի ճընապարըն ասըմ, ամմեն մինը ո̈ւրա̈ն ճընապարըն ա ընզնըմ:

Մըեծ ախպերը քյինից, քյինից, վերչը հըսավ մին քաղաք: Ինքը ո̈ւրա̈ն մըեթկ ըրավ, մըեթկ, վըերչը ո̈ւրա̈ն մըթկըմը ասից, «էլ հո՞ր ըմ քյընըմ, կլո̈խս բաղի տամ, լա̈վըն էն ա ըստըեղ մին կործի նի մըննիմ, ըստըեղ էլ կըենամ»:

Միշնա̈կ ախպերը քյինից, քյինից, շատ չըրչարվից, շատ տըժերոթուննի

քաշից, վըերչը մին քաղաքըմ մին մարթի տան ծառա նի մըտավ, ո̀ւրա̀ն պըերանը պըհելի հրետի:

Պուճուր ախպերը քյինից, քյինից, անց կացավ յաքանա չո̀ւլեր, քո̀ւլեր, անց կացավ անճանանչ տըեղեր, էրգյան ճընապարնի, անց կացավ կյոԼլու կազանավ լիքը ծըմակնի, ծո̀րեր, քո̀ւլեր, վըերչը հըսավ մին հենց վըեղի, վըեր ռա̀նգյը կյա̀րմո̀ւր ար: Էտ կյա̀րմո̀ւր վըեղավը քյինից, քյինից հըսավ մին մըեծ ամարաթի, վըեր վըեչ տո̀ռնը օներ, վըեչ էլ ակուշկա:

Թաքավերին կուճի տըղան տես էշից, տեն էշից, թա տըեսնա, հու՞ վա ըստըեղ կըենըմ, պըեն չի տըեսավ: Բիրդա̀ն աշկին մին կյեղեցիկ ախճիգյ ըրվաց, ըրեքնական է՛լ իվիլ վառ:

Էտ կյեղեցիկ ախճիգյը ըրմացած էշից էտ տըղին, ասից.- Ա՛յ խըեղճըկրակ, տու հու՞ վըս, վըեր ըստըեղ ըս յըեկալ, մեխկ ըս, շո̀ւտ ըրա փախի, թա չէ, էսա օշափը կյալու յա քյըեզ կո̀ւլ տա:

Էտ տըղան ասից. - Հա̀լա̀ նըհետա խոսալ չըմ, հա̀լա̀ կոշտա ղոնաղ չըմ ընգա̀լ, տո̀ւ ինձ վըխցնըմ ըս, դէ նաղլ ըրա տըեսնամ, բա տու հու՞ վըս, էս անտո̀ռնը, անակուշկա բըերթըմը հի՞նչ ըս անըմ:

Ախճիգյը նաղլ ըրավ, ասից, վըեր ինքը թաքավերի ախճիգյ ա, կյերի յա ընգա̀լ կյա̀րմո̀ւր օշափին ծըեռքը, վըեր կյա̀րմո̀ւր օշափը ո̀ւրա̀նց երգյիրը քանդալ ա, վըղըմոխըեր շինա̀լ, լոխ մարթկանցը կըերալ, էտ մաթկանց ա̀րո̀ւնան էլ էտ վըեղը կյըրմըրա̀լ ա:

Թաքավերին տըղան ասից. - Ցըես վըեչ մին օշափա, պըենա վախըմ չըմ, յըես քյըեզ պիտի ազադիմ էս օշափին ծըեռքան, թողիմ վըեչ մինա̀կ, անդար: Ամմա խընթրըմ ըմ ասի, թա ըշտըղավ ա կյալու  էտ օշափը:

Մին էլ տըեսին աշխարքը դըղըրդաց, վըեղը տըեղան տո̀ւրո̀ւր եկավ, էն մըեծ սարին կըլխան օշափը ըրվաց, փընչալավ-մըռընչփլավ վըերսը առաչըն ըրած եկավ, բո̀ւրդա̀ն էտ տըղին տըեսավ, մին ինդի ծըներ հանից, վըեր դուշ նան կազաննին սա̀սա̀ն փախին, ո̀ւրա̀նց կըլո̀խը ազադեցին:

Էտ օշափը իտի կըտաղած ասից.- Էտ հո՞ւ վըս, հու՞նց ըս ընգալ ըստըեղ, անըմըտ հի՞նչ ա, ազկըտ հի՞նչ ա, դայիտ հու՞ վա, ղորփերըտ հու՞ վա, հու՞ր տըղա յըս, վըեր ինձանա վախ ալ չըս, եկալ ըս հըսալ ըստըեղ:

Թաքավըերին պուճուր տըղան ասից. - Ցըես քյըեզ համար ըմ եկալ,

վըեր քյըեզ փըչըցընիմ, քյըեզ ըսպանիմ։

Էտ խոսկերքը լըսելավ օշափը կըտաղից, ա՜ր՜ո՜ւնը կըլխավը տըվավ, աշկերը կյըրմըրից, պըրա՜նա՜ն կըրակ թափելավ յրա պըրծավ էտ տըղին, թա կ՜ո՜լ տա։ Էլիա աշխարքը դըղըրդաց, թոզը երգյինքյը հըսավ, էտ տըղան, էտ թոզըմը կորավ։

Օշափը գյիդա՜ց, թա տըղան կորավ, թոզ տըեռավ։ Մին քանի մունու-տանը ետը թոզը վըեր թըմըզվից, օշափը տըեսավ, վըեր էտ տըղան սաղ-սալամաթ էն ա կաղնած։

Օշափը լափ կըտաղից, էրկունջի դ՜ո՜նըմը հիշքան օժ օնար, յրա պըրծավ տըղին։ Աշխարքըս տ՜ո՜ւր՜ո՜ւր եկավ, թոզը իրիքյնակին իրեսը ծասկից, օշափը էս դյ՜ո՜նըմըս էլ մըղափուն եկավ էն տըղին, վըեր թոզ տըեռավ, վըեր ՜ո՜ւրա՜ն պաժին չի մնաց, վըեր օտի։ Էլիա մին քանի մունուտանը ետը վըեր թոզը քաշվից, տըղան սաղ-սալամաթ ընդեղ կաղնած ծըծաղըմ ար։

Օշափը իրեքինջի դ՜ո՜նըմը ինդի՛ կըզնվից, ինդի՛ կըտաղից, փըրփըրից, վըեր էլ ասվիլ չի, յրա պըրծավ տըղին։ Աշխարքըս թընդաց, ասիս լի՜ա՜ թոփեր ինի տըրըքտրաքըմ, ըրոտըմ, թոզը արևին իրեսը ծասկից։ Օշափը գյիդա՜ց, թա էս դոնըմ տըղան թոզ տըեռավ, վըեր մըրթավըետ էլ չի մընաց։ Մուտացավ վըեր վըետ քաշի, տըեսավ տըղան տեմացը կաղնած։ Օշափը մընաց մաթ մընացած։

Թաքավերին պուճուր տըղան ետ տըեռավ, ասից. - Դե մըհեկ նոբաթը ի՛մն ա, մըհեգյ յըես պիտի քյըեզ ճըռթըփըշուր անիմ, մըեծ պատառըտ անգուճըտ թողիմ, պ՜ո՜ւռթ տամ, պեմբա՜կ կյիզիմ։

Ասիլը նան սորավը թըխիլը մին իլա՜վ։ Օշափը եր ընզավ, սատկից։ Էտ տըղան ըտրա անգուճնին կըտորից, եր կալավ, տարավ էն ըխճըկանը նշանց տա, վըեր էտ ախճիգյը գյիդա՜, իըվատա վըեր օշափը սատկած ա։

Էտ ախճիգյը վըեր տըեսավ, ուրխացավ, ընզավ տըղին խըտետը, պըչպըչորից, ասից. - Դե մըհեգյ եք փըսակվինք, վըեր տու ինձ ազադեցիր։

Էտ տըղան ռազի չի կացավ։ Ասից. - Յըես հա՜լա՜ մին նըպատակ օնիմ, մինչև էտ նըպատակը կադարիմ վըեչ, փըսակվելու չըմ, վըեչ էլ տոն ըմ քյընա՜լու։ Յըես հա՜լա՜ բիդի քյինիմ զա՜ռ բ՜ո՜ւլբ՜ո՜ւլը պըերիմ, վըեր մըեր բաղը, բախչան կընանչի։

Էտ ըխճըկանը աշկը վախից, վըեր էտ տըղան ինդի փիս ճընապար-

ներավ պիտի քյընի, վըեր քյընացողը ետ չի կյամ:

Տըղան էտ ըխճըկանը սըերտ տըվավ, վըեր վախի վըեչ, արխային ըրավ, ասից, - Տու ըստըեղ կաց, մինչև յըես կըկյամ, քյըեզ յոր օնիմ, քյինիմ:

Տըղան էլհա ճընապար ընգա̀վ, քյինից:

Քյինից, քյինից, ընգավ փիս-փիս տըեղեր, հըսավ մին ռա̀նգյը սըեվ վըեղի: Քյինից տըեսավ մին պըեցո̀ւր ամարաթ, ակուշկեքյը, տըռները փակ:

Էտ տըղան ամարաթին դըրբըզան պըեց ըրավ, նի մըտավ, տըեսավ մին շատ կյեղեցիկ ախճիգյ ըրվաց, հունցը մին պըլլո̀րած լո̀ւսնընգյա:

Էտ ախճիգյը վըեր տըղին տըեսավ, շատ տըխրվից, ասից, - Ա՛յ տըղա, տու՞ հու վըս, ըշտըեղա յըս եկալ, էս ա սըեվ օշափը կյալու յա, շո̀ւտ ըրա փախի, թա չէ, քյըեզ կո̀լ ա տալու: Կոզի կյա̀րմո̀ւր օշափին ղազաբան անց ըս կացալ, ամմա սըեվ օշափը ընդրա նըման չի, մին օզգյա բաբաթ ա, հըեռաց, քյինի… Տու կարիլ չըս ինձ շոնա, կյուլա, օշափա ազադիս…

Էս վըեր ըստի յա ասըմ, թաքավերին պուճուր տըղին քյեփին նի յա կյամ, ասըմ ա:- Ա՛յ նախշուն ախճիգյ, հա̀լա̀ ինձ ղոնաղ չըս ըրա՛լ, հա̀լա̀ մին քախծըր խոսկ չըս ասա՛լ, ինձ ծըեր օշափավը վըխցընըմ ը՞ս: Դե հո՞ւնց անիմ, ջըհա̀նա̀մը թա̀ սըեվ օշափը կկյա, ինձ օտի, գյոռը, իստի-բուջաղը, մին օր ծընվալ ընք, մին օր էլ կմըեռնինք: Մինա̀կ նաղլ ըրա, թա տու հու վըս, կըլո̀խըտ հինչ ա եկալ, օշափը ըշտըղավ ա կյալու:

Ախճիգլը լա̀ց ինիլավ նաղլ ըրավ, վըեր ինքյը թաքավերի ախճիգյ ա, օշափը եկալ ա ո̀ւրա̀նց երգյիրը քընդըքար ըրալ, Ակուռի շինալ[1], ժողովուրթին կըտորալ, ո̀ւրա̀ն էլ պըերալ ըտըեղ կյերի:

Էտ ախճիգյը թաքավերին տըղին մըեխկըն ա կյամ, ասըմ ա. - Ա լո̀ւսնընգյա ախճիգյ, լաց մի ինիլ, յըես քյըեզ կազադիմ, մինա̀կ մին խըրըեկ հաց տո օտիմ, շատ ըմ սոված:

Էտ տըղան, էտ ըխճըկանը մեխկըն ա կյամ, տանըմ ա ո̀ւրա̀ն կոշտը, ուտըցընըմ, նըհետը զո̀ւրո̀ւց անըմ: Մին էլ ա տըեսնըմ ամարաթը տըեղան տո̀ւրո̀ւր եկավ:

Էտ տըղան զարմացած հըրցըրավ. - էս հի՞նչ պըեն ա, էս խե՞ յա

[1] *Հիշատակություն Արարատի հրաբխային ժայթքումից տուժած Ակոռի գյուղի մասին (Ծ. Բ.):*

ամարաթը տըեղան տո̀ւրո̀ւր կյամ...

Էտ ախճիգյը վախից տըղտողալավ ասից, թա. - Էտ օշափըն ա կյամ, եք քյըեզ կյողը կըցընիմ:

- Կյողը կըցընիլըս վըե՞րն ա, վախիլըս վըե՞րըն ա, յըես լիա ընդրա հետի յըմ եկալ:

Օշափը վըեր եկավ էտ տըղին տըեսավ, կըտաղած ասից, - Տու հու՞ վըս, ըշտեղա՞ն ըս եկալ, իտի համարձակ ըտըեղ կաղնա՞լ:

- Յըես եկալ ըմ քյըեզ ըսպանիմ, ա̀րո̀ւնըտ խըմիմ:

Սըեվ օջափը վըեր տըեսավ էտ տըղան էտ հո̀ւնա̀րին տար ա, ասից, - Մըեր ա̀ղա̀թը իստի յա. առաչ ղոնաղին հացը ըն տամ, ուտուցընըմ ըն, խըմըցնըմ, քըշերը պահըմ, էն մին օրը նըհետը կըռըեվ անըմ:

Ըտրանք ըտի էլ անըմ ըն, օտըմ ըն, խըմըմ, թեքյ ընգնում, թա քոն ինին:

Սըեվ օշափին քոնը տանըմ չի՛, մըթկըմը ասըմ ա, - էս վըեր իմ ախպոր, կյա̀րմո̀ւր օշափին հախտալ ա, կարող ա ինձ էլ հախտի, լա̀վըն էն ա, եր կըենամ էս քըշեր ըտրա կըլո̀խը օտիմ:

Թաքավերին պուճուր տըղան յաման գյիտկան ար, խափիլը արժեր, դա̀ստի կըլխու ընգավ օջափին մըեթկը: Ամարաթը վըեր էլիա տո̀ւրո̀ւր եկավ, էտ տըղան եր թըռավ տըեղան, սոռը հանից, յըրա պըրծավ օշափին, հենց թըխից, վըեր կըլո̀խը տըեղան թըռավ:

Աշխարքըս ասիս լիա̀ դինջացավ, լո̀ւսավերվից: Ըտրա անգուճնին էլ կըտորից, տարավ էն ըխճըկանը նշանց տըվավ: Էտ ախճիգյը վիզա̀վըն ընգավ, պըչպըչորից, կըլո̀խը սըղալից ասից. - Եք փըսակվինք, մին տըեղ ապրինքյ:

Տըղան էտ ըխճըկանն էլ մըեռժից, խոսկը կոտրից, քըշացավ էտ ամարաթին քաշի ատաժնին, հիշքան փըռնած հեյվաննի կար, ազադից: Ըտրանք ուրխացած քյնա̀ցին ո̀ւրա̀նց պո̀ւները: Ետավ ըտըեղ մին քանի օր մընաց, էլիա ճընապարի պադրաստոթուն տըեսավ: Վըեր էտ տըեսավ, ըխճըկանը քյեփը կոտրից: Տըղան նաղլ ըրավ, վըեր ինքյը նպատակ օնի, բիդի քյինի զա̀ռ բո̀ւլբո̀ւլը պըերի, վըեր երքի, ո̀ւրա̀նց բաղը-բախչան կընանչի:

Վըեր էտ լըսից, ախճիգյը վախից, օզից թա սըերտը ճաքի, վըեր տըղան օզըմ ա կըլո̀խը բաղի տա: Տըղան եշից վըեչ, եր կացավ ճընապար ընգավ:

Շատ քյինից, թա խըըեգյ, անց կացավ շատ փիս-փիս տըեղերավ,

մըթեն ծըմակներավ, խոր-խոր ծո՜րերավ, պեցուր սարերավ, վըերչը ընգա՜վ մին սիպտա՜կ վըեղ, մին խըեգյ էլ քյինից, ըտրան առաչը եկավ մին սիպտակ ամարաթ, մարթի կըլխի վըեսկուռնըերա շինած: Էտ ամարաթին դըրբըզան պըեց ըրավ, նի մըտավ, տըեսավ մին շատ դաշանգյ ախճիգյ, արևին լո՜ւսա՜ն էլ իվիլ լուս տըվող, ընդրան շըենքը-շընորքը իրեսկըհատը մին օրիշ պըե՛ն:

Էտ ախճիգյը վըեր էտ տըղին տըեսավ, կըլո՜խը շոռ տըվավ, օզից թա եր ընգնի, ասից, - Ա՛յ տըղա, ըստըեղ հի՞նչ ըս անըմ, հո՞ւնց ըս եկալ էս օշափներին երգյիրը, դե շո՜ւտ ըրա ետ տըեռ, թա չէ սիպտա՜կ օշափը կյալու յա քյըեզ օտի:

Էս խոսկերքը էլիհ տըղին քյեփին նի եկավ, ասից. - Ա՛յ ախճիգյ, հա՜լա՜ ինձ ղոնաղ չըս ըրալ, հալա պարյօր-ածուպարին չըս ասալ, ինձ տո՜ւս ըս անըմ: Ինձ վըխցընըմ ըս սիպտա՜կ օշափավը: Լա՜վըն էն ա, նաղլ անիս տըեսնամ տու՞ հունց ըս ընգալ ըստըեղ:

Ախճիգյը լա՜ց ինելավ նաղլ ըրավ, վըեր ինքը թաքավերի ախճիգյ ա, ամմա էտ սիպտակ օշափը եկալ ա ո՜ւրա՜նց երգյիրը պըրիշա՜կ ըրալ, լոխճին կըտորալ, ո՜ւրա՜ն էլ կյերի եր կալալ: Էտ ախճիգյը տըղին մըեխկը եկավ, ասից, - Յըես լի՜ա՜ ըտրա հըետի յըմ եկալ, վըեր ըտրա կըլո՜խը պուք տամ, քյըեզ ազադիմ, իմաց տո, կյա, կըռեվ անինք:

Տըղան շատ սոված ար, մին լա՜վ հաց կըերավ, քըշտացավ:

Մին էլ տըեսին սիպտա՜կ օշափը կյամ ա մըրթմըրթալավ, լընգլըն-գալավ, ըրօրվելավ: Ամմեն վըեննը փոխելիս տափը տո՜ւրո՜ւր ար կյամ:

Եկավ նի մըտավ տոռ, չորս դո՜լան վըետ քաշիլավ ասից. - Փո՜ւ՛հ, էս հի՞նչ մըրթավետ ա կյա՛մ, էս հո՞ւ կա ըստըեղ:

Վեր տըղին տըեսավ վե՛չ արծակ-համարծակ կաղնա՛ծ, շատ ըջըղվից: փընթփընթաց, ասից, - Տու հո՞ւ վըս, հո՞ւնց ըս ընգալ էս դո՜լերքը:

Թաքավերին պուճուր տըղան ասից. - Եկալ ըմ քյըեզ նըհետ կըռեվ անիմ, քյըեզ ըսպանիմ:

Էտ դըը մըտածից, ինքը ո՜ւրա՜ն նըհետ մըսլըհաթ ըրավ, վըեր էտ տըղան ո՜ւրա՜ն էրկու ախպորը ըսպանալ ա, ո՜ւնդո՜ւր ա եկալ ըտըեղ հըսալ:

Ընդրանք տո՜ւս եկին, վեր տո՜ւսո՜ւմը կըռեվ անին: Նոբաթը էտ օշա-փինն ար: Նա ո՜ւրա՜ն ախպորցան էլ իվիլ օժավ ար: Իրեք հըետ քյեցավ-յըեկավ թըլխից, ամմա տըղան անփորց ազադվից: Նոբաթը հըսավ էտ

տըղին: Նա ըսկսից սորը օշափին կըլխին խըղըցնիլը, օշափին ըսպանից, ընդրա անգուճնին կըտրից, տարավ էտ ըխճըկանը կօշտը:

Ախճիգյը տըեսավ, ուրխացավ: էտ տըղին վիզավը փըթաթվից, ասից. - Մըհեկ, յըես քունն ըմ, տու՝ իմը, եք փըսակվինք:

Իրեք օր տըղան մընաց ըտըեղ, մին լա՚վ դինջացավ, մին օր էլ հացի նըստած թառանչ քաշից, տըեղան եր կացավ, ասից. - Յըես քյընըմ ըմ:

- Ըշտըե՞ղ ըս քյընըմ: -Քյինիլ մի, յըես առանց քյըեզ կարիլ չըմ՛:

- Յըես նպատակ օնիմ, պիտի կադարիմ, քյընըմ ըմ զա՚ռ բո՚ւլբո՚ւլը պըերիմ, վըեր յերքի, մըեր բախչան կընանչի:

Ախճիգյը վըեր լըսից, շատ վախից, վըեր տըղան կըլո՚խը բադի կըտա, վըեր ըտըեղ քյընա՚ցողը էլ ետ չի տըեռնըմ: Տըղան կոխկըհաստոթուն ըրավ: Ախճիգյը տըեսավ վըեր տըղան ո՚ւրա՚ն ասածի յա, սըվըրցրավ, թա հուն՞ց պիտի զա՚ռ բո՚ւլբո՚ւլը պըերի՛:

- Կըքյինիս, շատ տըժըրրոթուննի կքաշիս, ամմա մըհալ չի տինիս, տըժըրրոթուննին կըկյա՚, անց կենա: Հարկավեր ա համփերոթուն, խըելք, արկաթե ջան: Կըհըսնիս մին մըեծ դո՚ւզ տըեղի յրա շինած մին մըեծ ամարաթի, պեց տըռները կըծասկիս, ծասկած տըռները պեց կանիս, հըսնիս թաքավերին օթախին: Թաքավերը քոն իլա՚ծ ա ինելու, յավաշ-յավաշ կը պըտըռիս զա՚ռ բո՚ւլբո՚ւլին օթախին պիլա՚ննին, տոռնը պեց կանիս, դուշը յոր օնիս, տո՚ւս կյա՚ս, կյա՚ս:

Էտ տըղան, հինչ վեր էտ ախճիգյը ասալ ար, լոխ կադարից:

Էտ դա՚րո՚ւմը աման դո՚ւլա հարայ տըվխն. - Հա՛յ, հարա՛յ տարին, հա՛ տարին, փըռնեցիք:

Էտ տըղան վեչ մին պենի եշից վեչ՝ շո՚ւտ ըրավ, առանց ետ եշելի զա՚ռ բո՚ւլբո՚ւլը ծըեռքին եկավ էտ ըխճըկանը կօշտը:

Ախճիգյը տափան մինչև երգյինք ուրխացավ, աշխարքըս ո՚ւրա՚նը տըեռավ, փըթաթվից էտ տըղին վիզա՚վը, կո՚լավըն ընգավ, պըչպըչորից:

Ըտրանք խոսկը մին արին՝ մինտեղ քյինին տըղին հայրենիքը: Լոխ հարուստոթունը՝ վըեսկեն, առծաթը եր կալին, օղտերը պեռնեցին, քյեցին:

Քյեցին, քյեցին, շատ քյեցին, թա խըեզյ քյեցին, հըսին սըեվ աշխարքը, ըշտեղ էտ տըղան սըեվ դևին սպանալ ար, էն մին ըխճըկանը ազադալ: Ըտեղ էլհա լոխ հարուստոթունը եր կալին, իրեքավ հըղե իլին:

Շատ քյեցին, թա խըեզյ քյեցին, հըսին կյա՚րմո՚ւր դևին աշխարքը, ըշտեղ

էտ տըղան սպանալ ար կյա̀րմո̀ւր դևին, էն մին ըխճըկանը ազադալ: Ըտեղ էլ լոխ հարուստութունը եր կալին օղտերը պեռնեցին, քյեցին:

Մին խիլլա̀ վախտ էլհա քյեցին, հըսին համին էն տըեղը, ըշտեղ ախպորցն անա պըժա̀ննվալ ար:

Ըտեղ էլհա էն պառավ մարթը նստած ար:

Թաքավերին էտ պուճուր տըղան հըրցըրավ.- Ապե՛ր, բա իմ ախպոր-ցաս վեչ մինը եկալ չի՞: Ախեր մունք պայման ընք կապալ, վեր հու վեր շո̀ւտ կյա̀, ըստեղ սպասի, մինչև էն մինունքն էլ կյան:

Էտ պառավ մարթը տըեղան տըմբըհան իլա̀վ, ասից. - Չէ՛, բալա, եկող չիլա̀լ:

Էտ տըղան թա. -Ապեր, դե վեր իտի յա, էս ըխճըկերքը թողիմ քըշտիտ, էս վըեսկավ, անկյին քարերավ պեռնած օղտերը լոխ թողիմ քըշտիտ, յըես քյինիմ իմ ախպորցը հետան, տըեսնամ հի՛նչ տըեռին, տըեսնամ ընդրանց կըլո̀խը հի՛նչ եկավ, ճակատնին վե՞ր սարի, վե՛ր քարի նի եկավ:

Ասըմ ա, հըդե ինո̀ւմ: Ճընապարին հարցըփորց ընելավ քյնո̀ւմ ա, քյինո̀ւմ, հըսնում ա մին տան, ընդեղ դոնադ ընգնըմ:

Ըտեղ հըրցըփորց ա անըմ, թա հո՞ւնց քյիթնի ո̀ւրա̀ն ախպորցը:

Տընատարն ասըմ ա. - Էտ պենը մինա̀ծ մին թա̀հրա̀վ կարող ըս գյիդա̀ս: Բեդմա քյիննիս ժամին տըռանը մին մատաղ մորթիս, լոխ դարիբներին կանչիս, մատաղը պըժա̀ննիս, բա̀լքա̀ս ընդրանց մեչին էլ քու ախպերք ինին:

Էտ տըղան քյինո̀ւմ ա, ըտըղան մոտիկ մին քաղաք կար, անըմը Շուշի-Ղալա, ըտեղ էլ մին մըեծ ժամ կար, Ղազանչեցունց ժամին ասըմ, ընդեղ էտ զա̀ռվա̀րա̀դ խաչերավ ժամումը տես եշիգ, տեն եշիգ, ըտրա էտ պեցո̀ւր կամարներին եշիգ, լափ էն պեցո̀ւր կմբեթին եշիգ, տըեսավ յղոնեգյնին ընդեղ պուտուտ-պուտուտ ըն կյամ, լոխ էլ սիպտա̀կ:

Ասից. - Ա՛ յղոնեգնի՛, տըեսնաս իմ ախպորց տեսալ չըք հու:

Էտ յղոնեգյներան մինը լո̀ւզո̀ւ առավ, ասից.- Թաքավերին պուճուր տըղա, տու քու ախպորցըտ գըթնելու յըս, ամմա վա՞յ քու կլո̀խըտ:

Գյըրա̀գյի օր ար: Ժողովուրթը ժամը լիգյը:

Վերչը էտ տըղան մատաղ ա մորթում, ժամհարին նըհետ մին տեղ իփում, ո̀ւրա̀ն ծըեռքավ մըեսը լավաշին մեչին տնո̀ւմ, կընդ-կընդ պըժենըմ:

Մատաղը պըժանելին վերչումը էտ տըղին միշնա̈կ ախպերը եկավ, վեր Շուշի-Ղալա քաղաքումը ծառայոթուն ար նի մտալ Հարունանց Տանիյելին քըշտին:

Պուճուր ախպերը վեր ըտրան տըեսավ խտետըն ընգավ. պըչպըչորից, հըրցըփորց ըրավ, գյիդա̈ց հունց ա, հունց չի՛, ետավ քյինեցին միջնա̈կ ախպորը խազայինին կոշտը, վեր րասչոտ յոր օնին:

-Իմ ախպոր փողը տո,-ասից պուճուր ախպերը,- հա̈շիվը վիրչացրու, մունք քյինըմ ընք:

Խազայինը ասից. - Դե հի՞նչ ըմ ասըմ, օզըմ ըս երկալ: - Ասըմա պըրծնըմ, փողը հաշիվ անըմ ծըեռքին տինըմ:

Պուճուր ախպերը միշնա̈կ ախպորը տարավ Շուշի-Ղալա քաղաքին մեծ մագազիննին ման ածից, լա̈վ-լա̈վ շո̈րեր առավ կյեց տըվավ, ետավ ինքնան միշնա̈կ ախպերը ճընապար ընգին, քյեցին մեծ ախպորը ճարեցին, իրեքավ հըղե իլին դիբի էն ըխճըկերքը:

Վերչը էրգյա̈ն ճընապա կյա̈լա̈նը ետը հասին ընդեղ, ըշտեղ թողալին օղտերին քյա̈րվանը, մին էլ ըխճըկերքը: Պուճուր ախպերը լոխ նշանց տըվավ, լոխ նաղլ ըրավ: Մեծ ախպերը նախանձից օզըմ ար թա տրաքվի, վեր ըխճըկորցը պաժին ըրին, էն լոխճան պուճուր, ամմա լոխճան կյեղեցիկ ախճիգյը պուճուր ախպերը եր կալավ, զա̈ռ բո̈ւլբո̈ւլը ծըեռքին:

Ըտրանք ճընապա ընգին ո̈ւրա̈նը քյարվանի նըհետ: Շատ ար տաք, ծարավը մարթ ար ըսպանըմ: Շատ քյինա̈լա̈նը ետը հըսին մին կյետի:

Ըտեղ մըեծ ախպերը թա. - Եկիք լըղանանք:

Քյարվանը առաջ ընգա̈վ, ո̈ւրա̈նք մնացին, լըղացին:

Ըտեղ մեծ ախպերը ետ տըեռավ միշնա̈կ ախպորը թաքուն ասից, թա. - Եք մըեր պուճուր ախպորը կյետըմը խեխտինք, զա̈ռ բո̈ւլբո̈ւլը մունք տանինք տանք մըեր հոր:

Միշնա̈կ ախպերը ռազի չի կացավ, ասից. - Լա̈վն էն ա, վեր վըննը-ծըեռքը կապինք, աշկերը հանինք, թողինք էս կյետին դըրաղին, մունք քյինինք:

Ըտրանք իտի էլ ըրի՛ն:

Վըեր հըսին քյարվանին, էն ըխճըկորցը կոշտը էտ ըխճըկերքը թա. - Պա հո՛ր ա ծըեր պուճուր ախպերը:

Մըեծ ախպերը թա. - Բա ասիլ չը՛ք, կյետըմը լըղընալիս վախտը ճիրը-

մը խեխտվից, կրեցինք վէչ, թա ազադինք, վա՛յ-վա՛յ մեր պուճուր ախ-պեր,- սըտըսոտ ՞ւրա՞նց ծընգները թակեցին մեծ նան միշնա՞կ ախպերքը

Էտ ըխճըկերքը շատ լա՞ց իլին, առռի շատ լա՞ց իլա՞վ լոխճան պուճուր, լոխճան կյեղեցիկ ախճիգյը, զա՞ռ բ՞ւլբ՞ւլը ծըեռքին, ամմա դե էլ ըշտեղ…

Թաքավերը լսալ ար, վեր էն ա տըղերքը կյամ ըն: Մեծ պադրաս-տոթունավ, նա՞զիր-վա՞զիրներավ, մըեծամըեծներավ տ՞ուս ա կյամ ըտրանց առաչը:

Սաղ քաղաքը վըեննի յրա ար, լոխ օզըմ ին տըեսնան զա՞ռ բ՞ւլբ՞ւլին, լոխճան շատ էլ թաքավերն ար օզըմ տեըսնա, վըեր տինին ՞ւրա՞նը բախչըմը, երք ասի, բախչան կընանչի:

Ամմա վեր թաքավերը տըեսավ պուճուր տըղան կա վէչ, շատ զարմացավ, քար կըտրից թա. - Պա հո՞ր ա ծըեր պուճուր ախպերը:

Մըեծ նան միշնա՞կ տըղան պադասխանեցին թա. - Ա՛ հա՞ր, բա ասիլ չը՛ս, լըղանալիս վախտը ճըրըմը խեխտվալ ա՛: Էս ըխճըկորցը մինը իմ կընեգյս ա, մինը՝ միշնա՞կ ախպորս, էս մինն էլ, էս իրեքինջինը քյըեզ հետի ծառայընք պերալ:

Էն պուճուր ախճիգյը թա. - Սոտ ա, սոտ ըն ասըմ:

Թաքավերը ըտեղ մին պեն կլխու ընգա՞վ, տըխըրվից, ամմա անց կացավ ՞ւրան իսկական ցավին, վեր զա՞ռ բ՞ւլբ՞ւլը երքի, բախչան կընանչի:

Նա կանչից ՞ւրա՞ն տըղորցը, թա. - Դե պերիք զա՞ռ բ՞ւլբ՞ւլը մըեր բախ-չան, վեր երքի, բախչան կընանչի, համ էլ ըսեցեք տըեսնամ հո՛ւ վա պերալ զա՞ռ բ՞ւլբ՞ւլը:

Մեծ ախպերըն ասըմ ա. - Յըես ըմ պերալ:

Միշնա՞կը թա. - Չէ, յըես ըմ պերալ:

Հա՞րը մըեծ տըղին ասըմ ա. - Դե վեր տու վըս պերալ, ասի վեր երքի՛:

Մըեծ տըղան հիշքան անըմ ա, զա՞ռ բ՞ւլբ՞ւլը երքըմ չի՛:

Հա՞րը միեգյ էլ միշնա՞կ տըղին ա ասում. - Թա տու վըս պերալ, ասի զա՞ռ բ՞ւլբ՞ւլը երքի:

Միշնա՞կ տըղան հիշքան չըրչարվըմ ա, ամմա զա՞ռ բ՞ւլբ՞ւլը երքըմ չի, տուխուր նստած ՞ւրա՞ն ղա՞փա՞զ՞ւմը, վէչ օտըմ ա, վէչ խմըմ, օրանցօր մաշվըմ ա, տըեռնըմ մին պըճըռանք:

Մըիեգյ խոսինք, տեսնանք հի՞նչ տեռավ թաքավերին պուճուր տըղան՝

վեննըծեռքը կըպկըպոտած, կյետին ղրաղին եր քըցած։

Անց ա կենըմ մին քանի օր, բիրդա̈ն էտ կյետին ճըրերին թաքուհին տո̈ւս ա կյամ կյետան, տըեսնըմ էտ տըղին։ Վեր իտի տըեսնըմ ա, մեխկըն ա կյամ, ծըռքըվեննը պեց ա անըմ, աշկերը տինըմ ո̈ւրա̈ն տըեղը, անմահական ճո̈ւր քըսըմ, էտ տըղին լըվըցնը՛մ։ Տըղան օզըմ ա, թա շունըրակալ ինի, մին էլ ա տըեսնըմ ճըրերին թաքուհին ընդեղ չի՛, աշկա կորալ ա՛։

Թաքավերին պուճուր տըղան շարունակըմ ա ո̈ւրա̈ն ճընապան, դիբի ո̈ւրա̈ն հորը քաղաքը , նի հըսնըմ ըտեղ, ամմա տըկլոր ինելին դա̈րդա̈ն հըմանչըմա քյինի հորը պալատը։

Նա մին հարուստ մարթի տան ծառա յա նի մըննըմ, ճո̈ւր կըրըմ, փեդ կոտըրըմ, մին թա̈հրա̈վ կըլո̈խը պահըմ։

Մին ամիս անց կընալանը ետը էտ քաղաքը մին ղըլմըղալ ա ընգնըմ, ժողովուրթը ըսկըըսըմ ըն մին պենի հետի պադրաստվիլը։

Էտ տըղան զարմացած հըրցընըմ ա ո̈ւրա̈ն խազեյինին անա, թա տա հի՞նչ պեն ա։

Խազեյինը ըջղվըմ ա էտ տըղին յրան, ասըմ.-Հիմմար, էշի կըլո̈խ բա հա̈լա̈ գյուղում չը՞ս, Միպտա̈կ թաքավերը եկալ ա ո̈ւրա̈ն դոշունավը չաղիրնի եր թողալ քաղաքին չորս դո̈լավը, օզըմ ա զա̈ռ բո̈ւլբո̈ւլը ետ ինք օնի, համ էլ օզըմ ա զա̈ռ բո̈ւլբո̈ւլը պերող տղին տըեսնա։

Էտ տըղան համարձակ, առանց քաշվելի ասըմ ա, - էս սըհաթըս քյինի թաքավերին կոշտը, ինձ համար մին ծըեռք լա̈վ շո̈ր պեր, մին էլ մին լա̈վ ծի։ Ցըես կըքյինիմ Միպտա̈կ թաքավերին ջողաբը տամ։ Խազեյինը ասըմ ա. - Դե ծենտ կտրի, տու հի՞նչ ըս, վեր հա̈լա̈ քյինիս Միպտա̈կ թաքավերին օշափներին նըհետ կըռեվ անի՛ս։

Էտ տըղան շո̈ւտ ա անըմ, քյո̈ւչա̈ն տո̈ւս կյամ, տըեսնըմ էն ըն ժողովուրթը ո̈ւրո̈ւրոցավ ընգած, ո̈ւրա̈ն մըեծ ախպերն էլ ծի նըստած քյինո̈ւմ ա Միպտա̈կ թաքավերին օշափներին նըհետ կըռեվ անի։

Նա կըղնըցնըմ ա ախպորը ծին, ասըմ. - Տու եր եք, յըես եր ինըմ, քյինիմ կըռըեվ։

Թաքավերին մեծ տըղան ըտրան կուփի յա տամ, եր քըցըմ, ինքը քյինըմ, տըեսնըմ քաղաքին չորս դո̈լը սիպտա̈կյա̈լ ա չա̈դիրներան։

Ղարավուլչիքյը վեր ըտրան տըեսնըմ ըն, հըրցնըմ ըն, թա ըշտեղ ա քյինըմ։

Ղարավուլչիքը նշանց ըն տամ Սիպտանկ թաքավերին չանդիրը: Տա քյինիմ ա նի միննըմ թաքավերին չանդիրը, կլոխ տամ մինչև տափը, ասըմ. - Թաքավերը ապրած կընենա, յըես ըմ թաքավերին տըղան, յըես ըմ պերալ զանռ բոլբոլը :

Սիպտանկ թաքավերը ասըմ ա. - Դե վեր տու վըս, ասի տըեսնամ զանռ բոլբոլը հո՞նց ըս պերալ, հո՞ւեց ըս համարձակվալ, եկալ իմ թաքավերոթունը:

Տղան նաղլ ա անըմ, ասըմ. - Ըսկի հունց, եկի ծըեր երգյիրը, նի մտի ծըմակը, ծառին յրիցը եր կալի զանռ բոլբոլը, եկի՛ :

Սիպտանկ թաքավերը տըսավ, վեր տա չի զանռ բոլբոլը պերողը, ասից. - Տու չըս զանռ բոլբոլը պերողը, քյինա ռադ իլ ըստըղերքան, թա օզըմ չըս կլոխտ պուք տանք: Համ ասըմ ա, համ էլ հրամմայըմ գյանդոցը ըտրան մին լավ թակըմ ըն:

Միշնանկ ախպերը տըսնալավ վեր մեծ ախպերը ճարթըփուշուր իլած ա եկա՛լ, հորն ասըմ ա, -Ա՛ հար, յըես քյըեզ ըսեցի վեչ, վեր յըես ըմ դուշը պերալ, յըես էլ կքյինիմ պադասխան կըտամ :

Տա զենքը զրահը յոր ա օնըմ, ծի նստիմ, կյամ Սիպտանկ թաքավերին կոշտը: Ճընապարին էլիա պըտահըմ ա պուճուր ախպորը, ոլրոլր ճընանչըմ չըն, էլիա պուճուր ախպերը խնթըրըմ ա, վեր ծին տա ոլրան, ինքը քյինի Սիպտանկ թաքավերին պադասխանը տա: Էտ վախտը միշնանկ ախպերը ըտրան մին լավ թխից ոլրան դամշավը, ծին քըշից, քյինից հըսավ Սիպտանկ թաքավերին չանդիրին, նի մըտավ, կըլոխ տըվավ թաքավերին, ասից. - Յըես ըմ թաքավերին տըղան, յըես ըմ պերալ զանռ բոլբոլը:

Թաքավերն ասից. - Դե վեր տու վըս, նաղլ ըրա, տըեսնամ հունց ըս պերալ զանռ բոլբոլը իմ աշխարքաս, վեր օգն ոլրան պոռտավը, դուշն ոլրան թևավը կարըմ չի, թա նի մըննի՛ :

Տըղան ասըմ ա. - Նի մըտի ծըմակը, ծառը պըցրանցի, դուշը ոլրան պոնան հանեցի, պերի:

Սիպտանկ թաքավերը էլիա թոնդըմը ըջըղվից, մի լավ սիլլա տըվավ էտ տըղին, սոտ ըսելի հետի: Տըղին օշը տարավ, եր ընգավ: Մին թանիրավ իրեսին ճոլր շաղ տալավ ետ պերին:

Էս դոնըմ Սիպտանկ թաքավերը արոնը աշկերը կալած, կըտաղած հրամմայից, ասից. - Մին ըրհաթ վախտ ըմ տինըմ, թա դուշը պերողին

ղըրկիք, ղըրկիք թա չէ, քարը քարին յրան չի մնա՜լ էս քաղաքըմը, մին շունչ չի մնա՜լ, լոխճին կըկըտորիմ:

Խաբարը կյամ ա հըսնըմ էս թաքավերին, ժողովուրթը ըսկըսըմ ըն լա̈ցըկոծ անիլը, փախուստը:

Թաքավերին պուճուր տըղան փեղ ար կուտրատըմ, վեր տեսավ ո̈ւրա̈ն խազեյինը օզըմ ա փախչի, հըցրավ, ասից. - էտ հի՞նչ ա պըտահալ, էտ խե փախչըմ ըք:

Էտեղ խազեյինը յրան կըզնվից, հրամմայից թա. - Շո̈ւտ ըրա, տու վէլ մին տեղ կյո̈ղըը կաց, թա չէ Սիպտա̈կ թաքավերը էս ա մեր աշխարքը օրա̈ն-վերանա յա անելու, լոխճին կուտուրելու յա:

Տըղան ո̈ւրա̈ն խազեյինին սըերտ տըվավ, ասից. - Քյինա̈ թաքավերին կոշտը, ասի մին ծըեռք շո̈ր, մին ծի, զենքը-զրահ տա, յըես քյինիմ պաղասխանը տամ:

Ըտեղ խազեյինը թո̈ւնդըմը ըջըղվից ըտրա յրա, շա̈լա̈ քո̈ւլան հվաքից, փախավ:

Էտ տըղան լոխ վեր իտի տըեսավ, որոշից ինքը քյինի թաքավերին կոշտը ծի, զենք յոր օնի, քյինի Սիպտա̈կ թաքավերին ջողաբը տա:

Իտի էլ ըրավ, խոնարվից, կլո̈խ տըվավ, ասից.- Թաքավերը ապրած կենա, ինձ մին ծըերք շո̈ր տո մին ծի, զենք-զըրահ, յըես քյինիմ Սիպտա̈կ թաքավերին պաղասխանը տամ:

Թաքավերը էտ տըղին անա մնաց արմանք զարմանք տարած, անգուճին հըվատաց վէչ, մին էլ մը թկըմը ասից թա՝ ջըհա̈ննա̈մը, բա̈լքա̈ն դո̈ւզ ա ասըմ:

Ետ տըեռավ էտ տըղին, թա.- Դե վեր իտի յա, քյինի տու հավան կաց ծիյին, շո̈րերին, զենք-զըրահին, կյեց, ծի նըստի, քյինա:

Էտ տըղան, թա.- Դե վեր իտի յա, թաքավեր, քու առաջիտ մին պայման ըմ տինըմ: Թա̈ կարեցի պաղասխանը տամ, տու մին քանի օր թաքավերոթունըտ պիտի ինձ տաս, յըես դաղաստան օնիմ մին քանի մարթկանց նըհետ, իմ ծըեռքավըս պիտի կաղարիմ:

Թաքավերը ռազի յա կըենըմ:

Տըղան հաքնըվըմ ա, ծի նըստըմ, քյինըմ Սիպտա̈կ թաքավերին կոշտը: Ըտեղ ղարավուլչոցը անա հըրցըփորց ըրավ, գյիդա̈ց, թա ըշտեղ ա ընդրա չա̈ղիրը, ծին քըշից, հըսավ ըտեղ, նի մըտավ, առանց կլո̈խ տալի առաչին կաղնից:

Թաքավերը ըտրա յրան ըջըղվից, ասից. - Տու հո՞ւ վըս, վեր իմ առաչիս կըլ՛ըխտ խոնարըմ չըս :

Էտ տըղան թա. - Ցըես զա՛ռ բ՛ըլբ՛ըլը պերող տըղան ըմ, էս քաղաքին թաքավերին պուճուր տըղան, կըլ՛ըխս յոր չօնըմ, վեր քու առաչիտ խոնարիմ, թա կըռըեվ ըս օզըմ, աշկիս յրան, կըլխիս յրան, եկ կըռըեվ անինք:

Սիպտա՛կ թաքավերը ըջըղվից, ՛ուրա՛ն թըփըհարից, ասից.- Դե վեր իտի համարձակ ըս, պատմի տեսնամ հո՞ւնց եկիր իմ երգյիրըս, հո՞ւնց դուշը պըերիր:

Տըղան լոխ նաղլ ըրավ: Սիպտա՛կ թաքավերը համոզվից, վեր էտ ա պերալ զա՛ռ բ՛ըլբ՛ըլը : Ըջըղվից, օզից թա տըղին ըսպանի, մին էլ ասից: - Դե վեր իտի յա, հունցը պերալ ըս, ինդի էլ տար տիր ՛ուրա՛ն տեղը, թա չէ, ծեր երգյիրը տըկըկլոխ կանիմ:

Էտ խոսկերքին յրան տըղան ծըծաղից, ետավ ինքը ՛ուրա՛ն, հըվաքից, նետը սազ ըրավ դիբի թաքավերը, յրա ըրավ: Թաքավերը մին պենդ կյ՛ըռաց, եր ընգավ:

Էտ կյ՛ըռոցը վեր դոշունը լըսից, ըսկսից փախչիլը, ըշտըղան եկալ ար, քյեցավ ընդեղ:

Խաբարը հըսավ թաքավերին, վեր էն տըղան ըսպանալ ա Սիպտա՛կ թաքավերին, ազադալ ժողովուրթին:

Թաքավերը մըեծ պադրաստոթունավ, պադարկաներավ քյինըմ ա էտ քաջ տըղին առաչը, յոր օնըմ կյամ պալատը:

Էտ վախտը տըղան թաքավերան հըրցըրավ, թա. - Ճընանչըմը՞ս ինձ:

Թաքավերը թա. -Չէ

Տըղան թա. - Ցըես քու տըղատ ըմ, քու պուճուր տըղատ: Թաքավերը մաթ մնաց, կըլ՛ըխը շոռ տըվավ, օզից, թա եր ընգնի՞: Մին էլ օշը կըլ՛ըխը հըվաքից, ասից. - Դե վեր տու իմ տըղաս ըս, եք զա՛ռ բ՛ըլ՛ըլը խոսիլ, երքել տո, վըեր մըեր բախչան կընան չի:

Տըղան քյինաց էն օթախը, ըշտեղ դուշն ար, ընդրան ղափաղիցը հանից, կլ՛ըխ տըվավ ընդրան, խընթրից, վըեր երքի:

Զա՛ռ բ՛ըլ՛ըլը թըփհարից թևերը, օրախ-օրախ ըսկսից երք ասիլը:

Բախչան կընանչից, օթը լա՛վացավ, դուշերը ըսկըսեցին երքիլը:

Թաքավերը ուրխացավ, խտտից ՛ուրա՛ն տըղին, ասից. - Դե վեր տու իտի քաջ ըս, իմ տըղաս ըս, ինք առ իմ թաքավերոթունըս քյեզ, հինչ օզըմ ըս, ըրա:

Տըղան հորը կաիը եր կալավ, ըսկսից ո̀ւրա̀ն կըլխավը անց կացածը նաղլ անիլը:

Կոզի խընթրալ ար, վեր թաքավերոթունը ո̀ւրա̀ն տա, ո̀ւրա̀ն ախպորցը դիվանը անի՛, ամմա մին էլ խղճաց ընդրանց, ասից. - Ա՛ հա̀ր, քանի վեր ըն դրանք ինձ սաղ ըն թողալ, յըես էլ ո̀ւրա̀նց սաղ կըթողիմ, խընթըըմ ըմ իրամմայիս, վեր էս երգյիրան հեռանան, ո̀ւրա̀ց խոխա-րախան յոր օնին քյինին:

Իդի էլ իլա̀վ: Էտ օրվանից թաքավերին էրկու տըղերքը հեռանըմ ըն էտ երգյիրան, թա ըշտեղ ըն քյինըմ, հա̀լա̀ միչև մըհեգյ էլ խա̀բա̀ր չիկա:

Սաղ աշխարքըս էտ օրվանից կընանչից, ծաղկից, ժողովուրթը ուրխացավ...

Թաքավերին պուճուր տըղան փըսակվից էն լոխճան պուճուր, լոխճան կյեղեցիկ ըխճըկանը նըհետ: Օխտը օր, օխտը քըշեր հըըսանիք ըրին: Ըտրանա ետը տըղան մնաց ո̀ւրա̀ն հորը կաիին, ըսկսից երգիրը լավ կառավարիլը, ո̀ւրա̀ն ժողովուրթին նըհետ բախտավեր ապրիլը:

Երգյինքան իրեք մըեծ, տեղին ռա̀նգյի, մին ղո̀ըլըն էլ կյա̀րմո̀ւր շա̀վթա̀լի եր ընգավ. մինը՝ ասողին, մինը՝ լըսողին, մինն էլ՝ կարթողին:

## 12.ԽՈՍՈՂ ԾԻՆ

Ինըմ ա, չինըմ մին թաքավեր ա ինըմ: Էտ թաքավերին ինըմ ա իրեք տըղա: Մին օր թաքավերը ծանդր հիվանդանըմ ա:

Նա կանչըմա ո՞ւրա՞ն տըղորցը, ասըմ. Ա՛ բալե՛ք, ծեր հա՞ր ծանդըր հիվանդ ա, նա կըլիվանա էն վախտը, վեր լըղանա ինդի վըեղավ, վեր հա՞լա՞ մարթի վըեննը չի նի եկալ:

Մեծ տըղան ասըմ ա. Ա՛ հա՞ր թաքավեր, յըես կըքյինիմ էտ վըեղը անպաձառ կըձարիմ պերիմ, քյըեզ առողձըցնիմ:

Էտ թաքավերին մին հըրեղան ծի յա ինըմ, վեր դուշա շ՞ուտ ա թըռչըմ: էտ ծին պաիըմ ին քաղաքան հեռու մին տըեղ, մին խոր ծըմակըմ: Քըշերավը շ՞ուտ մըեծ տըղան եր ա կըենըմ ծի նըստըմ, ձնապար ընգնըմ:

Շատ ա քյինըմ, թա խըրեգյ, վերչը հըսնըմ ա մին մըթեն ծըմակ: Ըտըղան տըենը էլ կարըմ չի քյինա՞, լի՞ա՞ մին փոսա մին խրեգյ վըեղ ա յոր օնըմ, կյամ տոն:

Հարը վեր լըսըմ ա, շատ ա ուրխանըմ:

Տըղան վեր վըեղը տամ ա հորը, հա՞րը քարտեզը յոր ա օնըմ, տինըմ տըղին առաչին, ասըմ.- Դե ինձ նշանց տո համին էն տըեղը, ըշտըղան վըեղը եր ըս կա՞լա՞լ:

Տըղան քարտեզին յրան նշանց ա տամ տըեղը:

Հա՞րը եշըմ ա տըղին, ծըծաղելավ ասըմ.- Վերթի, օզըմ ըս ինձ խափի՛ս, յըես գյանքիս շատը ըտեղերք ըմ անցկըցըրալ, դե քյինի քոն իլ, քյըզանա պեն չի տ՞ուս կյալ:

Էտ վախտը միշնա՞կ տըղան ասըմ ա.- Հա՞ր թաքավեր, թող յըես քյինիմ պերիմ:

Հա՞րը ռազի յա կենըմ: Քըշերավ շ՞ուտ միշնա՞կ տըղան ծին նըստըմ ա, ձընապար ընգնըմ:

Շատ ա քյինըմ, թա խըրեգյ, վերչը հըսնըմ ա մին խոր ծ՞որի: էլ կարըմ չի ձընապարը շարունակի, ըտըղան էլ մին խրեգյ վըեղ ա յոր օնըմ, ետ տըեռնըմ: Հա՞րը մին խիլլա՞ ուրխանըմ ա, վեր լըսըմ ա տըղան եկալ ա:

Տըղան վըեղը տամ ա հորը, համ էլ քարտեզին յրան նշանց ա տամ, թա ըշտըղան ա եր կալալ, հա՞րը մին խոր թառանչա քաշըմ, համ էլ ասըմ.- Է՛հ, վերթի, հի՛նչ ա՛, օզըմ ըս քու հոր խափի՛ս, յըես սաղ գյանքըմըս ըտըեղերքան ըմ վըերս ըրալ, քըշերնին ըտեղերք շատ ըմ քոն իլա՞լ, շատ

ըմ քեփեր ըրա՛ լ էտ ծո՞րերըմը, քյինա՛, քյինա՛ քոն իլ, քյըզանա պեն չի տո՞ւս կյալ:

Էտ վախտը պուճուր տըղան մուտանըմ ա հորը, ասըմ.- Թաքավեր հա՛ր, թող մըհեկ էլ յըես քյինիմ վըեղ պերիմ:

Թաքավերն ասըմ ա.- Ըստրան եշեցեք, մըեծ ախպերքը քյինա՛ցալ ըն, պեն չըն պերա՛լ, էս պիտի պերի՛:

Պուճուր տըղան թա.- Հա՛ր թաքավեր, ինձ հըվատա, յըես կպերիմ, մինա՛կ քյինելան առաչ ինձ օրթնի:

Հորը մեխկըն ա կյամ պուճուր տըղան, ասըմ ա.- Քյինի՛, բալա, հազար պարով քյինի, սաղ սալամաթ ետ տըեռ եք, քու հոր ուրխըցրու:

Պուճուր տըղան գյուղո՞ւմ չար, վեր հա՛րը, հըրեղան ծի օնի, ըտրա հետի էլ վըեննավ ա քյինըմ: Վեր օզըմ ա, թա քաղաքան տո՞ւս կյա, մին պառավ մարթի յա ջըհըմ:

Էտ մարթըն ասըմ ա. - Իտի քըշրհանա հո՞ր ըս քյինամ, ա՛ բալա:

Տըղան թա.-Ապեր, քյինամ ըմ իմ հոր հետի վըեղ պերիմ, վըեղ, վեր ո՞ւրա՛ն գյանքըմը վըեննը էտ վըեղին տիրա՛ծ չինի :

- Ա՛ բալա, էտ վըեղը մինա՛կ քու հոր հըրեղան ծին կպերի, էտ էլ էն ա մին ծըմակըմ: - Ըստեղ կաց մինչև մըթնիլը, վեր մըթնի, քյինի քու հոր օթախը, պատան կախ տրված մին ղամշի կա, եր կալ, թաքուն տո՞ւս եք, քյինի ծիյին կոշտը: Ծին վեր քյըեզ տեսնա, կյալույա, թա քյըեզ օտի: Էն վախտը տու ղամշիտ կըպըցրցընիս, ասիս. «Ա՛ ծի, քու տա՛րըտ ըմ»: Ծին ղա՛ստի կաղնելու յա, տու կնստիս, ըշտեղ օզըմ ըս, կքյինիս:

Տըղան ասից.- Շունրակալ ըմ, ապեր, Դե մըհեկ յըես ճընապարվիմ:

Ասըմ ա, պըրծնըմ, ծին նստըմ: Ծին ղա՛ստի թըռչըմ ա, կաղնըմ մին ծովի քըշտի:

Ըտեղ տըղան տեսնըմ ա տափին ավազին յրան էն ա մին լո՞ւս տըվող թեփուր կա: Դա՛ստի յոր ա օնըմ: Ծին վեր էտ տեսնըմ ա, մարթի նման ըսկըսըմ ա խոսիլը:

- Ա՛յ տըղա, հա՛լա՛ ջա՛հիլ ըս, գյո՞ւղըմ չը՛ս, կըլո՞խըտ շատ օյին կըկյա, էտ թեփուրը յոր մ'օնիլ:- Ամմա տըղան լըսըմ չի, յոր ա օնըմ:

Ըտրանք քյինըմ ըն, քյինըմ, վերչը հըսնըմ ըն մին սև աշխարքի, մին պառավ կընգա տան քըշտի կաղնըմ:

Էտ տըղան թեփուրը հանըմ ա, տինըմ ստո՞լին: Դա՛ստի սաղ քաղաքին

լո՛ւս ա տամ, լո՛ւսավերըմ: Ըտեղի թաքավերը հրամմայըմ ա ո՛ւրա՛ն նա՛զիր վազիրներին վեր քյինին դաստի գյիդան, թա տա հինչ պեն ա:

Նազիր վազիրնին կյամ ըն էտ տըղին քըթնըմ, տանըմ թաքավերին կո՛շտը:

Թաքավերը եշըմ ա, եշըմ էտ թեփուրին, ասըմ.- Ա՛յ դարիբ տըղա, տո՛ւ հու՞վըս, վեր մեր էս սև աշխարքան օզըմ ըս ազադվիս: Յըես քյըեզ իրեք խնթիր կտամ, թա կարեցիր գյիդա՛ս, էն վախտը ազադված կինիս:

Տըղան ասըմ ա. -Թաքավերը ապրած կենա, յըես պադրաստ ըմ ծըեզ լըսիմ:

Թաքավերը թա. -Առաչինը էն ա, վեր պիտի պերիս էն դուշը, վերին անա էս թեփուրը պուք ա եկա՛լ:

Տըղան թա.- Թաքավերն ապրած կենա, ըտրա հետի ինձ մին օր ժամանակ տվիք, վեր մտածիմ:

- Օզըմ ըս լի՛ա իրեք օր մտածի, թա՛ք լի՛ա պերիս:

Տըղան տուխուր քյինըմ ա ծիյին կոշտը: Ծին հըրցնըմ ա. -Իմ կլխիս տա՛րը-տըրա՛կան, էտ խե՞ իտի տուխու՞ր ըս:

Տըղան ասըմ ա.- Էս երգյիրին թաքավերը ինձանա օզըմ ա էն դուշին, վերին անա էս թեփուրը պուք ա եկալ:

Ծին թա. - Էն վախտը վեր ինձ լըսած ինիր, էս օյինը քու կլո՛խտ չար կյալ: Ամմա դե էլ հի՞նչ, անց ա կացալ, մտածիլ մի, քյինա՛ թաքավերին ասի՝ քսան բոթուլ ա՛րա՛ղ տա, մին թի, մին քյեչա՛, եր կալ շո՛ւտ եք:

Թաքավերը էտ տըղեն պահանջը կադարըմ ա:

Ո՛ւրգյո՛ւնան վախտը ըտրանք սև աշխարքան տո՛ւս ըն կյամ:

Ծին դա՛ստի հըսցնըմ ա հա՛մին էն տեղը, ըշտեղ էտ դուշն ա: Հըսնըմ ըն մին ախպո՛ւրի:

Ծին կաղնըմ ա, ասըմ. - Էս քյեչոցավը ըխպըրին պերանը կապի, վեր ճո՛ւր չի կյա, ըխպըրին էրկու դո՛լին էրկու փոս կըտրի, մինին մեչը յըես նի մննիմ, մին ինը՛ տո՛ւ: Արաղը ածի նովին մեչը: Արևը վեր անց կենա, էտ վախտը էտ դուշը կյա՛լու յա, թա՛ ճո՛ւր խմի: Լոխ արաղը խմելու յա, հա՛րփի, եր ընգնի, թա քու կոխկիտ եր ընգնի՛ տու փըռնի, թա իմ կոխկիս եր ընգնի՛ յըես փըռնիմ:

Ո՛ւրո՛ւգյո՛ւնը էտ դուշը կյամ ա, արաղը խմըմ, կաղնըմ էտ տղին կոխկին: Տըղան դա՛ստի վըններան փըռնըմ ա:

Ղուշը հինչքան ղաչանք ա անըմ, լա̀ց ինըմ, ամմա տըղան պեց չի թողըմ: Պերում ա, տամ թաքավերին:

Էն մին քըշերավը թաքավերը կանչըմ ա էտ տըղին ասըմ.

-Տու իմ տված առաչին խնթիրքս կադարեցիր, մըհեկ էլ էրկունջի խնթիրքըս կասիմ: Էտ էն ա, վեր մըզանա շատ հեռու ապրըմ ա մին շատ կյեղեցիկ ախճիգյ: Էտ ախճիգյը քառասուն շո̈ւտ վազ տըվող կով օնի, էնքան շո̈ւտ վազ տըվող, վեր քամին էլ չի հետան հըսնըմ: Տու պիտի էտ ախճիգյը ինձ հետի պերիս:

Տըղան ասըմ ա.-Լա̀վ, մինա̀կ վախտ տիր, էրկու օր մըտածիմ:

Տըղան տուխուր քյինըմ ա ծիյին կոշտը: Ծին ասըմ ա.- Իմ կըլխիս տարը-տըրական, խե՞ տուխուր ըս՜:

Տղան թա. - Թաքավերը ինձանա պահանջըմ ա, վեր ո̈ւրա̀ն հետի մին հեռու տեղա մին ախճիգյ պերիմ, վերը օնի քառասուն քամու մընան վազ տըվող կով:

Ծին թա. -Ցըես ճընանչըմ ըմ ընդրան նան ընդրա կըվերին, ամմա տա շատ տըժեր խնթիրք ա, դե վեչինչ, էտ էլ կանինք:

Տըղան առավոտը ճընապարվըմ ա: Շա̀տ ա քյինըմ, թա խըրե՜կ, վերչը հըսնըմ ա մին մըեծ ամարաթի: Էտ ամարաթին քըշտին եր ա կյամ ծիյան:

Ծին թա.-Հես է, ըստեղ ա ապրըմ էն ախճիգյը: Մունք պիտի նի մըննինք դա̀րբա̀զավը, վեր հասնինք փա̀լա̀քա̀ններին, էն վախտը տու մին դո̈լին կյո̈ղը կկենաս, յըես՝ էն մին դո̈լին: Քըշերավ շո̈ւտ նա տո̈ւս ա կյա̀լու իրեսը լըվանա. դա̀ստի կըփըռնիս ընդրա մազերան: Հիշքան վեր ղաչանք անի, պեց չի թողիս, ամմա վեր ասի. «Իմ մոր հալալ կաթնը վկա, յըես քունն ըմ», պեց կթողիս:

Իտի էլ անըմ ըն: Էտ տըղան պեց չի թողում, ամմա վեր ասըմ ա. «Իմ մոր հալալ կաթնը վկա, յըես քունն ըմ», պեց ա թողըմ: Ընդրանք էրկուսավ ծի յըն նստում, կյա̀մ սըեվ աշխարքին թաքավերին կոշտը:

Էն մին քըշերավը թաքավերը կանչըմ ա տըղին, ասըմ. — Մնացալ ա մին խնթիրքս, թա էն էլ կադարեցիր, սաղ-սալամաթ կըրքյինա̀ս ծեր լուսավեր աշխարքը: Տու պիտի ինձ հետի պերիս էն ըխճըկանը քառասուն շո̈ւտ վազ տըվող կովերը: Ընդրանց կաթնը մարթին թա̀զա̀դա̀ն ջա̀հիլցնըմ ա:

Էտ տըղան էլիա տուխուր քյինըմ ա ծիյին կոշտը, լըխ նաղլ անըմ:

Ծին մին խիլլա մտըծելանը ետը ասըմ ա.- Տա մեր օժը պատիլ չի՛: Ըտրա մասին քյինի էն ըխճըկանան հըրցըրու:

Տըղան կյամ ա ըխճըկանը կոշտը: Ախճիգյը վեր ընդրան տեսնըմ ա, իտի տըխուր լա̀ց ա ինըմ: Տըղան լոխ նաղլ ա անըմ:

Ախճիգյը ասըմ ա.- Դո̀ւզ ա, տա քու օժատ երը կործ ա: Ինք առ էս մտանին, քյինի ծիտ նստի, ճընապա ընգի: Վեր հասնիս ճընապարին կըեսը, էն վախտը շատ հեռու կովերը ըրվալու յըն: Էտ մըտանին թափ կը տաս օթըմը: Ընդրանք վեր տեսնան մըտանին, յրա յըն պըռծնելու, վեր քյըեզ պո̀ւզըհարին, դա̀ստի ետ կըտեռնաս, փախչի՛ս: Ծիյիտ կոխկին ինդի կթըխիս, վեր կովերը կարին վեչ ծըեզ հասնին:

Տըղան իտի էլ անըմ ա: Ծիյին կոխկին հենց թըխըմ ա, վեր կովերը կարըմ չըն հասնի՛ն: Վեր մըտանին տըեսնըմ ըն, մին ահռելի ծեն ըն հանըմ, ընգնըմ տըղին հետան, կյամ հասնըմ դըրբըզին:

Էտ վախտը ախճիգյը տո̀ւս ա կյամ դըրբըզան, ասըմ.- Այ կովե՛ր, կաղնեցի՛ք, ծըեր տա̀րը ըստեղ ա՛:

Թաքավերը օզըմ ար փըսակվի էտ ըխճըկանը նըհետ, ամմա ախճիգյը աթկազ ար անըմ: Կովերը պիրելանը ետը թաքավերը կըթիլ ա տամ, կյամ ըխճըկանը խնթըրըմ, վեր կյա ո̀ւրա̀ն էտ կաթնավը լըղըցնի, վեր ջա̀հիլանա: Ախճիգյը կաթնը իփ ա ածըմ, ածըմ թաքավերին կըլխին, թաքավերին ըսպանըմ: Ըտեղ տըղան նան ախճիգյը ո̀ւրո̀ւր նըհետ փըսակվըմ ըն:

Մին օր տըղան ասըմ ա, վեր ինքը քյինիլ պիտի վըեղը պերի: Ախճիգյը ընդրան մին դո̀նըմ պաչըմա ճընապա տինըմ:

Տըղան շատ ա քյինըմ, խրեգյ ա քյինըմ, հասնըմ ա մին ծովի դրաղ: Ըտեղ ծիյան եր ա կյամ:

Ծին ասըմ ա.- Ցըես նի մննիմ ծովը, ընդեղ շատ էքյ նան վերց ծիյանք կա, թա էքյերին կոշտը ընգի, անպաճառ վըեղը կըպերիմ, թա վերցերին կոշտը ընգի, գյիդա̀, վեր յըես կյա̀լ չը՛մ: Էն վախտը ծովին ճո̀ւրը ա̀ռնոտ ա տըեռնալու, տու կարող ըս քյըեզ ծովը քըցիս:

Ծին ասըմ ա, պըրծըըմ, ո̀ւրա̀ն ծովը քըցըմ: Ընգնըմ ա էքյ ծյանցը կոշտը, լըխճին հախտըմ ո̀ւրա̀ն կըճեղակավը վըեղ յոր օնըմ ծովին տական, տո̀ւս կյա̀մ: Հա̀լա̀ միչև էտ, վեր ծին կըռեվ ա անըմ էքյ ծիյանցը նըհետ, յարալու յա տեռնըմ, ծովին տական ճո̀ւրը մին խրեգյ կյրմըըմ ա:

Տըղան, վեր էտ տըեսնըմ ա, օզըմ ա ի̀րա̀ն ծովը քըցի: Բիրղա̀ն ծին ըրվըմ ա:

Տըղան ընդրա վըեննին կըճըղակին ղաթըմը պերած վըեղը յոր ա օնըմ, ածըմ մին յալլուխի մեչ, տինըմ ջուբումը, էտ տեռնըմ ի̀րա̀ն սիրած կընգանը կոշտը: Մին քանի վըխտանը ետը էտ տըղան կընգանը թողըմ ա ըտեղ, ինքը քյինըմ հորը պալատը: Վեր հասնըմ ա, ծին տանըմ ա կյումումը կապըմ, ղամշին թաքուն տանը ի̀րա̀ն տընղան կախ տամ, վըեղը տանըմ տամ թաքավերին:

Հա̀րը վեր տեսնըմ ա, մաթ ա մընըմ, եր ա թըռչըմ տեղան, ասըմ. -Էտ քու պենըտ չի, էտ իմ ծիս ա պերա՛լ, քյինի շուտ ծիս պեր, յըես ընդրանա հըրցընիմ:

Տըղան վազ տալավ, քյինըմ ա, թա̀ ծին պերի, հենց համին էն տըեղը պըտահըմ ա էն պառավ մարթին:

Տա հըրցընըմ ա թա.- Ա՛ բալա, իտի թըմթամնած էտ խե՞յըս վազ տամ: -Քյինըմ ըմ ծին պերիմ:

-Պա առանց ղամշո՞՛ւ: Դե՛, էտ տըեռ քու հոր ասի, վեր քու ծիտ իտի յա, խե՛ յըս ինձ ղարկըմ ընդեղ, խըեգյ մնաց, թա ինձ ըսպանի:-Տըղան իտի էլ անըմ ա:

Էտ վեր հա̀րը լըսըմ ա, ըջըղված քյինըմ ա ծիյին կոշտը, ղամշին մըտան քըցած ա ինըմ. ծին մուտանըմ ա ընդրան, ամմա հիշքան ասըմ ա. «Յըես քու տա̀րըտ ըմտ, ծին լըսըմ չի՛, ըսպանըմ ա ընդրան: Տըղան ուրխանըմ ա, ազադվըմ տանջանքից, քյինըմ ի̀րա̀ն սիրածին կոշտը: Հնդրանք հասին ի̀րա̀նց մուրազին, մունք էլ հասնինք մըեր մուրազին:

Ըսօր աշունք ա, վըեսկե աշունք, աշխարքը պըտուղավ լիգյը: Լըցած տրաքըմ ա Երևանին վյըեսկե աշունքին բազարը: Ընդղան էն մըեծ-մըեծ շա̀վթա̀լո̀ցան, վեր մինը խըեգյ ա մընըմ թա մին կիլո ինի, ծըեզ ըմ պըժա̀նըմ, ա հա̀քյա̀թ լըսողնի, ա հա̀քյա̀թ կարթողնի, ա հա̀քյա̀թ լո̀ւս աշխարք քըցողնի, տըրանց անա մին լա̀վ հըսած շա̀վթա̀լի էլ ինձ, վեր էս հա̀քյա̀թը ծըեզ ասեցի:

## 13.ՀԱԲԵՂ-ԿԱՐԱԲԵՂԸ

Մին շենըմ, մին քյոհնա տան մենչի, կըենըմ ին մին մարթ, անըմը Հաբեղ-Կարաբեղ, մին էլ ըտրա կընեգյը: Ըտահանց խոխա չունին:

Էտ մարթը ռանչպար մարթ ար, քըշերավ շուտ քյընըմ ար ուրան կործին, ուրուգյունը կյամ, նըղացած, բըզարած թախտին եր ընգնըմ:

Ըտրա կընեգյը էտ մարթին լավ ար եշըմ, իլած-չիլածան խնայըմ չար, արտը հաց ար տանըմ, եզներըն ար քըշըմ, մաճը փըռնըմ ար, ուրուգյունը վըեր կյամ ար, վըեններըը լվանըմ ար:

Ամմեն ուրուգյուն քոն ինելիս էտ մարթը աղոթկ ար անըմ, թա. - Ա՛յ աստված, մըեզ ապրուստ տո, աշխարքըս կըռն չինի , աշխարքըս լիգյը ինի՛, ամմեն հինչ իժան ինի՛, մունք էլ սաղ-սըլըըմաթ ինինքյ, բազյը մըզանա ռազի ինի, մըեզ թակի վըեչ, տարին լավ, բոլըղ ինի՛, կարկուտը կյա վըեչ արտը տանի՛, եզնեըիս կըեր ինի՛, վըեր ծըմըռնըիան ինին, կըռնըմըս էլ օժ ինի՛, աստո՛ւծ, թըշնամու սըրտավ չանիս, նամուսըս տափը չի քըցի՛ս, ամմե՛ն:

Ասըմ ա, իրեսին խըչըկնքըմ, քոն ըն ինըմ:

Մին օր էլ կընեգյը ասըմ ա, - Հաբեղ-Կարաբեղ, էտ խե՛ էն մնացած մարթկանցը նման ասըմ չըս. «Ա՛յ աստված բազյին թական, կընգա սաղանայոթունան ինձ հեռու պահիս»:

- Բազյին թակին հետի ասալ ըմ, վըեր բազյին աշկը մըզերա քախծըր ինի, ամմա կընեգյը հի՞նչ ա, վըեր յըեs կընգա հետի աղոթկ էլ անիմ, ասիմ. «կնգա սաղանայոթունան ինձ հըեռու պահիս»:

Կընեգյը էտ տըընազը մըտան քըցըմ չի, մըթկըմը ասըմ ա. «Տընազ, էտ ըշտե՞ղ ըս քյընըմ, թա. «Քյընըմ ըմ տընազ տամ». դե լավ, հալբաթ յըես մին հըետ աջըղը կիանիմ, թա յըես՝ յըես ըմ, իտի թողիլ չը՛մ, հալա ըտրան եշի, գյըլաքիս ինձանա շատ ա պեցուր, փասոն ա տամ, գյըռանըմ ա, աղոթկ անելիս ասըմ չի, թա կընանոցը սաղանայոթունան ինձ հեռու պահիս... Դե լավ, հի՞նչ ըմ ասը՛մ»:

Մին օր էտ կընեգյը քյընըմ ա մոտիկ քաղաք Շուշի-Ղըլեն բազարը, իրեք թազա քուլուտակե ծուկնը առնըմ, տանըմ տոն: Քըսօրին մարթին հետի ճաշ տանելիս, էտ ծուկներըը յոր ա օնըմ, թաքուն տանըմ արտը, մարթը վեր ճաշը օտըմ ա, պատառ թեքյ ընգնըմ, թա քոն ինի, էտ կընեգյը թաքուն էտ ծուկներըը տանըմ ա արտեն ծըրին երի ղոլին ըստեղ-ընդեղ

վըեղավ անըմ։ Հենց թաղըմ, վըեր մարթը վար անելիս տըեսնա, յոր օնի։

Կըես սըհաթանը ետը էտ մարթը եր ա կըենըմ, վար անելը սկսըմ։ Լհա վըեր արտին ծըերը միչն վըերչը տանըմ ա, ծո̈ւկները տո̈ւս ըն կյամ։ Էտ մարթը ծո̈ւկները յոր ա օնըմ, տամ կընգանը, ասըմ. - Ա՛յ կընեգյ, տար տանը մին լա̈վ փլավ իփի, էս ծո̈ւկներըն էլ տակեն տիր, ո̈ւրո̈ւգյո̈ւնը կյանք օտինք։

Կընեգյն ասըմ ա. - Շատ լա̈վ կինի, հինչ ըմ ա՞սըմ։

Ո̈ւրո̈ւգյո̈ւնը վըեր տոն ա կյամ, կընեգյը մարթին ծըեռքին ճո̈ւր ա ածըմ, մարթը իրեսը լվանըմա, ետավ կընեգյը ըտրա վըենները լվանըմ ա, ըոըշկետանավը սըրփըմ, ետնան նըստըմ ըն, թա հաց օտին։

Կընեգյը փըլավը պըերըմ ա, ամմա ծո̈ւկնը չի ինըմ։

- Ծո̈ւ կնըն էլ պեր, վեր մինտեղ օտինք։

- Հի՞նչ ծո̈ւկնը, ծո̈ւկնը ըշտըղա յա՞։

- Էն ծո̈ւկնը, վեր արտըմը քյըեզ տվի, պերիս փլավին տակին տինիս։

Կընեգյըն ասըմ ա. - Ա՛յ մարթ, արազ ըս տըեսա՞լ, արտըմը ծո̈ւկնը կինի՞՛, արտը հու կյետ չի՛, ծով չի՛, ծո̈ւկնը արտըմը չի փըսնըմ, հու խոտ չի։

Մարթն ասըմ ա. - Բա մըտատ քըցալ ը՞ս, էն վեր էրկունջի ծիրը քաշելիս, իրեք ծո̈ւկնը ճարեցի քյըեզ տվի։

Կընեգյըն ասըմ ա. - Հաբեղ-Կաբաբեղ, մին տըեղ ասիս վըեչ, քյըեզ յըրա կըծըծաղին, թա արտը վարելիս ծո̈ւկնը ա տո̈ւս եկալ, կասին սոտ ա, կասին, հա̈լբա̈թ արազըմն ա տըեսալ։

Մարթը եր ա կըենըմ ըջըղված, օռված, փըռնըմ կընգանը մին լա̈վ կյոռըըմ, մին լա̈վ թակըմ, մին լա̈վ տըմբզըմ, ճա̈շը իփըմ։

Կընեգյը հարայ ա տամ, ասըմ.- Վա՛յ հարա՛յ, ըսպանի՛ց, ա հըրըվըննե, էտ խե կյամ չըք ինձ էս մարթին ծըեռքան ազադ անիքյ։

Մին մունուտումը տոնը հըրըվըններավ լցնվըմ ա։ Կընգանը մարթին ծըեռքան ազադըմ ըն։

Մարթը ծըռքերին, վյըններին ա անըմ, վեր մին քյոթա̈գյ էլ տա, ամմա թողըմ չըն։

Կընեգյը հըրըվըններին նաղլ ա անըմ էտ ծո̈ւկնին անա, ասըմ ա. - Ա՛ հըրըվըննե, էտ հու՞ վա տըեսալ վեր արտըմը ծո̈ւկնը տո̈ւս կյա, վըեր էս մարթը ինձ թակըմ ա, ինձանա ծո̈ւկնը օզըմ, էս մարթը պըլացալ ա, թա

ըրազըմն ա տըեսալ , գյո՛ւղո՛ւմ չըմ: Ամմա վար ազադ թողիք, էլհա ինձ թակելու յա, լա՛վըն էն ա, ըտրան էս սյո՛ւնան կապիք, մինչև խելքը կըլո՛խը կըկյա, յըես ետավ պեց կը թողիմ:

Հըրևաննին մին էրգյան քյա՛նդիրա՛վ ըտրան կըպոտըմ ըն տանը սյո՛ւնան, տո՛ւս կյամ, քյինըմ:

Կընեգյը փըլավը տանըմ ա քաշի տոնը, կյամ ասըմ. - Ա՛յ մարթ, հենց ա խելքըտ կըլո՛խտ եկած ինի՛, եկ քյըեզ պեց թողիմ:

Մարթն ասըմ ա.- Իմ խելքս միշտ էլ կըլխիս ա ըլա՛լ, թա էն անդեր ծո՛ւկները աշկիս ըրվին վյըե՛չ...

Կընեգյը մարթին քյա՛նդիրը ետ ա անըմ, քյընըմ տակի տոնը, փըլավը ածըմ բո՛ւլո՛ւղին մեչյը, ծո՛ւկները տա կին տինըմ, մինակ կըլխընին պեց անըմ, մընացած տեղերը փլավավը ծասկըմ, պերըմ տինըմ մարթին առաջին: Մարթը սկըսըմ ա օտելը, լհա՛ քըթո՛ւը իրեքինջի դո՛նըմը պերանը տարած, ծո՛ւկնին կըլո՛խը տեսնըմ ա:

Հաբեդ-Կարաբեղը քնենքյ ա անըմ, վեր էլհա ծո՛ւկնը աշկին ըրվաց, շո՛ւտ ա անըմ բո՛ւլո՛ւղը շոռ տամ, մըհեկ էլ սկըսըմ էն մին դո՛լան օտիլը: Էլհա էրկունջի քըթո՛ւը պերանը տարած, մըհեկ էլ էն մին ծո՛ւկնին կըլո՛խըն ա ըրվըմ, էս դյո՛նըմ էլ ա բո՛ւլո՛ւղը շոռ տամ, վեր ծո՛ւկնը աշկին ըրվա վեչ:

Իրեքինջի դո՛նըմը էլհա վեր մին պատառ օտըմ ա, իրեքինջի ծո՛ւկնին կըլո՛խըն ա տո՛ւս կյամ:

Հաբեդ-Կարաբեղը շշկլվըմ ա, ո՛ւրա՛ն կուրցընըմ ա, գյուղո՛ւմ ա, թա ծո՛ւկնին պատկերն ա, վեր Շուշի-Ղըլան առած բո՛ւլո՛ւղին մեչյին ըրվըմ ա, մին էլ ա եշըմ, տեսնըմ ծո՛ւկնին պատկերը չի, լհա՛ ծո՛ւկո՛ւնըն ա, տեղան եր ա թըռչըմ, սունին քըշտին կաղնըմ, ասըմ.

- Ա՛ կընեգյ, շուտ ըրա ինձ սյո՛ւնան կապի, էլհա ծո՛ւկնը աշկիս ըրվըմ ա:

Կընեգյը էլհա մարթին սո՛ւնան կապըմ ա, մինչև լո՛ւս իտի վեչ կընեգյըն ա քոն ինըմ, վեչ էլ մարթը:

Լո՛ւսը պեցվելին նըհետ, կընեգյը ասըմ ա, - Ա՛ մարթ, մըեր էն Ծաղեգյ ընըմավեր կովը, վեր ծընըմ չի, հինչի յա՞ պեթկ, ընդրանա մին օքուտ չօնինք, եր կալ տար Շուշի-Ղալին բըզարըմը ծախի, փողը տոր, ճոթըկ-տոր առ, պեր տոն, յորղան-դո՛շա՛կի իրես-աստառ, ինձ մըհար շորա՛ցու, մին ճոխտ կանաչ ռա՛նգյի սաղրի չըմոշկ, քըթերը կըեռ-կըեռ, էն վըեր

Նա̀րինանց քա̀լվանսարին էն ղաթըմը մին տըռոզ մարթ դո̀ւքա̀ն օնի, ընդեղ իտի չըմըշկնի կա: Ետնան քյըեզհետի չուխա-արխալուղ, դե տըրխնիտ տու անըմ ըս, ետնան լամբի շո̀ւշա, տես-տեն, միկա խոշկյաբա̀ր, ետավ շա̀քա̀ր, սանդր, սապուն, լեղակ, թիլ, ասեղ առ, նի տո խուրջինըտ, օսո̀ւլքըտ քցի՛, եք: Ամմա մղայիթ կաց, քյըեզ կուրցնիս վեչ, մնացած փողըն էլ յըլլեխըմըտ մին պենդ կապի, տիր շըլվարիտ ջուբումը: Դե վեր քյըեզ կուրցունիս վեչ, շո̀րերիտ յրան նշաննի պիտի անիմ:

Էտ կընեգյը պերըմ ա ըտրա մոթալ փափաղը ծիքյ-ծիքյ ընելավ, մին թա̀հրա̀վ պըռտըտո̀ւս անըմ, կըլխին տինըմ, չուխին մեշկին էլ մին մըեծ սիպտակ ռանգյի կրկատան ա քըցում, մին կարկաժի ղաբուղ էլ կոխըմ ա կյոտկեն մեչը, ասըմ,

- Հաբեղ-Կարաբեղ,

Կըլխետ-փափաղը,

Մաշկետ-շափաղը ,

Կյոտկետ-ղաբաղը,

Էլ տու կորչիլ չը՛ս, քյինի Ծաղեգյ ընըմավր կովը կապի քյա̀նդիրա̀վ, քյա̀նդիրին ճոնդըն էլ փըռնի, տար Շուշի-Ղալին բազարը, դասաբ Ավետիսին կոշտը, հունցու մըսացու ծախի:

Վեր մարթը կյուման կովը տո̀ւս ա օնըմ, հղե ինըմ, էտ կընեգյը վազ ա տամ հարանց տոն, ախպորը ասըմ, - Ա՛յ ախպեր, էս քըշեր Հաբեղ-Կարաբեղը իսկի քոն չիլա̀լ: Էտքան ճընապան մինչև Շուշի-Ղալա վըեննավ կտրելու չի քյինի: Մին տեղ նըստելու յա դինջանա, քընավ ա ընցնելու: Տու հետան քյինա̀, ամմա հենց քյինա̀, վեր քյըեզ տըեսնա վեչ, հենց վեր նըստի, դինջանա, քոն ինի, տու յավաշ- յավաշ փափաղը երկալ, մեշկին սիպտա̀կ ռա̀նգյի կըրկատանը պուք տո, կարկաժին ղաբուղըն էլ կյոտկան հանի, ետավ փոխի, քու փափաղըտ տիր ո̀ւրա̀ն կըլխին, մեշկին սիպտակ մեծ կըրկատանը քու մեշկատ կըպցրու, կարկաժին ղաբուղըն էլ կոխի քու կյոտիտ, Ծաղեգյ կովին չաթուն փըռնի, տար Շուշի-Ղալան, Ղասաբ Ավետիսին յրան ծախի, հունցու մըսացուք, փողըն էլ եր կյա̀լ, տար էն լիգյը-լիգյը դո̀ւքա̀ններան ճոթը-կըտոր առ, պեր յորղան-դոշա̀կի իրես-աստառացու, ինձ հետի կանանչ ռա̀նգյի սաղրի չըմշկնի, էտ մարթին հետի չուխա, արխալուղ, լամբի շո̀ւշո̀ւա, շա̀քյա̀ր, սանդըր, սապուն, լեղակ, թիլ, ասըեղ, մին պատառ էլ խոշկյաբար: Մընացած փողըն էլ

յալլըխետ դրաղեն պենդ կապի, պեր ինձ տռ:

Ախպերը ճընապար ա ընգնըմ, քյընըմ, ըտրա հետան հասնըմ, ո՛ւրա՛ն հըռաքաշ ըրած քյինըմ:

Քյինըմ ըն, քյինըմ, էտ Հաբեդ-Կարաբեգը մըթկըմը ասըմ ա. - Հի՞նչ կինի՛, վեր մին խրեկ քոն ինիմ: Շատ ըմ նղացած:

Նստըմ ա մին կանանչ տեղ, Ծաղեգյ կովին պոզերան կապած քյա՛նդիրին մին ճոնղըն էլ ո՛ւրա՛ն վըեննան ա կապըմ, թեքյ ընգնըմ, քոն ինըմ:

Կընգանը ախպերը կյամ ա, յավաշ-յավաշ կովը պեց թողըմ, փափաղը փոխըմ, կըկատանը մեշկան պուք տամ, ո՛ւրա՛ն մեշկին կպցնըմ, կարկաժին ղաբուղըն էլ հանըմ կյոտկան, ո՛ւրա՛ն կյոտին կոխըմ, քյինըմ: Մին պատառ վեր քոն ա ինըմ, Հաբեդ-Կարաբեգը զո՛ւռթնանըմ ա, տըեսնըմ կովը կա վեչ, կըլո՛խը ջջկըլվըմ ա, ճարը կըտրած Շուշի-Ղալին քըեռծը նըյեր պըցրանըմ ա, էտ տըժեր պըեցուր քըրքարոտ ճընապար նըյեր, քըրթընքած, քըրթնուկը ծըլծըլալիս, տըհա՛նիլավ նի մըննըմ Շուշի-Ղալան: Հա՛լա՛ բըզարին հասած վըեչ, տըեսնըմ ա առաչին մին մարթ Ծաղեգյ կովը տանըմ ա, վազ ա տամ մուտանըմ, տըեսնըմ մեշկին մին մեծ սիպտա՛կ կըրկատան, փափաղը պըռտըտո՛ւս, կըրկաժին ղաբուղը կյոտին կոխած:

Ինքը-ինքը ասըմ ա, - Սա ինքը լիա՛ Հաբեդ-Կարաբեդն ա, բա յըե՞ս հու վըմ: Թող մին տըեսնամ հի՛նչ ա անելու: Տա էտ կովը տանողին հետան քյինըմ ա, տեսնըմ վեր էտ կովը տանողը թուշ քյինից ղասաբ Ավետիսին դո՛ւքյա՛նը, կովը, մին խըրեկ չա՛նա՛ թակելանը եդը, ծախից, փողը եր կալավ, յըլլեխըմը կապից, տրա՛վ ջուբումը:

Հաբեդ-Կարաբեգը մըթկըմը ասից.- «Տեսնամ մըհեկ հի՞նչ ա անելու, թա կընգանըս ասած պենները առավ, ուրեմըն տա Հաբեդ-Կարաբեդն ա, բա էն վախտը յըե՞ս հու վըմ»:

Էտ կընգանը ախպերը, քյինըմ ա էն լիքը, տրաքըմ բազարը շոռ կյամ էն միչև պատալոկը տա՛րսա՛ծ ճոթը-կտորին թոփերավը լիգյը մագազինն ին շոռ կյամ, էն հինչ վեր քո՛ւրը ասալ ար, առնըմ:

Հաբեդ-Կարաբեգը քենեքյ ա անըմ, ասըմ, «Հա՛լըա՛թ տա Հաբեդ-Կարաբեդն ա» համ ասըմ ա, համ լափ առոհի ջջկըլվըմ, համ շըշկըլվըմ ա, համ էլհա հըռանցե հետան քյինըմ:

Կընգանը ախպերը ետ ա տըեռնըմ, խուրջինը լիգյը օու՞ւքը քըցած, Շուշի-Ղալին քըերծավը քըշանըմ, ու՞րա՞նց շենին հըղեն ընգնըմ, քյինըմ:

Քյինըմ ա, քյինըմ, հըսնըմ ու՞րա՞նց շենը, նի մըննըմ քըվորը տոնը:

Հաբեղ-Կարաբեղըն ասըմ ա. «Էս մեր տոն նի մըտավ, յըես էլ հըռանցե եշիմ, տեսնամ հի՞նչ ա ինելու: Էս ա լի՞ մըթնըմ ա, թաքուն նի կըմննիմ սրահը, ակուշկավը եշիմ: Թա՞ էտ մարթը նի մըտավ կընգանըս ծոցը, ուրեմն Հաբեղ-Կարաբեղն ա, պա էն վախտը յըե՞ս հու վըմ»:

Վըեր լափ մըթնըմ ա, քըշեր տըեռնըմ, ճարը կըտրած կյամ ա տոն նի մըննըմ, ասըմ.

-Ա՛ տընատա՞ր, հի՞նչ կինի էս քըշեր ինձ ղոնաղ պահիք:

Կընեգյըն ասըմ ա. - Ղոնաղը ածունն ա, խե՞ չընք պահիր համեցեք՛յ, համեցեք՛յ, թող մինը չինի, էրկուսը ինի:

Հաց ըն օտըմ, չայ խըմըմ, էտ կընեգյը եր ա կըենըմ տախտան էրկու՞ ծըեռք յորղան դո՞շակ տո՞ւս օնըմ, էրկու տըեղ քըցըմ ու՞րու՞ր կոխկի, ասըմ.- Դե եր կացեքյ, քոն իլիք:

Վեր ըտահանք նի յըն մըննըմ ու՞րա՞նց տեղերը, էտ կընեգյըն էլ նի յա մըննըմ ախպորը դըվավը, իրեսը էն դո՞լը ըրած քոն ինըմ:

Հաբեղ-Կարաբեղը ասըմ ա. - Ա՛յ քուր, էքուծ ինձ շո՞ւտ եր կկցնիս, օրիշ տեղ ըմ քյինա՞լու:

Կընեգյըն ասըմ ա. - Աշկիս յըան, շո՞ւտ եր կկըցնիմ:

Հենց վեր քոն ըն ինըմ, կընեգյը եր ա կըենըմ, Հաբեղ-Կաբաբե դին շո՞րերը տինըմ ախպորը քըշտին, ախպորը շո՞րերը՝ Հաբեղ-Կարաբեղին քըշտին: Հա՞լա՞ լո՞ւսը պեցված վեչ էտ կընեգյը եր ա կըենըմ մարթին եր կըցնըմ: Տա շո՞ւշո՞ւտ շո՞րերը կյենըմ ա, դեհա՛, դեհա անըմ, էտ տանան տո՞ւս կյամ, քյինըմ:

Վեր մին խըեկ քյինըմ ա, ինքըն ու՞րա՞ն ասըմ ա. - Տոնը իմըն ար, կընեգյըս էլ ար իմը, յըես էլ, յըես, բա էն հո՞ւ վա, վեր կընգանըս նհետ քոն իլա՞վ:

Վեր արևը տո՞ւս ա կյամ, եշըմ ա տըեսնըմ կյեցին շո՞րերը էն մարթին շո՞րերըն ա, ասըմ ա. - Պահովե՞, քյըեզ կընեգյ ասողին օխտը պոստը... Յըես քյըեզ ըսեցե՝ ինձ շո՞ւտ եր կըցըրու, թա էն մարթին:

Ետ ա տըեռնըմ կըզնըված կյամ տոն, թա. - Ա՛ քուր, բա յըես քյըեզ ըսեցի վուչ, ինձ շո՞ւտ եր կըցըրու, տու էն մարթին ըս շո՞ւտ եր կըցրալ:

Կընեգյըն ասըմ ա. -Քյըեզ ըմ շո̀ւտ եր կըցրալ, Կարաբեղ, քյըեզ, էն մարթը հա̀լա̀ քոն իլա̀ ծ ա։

Հաբեղ-Կարաբեղը մաթ ա մընըմ, ասըմ ա. - Հի՜նչ ըսեցեր, Կաբարե՜ղ, բա վեր Կարաբեղը յըես ըմ, բա նա հու վա՞։

- Էն իմ ախպեր Հաբեղըն ա, ե՛ք, ե՛ք, ա մարթ, տոն ե՛ք, մըհեկ հունց ը՞ս, աղոթկ անելիս ասելու վը՞ս թա. «Այ աստված, բա̀զյին պատիժան, կընգա սաղանայոթունան ինձ հեռու պահիս», թա չէ՞։

Հաբեղ-Կարաբեղըն ասըմ ա.

- Հա՛, ասելու յըմ, կըլխավըտ շոռ տամ, ջանըս քը մատաղ, աշկերըտ օտիմ, ասելու յըմ, ասելու։

## 14.ԼԸ՛ՎՌԹՈՒՆԻՆ ՏԸԵՂԸ ՓԻՍՌԹՈՒՆ

Ինըմ ա, չինըմ մին մարթ, մին կընեգյ ա ինըմ: Ըտրանք ո՛ւրո՛ւր նըհետ փըսակվալ ըն թա չէ, միշտ էլ օրին հացին կարոտ ըն իլա՛լ:

Օրվան հացը տոն քըցելի հետի, էտ մարթը քյինըմ ա իլա՛լ ծըմակը, օտելի պըէնէր ճարըմ, մոշ, մըռամոշ, մալինա, սըեզնը, տըեզնը, զըկեռ, մըհասուր, կաղին, տանձը-խընձո՛ր: Ըտրանա կյման սաղ կյարունքը բո՛ւթո՛ւն ժենգյալ, խալյար, խընջըլոզ, ծընեփակ, թուրթունջուկ, ճըրըկուտեմնը, տըեսնը, կըռըմո՛ւզո՛ւկ, փիփերթ, շեպ, կընձըմընձո՛ւկ, պըենջա՛ր, պեխի, շո՛ւշա՛ն, ճըռճըռոկ, պըռավի պորտ, էլ հու՞ վա գյուղա՛մ հինչ ժնգյըլնի յըն քաղալ, պերալ իփալ կըերալ:

Մին դո՛նըմ էտ մարթը քյընըմ ա ծըմակը փա՛ղ անի: Ճընապարին աստուծ-աստուծ անելավ քյընըմ ա, վըեր աստուծ պըենը հաճող անի:

Քյընըմ ա հըսնըմ ծըմակը, ըսկըսըմ փա՛ղ անելը: Մին էլ ա տըեսնըմ, մին խիլլի ճախ մին քո՛լու տակի կյո՛ւտա՛ծ:

Էտ մարթը ճախը յան-յան ա անըմ, տըեսնըմ տակին մին սանդուղ, յըան էլ դուփուլ քըցած: Էտ մարթը շատ ա ուրխանըմ, ածուն փառք տամ, վըեր ախրը-վըերչը ո՛ւրա՛նց ռուզին հըսցրալ ա, մին լիքը սանդուղ վըեսկե-արծաթ ա տըվալ:

Մինչև էտ սանդուղը պըեց անիլը, էտ մարթը հազար տըեսակ լա՛վ-լա՛վ պըէնէր ա մըտածըմ. «Ինձ հըետի շո՛րեր կինի, վըննաման կինի, տըրխընխիս էլ մա՛շա՛լ ա, կընգանըս հըետի շո՛լկվի շո՛րեր կինի, ընդըա թո՛ւմա՛թան կըպըրծընիմ, դե վըսկեղեն կինի, միկա կընգանըս կըտամ, միկա էլ կըծախիմ, տոնըս հացավ, եղը-պիրինձավ կլցնիմ, տանըս կըլխին, տոն կըշինիմ, սո՛ւները վըեսկե, ամման օր չամիչ օտելավ ման կկյա՛մ, իտի լավ կապրինք մարթըկընեգյ մինչև մըեր գյանքին վերչ»: Տա սանդուղը պըեց ա անըմ, հի՛նչ տըեսնըմ... Բո՛ւրդա՛ն մին շահմար օխծ ա տո՛ւս կյամ էտ սանդուղան, փըթաթվըմ էտ անմեղ մարթին վիզավը:

Էտ մարթը վըխելան նըհետ ո՛ւրա՛ն կուրցըրավ, վերչը օշը կըո՛խը հըվաքից, հիշքան օզից էտ օխծան ազադվի, կարից վըե՛ չ:

Ճարը կըտրած ըսկսից դաչանք անիլը էտ օխծին: Ասից.- Օ՛խծ ախպեր, ախեր յըես քյըեզ հի՞նչ ըմ ըրալ, վըր տու ինձ իտի չըրչարըմ ըս, եք, ինձանա եր եք, ճընապատ քյինա՛, ախեր յըես մըեխկ ըմ, բա իտի պըեն կին ի՛:

Օխծը եր չի եկավ, հա̀լա̀ էլ իվիլ ըտրան կոչ ածից, կոխկերքը հոփ տըվավ, ասից.- Բա լիա̀ մարթը չի ինձ էս սանդուղը քըցա՛լ, յըես մարթան իմ աջըղըս պիտի հանիմ, հա̀լա̀ էտ հի՛նչ ա, մին տըես քյըեզ հիշքա՛ն ըմ չըրչըրելու:

Էտ մարթը լըղըպատառ ա տըեռնըմ վըեր տըեսնըմ ա կոխկերքը, մըեշկը լափ ճըռճըռցնըմ ա, հոփ տամ, ըսկըըմ ա ճըղճըղալը, ծըվծըվա-լը, թա.- Հա՛յ, հարա՛յ ըսպանից, եկեք իըրայիս հասե՛ք: Ըտրա ծըենը մին աղվես լըսըմ ա, կյամ, թա տըեսնա՝ տա հինչ պըեն ա:

Աղվեսը ասըմ ա. -Ջըհա̀ննա̀մը թա քյըեզ ըսպանըմ ա, ինձ էլ աջըղ օնիմ մարթկանցան հանելի՛, վըեր տուք խեղճ հեյվաններին միշտ տան-ջըմ ըք, ըսպանըմ, մաշկըմ, հու՞նց ա ինըմ, մըհեկ էլ տու տանջվի, էտ քյըեզ արժանի պատիժ ա:

Էտ մարթն ասըմ ա. -Լա̀վ ա, յըես քը մատաղ, էս դո̀նըմ ինձ քյոմագյ ըրա, ազադի, ետավ տու վըս գյուղում:

Էտ մարթը վըեր շատ ա ղաչանք անըմ, էտ աղվեսը ըղվըսոթուն ա անըմ, օխծին ասըմ.

-Օխծ ախպեր, էտ հի՞նչ պըեն ա, վըեր տու իտի մըեծ մին պըեռնը օխծ ինիլավըտ, էտ պուճուր սանդուղումը տըղվարալ ըս:

Օխծը օզից վըեչ էտ մարթին անա եր կյա, մին էլ մըտածից, թա աղվեսը կգյիդա̀, թա ինքը մին անպըեն հեյվան ա, ծըեռքավը պըեն չի կյամ, մին շընորք չօնի, լո̀քյ ա, լանթ ա: Ըտրա իըետի էլ օխծը քըշանըմ ա, հո̀ւլլո̀ր-պո̀ւլլո̀ր ընելավ քյընըմ, նի մընըմ սանդուղը, ծըլծա̀լվըմ, նըստըմ: Էտ դա̀րըմը աղվեսը սանդուղին տոռնը ծասկըմ ա, էտ մարթըն էլ քլիլլիդը քըցըմ ա յըան, քըլլըմ:

Ետնան ճախս ըն իըվաքըմ, յըա տամ, վառըմ: Օխծը տըրաքըմ ա, էրվըմ: Հա̀մին էտ վախտը էտ լավոթուն չըգյիդո̀ղ մարթը աղվեսին վիզա̀ն պինդ փըռնըմ ա, վիզա̀ն կապըմ, ծառան կախ տամ: Աղվեսը գյուղո̀ւմ ա, թա̀ ո̀ւրա̀ն լավոթունին ա̀վա̀զը մարթը մին լա̀վ պըեն ա օզըմ անի, ամմա տըեսնըմ ա վըեր իտի չի:

Ասըմ ա.-Մա՛րթ ախպեր, ինձ պըեց թող քյինիմ, յըես քյըեզ հի՞նչ փիսոթուն ըմ ըրա՛լ:

Մարթըն ասըմ ա.- Յըես վըեշ մին պըեն չըմ գյուղում, մինակ իմ աշկըս էն ա քու պըծըպածին անըմ մորթուտ յըան:

-Մա՛րթ ախպեր, ինձ ըսպանիլ մի, պո՛ւճո՛ւր ծա՛քյեր օնիմ, մըեխկ ըն, սոված կմըեռնին:

Ամմա էտ մարթը էլ իվիլ ա քյա՛նդիրը ծիքյ տամ, համ էլ աըըմ.

- Բա ըշտըեղ ը՞ն քու ծա՛քյերտ, սոտ ըս աըըմ, ծա՛քյեր չօնիս:

Աղվեսը ղաչանք-պըղատանք անելավ տանըմ ա պո՛ւնը նշանց տամ: Ետավ ծըեն ա հանըմ ծա՛քյերը տո՛ւս ըն կյամ պո՛ւնան, հենգյ ծա՛քյ, ղա՛շա՛նգյ, թոփա՛լ, ամմա սոված, տո՛ւզնը:

Աղվեսը գյուղո՛ւմ ա, թա մարթը վըեր ո՛ւրա՛ն մըեխկը չի եկալ, ծըքյերին մըեխկը կըկյա... Ամմա ըշտըե՞ղ, էտ մարթը վըեր ծա՛քյերին տըեսնըմ ա, ո՛ւրա՛ն մըթկըմը աղվեսի վեց մորթի յա հաշիվ անըմ, թա վըեր տանի ծախի, հի՞շքան փող կփոնի...

Էտ ղա՛ըըմը էտ մարթը սոր տըենակավը աղվեսին բողազը կըտըըմ ա, ետավ էլ տըենակը սըերտը կոխըմ: Էտ վըեր ծա՛քյերը տըեսնըմ ըն, վըխելան նըհետ նի յըն մըննըմ պո՛ւնը:

Էտ մարթը ըտրանց պո՛ւնը ծոխ ա տամ, էտ պուճուր ծա՛քյերին խեխ-տըմ: Ըտրանա ետը ըտրանց էլ ա մաշկըմ: Տըեռնըմ ա աղվեսի վեց մորթի:

Տա յոր օնըմ, կյամ տոն, կընգանը լոխ նաղլ անըմ, կընգանը քյեփը կյամ ա ըտրա արածան: Աըըմ ա.-Շատ լա՛վ ըս ըրա՛լ, կըտանիս քաղաքըմը ծախիս, լա՛վ-լա՛վ պեններ առնիս, պըերիս:

Էտ կընեգյը ինքը խոխա չօնար, ըտրա հետի էլ գյուղո՛ւմ չար, թա հինչ պըեն ա մար ինիլը, ըտրա իրետի էլ սըերտը քար ար, խըեղճը մըեռած, ըտրանք ո՛ւրա՛նց գյանքըմը էլիա շատ տըժըըրոթուն քաշեցին, իտի էլ մըեռին:

## 15.ՊՈՒՃՈՒՐ ՀԱՐՍԸ

Ինո՛ւմ ա, չի ինո՛ւմ մին մարթ ա ինո՛ւմ: Էտ մարթին ինո՛ւմ ա իրեք տղա: Վեր էտ տղերքը մծանըմ ըն, հա̀րը ըստրանց փսակում ա:

Սո՛ւվթա̀ փսակում ա էրկու մեծ տղորցը: Վեր տրանք փսակվում ըն, ամմենը սկսում ըն բդի ո՛ւրա̀ն ծիքյ տալը, վեր ո՛ւրա̀նց հետե տոն տինին:

Մին խոսկավ, ըտրանց տոնը մին տեսակ շաղ եկած ար: Հիքը պուճուր տղան մծանում ա, հա̀րը ընդրան էլ ա փսակում, ամմա էս մին հարթնը լոխճան լա̀վն ա ինո՛ւմ:

Տա սկսում ա տոնը կարքի պիրիլ, ետավ էլ ասում ա. - Օրաս ետը հու վեր հանդան տոն կյա, թող ո՛ւրա̀ն նիետ մին պեն պիրի, ինի քար, փաղ, շո՛ր, ուտելի պեն, իտի շատ պեներ:

Տրանք պուճուր հարթնանը ասածը ըսկանում ըն, իտի էլ անում ըն: Տրանից ետավ էլ սկսում ա ո՛ւրա̀նց տոնը կարքի կյալը, ո՛ւրո՛ւր նիետ ապրում ըն սիրավ, օրախ:

Մին հետ մեծ ախպերը, մին էլ պուճուր ախպերը հանդան կյամ տեղը մընըրներան ընգնում ա, վեր մին պեն պերին:

Կյամ ըն ո՛ւրանց տանը տակին մընըռեն ա ընգնում, ո՛ւրանց պուճուր հարթնեն ասածը: Ետ ըն քյինո՛ւմ, ո՛ւրա̀նց իրեանին չափարին տական մին քար յոր օնում, վեր պիրին:

Տեսնում ըն, վեր էտ քարեն տա կեն մին պեն կա պսպղե տամ: Էտ քարեն տեղը մին օրիշ քար ըն տնո՛ւմ, էն քարը պիրո՛ւմ տոն: Գլիղա̀լա̀վ, վեր էն քարեն տակեն վըեսկե կա, վեչ մինին վեչ մին պեն չըն ասում, սուս ու փուս կյամ ըն տոն, հաց օտում, քոն ինո՛ւմ , վեր լոխ քնավ ըն ընընում, էտ էրկու ախպերը, եր ըն կենում, քյինում էտ վըեսկեն տո՛ւս օնում, պերում տոն, մին էլ էն քարը տնո՛ւմ տեղը, վեր գյիղա̀ն, թա ծեռք նի եկած չի՛: Տրանա ետը սկսում ըն առոք-փառոք ապրելը: Ո՛ւրո՛ւր ջան ըն ասում, ջան ըսկանում:

Մին հետ էլ մեծ ախպերն ասում ա. - Ա՛խպեր, քանի մունք սերավ ընք, ո՛ւրո՛ւր նիետ կռվալ չընք, եկեքյ ո՛ւրո՛ւր անա տո՛ւս կյանք, թա չէ, վեր կռվելավ տո՛ւս կյանք, լա̀վ չի ընիլ:

Էտ ախպերքը մեծ ախպորը ասածը ըսկանըմ ըն: Ըտրանք ըսկըսում ըն ճոկվելը: Ասըմ ըն, վեր լոխճան խելունքը մեր պուճուր հարթնըն ա, թող նա փայ անի: Էտ հարթնը քթա̀ծ վըեսկեն, տանը իլա̀ծ ապրանքին նիետ

էրկու տեղ ա փայ անում, քոռ հ՛որն էլ մին տեղ: Քթ՛ած վըեսկեն մին էլ տանը ապրանքը ընզնում ա մեծ նան մաշնակ ախպորը, պուճ՛ուր ախ-պորը՝ քոռ հ՛որը: Սրանք ամեգյը ՛ուր՛անը փայը յոր օն օնում, տոնը թողում մեծ ախպորը, ՛ուր՛անք տ՛ուսկյամ:

Պուճ՛ուր հարթնը ՛ուր՛ան մարթին ասում ա. - Ըստեղ կենանք, հի՜նչ անինք, եք քյին՛անք քաղաք, մըզհետե տոն շինինք, ընդեղ ապրինք: Էտ հարթնեն ասածը մարթըը սկանում ա, տի էլ անում: Ո՛ւր՛անց քոռ հորը յոր ըն օնում, քյին՛ում բըի քաղաք: Մարթը-կնեգյ էտ պառավին շատ ըն սիրում: Հղեցը տղան շլ՛ակած ա տանում, վեր նըղանում ա, մին էլ հարթ-նըն ա շլ՛ակում:

Վերչը շատ ըն քյին՛ում, թա խըեգյ ըն քյին՛ում, տա մունք գյուղ՛ում չընք, հղեցը էտ հարթնը մեռնում ա: Տըղան ըտրան թաղում ա ըտեղ, մին էրկու օր ըտեղ մնում, էրկու օրանը ետը հորը շլ՛ակում ա, քյին՛ամ քաղաք: Թա շատ ա քյին՛ում, թա խըեկ, վերչը հըսնում ա քաղաք:

Էտ քաղաքումը մին հարուստ մարթ ա ին՛ում, քյին՛ամ ա ընդեղ, տրան հետե փ՛ահըլթուն անում:

Մին քանե տարե կնալանը ետը, էտ հարուստ մարթին ախճիգյը սիրահարվում ա էտ տղին յրա: Ընդրան խնթրում ա, վեր ՛ուր՛ան օզի, ամմա տղան ասում ա, - Չէ, յըես օզում չըմ փսակվիմ:

Էտ ախչիգյը տըեսնում ա, վեր առանց ընդրան չի կարում ապրի, խնթրում ա հորը, վեր ընդրան մին լ՛ավ կործի տինի, վեր ընդրան տինի դ՛ուքյ՛անումը, վեր տրանավ էտ տղին բըի ՛ուր՛ան քաշի:

Հ՛որը ըխճըկանը սըերտը գյիղ՛ում չի, թա հինչու հետե յա իտի ասում, ամմա վեր ինքը շատ ար սիրում ըխճկանը նրան ասածը կաղարում ա:

Հ՛որը էտ փահլին տնում ա դ՛ուքյ՛անումը: Տա ընդեղ կործ ա անում, էտ հարուստ մարթին ապրանքնին ծախում, ամսական մին քանե մանեթ ստանում, տրանավ ինքյը նան ՛ուր՛ան քոռ հ՛որը ապրում ըն: Հարուստին ախճիգյը էլիա յա խնթրում էտ տղին, վեր ՛ուր՛ան օզի:

Էս դ՛ոնում էլ էտ տըղան ասում ա. - Իմ սրտումըս մին պեն կա, թող տեղ տամ, ետավ:

Էտ ախճիգյը ասում ա. - Հի՞նչ կա, ասե, վեր յըես քյ՛ոմ՛ագյ ինիմ քյըեզ, վեր դիլ՛ակտ շ՛ուտ տեղ տաս:

Էտ տղան էլ ասում ա. - Յըես ըստեղ կյամ վախտը հղեցը կնեգյս

մեռնըմ ա: Ցըես ընդրան պարտական ըմ, ընդրա հնգյիստին քար պեղմա քցիմ, համ էլ վըեսկե տառերավ յրան անըմը կյիրիմ: Մին պեն էլ կա, վեր տու իմ հա̈ր պահիլ չը՛ս, տու հարուստ մարթի ախճիգյ ը՛ս, տու տի մարթկանց եշիլ չը՛ս:

Ըտեղ ախճիգյն ասում ա. - Ցըես քյըեզ ըմ կյամ, վեր տու ընդրան իտի յըս եշում, յըես տրա հետե քյըեզ շատ ըմ հավան:

Տղան էլ ըտեղ ասում ա. - Մինա̈կ հորս լա̈վ եշիս, յըես քու ասածտ կանիմ:

Վերչը էտ տղան ո̈ւրա̈ն կընգանը հա̈նգյիստին քար ա քցում, վըեսկե տառերավ յրան կյիրում, վեր քարը քըցում ա, պրծնում, կյամ ա, վեր էտ հարուստեն ըխճկանը ծզի, էտ մարթը ո̈ւրա̈ն ըխճըկանը տամ չի ասում ա. Ցըես հարուստ մարթ, իստի ընըմատար, յըես իմ ախճիգյըս տա՛մ մին քյա̈սիբ մարթո՞՛ւ, վեր վեչ մին պեն չօնե՛, չէ՛, յըես տամ չը՛մ:

Ըստեղ ախճիգյը ասում ա.- Ա՛ հա̈ր, օզըմ ըս տո, օզըմ ըս տալ մեր, յըես քյինո̈ւմ ըմ էտ տղեն:

Ախճիգյը ո̈ւրա̈ն ասածն անում ա:

Էտ տղան քյինո̈ւմ ա էն ըխճկանը օզում, պիրում: Նորու հըրսանեքյ ըն անում, առոք-փառոք ապրում: Էտ մին հարթնըն էլա լա̈վը ինո̈ւմ, ո̈ւրա̈ն պտրունին ամմեն օր լղյցնում ա, տաք խորագյ ա տամ, տինո̈ւմ ա տեղըմը, քընըցնում: Միշտ էլ էն պառավը օրախ ա ինո̈ւմ, ո̈ւրա̈ն հարթնավ նան տղենավը, վեր տրանք իտի ասըլ ըն:

Մին հետ տրանց տոնը էրկու փայ հվաքող ըն կյամ: Էտ հարթնը պիրում ա տրանց հաց տամ, տրանք յոր ըն օնում, քյինո̈ւմ: Տրանց ծենը վեր հա̈րը սկանում ա, սկսում ա լա̈ց ինիլը: Հարթնը զյիղո̈ւմ ա, թա վեր հաց ա տվալ ընդրանց, տրա հետե յա լա̈ց ինո̈ւմ

Ո̈ւրո̈ւզյո̈ւնը վեր մարթը կյամ ա տոն, տրան ասում ա. -Ըսօր մեր տոնը էրկու փայ հվաքող ըն եկալ յըես ընդրանց հաց ըմ տվալ, տրա հետե ապերը սկսալ ա լա̈ց ինիլը:

Մարթն էլ ասըմ ա. - Ո̈ւրա̈ն հաց ը՞ս տվալ:

Ասում ա.- Հաց ըմ տվալ, համ էլ լըղըցրալ ըմ: Մինա̈կ զյիղո̈ւմ չըմ խե յա լա̈ց իլա̈լ:

Մարթը, վեր տա սկանում ա, տո̈ւս ա կյամ տոռնը, էրկու խոխա ղարկում էտ փայ հվաքողներեն հետան: Ընդրանք քյինո̈ւմ ըն, տեսնըմ էտ

փայ հվաքողնին մին թոռնի քշտի նստած: Տրանց յոր ըն օնում, պիրում էտ մարթին կոշտը:

Քշերը տա մին վեչխար ա մորթում, տրանց ղոնաղ անում: Վեր հացը օտըմ ըն, պրծնում, տրանք տո̈ւս ըն կյամ վեր քյինան, էտ մարթը թողում չի́:

Պիրո̈ւմ ա, տրանց տեղը քցում, տրանք ընդեղ քոն ըն ինո̈ւմ:

Էքսը եր ըն կենում, սկսում հարցըփորց անելը: Տեսնում ըն վեր տրանք ո̈ւրա̈ն ախպերքյն ըն, հա̈րն էլ տրանց ղա̈րղա̈ն ա լաց իլա̈լ, վեր տրանք տի քյա̈սիբա̈ցալ ըն, փայ հվաքող ին տեռա́լ:

Պուճուր ախպերը տրանց տանում ա ղո̈ւքյա̈նը, ամմեն հինչա տամ, համ էլ ասըմ. - Ա́խպերքյ, պա էնքան վըեսկեն, էնքան ապրանքը ծըեզ տվենք, հի́նչ ըրիք, վեր մըհեզյ էլ հաց հվաքող ըք տեռալ, խե՞ էնքանը ծեզ հերիք չըե՞րավ: Ինձ հի́նչ ըք տվա́լ, մին քոռ հա̈ր, տրանա կման էլ վեչ մին պեն:

Ախպերքյն էլ ըսեցին. - Մունք ըպրելու թա̈հրը գյիդում չը́նք, վեր գյիդանք, իստի չընք տեռնա́լ:

Ասըմ ըն, ո̈ւրանց տեսը-տենը յոր օնում, քյինո̈ւմ :

Տրանք քյինո̈ւմ ըն տոն, ո̈ւրա̈նց պուճուր ախպորըն անա նաղլ անում, ո̈ւրա̈նք էլ սկսում լա̈վ ապրուստը, պուճուր ախպորը ո̈ւնգյո̈ւնա̈վը:

## 16.ԻՄԱՍՏՈՒՆՆԻՆ

Ինըմ ա, չի ինըմ իրեք ախպեր ըն ինըմ: Տրանց ինըմ ա մինա̀կ մին եզնը: Մին օր էտ եզնը կյուղանըմ ըն: Ըտրանք քյնա̀մ ըն ամեն տեղ ման կյամ:

Մեծ ախպերն ասըմ ա. - Մեր եզնը կյուղունողեն անըմը Մուսա յա:

Մաշնակ ախպերն ասըմ ա, - Անըմը Մուսա յա, համ էլ բոյը կարճ ա:

Պուճուր ախպերն ասըմ ա. - Բոյը կարճ ա, համ էլ կլո̀խը քաչալ ա:

Ըտեղ իրեք ախպեր քյնամ ըն ման կյամ, ո̀ւրա̀նց եզնը կյուղունողեն ճարին:

Մոտի կյո̀ւղավը անց կնալիս, տեսնըմ ըն մին մարթ, անըմը Մուսա, բոյը կարճ, ինքն էլ քաչալ:

Տրանք տրան յօր ըն օնում, տանըմ պրիստավին կոխկը:

Պրիստավն ասըմ ա. - Հո՞ ր ըք եկալ:

Մեծ ախպերն ասըմ ա. - էտ մարթը մեր եզնը կյուղացալ ա, թող տա:

Պրիստավն ասըմ ա. - Պա հշտե՞ ղան ըք գյուղո̀ւմ, վեր կյուղացալ ա:

Մեծ ախպերն ասըմ ա, - Մունք իմաստուն ընք:

Պրիստավն ասըմ ա. - Դե տուք տո̀ւս եկեքյ:

Պրիստավը պիրո̀ւմ ա դո̀շակեն տակեն մին սրկեվիլ տինո̀ւմ:

Ախպորցը կանչը մ ա, ասըմ.- Տուք թա̀ գյիդա̀ք դո̀շակեն տակեն հի՞նչ կա, էն վախտը ծեր եզնը յօր ըմ ուննական, ծեզ տամ:

Մեծ ախպերը տեսնում ա, վեր դո̀շակեն տակեն մին պո̀ւլլո̀ր պեն կա: Ասըմ ա. - Պո̀ւլլո̀ր ծուվլի նման ա:

Միջնա̀կ ախպերն ասում ա. - Թա̀ ծո̀ւվլի նման ա, տեղին ա:

Պուճուր ախպերն ասում ա. - Թա տեղին ա, սրկեվիլ ա:

Ըստեղ պրիստավը հըվատում ա, վեր տրանք իմաստուն ըն էն մարթին ասըմ ա. - Քյնա, տրանց եզնը տոր ո̀ւրա̀նց:

## 17.ՎԸԵՐՍԿԱՆ ԱՎԵՏԻՍԸ

Ինըմ ա, չինը մ, մին հըլիվեր մարթ ա ինըմ։ Ըտրան ինըմ ա մին կընեգյ։ Ըտրանց խոխա չի ինըմ։ Մարթը քյրնըմ ար վըերս անըմ, կընեգյըն էլ տանը կար, տանը պըեներ ար անըմ։ Ըտրանք իտի մին թա̀իրա̀վ ապրըմ ըն։

Ընդրանք շատ ին քընենքյ անըմ, վըեր ո̀ւրա̀նք խոխա չօնին, վըեր ո̀ւրա̀նց սըերտը դաղված ա, օջաղը հա̀նգյա̀ծ ա։

Մին դո̀նըմ էտ մարթը ծըմակըն ա քյնըմ վըերս անի։ Էտ ծըմակըմը իրեք ըլըբաստրակ, վըեններըը քյաստրա̀կ ա փըռնըմ։ Էտ ըլըբաստրակ-ներին մինը խե՜ շա՜տ դա̀շա̀նգյ ա ինըմ։

Տա էտ հըլիվորին ասըմ ա, - Ա՛յ անճանանչ վըերսկան, մըեզ պըեց թող քյինինք, մունք քյըեզ շատ լըվըթուն կանինք, քյըեզ հըետի, գյանքիտ հըետի։

Էտ հըլիվըերը խոսկ ա տամ, վըեր պըեց կը թողի։

Էտ ըլըբաստրակնին ասըմ ըն. -Քըեզ մին տըղա կինի, ամմա ընդրա ծընվելանը օխտը օր ետը, տու մըեռնելու յըս։

Հըլիվըերը ուրխանըմ ա, ըլըբաստրակներին պըեց ա թողըմ մին պայմանավ, վըեր խոխա չինի, էլիա կյա փըռնի, յետավ կյա տոն։

Անց ա կըենըմ մին խիլլա̀ վախտ, ըտրան մին տըղա յա ինըմ։ Կոզի ինքը օխտը օրան ետը պիտի մըեռնար, ամմա էլիա շատ ա ուրխանըմ։ Վեց օր անց կընալանը ետը հա̀րը էտ տըղին անըմը Ավետիս ա տընում։ Կընգանը կանչըմ ա ասըմ. - Ա՛ կընեգյ, վըեր Ավետիսը մըծանա, տըեռնա տասը տըրեկան, ընդրան դարկի տըրա̀ցուվին կոշտը կարթիլը սըվըերի , կյիրին սնըսիպտա̀կը ճոկի, մըեզ մընան ախմախ չի մընա։ Ընդրանա ետը վըեր հենգյ տարի էլ անց կըկըենա իմ թըվա̀նգյս կըտաս ո̀ւրան, ինձանա էլ նաղլը կանիս։

Էտ հըլիվըերը օրը իրեք դո̀նըմ կյամ ա խոխին ըրորոցին կոշտը, չոքըմ, աղոթկ անըմ, ետավ էլ ասըմ.-Ավետիս ջան, իմ հա̀ր, իմ մար քը մատաղ, մըղափուն վըեր էրգյան գյանք չօնիմ, վըեր բոյըտ տըեսնամ, վըեր էտ ըլըվալավ անըմ իրեսըտ տըեսնամ, էտ սըեվ-սըեվ աշկերըտ, էտ կըեռ-կըեռ ունքերըտ տըեսնամ։

Վըեր վերչին օրը կյամ ա, հըլիվըերը քըշերը քոն իլա̀ծ տեղը հրեշտակ-նին կյամ ըն, թա տանին։ Տա դաչանք ա անըմ, վըեր թողին՛ ո̀ւրա̀ն խոխին

մին հետ պաչի:

Հըրեշտակնին թա.- Դե շո՛ւտ ըրա, թայդի յընք, օրիշնըրերին հետան էլ պիտինք քինիլ, հու մինա՛կ տու չըս:

Հըլիվերը մին էլ խոխին պաչից, ասից. - Ավետիս ջան, դե ինձ տանըմ ըն մըթեն աշխարքը, տու քու հոր օջաղը ավադ կանի՛ս, թըշնամու սըր-տավ չանի՛ս, նամուսավ կինի՛ս, ղեյրաթավ կինի՛ս, պատիվ- հո՛ւրմա՛-թավ կինիս, քու մոր էլ լա՛վ կըեշիս, վըեր ասին վըեչ մարթը մըեռած, անդար կընեգյ ա:

Ասըմ ա պըրծընըմ, հրեշտակնին կյամ ըն ըտրան տանըմ, մին պեցուր սարի կըլխի մին ամարաթ ա ընում, էտ ամարաթին սո՛ւթո՛ւնան կապըմ, մին լա՛վ կյոռըմ: Թա էլլա՞ ըլըբաստրակ կը փըռնի՛ ս:

Էտ հըլիվերը տըմանըմ չի, ասըմ. ա - Ամա՛ն, ա՛ հրեշտակնի, ածու սերին, ինձ իտի թակիլ միք, լա՛վըն էն ա, վըեր լի՛ս ըսպանիք:

Էքսը էտ հըլիվերին կընեգյը յեր ա կըենըմ, տըեսնըմ մարթը կա վըեչ: Էն ըլըբաստրակներին խոսկավը գյուղում ա իլա՛լ, վըեր մարթը մըեռնելու յա: Ըսկըսըմ ա լաց ինիլը, ծընգները թակիլը: Ըտրանա յետը մարը տըղա ապըըմ ըն:

Տըղան մըծանըմ ա, տըեռնըմ տասը տըըեկան մին դա՛շա՛նգյ, շենքավ-շընորքավ տըղա, խելունք, ծըեռքավը պըեն եկող, ինքն էլ ղոչաղ, վախ էլ չօներ, քյընըմ ար ծըմակը, թա ծըեռքավը աղվես, ըլըբաստրակ փռնի, պերի տոն: Ամմա մարը թողըմ չար: Ավետիսը վեչ թա տարավ ար մըծանըմ, այլ օրավ: Հա՛լա՛ տասը տըըեկան ար, վըեր եշողը գյուղում ար, թա քսանըհինգ տըըեկան ա: Ծառեր ար պուկում, վարար կյետերավ անց ար կըենըմ, ծըմակին հեյվաններին քարավ ըսպանում ար: Հունցը հա՛րըն ասալ ար, մարը Ավետիսին տանըմ ա տըըա՛ցուվին կոշտը: Տըրա՛ցուն մին խըրեգյ կյիրիլ-կարթիլ ա սըվըրցնըմ, ամմա փող չինելի հետի, էլհա տո՛ւս ա կյամ, քյընում դիբի ծըմակը:

Մին դո՛նըմ ծըմակըմը էն իրեք ըլըբաստրակը կյամ ըն ըտրան ըռուջահ ինըմ, հըրցընմ, ասըմ.

- Հու՞ր տըղա յըս:

Ասըմ ա.-Ցըես Ավետիսըն ըմ, էն հըլիվեր վըերսկանին տըղան:

Ըլըբաստրակնին դա՛ստի ճընանչըմ ըն, իրեք վըեսկե յըն տամ, տոն դարկըմ: Ավետիսն էլ պերըմ ա մորը տամ:

Մին օր էլ մարը տեսնըմ ա, վեր Ավետիսը թաքուն օզըմ ա պըցրանա, հորը թըվանգյը պատան յոր օնի։ Մարը թըվանգյը տամ ա տըղին, համ էլ հորն անա նաղլ անըմ։

Մին օր էլ Ավետիսը թըվանգյը օսավը քըցած կյամ ա տոն, ասըմ, - Ա՛ մար, յըես բիդի քյինամ իմ հոր ճարիմ։

Մարը թողըմ չի։ Ամմա Ավետիսը լըսըմ չի մորը, քյինո՛ւմ ա։

Քյընըմ ա, քյընըմ, հըսնըմ մին մըթեն ծըմակ։ Ըտըղան մին խոխի ծեն ա լըսըմ։ Ավետիսը վազ ա տամ քյընըմ, տեսնըմ քյարվանան յետ մընացած մին խոխա յա, կյո՛ւլերն էլ յրա տեռած օզըմ ըն, թա ըտրան օտին։

Տա թըվանգյը յրա յա անըմ, կյո՛ւլերը փախչըմ ըն, խոխան ազադվըմ ա, ասըմ, - Թա վըեր կարիս ինձ տանիս մըեր քյարվանին հըսցընիս, իմ հար քյըեզ մըեծ հարըստութուն կըտա։

Ավետիսը էտ խոխին շըլակըմ ա, տանըմ դիբի ինդի, ըշտեղ էտ խոխան նշանց ա տամ։

Քյընըմ ըն, քյընըմ, վերչյը հըսնըմ ըն Շուշի-Ղալին քըմակի դոլին մին պեցուր, պո՛ւլլոր թումբի։ Ըտըղան եշըմ ըն տեսնըմ բիդի Կըրկըժան շենին դո՛լը էնա կյետին կոխկին չադիրնի կա եր թողած, ծոխ ա պըցրանըմ։ Ըտրանք քյընըմ ըն հըսնըմ էտ կաղնած քյարվանին։ Էտ պուճուր տըղին հարը, վըեր շատ ար ո՛ւրան տըղին հետան ման յեկալ, ամմա քըթալ չար, շըներին սասին յըրան եր ա կենըմ տո՛ւս կյամ, տեսնըմ էն ա կյամ ըն։ Հարը, մարը շատ ըն ուրխանըմ, Ավետիսին տանըմ ըն լոխան լավ չադիրը, լավ ուտուցընըմ, խըմըցընըմ, փափուկ յորղան-դո՛շակին մեչին քընըցընըմ։ Էքսը վըեր եր ըն կենըմ, հարն ասըմ ա, - Ավետիս, վըեր տու իմ խոխիս քըթալ ըս» սաղ-սալամաթ պերալ, իմ հարստութունիս կըեսը քյըեզ ըմ տամ։

Ավետիսն ասըմ ա. - Յըես քյըզանա վըեչ մին պեն չըմ օզըմ, լա էս քըշեր էլ թողեցիք ըստեղ կենամ, էքյուց կը քյընամ։

Ըտրա հետի լավ տեղեր ըն քըցըմ։ Տա քոն ա ինըմ։ Էքսը ըռավոտը վըեր եր ա կըենըմ, տեսնըմ ո՛ւրան փըըթաթալ ըն մին քո՛հնա գյաբի մեչի, քյարվանն էլ թողալ ա քյեցալ։ Ավետիսը հըսկանըմ չի, թա խե՞ յըն իտի ըրալ։ Օզըմ ա ետ տըեռնա տոն, մին էլ ասըմ ա. «Մին տըեսնամ ըստեղերք հի՞նչ կա, իմ մար ասալ ա թա՛, վըեր քյարվանը քյընըմ ա, բիդի քյինիս, ման կյաս տըեղը, տեսնաս հի՞նչ ըն թողալ, հի՞նչ չըն թողալ»։

Տա ետ ա տըեռնըմ ման կյամ, տըեսնըմ մին մըեծ, հ՚ննգյած կրակի կոխկի մին կյ՚ոտի, մին թ՚ոււթ՚ագյ, մին էլ մին ճաղավ ըրած փափաղ։ Տա լոխ յոր ա օնըմ, կյամ տոն։

Հըսնըմ ա տոն, տըեսնըմ մարը էնա լ՚աց ին՚ում, գյուղ՚ում ա, թա տըղան կորալ ա, կյ՚ոււլի փայ ա տըեռալ։

Վըեր տըղին տըեսնըմ ա, շատ ա ուրխանըմ, ասըմ ա, - Խե՞ յըս էքան ետացալ, բա վախըմ չը՞ս ծըմակին ջ՚ան՚ավարներան։ Ավետիսը լոխ մորը նաղլ ա անըմ։ Մարը էտ պեները յոր ա օնըմ, թող անըմ, քըցըմ մին պոճախ։ Տղին էլ ասըմ, վըեր քյինի Ղալին էն լիքը բըզարան օտելի պեներ առնի, պերի։

Ավետիսը քյընըմ ա Շուշի-Ղալան։ Նա տըեսնըմ ա, վըեր մին մըեծ, ղ՚աշ՚անգյ տան առաջի մին թուբուն ջ՚ահիլ տըղերք, մին-մին չամաղան ծեռքըներին կաղնած, ըսպասըմ ըն։ Ավետիսը հըրցընըմ ա, թա ըտրանք խե՞յըն իտի կաղնալ, ամմա էտ ջահիլնին ջողաբը տամ չըն։ Տա քյինըմ ա թուշ բազարը, մարը հինչու ասալ ար առնըմ. խնձորին լ՚ավ-լ՚ավ տըղե-րան, տըկողնին լ՚ավ-լ՚ավ տըղերան, շըմբալութին լ՚ավ-լ՚ավ տըղերան, չ՚ամչին լ՚ավ-լ՚ավ տըղերան, նոխուդին լ՚ավ-լ՚ավ տըղերան, խոշկյամբ՚արին լ՚ավ-լ՚ավ տըղերան, փիստ՚աբաղամին, նողըլ-նաբաթին, խուրմա-ծըերա-նին, չոր թոթ-ճըղուպըրին լ՚ավ-լ՚ավ տըղերան, էն իրեք ըլըբաստրակին տրված վըեսկավը առնըմ, ետ տըեռնըմ, թա կյա տոն, տըեսնըմ էլհա էն ջ՚ահիլ, լ՚ավ շ՚որեր կյեցըներին տըղերքը հեն ըն ընդեղ կաղնած։

Ըտրանց մին էլ ա պարով տամ, ամմա էլհա բաղասխանը տամ չըն. ասըմ ա. - Բ՚ալքյ՚աս հայեվուր գյուղում չըք, յա լ՚ավ ըք կյեցված ըտրա հետի՞ յա, վըեր ինձ մըհ՚ալ չըք տընում։

Էտ տըղերքը Ավետիսին փասոնին, ընդրա թևը թեգյունքին վըեր եշըմ ըն ջաներնին տ՚ող ա ընգնում, վըխելնան նըհետ ասըմ ըն. - Սա թաքավերին ըխճըկանը պալատն ա, էտ ախճիգյն էլ դունյա- գյ՚ոզ՚ալի յա, էնքան կյեղեցիկ ա, օզըմ ընք մըեծ կումարներավ բ՚ալքյ՚աս ընդրան տըեսնանք։

Ավետիսը կյամ ա տոն, լոխ մորը նաղլ անըմ։ Ասըմ. -Յըես էլ ըմ օզըմ էն ըխճըկանը տըեսնամ... Մարն ասըմ ա.-Բալա, էտ քու կործտ չի, էտ հու վըեր շատ փող օնի, ընդրան պըենն ա։

Ավետիսն ասըմ ա.-Չէ, յըես քյըն՚ալ բիդիմ տըեսնամ։

Ասըմ ա պըրծընըմ, էն քըթա̈ծ կյոտին կապըմ, քյընըմ։ Մարը տըղին ջուբումը մին քանի կապեկ ար տիրալ, տա վըեր ծըեռքը ջուբն ա քըցում, փողերը թա հանի, տա էտ պալատին տոռնը պահողին, վըեր թողի նի մըննի, տըեսնըմ ա սըեվ փողերը վըեսկե յա տըեռալ։ էտ տո̈ռնը պահողն ասըմ ա. - էտ վըեսկավըետ օրը իրեք դո̈նըմ, ինքն էլ իրեք օր կարող ըս կյաս թաքավերին ըխճըկանը տըեսնաս։

Վըեր Ավետիսը քյընըմ ա, նի մըննըմ, տըեսնում էտ ջա̈հիլնին ո̈ւրա̈նց ափաթ պեներան ըն նաղլ անըմ, ո̈ւրա̈նց դոչաղոթունան, հա՛յ մունք էս արինք, հա՛յ մունք էն արինք, մունք էս ը՛նք, մունք էն ը՛նք։ Վըեր Ավետիսին էտ օթախըմը լոխ տըեսնըմ ըն, սուս ըն անըմ, մըկնին ծակը օխտը թումանավ ճարըմ չըն, թա նի մըննին։

էտ ախճիգյը վըեր Ավետիսին տըեսնըմ չի՛, վըեր ընդրա իրեսկըհատը, բոյը-բուսաթը, շենքը-շընորքը տըեսնըմ չի, սիրահարվըմ ա, լոխճին տո̈ւս անել ա տա՛մ։

Ըտրանք ըսկըսըմ ըն զո̈ւրո̈ւց անելը, սեր փըշրիլը, ո̈ւրո̈ւր խոսկ տալը, ո̈ւրթո̈ւմ-հավատ անի՛լը։ Իստի իրեք օր, օրը իրեք հետը Ավետիսը կյամ ա էտ ըխճըկանը կոշտը։

Չորսինջի օրը թաքավերը հրամմայըմ ա, վըեր ախճիգյը զյիդա̈, թա էտ տըղին, էտ քան փողը ըշտըղա յա։

Թաքավերին ախճիգյը ըտրան քըշերը ո̈ւրա̈ն քըշտին ա թողըմ, վըեր էտ պըենը զյիդա̈։

Ասըմ ա. - Ա՛յ դա̈շա̈նգյ տըղա՛, ա՛յ դոչաղ տըղա՛, ասի տըեսնամ էտքան փողը քյըեզ ըշտըղա՞ յա՛։

Ավետիսն ասըմ ա. - Իմ կյո̈տո̈ւս օժան ա՛, վըեր սըեվ փողերը վըեսկե յա շինը՛մ։

Թաքավերը թաքուն լըսըմ ա, քըշերը թաքուն էտ կյոտին յոր օնըմ, Ավետիսին էլ ըռավոտը ըտըղան տո̈ւս քըցիլ տամ։

Ավետիսը կյամ ա ո̈ւրա̈նը տոն, աշկը ունքան աղու կաթըմ։ Ո̀ւրա̈ն մըթկըմը ասըմ ա, - Մին ա, յըես էս ախճիգյը հինչ էլ ինի բեդմա օզիմ, իմ հոր էլ ըշտըեղ ինի, բեդմա ճարիմ, տոն պըերիմ։

Մարըտըղա էլհա ըսկըըսըմ ըն փիս ապրիլը։

Մին օր մարն ասըմ ա. - Ավետիս, մին էս փափաղը տիր կըլխիտ, բա̈լքյաս ըստրա մաչին մին պըեն կա, մին հո̈նա̈ր կա։

Ավետիսը փափաղը կըլխին ա տընըմ, էլ ըրվըմ չի:

Մարը ընդրան տըեսնըմ չի, ըսկըսըմ ա կանչում ա.- Ավետիս, հա Ավետիս…

Ավետիսը թա. - Հի՞նչ ա, ա մար, ասիլ նըբ՚աստ փափաղը կըլխան յոր ա օնըմ, մարը տըեսնըմ ա, վըեր Ավետիսը էնա հ՚ամին ընդեղ կաղնած, ըշտեղ իլ՚ալ ա:

Ըտեղ մարըտըղա կըլխու յըն ընգնըմ, վեր փափաղը տընողը ըրվըմ չի:

Ավետիսը էտ փափաղը կըլխին տիր՚ած քյընըմ ա թաքավերին ըխճըկանը կոշտը, տըեսնըմ էտ ախճիգյը ուր՚ան դ՚արդ՚ան լաց ա ընում: Փափաղը վըեր կըլխան յոր ա օնըմ, էտ ախճիգյը կյամ ա խըտետը ընդնըմ, պըչպըչորվյըմ ըն: Իտի իրեք օր կըենըմ ըն: Թաքավերը էլիա ըխճըկանը իրամմայըմ ա, վըեր փ՚անդը-փիլը գյիդա, ամմա ախճիգյը ասըմ չի: Կոզի ասըմ չի՛, թաքավերը թաքուն աշկ ա ածըմ, գ՛ուղ՛ում, փափաղը յոր օնըմ, ուր՚ան տ՛ուս քըցըմ» :

Էս դ՛ընըմ Ավետիսը լ՚աց ա ինըմ, կյամ ա մորը կոշտը լոխ նաղլ անըմ: Ըտրանա ետը ըսկըսըմ ա թ՛ութ՚ագյը ածիլը սըվերիլը: Վըեր սըվերըմ ա, ածըմ, մին էլ ա տըեսնըմ ուր՚անց տոնը տըեղան պուք եկավ, քյընից մին հեռու ծըմակըմ կազնից: Մին էլ ա տըեսնըմ չորս դ՛ալան օխծեր, ջ՚ան՚ավ՚արնի յրա յըն տըեռալ, թա նի մըննին… Ավետիսը էլիա ըսկըսըմ ա թ՛ութ՚ագյը ածիլը:Վըեր էրկու հետ ածըմ ա, տոնը էլիա տըեղան պուք ա կյամ, քյինըմ ուր՚ան տըեղը: Էտ պըենը վըեր գյուղ՛ում ա, Ավետիսը քյինըմ ա քաղաք: Էտ ըխճըկանը պալատին առաչին կաղնըմ, տըեսնըմ վըեր ըտրա քյուչին ակուշկավը լ՚ացի, ս՛ըքյի ս՚աս ա կյամ, վըեր էտ ախճիգյը ուր՚ան հետի յա լ՚աց ինըմ:

Ավետիսը ըսկըսըմ ա թ՛ութ՚ագյըն ածիլը: Թաքավերին պալատը տըեղան պուք ա կյամ, թըռչըմ, քյինըմ մին դալին, մըթեն ծըմակըմ եր կյամ, չորս դ՛ուը կյ՛ուլը-կազան , օխծեր:

Թաքավերը իրամման ա տամ սաղ աշխարքին, թա. - Հու վըեր կարի էտ տըժեր տըեղան ուր՚ան ազադի, ախճիգյը ընդրան ա տալու:

Ավետիսը քյինըմ ա, ասըմ: - Թաքավերն ապրած կենա, յըես կկարիմ ազադիմ:

Վըեր թ՛ութ՚ագյը էրկու հետ ածըմա, թաքավերին պալատը տըեղան պուք ա կյամ, թըռչըմ, քյինում ուր՚ան առաչվա տըեղը: Ախճիգյը ուրխա-

նըմ ա, վյըեր ՞ւրա՞ն սիրածին ա արժանանալու։ Ամմա էտ մուռտառ թաքավերը ՞ւրա՞ն խոսկը կադարըմ չի. Ավետիսին անա թ՞ւթա՞գյը ինքյա օնըմ, ՞ւրա՞ն տ՞ւս քըցըմ։ Ավետիսը էլիա լացընելավ կյամ ա տոն։ Դե էլ հի՛նչ անի, կոզի մարը թողըմ չի, ամմա ինքը եր ա կըենում, թա քյինի սըեվ աշխարքը, օշափներին հաղուղին բաղը, ընդրանց ամարաթը։

Տա մին ճըվարան ա յոր օնըմ, հյդե ինըմ, էտ ըխճըկանը պատկերը, իրեսկըհատը աշկին առաչին, սերը սըրտըմը, էտ սերը ըտրան հույսը-հավատ ա տամ, ամեն տըժեր տըեղա կարըմ ա տ՞ւս կյա, օժը իվիլցընըմ ա։

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյընըմ, թա խըրեգյ, աստուծ ա գյուղում, հեռվան հեռու տըեսնըմ ա մին ամարաթի քըեթ։ Քյընըմ ա հըսնըմ ըտեղ, տըեսնըմ հաղուղին բաղին չորս դ՞ւը պըեց՞ւր չափար ըրած, էտ չափարին ցըեվքին պըտկըներին էլ մարթի քյա՞լեքյ նիկոխած... Տու մի ասիլ, էտ մարթկանցը էտ օշափնին ըն կերա՛լ... Ըտահանք Ավետիսին մընան դոչաղ տըղերք ըն իլալ, եկալ ըն ըտեղ, թա ըտեղ մին ջաղու պառավ կա, ընդրանա հըրցընին ՞ւրա՞նց դա՞րդին դա՞րմա՞նը, ամմա կըրացալ չըն։ Ավետիսը էտ պըեցուր չըփարավը պըցրա՞նըմ ա, եր կյամ, նի մընըմ հաղուղին բաղը։ Հաղուղի բաղ, հի՛նչ բա՛ղ, մին ա՞լա՞մա՞թ, մին հըրաշկ, մին ճոկ պըեն։ Մըեծ, լիքը-լըցած, սըեվ նան սիպտակ հաղուղին ճիթերը կախ-կախ իլա՛ծ... Ամմա թա՞նա՞գյին կոխկերքին մարթի չուրացած կըլխընի, չուրացած վըեններ, կըլ՞խ նըյեր կախ տըված մարթիքյ...

Ավետիսը ըտըղան անց ա կըենըմ, քյինում ըտրան կըպած մին օրիշ բաղ։ Ըտեղ տըեսնըմ ա, վըեր օշափնին ՞ւր՞ւր նիետ հ՞ջա՞թ ըն տամ։ Օշափնին ըտրան տըեսնըմ չըն, ամմա օշափներին մարը ըտրան տըեսնըմ ա, հրամմայում ՞ւրա՞ն տըղորցը, վըեր ըտրան կ՞լտան։ Էրկու օշափ կյամ ըն, թա կ՞լ տան, Ավետիսը վըեր ՞ւրա՞ն սորավը նի յա շըլալը՛մ, էրկու օշափին կըլ՞խը պուք ա կյամ։ Իտի լոխ օշափներին կըտորըմ ա, մընըմ ա մարը…

Մար օշափը եր ա կըենըմ կըռեվ անըմ, ըտեղ Ավետիսին սորը կոտրըմ ա։ Ավետիսը դա՞ստի կյոդլ ա կըենըմ։

Թաքավերին ախճիգյը ըրա՞զըմը տըեսնըմ ա, վըեր ՞ւրա՞ն սիրած տըղան նըեղ տըեղ ա... Տա ՞ւրա՞ն փոշտալյոն յըղոնեգյին մին սոր ա տամ, ղարկըմ։ Ցըղոնեգյը սորը հըսցընըմ ա Ավետիսին։ ՞ւրան սիրած ըխճը-

կանան սոըը վըեր ըստանըմ ա, Ավետիսը առե յա դուչաղանըմ, տամ ա, էտ օշափներեն մորը կըլո՞խը կըտըըմ:

Տա ըտըղան քյինըմ ա, վըեր էն ջաղու պառավին քըթնի, հըըցընի, թա հու՞նց բիդի ո՛ւրա՛ն հորը ճարի, հու՞նց բիդի ո՛ւրա՛ն սիրածին արժանանա:

Քյընըմ ա, պըցրանըմ մին սարի ղաթավ, հըսնըմ էն ամարաթին, տըես-նըմ մին մըեծ-էքյա՛ աղու տրվող օխծը էնա ըտեղ- ծիլվծա՛լ իլա՛ծ, կըլո՞խըն էլ տիրած ամարաթին տըռնին քըշտին: Ըտեղ Ավետիսը վախըմ ա: Թաքավերին ախճիգյը էլհա ա՛րա՛զ ա տըեսնըմ, վըեր Ավետիսը նըեղ տեղ ա: Եր ա կըենըմ ո՛ւրա՛ն փոշտալյոն յըղոնեգյին անավ մին մըծըցընող հիլի ղարկըմ: Ավետիսը էտ մըծըցնող հիլին տանըմ ա թաքուն տընըմ էտ շահմար օխծին առաչին: Քըշերավը օխծը զա՛րթնըմ ա, տըեսնըմ, վըեր ո՛ւրա՛ն անա մըեծ մին օխծ էնա ո՛ւրա՛ն թուշումը տեմատեմ կազնած: Էտ օխծը օզըմ ա յրա պըրծընի , ամմա վախըմ ա, վըխելան նըհետ քյինըմ ա ընզըմ ծովը:

Ավետիսը եր ա կըենըմ, քյրնըմ, թա ամարաթը նի մըննի, ամմա տըեսնըմ ա տըռները պենդ ծասկած: Հիշքան չըրչարվըմ ա, կարըմ չի պեց անի:

Տա ըտեղ մին խիլլա՛ կըենըմ ա: Թաքավերին ախճիգյը էլհա ա՛րա՛զըմը տըեսնըմ ա, վըեր Ավետիսը նըեղ տըեղ ա: Նա փոշտալյոն յըղոնեգյին մում ա տամ, թա. - «Տար»: Էտ մումը Ավետիսը կոխըմ ա պըլա՛նուն ծակը, տո՛ւս օնըմ, տըեսնըմ էնա պըլա՛նուն թա՛իրը յրան: Էտ մումը տամ ա յըղո-նեգյին: Ցըղոնեգյը դա՛ստի պերըմ ա, տամ թաքավերին ըխճըկանը: Թա-քավերին ախճիգյը, տանըմ ա դա՛մրո՛ւչո՛ւն զակազ տամ, վըեր էտ չափ-սավը մին պըլանի շինի: Պըլանին շինիլանը ետը, յրղոնեգյը պըերըմ ա, տամ Ավետիսին: Ավետիսը ամարաթին տո՛ռնը պըեց ա անըմ, նի մըննըմ տըեսնըմ ըտըեղ էտ ջաղու պառավը աղոթկ ա անըմ: Ավետիսը ըտրանա հըրցընըմ ա, թա հո՞ւնց բիդի ո՛ւրա՛ն հորը քյթնի, հո՞ւնց ո՛ւրա՛ն սիրածին արժանանա: Էտ ջաղու պառավըն ասըմ ա. - Քու հա՛ր էն ա էն մին սարեն կըլխին: Ինք առ էս թեփուռը, տար քսի ընդրա վըեններին տակին վըեղին, ետավ տիր ընդրա քըթին տակին, ծըեռաց սըղանալու յա, եր կըենա:

Էն ըխճըկանը հետի էլ մին ճըվարան հաղուղ ըմ տամ, կըեսը սըեվ, կըեսը սիպտակ:

Սըեվ հաղուղը թաքավերին կտաս օտի, վըեր լի՛ա օտի, դա՛ստի կըլխին

յրան ա կաղնելու, ղաչանք ա ընելու, վըեր ազադիս: Կասիս. - Խոսկ տո, վըեր ախճիգյըտ ինձ կըտաս, քյըեզ ազադիմ, վըեր խոսկ տա, սիպտա̀կ հաղուղան կտաս օտի: Վըեր օտի, եր ա կըենալու, դո̀ւզ կաղնի:

Ավետիսը չըրչըրվելավ, մին թա̀հրա̀վ քյինըմ ա, պըցրա̀նըմ էն սարը, ըշտեղ ո̀ւրա̀ն հա̀րըն ար կապած, չուրացած: Տա ըտեղ լոխ հրրեշտակ-ներին կըտորըմ ա, ետավ թըեփուռը քըսըմ հորը վըեննին տակին վըեղը, ետավ յոր օնըմ, տինըմ հորը քրթին տակին:

Հա̀րը եր ա կըենըմ, տըեսնըմ տըղան եկալ ա ո̀ւրա̀ն ազադալ, լա̀ց ա ինում, ըսկսում ա տըղին պըչպըչորիլը…

Ասըմ ա՝ - Բալաս, տու համ քու հոր օջաղը վառ պըհեցիր, համ էլ քու հոր ըզըղեցիր:

Ըտրանք ետ ըն տըեռնըմ, կյամ տոն, տըեսնըմ մին օրիշ թաքավերի տըղա եկալ ա, թա էտ ախճիգյը օզի: Ավետիսը նա̀զիրին ըխճըկանը անավ սըեվ հաղուղը դըրկըմ ա թաքավերին հետի, գյվա̀քյիս թա վըեր օտի, գյանքը էրգյան կինի, քանի վըեր սըեվ աշխարքան ա պըերալ:

Թաքավերը օտիլը նըբաստ կըլխին յրան տընգվըմ ա: Հիշքան ծիքյ ըն տամ, կարըմ չըն, թա պոլան պուք տան: Տա հըրամման ա տամ, թա. -Հու վըեր ինձ ազադի, ախճիգյըս ընդրան ըմ տալու, թաքավերոթունիս կեսն էլ նըհետը:

Ավետիսանը կըման, վեշ մինը կարըմ չի ըտրան պուք տա: Նա քյինըմ ա պալատը, սիպտա̀կ հաղուղին ճիթը մուտըցընըմ թաքավերին պըրա̀-նա̀ն: Թաքավերը օզըմ ա թա եր կըենա, ամմա Ավետիսն ասըմ ա. - Չէ, հա̀լա̀ իմ թոխկաս տո, ետավ:

Թոխկան, պերըմ ըն տամ ո̀ւրա̀ն, յոր օնըմ մըեշկը կապըմ: Սիպտա̀կ հաղուղին ճիթը մին խըրեգյ էլ ա մուտուցընըմ, թաքավերն օզըմ ա եր կըենա:

Ասըմ ա. - Չէ, հա̀լա̀ թո̀ւթա̀գյըս նան փափաղըս էլ պերիք ինձ տվիք, ետնան: Պըերըմ ըն թո̀ւթագյը նան փափաղը տամ ո̀ւրա̀ն: Ավետիսը մին խըրեգյ էլ ա սիպտա̀կ հաղուղին ճիթը մուտուցընըմ թաքավերին պըրա̀-նին: Թաքավերը օզըմ ա, թա եր կըենա:

Ավետիսն ասըմ ա. - Չէ, հա̀լա̀ ախճիգյըն էլ պերիք ինձ տըվիք, ետնան:

Քյինըմ ըն ախճիգյըն էլ պըերում ո̀ւրա̀ն տամ:

Ավետիսը սիպտա̀կ հաղուղին ճիթը կոխըմ ա թաքավերին պերանը:

Թաքավերը օտըմ ա, եր կըենըմ, տըեղը կաղնըմ:

Ըտրանա ետը ու̀րա̀ն ախճիգյըն էլ ա տամ Ավետիսին, թաքավե-րոթունին կըեսն էլ:

Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ:

Ըտրանք հասին ու̀րա̀նց մուրազին, տուք էլ հասնիք ծըեր մուրազին, ա՛յ բալեքյ…

## 18.ԱԼԱՄ ԹԱՔԱՎԵՐԸ

Ինու՞մ ա, չինու՞մ մին շատ մըեծ, անըմը աշխարքավըս մին եր իլած թաքավեր: Էտ թաքավերին անըմը Ալամ ա ինու՞մ: Ալամ թաքավերը մըեծ երգյիր, շատ զորք օնար Հընդըստանա սահմաններումը, ինքն էլ ժողո-վուրթասեր ար: Ժողովուրթն էլ ու՞րա՜ն ար սիրում: Թըշնամին մուտացած վախտը ժողովուրթը թողում չար, վըեր նի մըննի ու՞րա՜նց երգյիրը, յա ու՞րա՜նց թաքավերին վըեննը փոշ նի մըննի:

Ալամ թաքավերը հա՜լա՜ տըեսած չար, վեր թշնամին վըեննը տինի ու՞րա՜ն վըեղումը: Նա սիրում ար ու՞րա՜ն հայրենիքը, ու՞րա՜ն ժողովուրթը:

Շատ վախտ Ալամ թաքավերը շո՞րերը փոխած քինու՞մ ար ու՞րա՜ն ժողովուրթին մաչը ման կյամ, տըեսնա ժողովուրթը հու՞նց ա ապրըմ:

Մին դո՞նըմ էլիա շո՞րերը փոխած, ու՞րա՜ն վեզիրներին նիետ քյինու՞մ ա, վեր ու՞րա՜ն երգյիրին սահմաննին տըեսնա, ժողովուրթին տրութո՞ւնը գյիդա:

Հունցու ամման վախտ, էս դո՞նըմըն էլ ու՞րա՜ն Խաթուն անըմավեր կընգանը նստըցընում ա կահին յրան, վեր միչև ու՞րա՜ն կյա՜լը ղեկավարի:

Շատ ըն քյինու՞մ, թա խրեգյ ըն քյինու՞մ, շատը նան խըրեգյը ու՞րա՜նք ըն գյու՞ղու՞մ, օրերան մին օր հասնըմ ըն ու՞րանց երգյիրին սահմաններին:

Ալամ թաքավերը ու՞րա՜ն վեզիրներան մինին՝ Թուրամին, դարկըմ ա մին մոտի շենում քըշերը կընալու տըեղ քիթնի: Թուրամը միչև տափը կլո՞խ տալավ օզըմ ա, թա քյինի, Ալամ թաքավերըն ասըմ ա. - Թուրամ, տըես, լոխճան քյա՜սիր տոն կքըթենաս հա՛…

Թուրամն ասըմ ա. - Թաքավերն ապրած կենա, ծառա յըմ հրամմանիտ:

Մըհեկ թաքավերին թողինք ըստըեղ, տեսնանք Թուրամը թո՞ր ա քյինում : Ըտեղ մին մոտիկ շեն կար բաղերի, արտերի մեչին զոռավ ար ըրևում:

Թուրամ վեզիրը քըշերվա կըեսին ման կյա՜լա՜վ կյա՜մ ա ըտեղ, վերչը մին խեղճ, պառավ կընգա ճարում: Էտ պառավ կնեգյը վեչ խոխա օնար, վեչ էլ մարթ:

Թուրամը ըտրան ասում ա. - Ա՛ նանի, ածու խեղճ մարթիքըն ընք, ղարիբ տըեղա եկած, տոն չօնինք, տեղ չօնինք, թող էս քըշեր տանըտ կենանք, հիշքան քըրեհն ա, կըտանք:

Պառավըն ասըմ ա. - Դե, վերթի, ղոնաղըն ածունն ա, ամմա հինչ

արած, վըէր ծըէզ հարմար տոն, տըէղ, յորղան-դոշա̈կ, հաց նան ճո̈ւր չօնինք:

Թուրամ վէզիրն ասըմ ա.-Նա՛նի, վէչինչ, մունք քու ասած մարթ-կանցան չընք, թա̈քյ լըհա̈ էս պուճուր օթախը ինի, մին քյո̈ւնո̈ւշմ յո̈ւլա կքյինինքյ:

Պառավըն սուրը երըծելավ ասըմ ա. -էն Ալամ թաքավէրին արևը, էն իմ մաղար տըղիս արևը, վէր կորալ ա վըէննավ-ծըէռքավ, տըէղ չօնիմ, հնարը-ճար չօնիմ, ապրուստ չօնիմ, յըէս մին խըէղճ կնեգյ ըմ:

Թուրամ վէզիրը ընդըրա խոսկը շա̈քյարավ կըտրէլավ ասըմ ա. -Վէչինչ, նա՛նի, մունք քյըէզ հաց, փող, հինչ ասիս կտանք, մինա̈կ թող էս քըշէր օշաղիտ կոխկին կենանք, էքյուծ ուռութանա էլիա կըքյինինքյ:

Ա՛ վէրթի, դէ վէր իտի յա, եկէքյ, ամմա ավէլ-պակասը կբախշիքյ:

Թուրամը քյինից Ալամ թաքավէրին կոշտը, լոխ նաղլ ըրավ: Մըթնըքըշէր ար: Ընդրանք մին թա̈հրա̈վ եկին էտ պըռավին տանը քըշէրը կըենան: Պառավը գյուղում չար, թա ըտահանք հուվ ըն:

Ալամ թաքավէրը ըսկսից պըռավին նհէտ զուրուց անիլը:

- Ա՛ մար, էտ խէ՞ տըղա, ախճիգյ չօնիս, վէր քյըէզ պահին, էքան քյա̈սիբ չի ինիս...

- Ա՛ վըէննը պարի ղոնաղ, մին մաղար տըղա յա իլա̈լ, աստված քյըէզ էլ պահի, ընդըրան էլ:

- Բա տըղատ հո՞ր ա:

- Շո̈ւտանց ա կորալ, գյուղում չըմ սաղ ա՞, սէյրու վա՞, մինա̈կ քըշէր, ցիրեկ, ըրտասունքըս ըշկէրիս ասծուն աղոթկ ըմ անըմ, վէր բալիս չարից, փորցանքից հըէռու պահի, վըէննը քարին նի չի կյա, էն սուրփ Սա̈րքյիսին ծիյին վըէննին տակին բալիս թըշնամիքը փըչանան, բալաս էլիա սաղ-սըլմաթ կյա ո̈ւրա̈ն հորը հա̈նգյած օշաղը էլիա վառի: Դէ այանը ծըէզ մատաղ, ա ղունուղնէ, խոխաս հա̈լա̈ ջահիլ ար, քըսան տըրեկան, եշողը գյուղում ար, թա մին սար ա ընդեղ կաղնած, թէզյունքը լէն, ճակա-տը լէն, իրեսը ղա̈շա̈նգյ, հենց ար լհա̈ մին թա̈զա̈ պլլո̈րած լո̈ւսնինյզա̈ ինի, աշկերը սև-սև, ասիս լհա̈ հաղուղի գյուլա̈, եշո̈ւղըն ասըմ ար.«Ներա՛կ քու մո՛ր, դէ մըհեկ հոր ա՛, ինձ տո, քյըէզ տամ»: Մարթս էլ խոխիս խըտէտն առած մըեռա՛վ: Մըռնելիս էլ ասից. «Ա կընեգյ, խոխիս աշկաթող չանիս, լա̈վ կպահիս, աէլըն նան էն անմեղ հոքին փըչիլը մինըլավ: Յըէս նան իմ

նախշուն բալաս, իմ էն սարերի արծիվըս, մընացինք մինակ: Հիշքան կարըմ ի, հիշքան օժս պատում ար, օրիշի հետի կործ ընելավ բալիս պահըմ ի:

Աստուծ ծըեզ էլ գյանք տա՛, մըեր Ալամ թաքավերին էլ, քյասիբներան օխտը տարով խարջ չի յոր օնըմ, մինչև ընդրանք պատառ հըրուստանան էն միներին հասնին: Դէ, յըես էլ չըմ խարջ տըվալ, իտի ապրում ինք բըլես նհետ: Հէնէ էն պըտըհանըմը մին դա̈շա̈նգյ, մին հո̈ւրո̈ւփարի ըխճըկա պատկեր կա, հի՞նչ ախճիգյ, մին լո̈ւսնընգյա՛, մին մարալ-ջեյրա՛ն... էտ ախճիգյը ապրըմ ա օխտը ծովի մէչի մին պուճուր ցըմաքում, ո̈ւրա̈ն դուլլուղչոցավը, ո̈ւրա̈ն գյա̈դոցավը, ղարավուլչոցավը, ո̈ւրա̈ն պալատումը:

Ասըմ ըն, թա շատ տըղերք ըն քյինա̈ցա̈լ, թա էտ ախճիգյը օզին, լա̈վ-լա̈վ քաջ տըղերք, ամմա էտ ախճիգյը վէշ մինին հավան չի կաց ալ, հըրամմայալ ա, լոխճին նի յըն ածալ ծովը: Բալաս ըշտըղան-ըշտեղ էտ պատկերը տեսնում ա, սիրահարվում: Մին օր բալաս եկավ, աշկըունքը յըրա պերած, ո̈ւրո̈ւր տըված, վէչ խոսում ա, վէչ ծըծաղում, լհա̈ զու ըրած ա՛խ ա քաշում: Մին առավոտ էլ ինձ մնաք պարով ասից, քյինից: Էն քյինիլըն ա, վեր քյինից: Էն օրանը ետը վէչ խաբար կա, վէչ կինի: Մընացալ ըմ իստի խըեղճ, անդեր-ընդերու, օրվան հացըս զոռավ ըմ ճարըմ:

Էտ պառավ կնեգյը ո̈ւրա̈ն տըղին նաղլը ըրավ, պըրծավ, էլհա ախ քաշից, ըրտուսունքնին չուրացած իրեսան սրփից, ետնան եր կացավ, քյինից պըտըրհանան էտ պատկյերը պերավ, նշանց տըվավ թաքավերեն: Ալամ թաքավերը մին լա̈վ եշից էտ պատկյերին, ետավ ասից. - Էս հի՞նչ հրաշկ պատկյեր ա, սա հողածին ա, թա երգյինքան ա եր եկալ: Ըստրան լայըղ հո՞ւ կինի՛ ...

Ալամ թաքավերը մըթկըմը տիրավ, վեր հինչ էլ ինի, էտ ըխճըկանը ո̈ւրա̈ն տըղին հետի օզի: Ետնան մին հափուռ վըեսկե փող տըվավ էտ պառավ կընգանը, քաշվից մին անգյուն: Թաքավերին գյաբա̈ն փըռեցին ընդրա հետի, նա յրան թեքյ ընզավ, ամմա կարից վէչ աշկը հոփ օնի, քոն ինի: Հա̈լա̈ լո̈ւսը պեցված վէ՛չ, թաքավերը ո̈ւրա̈ն վեզիրներին նհետ պառավին տանան քյինից: Պառավը էտ փողերավը լա̈վ տըներ շինից, լա̈վ ապրուստի տար տըեռավ, գյո̈ւղո̈ւմ ար, թա տըղան կյալո̈ւ յա: Ալամ

թաքավերը էլ վեշ մին տըեղ վըեննը կախ չըրավ, վեշ մին տըեղ չի քյինից, թո̀ւշ քյեցավ ո̀ւրա̀ն պալատը, կաhին յրան նստից։

Նա քըշեր-ցիրեկ մըտածում ար, թա կործը hու՞նց փըռնի, վեր ա̀մա̀լ կյա, վեր վերչը լա̀վ ինի։ Շատ քնենքյ ընելանը ետը, ո̀ւրա̀ն կոշտը կանչից ո̀ւրա̀ն մաղար, աշկին սըվըսիպտա̀կ՝ Ալմա անըմավ տղին։

- Ա՛ վերթի, անգուճ կալ, աշխարքըմըս մահ կա, մըեռնիլ կա՛, վեշ մինը ըտրանա կարիլ չի փախչի, եք քյըեզ փըսակիմ, քանի hա̀լա̀ աշխարքըս ծըեռքիս ա, քանի hա̀լա̀ ծըեռքըմըս ղըվաթ կա, զոռ կա՛։ Քու hասակըտ էլ hըսալ ա, օզըմ ըմ տըեսնամ քու hըրսանիքըտ, օզըմ ըմ թոռներ տըեսնամ... Քյըեզ hետի մին աննըման ախճիգյ ըմ ճարալ.., Տու բըղի ընդրան hարսնացու յոր օնիս, նhետը փըսակվիս։

Էտ ըսելանը ետը տըղին նշանց տըվավ էն պատկերը, վեր էն պառավ կընեգյը ո̀ւրա̀ն ար տըվալ։

Տըղան վեր էտ նկարը տըեսավ վե՛չ, խրեգյ մնաց, թա կյիժվի, ո̀ւրա̀ն մին թա̀իրա̀վ պահից, միչև տափը hորը առաչին կլո̀խը քըշըցըրավ, սուս ու փուս տո̀ւս եկավ։ Հարը դաստի գյիդաց, վեր տըղան ռազի յա, ամմա hըմանչում ա ասի։

Էն մին օրը Ալման քյինից թաքուհի Խաթուն մորը կոշտը։ Հորը սաածնին լոխ նաղըլը ըրավ, ետնան մորը ղաչանք ըրավ, վեր hորն անա յոր օնի էն ըխճըկանը պատկերը, պերի ո̀ւրա̀ն տա։

Թաքուհին էտ պատկյերը երկալավ, տըեսավ, էտ ըխճըկանը սիրից, hունց վեր ո̀ւրա̀ն hըրսնացուին, ետավ տարավ տըվավ տըղին։

Ալման քըշեր-ցիրեկ քուն չօնար, վեշ hաց ար օտըմ, վեշ ճո̀ւր խմըմ, օրկանցօր մաշվում ար, էն պատկերին եշելավ նա քնենքյ ար անում, թա տըեսնաս էս ախճիգյը ըշտե՞ղ ա՛, երգյինքան եկած ա, թա hողածին ա։

Մին օր էլ թաքավերը կանչից տըղին, ասից,- Ալմա՛, վերթի, դե hըզըրվի վեր քյընիս ման կյա̀ս, hըրսնըցուիտ ճարիս, պերիս։

Ալման օրախութունան զյուղըմ չար, թա hի՛նչ անի։ Կըլո̀խը քաշ քըցից, hունցու խոնար ծառա, hորը աչ ծըեռքը պաչից, տո̀ւս եկավ։

Էտ օրը Ալման, hորը խա̀զնա̀, դափնա օներ, էտ խա̀զնիցը եր կալավ շատ վըեսկե, անկյին քարեր, զենքը-զըրահ, մին լա̀վ ծի, մարն էլ hրամմայից լա̀վ պաշար պըդրաստին։ Ետնան Ալման եկավ hորը կոշտը, hորը օրթնանքը ըստանա։

ՀԽրը օրթնից տըղին, համ էլ ասից.- Ա՛ վերթի, ճընապարըտ պարի ինի: Մըեզ մըտատ քըցիս վեչ, համ էլ մըտատ քըցիս վեչ, վեր տու թաքաժԽռԽնգյ ըս: Խոնար կը կենաս, լԽվ անըմ կիանիս, թաքավերին տըղին լայըղ անըմ: Մին կործ վեր օզիս փըռնիս, օխտը չափի, մին կըտրի, առաչ մին լԽվ մըտածի, ետավ ըրա: Տու մինԽկ ըս քյինԽւմ , մըեր օջաղին օրենքյը իտի յա, վեր մին պեն հիշտ ինի, տըժեր ինի, հախտիս, թա հաշտվիս, մինԽկ տու քու օժավըտ անիս:

ՀԽրը օրթնելանը ետը, թաքուհի մարը օրթնից, արտասունքը աշկե-րըմը, ասից. - Ա՛ բալա, թող իրեսըս տինիմ քու վըեննիտ տակին:

Տըղան պըցըրըցըրավ մորը, ասից. - Ա՛ մար, լԽց մի ինիլ, մինԽկ աղոթկ ըրա ինձ հետի: Մարը տըղին թշերան պաչից, Ալման մին էլ մուտացավ հորը ծըեռքը պաչից, մորը խըտետն ընգավ, մարը պըչպըչորից տըղին կըռըզնոտ մազերը, ճընապար տիրԽվ: Ծառեքը չորս դԽլավը տըեռած տԽւս եկին պալատան ընդրան միչն քաղաքին դըրբըզան տարին, ետ եկի՛ն: Ալման քյինԽւմ  ա, քյինԽւմ, ինքն էլ չի գյուղում, թա ըշտեղ, վերչը մին օր կյամ ա, հըսնում մին հենց տեղի, ըշտըղան իրեք ճընապար ա ըսկըսում: Էտ իրեք ճընապարին պըժԽնման տըեղը նստած ար մին պառավ մարթ:

Ալման ընդրան պարյօր տըվավ, ասից. - Պապի, պարով:

- Աստծու պարին, պարով, հազար պարի յըս եկալ, ա՛ բալա:

- Պա պի, էս ճընապարնին ըշտե՞ղ ըն տանում:

- Բա՛լա, էս ճընապարնին հիշքան համ էրգյան ըն, համ անծանոթ, էնքան էլ էրգյան պատմութԽւն օնին: Տըե՛ս, էս մինը առաջին ճընապարն ա, էս ճընապարը տանում ա դիբի օխտը ծովին հԽւրԽւ-փարին: Էրկունջի ճընապարը տանում ա կյերի մարթկանց աշխարքը, իրեքինջի ճընապարը տանում ա դիբի մըթեն ծըմակնե, խոր-խոր ծԽրեր: Առաչին ճընապարավը քյինացալ ըն շատ շատերը, ամմա ետ չըն տըեռալ: Էրկունջի ճընապա-րավը քյինԽւմ  ըն, քիթնին կորած կյերիներին: Քու պապ, շատ կըռվարար մարթ ար, նա բԽզի վախտ հախթում ար, բազի վախտ էլ կործը տանիլ ար տամ: Վերչի դԽնըմը կարից վեչ հախթի, ԽւրԽն զորքը սաղ կյերի քըցից, ինքըն էլ էտ ճընապարին ըսպանվից: Հենե հա՛, ընդրա կյըրեզմանը, տըե՛ս, յըրան փոշ ա փըսալ: Իրեքինջի ճընապարը տանում ա դիբի էս աշխարքաս զըրկված, ԽւրԽն գյանքումը մին լԽվ օր չըտեսած մարթիքյը:

էտ մարթիքյը կոզի մին ծըետ էլ չըն ըսպանալ, կոզի մին մըրչեմնը էլ չըն կոխ տըվալ, ամմա չար մարթի ծըեռքա, չար մարթի լ՞ուզվա փախալ ըն, ընգալ խոր-խոր ծ՞րեր, արնին լ՞ուսին կարոտ, գյանքա զըրկված, հիվանդ, էտ ծ՞րերըմը ջ՝ան՝ավարներին ճանգյըն ըն ընգ՝ալ:

- Շունրակալ ըմ, պապի, յըես պիտի քյինիմ էն օխտը ծովին մեչին էն աննըման ըխճըկանը հետան:

-Դե, ա՛ բալա, քյըեզ հի՛նչ ասիմ, կըլ՞իխտ շատ օյին ա կյալու, տու ջ՝ահիլ ըս, ջ՝ահիլին կըլխումը հ՝ալ՝ կյիժ քամի յա ըն՞ըւմ, տու կարիլ չըս էտ կախարթ ըխճըկանը պիրիս, տու հի՛նչ ըս գյուղում ընդրա կըլխըմը հի՞նչ կա՛:

- Չէ՛, պապի, յըես պիտի քյինամ, վեր մըեռնիմ էլ պիտի քյինամ:

- Դե, քյինա, բալաս, աստված քյըեզ նիհետ: Ամմա տըեսնում ըմ շատ ըս նըղացած, եք ինձ անգուճ կ՝ալ, ըսօր մընա մըեր տանը, էքուծ ըռավոտը շ՞ըւտ կըքյինիս: Հենե՛ ընդեղ ժողովուրթը հըվաքված առըտուր ա անըմ, ընդեղ բազար ա, միկա քյինի շոռ եք, տըես ընդեղ հի՞նչ կա, հի՞նչ չիկա, հի՞նչ պեներ կա, վըեր հ՝ալ՝ տու տըեսալ չը՛ս:

Ալման ռազի կացավ, քյինից բազար: Ընդեղ թազա պեներ տըեսավ, թ՝ազ՝ա ըպրընքնե, թ՝ազ՝ա մարթիքյ, լհ՝ա օզըմ ար, թա բազարան տ՞ըւս կյա, տըեսավ մին քյ՝ասիբ մարթ, մին դ՝աշ՝անգյ յ՝աշիգյ շըլ՝ակած ծըեն ա տամ.- Այ՛ լ՝ավ յ՝աշիգյ, ա՛յ լ՝ավ յ՝աշիգյ, համ առնողը փըեշմ՝ան, համ ծախողը փըեշմ՝ան, լ՝ավ յ՝աշիգյ:

Ալման մաթ մընացած հըրցրավ.- Ա՛յ մարթ, էտ հի՛նչ յ՝աշիգյ ա, վեր համ առնողըն ա փըեշման, համ ծախողը, բա իտի առըտուր կինի՛... դե, հինչ կինի՛, կինի՛ պեր առնիմ, կըտանիմ տամ էն պապին, վեր քըշերս տանը կենալու յըմ: Դե ասի տըեսնամ քա՛նի յա:

- Հունցու օզիս, ա՛ ջահիլ:

Վերչը Ալման մին վըեսկե յա տամ, յ՝աշիգյը յոր օնըմ, տանըմ էն պառավ մարթին տոնը:

Սաղ օրը յ՝աշիգյը պեցին վէչ: ՞ըւր՞ըւգյ՞ըւնը լհ՝ա նոր ին նի մըտալ տեղերը, վեր էտ յ՝աշիգյին զընգոցը եկավ, յ՝աշիգյը պեցվից, ընդրա մեչան մին պառավ մարթ տ՞ըւս եկավ, բոյը՝ մին մետր, մըրոքը՝ էրգյան, էրկու մետր, մին կացին էլ կյոտկըմը: Ալման նան էն պառավ մարթը խիլլա վըխեցին:

Ամմա էտ մարթը հ̀ննդ̀րդ մուտացավ Ալմին՛ ասից. - Իմ անըմրս Կուպլիկ ա, յըես քյըեզ ծառա, հինչ ասիս, հինչ օժատ վեր  ա, յըես կկադարիմ:

Ըտեղ Ալման տըեսավ, վեր ըտրանա ջամբար չիկա, խոսկ տըվավ, պայման կապեցին, վեր ո̀ւրո̀ւր նհետ լ̀ավ ինին, ո̀ւրո̀ւր հավադարիմ ինին:

Էն մին օրը Կուպլիկը նան Ալման ճընապար ընգին, քին̀ացին:

Կուպլիկը համ էտ ըխճըկանը տըեղն ար գյուղում, համ էլ ընդրան մին հետ տըեսալ ար:

Ըտրանք շատ ըն քյինո̀ւմ, խրեգյ ըն քինո̀ւմ, հասնըմ ըն էտ ըխճըկանը պալատին:

Կուպլիկն ասըմ ա. - Ա՛ լմա, յըես քյըեզ սըվըրցընիմ, թ̀ տու հունց բիդի էտ ըխճըկանը քու մըեթկըտ հըսկըցընիս: Վեր պըցրանաս պալատը, էտ ախճիգյը  դ̀ստի գյիդ̀լու վա, վըեր տու ո̀ւր̀ն ուզելի յըս եկալ: Նա հրամմայելու ա ո̀ւր̀ն ծըռոտանցը, ասի. «Էտ ջ̀հիլ տըղին տարիք պատիվ տվիք»: Ծառեքը գյո̀ւղո̀ւմ ըն, թա էտ խուսկերքավը նա հի՞նչ ա ասըմ: Քյըեզ պըցըրցընելու յըն լոխճան  պըեցուր պալատը, ընդըղան քյըեզ ծովն ըն քըցելու: Նըիախ տըեղան վեր տու մըեռնիս վեչ, կասիս. «Շունրակալ ըմ, յըես պատիվ չըմ օզըմ, յըես քյըեզ ըմ օզըմ»: Վեր իտի ասիս, նա կգյիդ̀, վեր տու ո̀ւր̀ն օզելի հետի յըս քյին̀աց̀լ:

- Լ̀վ, Կուպլիկ, իտի կասիմ:

Ընդրանք նի մըտին պալատը, մարմար փ̀լ̀քյ̀ններավը պըցրացին ըխճըկանը օթախը: Հ̀լ̀ միչև էտ, ըխճըկանը ծառեքը ասալ ին, վեր մին տղա յա կյամ, էտ ախճիգյն էլ թողալ ա, վեր կյա:

Ալման էտ արմաղ-շարմաղ ըխճըկանը վեր տըեսնում ա, օզըմ ա, թա օշը տանի, եր ընգնի, գյուղում ա, թա ըրազըմն ա տըեսնում:

Էտ ախճիգյը վեր տըեսնում ա իտի յա, հրամմայում ա ո̀ւր̀ն ծառաներին, ասըմ. - Տարեք, էտ երիտասարթին պատիվ տըվեք:

Ալման կարըմ չի վեչ մին պեն ասի, լհ̀ աշկը քըցած էտ ըխճըկանը աշկը, մընում ա սառած, կաղնած: Ծառեքը ըտրան պըցըրցընում ըն էն պեցուր տըեղը, ընդըղան ծովը քըցն՛ ւմ: Կուպլիկն էլ էն սըհաթը ո̀ւր̀ն ծովըն ա քըցըմ, մին թ̀հր̀վ Ալմին ծովան հանըմ, տանըմ պալատին քըշտին մին կանանչ տեղ տըննո̀ւմ :

Վեր օշը կըլո̀խըն ա կյամ, Կուպլիկն ասըմ ա. - Բա յըես քյըեզ ասեցի

վե՛չ, հինչու յըես աըըմ, ինդի ասի...

Կուպլիկը իտի յա աըըմ. ետնան Ալմին մին լա՜վ չըմփալախ տամ:

Ալման աըըմ ա. - Լա՜վ, էլ մըտաս քըցիլ չը՛մ:

- Դե տըես, Ալմա, էս դո՞նըմ վեր քյինիս, կասիս, հինչու յըես քյըեզ ասալ ըմ, թա չէ, նա թա՞զա՞ղա՞ն քյըեզ ծովը քըցիլ կտա:

Ալման մին էլ պըցրացավ էտ ըխճըկանը պալատը: Ծառեքը մին էլ քյեցին էն ըխճըկանը ըսեցին: Ախճիգյը հըրամման տըվավ, վեր թողին կյա: Ախճիգյը զարմացալ ար էտ տըղին դոշաղ ինիլան, ընդրա սըերտը սեր ար ընգալ:

Ախճիգյը ընդըանա հըրցրավ, թա. - Հի՞նչ ըս օզըմ իմ պալատաս, բալքյաս իմ դուլլուղչվիներաս մինին ըս օզում, բա՞լքյաս վըեսկե յըս օզըմ:

Ալման էս դոնըմ իրեսը պեց աըըմ ա.-Յըես համ շատ վըեսկե օնիմ, համ էլ շատ դուլլուղչի կա մըեր պալատումը: Յըես եկալ ըմ քյըեզ ուզելի հետե: Լըսալ ըմ, թա լոխճին ծովը քըցիլ ըս տամ, ամմա յըես եկալ չըմ, վեր ծովըն ընգնիմ, յըես եկալ ըմ ասիմ, վեր քյըեզ սիրըմ ըմ, եկալ ըմ քյըեզ տանիմ:

Էտ ախճիգյը էլ կարըմ չի մին խոսկ ասի, տըեղան եր ա կըենում Ալմին ծըեռքան փըռնում, անըմը հըրցընում ետնան աըըմ. - Ալմա՛, վեր տու ինձ սիրըմ ըս, պիտի ինձ նհետ ըստեղ մընաս, իմ օխտը ծովերիս թաքավերը տըեռնաս:

Ալման «չէ» յա աըըմ: -Յըես հայրենիք օնիմ, թաքավեր հա՛ր, թաքուհի մար օնիմ, ընդըանք ինձ ըն ըսպասում, ինձ ա ըսպասում թաքավերին կահը, մըեր ժողովուրթը:

Ախճիգյը ռազի յա կըենում: Կուպլիկին կանչըմ ըն պալատը, մին լա՜վօթախ տամ: Ուրանք էլ պալատին լոխճան լա՜վ օթախներըմը օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ:

Ըտրանա ետը պադրաստվում ըն՝ ճընապարհվին: Ախճիգյը կանչըմ ա ու՞րա՞ն ծըռոտանցը լոխճին, արտասունքը աշկերըմը աըըմ: - Դե, մնաք պարով, իմ պալատըս էլ, կահըս էլ, իլած-չիլածս էլ, լոխ ծըեզ ըմ տամ, յըես քյինու՞մ էս քաջ տըղին նհետ: Դե թա ետավ հի՞նչ կինի, գյուղո՞ւմ չըմ:

Հիշքան էլ ծառեքը դաչանք ըրին Ալմին, վըեր քյինի վեչ, ամմա Ալման ու՞րա՞ն ասածը ըրավ: Ընդրանք հըղէ իլին դիբի ու՞րա՞նց տոն:

Շատ քյինեցին, թա խըրեգյ, վերչը հըսին ընդեղ, հիշտեղ էն պառավ

մարթը նըստած ար։ Իրեք ճընապարին տըեղը։

Էտ պառավ մարթը մնացալ ար զարմացած, թա հունց ա Ալման էտ ըխճըկանը պերալ։ Նա շընհավէր ա անըմ ընդրանց փըսակը, Ալման ծիյան եր ա կյամ, էտ պառավ մարթին ծըեռքը պաչյըմ, մին էլ ծի յըն նստում, քյինո̈ւմ ։

Քյինըմ ըն, քյինըմ, վէրչը հըսնըմ ըն ո̈ւրա̈նց թաքավէրոթունը։ Կուպլիկը ճընապարին կորչըմ ա։

Խա̈բա̈րը տանըմ ըն Ալամ թաքավէրին, թա տըղատ կյամ ա, մին հո̈լո̈լ-մա̈լա̈զյ էլ նհետը։ Ալամ թաքավէրը օրախոթունան ո̈ւրա̈ն խա̈զնին տըռները պըեց ա անըմ ժողովուրթին առաչին։

Խա̈բա̈ր պերողներին մուշտըլուղը անկյին քարեր ար։

Ալման նան ո̈ւրա̈ն թա̈զա̈ հարսը կյամ ըն պալատին առաչին կաղնըմ։

Թաքավէրը նան թաքուհին տո̈ւս եկին ընդրանց տարին պալատ, կըլխըներին վըեսկե, անկյին քարեր շաղ տըվին։ Ժողովուրթը հարուստացավ, լոխ ուրխացին։

Ալամ թաքավէրը հրամմայից ո̈ւրա̈ն վէզիրներին, վէր հըրսանիքի պադրաստոթուն տըեսնան։

Հըրսանիքը ըսկըսվից, շատ ղոնաղնի էլ ին եկալ օրիշ էրգյիրներա։ Ըստոլնին ամմեն հինչավ լիզյը, օտել-խըմե́լ, հինչ ասի́ս...

Թաքավէրին պալատումը ապրում ար ո̈ւրա̈ն անըմավ մին վէզիր։ Էտ վէզիրն էլ մին տըղա օնար, անըմը Դնուկ։ Դնուկը վէր տըեսնում ա էտքան կյեղեցիկ հարսին, սիրում ա։ Հէնց վէր սիրում ա, ո̈ւրա̈ն մըթկըմը տինո̈ւմ  ա, վէր Ալմին ըսպանի, ինքը հարսին յոր օնի։

Հըրսանիքին իրեքինջի օրըն ար։ Էլհա սաղ ժողովուրթը օտըմ ին, խըմում, քյեփ անըմ, էն կանանչ դո̈ւզերըմը մին վարար կյետ ար քյինո̈ւմ , կյարունքվա վախտ ար։

Դնուկը միշտ Ալմին քըշտին ար ընում նըստած։

Ասըմ ա.- Ա́լմա, էս ա իրեք օր ա օտըմ ընք, խըմըմ, մըհեկ էլ եր կաց, քյինինք, մին լա̈վ ծի քըշինք, կէրածնիս մարսինք։

- Հի́նչ ըմ ասըմ, քյինինք։

Ծառեքը լա̈վ-լա̈վ ծիյանք ըն պերում։ Ընդրանք նըստում ըն, քամու նման քըշո̈ւմ, քյինո̈ւմ , համին էտ վարար կյետին կոշտը։

Խիլլա հեռու ին քըշա̈լ։ Ծիյանքը քըրտընըքալ ին։

Ալման ասից. - Դե բո՞լ ա, էտ տըեռնանք:

Ամմա Դնուկը թողից վեչ: Ալման ծիան եր եկավ Դնուկըն էլ, ո՞ւրանք քշերին մին խրեկ ման կյան կյետին քըշտին: Կյետը շատ վարար ար: Համին էտ վախտը Ալմին ծիյին կապը պեց ա ընգնըմ, ծին փախչըւմ ա: Դնուկը ո՞ւրա՞ն ծին նստում ա, գյվա՞քյիս թա քյինի Ալմին ծին փըռնի: Էտ մունուտին էլ խանչալը հանըմ ա, թըխում, Ալմին կըլո՞խը կես անըմ: Յետավ ծիյան եր ա կյամ, մեյիդը քյըցըմ կյետը, ինքը շո՞րերը ճըրղոտելավ, կըլո՞խը թակելավ էտ տըեռնըմ: Ալամ թաքավերը միչև էտ, տըեսնըմ ա, վեր տըղան կյամ չի՛: Մարթ ա ղարկում հետան, վեր էտ տըեռնան:

Էտ ծառեքը տըեսնըմ ըն, վեր Ալմին ծին խըրխընջալավ ընգալ ա էն դո՞ւզերը: Ըտահանք կըլո՞խ ըն ընգնում, վեր մին պեն ա պըտահալ, էտ ըն տըեռնըմ թաքավերին ասըմ. թաքավերը մընըմ ա շշկըլված:

Ժողովուրթը ո՞ւրո՞ւր ա ընցնըմ:

Դնուկին ծառեքը քյթնո՞ւմ ըն, տափին եր ընգած:

Էտ սըտըստ լա՞ց ինելավ, մազերը քանդելավ ասըմ ա. - Մունք էրկուսավ ծիյանցը կապան փըռնած ման ինքյ կյամ,  բըրղա՞ն մին էլ տըեսնանք, մին մարթ կյետըն ընգած, կյետին քըշտի ծառին մին պըերակ ճըղնա փըռնած, օքնըթո՞ւն ա կանչըմ: Ալման ծըեռքը մըեկնից, վեր ազադի, էտ մարթը Ալմին ծըեռքան փըռնից ազադվից, ամմա Ալման ընգավ կյետը: Կյետը քըշից տարավ: Էտ մարթը օզից ինձ էլ քաշ տա, տանի քըցի ճո՞ւրը, յըես թուրս հանեցի, ընդրա սըերտը կոխեցի: Նա իտի էլ ընգավ ճո՞ւրը: Յըես էլ գյուղում չի, թա հի՞նչ անիմ, ցավը ինձ էս օրը քըցից:

Դնուկը համ ասըմ ա, համ էլ մազերը քանդըմ, իրեսը ճըպռոտըմ, գյըվա՞քիս թա՞ սըերտը շատ ա ցավըմ Ալմին հետի:

Ծառեքը ընդրան փըռնըմ ըն, տանըմ թաքավերին կոշտը:

Թաքավերն ասըմ ա. - Օցի ճոտ, իմ թա՞զա՞ փըեսաա բալաս հո՞ր ա, լոխ ասի, աշկերտ կիանիմ, լուզուտ կըկըտրիմ վեր ծոռ ասիս:

Դնուկը կարից վեչ խոսի, ծառոցը մինը, Դնուկը հինչ ասալ ար, նաղլ ըրավ թաքավերին:

Թաքավերը էլ համփերից վեչ, կանչից դահիճներին ասից.

-Տարեք ըտրան աշկերը հանեցեք, լուզուն կըտրեցեք, քըցեցեք մին նամ, մըթեն տըեղ:

Իտի էլ անըմ ըն:

Ալամ թաքավերը կանչից Դնուկին հորը՛ ու̈րա̈ն վեզիրին, ընդրա լուզուն նան ծըեռքերը կտորիլ տըվավ, քըցիլ տըվավ տըղին կոշտը, էն նամ, մըթեն տըեղը: Հա̈րըտըղա կարըմ չին ու̈րու̈ր նիետ խոսին, հա̈րը կարըմ չար տղին քյու̈մա̈գյ անի, լիա̈ թավիլ-թավիլ ար անըմ տըղին վըններին տակին: Ըտրանք իտի ցավեր քաշելավ էլ մըեռին:

Հըրսանիքին չորսինջի օրը սու̈քի օր տըեռավ: Թաքավերը նան թաքուհին սև կյեցին, թա̈զա̈ հարսըն էլ սև կյեցավ: Թաքուհին ու̈րա̈ն մազերը կըտրից, սու̈քյ ըրավ, վըեղ ածից կըլխի,իրեսը չընգռոտից:

Ալամ թաքավերը ու̈րա̈ն հարուստ պալատումը էն մըեկալ վեզիրներեն նիետ, ու̈րա̈ն կյեղեցկուհի հարսին ու̈րա̈ն ախճիգյ եր կալավ, կահը ընդրան տըվավ, ասից- Անգուջ տիր, բալաս, մըհեկանց տենը էսքան ցավըղա̈րղա̈նը ետը, յըես շատ ապրիլ չըմ, իմ կահըս էլ, երգյիրըս էլ քյըեզ ըմ տամ:

- Չէ՛, յըես Ալմայից ետավ կարիլ չըմ էս լիգյը պալատներըմը ապրիմ, Ալմայից ետը, յըես օզըմ էլ չըմ ապրիմ: Տու մըեծ, աշխարքիս տար թաքավեր ըս, կընստիս քու կահիտ հաստադ մինչև վերջը:

Իտի յա ասըմ էտ հու̈րի-փա̈րին, տու̈ւս կյամ քյինու̈մ պալատին երի քըեթը, ընդըղան ու̈րա̈ն քըցըմ տակը, մըեռնըմ:

Թաքավերին դարդերը մինը հազար ա տըեռնում:

Նազիր-վազիրնին կարըմ չըն, թա մին խոսկ ասին: Ալամ թաքավերը էլ ու̈րա̈ն կահին, ու̈րա̈ն թաքավերական թախտին նըստում չի: Տըղին նան հարսին ամմեն մին մընուտ մըետը պահելի հետի, ու̈րա̈ն պալատին թաքավերական թախտին յըրան էրկու շատ դաշանգյ ծաղկաման ա տընում ու̈րու̈ր կողքի, մեչին կուկում վարթեր, ամման մին վարթի յրա մին բու̈լբու̈լ, էրկու օցի պու̈ւն էլ վարթին քըշտին:

Լիա̈ վըեր բու̈լու̈լըլը երք ա ասըմ, էտ կուկում վարթերըն էլ հա̈նդա̈րդ ըրորվելավ օզըմ ըն ու̈րու̈ր նի կյան, պըեցվին, էտ սև օցը պունան տու̈ւս ա կյամ, վարթին ճըղներավը պըցրանըմ, թա բու̈լբու̈լին կըծի, աղու տա, ըսպանի: Էտ վախտը Ալամ թաքավերը հինչ դադաստան էլ անելիս ինի, տղին նան հարսին մըետնա քըցում էտ մըեղավերներին էլ, լոխճին էլ ազադոթուն տամ:

Չարը՝ ընդեղ, պարին՝ ըստեղ:

## 19.ԱՐՄԵՆԸ ՆԱՆ ԶԱՐՄԵՆԸ

Ինըմ ա, չինըմ մին շատ հարուստ թաքավէր։ Էտ թաքավէրը ո̀ւրա̀ն կընգանը նըհետ ապրըմ ըն իլա̀լ մին շատ դա̀շա̀նգյ, մա̀րմա̀րի աշտա-րակնէրավ, սո̀ւնէրը սաղ վըեսկավ, թանգյակին քարէրավ, մա̀րջա̀ն-մարքարիդավ զարթարած պալատըմ։ Ընդրա սանդուղնին խա̀զնա̀վ վըեսկավ, անկին քարէրավ լիքընին։

Ամմա լոխճան դա̀շա̀նգյը ընդրա հո̀ւրի-փա̀րի կընեգյըն ար, զա̀ռխարա խաս շո̀րէրըմ, վըեսկըմ, պըռլյանդըմ կորած, ինքըն էլ մին ծաղիկ, պըտկան ծաղկած։

Էտ թաքավէրը մին կյեղեցիկ, կանանչ բախչա օնար, սաղ ծաղիկնի, վարթէր, մեխակնի, օրիշ ծաղիկնի, լա̀վ -լա̀վ ծառէր, լոխ բար էր կալած, թընգյակին։

Դե հի՛նչ արած, վէր էտ հարստոթունին հետի ժառանգյ չի կար։

Ընդրանց սըէրտը միշտ տըխուր ար, արտասունքը աշկերին։

Դե կոզի ասըմ ըն ամմեն հինչը մարթ փողավ կառնի, ամմա սոտ ա, դե էք ժառանգյը փողավ առ, թա օնիս վէչ, յա էլ էք հիվանդ մարթին փողավ ետ պէր, էհ լոխ սոտ ա՛.,.

Կարըմ ըս լհա̀ ջա̀հիլ վախտըտ մին օր տես, թա չէ լոխ սոտ ա։ Սէրը սոտ ա, տերը սոտ ա, մին կա, մին կա վըէ՛չ։

Մին օր ըտրանց պալատըն ա կյամ մին դա̀րվիշ, սև-սընդա̀քար, քեթը կըէռ, պուզտի փափաղավ, մաշված, էրզա̀ն, չոր-չոփ։

Կյամ ա պալատին հայաթը, մին քարի նստըմ, ասըմ. - Թաքավէրըն ապրած կենա, վէր ծեր օրը օրախ անց կենա, ինք առ էս կյա̀րմո̀ւր խընձո̀րը, կեսը տու կէր, կեսը թաքուհին։ Ծըեզ էրկու տըղա կինի, մինը ծըեզ, մինը՝ ինձ։ Թա ռազի յըք, խնձո̀րը էր կալիք, թա ռազի չըք, յոր միք օնիլ։

Թաքավէրը նան թաքուհին ռազի յըն կըենըմ։ Էտ դա̀րվիշը խընձո̀րը տամ ա ընդրանց, ինքը աշկա կորչըմ։ Էտ խընձո̀րին կեսը թաքավէրըն ա օտըմ, կեսը թաքուհին։

Անց ա կըենըմ իննը ամիս, իննը օր, իննը ժամ, իննը մունուտ, իննը սեկունդ, աստված ըտրանց էրկու տըղա յա տամ։ Մին խըրեգյ մեծին անըմը Արմեն ըն տինըմ, ըտրանա պուճուրին անըմը՝ Զարմեն։ Ըտրանք վէշ թա ամիսնըէրավ, օրէրավ ըն մըծանըմ, կյեղեցկանըմ, տըէռնըմ կյեղեցիկ տըղերք։

Մին օր, մին էլ ըն տըեսնըմ դա̈րվի2ը մըռխկված, պըճըճնա̈ծ ունքերը ո̈ւրո̈ւր տըված, եկավ, առանց խոսելի եր կալավ Արմենին, թա տանի: Դե հի՞նչ անին թաքավերը նան թաքուհին: Ընդրանց սըերտը 2ատ ար ցավըմ, լա̈ց ին ինըմ, դե էլ օրի2 թա̈հրը չի կար, խոսկ ին տըվալ:

Տանըմ վախտը թաքուն Արմենը Զարմենին ասըմ ա, - Զարմեն, վեր մեր բախչին վարթերը չուրանան, էն վախտը իմ հարայիս հըսի, հա՛:

Դա̈րվի2ը ըտրան եր կալավ, քյինից:

Արմենին հետան հարը նան մարը էնքան լա̈ց իլին, վեր ընդրանց ըրտաունքը գյո̈լեր տըեռին:

Ըտրանց թողիք ըտեղ, տըեսնանք հի՞2տեղ տարին Արմենին:

Արմենին դա̈րվի2ը տարավ մին 2ատ հեռու հա̈նդ, ընդեղ մին մեծ բախչա կար, բախչին մեջին մին ամարաթ: Նի մըտին էտ ամարաթը: Ամարա՛թ, հինչ ամարա՛թ, պատերը վըեսկե, պո̈լը 2ո̈ւ2ա̈, լոխ օթախնին լիքը ա2խարքիս լա̈վ-լա̈վ պեներավը, սըրքերավը, ոտելեղենավը: Էտ դա̈րվի2ը մին կախարթական կավազան էլ օնար: Ըտրանավ նա մարթ-կանցը քըցըմ ար թորենը, խըրավըմ, ոտըմ:

Դա̈րվի2ը օզըմ ար Արմենին էլ քըցի թորենը, ոտի: Նա Արմենին թողըմ ա տանը, ինքը քյինըմ հեռու սարերան վըրի էծ վըերս անե, պերի, խրաված անի, ուտուցնի էտ տըղին, վեր քյուքանա, քյուքանալանը ետը, խըրավի, ոտի:

Դա̈րվի2ը կյամ ա, մին լա̈վ էծ վըերսած, օսավը քըցած: Թորենը վառըմ ա, պո̈ւլլո̈րցնըմ, կյրմըրցնըմ, էտ էծը խրավըմ ըն, ոտըմ: Իտի Արմենը համ մըծանըմ ա, համ քյուքանըմ:

Մին օր էլ վեր դա̈րվի2ը քյինըմ ա էծու վըերսի, Արմենը էտ ամարաթին օթախնին 2ոռ ար կյամ, մին էլ ա տըեսնում, մին օթախի պատի մեչի մին հիլի: Բիրդա̈ն էտ հիլուն մեչան մին թըրըխկոց լսից, տըեսավ էտ հիլուն մեչին մին ախճիգյ ըրվաց, մին հի՛նչ ախճիգյ, վեր ոտիս վեչ, խմիս վեչ, ըտրան ե2իս: Էտ ախճիգյը ըտրան կըլխու յա քըցում, վեր դա̈րվի2ը օզըմ ա ըտրան ոտի: Հա̈լա̈ վեչ էս, վեչ էն, մին էլ տեսին դա̈րվի2ը եկավ, մին էծ նըհետը պըերած: Էտ էծին ա2կերը հենց ար լիա̈ ծովին ճո̈ւլը, պոզերըն էլ հենց ար լիա̈ կըեռ-կըեռ թորը, լիա̈ պողվատ, լիա̈ ալմաստ, հենց 2ըղ2ողըմ ար: Տա էտ էծին էլ խրավից, կըերին, ետավ դա̈րվի2ը էլիա թոբենը մին լա̈վ կըծըցրավ, ըսկսից թոռնեն չորքըպո̈ւլորը պար կյալը, Արմենին էլ կըլո̈խ

տըվավ, վեր ինքըն էլ պար կյա, վեր Արմենին վըեն- նան էն կավա-զանավը փըռնի, ծիք տա, քըցի թորենը, խրավի, օտի:

Ամմա Արմենը գյուղում ար, էն ախճիդյըն ար ասալ, ըտրա հետի էլ ասից.- Դàրվիշ բաբա, յըես ըսօրի էնքան ման ըմ եկալ, վեր նըղացալ ըմ, կարիլ չըմ պար կյամ:

Դàրվիշը հիշքան կըլ՞ոխ տըվավ, ղաչանք ըրավ, թà եք, պար եք, Արմենը եկավ վեչ:

Ըտրանա ետը, ճարը կըտրած, եկավ նի մըտավ ամարաթը, ըսկսից զր՞ուց անիլը:

Ջ՞ուր՞ուցին վախտը Արմենն ասից. - Դերվիշ բաբա, յըես էլ ըմ օզըմ կյամ էն սարերը, յըես էլ ըմ օզըմ էծ վըերս անիմ:

Դàրվիշը հàլà առաչ օզից վըեչ, ետավ ռազի կացավ:

Էքսը քյինում ըն վըերսի:

Էտ օրը շատ ման եկին, էծ չի քըթին: Ինդի վախտը էծավ լիքը կիներ, ամմա էտ օրը կար վեչ:

Ետ տըեռնալիս տեսին մին կանանչ լենջի մին շատ կյեղեցիկ բախրա յա ըրածըմ:

Արմենը ծիյին նոխտան պեց ա թողըմ, ծին քըշըմ էտ բախրին հետան:

Էտ բախրան բախրա չար, մին ջաղու պառավի ախճիգյ ար: Տա ամմեն օր բախրի մորթի ար շոռ օնըմ, տուս կյամ, ջàհիլ-ջըհ՞ուլ վըերսկան տըղորց ՞ուրàն անավ անըմ:

Տա փախչըմ ա, նի մըննըմ մին մեծ, խոր կարան: Արմենը ըտրա հետան կյամ ա, թա նի մըննի կարանը, մին էլ ա տըեսնըմ ՞ուրàն առաչին մին պառավ կընեգյ, կըլխին յրան կա զնած պըռոշնին միչև տափը կախ ընգած, ծեռքին մին կավազան:

Էտ պառավ կընեգյը ըջըղված ասից. - Հեռու կաց էտ կարանան, տու քանի՞ կըլխանի յըս, վեր եկալ ըս իմ վըեղըս հերիք չի, հàլà օզըմ ըս իմ նախշուն ջեյրանըս էլ փըռնիս: Օխծը ՞ուրàն պոռտավը, դուշը ՞ուրàն թեավը էս դ՞ուերքը եկած չի, վըեր տու եկալ ըս:

Արմենը, վըեր տարվալ ար էտ ջեյրանավը, ասից.

- Ա՛յ պառավ, եք քու ախճիգյըտ ինձ տո:

Պառավը շատ խոսելանը, շատ տես-տեն ծիքյ տալանը ետը ասից. - Լàվ, հի՞նչ ըմ ասըմ, մինակ ախչիգյըս օզողը բեդմա ՞ուր՞ուցյունան սիաթի

վեցան ըսկըսած, միչև քըշերավան սըհաթի օթը ինձ նհետ կարտի հաղ անի: Ճըրաքյըն էլ կտինինք կատվին կըլխին, թա ճըրաքյը եր ընգավ, կատվին կըլխա՛ն, էն ա տու հախտեցիր, թա ճըրաքյը եր չընգավ կատվին կըլխան, էն ա յըես քյըեզ իմ կախարթական կավազանավըս քար ըմ շինելու, հունցու հետե՛, իտի առաչիտ տըեսնը՞մ ը՛ս, բա̈գյերի, խաների, թաքավերների տըղերքը, լոխճին քար ըմ շինա՛լ:

Արմենը ռազի յա կըենըմ:

Ճա̈շը օտելանը ետը ըտահանք նըստըմ ըն կարտի հաղ անըմ: Սկըսըմ ա ծեքյը տալը, ամմա հա̈լա̈ կատուն տեղան տո̈ւրո̈ւր չի կյամ: Արմենին հույսը կըտըրըմ ա: Վերչը վեր լո̈ւսանըմ ա, էտ պառավը Արմենին քար ա շինըմ: Արմենին ըտեղ քար թողինք, կյանք էտ Զարմենան խոսինք:

Զարմենը քըշերավը եր ա կըենըմ, տըեսնըմ, վեր ո̈ւրա̈նը բախչին վարթերը ճըլլո̈րալ ըն:

Հորը նան մորը դույուղ ա անըմ, ո̈ւրա̈ն զենքը-զրահը յոր օնըմ, հրեղան ծին նըստըմ, քյինըմ ախպորը հըրային:

Զարմենը ծին քըշըմ ա, հըսնըմ մին դո̈ւզ տեղ, էտ դո̈ւզ տեղը հասար քաշած մին բախչա, բախչին մեչին մին ամարաթ, էտ էլ դա̈րվիշին ամարաթը: Տա վեր նի յա մընըմ էտ ամարաթը, դա̈րվիշը գյո̈ւղո̈ւմ ա, թա Արմենն ա, էնքան ո̈ւրո̈ւր նըման ըն ինըմ: Ասըմ ա. - Բալա ջան, նըղացած կինիս, եք նստի, դինջաց:

Ըտրանք սկըսըմ ըն զո̈ւրո̈ւց անիլը: Դա̈րվիշըն ասըմ ա.

- Բա վըերսը հի՞նչ իլավ, վըերս չիկյա՛ էն սարերըմը:

Վեր իտի յա ասըմ, Զարմենը դա̈ստի գյուդում ա, թա ճո̈ւրը ըշտըղավ ա քյինըմ:

Ասըմ ա. - Դա̈րվիշ բաբա, վըերս չի պըտահեց, յըես էքուծ էլ կըքյինիմ, բա̈լքյա̈ս էքուծ վըերս պըտաhի:

Վեր մին խըրեգյ լո̈ւսո̈ւանըմ ա, դա̈րվիշը եր ա կըենըմ, քյինըմ սարը, Զարմենն էլ ո̈ւրա̈ն պադրաստոթունն ա քաշըմ, վեր քյինի ախպորը հետան, մին էլ ա տըեսնըմ մին թըրըխկոց լըսվից:

Տեսնըմ ա պատին հիլո̈ւն մեչին մին կյեղեցիկ ախճիգյ: Ախճիգյը գյուդո̈ւմ ա, վեր էտ Արմենը չի:

Ըտրան հըսկըցնըմ ա, ասըմ. - Այ կյեղեցիկ տըղա, դե վեր քյինըմ ըս ախպորըտ հարային, մետըտ պահի խոսկերքըս: Վեր էս դո̈ւզ տըեղերան

տո՞ւս կյաս, թա քյինիս բիդի սարերը, առաչըտ մին թումբ ա տո՞ւս կյալու, էտ թումբին դալուն կընցնիս, ընդեղ մին կանանչ հանդըմ մին դա՜շա՜նգյ բախրա յըս տըեսնալու ըրածըմ: Էտ բախրան էնքան դա՜շա՜նգյ ա ինելու, վեր ասելու վըս թա օտիմ վեչ, խըմիմ վե՛չ, էս բախրին եշիմ: Վեր ընդրա հետան ընգնիս, նա փախչելու յա, նի մըննի մին կարան: Ընդրան կարիլ չըս փըռնիս, քանի վեր նա մին ջաղու պառավի ախճիգյ ա, վեչ թա էն սարին սիրուն բախրան: Հա՜լա՜ միչև էտ, էն դո՞ւզ տըեղավը քյինա՜լիս իրեք մոկըն կը փըռնիս, քըցիս ծոցըտ: Ըտրանք վերչըմը քյըեզ պետկը կըկյան:

Զարմենը էտ լոխ վեր լըսըմ ա, ո՞ւրա՜ն զենքը-զըրահը յոր ա օնըմ, իրեղան ծին նըստըմ, քյինըմ: Ճընապարին իրեք մոկըն ա յոր օնըմ, տինըմ ջուբումը: Զարմենը շատ տըեսըտըեն ման եկավ, պեն չի ճարից, վերչը լհա՜ օզըմ ար, թա ետ տըեռնա, մին էլ տըեսավ մին կյեղեցիկ բախրա վազ տալավ եկավ առաչը ընգավ, փախավ, քյինից նի մըտավ կարանը: Զարմենը բախրին հետան ծին քըշից, կարանը հըսավ, սկսից էտ կարանին քարերը քանդիլը, վեր նի մըննի, բախրան փըռնի, ամմա մին էլ տըեսավ մին ջաղու-պառավ ա կյամ, կախարթական կավազանը ծըեռքին: Էտ պառավը մին կյըշըկյըո՞ղ մին սըփաթ կըտրված զատ ար, պըռոշնին էրգյան, միչև տափը:

Տա կըզնըված, աշկերը ա՜ռնա՜վ լըցած կյամ ա, վըեննը տափին կյամ, ասըմ. - Տու քա՞նի կըլխանի յըս, վեր վըեննըտ իմ վըեղըմըն ըս տիրալ: Օխծը ո՞ւրա՜ն պոռտավը, դուշը ո՞ւրա՜ն թևավը կարիլ չի ըստեղ կյա, տու եկալ ըս, հը՛ը՛ ը՛, հա՜լա՜ էտ հերիք չի՞, իմ ըխճըկանըս հետան էլ ըս ընգա՛լ:

Զարմենը պառավին խոսկերքը իսկի վեջան չի քըցից: Ետ տըեռավ ասից. - Իմ կյեղեցիկ բախրաս էս ա ըստեղ, բեղմա հանիմ:

- Էտ բախրա չի, իմ ախճիգյըն ա:

-Զարմենը թա. - Վեր իտի յա, բեղմա հանիմ:

Ասից. - Տու մինա՜կ մին պայմանավ կը կարիս ընդրան յոր օնիս: Էտ պայմանըն էլ էն ա, վեր էրկուսավ բեղմա կարտի տանք: Ճըրաքյը հեն ա ինելու կատվին կըլխին, թա վեր ճըրաքյը կատվին կըլխան եր ընգնի՛, ախճիգյըս քյըեզ հալալ, քու մոր կաթնին նըման, . թա ճըրաքյը կատվին կըլխան միչև լո՞ւս եր չընգնի, յըես քյըեզ քարըմ շինելու: Հա՜լա՜ եշի, տըես էն քարերը: Ընդրանք լոխ քյըեզ նըման ջահիլ տըղերք ըն իլալ, լոխ բագյզադա-խանզադեքյ, լոխ թաքավերի տըղերք:

Զարմենը ռազի կացավ, ասից.-Թա կարիմ վէչ, թող քու կավազանըտ ինձ էլ քար շինի:

Ըտրանք ըսկըսեցին կարտի տալը մին օթախի մէչի, օթախին մէշտեղը մին ստո̈լի յրա: Էտ ստո̈լին կոխկին էլ կատուն, ճըրաքյը կըլխին: Ո̈ւրո̈ւզյո̈ւնա̈նց միչև քըշերվա կըեսը ըտրանք կարտի տըվէն, ամմա հա̈լա̈ կատուն տըեղան տո̈ւրո̈ւր չար եկալ: Զարմենը մին մո̈կնը հանից, քըցից կատվին առաչը: Կատուն օզից տո̈ւրո̈ւր կյա, ամմա պառավը յրան ճըղ-ղաց: Ըտրանք կարտի տվին, կարտի՛, Զարմենը տըեսավ, վըեր վըեր-ցակնին կանչըմ ըն: Երգյինքըմը ասթխերը մա̈ր ըն մըննըմ մինը մինին հետան, սարերին քըմական էն ո̈ւրո̈ւր յրա կյո̈ւտ-կյո̈ւտ իլա̈ծ թըխպերին մին դո̈լը ըսկըսալ ա կյըմրին տալը, լո̈ւսը մըհենգյ-մըհենգյ կը ծաքյի: Զարմենը էրկունջի մոկնը ծոցան թաքուն հանից, քըցից կատվին առաչը:

Կատուն օզից յրա պըրծընի, մոկնը փըռնի, ամմա պառավը մին հենց ճըղղաց, վէր կատուն սառավ տըեղըմը: Վէր ծէքյը տըվավ, Զարմենը իրեքինջի մոկնը քըցից կատվին առաչը: Կատուն ճըրաքը թող ըրավ, վազ տըվավ մոկնին հետան: Պառավը օզից, թա կավազանը յոր օնի, Զարմենին թըխի, քար շինի, ամմա էտ մունուտին Զարմենը պառավին ծըեռքան կաազանը ինքյ կալավ, յրա պերավ պառավին կըլխին, ասից. - էս մունուտիս ասի, թա իմ ախպեր հոր ա:

Պառավը թո̈ւլա̈ցած, օժա ընգած, տարավ նշանց տըվավ էն լոխ քարերը, էտ լոխ քարերանը տըենն էլ Արմենին քարը:

Զարմենը թորը հանից, էտ պառավին կտոր-կտոր ըրավ: Ետավ էն կավազանավը թըխից էտ քարերին լոխճին էլ սըղըցրավ: Լոխհան վերչը-մըն էլ ո̈ւրա̈ն ախպորը սըղըցրավ:

Վէր լոխ կենթանոթուն ըստացին, էտ բա̈զյզադեքյը, խանզադեքյը, թաքավերին տըղերքը եկին ո̈ւրա̈նց ազադողին ծըեռքը պաչէցին, շունրա-կալ իլին, քյեցին ո̈ւրա̈նց հայրենիքը:

Արմենը նան Զարմենք էտ ըխճըկանը եր կալին, եկին դա̈րվիշին ամարաթը: Դա̈րվիշը վէր ըտրանց տըեսավ, շատ ուրխացավ, մըթկըմը ասից. «Մինս էրկու յա տըեռալ, էրկուսս՝ իրեք՛»:

Տա թորենը վառից, թիժըըցրավ, չո̈ւրքուպո̈ւլլո̈ր կյըմըըցըրավ, ալավը երգյինք հըսավ: Տա պերավ մին էծ խըըրավից, կըերին, ետավ սկսից թոռնին չորս դո̈լին պար կյալը: Արմենին ասից, վըեր կյա, պար կյա:

Արմենը սայաղ կացավ, ասից. - Դարվիշ բաբա, առաչ տու պար եկ, ետավ՝ յըես:

Էտ վեր լսից դա̀րվիշը մին էլ սկսից պար կյալը թոռնին ղըրղը-ներավը: Զարմենը կախարդական կավազանը քըցից վըեննը, շոռ տըվավ: Դա̀րվիշը ընգավ թորենը, էրվից:

Համին էտ վախտը էն պատին հիլուն մեշին ախճիդյը ճըղղաց, ասից. - Դե հա՛, շո̀ւտ ըրիք թոռնին իրեսը ծասկեցիք, թա չէ, դա̀րվիշը մին էլ տո̀ւս կըկյա̀: Զարմենը դա̀ստի թոռնին իրեսը ծասկից:

Դա̀րվիշը հիշքան հարայ տըվավ, վեր թորենը ծըհանավը խառնին, ամմա ախճիգյը ասից. Խառնիք վեչ ծըհանավը, վեր խառնեցիք դա̀րվիշը սըղանալու յա, ծըեզ օտի:

Խառնըմ չըն, իտի էլ թողըմ ըն, միչև վեր դա̀րվիշը էրվըմ ա, մոխեր տըեռնըմ: Արմենը շո̀ւտ ա անըմ, ճելլի-ճելլի պատին հիլին կոտըըմ, էն ըխճըկանը հանըմ: Էտ ախճիգյը էնքան կյեղեցիկ ար, վեր մարթ եշելիս օզըմ ար, թա օշը տանի:

Արմենը նան Զարմենը դա̀րվիշին հարուստոթունը լոխ յոր ըն օնըմ, էտ էրկու ըխճըկորցը նըհետ, ճընապա ընգնըմ ո̀ւրա̀նց հայրենիքը ո̀ւրա̀նց պալատը:

Հա̀րը նան մարը վեր տըեսնըմ ըն ո̀ւրա̀նց տըղերքը սաղ-սալամաթ ըտեղ կաղնած, շատ ուրխանըմ ըն: Ըտրանց հետի քառասուն օր, քառասուն քըշեր հըրսանիք ըն անըմ, փըսակըմ էն ըխճըկորցը նըհետ: Ժողովուրթըն էլ ա լիանըմ: Ետավ ըտրանք օրախ ապրըմ ըն: Հա̀րը շատ ար պըռավալ: Ո̀ւրա̀ն հարուստոթունն էլ կես ա անըմ, կեսը տամ Արմենին, կեսըն էլ՝ Զարմենին, իշխանոթունն էլ ո̀ւրա̀նց տամ: Իտի էլ մարթըկընեգյ օրախ, բախտավեր ապրըմ ըն միչև ո̀ւրա̀նց գյանքին վերչը, ո̀ւրա̀նց սարի մընան կաղնած տըղորցը դըլվըմը:

Չարը պատժվից, պարին հախտից:

20.ԹՌԵՎԱՎԵՐ ԾԻՆ

Ինըմ ա, չինըմ մին թաքավեր: Էտ թաքավերին ինըմ ա իրեք տղա:

Մին օր էտ թաքավերը մահու յրա յա ինո̈ւմ, կանչում ա տըղորցը ո̈ւրա̈ն կոշտը, ասում.- Ա՛ բալեք, ըշտեղ օզըմ ըք, քյինեցիք, ամմա դիբի արևը մա̈ր մըննելի դո̈լը քյինիք վէչ:

Հա̈րը ո̈ւրա̈ն տըղորցը խելք-խրատ տալան ետը մըեռնում ա՛:

Անց ա կըենում մին քանի տարի: Մըեծ տղան ախպորցն ասըմ ա,- Ա՛յ ախպերք, տըեսնաս մըեր հա̈ր խե՞ ասից, թա դիբի արևը մա̈ր մըննելի դո̈լը քյինիք վէչ: Ցըես քյինալու յըմ, տըեսնամ հի՞նչ կա ընդեղ:

Ասըմ ա հու՛ ճընապարվըմ:

Քյընըմ ա, քյընըմ, շատ ա քյընըմ, թա խըրեգյ ա քյընըմ, շատ նան խըրեգյը ինքը կըգյիդա̈, վերչը հըսնըմ ա մին բաղի: Էտ բաղը իրեք տո̈ռնը օնէր:

Առաչին տըռնավը նի յա մըննըմ, տըեսնըմ ըտեղ մին տոն կա: Մին խըրեգյ ըտեղ նըստըմ ա, թա դինջանա, մին էլ ա տըեսնըմ երգյինքը ըրոտաց, կըծընկեծին ըրավ, էն մըթեն թըխպերին մեչան թևավեր ծի նստած մին ախճիգյ վըեր եկավ, թորը հանից, մին հենց թըխից, վըեր էտ տղին կըլո̈խը թըռավ, հա̈լա̈ միչև օրըս էլ թռչում ա:

Իտի էլ միշնա̈կ ախպերըն ա կյամ, ասըմ. - Ա՛ մար, ախպերս քյինից, եկավ վէչ, քյինիմ տըեսնամ էն արևը մար մըննըմ տըեղը հի՞նչ կա, վըեր ախպերըս եկավ վէչ: Ասըմ ա, ճընապար ընգնում:

Քյնըմ ա, քյնըմ, շատ ա քյնըմ, թա խըրեգյ, շատ նան խըրեգյը ինքն ա գյուղո̈ւմ, հըսնըմ ա մին բաղի: Էտ բաղը իրեք տո̈ռնը օնէր: Տա էրկունջի տըռնավը նի յա մըննըմ, նստում, թա պատառ դինջանա, մին էլ ա տըեսնըմ երգյինքը ըրոտաց, կըծընկեծին ըրավ, էտ մըթեն թըխպերին մեչան մին թևավեր ծի նստած ախճիգյ քըշացավ, սորը հանից, մին հենց թըխից, վըեր էտ միշնա̈կ տըղին կըլո̈խը թըռավ, միջև մհեկ էլ հա̈լա̈ թըռչըմ ա:

Պուճուր ախպերը տըեսնըմ ա վըեր ո̈ւրա̈ն ախպերքը կյամ չըն, մորն ասըմ ա. - Ա՛ մար, ախպերքս քյեցին, էլ եկին վէչ: Ցըես էլ քյինիմ, տըեսնամ էն արևը մար մըննում տըեղը հի՛նչ կա, վըեր ախպերքս եկին վէչ:

Մարը տըեսնըմ ա, վըեր պուճուր տըղան դո̈ւզ ա խոսըմ, կոզի սըերտը խըրըվխարավըն ա կյամ, կոզի օզըմ չի թողի, ամմա ո̈ւրա̈ն մարթին կրակի թորը հանըմ ա կյեղած տըեղան, տամ էտ տըղին, ասըմ.

-Էր կալ էս թորը, տու ըտրանավ անհաղթ կինիս, էս թորը հուր ծըեռք ընգնի, էն շատ օժավ կինի:

Թաքավերին պուճուր տըղան էտ թորը յոր ա օնըմ, քյընըմ: Քյընըմ ա քյընըմ, շատ ա քյընըմ, թա խըրեկ, շատ նան խըրեկը ինքն ա գյուղո՛ւմ, քյընըմ ա հըսնըմ մին բաղի, համին էտ բաղըն ա ինո՛ւմ, իրեք տըռնանի:

Տա նի յա մըննըմ իրեքինջի տըռնավը, տըեսնըմ մին ախպո՛ւր: Էտ ըխպրին քըշտին նըստում ա, թա պատառ դինջանա, տըեսնըմ ա երգյին-քավը մին յղոնեգյ ա թըռչում: Նըետը պեց ա թողըմ, յղոնիգյը վըեր քըցըմ, խըրավըլ, թա օտի, մին էլ ա տըեսնում երգյինքը ըրոտաց, կըծընկեծին ըրավ, էն սըեվ, մըթնած թըխպերան թեավեր ծի նստած մին ախճիգյ եր եկավ, սորը հանից, թա թաքավերին պուճուր տըղին կըլո՛խը թըռցնի, էտ տըղան ո՛ւրա՛ն թորը կըլխանը երը պահից, էտ թեավեր ծիյավերը ծիյան եր ընգավ: Էտ տըղան օզից ընդրա կըլո՛խը կըտրի, ամմա էտ ախճիգյը ղաչանք-պըղատանք ըրավ, մասկան հանից, ասից.- Յըես ախճիգյ ըմ, ինձ սպանիլ մի:

-Սպանիլ չըմ, վըեր ինձ կյաս:

Էտ կյեղեցիկ ախճիգյը ռազի յա կըենըմ, լի՜ օզըմ ըն թա՜ նի մըննին տոն, էտ տըղան մին էլ ա տըեսնում էտ ախչիգյը աշկին առաչան կորավ, բաթմիշ իլավ: Տես ա եշըմ, տեն ա եշըմ ախճիգյ չի կար:

Էտ տրղան հույսը, հավատը կըտրած թողըմ ա, հեռանըմ, էլիա ճընապար ընգնըմ, քյընըմ:

Քյընըմ ա քյընըմ, հըսնում մին պըեցո՛ւր ամարաթի: Էտ ամարաթն ա նի մըննում, տըեսնում մին դև. էն էլ կընեգյ դև: Էտ կընեգյ դևը հըրցըփորց ա անըմ, թա էտ տըղան ըշտե՞ղ ա քյընըմ:

Էտ տըղան լոխ նաղլ ա անըմ: Ասըմ ա.

-Յըես մըհեկ քյընում ըմ էն ըխճըկանը հետան, վեր աշկիս առաչան կորալ ա:

Էտ կընեգյ դևը ըտրան ճընապարը նշանց ա տամ, ասըմ. - Տու իտի քյինա, կըհսնիս մին ծովի: Էտ ծովին յրան մին կարմունջ կա, կարմունջին զերավ անց կը կըենաս, կտըեսնաս մին արկաթի տո՛ռնը: Էտ արկաթի տըռնին էրկու դո՛լան, էրկու առո՛ւծ ա ինելու կապած: Ծիտ կըես կանիս, կըեսը մին առո՛ւծին տաս, կըեսն էլ՝ էն մին: Տո՛ռնը կպենաս նի մըննիս մին բախչա: Էտ բախչին քըշտին մին կյում ա ինելու, ըշտեղ էտ ըխճըկանը

ծիյանքը կապած ըն: Կյումին տո̏ռնը պեց կանիս, նի մըննիս: Էն ծիյանցը մեչին ինելու լա համին էն թևավեր ծին: Նի կը մըննիս թևավեր ծիյին փորին տակը, կյողլը կըենաս, ընդրա փորին տակին մին տըմբլա կա կապած: Վեր նի մըննիս փորին տակը, էտ ծին վըններավը թըխելու վա էտ տըմբլին: Տըմբլան սա̀ս ա անելու: Էտ վախտը տու տո̏ւս կըկյաս ծիյին փորին տական, մին քյունջում կյողլը կըենաս:

Տմբլին սա̀սին յրան էտ ախճիգլը կյալու յա, թա̀ տըեսնա, խե՞յա ծին տըմբլան թակըմ, հու մին պեն չը պըտահա՛լ: Տըեսնալու յա վեչ մին պեն չի կա, ծիյին յրան կըզնվելու յա, ետ տըեռնա: Տու տո̏ւս կը կյաս մի՛ն էլ նի մըննիս ծիյին փորին տակը, էլիա ծին վըններավյը թըխելու յա տըմբլին: Էն ախճիգլը կյալու յա, տըեսնա, վեչ մին պեն չիկա, մըթկըմը ասելու վա. «Բա̀լքա̀ս սոված ա, օտել ա օզըմ»: Մին խըրեգյ չա̀միչ ա տալու ծիյին, քյընա̀: Տու էլիա կյողլը կացած տըեղատ տո̏ւս կըկյաս, նի մըննիս ծիյին փորին տակը: Ծին վըններավյը էլիա տըմբլան թակելու վա: Սա̀սը եր ա ինելու: Էն ախճիգյը էլիա կյալու յա, տըեսնա վեչ մին պեն չիկա, ասելու վա. «Ա՛յ ծի, խե՞յըս իտի անըմ, հի՞նչ կա, հինչքան խըլըշկոտում ըմ, պեն չի կա, դե մըհեկանց տըենը էլ տըմբլին սա̀սը հանիս վըեչ, թող մին խըրեգյ դինջ քոն ինիմ»: Չորսինջի դո̏նըմը էլիա նի կը մըննիս ծիյին փորին տակը: Էլ ծին վըններավը թըխելու չի տըմբլին, էլ սա̀ս չի հանելու: Տու դինջոթունավ տո̏ւս կը կյաս, քյընա̀ս էտ ըխճըկանը օթախին տո̏ռնը պենաս, տըեսնաս ախճիգյը քոն իլա̀ծ: Թորը ծըեռքիտ ընդրա  կըլխանը երը կը կաղնիս: Էն ըրազըմը տըեսնալու վա, վըեր ինքը հախտված ա, եր ա թըռչելու տըեղան, քյըեզ տըեսնալ նըբա̀ստ ո̏ւրթո̏ւմ ա օտելու, վըեր էլ ինքը քյըեզ խափիլ չի: Տու հըվատաս վեչ, միչև ինքը ասի վեչ. «Մորըս ծծած կաթնը վկա»: էն վախտը կըհվատաս, վըեր դո̏ւզ ա ասըմ: Վըեր ինքը էտ խոսկը ասի վեչ, տու ասել կըտաս, զոռ կանիս, վըեր ասի:

Էտ կընեգյ դևը էտ խոսկերքը ասելանը ետը, էտ տըղին մին ճըրա̀լի ճար ա տամ: Տա խըմըմ ա, էլ իվիլ ուժավանըմ: Ետնան էտ կընեգյ դևը ո̏ւրա̀ն մազերան էրկուսը տամ ա, ասըմ. - Վըեր տըժեր տըեղ կընգնիս , ո̏ւրո̏ւր կը քսիս, յըես էն մունուտը քըշտիտ կինիմ, քյըեգ քյոմա̀գյ կանիմ:- Ասըմ ա պըռծնըմ, աշկա անհետանըմ, կորչում:

Էտ տըղան հունցր էն կընեգյ դևը ասալ ար, իտի էլ անըմ ա:

Վըեր թորը  հանած կաղնըմ ա էտ ըխճըկանը կըլխանը երը, ախճիգյը

արազըմը տըեսնըմ ա, վըեր ինքը հախտված ա, եր ա թըռչըմ տըեղան, ո̈ւրթո̈ւմ օտըմ, թա էլ խափիլ չի, տըղան ասըմ ա. - Դե ո̈ւրթո̈ւմ կըեր քու մոր ծըծած կաթնավը։

Ախճիգյը ո̈ւրթո̈ւմ օտելանը ետը ասըմ ա. - Քյըեզ սըվըրցընողին լո̈ւզո̈ւն պըպանձվի։

Ըտրանք ըտեղ հա̈շտվըմ ըն։

Մին դո̈նըմ առավոտը  էտ տըղան թեավեր ծին նըստում ա, քյընըմ վըերսի։ Ծովան էն դո̈լը անց կըենալավ, տըեսնըմ ա մին բախրա։ Օզըմ ա թա վըերսի, ամմա էն ըխճըկանը պատկերը մըետն ա ընգնում, ծըեռքերը թո̈ւլա̈նըմա, էլ կարըմ չի, թա վըերս անի։ Մին քանի հետ, վըեր իտի ծըեռքը թո̈ւլա̈նըմ ա, էլ կարըմ չի, թա վըերս անի, կյամ ա տոն, էն ըխճըկանը ասըմ։

Ախճիգյը ասըմ ա. - Դե վըեր իտի յա, մըհեկ էլ յըես կքյինիմ վըերս անիմ։

Տա թեավեր ծին նստըմ ա քյընըմ, մին հենգյ մունուտանը ետը աշխարքի վըերս ըրած, ծիյին պըեռնած կյամ ա։

Իտի մին քանի վախտ ապրըմ ըն։ Էտ տըղան ասըմ ա. - Իտի պեն չինիլ, ա յըես քյըեզ մատաղ, վըեր յըես տանը նըստիմ, տու քյինիս վըերս անիս պերիս։ Լա̈վն էն ա, մին պատկերիան պըերինք, պատկերտ քաշի, յըես էլ պատկերըտ տինիմ ծոցըմըս, ընդրանա ետը քյինիմ վըերս։

Իտի էլ անըմ ըն։ Մին պատկերիան ըն կանչըմ, պըերըմ, պատկերը քաշըմ ա։ Պատկերը քըշելանը ետը էտ պատկերիանին քըցըմ ըն ծովը, խեխտըմ, վըեր էտ ըխճըկանը տըեղը վեչ մինը գյիդա̈ վեչ։ Մին դո̈նըմ տըղան պատկերը տընում ա ծոցըմը, քյընըմ վըերսի, վըեր վըերսին վախտը պատկերը ջուբան հանի, եշի, սըերտը պենվա, եշիլան օժը շըտանա։ Մին հըետ վըեր իտի յա անըմ, հակառակի նման ծովան քամի յա փըշում, էտ պատկերը ընգնում ա ծովը, լափուն տանըմ ա հեռու։

Տըղան մընըմ ա մա̈թա̈լ։ Քուռուփեշմա̈ն ետ ա տըեռնում, կյամ տոն։ Մին քանի վախտ առանց էտ նկարի, մին թա̈հրա̈վ վըերսի յա քյընըմ։ Էտ նկարը ծովին էն մին դո̈լըն ա ընգնըմ, մին օրիշ թաքավերոթուն։ Էտ թաքավերին ծիյանքը մին օր պըերըմ ըն, թա ճո̈ւր տան, ամմա ձիյանքը ճո̈ւր չըն խըմըմ։ Գյա̈ղեքյը կյամ ըն թաքավերին ասըմ։ Թաքավերը ըջըղվըմ ա, հրամմայըմ, վըեր էն սհաթը ձիյանցը ճո̈ւր տան, ամմա էլհա

ծիյանքը ճո՛ւր չըն խըմըմ: Էտ գյա՛ղեքյը ըտեղերքը մին լա՛վ շոռ ըն կյամ, թա տըեսնան հի՞նչ կա, վըեր ձիյանքը խըրթնըմ ըն, ճո՛ւր չըն խըմում, տըեսնըմ ըն ըտեղ մին ալագյոզ ըխճըկա պատկեր: Ցոր ըն օնըմ, տանըմ ո՛ւրա՛նց թաքավերին տամ:

Թաքավերը տըեսնալը նըբա՛ստ սիրահարվըմ ա, օշը տանըմ ա, եր ընգնըմ: Էն մին օրը հրամմայում ա, զորք ըն հըվաքում, զորք ա ղըրկըմ ծովեն ղրաղը, վըեր էն ըխճըկանը քըթնին: Համին էտ օրը էտ տըղան վըերսի ար տո՛ւս եկալ: Վըեր հըսնըմ ա ծովին էտ մին ղրաղը, զորքը տըեսնըմ ա, հըցնըմ ա, - էտ խե՞ յըք հըվաքվալ ըտըեղ:

Ըտրանց մըեծը ասըմ ա. - Մին ըխճըկա պատկեր ըն ճարալ, թաքավերը մըեզ ղըրկալ ա էտ ախճիգյը ճարինք, տանինք ո՛ւրա՛ն հետի:

Էտ վըեր լըսըմ ա, էտ տըղան թևավեր ծին երգյինքյ ա հանըմ, ընդըղան քըշանըմ ըտրանց յրան, լըխճին կըտորըմ: Մինա՛կ մինն ա սաղ մընըմ, էն էլ քյընըմ ա, էտ լըխ ո՛ւրա՛նց թաքավերին նաղլ անըմ:

էտ թաքավերը վըեր լըսում ա, թա՛զա՛ղա՛ն զորք ա հըվաքըմ, ղըրկըմ ծովին ղրաղը:

Թաքավերին պուճուր տըղան էլիա յա նըստում թևավեր ծին, պըցրա՛նըմ երգինքը, քըշանըմ լըխճին կըտորըմ: Մինա՛կ մինն ա մընում, էն էլ խա՛բա՛րը տանըմ ա թաքավերին, թա՛ խստի-խստի պըեներ:

Թաքավերըն էլ զորք չօնար, նա քընենքյ ա անըմ, թա հունց անի, մին հընար, մին ճար քըթնի, էտ ըխճըկանը ո՛ւրա՛ն ծըեռքը քըցի:

Էտ վախտը մին պառավ կընեգյ կյամ ա թաքավերին կօշտը, ասըմ. - Թաքավերը ապրած կըենա. յըես կըքյինիմ էտ ըխճըկանը պըերիմ, քընենքյ մի անիլ:

Թաքավերը վըեր լըսըմ ա, ուրխանում ա, էտ պառավին ասըմ ա.

-Ա՛ պառավ, վըեր էտ ըխճըկանը ճարիս, պըերիս քըշռոթու-նավտ մին վըեսկե յըմ տալու:

Պառավը ճընապարվըմ ա, քյընըմ էտ ըխճըկանը հետան:

Խիլլա՛ ճընապար քյըննելանը ետը, պառավը նի յա մընըմ մին կըրասի մըեչ, ամմա հենց էտ սըհաթը թաքավերին պուճուր տըղան վըերսի քյեցած ա ինըմ: Տըեսնըմ ա առաչին մին կարաս, մուտանըմ ա, տըեսնըմ կարասին մըեշին մին պառավ:

Հըրցընըմ ա, ասըմ. - Ա՛ նանի, տու հու՞ վըս, ըշտղացի՞ յըս, ըշտե՞ղ ըս քյընըմ:

Պառավըն ասըմ ա. - Այան քը մատաղ, մըեր քյարվանը ըստեղ ա իլա̀լ, քըշրիանա քյեցալ ա, յըես էլ էն ըմ իլա̀լ քոն իլած, մընացալ ըմ ըստեղ:

Թաքավերին պուճուր տըղին մըեխկըն ա կյամ, էտ պառավին յոր ա օնըմ, տանըմ ո̀ւրա̀նց տոն:

Վըեր օզըմ ըն թա նի մըննին բախչան, տըռնին քըշտին էրկու առո̀ւծնին օզըմ ըն, թա էտ պառավին ճոթ-ճոթ անին, պըտռնեն աչու ծախ քըցին, ամմա էն տըղան թողըմ չի, պըռավին տոն ա տանըմ:

Կընեգյը կըզնըվըմ ա, ասըմ.-էտ հո՞ր ըս պըերալ, էտ քոստ էծ կընգանը:

Էն տըղան էլ ասըմ ա. - Վեչինչ, թող կըենա, մըեզ ինչ ա անելու, պենա-կյործա կանի, քյո̀մա̀գյ կինի:

Մին առ ժամանակ էտ պառավը ըտըեղ կըենըմ ա, տըեսնըմ ա, վըեր համին էն ա խճիգյըն ա, վըեր նկարըմը իլա̀լ ա:

Էտ ախճիգյըն էլ սըվերըմ ա էտ պըռավին, միշտ մին տըեղ ըն տո̀ւս կյամ, քյընըմ ծովին ղրաղին ման կյամ:

Պառավը միշտ էլ իըրցնըմ ա, թա ըշտեղ ա ընդրա մարթին օծը, ինչի՞ մըեչի յա, ամմա ախճիգյը ասըմ ա, վըեր գյիդո̀ւմ չի:

Պառավը էտ ըխճըկանը ստիբըմ ա, վըեր մարթին օծին տըեղը գյիդա̀, ո̀ւրա̀ն ասի:

Էտ ախճիգյը, մարթը վըեր կյամ ա, իըրցընում ա:

Մարթը միյամիտ տըեղան ասըմ ա.

- Իմ օծըս էն ա աչ կուռանս յրան մին քար կա կապած, ընդրա մաչին :

- Էտ ախճիգյը ղա̀ստի պառավին ասըմ ա:

Մին ղո̀նըմ մին լոթկի մըեչի պառավը նան էտ ախճիգյը քյընըմ ըն ման կյալ:

Պառավըն ասը մ ա.- Ջոնթիկըտ մըտատ քըցալ ըս, քյինիմ,պերիմ:

Պառավը տոն ա կյամ, տըեսնըմ էտ տըղան քոն իլա̀ծ: Նա թոռը յորա օնըմ, կոխըմ ըտրա սըերտը: Ետավ պառավը պեց ա անըմ ընդրա կըռնեն կապած քարը, մին քյա̀նդիր էլ յոր օնըմ, կյամ, վազ տամ լոթկան: Քարն էլ ծովըն ա քըցում, հենց վըեր լոթկա յա նըստըմ, էտ ըխճըկանը ծըեռքերը նան վըեններըը կըպոտըմ ա, լոթկան քըշում դիբի էն թաքավերին պալատը:

Վըեր տո̀ւս ըն կյամ ծովին էն մին ղըրաղը, էն թաքավերին ծառեքը ըտրանց տանըմ ըն թա քավերին կոշտը:

Թաքավերին պուճուր տըղան յարալու յա ինըմ, մին խիլլա՝ վախտ իտի մընըմ ա, վեր պատառ օշը կըլո՞խըն ա կյամ, էն կընեգյ դնին տված էրկու մազը ո՞ւրո՞ւր ա քըսըմ, էտ կընեգյ դնը կյամ ա։ Տա յարան լո՞ւզո՞ւմ ա, էտ տըղան լա՝վանըմ ա։ Էտ կընեգյ դնը գյիդա՝լա՝վ վեր էն օժը տըվող քարը պառավը ծովըն ա քըցալ, քյընըմ ա հանըմ, էլհա պերըմ կոռնը կապըմ։ Էտ տըղան էլհա էն համին տըղան ա տըեռնըմ։ Տա ո՞ւրա՝ն թևավեր ծին նստըմ ա, քյընըմ էտ քաղաքը, ըշտեղ էտ ըխճըկանը տարալ ըն։ Հեռվից-հեռու տըեսնըմ ա մին թուբուն մարթ հըվաքված։ Քըյնըմ ա մուտանըմ, տըեսնըմ ո՞ւրո՞ւրոցավ ըն ընգալ, մըեծըպուճուր լոխ ճո՞ւր ըն կըրըմ։ Ասը մ ա, - Էտ հի՞նչ ա պըտահալ, վըեր իտի ճո՞ւր ըք կըրըմ։

Ընդրանք կըլխընին կուրցրած ասըմ ըն. - Մըեր թաքավերը մին ախճիդյ ա պըերալ մին օրիշ էրգյիրա, ընդրա օշը տարալ ա, ընդրան քըցալ ըն մին արծաթի օթախ, մունք էլ ճո՞ւր ընք կըրըմ, ածըմ էն օթախը, վըեր էն ախճիգյը օշը կըլո՞խը հըվաքի։

Էտ խե՞ մինակ ճո՞ւր ըք կըրըմ, մին օրիշ ճար չըք անըմ։

- Ախճիգյըն ա իտի ասալ։

Թաքավերին տըղան մաննը կրծում ա, կըլո՞խ ա ընգնըմ, վըեր գյիդացկանց ա իտի ըրալ։ Մուտանըմ ա մին կուճի ըխճըկա, ասըմ.

- Հինչ կի՞նի, կո՞լատ տաս, մին խըրըեգյ ճո՞ւր խըմիմ, լհա մին էրկու կում։

Ախճիգյը կո՞լան տամ ա։ Էտ տըղան էն ըխճըկանը տըված մըտանին պըրա՝նան քըցում ա կո՞լին մեչը։ Էտ ախճիգյը կո՞լին ճո՞ւրը տանըմ ա, ածըմ էն արծաթի օթախը։ Էն ա խճիգյը տըեսնըմ ա, վըեր մին պըեն զընգաց։

Տըեղան եր ա թըռչըմ, տըեսնըմ ո՞ւրա՝ն մըտանին ա, լոխ կըլխու վա ընգնըմ, ասըմ.- Դե բո՞լ ա, հերիք ա, հիշքան ճո՞ւր ըք կըրալ։

Թաքավերը ըսկըսըմ ա հըրսանիքի պադրաստոթուն տըեսնալը։

Համին էտ քըշերը էտ տըղան թաքավերին մեծամեծներին խընթըրըմ ա, վըեր ինքըն էլ հըրսանիք կյա։

Ըտրան համեցեքյ ըն անըմ։

Հըրսանիքը ըսկըսվըմ ա, մինը երք ա ասըմ, մինը պար ա կյամ, լոխ էլ ուրխանըմ ըն։

Էտ տըղան էլ թաքավերան իրավունք ա ստանըմ, վըեր ընդրա պատվին, ինքըն էլ ո՞ւրա՝ն թևավեր ծիյավը պար կյա։ Թաքավերը թողըմ ա։

Էտ տըղան աչըծՙխ կտորըմ ա ժողովուրթին, թողըմ մինՙկ թաքավերին, էն ըխճըկանը, մին էլ էն պառավին, մին էլ էն խՙբՙր տանողին: Թաքավերին նան խՙբՙր տանողին կապըմ ա ծիյին հՙքյվՙն, քաշ-քաշ անել տամ, վըեր մըեծ պատառը անգուճըն ա մընըմ: Պառավին քըցըմ ա մին կարաս, պերանը մին լՙվ կապըմ, վըեր քյինի սովածն սատկի:

Ըխճըկանը, ՙուրՙն նկարը յոր ա օնըմ, կյամ տոնը, իլՙծ-չիլՙծը, վըեսկե-արծաթը լոխ հըվաքըմ, կյամ ՙուրՙն հայրենիքը, մորը կոշտը: Տըեսնըմ ա մարը պըռավալ ա, էնքան տղին ճընապարը պահալ ա, էնքան եշալ ա, աշկը ճՙուր ա տըեռալ, մազերը սիպտՙկալ, թան տըեռալ, բալոցը դՙրդՙն կոչ եկալ, կըծեգյ տըեռա՛լ:

Էտ տըղան տըեռնըմ ա թաքավէր, ՙուրՙն հորը թափուր թախտին նստըմ, էն ախճիգյըն էլ թաքուհի: Ըտրանք ՙուրՙուր նըհետ շատ սերավ ապրըմ ըն: Մորը պատիվը հարսը նան տըղան պահըմ ըն, աշկի լՙուսի նման սիրըմ ըն, միչև ընդրա մըեռնիլը: Ըտրանա ետը խուխատար ըն տըեռնըմ, օրախ, բախտավեր ապրըմ:

Ժողովուրթըն էլ ա լՙվ, բՙուլըղ պահըմ:

Ընդրանք հասին ՙուրՙնց մուրազին, տուք էլ հասնիք ծըեր մուրազին: Ըշտեղ մին աշկը ճընապարին մար կա, բալին ըսպասող մար կա, պարով կյա, աշկը տըեսնա, սըերտը ուրխանա: Ըշտեղ մին մուրազը սըրտին մարթ կա, պարով մուրազը կաղարվի, ինձ նման մընա վէչ անկաղար, աշկը ճընապարին, սաղ զյանքըմը սպասըմ, օշը մըեթկը հՙլՙ մուրազին յրան, սըերտը սև:

Լոխ էլ լՙվ ապրին, օրախ, բախտավեր, իմը ընցա՛լ ա:

## 21.ԾՈ՝ւՎԻՆ ԾԱՌԸ

Ինո՝ւմ ա, չինո՝ւմ մին թաքավերի պառավ մար: Էտ պառավին մին թոռն ա ինո՝ւմ, ինքըն էլ տըղա: Տա մին օր ըշկո՝լան կյալիս, տըեսնըմ ա մին օրիշ պառավ կընեգյ, կաթնավ լիգյը կյեվաթը ծըեռքին քյընըմ ա: Էտ թաքավերին թոռնը մին քար ա յրա անըմ, կյեվաթը կոտրըմ, կաթնը եր ածըմ:

Պառավը ըտրան անիսկ ա տամ, ասըմ. -Ըստուծանա կըխընթըրիմ, վըեր տու ծո՝ւվին ծառին տըրրանաս:

Տըղան տոն ա կյամ, հաց օտըմ, տո՝ւս կյամ, թա քյինի, տատն ասըմ ա. - Ա՛ բալա, էտ ըշտե՞ղ ըս քյընըմ:

Թոռնը ասըմ ա. - Քյընըմ ըմ ծո՝ւվին ծառը ճարիմ:

- Բալա, ծո՝ւվի ծառ չի ինըմ, ծո՝ւն հավըն ա ածըմ:

- Բա վըեր ծո՝ւվի ծառ չի ինըմ, խե՞յա էն պառավը ինձ անիսկ տըվալ, ասալ. «Ծո՝ւվին ծառին տըրրանաս»:

Էտ տըղան տատին լըսըմ չի, ճընապարվըմ ա, քյընըմ:

Քյընըմ ա, քյընըմ, մին պառավ մարթի ռուջա՛ն կյամ:

Էտ պառավ մարթը ասըմ ա, - Ա՛յ տըղա, էս ճընապարավը քյինիլ մի ըտըղավ քյընացողը ետ չի կյամ:

Էտ տըղան անգուճ չօնըմ, քյընըմ ա:

Էտ պառավ մարթը ասըմ ա.- Դե վըեր քյընըմ ըս, քյընա՛:

Առաչտ մին սար ա կյալու: Էտ սարին քըշտին մին փոսըմ կյողլը կը կըենաս: Վըեր մըթնի, մին խիլլա՛ հեռու մին պեցուր ծառ ա ըրվալու: Էտ ծառին յրան իրեք ծո՝ւյա ինելու, վըեր ճըրաքի մընան լո՝ւս ա տալու:

Էտ ծառին տակին իրեք ղո՝վ ըն ինելու քոն իլա՛ծ: Տու կըլո՝խտ կը պըցրցնիս մին լա՛վ եշիս: Էտ դովերը ծեն չըն հանելու: Մին էլ կյողլը կը կենաս, էլիա կլոխտ պըցրցնիս եշիս: Էլիա ղո՝վերը ծեն չըն հանելու, քոն իլա՛ծ ըն ինելու: Էտ վախտը յավաշ-յավաշ եր կըկենաս քյինիս էտ փըլըստրատին տըվող իրեք ծո՝ւն պուք տաս, յոր օնիս:

Էտ տըղան քյընըմ ա, իտի անըմ: Ծո՝ւվին ծառին տակին քո՛ն իլա՛ծ ըն ինըմ իրեք ղո՝վ, վըեր տըղան իրեք ծո՝ւն պուք ա տամ, փախչըմ դիբի սարին էն ղո՝լը, ըտրանք զա՛ռթնըմ ըն, հարայ տամ:

Հա՛յ, հարա՛յ, տարա՛վ, հողածինը տարա՛վ...

Դե էլ ըշտե ղ, պըենը պըենավը անց ա կացալ: Էտ տըղան փախչելիս

ծո՞ւվին մինը ջուբան եր ա քըցըմ, կոտրըմ:

Ըտրա մեչան մին կյեղեցիկ ախճիգյ ա տո՞ւս կյամ, ասըմ. - Վա՛յ, հաց տվիք, վայ, ճո՞ւր տըվիք, սոված, ծարավ մըեռի՛:

Ամմա վըեչ հաց ա ինըմ, վըեչ ճո՞ւր: Էտ ախճիգյը իտի էլ մըեռնըմ ա:

Էտ տըղան կյամ ա, կյամ, շատ էրգյան ճընապար ա կյամ, տըեսնըմ մին կյետ: Էտ կյըետին ղրաղին ծո՞ւվին մինը կոտրըմ ա, մըեչան էլ ավելի կյեղեցիկ ախճիգյ ա տո՞ւս կյամ, ասըմ.- Վա՛յ ճո՞ւր տըվի՛ք, վայ հաց տըվի՛ք, սոված, ծարավ մըեռի:

Ճո՞ւրը ինո՞ւմ ա, ամմա հաց չի ինըմ: Էտ ախճիգյըն էլ ա մըեռնըմ: Ծըեռքին մընըմ ա մին ծո՞ւ : Էտ տըղան սուրփը-սուրփոց անելավ պահըմ ա աշկին լո՞ւսին մընան: Էնքան պահըմ ա, վըեր համ հաց, համ ճո՞ւր ա ճարըմ: Ո՞ւրա՞նց պալատան մուտանըմ ա, ընդըանա ետը ծուն կոտրըմ: Ծուվին մըեչան էն էրկու ըխճըրկանան էլ ավելի կյեղեցիկ մին ախճիգյ ա տո՞ւս կյամ, դա՞ստի ճըղղըմ:

Վա՛յ, հաց տվիք, վա՛յ, ճո՞ւր տըվի՛ք, սոված, ծարավ մըեռի՛: Էտ տըղան համ հաց ա տամ, համ ճո՞ւր: Էտ ախճիգյը մըեռնըմ չի: Տըղան ըտրա նըհետ կյամ ա ո՞ւրա՞նց տանան մուտանըմ, մին ըխպըրրի քըշտի էտ ախճիգյը ասըմ ա. -Ա յ տըղա, քյընա ինձ մըհար մին ծըեռք շո՞ր պըեր, վըեր կյենամ, կյամ ծըեր տոն, իտի համռթ ա:

Ըտըեղ մին չինա՞րի յա ինո՞ւմ: Էտ ախճիգյըն ասըմ ա. - Ա՛ չինարի ծառ, կըռաց, ես եր ինիմ քու էն պըեցո՞ւր ճըղնին կագնիմ, միչև ինձ հըետի շո՞ր կպերին:

Չինարին կըռանըմ ա, ախճիգյը ճըղնին նըստըմ ա, ծառը էլհա պըցրա՞նըմ ա:

-Էտ տըղան քյընըմ ա, թա շո՞ր պըերի, մին կյըշըկյրո՞ղ ախճիգյ կյամ ա ախպո՞ւրը, վըեր ճո՞ւր տանի: Էտ ծառին յրա ըխճըրկանը շոխկը տըված ա ինըմ նովին ճիրին: Էտ սըվըտըռածակ ախ՛ճիգյը կըլո՞խը պըցըցնըմ ա, եշըմ, տըեսնըմ մին մարալ-ջեյրան ախճիգյ ծառին յըան: Տա ցավի ցըցի յա կյամ, օխծին հալավը շոռ ա օնըմ, օզըմ ա, թա ո՞ւրա՞ն օտի, վըեր էտ ախճիգյը էտքան կյեղեցիկ ա, ինքը՝ կյեշ: Համ էլ մին խըրեկ ետը մաննը կըծըմ ա, կըլխու յա ընգնըմ թա էտ հուր հետի յա:

Ետ ա տըեռնըմ էտ նախշուն ըխճըրկանը ասըմ. - Ա՛յ ախճիգը, հի՞նչ կինի, ինձ էլ կոշտտ տանիս:

Էտ մարալ-ջէյրան ախճիգյը ասըմ ա. - Ա՛յ չինարի ծառ, կըռաց:

Չինարին կըռանըմ ա, էտ կյէշը-լամփոշ ախճիգյը պըցրա̀նըմ ա ծառը, էտ նախշուն ախճիգյը ասըմ ա. - Չինա̀րի, պըցրա̀ց:

Չինա̀րին վըէր պըցրանըմ ա, էտ կյըշըկյըող, ցավյի-ցցի եկած ախճիգյը ըտրան կուփի յա տամ, քըցըմ ծառին տակը: Էտ ղա̀շա̀նգյ ախճիգյը տըէռնըմ ա մին թոխպ, նի մըննըմ էտ ծառին փըչակը:

Տըղան կյամ ա, տըեսնըմ մին կյէշ, ասծու անիծած տըռըտոմբալ ախճիգյ ծառին յրան:

Ասըմ ա. - Խե՞ յըս իտի կյէշացալ:

Էտ ախճիգյըն ասըմ ա, - էնքան հըղետ եշեցի, աշկըս ճո̀ւր կըտրից, շիլղի տըէռի, արևը էրից, սըվացի, քյո̀մո̀ւր տըէռի:

Էտ տըղան մընըմ ա շշկըլված կըլո̀խը օռած... էտ կյէշ ախճիգյը ասըմ ա,- Ա՛ չինարի, կըռաց: Հիշքան ասըմ ա, չինա̀րին կըռանըմ չի: Տըղան մին թահրավ ըտրան քըշըցնըմ ա, լա̀վ-լա̀վ շո̀րեր կյեց տամ, փայտոնըմը նըստըցնըմ, տանըմ տոն: Էտ վախտը էտ թոխպ տըէռած ախճիգյը մին վարթ ա տըէռնըմ, ըտահանց փայտոնին ակնան կախ ընգնըմ

Վըէր պալատն ըն քյըննըմ, էտ վարթը տաշեղ ա տըէռնըմ, ընգնըմ ըտըղան մոտի մին պառավ կընգա տոն: Էտ պառավը տոնը սըփում ա, թա տանի զիբիլը տըէն ածի, էտ տաշեղը մին շամփուր ա տըէռնըմ, ընգնըմ փիչին տակը:

Վըէր պառավը քյըննըմ ա օրիշ տըէղ, էտ շամփուրը ախճիգյ ա տըէռնըմ, տոն-տըէղ անըմ, հըվաքըմ, սըրփըմ, սարքըմ:

Պառավը կյամ ա տըեսնըմ ամմեն հինչը ըրած:

Մին դո̀նըմ էտ պառավն ասըմ ա. - Էս հու՞ կինի, հու՞ չի ինիլ, մին բուսը պահիմ, տըեսնամ:

Բուսը պահըմ ա, տըեսնըմ մին կյեղեցիկ ախճիգյ ա տո̀ւս կյամ շամփուրին մաչան:

Պառավը էտ ըխճըկանը պինդ փըռնըմ ա, ասըմ. - Ինձ վըէչ մինը օնիմ վըէչ, եք տու ինձ ախճիգյ տըէռ, յըես էլ քյըեզ մար, մին տըէղ ապրինք:

Ախճիգյը ռազի յա կըէնըմ, ասըմ ա. - Ա՛յա, ճո̀ւր տիր, ինձ լըղըրցրու:

Պառավը ճո̀ւր ա տընըմ, լըղըըցնըմ: Էտ ախճիգյըն ասըմ ա. - Այա, հա̀լա̀ ճո̀ւրը տըէն չածիս, հա՛, թող կըէնա:

Պառավը ուռութանա էր ա կըէնըմ, տըեսնըմ ճո̀ւրը վըեսկե յա տըէռալ:

էտ պառավը մընըմ ա մաթ մընացած, զյունաքար: Ըտրանա ետը էտ ախճիգյը ամման դո՛նըմ կլո՛խ լըվա՛նալիս, լըղանալիս, իրես լըվանալիս, ճո՛ւրը վըեսկե յա տըեռնըմ:

Ըտրանք շատ ըն հարուստանըմ, լա՛վ-լա՛վ տըներ ըն շինըմ:

Հընգյեր-հըրևան ըրմանըմ ըն, թա էս վըեսկեն ըստրանց ըշտըղա յա:

Մին դո՛նըմ թաքավերին ծիյանցը կըերը պըկասըմ ա: Ընդրա վեզիրնին կանչըմ ըն ժողովուրթին ասըմ. - Ա՛յ ժողովուրթ, ամեզյը մին ծի եր կալիք, պըհեցիք, թաքավըերին հրամմանն ա:

Էտ ախճիգյը պառավին ասըմ ա.- Ա՛ յա, տու վել քյինի մին ծի պըեր, պահինք:

Պառավը քյինըմ ա, պըերըմ:

Վեզիրնին ծըծաղըմ ըն, ասըմ.- Ա՛ պառավ, տու հի՞նչավ պիտի պահի՛ս:

Պառավը ասըմ ա.- Ծըեր կործը չի, հինչավ կըպահիմ, կըպահիմ, հա՛լա՛ պըենին վըեռչըմը կըծըծաղին, հա՛լա՛ ճոտերը աշունքը կըհմբարին, օզըմ ըք լիա՛ էն լոխման մաշված, փորը մըեշկան կացած ծին տըվիք, տանիմ, պահիմ:

Էտ պըռավին իտի մին լղար ծի յըն տամ, վըեր պահի ծըմըեռնը, ղայսարը, ցորտը, վըեր տո՛ւսա կյամ, կյարունքը կյամ, կյարմուր արևը տո՛ւս կյամ, աշխարքըս կընանչըմ ա, ծաղկըմ, էտ վախտը, էտ ախճիգյը ասըմ ա. - Ա՛յա, քյինի թաքավերին տըղին ասի, թա՛ կյա ծին տանի, տու կտրելու չըս տանիս, շատ ա քյուքա՛ցալ, համ էլ խըրմացալ, քացի կը տա:

Թաքավերին տըղան կյամ չի, լայըղ չի անըմ, ո՛ւրա՛ն զյառ ա պահըմ, ո՛ւրա՛ն զյա՛ղա՛ն ա ղարկըմ:

Էտ ախճիգլը ծիյին ասըմ ա. - Ա՛յ ծի, վըեր քյըեզ տանին քշին ըշտեղ էլ տանին, ըշտըեղ էլ քըշին, էլիա կը կյաս մըեր տըռանը պենդ նըստիս, հիշքան ասին եր կաց, եր չըս կըենալ, կասիս, «Թող ինձ պահողը կյա, եր կըցընի»:

Ծին իտի էլ անըմ ա: Գյա՛ղա՛ն հիշքան չըրչարվըմ ա, կարըմ չի եր կըցնի:

Քյընըմ ա թաքավերին տըղին ասըմ էտ լոխ:

Թաքավերին տըղան կյամ ա, թա եր կըցընի, ծին եր չի կըենըմ, հիշքան չըրչարվըմա, ա՛մա՛լ չի կյամ: Ծին ասըմ ա. «Թող ինձ պահողը եր կըցնի»:

Էտ ախճիգլը տանան տո̈ւս ա կյամ, էրկու դոնըմ էտ ծիյին թըխըմ, ասըմ. - Քու տարըտ, առանց էտ էլ անբախտ ա, տու խե՞ յըս իտի անըմ: Ծին էր ա թըռչըմ տըղան:

Թաքավէրին տըղան մընըմ ա մա̈թա̈լ: Էտ ըխճըկանը կյեղեցկութունն էլ մին դո̈լան ա ըտրան շըշկըլցնըմ: Էտ ըխճըկանը եշըմ ա, եշըմ, քյընըմ:

Մին քանի վախտանը ետը էտ ախճիգյը պառավին ասըմ ա՛ լա̈վ պադրաստութուն քաշին, թաքավէրին տըղին նան ո̈ւրա̈ն կընգանը կանչին դոնադ:

Մինչև դոնադ կանչիլը, էտ ախճիգյըն ասըմ ա. - Ցըես մին կյարմո̈ւր խընձո̈ր ըմ տըեռնալու, թաքավէրին տըղան վէր տո̈ւս կյա, թա քյինի կըտինիս ընդրա ջուբումը:

Ղոնաղնին կյամ ըն լա̈վ օտըմ, խըմըմ, ուրխութուն անըմ: Տոն քյինելիս, պառավը էտ կյարմո̈ւր խընձո̈րը թաքուն տընըմ ա թաքավէրին տըղին ջուբումը: Քըշէրը վըէր լոխ քոն ըն ինըմ, էտ կյարմո̈ւր խընձո̈րը տըեռնըմ ա մին մարալ-ջէյրան ախճիգլ, կյամ նի մընըմ թաքավէրին տըղին ծոցը: Տըղան զա̈ռթնըմ ա, տըեսնըմ մին հո̈ւլո̈ւ-մա̈լա̈գյ ախճիգյ ո̈ւրա̈ն ծոցըմը: Էն մին կոխկին էլ մին կյըղըկյըռղ քըրըթանթռուշ, ո̈ւրա̈ն կընեգյը:

Թաքավէրին տըղան ասըմ ա.- Ա՛լ մարալ-ջէյրան, տու հո՞ւ վըս...

Էտ ախճիգլը խըտտըմ ա ըտրան պըչպըչորըմ, ասըմ. -Ցըես էն ախճիգյըն ըմ, վըէր թողեցիր չինարի ծառին յրան:

Ըտրեղ լոխ նաղլ ա անըմ, հինչ վըէր ո̈ւրա̈ն կըլխավը անց ա կաց ալ:

Տըղան հրամմայըմ ա, վըէր էտ սև քըրըթանթռուշ կընգանը ծիյին հաքյվան կապին, էնքան քաշ տան, վըէր մըեծ պատառը կըեռիքյը մընա: Հրամմանը կադարըմ ըն:

Ըտրանա ետը օխտը օր, օխտը քըշէր հըրսանիք ըն անըմ: Սաղ աշխարքըս ուրխանըմ ա: Ըտրանք էլ մինչև ո̈ւրա̈նց գյանքին վըէրչյը սէրավ ապրըմ ըն:

Ըտրանք հասին ո̈ւրա̈նց մուրազին, մունք էլ հըսնինք մըեր մուրազին:

Ըստուծանա իրեք մըեծ-մըեծ հո̈ւլի շավթալի էր ընգնի. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ տըռնըտական անջուկ տընողին:

## 22.ԴԸՌՎԻՇԸ

Ինո՛ւմ ա, չինո՛ւմ մին առըտուրական ա ինո՛ւմ։ Ըտրան ընո՛ւմ ա իրեք ախճիգյ։ Հա՛րը ամման դո՛նըմ ասըմ ա. -Ցըես իմ ըխճըկերքս ինդի մարթի բիդի տամ, վեր իմ տո՛ռնըս օղտերը պըեռնած վըեսկե պերի։

Մին դա՛րվիշ էնա՛ ընո՛ւմ մին հըեռու տըեղ ապըըմ։ Էս վեր լըսում ա, վեր էս հինչ առուտուրականը ըստի խոսկ ա ասալ, օղտերը վըեսկավ պըեռնըմ ա, հըղե ինըմ, քյընո՛ւմ։

Քյընո՛ւմ ա, քյընո՛ւմ, վերչը հասնըմ ա էտ առուտուրականին տոնը։ Հտեղ դա՛րվիշը ո՛ւրա՛ն նըպատակը ասըմ ա, առուտուրականն էլ ռազի յա կըենում։

Հըըսընքին թաղարեքյը քաշըմ ըն։ Օխտը օր, օխտը քըշեր հըըսանիք ըն անըմ։ Հըըսընքանը ետը դա՛րվիշը հըզըրվըմ ա, ախճիգյը յոր օնըմ, հըղե ընգնում։

Շատ ըն քյընո՛ւմ, խրեգյ ըն քյընո՛ւմ, էս ախճիգյը տըեսնըմ ա վեր, ախեր, էս ճընապարին վերչ չիկա։ Ասըմ ա. - Էսքան էրգյան ճընապարը մըեզ ըշտըեղ ա՞ տանըմ։

Դա՛րվիշը խեթ-խեթ ընդրան եշըմ ա, ասըմ. - Ծըենտ կըտրի, թա ըշտըեղ ընք քյընո՛ւմ, էտ քու կործըտ չի՛։

Վեր իտի յա ասըմ, ախճիգյը մընում ա մաթ մընացած, ջանը տո՛ղ ա ընգնըմ, մընում ա սուս ըրած։

Շատ ըն քյընո՛ւմ, խըրեգյ ըն քյընո՛ւմ, էտ դա՛րվիշըն ա գյուղում, վերչը հըսնըմ ըն մին ամարաթի։ Մին մըեծ ըրկաթի դըըբըզավ նիյըն մըննում էտ ամարաթը։ Էրկունջի օրը էտ դարվիշը էտ ըխճըկանը մին հում ջիգյար ա նշանց տամ, ասըմ. - Ցըես օխտը օրավ քյընըմ ըմ վըերսի, քյըեզ էլ օխտը օր ժամանակ ըմ տամ, վեր օխտը օրանը ետը կյամ, տըեսնամ էս ըխճըկա ջիգյարը կերած, տու իմ կընեգյըս ըս հավիդյան ինձ նհետ կապրիս, յըես էլ քյըեզ հունցու հավաղարիմ կընեգյ, իմ լոխ թաքուն պըեներս կասիմ, իմ օխտը օթախներիս պընա՛լիքյը քյըեզ կտամ, թա կերիր վըեչ, գյիդա՛ վեր, քու ջիգյարըտ էլ ըմ ընդըղան կախ տալու։

Ըտրանա ետը ծին նըստըմ ա, քյընըմ վըերսի։ Ախճիգյը հի՞նչ անի, շատ մըտածելանը ետը, յոր ա օնըմ վեցինջի օրը էտ ջիգյարը թաղըմ վըեղին մեչին, ինքըն ո՛ւրա՛ն ասըմ.- Դե, կըկյա, կասիմ կըերալ ըմ, հի՛նչ ա գյիդա՛լու։

Իտի ինքը ուրան սըերտ տինելավ ըսպասըմ ա դարվիշին: Օխտինջի օրը դարվիշը ջանավարի նման մըռընչալավ կյամ ա: Դարբազավը նի մըննըմ, կանչըմ էտ ըխճըկանը, հըրցընում. - Ջիգյարը կերալ ը՞ս, թա չէ:

-Ախճիկն ասըմ ա. - Հա, կըերալ ըմ:

-Դուզն ասի...

- Դուզն ըմ ասըմ, կըերալ ըմ:

Վեր շատ ըստըբրում ա, ախճիգյն էլիա ասըմ ա կըերալ ըմ, դարվիշը կըզնված կանչըմ ա. - Ջիգյար, ջիգյար, ըշտե՞ղ ըս, սաս լըսվում:

Էրկունջի դոնըմըն էլ ա հըրցընըմ, էլիա ծըեն չի լըսվըմ:

Իրեքինջի դոնըմը վեր պըեցուր, կյըռկյոռալավ ասըմ ա.

-Ջիգյա՛ր, ջիգյա՛ ր, ըշտեղ ը՞ս, ջիգյարն ասըմ ա. «էն ըմ վըեղեն տակին»: Համ ասըմ ա, համ էլ վըղըրթաթախ տուս կյամ:

Դարվիշը էնքան աջըղվըմ ա, վըեր էտ ըխճըկանը կըտոր-կըտոր ա անըմ, մինակ ջիգյարն ա թողըմ, էն էլ տանըմ ա բըլկոնան կախ անըմ:

Իրեքինջի օրը դարվիշը ծին նըստըմ ա, քյընամ, համին էն առու-տուրականին կոշտը:

Տըեղ հըսնելանը յետը ասըմ ա. - Ծըեր ախճիգյը շատ ա տուխուր, սաղ օրը լաց ա ընում, ինձ ղարկալ ա, վըեր միշնակ քյուրը տանիմ, մին քանի շըեբեթ քըշտին կըենա:

Առուտուրականը ռազի յա կըենում: Միշնակ ախճիգյը դարվիշին նըհետ ճընապար ա տինըմ:

Էրգյան ճընապար քյընալանը ետը, էտ ախճիգյըն ասըմ ա. - Բա էսքան քյընըմ ընք, հի՛ բ պիտի տըեղ հըսնինք: - Ծըենըտ կըտրի, էտ քու կործըտ չի:

Քյընըմ ըն, քըյնըմ, վերչը տըեղ ըն հըսնըմ:

Ախճիգյն ասըմ ա. -Բա հոր ա՞ քուրըս:

Դարվիշը նշանը ա տամ բըլկոնին պատան կախ տրված ջիգյարը, ասըմ.-էս քու քըվոր ջիգյարն ա: Ցըես քյըեզ օխտը օր ժամանակ ըմ տընում: Էտ օխտը օրըմը, թա էս ջիգյարը կըերիր, կըերիր, էն վախտը տու իմ հավաղարիմ կընեգյըս կինիս, իմ լոխ սեկրետնիս քյըեզ կասիմ, օխտը օթախնիս պըլանիքյը քյըեզ կըտամ, թա վեր կըերիր վեչ, քու քըվոր մընան քյըեզ ըսպընելու յըմ, ջիգյարըտ էս պատան կախ տամ:

Ասըմ ա պըրծընըմ, ծի նըստըմ, քյընում:

Ախճիգյը մընըմ ա, հունց վեր ասըմ ըն, էտ կոտրած տաշտակին առաջին կոչ եկած: Հի՞նչ անի, հո՞ւնց անի, ինքն էլ չի գյուդ՛ում: Օրերըն էլ անց ըն կըենում, դ՛արվիշին կյալի օրը մուտանըմ ա: Ճարը կըտրած էտ ախճիգյը էտ ջիգյարը տանըմ ա, զախոտը քըցըմ:

Օխտինջի օրը դ՛արվիշը կյամ ա հըրցընում. - Ջիգյարը կըերալ ըս:

Ախճիգյն ասըմ ա.- Հա՛, կըերալ ըմ: Էրկու դ՛ընըմ էտ ըխճըկանան հըրցընըմ ա: Ախճիգյը էլիա ասըմ ա. - Հա, կերալ ըմ:

Իրեքինջի դ՛ընըմը կյոռալավ ասըմ ա. Ջիգյա՛ ր, ջիգյա՛ ր, ըշտըեղ ըս, տ՛ուս եք, տըեսնամ:

Ջիգյարը զախոտան տ՛ուս ա կյամ, թ՛ավիլ-թ՛ավիլ ընելավ ընգնըմ դ՛արվիշին առաչը:

Դ՛արվիշը վեր տըեսնըմ ա իտի յա, կըտաղըմ ա: Էտ ըխճըկանը կըլ՛ուխը կըտըրըմ ա, ջիգյարը հանըմ, համին էն պատան կախ տամ:

Էն մին օրը ծի յա նըստըմ, ճընապարվըմ, վեր քյընի մըհեկ էլ էն պուճուր քուրը պըերի:

Քյընըմ ա, քյընըմ, վերչը հըսնըմ ա հանորը տոնը, ասըմ. - Միշն՛ակ ըխճըկանըտ մին լ՛ավ, դ՛աշ՛անգյ տըղա օզըմ ա, նըշընտըրեքյա, քուվերքը օզըմ ըն, վեր ՛ուր՛անց պուճուր քուրն էլ կյա:

Էտ հաները էնքան միամիտ ա ինըմ, վեր հըվատըմ ա, եր ա կըենում էս պուճուր ըխճըկանն էլ դարկըմ: Էս պուճուր ըխճըկանը մին շատ ս՛ուր՛ուն կատու յա ինըմ: Էտ կատուն թաքուն յոր ա օնըմ, տինըմ կըռնըտակին, ծի նըստում, ճընապարվըմ ըն: Շատ քյըն՛ալ՛անը ետը, տըեղ ըն հըսնում:

Ախճիգյը հըրցընում ա, թա. - Բա ըշտըե՞ղ ըն իմ մըեծ նան միշն՛ակ քըվերքս:

Դարվիշը ասըմ ա.-Ծըենըտ կըտրի, հինչ քուր, հինչ պըեն, հենե քուրըտ էն բըլկոնին պատան տըված ջիգյարըն ա: Տըեսնըմըս, էտ ջիգյարը էտ քու քըվոր ջիգյարըն ա, օխտը օր քյըեզ վախտ ըմ տինըմ, յըես վըերսի քյընըմ, վեր եկի տըեսի էտ ջիգյարը կըերած, գյիդ՛ա վեր տու իմ հավադարիմ կընեգյըս ըս, հինչու օնիմ քյըեզ ըմ տալու, հինչ թաքուն պըեներ օնիմ, քյըեզ ասելու յըմ, թա վեր եկի, տըեսի ջիգյ՛արը կըերած վըեչ, քյըեզ ըսպանելու յըմ, ջիգյարըտ հ՛ամ՛ան տըեղան կախ տամ:

Ասըմ ա, պըրծընում, ծին նըստըմ, քյինըմ:

Էս ախճիգյը տըես ա մըտածըմ, տըեն ա մըտածըմ, մին հընար չի

քթնըմ։ Բըրդան մըետն ա քըցըմ ո՛ւրա՛ն կատվին։ Էտ ջիգյարը խրեգյ-խրեգյ կըտորում ա, ամեն օր տամ էտ կատվին։ Օխտինջի օրը ջիգյարը պըրծընըում ա։

Մըռրնչալավ, փուի-փուի ընեըավ դա՛րվիշը կյամ ա, հըրցընըմ.

-Ջիգյարը կըերալ ը՞ս։

-Հա՛, կըերալ ըմ։

-Դուզյըն ասի, կըերալ ը՞ս, թա՛ չէ...

- Դէ, կըերալ ըմ, ի լի՛։

Դա՛րվիշը կյոռըմ ա։ Ջիգյա՛ր, ջիգյա՛ր ըշտըե՛ղ ըս։

-Էս ըմ սըրտին տակին։

Դա՛րվիշը իրեքինջի դո՛նըմըն էլ ա հըրցընում, էլիա ջիգյարըն ասըմ ա. - էս ըմ սրտին տակին։

Դա՛րվիշը շատ ա ուրխանըմ, ասըմ ա. - Տըեսնըմ ըմ, վեր տու կինիս իմ հավադարիմ կընեգյըս, իմ տանըս, իլա՛ծ-չիլա՛ծիս տարը։ Քյըեզ կըտամ իմ օխտը օթախներիս պլա՛նեքը, քյըեզ կասիմ իմ լոխ թաքուն պըեներըս։

Իտի էլ անըմ ա։ Պըլա՛նիքը տամ ա էտ ըխճրկանը, ասըմ.- Օտելի հետի տու վեչ մին պըեն չի իփիս։ Տըեսնըմ ը՛ս էս պատին մեչին կնոպկան վեր մին հետ հոփ տաս, մին ստոլ ա տո՛ւս կյալու աշխարքիս օտելի լա՛վ-լա՛վ պըեները էն ա ինելու յըրան։ Կօտիս, կը խըմիս, մին էլ հոփ կը տաս, էտ ըստոլը ինքն ո՛ւրան քաշվելու յա։

Ըտըանա կըման էտ օխտը օթախըերին տըռները իրավունք օնիս պըենաս, վըերչի օթախան կըման։

Դէ թա հի՞նչ կա էտ վերչի օթախըմր, վեր դա՛րվիշը թողըմ չի պեց անի, գյո՛ւդում չի՛։ Էտ լոխ ըսելանը ետը դա՛րվիշը ծի յա նըստըմ քյինա՛մ վըերսի։

Վերչը մին օր էլ, շատ ա օզըմ տըեսնա, թա էտ օխտինջի օթախըմր հինչ կա, օզըմ ա հինչ էլ ինի, պըեց անի։

Վեր էտ օթախին տո՛ռնը պըեց ա անըմ, բիրդան ասիս լիա՛ մին թոփ ա տըրաքըմ, ըտըղան տո՛ւս ըն տըեռնում մին խիլյա՛ մարթ, լոխ սոված-ծարավ, մաշված, տեղին, հունցու մըեռալ։

Էտ մարթիքյը օզըմ ըն գյիղա՛ն, թա ո՛ւրա՛նց հու վա ազադալ դա՛րվիշին ծըեռքան, օզըմ ըն մին լավութուն էլ ո՛ւրանք անին, ամմա հի՞նչ օնին, վեր հինչ լըվութուն անին։

Էտ ախճիգյը վըխելան մընացալ ար կոչ եկած տըռնեն քըմակին կաղնած։

Էտ մարթիքյը, վեր էտ ըխճըկանը գյանքը ազադին դӓրվիշին անա, վեր դӓրվիշը կյա վէչ ըտրա կըլՙխը կըտրի, Ӛւրӓն էլ փըռչըփարա անի, թա խե՞ յա տՙռնը պըեցալ, պըերըմ ըն մին յӓշիգ շինում, էտ ըխճըկանը մըեչին տինում, նհետն էլ օտելի պեներ տի-նում, քըցում ըտըղան մոտի կյետը։

Դӓրվիշը ըրոտալավ, կյըռկյոռալըվ կյամ ա Ӛւրӓն ամարաթը, տըես-նըմ լոխ վըեղին հավասար ըն ըրալ, քӓնդӓլ։ Մընըմ ա մաթ մընացած։

Ըջըղվելան սաղ ջանը տըղտողըմ ա։

Դӓրվիշը դӓստի գյուղում ա, վեր էտ էն ըխճըկանը պըենն ա, վեր ախճիգյն ա էտ վերչի օթախին տՙռնը պըեց ըրալ։ Նա օզըմ ա ըշտըեղ էլ ինի էտ ըխճըկանը ճարի, կըտոր-կըտոր անի։

Յոր ա օնըմ տըժոխկին կավազանը, երգյիր-երգյիր շոռ կյամ, վեր էտ ըխճըկանը քյըթնի։

Մըհեգյ դӓրվիշին թողինք էտ ըխճըկանը հետան շոռ կյալիս, մունք քյինինքյ տըեսնանք էն յӓշիգյը վեր ըխճըկանը մըեչին ըն տըրալ, ըշտըե՞ղ քյինից, հի՞նչ տըեռավ։

Մին տըեղ մին թաքավեր ա ինՙում, ըտրան ինՙում ա մին մաղար տըղա, քըսանէրկու տըրեկան։ Ծընողնին հիշքան օզըմ ըն էտ տըղին փըսակին, տըղան ռազի չի կըեն ում։

Մին օր էլ, հիբը ինքը տանը մինӓկ ար, տՙլս ա կյամ Ӛւրӓնց պալատին կյետին դոլի բալկոնը, կյետին մըեչը ընգած արևին շոխկին եշըմ։ Էտ վախտը տըեսնում ա վեր կյետը մին յӓշիգյ պըերավ, էտ յӓշիգյըն էլ մին քարի թուշ իլӓվ, կազնից։

Թաքավերին տըղան Ӛւրӓն ծառան դարկըմ ա, վեր քյինի էտ յӓշիգյը պըերի։ Ծառան քյինՙում ա, պըերում, թաքավերին տըղան հӓլӓ յӓշիգյը պեց չանում, տընՙում ա Ӛւրӓն օթախըմը, իտի էլ թողում։

Ծառան վեր կյերակուրնի յա պըերում թաքավերին տըղին հետի, էտ ախճիգյը յӓշիգյան տՙլս ա կյամ, կըեսն օտըմ։ Իտի էլ միշտ օտըմ ա, կըես թողըմ։ Մին հըետ էլ ծառան դույուղ ա ջիհում, թաքավերին տըղին ասըմ։ Թաքավերըն տըղան բուսը պահըմ ա։ Առաչ ինքը կյերակուրին կըեսը օտում ա, կըեսը թողում, ետնան քընՙում ա հուրթան եշում, տըեսնըմ էտ

յա̀շիգյան մին ախճիգյ տո̀ւս եկավ, կյերակուրին մընացածը կերավ, լիա̀ օզըմ ար, թա մըննի յա̀շիգյին մաչը, թաքավերին տըղին պատկերը հիլումը տըեսնում ա, վեր հո̀ւրթան ո̀ւրա̀ն ա եշում: Ախճիգյը ինքն ո̀ւրա̀ն ասըմ ա. տէս հինչ կյեղեցիկ տըղա յա, դէ հինչ արած, վեր իմը չի»: Էտ ախճիգյն էլ ա շատ կյեղեցիկ ինո̀ւմ, վեր արևին ասըմ ա. «Տու կաց, յըէս քո̀ւ տըեղ լո̀ւս տամ»:

Տըղան ըտեղան քըշանըմ ա, կյամ էտ ըխճըկանը խըտտըմ, ասըմ. - Վըէրչը խըտեստըս ընգյիր, քյըեզ մըհար էս ա հինգ տարի յա, մըտածըմ ըմ:

Էտ մասին նա ո̀ւրա̀ն ծընողներին ասըմ ա. ծընողնէն համոզըն կըենում, ըտրանց փըսակում ըն:

Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ: Օթինջի օրը դա̀րվիշը կավազանը ձէռքին հըսնում ա էտ քաղաքը: Մին օր էլ, վեր էտ ախճիգյը ո̀ւրա̀նց պալատին փա̀լա̀քյաններավը պըցրա̀նում ար, դա̀րվիշը տըեսնում ա էտ ըխճըկանը: Նա ո̀ւրա̀ն կավազանավը տափին թըխում ա, լոխ քարանըմ ըն, էտ ըխճըկանան կըման:

Դա̀րվիշը մին մըեծ կրակ ա անըմ, մին ճիրա̀վ լըցած ղազան տընո̀ւմ կրակին, վեր ըխճըկանը կըտոր-կըտոր անի, իփի: Հենց վեր էտ վախտը մուտանըմ ա, էտ պալատին կոխկի կյետին դո̀ւլան մին կյեռթնուկ ա կյամ, տո̀ւս կյամ, էտ ըխճըկանը ասըմ. - Ա՛յ նախշուն ախճիգյ, քու օթախըմըտ իտի մինա̀կ նըստած լա̀ց մի ինիլ, տըէս քյըեզ հի՞նչ ըմ ասըմ: Կյետին ծըեր դո̀ւլի ղրաղի քո̀ւլերըմը էնա մին ծո̀ւ կա, քյինի եր կալ, էրկու ծըեռքավ հոփ տո, կոտրի: Դա̀րվիշին օժը էնա էտ ծո̀ւվին մեչին, վեր կոտրիս, դա̀րվիշը թո̀ւլա̀նա̀լու յա, եր ընգնի: Էն վախտը էլիա սաղ աշխարքըս եր ա կենալու քարացած տըեղան, մարթիքյը զըրթնելու յըն, էլիա կանանչը փըսնելու յա, սաղ աշխարքըս կենթանանալու յա:

Ախճիգյը իտի էլ անըմ ա: Դա̀րվիշին ասըմ ա. - Դէ տու ինձ օտիլը ուտելու վըս, թող քյինիմ տո̀ւս, էլիա կյամ:

Դա̀րվիշը էտ վախտը տըենակնին սըրում ար: Նա թողըմ ա: Ախճիգյը քըշանում ա, քյընո̀ւմ էն քո̀ւլերըմը ման կյամ, ծո̀ւն ճարըմ, էրկու ծըեռքավ հոփ տամ, կոտրըմ: Դա̀րվիշը թո̀ւլանըմ ա, եր ընգնում, սատկըմ: Էլիա աշխարքըս զո̀ւրթնանըմ ա, մարթիքյ քար տըեղան եր ըն կըենըմ, ծառերը կընանչըմ ըն , վարթերը պըեցվում՝ թըռչուննին՝ երքըմ: Ամման տըեղ լո̀ւս, օրախութուն, լիքը աշխարք, արև, կյարո̀ւնք, ջահիլութուն…

Մինա̀կ էս հա̀քյա̀թը ասողը, մին էլ կյրողը չի ինը՛ մ...

Թաքավերը թա̀զա̀դան օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ա անըմ, էտ քաղաքին սաղ ժողովուրթը ղոնաղ կանչըմ։ Ամման տըեղ զուռնա, տըմբըլա, պար նան երք։ Մինչև օրըս էլ էտ ախճիգյը հա̀լա ապրըմ ա բախտավեր, ո̀ւրա̀ն սիրած տըղին նհետ, վեր ամման մարթի բախտ չի, վեր իտի ինի՛... Դե դա̀րդերըս շատ ա, թող լըհա̀ տո̀ւս անիմ, մըհենգյ էլ մին օրիշը թող հա̀քյա̀թ ասի[1]...

[1] *Վերջին նախադասությունը ասացողի հավելումն է (Ծ. Կ.)*

23.ՏԱՄՆԷՐԿՈՒ ՅԸՂՌՆԵԳՅԸ

Բուննան ա̀վա̀լա̀ ընո̀ւմ ա, չընո̀ւմ մին թաքավեր: Էտ թաքավերը շատ հարուստ ա ընում, ամմա շատ հարուստ ա ընո̀ւմ, սա̀բա̀բը էն ար, վեր խոխա չօնար:

Ղուլերը, ղարավաշնին ընդրան ամման վախտ հըրցընում ին , թա խե՞ յա բեքյեփ, թաքավերն ասըմ ար. - Հա̀լբա̀թ մին պեն կա իլի՛, վեր բեքյեփ ըմ:

Մին դո̀նում էլ թաքավերը ո̀ւրա̀ն թեգյունքը պահողներեն նհետ քյո̀ւնո̀ւմ ա վըերսի:

Մին օր անց, վըերս ընելանը ետը ծըրավում ա, ո̀ւրա̀ն ղարավաշներեն ղըրկում ա, վեր քյինա̀ն ձո̀ւր պերին: Ղարավաշնին շատ ըն ման կյամ, վերչը մին ձըրա̀վեր ըն ճարում: Քյընում ըն մուտանում, վեր ձո̀ւր յոր օնին, ձո̀ւրը ետ ա քաշվում ձըրըվերեն տակը: Ընդրանք մնում ըն ըրմացած: Վեր մին պատառ տեն ըն քյընո̀ւմ, ետ ըն եշում, տըեսնում ձո̀ւրը էլիա լցվալ ա, ձըրըվերեն պըրանան եր ա տըեռնում: Ընդրանք մին էլ ըն քյընո̀ւմ, թա ձո̀ւր յոր օնին, էլիա ձո̀ւրը ետ ա տըեռնում ձըրըվերեն տակը:

Ղարավաշնին շո̀ւտ ըն անըմ, քյընո̀ւմ թաքավերեն ասըմ: Թաքավերը կըզնվում ա, ասըմ. - Իտի պեն չիննի, քյընա̀ցիքյ ձո̀ւր պերիքյ:

Ղարավաշնին մին էլ ըն քյընո̀ւմ, վեր ձո̀ւր յոր օնին: Ձո̀ւրը էլիա ետ ա տըեռնում ձըրըվերեն տակը: Ըտրանք մին էլ ըն քյընո̀ւմ, թաքավերեն ասըմ: Թաքավերը էս դո̀նում կըզնըված ինքյըն էլ ա ղարավաշներեն նհետ կյամ ձըրըվերեն կօշտը: Ամանը քըշըցընում ա, վեր ձո̀ւր յոր օնի, խըմի, էս դոնում ձո̀ւրը քըշանում չի: Նա ամանավը ձո̀ւր ա յոր օնում, թա խմի, մին էլ ա տըեսնում մին ղըրըլթու ո̀ւրա̀ն պենդ խտտալ ա, մին թոխտ ա նշանց տամ, վերին մեչան էլ մին ծեն ասըմ ա.

«Էտ թուխտեն տակեն ծըեռք քաշի, դե հա՛, շուտ ըրա ...» Թաքավերը չաշմիշ ա ինո̀ւմ, ծեռք քաշում: Վեր էտ ղըրըլթուն ո̀ւրա̀ն պեց ա թողում, քյնո̀ւմ ձըրըվերեն ձո̀ւրըն էլիա շըտանում ա, լըցնվում: Ըտրանա ետը, վեր ղարավաշնեն մուտանըմ ըն ձո̀ւր յոր օնին, էլ ձո̀ւրը քըշանում չի:

Էտ լօխ թաքավերը տըեսնում ա, սուսուփուս ետ տըեռնում ո̀ւրա̀ն պալատը: Հենց վեր պալատըն ա կյամ, ղարավաշնին վազ ըն տամ թաքավերեն առաչը, աշկալըո̀ւսանք տամ, ասըմ, - Թաքավերը ապրած

կենա, աշկտ լո̀ւս, քյըեզ մին տղա յա իլա̀լ:

Թաքավէրը ըտրանա շատ ա բըքյփանում, վեր էնքան տարի յա անց կացալ խոխա չի իլա̀լ, մըհենգյ էլ իլա̀լ ա, էն փիս պըտահիմունքին վախտը:

Անց ա կենում մին խիլլա̀ վախտ: Թաքավէրին կընեգյը մըեռնում ա:

Մահվան յրա, կանչըմ ա ո̀ւրա̀ն տըղեն, ընդրան մին խաչ ա տամ, ասըմ.- Կա՛ էս խաչը, վեր նըեղ տըեղ ընգնիս, մըետտ քըցի: Քյըեզ կազադի:

Տըղան վեր տըեռնում ա քըսան տըրեկան, հորն ասըմ ա. - Ա՛ հա̀ր, միչև հի՞ք բեղմա էս պալատում մընամ փակված: Թող տո̀ւս կյամ, տըեսնամ աշխարքումըս հինչ կա:

Հա̀րը ռազի յա կըենում, տըղեն պեց ա թողըմ:

Տըղան ամեններավ ճընապար ա քյընո̀ւմ:

Քյընո̀ւմ ա, քյընո̀ւմ, տըեսնում ա մին բաղ: Էտ բաղումը լա̀վ-լա̀վ ծառեր, կանանչ խոտ, ծաղեգյ, հիշքա՛ն ասիս կա: Նի յա մըննում, տըեսնում մին լա̀վ գյո̀լ: Ինքյը նըղացած, էտ գյո̀լին քըշտի կանանչ տըեղը թեգյ ա ընգնո̀ւմ, վեր դինջանա:

Տըեսնում ա, վեր հեռու տըեղան տասնէրկու սիպտա̀կ յըղռնեգը ըն թըռչում, կյամ էտ ծառերին նան կանանչներին մեչյը, դիբի գյո̀լին դո̀լը: Մին էլ ա տըեսնըմ, վեր էտ յըղռնեգյնին ո̀ւրա̀նց թևերը հանեցին, տըեռին տասնըէրկու ախչիգյ, ըսկըսեցին գյո̀լին մաչին լըղանալը: Հա̀մին էտ վախտը, էտ տըղան սիրահարվում ա էտ ըխճըկորցան լոխճան պուճուրին յրան:

Էտ տըղան լավաշ-լավաշ խոտերեն մաչավը կյողըլը կենալավ քյընո̀ւմ ա էտ լոխան պուճուր ըխճըկանը թևերը յոր օնըմ, կյեղում:

Հիբը վեր լոխ լղանում ըն, գյո̀լան տո̀ւս ըն կյամ, ո̀ւրա̀նց թևերը կյենում, ամմա էտ պուճուր ախչիգյը տըեսնում ա, վեր ո̀ւրա̀ն թևերը կա վեչ: Տա ըսկըսում ա լաց ինիլը: էն տասնըմին յըղռնեգյը տըեմ չըն կենում, թըռչում ըն, քյընո̀ւմ: Էտ վախտը, էտ տըղան քո̀լերին մեչան տո̀ւս ա կյամ, թևերը տամ էտ ըխճըկանը:

Համին էտ վախտը, էտ ախճիգյն էլ սիրահարվըմ ա էտ տըղեն յրա: Ախչիգյը նան տըղան ըսկըսում ըն ո̀ւրո̀ւր նիետ խոսիլը:

Ախճիգյն ասըմ ա. - Եկ քյընինք մըեր երգյիրը:

Տըղան ջողաբը տամ ա, ասըմ. - Ախեր յըես թևեր չօնիմ»

Ցըես երգյինքավը կթըռչիմ, տու վէլ տափավը կըկյաս ուրուր հավա-սար, մին տեղ էլ կը հըսնինք մըեր երգյիրը:

Տըղան ռազի յա կըենում: Ախճիգյը կյենում ա ուրան թևերը երգյինքավը թըռչում, տըղան էլ տափավը կյամ ա ըխճըկանը հավասար հըսնում ընդրա հորը երգյիրը: Ախճիգյը շուտ ա անըմ, քյընում, նի մննում ուրան օթախը, տըղան էլ նի յա մըննում պալատը:

Վէր նի յա մըննում պալատը, թաքավէրը տըեսնում ա էտ տըղին, յրան աջըղվըմ, ասըմ. - էսքան վախտ էտ ըշտըե՞ղ ըս իլա: Քըսան տարի յա յըես քյըեզ ըսպասըմ ըմ, ամմա տու մըհէկ ըս կյա՞մ:

Տըղան ըտրա ջողաբը տամ ա, ասըմ. - Ցըես միչև մըհենգյ, վեչ մին պեն չըմ գյուղում, մըհենգյ էլ չգյիդալամվըմ յէկալ:

Թաքավէրն ասըմ ա. - Քսան տարի ըստրանա առաչ, յըես քու հոր նհետ կանդրախտ ըմ կապալ, ինքն էլ ծըեռք ա քաշալ, վէր հիբը ուրան տըղա ինի,հենց առաչի օրը ղարկի իմ կոշտըս: Իմ մըեթկըս էն ար, վէր քյըեզ պըհի, մըծըցընի, իմ թաքուն պեներս, գյիդացածըս քյըեզ սըվըը-ցընի, պուճուր ախճիգյըս էլ քյըեզ տվի: Մըհենգյ տու մըեծ ըս, ըստրանա ետը քյըեղ հի՞նչ ըմ անըմ, եկալ ըս, վըեր քու կլոխըտ կտրիմ...

Էս թաքավէրը կախարթ ա ինում, ուրան ըխճըկերքըն էլ ըն կախարթ ինում: Թաքավէրն ասըմ ա. - Տու մին խըըեգյ մըեխկըս ըս կյամ, յըես քու կըլոխտ հալա կըտրում չըմ, մինակ մին պայմանավ, վէր իմ տրված իրեք ասածըս անիս:

Էն մին օրը թաքավէրը էտ տըղին կանչում ա ուրան կոշտը, ասըմ. - Իմ առաչի ասածըս, վէր էքուծ քըշերավ պիտի կաղարիս, է՛ն ա, վէր յըես տասնըէրկու ախչիգյ օնիմ, լոխ էլ սիպտուկ յըղոնեգյի թևեր կյեցած, ընդրանց մէչին մըեծն նան պուճուրը կարիլ չըս ճոկիս:

Քըշերավը լոխճին առաչը ցորեն ըմ ածելու: Ընդրանք պիտի դինջ ոտին: Տու պիտի իմ պուճուր ըխճըկանըս ընդրանց մէչան ճոկիս:

Թաքավէրը էտ տըղին մին ճոկ օթախ ա տամ, վէր մըտածի: Տըղան քյընում ա ուրան օթախը: Ուրուգյունատեմ ա ինում: Տըղան քնենքյ ա անըմ, թա էտ տասնէրկու յըղոնիգյներին մէչան պուճուր ըխճըկանը հո՞ւնց ճարի:

-Էտ վախտը մին էլ ա տըեսնում մին ճանճ տըզզալավ ակուշկավը նի մըտավ: Ճանճը տըեռավ համին էն պուճուր ախճիգյը, ասից. - Իմ հար քյըեզ հի՞նչ ասից.

- Ասից, վեր էքյուծ քըշերավ լոխճիտ առաչը ցորեն ա շաղ տալու, վեր օտիք, յըես էլ էտ տասնըէրկու յղոնեգյեն մեչան պիտի քյըեզ ճարիմ:

Ախճիգյը լըսելանը ետը, ասից. - Ըտրանա էլ հիշտ պե՛ն... Քըշերավ մունք լոխըս սիպտա̈կ թևեր կյեցած տո̈ւս ընք կյալու բաղը, իմ հա̈ր պերելու յա մըեր առաչը ցորեն ածի: Էն վախտը կտեսնաս վեր ըտրան-ցանա մինը ցորենը յոր ա օնըմ կըտուցավը, էլիա քցցում տափը, ետավ մին էլ յոր օնըմ, պըրա̈նըմը պահըմ. մին խըրեգյ ըսպըսելանը ետը, կը տըեսնաս վեր ցորենն օտըմ ա: Էն վախտը կըգյիդաս վեր յըես ըմ: Հա̈լա̈ մըհեգյ դինջ թեքյ ընգի, քոն իլ:

Էտ ըսելանը ետը, էտ ախճիգյը մին ճա̈նջ ա տըեռնըմ, ակուշկավը տո̈ւս կյամ: Տըղան մին խըրեգյ մըտածելանը ետը թեքյ ա ընգնում, քոն ընո̈ւմ:

Քըշերավը թաքավերն ո̈ւրա̈ն ղարավաշնին ղարկըմ ա, վեր էտ տըղին կանչին: Տըղան զա̈րթնում ա, շո̈րերը կյենում, տո̈ւս կյամ բաղը: Մին խըրեգյ ետը տըեսնըմ ա, վեր էտ տասնըէրկու յըղոնիգյնին էլ եկին բաղը: Թաքավերը ըտրանց առաչը ցորեն ա ածըմ, լոխ ըսկըսում ըն օտիլը: Մին պատառ ետավ թաքավերը էտ տըղեն անա հըրցընում ա, թա. - Վըերն ա պուճուր ախճիգյըս:

Էտ վախտը տըղան տըեսնում ա, վեր ըտրանցանա մինը ցորենը կըտուցավը յոր ա օնըմ, էլիա տափը քըցում, մին էլ ա յոր օնըմ, պըրա̈նըմը պահըմ, մին խըրեգյ ետը օտըմ: Տըղան նշանց ա տամ էտ պուճուր ըխճըկանը: Թաքավերը տըեսնում ա, վեր դո̈ւզ ա ասալ, քընենքյ ա անըմ, թա էս հո՞ւնց գյիդա̈ց, էս հո՞ւ ասից, բա̈լքյաս ըխճըկորցանը մինը կապ օնի ընդրա նհետ:

Թաքավերն ասըմ ա. - Լա̈վ, էտ մինըտ գյիդա̈ցիր, մըհեգյ էլ իմ էրկունջի ասածըս պիտի կըդարիս: Մին քըշերվա մեչին տու պիտի իմ պալատիս տիմացը մին իտի պալատ շինիս:

Ո̈ւրա̈ն խոսկը ըսելանը ետը թաքավերը հրամմայում ա էտ տըղին, վեր շո̈ւտ անի, քյընա̈ ո̈ւրա̈ն օթախը: Տըղան քյընո̈ւմ ա ո̈ւրա̈ն օթախը, ըսկըսում քնենքյ անիլը: Մըթնալ ար, մին էլ ա տըեսնում ակուշկավը մին ճանջ եկավ, էլիա ախճիգյ տըեռավ, ասից. - Իմ հա̈ր քյըեզ հինչ ա ասալ:

Տըղան ասըմ ա.- Քու հա̈ր ասալ ա, վըեր մին քըշերվա մեչին իմ պալատիս առաչին մին հենց պալատ շինի, վեր իմա̈ն էլ լա̈վ ինի:

- Էտ ա՞ մին պե՜ն, քընենքյ մի անիլ, թեքյ ընգի, քյըեզ հետե քոն իլ: Ուռութանա եր կը կենաս, կը տըեսնաս պալատը հազըր ա:

Ախճիգյը էլիա ճա̈նջ ա տըեռնում, ակուշկավը տո̈ւս կյամ: Քըշերավը տղան շո̈ւտ եր ա կենում, տըեսնում թաքավըըերին պըլատեն նման մին պալատ ա շինա̈ծ: Նա մընում ա մա̈թա̈լ: Տո̈ւս չի կյամ օթախան, ըսպասում ա, վեր թաքավերը ինքը կանչի: Թաքավերը քըշերավը շուտ զըեռթնում ա, տըեսնում, վեր պալատը շինա̈ծ ա, կըլխուվա ընգնում, վեր էտ տըղին պենը չի՜, վեր ո̈ւրա̈ն ըխճըկորցան մինը կապված ա էտ տըղին նիետ:

Կանչում ա տըղին ո̈ւրա̈ն կոշտը, ասըմ. - Իմ էրկու ասածըս ըրալ ըս, վըեր իրեքինջի ասածըս էլ կաղարիս, քյըեզ ըսպանելու չըմ, վեր կաղարիս վեչ, կըլո̈խտ կըտրել ըմ տալու: էքյուծ ուռութանա, տու իմ կոխկիս կընըստիս, մին մունուտումը մին ճոխտ վըննաման կըկարիս: Մըհեգյ քյընա̈ քու օթախտ մըեթկ ըրա:

Տըղան շատ բեքյեփ քյընո̈ւմ ա ո̈ւրա̈ն օթախը մըետք անըմ, թա հու՞նց անի, հի՜նչ անի, վեր էտ ղա̈րղա̈ն տո̈ւս կյա: Կըես քշերը անց ար կացալ, վեր ակուշկավը ճա̈նջը նի յա մըննում օթախը, ախճիգյ տըեռնում, հըրցընում, թա հա̈րը հինչ ա ասալ:

- Քու հա̈ր էս ղոնըմըս առռե շատ մին տըժեր պեն ա ասալ, վեր յըես պիտի ո̈ւրա̈ն կոխկին նըստիմ, մին ճոխտ վըննաման կարիմ, մին մունուտումը: Քու հա̈ր հըսկացալ ա, վըեր յըես կապ օնիմ ո̈ւրա̈ն ըխճըկորցան մինին նիետ: Ըտրա հետի էլ առռե տըժեր պեն ա ասալ, վեր կարինք վեչ կաղարինք, վեչ յըես, վեչ տու:

Ախճիգյը ասըմ ա. - Հնար չիկա, վեր ասեր ճոկ նըստի կարի, ա̈մա̈լ կըկյար: Ամմա ասալ ա, վեր ո̈ւրա̈ն քըշտին նըստիս: Գյուղում չըմ, թա հինչ անիմ, էլ օրիշ ճար չիկա, պիտի փախչինք: Էրկուսըն էլ ռազի յըն կըենում, վեր փախչին:

Ախճիգյն ասըմ ա. - Առաչ տու ակուշկավը տո̈ւս եկ, ետավ՝ յըես:

Իտի էլ անըմ ըն: Քըշերավը թաքավերն ո̈ւրա̈ն ծըռռտանցան մինին ըղարկում ա, վեր էտ տղին կանչին ո̈ւրա̈ն կոշտը: Ծառան տո̈ռնը թակում ա, տըեսնըմ վեր պեց չի՜:

Թաքավերը հրամմայում ա, ասըմ.- Շո̈ւտ եր կըցըրիքյ, պերեքյ ըստըեղ, ըտրա մահը յըրա յա հըսալ, էտ խե՞ չի զա̈րթնըմ:

Ծըռոտենքյը քյընում ըն տոռնը թակըմ, տեսնում սնն, սնմո՛ւր չի կա։ Էն վախտը օզըմ ըն ակուշկավը նի մըննին, տըեսնըմ ըն ըխճըկանը պատկերը շո՛ւշին մեչան ծըծաղում ա ծըռոտանցը յրան։

Ծըռոտենքյը քյընամ ըն թաքավերին ասըմ։ Թաքավերը շատ ա ըջըղվում՝ ո՛ւրնն ծըռոտանցը մին էլ ա հրամմայում, վեր ըտրանց ճարին, ամմա հիշքան էլ ման ըն կյամ, վեչ ախճիզյն ըն ճարում, վեչ էլ տըղան։

Թաքավերը էտ վեր լըսում ա, ծըռոտանցը հրամմայում ա, վեր քյընան ընդրանց քյըթնին։ Ծըռոտենքյը հըղե յըն ընո՛ւմ, վեր ընդրանց ման կյան, ճարին։

Ախճիզյն ասըմ ա. - Իմ հնր մըեր հետան ա ղարկալ, բիղի կյողըը կըենանք։

Տըղան ասըմ ա. - Հի՞նչ անինք։

Ախճիզյն ասըմ ա. - Յըես մին կարմունջ տըեռնամ, տու էլ իլ կարմունջին տակավը քյընող ճո՛ւր։

Իտի էլ ինո՛ւմ ա։ Ախճիզյը տըեռնում ա կարմունջ, տըղան՝ կարմունջին տակավը քյընող ճո՛ւր, ծիյանքն էլ՝ քար։

Թաքավերեն ծըռոտենքյը միչև կարմունջը կյամ ըն, տըեսնում վեչ մին պըեն չի կա, ետ ըն տըեռնում, քյընում։

Թաքավերն ասըմ ա. - Ճընապարին հի՞նչ տըեսիք։

Թաքավերն ապրած կենա, տըեսինքյ մին կարմունջ, ընդրա տակավը քյընող մին կյետ։

- Թո՛ւ, հարամզադեքյ, բա տուք գյուղում չը՞ք, վեր մըեր քըղաքան մոտիկ կարմունջ չիկա։

Ծըռոտանցը մին էլ ա ղարկըմ, վեր քյինին ըխճըկանը ճարին։

Ախճիզյը էտ գյիդնլնվ տըղին ասըմ ա. - էհա հնրըս մարթ ա ղարկալ մըեզ քըթնին։ Յըես տըեռնամ մին սո՛ւն, տու էլ՛ ընդրա յըրան մին փննր, ծիյանքն էլ քարեր։

Իտի էլ անում ըն։ Ծըռոտենքյը կյամ ըն, ըտեղավ անց կենում, պեն չըն տըեսնում։ Կյամ ըն թաքավերեն ասում, վըեր ճարալ չըն։

Թաքավերը առոի յա ըջըղվում, ասըմ. - Յըես ինքըս կըքյինիմ ընդրանց ճարիմ։

Ախճիզյը գյո՛ւղո՛ւմ ա, ասըմ. - Հարկավեր ա իմ հոր քըղաքան տո՛ւս կյանք, օրիշ հնար չի կա՛։

Էտ վախտը տըղան մըետն ա քյըցում մորը տված խաչը: Ըտրա զորութ՛նւնավը էտ քըղաքան տ՛նւս ըն կյամ, քյընամ մին օրիշ քաղաք: Ախճիգյը տըեռնում ա ժամ, տըղան էլ տերտեր, ծիյանքն էլ զ՛անգեր:

Ըխճըկանը հ՛արը տըեսնում ա, վեր ըտահանք կան վեչ, հույսը կըտրած նի յա մըննում ժամը, տերտերին անա հըրցընում.

- Տեր հայր, տըեսիք վեչ մին տըղա մին ախճիգյ ըստեղավ անց կենալիս:

- Թաքավերն ապրած կենա, տըեսի-էրկու կյ՛արմ՛նւր ծիյավեր, մին սըհաթ ըստրանա առաչ, էս հըղըցավը քյընՙալիս: Թաքավերը հույսը կըտրած ետ ա տըեռնում ՛նւր՛ան քաղաքը, տըղան նան ախճիգյը ուր՛անց ճընապարը շարունակում ըն: Հիբը հըսնում ըն էն տըղին հորը քաղաքը, ախճիգյը ասըմ ա. - Յըես տըեռնամ մին ծաղեգյ, էս կանանչ, ծաղեգյնե-րավ լիգյը տըեղը. տու քյինի ծըեր պալատը, տըես քու հ՛ար հունց ա, սաղ ա, սըեյրու ա, հի՞նչ կա, հի՞նչ չիկա ծըեր քաղաքումը: Ետնան կըկյաս ինձ տանիս: Ըտրանա կըման, հըղեցը տու պըտըհելու յըս մին պուճուր, կյեղեցիկ խոխի, ղաստ ըրա վըեր պաչիս վեչ, թա վեր պըչեցիր, ինձ մոռանալու յըս:

Տըղան կյալիս ա դիբի ՛նւր՛ան հորը պալատը: Հըղեցը պըտահում ա մին պուճուր, նախշուն խոխի: Օզըմ ա պաչի, ամմա մըետն ա քըցում էտ ըխճըկանը ասածնին, մին էլ հըռանում ա: Մին էլ մըտածըմ ա, ՛նւր՛ան մըթկումը ասում, վեր «Խե՞ պիտիմ էն ըխճըկանը մոռանալ», ետ ա տըեռնում, էտ խոխին պաչըմ: Վըեր պաչըմ ա, ծըեռաց մոռանում ա էն ըխճըկանը:

Հիբը պալատն ա հըսնում, հ՛արը, մարը ուրխանում ըն: Մըեծ պաղրաստոթունավ տըղին ընթունում ըն:

Մին քանի վախտ անց կենալանը ետը, հ՛արըն ասըմ ա. - Ա՛ բալա, էտա հըսալ-փըսալ ըս, հարկավեր ա քյըեզ հետի ախճիգյ օզած, քյըեզ փըսակած:

Տըղան ռազի յա կըենըմ:

Էս քաղաքիցը մոտիկ մի օրիշ թաքավեր կար: Ընդրան օնար մին շատ ղ՛աշ՛անգյ ախճիգյ: Էտ ըխճըկանը նշան ըն տամ էտ տըղին հետի: Մին քանի շեփտանը ետը հըրսանիք բեղմա անին:

Համին էտ քաղաքումը ապրըմ ար մին շատ լ՛ավ նկարիչ: Նա նկարում

ար սարերը, հանդերը, չո̈լերը, դա̈շա̈նգյ տըեղեր: Նա մին դո̈նում էլ տըեսնում ա, վըեր էտ ծաղեգյներեն մեչին կա մին շատ նախշուն ծաղեգյ: Նա մուտանում ա, տըկռիքյավը հանում, տանում տոն, տինում մին ծաղկամանի վըեղի մեչի: Էտ նկարիչին տանը վեչ մին մարթ չիկար, ինքն էլ սուբեհ ար, խալաստոյ. ինքն էլ՛ քյասիբ ար: Ամուն օր, հիբը էտ նկարիչը կործի ար քյինում , էտ ծաղիկը ախճիգյ ար տըեռնում, ըսկըսում տուխուր երքեր ասիլը,- տոն-տըեղ հըվըքելիս լա̈ց ինիլը:

Նկարիչը կյամ ա, տըեսնում տոնը, տըեղը հըվաքած, դա̈շա̈նգյ: Տա մընամ ա զարմացած, թա էտ հու կինի, հու չինիլ: Մին էրկու դո̈նում վեր իտի յա անըմ, էտ նկարիչը կյողլ ա կըենում, տեռնում, վեր ո̈ւրա̈ն պըերած ծաղիկը ախճիգյ տըեռավ, ըսկսից մին ղոլան տոնը հըվաքիլը, մին ղոլան էլ տխուր երքեր ասիլը: Էտ վախտը նկարիչը կյողլը կացած տըեղան տո̈ւս ա կյամ, տըեսնում մին հո̈ւլո̈ւմա̈լա̈գյ ախճիգյ: Ախճիգյը հըմանչում ա, մընում տըեղը կաղնած, լա̈ց ինո̈ւմ: Նկարիչը մընամ ա ըրմացած:

Ասըմ ա, - Ըշտըղացի՞ յըս, ըշտըղա՞յըս եկալ, թո՞րն ըս քյընում հո՞ւվ ըս, հո՞ւ չըս:

Ախճիգյը լոխ նաղլ ա անըմ, ետնան ասըմ. - Ծըեր քըղաքումը էն տըղան նըշանվա՞լ ա՞ :

Նկարիչն ասըմ ա.- էս քըշեր ընդրա հըրսանիքն ա:

Ախճիգյը նկարիչին ղաչանք ա անըմ, ասըմ. - Քյինա̈ էն հըրսընքատըեռնը ասի. «Իմ ախճիգյս շատ լա̈վ թխվածկնի յա թըխըմ, թող կյա ծըեզ քյո̈մագյ անի»:

Նկարիչը քյինո̈ւմ ա, ասըմ: Էն պադրաստոթուն քաշողնին ասըմ ըն, - Թող կյա:

Ախճիգյը կյամ ա, թըխվածքնի թըխում, մուտանին մեչին տինո̈ւմ , ասըմ. - էս թըխվածքը տարիք տըվիք փեսացուվեն:

Հըրսընքատարերը կաղարում ըն էտ ըխճըկանը խնթիրքը:

Տըղան թըխվածքը օտելիս, մըտանին ընգնում ա ընդրա պերանը: Նա պերա̈նիցը հանըմ ա, տըեսնում, դա̈ստի օշը տանըմ ա:

Լոխ վախըմ ըն, թա հի՞նչ պըտահի՛ց փըըսցուին: Վեր տըղին օշը կյլո̈խն ա կյամ, հրամմայում ա ո̈ւրա̈ն կոշտը պերին էն թըխվածքը թըխողին: Վեր պերում ըն, թաքավերին տըղան պաչում ա ընդրան, ետավ մեղա յա կյամ: Ախճիգյը ներում ա:

Տըղան հըրսընքատերերին լոխ նաղլ ա անըմ ո̀ւրա̀ն կըլխավն անց կացածը: Ասըմ ա, - Ցըես պիտի էս ըխճըկանը նհետ փըսակվիմ, վեչ թա̀ էն թաքավերին ըխճըկանը նհետ, թող էտ թաքավերը նըղանա վեչ:

Հենց էտ քըշերը հըրսանիք ըն անըմ: Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ:

Հըրսընքանը ետը ընդրանք շատ օրախ, բախտավեր ըն ապրըմ, միչն ո̀ւրա̀նը Սիմոն ծո̀ւրո̀ւնի տըեռնալը:

Երգյինքան էտ քըշեր աստխեր ծըլլացին, հու մուրազ օնի, թող ասի, վեր կադարվե: Էտ քըշեր Շուշի-Ղալին կանանչ-կյարմո̀ւր բախչըցան, էն տեսակ-տեսակ, ռա̀նգյ-ռա̀նգյ թոփ վարթերան շաղ տվին փունջերավ…

Փունջերին մինը՝ ասողին, մինը՝ լըսողին, մինն էլ կյըրողին, վեր վըետ քաշին էն անմահական վըետը,

Ո̀ւրա̀նց հոքին փառավըերի՛:

24.ԴԱՐՎԻՇ ԹԱՔԱՎԵՐԸ

Մին օր հայոց Անի քաղաքին թաքավերը շո՞րերը փոխըմ ա, դա՛րվիշի շո՞րեր կյենըմ, թաքավերոթունը ո՛ւրա՛ն վեզիրին թափշուր անըմ, ինքը քյընըմ ժողովուրթին մըեջը, տըեսնա ժողովուրթը հունց ա ապրըմ, ո՛ւրա՛ն անա ռազի՞ յա, թա չէ, մին վեզիր էլ նըհետը յոր ա օնըմ, հընգյրոթուն ընելի հետի:Մին խիլլա՛ էլ վըեսկե, թընգյակին քարեր ա յոր օնըմ, քյընըմ:

Քյինըմ ըն, քյինը՛մ, շատ քաղաքնի, շեներք ըն ման կյամ, շատ մարթկանց նըհետ ըն նստըմ, եր կըենը՛մ, շատ խասյաթնի յըն տըեսնըմ, չար նան պարի, շատ պեներ ա ըտրանց կըլո՞խը կյա՛մ:

Վերչը շատ ըն քյինըմ, խըեգյ ըն քյինըմ, շատը նան խըըեգյը աստուծ կըգյիդա՛, հըսնըմ ըն մին անծանոթ երգյիր:

Թաքավերը վեզիրին ասըմ ա. -Քյինինք բազար, ախկադի նման փող հըվաքինք, տըեսնանք ժողովուրթը հունց ա քյո՞մա՛գյ անըմ ախկադներին: Մինա՛կ յըես բազարին էս կըլխան նի մըննիմ, տո՞ւ էն կըլխան…

Իտի էլ անըմ ըն: Թաքավերը մուտանըմ ա մին առուտուրականի, փող օզըմ: Առուտուրականը քյո՞մա՛գյ ա անըմ, փող ա տամ: Դա՛րվիշը ռազի յա քյընըմ:

Էտ առուտուրականը ո՛ւրա՛ն գյա՛դին ասըմ ա, - էտ ախկադին բուսը պահեցիք, ո՞ւրո՞ւգյո՞ւնը մըեր տոն պըերիք:

Ո՛ւրո՞ւգյո՞ւնը էտ դա՛րվիշին ղոնաղ ըն կանչըմ: Ասըմ ա, - Ցըես կը կյըվի ամմա մունք էրկու հոքի յընք, ընղրան թողիլ չըմ, յըես կյամ:

Ծառեքը ետ ըն տըեռնըմ էն առուտուրականին ասըմ:

Առուտուրականը ասըմ ա. - Քեցիք էրկուսին էլ պերիք, աշկիս յրան տըեղ օնին:

Էրկու դա՛րվիշ քյընըմ ըն էն առուտուրականին տոնը: Առուտուրականը լա՛վ ղոնաղ ա անըմ էտ դա՛րվիշներին, ասըմ. - Իմ տոնըս ծըեզ ղուրբան, հիշքան օզըմ ըք մնացիք ըստեղ, հիբը օզիք էս քաղաքան տո՞ւս կյաք, կարող ըք տո՞ւս կյաք :

Իտի մին քանի օր մընըմ ըն էտ քաղաքըմը: Մին օր էլ էտ թաքավեր-դա՛րվիշը բըզարըմը տըեսնըմ ա, մին մարթ օղտը կըղնըցըրալ ա բազարին մեչին, օղտին մեշկին էլ մին պուճուր օթախ տիրած, կանչըմ ա. - Հու վըեր օզըմ ա մին դո՞նըմ իմ օղտիս յրան տիրած պուճուր օթախին մեչին եշի, թող իցուն մանեթ վըեսկե տա :

Վեչ մինը մուտանըմ չի էտ պըլըխելունք մարթան։

Դ՚ըրվիշը վըեր լըսըմ ա, մուտանըմ ա, իցցուն մանեթ վըեսկե փող տամ, էտ օթախին մըեչին եշըմ։ Վըեր եշըմ ա, օշը տանըմ ա, եր ընգնըմ։

Ժողովուրթը զարմանըմ ա, թա էտ դ՚ըրվիշը խե՞ նըհախ տըեղան համ հըվաքած փողը, վերչի կըպըկնին տըվավ, համ էլ օշը տարավ։ Վեր դ՚ըրվիշը օշը կըլօխըն ա հըվաքըմ, էտ օղտապանին անա հըրցնըմ ա. - Հիշքա՛ն փող տամ քու էտ օթախիտ։

Երեք հ՚ըր՚ուրիցցուն վըեսկե տո, քյե տամ։

Հըվաքված ժողովուրթին անա վեչ մինը մուտանըմ չի, դ՚ըրվիշը էտ կումարը տամ ա, էտ օղտին յրա օթախը առնըմ։ Էտ օթախը մըն էլ մին հ՚ուրիփ՚ըրի ախճիգյ։ Վըեր ժողովուրթը էտ ըխճըկանը տըեսնըմ ա, մընըմ ա մըլորվա՛ծ։ Գյիդըմ ըն, թա երգյինքան ա, էս երգյիրաս չի։

Էտ քըշեր կյ՚ըմ ըն էն առուտուրականին տոնը։ Էքսը դ՚ըրվիշ-թաքավերը ՚ուր՚ըն վեզիրին ասըմ ա. - Տու ետ տըեռ քյինի պալատը, երգյիրը լ՚ըվ կառավարի, յըես հ՚ըլ՚ը ըստեղ կըեննալու յըմ։

Դ՚ըրվիշը ամման օր բազար ա քյընըմ, ամման ջուռա օտելի պեններ առնըմ, պըերըմ տամ էտ ըխճըկանը։

Վերչը ըտրա փողը պըրծընըմ ա։

Դ՚ըրվիշը տըխուր նըստըմ ա, քընենքյ անըմ, թա էն մին օրը էտ ըխճըկանը հի՞նչավ պիտի պահի, ջուռաբաջուռա օտելի պեններ ըշտեղան ճարի, վեր փող չիկա։

Էտ ախճիգըը տըեսնըմ ա, վըեր դ՚ըրվիշը, ախեր շատ ա բեքյեփ մուտանըմ ա, կոլ՚ըվը ընգըմ, պաչըմ, ասըմ. -Սիրելի դ՚ըրվիշ, խե՞ յըս բեքյեփ, բ՚ըլք՚ըս ինձանա սառալ ըս, ամմա յըես քյըեզ շատ ըմ սիրըմ, տու ինձ էն կյող-ավազակին ծըեռքան ազադեցիր, քու վերչին կըպըկնիտ տըվիր, ինձ հետի մըեծ-մըեծ խարջեր ըրիր, բա մըհեկ խե՞ իտի յըս։

Դ՚ըրվիշը ետ ա տըեռնըմ էտ ըխճըկանը աշկին մըեչին եշըմ, ասըմ. - Չէ, քըմատաղ, յըես քյըզանա սառալ չըմ, յըես քյըեզ շատ ըմ սիրըմ, տու իմ աշկիս լ՚ուսըն ըս, կըլխիս թ՚ըքյըն ըս, իմ ջանս-ջիգյարնըս, ամմա քյըզանա հի՞նչ կյեղիմ, փողըս պըրծալ ա։

Էտ ախճիգյը ըտրան իցցուն մանեթ վըեսկե յա տամ ՚ուր՚ըն ծըեռքին կյեղած-պահած, իլ՚ըծ-չիլ՚ըծ լոխ փողը էտ ա ընում, ասըմ ա. - Դ՚ըրվիշ ջան, քնենքյ մի անիլ, օրախ կաց, ծըծաղի, էս փողըն էլ ինքյ կալ, քյընա

բըզարան ջուռաբաջուռա, ամման ռա̀նգյի թիլեր առ, պըեր, գյա̀բա̀ կյոր-ծիմ, տար թա̀նգյ կյինավ ծախի:

Դա̀րվիշը իտի էլ անըմ ա: Սաղ քըշերը էտ ախճիգյը քոն չի ինըմ, մին դա̀շա̀նգյ գյա̀բա̀ յա կյործըմ: Ուռութանա դա̀րվիշը եր ա կըենըմ, մընըմ մաթ մընացած:

Ախճիգյը ասըմ ա. - Սիրելի դա̀րվիշ, էս գյա̀բա̀ն տար բազար, ծախի, ամմա էրկու հարո̀ւրը իցցուն վըեսկա վէչ իվիլ, վըեչ պակաս, ծախիս վէչ, վեր շատ էլ տան, տաս վէչ:

Դա̀րվիշը էտ գյա̀բա̀ն տանըմ ա բազար, վեր ժողովուրթը տըեսնըմ ա, մընըմ ա մաթ մընացած, պըերաննին պեց ըրած, չըտեսի նման եշըմ ըն: Դա̀րվիշը էտ գյա̀բա̀ն դո̀ւզ էրկու հարո̀ւր իցցուն վըեսկավ ծախըմ ա, օրախ-օրախ ամման օտելի պեն, թիլեր առած, կյամ տոն:

Իտիյոթունավ մին խիլլա̀ վախտ էտ քաղաքըմը ապրըմ ըն: Ախճիգյը իտի գյա̀բեքյ ա կյործըմ, էն առուտուրականը տինըմ ա ո̀ւրա̀ն դո̀ւքյանըմը ծախըմ:

Էտ ախճիգյը Հայաստանի զահմաննեն տըենը, Իրանին շահին ախճիգյըն ա ինըմ: Մին աշխարքիս հայտնի դաչաղ ման կյալի վախտը ըտրան կյուղանըմ ա, պըերըմ Հայաստան, ըտըղան էլ անց ըն կըենըմ Ղարաբաղ, գյիդա̀լա̀վ վեր Շուշի քաղաքըմը շատ հարուստ առուտուրականնի կան, պըերըմ ա ըտեղ ծախըմ, հեռանըմ, քյընըմ, կըլոխը ջա̀նջա̀լա̀ ազաղըմ:

Իրանի շահը հրաման ա տամ, ո̀ւրա̀ն երգյիրըմը լոխ սոքյ պահին, սըեվ կյենան: Մարթիքյ ա ղարկըմ հըրևան երգյիրնին, ըխճըկանը ճարելի հետի:

Նըշանց ըն տամ էտ ըխճըկանը կյործած գյաբեքյը, ասըմ.

Բա̀լա̀քյաս իստի կյործած գյըբո̀ցը յրան ճընանչիք: Իտի էտ ըխճըկանը հետան ման ըն կյամ ման, վէչ մին տըեղ ճարըմ չըն: Վերչը Իրանի էտ մարթկանցից մինը ընգնըմ ա Շուշի-Ղալան, ըշտեղ էտ ախճիգյըն ար: Տա քյինըմ ա բազար, համին էն առուտուրականնին դո̀ւքյանըմը էն ըխճըկանը կյո̀րծած գյա̀բոցը նըման գյա̀բա̀ ճարըմ:

Մուտանըմ ա, կյինը գյուղո̀ւմ, ասըմ.- Էտ գյա̀բոցան ինձ շատ ա հարկավեր, էտ ո̀վ՞ ա՛ կյործըմ:

Դա̀րվիշը մուտանըմ ա էտ մարթին, ասըմ. - Ցըես ըմ կյործըմ: Էտ

մարթին էլ յոր օնըմ տանըմ տոն։ Քըշերը կըենըմ ըն։

Էտ ախճիգյը մարթին ասըմ ա. - էս մարթը իմ աշկիս լա̀վ չի ըրվըմ, էտ ըշտեղ ա քյըեզ ջիա̀լ, վեչը-փոչ պիտեր ջհա՛ծ էտ մարթը, պլորըս ըտրա տանե հա՛, օխծը ըտրա վիզավը փըրթաթվե։

Վերչը մին թա̀հրա̀վ ըտրանք քոն ըն ինըմ։

Քըշերվա կըեսին էտ մարթը եր ա կըենըմ, տըեսնըմ ըտրանք քոն ըն, շո̀րերը կյենըմ ա, ըտրանց քըթին տակին քընըցնող ճար ա տընըմ, պինդըմը քընըցնըմ, էտ ըխճըկանը յոր օնըմ, ծիյին թամքան կապըմ Արասխը անց կըցնըմ, տանըմ Իրան։

Էքսը էն առուտուրականը տըեսնըմ ա դա̀րվիշը եկավ վեչ։ Կյամ ա տոն, տըեսնըմ դարվիշը խոր քոն նի մըտած։ Մին թահրավ ըտրան եր ա կըցնըմ։ Դա̀րվիշը եր ա կըենըմ, տըեսնըմ կընեգյը կա վեչ, ղոնաղըն էլ չի կա՛։ Տա օզըմ ա, թա պըլանա, կյիմվի, ցնգնի էն սարերը։

Վերչը էտ առուտուրականին ասըմ ա. - Յըես պիտի քյինիմ իմ խելունք, կյեղեցիկ, մանները վըեսկե կընզանըս ճարիմ։ Ասըմ ա, ճընապար ընգնըմ, քյինըմ։

Շատ ա քյինըմ, թա խըրեզյ ա քյինըմ, շատը նան խըրեգյը ինքը կգյիդա, հըսնըմ ա մին երգյիր, տըեսնըմ սաղ ժողովուր թը կյարմուր ա կյեցալ։

Դա̀րվիշը մուտանըմ ա մին մարթի, հըրցընըմ։ Էտ մարթը, ասըմ ա. - Ա՛յ մարթ, բա գյուղո̀ւմ չը՞ս շահին հրամմանը, վեր պիտի քառասուն օր կյա̀րմո̀ւր կյենան։ Շուտ ըրա տու վել կյա̀րմո̀ւր շո̀րեր կյեց, թա չէ շահը կըլո̀խտ կըտրել կտա՛։

- Ախեր սա̀բա̀բը հի՞նչ ա, վեր կյա̀րմո̀ւր ըն կյեցալ։

Էտ մարթն ասըմ ա. - Շահին ըխճըկանը հըրսանիքըն ա, համ էլ ղաչաղնին էտ ըխճըկանը փըխցըրած ըն իլա̀լ, մին մարթ քյեցալ ա ճարալ, պերալ, մըհեկ էլ ո̀ւրա̀ն ախպորը տըղին յրան փըսակըմ ա։

Էտ վեր դա̀րվիշը լըսըմ ա, ասըմ ա. - Ա՛յ մարթ հիշքան փող օզըմ ըս, կըտամ, մինա̀կ ինձ մին պեն ասի։ Տըեսնամ էտ ըխճըկանը հու՞նց տըեսնամ։

Էտ մարթը վեր վըեսկուն անըմը լըսըմ ա, ասըմ ա. - Հա̀լա̀ մին ծըեռք կյա̀րմո̀ւր շո̀ր պըերիմ, կյեց, ետնան կասիմ։

Տա կյա̀րմո̀ւր շո̀րեր ա պըերիմ, դա̀րվիշը կյենըմ ա, ասըմ. - Դա̀րվիշ ախպեր, էտ ըխճըկանը տըսնալի հետի մինա̀կ մին թա̀հրը կա։Ո̀ւրո̀ւգյո̀ւնը

յըես քյըեզ կըտանիմ շահին կոշտը, կասիմ, վեր տու օզըմ ըս մեչիդըմը ծառալիս: Նա քյըեզ յոր կօնի մեչիդըմը կծառալիս: Շահին ախճիգյը նան փըեսացուն կյալու յըն մեչիդ, մոլին քըշտին փըսակվին, քյաբինը կըտրին: Էտ վախտը տու կարող ըս էտ ըխճըկանը տըեսնաս: Ամման մունուտ տու պիտի սայաղ կըենաս, թա չէ, կըլը̀խտ տիրնի նման թըռչելու յա, յա քու կըլը̀խըտ, յա մին հավու կըլը̀խ ա ինելու: Փըեսացուն էլ ա ինելու մեչիդըմը:

Իրեք օր, իրեք քըշեր մեչիդըմըն ըն ինելու, մըեր ադաթը իտի յա: Էտ վախտը ղաստ ըրա ըխճըկանը տըես, խոսի, թա կարիս ըխճըկանն էլ եր կալ, փախի քու երգյիրըտ:

Էտ մարթը իտի էլ անըմ ա: Ո̀ւրո̀ւլգյո̀ւլը քյինըմ ա շահին պալատը, շահին խընթըրըմ, վեր էտ տըղին մեչիդըմը ծառա յոր օնի: Շահը հրամման ա տամ, վեր յոր օնին:

Մին օր հըրսանիքին օրախ սա̀սը կյամ ա մեչիդը: Շահին ախճիգյը նան փեսացուն մընում ըն մեչիդըմը, մընացած դոնաղնին քյինում ըն ո̀ւրա̀նց տըները: Շահին ախճիգյը քըշերը տո̀ւս ա կյամ մեչիդին հայաթը, ընդեղ տուխուր նըստըմ, լա̀ց ինում , մըետը քըցըմ դա̀րվիշին, ախ քաշըմ, ընդրա սըերտը դա̀րվիշին յրան ար: Լա̀ց ա ինո̀ւմ լա̀ց, էտ ախպուրին ճըիրավը իրեսը լվանըմ, էլհա նի մըննըմ մեչիդը: Էրկունջի քըշերըն էլ ա իտի անըմ: Դա̀րվիշը էտ լոխ տըեսնըմ ա: Իրեքինջի քըշերը փըսակը պիտի պըրծներ:

Դա̀րվիշը ռիսկ ա անըմ, տո̀ւս կյամ էն հայաթին ըխպրին կոշտը, ըշտեղ էտ ախճիգլը կյամ ար, նըստըմ լա̀ց ինըմ: Ըտեղ ըտրանք ո̀ւրո̀ւր տըեսնըմ ըն, պըչպըչորվըմ, լա̀ց ինըմ:

Ախճիգլըն ասըմ ա, - Դա̀րվիշ, տու էս քըշեր պիտի էտ տըղին կըլո̀խր կըտրիս, թա̀ կարեցիր կըտրիս, էնա հու յըես քունն ըմ, թա կարեցիր վեչ կըտրիս, էլ պըրծավ, էլ վեչ յըես, վեչ տու:

Դա̀րվիշը ռազի յա կըենըմ: Էտ ախճիգյը նի յա մըննըմ մեչիդին մեչի օթախը, նըշընածին ասըմ, -Հի՞նչ կինի, էս մեչիդին ծառայողին ասիս կյա հա̀քյա̀թ ասի, քոնս տանըմ չի՛, համ էլ քըշերը էրգյան ա:

Իտի էլ անըմ ըն: Դա̀րվիշը կյամ ա վըեննին յրան կաղնած էնքան հա̀քյա̀թ ասը՛մ, վեր ըտրանց քոնը տանըմ ա: Դա̀րվիշը տըենակը հանըմ ա, էտ տղին սըերտը կոխըմ, ախճիգյը յոր օնըմ, փախչըմ:

Քյընըմ ըն, քյընըմ, շատ ըն քյընըմ, թա խըրեգյ ըն քյինըմ, վերչը մին

ախպո̀ւրի քըշտի նստըմ ըն, թա դինջանան: Ախճիգյը կըլո̀խը տինո̀ւմ ա դա̀րվիշին ծընգնին, քոն ինըմ: Դա̀րվիշը ըտրա մազերը սըղալելիս տըեսնըմ ա խըզըտակին մազերին մեչին մին ճուղուպրի չանք պեն: Յավաջ-յավաշ հանըմ ա, տըեսնըմ մին շըղշողըմ բոյլանդի քար ա: Մինչև դա̀րվիշը էտ քարին եշիլը, մին մըեծ ա̀րծիվ դա̀ստի քըշանըմ ա, քարը կըտուցավը չանթըմ, էտ թըռչըմ, մին մունուտի մեչի:

Դա̀րվիշը մընըմ ա դա̀րդի մեչի: Ասըմ ա.- էս ախճիգյը քունըրտեղա եր կըկենա, կգյիդա̀ թա̀ կյուղացալ ըմ, աշկըս յրան ա՛, էլ գիդալ չի թա էնա իմ խազնաս իտի քարերավ լիգյը, դա̀փնա̀ս լիգյը: Պա էս հո՛ւնց անիմ, հու՛նց չանի՛մ, վեր լա̀վ ինի՛:

Վերչը կյամ ա էն մըթկին, վեր քյինի էտ քարը ճարի: Էտ ըխճըկանը թողըմ ա իտի քոն իլա̀ծ, ինքը էն մըեծ դուշին հետան քյընըմ, տըժեր տըեղերավ, սարնըեր պըցրա̀նըմ:

Իտի սաղ քըշերը էտ դուշին հետան ման ա կյամ, կարըմ չի քըթնի: Ծըեքյը տալիս էտ դուշըն էլ կորչըմ ա:

Դա̀րվիշը ետ ա տըեսնըմ, կյամ էտ ըխճըկանը կոշտը, տըեսնըմ ախճիգյը կա վըեչ: Դա̀րվիշին ըտեղ թողինք, խա̀բա̀րը տանք էտ ըխճըկանան:

Տա վեր եր ա կըենըմ, տըեսնըմ դա̀րվիշը ըտեղ չի, մաթ ա մընըմ, գյուղո̀ւմ ա, թա ո̀ւրա̀ն թողալ ա, եր ա կըենըմ, քյինըմ հետան ման կյամ: Վեր շատ ման ա կյամ, ճարըմ չի: Մին տըեղա հըրցընըմ ա Անի քաղաքին ճընապան:

Վեր Անի քաղաքան մուտանըմ ա, մին չոբանի անա ընդրա շո̀րերը խընթըրըմ ա, ասըմ. - Ա՛ չոբան ախպեր, հինչ օղիս կըտամ, թա̀քյ լիա̀ քու շո̀րերըտ ինձ տաս, իմը տու յոր օնիս:

Չոբանը շո̀րերը տամ ա: Տա տըղամարթի շո̀րեր ա կյենըմ, նի մընըմ Անի քաղաքը, հունցու տըղամարթ մին մըեծ դո̀ւքյա̀նըմ մին առուտու-րականի քըշտի պըրիկաչիկ ա նի մընըմ: Ջա̀լա̀ մին խըրեգյ վախտ անց կացած վե՛չ, աշկի յա ընգնում, հունցու լա̀վ առուտուր անող:

Մըհեկ էլ դա̀րվիշին անա խա̀բա̀ր տանք:

Էս դա̀րվիշը էտ ըխպըրին քըշտին վեր ճարըմ չի էտ ըխճըկանը, մընըմ ա մըլորված, նըստած: Բիրդա̀ն տըեսնըմ ա էտ ըխպըրին քըշտին մին հափուռ վըեսկե: Տա մընըմ ա մաթ մընացած: Եշըմ ա տըեսնըմ մկները

տափին տական վըեսկե յըն կըըըմ, ըտեղ թուփ անըմ, համ էլ ո̀ւրո̀ւր նըհետ խոսըմ, ասըմ. - Էս դա̀րվիշը խեյա մաթ մընացալ աշխարքիս պըեներին յրան, էսքան վըեսկեն տափին տակին փըչանըմ ա, ինքը օգըմ չի տա̀ր տըեռնա էս վըեսկուն, էսքան հարըստութունը թողած, ինքը մին բըռըյանդի հետի յա քընենքյ անըմ։

Դա̀րվիշը ասըմ ա. - Էս արազ ա, թա ըըըկյոճի» Եր ա կըենըմ մին փա̀դավ էտ փափուկ վըեղը քանդըմ, տըեսնըմ խիլլա վըեսկե կա։ Լոխ յոր օնըմ, թուփ անըմ, խոտավ, ժա̀նգյա̀լա̀վ ծասկըմ, նըստըմ։ Ըտըղավ քյընող մին շենացի ըըըբան լըծած, պարկերը մա չին, քյընըմ ար ցորեն պըերի։ Էտ ըըըբան կըղնըցնըմ ա, պարկերը տուս տամ, վըեսկավ լըցնըմ, տինըմ ըըըբին յրան, էտ մարթին էլ մին խիլլա̀ վըեսկե տամ, ճընապար տինըմ։ Ինքը արաբան քըշըմ ծովին դրաղը։ էտ ծովին դրաղի շըհա̀րա̀ն աղ ա առնըմ, պարկերին կըլո̀խը լըցնըմ, վեր գյիդա̀ն վեչ, թա վըեսկե յա, նավին յրան տինըմ, ղարկըմ Անի քաղաքը, ինքը մընըմ ա, վեր էլհա ո̀ւրա̀ն սեր տըված, սեր առած ախճիգյը ճարի։

Էտ դա̀րվիշը քյինըմ ա շատ քաղաքնի ման կյամ, քյինըմ ա Սպահան, օրիշ թաքավերոթուննի, ամմա վեչ մին տըեղ ճարըմ չի։

Վըեսկավ նան աղավ պըեռեած նավերը էրգյա̀ն վախտ անց կենալանը ետը Անի յըն հըսնըմ։

Պեռները եր ըն տինըմ, ամմա տարը տո̀ւս չի կյամ։ էտ վախտը Անի քաղաքըմը աղ չի կար։ Ժողովուրթը առուտուրականներան աղ ար օզըմ։ Էտ պրիկասչիկ ախճիգյը, տըղամարթի շո̀րերըմ կյամ ա պայման կապըմ, վեր տարը տո̀ւս կյա́, ապրանքը, յա փողը տան տըըո̀ւչը։

Էտ աղին պեռները տանըմ ա դո̀ւքյա̀նըմը ծախըմ։ Վրեր ծախըմ ա, տըեսնըմ ա տակը վեսկե յա́, հա̀լա̀ գյուղո̀ւմ ա, թա աղը վըեսկե յա տըեռալ, աշկերին հըվատըմ չի, ետավ խազայինին ասըմ ա։

Խազայինն էլ ասըմ ա, - Վըեսկեն թող իտի էլ կըենա, վեր տարը տո̀ւս կըկյա տըըո̀ւչը կը տանք։

Դա̀րվիշը անց ա կըենըմ Սպահան, Խորասան, օրիշ շատ քաղաքնի, ամմա վեչ մին տըեղ էտ ըխճըկանը ճարըմ չի։ Ճարը կըտըրած էլհա ետ ա տըեռնըմ, էն ծովին դրաղի մըեծ քաղաքը, ըշտըղան ո̀ւրա̀ն ապրանքը՝ աղը նան վըեսկեն նավավ ղարկալ ար Անի։ Ընդըեղ բեքյեփ կաղնած մըեթկ ար անըմ, մին էլ ա տըեսնըմ էրկու մարթ խոսելավ քյընըմ ըն։

Ըտրանց անա մինը ասըմ ա. - Էս դյա̈րվիշին եշի, ո̈ւրյա̈ն վըեսկեն թողած, ինքը մին անկյին քարի հետա յա շոռ կյամ, մին էլ մին ըխճըկա հետա: Էլ գյուղում չի, վըեր անկյին քարը ճարելու չի, ամմա էն ախճիգյը էն ա Անի քաղաքին մին առուտուրականի հարուստացընըմ ա, ընդրա պրիկասչիկն ա:

Դյա̈րվիշը օզըմ ա մուտանա մին լյա̈վ հըրցնի, ամմա էտ էրկու մարթը աշկան կորչըմ ըն:

Դյա̈րվիշը նավ ա նըստըմ, ճանապարվըմ Անի քաղաքը: Վեր հըսնըմ ա, կըռանըմ ա վըեղան պաչըմ, մեղա կյամ, վեր էտ քան վախտ անդար ա թողալ: Ետավ հըրցնըմ ա աղին պըեռներին անա, ասըմ ըն, թա. «էս հինչ հարուստ առուտուրականին պրիկասչիկը տարալ ա, քյինի, ընդրանա օզի»:

Դյա̈րվիշը կյամ ա, էտ մագազինին առաչին կաղնըմ, տըեսնըմ ո̈ւրյա̈ն սիրած ախճիգյը հեն ա ընդեղ, տըղամարթի շո̈րերավ կործ ա անըմ թայղի-թայղի: Դյա̈րվիշը մուտանըմ ա էտ առուտուրականին, խընթըրըմ, վեր քըշերը մին տըեղ տա, քոն ինի, էքսը քյինյա̈լու վա թաքավերին կոշտը, վեր ո̈ւրյա̈ն մին խըրեգյ քյոմագյ ինի:

- Է, դյա̈րվիշ ախպեր, բա թաքավերը ըստե՞ղ ա, վեր քյըեզ քյո̈մյա̈գյ ինի, ընդրա տըեղը վեզիրն ա, նա քյըեզ հի՛նչ քյո̈մյա̈գյ կանի: Լի̈ա̈ էս քըշեր դո̈ւքյա̈նին քըմակի օթախըմը կաց, էքուծ եր կըկըենաս, քյինիս:

Դյա̈րվիշը խընթըրըմ ա, վեր էքսը էտ առուտուրականը մին մարթ դարկի պալատը, վեզիրին ասի, վեր մին դյա̈րվիշ ընդրան կանչալ ա:

Էտ առուտուրականը մընըմ ա մյա̈թյա̈լ էտ դյա̈րվիշին իրեսը պեց ինելին հետի: Տա տըրըկո̈ւսըմ ա, թա տըեսնաս սա հու՞ վա: Էքսը մին խելունք մարթ ա դարկըմ պալատը, էտ լոխ ասըմ...

Վեզիրը լոխ ըսկանըմ ա, դյա̈ստի գյուղում ա, թա տա հու վա, հրամման ա տամ նազիր-վազիրնին կյամ ըն, ածողնի յա կանչըմ, հրամմայըմ ա քաղաքը զյա̈րթարին, լյա̈վ-լյա̈վ շո̈րեր կյենան:

Դյա̈րվիշը էտ առուտուրականին անա հըրցընըմ ա, ասըմ. - Կաղա-րեցի՞ր խընթիրքըս:

- Կաղարեցի:

- Դե վըեր կաղարեցիր, մըհենգյ մին ծըեռք թյա̈զյա̈ շո̈ր տռ ինձ, իստի համոթ ա վեզիրին նըհետ խոսիմ: Ըտրան մին ծըեռք թյա̈զյա̈ շո̈ր ըն տամ, կյենըմ ա:

Դա̀րվիշը տըեսնըմ ա, վեր էտ առուտուրականը մին տըեսակ տուխուր ա: Տա մին էլ ա հանըմ կյեցին շո̀րերը, էլիա դա̀րվիշի շո̀րերը կյենըմ, մուտանըմ էն տըղամարթի շո̀րերը կյեցած ըխճըկանը: Էտ ախճիգյը ճընանչըմ ա ո̀ւրա̀ն: Ըտահանք ո̀ւրո̀ւր կո̀լա̀վըն ընգնըմ, լա̀ց ինըմ:

Էտ առուտուրականը գյուղո̀ւմ չի, թա էլ հի՞նչ անի, մընըմ ա շշկլված աշկերին հըվատըմ չի՜…

Վեզիրը մըեծամըեծներին նըհետ, նա̀զիր-վա̀զիրներին նըհետ կյամ ա թաքավերին առաչը, ըտրա թաքավերական շո̀րերըն կյեց տամ, ըտրան նան էն ըխճըկանը պալատ տանըմ: Էտ ախճիգյը գյուղո̀ւմ չի ինըմ, թա դա̀րվիշը հու վա՜:Վեր տըեսնըմ ա թաքավեր ա, մընըմ ա զարմացած:

Դա̀րվիշ թաքավերը թախտին նըստըմ ա, էն ախճիգյըն էլ թաքուհի յա տըեռնըմ: Ըտրանք ժողովուրթին լա̀վըն պահըմ: Ո̀ւրա̀նք էլ սերավ ըն ինըմ:

Ըտրանք հասին ո̀ւրա̀նց մուրազին, մունք էլ հասնինք մըեր մուրազին… Երգյինքան իրեք խընձո̀ր եր ընգավ, մինը՝ ասողին, մինը՝ կյըրողին, մինն էլ՝ լըսողին:

25.ԿՅԵՌԹՆՈՒԿ ԱԽՃԻԳՅԸ

Ինո՛ւմ ա, չինո՛ւմ մին թաքավէր: Էտ թաքավէրեն ինո՛ւմ ա իրեք տղա, իրեքն էլ շատ խելուք տղերքը ըն ինո՛ւմ, հորը խոսքավն ըն քյնո՛ւմ:Էտ տղեքը մծանում ըն:

Մեհետ էտ տղերքը ո՛ւրա՛նց հորն ասըմ ըն, - Ա՛ հար, օզում ընք փսակվինք:

Հա՛րն ասում ա, - Յըես էլ ըմ համոզ, մինա՛կ մին պայմանավ:

Թաքավէրը պերըմ ա տղորանցը ամեզյը մին թո՛ւվա՛նգյ տամ, ասում. - Տըրքցրէ՛ք, ամմա հո՛ւր գյո՛ւլլա՛ շենն ընգավ, ընդրան շենումն ըմ փսկլական, հո՛ւր գյո՛ւլլա՛ էլ վեր շենան տո՛ւս եկավ, ընդրան աշկս տեսնա հուչ, տանան տո՛ւս ըմ քըցլական:

Թաքավէրեն տղերքյը իրեքան յոր ըն օնում թո՛ւվըընգյնեն տըրքցնում:

Մեծ նան մաշնակ տղորանցը գյո՛ւլլա՛ն շենն ա ընգնըմ, ամմա կուճուր տղեն գյո՛ւլլա՛ն շենան տո՛ւս ա վեր ընգնըմ:

Թաքավէրը թո՛ւնղո՛ւմը կըզնվում ա, պրծնըմ, կուճուր տղեն տանան տո՛ւս քըցմ, էն էրկու տղեն էլ առոք-փառոք հըսանիք ա անըմ, պըլատումը թողըմ:

Թաքավէրն նան ո՛ւրա՛ն էրկու տղէն թողինք ըտեղ, տեսնանք էն խեղճ կուճուր տղան՝ Սարումը ի՞նչ ա տեռնում:

Կուճուր տղան շատ մտածելանը ետը կլո՛խ ա եր օնում, քյնո՛ւմ: Քյնա՛մ ա, քյնա՛մ, մին կյետու քշտի նստում, լա՛ց ընըմ: Մտածում ա, թա ըշտե՞ղ քյնա՛, հո՞ւնց ապրե:

Վերչը էտ տղան ըտեղ ծո՛ւկըն ա փըռնըմ, կրակ անըմ, մին թա՛հրա՛վ ապրըմ:

Քյնա՛մ ա ծմական ճպատ քաղըմ, խեչակ կտրում, պո՛ւրո՛ւմ կյետեն քշտեն մին կուճուր տոռ շինըմ, վեր մաչին յո՛ւա քյնա՛: Տոռը շինիլանը ետը Սարումը քյինա՛մ ա վըերսի, դուշա, ծըտա, ծո՛ւկընա փռնըմ, պո՛ւրո՛ւմ, տրանավ ապրըմ: Մեհետ Սարումը քյնա՛մ ա վըերս անիլ: Ո՛ւրո՛ւզյո՛ւնը կյամ ա տոռ, պրանվում, ըսկսում մտածելը, վեր հա՛րը խե՞ ո՛ւրա՛ն տանան տյո՛ւս քցից: Ասըմ ա. «էքո՛ւծ քյննա՛կյա՛նըմ ընդեղ, ըշտեղ գյո՛ւլլա՛ս վեր ա ընգալ, տըեսնամ գյո՛ւլլա՛ն ընդեղ ա՞, յոր օնիմ»: Շատ մտծելանը ետը Սարումը քոն ա ինո՛ւմ: Քըշերավը եր ա կենում, իրեսը լվանըմ, մին պատառ տեսա-տենա օտըմ, քյնա՛մ:

Քյնա̀մ ա, քյնա̀մ, հասնըմ գո̀ւլլա̀ն վեր ընգած տեղը, տըեսնըմ մին կյեռթնուկու պո̀ւն: Էտ պո̀ւնին ըռաչին մին կյեռթնուկ վեր ընգյած, գյո̀ւլլա̀ն էլ քշտեն: Սարումը մին պատառ վըենն ա կենում, ասում. «Ըստի բախտը մզոված, հա̀յլբա̀թ իմ ճկատեն էլ էս ա կյըրվա̀ծ, իմ փայս էլ էս կյեռթնուկն ա»: Ասում ա պրծնում, կյեռթնուկը յոր օնում, բեքեփ պո̀ւրո̀ւմ տոնը, թող անում, քցում կարավաթեն տակը: Սարումը խիլլա̀ վախտ իտի ապրըմ ա: Քյնա̀մ ա վըերս անում, ինքը խորա̀գյ, պեն շինում, կլո̀խը պահում: Մեհետ Սարումը վըրսըտըեղա կյամ ա տոն, դուշերը տնո̀ւմ տանը, ինքյը քյնում կյետեն կոշտը, վեր ծո̀ւկո̀ւն փռնե:Ո̀ւրո̀ւզյո̀ւնը մթեն կյամ ա տոն, տըեսնում կրակը նիկցրած, խորա̀գյը իփած, տոնը սրփած: Սարումը մնըմ ա զըրմացած: Ասըմ ա. «Էս հի՞նչ պեն ա, էս հո՞ւ բիդի ըստըեղ կյա, հու՞վ ա ըստեղ ճնանչում»: Հացա, պենա օտում ա, քոն ինո̀ւմ: Քշերավ եր ա կենում, քյնա̀մ ծմակը՝ վըերս անի:

Ո̀ւրո̀ւզյո̀ւնը կյամ ա, տեսնում էլիա տոնը սրփած, կրակ ըրած, խորա̀գյը իփած: Կըզնըվում ա, ասըմ. «Հստրա բուսը պըհլական ըմ, փռնիմ, տըեսնամ էս հու՞վ ա, հինչացու՞ վա՛, վեր կյամ ա ամուն օր նի մննում տոնըս»: Սարումը էն մին օրը տանը մաչին կյող ա կենըմ, եշըմ, տեսնըմ կարավաթեն տակտն մին դա̀շա̀նգյ ախճիգյ ա տո̀ւս կյամ, տոնը սրփըմ, խորա̀գյը իփըմ, ինքյն էլ նըեստա պատառ օտըմ, պըրծընում, թա կյա նի մննե կյեռթնուկեն մորթեն, էտ վախտը Սարումը տրան փռնում ա, ասըմ. «Տու հու՞ վըս, հի՞նչ ըս ան ըմ ըստեղ»:

Թողնում չի վեր էն ախճիգյը տանան տո̀ւս կյա: Կյեռթնուկեն մորթեն քցում ա կրակը, էրում: Էտ ըխճկանը անումը Գյուլվարթ ա ինո̀ւմ :

Սարումը շատ ա ուրխանըմ, ըտրանավ: Մեհետ էլ մին քանե մարթ կյետավըն ընցնըմ ըն, կյամ, տեսնըմ Գյուլվարթը տանը ակուշկավը ինգած երք ա ասըմ: Նահանց էտ երքը շատ տուր ա կյամ: Ասըմ ըն, «Տո̀ռնը պեց անինքյ, տեսնանք էս ղրաղ տըեղս մինա̀կ հի՞նչ պենի յա»: Ամմա Գյուլվարթը տո̀ռնը պենում չի: Էտ մարթիքյը հրցըփորց ըն անում, գյուղում, վեր տա Սարումեն կնեգյն ա:

Նահանց աշկը յոր չօնըմ վեր Սարումը դա̀շա̀նգյ կնեգյ օնե: Ասում ըն. «Քյնա̀նք, թաքավերեն ասինքյ տղատ մին կնեգյ օնե, վեր ընդրա մնանը ինիլ չի՛»:

Էտ մարթիքյը քյունում ըն թաքավերեն ասըմ. - Թաքավերը ապրած

կենա, Սարումը մին մարալ կնեգյ օնէ, ո՛ւրա՛նք էլ էն ա մին դրաղ տըեղ մին տոն շինած, լա՛վ ապրում ըն:

Թաքավերը, վեր ըսկանում ա, կանոխ տղեն ծեն ա տամ, պուրո՛ւմ ո՛ւրա՛ն պալատը, ասըմ ա. - Ա՛ տղա, քյնա՛ ինձետե մին նոռնը ճարե պեր, վեր հինչքան ժողովուրթ կյա, հվաքվէ, հինչքան օտին, ամմա նոռնը պրծնեվուչ: Թա ասածս ըրեր վուչ, գյիդա՛ վեր տու սաղ ապրըլական չըս, յա էլ կնեգյըտ ծեռքատ ինգյլական ա:

Սարումը մըտըրծելավ կյամ ա տոն, բեքեփ նստում, հաց էլ չի օտում:

Գյուլվարթն ասըմ ա. - Խե՞ տի բեքեփ ըս, Սարում:

Սարումն ասըմ ա.- Իմ հա՛ր հանց պեն ա ինձ ասալ, վեր ո՛ւրա՛ն հետի տանիմ, վեր ըշխարքումս ինդի պեն ճարվիլ չի՛:

Գյուլվարթն ասըմ ա. - Վախում մեր, տու ասէ, տեսնամ հի՞նչ ա ասալ, յըես կճարիմ:

Սարումն ասում ա. - Մին նոռն ա օզալ, վեր սաղ ժողովրթը օտեն, ամմա պըծնէ վուչ:

Գյուլվարթն ասըմ ա.- Վախում մեր, քյնա՛ էն պո՛ւնին առաչը, վեր գյո՛ւլլատ ընդեղ ա իլա՛լ վեր ընգյած, յըես էլ ընդըեղ ըմ իլա՛լ, պո՛ւնին առաչեն վըեննը կաց, պապէ ծեն տո: Վեր ծեն տաս, պո՛ւնա՛ն մին պառավ կյերթնուկ ա տո՛ւս կյլա՛կան: Էն իմ պապես ա, կասիս թոռնըտ հիվանդ ա, մին նոռն ա օզալ, նա ըշտղա վերէ յա քթընա՛կյա՛ն ա, քյըեզ տա, տու վէլ յոր կօնիս, կյա՛ս ըստըեղ, ըստղան էլ տանիս տաս քու հոր:

Սարումը օրախ-օրախ քյնամ ա Գյուլվարթին ասած պո՛ւնին առաչը, «պապէ» ծեն տամ:

Պյունան մին պառավ կյերթնուկ ա տո՛ւս կյամ, ասըմ. - Տու հու՞վ ըս, հի՞նչ ըս ասըմ:

Սարումն ասըմ ա, - Պապէ թոռնըտ հիվանդ ա, պեն չօտըմ, ասըմ ա՝ քյնա՛ցեքյ իմ պապու ըսեցեքյ մին նոռնը ղարկէ, օտիմ:

Էտ պառավ կյեռթնուկը նի յա միննում պո՛ւնը, մին պատառ կենում, մին նոռնը ծեռքեն պո՛ւրո՛ւմ ա տամ Սարումեն, ինքյը նի միննում պո՛ւնը:

Սարումը ուրխացած նոռնը յոր ա օնում, կյամ տոն: Գյուլվարթն ասըմ ա. - Դէ տար, տո քու հոր, ծեռքան ըզադվէ:

Սարումը նոռնը յոր ա օնում, տանում տամ թաքավերեն: Թաքավերը սաղ ժողովրթեն ծեն ա տամ, պո՛ւրո՛ւմ: Ասըմ ա, - էտ նոռնը կերեքյ:

Ժողովուրթը ըսկսում ա նոռնը օտելը, ամմա նոռնը պրծնըմ չի՛: Թաքավէրը ժողովրթեն յրան կըզնվըմ ա, ասըմ, - էս սհաթեն հենց կերեքյ, վէր յրան մին գյո՛ւլո՛ւլ էլ չի մնալ ժողովուրթը հիշքան օտըմ ա, նոռնը պրծնըմ չի: Թաքավէրը շատ ա կըզնըրվում: Նի յա մննում պալատը, տղեն ծեն տամ կոշտը, ասըմ, - Սա՛րում, մին պեն էլ ասիմ, վար կարաս վեչ անիս, քյըեզ թուղլական չըմ սաղ կենաս:

Սարումն ասըմ ա. - Աստ, տըեսնամ միենգյ հի՛նչ ըս ասում:

Թաքավերն ասըմ ա, - Քյինա՛, մին գյա՛բա՛ պեր, վէր սաղ ժողովուրթը յրան նստե, էլհա տեղ ինի:

Սարումը էլհա բըքյըփանըմ ա, կյամ տոն:

Գյուլվարթն ասըմ ա. - Միենգյ հի՛նչ ըս քնենքյ անըմ, մըհենգյ էլ քու հոր ասածը ըրալ ըս:

Սարումն ասըմ ա, - Միենգյ էլ իմ հա՛ր ասըմ ա.Քյնա՛ մին գյա՛բա՛ պեր, վէր սաղ ժողովուրթը յրան նստե, պրծնե վուչ: Թա վէր կարամ վեչ քթենամ, թաքավէրը կյլական ա ինձ սպանե, քյըեզ էլ տանն ո՛ւրա՛ն հետե:

Գյուլվարթն ասըմ ա.- Սարում, վախում մեր, քյնա՛ էլհա իմ պապու ասե, էն տլական ա:

Սարումն ասըմ ա. - Պա հի՛նչ ասիմ:

Գյուլվարթն ասըմ ա. - Քյնա էլհա էն պո՛ւնին առաշկը «պապե» ծեն տո:

Սարումն իտի էլ անըմ ա:

Պապեն տո՛ւս ա կյամ, ասում, - Հի՞նչ ըս ասըմ:

Սարումն ասըմ ա.- Պապե, թոռնըտ հըրսնքեն ա, մին գյա՛բա՛ յա օզալ, վէր վեչ մին տեղ ինղի ինի վուչ: Էտ պառավ կյերթնուկը նի յա մննում պո՛ւնը, մին պատառ կենըմ, տո՛ւս կյամ, գյա՛բա՛ն ծեռքեն: Գյա՛բա՛ն տամ ա Սարումեն, ասըմ. - Տար տո թոռանըս, համ էլ ասե պապեն ասալ ա շընհավուր ինի:

Սարումը ուրխացած գյաբան յոր ա օնում, կյամ տոն, տանըմ տամ թաքավերեն: Թաքավէրը գյա՛բա՛ն յոր ա օնում մեկնըմ, սաղ ժողովըրթեն ծեն տամ, ասըմ.- Գյա՛բեն յրա նստեցեքյ:

Ժողովուրթը հիշքան նստում ա, գյա՛բա՛ն թա՛զա՛ղա՛ն ա ծալերը ետ տանում, տեղ անում: Թաքավէրը շատ ա կըզնըրվում: Գյա՛բա՛ն յոր ա օնում, քյնամ ո՛ւրա՛ն պալատը: Թաքավէրը քնենքյ ա անըմ, թա միենգյ հի՞նչ ասե տղեն, վէր կարի վուչ անե: Թաքավէրը քըշեր-ցիրեկ մետք ա անըմ, մետք,

վերջը Սարումեն ծեն ա տամ կոշտը, ասըմ. - էս իրեքինջինն ա, վեր կրեցիր կըդարիս, գյիդա̀ վեր սաղ ըս կննական, կնեգյըտ էլ քունն ա, ամմա վեր կդարիս վուչ, էն վախտը յըես կգյիդա̀մ՝ իինչ կանիմ: Միենգյ քյնա սըեվ աշխարքը, էն ա քու նանեն ընդեղ մեր վըեսկուն ըմբարեն պինա̀լին ծեռքեն: Երկալ պեր:

Սարումը ասըմ ա. - Պա յըես հունց քյնամ սըեվ աշխարքը:

Թաքավերն ասըմ ա - Ըտ էլ տու յըս գյուղըմ, հունցու պո̂ւրո̂ւմ ըս, պեր:

Սարումը լա̀ց ինիլա̀վ կյամ ա տոն, ասըմ ա. - Գյուլվարթ, ումեդտ ինձանա կտրե, իմ հա̀ր հանց պեն ա ասալ, վեր կարըմ չըմ անիմ:

Գյուլվարթն ասըմ ա. - Հի՞նչ ա ասալ:

Սարումն ասըմ ա. - Վեր ո̂ւրա̀ն ասած գյա̀րա̀ն տարե, թաքավերը կըզնըվից, ինձ ծեն տուվավ պալատը, ասից, վեր քյինի սըեվ աշխարքը քու նանու ծեռքեն վըեսկու ըմբարեն պնա̀լին պեր:

Գյուլվարթն ասըմ ա.- Վեչինչ, ըտըեղ էլ ըս քյննա̀կան, վեր ինձ անջուկ օնիս:

Սարումն ասում ա. - Հինչքան անջուկ օնիմ, կվախիմ քյնա̀մ սըեվ աշխարքը:

Գյուլվարթն ասըմ ա. - Վեչինչ, վախիլ չըս, կքյնա̀ս:

- Վերջը ասե տեսնամ, հո՞ւնց քյնա̀մ:

- Քյնա էլիա իմ պապու կոշտը, ասե ստի պեն կա, օգնում ըմ քյնամ սըեվ աշխարքը, ամմա հըղեն ճնանչըմ չըմ, համ էլ վախըմ ըմ:

- Լա̀վ, էտ էլ կանիմ, թա̀քյի իմ կռապաշտ հորս անա ըզադվիմ:

- Վեչ մին վախտ վախիս վեչ, ըրխային քյնա̀, իմ պապեն գյո̂ւղո̂ւմ ա հի՞նչ ա ըննակա՛ն:

Սարումը հաց ա օտում, հաց յոր օնում, քյնամ կյեռթնուկեն պո̂ւնին առաչը, «պապե» ծեն տամ:

Մին խիլլա վըենն ա կենում, վըեննը, ամմա կյեռթնուկը տո̂ւս չի կյամ: Սարումն ասըմ ա.

- Միենգյ վեր կըլական չըմ իմ հոր ասածը անիմ: Պրանվում ա ըտըեղ քնավ ընցնըմ, սաղ քշերը ըտեղ քոն ա ինո̂ւմ: Քշերավը եր ա կենըմ, էլիա «պապե» ծեն տամ: Կյեռթնուկը տո̂ւս ա կյամ, ասըմ. - Հի՞նչ ա:- Սարումը լոխ նաղլ ա անըմ, ասըմ, վեր, օգյըմ ըմ քյնամ սըեվ աշխարքը, ամմա գյուղում չըմ հունց քյնամ: էտ կյեռթնուկը նի յա մննում պո̂ւնը մին

պատառ վախտ ընցած տո՞ւս ա կյամ մին յա՛շիգյ ծեռքեն: Սարումին ասըմ ա. - Նի մըտ մաչը տանիմ, թողիմ սըեվ ըշխարքըմը, յըես կյամ:

Սարումը յա՛շիգյումը պրանվում ա, կյեռթնուկը շլակում ա, հղե ինո՞ւմ:

Շատ ա կյամ, խրեգյ ա կյամ, վերչը հըսնըմ ա սըեվ աշխարքը: Յա՛շիգյը վեր ա տինում, մին պատառ դինջանում, էհա շլակում, հղե ինո՞ւմ: Մին պատառ էլ ա քյնամ, սըեվ ըշխարքեն տո՞ռնը պենում, յա՛շիգյը վեր տինո՞ւմ, Սարումը յա՛շիգյա՛ն տո՞ւս ա կյամ, մին պատառ դինջանում, կյեռթնուկը ասում ա, - Հասե սըեվ աշխարքը: Սարում, քյնա՛, ամմա քյնա՛լիս հետատ լոխ ծեն ըն տըլական, վեչ մինին անջուկ չօնես, թա չէ, տու էլ մեռալ կտեռնաս:

Կյեռթնուկը ըտի յա ասըմ, պրծըըմ, ետ տեռնըմ, ո՞ւրա՛ն պո՞ւնը կյամ: Սարումը հղե յա ինըմ բիդի նանուն կոշտը, շոռ ա կյամ քթենա, նանեն հըեռե յա ընո՞ւմ թաղված: Ըռշկեն մին կյետ ա ինո՞ւմ, կըրմունջեն քըրավը ընցնըմ ա, օզըմ ա վըեննըրը հանե: Էտ վախտը կյետեն դրաղեն մին պառավ մարթ ա ինո՞ւմ, տա թողում չի, վեր Սարումը վըեննըրը հանե: Էտ պառավ մարթը ասըմ ա, - Հանել մեր:

Սարումն ասըմ ա. - Պա հո՞ւնց կյետը ընցնիմ:

Էն մարթն ասըմ ա.-Եկ մաչաս ճղե, տիր կյետըմը, քա՛րվազ շինի, ընցեր:

Սարումն ասըմ ա,- Խե՞ տու ինձ հի՞նչ ըս ըրա՞լ, վեր յըես քյըեզ տի անիմ:

Պառավն ասըմ ա. - Վեչինչ, տու հունցու ասըմ ըմ, ինդի ըրա: Քյնա՛, կյալիս կասիմ, խե՞ յըմ տի ասըմ: Սարումն էտ մարթին մաչան ճըղըմ ա, քցում կյըետը, քա՛րվազ շինում , ընցնում:

Քյնա՛մ ա, քյնա՛մ, տըեսնըմ ա մին կանանչ տեղ մին մարթ նստած, ամմա ընդրա կլո՞խը պղուճնեն օտըմ ըն:

Սարումը մնամ ա ըրմացած: Ասըմ ա. - Դայի, ախեր էն ա աշկերըտ պեց, տու սաղ, պա խե թողըմ ըս կլո՞խտ պղուճնեն օտին:

Էն էլ ասըմ ա. - Վեչինչ, քյնա՛, ետ տռնալիս ըռաշկավս կկյա՛ս, կասիմ:

Սարումը տրան էլ ա թողըմ ըտեղ, քյնո՞ւմ: Մին պատառ քյնա՛մ ա, տեսնում մին կնեգյ թուռնեն հաց ա թխում: Քշտեն հացը կյուտած, ամմա ինքյը ասըմ ա,- Վա՜յ, սոված մըեռե՜, վա՜յ, սոված մըեռե՜:

Սարումն ասըմ ա.- Բիբի, խե՞ըս սոված մըեռնըմ, հասե կոշտըտ

հացավ լիզըը, կեր, քշտաց։

Էտ կնեգյը Սարումեն ասըմ ա. - Քյնա, ետ կյա̀լիս, կասիմ։

Սարումը ըտրան էլ ա թողըմ, քյնըմ։ Քյնա̀մ ա տըեսնում մին հըղըըցըմ մին կնեգյ նստած մին կուտուր հաց ծեռքեն, ասըմ ա. - Վա՜յ փորս տրաքի՜ց, էսքան հաց կօտի՜ն։- Էտ կնեգյը Սարումեն ասըմ ա. - Բալա, սոված կինիս, տանիմ տոն, հաց տամ։

Սարումն ասըմ ա. Սոված չըմ, էնա հաց օնիմ։

Էտ կնեգյը շատ ա օզըմ լըխճին տանե ղոնաղ։

Սարումն ասըմ ա,- Բիբի՚ մին թիքյա հաց օնիս, տա վեր օրիշի տաս, պա տու հի՞նչ ըս ուտըլական։

Էտ կընեգյը ասըմ ա, - Քյնա, ետ կյա̀լիս կասիմ։

Սարումը քյնամ ա, տըեսնըմ էրկու դա̀շա̀նգյ վարթ ու̀րու̀ր քշտե փսած, ամմա էտ վարթերեն մաչ տեղը մին փոշ էլ կա փսած։

Սարումն ասըմ ա. - Ա՜ վարթեր, տուք շատ դա̀շա̀նգյ ըք, խե թողալ ըք էտ փոշը էտ մաչ տըեղը փսնի։

Էտ վարթերն ասըմ ըն,- Մունք հի՞նչ մեղավեր ընք, վեր ըստեղա փսալ էտ փոշը։ Քյնա՜, ետ տըեռնալիս կասիմ, թա էս հի՞նչ փոշ ա, վեր թողում չի ուրկոքանս ու̀րու̀ր քշտի ինինքյ, վեր խոսինքյ։

Սարումը էտ վարթերեն էլա թողըմ, քյնա̀մ։ Քյնա̀մ, ա քյնա̀մ, տըեսնըմ մին դո̀ւզ տըեղ ու̀րա̀ն նանեն մին լա̀վ ծառու շոքըմ նըստած, չխարակ ա մանըմ։

Սարումը ծեն ա տամ, ասըմ. - Նանե, Սարումն ըմ, եկալ ըմ քյըեզ տանիմ։

Նանեն կյամ ա Սարումեն անա պչպչորում, քշտեն նստըցնըմ ա, ասըմ. - Հինչո՞ւ վը՜ս եկալ, հի՞նչ կա էս սըեվ ըշխարքումս։

Սարումն ասըմ ա. - Նանե, յըես ու յըես չըմ եկալ, ապան ա ղարկալ, թա քյնա̀ սըեվ աշխարքը, էնա վըեսկուն ըմբարեն պինա̀լին նանուն քշտեն, եր կալ պեր ըստեղ, հարկավեր ա։

Սարումը վեր տի յա ասում, նանուն կըզնըվոցը կյամ ա Սարումեն յրա։ Ասում ա. - Խե՞ քու հոր խոսկավ ըս ընզալ, էն օզըմ ա վեր քու կլո̀խտ վարե, տրա մըհար էլ քյըեզ ղըրկալ ա սըեվ աշխարքը, հանցու վեր տու էլ մըեռալ տըեռնաս ըստեղ։- Նանեն թաքավերեն շատ ու̀շու̀նց ա տամ։

Սարումն ասըմ ա. - Նանե, պնա̀լին ինձ տո, քյնա̀մ։

Նանեն ասըմ ա.- Պինձլին իմ ծեռքես չի, էն ա սրահումը մին սո՜ւթունու տակե, վեր քյնձս, յոր կօնիս, վեչ մինին տաս վեչ: Դե մհենգյ կանուխ ըրա, քյնա:

Սարումն ասըմ ա.

-Ըրերտս օզում ա, պապեն տըեսնամ ըշտե՛ղա, քյնձմ տեսնամ, էլհա կյամ:

Նանեն ասում ա. - էս ծառեն թո՜ւշավը կըլխյեր քյնձ, ընդեղ ա: Էն վեր ծոխ ա պըցրձնում: Սարումը քյնամ ա թուշ ծոխեն յրա, տըեսնըմ վեր մին կրակ էնա նիկացած, ո՜ւրձն պապեն էլ էտ կրակումը էրվում ա:

Սարումն ասըմ ա, - էս հի՛նչ անիմ, վեր իմ պապեն կրական տո՜ւս օնիմ:

Սկսում ա «պապե» ծեն տալը, ամմա պապեն ըսկանըմ չի, ալավը լափ պըցրձնըմ ա, Սարումը կարում չի պապուն տըեսնա, կյամ ա ետ նանուն կօշտը, ասըմ. - Նանե, պա կըրեցե վուչ պապեն տըեսնամ, էս հի՛նչ անիմ պա:

Նանեն ասըմ ա. - Վեչինչ, կանուխ ըրա էս սըեվ ըշխարքան տո՜ւս եք, քյնձ:

Սարումը նանուն նհետ ծեռք ա տամ, նանեն ընդրան պչպչորում ա, թաքավերեն անեսկ տալավ Սարումեն ասում ա.- Քյնա, ամմա հունց վեր ըսեցի, ընդի կանիս, հանց տո՜ւս կյաս, վախի՛ս վեչ, քմակատ ծեն ըն տըլական, վեր «եք մեր կօշտը», ամմա դըբետ եշիս վե՛չ, կլո՜խտ քաշ քցած, քյնա:

Սարումը քյնձմ ա: Առաչինը պտահում ըն էն վարթերը, վեր շատ դձշձնգյ ըն, ամմա ո՜ւրձնց դաթըմը փոշ ա փսած: Սարումն ասում ա, - Դե ըսեցեքյ տեսնամ հի՛նչ ըք ասըմ:

Էտ վըրթերեն մինն ասըմ ա. -Հի՞նչ ասինքյ, մունք լո՜ւս ըշխարքումը վխտեն մըրթըկնեգյ ընք իլձլ, ո՜ւրո՜ւր նհետ շատ սիրավ ընք իլձլ, ամմա մըեր սկեսուրը մին կռապաշտ կնեգյ ա իլձլ, օզձլ ա, վեր մունք ո՜ւրո՜ւր նհետ լձվ չինինքյ, կըռև անինքյ, նշանածըս ինձ թակե: Ըսկեսուրս ամեն վախտ ուզեցալ ա մեր մաչը կըռև քցի, ամմա մունք կըռև չընք ըրա՛լ: Մհենգյ էլ լուս ըշխարքան եկալ ընք սըեվ աշխարքը, էլհա իմ ըսկեսուրըս եկալ ա փոշու նման մեր դաթըմը փսալ, թողում չի, թա լհձ ըստեղ ինի, ո՜ւրո՜ւր նհետ խոսինքյ, մոտիկ ինինքյ:

Սարումն ասըմ ա.- Վերչը մղափուն տուք, վեր էտ ցձքյին փոշը ծեր

ղաթումն ա:- Սարումը ըտի յա ասում, պրծնում, քյնա̀մ:

Քյնա̀մ ա հասնըմ ընդեղ, վեր մին կնեգյ մին կուտուր հաց ծեռքեն ասըմ ա. - Վայ փորս տրաքից,- համ էլ ղարիբ հըղըցավերեն, քյնող-եկողու օզում ա տանե տոն, ղոնաղ անե:

Սարումն ասըմ ա,- Բիբի դե ասե, տըեսնամ էտ խե՞ յըս իտի անըմ:

Էտ կնեգյը ասըմ ա. - Բալա ջան, հինչ ասիմ, լը̀ւս ըշխարքըմն ըմ իլա̀լ, աշկս ո̀ւրո̀ւշու յրա չի իլա̀լ, վեր ծեռքես մին կուտուր հաց ա իլա̀լ, հո̀ւրո̀ւ վեր տեսալ ըմ, տարալ ըմ հաց տուվալ, լօխ էլ մնացալ ըն ինձանա շընուրհակալ, մհենգյ էլ եկալ ըմ էս ըեվ աշխարքը, էլհա աշկս կոշտ ա, ծեռքս պեց, աշկս ո̀ւրո̀ւշո̀ւ յրա չի, կոզի տանս մին կուտուր հաց չինի́ , էլհա ինձետե վըեչի́նչ:

Սարումը ասըմ ա. - էտ ա յըես էլ ըմ շնուրհակալ քյըզանա, վեր իտի կնեգյ ըս, ինձ օզում ըս տանիս, հաց տաս:

Սարումը էլհա քյնա̀մ ա էն կնգանը կոշտը, վեր քշտեն ցորեն հացը լիգյնա իռ̀ւմ , ամմա ասում ա. - Վայ աստու́ծ, սովաձ մըեռե:

Սարումը ասըմ ա. - Բիբի, խե՞ էտ բոլ հացան օտում չըս, քշտանա́ս, պա էտ քու հացտ չի՞:

Էտ կնեգյն ասըմ ա,- Հինչու դո̀ւզն ա, դո̀ւզն ասիմ, յըես սոտը ասել չը́մ: Բալա, յըես լո̀ւս ըշխարքումն ըմ իլալ, տոնս հացավ, դա̀նավ լիգյն ա իլալ, ամեն հինչավ լիգյն ա իլալ: Դե հի՞նչ անիս, վեր աշկս ծակ ա իլա̀լ, աշկս ո̀ւրո̀ւշո̀ւ յրան, փորս սոված, ծեռքըս պատ չար կյամ, թա էնքան հացան մին պատառ կտրիմ, օտիմ: Ո̀ւրո̀ւշո̀ւ անա յի օզըմ օտըմ, մհենգյ էլ եկալ ըմ ըեվ աշխարքը, էլհա ինդի յըմ, աշկս ո̀ւրո̀ւշո̀ւ յրա յա, կոշտս հացավ լիգյը, կարըմ չըմ մին պատառ օտիմ էս ցորեն հացան:

Սարումն ասըմ ա. - Դե իտի յըս ըրվերա́ լ, պրծա́վ, էլ կտրել չըս ըրվերածըտ թոբա անիս:

Սարումը էտ կնգանը թողըմ ա, քյնա̀մ:

Քյնամ ա էն մարթին կոշտը, վեր աշկերը պեց ա, ինքը սաղ, ամմա պղուճնեն կլո̀խն օտում ըն:

Սարումը քյնա̀մ ա էտ մարթին քշտին մին խիլլա̀ վըեննը կենում, պրծ-նում, ասըմ.- Դայի, տու ասե, տըեսնամ խե́ յըն էտ պղուճնեն քյընգ օտըմ:

Էտ մարթն ասըմ ա. - Բա́լամ, էն լուս ըշխարքըմն ըմ իլա̀լ,_ ինձհետե ապրալ ըմ, իմ հացս կերալ, իմ ճրա̀քյս էրալ, ամմա միշտ էլ ո̀ւրո̀ւշո̀ւ անա յըմ խոսալ, ո̀ւրո̀ւշո̀ւ վըետան տակ ըմ քա̀նդա̀լ, մհենգյ էլ եկալ ըմ ըեվ

աշխարքը, հո՛ւր վըետան տակ քանդալ ըմ, նահանք եկալ ըն կլո՛խս ծակալ, օտում ըն: Յյես էլ էն ըմ սաղ, ամա կարում չըմ տեն անիմ:

Սարումն աըմ ա. - Էտ դո՛ւշմա՛ննիտ ըն եկալ, քյըեզ օտում ըն:

Աըմ ա, պրծնում, քյնամ էն մարթին կոշտը, վար մաչան ճըղալ ա, տիրալ կյըետումը, ընցար:

Էտ մարթն աըմ ա. - Բա՛լամ, հի՞նչ ասիմ, քյըեզ նըման ջա՛հիլ վխտես, մին տեղ քյինա՛լիս մին կյետ ա պտահալ, վեր կըրացալ չըմ ընցնիմ: Ուզեցալ չըմ վեններս հանիմ: Կետեն ղըաղեն մին պառավ մարթ ա իլա՛լ նստած, էտ մարթին մաչան կես ըմ ըրալ, քցալ կյետը, ընցալ: Դե միենգլ էլ եկալ ըմ սըեվ աշխարքը, ըրածս առաչկս ա եկալ:

Սարումը էլ ետ չի եշըմ, կյամ ա, թա՛ սըեվ ըշխարքան տո՛ւս կյա, էտ վախտը սըեվ ըշխարքան հետան ծեն ըն տամ, ասում.

- Ե՛ք քշտըընէ ս:

Ամմա Սարումը ո՛ւրա՛ն նանուն ասածը մենն ա քցում, ղըետ եշում չի՛: Սարումը կյամ ա սըեվ ըշխարքան տո՛ւս կյամ, կյամ տոն: Գյուլվարթը հըցնում ա, թա. - Ախրը պնալին պերալ ը՞ ս:

Սարումն աըմ ա.

- Հի՞նչ պինա՛լի յա՛, հի՞նչ պեն, հի՞նչ դա՛րդ նան ղազաբ, իմ հա՛ր ուզեցալ ա կլո՛խս վարե, ամմա կարից հուչ, քյնացալ ըմ նանուն կոշտը, ասալ, իմ հա՛ր պընա՛լին օզալ ա: Նան են ասալ ա, պնա՛լին էնա տռանը սո՛ւթո՛ւնեն տակեն, քյնա տու եր կալ: Սարումը քյնամ ա հորը տոնը, տըեսնում հա՛րը մռնելու յրա յա, շատ ա ուրխանում, շադդաղ անըմ: Աըմ ա.

-Էս լոխ նանուն պեներն ա, վըեսկեն լոխ յըես յոր կօնիմ:

Սարումը հորը տանը պատառ կենըմ ա, տըեսնում, վեր հա՛րը մեռնըմ ա: Հորը մըռնելանը ետը Սարումը ախպորցը նհետ հորը տանըմա, թաղում, կյամ պալատը, ախպորցը տո՛ւս անըմ, պրծնում, քյնամ ո՛ւրա՛ն տոնը, Գյուլվարթին աըմ, վեր իմ հա՛ր մըեռալ ա, տարալ ընք թաղա՛լ, Գյուլվարթը շատ ա ուրխանըմ, ինքը նան Սարումը կյամ ըն թաքավերեն պալատը: Սարումը քյնամ ա վըեսկուն պնա՛լին սո՛ւթո՛ւնեն տա կան տո՛ւս օնում, պրծնում, վըեսկեն՝ տո՛ւս տամ, կեսը քյահբըներեն պըժենըմ, կեսն էլ ո՛ւրա՛նը միար պահում: Ընդետանը ըսկըմ ըն լա՛վ ապրիլը, ժողովուրթեն լա՛վ եշիլը:

Ըստուծանա իրեք խնձո՛ր ա եր ընգնում. Մինը՝ ըսողեն, մինը՝ լսողեն, մինն էլ՝ կյրողեն:

## 26.ԳԸՄԳԸՄ ՍԱՐԵՐԸ

Ընո՞ւմ ա, չընո՞ւմ մին թաքավեր: Էտ թաքավերին խոխա չի ընո՞ւմ:

Քըշեր-ցիրեկ մտածմունքի մեչի, կլո՞խը քաշ ըրած, ունքերը ո՞ւրո՞ւր տված ար կըենում:

Մին դո՞նըմ էլ իտի բիքյեփ ման ար կյամ ո՞ւրա՞ն էն տրախտի մընան բախչըմը, բիրդան անգուճավն ա ընգում, վեր մինը բիդի ո՞ւրա՞ն ա կյամ: Ետ ա տըեռնըմ եշըմ-տըեսնըմ մին դա՞րվիշ էն ա ընդեղ կազնած: Դա՞րվիշը պարով, ասծու պարին ա ասըմ, հըրցընըմ. - Թաքավերն ապրած կըենա, խե յըս էտքան բեքյեփ:

Թաքավերն ասըմ ա.- Ա՛յ դարիբ, անճանանչ մարթ, էտ հի՛նչ գյիդացիր, թա յես բեքյեփ ըմ:

Դե վեր իտի յա, յըես կասիմ, թա խե՛ յըս բեքյեփ: Տու քըշեր-ցիրեկ քընենքյ ըս անըմ, թա խե՞ խոխա չօնիս, խե՞ ժառանգյ չօնիս: Մըհենգյ անգուճ կա՛լ, ծըեր էս տրախտի նման բախչըմը էնա մին խընձո՞րի ծառ կա, էս ա օխտը տարի յա պըտուղ չի տամ: Էտ ծըեր բաղվանչին էլ ա գյո՞ւղո՞ւմ: Էտ ծառը էս տարի մինա՛կ մին խընձո՞ր ա տալու: Էտ ծառին լա՛վ եշեցիք, վեր էտ խնձո՞րը հըսնի: Հըսնելանը ետը պուք տո, կըեսը տու կըեր, կըեսը տո, թաքուհին օտի: Ըտրանա ետը ծըեզ խոխա կինի:

Միչն թաքավերը օշը կըլո՞խը հըվաքիլը, էտ դա՞րվիշը կորչըմ ա:

Թաքավերը մընում ա մաթ մնացած: Նա կանչըմ ա ո՞ւրա՞ն բաղվանչուն ասըմ. - Մըեր բախչըմը ըստի-ըստի մին խընձո՞րի կա՞, վեր էս ա օխտը տարի յա բար չի տամ:

Բաղվանչին ասըմ ա. - Թաքավերն ապրած կըենա, իտի մին ծառ կա, բախճին կըլխին, մին շատ դա՛շա՛նգյ ծառ ա, ամմա հի՞նչ կանիս, վեր էս ա օխտը տարի յա բար չի տամ:

Թաքավերն ասըմ ա. - Դե վեր իտի յա, եք, քյինինք տըեսնանք:

Ըտրանք էրկուսը մին տըեղ քյնո՞ւմ ըն:

Օրը կյարունք ար, բախչին ծառերը ծաղկած, չորս դոլը լա՛վ-լա՛վ ծաղիկնի, վըետը ընգած ըտեղերք, կանանչ-կյա՛րմո՞ւր թեփուռներավ դուշերը երք ասելիս: Թաքավերը մթկին դոնն ընգած բաղվանչուն հետան քյընո՞ւմ ար: Վերչը հասնըմ ըն էտ ծառին:

Բաղվանչին ասըմ ա. - Տեր թաքավեր, հեսե էն ծառը:

Թաքավերը աշկերը պըլըզած եշըմ ա, տըեսնում ծաղիկ, պեն չիկա:

Բաղվանչուն ասըմ ա.- Եկ, տու վէլ էշի, տըէս ծաղիկ կա՞ յրան:

Բաղվանչին մին լա՛վ տընդըրըմ ա, էտավ ուրխացած ասըմ. - Տէր թաքավէր, հէնէ էն լոխճան պըէցո՛ւր ճըղնին յրան մին ծաղիկ կա:

Թաքավէրը սըէրտը թմփթըմփալավ մուտացավ, էշից, տըէսավ էտ ծաղիկը, աշխարքիս ուրխութունը ասիս լի՛ն ո՛ւրա՛ն տվին:

Մին խըրէզյ կէնալանը էտը, էտ տըէռավ բաղվանչուն ասից. - Գյու-դում ը՞ս հինչ կա՞, էս ծաղկի հէտի տու քու կըլխավտ բաղասխանատու յըս, ըտրա էտ մին պըտուղին հէտի, տանավ-տըէղավ բաղասխանատու յըք: Էտ ծաղիկը էն հանգին կը պահի՞ս, վըէր էլ գյուղում չը՞մ, հունցու քյըզանա իլա՛ծ խոխան:

Բաղվանչին մընաց տըրըկո՛ւսած, թա խէ՞ յա իտի ասըմ: Նա ծըէռքը սըրտին տըրած մինչև տափը կըլո՛ւխ տըվավ ո՛ւրա՛ն տըրո՛ւչը:

Թաքավէրը էտ տըէռավ, էկավ պալատը: Խիլլա՛ վախտ կարըմ չար գյիդա՛, թա էտ հի՞նչ պըէն ա, ո՛ւրա՛ն էտ օրան լըսածան տըէսածան մնացալ ար մաթ մընացած, հավատը կյամ չար, թա ո՛ւրա՛ն էլ խոխա կինի, ամմա սըրտըմը մին ուրխութուն կար:

Անց ա կըէնում օրէր, շա՛փաթնի: Ամմէն օր թաքավէրը քըշանըմ ար բախճան, էտ ծաղկին էշըմ, տըէսնըմ ծաղիկը խընձո՛ր ա փըռնալ, փըռնած խընձո՛րն էլ մըծանըմ ա, թաքավէրը ըտրանավ ո՛ւրա՛ն սըրտըմը ամէն օր ուրխանում ար: Վըէրչը խընձո՛րը հըսնըմ ա: Ծառան պուք ըն տամ, պըէրում տամ թաքավէրին:

Պալատըմը թաքավէրը նան թաքուհին օտըմ ըն: Ըտրանա էտը անց ա կըէնում թաքավէրին մըհար շատ էրգյան իննը ամիս, իննը օր, իննը սըհաթ, իննը մունուտը: Թաքուհին մին լա՛վ տըղա խոխա յա պըէրըմ:

Թաքավէրը աշխարքիս չանք ուրխանըմ ա, քառասուն օր ղոնախլըղնի յա սարքըմ, քյասիբներին փող ա պէց թողըմ, էլ հինչ լըվո՛թուն ասիս անըմ ա: Ըտրանա էտը թաքավէրը որոշում ա ո՛ւրա՛ն տըղին հէնց տըէղ պահի, վէր դա՛րդըղազաբ չի տըէսնա, վէր աշկավ չի տան, վէր փիս պէնէր չի տըէսնա, վէր շո՛ւտ չի պըռավի:

Անց ա կըէնում շատ օրէր, տարի, ամըէս, շա՛փա՛թ, թաքավէրին տըղան մինա՛կ օթախին մէչին մըծանըմ ա: Մըծանըմ ա, ամմա վէշ մին պէն չի գյո՛ւղո՛ւմ, վէչ թաքավէրական կործէրին անա, վէչ էլ ժողովուրթին անա:

Մին դո՛նըմ թաքավէրին աշպազը սխալվըմ ա, թաքավէրին տըղին

ամանին մրէչը մին վրեսկուռ ա թողըմ: Էտ տըղան ճաշը օտելանը ետը ըսկըսըմ ա էտ վրեսկուռը կռծիլը: Կռծից, կռծից, պըէն չի տո՞ւս եկավ: Էտ տըղան ըջըղվից, քըշկոտվից վրեսկուռը եր կալավ, յրա ըրավ, ակուշկան տըվավ, ակուշկին հիլին կոտրից զըրընզ- զըրընզալավ եր տըեռա՛վ:

Թաքավերին տըղան քյինից ակուշկեն էտ կոտրած տըեղան եշից դըբի քյո՞ւչա՞ն: Իտի պըեն տըեսած չար, լի՞ն իստի մնաց ցըմաքած:

Ժողովուրթ, քյինիլ-կյա՛լ, մարթիքյ, դո՞ւքյաննի, լիքյը տըրաքըմ... էլ հի՛նչ ասի՛մ, էլ վե՞րը ասիմ, վե՞րը թողի՛մ.,.

Նա էլ օզից վէչ պալատըմը կըենա, ճըղճըղոցը քցից ըտըեղերք, տո՞ռնը-ակուշկա կուտրատից, լոխ տըկըկլո՞խ ըրավ: Էտ սա՞սին յրան ծըռոտենքյը եկին, հըվըքվեցին, տըեսին, ետնան խա՞բա՞րը տարին տըվին թաքավերին:

Թաքավերն ասից. - Պա՛հ, մըղափո՛ւն, տըղաս շո՞ւտ ա աշխարք մընըմ, էլ օզըմ չի պալատըմը կըենա, ամմա էլ օրիշ ճար չիկա, քյեցիք պըերիք ընդըղան, բա՞լքյա՞ս դինջա՞նա՞: Թաքավերը սաղ օրը քնենքյ ա անըմ, թա հի՞նչ անի, վեր ա՞մա՞լ կյա:

Ասըմ ա. - Լա՞վ կինի, վեր մին փեշա՞կ սըվըրերի. իմ երգյիրըմըս լա՞վ փըեշակավերնի շատ կա, թող լոխ տո՞ւս կյան մեյդան, ո՞ւրա՞նց շինած տո՞ւս պըերած պներա՞վը, ո՞ւրա՞նց ծըեռքին շընորքավը, տըղաս տըեսնա, վերը հավան կըենա, էն էլ սըվըերի:

Գյրա՞գյի օրը լոխ փըեշա՞կավերնին հըվաքվըմ ըն մեյդան, ո՞ւրա՞նց ծըեռքավը եկած, ո՞ւրա՞նց վրեսկէ մանըերավը շինած պըեներին նըհետ:

Էս թաքավերին տըղան լոխ մին-մին տըեսնըմ ա, լոխ տընդըղըմ, ետավ կյամ ա թաքավերին կոշտը, ասըմ. - Ա՛ հա՞ր, յըես օզըմ ըմ վըերսկան տըեռնամ, հենե տըեսնըմ ը՞ս էն վըերսկանին, սարի մընան ընդեղ կաղնած, օզըմ ըմ ընդրա հընգերը տըեռնամ:

Թաքավերը կանչըմ ա էտ ջա՞հիլ, բոյավ բուսաթավ, դա՞շա՞նգյ տըղին, պատրոնղաշիքը դո՞շը պատած, թըվա՞նգյը լըեն թըեգյունքավը քըցած ար տըղին, հըրցըփորց անըմ, տըեսնա հո՞ւ վա, հո՞ւ չի, տըեսնում ա աշկըմը իշեղ կա, ծըեռքավը պըեն կըկյա՛, ո՞ւրա՞ն էլ ա տուր կյամ: Տըեսնըմ ա, էն էլ ա մաղար տըղա: Ասըմ ա.- Բա ՛լա, ըսօրանը ետը տու կինիս իմ մաղար տըղիս մըեծ ախպերը, ընդրա թեգյունքին սարը, ըսօրվանը ետը ընդրան մըղայիթ կըկենաս մինակ չըս թողիլ, ըշտըեղ քյինի, հետան կըքյինիս տու

էլ ըս մաղար, ինքյն էլ ա մաղա՛ր:

Էտ ջա̈հիլ վըերսկանը աշկերը պըցըրցընում ա, թաքավերին եշըմ, տըեսնըմ, վեր ո̈ւրա̈ն սըերտն էլ մին պըեն ընգավ, ասիս լհա̈ թաքավերը ո̈ւրա̈ն հա̈րը ինի :

Ընա չոքըմ ա թաքավերին առաջին, ասըմ.- Տե՛ր թաքավեր, յըես քու առաչիտ չոքած ո̈ւրթո̈ւմ ըմ օտըմ, վեր յըես իմ գյանքաս շատ կը սիրիմ ընդրան, միշտ նըհետը կինիմ, նըեղ տըեղը ընգած վախտը, դըլվըմը կաղնած կինիմ:

Թաքավերը էրկուսին ճկատան պաչից, ո̈ւրա̈ն կոխկին նըստըցըրավ:

Ժողովուրթը տո̈Լսո̈Լմը կաղնած ըսպասըմ ար, վեր տո̈Լս կյան, տըեսնան ըտրանց էրկուսին:

Վեր թաքավերին տըղին ծի նստած տեսնըմ ըն, ո̈ւրա̈ն մըեծ հընգյերին նըհետ, շատ ըն ուրխանըմ, էլ ծափ, էլ ծըծաղ, էլ ուռռա, գյուղո̈ւմ չին, թա հինչ անին: Մինա̈կ մինն ար տուխուր, մինին աշկը յոր չար օնըմ էտ ըրխոթունը: Էտ էլ թաքավերին մըեծ վեզիրն ար:

Տա հա̈լա̈ շո̈Լտանց սըրտըմը կար, վեր անժա̈ռա̈նգյ թաքավերին կահին ո̈ւրա̈ն տըղան նըստի, ընդրան կըլո̈խը չար մըննըմ, վեր թաքավերը տղա օնի՛, լհա մին պըենի ար ման կյամ, վեր թաքավերին տըղին տոնը քա̈նդի, կըլխին մին օյին տինի, կըլո̈խը օտի, փըչըցընի:

Անց ա կըենըմ խիլլա̈ վախտ, թաքավերին տըղան վըերս անիլը սըվերըմ ա, ո̈ւրա̈ն մըեծ հընգյերին էլ շատ ա սիրըմ, մին մուննուտ կարըմ չի, թա առանց ընդրան կըենա:

Էլ սար չըն թողըմ, էլ ծըմակ, էլ ծո̈ր, ամման տըեղ շոռ ըն կյամ:

Թաքավերին տըղան տըեսնըմ ա, վեր ո̈ւրա̈նք հըշտըեղ ասիս ընո̈Լմ ըն, ըշտեղ ասիս քյընըմ ըն, ամմա բիդի աչ դո̈լի պըեցո̈Լր սարերը քյընըմ չը՞ն: Նա մըեծ ախպորան հարցմունք ըրավ, մըեծ ախպերն էլ ասից, վեր դիբի էն դո̈լերը վըերս չիկա, նըհախ տըեղան հի՞նչ քյինին:

Նա օզըմ ար վեր թաքավերին տըղան ծըեռք քաշի էտ մըթկան, ամմա տա ըսդիբում ա, թա. - Չէ, վեր չէ, յըես օզըմ ըմ տըեսնամ էն սարին քըմակին հի՞նչ կա: Մըեծ ախպերը լա̈վ ար գյուղո̈ւմ, վեր էն սարին քըմակին օխտը օշափ ըն կըենըմ ո̈ւրա̈նց, հո̈ւրիփա̈րի, դունյա գյոզալի քվորը նըհետ: Մըեծ ախպերը օզըմ չար, վեր թաքավերին տըղան էտ օշափներին տըեսնա ընդրանց իրես-իրես ինի, վըերչը վեր թա̈քյաժա̈-

ռա̈նգյը էրկու վըեննը մին չմըշկըմ ա տընըմ, թա յըես ըմ, վըեր յըես ըմ, բեմդա քյինիմ տըեսնամ, ճարը կըտըրված մըեծ ախպերը դաքուլ ա կըենըմ ընդրան սարին էն դո̈լը տանի:

Հա̈լա̈ թա̈զա̈ յին անց կացալ սարին էն դո̈լը, վեր մին վըրըխկալի ըխպիրի քըշտի էն օխտը օշափին քըվորը, էն հո̈լլո̈-մա̈լա̈գլին տըեսին ընդեղ կաղնած:

Վեր թա̈քյաժա̈ռա̈նգյը ըտրան տըեսավ, օշը տարավ, եր ընգավ: Ախ-ճիգլըն էլ հունց աշկա կորավ, ասիս լհա̈ մին դուշ ար, թռավ, քյինից:

Վեր օշը կըլո̈խը եկավ, ըտրանք ըտըղան էլ ետ տըեռին բիդի պալատը: Ըտըեղ թաքավերին տըղան ասից.- էն հո՞ւ վար էն մարալ-ջեյրան ախճիգյը, յըես ընդրան սիրեցի:

Մըեծ ախպերացուն ասից. - էս սարըմը կըենող օխտը օշափ կա, ընդրանց քյո̈ւրն ա:

Էլ միչն պալատ հըսնիլը վեչ մին խոսկ չըսեցին: Ըտրանա ետը թաքավերին տըղան վեչ ուտըմ ար, վեչ խըմըմ, վեչ ասըմ, վեչ խոսըմ, տըեռալ ար աշխարքաս ծըեռք եր կալած, բեքյեփ, էլ վեշ մին պըեն ո̈ւրա̈ն տուր չար կյամ:

Պալատըմը ո̈ւրո̈ւր անավ ին ընգյալ, վեշ մինը գյուղո̈ւմ չար, թա խե՞ իտի լա, ըտրա դարդը դըեյիդը հի՞նչ ա, հի՞նչ չի: Մինա̈կ էն վըերսկան տըղան ար գյո̈ւղո̈ւմ, էն ախպերացուն: Էն էլ հիշքան քնենքյ ար անըմ, գյուղո̈ւմ չար, թա հինչ անի: Լհա̈ էն ար գյուղո̈ւմ, վեր տա շատ տըժեր պըեն ա, վեր էտ օխտը օշափը ո̈ւրա̈նց քյո̈ւրը տալու յըն մին հենց տըղի, վեր ո̈ւրա̈նց օխտըքանան էլ օժավ ինի:

Շատ ա անց կըենըմ, խրեգյ ա անց կըենըմ, շատ նան խըըեգյը աստուծ ա գյո̈ւղո̈ւմ, մին օր էլ թաքավերին տըղան նան ո̈ւրա̈ն մըեծ ախպերացուն ծիյանքը նիհ իլա̈ծ քյընըմ ըն բիդի էտ սարը: Վըեր պըցրա̈նըմ ըն ըտեղ, ախպերացուն ըտրան մին փոսըմ կյեղըմ ա, ծիյանքը ըտըեղ կապըմ, ինքը թուշ, զոննի, քյընըմ բիդի էտ օշափներին ամարաթը:

Տըեսնըմ ա տո̈ւսո̈ւմը էնա մին մըեծ կըրակ ըրած, յրան էլ մին օխտը ո̈ւնգյնա̈նի եքյա ղազան տիրա̈ծ: Էտ ղազանին մըեչին էլ օխտը կով ա իփոււմ պըլթպըլթալի, հա̈լա̈ թըշշ-թըշշալի էլ ըըրըղըներան եր տըեռնըմ:

Էտ մըեծ ախպերացուն մուտանըմ ա, պարյօր տամ էտ կըրակին պո̈ւլլո̈րքավը նըստոտած օշափներին: Ըտահանք իսկի տըեղըներան

տո̀ւրո̀ւր չըն կյամ, իսկի ջողաբ չըն տամ: Վեր մին էլ ա պարյօր տամ, ըսկըսըմ ըտրանց խոսացնիլը, ըտրանց անա մըեծը ասըմ ա.

- Էտ ղազանը պըցըրցրու, տական կրակ հանի, տար:

Էտ ախպերացուն հըսկանըմ ա, թա ըտրանավ հի՞նչ ըն օզըմ ա̀սին: Տա ղազանին էրկու ո̀ւնգյունան փիռնըմ ա, յոր օնըմ, տինըմ տափին, տական կրակ յոր օնըմ, էլհա ղազանը տնըմ կըրակին, առանց խուսելի ետ տըեռնըմ:

Էտ օխտը օշափնին ո̀ւրո̀ւր եշըմ ըն մաթ մընացած: Մըեծ օշափը ասըմ ա. - էլ հինչ ըք նըստոտալ, եր կաց իք քյեցիք էն տըղին կանչեցիք կյա, տա մըեր քըվերը լայըղ տըղա յա:

Պուճուր ախպերը վազ ա տամ ծըեն տամ, էտ ախպերացուն ետ ա տըեռնըմ, կյամ օշափներին կոշտը: Մըեծ օշափը ասըմ ա, - Դե, վեր տու իտի ղոչաղ տըղա յըս, մըեր քո̀ւրը քյըեզ հալալ:

Էտ ախպերացուն ասըմ ա.- Յըես եկալ ըմ ծըեր քյո̀ւրը վրեչ թա ինձ հըետի տանիմ, եկալ ըմ տանիմ իմ պուճուր ախպորս հետի:

Ասըմ ըն. - Հի՞նչ կինի՞, տար:

Ըտըեղ պայման ըն կապում, թա վեր օր կյան ախճիգյը տանին: Էտ ախպերացուն մըտանի յա տամ, մըտանի յոր օնըմ: Ըտրանա ետը ախպերացուն կյամա թաքավերին տըղին կոշտը, տըեսնըմ ըտրա քեթը-պըռոշը ա̀րո̀ւն ա: Մընըմ ա գյունաքար, ետավ կըլո̀ւխ ա ընգնըմ, վեր ինքը ղազանը պըցըրցրալ ա, տափին տիրա̀լ երգյրաշարժ ա իլալ, սարը գըմբ-գըմբալի տո̀ւրո̀ւր ա եկալ, թաքավերին տըղին իրեսը նի յա եկալ փոսին պատին, քըեթը ճառթալ, ըռնըթաթախ ըրա՞լ:

Ըտըեղ էտ մըեծ ախպերը նաղլ ա անըմ, թա հի՞նչ իլա̀վ, հի՞նչ ըսեցին, եր կալած մըտանին էլ տամ ա ըտրան: Էրկուքան էլ օրախ- օրախ կյամ ըն պալատը թաքավերին լոխ նաղլ անըմ:

Պալատըմը լոխ ուրխանըմ ըն, ըսկըսըմ ըն բաղրաստոթուն քաշիլը հըրսընքին հըետի:

Թաքավերը ուրխընալան նըհետ, էտ ղոչչաղ տըղին պաղվեն, իրեք օր ո̀ւրա̀ն թախտը տամ ա ըտրան, համ էլ խաչախպեր ա ունթունում ըտրան:

Մըեծ թափուրավ քյինըմ ըն հարսին պըերին: Էլ թըվա̀նգյ տըրըքցընիլ էլ պար, էլ երք, էլ քյեփ, հինչ քյե՛փ, աշխարքավըս մի՛ն:

Հարսին յոր ըն օնըմ, թա կյան, կես ճընապարին մին ղուշ թըռչըմ ա,

կյամ էտ ախպերացու-խաչախպորը օսին կաղնըմ, անգուճումը ծըլվըլըմ, ասըմ, - Ա՛յ ախպեր, մին խրեգյ ետ ընգի, պըեն ըմ ասըմ:

Ախպերացուն մըհա՛լ չի տընում, էտ դուշը մին էլ ա, ասըմ էրկու էլ ա ասըմ, ախրը-վըերչը էտ ախպերացուն ետ ա մընում:

Դուշը ընդրան ասըմ ա. -Ա՛յ դոչչաղ ախպեր, լա՛վ գյիդա՛. վեզիրը, ընդրա տըղան, ընդրա հարսը լա՛վ, լա՛վ բաղարկեք ըն պերելու թա՛գա՛ հարսին նան թա՛գա՛ փըեսին հետի: Թողիս վեչ փըեսան նստի ընդրանց պըերած վըեսկե թամքավը ծիյին յըրան, ծին - կըտաղած ծի յա, թամքըն էլ աղու ճար քըսած ա, վեր յըրան նըստի, մըեռնելու յա: Թողիս վեչ, վըեր թա՛գա՛ հարսը ըտրանց պըերած տուպլիքյը կյենա, մըեռնելու յա: Մին պըեն էլ բիդի ասիմ,- էտ էլ էն ա, վեր տու էլ լոխ թաքուն բիդի պահիս, քու գյանքըմըտ վեշ մինին ասիլ չիբիդի, լիա՛ վեր ասեցիր, քար ըս տըռնալու:

Էտ դուշը լոխ ասըմ ա, ինքն էլ թըռչըմ, քյինըմ: Էտ ախպերացուն մընըմ ա մաթ մընացած, թա էս հի՞նչ պըեն ա, էս հի՞նչ զատ ա, վեր եկալ ա իմ կըլի՜խըս: Համ ասըմ ա, համ էլ շի՜Լտ անըմ, քյինըմ հըրսանիքին հըսնըմ, գյըրվաքյիս թա վեշ մին պըեն չիլա՛լ:

Վեր պատառ մուտանըմ ըն, ճընապարին, ազկ-պարեկամ, մըեծա-մըեծնի, նա՛զիր-վա՛զիր, լոխ տի՜Լս ըն կյամ թա՛գա՛ փըեսին նան թա՛գա՛ հարսին առաչը: Էտ ախպերացուն լիա՛ աշկը յրան ա պահըմ, տըեսնա համին էտ վեզիրը հի՞նչ ա անելու: Վեր լափ մուտանըմ ըն պալատան, տըեսնըմ ա համին էտ վեզիրին տըղան եկավ, մին վըեսկե թամք յրան տիրած Ղարաբաղի մին շատ լա՛վ ծի վըեսկե գյա՛քա՛ մեշկին փըռնած, պըերավ, թա տա թաքավերին տըղին: Ըտրա կըննեգյըն էլ մին վըեսկե մըժմա՛հի՜Լ մըեչի զազավ ծասկած, մին ճոխտ դա՛շա՛նգյ տուպլի պըերավ, թա տա թա՛գա՛ հարսին: Էտ ախպերացուն, վեր մինչև էտ տըըրըկյի՜Լսըմ ար էն դուշին ասածին յրան, մըհեկ լափ հըվատաց, վեր դուշը դի՜Լզ ա ասալ:

Ետ ա տըեռնըմ վեզիրին տըղին հրամմայըմ, ասըմ,- Առաչ ծին տու նըստի, ետավ փըեսան, էս տուպլիքյն էլ առաչ թող կըննեգյըտ կյենա, ետավ հարսը:

Ըտըեղ պատառ դըլմըղալ ա պըցրա՛նըմ, թա իտի պըեն չինի՛լ, օրենքյ կա, ա՛դա՛թ կա, բաղարկան առաչ պըերողը չի պընըցընիլ, էտ վեզիրին տըղան նան ի՜Լրա՛ն կընեգյը իսկի օզըմ էլ չըն, թա կըննեգյը տուպլիքյը կյենա, ինքն էլ ծին նըստի, ամմա ախպերացուն ըսդիբում ա: Ըտրանք

ճարը կըտրած իտի էլ անըմ ըն: Լհա̀ վեր վեզիրին տըղան ծին նըստըմ ա, ծըեռաց մըեռնըմ ա, կընեգյըն էլ լհա̀ վեր տուպլին կյենըմ ա, էլիա էն սըհաթը մըեռնըմ ա:

Հըրսընքավերնին մընըմ ըն մաթ մընացած, սառած-սըքառած, քար տըեռած: Նոր ըն կըլխու ընգնըմ, վեր խե ար էտ ախպերացուն իտի տական-կըլխան, նըհախ տըեղան խոսըմ: Ըսկըսըմ ըն ըտրան հարցը-փորց անիլը, ամմա տա վեշ մին պըեն չի ասըմ, լհա̀ ասըմ ա, թա, - Հըրսանիքը շարունակեցիք, էլ վեշ մին պըեն:

Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ: Հի́նչ հըրսանիք, թա հի́նչ, Ասիս լհա̀ աշխարքիս լա̀վ-լա̀վ պըեները, պըերալ ըն էտ ըստո̀լներին ածալ, էլ օտի́լ, էլ խմի́լ, էլ վըեսկե, պըռըլյանդ շաղ տա́լ... Ամմեն հի́նչ...

Ախպերացուն շատ օրախ ար, վեր չարը խափանալ ա, ամմա թաքավերին տըղան տուխուր ար, ո̀ւրա̀ն մըեծ ախպերացուին յրան նըղացած, թա խե́ էտ պըենը թաքուն ա պահըմ, ո̀ւրա̀ն ասըմ չի́: Վերչը էլ կարից վեչ ո̀ւրա̀ն պահի, ասից. - Բա մունք ախպերք չը́նք տըեռա́լ, էտ խե́ չըս ինձ ասըմ, թա հինչ ա իլա̀լ: Էտ հի՞նչ մըեծ պըեն ա, վեր ինձ ասըմ չըս:

Ախպերացուն տըեսնըմ ա, վեր տա շատ ա ո̀ւրա̀ն անա նըղացալ, ասից. - Տու գյուղո̀ւմ ըս, վեր յըես քյըեզ իմ գյանքաս իվիլ ըմ սիրըմ, քյըզանա վեշ մին թաքուն պըեն չօնիմ, կասիմ, էտ լոխ կասիմ, ամմա տու կըփըշմանիս, քու սըերտըտ կըցավի, կը տանջվիս, քըշեր-ցիրեկ աշկըտ հոփ չի կյա́լ:

Էտ ախպերացուն, լոխ նաղլ ա անըմ, հինչ վեր իլա̀լ ա: Լհա̀ վեր վըերչին պառը ասըմ ա, ո̀ւրա̀նք էլ մուտացալ ին իտի խոսելավ թաքավերին տըղին օթախին, իտի լհա̀ վեր ասըմ ա, պըրծընըմ, էտ օթախին ակուշկին տակին էտ ախպերացուն քար ա տըեռնըմ[1]:

---

*[1] Ջանս քեզ մատաղ,ա հա̀քյա̀թ լսողնի  էս ա կես քըշեր ա  տըեռալ  ըսօր հիշքան ես հա̀քա̀թը նաղլ ըմ ըրալ  բոլ ա:*
*Քյինացիքյ քոն իլիքյ կեսն էլ էքուծ ո̀ւրո̀ւզո̀ւնը նաղլը կանիմ: Տեսեքյ է́ երգյինքին աստղերի́ն շամփուր-քշերքը տո̀ւս ա եկալ:Հանեե́ էն խուրդա թուփ եկած աստղերը տեսնում ը՞ք էն «Պազումք» ա́, են էլ ա տո̀ւս եկալ, են դոլան էլ են կյիրմիրին տվող ասթըխը, են կռվի ասթըխն էլ ա տո̀ւս եկա́լ ,ա́խ կըռն չինի, մըեր ջա̀հել բալեքը սաղ ինին, լոխ լա̀վ ինին, ընդրանց մեջին էլ իմ բալեքս…Էն վեր աչ դո̀լին ա..,Դե պարի քըշեր լոխձիտ…*
*-Այան ծըեր կըլխավը շոռ տա, դե եկեքյ բալկոնըմը ըստո̀լին կոխկին նստեցիքյ էս ա էս սո̀ւրմա̀ -կոճակավ խըլեղըս հանիմ, տաք ա, մնա տակեն կա̀րմո̀ւր հալավըս, կյամ հա̀քյա̀թին կըեսն էլ ասիմ , էն սարեն քմակին էլ մին տեսեք հինչ լո̀ւսնընգյա յա տո̀ւս կյամ, հենց ա լհա̀ են թաքավերեն  հարսը ինի́, պո̀ւլլո̀ր-իրես, պըծըպածին ընելիս́, նախշու́ն….Դե մըհեկ լըսեցիք:*

Թաքավերին տըղան վեր տըեսնըմ ա ախպերացուն քար ա տըեռալ, պադրաստութուն ա քաշըմ, քյինի աշխարքիս էն ծընդան էլ ա,մին ծար պըերի ախպորը լիվըցընի՛, սըղըցընի՛։ Իտի էլ կըլո̈խ ա յոր օնըմ, քյինըմ։

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրեգյ, ինքն էլ չի գյո̈ւղո̈ւմ, մին դո̈ւզ, լա̈վ տըեղ պըտահըմ ա մին մըեծ եքքա̈ ամարաթի։ Տըռնավը նի յա մըննըմ, տըեսնըմ մին մարթ ըտըեղ կաղնած…

Էտ մարթը օզըմ ա, թա տըռնավը տո̈ւս կյա, ըտրա կըլխին էրկու մըեծ պոզ ա փըսնըմ, մինը պատալոկին մին քյոււնջըն ա նի մըննըմ, էն մինն էլ պա տալոկին էն մին քյո̈ւնջը։ Ամմա վեր էլիա ետ ա տըեռնըմ օթախին մըեշտըեղը կաղնըմ, պոզերը ինքը-ինքը կորչըմ ա։

Իտի էտ մարթը սաղ օրը չըրչարվըմ ա, թա տո̈ւս կյա, պոզերը փըսնըմ ա՛, էլ կարըմ չի՛, մին էլ ետ ա տըեռնըմ։

Թաքավերին տըղան ինքն ո̈ւրա̈ն ասըմ ա. - Բա̈լքյա̈ս էս մարթը, վեր իստի ղազաբի յա եկալ, մին պըեն ա գյո̈ւղո̈ւմ, մին փանդըփըել ա գյո̈ւղո̈ւմ, մին ծար, մին դա̈րմա̈ն ա գյո̈ւղո̈ւմ ախպորըս լիվըցընի, մին ասիմ, տըեսնամ՝ ինչ կասի։

- Քու քար տըեռած ախպերտ ինձանա բախտավըեր ա, վեր քյըեզ նման ջանը յոււղուրըմը տիրա̈ծ ախպեր օնի. ինձ իտի մին ջընըյանա մարթ չօնիմ, վեր մին ծար, մին դա̈րմա̈ն անի ինձ։ Քյըզզանա էլ յըես շատ ըմ խընթըըմ, վեր ախպորըտ հետի ծար անող քյիթնիս, ինձ մըհար էլ հըըցըըու, բա̈լքյա̈ս ինձ հետի էլ մին պըեն անի։ Դե իմ ծըեռքավըս պըեն չի կյամ, պըեն չըմ գյո̈ւղո̈ւմ քու ախպոր հետի՛։ Թաքավերին տըղան խոսկ ա տամ էտ պոզավեր մարթին, վեր թա իտի պժիշկ ծարէ, կըհըըցընի։ Ասըմ ա էլիա ծընապար ընգնըմ, քյինըմ։

Քյնըմ ա քյնընըմ շատ ա քյինըմ, թա խըրեգյ ա քյինըմ, գյո̈ւղո̈ւմ չի, վըերչը հըսնըմ ա մին ծընապարիի։ էտ ծընապարին դալուն մին մըեծ քարի տեմ տըված մարթի։ Էտ մարթը վեր օզըմ ա, թա եր կըենա, ասըմ ա, թա. «Փառք ածու, էս ա եր կացի», էտ քարը մըեշկան ա կըենըմ, ծաքըմ, ծըքծըքոտըմ, մըեչան էլ վըեսկէ յա եր տըեռնըմ, ամմա էտ մարթը կարըմ չի տըեղան տո̈ւրո̈ւր կյա։ Ամմա վեր դինջ տըեղը նըստըմ ա, քարը մըեշկան պոււք ա կյամ, ինքն էլ դինջանըմ ա։ Իտի սաղ օրը տարի էտ մարթը տանջվըմ ա։

Թաքավերին տըղան ըտրան էլ ա լոխ նաղլ անըմ, հըըցընըմ ո̈ւրա̈ն

ախպորը հետի մին ճար, մին դա̀րմա̀ն, ամմա էտ մարթը գյո̀ւղո̀ւմ չի, հա̀լա̀ ինքն ա ղաչանք-պղատանք անըմ, վեր ո̀ւրա̀ն հետի էլ մին տըեղ, մին դա̀րմա̀ն գյիդա̀, հիբը մին գյո̀ւղո̀ղ ճարի։ Թաքավերին տըղան էլհա ճընապար ա ընգնըմ, քյինըմ։ Քյինո̀ւմ ա, քյինո̀ւմ, հասնըմ ա մին շենի։ Տըեսնըմ ա էտ շըենը ո̀ւրո̀ւրոցավ ընգած, ղըլմըղալ, խոսկը զո̀ւրո̀ւլց։ Տա մուտանըմ ա մին հլիվերը մազերը ծո̀ւն տըեռած մարթի անա հըրցընըմ, թա.- Ապեր,էս հի՞նչ ղըլմըղալ ա։

Էտ աղսախկալ մարթը ասըմ ա. - Ա՛ բալա, քառասունինջի դո̀նըմըն ա, վեր մեր շենըմը ժամ ընք շինըմ, մըեծ ծախսեր անըմ, չըրչարվըմ, տանջվըմ, ամմա լհա̀ վեր տերտերը նի յա մըննըմ ժամը, թա պադարաքյ անի, ժամը տո̀ւրո̀ւր ա կյամ, մին հենց քամի յա պըցրանըմ, վեր էլ խոսկ չըմ քըթենըմ ասիմ, լոխ պարան ա տամ, Սոդոմ-Գոմոր շինըմ, իլա̀ծ-չիլա̀ծըն էլ քըշըմ, տանըմ։ Ամմա ժողովուրթը էլլա յա շինըմ։ Ըսօր էլ քառասունինջի դո̀նըմը պարան եկավ, էլհա ակուռի տըեռա՛վ։

Էտ հլիվըերը վեր գյիդա̀ց էտ թաքավերին տըղին դարդերը, ասից. - Ա՛ բալա, ասծու օրթնանքը քյըեզ յրա ինի, վեր քյինիս քու ախպոր հետի մին ճար անող քյիթնիս, մըեր ժամին հետի էլ կասիս, բա̀լքյա̀ մին թա̀հր անի, էլ մըեր ժամը քանդվի վե՛չ։

Թաքավերին տրղան ըտրան էլ ա խոսկ տամ, էլհա ո̀ւրա̀ն ճընապարը ընգնըմ։

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրրեգյ, մին պըեց տըեղ, մին դո̀ւզ հանդի մըեչի մին արշինաբոյ մարթ ա տըեսնըմ, մըրոքը՝ էրգյան, ինքը՝ կարճ։ Ո̀ւրո̀ւր պարյօր-ասծու պարին ըսելանը ետը թաքավերին տըղան էտ մարթին ո̀ւրա̀ն դա̀րդը ասըմ ա։

Էտ կարճ բոյավ մարթը ասըմ ա. - Ա՛ թաքավերի տըղա, քու բախտըետ տու ճարալ ըս։ Էտ ճընապարավը վեր մին խըրրեգյ քյինիս, մին տըզտըզոց ըս լըսելու։ Էտ տըզտըզոցին հըետան կըքյինիս, մինչև վեր կըհիըսնիս համին էն մարթին, վըերին տու ման ըս կյամ։

Թաքավերին տըղան ուրխացած, աշխարքըս ո̀ւրա̀նը տըեռած, ճընա-պար ա ընգնըմ, քյինըմ։

Մին պատառ ետը մին տըզզոց ա լըսըմ, էտ տըզզոցին հետան քյընըմ։ Մին խիլլա̀ վեր քյընըմ ա, էտ տըզզոցը նի յա մըննըմ մին խոր ծո̀ր։ Էտ ծո̀րին վըերչըմը, էտ տըղին առաչին մին տո̀ռն ա պըեցվըմ։ Էտ տըռնավը

նի յա մըննըմ, տըեսնըմ մին փա̀լա̀քյա̀ն։ Էտ փա̀լա̀քյա̀նավը քառասուն վըեննը քըշանըմ ա քաշ, նիմըննըմ օխտը օթախ, ո̀ւրո̀ւր մեչավ տըռներ։ Քյինըմ ա անց կըենըմ էտ օթախներին մըեչավը, մարթ չի տըեսնըմ։

Մինա̀կ օթինջի օթախըմը տըեսնըմ ա մին պառավ, սիպտա̀կ մըրքավեր մարթ, մին ըստո̀լի քըշտի նըստած, կյիր ա կյիրըմ։

Թաքավերին տըղան յավաշ-յավաշ եկավ էտ մարթին կոշտը, չոքից, ծըեռքը պաչից, ո̀ւրա̀ն դա̀րդը նաղլ ըրավ, էտ հըլիվըեր մարթան մին ճար, մին դա̀րմա̀ն դաչանք ըրավ, ո̀ւրա̀ն ախպորը հետի։ Էտ պառավ մարթը ետ տըեռավ էտ տըղին եշից, մըեխկը եկավ, մըթկըմը տիրա̀վ ըտրան քյո̀մա̀գյ ինի։

Մաննան հանից ո̀ւրա̀ն մըտանին, տըվավ էտ տըղին, ասից.- Ա՜ վըերթի, էս մըտանին եր կալ, ըշտըեղ հինչ պըենդ պըեն ինի, վեր քըսիս, ճո̀ւր ա տըեռնալու, հիշքան էլ կակող պըեն ինի, ճիրի նըման պըեն ինի՜, վեր քըսիս պընդելու յա։ Լհա̀ հինչի վեր քըսիս, հի՞նչու վէլ օզիս յա մըթկըմտ տինիս, էս մըտանին թըռչի, քըսի օզածըտ կադարվելու յա։

Թաքավերին տըղան ասըմ ա.- Շատ շունրակալ ըմ, պապի , մինակ մին խընթիրք էլ օնիմ, հո՞ւնց քյո̀մա̀գյ ինիմ էն պոզավըրեր մարթին։

- Էլհա էտ մըտանին թըռչի ճիրըմը, պոզերը քըսի, լա̀վանալու յա, պոզերը հալվելու յա։

Էն ճընապարին նըստած մարթըն էլ թող տըեղան եր կընալիս ասի վեչ «Փառք քյըեզ աստված», ասծու անըմը տա վեչ, էն վախտը քարը մըեշկան պուք ա կյալու, տըեղան եր կըենա, ո̀ւրա̀ն ճընապան քյինի։

Էն ժամըն էլ պարան չի կյալ էն վախտը, վեր պատերը շինելիս, շենին տերտերը պատըմը տինին, հեմնին։

Թաքավերին տըղան էտ պառավ մարթին կըլոխ ա տամ, շունրակալ ինըմ, մըտանին մաննը քըցըմ, քյինըմ, ճընապար ընգնըմ բիդի տոն։

Կյամ ա, կյամ, հըսնըմ էն շենը, ըշտըեղ ժամը շինըմ ին, էլհա քանդվըմ ար։ Ըտըեղ ըտրանց լոխ ասըմ ա, հինչ վեր էն պառավ մարթը ասալ ար։

Ասելանը ետը էլհա շարունակըմ ա ո̀ւրա̀ն ճընապարը, կյամ համին էն քարը մըեշկան կացած մարթին, ըտրան էլ լոխ ասըմ, վեր էլ ասծոն փառք չի տա։ Քարը մըեշկան պուք ա կյամ, էտ մարթըն էլ ըտըեղ ա ազադվըմ, վըեսկին յոր օնըմ, կըեսը թա տա թաքավերին տըղի՜ն, ամմա նա յոր չօնըմ, ասըմ ա.

- Ցըես իմ ախպոր հետի յըմ քըրըքար ընգալ, վըեշ թա վըեսկուն հետի:- Ասըմ ա պըրծընըմ, էլիա ուրան ճընապան ընգնըմ:

Հըեռըվան հըեռու, մին սարի կըլխի տըեսնըմ ա, իրեք հընգյեր կաղ- նած, ուրուր նըհետ հոջաթ ըն տամ:

Թաքավերին տըղան քյընըմ ա ընդըրանց կոշտը, ասըմ, - Ա՛ ջա՛հիլ տըղերք, էտ խե՞յըք ուրուր նըհետ հոջաթ տամ:

Ընդըրանք ասըմ ըն.-Հըեսե ըստըեղ էրկու ճընապար կա, մինը տանըմ ա բիդի մըեր հայրենիքը, մինը բիդի մահ: Մըհեգյ իստի ուրուր նըհետ հոջաթ ընք տամ, խըելք-խըելքի յընք տամ, տըեսնանք վեր ճընապարավ քյընինք, վեր լավ ինի…

- Բա ծըեզ հի՞նչ կործ օնիք մահվան ճընապարին նըհետ:

- Էտ ճընապարը տանըմ ա Հելահել թաքավերին պալատը: Էտ թաքա- վերն էլ, մին ինդի կյեղեցիկ ախճիգյ օնի, վեր սաղ աշխարքըմըս ճարիլ չըս: Էտ թաքավերը օզըմ ա ուրան ախճիգյը մին հենց մարթի տա, վըեր կարի մին մեծ կաթնավ լիքը ղազան պըցըրցընի ուրանց տըռանը փըռած չինարի ծառին պըտուկը, ընդըղան էլ քըշանա քաշ էն թահրավը, վեր էտ ղազանան մին կաթ կաթնը չի եր տըեռնա: Համուրավեր ջահիլ տըղերք էտ ըխճըկանը դարդան կըլոխ ըն տիրալ: Ընտրանց կըլխըներան Հելահել թաքավերը պալատնի յա շինալ, մըհեգյ էլ մունք ընք օզըմ քյընինք, տըեսնանք մըեր բախտը պըերըմ ա, թա չէ, տըեսնանք սաղ կը մընանք, թա մըեր կըլխընին է՞լ ընդեղ կըմընան:

Թաքավերին տըղան էս վեր լըից, ճընապարը թըեք տըվավ բիդի Հելահել թաքավերին պալատը: Էն տըղորցըն էլ ասից.- Տուք հինչ օզըմ ըք, արիք, յըես քյինըմ ըմ իմ բախտս փորցիմ:

Վեր տըեղ իըսավ, քյինից թաքավերին կոշտը: Հելահել թաքավերը ուրան թախտին պազմած, աշկերը առնավ լըցած, հըմբարդ նըստած ար: Վեր լըսից թաքավերին տըղան եկալ ա ուրան ախճիգյը օզի, ասից.- Բա տու գյուղըում չը՞ս էն պայմանը, հու վեր իմ ախճիգյըս օզի, բիդի կաղարի:

Թաքավերին տըղան ասում ա. - Գյուղում ըմ, լըսալ ըմ: Պըերին էտ կյեղեցիկ ըխճըկանը նշանց տըվին: Թաքավերին տըղան ինքը ուրան մըթկըմը ասից:

-Իստի կյեղեցիկ ըխճըկանը հըետի մարթ կըլոխն էլ բաղի կըտա, ջանն էլ: Ամմա վեր չինարի ծառին պըցըրոթունը տըեսավ վե՛չ, աշկը վախի՛ց,

ǹւրա̀ն մըթկըմը ասից։ «Յանի մարթ ըխճըկա դարդա ǹւրա̀ն մատաղ կանի՛։ Ամմա դե տըղամարթը ǹւրա̀ն թըքածը լուզիլ չի՛, տըղամարթին խոսկը՝ խոսկ ա, տափին չի քըցիլ ըտրա հետի էլ սուս ըրավ, կաղնից։

Պըերին կաթնավ ծըլպըծըլպան լիգը ղազանը տիրին առաչին։ Տա եր կալավ դինջըմը, առանց թայդի ընգնելի նիհըլա̀վ ծառը։ Ծառը էնքան պըեցուր ար, վեր ըտըղան ǹւրա̀ն երգյիրը ըրվաց։ Թաքավերին տըղին սըերտը մըղկըտաց, աշկերան արտասունք թափվից։

Ծառին տակին թուփ եկած ժողովուրթը, ծառեքը տըեսին վեր երկու կաթ կաթից, ծառին տակին փըռած զա̀ռխառա գյա̀քին յըրան։ Թաքավերը փառռաշ կանչից, վեր տըղան ծառան եր կյա, կըլոխը կըտրին։ Թաքա-վերին տըղան յավաշ-յավաշ ծառան եր եկավ, կաթնավ լիքը ղազանը տըրավ առաչին, մընաց մա̀թա̀լ, թա էտ հի՛նչ պըեն ա, վեր Հելահել թաքավերը փառռաշ ա կանչալ։

Թաքավերը նշանց տըվավ էտ էրկու կաթը։ Տա շատ մըտածից, թա տա հինչ պըեն ա, բա ինքը կաթնը քար ա շինալ, էտ հի՛նչ ա։ Բիրդա̀ն մըետն ընզավ, վեր լա̀ց ա ըլա̀լ, վեր էտ ǹւրա̀ն արտասունքնին ա։

- Թաքավերը ապրած կըենա, էտ կաթնը չի, էտ իմ արտասունքնիս ա։ Թող մին պըժիշկ կյա, քըննի։

Պըժիշկը եկավ քըննից, տըեսավ՝ աղի յա, կաթնը չի, արտասունք ա։ Ըտըեղ թաքավերին տըղան ǹւրա̀ն կըլխավը անցկացածը լոխ նաղլ ըրավ։

Ըտրանա ետը Հելահել թաքավերը մըեծ հըրսանիք սարքից, զուռնա-ղավալավ, տա̀փ-քյա̀մա̀նչա̀վ, մըեծ պըեժինքավ ախճիգյը ճընապար տիրա̀վ։ թաքավերին տըղան վախտին ասալ ար, վեր ախճիգյը վեչ թա̀ ǹւրա̀ն հետի յա տանըմ, տանըմ ա ǹւրա̀ն մըեծ ախպորը հետի։

Հըրսանիքը վեր եկավ հասավ ǹւրա̀նց պալատը, թաքավերին տըղան լոխ ժողովուրթին կըղնըցըրավ, վազ տըվավ ǹւրա̀նց բախճան, մին դն̀լչա ճ̀ուր եր կալավ մա̀րմա̀ր ավազանան, մըտանին մըեչը քըցից, պըերավ ածից ǹւրա̀ն մըեծ ախպերացուին կըլխին։

Տա աշկերը պըեց ըրավ, ասիս լհա̀ վըեշ մին պեն չի պըտահալ, ըսկսից նաղլին կըեսը ասիլը։

Պալատը դըըրնզաց ուրխոթունան։ Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք արին էտ մըեծ ախպերացուին հետի։

Թաքավէրը ո̏ւրա̏ն թա̏գյը տիրավ էտ մըեծ տըղին կըլխին, տա թաքավէր տըեռավ։

Ո̏ւրա̏նք էլ համէշա իտի լա̏վ, սըերավ ապրէցին մինչև ո̏ւրա̏նց գյանքին վըէրչը։

Ընդրանք հասին ո̏ւրա̏նց մուրազին, տուք էլ հասնիք ծըեր մուրազին։

Էն ասթխէրավ լիգյը կյա̏պո̏ւտ էրգյինքան իրէք մըեծ-մըեծ մին թոշը կյա̏րմո̏ւր մին թոշը կանանչ խընձո̏ր էր ընգավ. Մինը՝ ասողին, մինը՝ լըսողին, մինն էլ՝ էս հա̏քյա̏թը տիպըէլ տըվողին…

## 27.ԿԸԼՈԽԸ ՆԱՆ ՍԸԵՐՏԸ

Ժուկավ ժամանակավ մին շենում մին պառավ մարթ ար կենում, էտ մարթը մին կնեգյ, էրկու խոխա օներ: Էտ պըռաված մարթը ամո՛ւն օր քյընո՛ւմ ար ծըմակը փադ անըմ, տանըմ բազար, ծախըմ ըտրանավ մին կերպ ապրըմ ին:

Մին դո՛նըմ էլիա քյընո՛ւմ ա ծըմակը, կացինը հանըմ ա, թա ծառը կըտրի, մին էլ ա տըեսնում ծառին փըշական մին դա՛շա՛նգյ դուշ տո՛ւս թըռավ:

Էտ մարթը էտ դուշին հետան ա ընգնում, թա փըռնի, տանի տոն, խըխորցը տա, ուրխանան, ամմա կարըմ չի: Վերչը շատ չըրչարվելանը եոը էտ դուշը փըռնում ա, պերում տոն: Խոխերքը ըտրանավ հաղ ըն անըմ, սոված ինիլը մըտըներան քըցըմ:

Կընեգյը մարթին իրեսը նըյեր խոսըմ ա, ասըմ, - Ա՛ մարթ, էտ խե՞ փա՛ղ չըս ըրալ, ընգալ ըս դուշին քըմական, խըխորցը սոված թողալ:

Մարթն ասըմ ա. - Վեչինչ, թող խոխերքը հաղ անին:

Էտ մարթը, էտ դուշին հետի մին դա՛փա՛զա՛ յա շինըմ, դուշը տընո՛ւմ մըեչին:

Շատ ա անց կըեն ում, թա խըեգյ, էտ դուշը ըսկըսում ա ծո՛ւ ածելը: Ծո՛ւն վեչ թա իժանանոց ա ինըմ, այլ ինըմ ա թինգյանոց, պըռըլյանդի: Ամմա էտ պառավ մարթը հի՞նչ ա գյո՛ւղո՛ւմ, պըռըլյանդը հի՞նչ ա:

Յոր ա օնըմ, տանըմ բազար, թա ծախի: Բըզարըմը ըսկըսըմ ա կանչիլը. - Ա՛յ լա՛վ ծու, ա՛յ լա՛վ թա՛զա՛ ծո՛ւ:

Մին առըտուրական կյամ ա հըրցընըմ: - Քանի յըս ծախըմ էտ ձո՛ւն-Համ հըրցընըմ ա, համ էտ ծո՛ւն տընդըրըմ:

Էտ մարթն ասըմ ա. - Հիշքա՞ն կտաս:

- Հենգյ հազար մանեթ, օզըմ ըս ծախի, օզըմ չըս ծախիլ միր:

- Հի՛նչ ա, ինձանավ մազաղ ըս անը՛մ, դե լա՛վ տընազ մի տալ…

-Օխտը հազար, իվիլ էլ տալ չը՛մ:

Էտ մարթը լափ մընըմ ա գյունաքար, ծըեոքերը տըղտո՛ղըմ ա, փողը յոր օնըմ, թուշ տոն կյամ, դեհա դեհա, էլ քըմակին եշըմ չի՛ : Հըսնըմ ա տոն, լոխ կընգանը նաղլ անըմ: Ըտեղ ըտահանք նոր ըն գյո՛ւղո՛ւմ, վեր ծո՛ւն վեչ թա խուտուրու-մուտուրու յա ըլա՛լ, այլ թընգյա՛նոց ա իլա՛լ:

Ըտրանա ետը ամուն օր էտ պառավ մարթը մին ծո̂ւ եր կալած տանըմ ա քաղաքը, համին էտ առըտուրականին տամ, փողը յոր օնըմ, պերըմ տոն, էտ առըտուրականը շատ ա քընենքյ անըմ, թա էտ հի՛նչ պեն ա, հո՛ւնց անի, վըեր էտ դուշը ո̂ւրա̂ն ծըեռքը քըցի:

Ըտրա հետի տա կյամ ա էտ շենը, համին էտ պառավ մարթին տոնը քըթենում, ըտրանց սերը-սեկրետը մին պառավ կընգանա զյո̂ւղո̂ւմ, ասըմ.
- Ա՛ պառավ, քյըեզ շատ փող կըտամ, հի՛նչ կինի՛, ինձ տանիս ընդրանց տոնը, էտ մարթին կընգանը նիետ մին խըեկ զըրո̂ւց անիմ: Էտ պառավ կընեզյը էն մին օրը կանչըմ ա ո̂ւրա̂ն տոնը էտ պառավ մարթին կընգանը ասըմ.

- Ա՛խչի, էլ ըտրանա լա̂վ պե՛ն, մին առըտուրական ա եկալ քըաքական, քյըեզ օզըմ ա, հի՛նչ ըս անըմ էտ պառավ մարթին, տու էլ ընդրան սիրըմ չըս, տու՝ ջա̂հիլ, ինքը՝ պառավ, հետե ըտրան քյինի՛:

Էտ լոխ ըսելանը ետը պառավը ըտրանց թողըմ ա մինա̂կ, ինքը տանան տո̂ւս կյամ:

Էտ վաճառականը էտ կընգանը խելքա տանըմ ա: Ասըմ ա. - Ցըես քյըեզ նիետ կըփըխսակվիմ, թա̂ք յիա̂ մին խընթիրք օնիմ կըդարիս:

Էտ կընեզյն ասըմ ա.- Հի՛նչ խընթիրք ա, քյըեզ նման տըղըմարթին հետի հինչ ասիս, կանի՛մ...

Էտ առըտուրականն ասըմ ա. - Էն դա̂շա̂նգյ դուշը մորթի, սըերտը նան կըլո̂խը պեր ինձ տո, օտիմ:-Ասըմ ա պըրծընըմ, մին մըտանի, մին էլ մին բրաալեդ տո̂ւս օնըմ, տամ էտ կընգանը:

Էտ կընեզյը իտի էլ անըմ ա: Կյամ ա տոն, տըեսնըմ խոխերքը հաղ ըն անըմ էտ դուշին նըհետ:

Տա խըխորցը ղըրկըմ ա ձըմակը, թա. - Քյեցեքյ ծըմական տըզզան, մոշ, մըհասուր, տես-տեն հըվըքեցեքյ, թորբան նի ըծեցեքյ, պերեքյ:

Ինքը դուշը մորթըմ ա, թըեփոըմ, իփըմ, տընըմ ըստոլին, վըեր քյինի էն առըտուրականին կանչի, կյա օտի: Մարթն էլ էն ա ընո̂ւմ քաղաքըմը ծո̂ւ ծախելիս:

Մինչև հանզը-հունզը մըթնըմ ա, խոխերքը յետ ըն տըեռնըմ կյամ, տըեսնըմ մարը տանը չի, դուշն էլ դա̂փա̂զըմը չի, իփած, հըզըրած, էն ա ըստոլեն յըրան: Ըտրանք զյուղում ըն, թա մարը ո̂ւրա̂նց հետի յա իփա՛լ: Մըեծ ախպերը յոր ա օնըմ կըլո̂խը օտըմ, պուճուր ախպերն էլ սըերտը:

Ուտելանը ետը տուս ըն կյամ, քյընում հաղ անին:

Էտ կընեգյը էտ առըտուրականին նհետ կյամ ա, տըեսնըմ իփած դուշը կըերած:

Տա կըզնվում ա էտ կընգանը յըրան, ասըմ.- Էս սըհաթես քյինի խըխորցտ ճարի, ըսպանի, ընդրանց փորան դուշին կըլո՞խը նան սըերտը տո՞ւս կալ, պեր ինձ տո, օտիմ:

Էտ կընեգյը խոսկ ա տամ, վեր իտի կանի:

Վըեր մարթը տոն ա կյամ, կընեգյը կըզնվում ա յրան, մարթին խափըմ, գյըվաքյիս թա՛ դուշը մորթալ ա, իփալ մարթին հետի, ամմա խոխերքը եկալ ըն, կերալ:

- Դե քյինի, քյինի ընդրանց ճարի, ըսպանի, կըլո՞խը նան սըերտը հանի պեր, պա՛ հ, պա հ, պա հ, պա՛ հ, բա իտի լակուտ կը խրատի՛ն, բա տու մա՛րթ ը՞ս:

Էտ պառավ մարթը վախելան նըհետ, վեր կընեգյը դո՞ւզ-դո՞ւզ խըխորցը կը սպանի, տո՞ւս ա կյամ, քյընամ խըխորցը կոշտը, թաքուն լոխ նաղլ անըմ: Ետավ իրեսներան պաչըմ, ճընապար տընում բիդի դարիբոթուն:

Էտ էրկու ախպերը շատ ըն քյընըմ, թա խըրեգյ ըն քյընըմ, հասնըմ ըն էրկու ճընապարի: Ըտեղ մին մըեծ քար ա ընըմ, յրան կյրած՝ «Աչ ճընապարը տանըմ ա դիբի ուրխոթուն , ծա՛խը՝ դիբի չըրչարմանք»:

Ըտրանք էրգյան քընենքյ ըն անըմ, թա վեր ճընապարավ քյինին: Վըերչը մըեծ ախպերը աչ ճընապարավըն ա քյընո՞ւմ, պուճուր ախպերը՝ ծա՛խ:

Մինչև քյընիլը մըեծ ախպերը ո՞ւրա՛ն ջուբին լոխ փողերը տամ ա պուճուր ախպորը, ասըմ. - Եր կալ, յըես աման քըշեր իմ կըլխըտակաս հինգ հա՛րո՞ւր մանեթ ըմ յոր օնըմ:

Ըտեղ ախպերքը ո՞ւրո՞ւր անա պըժանվըմ ըն:

Մըեծ ախպերը քյընըմ ա, քյընըմ, հըսնըմ մին էրգյիր, մին պառավ կընգա կոշտ ղոնաղ ինըմ: Ղո՞ւշ ըն պըեց թողըմ: էտ դուշը հո՞ւր կըլխի նըստի, ընդրան էլ թաքավեր պիտի ճոկին: Ղուշը կյամ ա, նըստում էտ տըղին կըլխին:

Հըվաքված ժողովուրթը օզըմ չի, ասըմ ըն. - Մին էլ պըեց թուղեցիք դուշը:

Իտի իրեք դո՞նըմ պըեց ըն թողում, էլիա՛ դուշը կյամ ա էտ տըղին

կըլխին կաղնըմ։ Ըտրան էլ թաքավեր ըն ճոկըմ։ Տանըմ ըն թաքավերին թախտին նըստըցնըմ, թա̀քյը տյընըմ կըլխին։

Մըհեկ էլ կյանք պուճուր ախպորան խոսինք։

Պուճուր ախպերը էտ դիբի չըրչարմանքը տանող ճընապարավը շատ ա քյընըմ, խրեգյ ա քյընըմ, հըսնում ա մին քաղաքի։ Ո̀ւրա̀ն համար մեծ-մեծ տըներ ա շինում, ըսկըսըմ լա̀վ ապրելը, քանի վըեր աման քըշեր, պըերցին տական հինգ հա̀րո̀ւր մանեթ փող ա յոր օնըմ։ Քաղաքին հըրևաննին մաթ ըն մընում, թա էս ըշտըղա յա էսքան փողը, էս տըղան վեչ կործ ա անըմ, վեչ մին պըեն, իստի ապրըմ ա։ Հա̀լա̀ էն սուփրան, վեր պենըմ ըն, ամեն լա̀վ-լա̀վ օտելի պեններավ լըցնում ար, մին էլ էն գյա̀բա̀ն, վեր իշտեղ օգում ար, տանում ար, մին էլ փափագը, վեր կլխին ար տինում, ըրվում չար ծըեռք ար պերա́լ։

Համին էտ քաղաքըմը մին շատ կյեղեցիկ ախճիգյ ա ընո̀ւմ» Հու վեր օզըմ ար ընդրան տըեսնա, բիդի հինգհա̀րո̀ւր մանեթ փող տա։

Մին դո̀նըմ էտ պուճուր ախպերը փող ա յոր օնըմ, վեր քյընի ընդրան տըեսնա։

Տըեսնալն ըբա̀ստ սիրահարվում ա։ Ընդրա նհետ մին խիլլա̀ զո̀ւրո̀ւց ա անըմ, կյամ տոն։

Իտի աման օր քյընըմ ա ընդրա կոշտը, աման դո̀նըմ էլ հինգ հարուր մանեթ փող տամ։

Էտ ախճիգյը օզըմ ա գյիդա̀, թա էտ փողը ըշտըղա̂ յա։ Էտ երի ատաժը պակա́ս տըղան լոխ ասըմ ա։ Էտ ախճիգյը հրամման ա տամ, ո̀ւրա̀ն ծառոցը, վեր էտ տըղին մին լա̀վ թակին։ Ծառեքը էնքան թակըմ ըն, վեր էն դուշին սըերտը կյամ ա պիրա̀նա̀վը եր ընգնում։ Էտ ախճիգյը յոր ա օնըմ կոլ տամ։ Էտ ախճիգյը ըտրան սիրում չի, փիս-փիս եշըմ ա, օզըմ ա տուս քըցիլ տա, ամմա վըեր տըեսնըմ ա ընդրա ծըեռին սուփրան, էն դա̀շա̀նգյ գյաբան սըտըսոտ քըմքըծեծաղ ա տամ, տանըմ տոն, նըստըցնըմ։

Էտ տըղան սուփրան հանըմ ա, ասըմ, - Ա́ սուփրա, քյըզանա կօզիմ ախշարքըմս հինչ լա̀վ օտելի պըեններ կա, տո̀ւս պըերիս։ Մին մունուտ չի քաշած, սուփրան լըցնըմ ա ամման ջուռա լա̀վ- լա̀վ օտելի պըեններավ։

Էտ վախտը ախճիգյը հրամմայում ա ո̀ւրա̀ն ծառոցը, վըեր կյան էտ տըղին մին լա̀վթակին, տո̀ւս քըցին։ Իտի էլ անըմ ըն։ Փափաղը, գյա̀բա̀ն, սուփրան ծըեռքան ինքյ ըն օնըմ, մաշկին մին լա̀վ քացի տամ, աքսորըմ մին անհայտ կըղզի։

Էտ կըղզըմը էտ տըղան խիլլա̈ վախտ հիվանդ ա մընըմ, ետնան տըեւս ա քյընըմ, տըեն ա քյընըմ, թա մին տըեղ ճարի, տո̈ւս կյա, տըեղ չի ինո̈ւմ: Ամման օր կյամ ա, ծովին քըշտին նըստում, եշըմ-եշըմ, մին էլ մընըմ մա̈թա̈լ:

Իտի օխտը տարի էտ անհայտ կըղզըմը ապրըմ ա: Օխտինջի տարին էտ տըղան մին ծառի թըեզյն տրված էլհա̈ եշըմ ա ծովին, տըեսնըմ վըեր ծովան դիբի ո̈ւրա̈ն եկին իրեք յըղոնիզյ:Էտ յըղոնիզյներան լոխճան պուճուրը ասըմ ա.- Էս տըղան հո՞ւնց բիդի էս կըզուց տո̈ւս կյա:Մըեծ յըղոնիզյը ասըմ ա, - Վըեր էտ մարթը ո̈ւրա̈ն թըեզյն տրված ծառին դաբու-դան կըտրի, տըրեխ շինի կյենա, նա կարող ա անց կըենա էս ծովավը: Ըտրանա գյման էս ծառան վըեր մին մըիակ կըտրի, էտ մըիակին կախարթական զորութո̈ւն կինի:

Էտ պուճուր ախպերը լոխ լըսըմ ա, ծառին դաբուդան տըրեխ ա շինո̈ւմ, կյենըմ, մին մըիակ էլ կըտրըմ, ծովավը անց կըենըմ: Մին օրվան մեչին էլհա̈ հըսնըմ էն քաղաքը, ըշտըեղ համին էն կյեղեցիկ ախճիզյն ա:

Քյընըմ ա, նի մննըմ էն ըխճըկանը կոշտը: Վըեր ախճիզյը ընդրան տըեսնըմ ա, ծառոցը հրամմայըմ ա՝տո̈ւս անին: Ծառեքը յրա յըն պըրծընըմ, թա մին լա̈վ թակին, էտ տըղան մըիակավը յրա յա պըերում ըտրանց, լոխ էլ էշեր ըն տըեռնըմ:

Ախճիզյը վըեր տըեսնըմ ա, դաչանք ա անըմ, վըեր ծառոցը էլհա մարթ շինի, ամմա էտ տըղան անգուճ չոնըմ, ասըմ ա. - Իմ գյա̈բա̈ս, սուփրաս, փափաղըս տո, էլհա̈ մարթ շինիմ:

Ախճիզյը վըեր լոխ պըերըմ ա ո̈ւրա̈ն տամ, էն վախտը տըենակը ջուբան հանըմ ա, թա էտ ըխճըկանը ըսպանի: Ախճիզյը վախըմ ա, վըխելան նհետ պիրանան էն դուշին սըերտը եր ա ընգնըմ: Էտ տըղան յոր ա օնըմ, դա̈ստի կո̈լ տամ: Ախճիզյը տըեսնըմ ա, վըեր աման հինչ ծըեռքան ընդալ ա, ռազի յա կըենըմ էտ տըղին նհետ փըսակվի:

Պուճուր ախպերը ըտրան նըստըցնըմ ա գյա̈բին յրան, ասըմ. - Ա՛ գյա̈բա̈, ինձ տար իմ մըեծ ախպորըս կոշտը: Մին սըհաթանը ետը հըսնըմ ըն մըեծ ախպորը կոշտը:

Ընդրա թաքավերական պալատըմը փըսակվըմ ըն: Մին լա̈վ հըրսանիք ըն անըմ, իտի էլ հա̈շտ ապրըմ ըն:Երգյինքան իրեր խընձոր եր ընգավ. մինը՝ ասողին, մինը՝ լըսողին, մինն էլ՝ տըռանը տական անջուկ տընո̈ղին:

## 28.ՕՎՉԻ ՓԻՐՈՒՄԸ

Ինըմ ա, չինըմ, մին վըերսկան, անըմը Փիրում: Կօզի նա լոխճին թա̈րիփլա̈միշ իլա̈ծ վըերսկանն ար, ամմա քյա̈սիբ ար ապրըմ:

Մին դո̈նըմ վըերսի քյընալիս օվչի Փիրո̈ւմը տըեսնըմ ա մին սըեվ օց, մին սիպտա̈կ, դա̈շա̈նգյ օցի փըըթաթվալ ա:

Օվչի Փիրո̈ւմըն ասըմ ա, - Ա՛յ վա՛յ, աշխարք, միշտ իտի յըս իլա̈լ, ա՛յ հա՛յ, տա̈նձին լա̈վը առչըն ա օտըմ, տըես է , հունց ա էս սըեվ-թըրեքյ օցը էս սիպտա̈կ, դա̈շա̈նգյ օցին փըթաթվալ: Ա՛յ հա՛յ, էս աշխարքըմըս լա̈վը լա̈վին չի ընգնըմ:

Օվչի Փիրո̈ւմը եշը՛մ ա, եշը՛մ, քընենքյ անըմ աշխարքիս պեններին յրան, ասըմ. - Դո̈ւզ ա, ըստահանք օցեր ըն, ամմա աշկըս յոր չօնըմ:

Համ ասըմա, համ էլ թվանգյը յրա անըմ, թա սըեվ օցին սպանի, ամմա գյո̈ւլլա̈ն նի յա կյամ սիպտա̈կ օցին հա̈քյվին, հա̈քյին յարա անըմ:

Սըեվ օցը փախչըմ ա, սիպտա̈կ օցը մին թա̈հրա̈վ քյինըմ ա, նի մըննըմ ո̈ւրա̈ն պո̈ւնը:

Տու մի՛ ասիլ, էտ սիպտա̈կ օցը օցերին թաքավերին ախճիգյըն ա:

Օցերին թաքավերը ըջըղվըմ ա, կըզնվըմ, կանչըմ ո̈ւրա̈ն մեծա-մեծներին, ասըմ. - էս հո՞ւ վա կըլխան ծըեռք եր կա̈լա̈լ, իմ ըխճըկանըս յըրալու ըրալ:

Ընդրանք ասըմ ըն. - Օվչի Փիրո̈ւմն ա իտի յարալու ըրալ:

Օցերին թաքավերն ասըմ ա. - Ցըես ընդրանա աջըղըս բեդմա հանիմ, վեր գյիդա̈ հո՞ւ վըմ յըես, վեր գյիդա̈ թվա̈նգյը հո̈ւր յրա յա յրա անըմ, վեր գյիդա̈ եղը մածնան ա: Թող էրկու կըեռքին տակին զիա̈րը շատ՝ սըեվ օց քյինին, վեր օվչի Փիրո̈ւմը ղոնաղ քյինի ո̈ւրա̈ն հընգյերին տոնը, չըմշկնին տռանը հանի, քյինի նի մըննի տոն, ընդրա չըմըշկներին մեչը նի մըննին, վեր տոն ետ տըեռնալիս օզի չըմըշկնին կյենա, դըբըններան մին լա̈վ կըծին, սպանին:

Իտի էլ անըմ ըն: Էրկու սըեվ օցը քյինըմ ըն նի մըննըմ Օվչի Փիրո̈ւմին չըմշկներին մեչը: Համին էտ վախտը Օվչի Փիրո̈ւմը հընգերին նաղլ ա անըմ, թա հունց ա օզացալ էն սըեվ օցան սիպտա̈կ օցը ազադի, ամմա գյո̈ւլլա̈ն վըեչ թա սըեվ օցին ա նի եկալ, սիպտա̈կ օցին ա յարալու ըրալ:

Հընգյերըն ասըմ ա. - Ցըես էլ ասիմ խե՞ իտի տուխուր ըս:

Օվչի Փիրո̈ւմը ասըմ ա. - Մըհեկ էլ էս ա իստի տուխուր ըմ ըտրա

հետի, իսկի մըթկաս ընգըմ չի։

Էտ վեր էտ էրկու սըեվ օցերը լսըմ ըն, էտ ըն տըեռնըմ, ո՞ւրա՞նց թաքավերին լոխ նաղլ անըմ։

Օցերին թաքավերը վըեր էտ լսըմ ա, հրամմայըմ ա կանչին Օվչի Փիրո՞ւմին ո՞ւրա՞ն կոշտը, վեր բաղարկեք տա, վեր նա օգացալ ա լա՞վոթուն անի, վեչ թա փիսոթուն։ Ընդրա հետան ա ղարկըմ ո՞ւրա՞ն մեծամեծերին։

Էտ օցերին մեծամեծնին վեր քյինըմ ըն, ասըմ, Օվչի Փիրո՞ւմն ասըմ ա. - Յըես հի՞նչ կործ օնիմ օցերին թաքավերին քըշտին։

Ամմա օցերին թաքավերը մին էլ ա հետան ղարկըմ, զոռավ տանիլ ա տամ։

Էտ մըեծամեծերին անա մինը Օվչի Փիրո՞ւմին ասըմ ա. - Վըեր մըեր թաքավերը քյըեզ փեշքեշ տա, օզի մին պեն բախշի, տու ասի, «Թաքավերը ապրած կըենա, յըես վեչ մին պեն օզըմ չըմ»։ Վըեր շատ անի, ասի, «Թաքավերըն ապրած կըենա, յըես քու լո՞ւզվիտ տակին մուտանան ըմ օզըմ»։

Օվչի Փիրո՞ւմը իտի էլ անըմ ա։ Թաքավերը հիշքան էլ ստիբում ա, ասըմ ա, «Թաքավերըն ապրած կըենա, յըես վըեչ մին պեն չըմ օզըմ»։ Վեր շատ ստիբըմ ա, ասըմ ա, «Յըես քու լո՞ւզվիտ տակի մուտանան ըմ օզըմ»։

Օցերին թաքավերն ասըմ ա, - Տու մեղավեր չըս, քյըեզ ասողըն ա մեղավեր, ամմա իմ խոսկըս խոսկ ա։ Մըտանին կը տամ, ամմա մին պայմանավ, վեր ընդրա օժին անա վեչ մինին ասիս վեչ։

Օվչի Փիրո՞ւմը խոսկ ա տամ, վեր վեչ մինին ասել չի։ Էտ մըտանուն սեկրետն էլ էն ա, վեր հո՞ւր ծըեռքի ինըմ ա, լոխ հըյվըններին, ղուշերին, աշխարքիս կենթանիներին լո՞ւզո՞ւն գյո՞ւղո՞ւմ ա։

Օվչի Փիրո՞ւմը ըտրանա ետը էլհա վըերս ա անըմ։

Մին դո՞նըմ կընգանը նհետ, կընգանը ծի նստըցրած քյինըմ ա մին լենջավ։

Կընգանը տակին ծիյին քոռակը խրխընջըմ ա, ասըմ ա. «Ա՛ մա՛ր, յըես շատ ըմ նըղացալ, էլ կարըմ չըմ կյամ»։ Մարը խրխընջալով ասըմ ա. «Բա վեր տու կարըմ չըս կյա՛ս, յըես կարըմ չը՛մ։ Քըեզ յրա վեչ մին պեն չի կա, ինձ յրա հինգ հոքի կա։ Մինը Օվչուն կընեգյը, ո՞ւրա՞ն խոխան գյվակին, ճոխտըն էլ փորըմը, մին էլ յըես, մինն էլ փորըմըս ա, էլհա էս լենջերավը տանըմ ըմ»։ Էս խոսկերեն յրա Օվչի Փիրո՞ւմը ծիծաղըմ ա։

Կընեգյը հըրցնըմ ա, թա, - Խե՛յըս ծըծաղըմ:

- Լհա՜ ինդի:

- Էհա՜ ինդի պեն չինիլ, խե՛յըս ծըծաղըմ: Չէ, տու վըս վեր, ասի, խե՛յըս ծըծաղալ: Օվչի Փիրո՜ւմը սուս ա անըմ, ասըմ չի: Սաղ ճընապարին միչև ո՜ւրա՜նց տոն մեթկ ա անըմ, քընենքյ անըմ աշխարքիս պեներին յրան, կընանոցը խասլաթին յրան, տանըմ կընգանը թողըմ ո՜ւրա՜նց տանը, ինքը էտ տեռնըմ, քյինըմ դո՜ւզոթուն, արթարոթուն, ճշմարդոթուն ճարելի հետի:

Քյինըմ, ա քյինըմ, վերչը մին սարի լենջի թո՜ւշ ինըմ, ըտեղ, մընըմ, վեր մին քանի օր դինջանա:

Էտ սարին լենջին չոբանը սո՜ւրո՜ւյավ վեչխարնի ար պահըմ: Օվչի Փիրո՜ւմը լոխ հեյվաններին լո՜ւզո՜ւն գյո՜ւղո՜ւմ ար:

Մին դո՜նըմ չոբանին ալաչուխումը նստած լըըմ ա, վեր էրկու շոն հաչըմ ըն, ո՜ւրո՜ւր նըհետ կըռև ըն անըմ, հո՜ջա՜թ ըն տամ: Ինքն էլ եշում ար էն դիմացի պեցո՜ւր սարերին, ո՜ւրա՜ն մըթկին դոնն ընգած, տըխուր, ասիս լհա՜ մար մըննող արևին նըհետ ինքըն էլ ար օզըմ մար մըննի, մըթենն էլ եր ար կոխըմ:

Պըռաված շոնը ասըմ ա. «Վեր իմ տա՜րըս ինձ լա՜վ չի ուտուցընի, յըես էս վեխճարներին տանելու յըմ կյո՜ւլերին փայ անիմ»:

Ջա՜հիլ շոնն էլ ասըմ ա, «Յըես էլ թողելու չըմ, սո՜ւրո՜ւն տանելու յըմ մին հենց տըեղ, վըեր կյուլերան հեռու ինի՛»:

Էն մին օրը տըեսնըմ ըն վեր վեխճարին սո՜ւրո՜ւն կա վեչ: Չոբաննին տես ըն ման կյամ, տեն ըն ման կյամ, վերչը Օվչի Փիրո՜ւման հըրցնըմ ըն տըեղը, ասըմ.- Վեր տեղը քըթնինք, քյըեզ հինչ օզիս տալու յընք:

Օվչի Փիրո՜ւմը վեչ մին պեն չի օզըմ:

Քյինըմ ըն սո՜ւրո՜ւն քըթնըմ, պերըմ, հա՜լա՜ էրկու կյառնը էլ իվիլացած:

Էտ էրկու կյառներան մինը ասըմ ա. «Յես մին քանի սուրու վեխճարների հա՜ր ըմ ինելու:

Էքյըն էլ ասըմ ա, «Յըես հազար կըլո՜խ էքլի մար ըմ ինելու»:

Օվչի Փիրո՜ւմը էտ վեր լըըմ ա, էտ չոբաննին էլ, վեր ստիբըմ ըն, ասըմ ա, - Դե վեր ինձ օզըմ ըք մին պեն բախշիք, էն իվիլա՜ցած էրկու. սիպտա՜կ կյառնը ինձ բախշեցեքյ:

Վըեր էտ կյառները բախշըմ ըն, տանըմ ա մին օրիշ սարի լենջի էն

դա̀շա̀նգյ ծաղիգյներին, կանանչին մըեչին պեց թողըմ, ինքը կյամ, էլհա ման կյամ սըրըսար ընգած:

Մին քանի տարի վեր անց ա կըենըմ, քյընըմ ա համան էն սարին կըլխան եշըմ, տըեսնըմ ընդեղերք սիպտա̀կ վըեխճարի սո̀ւրո̀ւն կա̀լա̀լ ա, ըտրանք էն էրկու սիպտա̀կ կյառնան ըն ծընվալ:

Օվչի Փիրո̀ւմը ըտրանց պահըմ ա, ինքըն էլ վեխճար ա մորթըմ, օտըմ, բենջար, ծըմակի պըտուղնի, կաթնը, իտի պեններ:

Մին հետ վեր էլհա վըեխճար ար մորթալ, էտ վեխճարին մնացած ջա̀մղա̀քին յրան էրկու ղուզղուն ըն թըռչըմ, կյամ, եր կյամ:

Ընդրանցանա մինն ասըմ ա. «Էս լենջին մեծ քարը վեր պիցըրցնին, տակին վըեսկե յա ինելու»:

Օվչի Փիրո̀ւմը լըսըմ ա, գյո̀ւղո̀ւմ, թա ընդհանք հի՞նչ ըն ասըմ:

Էն քարը պըցըրցնըմ ա, տակին տըեսնըմ մին տո̀ռնը կա: Տո̀ռնը պենըմ ա, նի մըննըմ, տըեսնըմ մին օթախ վըեսկավ լիքը, ջուբերը վըեսկավ լըցնըմ ա, թա տո̀ւս կյա, տո̀ռնը պենվըմ չի, ջուբերին վըեսկեն վեր եր ա ածըմ, տո̀ռնը պենվըմ ա:

Տա տո̀ւս ա կյամ, ասըմ, - Բախտըմըս իտի, ինդի, համ էլ վըեսկու նհետ յըես հի՞նչ օնիմ, վըեսկեն մարթի բախտ չի տամ, ջան-սաղութուն չի տա́մ, վըեսկեն զիբիլ ա, ծեռքի եխտ ա, իմը աշխարքիս դո̀ւզո̀թո̀ւնն ա, էն էլ ճարվըմ չի́: Համ ասըմ ա, համ էլ քյինըմ ո̀ւրա̀ն վեխճարներին կոշտը, տեսնըմ էն ա մըթենը եր ա կոխըմ էն սարին քըշաթոխպըն էլ մին ղըլան ա եր կոխըմ, էտ քըշաթոխպին մեչան մին ղըրըթու յա ըրվում:

Էտ ղըրըթուն կյամ ա, մուտանըմ: Տա Օվչի Փիրո̀ւմին տղան ա ինըմ, կյամ ա, թա հորը տոն տանի́: Օվչի Փիրո̀ւմը թվա̀նգըը թուշ ա օնըմ, թա սպանի, ճըննանչում չի ո̀ւրա̀ն տըղին:

Տղան ծեն ա տամ, հորը անըմը տալավ մուտանըմ, հորը կոլավըն ընգնըմ, պըչպըչորըմ, ասըմ, - Ապա, եք ետ տըեռ, տոն քյինինք:

Օվչի Փիրո̀ւմը ասըմ ա, - Չէ, միչև աշխարքիս յրան դո̀ւզո̀թո̀ւն չինի, ճըկըճոկի անիլը պըռծնի վեչ, արթարոթուն չինի, ճըշմարդոթուն, հավասարոթուն չինի, վեր լոխճին մին աշկավ եշին, վեր ազադոթուն չինի, յըես տոն չըմ կյալ,,.

Տըղան քուռըփեշման ետ ա տըեռնըմ, քյինըմ:

Ինքը մընըմ ա էն պեցուր սարերին դա̀լուն տեմ կա̀լած, հըմբարտ, մըհակը ձեռքին, աշկը էն հեռու սարերին քըցած, արևին ծեքյին եշելի՜՜՜ ա:

## 29.ԽՈՍԿԻՆ ՕԺԸ

Մեհետ ինում ա, չի ինում մին քյանիբ կնեգյ, մին մարթ ա ինում:

Մին օր էտ մարթն ասում ա, - Ա՛ կնեգյ, եր կաց քյնինքյ փիրփեթ, ծընեփակ, կըռըմըզուկ, պենջար, կյըզաննոխ, պըլանուկ, խընջըլոզ, ուտեմ-տիտեմ, խազազ, կըռութնը, շոշ քաղինքյ, պիրիքյ խըխոցը պահինքյ:

Քյնում ըն: Շատ ըն շոռ կյամ, խրեգյ ըն շոռ կյամ, նի յըն հըսնում «Շաքյար» ընըմավ հողամասեն: Ըտեղ տեսնում ըն մին օխծը: Էտ օխծը թքանում ար քարեն ճեխքումը:

Էտ օխծը լուզու յա առնում, հըրցնում ընդրանց. - Թո՞րն ը՛ք քյնամ:

Մարթն ասում ա.- Քյնում ընք փիրփեթ, խընջըլոզ, ուտեմ-տիտեմ, տեսնը, ճըրկուտեմն, շեպ, ավուկ, պեխի, ծընեփակ, խազազ, խալյար, իտի հըզեր ճուռա պեն քաղինք, մեր խխոցը պահինքյ:

Օխծը տըսնալավ էտ մարթը քյանիբ մարթկանց անա յա, ասում ա, - Յըես ծըեզ հարուստոթուն կըտամ:

Տա կըլխավը թըխըմ ա, քարան մին զյուրզյ վըեսկե յա եր տըեռնըմ: Ընդրանք հըվաքում ըն վըեսկեն, եւ կյալիս տոն: Խոխերքյը տըսնալավ վըեսկեն ուրխանըմ ըն:

Էտ վըեսկավը ըտրանք ցորեն, անասուն ըն ինքյ օնըմ, սկըըմ կյարունքավար:

Իստի տրանք հարուստանըմ ըն, լավ ապրում, լավ-լավ տըներ շինում:

Մին խիլլա վախտ ընցնելանը եւր, էս մարթը մին օր կնգանն ասում ա. - Ա կընեգյ, էղ օխծը մըեզ լըվութուն ըրավ, եք մունք քյնինքյ ըտրան տըեսնանք՝ հու՞նց ա:

Տեսան-տեսնան շինում ըն, կաթնավ ճաշ ըն անում, քյնում օխծին տըեսնան: Քյնում ըն, տըեսնում օխծը էլհա էն ա ուրան տեղը:

Մարթն ասում ա, - Տես օխծը հունց ա շան նման չլմփ- չլմփցնելավ ուտըմ:

Օխծը լսում ա, էլ ուտում չի:

Մարթն ասում ա, - Խե՞չըս ուտում, կեր:

Էլհա ուտում չի, ստիպված ճաշը յոր ըն օնում: Օխծը նի յա մըննըմ պունին մեչյը, եւտավ էլ ջաննեն կեսը տուս ա օնում, ասում.

- Քու միակավըրտ հենց թխի ինձ, վեր արուն կյա: Մարթը թխում չի, ամմա օխծը ստիբում ա: Վերչը մարթը թխում ա, արուն ա քյնում:

Օխծը հըրցնում ա. - Մաշկս հու՞նց ա:

Մարթն ասում ա.- ձրՒԼն ա քյնՒւմ, ճիլձտձլ ա:

Օխծն ասում ա. - Շունուրակալ ըմ, քյեցեքյ:

Մարթը նան կնեգյը կյամ ըն տոն, ամմա ամմեն վախտ էլ մտածում ըն, թա խե՞ իստի իլձվ: Անց ա կենըմ վեց-օխտը ամես: Մարթը քյնՒմ ա օխծեն տըեսնալի:

Էտ վախտը օխծը տՒւս ա կյամ, սաղ ջանավը մին մեկնվում, ասում. - Մին տես մաշկես յարան սղացա՞լ ա, թա չէ՛:

Մարթըն ասում ա. -Սղացալ ա՛:

- ԴՒւզ ա մաշկես յարան սըղացալ ա, ամմա սրտես յարան սըձցձլ չի՛:

Օխծը ըտեղ ասում ա, թա հինչի հետե յա նղացալ:

30.ԿՅԻՐԻՆ ԱՆՈՒՄԸ

Ընում ա, չընո՞ւմ մին ջա՞հիլ հարս ա ընո՞ւմ: Տա շատ կյեղեցիկ ա ընում: Էտ հարսը սիրըմ ա մին օրիշ ջա՞հիլ տըղի:

Էտ հարսին մարթը մին օր օգյըմ ա քյինի մին մոտիկ շեն: Տա կընգանը ասըմ ա. - Ա՛յ կընեգյ, էս քըշեր կյալու չըմ, վախիս վըեչ, տոռնը պենդ քըլլի, քոն իլ:

Կընեգյն ասըմ ա.- Ա՛ մարթ, լավ, իտի կանիմ, յանի աշըղ չըմ տըեռնալու նեյնիմ-նեյնիմ անիմ, դա՞ստի քոնըմ ինելու, հա՞լա՞ արազըմս քյըեզ տըեսնալու յըմ:

Էտ օրը վըեր էտ հարսը մարթին ճընապար ա տինըմ, եխտոտ շորերը հըվաքըմ ա, քյնո՞ւմ կյետը լվացք անի: Ըտըեղ ո՞ւրա՞ն սիրած տըղին ջըիըմ ա, ասըմ. - Ջա՛նըս, ջիգյա՛րըս, տոնս, տըեղս, արևըս, աշխարքըս էս ո՞ւրո՞ւգյո՞ւն կըկյաս մըեր տոն, մարթըս քյընացալ ա օրիշ շըեն:

- Լա՞վ, կըկյամ, կարոտս կառնիմ, մուրազս տըեղ կըտամ:Էտ տըղին ծըեռքին մին կյիր ա ընո՞ւմ: Էտ հարսը ասըմ ա. - Իմ հա՞ր, իմ մա՞ր քյըեզ մատաղ, կըլխավըրտ շոռ տամ, էտ կյիրին անըմը հի՛նչ ա, քու կյիրիտ էլ մատաղ, քյըեզ էլ, ա՛յ իմ ուսումնավէր կըրթացո՛ղ:

- Յըես քյըեզ մատաղ, ջանիտ մատաղ, բոյիտ մատաղ, աշկերտ օտիմ, անգուճնիտ օտիմ, պըռըշնիտ, թշերտ, ունքերտ, վիզտ, հինչու օնիս լոխ օտիմ, էս կյիրին անըմը էրգյան վախտ ա հարկավէր, վըեր ասիմ:

Էտ տըղան ասըմ ա, ետավ օրախ-օրախ տոն քյընո՞ւմ, վըեր տանը մին լա՞վ քոն ինի, մին դոյընջա դինջանա, վըեր ո՞ւրո՞ւգյո՞ւնը քյինի էտ հարսին տոնը:

Հարսը շո՞րերը լվանըմ ա, չուրըցնըմ, ծա՞լըմ, հըվաքըմ: Ամմա օշըմըեթկը հեն ա ընո՞ւմ էն տըղին յրան: Իսկի գյուղում էլ չի, թա հու՞նց ա թըռթըռալի կործ անըմ:

Դըբրո՞ւգյո՞ւնը էտ հարսը կյամ ա տոն, սկսըմ պադրաստոթուն քաշիլը, վըեր սիրածը կյալու յա: Հավ ա մորթում, եղածո՞ւ յա անըմ, փլավա իփըմ, քաշի տանան կյինի յա տո՞ւս օնըմ:

Հա՞լա՞ լամբերը թա՞զա՞ յին վառալ, վըեր էտ տըղան կյամ ա, պառո՞ւգյո՞ւն տամ, ծըեռքին կյիրը տնըմ ստոլին յրան, նըստըմ:

Էրկու մեչերնին ալավ ընգած սիրահարնի սկըսըմ ըն ո՞ւրո՞ւր պըչպըչորիլը ո՞ւրո՞ւր խտետ ընգնիլը, սեր փըշրիլը էլ հու՞ վա գյո՞ւղո՞ւմ

հի՞նչ խոսկերք, փա̀նդը փելա՛, հինչե՛ր:

Մին խըրեգյ ետը էտ հարսը մին լա̀վ ստո̀լ ա պըեց անըմ, էրկուսավ նըստում ըն, օտըմ, խըմըմ, ղաթըմը էլհա պըչպըչորվըմ, էլհա ո̀ւրո̀ւր կյենաց խըմըմ:

Էտ դա̀րըմը տո̀ւս դո̀լան ծիյի վըննասա̀ս ա կյամ: Ըտրանք բիրդան կըլխու յըն ընգնըմ, վըեր էտ կընգանը մարթն ա: Ըտրանց կըերած-խըմածը կըլխներին հարամ ա տըեռնըմ:

Էտ հարսը շո̀ւտ ա անըմ, էտ տըղին կոխըմ սանդուղին մըեչը, քըլըմ, պլա̀նին տընըմ ջուբումը:

Ետնան սըերտը պատառ դինջացած, տո̀ռնը պըեց ա անըմ, օրախ-օրախ մարթին վիզավը ընգնըմ, պըչպըչորըմ, ասըմ. - Ա՛ մարթ, լա̀վ ըս ըրալ վըեր եկալ ըս, ախեր սըերտս գյո̀ւղո̀ւմ ար, ախեր սըրտըմըս տըվավ վըեր կյալու յըս, ասիս լհա̀ մինն ասից, եր կաց, մին լա̀վ ստո̀լ պադրաստի, մարթտ կյալու յա: Յըես էլ եր կացի ստո̀լ պըեցի:

Վըեր իտի յա ասըմ, մարթը մին խիլլա̀ ուրխանըմ ա, գյըռանըմ ա, մըթկըմը ասըմ ա. «Տըես հիշքան ա կընեգյս ինձ սիրում, ամմա յըես նշանց չի տամ իմ ուրխոթունը, թա չէ կըլխես կընստի, իրես չի տամ, թա չէ կըլխիս ճուղուպուր կը կոտրի, ա՛յ հա՛յ, յըես էլ հու պըել Ատա̀նը չըմ, յըես էլ հու փլան, փըլանքյասը չը՛մ, վըեր կընգանըս իրես տամ»:

Ըտրանք նըստըմ ըն, թա հաց օտին, էտ կընեգյը հավին վըեսկուռը յոր ա օնըմ, ասըմ.-Ա՛ մարթ, եք մա̀րջ կյանք, հու վըեր տանիլ տա, էս կըես քըշերին քյինա̀ բաղը, խընձո̀ր պըերի:

Մարթը ռազի յա կըենըմ, բա հունց չի ռազի կըենա, անջախ ա կընգանը լո̀ւզո̀ւն ո̀ւրա̀ն յրան քախծըրացալ:

Շատ ըն չըրչարվըմ, վեշ մինը կարըմ չի մա̀րջը տանի: Էտ կընեգյը օզըմ ա, թա ճաքվի, փոլ կյա̀, պըտըռնին ընդըղավ մին անի՛, մին հըռըշնըմ ա, մին սփա̀ռթնըմ, աշկերը տըեռալ ար բաստըրմա կըերած կատվի աշկեր, մին հենց փըլըստրատին ար տա՛մ:

Ախըր-վըերջը էտ կընեգյը ասըմ ա. - Ա՛ մարթ, գյո̀ւղո̀ւմ ըս, հինչու դո̀ւզ ա, դո̀ւզ ա. էս ստոլը քյըեզ հետի չըմ պըեց ըրա՛լ, իմ սիրականիս հետի յըմ պըեց ըրա՛լ:

Էտ մարթը էտ վըեր լըսըմ ա, ռա̀նգյը վըեղ ա տըեռնըմ, ասըմ ա. - Բա հոր ա՛ սիրականըտ:

Կընեգյը ջուբան պըլա̀նին հանըմ ա, տամ մարթին ասըմ, - Հենե՛, էն սանդուղումն ա:

Մարթը շո̀ւտ ա անըմ պըլա̀նին ծըեռքան յոր օնըմ, թա սանդուղը պըենա՛, կընեգյըն ասըմ ա, - Տարա՛ծ:

Էտ մարթը դա̀ստի թո̀ւլա̀նըմա, տըեռնըմ թո̀ւլ պըենջար, պըլա̀նին էլ ծըեռքան եր ա ընգնըմ:

Կնեգյը ասումա.-Տըեսի՛ր, հունց տարի քյըեզ, դե քյինի խընձո̀րը պըեր, պայմանը պայման ա:

Մարթը ճըվարանը յոր ա օնըմ, քյինըմ բաղը էտ կըես քըշերին:

Էտ հարսը սանդուղը պըեց ա անըմ, էտ տըղին հանըմ ըտըղան, մին լա̀վ պըչպըչորըմ, ասըմ.- Ասի տըեսնամ էն մին ստո̀լին տըրած կյիրին անըմը հի՞նչ ա:

Էտ տըղան ասըմ ա, - Կընգա խորամանգութուն ա՛ :

Ըտըեղ էլիա թա̀զա̀դա̀ն պըչպըչորվըմ ըն, ո̀ւրանց կարոտը առնըմ, ետավ էտ տըղան տո̀ւս ա կյամ, քյինո̀ւմ ո̀ւրա̀նց տոն:

31.ԾՌԻԿՆԻՆ ԿԸԼՈԽԸ

Ընի՞ւմ ա, չընի՞ւմ մին քյա՛սիբ մարթ նան կընեգյ: Ըտրանց ընի՞ւմ ա մին օթ տըրեկան տըղա խոխա: Էտ մարթը ծի՞ւկըն փըռնող ա ընի՞ւմ, ի՞ւրա՛ն մին կուտուր հացը ըտրանավ ա աշխադըմ:

Մին օր էտ խըեղճ մարթը եր ա ընգնըմ, մըեռնըմ:

Կընեգյը նան տըղան մընըմ ըն սոված-ծարավ:

Էտ կընեգյը վըեր տըեսնըմ ա ի՞ւրա՛ն աշկին սեը-սիպտակ խոխան օրանցօր մաշվըմ ա, ասըմ ա. - Այանը քը մատաղ, ա՛յ իմ բալա, այ իմ աշկիս լի՞ւս, իմ աշխարքըս, իմ կյանքս, արևըս, իստի սոված եր ընք ընգալ, հի՞նչ անինք: Էլհա քու հոր սաղ վախտը ծըեռքավը մին պըեն ար կյամ, շատան, խըրեգյան ծի՞ւկըն ար փըռնըմ, տանըմ բըզարըմը ծախըմ, էլհա մին կուտուր հաց ար ընի՞ւմ, բա մըհեգյ հի՞նչ անինք:

Էտ տըղան էլ մին շատ խելունք, կյեղեցիկ, շատ է , շատ կյեղեցիկ տըղա յա ընի՞ւմ:

Էտ տըղան ասում ա, - Ա՛ մար, իմ հոր թոռը տո, յըես էլ քյինիմ ծի՞ւկնը փըռնիմ, պըերիմ:

Մարն ասըմ ա,- Բոյիտ մատաղ, ջանիտ մատաղ, հա՛լա՛ պուճուր ըս, կարիլ չըս, օժըտ պատիլ չի թոռը յոր օնիս, մըեշկիտ ցավ կըտա, մըեշկըտ կը ճըմի:

Էտ խոխան ըտրան լըսըմ չի, թոռը շըլա՛կըմ ա, քյընըմ ծովին դըրաղը:

էն մըեծ թոռչուցը եշելավ, թոռը ճի՞ւրն ա քըցըմ, միչև ի՞ւրի՞ւզյի՞ւնը ըտըեղ չըրչարվըմ, մին քանի ծի՞ւկնը փըռնըմ, տոն պըերըմ:

Մարը վըեր տըեսնըմ ա, շատ ա ուրխանըմ ի՞ւրա՛ն մըթկըմը: Պըչպըչորում ա տըղին, կըլի՞խը սըղալըմ, ասըմ. -Այան քյըեզ մատաղ, մըհեկյանց տըենը հի՞նչ դա՛րդ օնիմ, վըեր տու իտի խելունք ըս, ծըեռքավըտ պըեն ա կյամ: Մարըն էլ խըրեգյ-մըրեգյ օրիշի կործ ա անըմ:

Իտի տիժի՞ւթի՞ւնավ մարըտըղա մին թա՛հրա՛վ ապըրըմ ըն: Էտ տըղան օրանցօր շատ ա ծի՞ւկըն փըռնըմ, ինքըն էլ յավաշ- յավաշ մըծանըմ ա:

Մարըտըղա մին խոսկի յըն կլամ, վըեր քյինին ի՞ւրա՛նց անա մոտիկ քաղաքըմը ապրին: Իտի էլ անըմ ըն: Տըղան ի՞ւրա՛ն փըռնած ծի՞ւկնը պըերըմ ա քաղաքին բազարըմը ծախըմ: Վերչըն էլ մին դի՞ւքյա՛ն ա պըեց անըմ, ծի՞ւկնը ծախըմ:

Անց ա կըենըմ մին քանի տարի։ Էտ տըղան մըծանըմ ա, տըեռնըմ մին չըտեսնված կյեղեցիկ տըղա։ Թաքավերին ըխճըկորցանը մինը էտ տըղին տըեսնըմ ա, յրան սիրահարվըմ։

Մին օր էլ համին էտ թաքավերին ախճիգյը ո̆ւրա̈նց մին վեզիրին ասըմ ա. - Մըհեկանց տըենը թող էտ ծո̆ւկո̆ւն ծախող տըղան ինքը ո̆ւրա̈ն ծըեռավը ծո̆ւկնը պըերի մըեր պալատը, համ էլ կյա իմ կոշտըս։

Էտ վեզիրը կյամ ա էտ տըղին դո̆ւքյանը, կըլո̆ւխ տամ, ասըմ. - Թաքավերին ախճիգյը ասալ ա, վըեր ծո̆ւկնը տու ինքըտ պըերիս մըեր պալատը, ընտրանա եւոր քյինիս էտ ըխճըկանը կոշտը, քյըեզ պըեն ա ասելու։

Էտ տըղան քյընըմ չի։ Թաքավերին ախճիգյը մին քանի հետ վեզիրին ղարկըմ ա, ամմա էտ տըղան էլհա չի քյընըմ։

Թաքավերին ախճիգյը էլ իվիլ ա էտ տըղին յրան թըքանըմ։ Քըշեր-ցիրեկ ըտրա հետի յա քընենքյ անըմ, հացա, ճըրա կտըրվըմ, մաշվըմ-մաքըռվըմ, տանջվըմ, լա̈ց ընո̆ւմ, ամմա կարըմ չի ո̆ւրա̈ն սերը վըեշ մինին ասի, հըմանչըմ ա, համ էլ հորըն անա վախըմ ա, գյո̆ւղո̆ւմ ա, վըեր հարը ո̆ւրա̈ն էտ տըղին չի տալ։ Վըեր էտքան հալվըմ ա, մաշվըմ, մին օր էլ թաքավերը օզըմ ա գյիդա̈ ըտրա մանին։ Վըերչը էտ պըենը պարզվըմ ա։

Թաքավերը էնքան շատ ար սիրըմ էտ ըխճըկանը, վըեր ըտրա խա̈թրը կոտըրըմ չի, խոսկ ա տամ էտ տըղին նըհետ ըտրա փըսակի։

Եր ա կըենըմ մին խիլլա̈ վըեսկե, տըեսըտըեն շինըմ, ո̆ւրա̈ն պալատին մին քանի մարթկանց նըհետ ըղըրկըմ էտ տըղին։

Էտ մարթկանցան մինը էտ տըղին նան ո̆ւրա̈ն մորը ասըմ ա. -Դե պեց ասիմ, վըեչ հըմանչիմ, թաքավերը օզըմ ա՝ ո̆ւրա̈ն ախճիգյը տա քու տըղիտ։

Մա̈րըտըղա մընըմ ըն մըլորված, մորը հավատը կյամ չի, թա թաքա-վերը ո̆ւրա̈ն տըղին ախճիգյ կըտա, ախճիգյը կը պըերի կոխի էտ քյասիբ տոնը, ո̆ւրա̈նք ո̆ւրա̈նցավ ապրող տըեղը։

Թաքավերին էտ ղարկած մարթը պադարկեքը տընո̆ւմ ա ըստո̆ւլին, համ էլ ասըմ.- Ա՛ քյո̆ւր, խե՞յըս դա̈րդ անըմ, վըեր թաքավերը ախճիգյը տըղիտ տա, հու իտի չըք մընալու, հու տըղատ ծո̆ւկըն փըռնող չի կըենալու, մըեծ հարուստոթունի տա̈ր ա տըեռնալու։

Մարն ասըմ ա. - էտ խոսկը էնքան սըրտանց ըս ասըմ, վըեր հըվատըմ ընք: Դե հիշ կինի, թաքավերին աշկըն էլ մըզ յրա քախծըր կինի, մունք էլ մին մարթի թայ կը տըեռնանք, իստի կոչ չընք կյալ, կըծեգյ տըռնալ:

Ըտըեղ ո̈ւրո̈ւր խոսկ ըն տամ, ռազի յըն կըենըմ, էտ պըենը ա̈մա̈լ կյալի պըեն ա տըեռնըմ: Մին քանի օրանը ետը թաքավերին պալատըմը մին շատ ափաթ հըրսանիք ըն անըմ, հի՛նչ հըրսանիք, մին օրիշ պըեն, ըստո̈լնին լիգյը աշխարքիս լա̈վ պըեներավը, օտելի, խըմելի պըեները լիգյը-լափու տամ, սաղ քաղաքը զըրթարըմ ըն զատկի, զըրզա̈րթա̈րի մըն-նան, վըեսկե արծաթըն էլ կյետի մընան քյընըմ ա: Օխտը օր, օխտը քըշեր վըեր հըրսանիք ըն անըմ, պըրծնըմ, առաչին քըշերը... Ախեր առաչի քըշեր էլ կա՛, առաչի քըշեր էլ: Հենց առաչի քըշեր կա, էրկու դո̈լան սերավ, հենց առաչի քըշեր էլ կա, վըեր անսեր ա ընում, դե իտինին տոնը քանդված ա, սըերտը կոտրած ա հավիդյան, դե իտինը լա̈վա քյինի վախտին սըեվ վըեղը նի մըննի: Ըտրանց առաչին քըշերը սերավ ա ընում: Ամմա հունց ա պըտահըմ առաչին էտ քըշերը, տըղան ըսկըըսըմ ա էտ ըխճըկանը սիրիլը, կըլո̈խը սըղալիլը:

Էտ ախճիգյը ասըմ ա.- Է՛յ, յա վաշ, էտ հու ծո̈ւկնի կըլո̈խ չի՛, թաքավերի ըխճըկա կըլո̈խ ա :

Դե բա̈լքյա̈ս էտ ախճիգյը առանց փիս մըթկի յա ասըմ, չո̈ւնքի վըեր էտ տըղին շատ ար սիրըմ: Ամմա էտ տըղին քյեփին շատ ա նի կյամ: Էտ տըղան եր ա կըենըմ, տո̈ւս կյամ, քյընըմ: Քյընըմ ա ծովին ղըրաղը, ընդը-ղան էլ պըրախոդ նըստըմ, քյընըմ: Շատ ա քյընըմ, թա խըրըեգյ, վըերչը հըսնըմ ա մին օրիշ թաքավերոթուն: Ըտըեղ ո̈ւրա̈ն ինդի յա նըշանց տամ, գյըվա̈քյիս թա լո̈ւզո̈ւն լալիգյ ա:

Նի յա մըննըմ մին աշպազխանա, ընդըեղ ծառա տըեռնըմ: Ըտրա կյեղեցկոթունան, հու վըեր տըեսնըմ ա, մաթ ա մընըմ, լիա̈ ասըմ ա. «Օտիմ վըեչ, խըմիմ վըեչ, քըշեր-ցիրեկ էս տըղին թըմաշա անիմ». մին պատկեր, մին օզգյա̈ պըե՛ն:

Ըտրա կյեղեցկոթունին ծըենը ըտըղին թաքավերին անգուճավըն ա ընգնըմ: Էտ թաքավերը ըտրան ո̈ւրա̈ն պալատըն ա տանըմ, նա̈զիր-վա̈զիրին կանչըմ, ասըմ.- Ա՛ նա̈զիր-վա̈զիրնի, էս տըղան էսքան կյեղեցիկ, մեխկ ա իստի լալեգյ թողինքյ, քյեցեք սաղ աշխարքավըս մին ջառ կան չիլ տըվիք, թա. «Հու վըեր կարի էս լալեգյ տըղին խուսուցընի քըշըռոթունավը մին վըեսկե յըմ տալու»:

Էս նա̀զիր-վա̀զիրնին ջառ կանչիլ ըն տամ: Ամմա վըեշ մինը կարըմ չի էտ տըղին խուսըցնի. հու վըեր կարըմ չի, թաքավերը կըլո̀խը կըտրիլա տամ:

Վըեր իտի շատ ման ըն կյամ, խա̀բա̀րը հըսնըմ ա թաքավերին ըխճըկանը, թա մին կյեղեցիկ տըղի խուսըցընելի հըետի մարթ ըն ըսպանըմ: Տա էն մունուտին գյուղում ա, վըեր ո̀ւրա̀ն մարթըն ա, հայտնըմ ա, վըեր ինքը կը խուսուցընի: Մըեծ պարախոդ ա նըստըմ, կյամ էտ վըեղը:

Կյամ ա էտ թաքավերին կոշտը, ասըմ. - Թաքավերը ապրած կըենա, ինձ իրեք օր ժամանակ տո, յըես խուսուցընիմ, թա կարիմ վըեչ խուսուցընիմ, կըլո̀խըս կըտրի:

Էտ իրեք օրըմը թաքավերին ախճիգյը էտ օրիշ թաքավերը կաղնած, ընդրա քըշտին հիշքա՜ն օզըմ ա էտ տըղին խուսուցընի, էտ տըղան խոսըմ չի, ղաչանք ա անըմ, պըղատանք ա անըմ, ամմա էտ տըղան խոսըմ չի: Թաքավերը հրաման ա տամ էտ ըխճըկանը կախ տան: Մեյդանըմը մին մըեծ սո̀ւն ըն տընգըմ, ըխճըկանը կըղնըցնըմ դաբրետկին, քյանդիրը անց կըցընըմ էտ ըխճըկանը կըլո̀խը:

Էտ մունուտին էտ ծո̀ւկըն փըռնող տըղան ասըմ ա. - Թաքավերը ապրած կըենա, հու էտ ծո̀ւկնի կըլո̀խ չի, վըեր իտի յըք անըմ, էտ թաքավերի ըխճըկա կըլո̀խ ա:

Իտի վըեր էտ լալիգյ տըղան խոսըմ ա, լոխ ուրխանըմ ըն, թաքավերը նըերըմ ա:

Ըտըեղ ըտրանք ո̀ւրո̀ւր նըհետ հաշտվըմ ըն, ո̀ւրո̀ւր խըտեետ ըն ընգնում, էլ ո̀ւրո̀ւր քյեփի նի չըն կյամ: Եր ըն կըենըմ, քյընըմ ո̀ւրա̀նց երգյիրը:

Ըտըեղ թաքավերը թա̀զա̀ղա̀ն մըեծ հըրսանիք ա սարքըմ, մըեծ քյեփ ա ընո̀ւմ:

Ըտրանա ետը երգյինքան իրեք կյա̀րմո̀ւր խընձո̀ր ա եր ընգնըմ, մըեղրի մընան քախծր. մինը՝ ասողին, մինը՝ կարթողին, մինն էլ՝ տիպողին:

## 32.ԻՐԵՔ ԿԼՈ̀Խ

Մին քաղաքըմ ապրըմ ար մին քյա̀սիբ մարթ, մին լոխճին աշկան ընգած, լոխճին քըշտին սըվիրեւ տըեռած ալլահ եթա̀ր, բեշ բեթա̀ր մարթ: Էտ քյասիբ մարթը ամման օր բըզարըմը կտավ ար ծախըմ: Էտ կտավը նա հանըմ ար էտ մըեծ քըղաքին կյըրըզմաններան ըշտեղ ինքը կյըրըզմաննի ար կտրըմ: Վըեր մըեռալը տանըմ ին թաղըմ, ինքը քըշերը քյընըմ ար կյըրեզմանը քանդըմ, պատանը հանըմ, կյըրեզմանը էլհա վըեղավ անըմ, պատանը յոր օնըմ, կյամ տոն, էքսը տանըմ, բըզարըմը ծախըմ:

Մին դո̀նըմ էլ մըեռավ էտ քաղաքին մին շատ հարուստի ախճիգյ, ինքն էլ մաղար-գյո̀ւղա̀ր, մորը, հորը աշկը յրան, մորը, հորը աշկին լո̀ւսը:

Էտ ըխճըկանը հա̀րը քյինըմ ա էտ պատան հանողին կոշտը, ասըմ. - Օրական քա՞նի մանեթի յըս կըտավ ծախըմ:

Էտ մարթը թա. - Օրական քսան մանեթի:

- Դե վըեր իտի յա, ինք առ էս իրեսուն մանեթը, ամմա, տըես, իմ ըխճըկանըս կյըրեզմանը քանդիս վըե՛չ, կտավը հանելի հետի՛:

Էտ քյա̀սիբն ասըմ ա,

- Լա̀վ կինի:

Հիբը ըխճըկանը թաղըմ ըն, պըրծընըմ, էտ կյըրեզմանը քանդող քյա̀սիբ մարթը էլհա քյինըմ ա, քըշերը էտ ըխճըկանը կյըրեզմանը քանդում:

Բըրդան էտ մեյիդը լո̀ւզո̀ւ վա առնըմ, ասըմ. - Ա՛յ մարթ, էտ հինչ աշկըտ ծակ մարթ ըս, էտ խե՞ յըս իմ պատանըս հանըմ բա իմ հա̀ր քյըեզ իրեսուն մանեթ փողը էլ հո՞ր ա տըվալ... Դե վըեր իտի փուղասեր ըս, իտի աշկտ ծակ ա, թող իմ պատանս յրաս մնա, յըես քյըեզ փողի տըեղ ասիմ, քյինի եր կալ: Իմ կյըրեզմանաս պատառ դիբի աչ ղոլը, մին տասսը վըեննը տենը, քյընա տափը քանդիր էնա ընդեղ մարթի իրեք չոր քյա̀լլա̀ կա, եր կալ, տար բազար, ծախի: Ընդրանց կյինը միչև քու գյանքիտ վերչը, վըեր օտիս, բո̀լ ա քյըեզ:

Էտ մարթը էտ ըխճըկանը պատանը էլ հանըմ չի, թա̀զա̀դա̀ն ըտրան կյըրեզմանըմըն ա տընո̀ւմ, թաղըմ... Ընդրանա մին տասսը վըեննատըեղ տափը քա̀նդըմ ա, քա̀նդա̀ծ տըեղան մարթի իրեք չոր քյա̀լլա̀ յա տո̀ւս կյամ: Էքսը էտ քյա̀սիբ մարթը յոր ա օնըմ, տանըմ բազար:

Օրը գյըրա̀գյի ար, բազարը մարթավ լիգյը:

Հու ճոթ ար ծախըմ, հու խոշկյաբար, հու վընննաման, հու շո̀ւրեղան, հու

մեյվա, ամմա էտ քյՙասիբն էլ բազարին մեչին տըեսը- տըեն քյինելՙավ կանչըմ ա:

-Ա՛յ լՙավ կըլո՛խ առնող, հու վա օզըմ չոր քյՙալլՙա:

Բըզարին մարթիքը խեթ-խեթ ըտրան ըն եշըմ, ամմա վըեշ մինը մուտանըմ չի:

Ախրը վըերչը մին առըտուրական կյամ ա, ասըմ.- Էտ հի՞նչ քյՙալլեք ա, վըեր ծախըմ ըս:

- Հեսե ըստի քյՙալլեք ա:

Առըտուրականը մին լՙավ տընղըղըմ ա, ետավ ասըմ.- Էտ իրեք քյՙալլեքն էլ մըզանա մին տասը արշին տըենը տիր, տու վէլ հեռու կաղնի:

Էտ քյՙասիբ մարթը իտի էլ անըմ ա:

Առըտուրականը թըվՙանգյը յոր ա օնըմ, փըստոնը մեչին տինըմ, տըրըըքցընըմ: Առաչին քյՙալլին գյո՛ւլլՙան նի չի կյամ, ղըրաղավըն ա անց կըենըմ:

Էրկունջի քյՙալլՙան, վըեր թըվանգյը տըրըըքցընըմ ա, ծակվըմ ա, գո՛ւլլաՙն մեչան տո՛ւս կյամ: Իրեքինջի քյՙալլին վըեր թվՙանգյը տըրըըքցընըմ ա, ծակվըմ ա, գյո՛ւլլՙան մընըմ մեչին, էլ տո՛ւս չի կյամ:

Առըտուրականն ասըմ ա.- էտ քյՙալլՙան պըեր, յըես առնիմ:

Էտ քյՙասիբն ասըմ ա.- Պա հո վըեեե՛ , էտ հի՞նչ ՙալՙափոՙանգյի պեներ ըս անը՛մ:

- Պա հինչ ըս գյիդՙացՙալ, գյիդՙացՙալ ըս, թա չոր քյՙալլՙա առնիլը հալվա յա՛...

Վըերչը էտ քյՙասիբը իրեքինջի քյՙալլՙան պըերըմ ա, տամ էտ առըտուրականին: Առըտուրականն ասըմ ա. - Հիշքա՞ն փող տամ: Էտ քյՙասիբն ասըմ ա.- Դե հինչ կըտաս, կըտաս իլի՛:

-Հինգ հազար մանեթ տա՛մ:

-Հունց թա հինգ հազար մանեթ,- արմանքը կալած ասըմ ա էն քյասիբ մարթը:

Տասը հազար տա մ.- յրա յա պըերըմ առըտուրականը :

Վըեեե՛, տասսը հազարըս վըե՛րն ա, ինծանավ մազաղ ը՞ս անը՛մ,- ափաթը տարած ասըմ ա էտ քյՙասիբը, մին ղոլան էլ հըվատըմ չի, թա իտի պըեն կինի՛:

Էտ առըտուրականը հանըմա տասնըհինգ հազար մանեթը տինըմ էտ

քյա̀սիբ մարթին ծըեռքին, ասըմ.- Դէ լա̀վ, տասնըհինգ հազար տամ:

Ըտրանա ետը էտ առըտուրականը խանչալը հանըմ ա, թըխըմ էտ իրեքինջի քյա̀լլին, վըեր առալ ար, մէչան կըես անըմ:

Էտ քյա̀լլին մէչան եր ա տըեռնում էլ պըռըլյանդնի, էլ թընգյակյին ջավահիր քարեր, էլ զո̀ւմրո̀ւտ քարեր, էլ փո̀ւրո̀ւզա քարեր, էլ ալմաստ, էլ լալ նան յաղուդ էլ հի՛նչ, հի՛նչ շատ թընգյա̀կյին քարեր պըծըպածին ընելիս, շըփըղշափաղ ընելիս, վըեր մարթի աշկեր շաղվըմ ա եշելիս:

Էտ քյա̀սիբ կյըեզմանափորը մընըմ ա քար կըտրած, աշկերը ծիլի-վիլի ընելիս, ամմա դէ էլ ըշտըե՞ղ, պըենը-պըենավը անց ա կաց ալ, ծախալ ա, պըրծալ…

Վըեր առըտուրականը էտ մարթին իտի տըեսնըմ ա, ասըմ ա,- Ա՛ մարթ, անգուճ տիր ինձ, էս աշխարքըմըս իրեք ջուռա քյալլեք կա. Քյա̀լլա̀ կա՛, վըեր ինքը հէնց ա մին դարանադազ, էնքան մըեծ ա, ամմա մըեչին պըեն չի կա՛, հինչ էլ ասըմ ըս, կոխկավըն ա անց կըենում, հունցու էն քյալլան, վըեր գյո̀ւլլա̀ն յրա ըրին, կոխկավը անց կացավ: Իտի քյա̀լլեքը էս աշխարքըմըս իլա̀ծ, չիլա̀ծ մին ա, ըտահանք մին պարի պըեն չըն անըմ, լա̀վ ա իսկի ինին էլ վըեչ: էտ առաչի քյա̀լլա̀ն: էրկունջի քյա̀լլա̀ն էն ա, վըեր լա̀վ խոսկը լըսիլը լըսըմ ա, ամմա էլիա պըեց ա թողըմ, ըստըղավ տամ ա, էն դո̀լավը տո̀ւս քցում: Սաղ վախտընին էլ մին լա̀վ պըեն չըն անըմ, ամմա չար պըեն հիշքան ասիս անըմ ըն: Բա̀զի վախտ էլ մարթ մըտածըմ ա, թա էս օցի ճըտերը յանի մարթի անա յա իլա̀ծ, թա սըտանի, ըտահանք թա̀րսի ծին եր իլա̀ծ ըն իլա̀լ էս աշխարքըմըս, ըտրա հետի էլ գյո̀ւլլա̀ն ծակից, ամմա մէչին չի մնաց, էն դոլավը տո̀ւս եկավ: Իրեքինջի քյա̀լլա̀ն էլ էն ա, վըեր հինչ լա̀վ պըեն կա, յոր ա օնըմ, լա̀վ խոսկ կա, կըլխըմը պահըմ ա, խըելունք ա, պարի կործեր ա կըդարըմ, վըեր ո̀ւրա̀ն անա ետը ասին վըեչ, թա գյոռիտ իստի-ինդի անին, ո̀ւրա̀ն անա ետը ժողովուրթը, քյա̀սիբ-քյըսո̀ւբ, իրփիվըերի կնանիք, եթիմ խոխերք, քյինըմ ըն ընդրա քարան պաչըմ, դորմի տամ, հունցու վըեր էն Թա̀միրա̀նց Թա̀թա̀վոսին կյըրեզմանը, էն վըեր Շուշի-Ղալըմը մըեծ-պուճուր լոխ դորմի յին տամ, էն վըեր սաղ քաղաքին հետի էն հեռու, թըխպըմը կորած սարերան ճո̀ւր պըերավ, կոզի Ղալան էրված, էլիա ընդրա դորմին կա հու կա՛, ընդրա շինած ախպո̀ւրնին մընըմ ա՛, ըտրա մընան մարթին կըլո̀խն էլ իստի թանգյակյին քարերավ ա լիգյը, ըտրա հետի էլ վըեր գյո̀ւլլա̀ն յրա

ըրի, մեջին մնաց, էլ տո̈̀ւս չի եկավ, խելունք, շինարար, ծըռքերը վըեսկե, կըլո̈̀խը իմաստուն մարթի քյա̈̀լլա̈̀յա: Լա̈̀վ կիներ, վըեր քու կըլո̈̀խըտ էլ իտի իներ:

Էտ առըտուրականը էտ լոխ ասըմ ա, պըրծըներմ, էտ թընգյակին քարե-րը հըվաքըմ, նի տամ էլիա էն չո̈̀ր քյա̈̀լլին մըեչը, յոր օնըմ, քյընըմ ո̈̀ւրա̈̀նց տոն:

Էտ քյա̈̀սիբ մարթը մընըմ ա տըեղը կազնած, արմանքը տարած, մազերան ճըլո̈̀լանք իլա̈̀ծ, վըննըծըեռքը տափան կտրած, էտ առըտուրա-կանին քըմական եշելիս...

## 33.ՂԱՐԱԲԱՂԵՆ ԱՐԱՂԸ

Վա̈րա̈նդան մըեծ մելիքոթուն ար Ղարաբաղի հենգյ հայ մելիքոթու-ներին մեչին։ էտ Վա̈րա̈նդին Մելիքին տըղան արաղ խմող ար։ Դե հո՞ւնց չի խմի, ըշտղին եշըմ ըս, թթի բաղեր, էտ բաղերըմը թոթա արաղ քաշող-նի՛, լոխճին տանը արաղու. պոժկընի՛, արաղ, հի՞նչ արաղ, մին քյա̈հրըբա՛ր, պեց տըեղին քյա̈հրըբա՛ր, սաղ աշխարքիս հըետի տըեղըճար։

Մին հետ համին էտ Մելիքին տըղան հա̈րփո̈ւմ ա, ո̈ւրա̈նց բաղըմը մին լա̈վ, տիրննին շո̈ւկվի, շըղշողում, մըեծ թթի ծառի տակի թեքյ ընգնում, քոն ինո̈ւմ։

Էրկու արծիվ գյիղում ըն, թա մըեռած ա, կյամ ըն աշկերը հանում։ էտ տըղան մնամ ա քոռ։

Ըտրա հա̈րը՝ Վա̈րա̈նդու Մելիքը, պաճճառը վըեր գյիղո̈ւմ ա, հրամ-մայում ա, վըեր հիշքան թթի բաղեր կա, լոխ տակռավը հանին, տեն քըցին, վըեր էլ արաղ չի քաշին, վըեր էլ մին թթի ծառ չինի։

Դե Մելիքին հրամմանը հու՞ կկարի տափը քըցի, մին կըծըկրակ ա, մին օրիշ թա̈հրի պե՛ն։ Հունց ա ինըմ, մին ըրփըրվերի կընգա մին պուճուր թթի բաղ ա մընըմ հաղուղին բաղերին մեչին կյողըը կացած։ էտ ըրփըրվերի կընեգյը ամառնը էտ թոթը թափըմ ա, հվաքըմ, ածըմ մին պոժկու մեչ, ըտրանա թաքուն-թաքուն արաղ քաշըմ ո̈ւրա̈նց տանը հետե։ Լոխ մին քանի վեղրա յա ինըմ, տինըմ տանը տակե օթախըմը, կյեղըմ։

Ամմեն օր էրկու ստաքան հանըմ ա, մինը տամ ո̈ւրա̈ն մաղար տըղին, մինն էլ ինքը խըմըմ։ Էտ արաղան օժ առնելանը ետը, քյընըմ կործի։

Մին օր էտ ջահիլ տըղան անց ար կընեըմ Մելիքին պալատին քըշտավը, բո̈ւրդա̈ն ընդրա յրան ա պըրծնըմ մին կըտաղած ա̈ռո̈ւծ։ էտ ա̈ռո̈ւծին հա̈լա̈ թուլա վախտը, Իրանին շահըն ար բաղարկա տվալ Մելիքին։

էտ տրղան ո̈ւրա̈ն կուրցընըմ չի, փըռնում ա̈ռո̈ւծին պըկան, չա̈նա̈ն եր քաշըմ, ա̈ռո̈ւծին ըռեխը ճըղըմ, քըցըմ էն դո̈ւը։

էտ վըեր Մելիքը ո̈ւրա̈ն բալկոնան տըեսնըմ ա, լափ կըտաղըմ ա։ Կանչըմ ա էտ տըղին ո̈ւրա̈ն կոշտը, վըեննան միչն կըլո̈խ եշըմ, ասըմ.- Ախկաղի լակուտ, տու հունց էն ա̈ռո̈ւծին ըռեխը ճըղեցիր, ասի տըեսնամ քու օժըտ հինչան ա, ըշտըղայա՛։ էտ տըղան սուս ա անըմ, կըլոխը քաշ, կաղնըմ։

Մելիքըն ասըմ ա.- Դե վըեր իտի օժավ ըս, ըսօր գյիրագի օր ա, լոխ տանը: էն մին ձոոնծին նըհետ էլ բձս կը մըննիս, կոըեվ կանիս, մըեր լոխճին առաջին, յա ընդրա ըռեխըն էլ կըճըրի՛ս, կըտեռնաս Ղարաբաղի ձոոնծի ճոտ տըղորցան լոխճան օժավը: էն վախտը քյըեզ սաղ-սըլըմաթ կըթողի՛մ, յա էլ ձոոնծը քյըեզ պըտըռ-պատառ կանի, մունք էլ թըմաշա կանինք: էս էրկու պայմանան մինը բիդի կըդարիս:

Էտ տըղան ասըմ ա, - Լձվ, Մելիքը ապրած կըենա, էլ օրիշ հի՞նչ կկարիմ խոսիմ, լիձ թող քյինիմ իմ մոր տըեսնամ, էլիա ետ կյամ:

Էտ տըղան կյամ ա տոն, լոխ մորը նաղլ անըմ: Մարը տըեսնըմ ա, վըեր էտ աշկերը ձրունն կալած Մելիքան պըռծում չի կա՛, քյինըմա տանը տակե օթախան էրկու ստաքան ձրձղ պըերըմ, տըղին խըմըցնըմ, ասըմ.-Ա՛յ բալա, քյինի, վախիս վէչ, էտ արաղին մեջին ա քու հայրենի վյըեղիտ օժը, քյինի էն մին ձոոնծին էլ սըտկըցրու:

Էտ տըղան քյինըմ ա:

Էտ Մելիքը գյաղոցը հրամման ա տըվալ, վըեր ձոոնծին լձվ ուտուցնին, մին սաղ վըեխճար տան:

Ղոնաղնին հըվաքվալ ին էն պըեցուր բալկոնը, վըեր ընդըղան եշին: Հու վըեր սըրտըմը խեղճ օնեը, էտ տըղին մեխկըն ա կյամ, հու վըեր ծնոդի սըերտ չօնեը, ծըծաղըմ ա, թայդի տամ: Դե՛հա, հա դե՛հա, շուտ պըերին հայաթը էն ձոոնծին, վըեր էն տըղին պըտըռ-պատառ անի, ուրանց քեփն էլ կյա: Կընանիքյ, մարթիքյ տուս ին տեռալ, բալկոնը մըե՛ծ, լե՛ն: Մելիքը տուս ա կյամ, բեղերը հուլլորելավ, կարակուլ փափաղը կըլխին, թընգյա-նոց չոխան, արխալուղը կյեցին, աշկերը կյըմըրոտած, հրամման ա տամ՝ սկսին: Վըեր իրեքինջի զանգյը տամ ա, էն տըղին տուս ըն պերըմ, էն մին դուլան էլ ձոոնծը պահող նուքյարը ձոոնծին կապը պեց ա թողըմ: Կընա-նիքը տըղտուղըմ ըն, վըեր ձոոնծին տըեսնըմ ըն, շատերը աշկերնին կապըմ ըն:

Էտ տըղան մին լձվ եշըմ ա ձոոնծին տուրուր կյալը, ինքը ուրձն հըվաքըմ, ձոոնծը վըեր լոք ա տամ էտ տըղին յրա, էտ տըղան դձստի ձոոնծին կուխկըն ա անց կըենըմ, կոխկան փըռնըմ չձնին էրկու դուլեըան, մեջան ճըղըմ էն դուլը քըցըմ: Հուլըը սըրտըմ ծնոդի սեր կար, խըեղճ կար, ուրխանըմ ա, վըեր էտ մաղար տըղան ազադվից, հուլըը սըրտըմ ծնոդի սեր չիկար, սըերտըն էլ քար ա, ձրունն-կալած, էն էլ տըխըվըմ ա:

Մելիքը էն ղալին էրգյան հունքերը ուրուր ա տամ:

Վըեր լոխ քյընըմ ըն ուրանց տները, Մելիքը էտ տըղին կանչըմ ա, ասըմ.- Դե վըեր իտի յըս ըրալ, պիտի ասիս, թա քու օժըրտ հի՛նչա յա:

Էտ տըղան վեշ մին պեն չի ասըմ: Վըեր Մելիքը շատ ա ադիբըմ, ասըմ ա,- Մելիքը ապրած կըենա, թող քյինիմ իմ մոր տըեսնամ, կյամ քյըեզ ասիմ:

Մելիքը ռազի յա կըենըմ:

Էտ տըղան քյընըմ ա տոն, լոխ մորը նաղլ անըմ: Մարըն ասըմ ա. - Ա՛ բալա, օժիտ փանդը ասիս վայ ա՛ , ասիս վեչ էլհա վա՛յ ա՛, բա էս հո՛ւնց անինք,- բա հո՛ւնց ասինք, վըեր մըեր թթի բաղը կենըմ ա, մունք արաղ ընք քաշըմ, էտ արաղը հայրենի վըեղին օժը խմողին ա տամ, արնին օժը խմողին առուծի օժ ա տամ:

Մարը տըղա մըտածըմ ըն, մըտածըմ, վերչը կյամ ըն էն մըթկին, վըեր քյինին ասին, հինչ վըեր դուզըն ա:

Մարը մին բոթուլ արաղ ա տամ տըղին, թա տանի տա Մելիքին, համ էլ ասի, թա օժը հինշտըեղա յա:

Տըղան կյամ ա Մելիքին կոշտը, ասըմ.- Մելիքը ապրած կըենա, քու վըեղըմըտ վեշ մին թաքուն պըեն չի ինիլ, իմ օժըս էս բոթուլին մեջին ա, էտ էլ մըեր բաղան ա, բաղը օժ ա առալ մայր վըեղան, վըեղը աշխարքըմըս լոխճան օժավըն ա, խընթըրըմ ըմ պըրոբ ըրիք, տըեսիք սոտըմ ասըմ, թա՛ ըղորթ:

Մելիքը մին ստաքան խըմըմ ա, տըեսնըմ ա քյեփը եկավ, ծըծաղը, երքը եկավ:

Էրկունջի ստաքանը վըեր խըմըմ ա, տըեսնըմ ա սաղ պալատը էնա ծըեռքին մըեչին, ինքն էլ պըցրանըմ ա, թա թըռչի ուրան սարերին արծիվներին նման, շըռտըշռոտու անի երգյինքումը: Իրեքինջի ստաքանը վըեր խըմըմ ա, տ ըեսնըմ ա, վըեր լոխճան ծանդր պեները ուրան ծըեռքին հունցու մին տըկողին, մին ճուղուպուր, մին նոխուդ, էնքան թիթև ա ինըմ:

տ վըեր Մելիքը տըեսնըմ ա, վըեր արաղը իտի օժավ պըեն ա, մարթի օժ ա տամ, արաղըն էլ ստանըմ ըն, էն մըեղրի համավ, էն մարթի պըրանըմ մըղրաճուր տըեռնող թոթան, էն ամման մինը մին բրամի չանք, բեղանա թոթան, թթի ծառերըն էլ ուրանը օժը ստանըմ ըն մայր վըեղան, հրամման ա տամ Ղարաբաղին մելիքներին, ուրան էլ նըհետը, վըեր սաղ

Ղարաբաղի վըեղին կըեսը, հա՛լա՛ կըեսան էլ շատ, թթի բաղեր քըցին:

Ըտրանա ետը լոխճան առաչ ի՛ւրա՛ն վըեղըմըն ա թթի բաղեր քըցըմ, էն տակըավը հանած ծրա՛նա վըերա՛նա՛ բաղերը թա՛զա՛ղա՛ն թթի բաղեր ըն քըցըմ, ավաղ անըմ, մըեծ-մըեծ բաղերըմը արաղ քաշելի քյարխանա յըն տինըմ: Էն դա՛շա՛նգյ շըղշողըմ շոլկվի տիրններավ, մարթի սըրտի մնան, կոխկերքը սըոսեռուտ տիրններավ ծառերը մըծանըմ ըն, հաղուղի պու-ճուր գիլի մընան ի՛ւրի՛ւր անա կացած թոթը, մին բըրամի չանք, հըսնըմ ա, շա՛փա՛թը մին հետ բաղերը թոխմախավ թափըմ ըն, մըեծ շալին ղըղներան փըռնող հարթները, ըխճըկերքը օրախ-օրախ, ծըծղելավ, ասելավ-խոսե-լավ, ի՛ւրի՛ւր նըհետ հա՛նա՛գյ ընելավ, թոթը տանըմ ըն ածըմ պուժկենեն, քըցըխելանը ետը ա՛րա՛ղ ըն քաշըմ, պեց տեղին, քյա՛հըրըբա՛՛ը, օժ տըվող, հիվանդին դա՛րմա՛ն, սաղ աշխարքիս հայտնի Ղարաբաղի ա՛րա՛ղ՝ վըեր խըմողը ասըմ ա.-Արաղ չի է՛, մըեռուն ա, մըեռուն...

Օժավանըմ ըն, լիյանըմ, քյըեփ անըմ, գյի՛ւղի՛ւմ ըն, թա աշխարքիս լոխճան բախտավեր մարթիքն ըն:

Էլիա ճի՛ւրը ի՛ւրա՛ն ճընապարավըն ա քյինըմ, էլիա լոխ օրա՛խ, զըվարթ, օժա՛վ, մին մին ա՛ռի՛ւծնի էլիա տընազին ծիծաղը պըրըներին, սոր խոսող, խոսկի հետի ծըերքը ջուրը չի տանո՛ղ, էն վախտը առանց ուսումի, ամմա խելունք ղարաբաղցիք:

Ըտրանա ետը Վա՛րա՛նդու Մելիքը, վըեր պըռավըմ ա, ի՛ւրա՛ն կոշտըն ա կանչըմ, ի՛ւրա՛ն ծըեռքին տակին կյիր, հրամման, օրենքյ, տես-տեն կյըռ-դին, կտակ ա կյիրիլ տամ: Ղարաբաղին անա, շատ պեններ ա կյիրիլ տամ, ըտրանց կոխկին էլ կյիրիլ ա տամ, ասըմ. - Ա բալեքյ, հու վըեր Ղարաբա-ղին նի կյա, ընդրա թթի բաղերին նի կյա, տանավ, տըեղավ կորչելու յա, կըլի՛խը օյիննի յա կյալու, փըեշման ա մընալու, էտ պենը իմ կլի՛խս եկած ա, Ղարաբաղի թթի բաղերին նի կյըվողը նըհախ տըեղան ա նի կյալու , վըերչը էլիա ճի՛ւրը ի՛ւրա՛ն ճընապարավըն ա քյինալու, թթի բաղերին նի եկողը, թթի ծառերը կըտրիլ տըվողը վըերչը մընալու յա քոռըփըեշմա՛ն: Ա՛ բալեքյ, ծըեր բաղերը քանդիքյ վըեչ: Ծըեր օջաղը հընգյըցնիք վըե՛չ:

Իտի լոխ, հինչու հարկավեր ա, կյիրիլ ա տամ, ինքը մըեռնըմ: Ղորմի ընդրանց, էտ մելիքներին, ղորմի մըեր նան ծըեր նամուսավ, ղեյրաթավ պապերի՛ն:

## 34.ԼՈ̈ՒՆ ՆԱՆ ՄԸԵԾԱԿԸ

Ինո̈ւմ ա, չի ընո̈ւմ մին լո̈ւ, մին մըեծակ։ Ըտրանք մարթըկնեգյ ըն ընո̈ւմ։ Լո̈ւն ասըմ ա. - Ա՛ կնեգյ, ծո̈ւնը եկալ ա, աշխարքը կա̈լա̈լ, մեր կտրեն նստալ, կտերն էլ ծոռ ա, կաթիլու յա՛, քյինիմ ծո̈ւնը տըեն տամ։

Մըեծակն ասըմ ա. - Ա՛ մարթ, տու մին պուճուր պըեն ըս, հունց կըքյինիս ծո̈ւնը տեն տաս։

Թա. - Չէ՛, քյունո̈ւմ ըմ։

- Բա վեր ծո̈ւնին տակեն մնաս, էն վա՛խտը։

- Ա կնեգյ, վըըեր դըխդըխկոց լսեցիր, գյիդա̈ վեր սաղ ըմ, վեր լսեցիր վուչ, գյիդա̈ վեր մըեռալ ըմ, ծո̈ւնին տակավըն ըմ իլա̈լ։

Լո̈ւն քյունո̈ւմ ա։ Մըեծակեն քյեփավը չի տա̈ռնում։

Անգուճ ա օնըմ, տըեսնըմ սա̈ս-սեմո̈ւր չի կա՛։ Տուս ա կյամ կըտորը, տըեսնում լո̈ւն ծո̈ւնին տակավն ա իլա̈լ, սատկալ։ Սկսըմ ա կլո̈խը թակիլը, կլխին մոխեր շաղ տալը, ըսկըսըմ ա սո̈քյ ասիլը։

Մին ակռավ կյամ ա կտրին նստում, ասըմ. - Ա՛ մըեծակ, խեյըս կլխետ մոխեր շաղ տամ, հի՞նչ ա իլա̈լ։

Մըեծակն ասըմ ա. - Բա հու՞նց անիմ, վեր շաղ չիտամ, մարթս ա մըեռալ, տո̈ւս եկավ, թա̈ ծո̈ւնը տեն տա՛, ծո̈ւնին տակավն ըլա̈վ։

Ակռավն ասում ա. - Վա՛յ, վա՛յ, խըեղճ լո̈ւ ախպեր, էս հու՛նց կանինք, էս հի՛նչ կանինք, ըսկսում ա ո̈ւրա̈ն թեփուռնին պուք տալը, լա̈ց ինիլը։ Ետավ թռչում ա, նստում մին ծառի։

Ծառն ասում ա.- Ա՛յ ակռավ, բա տու ամեն օր սև նան ղալին թեփուռներավ ըս իլա̈լ, ըշտեղ ա քու թեփուռնիտ։

Ակռավը ծառին յրան ասըմ ա.- Բա ասիլ չը՛ս, լո̈ւն ծո̈ւնը տըեն տալիս սատկից, մըեծակը կլխին մոխեր շաղ տվավ, յըես էլ թեփուռնիս թափեցի։

Ծառն ասըմ ա. - Խըե՛ղճ, վա՛յ, վա՛յ։ Ինքն էլ ո̈ւրա̈ն տիրննին ա թափում։

Ծառին տակը մին վեչխար ա կյամ, վըեր սա̈րինումը նստի։ Տեսնում ա ծառը տկլոր ա, ասում ա.- Ա՛ ծառ, ըրեգյի տու զըրթա̈րված ըս իլա̈լ նախշուն տիրններավ, ամմա ըսօր մնացալ ըս տկլոր, էտ ըշտե՛ղ ա քու տիրննիտ։

Ծառն ասըմ ա,- Յըես հի՛նչ անիմ, հի՛նչ չանիմ, հի՛նչ վըեղ տամ կլխիս, հի՛նչ ցեխ տամ կլխիս, բա ասիլ չը՛ս լո̈ւն կըտերը եր իլա̈վ, վըեր ծո̈ւնը

տըեն տա, ընգավ ծ՞ԼնԻն տակը, սատկից, մըեծակը կլխին մոխեր շաղ տվավ, ակռավը թեփուռնին պուք տըվավ, յըես էլ տիրննիս թափեցի:
Վեչխարն ասըմ ա. - Վա՜յ, վա՜յ, էս հո՜ւնց կանիմ, էս հի՜նչ կանիմ,- համ լ՞ց ա ինում , համ էլ ՞ւր՞ն կեռ պոզերը կուտրատում:
Վեչխարը քյունՙՙլմ ա կյըետին կոխկը ճ՞Լր խմի: Ճ՞Լրը տեսնում ա ըտրա կեռ պոզերը կուտրատած, ասըմ ա. - Ա՜ վեչխար,. հո՜ր ա քու կեռ-կեռ պոզերըտ, երեգյ իտի չի եկեր իմ կոշտս:
Էհ, հինչ անիմ, վըեր պոզերս կուտրատիմ վե՜չ, լ՞Լն ծ՞Լնը տեն տալիս, ընգավ ծ՞Լնին տակը, սատկից, մըեծակը կլխեն մոխեր շաղ տվավ, ակռավը թեփուռնին պուք տվավ, ծառը տիրննին թափից, յըես էլ իմ պոզերս կոտրեցի:
Ճ՞Լրըն ասըմ ա, - էս հի՜նչ ՞լ՞մ՞թ պըեն ա, էս հի՜նչ կանինք, էս հո՜ւնց կանինք: Վա՜յ, վա՜յ յըես էլ տեռնամ արՙԼն:
Մին պառավ կնեգյ կյամ ա կոժն օսին ՞ւր՞ն խանումին միար ճ՞Լր տանի:
Տըեսնում ա ճ՞Լրը ար՞Լն ա տեռալ, ասում ա. - Ա՜յ ցորտ ճ՞Լր, բա տու ինդի թամՙԼզ իր, համավ իր, էտ խե՞ յըս ար՞Լն տըեռա՜լ:
Ճ՞Լրըն ասըմ ա,- Դե, հի՜նչ անիմ, վըեր փոխվիմ վեչ, լ՞Լն ծ՞Լնին տակեն մնաց, սատկից, մըեծակը կլխեն մոխեր շաղ տվավ, ակռավը թեփուռնին պուք տվավ, ծառը տիրննին եր ածից, ղոչը պոզերը կուտրատից, յըես էլ ՞ր՞Լն տեռի:
Պառավը վա՜յ ա տամ ՞ւր՞ն կլխին, ղ՞րդ՞ն կոժը կոտրում, քյնում ՞ւր՞ն խանումին կոշտը:
Խանումը ասում ա.- Ա՜ պառավ, բա հո՜ր ա կոժը:
Պառավը լ՞ց ինիլ՞վ ասըմ ա. - Բա ասիլ չը՜ս, լ՞Լն ծ՞Լնը տ՞Լս տալիս վախտը ծ՞Լնին տակավը ընգավ, սատկից, մըեծակը կըլխին մոխեր շաղ տվավ, ակռավը թեփուռնին պուք տվավ, ծառը տիրննին թափից, ղոչը պոզերը կուտրատից, ճ՞Լրն էլ ար՞Լն ա տեռալ, յըես էլ ղ՞րդեր՞ս նըհետ կոժս կոտրեցի:
Խանումը մեծ ղ՞րդի մեչ ա ընգնում: Ասում ա.- Վըեր իտի յա, յըես էլ իմ ծամերս կկտրիմ:
Քշերը աղան կյամ ա տոն, տեսնում խանումը ծամերը կտրած: Զոռի ըջըղվում ա, ասում.- Հո՜ր ա քու ծամերտ:

Խանումն ասում ա. - Մեծ դա̀րդ ա պըտահալ, բա ասիլ չը՜՜ս, լո̀ւն ծո̀ւնը տո̀ւս տալիս ընգավ ծո̀ւնին տակը, սատկից, մըեծակը մոխեր շաղ տվավ յրան, ակռավը ո̀ւրա̀ն թեփուռնին պուք տըվավ, վեչխարը ո̀ւրա̀ն պոզերը կուտրատից, ծառը ո̀ւրա̀ն տիրննին թափից, ճո̀ւրը արո̀ւն տեռավ, պառավն էլ կոժը կոտրից, յըես էլ ծամերս կտրեցի:

Աղան ասում ա. Վըեր իտի յա, յըես էլ իմ բեղերըս կտրիմ, էլ հի՞նչի՜ յա պետք:

Էն մին օրը տխուր տրտում քյունո̀ւմ ա կործի:

Չոբանը շվվի ածելիս տըեսնում ա, վըեր աղան տխուր ա:

Հըրցնում ա.-Աղա ջա՜ն, բա խե՜ յըս տխուր:

Աղան լոխ նաղլ ա անում: Չոբանը շվվին կոտրում ա, տխուր, օնքերը ո̀ւրո̀ւր տված քյնամ ծմակը: Մին ծառի տակե նստում ա մտածում:

Քաշկերը կյամ ըն, ասում.- Չոբան, խե՜ յըս իտի տխուր, ախեր տու միշտ շվվի յիր ածում, օրախ-օրախ, բա քյըեզ հի՜նչ իլա̀վ:

Չոբանն ասում ա. - Բա իտի-իտի պեներ.- Մեր պարեկամ լո̀ւն ծո̀ւնը տո̀ւս տալիս տակավը ընգավ սատկից, մըեծակը մոխեր շաղ տվավ կլխին: Ակռավը թեփուռնին պուք տըվավ, պառավը ճրի քյնաց, կոժը կոտրիր, ծառը ո̀ւրա̀ն տիրննին թափից, վեչխարը ո̀ւրա̀ն պոզերը կուտրատից, աղան ո̀ւրա̀ն բեղերը կտրից, Խանումը ո̀ւրա̀ն ծամերը, յըես էլ էտ լոխ տըսնալա̀վ իմ շվվիս կուտրեցի: Բա յըես տխուր չին ի՜ մ, հո՜ւ ինի՜:

Քաշկերը հըռհըռում ըն, հըռհըռում, ասում.- Լոխ չոբան ըք իլա̀լ, վեր իտի-իտի պեներ ըք փոնա՜լ...

35.ԿՅՈՂ ԹԱՔԱՎԵՐԸ

Ինըմ ա, չինը մ մին թաքավէր: Էտ թաքավէրը մի2տ դա̀րվի2ի 2ո̀րէր կյըեցած ման ա կյամ ո̀ւրա̀ն էրգյիրըմը, տըեսնա ո̀ւրա̀ն անա հի՞նչ ըն խոսըմ:

Մին դո̀նըմ տա մին ծըմակ ա ընգնըմ: Ըտրան էտ ծըմակըմը իրէք կյո̀ղ ըն ջըհըմ: Էտ իրէք կյո̀ղէրը էտ դա̀րվի2ին նըհէտ հընգէրանըմ ըն, կյուղոթուն անըմ, ապրըմ:

Մին օր դա̀րվի2ը լոխճան հըրցընըմ ա, թա հու հի՞նչ կը կարի անի, հո՞ւնց ըն կյուղոթուն անըմ, հի՞նչ թա̀հրավ:

Մինն ասըմ ա, -յըէս մին ինդի կյող ըմ, վըէր ը2տէղ քյինիմ, 2ըները հաչին, գյիդա̀լու յըմ, թա հի՞նչ ըն ասըմ էտ 2ըները:

Էն մինն էլ ասըմ ա. - Յըէս մին ինդի կյող ըմ, վըէր ը2տըէղ մին քըլլած դուփուլ ինի, կը պէնամ, վըէր քը2տին աղոթկ անիմ:

Էն իրէքինջի կյո̀ղըն էլ ասըմ ա. - Յըէս մին ինդի կյող ըմ, վըէր մարթկանց կըճընանչիմ, հի2քան փոխված, յա պըռաված ինի:

Ըտրանա էտը էտ կյողէրը դա̀րվի2ին անա հըրցընըմ ըն.- Բա տու հի՞նչ կանիս, ծըէռքավըտ հի՞նչ կըկյա, բա քու հունարըտ վէ՞րըն ա:

Դա̀րվի2ըն ասըմ ա.- Յըէս մին ինդի մարթ ըմ, վըէր աչի բէղըս հըլլո̀րիմ ա2խարք կը 2ինիմ, վէր ծախի բէղըս հըլլո̀րիմ ա2խարք կը քանդիմ:

Անց ա կըէնըմ մին խիլլա̀ վախտ: Էտ դա̀րվի2ըն ասըմ ա. - Յըէս խոխատա̀ր մարթ ըմ, օզըմ ըմ տոն քյինիմ, տըէսնամ խոխա-ռախաս հի՞նչ իլին, քյուլփա̀թըս հո՞ւնց ըն յո̀լա քյինըմ, օղըշաղըս հո՞ւնց ա:

Էտ կյողէրը պէց չըն թողըմ: Ասըմ ըն. - Չէ՛, վըէր չէ՛:

Դա̀րվի2ըն ասըմ ա.- Դէ, վըէր իտի յա, էկէք քյինինք թաքավէրին խազնան կըտրինք:

Թաքավէրը մին ղոլան էլ օզըմ ար գյիդա̀՝ դո̀ւզ ըն ասա՞լ, թա 2ան լո̀ւզո̀ւ յըն գյո̀ւղո̀ւմ, աղոթկավ դուփուլ ըն պէց անըմ, մարթ ըն ճընանչըմ: Էտ լոխ օզըմ ար գյիդա̀, վըէր էքծան օրը ո̀ւրա̀ն խազնան վէր կյան կըտրին, յա կյան դուփուլնին պէց անին, գյիդա̀:

Քը2էրը խոսկը մին ըն անըմ, ճընապա ընգնըմ: Վըէր հըսնըմ ըն թաքավէրին պալատին կո2տը, 2ոնը հաչըմ ա: Թաքավէրը դա̀րվի2ի

շը̀րեր կյեցին, վեչ մինը գյը̀ւղը̀ւմ չի, թա տա թաքավեր ա, էն շան լը̀ւզը̀ւ գյիդացողան իըրցընըմ ա.-Հը՞ը՛,

շոնը հի՛նչ ա ասըմ: Էն կյողըն ասըմ ա.- Շոնն ասըմ ա. «Մըեր տարը ծըզ նըհետ ա, էտ հո՞ր ըք քյինըմ»:

Լոխ մընըմ ըն ը̀ւրը̀ւր իրեսի եշըմ: Մինն ասըմ ա. «Տու վըս», էն մինն ասըմ ա. «Չէ, տու վըս»: Սկըսըմ ըն ը̀ւրը̀ւր նըհետ հը̀ջա̀թ տալը: Թաքավերը գյը̀ւղը̀ւմ ա, վըեր էտ կյողը դը̀ւզ ա ասըմ, ամմա սուս ա անըմ: Վըեր ը̀ւրա̀ն էլ ըն մեղատրըմ, թաքավերին մին թը̀ւնդ ը̀ւշը̀ւնց ըն տամ: Էտ էրկունջի կյողը կյամ ա խազեին տըռնին առաչին կաղնըմ, աղոթկ անըմ: Վըեր աղոթկ ա անըմ, լոխ դուփուլնին պեցվըմ ա: Ըտրանք մեշոկնին վըեսկավ լըցնըմ ըն, քյինըմ ը̀ւրա̀նց պը̀ւնը:

Դա̀րվիշը մին թա̀հրա̀վ վըեսկեն ըտրանց մեչին փայ ա անըմ, մին թա̀հրա̀վ ազադվըմ, կյամ պալատը, կահին նըստըմ:

Մին քանի օրանը ետը թաքավերը հրամման ա տամ, կյողերին կանչին ը̀ւրա̀ն կոշտը: Ինքըն էլ կընգա շը̀րեր ա կյենըմ, իրեսը ծասկըմ, մինա̀կ մին աշկը պեց թողըմ, քյինըմ կյողերին ճընապարը պահըմ:

Վըեր կյողերը կյամ ըն, մուտանըմ, տա կընգա շը̀րեր կյեցրած, իրեսը ծասկած, մինա̀կ մին աշկը պեց, ծընգները թակըմա, ասըմ.

- Թաքավերը կյա̀րմը̀ւր ա կյեցալ, ծըեզ կըտորելու յա, բա հու՞նց կանիք, բա հի՞նչ կանիք:

Էն մարթ ճընանչող կյողը ասըմ ա.-Քըեզ մընանին նըհետ հընգյեր ինողին օրըն էլ իստի կինի:

Թաքավերը դա̀ստի գյիդա̀ց, վեր ը̀ւրա̀ն ճընանչալ ըն, քյինից պալատը, կյա̀րմը̀ւր շը̀րեր կյեցավ, էտ կյողերին կանչից ը̀ւրա̀ն կոշտը: Իրեքըն էլ եկին:Էն մարթ ճընանչող կյողը խոսկ խընթրից, ասից. - Հինչ իլա̀լ ա, իլա̀լ ա, մըհեկ խընթըրըմ ընք աչի բեղըտ հըլլը̀րիս, տա լոխճան լա̀վ կինի, մըզ էլ մահից կազադիս:

Ըտեղ թաքավերը ծըծաղըմ ա, տըեսնըմ ա, վըեր էտ մարթը ը̀ւրա̀ն ճընանչալ ա:

Թաքավերը տրանց էլ կախ չի տամ, ազադըմ ա, ասըմ.- Դե, մըհեկ ազադ ըք, քյինա̀ցիք ծըեր տընները, ծըեր խոխա-բախին կոշտը, էն խազնան տարած վեսկեն էլ ծըեզ բը̀լ ա, միչև ծըեր գյանքին վերչը: Քյեցեք մին աշխադանք էլ ըրիք, կործ ըսկսեցեք, յա արհեստ սըվըրեցեք, արհեստ պինըցրեք, էլ մըհեկանց տենը կյուղոթուն չանի՛ք:

## 36.ԿԸՆՁՄԸՆՁՈՒԿԸ

Ինիս ա, չինիս մին դեր։ Ըտրան ինիս ա մին կնեգյ, շատ դ̀աշ̀անգյ։ Դերը տըսնաս ա, վեր կընեգյը շատ ա դ̀աշ̀անգյ, թուղես չի, թա տանան տ̀ըւս կյա, մին տեղ քյինի, մին ջվար տեսնա, թա հինչ ա կըտեսնան, հավան կը կենան, կփխչըցնին։ Տանը ճ̀ըւրը, հացը, լոխ ինքն ա ըլ̀ալ պիրիս, կընեգյըն էլ մին խանըմ շինած, տանը տըրած։

Էտ խեղճ տերտերը թուղես չի իլ̀ալ, թա տոնը մին դոնաղ կյա։ Ըտահանց շենըմը մին քանե ջ̀ահիլ-ջըհ̀ըլ դոչչաղ տղեք ըն ինիս։ Տահանք ̀ըւր̀ըւր նհետ մարջ ըն կյաս, թա հո՞ւ կկարե մին ̀ըւր̀ըւլգյ̀ըւն քյինի դերին տոնը, դոնաղ ընգնե, համ էլ կընգանը տեսնա, կյա։

Ըտեղ մին ջահիլ քյ̀ալ̀ագյբազ տըղա յա ինիս։ Էտ ըսես ա. - Յըես կքյինիմ։

Հընգերուքը ըսես ըն.-Վեր կարիս քյինիս, հենգյ չեթվեր կյինի յընք ինքյ ուննական, մին լ̀ավ քյեփ անինքյ։ Ամմա վեր կարիս վուչ քյինիս, քյեփը քու հաշվիտ ա իննական։

Էքսը էտ տղան եր ա կընաս քյինիս տեսա, տենա ինքյ ունես, մին խուրջին լըցնես, եր կընաս դըբր̀ըւլգյ̀ըւն վախտը քյինիս դերին տոնը։

Մին խիլլ̀ա վեր կընաս ա, մին փիս էլ շաղ ա նի օնես, երգյինքյը թուխպես։ Էտ տըղան դերին դըրբզան թըկես ա։

Դերը կյաս ա, տոռնը պինաս, թա.- Հի՞նչ ըս ուզի՞ս ։

Էտ տըղան ըսես ա. - Ա՛ դեր, յըես քըմատաղ, հեռե տեղա յըմ կյաս, անծանոթ մարթ ըմ, տեղ չըմ ճընընչիս, եկալ ըմ լհ̀ա մըղակըտ, ղանչանք ըմ ընես, լհ̀ա թող դըրբզեն քմակեն նստիմ, կենամ։

Դերը ըսես ա.- Ամ̀ալ չի կյալ, յըես քը մատաղ, յըես էսքան տարե յա, ըստեղ կընաս ըմ, հ̀ալ̀ա մին մարթ պահած չըմ տանըս, յըես քյըեզ հու՞նց պահիմ, էքուց վեր շենումը ըսկանան, հի՞նչ կասին ինձ։

Էտ տղան ըսես ա, - Յըես քյըմատաղ, ա՛ դեր, թոռը նի կ̀ալ̀ած, յըես հիշտե՞ղ քյինիմ, պա աստուծ չօնի՞ս, թող լհ̀ա կյամ էտ դըրբըզեն քմակեն նստիմ, հանցու լըհ̀ա կյ̀ըւլ̀ըւ, զըզանու փայ չի տեռնամ, սաղ քյինիմ, տեղ հսնիմ։

Դերը տըսնաս ա, վեր ճար չի կա, ըսես ա. - Եք լհ̀ա դըրբըզեն քըմակեն նըստե։

Էտ տըղան ̀ըւր̀ան մաչին ուրխնաս ա, թա. «էս ա կուծի-կուծի պեններըս

դիբի լա՜վըն ա քյինիս»: Կյաս ա ղըրբզեն քմակեն խուրջինը վեր տընիս, նստես:

Դերը քյինիս ա տանը մին խիլլա՜ կընաս, կնգանը ըսես ա. - Ա՛ կնեգյ, ախեր մին ղոնաղ ըմ պերալ, էն ա ղըրբըզըմը նստած:

Կնեգյը ըսես ա, - Ա՛ դեր, դե էսքան տարե յա վեր ղոնաղ չըս պահալ, մըհենգյ էլ պերալ ըս, թողալ ղըրբըզըմը, ինէլ թոռեն տակեն: Էտ մինը լա՜վ չի, հու վեր ըսկանա, պա հի՞նչ կասե:

Դերը ըսես ա. - Վեր իտի յա, թող քյինիմ պերիմ բալկոնը: Քյինիս ա, թա. - Ա՛ ղոնաղ, եր կաց եք բալկոնը թըռչվիս վուչ:

Էտ տըղան ըսես ա. - Ա՛ դեր, լա՜վա, նեղութուն մեր քաշիլ, ըստեղ էլ յո՜լա կըքյինիմ:

Դերը շատ ա ստիբիս, թա. - Եր կա՛ց, եք: Վերչը եր ա կընաս քյինիս բալկոնը:

Դերը քյինիս ա տոն, տահանք սկսես ըն հաց օտելը:

Կընեգյը ըսես ա.- Ա՛ դեր, պերալ ընք բալկոնը, թող կյա տոն էլ, հաց կօտինքյ կպըրծնինքյ, էլլիա ինքյը կքյինի բալկոնեն կենա:

Դերը եր ա կընաս էտ տըղեն մին էլ պիրիս տոն: Էտ տըղան պիրիս ա խուրջինը պընա՜ս, մեսը տո՜ւս ունես խըրվես, քյա՜թա՜, կըրթնահունց, ա՜րա՜ղ, պեն տո՜ւս ունես, մին լա՜վ քյեփ ըն ընես պըրծնես, մինչև կես քշերը զո՜ւրո՜ւց ընես, եր կընաս քոն ինիս:

Քշերը էտ տըղան եր ա կընաս կոժը յոր ունես տըռանը ճո՜ւրը թըփես, պըրծնես ըսկըսես կըխկըխկցընելը:

Դերը եր ա կընաս թա.- էտ հի՞նչ ա, յըես քը մատաղ:

Տըղան թա.-Ա՛ դեր, վեչինչ,- ուզեցե թա՜ ճո՜ւր խըմիմ, կա վուչ:

Դերը ըսես ա.- Դե թող եր կենամ, տանիմ կոժը լըսնիմ, պիրիմ:

Տըղան թա.- Չէ, լա՜վ մին թա՜հրա՜վ կըկենամ:

Դերը ըսես ա.- Չէ՛, բիդի քյինիմ:

Դերը եր ա կընաս, կոժը յոր ունես, թա քյինի, ըսես ա. - Ղոնաղ, անըմըտ հի՞նչ ա, ասե, հանցու կյամ ծեն տամ ղըրբըզան պենաս:

Էտ տըղան ըսես ա. - Ա՛ դեր, անըմըս մին տըժեր անըմ ա, համ էլ լա՜վ անըմ չի, հո՞ւնց ասիմ:

Դերը թա.- Ասե, վեչինչ մատաղ, ասե:

Էտ տըղան մտըծես ա, թա հի՞նչ անըմ ասե, վեր հնգյերունքը

ըսկանան, մին լա̀վ էլ ծըծաղին , դերին ըսես ա՝ անըմըս Կընձմընձո̀ւլ ա:

Դերը եր ա կընաս կոժը յոր ունես քյինիս ճո̀ւրը, կյաս տըսնաս-դըրբըզան քըլլած, ղոնաղեն անըմը մըննան ընգնես ա, ըսես ա. - Պա յըես հու՞նց ծեն տամ,- մնաս ա տըռանը վըեննը կացած:

Վեր տըսնաս ա շատ ա մընաս, տո̀ռնը թըկես ա, թա. - Ղոնա՛ղ, ղոնա՛ղ, տո̀ռնը պեց:

Էտ ղոնաղը տո̀ւս ա կյաս, թա.

- Ղունաղեն հա̀րն էլ, քու հա̀րն էլ, շան տըղա, էս կես քըշերեն հի՞նչ ըս եկալ քոնըս հարամ ընես:

Խեղճ դերը «մեղա աստված» ընելավ քյինիս ա հիրըվանին մղակը թըկես, թա̀ հա̀լըա̀թ մըթեն ա, շաղվալ ըմ, էս մեր դըրբըզան չի՛:

Վերչը սաղ միհլին դըբըզեքյը թըկես ա, լոխ տո̀ւս ըն կյաս, ո̀ւշո̀ւնց տաս, քյինիս: Դերը տըսնաս ա, վեր լո̀ւսըննաս ա, ըսես ա համոթ ա, վեր լո̀ւսանա ժողովուրթը տըեսնան էս կոժը ծեռքես հըղըցըմը վըեննը կացած, ինձ հի՞նչ կասին:

Եր ա կընաս քյինիս ո̀ւրանց դա̀մո̀ւրչո̀ւն կոշտը, դամուրչին մնաս ա ըրմացած, թա. - Ա՛ դեր, էս վախտ կոժը ծեռքետ ըստեղ հի՞նչ ըս ընես:

Դերը ըսես ա.- Մին ղալաթ ըմ ըրալ, ախպեր, էս ա էքան տարե յա ղոնաղ չըմ պահալ կընգանըս դա̀րդա̀ն: Մըհենգյ էլ ո̀ւրգյո̀ւնեն մին տըղա յա եկալ, խեղճըս ա եկալ, պերալ ըմ տոն, մինա̀կ թողալ կընգանս քշտեն, յըես եկալ ճո̀ւրը, մին էլ, թա քյինիմ տոն, տըեսալ դըրբըզան քըլլած: Անըմը մննաս ընգալ ա: Մըհենգյ եկալ ըմ քու կոշտտ անըմը ասիս, քյինիմ ծեն տամ, տո̀ռնը պենա: Դա̀մո̀ւրչին ըսես ա. - Պա յըես անըմը հի՞նչ ըմ գյիդա̀ս, հի՞նչ ա:

Դերը ըսես ա.- Տու ըխշարքես տակեն հինչ ժընգյա̀լո̀ւ անըմ ըս գյիդա̀ս, ասե, յըես գյիդլա̀կա̀ն ըմ:

Դա̀մո̀ւրչին ըսես ա. - Կյինձը, կուտեմնը, պենջար, ճըռճռոկ, փո̀ւրփո̀ւտ , քյափառ, քյա̀րա̀վուզ, թըրթունջուկ, ա̀վլո̀ւկ, տըտըպաշար, ուտեմ-տիտեմ, նա̀նա̀, ռեհան:

Տերտերը ըսես ա.- Չէ, չէ, էտ չի:

Դամո̀ւր չին ըսես ա.- Ա՛ բա լամ, չէ, մին պեն ա մնացալ ասիմ, պըծնիմ:

- Ասե:

Դա̀մո̀ւրչին ըսես ա. Կընձըմընձո̀ւկ:

Դերը ուրխնաս ա, թա̀. - Լհա̀ էտ ա, վեր կա, ըղորմի քու հոր:

Եր ա կընաս, կյաս դըրբըզան թըկես, «Կընձմընձուկ» ծեն տաս: Էտ տըղան ո̀ւրա̀ն կործը վըրչըցրած տո̀ւս ա կյաս, քյինիս տոռնը պընաս, կոժը դերին ծեռքան ինք ունես, պիրիս տոն, միկա կեղծավերոթուն ընես, ետնան ո̀ւրա̀ն տեսը տենը յոր ունես թա̀.

- Ա՛ դեր, դե շատ շնուրհակալ ըմ, քյինիս ըմ:

Դերը ըսես ա.- Լա̀վ ըս ընես, բալամ, դե կոզի մին պեն չըս ըրալ, ամմա խընթրես ըմ վեր շենըմը ասիս վուչ, թա դերին տանը դոնաղ ըմ իլա̀լ:

Էտ տըղան կյաս ա դա̀ստի հընգյերուցը կոշտը, տահանք թա. - Պա̀ հինչա՞վ գյիդանք, թա քյեցալ ըս:

Էտ տըղան ըսես ա. - Թա̀ վեր հըվըտաս չըք, քյեցեքյ դա̀մո̀ւրչո̀ւն կոշտը հըրցրեքյ:

Տահանք քյինիս ըն դա̀մո̀ւրչո̀ւն անա հըրցնես, տըսնաս վեր դո̀ւզ ա: Մին լա̀վ ծուծուղտելավ կյաս ըն քյեփ ընես, ետնան էլ հինչու իլա̀լ ա, շենավը մին փըռես:

37.ՉԸԿԱՄ ՀԸՐԵՎԱՆԸ

Ինիս ա, չինիս մին մարթ, մին կնեգյ: Ըտրանց ինիս ա օխտը տղա: Էտ տղերքյը միշտ քյիս ըն իլյա̀լ ո̀ւրա̀նց հնգյերունցը կոխկը: Խուսես ըն, պեն ըն ընես, էլիա ետ տըռաս, կյաս տոն:

Մին օր էլ ըտրանք քյեցալ ըն ո̀ւրա̀նց հնգյերունցը կոշտը: Էտ հնգյերունքը ըսկսալ ըն ո̀ւրա̀նց քուվերցը անա խոսիլը, էտ ախպերքյը շատ ըն բիքյիփացալ, ո̀ւրա̀նց քո̀ւր չի իլյա̀լ, վեր ո̀ւրա̀նք էլ ո̀ւրա̀նց քուվերը անա խոսին, տրանք ըստղան շատ բեքյեփ տո̀ւս ըն կյաս, կյաս տոն:

Մարը հրցնըմ ա, տղերանցը, թա. - Բալա, խե՞ իտի բեքեփ ըք:

Մեծ տղան ասում ա. - Ա՛ մար, խե՞ մըեզ էլ չօնինք մին քո̀ւր, վեր մունք էլ մեր քուվերը անա խոսինքյ, էտ մինն էլ վեր պիրիս, տղա ինի, մունք տանան կըլո̀խ ընք յոր ուննական, քյնինքյ:

Էտ տղերանցը մարը էտ մին քանի օրեն ղաթըմը պիտի խոխա պիրեր, տղերքը եր ըն կնաս տսնաս մորը քեփը խարաբ ա:

Ըտրանք մուտունաս ըն մորը ըսես.- Ա՛ մար, դե մունք քյիս ընք վըերսի, վեր տու իտի յըս, խոխան վեր պիրիս, թա ախճիգյ ինի, չխարակը կտինիս կտրեն, թա տղա ինի, կյո̀ւթա̀նը կտինիս, վեր տո̀ւս կյանք շենին կըլո̀խը, հանցու վեր գյիդա̀նք տղա յըս պիրա՞լ, թա ախճիգյ, հանցու վեր գյիդա̀նք, տոն կյա̀լի յինք, թա չէ՛:

Էտ տղերքյը եր ըն կացալ քյեցալ: Մարը վեր խոխան պիրալ ա, ախճիգյ ա իլյա̀լ, չխարակը եր ըն կա̀լա̀լ, տարալ տիրա̀լ կտրեն: Ո̀ւրո̀ւգյնատեմ ո̀ւրա̀նց հըրևան մին չար պառավ էտ չխարակը եր ա կա̀լա̀լ, տեղը կյո̀ւթա̀նը տիրա̀լ: Էտ տղերքյը վեր եկալ ըն, տըեսալ ո̀ւրա̀նց տանը կտրեն կյո̀ւթա̀նը տըրած, էտ օխտը ախպերը ըտեղատ մին էլ ետ ըն տեռալ, կըլո̀խ եր կա̀լա̀լ, քյեցալ: Տրանք քյեցալ ըն, քյեցալ, մին ծմակըմ վըեննը կացալ, ո̀ւրա̀նց հետե մին ըպրելի տեղ ճարալ, ըտեղ ըսկսալ ապրիլը:

Տրանք կուճի ախպորը թողալ ըն տանը, ո̀ւրա̀նք քյեցալ վըերսի, էլա ո̀ւրո̀ւգյո̀ւնը լոխ եկալ ըտեղ հավաք իլյա̀լ:

Շատ ա անց կընաս, խրեգյ ա անց կընաս, էտ ախճիգյը մըծընաս ա, ըսկսես ա տո̀ւս կյալը, ո̀ւրա̀ն հնգյերունցու կոխկը քյինիլ կյալը:

Մին օր էլ կո̀լան յոր ա ունես, քյինիս հնգյերունցու նհետ ճո̀ւրը: Ըտեղ հնգյերունքը մարթը ո̀ւրա̀նց ախպորցը անա ըսկսալ ըն խոսիլը: Էտ ախճիգյը մնացալ ա սուս ըրած, վեչ մին պենա խոսալ չի՛, բըքյրփացալ ա:

Շո̀ւտ կո̀լան ճիրա̀վ լցալ ա, եր կա̀լա̀լ, եկալ տոն:
Տա վեր եկալ ա տոն, սկսալ ա լա̀ց ինիլը, մարը հրցրալ ա, թա. - Բալա, խե՞ լա̀ց րս ինիս: Ախճիղյն ասալ ա,- Հո՞ւնց չի լա̀ց ինիմ, միենգյիս քյեցալ ըմ ճո̀ւրր, լոխ ըսկսալ ըն ո̀ւրա̀նց ախպորցու անա խոսիլը, յըես էլ մնացալ ըմ ղրաղեն սուս ըրած, հա̀լբա̀թ վեր ինձ էլ մին ախպեր ինա̀ր, մին խոսկ էլ յըես կըսի, ախեր մին ախպերը հի՞նչ ա, վեր ինի վըե՛չ, վեր պերալ չը՛ս:
Ըտեղ մարը լըցըկումած ըսես ա.- Բալա, դե հի՛նչ անիմ, չարեն աշկը տո̀ւս կյա, ախեր քյըեզ մին ախպեր չի իլա̀լ, մինին տեղ օխտըն ա իլա̀լ: Միենգյ մինն էլ ա չի կա, լոխ կլո̀խ ըն եր կա̀լա̀լ, քյեցալ:
Ախճիգյը մորն ըսես ա, - Պա խե յըն քյեցալ:
Մարը ըսկսես ա նաղլ անիլը.- Օխտը ախպերըտ ա իլա̀լ, տրանք էլ քյըեզ նման տո̀ւս ըն եկալ ո̀ւրա̀նց հնգերունցը կոխկը, հնգերունքը սկսալ ըն ո̀ւրա̀նց քուվերցը անա խոսիլը, ո̀ւրա̀նց էլ մին քուր չի իլա̀լ, վեր ուրանք էլ ո̀ւրա̀նց քվերը անա խոսին, յըես էլ հեն ըմ իլա̀լ քյըզանավ ծանղր, պիտա̀ր էտ օրերը տո̀ւ ինիր: Ըտրանք իտի քյըեզ նման, բեքյեփ կյաս ըն տոն, հրցնես ըմ ըտրանց անա, ըսես ըն թա. «Դե մըեզ մին քո̀ր չօնինքյ, վեր մունք էլ մեր քվերը անա խոսինքյ, դե էլ վեր ախճիգյ չինի, մունք տանան եր ընք կննական, կլո̀խ յոր օնինքյ, քյնինքյ»: Տրանք վեր վըերսի յըն քյնիս, տըսնաս ըն վեր քյեփս լա̀վ չի: Ըսես ըն. «Ա՛ մար, դե ըսօր մունք քյիս ընք վըերսի: Խոխան վեր տղա ինի՛, կյո̀ւթա̀նը կտինիս կըտրեն, ախճիգյ ինի՝ չխարակը, հանցու վեր շենին կլխան եշինքյ, տեսնանք ախճիգյ ա՞, թա՞ տղա: Էս ա ասում ընք»: Վեր քու ախպորցըտ կյալի վախտն ա տռնաս, էտ մըեր հըրեվան չար պառավը , չխարակեն տեղը կյո̀ւթա̀ն ա տինիս: Էնա քու ախպերք կյաս ըն, տըսնաս կյո̀ւթա̀ն ա, կլո̀խ ըն յոր ունես, քյիս: Հա̀լա̀ միչև միենգյ էլ վեչ մին խա̀բա̀ր չիկա:
Էտ մարը  վեր իտի լոխ ըսես ա, պրծնես, ախճիգյն ըսես ա.- Դե վեր իտի յա, յըես բեղի քյինիմ իմ ախպորցս ճարիմ:
Մարը տո̀ւս ա կյաս, խնթրես, ըղըչես, թա.- Մինա̀կ տո̀ւ վըս մնացալ, տո̀ւ վէլ քյիս րս, մինա̀կ ըմ մնաս, քու հա̀ր էլ մըեռած ա:
Ախճիգյը սես ա.- Էտ  լոխ ինձ հետի վեչ մին պեն չի, յըես պիտի կլո̀խ յոր օնիմ, քյնիմ:
Էտ լոխ ըսես ա, կլո̀խ յոր ունես, քյիս:
Քյիս ա, քյիս, ընգնես ա էլիա էտ ծըմակըտ: Էտ ծմակումըտ շատ ա

քյիս, խրեգյ ա քյիս, տըընաս ա մին հեռե տեղ, մին ծոխ ա եր ինիս։ Էտ ծոխեն յրան ախճիգյը քյիս ա, տո՞ւս կյաս ըտեղ։ Ըսկըսես ա տո՞ռնը թակելը։ Մին տղա տո՞ռնը պնա՛ս ա, տըսնաս, մին ախճիգյ ըտեղ վըեննը կացած։

Հրցնես ա.- Պա տո՞ւ հու վըս, հու՞նց ըս եկալ, հըսալ ըստեղ։

Ախճիգյն ըսես ա.- Հնգյեցունցս նհետ ծըմակն ըմ եկալ, ընդահանց կուրցրալ ըմ, միենգյ էլ մթնալ ա, գյդա՛ցալ չըմ հի՞նչ անիմ, լհա՛ էս ծոխեն յրան եկալ ըմ, տո՞ւս եկալ ըստեղ։

Էտ տղան ըսես ա.- Դե վեր իտի յա, եք մաչղոլը։

Էտ ախճիգյը քյիս ա մաչղոլ։

Վեր մթնես ա, տըսնաս ա, վեր վեց հուքյի էլ եկեն վըերս ըրած։ Ըտրանք ըսկսես ըն հրցնիլը.- էս հո՞ւ վա՞, հի՞նչ իլլա՛թ միլլա՛թ ա, վեր եկալ ա, տո՞ւս եկալ ըստեղ։

Էտ ախճիգյը ըսկսես ա կլխավը եկածը քաթ ըսես։ Վըեր ո՞ւրա՛ն օխտը ախպեր ա իլա՛լ, տրանց քո՞ւր չի իլա՛լ։ Ըտրանք մին օր ո՞ւրա՛նց մորն ասալ ըն. «էտ մինն էլ վեր ախճիգյ չի պիրիս, տանան կլո՞խ ընք յոր ուննական, քյինինքյ»։ Էնա տրանք քյըեցալ ըն վըերս, մորն ասալ. «Վեր տղա պիրիս՝ կյո՞ւթա՛նը կտնիս կտրեն, վեր ախճիգյ պիրիս՝ չխարակը»։ Էնա իմար ինձ ա պիրիս, եր ա կնաս չխարակը տինիս կտրեն։ Վեր ախպորցուս կյա՛լի վախտըն ա ինիս, մեր հըրեվան չար պառավը չխարակը յոր ա ունես, տեղը կյո՞ւթա՛նը տինիս։ Ախպերքս վեր կյո՞ւթա՛նը տըընաս ըն, էտ ըն տըռնաս, քյինիս։ Էն քյնիլն ա վեր քյինիս ըն։ Վեր յըես մծացալ ըմ, իմ մոր անա հրցրալ ըմ, վեր խե՞ մին ախպեր չօնիմ, իմ մար ըսկսալ ա էտ լոխ քաթ անելը, վեր քաթ ա ըրալ, պրծալ, ասալ ըմ. «Մամա՛, օզում ա հի՞նչ ինո՞ւմ ա ինի՛, յըես բեղմա քյինիմ իմ ախպորցըս ճարիմ»։ Իմ մար շատ ա լա՛ց իլա՛լ, թա պա յըես մնաս ըմ մինա՛կ, քու հա՛ր մեռած, պա յըես էս տանը մինա՛կ հու՞նց անիմ։ Ամմա յըես լսալ չըմ, ասալ ըմ վեր բեղմա ասածս կաղարիմ։ Տանան կլո՞խ ըմ եր կա՛լա՛լ, եկալ ընգա՛լ ըստեղ, էս ծմակը, իմ ախպորցս քթենալի հետե։

Էտ ախճիգյը վեր պատմում ա, պրծնում, տրանք էտ ըխճկանը յոր ըն օընմ ո՞ւրա՛նց կոշտը, սկըըմ ըն լա՛ց ինիլը, վեր տու վըս լհա՛ մեր քո՞ւրը, մունք էլ քու ախպերքտ։ էտ պեները լհա՛ լոխ մեր կլո՞խն ա եկալ։

Ըտեղ էտ ախճիգյը ուրխնաս ա։

Տրանք ամեն օր տրան թուղես ըն տանը, ո՛ւրա՛նք քյիս վըերսի: Ամմեն դո՛նում տրան պահ ըն տաս, վեր կրակը հընգյցնի վուչ, միշտ կրակը վառած պահե, տո՛ռնը պեց չանի, վեր կյան ասին, ո՛ւրա՛նց անա կման:

Տրանք ամեն օր իտի պահ ըն տաս, քյիս վըերսի:

Մին օր էլ ախճիգյը տանը նստած ա ինիս, մարը մենն ա ընգնես, շատ լա՛ց ա ինիս, ըսկսես նղվարվիլը, իտի քունավ ա ընցնես: Տա վեր քունավ ա ընցնես, բո՛ւրդա՛ն մին էլ վեր ա կընաս տըսնաս կրակը հա՛նգյա՛ծ: Հի՞նչ անի, հի՞նչ չանի, տո՛ւս ա կյաս տո՛ռնը, տես ա յիշիս, տեն ա յիշիս, տսնաս մին հեռե տեղ մին ծոխ ա եր ինիս: Էտ ծոխեն յրա քյիս ա, քյիս, ախրը հսնես ա էտ ծոխեն: Տո՛ռնը թկես ա: Տո՛ռնը պենաս ըն: Տըսնաս ա մին պառավ էն ա կրակեն կոխկեն նստած:

Պառավը վեր տրան տըսնաս ա, ըսես ա.- Բա՛լա, շուտ ըրա քյինի, հի՞նչու վըս եկալ, էնա օխտը կլխանի դովը նստած, վեր եր կենա, քյըեզ ուտլական ա, օխտըինջիօրն ա, վեր էնա քոն: Ըսօր պիտի եր կենա, շո՛ւտ ըրա, ճելլի քյնի:

Էտ ախճիգյը ասըմ ա. - Յըես կրակու վըմ եկալ, մին կրակ տոք, յոր օնիմ, քյինիմ:

Պառավըն ասըմ ա.- Պա հո՞ւնց տամ, դո՛վը պողերը հմբարալ ա, ետավ քոն իլա՛լ:

Ախճիգյն ասըմ ա,- Լա՛վ, լհա՛ մին պա՛ծ տո,- ետնան ո՛ւրա՛ն կլխավը եկածը ըսկսես ա նաղլ անիլ:

Պառավը տըսնաս ա, վեր շատ ա ղաչանք ընես, ըխճկանը ըսես ա. - Դե լա՛վ, վեր իտի յա, հենե մկրատը ընդեղ տիրա՛ծ, քյնի պեր, պողան կտրիմ քյըեզ տամ:

Էտ ախճիգյը ըսես ա,

- Լա՛վ:

Քյիս ա մկրատը պիրիս, տաս պըռավեն: Պառավը պողան կտրես ա, տաս ո՛ւրա՛ն, յոր ա ունես քյիս: Էտ ախճիգյը վեր տռնավը ուզիս ա թա՛ տո՛ւս կյա, ջուբումը մին թիլի կծեգյ ա ինիս: Էտ կծկեն ճոնդը մնացած ա ինիս տռանը տակըմը: Էտ թիլը հըղըցումը ետ տալավ էտ ախճիգյը կյաս ա տոն: Վեր կյաս ա հսնես ո՛ւրանց տոնը, կծեգյն էլ պրծնես ա: Նի յա մննես տոնը, կրակը վռես:

Ախպերքը կյաս ըն տոնը, հաց ըն ուտես, քոն ինիս, էլիա էքսը եր ըն

կնաս, քյիս վըերսի։ Քո̀ւրը մնաս ա էլիա տանը։

Պատառ անց ա կընաս էտ ախճիգյը քյնալան ետը, դո̀վը եր ա կնաս տըսնաս վեր կծկեն ճոնդը էն ա տանը մաչին։Պառավան հըրցրնես ա, - Սա հի՞նչ պա̀ն ա։

Պառավը խուսես չի։

Ըսես ա.- Ըստ եղ հու՞վ ա եկալ, հու՞ չի եկալ,- տո̀ռնը պնա̀ս ա, էտ թիլին ճոնդը տսնաս ա, վեր հսնես ա մին օրիշ տեղ։ Յոր ա ունես էտ թիլին ճոնդը կյա̀ս, տո̀ւս կյաս էտ օխտը ախպորցու տոնը։ Ախճիգյը պեց չընես։ Դովը մին էլ ա տո̀ռնը թըկես, ըսես ա. - Վեր պեց չըս ընես, մաննըտ տո̀ւսավը տո̀ւս կալ։

Էն ա ինիս քո̀ւրը տանը մինա̀կ նստած։ Տո̀ռնը թըկես ա, թա պեց ըրա։ Քու ախպերքըտ մին մուտանա յըն քցում մաննըտ։ Էտ ախճիդյը մաննը մկնես ա։ Էտ դո̀վը սկսես ա էտ ըխճկանը մաննը ծծելը։ Էնքան ծծես ա, վեր ախճիգյը ըշտըփես ա։ Դո̀վը քյիս ա։ Ախպերքը կյաս ըն տո̀ռնը պինա̀ս, նի մննես, տսնա̀ս ո̀ւրա̀նց քո̀ւրը ըշտափած։

Ետ ըն պիրիս, հըցնես ըն, թա.- Հո՞ւնց ա իլա̀լ։

Քո̀ւրը պտմես ա։ Ախպերքը կլխու յըն ընգնես, վեր էտ դո̀վին պեներն ա։

Ըստեղ տրանք մին պեն ըն սրքես,վեր դո̀վին կանչին, սպանին։

Յոր ըն ունես օխտը ղզղան ճո̀ւր իփըցնես, մին մեծ վեր կտրես մղակեն ըռաշկին։ Դո̀վին ծեն ըն տաս միթա̀մ ղոնաղ, դո̀վը կյաս ա, լիա̀ կարպետը կոխելիս կլխեն յրան ընգնես ա վերեն մաչը։ Ախպերքյը էտ օխտը ղզղան իփած ճո̀ւրը ըծես ըն կլխեն։ Վեղըն էլ կլխավը յրա տաս, ըստըկցնես։ Կյարո̀ւնք ա կյա̀ս։ Էտ ախճիգյն ուզես ա լա̀վ ժնգյա̀լա̀վ հաց թխե։ Էտ դո̀վին ապրած տեղը խե լա̀վ ժա̀նգյա̀լ ա ինիս։ Քըղես ա կուտապ թխես։ Ո̀ւրո̀ւլգյո̀ւնը ախպերքյը կյաս ըն, ժընգյա̀լա̀վ հաց ա տաս ախպորցը։ Մին էլ տըսնաս ա վեր ախպերքյը վեչխար ըն տռնաս, օխտըն էլ լոխ վեչխար։ Քո̀ւրը լա̀ց ա ընիս, գյիդա̀ս չի, թա̀ հինչ անե։ Ճարը կըտրած ամուն օր օխտը վեչխարնեն առաչն ըրած տնես ա ըրըծցնես, լաց ինիլա̀վ, էլա պիրիս տոն։

Մին օր էլ վեր իտի լա̀ց ինիլավ էտ վեչխարնեն տընես ա պըհես, մին ղուշ տսնաս ա վեր էտ ախճիգյը լա̀ց ա ինիս, ղուշը լո̀ւզո̀ւ առած հըցնես ա.- Ա՛յ ախճիգյ, խե՞ յըս լա̀ց ինիս։

Էտ ախճիգյը կլխավը եկածը պտմես ա էտ ղուշեն: Էտ ղուշը տրան մին թեփուռ ա տաս, ըսես.

- Էտ թեփուռը տար թոշի ճըրȟւմը, քսե ամման մինին աշկերը, աղննական ըն:

Էտ ախճիգյը էտ թեփուռը յոր ա ունես, կյաս տոն: Էտ թեփուռը թոշիս ա, քսիս վեչխարներեն աշկերը: Ըտրանք մարթ ըն տըռնաս:

Քȟւրը սկսես ա ուրխանալը, վեր ȟւրա̀ն ախպերքը աղացալ ըն:

Ախպերքը ըսես ըն քուվերը.- Դե վեր իտի յա, եկեք քյնինքյ մեր ծնողներեն կոխկը:

Ըտրանք եր ըն կընաս, քյիս: Քյիս ըն, քյիս տȟւս կյաս ȟւրա̀նց տոնը, տըսնաս մարը պըռաված:

Էտ պառավը հրցնես ա.- Բալա, պա տուք հու՞ վըք:- էտ տղեքյը ըսկսես ըն պատմիլը: Էտ պառավըն էլ ȟւրա̀ն կլխավըն անցկացածն ա պըտմես: Ըստեղ մարը կլխի յա ընգնես, վեր ըտրանք ȟւրա̀ն տղեքյը նան ախճիգյն ը՛ն: Տրանք էլ կլխի յըն ընգնես, վեր տա ȟւրա̀նց մարըն ա՛: Ըտրանա ետը լոխ մին տեղ սիրավ, միչև ȟւրա̀նց գյանքեն վերչը ըպրես ըն:

Երգինքան իրեք խընձȟր ա եր ընգնիս. մինը՝ ըսողեն, մինը՝ կյրողեն, մինն էլ՝ լըսողեն:

38.ՔԱ̀ԼԱ̀ԳՑԲԱՋՆԵՆ

Միետե մին մարթու տոն տո̀ւզնընաս ա։ Մին քշեր հա̀մին էտ մարթտ եր ա կնաս, էրկու եզն ա ինիս, մինը յոր ա ունես, տնես բազարը, թա ծախե։ Իրեք քյո̀սա̀ ո̀ւրո̀ւր ըն ընգես, վեր եզնը դնու կյինավ ինքյ օնին։

Մին քյո̀սա̀ մի խիլլա̀ շրտու-մորտե յա ընես, շրտու-մորտե, ախրը կյաս էտ մարթիտ ըսես,- Ա՛ հընգեր, էտ դանան հի՞նչավ ըս տաս։

Համին էտ մարթտ մին խիլլա̀ մտծես ա, մտծես, ըսես, - Պա, յըես եզն ըմ պերա՛լ, եզն են դանան թողալ ըմ կյումումը, էս խե՞իտի յա ասըմ։

Մի խիլլի վախտ անց, քյո̀սեն էն մին հնգերը տսնաս ա, վեր ռաշկենը խեր չըրավ, ինքյը կյաս ա ժուլիկվաչի ըսես, - Ա՛ հընգեր, էտ դանան հի՞նչավ ըս տաս, հո՞ւնց ըս տաս։

Էտ մարթտ առռե շըշկլվես ա, գյիդա̀ս չի, թա հինչ անե, ըտրա ջողաբը կրես չի տա, դայամիշ ա ինիս, մնաս դիքյ վըեննը։

Մին խիլլա̀ կնալանը ետը զինքյը կլո̀խն ա հվըքես, ըսկսես ինքյը-ինքյը քնենքյ անելը, թա տըեսնա դա՞նա յա պերալ բազար, թա եզնը։

Համին էտ վախտըտ քյո̀սին իրեքինջի հընգերը կյաս ա, ըսես. - Դայի, էտ բիժին հինչա՞վ կտաս, յըես մո̀ւշտա̀րի պիրիմ, վեր ծախիս։

Էս դո̀նումըս էտ մարթը առռե դո̀ւզն ասած շշկլվես ա։

Պատառ կնաս ա, ինքյն-ինքյը մտծես, ըսես ա.- Բա̀լի շիլ ըմ ընգալ, դանան պերալ եզանը տեղ։

Պատառ շրտը-մորտի յա ընես, վերչը էս մըեծ եզնը դնու կյինավ տաս քյո̀ւսեն։ Փուլըն էլ խրջիս չի, իրեսեն ճիրա̀վը ծլիս ա, տինիս ջըբումը, ընդնես հղեն, կիճի-կիճի բիդի շենը կյաս։ Ամմա հղեցը կյաս տեղը, տեղը տեղ չի տաս, օժով ընգնես ա տոն։

Մին խիլլա̀ վախտ ըսկի ըտրա միար խուսես չի։ Կնեգյը վըետները լվընաս ա, փթրոկ ա ինիս ըրած, մին աման նի յա քցես, տաս մարթեն։ Մարթը ուտես ա, նի միննես տըեղը։ Ամմա տըեղմը քոնը տնես չի, մըտածմունքը ըտրան վեր ա կուխես։

Ախրը էտ մարթտ հա̀լա̀ հինչու ըրալ ա, ըրալ չի, էտ ո̀ւրա̀ն տըեղը, կնգանը յրան էլ կզնվես ա, ըսես.- Ճրաքյը նի կցրու, քյինի տես դանան ըմ տարալ բազար, թա եզնը։

Կնեգյը լաչառ-հայաըզեն մինն ա ինիս, էտ լհա̀ վեր մարթը էտ խոսկը ըսես ա, ըսկսես ա ծվծվալը. - Հա՛ քու մար, հա՛ քու հա̀ր, տըես հա̀լա̀՛,

հո՛ւնց թա դանան ըմ տարալ, թա՛ եզնը, շոն- շան տղա, էն մեծ եզնը դանու կյինավ ծախալ ըս, եկա՛լ, ըսօրե աշխատանքիտ անըմը շատ ա իլա՛լ, քյեցալ ըս բազար ինձ հետե դրեյի կյործա՛լ:

Կնեզյն էլ ա մնաս շշկլված:Մին խիլլի վախտ մտծես ա, վերչը ճրաքյը նի կցնես, քյիս յշիս, տըեսնա բա՛լքյա՛ս շիլ ա ընգալ մարթը, դանան տարալ բազար:

Էտ վեր քյինա՛ս ա կյումը, տըսնաս ա եզնն ա տարալ, դո՛ւզ ՛վեր դո՛ւզ տարալ ա դնու կյինավ տվալ, եկալ, թո՛ւթո՛ւմնը թութմիշ ա ինիս: Կյաս ա, տըեղը տըեղ չի տաս, նի յա մընննես տըեղը քոնը տնես չի՛, թա քոն ինի՛:

Քշերը շընըմուռտառ ըրըզնե յա տըսնաս:

Մին թա՛իրա՛վ մարթը կնեզյ էտ քշեր լո՛ւսըցնես ըն:

Ըռութանան մարթը եր ա կընաս, խելքը կլո՛խը հվըքես, տսնաս, վեր ըսկի ո՛ւրա՛ն ըրածը մին պեն չի՛, մրթըվարի չի՛: Ըսկսես ա կընգանը քաթ անելը, թա հո՛ւնց ա պտահալ:

Ըսես ա.- Տըեռած պեննին հետան խոսիլ չըն, հինչու տըեռալ ա, տըեռալ ա, պրծալ.-Կնգանը ըսես ա.- Փուլը խարջիլ չպիտինքյ, պահիլ պիտինքյ, բա՛լի կարիմ համին էտ քյո՛ւսենո՛ւն քա՛լա՛գյ կյամ:

Էն մին օրը եր ա կնաս, քյո՛ւսեննուն տված փուլը յոր ունես, հղե ընիս դիբի բազարը: Վեր հսնես ա բազարը, տսնաս ա, համին քյուսեննեն հեն ըն մին քյավթառ ծի տո՛ւս կալած բազարը, թա ծախին: Մին խիլլի կնաս ա, համ էլ մտծես, թա հունց քյա՛լա՛գյ կյա էտ շան տղըոցը: Վերչը էտ մարթտ ըսես ա, վեր բիդի քյա՛լա՛գյ կյա:

Մուտունաս ա ըտրանց նեստա, ըսես. - Էտ քոռակտ հինչա՞վ կտաք, հո՞ւնց կտաք:

Քյո՛ւսեննեն, վեր տսնաս ըն էտ մուշտարին շատ ա ճո՛ւր, ուրխընաս ըն: Ըսես ըն. -Դա էս քյավթառ ծիս, վեր սկի բաշիր չընես, թա կյորի օտե, հո՞ւնց լավ մարթ ա, վեր քուռակու կյինավ ինքյա ունես:

Էտ մարթտ դնեն հախեն նստա մին խիլլա խրեզյ տաս ա, ծին ինքյ ունես, մնացած փուլն էլ տաս ա ռա՛նգյ ինքյ օնես, տնես: Մին հեռու տեղ, մին յաքանա դո՛ւզո՛ւմ, ծին կպես ա, ռա՛նգյ տաս, եր օնես տնես բազար:

Քո՛ւսեննեն ուզիս ըն թա՛զա՛ լա՛վ ծին ինքյ օնեն:

Շոռ ըն տաս, շոռ, կլո՛խ չըն ընզնես, թա ռա՛նգյ տված ծին ո՛ւրա՛նց քյա՛վթա՛ռ ծին ա: Ըտրանք իրեք տակ փուլ ըն տաս, ծին իքյ ունես:

Էտ մարթտ էլ փուլը յոր ա ունես, դիբի շենը փխչիս:

Քո̈ւսեննն ծին տնես ըն կպես, կյորեն քցես առաշկը: Մին խիլլա̈ վախտ կնաս ըն, ետնան քյիս տսնաս կյորեն հունցը առաչ ըն քցալ, ընդի, ծին պոռշն էլ ա նի չի տվա́լ:

Հա̈մին էտ վախթտ կլո̈խ ըն ընգնես, վեր էտ մարթտ ո̈ւրա̈նց քյա̈լա̈գյ ա եկալ: Ըտրանք մսլահաթ ըն ընես, վեր հնգեր-հնգեր քյինին համին էտ մարթիտ սպանեն, փուլը յոր օնեն:

Կնեգյը ըսկնաս ա, վեր կյլական ըն մարթին ըսպանեն, մարթին կնդ-կնդ պտմես ա:

Մարթը վեր անջուկ ա ունես, պրծնես, եր ա կնաս, քյիս ծմական էրկու ըլըբաստրակ փռնիս, պիրիս, մինը կրըվաթեն վըեննան, կպես, մինը յոր ունես, քյիս հո̈նձ :

Քյո̈ւսեննն կյաս ըն, ըտրա կնգանան հըրցնես: Կնեգյըն ըսես ա, վեր մարթը հեն ա հունձատեղ: Հղեն նշանց ա տաս, ըտրանք քյիս ըն: Վեր տեղ ըն նիհսնես, էտ մարթետ ըսես ըն. - Քյըեզ ըսպննական ըք, մեր տված փուլը մըեզ տոր:

Էտ մարթտ ըսես ա. - Պատառ դինջացեքյ, հաց կերեքյ, քշերս էլ քոն կինիքյ, ետնան էլ հինչ կանիքյ-կանիքյ»- ո̈ւրա̈ն նհետ տարած ըլբաստրա-կեն մինին ըսես ա. Քյինի կնգանս ասե, հաց պըդրաստե, տեղ շինի»:

Ըտի յա ըսես, ըլըբաստրակը պեց թուղես: Ըլըբաստրակը պեց ա ընգնիս, թլակա պըրծածու նըման յաբանա դո̈ւզնըվեր փխչիս:

Ո̈ւրո̈ւզյո̈ւնան չախը ըտրանք կյաս ըն տոն, տսնաս կնեգյը հացը խու-րուցյնեն հըզըրած, մնաս ըն մաթ մնացած, վեր տեսնաս ըն ըլըբաստրակը կրըվաթան կապած: Կլո̈խ չըն ընգնես, գյիդա̈ս ըն, թա̈ համին ըլը-բաստրակն ա: Ըսես ըն. - Հինչքան փուլ ուզիս ըս, տանք, թա̈քի էտ ափաթ պենըտ մըեզ յրա ծախիս:

Քյո̈ւսեննն մին խիլլի փուլ ըն տաս, ըլըբաստրակը յոր օնես, դիբի ո̈ւրա̈նց տոն հղե ինիս: Հղեննի ըլըբաստրակը պեց ըն թողես, թա խա̈բա̈ր տանե, տանան հաց ըղարկեն: Ըլըբաստրակը մին տըեղնըեր ճղես ա, ծըլկես: Ըտրանք ըսես ըն, թա տո̈ւզնըթո̈ւնան մըեռնին, վեր կյաս ըն տըսնաս հացը պադրաստ չի́:

Քյո̈ւսեննն են մին էլ ըն հզըվես, վեր կյան էտ մարթետ ըսպանին: Էտ մարթտ, վեր ըսկնաս ա, մին հավ ա փռնես մուրթես, ճղմաղենքյը ըռնա̈վ լցնես, քցես կնգանը ճիտը, համ էլ կնգանը սվրցնես ա, թա վեր ինքը ասե,

էս ըրա, էն ըրա, հանցու վեր կնեգյը ղասիդ տեղան ետըետե տո՛ւրո՛ւր կյա:
Քյո՛ւսեննեն կյաս ըն ըսես. - Քյըեզ ըսպնական ընք, տու մըեզ խա՛փա՛լ ըս:
Էտ մարթտ ըսես ա. - Եկեքյ հաց օտինք, զո՛ւրո՛ւց անինքյ, ետավ:
Կնզանը հըրըմըյես ա վեր փլավ շինի, ճաշ իփի: Կնեգյը ղասիդ տեղան ետըետե յա տո՛ւրո՛ւր կյաս: Էտ վախտտ էտ մարթտ ղա՛մա՛ն տընես ա, քսիս կնզանը վզին, ճղմաղենքյը կտրես, կնեգյը խըռխըռցնես ա, ստըստ մըռնես:
Էտ մարթտ մին թո՛ւթա՛գյ ա յոր օնես, տյնես կնզանը վզին փչես, կնեգյը լոք ա տաս, եր կնաս:
Քյո՛ւսեննեն մաթն ըն մնաս: Ըսես ըն. - Հինչքան ուզես ըս փուլ կտանք, թաքյ լի՛ա՛ էտ թո՛ւթա՛գյըտ մըեզ տաս:
Փող ըն տաս, թո՛ւթա՛գյը յոր ունես տնես: Կիճի հնգյերը տնես ա կնզանը վեզը կտրես, էտ թո՛ւթա՛գյավըտ փչես, ամմա կնեգյը եր չի կնաս: Էտ մտծես ա, ըսես. «Խե՞ բիղի յըես իմ կնզանս ըսպանիմ, իմ հնգյերս ըսպանի վեչ»: Թո՛ւթա՛գյը տաս ա հնգերեն, ըզետ տնես ա կնզանը ըսպնես, թո՛ւթա՛գյը տնիս վզեն, փչես: Կնեգյը յեր չի կընաս:
Էտ էլ էն մինին նման մտծես ա, ըսես. «Խե՞բիղի յըես իմ կընզանըս սպանիմ, էն մին հնգերս ո՛ւրա՛ն կնզանը սպանե վեչ»:
Թո՛ւթա՛գյը տաս ա էն մին հընգերեն, էտ հընգերտ տնեսա ո՛ւրա՛ն կնզանը ըսպնես, թո՛ւթա՛գյին լո՛ւլա՛վը փչես, կնեգյը ետ չի կյաս:
Քյո՛ւսեննեն կյաս ըն ո՛ւրո՛ւր պտմես, ըսես. - Էս դո՛նումն էլ էտ մարթըտ մըեզ լավ քյա՛յա՛գյ եկավ:
Ըտրանք մսլըհաթ ըն ընես, վեր քյինին, էտ մարթեն ըսպանեն: Էտ մարթտ էլ, վեր ըսկնաս ա, կյաս ա ո՛ւրա՛ն բխչումը մին փոս ա փորես, նի մննես մեչը, կնզանը ըսես. - Ա՛ կընեգյ, վեր կյան հրցնեն, կասես մըեռալ ա:
Քյո՛ւսեննեն կյաս ըն հրցնես, կնեգյն ըսես ա. - Մեռալ ա:
Ըտրանք փոխըրփեշմա՛ն ետ ըն տոնաս, քյիս ո՛ւրա՛նց տները: Էտ մարթըտ էլ տուս ա կյաս, ըսկսես ըն մինտեղ լա՛վ ապրելը:
Ժողովուրթեն խոսկը ըտրա հետե ըսես ա. «Վեր կտրե, խոր կտրե, տու վըս մեչը ընգլական»:

39.ԲԱԴԱՐԱՔՅԸ

Մըհետե մին մարթ հեն ա ըլա̈լ մին տեղավ քյիս: Տըեսալ ա հեն ըն ըտեղ մին տեղ բադարաքյ ընես: Հա̈մին էտ բադարաքյ անողը մին հարուստ մարթ ա ինիս, ըտրա հա̈րը մեռած ա ինիս:

Էտ մարթտ վեր մտունաս ա, հա̈մին էտ բադարաքյին տարը ըտրան ըսես ա. - Տու վէլ բադարաքյին մասնակցե:

Էտ մարթտ էլ քյիս ա բադարաքյին մասնակցե: Վեր բադարաքյը պրծնես ա, լոխ հվքվես ըն, թա քյնին տոն, էտ մարթտ էլ ա եր կնաս, թա հղե ինի:

Բադարաքյին տարը ծեն ա տաս ըտրան, տանես կոխկը:

Մին խիլլի վախտ ըտրա նհետ հըրցըփորց ա ընես, վերջը վեր պրծնես ա, պըզվես ա, վեր ղոնաղը շեննին խլնք-խելունք մարթկանցան մինն ա:

Բդրաքյեն տարը ըսես ա. - Լավ, վեր խելունք ըս, ասե տեսնամ իմ հա̈ր տրախտըն ա քյեցալ, թա տժոխկը:

Էտ մարթտ ըսես ա. - Ըզետ ընդի պեն ա, վեր Ղարաբաղու ճիրա̈ն խմիմ վեչ, կարիլ չըմ ասիմ:

Բդրըքյատարը քյիսա կուպրունը պտռես, տսնաս մաչին արաղը պրծած:

Մին պուշ մարթ ա ըղրկիս, քյինի տանան արաղ պիրի: Մին խիլլի վախտ անց ըրաղու քյեցած մարթը կյաս ա շենը, մին սհաթումը արաղը յոր ունես, քյիս:

Բդրաքյին տարը ըրաղին բոթուլը յոր ա ունես, մին ստաքան ըծես, տաս համին էտ խելունք մարթիտ, ըսես. - Խմե, ամմա բիդի դո̈ւզն ասիս, թա իմ հա̈ր տըրախտը քյեցավ, թա̑ տըժոխկը:

Էտ մարթը խմես ա, մին խիլլի շուլի-մուլի ընես, հա̈լա խուսես չի: Խելունքը ժո̈ւլիզյ մարթ ա ինիս, էտ ո̈ւրո̈ւր ա ընես ջողաբը, ըսէ. - Հղե յա իլա̈լ, դիբի տըրախտը քյինի՛:

Բդրաքյեն մեծը ըսես ա. – Ջհա̈ննա̈մը-գյո̈ռը, մին էլ ըմ արաղ տըլական, թա̈քյ լհա̈ դո̈ւզն ասի, թա̈ ըշտեղ քյեցա՛վ:

Մին ստաքան էլ ըծես ա, տաս, էտ մարթտ խմես ա, պրծնես, մին խիլլա̈ մը տըծես բըդըրըքյատո̈ւրո̈ւչը ջողաբը տաս. - Նի յա հսալ, հա̈լա̈ գյիդա̈ս չըմ, վեր հըղըցավ ա քյըեցալ, բդի տժոխկը տանող հըղըցավը, թա̑ բդի տրախտը տանող հըղըցավը:

Բղրաքյատարը մին ստաքան էլ ա ըծես, տաս, հանցվեր գյիղն, թա հնրը շտեղ քյեցավ:

Խելունքը խմես ա, պրծնես, ըսես. - Եկալ ա, հեն ա մին փադ եր կնլնծ մեհետ տժոխկեն տըռանըն ա թխես, մեհետ տրախտեն:

Բղրաքյատարը մին ստաքան էլ ա ըծես, տաս, համ էլ հըրցնես. - Բա հի՞նչ տեռավ, իտի շտեղ քյեցավ:Խելունքը ետ ա տըռնաս, ըսես. - Դե հնլն տըռները պեցալ չըն, ամմա ինքյը պատեն յրա վեննը կացած ա, գյիդուլմ չի, թա վե՞ր թրնփնվ լըք տա:

Բղրըքյատարը ըսես ա. - Վնաս չօնէ, մին ստաքան էլ կտամ, թնքյ լհն դուլզն ասես, թա շտեղ քյեցավ:

Հը՛: հի՞նչ տեռավ, տըժոխկըն ընգավ, թա տրախտը:

Վերչը մին ստաքան էլ ա տաս: Խելունքը խմես ա, ետնան ըսես. - Լըք տվավ, թրմփոցը ըսկացե, ամմա թա գյիդուլմ չըմ տժոխկը ընգա՛վ, թա տրախտը:

Խելուքը մին ստաքան արաղ էլ ա խմես, ըսես. - Տրախտը ընգավ:

Էտ մարթտ պիրիս ա նորու բաղարաքյ արքես, ժողովուրթ կընչես, ըսես.- Իմ հար տրախտն ա ընգալ, ա՛ ժողովուրթ, քյեփ ըրեքյ: Էտ մարթիտ մին լնվ պաղեվ ա տաս:

Էտ մարթտ եր ա կնաս, քյինիս ուլրննց տոն, կնզանը քաթ ընես, վեր իտի քյնլնզյ ա եկալ:

Մին խիլլա վախտ ընցնես ա, մարթըկնեզյ լնվ ըպրես ըն:

Մին օր կնեզյը հեն ա ինիս տանը, տըեսնաս ա մին մարթ եկու:

Տուլս ա կյաս տոռնը, յիշիս, էտ անծանոթ մարթտ ըսես ա. - Ա՛ կնեզյ, մարթտ տանն ա՞:

- Տանը չի, ախպեր:

- Դե, քյինի ասե կյա տոն, նհետը կործ օնիմ, հարկավեր ա:

Կնեզյը մին խըխու ղրկես ա մարթին հետան: Մարթը վեր հըսկնաս ա պլուճիկնեն ուլրուլ ա տաս, գյիղնս ա, վեր էտ նաղլետ քամակը լնվ չի իննական:Վերչը կյաս ա, տսնաս համին էտ բղրըքյատարը:

Էտ մարթտ ըսես ա. - Ըրազումս տեսալ ըմ հնրս եկած, շատ բեքյեփ, նհետս մին խիլլի վախտ խոսալ չի: Ախրը մին խիլլի վախտ խռավ կնալանը ետը, օշը տեսն ա ըրալ, լնց ընելավ ասալ, վեր ընգալ ա տժոխկը, ըտեղ էլ ուլրնն դինջոթըն չըն տաս, գյիղնս չի, թա հո՞ւնց անե,

վեր ընգնե տրախտը։

Էտ խելուքը ըսես ա.- Ըստեղ արաղ բղի տո̀ւրո̀ւր կյա, վեր կարիմ մին պեն ասիմ։

Էտ մարթտ ճարը կտրած եր ա կնաս, քյիս, մին կոժա արաղ յոր ունես, կյաս։ Մին ստաքան ըծես, տաս խելուքին։

Խելուքը ըսես ա. - Վեր խմեցե, քու հա̀ր տեսե. շատ տխուր ար, ըսեցե եք ծեռքատ փոնիմ, տանիմ տրախտը, օզից վեչ, լա̀ց իլավ։ Ըտրանա ետը խոսից վեչ։

Ընդրանա ետը էտ խելուքտ մին ստաքան էլ ա խմես, ըսես. - Քու հա̀ր տրախտան մուտացավ, ամմա վըեննը տափը թակից, թա յըես քյինա̀մ ըմ քյո̀հնա̀ տըեղս։

Մին ստաքան էլ խմելանը ետը, խելունքն ասից. - Վերչը լա̀վ կինի, վերչը տրախտը կընգընի́ ։ Էտ քյո̀ւհի մարթը հվըտաս ա։

Մինենգյ լոխչին հաճողվես չի, իտի պեներ անին։ Ժողովուրթը ըսես ա. «Սերը սվերը կօտե»։

## 40.ԿՅՈՒՔՅՈՒՆ ՇԱՎԹԱԼԸ

Ինիս ա, չինիս մին մարթ: Ըտրան ինիս ա մին սուրու խոխեքյ: Մին տարե սով ա ընգնես: Տա եր ա կնաս մին էրկու չվալ յոր ունես, քյինիս, թա դան պիրի, խոխեքյը պահե:

Շատ ա քյինիս, թա խրեգյ, էտ գյիդվալ չի, առաչը տուս ա կյաս մին բախճա: Ցեշիս ա, տսնաս շավթալոտը լիգյը: Ուզիս ա, թա չափարը կուտրատե, քաղե, բխչումը մին պառավ ա ինիս:

Էտ պառավը ըտրան վեր տսնաս ա, ծեն ա տաս կոշտը, թա, - Ախպեր, տու հըղըցու մարթ ըս, ամմա էն ա մթնալ ա, մըհենգյաս տենը հի՞շտեղ բեղմա քյինիս, եք էս ուրուզունը շավթալոտը պահե, յըես քյինիմ տոն, էքյուց ուռութանա հացտ նան ճուրըտ յոր օնիմ, կյամ, ծառերը քաղինքյ, տննական ըմ ծախիմ, հիշքան ուզիս ըս, կեր:

Էտ մարթը ռազի յա կըենըմ, քյինիս ա բախճան, պառավը ըրխյին քյինիս ա տոն:

Կյուքյին ցիրեկավ աշկ ա ըծես ծոերեն, տսնաս ա վե՞րն ա լավ, վերն ա փիս:Քշերը եր ա կնաս ծառերը քղես, էրկու չվալը լըցնես, էշին պըռնես, քյինիս տոն: Խոխեքյը ըրմնաս ըն, թա էս հինչքան մեծ-մեծ դան ա, ամմա Կյուքյին ըսես ա, - Դան չի, շավթալ ա, կերեքյ:

Խոխեքյը ուտես ըն, տսնաս մաչին կորեզ էլ օնե, վխես ըն օտին, ըսես ըն. - Էս հի՞նչ պեն ա, վեր ըստի յա:- Ախեր ըտրանց տեղերը շավթալի ծառեր չի փսնես, ըտրա դարդան էլ ըրմնալի յա ուրանց հետե:

Տնացեքյ հրցնես ըն, թա.- Պա պառավը քյըեզ հու՞նց դավերյա ըրավ բախճան:

Կյուքյին սկսես ա նաղլ անելը.- Վեր նի մտե բախճան , պառավը պերավ միկա ինձ տվավ, թա կեր: Եր կալի տրի պերանըմըս, մըն էլ քցեցի կասիմ. «Ըստ ի պենը մունք վեր օտինք, յա կմեռեինքյ, յա կպլանանք: Պառավ, յըես տի պեները օտել չըմ, հալա մաչին էս ա մին պեն էլ կա, վխես ըմ տրաքե, ինձ սպանե, ծեռքըս էլ նի չմ տա՜լ: Պառավը հվտացալ ա, դավերյա ըրալ, ինքյը ըրխյին քյըեցալ տոն, յըես էլ քմակեն եր ըմ կացալ, քաղալ, եկալ մեր տոն:Պառավը ուռութանա կյաս ա, տսնաս վեչ Կյուքյի կա, վեչ էլ շավթալ: Պըլընաս ա, սկսես ծըվծըվալը, ամմա դե պենը պենան ընցած ա ինիս, ճարը կտրես ա, սուս ա ընես:

## 41.ԱՐՋԻՆ ՏՂԱՆ

Իլա՜լ ա՜, չիլա՜լ, մին թաքավէր ա իլա՜լ: Էս թաքավէրեն մին մաղար ախճիգյ ա իլա՜լ: Ախճիգյը վէչ մին տեղ մինա՜կ քյինալիս չի իլա՜լ:

Մին օր հինգէրունցը նհետ քյինա՜մ ա, վէր բաղէրը ման կյա: Էր ա ըննո՞ւմ ծառան, թա խընձո՞ր քաղի, էտ ղաթումը մին արչ ա կյամ:

Լոխ ըխճկէրքը փախչում ըն: Էտ ախճիգյը շատ ա վախում, վէր ար չին տեսնում ա, ծառան վէր ա ընգնում: Արչը շլակում ա, փախչում դիբի ո՞ւրա՜ն պո՞ւնը:

Էտ ախճիգյը արչին քշտեն շատ ա կենում, թա խըրեգյ ա կենում, մին տղա յա ինո՞ւմ: Էտ տըղան վէչ թա օրէրավ ա մըծանում, այլ ժամէրավ ա մըծանում:

Վէր մըծանում ա, խելքը կտրում ա, վէր ո՞ւրա՜ն մարը կյէրի յա արչին քշտեն:

Մին օր, վէր արչը տո՞ւս ա կյամ, քյինում վըէրսի, էտ կնեգյը նան ո՞ւրա՜ն տղան ճըննապար ըն ընգյնում, վէր քյինա՜ն ո՞ւրա՜նը տոն: Շատ ըն քյինո՞ւմ, թա խըրեգյ ըն քյինո՞ւմ, մին էլ ետ ըն եշում, տըեսնում արչը կյամ ա, հունց ա կյա՛մ, աստված հեռու պահե՛:

Տղան մորն ասում ա. - Վախիս վէ՛չ:

Արչը վէր կյամ ա, մուտանում, տղան արչին սպանում ա: Մարըտղա շարունակում ըն ո՞ւրա՜նց ճըննապարը: Վէր քաղաքան մուտանում ըն, սաղ ժողովուրթը աշկալո՞ւսանք ըն տամ թաքավէրեն, ասըմ թաքավէրըն ապրած կըենա, ախճիգյտ կյամ ա, մին տղա հետան:

Վէրչապես մարըտղա հըսնում ըն թաքավէրեն տոնը: Թաքավէրը շատ ա ուրխանում:

Մին քանի ժամանը ետը տղան տո՞ւս ա կյամ հայաթումը խաղ անե: Խաղ անելիս խըլխոցը կլխընեն կըտրում ա, թող անում:

Էս վէր ժողովուրթը տեսնում ա, կյամ ա թաքավէրեն կնգանը ասում: Կընեգյն էլ մարթին ա ասում:

Թաքավէրը մտածում ա, թա հո՞ւնց անե, վէր տրան կուրցնե: Էր ա կենում տրան ղարկում փաղու մին ինդի ծմակ, ըշտեղ վէր կյո՞ւլէր, ջանավարնի կան: Մին խոսկավ ընդեղ քյինողը ետ չի կյամ: Էտ տղան արաբան լըծում ա եզնէրավը, ճըննապարվում: Վէրչապես քյինում ա, տեղ հըսնում, մին արաբա փա՜դ անում, վէր եզինքը լծե կյա, տեսնում ա եզանը

մինը կյո՛ւլերը կերած: Ցրա յա հըսնում,. մին ջանավար փռնում, պերում եզանը տըեղը լծում, ճընապարվում դիբի ո՛ւրա՛ն քաղաքը:

Թաքավերը վեր տեսնում ա, շատ ա զարմանում, վեր սաղ, սալամաթ կըրացալ ա կյա:

Ժողովուրթը վեր ջանավարին տըեսնում ա, շատ ա վախում:

Կյամ ըն թաքավերին դանչանք անում: Թաքավերը էտ տղեն խնթրում ա, վեր ետ տանե ծմակումը ջանավարը պեց թողե: Էտ տղան յոր ա օնում, տանում, թա թողե ծմակումը: Էս դո՛նըմ թաքավերը նան ախճիգյը մտածում ըն, թա սաղ սալամաթ էլիա կյալու յա, մին օրիշ հնար ճարին:

Մարը որոշում ա, ասում,- Ցըես սոտ-սոտ հիվանդանամ, ասելու վա, «Հի՞նչ ըս օզում», յըես էլ կասիմ, «Զո՛ւՄրո՛ւտ դո՛ւշին ծո՛ւն»: Տրան հետե էլ կքյինի, կմնա ընդեղ, մունք էլ կպրծնինքյ ընդրանա:

Տղան վեր կյամ ա, մարը սոտ-սոտ տեղան տնքտնքում ա:

Տղան ասում ա, - Հի՞նչ ա պտահալ:

Մարն ասում ա.- Հիվանդացա լ ըմ:

Տղան ասում ա, - Շտահըտ հի՞նչի յա տամ:

Մարը ետ ա տեսնում, թա, - «Զո՛ւՄրո՛ւտ դո՛ւշին ծվին, մինը ինի օտիմ, կլըվանամ:

Տղան ասում ա, -

- Պա էտ ա՞ մին պե՞ն, էս սհաթիս քյինիմ հշտղա վերե յա ճարիմ, պիրիմ:

Տղան մին քանի հաց ա յոր օնում, հըղե ընզնո՛ւմ:

Շատ ա քյինո՛ւմ , խրեզյ ա քյինո՛ւմ , շատ նան խրեզյը աստուծ կզյիդա, մին էլ տըեսնում ա մին մարթ իրեք ծառ ծեռքին, խըղըցնում ա:

Էտ տղան շատ ա զարմանում, ասում. - Ա՛յ մարթ, էտ ծառը խե՞ իտի յըս անում:

Էտ մարթն ասում ա. - Լըսալ ըմ էն քաջ տղին անա, ըստ ի յըմ անըմ, եք կըռեվ անինքյ, թա յըես հաղտի՛մ, յըես շտեղ քյինիմ, տու ինձ նհետ կյաս, թա տու հաղտիս, տու շտեղ քյինիս, յըես քյըեզ նհետ կյամ:

Ստեղ կըռեվ ըն անըմ: Քաջ տղան հաղտում ա: Էս մարթը ըտրա նհետ մին տըեղ շարունակում ա ճընապարը:

Շատ ըն քյինո՛ւմ , թա խրեզյ ըն քյինո՛ւմ , մին էլ ըն տըեսնում մին մարթ ճըղացու քարեր ծեռքեն խըղըցնում ա: Արչին տըղան ըստրա նհետ էլ ա

համին էն պայմանավը կըռեվ անում, հաղտում։ Էս մարթին էլ նհետը յոր օնըմ, քյինո՛ւմ։Քյինո՛ւմ ըն, քյինո՛ւմ , մին էլ ըն տըեսնում, մին մարթ, մին խիլլա՛ ծտեր առաչըն ըրած տես ա քշում, տեն ա քշում։ Էլա համին էն պայմանավը արչին տըղան ըստրա նհետ էլ ա կըռեվ անում, ինքյը հաղտում։

Չորս հնգյեր մինտեղ շարունակում ըն ո՛ւրա՛նց հըղեն։

Քյինո՛ւմ ըն, քյինո՛ւմ , շատ ըն քյինո՛ւմ, թա խրեգյ ըն քյինո՛ւմ, հըսնում ըն մին ծմակ։ Էտ ծմակում մին կուճուր տոն ա ինո՛ւմ , նի յըն միննում էտ տոնը, տեսնում տերտակ։ Որոշում ըն չորս հոքի էտ տանը կենան, հերթավ քյինին վըերսի։ Ծեքյը վեր տամ ա, վեր լո՛ւսանում ա, իրեք հոքի քյինո՛ւմ ըն վըերսի, մինը տանը կենում ա։ Էտ տանը կենողը տոնը հըվաքում ա, սըրփում, խորագյը պադրաստում, ամեն հինչը պադրաստում, որ հնգյերունքը պիտի կյան, օտին։

Մին էլ ա տըեսնում մին օշափ եկավ, ասից.- Խորագյ տոր օտիմ։

Էտ հնգյերը մին տալերք խորա՛գյ ա քցո՛ւմ, տամ ո՛ւրա՛ն, թա օտէ։

Օտում ա, պրծնում, թա. - Տա իմ պենս չի, ըղըանը տեսը տոր։

Տղան վախում ա։ Օշափը ըղըանը առաչին ա տինո՛ւմ, օտում, պրծնում, քյինո՛ւմ ։ Տղան թա՛զա՛ղա՛ն սկսում ա խորագյ պադրաստելը, հնգյերունքը կյամ ըն, թա. - էս հի՞նչ պեն ա, վեր միչև մհենգյ խորագյը պադրաստ չի։

Էտ տանը մնացած հնգյերը մըհանա յա քցում, թա հաճողվալ չի։

Էն մին օրը համին էտ պենը էրկու հնգյերունցը նհետ ա կա դարվում, իստի լոխ էլ մինը մինին անա կյեղում ըն էտ պենը։ Մին օր էլ հերթը հըսնում ա էտ տղեն։ Նա տոնը սըրփո՛ւմ ա, հվաքում, խորագյը պադրաստում, տըեսնում օշափը եկավ։

Օշափը կյամ ա, թա. - Պատառ խորագյ տո, օտիմ։

Էտ տղան մին տալերք քցում ա, ընդըան ըռաշկեն տինո՛ւմ ։

Օտում ա պրծնում, ասում,- Էտ իմ պենս չի։

Վեր իտի յա ասում էտ տղան ընդրան հունց թխում ա, վեր վեր ա ընգնում, թոլ ինո՛ւմ։ Օշափը թոլ ա ինո՛ւմ, էտ տղան հետան։

Քյինո՛ւմ ա, թա տըեսնա հըշտեղ ա ընգալ։ Օշափը քյինո՛ւմ ա, ընգնում մին ծակ։ Էտ տղան ետ ա կյամ տըեսնում հնգյերունքը եկած։ Պատմում ա ո՛ւրա՛ն տըեսածը, ասում, - Խե՞ յըք տուք ինձա՛նա՛ կյեղալ էտ պեները։- Հիբը վեր տաhանք հաց ըն օտում, պրծնըմ, էտ տղան ասում ա,-Եկեք քյինինք,

տեսնանք էտ օշափեն:

Եր ըն կենում չորս հոքի քյինում , վեր նի մըննին վերին մեչը:

Սվթա֊ հնգյերունց մինին ըն կախ տամ, հնգյերը սկսում ա ճըղճըղալ, ասում ա. - Էրի՛ց, էրի՛ց: Վեր իտի յա ասում, տո՞ւս ըն օնում:

Էն մին հնգյերնըն էլ ա իտի տեռնում: Իտի վերչը էլ կարում չըն, թա նի մննին, օշափեն տըեսնան:

Հերթը հսնում ա էտ արչին տղեն: Տղան ասում ա. - Տղերք, յըես հինչքան էլ վեր ասիմ «էրի՛ց», տուք ինձ հանիք վեչ, կախ կտաք:

Իտի հնգյերունքը կախ ըն տամ տղեն: Հինչքան կանչում ա, թա֊, «էրի՛ց, էրի՛ց», տրան մի՚լ չըն տնում:

Տղան տեսնում ա ըտեղ մին ճոկ աշխարք կա՛: Առաչին օթախումը տեսնում ա մին ղա֊շա֊նգյ ախճիգյ նստած, օշափեն կլ՞խը տրած գյ՞ւրգյ՞ւմը, օշափը քոն մտած: Էտ ախճիգյը վեր տրան տեսնում ա, սկսում ա վա յ-վա՛յ անելը: Ասում ա,- Ա՛յ տղա, սիրուն տղա, տ՞ւս եք, քյինի ըստղաս, քանի օշափը եր չի կաց ալ, վեր եր կենա, քյըեզ պըտըռնե կանե:

Էտ տղան լըսում չի, քյին՞ւմ ա էրկունջի օթախը, տըեսնում ա ըտեղ էլ մին էլ իվիլ ղա֊շա֊նգյ ախճիգյ նստած:

Էլհա էտ ախճիգյը ասում ա, - Ա՛յ տղա, տ՞ւս եկ, շ՞ւտ քյինի ըստղաս, թա չէ օշափը քոն մտած ա, եր կկենա, մըեծ պատառըտ անգուճըտ թողի:

Էտ տըղան էլհա էտ ախճիգյը թողում ա ըտեղ, նի մննում իրեքինջի օթախը, տըեսնում ըտեղ մին ախճիգյ ա նստած, վեր վեչ օտիս, վեչ խմիս, մինա֊կ էտ ըխճկանը եշիս: Էնքան ղա֊շա֊նգյ, իսկի չիլա֊՛ ծ:

Էտ ախճիգյը վեր տեսնում ա՛ էտ տըղեն, սկսում ա ախ քաշիլը,ասում ա. - Ղա֊շա֊նգյ տղա, էս սհաթես տուս եք, քյինի, թա չէ օշափը քանի քոն մտած ա, եք կկենա քյըեզ սաղ կ՞լ տա:

Տղան էտ ըխճըկանան օզում ա գյիդա֊, թա էտ օշափը քա՛նի օրավ ա քոն մտալ:

Ախճիգյը ասում ա. -Յըես քյըեզ մին պեն ասիմ, տու ըտրանավ հիշտ կսպանիս օշափեն: Հատե էտ օշափեն օձը էտ բոթուլումն ա: Վեր տանիս բոթուլը փշրնե անիս, տու կհախտիս օշափին:

Տղան մին չըրթմա յա թխում, բոթուլը փշուր-փշուր ա ինւմ, օշափը եր ա կենում, էտ տղեն նհետ սկսում կըռեվ տալ:

Քառասուն օր, քառասուն քըշեր կըռեվ ըն տամ: Տըղան վերչը հախտում ա ըտրան: Քյինում  ա էն մին օթախնին, լոխ օշափներին էլ սպանում, էտ իրեք ըխճկորանցը յոր օնում, վեր կյա, տուս կյա: Հնգյե-րունքը սպասելիս ըն ընո՛ւմ: Էտ էրկու ըխճկանը տո՛ւս ըն օնում, պրծնում, հերթը կյամ ա ամենաղա՛շա՛նգյ ըխճկանը, վեր պիտի տո՛ւս օնին:

Էտ ախճիգյը օզում չի, թա տո՛ւս կյա: Ասում ա. - Սո՛ւվթա՛ տո՛ւ տո՛ւս եք, ետնան՝ յըես:

Տղան մնամ ա զարմացած: Ասում ա, - Խե՞, հի՞նչու հետե: Ախճիգյը ասըմ ա. - Քու հնգյերունքտ, վեր յըես տո՛ւս կյամ, քյըեզ թողելու յըն ըստեղ, հինչքան անում ա, թա տղան առաչ տո՛ւս կյա, տեսնում չի, տղան օզում չի:

Ախճիգյն ասում ա. - Դե վեր իտի յա, յըես քյըեզ մին պեն ըմ ասում, մին ա քյըեզ թողելը թուղուլական ըն ըտեղ: Վեր մին խիլլա՛ կենաս, էրկու վեչխար ըն կյալո՛ւ առաչտ. Մինը՝ սըեվ, մինը՝ սպիտա՛կ, տու հա՛րա՛քյա՛թ կանիս սպիտա՛կեն յրա ընգնիս, վեր ընգնիս սպիտա՛կ աշխարքը: Ամմա թա ընգիս սըեվին յըրա, ընգելու յըս սըեվ աշխարքը:

Տղան հվատում չի, ասում ա.- Իտի պեն չինիլ, վեր իմ հնգյերունքս ինձ դավաճանին: Խե՞ կյիժվալ ըն, խե՞ ո՛ւրա՛նց մըեսը կերալ ըն:

Միվթա՛ էտ աղճիգյն ա տո՛ւս կյամ: Հերթը կյամ ա էտ տղեն: Հնգյերունքը քյա՛նդիրը քցում ըն, թա տո՛ւս օնին, դասիդ տեղան քյա՛նդիրը կեսումը կտրում ըն, թողում:

Տղան մնամ ա ընդեղ մտածմունքի մեչի: Նստում ա, քընենքյ անըմ:

Շատ ա կենում, թա խրեգյ ա կենում, մին էլ ա տեսնում էրկու վըեխճար, մինը սըեվ, մինը սպիտա՛կ, դոչիդոչի ընելով կյամ ըն: Տղան հա՛րա՛քաթ ա անում, թա սպիտակեն յըրա ընգնի, հո՛ւնց ա պտահում, հակառակու նման, ընգնում ա սըեվին յրա: Քյինո՛ւմ  ա, տո՛ւս կյամ սըեվ աշխարքը:

Ըտեղ մին պառավ կընգա տան ղոնաղ ա ընգնո՛ւմ: Էտ պառավեն ոչ մին պեն չի ինո՛ւմ , մինա՛կ ինքն ա կնա՛լիս ինո՛ւմ :

Էտ երգյիրումը ճո՛ւր չի ինո՛ւմ , ժողովուրթը միշտ մնում ա անճո՛ւր: Սա՛բա՛բը վեր ախպրին ակնումը մին օշափ ա ինո՛ւմ  նստած: Էտ օշափը միչև վեր մին խոխա չըն տանում, ռեխը քցում, ճո՛ւր չի տամ ժողովուրթին: Մին օր ճո՛ւր ստանալի հետե ժողովուրթը վեր ծարավ մըեռնի վեչ, բիդի

թաքավերեն ըխճկանը տանին, վեր օշափը օտե: Քշերավ սաղ ժողովուրթը կյամ ըն, մըժմնհիքը ծեռքներին: Թաքավերին ախճիգյըն էլ ա կյամ օշափան մուտանում, վեր օշափը առաչ ամման հինչավ լիգյը մըժմնհիքյը կո՞լ տա, ետավ ո՞ւրան: Արչին տըղյան դմստի օշափին սպանում ա: Ա՞րո՞ւնը ճըրին նհետ խառնվում ա: Թաքավերին ախճիգյը ծեռքը թաթախ ա անում էտ տղեն մաշկեն նշան անում, վեր ետնան ճնանչին:

Սաղ ժողովուրթը ուրխանում ա, ազատ ճո՞ւր ըն յոր օնում: Թաքավերը էտ գյիդմլմվ հրամման ա տամ, վեր օշափեն սպանողը կյա ո՞ւրան կոշտը: Էտ տղյան սըվթմ օզում ա, թա քյինի, մին էլ վեր սկանում ա, թա թաքավերը մին իմաստուն օխծ ա ղարկալ տները, վեր ո՞ւրմն ճարին, եր ա կենում, քյինում թաքավերին կոշտը: Թաքավերը տրան շատ վեսկե յա տամ, ճընապար տնո՞ւմ:

Էտ տղյան քյնմմ ա ախպո՞ւրը, թա ճո՞ւր խմե, տեսնում ա մին ծի օզից, թա ճո՞ւր խմի, ամմա ասից,- Ցըես վեր գյիղմմ, թա հուվ ա էս ախպո՞ւրը տո՞ւս քցմլ, յըես մին լմվո՞թո՞ւն կանիմ ընդրան:

Արչին տըղյան ետ ա տեռնում, թա, - Հի՞նչ կանիս, յըես ըմ ըլմլ:

Ծին ասում ա.- Հինչու սերտտ օզում ա, ասե, էս սհաթին անիմ:

Արչին տըղյան ասում ա, - Քյըզանա մին պեն չըմ օզըմ, լհմ թմքյ ինձ տո՞ւս պիրիս լո՞ւս աշխարհք:

Ծին ասում ա, - Դե վեր իտի յա, մաշկես նստի, յըես քյըեզ տանիմ:

Արչին տըղյան մաշկին նստում ա, ծին ըտրան տանում ա, մին ծառու տակե վեր տինում:

Արչին տըղյան շատ նղացած ա ինո՞ւմ, տա քնավ ա ընցնում: Աշկերը պենում ա, տեսնում մին Զո՞ւմրո՞ւտ դուշու ճըտեր ծվծվում ըն:

Մին օխծ տրանց մաչին ա ինո՞ւմ : Եր ա կենում էտ օխծին սպանում, մին էլ նորու քնավ ա ընցնում: Զո՞ւմրո՞ւտ դուշը կյամ ա, զյուղում ա, թա տա եկալ ա ճըտերեն օտի, յրա յա հանում, թա թեվավը թխե, սպանե, ճըտերը տիյերան ծվծվամ ըն, թա. - թխել միր, տա յա մըեզ ազադալ, խե՞ յըս թխում:

Էտ դմրո՞ւմը արչին տըղյան զո՞ւրթնմնում ա, վախում:

Զո՞ւմրո՞ւտ դուշը ըտրան ասում ա. - Վախել մեր, ասի տեսնամ, հի՞նչըս օզում, վեր յըես քյըեզ հետի անիմ:

Արչին տըղան ասում ա. - Քյըզանա կօզիմ, վեր ինձ տանիս, տ՞ւս պիրիս մեր վըեղը:

Ասում ա,- Քյինի օխտը շախկա մեջ ինքյ կալ, շտեղ ծըվամ, մինը քցի պերանս: Արչին տըղան եր ա կենում, քյին՞ւմ մեջ ինք օնում, նստում Ջ՞ւմր՞ւտ դուշեն մաշկեն:

Ջ՞ւմր՞ւտ դուշը թռչում ա: Ճընապարին շտեղ ծըվում ա, տա մին շախկա մեջ ա քցում ռեխը:

Հունց ա պտահում, տա մին շախկա մեջը ճընապարին, գյուդում չի, վեր ա քցում: Ջ՞ւմր՞ւտ դուշը վեր մին էլ ծվվամ ա, խեղճ տղան վետանը անա մեջ ա կտրում, քցում Ջ՞ւմր՞ւտ դուշեն ռեխը: Ջ՞ւմր՞ւտ դուշը դ՝ստի գյիդ՞ւմ ա, վեր տա էն մսան չի, լ՞ւզվին տակեն պահում ա:

Վեր կյամ ըն վեր կյամ, Ջ՞ւմր՞ւտ դուշն ասում ա, - Դե քյինի:

Տղան վեր քյնամ ա, դուշը տեսնում ա, վեր կըղլըգյի յա տամ, Ջ՞ւմր՞ւտ դուշն ասում ա,- Ետ տեռ ըստեղ:

Տղան ետ ա տեռնում, կյամ: Ջ՞ւմր՞ւտ դուշը լուզվին տական տ՞ւս ա օնում մեջը, կպցնում, ծին տամ ուրան, թա,- Դե քյինի:

Արչին տըղան շատ շունրակալ ա ին՞ւմ, օրախ-օրախ ճընապար ա ընգնում, քյըն՞ւմ դիբի ՞ւր՝նց օջաղը: Կյամ ա, կյամ, շատ ա կյամ, թա խրեգյ, մին էլ ա տըեսնում, մին ս՝ս ա կյամ: Կյամ ա տեսնում իրեք ախպերք ՞ւր՞ւր նիետ շատ փիս կըռեվ անըմ: Հըրցնում ա, թա պատճառը գյիդ՝:

Էտ իրեք ախպորը ին՞ւմ ա մին սուփրա, վեր ասիս. - Ա՛սուփրա, քյըզանա կօզիմ էս հինչ պեները,-դ՝ստի սուփրան լըցնըվում ա:-Ետավ էտ իրեք ախպորը մին գյ՝բ՝ յա ին՞ւմ վեր ասին. - Ա՛ գյ՝բ՝, քյըզանա կօզիմ էս հինչ երգյիրը տանիս, դ՝ստի գյ՝բ՝ն թռչում ա, տանըմ:

Ետավ մին ինդի շալվար նան ոտնաման ա ին՞ւմ, վեր մարթ կյենա, մաչին ըրեվալ չի:

Տրանք՝ էտ իրեք ախպերը, ըտրա հետե կըռեվ ըն տամ: Արչին տըղան ասում ա, - Գյիդում ը՞ք հինչ կա, էտ լոխ ինձ տվեք, յըես ըստեղ վեննը կենամ, տուք քյեցեք հեռու, շատ հեռու, հու վեր շ՞ւտ ետ կյա, գյ՝բ՝ն նրանն ա, հու վեր նրանա ետը կյա, սուփրան նրան կտամ, հու վեր ըտրանա էլ էտը կյա, շալվարը նան վըննամանը նրանն ա:

Էտ իրեք ախպերքը վեր քյո̀ւնո̀ւմ ըն, ըտեղ վեննը կենում, արչին տըղան վըննամանը նան շալվարը կենում ա գյաբեն յըրան նստում, քյո̀ւնո̀ւմ ։ Էտ իրեք ախպերքն էլ ըտեղ մնում ըն ո̀ւրո̀ւր նհետ կըռեվ տալիս։ Արչին տըղան կյամ ա մորը յոր օնում, կյամ հա̀մա̀ն էն ծմակը, ըշտեղ վեր ինքը ո̀ւրա̀ն հնգյերուեցը նհետ կենում ար։ Ըտեղ մարըտղա միասին կենում ըն։ Ըտրա մարը շատ փիս կնեգյ ա ինո̀ւմ։ Օշափներեն նհետ ա ընգնում։ Մեհետ էլիա սոտ տեղան հիվանդանում ա։

Տղան ասում ա, - Խե՞ հիվանդացալ ըս։ Հի՞նչ կօտիս։

Մարը ասում ա, - Վեր անմահական ճո̀ւր պիրիս, խմեմ, կլավանամ։

Էտ անմահական ճո̀ւրը շատ փիս տեղ ա ընում։ Հու վեր քյունում ա ըտեղ, էլ ետ չի կյամ։

Արչին տըղան քյնո̀ւմ ա, քյնո̀ւմ, շատ ա քյնո̀ւմ, թա խրեգյ, մին էլ ա տեսնում առաչը մին լա̀վ բաղ եկավ։ Օզում ա, թա նի մննե էտ բաղան խնձո̀ր քաղե, տեսնում ա, որ էտ բաղը չըփարած ա։ Մին կերպ նի յա մըննում մաչը, տեսնում մին օշափ թոփփուզը ձեռքին եկավ։ Ընդրա նհետ կըռեվ ա անում, տրան ըտեղ սպանում։ Ետնան կյամ ա, մուտանում էտ ըխպրին, շտեղ անմահական ճո̀ւր պիտի յոր օնե։ Շատ տժվար տեղ ա ինո̀ւմ ըտեղ։

Ըտեղ էրկու քար քյընո̀ւմ ըն, կյամ, ո̀ւրո̀ւր թխում։ Տա մին կերպ նի յա մննում, ճո̀ւրը յոր օնում, մին կուժի բութուլում տընո̀ւմ ջուբումը։ Ետնան ետ ա տեռնում, վեր կյա տոն։

Կյամ ա թաքուն եշում, տեսնում մարը էտ օշափներեն նհետ քեփի յա նստալ։ Վեր նի յա մննում, լոխ օշափնին փռնում ըն տրան։ Մարը նան իրեք օշափ խոսկը մին ըն անըմ, վեր սպանին, ամմա իրեք օշափն էլ խոսկը մին ըն անում, վեր աշկերը տո̀ւս օնեն։ Վերչը աշկերը տո̀ւս ըն օնում։ Ըտեղ մին թուլա յա ինո̀ւմ, դա̀ստի աշկերը յոր ա օնում, պըրա̀նըմը պահըմ, էտ տըղան, էտ թուլեն նըհետ ճընապար ըն ընգնո̀ւմ, քյնո̀ւմ։

Շատ ըն քյնո̀ւմ, խրեգյ ըն քյնում, բիրդա̀ն մին հըրսըոնքու սա̀ս ըն ըսկանում։ Նի յըն մննում էտ հըրսանիքը, վերը հա̀մա̀ն էն ամենաղա̀շա̀նգյ ըխճկանը հըրսանիքն ա ինո̀ւմ ։

Ղա̀շա̀նգյ ախճիգյը ճընանչում ա էտ տղեն, հըրցնում ա, թա. - Խե՞ աշկերըտ իտի յա։ Էտ վախտ թուլեն անա աշկերը յոր ա օնըմ, էտ ըխճկանը առաչին վեր քցում։ Էտ ախճիգյը յոր ա օնըմ, թա քցի տեղը,

ամմա աչի աշկը քցում ա ծախի աշկեն տեղը, ծախի աշկը քցում ա աչի աշկեն տեղը: Էտ տղան լիվանում ա, ամմա մին խրեգյ շիլղի յա ինո՛ւմ: Էտ տղան եր ա կենում, վեր կյա մորը կոշտը:

Էտ ախճիգյը ասում ա. - Քյինի՛լ մե:

Ամմա էտ տղան եշում չի: Ասըմ ա. - Տու հա՛լա՛ փըսակվե լ մեր, մին պեն մըհանա քըցի, կաց, յըես կյա՛լու յըմ: Եր ա կենում, վեր կյա մորը տեսնա:

Կյամ ա տեսնում էլհա հա՛մա՛ն էն օխտը օշափնեն ո՛ւրա՛ն մորը նհետ քեփ ըն անում: Վեր օշափնեն տեսնում ըն էտ տըղին, լոխ կյողլ ըն կենում:

Էտ տղան նի յա մըննըմ տոն, թա. - էն հու վա իլա՛լ վեր ասալ ա՝ սպանինք, էս ղրաղին կաղնի, ամմա հու վեր վեր ասալ ա՝ աշկերը տո՛ւս օնինք, էն մին ղոլեն կաղնի:

Իրեք օշափ մին էլ մարը օզալ ըն, վեր սպանին, ամմա իրեքն էլ օզալ ըն, վեր աշկերը հանին:

Էս տղան էն իրեք օշափեն նան մորը սպանում ա, ամմա են իրեք օշափին էլ տոնը, տեղը լոխ ո՛ւրա՛նց ա տամ, ասում. - Հու վեր վեր ծեր քեփին նի կյա, տուք իմ անըմըս տվեք, ծըեզ վեչ մին պեն չըն ընելու:

Էս քաջ տղան շարունակում ա ո՛ւրա՛ն ճընապարը, ո՛ւրա՛ն առաչվա հնգյերներին ճարելի հետե: Լոխճին ճարըմ ա, սպանըմ, ինքն էլ քյնո՛ւմ ո՛ւրա՛ն սիրած ախճիգյը յոր օնըմ, նըհետը փսակվըմ, բախտավեր ապրըմ: Էն վերան տո՛ւս պերած էնքան վըեսկեն էլ ո՛ւրա՛ն ա մընըմ:

42.ՄԱԴԱՐ ՏՂԻՆ ԲԱԽՏԸ

Ինիս ա̀, չինիս մին մարթ, մին կնեգյ։ Ըտրանց խոխերքյը ամման պրիլավ մըռնեւ ըն իլա̀լ, վըեննը չըն իլա̀լ կընաս։

Մին օր ըտրա մարթը եր ա կընաս, թա. - Քյննա̀կան ըմ մին գյիդո̀ղո̀ւ կոխկ, տըեսնամ ախրը պենը հի՞նչումն ա, վեր պիրած խոխերքյս վըեննը չըն կընաս։

Էտ գյիդո̀ղ մարթը լոխ տրան դո̀ւզ-դո̀ւզ պտմես ա, վեր քանենն ա պերալ, քանենն ա թաղալ։ Ըսես ա, - Վեր միենգյ էլ մինը պըրլա̀կան ա, էլ տրանա կըման ծըեզ խոխա չի իննա̀կան։ Ըտ էլ կյո̀ւլո̀ւ փայ ա տըռնըլական։

Էտ մարթը ետ ա տըռնաս ըսես,- Ցըես էլ միշտ տանն ըմ պըհըլական։

Էտ գյիդող մարթն ըսես ա. - Մին ա ըշտեղ պահիս, պահիս վուչ, տանատ տո̀ւս ա կյլական, քյինի։

Էտ վեր իտի յա ըսես, քուռուփեշման ետ ա տոնաս, կյաս տոն։ Կնեգյը խոխան պիրիս ա։ Տրանք էտ խոխեն լա̀վ ըն պըհես, վեշ մին տեղ տո̀ւս չըն օնես, սաղ օրը տանը մաչին։ Էտ խոխատ կյաս ա տըռնաս տասն չորս տրեկան խոխա տանան տո̀ռնը չըն տո̀ւս ունես։

Մին օր էտ խոխան հորն անա թաքուն տո̀ւս ա կյաս շենը, մարթկանց մաչը։ Մարթիքյ վեր տըսնաս ըն, մնաս ըն մաթ մնացած, ըսկսես ըն ըստղան, ընդղան խոսելը, վեր էտ էն մարթին տղան ա, վեր քյեցալ ա եշիլ տվալ, ասալ ըն կյո̀ւլի փայ ա տոնլական։

Էտ խոխան կյաս ա տոն, սկսես ա հորը նաղլ անիլը. - Ախեր ըսօր տո̀ւս ըմ եկալ շենը, մին պեն ըմ ըսկացալ։

Հա̀րն ասըմ ա, - Ասէ տըեսնամ

Տղան ասըմ ա.- Տո̀ւս եկէ շենին մաչը, մարթիքյ մաթ-մաթ ինձ եշեցեն, ըստղան, ընդղան ո̀ւրո̀ւր նհետ խուսեցին, թա էս էն տղան ա, վեր հորն ասալ ըն կյո̀ւլո̀ւ փայ ա տըռնլական։

Հա̀րը միշտ էտ կյեղած ա պահալ, տղեն ասալ չի, թա հի՛նչու հետե յա տանը ս̈լըհես, թուղես չի, թա տո̀ւս կյա, միենգյ էլ կյեղելը կարում չի։

Հա̀րն ասըմ ա. - Հի՞նչ կյեղի՛մ, դո̀ւզ ա, իտի յա իլա̀լ։

Տղան ասըմ ա. - Դէ վեր իտի յա, էս դոնըմ կլո̀խ ըմ յոր ունես քյնիմ, տեսնամ վերչըս ախրը ըշտե՞ղ ա տըռնաս, հինչա՛վ ա վերչընաս։ Հա̀րը թուղես չի, շատ ա խնթրես, ըղաչանք պղատանք ընես, վեր քյնի վեչ։

Տղան ըսես ա. - Օգում ա հինչ էլ տեռնա, յըես բիդի քյինիմ:

Հա̈րը տսնաս ա, վեր ճար չիկա, տղան քյնա̈կյա̈ն ա̈, խնթրես ա, թա. - Դե վեր իտի յա, եք քյըեզ փսակիմ, ետնան քյնի: Լհա̈ վեր տանը, տռանն ինիս վեչ, տանը հարթնենը յիշիլա̈վ սըերտըս կպենվա:

Էտ վեր հա̈րը իտի յա ըսես, տղան հոժար ա կընաս: Էտ մարթը տըղեն փըըըկես ա, հարթնը պիրիս տոն: Էտ տղան մին քանի օր կընաս ա, ետնան մին թվա̈նգյ նան մին տենակ տինիս ջուբումը, տո̈ւս կյաս: Հա̈րը լաց ա ինիս, վեր քյինի վուչ: Ըսես ա. - Բա մունք հո՛ւնց կանինքյ, ըշտե՞ղ ըս քյիս, հի՞նչ գյիդա̈նք, թա տու սաղ ըս, թա չէ:

Տղան ըսես ա. - Ա՛ հա̈ր, դե վեր իտի յա, տո̈ւս եք տո̈ռնը, յըես քյըեզ մին պեն ասիմ:

Հա̈րը տո̈ւս ա կյաս տո̈ռնը: Տղան ծեռքեն մուտանան տո̈ւս ա ունես, հորը տաս, ըսես. - Ա՛ հա̈ր, տըսնաս ը՛ս էս մուտանան, վեր գյիդա̈քյ թա սաղ ըմ, էս տնո̈ւմ ըմ, հասե, էս պըտըրհանեն մաչին, ծեռքյ չի տաք հա, մինա̈կ ամեն քշերավ ուռութանա եր կըկենաք պըտըրհանան եշիքյ, թա մուտանան հունց ա տըրա̈ծ: Թա վեր էն ինի ինդի տիրած, հունցու յըես ըմ տիրա̈՛լ, գյիդա̈ցեքյ վեր սաղ ըմ, թա եր կացեքյ, տըեսեքյ էն ա պրտըրհանան վեր ընգած, գիդա̈ցեքյ վեր յըես մաղբուն ըմ: Ամմա մին էլ ըմ ասըմ, վեր նի չի կյաք, հունց վեր տինըմ ըմ, թողիքյ ինդի կենա:

Հա̈րըն ասըմ ա. - Լա̈վ:

Տղան մուտանան տինիս ա պըտըրհանումը, հորը նհետ պռոշտի ընես, իտի կլո̈խ եր կա̈լա̈ծ քյիս:

Քյիս ա, քյիս, շատ ա քյիս, խըեգյ ա քյիս, շատը նան խըեգյը ինքյը կգյիդա̈, քյիս ա մին տեղ տո̈ւս կյաս, առաշկը մին մեծ շըհա̈ր, վեր էլ տեղ չկա քյինա̈լի:

Էտ տղան ինքյն-ինքյը ըսես ա. -Դե էլ հինչ կինի՛, կինի՛, քյինիմ էտ շհա̈րը: Էտ տղան քյիս ա, քյիս, տսնաս ա մին պառավ կնեգյ նստած, մին քանե դեվու ճոտեր կոխկեն:

Պառավը վեր տըան եշիս ա, ըսես ա. - Բալա, տու հո՞ւնց ըս ընգա̈լ ըստեղ, տո̈ւս եք, քյինի, մեծ դեվը ըստեղ չի, էս ա վեր կյա, քյըեզ կո̈լ ա տըլական:

Տղան ըսես ա. - Հունց անիմ, էլ հինչու կինի՛, կինի՛, էտ էլ իմ բախտըս:

Պառավը մին էլ ա հըըցնես, թա. - Ախըը հի՞նչու վը՛ս եկալ, շտե՞ղ ըս քյիս:

Էտ տղան լոխ պըտմես ա, վեր. - Իմ մոր խոխեքյ ըն իլա̀լ, վըեննը չըն կացալ, լոխ մըեռալ ըն, յըես էլ վեր իլա̀լ ըմ, ասալ ըն, թա տա էլ կյո̀ւլո̀ւ փայ ա տըռնլական, ըտրան դա̀րդա̀ն կլո̀խ ըմ եր կա̀լա̀լ, քյիս ըմ տեսնամ ախրը իմ վերչըս հի՞նչավ ա պըրծնես:

Էտ տղան վեր իտի յա ըսես, պառավըն ըսես ա. - Դե վեր իտի յա, եք քյըեզ կյո̀ղը կըցընիմ վեր դո̀վը կյա՛, թըրթամնած յրա չի պրծնէ, քյըեզ կո̀լ տա:

Էտ պառավը տղեն կյո̀ղլ ա կըցնես: Մին խրեգյ անց ա կնաս, դո̀վը կյաս ա, թա չէ, պըռավին ըսես ա. - Էս հի՞նչ ինսանավըետ ա կյաս:

Պառավըն ըսես ա. - Ըստեղ ինսան չիկա:

Դովըն ըսես ա. – Չէ, ինսանավըետ ա կյաս, ասի տեսնամ, հո՞ւ կա ըստեղ:

Պառավըն ըսես ա. - Մարթ չիկա:

Էտ վեր ըսես ա մարթ չիկա, էտ դո̀վը եր ա կնաս, թա շոռ կյա: Պառավը տըեղան պիցըինաս ա, թա.-Դե ըսպաս,-ըսկսես ա նաղլ անիլը, թա. «Իստի մին տղա կա, տո̀ւս կպիրիմ, մինա̀կ նի չի կյաս»:

Էտ դո̀վը ըսես ա. - Լա̀վ:

Պառավը տղեն տո̀ւս ա պիրիս, տա մին էլ տղեն անա յա հըրցնես, թա - Տու խե՞ յըս եկալ, տո̀ւս եկալ ըստեղ:

Տղան հինչու պառավեն ա պատմալ, էտ լոխ էլ դո̀վին ա պըտմես: Վեր պըտմես ա, պրծնես, ըտեղ պիրիս ըն հաց, ճո̀ւր տաս, հըղըցեն հետի ճո̀ւր հաց տինիս, ճընապարհ քցիս, նիետըն էլ էրկու իմաստուն շոն տաս, ըսես. «Էս շները եր կալ, ըտրանք ըշտեղ քյինին, տու վէլ նիետնեն կքյինիս: Օրիշ տեղավ յան չի տա՛ս: Էտ շները վըեննըրը ըշտեղ տնին , տու վէլ ընդեղ կտինիս, օրիշ տեղ չի տինիս, վեր ճո̀ւր նի մննիս, ըշտեղավ քյնին, տու վէլ հետներան կքյինիս: Մին էլ շատ փիս տեղեր ըս ընգնըլական, հանց ըրա, խա̀փվիս վէչ, հա՛, շները հետատ միշտ կտանիս: Վեր ասին կաց, կաց, կենաս վէչ»:

Տղան ասըմ ա. - Լա̀վ:

Տղեն ծնողնեն ամեն ուռութանա եր ըն կընաս պըտըրհանեն յիշիս, տըսնաս էն ա մուտանան հա̀լա̀ տրած տեղը: Արխային ըն ինիս, վեր ո̀ւրա̀նց տղան հա̀լա̀ հեն ա սաղ:

Տղան էտ շները յոր ա ունես, քյիս: Քյիս ա, քյիս, շատ ա քյիս, խրեգյ ա քյիս, շոնը ըռաշկեն, ինքը շանը հետան, թուլան էլ քըմակեն: Կյաս ըն տո՞ւս կյաս մին վարար կյետե յրա: Տղան ըստեղ շըղվիս ա, վեննը ո՞ւզիս ա, թա տինի ճըրին մաչին, շոնը փեշկան ծիքյ ա տաս, տրան ըզըղես: Շոնը քյիս ա, քյիս մին պերա՛կ տեղ ճըրիս, վեր անց կենան: Շոնը լոք ա տաս, ետավ տղան, ետավ կուճի թուլան: Ըտրանք ըտըղավ ընցնես ըն:

Քյիս ըն, քյիս, շատ ըն քյիս, խրեգյ ըն քյիս, քյիս ըն տո՞ւս կյաս մին օրիշ շըհա՛ր: Էտ տղան տըսնաս ա, վեր էտ շհա՛րըմը մին մարթ էլ ա կա վեչ: Լա՛վ տներ, լա՛վ շըհա՛ր, տները էրկու ըտըժանե: Էտ շըհա՛րը շատ ըն ման կյաս, խրեգյ ըն ման կյաս, մարթ չըն պըտըհես: Շոնը քյիս ա ըռաշկեն, տղան հետան, թուլան էլ տղեն հետան:

Էտ շոնը շատ ա շոռ կյաս, խրեգյ ա շոռ կյաս, կյաս ա, տո՞ւս կյաս մին էրկուինջի ըտաժանե տան առաշկ: Տըսնաս ա էն ա տանը բըլկոնըմը մին լա՛վ կյեղեցիգյ հարթնը: Էտ հարթնը վեր տղեն տըսնաս ա, հըրցնես ա.- Հու՞ր ըք ուզիս:

Տղան ըսես ա, վեր եկյալ ըմ իմ ծանոթես տոնը:

Էտ հարթնը ըսես ա, - Դե լա՛վըք ըրա՛լ, վեր եկյալ ը՛ք, դե եք, տըեսնամ ծանոթըտ հու՞ վա:

Տղան պիցըրնաս ա, շոն նան թուլան հետան:

Էտ հարթնը ըսես ա. - Տա հի՞նչ ա, տրանք հո՞ր ըն կյաս:

Տղան ըսես ա, - Վեչինչ, տրանք թա՛մո՞ւզ, թա՛քյո՞ւզ ըն, վեչ մին պեն չըն ըննական, թող կյան:

Հարթնը ըսես ա: - Դե լա՛վ:

Էտ տղան քյիս ա, տոն նի միննես: Շոնը մղակըմը նստես ա: Էտ հարթնը տղեն անա հըցնես ա, թա.- Պա պարիկամտ հո՞ւ վա:

Էտ տղան հի՞նչ ասի, ըսես ա.- Ախպերս, պարիկամս շոնն ա, եկյալ ըմ վըերսի:

Էտ հարթնը ըսես ա,- Լա՛վըս ըրալ:

Էտ հարթնը հունց ա ընես, տղեն խելքա տնես ա:

Մին օր տրան ըսես ա, թա.- Եք լի՛ա յըես քունը, տու իմս ինինք: Տղան ըսես ա.- Հի՞նչ ա ըննա՛կան:- Ըտրանք իտի էլ ընես ըն:

Շատ ա անց կնաս, խրեգյ ա անց կնաս, էտ հարթնը ուզիս ա էտ տղեն ըսպանե:

Էտ հարթնը կյո̀ւլ տառած ախճիզյ ա ինիս, ըտրան հնգերը մին կյո̀ւլ ա ինիս, տըռանը թոռնեն մաշին կյեղած ա ինիս: Էտ շըհա̀րըտ , էտ էրկու հոքյին մինա̀կ ո̀ւրա̀նք ըն ինիս կերած: Միենգյ էլ ուզես ըն, վեր էտ տղեն էլ օտին:

Էտ շները տրան թուղես չըն, միշտ կլխի յըն ընգնես, խընգրես, շնը տղեն կոխ կան հըռընաս լի, տղան ըշտեղ նստես ա, շնը կոխկեն, քոն ա ինիս, քյիս ա տըղեն կոխկեն նստիս:

Էտ հարթնը վեր քըշերը տղան քոն իլա̀ծ ա ինիս, եր ա կընաս, թա քյինի կյո̀ւլին ասի, վեր կյո̀ւլը կյա օտէ:

Շնը կլխի յա ընգնես, էտ հարթնենը, կյաս ա, փռնես:

Վերչյը էտ շնը ըջլաման չի տաս էտ հարթնենը:

Էտ հարթնը կըզնըվես ա տղեն յրան. - Էս հի՞նչ ա, ըստեղ հի՞նչ ըք անում, շները հեն ըն քշտետ:

Տղան ըսես ա,- Վէչինչ, թա̀մո̀ւզ ըն:

Վերչը էտ հարթնը տրան հու՞նց ա խըելքա տընես, վեր էտ տղան մին օր եր ա կընաս, թա քյիս ըմ վըերսի:

Հարթնն ըսես ա, - Լա̀վ կինի, մինա̀կ մեծ շնը կապէ, կուճինը քյըեզ նհետ եր կալ:

Տղան ըսես ա.-Չէ՛:

Էտ հարթնը հո՞ւնց ա ընես, հո՞ւնց ա խըելքա տընես, վեր տղան հոժար ա կընաս:

Մեծ շնը պիրիս ա ժինջիլավ ծառան կըպես, կուճինը յոր օնես, քյիս վըերս: Էտ տղան լի̀ա̀ անց ա կընաս պատեն քամակը թա չէ, էտ հարթնը կյաս ա, թորենը պընա̀ս կյո̀ւլին մորթին շոռ օնես, կյո̀ւլին էլ ըսես,- Տո̀ւս եք:

Տրանք տո̀ւս ըն կյաս, քյիս: Քյիս ըն տղեն հղցումը ըսպսես: Տղան կյաս ա: Հարթնը տղեն վըզան ա փռնես, կլո̀ւլը վըններան պիցիրցընես ըն, թա̀ տանին, ծմակը մը օտին:

Էտ վախտը մուտանան պտրհանան եր ա ընգնես: Մարը, հա̀րը եր ըն կընաս, տըսնաս, մուտանան վեր ընգած: Ըստրանք ըսկսես ըն լա̀ց ինիլը, վեր ո̀ւրա̀նց տղան կա վէչ, մարթըկնեզյ շատ ըն լա̀ց ինիս: Հարթնն էլ ա լա̀ց ինիս:

Մին քանի օր անց ա կընաս, հարթնը ըսես ա. - Դէ վեր ծըեր տղան էլ

կա վեչ, յըես կընաս ըմ հի՞նչ անիմ։

Տո̈ւ ա կյաս, քյիս հա̈րա̈նց տոնը։

Էն վախտը վեր տրանք էտ կյո̈ւլը նան հարթնը, էրկուսավ սո̈իբաթ ըն ընես, թա էտ տղեն ըսպանին, ետնան օտին, կուձի թուլան, խա̈բա̈րը պըրես ա հըսցնես մեծ շանը։ Շոնը հո՞ւնց ա ընես, հունց չի ընես, վեր ժինջիլին նիետ սո̈ւթո̈ւնան պուք ա կյաս, զնգզնգցընելավ քյինիս, հըսնես էտ տըղեն։ Շոնը կյո̈ւլին հունց յոր ա ունես, վեր կյո̈ւլը բուշունաս ա։ Կյո̈ւլին ըսպընես ըն։ էտ դա̈րըմը տղան ո̈ւրա̈ն ջուբան տենակը տո̈ւս ա ունես էտ հարթնենը բուղերը ճըղես։

Հարթնը կո̈ւլին մորթեն կյեցը փխչիս ա, կյաս մորթեն կյղես, ինքյն էլ նի միննես տեղը։

Տղան կյաս ա, նի միննես տոնը, տըսնաս ա հարթնը տեղեն մաչին, չիզյիղա̈լը տրած հըրցնես ա.- Պա խե՞ չըս նի մտալ տեղըտ։

Հարթնը ըսես ա, - Հիվանդ ըմ, մըրսալ ըմ։

Տղան հաց ա շինիս ըսես, - Կեր։

Հարթնը ուտես չի, ըսես ա, - Կարըմ չըմ օտիմ։

Տղան ըսես ա, - Վեչինչ, պատառ կեր։

Հարթնը ըսես ա, - Կարըմ չըմ, օտում չըմ։

Տղան ըսես ա,- Դե լա̈վ հենա քըրթընքալ ըս, եր կաց դոշա̈կըտ փոխիմ։

Հարթնը ըսես ա, - Ցըես քըրթընքած չը՛մ։

Տղան տըսնաս ա, վեր տա եր չի կընաս, ինքյը տեղը շինիս ա, զոռավ ըտրան յուրղանան պիցիրցընես, տսնաս ա տեղը ա̈րնոտ։

Տղան հըրցընես ա, թա,- Պա էս խե՞ յա ըստի։

Հարթն ըսես ա,- Վեչինչ, բըլկոնան վեր ըմ ընգալ, փոշը վըեննս ա իլա̈լ։

Էտ վեր իտիյա ըսես, տղան էն հա̈մա̈ն տեննակը տո̈ւս ա ունես ջուբան, ըսես, - Տու ինձ քյա̈լա̈գյ կյա՞ս, դե քյնա̈։- Տենակը ըտրա ընգուջտակեն ա տաս, ըտրան էլ ըստեղ ըսպնես։

Էտ տղան շներեն նիետ ընգնես ա էտ շըհա̈րը, ըսկսես ման կյալը, տըսնաս խե շատ լա̈վ-լա̈վ տներ, լոխ լիգյը ջուռաբա ջուռա պեններավ՝ թա վսկեղան, թա շո̈րեղան, մինա̈կ մին մարթ չիկա, քաղաքը տեռտակ, սա̈ս սեմո̈ւր չիկա։ Էտ հարթնենը տոնն էլ լիա̈ վըեսկավ լիգյն ա։ Էտ տղան էտ շներեն նիետ քյիս ա, տո̈ւս կյաս մին տան յրա։ Տո̈ռնը պնա̈ս ա, նի միննես, տըսնաս տանը էրկու ծի, հանց ըն լիա̈ յըղըթաթախ ինին։ Ախուռը լա̈վ

շինած, խոտը, ճուրը ընդեղ, ամեն հինչ հըզըրած, տրած ըռշկներեն: Տրանք վեր նի յըն միննես, էտ ձիանքը ըսկսես ըն խըրխընջալը: Էտ տղան ծիյին մինը եր ա ինիս, տուս կյաս, մինը թուղես ըտեղ:

Էտ տղան ծին պիրիս ա քըղաքեն վըեսկան, գյբենան, կըրպետնան պիոնիս, ետնանըս ուրան պարիպասավը, էտ շներեն նիետ էլիա ընգնես իըղեն:

Կյաս ըն, կյաս, իըսնես մեծ շանը պունը, էն պըռավեն նան դյուվեն կոշտը: Էտտղատ վխելան նիետ կոչ ա կյաս: Շոնը վեր նի յա միննես տոնը, դուվը տըսնաս ա շանը վեզը յարա:

Դուվը ըսես ա,- Պա քյըեզ հի՞նչ ըսեցե, ըսեցե վո՞ւչ, թա շոնը կապիս վե՞չ:

Տղան ըսես ա, - Դե էլ հինչու իլյա՜լ ա՜, իլյա՜լ ա՜, շիլ ըմ ընգալ: Դուվն ըսես ա.- Լիա՜ մեր թուլան մինչի ըստեղ պերալ ըս, էտ էլ ա բոլ, ա՜իետ տու քու տեսըտ-տենըտ եր կալ իղե յիլ:

Էտ տղան մեծ շանը նիետ կուճի թուլան էլ ա տաս ընդանց, ինքյը ուրա՜ն ծին եր ինիս, կյաս: Կյաս իըսնես ուրա՜նց շենը: Էտ տղան վեր կյաս ա, իսնես ուրա՜նց տոնը, իղցումը տըսնաս ա մին հարթնը էնա քյիս ճուրը, էտ լիա՜ ուրա՜ն կնեգյն ա ինիս, վեր քյեցալ ար ճուրը:

Ըստրանա ետը ուրա՜ն էտ հարթնեն ետա տաս իըղըցան, ըսես.-Ա՛ հարթնը, ինձ տար, փլան տոնը նշանց տո:

Էտ հարթնը տըսնաս ա, վեր ուրա՜ն պըտրունանց տոնն ա քյիս, տրան հետան քյիս ա:

Էտ տղան էտ հարթնանը ըսես ա. - Պա տու ինձ ճընըընչես չը՞ս…

Հարթնն ըսես ա, - Չէ՛ :

Էտ տղան ըսես ա.- Ցըես քյըեզ ճընըընչես ըմ:

Հարթնը մնաս ա մաթ մնացած, թա տա հո՞ւ վա, վեր ուրա՜ն ճընըընչես ա: Տա մնաս ա նիգյա՜րա՜ն: Էտ տղեն նիետ թուշ կյա՜ս ա, կյա՜ս, իըսնես ուրա՜ն պըտրունանց տոն: Տղան վեր կյաս ա, ճընըընչես ա հորը, մորը: Ամմա մարը, հա՜րը ուրա՜նց տղեն ճընըընչիս չըն: Տղան մտծես ա, ըտրանց հո՞ւնց իըսկըցնել տա, վեր տրանք վախին վեչ:

Հորըն անա իըրցնես ա, թա.- Քյըեզ տղա յա իլյա՜լ, հո՞ր ա՛:

Հա՜րը ըսես ա, - Հա՛, քյեցալ ա, կորա՛լ:

Մարը ըստեղ կույնը փուխես ա: Հա՜րն էլ ա կույնը փուխես, ռանգյ-ռանգյ ինիս:

Տղան ըսես ա. - Մին պեն ասիմ,  մինակ վախիքյ վեչ, սըրտընետ պենդ պըհեցեքյ, մին էլ ըմ աըըմ, վախիքյ վեչ:

Հա̀րն ըսես ա.- Լա̀վ, ասի:

Տղան հորն ըսես ա մուտանան հշտե՞ղ ա, վեր հեն ա իլա̀լ պըտըր-հանումը: Հա̀րը նան մարը հուշուրներան քյինիս ըն:

Տղան ըտրանց ետ ա պիրիս, ըսես.- Պա ըսեցե վու՛չ, թա վախիքյ վեչ: Դե յըես ծեր տղան ը՛մ:

Ըսկսես ա կլո̀խը եկածը լոխ նաղլ անիլը:

Կնեզյը քար ա կտրես, մընաս տըեղը վըեննը կացած, ըսես ա. - Պա հո՞ւնց ա իլա̀լ, վեր տու սաղ, սըլըմաթ եկալ ըս:

Տղան ըստեղ մորը, հորը, ետավ կնգանը, կո̀լավն ա ընգնես, պչպչորես:

Խաբարը հըսնես ա շենը: Լոխ կյաս ըն ըշկըլո̀ւսա̀նք: Ըստրանա ետը հա̀րը, մարը, տղան, հարթնը ըսկսես ըն լա̀վ ապրիլը, խուխա̀տա̀ր, թոռնատար տեռնալը:

Ըստուծանա իրեք  խընձո̀ր ա վեր ընգնես. մինը՝ ըսողեն, մինը՝ լըսողեն, մինն էլ՝ մեր հըեռե հնգրեն:

43.ՔՅԱՄԻԲ ՏՂԱՆ

Մեհետ անանուն թաքավերեն տղան՝ Թեմուրը, ուրան շըքախըմբավը տուս ա կյաս Թյդաղա ծմակը, հանցու վեր վըերս անե: Ըտրանք տուս ըն կյաս մին պեցուր սարու պտոկ, ընդեղ նստես, վեր դինջանան: Թեմուրեն մեծ ծառան դուլդուլը յոր ա ունես բիդի հեռուն յիշիս, տսնաս մին փլստրատե տաս պալատ, ըտրան մաչին էլ մին իրիքյնակու նման պեն պսպղե յա տաս: Կյաս ա, էտ լոխ պըտմես Թեմուրեն: Ըտրանք սկսես ըն բիդի էտ պալատը հղե քյինիլը: Ըտրանք չորս օր ճուր չըն ինիս խմած: Տրա հետե կյաս ըն մին ըխպրա թա ճուր խմին, տըսնաս ըն մին շուրերը ճղորտած, քյասիբ տըղա էն ըխպրին ղըրաղեն նստած, մին վըեսկե աման էլ ծեռքեն:

Թեմուրը տըրանա ճուր ա ուզիս: Էտ քյասիբ տըղան ամանը լըցնես ա, ուզիս ա տա Թեմուրեն, էլիա ետ ա տաս:Թեմուրը կըզնըվելան նհետ դաման տուս ա ունես, թա տըրան սպանե:

Էտ տըղան ըսես ա. - Մին խրեզյ կաց, ահետ ինձ սպանե:

Քյասիբը էտ ըմանավը սաղ զորքեն ճուր ա տաս, լոխճին քմակեն էլ Թեմուրեն ա ճուր տաս: Թեմուրը ինքը շատ խուլունք մարթ ա ինիս: Չքելանը վեր մին պենը լավ զյիդաս չի իլալ, մարթու քյոռուղ չի տվա՛լ:

Թեմուրը էտ տըղեն նըեստա հըրցնես ա, թա.- էտ խե՞ ինձ իրեք հետ ուզեցիր ճուր տաս, էլիա ետ քշեցեր:

Էն քյասիբ տըղան ըսես ա, - Ցըես ընդրա հետե չըմ քյըեզ հլբըհալ ճուր տվալ, քանի վեր տու քրտնքած ըս ըլալ, շատ ծրաված,վեր քյըեզ հլբըհալ ճուր տի, նի կկյար քյըեզ, տու հլբըհալ կմըրսիր, ըտրա դարդան յըես քյըեզ ճուր չըմ տվալ, հանցու վեր ծըրվոթունըտ ընցնե:

Թեմուրը յշիս ա, տսնաս, վեր էտ խուլունք տըղա յա, ըտրան յոր ունես, մին ծի երիընես, ուրան նհետ տընես:

Թեմուրեն էն մեծ ծառան շատ աղվես մարթ ա ինիս, կլոխ ա ընզնես, վեր էտ քյասիբը իմաստուն մարթ ա, ընդրա դարդան Թեմուրեն ըսես ա, - Պա համոթ չի՛, վեր իտի քյասիբ տըղան մեր շըքախըմբեն նհետ շոռ ածինքյ:

Մին խիլլա հղե քյինիլանը ետը հսնես ըն համան պսպղե տաս պալատ են տոռնը: Թեմուրը ուրան ծռեն հրամման ա տաս, վեր քյինի տեսնա էտ

տանը հու կա, հու չիկա, միկա ճո̀ւր ո̀ւքյ օնե, պիրի խմին: Մին պատառ կնալանը ետը տըսնաս ընծառան էն ա սփա̀րթնած, փախած կյաս ա:

Կյաս ա, ըսես.- Թե՛մո̀ւր աղա, մին պառավ ինձ մին հարց ա տուվալ, վեր վըեններս տափան կտրալ ա. ըսես ա. «Մեր տանան հու վեր ուզիս ա, թա ճո̀ւր խմե, բիղի իմ տուված հրցերեն ջողաբը տա, ընդրանա ետը ճուր խմե»:

Թեմո̀ւրն ըսես ա. - Մին ասե տեսնամ, էտ հի՞նչ հարցեր ա՛:

- Ա՛ղա, ըսես ա, վեր մին օղտ մորթիքյ, քա՞նե փութ կկյա, վեր խրեգյ ինի, էտ օղտեն մսեն տու տարըս տոնըլական, թա թուղլական ըս, քյինիս:

- Բա տո՞ւ հինչ ըսեցեր, լիա̀ անջուկնետ կախ ըրե՞ր:

- Յըես էլ ըսեցե, վեր օղտեն գյո̀զրակը խրեգյ կը կյա, մաշնակը՝ շատ, մեծը ընդրանա շատ:

Սաղ շըքախումբը կընդ-կընդ քյիս ըն, կրես չըն, թա պռավեն հարցեն ջողաբը տան:

Թեմո̀ւր խանը շատ ա հմընչիս, վեր ո̀ւրա̀ն շըքախմբումը մին մարթ չիկա, հանցու վեր էտ պռավեն փա̀նդը-փելը գյիդա: Էն քյա̀սիբ տըղան տըսնաս ա, վեր Թեմո̀ւրը հըմըրնչիս ա, ըսես ա. - Խանը ապրած կենա, թող յըես քյինիմ, հանցու վեր ջողաբը տամ:

Ամմա դո̀ւզն ասած, Թեմո̀ւրեն ծառան ուզիս չի, վեր էտ քյա̀սիբ տըղան քյինի պռավեն ջողաբը տա:

Թեմո̀ւրը ըսես ա. - Թող մեհետ էլ էտ քյա̀սիբ տըղան քյինի:

Էտ տըղան քյիս ա, ըսես. - Էտ օղտը հինչքան կյա, թա̀ փթած ինի, թա վետած ինի, տարը յըես ըմ:

Էտ պառավը բո̀ւրդան հպղես ա, վեր ընգնես: Պլատեն տռները բո̀ւր-դան պինվաս ըն: Էտ պլատեն ըռշկեն կաղնած տըղան յիշիս ա, տըսնաս էն դո̀լան մին իրիքյնակու նման ախճիգյ էն ա շափառ-շափառ ընելավ կյաս: Ախճիգյը կյաս ա էտ տըղեն յրա պրծնես: Էտ տըղան սկսես ա փախչիլը: Ախճիգյը հըսնես ա, ձեռքը տինիս ա ընդրան ջնաղեն: Էտ տըղան վեր ա ընգնես: Ախճիգյը ըտրան քաշ ա տաս, տնես ո̀ւրա̀ն տոնը: Տըղան եր ա կընաս: Ախճիգյը մին ստաքան ճրա̀վ լցնես ա, տինիս ստոլեն յրան: Տըղան մաննը իրեք հետ թրչիս ա, ետնան սըրփես: Ախճիգյը պիրիս ա մին կյա̀րմո̀ւր խընձո̀ր, մին տենակ, մին նոռնը, մին թոփ ասեղ, մին մկրատ, մին սիպտա̀կ թոխտ տինիս ստոլեն: Տղան պիրիս ա խընձո̀րը

տնձկձվը մաչան կես ընես տինիս ստոլեն, նոռնըն էլ ա կտրես, տինիս ստոլեն յրան, սիպտձկ թոխտը մկրատավը կուտուրես ա, տինիս ստոլեն, ամմա ըսրղնեն նի յա կուխես խընձո̈րին մաչը։

Ստաքանը նշնկես ա, վեր ուզի՞ս ըս համամ քյինիս։ Էտ քյասիբ տըղան վեր ձեռքը քցալ ա ճո̈ւրը, մին էլ տո̈ւս կձլձլ, ըտրանավ ուզես ա ասե, վեր ինքյը քյձսիբ տըղա յա, ինքյն էլ եխտուտ, բիդի համամ քյինի։

Էն խընձո̈րը, վեր տիրալ ա ընդեղ, ախճիգյը ըտրանավ ուզիս ա ասե. «Իմ սերը իստի կյձրմո̈ւր ա, բա քու սերըտ հո՞ւնց ա»։

Տըղան վեր խընձո̈րը տընակավը կտրես ա, ուզիս ա ասե. «Իմ սերս քու սերետ նման ա, ասիս մին խընձո̈ր ինի, մաչան կես ըրած»։

Էն նոռնավըն էլ ըսես ա. «Իմ սերս իտի հձլձ մին հատեգյ ա, ետնան տըռնըլական ա մին նոռան մչանք»։ Էն սիպտձկ թոխտավը ուզիս ա ասե. «Իմ սերըս իստի թձմո̈ւզ ա, վեր բո̈ւրդան մեթկըտ փոխվե, կդավաճանի՞ս ինձ, թա չէ»։ Էն տըղան էլ վեր մկրատավը կուտուրես ա, ըտրանավ ուզես ա ասէ. «Ինձ իստի թքյձ-թքյձ կտորին, քյըեզ դավաճանել չըմ»։

Ըսրղնեն կուխես ա խընձո̈րը, ըտրանավ ուզիս ա ասե. «Վեր ինձ իստի ծկոտին, քյըեզ դավաճանել չըմ»։

Ըստրանա ետը տըղան խնթրիս ա, էտ ըխճկանը, ըսես. - Խանը էն ա ո̈ւրձն շըքախըմբավը տըռանը մարաղ կացած, ինձ պեց թողե, քյինիմ։ Ախճիգյը թո̈ւլ չի ընես։ Ընդրանք էտ քըշեր քոն ըն ինիս։ Մին էլ ախճիգյը եր ա կնաս, տսնաս լո̈ւսացալ ա։ Ախճիգյը տըղեն եր ա կըցնես, հղե տինիս։

Թեմո̈ւրը պլատեն քշտեն խիլլձ կնալանը ետը, կզնվես ա, հղե ինիս, քյիս ո̈ւրձն երգյիրը։ Ամմա քղաքեն չորս թրձփեն պահակ ա տինիս, վեր էն քյձսիբ տըղան կյա, հըլբիձլ վեզը կըտրին։

Էտ քյձսիբը կյաս ա, քաղաքը հըսնես։ Ընդրան տնես ըն, թա կախ տան։ Հենգյ րոպե վախտ ըն տաս, հանցու վեր ո̈ւրձն սրտենը ասե։ Ըզեն վեչ մին պեն չի ըսես։

Բո̈ւրդձն էտ դձրըըմը հվաքված ժողովուրթը յիշիս ա տսնաս յիրգյինքավը մին սիպտձկ դուշ ա թռչես, կյաս, ժողովուրթավը չորս հետ շոռ տաս, համ էլ մին մեծ ձմերուկ վեր քցիս ժողովուրթեն մաչին, ինքյը թըռչիս, քյիս։ Ծմերուկը ցըրեվ ա կյաս։ Բո̈ւրդձն էտ քյձսիբ տըղան ծծղես ա, համ էլ խնթրես, վեր ո̈ւրձն թո̈ւլ անին, քյինի Թեմո̈ւր աղեն կոխկը։

Քյա̀սիբը քյիս ա Թեմո̀ւրեն կոխկը, լոխ ըսկսես նաղլ անելը, ըսես.- Խաննապրած կենա, էն պառավը ինձ հարց ա տուվալ, վեր մին օղտ մորթի, քանե փութ կկյա, համ էլ վեր մեսը վըետած, փթած ինի, յըես ընդրա տա̀րըն ըմ, թա̀ չէ, էտ ինդի յա նշընըկես, վեր տու քու ըղետ նհետ հեռե տեղա եշալ ըս, շփաղես յըրա եկալ, հանցու վեր ինձ օզիս, պա բա̀լի վեննս կոտրած ա, իրեսըս ղաշա́նգյ: Վեր վըեննս կոտրած ինի, ինձ պիլական ըս, թա ըսլական ըս́ տո̀ւս եք: Յըես ասալ ըմ. «Պիլական ըմ»:

Ըտրանա կման էտ տըղան պըտմես ա, վեր ինքյը ըխճըկանը կոշտը քյինիլանը ետը, ըզեն ո̀ւրա̀ն ըռաշկեն պերալ ա, ատոլեն յրան տիրալ, մին ատաքան ճո̀ւր, մին կյա̀րմո̀ւր խընձո̀ր, մին տենակ, մին նոռնը, մին սիպտա̀կ թոխտ, մին մկրատ, մին թոփ ասեղ: Յըես էլ գյդա̀ցալ ըմ ըտրանցավ հինչ ա ուզիս ասե: Լոխճին ջողաբը տուվալ ըմ:

Խընձո̀րը,- ըսես ա էտ տըղան, -նշընըկես ա, վեր յըես քյըեզ սիրիս ըմ էն կյա̀րմո̀ւր խընձո̀րեն նման: Ամմա յըես էտ կլո̀խ ըմ ընգալ, պերալ ըմ խընձո̀րը կտրալ, թա.- «Յըես էլ ըմ քյըեզ սիրիս, սերտըս քու սըրտեն նման ա, ասիս լիա̀ մին խընձո̀ր ինի մաչան կես ըրած»:

Էն ատաքան ճո̀ւրը նշնըկես ա, թա ուզիս ը́ս քյինիս համամ: Ամմա յըես էրկու հետ ծեռքըս վեր քըցալ ըմ, տո̀ւս կա̀լա̀լ, ըտրանավ ուզեց ալ ըմ ասիմ, վեր յըես մին քյա̀սիբ, ենտուտ տըղա յըմ, ուզիս ըմ համամ քյինիմ:

Էն նոռնը նշնկես ա, թա իմ սերս միենգյ մին հատեգյ ա, նոռնու նման, վեր մըծանա, շոննական ա, տըեռնա մեչին հատեգյներեն մչանք: Ամմա յըես կտրալ ըմ մաչան, վեր իմ սերս հա̀մա̀նն ա, ասիս մին նոռնը ինի մաչան կես ըրած:

Էն սիպտա̀կ թոխտը նշընըկես ա, վեր ո̀ւրա̀ն սերը թամո̀ւզ ա, էտ թոխտեն նման, վեր մի պեն պատահե մեր մեչին յըես տա́րն ըմ, թա չէ: Յըես էլ թոխտը կըտորալ ըմ: Տա նշընըկես ա, վեր թա ինձ իստի կտորեն, հունցու էտ թոխտս յըես ըմ կուտուրես, էլիա իմ սերս կըմնա թա̀մո̀ւզ, հունցու էս թոխտս, վեր հինչքան կուտուրես ըմ, էլիա մնաս ա սիպտա̀կ:

Էն թոփ ասեղը նշընըկես ա, վեր թա ինձ ծակոտին, յըես իմ սերաս կիեռանա̂մ, թա չէ: Յըես էլ ասեղնին քըցեցե խընձո̀րը, ըտրանավ ըսեցե, թա վեր ինձ իստի ծկոտեն, յըես էլիա կսիրիմ: Հունց վեր խընձորը ծըկոտելան փախչում չի, վեր ինձ էլ ծկոտին, յըես էլ չըմ փախչիլ քու սիրուցըտ:

Տրանց անա կման տղան պըտմես ա էն ծմերուկեն անա, վեր էն դուշը պերալ ա, վեր քիցալ, ժողովուրթեն մաչին, էն մունուտին վեր ինքյը էն ա իլա̀լ կախաղանեն ռըշկեն վըեննը կացած, հենգյ րոպե վախտ տված, վեր խոսե, էն ծմերուկը պերալ ա, վեր քըցալ էն ախճիգյը։ Ընդրանավ ուզիս ա ասե, վեր սերըտ ամեն տեղ հայտնի, վախել մել, քյըեզ թո̀ւլ ըն ըննական։

Խանը ըզետ վեր ըսկնաս ա, ըսես ա. - Քյինա̀ քու սիրածետ նհետ գյանքըտ անց կըցրու։

Էտ տըղան քյիս ա ո̀ւրա̀ն սիրած ըխճըկանը կոշտը, ըսկսիս ո̀ւրա̀ն գյանքը օրախ, բախտավեր անց կըցընիս միչն միհենգյ, միչն ըսօր էլ։

Էն ասթխոտ երգյինքան իրեք աթըղ վեր ընգավ. մինը՝ ըսողեն բախտեն, մինը՝ լըսողեն բախտեն, մինն էլ՝ էն բըլկոնան անջուկ տընողեն բախտեն։

## 44.ՃՐՃԶԸ

Ինիս ա, չինիս, մին դո՛ւլզյա՛ր մարթ ա ինիս: Տրան քշտեն շազյերդ ա ինիս մին խոխա: Տահանք շատ սերավ ըն ինիս ո՛ւրո՛ւր նհետ: Շա՛զյերդն էլ ուստեն տանն ա կընաս:

Էտ երգյիրին թաքավերը քյո՛հնա՛ շո՛րեր ա կյընաս, քյինիս տըեսնա ո՛ւրա՛ն երգյրին մարթիքյը հի՞նչավ ըն ըպրես:

Թաքավերը սո՛ւվթա կյաս ա էտ ուստեն տոնը, քշերը ըստեղ կընաս:

Ուռութանա քշերավ ուստան կյաս ա շըգյիրդեն ծեն տաս, թա.- Դեհա, հա՛, դեհա, եր կաց, էս մարթին հարկիլ պիտինք: Էտքան քոն չըն ինիլ:

Գյիրթ էտ շա՛զյերդը աշկերը պինաս ա, թա.-Պա, ուստա, հո՞ր իտի ճելլի եր կըցըրիր, թուղեցեր վուչ տեսնամ, մղափուն իմ ա՛րա՛զ:

Ուստան շա՛զյերդին ըսես ա, թա. - Ասե տեսնամ էտ հի՞նչ ա՛րա՛զ ա՛, վեր էտքան մղափուն ըս կյաս:

Էտ խոխան պենդ վըենն ա կընաս, թա.- Ասել չըմ, վեր ասե՛լ չըմ:

Տահանց տանը մարթը ըսես ա. - Ցըես նիզյա՛րա՛ն կմեռնիմ, վեր զյիդա՛մ վեչ, թա էտ խոխան հի՞նչ ա՛րա՛զ ա տըեսալ, վեր ուստան էտքան ստիբիս ա, ինքյն էլ ըսես չի:

Տահանց տանը մարթիքյ քյինիս ըն ո՛ւրա՛նց պալատը: Թաքավերը էլհա նըստես ա թախտին, ըսես, վեր փլան ուստեն շա՛զյերդը ծեն տվեք կյա կոշտս:

Կյաս ըն էտ խոխեն տընես թաքավերեն կոշտը: Էտ համ քյինիս ա, համ դա՛ստի զյիդա՛, վեր ըրա՛զեն հետե յա իննա՛կան, հա՛լբա՛թ սկացալ ար:

Էտ խոխան քյինիս ա թաքավերեն կոշտը, թաքավերը տրանա հըրցնես ա, թա. - Ասի տեսնամ, հի՞նչ ա՛րա՛զ ըս տեսա՛լ:

Էտ խոխան պենդ վըենն ա կընաս, թա.- Իսկի իմ ուստես ասալ չըմ, լի՛ա՛ ըստեղ ասի՛մ:

Թաքավերը շատ կըզնվես ա, վեզիրներին ըսես ա, - Տարեքյ սպանեցեքյ:

Վեզիրներեն մաչին մին խելունքը ինիս ա, ըսես ա. - Խե՞ սպանինքյ, վեր համ ըրա՛զին ըս միննական նզյարա՛ն, համ էլ երգյիրատ մին ջա՛հիլ ա կո՛ւրչո՛ւլական, թող կաց ամեն օր թակինքյ, պաղվալը քցինքյ, մին կտոր չո՛ր հաց տանք: Վեր ասիլ չի, մին էլ կթակինքյ, էլհա վեր ասիլ չի, մին էլ կթակինքյ, կասե:

Թաքավերը ըսես ա. - Լա՛վ կինի:

Էտ խոխեն ամեն օր թըկես ըն, քցիս մթեն պաղվալը, էլհա չի ա՛րա՛զը ըսես: Տրա լա՛ցին սասը թաքավերեն ախճիգյը ըսկնաս ա:

Ծըռեն ղրկես ա, թա.- Քյինի տըես էն հի՞նչ լա՛ցու սա՛ն ա:

Ծառան քյիս ա, յիշիս, տըսնաս, պըղվալումը մին ջա՛հիլ տղա յա, ամմա շատ սերուն:

Կյաս ա ըսես, վեր իստի-իստի մին տղա յա:

Թաքավերեն ախճիգյը քյիս ա տըսնաս, դա՛ստի սիրահարվես տղեն յըրան:

Ամեն օր լա՛վ-լա՛վ խորագյնի, հաց ա տընես տաս էտ տղեն:

Էն հա՛մա՛ն պարի վեզիրը ըսես ա. - էս լիա՛ թըկես ընք, օշը կըլխան քցես, թող ամեսը մին դո՛նում թակինքյ :

Էտ վեր իտի յա ըսես ընդրան հետե, վեր թաքավերեն ախճիգյը տրան վըեսկե յա ինիս ռուշվաթ տված: Էտ տղան էլհա չի ա՛րա՛զը նաղլ ընես:

Թաքավերեն ախճիգյը վեզիրին ըսես ա. - Թող պիրին էս պըլըտներեն միմումը կըենա:

Իտի էլ ընես ըն: Միշտ թաքավերեն ախճիգյը էտ տըղեն ըսես ա. - Վխես ըմ ո՛ւրո՛ւր արժան չի տեռնանք:

Ամմա էտ տղան ըսես ա. - Վեչինչ, արխային կաց:

Մեհետ մին օրիշ թաքավեր զորք ա ղըրկես էս մին թաքավերոթունին կոշտը, թա մին պեն ընք ըսլական, վեր գյիդա՛ցեքյ, էնա հու գյիդա՛ցեքյ, վեր գյիդացեքյ վեչ, յա կռըեվ ընք եր կըննական, յա էլ ախճիգյտ ընք տըննական: Էն թաքավերեն զորքը կյաս ըն, ըտրանց նշանց ըն տաս քառասուն խոխա, լոխ մին բոյու, մին շո՛րերավ, լոխ ո՛ւրո՛ւր նման: Տըհանք ըսես ըն.

Թա՛ գյիդացեքյ, ըստահանց վե՞րն ա ախճիգյ, վե՞րը տըղա, էն ա հու քյննա՛կան ընք, թա գյիդացեքյ վեչ, յա կըռեվ ընք ըննական, յա ախճիգյը տըննական ընք:

Էս թաքավերը սաղ ո՛ւրա՛ն երգյիրին իմաստուն մարթկանցը ծեն ա տաս, վերչ մինն էլ գյիդա՛ս չի:

Էն տղան ըսես ա, - Ցըես կը գյիդա՛մ:

Թաքավերեն ախճիգյը ըսես ա. - Դե վեր կգյիդա՛ս, իմ հոր ասե, թա ախճիգյտ ինձ կտաս, կքթենամ, թա չէ՝ չէ:

Թաքավերը սո̀ւվթա̀ կըզնվես ա, վեր էտ տղան իտի յա ըսես: Մին էլ ըսես ա.- Լա̀վ կինի:

Էտ տըղան պիրիս ա մին ղզղան ճըրա̀վ լցնես, կըծըցնես ,էտ՝ խխոցը մին մին ծոքըրնեն տինիս էտ կա̀ծ-կա̀ծ ճրին մաչին: Վերը վեր ճելլի յա տո̀ւս ունես ծեռքը, ըսես ա. «էտ ախճիգյ այ>: Վերը ետե յա տո̀ւս ունես, ըսես ա, «Տղա յա»:

Էտ զորքը ետ ա տըռնաս, քյինիս: Ամմա էտ տղեն էլլիա թըկես ըն: Ըսես ա.- Պա ծեր փեսան չը՞́մ:

Ըսես ըն. -Էտ ըրազեն հախկըն ա:

Մին էլ մին օրիշ խնթիրք ըն պիրիս: Իրեք ծի յըն պիրիս, մին բոյու, մին ռա̀նգյի, թա. - Ըսեցեքյ տեսնանք վե՞րն ա մին տըրեկան, վերը՝ էրկու, վերը՝ իրեք:

Էտ տղան ըսես ա. - Ինձ նշանեցեքյ ծեր ըխճկանը յրա՛ն, ասիմ:

Իտի էլ ընես ըն: Պիրիս ա մին աման կաթնը, մին տըեղ տինիս, միկա յոնջա՝ մին տեղ, միկա կյարի էլ՝ մին տեղ: Վերը վեր քյինիս ա, թա կաթնը խմե, ըսես ա. «էս ծին մին տրեկան ա»: Յոնջա օտողեն ըսես ա. «էրկու տրեկան ա»: Կյարին օտողեն ըսես ա. «էս ծին էլ իրեք տրեկան ա»:

Տահանք մին էլ ըն ետ տըռնաս, քյինիս, թա. «Քիթալ ըն»:

Իրեքինջի դո̀նումը պիրիս ըն իրեք խնձո̀ր մին ռա̀նգյի, ո̀ւրո̀ւր նման, ո̀ւրո̀ւր մըչանք, ըսես.- Քյթեք տեսնանք վե՞րն ա ուռութանան կտրած, վերը՝ քյըսօրին, վերը՝ ո̀ւրո̀ւգյո̀ւնը: Պիրիս ըն փսըկես թաքավերեն ըխճկանը յըրա, տինիս մին պլատում:

Մհենգյ էլ թաքավերեն փեսան պիրիս ա մին ղզղան ճո̀ւր լցնես, վեր տինիս, էտ խնձո̀րնեն քցիս ճրին մաչը տըսնաս մինը տակ ա ընես, մինը ճրին մաչին վըեննը կընաս, մինն էլ ճրին կլո̀խն ա ընցնես: Ըսես ա. «ճրին տակենը ուռութանա յըն կտրալ, մաչենը՝ քյըսորեն, կլխենը՝ ո̀ւրո̀ւգյո̀ւնը» :

Էն թաքավերեն զորքը ետ ա տըռնաս, քյինիս, թա լոխ մին տըղա յա քթա̀լ, ախճիգյն էլ փսակալ ըն էտ տղեն յրա: Տահանք տեղան տո̀ւրո̀ւր չըն կյաս, էլ կոըեվ չըն կյաս:

Թաքավերը մծացալ ար: Փեսան նան ախճիգյը շատ սերավ ին ո̀ւրո̀ւր նհետ: Թաքավերը էնքան վախտը քյըեցալ չար ըխճկանը պալատը: Մեհետ քյինիս ա, թա նի մըննե փըսեն տանը մըղակավը, ախճիգյը հեն ա ինիս մարթին կըլխանը երը նստած, դա̀ստի վեր հա̀րը տըսնաս ա,

հըմընչելան փըխչիս ա: Թաքավերեն փեսան ըտեղ դա̀ստի ծըծըղես ա:

Թաքավերը ըսես ա. - Յաղուզ ծըծըղեցեր:

Փեսան ըսես ա, - Մին պեն ա մետս ընգալ: Միենգյ կասիմ, մուրազիս հըսալ ըմ, պրծալ:

Թաքավերը թա. - Արա՞՜զը:

Թա. - Հա՛: Էն քշերին ըրազի, միե տըսնի, իրիքյնակը կլխիս տիյերան շոռ կյար: Գյիրթ վեր լո̀ւսինը տո̀ւս կյար, իրիքյնակը կյողըլը կենար: Միենգյ իրիքյնակը ախճիգյտ ա կլխանս վերը, տու տո̀ւս եկեր, հըմնչելան փախավ:

Թաքավերը ըսես ա. - Էտ ա՞ իլա̀լ ա̀րա̀զը՛տ:

Փեսան, թա. - Հա, էս ա իլա̀լ, միենգյ իմ աշկավս տեսի, ա̀րա̀զս ըսեցի:

Մին քանե վախտանը ետը թաքավերը մռնես ա: Տըղան թաքավեր ա տըռնաս, ախճիգյըն էլ թաքուհի: Տրանք շատ սերավ ո̀ւրո̀ւր նիետ ըպրես ըն:

45.ՄԸՐԴ ՆԱՆ ՆԱՄԸՐԴ ԱԽՊԵՐՔՅԸ

Ինիս ա, չինիս էրկու ախպեր: Տրանք մին օր հաց ըն թխես, քյիս ղարիբրոթուն:

Քյիս քյիս տո՞ւզնընաս ըն: Մը̀րդն ըսես ա,- Պեր քու հացտ օտինքյ:

Նամը̀րդըն ըսես ա. - Պեր քու հացտ օտինքյ:

Վերչը մը̀րդ ախպորը հացըն ըն օտըմ, պըրծնում:

Քյիս քյիս, մին էլ ըն տո՞ւզնընաս:

Մը̀րդն ըսես ա,-Դե ախպեր, իմ հացըս պըրծալ ա, պեր մհենզյ էլ քու հացտ օտինքյ:

Նամը̀րդըն ըսես ա. - Հաց չօնիմ քյըեզ տալի:

Ըտրանք ըստեղ ո՞ւրո՞ւր անա ճուկվես ըն: Նամը̀րդը քյիս ա, քյիս, մը̀րդը էտ ա մնաս, հըղըցնեն փուխես ըն:

Մը̀րդը քյիս ա, քյիս, տսնաս ա մին ծմակում ծոխ ա եր ինիս: Էտ ծոխեն յրա քյիս ա, տսնաս մին ճեղաց, նի յա միննես: Տսնաս ա ճղացպանը մին քյո̀մբրա քարան տված ըտեղ:

Տա կրակ ա ընես, քյո̀մբրան թխցնես, ուտես, ճղացեն մաչին քոն ինիս:

Մին էլ տսնաս ա քըշերեն կեսըմը իրեք հոքյի՝ կյո̀ւլը, արչը, աղվեսը նի յըն մըննես ճըեղացը: Տրանք ըսկսես ըն ո̀ւրա̀նց անա թարիփ անելը:

Արչըն ըսես ա.- Մին չինը̀րու տակե օխտը կարաս վըեսկե օնիմ:

Աղվեսն ըսես ա. - Մին պարկ վըեսկե էլ յըես օնիմ:

Կյո̀ւլն էլ ըսես ա.- Մին չոբանի վխճարներե մաչի, մին սիպտը̀կ վեխճար էլ յըես օնիմ, ընդրա կլո̀խը վեր կարին կտրին, տանին թաքավերեն տղեն հետե, ընդրա աշկերը կըլիվանա:

Մը̀րդ ախպերը էտ լոխ ըսկընաս ա: Տրանք, վեր լո̀ւսընաս ա, տո̀ւս ըն կյաս քյինիս:

Մը̀րդ ախպերը տո̀ւս ա կյաս տրանց հետան քյինիս ա, տսնաս աղվեսը վըեսկուն պարկերը տո̀ւս ա կալալ, թա արև տա:

Մը̀րդ ախպերը փափաղը պրտըտո̀ւս ա ընես, յրա պըծնես, Աղվեսը փըխչիս ա:

Մը̀րդ ախպերը վըեսկեն հվքես ա, քյիս չոբանեն վխճըրներեն հետան:
-Քյիս ա տրան քթնիս, յոր ա ունես էտ վըեսկան, ըտրան տաս:

Չոբանը վեխճարը տաս չի, ըսես ա. - Խրեզյ ա:

Չոբան են ըսես ա. - Իրեք կյից վըեսկե էլ կտամ:

Չոքանը վեխճարը մուրթես ա, մեսը ուտես ըն, կլոխը տաս ա մա̀րդ ախպորը:
Տա էտ կլո̀խը եր կալած կյաս ա դիբի թաքավերեն տոնը: Մարդ ախպերը մարթկանց անա հրցնես ա, թա. - Թաքավերեն տոնը վե՞րն ա:
Նշանց ըն տաս, ըսես. - Թաքավերը հի՞նչիտ ա պեթկ:
Մա̀րդըն ըսես ա.- Ցըես քյիս ըմ ընդրա տղեն աշկերը սղըցնիմ:
Տրանք ըսես ըն. - Քյինիլ մի, խեղճ ըս, քու կլո̀խըտ էլ ըն կտրելու, լոխճին կլո̀խը կտրալ ա, վեր կրեցալ չըն տղեն աշկերը սղըցնին:
Մա̀րդ ախպերը ըսես ա. - Հո՞ւնց անիմ, վեր կարիմ վեչ, թող իմ կլո̀խս էլ կտրե:
Էտ մարթիքյը թաքավերեն անա հրցնես ըն, վեր. -Ստի մին մարթ ա եկալ, ուզիս ա կյա տղետ աշկերը սղըցնե, թողինքյ կյա, թ՞ա չէ:
Թաքավերն ըսես ա. - Թող կյա:
Մա̀րդ ախպերը քյիս ա թաքավերեն տոնը: Թաքավերըն ըսես ա.
- Դե վեր եկալ ըս սղըցնելի, մին պեն ասիմ, վեր սղըցնիս թաքավերոթունիս կեսը քյըեզ ըմ տլական, թա չէ, կլո̀խտ կտրլական ըմ:
Մա̀րդն ըսես ա.- Լա̀վ, մինա̀կ մին պեն, տղատ իրեք օր մեռած ա մնական:
Թաքավերն ըսես ա.-Վեչինչ:
Մա̀րդը տհենց էլ ընես ա:
Իրեք օր թաքավերեն տղան մեռած ա մնաս, իրեքինջի օրը յավաշ-յավաշ եր ա կնաս, աշկերը պնա̀ս, հորն ըսես.-Ըրեվուտ աշխարքը մըզամ ըստի յա՞ իլա̀լ, յըես խե՞ինդի ըմ իլա̀լ:
Թաքավերն ստըեղ մա̀րդին ըսես ա. - Թաքավերոթունիս կեսը քյըեզ ըմ տաս:
Մա̀րդն ըսես ա. -Ուզիս չըմ, տու մինա̀կ ինձ օխտը ճո̀րե, օխտը քյա̀նդիր տո, վեչ մին պեն ուզիս չըմ քյըզանա:
Թաքավերը էտ լոխ տաս ա ըտրան:
Մա̀րդը էտ լոխ յոր ա ունես քյիս աղվեսին չինարուն տակը: Թաքավերեն նո̀քյա̀րներին նհետ չինա̀րո̀ւն տակեն քարը պարան ըն տաս, աղվեսեն վրեսկեն պըռնես էտ օխտը ճո̀րո̀ւն, քյիս: Քյիս ըն հըղըցումը տսնաս մին մարթ հաց ա ուզիս: Ո̀ւրա̀ն ախպերն ա ինիս: Կյաս ա հետան հսնես, տսնաս վեր ախպերն ա: Ըսես ա. - Ախպեր, հո՞ւնց ըս, մին պեն տնես ըս, թա չէ:

Ըսես ա.- Չէ, լի՛ն հա՛րի՛ւր մանեթ ըմ աշխադանք ըրալ:

Նամա՛րդը վեր տսնաս ա մա՛րդ ախպորը ճըրի՛տենքյը, ըսես ա. - Ախպեր, պա էտ, շտղան ա՞:

Մա՛րդն ըսես ա, վեր իստի, ի ստի տըեղան: Ըտեղ նամա՛րդ ախպերը հա՛րի՛ւր մանեթը տաս ա մա՛րդին, թա տար տռ մերունցը, թող յոլա քյինին յըես էլ ետ տեռնամ քյինիմ էտ ճըեղացը: Մա՛րդ ախպերը էտ օխտը ճի՛րեն յոր ա ունես կյաս ի՛ւրա՛նց տոն: Նամա՛րդը քյիս ա, քյիս, էտ ծմակումը ճղացեն ա հըսնես: Նի յա մըննես մաչը, քշերը մնաս:

Տու մի ասիլ էլա էտ իրեք հոքյին կյաս ըն, նի մըննես ճեղացը: Տրանք սկսես ըն պտմես, վեր տրանց վըեսկան տարալ ըն, վեխճարեն կլի՛խը տարալ ըն: Տրանք իտի խոսելիս տեղը աղվեսը եր ա կնաս ըսկսես ճեղացը շոռ կյալը:

Շոռ ա կյաս, ըստեղ-ընդեղ եշիս, եշիս, ախրը պըցրընաս ա, վըեննը տնիս տաղտին յրան, տսնաս մին մարթ ըտեղ: Էն էրկուսին ըսես ա. - Այ ախպերքյ, մեր դի՛ւշմա՛նը քըթա՛լ ըմ, էն ա ըստեղ:

Տրանք եր ըն կնաս նամա՛րդ ախպորը ըտըղան տի՛ւս ունես, մաչան էրկու կես ընես:

## 46.ԸՐԱԾԸՏ ԱՌԱՉԸՏ ԿՅԱ

Ընիս ա̀, չինիս մին հարուստ մարթ: Էտ մարթին լա̀վ հեյվըննի յա ընիս, տափեր ա ընիս, վերչը հարուստ մարթ ա ընիս, ինքյն էլ մին շատ սկպոյ մարթ ա ընիս, հանց հըմարե, հինչ նո̀քյա̀ր վեր ընիս ա, ըտրանա կյենգատ ընելավ ըն շոռ կյաս: Էտ մարթն ո̀ւրա̀ն նո̀քյա̀րնո̀ւն հախկըն էլ չի թամամ տաս, վեր քշեր-ցիրեկ էն ըն ընիս ո̀ւրա̀ն հետե չըրչըրվես:

Մին տարե սով ա ընզնես, ըտրա հեյվանը, պենը լոխ փուչընաս ա, տափերը ծեռքան ինքյ ըն ունես, թուղես լո̀ւթ-մամայի:

Էտ մարթը միկա յա մնաս, թա պըլանա:

Մին օր եր ա կնաս, թա վեր ըստի քյիսիբացալ ըմ, էն ա մին լա̀վ խոսկ օնիմ, տանիմ ծախիմ, պիրիմ ընդրանավ ապրիմ: Եր ա կընաս քյնիս:

Շատ ա քյնիս, թա խրեզյ, էտ աստուծ կզյիղա̀, ըտրա առաչը տո̀ւս ա կյաս մին ծիավուր, թա́.- Ախպեր, թո՞րն ը՞ս քյնիս:

- Քյնիս ըմ խոսկ ծախիմ:

- Հի՞նչ խոսկ ա, վեր ծխես ըս, պահե, քյըեզ հարկավեր կկյա:

Էտ մարթը ըսես ա.- Անկյին խոսկ ա, վեր մո̀ւշտարի տո̀ւս կյա, տըլական ըմ:

Էտ ծիավուրը ըսես ա. - Դե վեր շատ ըս թարիփ ընես, յըես մին մուշտարի, ասե կյինը, ինքյ օնիմ: Համ էլ ասե, տըեսնամ էտ հի՞նչ խոսկ ա:

Էտ քյըսըբբացած մարթը, թա̀. «Ըրածըտ առաչըտ կյա», խոսես էս ա, հախկըն էլ վեց մանեթ ա:

Էտ ծիավուրը ըսես ա, - Հա, լա̀վ խոսկ ա, խոսկըտ , ամմա հախկըտ թա̀նգյ ա, ծեռքես ա̀վա̀լ-ախըր իրեքյ մանեթ փուլ կա, պեր ինձ տոր, յոր օնիմ:

Էտ մարթը ըսես ա. -Լա̀վ, եր կալ:

Իրեք մանեթը յոր ա ունես, տոն կյաս: Էն ծիավուրն էլ քյնիս ա տոն, թա. - Մին խոսկ ըմ սըվերալ, տանիմ տեսնամ, հիշտեղ հարկավեր կկյա , յըես էլ կխարջիմ:

Քյնիս ա մին մեծ քաղաք հըսնես, տըսնաս ժողովուրթը օրախ, քյեփըրնեն քյոք, ամմենը ո̀ւրա̀նը կործեն: Հըրցնես ա, թա.- Ա́ ժողովուրթ, ծըզանա մինին ըսկյի մին դա̀րդ չօնե, վեր ըտի լոխ օրախ ըք:

Ըստահանք ըսես ըն. - Մեր թաքավերը հանց թաքավեր չի, վեր մըեզ յրա դա̀րդ թողե, հինչըրնես ա պակաս, վեր օրախ չընինք:

Էտ էր ա կնաս, քյնիս ըտահանց թաքավէրեն կոշտը, թա. - Թաքավէրը ապրած կենա, հինչու անիս, առաչըտ կըկյա: Թաքավէրը գյիդա́ս ա թա, վէր էրգյիրը բո́ւլուղ ա պըհես, ընդրա դա́րդա́ն ա ըտի ըսես: Պիրիս ա, ըտրան լա́վ պադէվ տաս, վըեսկէ տաս, թա հիբը սըէրտըտ պեն օզէ, էք էտ մարթը օրախ-օրախ էր ա կնաս, քյնիս:

Մին քանէ վըխտանը ետը մընէլ ա կյաս, թաքավէրը մնէլ ա տեսըտենը տաս, հըղէ տինիս: Մին օր ո́ւզիս ա, թա կյա, ախտոր կէրած ա ընիս, մըթկումը ըսես ա, վէր քյինիմ թաքավէրեն կոշտը, պըրա́նա́ս վըետ կկյա: Պիրիս ա պէրանը մին լաչակ կպես, քյինիս:

Թաքավէրեն նա́զիր-վա́զիրնէրան մինին կլո́խը յոր չունես, վէր էտ մարթը կյաս ա: Էտ վեզիրը ըսես ա. - Մին խտուրու խոսկու հետէ, խե՞ պադէվ ա ընես էն փորմեն: Ցըես հո՞ւնց անիմ, վէր ըտրա սպանիմ, էլ կյա վուչ:

Էտ մարթը վէր քյինիս ա, վա́զիրը քյինիս ա թաքավէրեն կոշտը ըսես. - Թաքավէրը ապրած կենա, էն մարթը վէր կյաս ա, խե՞ հըրցընես չը՞ս, ասիս. «Պէրանըտ խե՞ կապալ ըս»:

Թաքավէրը ըսես ա. - Դէ, բալամ հի՞նչ հըրցնիմ, մարթ ա, բա́լի մին դա́րդ օնէ, կապալ ա:

Վա́զիրը ըսես ա. - Թաքավէրը ապրած կըենա, էտ մարթը ըսես ա, վէր թաքավէրեն պըրա́նա́ն վետ ա կյաս վէր քյինիս ըմ կոշտը, կըպես ըմ, հանցու վետը գյիդա́մ վէչ:

Թաքավէրը ո́ւրա́ն մթկըմը կզնըվես ա: Էտ դո́նումըն էլ էն մարթը, վէր կյաս ա, թաքավէրը խուսես չի: Մին թոխտ ա կյիրիս, տաս ո́ւրա́ն, թա տար տոր մէր ղըսաբեն: Թոխտումը կյիրած ա ընիս, թա՝ «Հինչ մարթ կյա կոշտտ, սպանէ»:

Էտ մարթը յոր ա ունես թոխտը, էլ մաչինը կըրթիս չի, թա հինչ ա կյրած: Տո́ւս ա կյաս, քյինիս, մղակումը էն վա́զիրին մին տղա յա ինիս, քան տրեկան: Էտ տղան ըսես ա. - էտ թոխտը ինձ տոր, յըես լհա́ քյինիս ըմ ղսաբեն կոշտը, տանիմ ո́ւրա́ն տամ: Թա́ վէր թա́յդի յըս, տու քյինի տոն:

Էտ մարթը էտ թոխտը տաս ա վա́զիրին տըղեն, ինքյը ըրխըյին քյինիս ո́ւրա́նց տոն: Ամմա վա́զիրին տղան էտ թոխտը, վէր տնես ա ղըսաբեն տաս, ղասաբը դա́նտի փոնես ա, մուրթես:

Էքյսը էտ մարթը մըն էլ ա կյաս թաքավերեն կոշտը:

Թաքավերը մնաս ա ըրմացած, թա. - Պա էս խե՞ սաղ ա հա̀լա̀: Վա̀զիրին ծեն ա տաս, հըրցնես, տսնաս սո̀քյ-շիվանը ընգած ընդրա տոնը, թա̀ տղան մորթալ ըն:

Ետնան ամմեն հինչը վեր պըրզվիս ա, էն մարթը թաքավերեն ըսես ա. - Վէչինչ, թաքավերն ապրած կենա, ըրածտ առաչըտ ա եկալ:

# 47.ՇԱ̀ԳՅԻՐԴ ՄՈՒԽԱՆԸ

Ինիս ա, չինիս մին քյա̀սիբ կընեգյ ա ինիս: Մեհետ տահանք եր ըն կընաս, քյինիս քաղաք: Քյինիս ըն էտ կնգանը ախպորը տոնը: Մին քանի օր ըտեղ կընալանը ետը, տըսնաս ըն վեր ըտեղ փիս ա: Ո̀ւրա̀նց փիս ըն յըշիս:

Էտ կընեգյը եր ա կընաս, թա: - Բալա՛, եք, քյինինքյ տոն, բա̀լի մին թա̀հրա̀վ ապրինքյ:

Տղեն անըմը Մուխան ա ինիս: Էտ տղան յոր ա ունես, ըսես. - Ա՛ մար, տու քյինի, յըես ըստեղ կընաս ըմ:

Դային ըտրան ըսես ա, - Վախի մեր, դային քյըեզ էնքան օքուտ կտա, վեր քու օխտը պորտիտ էլ հերիքյ ա, լհա̀ թա̀քյ իմ խոսկիս անջուկ օնիս:

Մուխանեն մարը լա̀ց ինիլա̀վ հղե յա ընգնես բիդի տոն:

Մին օր Մուխանը թա.- Դայի էշը եր կալ քյինինքյ շըհա̀րը:

Էշին յըրա  մին քանի չըվալ, պեն ըն տինիս, հղե ինիս բիդի թաքավերեն վըեսկուն ամբարը: Մուխանը պիցիրնաս ա հո̀ւրթը, ա̀հետ ընդղան քյինդիրավ կախ ինիս բիդի կըլխիվեր, վըեսկեն ըծես չըվալը:

Դային տիյերան ծիքյ ա տաս պըցրցընիս: Քյա̀նդիրը թա̀զա̀դա̀ն կախ ա տաս, Մուխանը պիցրընաս ա:

Ահետ տինիս ըն էշին յրան, քըշիս պիրիս ո̀ւրա̀նց տոն: Ըտրանա ետը մին խիլլա̀ վախտ տըժըրոթուն չըն քըշիս:

Թաքավերեն մարթիքյը քյիս ըն, թա վյըեսկե յոր օնին, տըսնաս ըն վեր, վըեսկեն պըկասալ ա: Հինչքան մեչը մարթ ըն քըցիս, կըրես չըն, թա կյողեն ճարին:

Թաքավերը վեր էտ ըսկնաս ա, ըսես ա թա կյիժվի, ճըղճըղաս ա ո̀ւրա̀ն վա̀զիր-նա̀զրին յրան, թա. - Քուռակու տղեքյ, տուք ըշտեղ ը՞ք իլա̀լ, վեր մեր մո̀ւլքյը կյուղացալ ըն: Դե քյեցեքյ վըեսկուն ըմբարեն չորք թըրա̀փա̀վը չալա կտրեցեքյ, մաչը կուպրավ լըցեքյ, վեր կյողը կյա մաչն ընգյնե, փըռնինքյ: -Թաքավերեն մարթիքյը տի էլ ընես ըն:

Մուխանը տըսնաս ա, վեր վըեսկեն պըծնելի յրա յա, էլլա դայուն նհետ, էշը ըռշկընեն ըրած հղեյըն ինիս բիդի թաքավերեն վըեսկուն տեղը:

Դային ըսես ա, - Էս դո̀նումս էլ յըես նի մննիմ:

Լհա̀ վըեննը փուխիս ա, բո̀ւրդան խրվիս ա կուպրավ լիգյը չալան, էլ կըրես չի, թա տո̀ւս կյա, էլ մին էլ ճար չինիս:

Մուխանը ճարը կտրած դա՛մա՛ն տո՛ւս ա ունես, դայուն կլո՛խը կտրիս, շանը թողիս կուպրըմը խրված: Ետ ա տեռնաս, կյաս տոն:

Կլո՛խը թըղիս ա, ետնան դայուն կնզանը ամեն հինչը ըսիս: էքյսը թաքավերեն մարթիքյը քյիս ըն տըսնաս մին անկլո՛խ մարթ կուպրումը խրված:

Մնաս ըն մաթ մնացած: Մեյիղը տո՛ւս ըն ունես, տինիս հղցեն մաչին, էրկու ստրաժնիզյ էլ կո՛խկեն: Մուխանը էտ սկնաս ա ըսես.- Քռակեն, քյննա՛կան ըմ դայուն կյուղանամ, պիրիմ:

Մին եղան ա յոր ունես, էշին նստիս, տըմբըլա թխելավ քյիս հնիս դայուն մեյիղին: Վեր ստրաժնիկնեն ըտրան տըսնաս ըն, ըսես ըն. - Ա՛յ մարթ, առաշկըտ ծմակ ա կյաս, քշերըս ըստեղ կաց, ուռութանա կըքյնիս:

Մուխանն ըսես ա. – Չէ, քյինիլ բիղիմ, վըխիս ըմ էտ անկլո՛խ մարթը էշս կյուղանա:

Վերչը մընաս ա, հաց, արաղ ա տո՛ւս ունես, ստրաժնիկներեն հրփցնիս, լո՛ւլ շինիս, դայուն մեյիղը կըպես ա էշին, էշը հըղե տինիս, ինքյն էլ ըտրանց քըշտին պարանց ընգնիս, քոն ինիս: Էշը ինքյը-ինքյը թուշ հըսնես ա տոն: Քըռակենը մեյիղը թըղիս ա: Ուռութանա եր ըն կընաս:

Էտ Մուխանը էշըս, հա՛ էշս ընելավ, ճղճղաս ա, լա՛ց ինիս:

Ստրաժնիկնեն պիրիս ըն էշին հախը տաս Մուխանեն, հղե տինիս: Ուրա՛նք էլ քյիս թաքավերեն ըսիս:

- Թաքավերն ապրած կենա, քըշերես եկալ ըն մեյիղը կյուղացալ:

Թաքավերն ըտանց յըրան կըզնվես ա:

Էս դո՛նո՛ւմս էլ թաքավերը պիրիս ա մին քանե օղտ ո՛ւրո՛ւր անա կըպուտիս, թա. - Միհենզյ էլ հու վեր կըրիս ա, թող կյա կյուղանա:

Մուխանը մին պերա՛կ սիմ ա յոր ունես, կպիս ըռաշկե օղտեն չըվալան , կյաս տոն:

Քշերը վեր ղարավուլչիքյը քոն ըն ինիս, սիման ծիքյ ա տաս, օղտերը լոխ պիրիս ո՛ւրա՛նց տոնը, պեռները վեր ունես, օղտերն էլ մըրթուտես, ըծիս կըրըսնեն: էքյսը թաքավերը վեր սկըսնաս ա, ընդրանա շատ ա կզնըվես:

Էտ վախտն էլ մին օրիշ թաքավեր խայտառակ ա ընիս էս թաքավերեն, թա. Տու հի՛նչ թաքավեր ըս, վեր կրիս չըս մին ժուլիզյ փոնիս:

Էս թաքավերը ղըզաբու յա կյաս: Հրամման ա տաս, ըսես. - Հու վեր կյո՛ղը քթենա, ո՛ւրա՛ն քաշավը մին վըեսկե յըմ տըլական:

Մին պառավ կնեգյ տո՞ւս ա կյաս, թա յըես կըքըթնամ: Քիյս ա տոն, շենը շոռ կյալավ օղտու մես ուզիս: Մուխանանց տանը քռակենը պիրիս ա օղտու մես տաս էտ կնգանը: Աhետ էտ Մուխանը տո՞ւս ա կյաս տըռնան տըեսնաս, վեր պառավը դըրբըզեն նշան ա ըրալ, ինքյն էլ օղտու մըեսը ծեռքեն քյնիս ա: Մուխաննն ըսես ա. - Ա՛ պառավ, էտ խե՞ խրեգյ ըն տվալ, քյինինքյ շատ տամ:

Տնիս ա կլո՞խը կտրես քցիս կարասը:

Թաքավերը տըսնաս ա պեն չի տո՞ւս կյաս, մին պեն ա կյիրիս շըհա՞րեն պըտերեն նեստա տաս, վեր էտ կյողը hու վեր վերե յա, թող տո՞ւս կյա:

Մուխանը տո՞ւս ա կյաս: Թաքավերը պիրիս ա, թա՛ քըցի դուսաղխանան, վեր էքյսը բիդի կախ տան: Մուխանը ղարավուլչուն ըսես ա. - Թողեցեքյ քյնամ չո՞լը, էլhա կյամ.- Պիրիս ըն ծեռքը բըխով քցիս, թա՝ քյինի:

Ա՛յ hա՛յ Մուխա՛ն, բըխովը քարեն տո, կոտրե ետնան, էն վեր էն օղտ են մեսը ծզո՞ղ պռավեն կոռնը էնա իլա՛լ կուռնուտակեն, էտ չուրացած կոռնը կկապե մին քոլու անավ, ինքյըտ փախե: Ղարավուլչին ծիքյ ա տաս, ծեն ա տաս, Մուխանը քյիս չի, մին խիլլա՛ վախտանը ետը տըանք քյիս ըն տըսնաս քոլու անա մին չոր կոռն ա կապած: Քյիս ըն թաքավերեն ըսիս:

Թաքավերը լափ կըտղես ա: Թաքավերեն ախճիգյը ըսես ա. - Ա՛ hա՛ր, ինձ պեց թող, յըես քյինիմ կյողեն քթնամ:

Թաքավերը թուղես ա: Ախճիգյը յոր ա օնես սաղ քղաքեն ժողովուրթը hըվըքես, պիրիս դալ ընես: Իրեք օր տո՞ւզնը, ծարավ պըhիս: Մեր Մուխանը սուսըփուս եր ա կնաս, քյինիս թաքավերեն ըխճկանը կոխկը, ըսես թա. - Հինչ ըրալ ըմ, յըես ըմ ըրալ, դե hինչ օզըմ ըս, ըրա: Ինքյն էլ շատ նախշուն տղա յա ինիս, պարանց ա ընզնիս, թաքավերեն ըխճկանը նըhետ քոն ինիս: Քշերը, վեր կործը պրծնիս ըն, Մուխանը քոն ա ինիս: Թաքավերեն ախճիգյը մըկրատավը Մուխանեն բեղեն կեսը կըտրիս ա, ինքն էլ քոն ինիս, էս դո՞նըմ էս Մուխանը եր ա կնաս, մկրատը յոր ունես hինչքան բղա՛վուր մարթ կա, էտ թուփ եկած ժողովուրթեն մաչին, լըխին բեղին կեսը կտրիս:

Էքսը թաքավերեն ախճիգյը ծըծըղելավ քյիս ա, թա. - Ա՛ hար, կյողեն քըթալ ըմ, hո՞ւրո՞ւ բեղեն կեսը կտրած ինի, էն ա:

Հի՜նչ... Քյիս ըն տըսնաս լոխ էլ կես բիղանի յը՜ն։

Թաքավերը ուրթո՞ւմն ա ուտես, թա. - Հու վեր վերե յա, թող կյա, ասի։ Յըես ընդրան նի չըմ կյըլական։

Մուխանը քյիս ա, թա. - Թաքավերն ապրած կենա, լոխ յըես ըմ ըրալ։

Թաքավերն ըսիս ա. - Դե, լա՞վ, թաքավերոթունս քյըեզ ըմ տամ, ախճիգյս էլ, թա՞քի ինձանավ շուլուղ անող թաքավերին կլո՞խը մին պեն պիրիս։

Մուխանը թա.- Մին կյո՞ւլո՞ւ մորթե տո, ընդրան սաղ-սաղ պիրիմ։

Թաքավերը, հինչ ուզիս ա, տաս ա։ Մուխանը մին դութի էլ յոր ա ունես, մին փայտոնե մաչի տինիս, քյիս էն օրիշ թաքավերեն դըրբըզավը նի մըննիս, հունցու ղոնաղ։

Քըշերը եր ա կընաս բաղըմը կյո՞ւլին մորթեն շոռ ունես, քիշերեն կեսըմը նի միննես թաքավերեն կըլխանը երը զյընգօլակնեն զընգզընգցնե-լավ, ղա՞մա՞ն ծեռքեն վըեննը կընաս, թաքավերը եր ա թռչիս։ Մուխանը, թա.- Յըես Կափրիել հրիշտրակն ըմ, եկալ ըմ քյըեզ տանիմ, հըվաքվի, քյիս ընք երգյինքյը։

Թաքավերը տո՞ւղտո՞ւղաս ա, թա.- Ջանըս քե մատաղ, թող էքյուծ կե-նամ բաղարաքյ անիլ տամ, խխոցըս, պենին տըեսնամ, ա՞հետ եք ինձ տար։

- Լա՞վ։

Էքյսը քըշերվա էտ վախտը տեղան տո՞ւս ա կյաս, կըրըվաթեն տակեն կյեղած կյո՞ւլին մորթեն ո՞ւրա՞ն զնգօլակներավը յոր ունես, փըթըթես, վեր սա՞ս չանե, քյինիս թաքավերեն կյումըմը կնաս, յավաշ-յավաշ կյաս թաքավերեն ըկուշկավը նի միննես, կլխանը երը կըղնիս։ Թաքավերը մնաս ա բըղըըյար։

Մուխանն ըսես ա,- Դե եր կաց քյինինքյ։

Թաքավերը եր ա կընաս։ Մուխանը ըտրան տըննես ա բաղը, ըշտեղ ծըռերեն տակեն էն դութին կյեղալ ար։ Ըսես ա.- Նի մուտ մաչը։ Թաքավերը նի յա միննես դութին։

Մուխանը մին թա՞հրա՞վ դութին տըննես ա, փյտոնըմը տինիս, փայտոնը քըշես թո՞ւշ ո՞ւրա՞նց թաքավերեն պալատը, ըսես. թաքավերն ապրած կենա, է՞ս ա քյըեզ յրա մազաղ ընե՜ս, թա խե՞ չըս կըրես քու երգյիրըմըտ

կյուղոթունը թա̀րգյ անե՞ս, դե մհենգյ տես, յըես հ̀ւրա̀ն էլ ըմ կյուղացալ, դե թող մհենգյ էլ տնա̀զ անե:

Էտ պերած թաքավերը տկլոր, հըմընչիլավ ըսես ա.- Դե էլ անիլ չըմ, ինձ պեց թողեցեք, յըես քյինիմ:

Պեց ըն թուղես, քյինիս ա: Ընդրանա ետը թաքավերը հ̀ւրա̀ն ախճիգյն էլ ա տաս Մուխանեն, թաքավերոթունեն կեսն էլ ա տաս, օխտը օր, օխտը քըշեր հըսանիքյ ըն ընես: Ըտրանա ետը Մուխանը ժողովուրթին լա̀վ ա պըհես:

48.ՔՈՍԱԿ ԱԽՊԵՐԸ

Ընըմ ա, չընում, մին մարթ ա ընում: Էտ մարթին շինացիք Քոսակ ախպեր ըն ասում: Էտ մարթը վեր ուրան Քոսակ չասին, պիրում ա մին քյեփ սարքըմ: Մին եզն ա մորթում, լոխճին ղոնաղ ծեն տամ:

Կյամ ըն օտում, քյինելիս լոխ ասում.- Ապրիս, Քոսակ ախպեր, շա՜տ ապրի՛ս, Քոսակ ախպե՛ր:

Քոսակ ախպերը եր ա կենում էշը կա՛շվա՛վ պեռնում, քյինում վեր տանե ծախե: Վեր մըթնըմ ա, հսնում ա մին շեն, քյինըմ, վեր մին տան ղոնաղ ըղնե, տըեսնում տանը մինա՛կ մին կնեգյ: Էլ քյինըմ չի, տռանը վըենն ա կենում:

Շատ ա կենում, թա խրեգյ տեսնում ա մին մարթ ա կյամ պառուզո՛ւն ասում:

Էտ եկողը ասում ա. - Պա խե՞ տռանըն ըս վըեննը կացալ:

Ասում ա. - Տանը մարթ չիկար, քյեցե վեչ:

Էտ մարթն ասում ա. - Ե՛ք քյինինքյ:

Ամմա Քոսակ ախպերը ասում ա. - Կյամ չը՛մ:

Էն մարթը ասում ա. - Խե՞:

Քոսակ ախպերը ասում ա. - Վեր կյամ, էշս էլ բիղի պիրիմ:

Ասում ա. - Պա դե էշն էլ տանինքյ, կյուլմումը կըկապիս:

Էշը տանը մղակըմը կապըմ ըն, ուրանք ստոլին նստած հաց օտում: Մին խիլլա՛ ընցնում ա, Քոսակը օզում ա թա շլափկան դուզուցընե, չունքյի վեր շըլափկումն ա միշտ էշին կյորե տվալ, էշը տեսնում ա թա չէ, զռռամ ա.

Տնատարը ասում ա. – էշը հի՞նչ ա ասում, տու կըգյիդա՛ս:

Ասում ա.- էշն ասըմ ա. «կրվաթեն տակեն մարթ կա»:

Տնատարը եր ա կենում կացնավը թխում, էտ մարթեն սպանում:

Սպանում ա թա՛ չէ, Քոսակեն ասում ա, - Պա էս հո՞ւնց անիմ, վեր մեր շենա՛ցեքյ գյիդա՛ն վե՛չ:

Քոսակն ասում ա. -Յըես լա՛վ կըփըռտակիմ:

Տնատարը տրան մին քսակ վըեսկե յա տամ, թա տար փըռտակե:

Քոսակը կյամ ա մին շենու դրաղե տըեսնում մին կա՛լ ցորեն, կա՛լին մաչին թուփ ըրած, մարթ չկա, տանում ա սպանած մարթը տընում ցորնեն մաչին, էշը անում ցորնեն յրա: Տարը հռնուցա ուշունց ա տամ, թա՝- էշը

ցորնան տեն ըրա: Տա տեն չի անըմ: Ցորնատարը կյամ ա թխում, սպանված մարթը վեր ա ընգնում:

Քոսակը տո՛ւս ա կյամ, ասում. - Խե՞ յըս իմ հնգերս սպանալ:

Ցո՛րնատարը ասում ա. - Բալա՛ մ, մին խաթա յա, ընգալ ըմ, կա մին քսակ վըեսկե տամ, տար փըռտակե:

Դե համ էլ էն վախտը հրուստեն հետե վըեսկեն հի՞նչ ա:

Յոր ա օնում էտ վըեսկեն էլ պիրում, մեռալը թաղում մին խընդակում, ինքյը կյամ ո՛ւրա՛նց շենումը չավ անում, թա. - Կաշին տարալ ըմ վըեսկավ փոխալ, պերալ:

Շինացեքյ եր ըն կենում ո՛ւրա՛նց տվրնեն տանում, մորթում կաշին տանում, թա ծախին, ա̀մա̀լ չի կյամ:

Կյամ ըն շենը ասում.- Քոսակ ախպեր, քյա̀լա̀գյ ըս եկալ մըեզ:

Քոսակ ախպերը ասըմ ա.- Ծովումը էն ա, լա̀վ թմաշա կա, քյինինքյ:

Շինացեքյ լոխ քյինըմ ըն: Հղցեն քոսակը պտահում ա մին չոբանի, ընդրա նհետ շո՛րերը փոխում ա, ընդրան ըղարկում ծովեն կոշտը, թա̀ էս ա յըս էլ ըմ կյամ:

Չոբանը քյնամ ա, թա ծովեն եշի, շինացեքյ կուփե յըն տամ քցում ծովը:

Քոսակը չուբանեն վըխճըրնեն յոր ա օնըմ, կյամ տոն, թա. - Ծեր նանը մզոված, ինձ քցեցեքյ ծովը, ամմա ընդեղ լոխ վեչխար ա, դե քյեցեքյ տուք էլ պերեքյ:

Շինացեքյ լոխ քյինո՛ւմ ըն, նի տեռնում ծովը, ամմա Քոսակը լա̀վա ապրում:

Քոսակը վեր մինա̀կ ա մնում, ասում ա. - Էս հի՞նչ լա̀վա, շատ ժողովուրթ ինին, միկա էլ ո՛ւրա̀նք օտին, ինձ նհետ ապրին, քան թա̀ մինա̀կ յըես:

Ըստուծանա իրեք խնձո՛ր վեր ընգնե. մինը՝ ինձ, մինը՝ քյըեզ, մինն էլ՝ էն մարթին, վեր լըսըմ ա:

## 49. ՏՎԸՐԱԾԵՆ ՏՂԱՆ

Իլա̀լ ա, չիլա̀լ մին թաքավեր: Ըտրան իլա̀լ ա մին մաղար տղա, մին էլ մին մաղար ախճիգյ:

Ժուկ ա անց կենըմ, ժամանակ ա անց կենըմ, էտ թաքավերեն տղան ետ ա տըեռնըմ ո̀ւրա̀ն մորը, թա. - Ա՛ մար, պա հես ա տասնոթ-քսան տրեկան տղա յըմ տըեռալ, հա̀լա̀ իմ հոր կայքը տեսալ չը՛մ,մին պլատեն պլենիքյը լոխ ինձ տո, քյնամ տեսնամ՛ հի՞նչ կա, հի՞նչ չիկա:

Մարն ասում ա. - Հի՞նչ կա վե՞ր, կա պլենիքյը, քյնա, քառասուն տո̀ռնը կա ո̀ւրո̀ւր հետա մին-մին պեց, տես քու հոր հիշքան կայք օնե:

Տղան յոր ա օնում պլենիքյը, մին-մին տռները պեց անում, ամմա լուխճան վերչին տռանը պլենին մարը տված չի ինո̀ւմ:

Տղան մնամ ա զըրմացած, թա. հի՞նչ կա, վեր պլենին տվալ չի իմար, հա̀լբա̀թ մին խալվաթ պեն կա՛:

Քյինա̀մ ա մորը կոշտը, զըրմացած, թա.- Ա՛ մար, ասե տեսնամ, թա հինչո՞ւ հետե չըս վերչին տռանը պլենին տվա՞լ:

Մարը խըրըվխարավ ա կյամ. թա.- Վերթի ջան, քյըզանա հի՞նչ կյեղիմ, քու հա̀ր քյնա̀լիս ասալ ա, են տանը պլենին վեչ մինին տաս վուչ, յըես էլ չըմ գյուղում, թա ընդեղ հի՞նչ կա :

Տղան պլենին յոր ա օնում, ուրխացած վազ տամ, քյընա̀մ պենըմ: Նի յա մննում մաչ ղոլը, հի՞նչ տըեսնըմ, ամա՛ն-ամա՛ն:

Մին հո̀ւրըփա̀րի ըխճըկա նկար պատան տված տեսնալըն ըբա̀ստ ուրա̀նա̀ն քյնամ ա, օշը տանում, վեր ընգնում:

Շատ ա կենըմ, խրեգյ ա կենըմ, օշը կլո̀խըն ա կյամ, եր ա կենըմ նկարը պատան պուկըմ, պտատըմ, ջուբումը տինում, տո̀ւս կյամ, մորը ծեն տամ, թա. - Ա՛ մա̀ր, ճելլի պադրաստոթուն տես, հրամման տո ձիս թամբին, էքուծ քըշըրհանա քյըննա̀կան ըմ ըռնու կյինավ էլ ինի ախճիգյը քթենամ, պիրիմ:

Մարն ասում ա.- Վերթի ջան, վեր գյիղա̀ս, թա էտ ըխճկանը ղա̀րղա̀ն հիշքան թաքավերոթուննի յըն փչացալ, սկի քյընա̀լ չըս նըհախ տեղան: Քու հա̀ր էլ ա քյեցալ, մհենգյ հո՞ր ա, հետնը թեփուռը ըրվում չի : Օզում ըս տու վէլ քու հոր մնան կորչի՞ս: Չէ՛, բա՛լա ջան, քյինում մեր, յըես քյըեզիհետե մին լա̀վ ախճիգյ կօզիմ:

- Ա՛ մա̀ր, իմ ասածըս ասած ա, վեր մըեռնիմ էլ, բիդի քյինամ, պիրիմ:

Մարը տեսնըմ ա, վեր տղան խոսկեն պենդ ա վեննը կացած, պադրաստոթուն ա տեսնում, պրծնում, հղե տինո՛ւմ ։

Էտ տղան շատ ա քյինա՛մ, խըեգյ ա քյինա՛մ, մին շենըմ մին պառավ կնգա տան դոնաղ ա ընգնում։

Պառավը հրցնում ա, թա. - Բալա ջան, իտի մինա՛կ ըշտե՞ղ ըս քյինամ։

Տղան մին-մին դա՛րդերը նաղլ ա անըմ։

Պառավն ասըմ ա. - Բա՛լա, մին ծեռքը ծափ չի տալ, տու էլ մին չըլըմըրզ տղա։

Տղան ասըմ ա. -Նանի՛ ջան, պա հի՞նչ անիմ, լա՛վ, մին թահրը չիկա՞՛։

Պառավը իստի մին ջողաբ ա տամ, ասըմ. - Բալա ջան, իմ տղաս վեր քյըեզ նհետ ինի, անպայման կործերըտ աչ կինի, հաճող կինի։

- Պա շտե՞ղ ա տղատ, էտ լհա՛ մին լա՛վ պեն ա, հնգյեր չօնիմ, թող ինձ նհետ կյա։

- Բա՛լա ջան, պա շտե՞ղ ա, վեր ասիմ կյա, ըստրանա մին քանի օր առաչ մեր շենին քյոխվան մին քյա՛սիբ մարթու փռնում ա, շըլլաղավը թակըմ, թա էս սըհաթես խարջըտ տոր։ Տղաս ըսկանում ա քյուխվեն ըրարմունքը, ինքյն էլ իտի փիս պեները սիրըմ չի, հա՛վսա՛լա՛ չանըմ, եր ա կենըմ, քյնում ինքն էլ քյուխվեն փռնըմ, քու ծզած մին լա՛վ տըմբըզըմ, ծեռքը նշանց տամ, հիշքան ասիս։ Ասում ըմ, ա՛յ բալա՞մ, կործ չօնի՛ս, էլա ինձ եշըմ չի։ Վե՛րթի ջան, ըստ եղ ըն ասալ, թա. «Հա՛վսա՛լա՛ն գյանք այ»։ Հա՛վսա՛լա՛ չըրավ, մհենգյ պրիստավը փռնալ ա, ծակը կոխալ։ Վերթի ջան, հա՛լա՛ ջահիլ ըս, ինձ թա՛ անջուկ անիս, վնաս չըս անել։ Հա՛վսա՛լա՛ն գյանք ա, հավսալա ըրա, տեսնանք ըզադըմ ըն տղես, մինա՛կ էն կըկարե դա՛րդիտ դա՛րմա՛ն անե։

- Նա՛նն ջան, տղետ ըզադելը իմ պարթկըս։

Պա հո՞ւնց կըզադիս, բալա ջան, հորա՞, թա իտի մին պեն անի՞ս։

Կանիմ, կանիմ, արխային կաց, նանե ջան, յըես էս երգյիրին թաքավերեն տղան ըմ, հենց էս սհաթես յըես պրիստավեն հրամման կտամ, պեց կը թողե շան նըման։

Պառավը ուրխընելան նհետ սկսից ըրտասունք թափելը։

- Լաց մի նիլ, նանե, կըզադիմ, ամմա ասե տեսնամ, տղատ հի՞նչ կործ օնե քյուխվեն նհետ, վեր թակալ ա։

- Բալա ջան, աթալարը ասալ ա. «էծը էծին հետե լա՛վա, քանը մին սո՛ւրո՛ւ վեխճարը»: Պա վեր տըվըրածեն տղան ո՛ւրա՛ն նման քյա՛սիբ մարթին իրեյին իըսնե վուչ, իո՞ւ բիդի իըսնե՛: Ընտրա հա՛րը տվարած ա իլա՛լ, ղորմի ընդրան, հա՛լա՛ ո՛ւրա՛ն գյանքըմը մարթու փիսո՛թո՛ւն չըրա՛լ, լվո՛ւթո՛ւնա կըմա՛ն, ո՛ւրա՛ն տղեն էլ իտի յա տա՛ս տվալ, թա՛ քյա՛սիբներեն իրեյին միշտ կիըսնիս:

Էս խոսկեն նիետ խեղճ պառավըն սկսըմ ա լաց ինիլը:

- Լաց մի ինիլ, նանե, մարթիտ թողած խոսկերքը տղատ կըդարալ ա, ափարիմ նա, յըես ընդրան էս սիաթըս կըքյինա՛մ ըզաղիմ, ճակատը պաչիմ:

Թաքավերեն տղան քյինա՛մ ա պըիստավեն, քյուխվեն փըռնըմ, կպոտըմ, քցըմ ծակը, պռավեն տղեն էլ ըզադըմ: Տվըրածեն տղան ընգնում ա ո՛ւրա՛ն ըզադող տղեն կո՛լա՛վը, պըչպըչորըմ:

Կյամ ըն տոն: Թաքավերեն տղան դա՛րդերը նաղլ ա անըմ:

Էքյսը քըշըրիանա տվըրածեն տղան մըն էլ թաքավերեն տղան նստըմ ըն ծիյենը, իղե ինըմ:

Շատ ըն քյինա՛մ, խրեգյ ըն քյինա՛մ, ըոըչնեն էրկու իղե յա կյամ, մինը կարճ կածան, ամմա ծմըկներեն մաչավը: Էտ կծանըմը թուփ տեռած ըն ինըմ ըշխարքես մըրչեմնեն: Էն մին իղեն էլ ինո՛ւմ ա էրկան, լեն, տասը օրվա իղե: Ըստեղ տվըրածեն տղան օզում ա թաքավերեն տղեն քշըռելի, փորըցելի հետե մին հարց տա:

Ասը մ ա. - Ախպե՛ր, ասե՛ տեսնամ, վե՞ր իղըցավ քյինա՛նք, վեր էս կըծանավը քյինա՛նք, մին օրըմը տեղ կիասնինքյ, ամմա էս իղեն սաղ միրչեմն ա: Էն մին իըղեն լեն ա, թամո՛ւզ, ամմա էրկան, տասը օրվա իղե յա:

Թաքավերեն տղան ասըմ ա.-Լեն իըղըցավը քյինա՛նք:

- Խե՞, եք էս մոտե կծանավը մին օրըմը տեղ իըսնինք:

-Չէ, ախպերըս, պա էն մըրչեմնեն էլ ըն սունչ-կենթանի , նաիանց էլ ա աստուծ ստեղծալ, վեր ապրին, վեր ինդի քյինանք ծիյանոցը վըններեն տակ են մըլյոնավեր մըրչեմնը կըստակեն , լա՛վ ա էրկան իըղըցավը քյինա՛նք:

Տվըրածեն տղան տեսնա լավ, վեր դո՛ւզ ա ասըմ, վեր ընդրա խելքը թամամ ա, ծռվըմ ըն լեն իղեն, իղե ընգնըմ:

Մին խիլլա̀ քյեցած, բո̀ւրդա̀ն մին սա̀ս ըն սկանըմ. «Տվըրածեն տղա, տըվըրածեն տղա»:

Չորս ո̀ւնգյո̀ւնին եշըմ ըն, պեն չի ըրվամ: Էտ վախտը մին թվավուր միրչեմնը տվըրածեն տղեն կուռնեն յրա վեննը կացած ա ինո̀ւմ, լո̀ւզու յա օնում, սկսում խոսելը:

Ասըմ ա. - Յըես մին թաքավեր միրչեմն ըմ, եկալ ըմ ծըեզ մին լվո̀թո̀ւն անիմ, վեր տուք մըեզ խնայալ ըք, ծիակոխ չըք ըրալ. թևաս մինը պուկեցիք , նեղ տեղ ընգած տեղը ծըեզ հարկավեր կկյա:

Տըվըրածեն տղան ասըմ ա.- Հա̀լբա̀թ դո̀ւզ ըս ասըմ, պուք տամ, հարկավեր կըկյա:- Պուկում ա, պըրծընըմ, հղեն շարունակըմ:

Շատ ըն քյինա̀մ, խրեգյ ըն քյինա̀մ, եշըմ ըն տեսնըմ մին մեծ դոչ, ժինջիլը պո̀ւզերան կապա՛ծ, ծառան կախ տված: Տվըրածեն տղան ծիքյ ա տամ, ժինջիլը կըտրըմ, վխճարեն ըզադըմ, վեխճարըն ըստուծանա լո̀ւզու յա առնըմ, խոսըմ, ասըմ. - Վեր ինձ էս նեղ տեղան ըզադալ ըք, մզերաս էրկունը պուք տըվեք, յեր կալեքյ, նեղ տեղ ընգա̀ծ տեղը մա̀զը մա̀զեն կըքըսիքյ, յըես ծեր հրեյին հըսնըլական ըմ:

Էրկու մա̀զ ըն պուկըմ, վեխճարը թողըմ ըտեղ, հղեն շարունակըմ: Շատ ըն քյինա̀մ, խրեգյ ըն քյինա̀մ, տեսնըմ ըն մին պեցուր թումբու կըլխե էրկու մեծ ըրկաթե դըրբըզա, մին մեծ քյիլիդավ քըլլած:

Տվըրածեն տղան ասըմ ա. - Ա՛խպեր, մին տու ըստեղ ծիենը պահե, քյինա̀մ տեսնամ մին էն ի՞նչ դըրբըզա յա էն թումբումը:

Վերչը քյինա̀մ ա տեսնըմ դո̀ւզ վեր դըրբըզա յա, ամմա վեչ մին պեն չի ըրվամ: Ծիքյ ա տամ, պուկըմ, միենգյ էլ թո̀ւլ անըմ, քցըմ քեռծեն տակը: Էնքան ծանդրը ա ինըմ, վեր տափան նիետ աշխարքըս տո̀ւրո̀ւր ա կյամ:

Մին քանի մնուտանը ետը էտ դըրբըզեն տական էնքան սաղանեքյ ըն տո̀ւս կյամ, վեր ընդեղեքյ լըսնըրվում ա: Սաղանեքյը ուրխացած ընգնում ըն տվըրածեն տղեն վըններըն տակը, սկսում լո̀ւզ տալը: Լվո̀թո̀ւնեն տեղը սաղանեքյը էրկու մազ ըն տամ, ասըմ. - Նեղ տեղ ընգած տեղը ո̀ւրո̀ւր կըքըսիքյ, մունք կյըլական ընք քյոմագյ անիքյ:

Տվըրածեն տղան հրցընըմ ա, ասըմ.- Ծըեզ հո՞ւ վա քըցալ էտ տո̀ւրման:

Ասըմ ըն. - Կափրիյել հրեշտակը:

Տվըրածեն տղան մազերը յոր ա օնըմ, կյամ ախպորը կոշտը, նստըմ ըն ծիենը, հղե ընգնըմ:

Մին ծմակավ քյընա̀լիս տեսնըմ ըն իրեք հղե, մին պառավ մարթ հղըցումը նստած, չուքուխը պըրա̀նին։

Տվըրածեն տղան ասում ա. - Պարյօր քյըեզ հլիվեր, նստալ ըս ըստեղ հի՞նչ անիս։

-Աստուծու պարին, պարավ եկեքյ, ըստի ըշտեղ ը՞ք քյընա̀մ։

Ծիանցան վեր ըն կյամ, հլիվերեն քշտին նըստըմ, ո̀ւրա̀նց դա̀րդերը նաղլ անըմ։

Հլիվերը էրգան անջուկ ա օնըմ, թառանչ քաշըմ, ասըմ. - Հե՞յ... բալալա՞ր, տըժեր տեղեր ա, ա̀մա̀լ կյալի պեն չի տա՛։ Էտ ախճիգյը հեն ա մին քերծու պտկե շինած պլատըմ։ Պալատըն էլ տո̀ւսի դո̀լան հասար քաշած, պլատան մին վերստ քաշ, ծո̀րումը մին օբա կա, օբեն մաչին մին տոն կա, վեր պենաս, նրանա ետը վըեղեն տակեն մին պալատ ա ըրվըլա-կան, քառասուն տռնանե։ Էտ պլատումը օխտը օշափ ա իննա̀կան, ամմեն մինը օխտը կլխանե։ Էտ ուշուփնեն էտ ծեր ասած ըխճըկանը ախպերքյն ըն։ Տուք պիտի քյինա̀քյ էս մաչի հըղըցավը։ Էտ հղեն թուշ տըննական ա ընդեղ։ Ուշուփնեն ծըեզ հարցեր ըն տըլական, վեր կարիքյ պադաս-խանիքյ, ախճիգյը ծերն ա, վեր կարիք վուչ, ծեր ծլո̀ւմն ա։

Տղերքյը շունրակալ ըն ինո̀ւմ , մաչի հղեն ընգնըմ։

Քյինա̀մ ըն քյինա̀մ, հսնըմ ըն հլո̀ւվերեն ասած օբեն կոշտը։

Տվըրածեն տղան ախպորն ասըմ ա. - Ծիենը ըստեղ ըրըծցըրու, մին յըես պըցրա̀նամ, նի մըննիմ էտ օբան, տեսնամ հի՞նչ կա, հի՞նչ չիկա։- Տի էլ անըմ ըն։

Քյինա̀մ ա նի մըննըմ օբան, տեսնըմ օխտը օշափ նստած մին ղզղանու կոխկե, մըես ըն իփըմ։ Էտ ղըզղանը էնքան մեծ ա ինո̀ւմ , վեր ըշխարհ-քումըս հիշքան կենթանի կա, ամմեն մինան տասը դա̀նա̀ մաչին ա ինո̀ւմ ։

Կուճուր ախպերը ետ ա տըեռնըմ, մեծ ախպորը ասըմ. - Ախպեր, էս ղզղանըմը ամմեն կենթանուց կա, ամմա ինսան չիկա,էս լա̀ ինքյը-ինքյը, ո̀ւրա̀ն վըեննավը եկալ ա, փռնիքյ, քցիքյ ղըզղանը, իփիք։

Էս խոսկը տվըրածեն տղեն քյեփեն շատ ա նի կյամ։ Կզնըված ասըմ ա. - Գիդվա̀լ չի թա հու՞ ղզղանը կընգնե։ Դե վեր ծեր օժեն յրան էտքան դյուվա̀միշ- գյո̀րմա̀միշ ըլա̀ծ ըք, եր կացեքյ, տեսնամ կըկարիք ծեր ղզղանը վեր տընիքյ տափեն։

Ուշուփնեն եր ըն կենըմ ամեգյը մին տեղա փռնըմ, թա վեր օնին, կարըմ չըն: Տվըրածեն տղան մինա՛կ յոր ա օնըմ, հունց տափեն կյամ, վեր աշխարքըս տո՛ւրո՛ւր ա կյամ: Թաքավերեն տղան հենա ինըմ ննջալիս, վեր տափը տո՛ւրո՛ւր ա կյամ, իրեսեն յրա վեր ա ընգյնըմ, քեթը ըռնըմ ա: Ուշուփնեն մնամ ըն զըրմացած, թա տրան հիշքան օժ օնե, վեր մինա՛կ եր կա՛լա՛վ տափեն տրա՛վ: Տվըրածեն տղան տո՛ւս ա կյամ, ծեն տամ ախպորը, վեր ծիենը կապե տռնան, ինքյը կյա օքան:

Նի յըն մընըմ օքան, միենգյ տվըրածեն տղան ուշուփներեն ասըմ ա, - Մունք իստի-իստի պենու հետե յընք եկալ, եկալ ընք ծեր քուրը տանինքյ:

Ուշուփնեն տըեսնըմ ըն, վեր տա զոռի ջանավար տղա յա՛, խուստանըմ ըն վեր տան, ամմա բեղմա ո՛ւրա՛նց տված հըցերեն կարին ջողաբ տան:

Առաչի դո՛նումը ասըմ ըն. - Քառասուն փութ ցորեն, քառասուն փութ կորեկ ընք խառնըելու, վեր կարիք ճոկիքյ, ախճիգյը ծերն ա:

Խառնըմ ըն, պրծընըմ, ասըմ. -Միչև ո՛ւրո՛ւլգյո՛ւ բիդի ճոկիքյ,թա չէ ծեր օ՛ լո՛ւմըն ա:

Ո՛ւրա՛նք քյինա՛մ ըն վըերսի: Տվըրածեն տղան տես ա մտածըմ, տեն ա մտածըմ, բո՛ւրդա՛ն մենն ա ընգնըմ սաղանեն մազերը: Յոր ա օնըմ, մազը մազեն քսըմ, ըշխարքես սաղանեքյը կյամ ըն, յրա տեռնըմ, ճոկըմ, մին մնուտըմը, մին էլ կորչըմ:

Ուշուփնեն կյամ ըն, մնամ զըրմացած:

Երկունչի հարցը էն ա ինըմ, վեր ասըմ ըն. - Միենգյ էլ քառասուն փութ ցորեն, քառասուն փութ կորեկ, քառասունն էլ կյո՛րե խառնինքյ, բիդի ճոկիքյ:

Տամ ըն ո՛ւրա՛նց, էլիա ո՛ւրա՛նք քյինա՛մ վըերսի: Էտ դո՛նումն էլ տո՛ւս ըն օնըմ մըրչեմներեն թևերը, թևը-թևեն քսըմ, ըշխարքես մըրչեմնին հվաքվըմ ըն ըտեղ, մին ըշկըճըպումը ճոկում ըն, ճոկ- ճոկ, պըռծնըմ, ո՛ւրա՛նք կորչըմ: Ուշափնեն կյամ ըն, տըեսնըմ ճոկած, հազըր:

Իրեքինչի հարցը տամ ըն, ասըմ. - Դե վեր իտի օժավ ը՛ս, մեր կուճուր ախպորը նհետ բիդի դոչի տաս:

Սա վերչին հարցըն ա, վեր կըդարիս, եխնած ըս: Տվըրածեն տղան մտածում ա, հի՞նչ անե, ինքյը հո՞ւնց կը կարե, մին կլխավ օխտը կըլխանե օշափեն եխնի:

Մենն ա ընգնըմ վըեխճարեն մազերը:

Ասըմ ա. - Ցըես կարալ չըմ ծեր կուճուր ախպորը նհետ դոչի տամ, ամմա իմ կուճուր ախպերը կըկարե:

Մազը-մազեն ա քըըմ, էն վըեխճարը կյամ ա, սկըըմ ըն կըռվելը: Վըեխճարը քըմըկ-քամակ քյինամ ա, միենգյ էլ վազ տալավ կյամ, հու՞նց պուզերավ թխըմ, ուշափեն օխտը կլո̈խը նի յա միննըմ փորը, մեռնըմ ա:

Եխնըված ուշուփնեն ասըմ ըն.-Մեր քուրը հեն ա էն խութին պտկե պլատըմը, ընդեղան միչև ըստեղ գյըրա̈վ կարմունջ բիդի շինիքյ էտ կըմունջավը պիրիքյ:

Ախպերքը մընում ըն մըտըծելիս, թա հի՞նչ անին, վեր գյըրա̈վ կարմունջ շինին:

Վըեխճարըն ասըմ ա. - Ցըես կը կարիմ:

Մազը մազեն ա քըըմ, քսան վըեխճար ըն կյամ: Վըխճըրնեն մըրթոտըմ ըն, միենգյ էլ ամմեն վըխճարեն աչի քուղը յոր ըն օնըմ, թող անըմ քցըմ հորը, մնացածը տամ ուշուփներեն, ո̈ւրա̈նք կյամ, քոն ինըմ:

Շատ ըն քոն ինըմ, թա խըեզյ, եր ըն կենըմ, տըեսնըմ մին մեծ դուզղուն ո̈ւրա̈նց շոք ըրած: Հըրցընըմ ըն, թա. - Հինչո՞ւ հետե յըս մըեզ շոք անըմ:

Ասըմ ա. - Վեր տու̈ք մեր սոված դուզղունններեն սովա ըզադալ ըք, հինչ պահանջ օնիքյ, ինձ ըսեցեքյ, յըես մին ըշկըճըպումը կըկադարիմ:

Տվըրածեն տղան ասըմ ա. - Վեչ մին պեն հարկավեր չի, մինա̈կ թա կարիքյ էն պլատան միչև ուշուփներեն օքան մին գյըրբե կարմունջ շինիքյ...

Դուզղուներեն մեծը ասըմ ա. - Իմ աշկես յըրա, միչև էքյուծ քըշրհանա պադրաստ կըտեսնաս:

Դուզղունը դուզղունններեն թաքավերը ինիլա̈վ հրամմայըմ ա ըշխարհքես դուզղուններեն, վեր հըվաքվին, քյինա̈ն փլան թաքավերեն գյիբենեն պիրին:

Քյինա̈մ ըն պո̈ւրո̈ւմ, թաքավեր դուզղունը կարմունջը շինըմ ա, պըրծընըմ, կյամ տվըրածեն տղեն կոշտը, ասըմ. - Վեր քյինա̈ս, էն ախճիգյը քո̈ն իլա̈ծ ա̈ իննա̈կան: Պո̈լան մին տախտակ կըպուկիս կյոդլ կենաս: Նա̈զիրվա̈զիրը խորա̈գյնի յըն պըըլա̈կան ըխճըկանը հետե: Տո̈ւս կըկյաս օտիս, ըմընեքյը թողիս եխտուտ, նորու նի մըննիս տեղըտ: Վեր ասե՝ հո՞ւ վեր վերե յըս, տո̈ւս եք, քունն ըմ, տո̈ւս չի կյաս: Հիշքան վեր ո̈ւրթո̈ւմը օտե, էլա տո̈ւս չի կյաս, ամմա վեր ախպորըը անավ ո̈ւրթո̈ւմ օտե, տո̈ւս կըկյաս:

Տվըրածեն տղան գյիբին կըմունջավը քյինա̈մ ա, նի միննում ըխճըկանը տոնը, հունց դուզղունն ասալ ա, ինդի էլ անըմ ա:

Մին էրկու հետ նա̀զիր-վա̀զիրը խորագյ ըն պը̀ւր̀ւմ, տ̀ւս ա կյամ օտըմ, նի մըննըմ պ̀ւլեն տակը: Առաջ ախճիգյը կզնըվըմ ա նա̀զիր-վա̀զիրեն յըրա, թա խե՞ յըն իտի անըմ: Վերջը կլ̀ւխ ա ընգնըմ, վեր ստեղ մարթ կա, հիշքան ̀ւրթ̀ւմ ա օտըմ, տ̀ւս չի կյամ, ամմա վեր ախպորցը ընըմավը ̀ւրթ̀ւմ ա օտըմ, տ̀ւս ա կյամ:

Ախճիգյը ասըմ ա. - Վեր կրեցալ ըս կյաս ըստեղ, յըես քունն ըմ:

Տղան ասըմ ա. - Յըես եկալ ըմ քյըեզ տանիմ իմ ախպոր հետե:

Ճուխտեքան տ̀ւս ըն կյամ, գյիբին կըմունջավը քյինամ ուշուփներեն պալատը:

Ուշուփնեն ասըմ ըն, - Հալալ ինի ծըեզ, մեր տված հըրցերեն վեջ մին աշառ-բաշառ կըրեցալ չի կըղարե, տուք կըղարալ ըք: Մունքյ քյինա̀նք վըերս անինքյ, պիրինքյ, ուրխոթուն անինքյ:

Թաքավերեն տղան մնըմ ա ըխճըկանը քշտին: Օշափնեն նան տվըրածեն տղան քյինամ ըն վըերսե: Թաքավերեն տղան պլենիքյը յոր ա օնըմ, տըռները մին-մին պենըմ, քառասունինջի ութաղըմը եշըմ ա, տեսնըմ մին մեծ, օխտը կլխանե օշափ ժինջիլավ կպոտած, քշտեն մին լա̀գյա̀ն ճ̀ւր տրած, կարըմ չի խմե: Էտ օշափն էլ ա էտ ըխճըկանը հետե եկած իլա̀լ, ամմա հըրցերեն կրեցալ չի ջողաբ տա, փըռնալ ըն, կպոտալ:

Օշափը թաքավերեն տղեն ասըմ ա. - Ա՛յ տղա, էտ ճ̀ւրը մուտուցրու մին թիքյա խմիմ, ծարավ մըեռնըմ ըմ:

Ճ̀ւրը տն̀ւմ ա ըռըչին, խմելըն ըբա̀ստ օժը կյամա, հը՛ յա անըմ, ժինջիլնեն կտորըմ, տ̀ւս կյամ, ախճիգյը յոր օնըմ, փախչըմ, կորչըմ: Թաքավերեն տղան ̀ւրա̀նան քյինամ ա, վեր ընդնըմ:

Վերսըտեղան կյամ ըն, տըեսնըմ տղեն օշը տարած, օշափն էլ, ախճիգյըն էլ կան վուչ:

Տվըրածեն տղան ասըմ ա, - Տուք ըտեղ կացեքյ, յըես քյինա̀մ, տըեսնամ հի՞նչ ըմ անըմ:

Նստում ա ծին, հղե ին̀ւմ: Խիլլա̀ քյըն̀ւմ ա, տըեսնըմ մին մարթ համ վար ա անըմ, համ էլ ճումերը յոր օնըմ, ոտում, համ էլ ասըմ. - Վա՛յ, վա՛յ, ամա՛ն սոված մեռե:

Տվըրածեն տղան ասըմ ա. - Ըստի-ստի օշափ ը՛ս տեսալ:

Ասըմ ա. - Մին պատառ վախտ ար, վեր մին դա̀շա̀նգյ ախճիգյ ծեռքեն անց կացավ:

Տվըրածեն տղան ասըմ ա.- Մին չինիքյ, էրկու ինիքյ, եք քյինա̈նք:

Շատ ըն քյընամ, թա խրէգյ, պտահում ըն մին էրկան մարթու կյետավը շըքըռած, մին վեննը կյետեն էս ընգյո̈ւնին, մինն էլ էն մին ինգյո̈ւնին, կռանըմա, ճո̈ւր խմըմ, համ էլ թա, - Վա՜յ, ծարավ եմ ...

Հրցընըմ ըն, թա ըստի-ըստի մարթ չի տեսա՜լ:

Ասըմ ա, - Մին պատառ վախտ առաչ քյինա̈ց մին ախճեգյ ծեռքեն:

Տվըրածեն տղան ասըմ ա, - էրկու շինինքյ, իրեք ինիքյ, քյինա̈նք:

Իրեք հոքավ քյինա̈մ ըն, հըսնըմ հա̈մա̈ն էն քաղաքը՝ վերդեղ վեր օշափըն ա: Եշըմ ըն, տըեսնըմ, էն հըրսանեքյ ա անըմ, հա̈լա օխտը օր, օխտը քշեր բիդի հրսանեքյ անե:

Քյինա̈մ ըն, թա, - Մըեզ ղոնաղ չը՞ք ընթունիլ:

Ասըմ ըն,-Խե՞ չընք ընթունիլ:

Էն ճումը օտող մարթը հըրսըընքեն հացըն ա լոխ սրփում, օտըմ, ճո̈ւր խմող մարթն էլ կյինին:

Օշափեն դույուղ ըն անըմ, ասըմ. - Հացը, կյինին հերիք չի ըննա̈կան, պա հո՞ւնց ըք անըմ:

Օշափըն ասըմ ա, - Տուք հրսանեքյը ըրեքյ, յըես քյինա̈մ մին օխտը տոննա հաց պիրիմ հրեվան թաքավերոթունան:

Քյինա̈մ ա թա չէ, տվըրածեն տղան հետան ա ընգյնըմ: Քյինա̈մ ա հըղըցումը սպասըմ, էն վախտը, վեր օշափը կյամ ա, ո̈ւրա̈ն անա անց կենըմ, քմական փոնըմ ա, պըցըրցընըմ, հունց տափեն կյա՜մ, վեր տափը ճըղվըմ ա, ընգնըմ մաչը:

Տասը օր ժամանակ տված ըն ինո̈ւմ, տասինջի օրը, վեր իրեքյնակը մար մննելիս հասնի վեչ, ախպորը ուշուփնեն կախ ըն տըլական :

Յոր ա օնում, ախճիգյը տանըմ: Լհա̈ էն վախտըն ա հըսնըմ, վեր քյա̈նղիրը քըցած թաքավերեն տըղեն պոկը, տաբրետկան տակեն, օզում ըն կախ տան: Ախպորըն էլ ըզաղըմ ա, ուշուփներեն էլ յոր օնում, քյինում ո̈ւրա̈նց երգյիրը:

Օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ըն անըմ: Տվըրածեն տղան էլ ըրժընանըմ ա թաքավերեն տղեն քըվորը, թաքավերեն ըխճըկանը, թաքավերեն տղան էլ հո̈ւըրփերի ըխճըկանը:

Երգյինքան իրեք խընձոր ա եր ընգնըմ, մինը՝ ըսողին, մինը՝ կարթացողին, մինն էլ՝ էս հաքյաթը լո̈ւս աշխարք քըցողեն:

## 50.ԱԽՃԻԳՅ ԹԱՔԱՎԵՐԸ

Ընիս ա̀, չինիս, մին թաքավեր, ըտրա ընիս ա իրեք տղա: Էտ թաքավերը պռաված ա ընիս:

Մռնելի վախտը ո̀ւրա̀ն տղորցը, իրեքեն էլ ճռկ-ճռկ ծեն ա տաս, ըսես, - էն ա մեր բաղեն փլան ծառեն տակեն վըեսկե օնիմ, վեր մեռնիմ կըքյինիս տո̀ւս օնիս:

Թաքավերեն մռնելանը ետը, կուծի տղան քյիս ա, ճելլի տո̀ւս օնես, տեղը փոխես, տնիս օրիշ ծառե տակե:

Ամմա էն էրկու տղան հա̀լա̀ խուսես չըն:

Հորը թղելանը ետը, մեծ տղան քյնիս ա, թա տո̀ւս օնէ, տսնաս ա պեն չիկա: Կյաս ա բեքյեփ նստես, ըսկսես մտածելը:

Միշնա̀կ տղան էլ ա կյաս քշտեն նստես:

Պիծի տղան կյաս ա, թա, - Ա՛յ ախպերքյ, խե՞ բեքեփ ըք:

Ըտահանք դրդըրնեն ըսես ըն. -Քյեցալ ընք, թա վըեսկեն տո̀ւս օնինքյ, տեսալ պեն չի կա :

Պիծի տղան ըսես ա, - Պա ինձ էլ ա ասալ վըեսկուն տեղը, դե եկալ ըմ, թա̀ տո̀ւս օնիմ, տեսալ պեն չիկա:

Մեծ ախպերը ըսես ա,.- Մեր իրեքեն էլ տեղը ասալ ա, մեր հար, ըրեմն էն վըեսկեն էն ա մզանա մինին ծեռքեն:

Ըտրա կուծի ախպերքյը ո̀ւրթո̀ւմնը, հավատ ըն ընես, թա սըետ չընք

Մեծ ախպերը ըսես ա, - Վեր վզավ չըք օնում, եկեք քյնինքյ փլան թաքավերեն կոշտը, կյենգյա̀տ անինքյ:

Իրեքան համոզվես ըն , քյնիս:

Քյնիս տեղը տահանց առաչըն ա տո̀ւս կյաս մին օղտապան, թա.- Օղտս կորալ ա, տեսալ չը՞ք:

Մեծ ախպերը ըսես ա. - Ըղորթ ա, օղտըտ կորալ ա, ամմա սիպտա̀կ օղտ ա իլա̀լ:

Մաշնակ ախպերը ըսես ա. -Դո̀ւզ ա, օղտը լա̀վ, սիպտա̀կ օղտ ա իլա̀լ, ամմա պրա̀նեն մաչ տեղեն կեռեքյը կոտրած ա իլա̀լ:

Պիծի ախպերը ըսես ա. Պեռանը մին հակը եղ ա իլա̀լ, մին հակն էլ մեղըր: Էն օղտապանը ըտահանց ափաթը օնես ա, թա. -Կյողըս քթալ ըմ, կյողըս տուք ըք, վեր կաք: Օղտս ինձ տվեքյ:

Ըտահանք մնաս ըն գյո̀ւնա̀քար:

Մեծ ախպերը ըսես ա. - Վեր ըտի յա, եկ մըզնհետ, քնինքյ փլան թաքավերեն կոշտը կյենզա̀տ։

Էտ օղտապանը ըտահանց նհետ քյինիս ա։

Վեր հսնես ըն թաքավերեն կոշտը, թաքավերը հա̀լա̀ օղտապանեն ա ուզիս ճելլի հղե տինի, վեր նահանց պենը ըրխըյին քննե։

Մեծ ախպորը անա հրցնես ա, թա. - Հինչ ը՞ս զյիդա̀ս, թա օղտը սիպտա̀կ ա իլա̀լ։

Մեծ ախպերը ըսես ա. - Հղցավը կյաս տեղեն տեսալ ըմ մին քո̀լու յըրա մինկա սիպտա̀կ պուրթ, ընդրա յըրան էլ ըսես ըմ սիպտա̀կ ա իլա̀լ։

Մաշնակ ախպերն ըսես ա. - Մին քո̀լում մին չա̀նգյ կանաչ խոտ ա իլա̀լ, վեր օղտը կծալ ա, խոտը չա̀նզա̀վը պուք ա տվալ, մաչ տեղը մին խոտ մնացալ ա ցեց կացած, ընդրա դա̀րդա̀ն էլ յըես ասալ ըմ, մաչ տեղե կեռեքյը պուք եկած ա։

Պիծի ախպերն ըսես ա. -Վեր եկալ ա ըխպրին կռաց ալ, թա ճո̀ւր խմե, պեռնեն էրկու ղո̀լան կըթկաթալա մին ընգյո̀ւնին մղըրճանջեր ըն հըվաքվալ, մին ընգյո̀ւնին էլ մըրչեմնի, յըես ու յըես մտածալ ըմ, տեսալ, վեր պեռանը մին հակը եղ ա ըլալ, մին հակը մեղըը։

Թաքավերը օղտպան են ըսես ա. - Բալամ, քյինի օղտտ քթիր, սահանք կյող չըն։

Էտ օղտապանը քոռը փեշմա̀ն հղե յա ինիս, քյնիս։

Թաքավերը մնաս ա ըրմացած էտ տղոցը յըրա, թա էն իմաստունննի յըն, հինչ ըն, եկալ ըն, թա ինձ փորցին, յըես սահանց նհետ կարել չըմ կյամ...

Ինքյը-ինքյը շատ-խրեզյ մտըծելանը ետը, եր ա կնաս, քյնիս էտ տղոցը կոշտը, թա. - Բա՛լամ, ծեր կործը մինկա ջանջալ ա, քյեցեքյ էս հինչ թաքավերեն կոշտը, էն էլա̀ մինկա իմասկավ ա ինձանա։

Էտ խեղճերը եր ըն կնաս, միենզյ էլ հղե ընզնես բիղի էն մին թաքավերեն պալատը։ Վեր քյնիս ըն, տեղ հսնիս, էտ թաքավերը հրցնես ա, տսնաս, վեր ո̀ւրա̀ն հրեվան թաքավերեն տղեքյն ըն, հա̀լա̀ տահանց մին լա̀վ ղոնաղ ա ընես, թա. - Ետնան կքննիմ, տեսնամ էտ հի՞նչ կործ ա։

Պիրիս ա ստոլ արքես, ամմեն հինչան վեր տնիս, իրեք-չորս ջուռա-ջուռա մսավ խորազյ, փլավ, ճոտը տակեն տիրա̀ծ, ախտա ըրած հո̀ւնի ղարավ, ցորեն փափուկ հաց, վերչը ընես մին ճոկ տան մաչ, թա. - Ըտեղ հաց կերեքյ, դինջացեքյ, ետնան կխոսինքյ։

Էտ իրեք ախպերքը քյնիս ըն սուփրեն ղրաղեն նստես, վեչ մինը ծեռքը մկնես չի բիդի հացը: Թաքավերը ո՛ւրա՛ն նազիր-վեզիրներան մինին ըղրկես ա, թա քյնի թաքուն անգուճ կալ, տես էն տղեքյը հի՞նչ ըն խուսես, եք ինձ ասե:

Էտ մարթը կյաս ա, տռանը քմակեն նստես, անգուճ օնես:

Պիծի ախպերն ըսես ա. - Խե՞, հացը քցալ ըն իրեսեն թըմաշա ընելի հետե՛, կերեքյ, օտինքյ:

Մեծ ախպերը ըսես ա.- էն հացը մռնու ղրաղա յա, կյըեզման քանդած տեղը արտ վարած հաց ա, ըտրա դա՛րդա՛ն էլ յըես օտես չըմ:

Մաշնակ ախպերն ըսես ա. - Ըղորթ ա, հացը մռնու ղրաղա յա, էն վըեխճարը, վեր մորթալ ըն, էն խորազյնեն իփալ, շան լակուտ ա, շան կաթնը կերած ա:

Պիծի ախպերն էլ ըսես ա. - Ըղորթ ա, հացը մռնու ղրաղա յա, վըեխճարն էլ շան կաթնը կըերած ա, ամմա մեր թաքավերն էլ ախճիզյա:

Թաքավերեն նա՛զիր-վա՛զիրը տռանը քմակեն ըն ինիս, ըսկանաս ըն, եր կընաս, քյնիս թաքավերեն խա՛բա՛ր տաս, ըսես. - Հաց չըն պըրըններումը տըրա՛լ, էն ըն ըստի պեներ խուսես:

Թաքավերը մնաս ա ըրմացած, թա. - Սահանք իմաստուննի յը՛ն, հի՞նչ ը՛ն, էս վեր եկալ ըն կոշտս: Տահանց ծեն ա տաս, թա վեր տուք գյիդա՛ցա՛լ ըք իմ ամմեն մին սեկրետըս, փա՛նդըփիլըս, վեր էս ա էսքան տարի յա յըես թաքավեր ըմ, վեչ մինը գյիդա՛ցա՛լ չի, թա յըես ախչիզյ ըմ, յըես թախտաս վեր կըկյամ, տուք կնստիքյ տըեղս:

Պիծի ախպորը ըսես ա.- Վեր գյդա՛ցա՛լ ըս, թա յըես աղճիզյ ըմ, էն ա վըեսկեն էլ քու ծեռքետ, տեղը ասե, քու ախպերքյ քյնին տո՛ւս օնին:

Պիծի ախպերը ուրխացած, տեղը ըսես ա, թա. -Ախճիզյ թաքավերը լա՛վ գյիդա՛ց, էն ա փլան տա՛նձո՛ւն տակեն թաղած, քյեցեքյ տո՛ւս կալիքյ, ըպրեցեքյ:

Ինքյն էլ փսկվես ա էտ ախճիզյ թաքավերեն յըրա, ինքյը թաքավերը տըռնաս: Օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ըն ընես, ըտրանա ետը ըրխըյին ո՛ւրա՛նց երզյիրը կառավարես:

## 51.ՄԻՆ ԿՆԳԱՆ ՄԻՆ ՏՂԱ ՅԱ ԸՆՈ̀ՒՄ...

Ընո̀ւմ ա, չի ընո̀ւմ մին կնեգյ ա ընո̀ւմ: Էտ կնեգյը շատ քյա̀սիբ ա ընո̀ւմ: Էտ կնգանը տղան վեր մծանում ա, տրանց մին եզն ա ընում: Էտ տղան շատ ա մտածում, խրեգյ ա մտածում, որոշում ա, վեր ո̀ւրա̀ն մարը էտ եզանը նիետ լծե, վար անե, վեր ո̀ւրա̀նց քյա̀սիբոթունը անին:

Էտ վեղըմը մին թաքավեր ա ընո̀ւմ: Ըտրան ընո̀ւմ ա մին ախճիգյ: Էտ ախճիգյը նղանում ա տըեղան տըմբըիան ինի, տըեղան եր կենա, քյնա մին տեղ, քյնա հաց յոր օնե, օտե: Տրա մուհալ ընելին դա̀րդա̀ն հարը էտ ըխճըկանը համար պադրաստել ա տամ մին էրգյան փեղե կոռնը, վեր տըեղան ծեռքը մեկնե, հացը յոր օնե, օտե: Չո̀լը քյնա̀լի հետե էլ պադրաստել ա տամ մին ծակ դո̀շա̀կ, տակեն զարշոկ: Էտ ախճիգյը մըծանում ա, մարթի տալի տեռնում:

Մեհետ թաքավերը տո̀ւս ա կյամ, ո̀ւրա̀ն հա̀նդերը շոռ կյալի: Կյամ ա տեսնում էտ տղան ո̀ւրա̀ն մարը եզանը նըհետ լծած վար ա անում:

Թաքավերը էտ տղեն ասում ա. - էս հինչ ծմակըմը մին պել կյումաշ կա, քյինի փռնե, պեր էտ եզանը նըհետ լծե, վար ըրա, քու մար մեխկ ա:

Էտ տղան մին օր մին թուռնու հաց ա յոր օնըմ, քյնո̀ւմ ծմակը: Տեսնում ա մին քյո̀ք կյումաշ ըտեղ ըրածելիս: Էտ տղեն վեր էտ կյումաշը տեսնում ա, հետան ա պրծնում, թա պուզըհարե: Էտ տղան փախչում ա, պրծնում էտ կյումաշան: Կյամ ա տանը շատ քընենքյ անըմ: Վերչը կյամ ա էն մթկեն, վեր ո̀ւրա̀ն մարը յոր օնե, քյնա̀ ծմակը, մին տեղ տոն շինի, ընդեղ ապրին: Տի էլ անում ա: Մորը յոր ա օնըմ, քյնո̀ւմ ծմակը, մին պուճուր, նեղ տոն շինում : Տոնը վեր պըրծըընում ա, ընդրա էքսի օրը քյնամ ա ծմակը, տեսնում էտ կյումաշը ըտեղ ըրածում ա: Լհա̀ վեր կյումաշին աշկավն ա ընգնում էտ տղա́ն, կյումաշը էտ տղեն հետան ա ընգնում, վեր պուզըհարե: Տղան վազ տալըվ քյնամ ա էտ շինած տոնը նի մննում, ակուշկավը տո̀ւս կյամ, էտ կյումաշն էլ նի յա մննում էտ տղեն հետան էտ տոնը, էլ կարըմ չի էտ ակուշկավը տո̀ւս կյա: Մնում ա էտ տանը: Տղան ո̀ւրո̀ւգյո̀ւնը կյամ ա ո̀ւրա̀նց տոնը, մին քանե օր կենում, վեր կյումաշը խղճանա: Մին քանե օրանը ետը քյնամ ա տեսնում կյումաշը էնքան տո̀ւզնա̀ցալ ա, վեր թո̀ւլա̀ցալ ա, վեր էլ էտ տղեն եշում չի:

Էտ տղան քյա̀նդիրը յոր ա օնըմ, էտ կյումաշը կապում, կյամ տոն: Էքսի օրը կյումաշը լծում ա եզանը նըհետ, վար անում:

Մին փարա վախտ ընցնելանը ետը էտ թաքավերը մին էլ ա կյամ ՞ուրա՞ն վեղը -շոռ կյամ: Ասում ա. - Մին քյնիմ տեսնամ, էն տղան կարի՞ց էն պել կյումաշը փռնե, թա՞ չէ:

Կյամ ա տեսնում, վեր էտ տղան, էտ կյումաշը փռնալ ա, վար ա անում:

Թաքավերը քնենքյ ա անըմ, վեր տա խելունք տղա յա, վեր կըրեցալ ա էտ պել կյումաշը սվըրցնե, վար անե:

Էտ թաքավերը որոշում ա ՞ուրա՞ն մուհալ աղճիգյը տա էտ տղեն:

Թաքավերը էտ տղեն ասում ա.- Ցըես էս վղերեն թաքավերն ըմ, վեր տի խելունք տղա յըս, յըես իմ ախճիգյս քյըեզ ըմ տըլական:

Տղան զյուղում ա, թա թաքավերը տնազ ա անում: Սո՞ւվթա ասելավը սուս ա անում: Թաքավերը մին էլ ա ասում:

Էտ տղան ասում ա, - Վեր տու տամ ըս, յըես հի՞նչ պիտի ասիմ:

Վերչը էտ թաքավերը պադրաստոթուն ա տեսնում, վեր ըխճըկանը հըրսանեքյ անե: Պադրաստոթունը տեսնալանը ետը, հըրսանեքյ ա անում, էտ մուհալ ըխճկանը տամ ա էտ տղեն: Էքյսը եր կըենալի վախտը, էտ ախճիգյը մուհալոթուն ա անում, վեր քյնի տ՞ռնը, եր կենա հացը ստըլան յոր օնե, օտե:

Փըրկվելի վախտը մարը մտան քըցալ ար, վեր էտ ըխճկանը ծակ դ՞շա՞կ նան զարշոկը, մին էլ էրգյան ճպատը տնի պեժինքյըմը:

Ախճիգյը էքյսը մին տղա յա դարկում հա՞րա՞նց տոն, էտ պեները պիրին: Էտ տղան քյնում ա պերում: Տղան տեսնում ա, վեր էտ ախճիգյը շատ մուհալ ա, ամմա կարիլ չի տ՞ւս քըցի, քանի վեր թաքավերի ախճիգյ ա, որոշում ա մին պեն անի:

Էքյսի օրը եր ա կենում, քյնում վար անե: Վեր վարան կյամա, մին խրեգյ հաց ա տընում մորը քըշտեն, վեր օտե, մին խրեգյ հաց էլ ինքյն ա օտում, էտ ըխճկանն էլ հաց չի տամ, ասում ա. - Մըեզ մոտ հու աշխադում ա, նա հաց ա օտում, հու աշխադում չի, օտըմ չի:

Մի քանի օր ախճիգյը մնամ ա առանց հաց, վեր շատ ա սուվուծանում, մին օր էլ եր ա կենում, սկսում կարավաթեն առաչը սըրփիլը, տոնը սըրփիլը: Տղան հա՞նղա՞ն վեր կյամ ա, մարը խա՞բար ա տամ, վեր ըսօր հարթնը տոնը սըրփալ ա: Էտ ՞ւր՞ւզյ՞ւնը մին խրեգյ հաց ըն տամ հարթնանը: Հարթնն էլ ա ուրխանում, տղան էլ, մարն էլ, վեր հարթնը սկսալ ա կործ անելը:

Էքյսի օրը հարթնը էր ա կենում, տոնը սըփում, կոժը լցնում, տեղերը հըվաքում, օրիշ պեներ անում: Տղան էտ ո̈ւրո̈ւզյո̈ւնը վեր հա̈նդա̈ն կյամ ա, մին կուտուր հաց ա տամ:

Էտ ծեվավը էտ տղան, էտ մուհալ ըխճըկանը կործ անելը սվըցնում ա, սկսում ըն լա̈վ ապրելը:

Թաքավէրն ասում ա.- Քյինիմ տեսնամ, ախճիզյս հի՞նչ տեռավ, մեռա՞վ, թա սաղ ա:

Կյամ ա տղեն տոնը, տեսնում, վեր էտ օրը ախճիզյը ակուշկումը նստած թիլ ա կծկում, վեր նի յա մննում տոն, զըրմանում ա, շատ ա ուրխանում, վեր ախճիզյը կործ ա անում:

Ախճիզյը թաքավերեն ասում ա. -Ա՛ հա̈ր, տու էլ թիլերը փռնե, յըես կծկիմ, վեր քյըեզ էլ հաց տան օտիս, ըստանց օրենքյը ճոկ ա, հու աշխադում ա, նա էլ օտում ա:

Հա̈րը թիլերը փռնում ա, ըսկսում ըն թիլը կծկելը:

Ո̈ւրո̈ւզյո̈ւնը տղան հա̈նդա̈ն կյամ ա տոն, տըեսնըմ թաքավերը եկած, ըխճըկանը նիետ թիլ ա կծկում:

Տղան կնզանն ասում ա. - Խե՞ թողում ըս, վեր քու հա̈ր թիլը փռնե:

Թաքավէրն ասում ա, - Վեչինչ:

Սկսում ա զըո̈ւց անիլը: Թաքավերը տըեսնում ա, վեր էտ տղան տի շատ խելունք տղա յա, ինքյն ո̈ւրա̈ն որոշում ա, վեր թաքավէրոթունը կես անի էտ տղէն նիետ: Թաքավէրը կանչում ա էտ տղէն ո̈ւրա̈ն տոնը, թաքավէրոթունին կեսը տամ էտ տղէն: Թաքավէրեն մռնելանը ետը, թաքավէրոթունն անց ա կենում էտ տղեն: Էտ տղան կնզանը, մորը նիետ սկսում  ըն լա̈վ ապրելը,երգիրն էլ լավ կառավարելը:

Էն դա̈շա̈նգ երգինքան իրեք խնձո̈ր ա էր ընգնում, մինը՝ ասողեն, մինը՝ լսողեն, մին էլ՝ ես հա̈քա̈թը լո̈ւս աշխարք քցողեն:

## 52.ՔՅԸՆԱՑՈՂԸ ԵՏ ՉԻ ԵԿՈՂ ՍԱՐԸ

Ընիւմ ա, չնիւմ մին մարթ, մին կնեգյ: Տահանց ընիւմ ա քառասուն տղա:

Մին օր էտ տղորանցանը մեծը ասում ա. - Քյնանք, աշխարքը շոռ կյանք, մզետե հարուստոթուն ծեռք պիրինք:

Էտ պայմանը կպես վախտը քառասունինջի ախպերը տանը չի ընիւմ :

Առանց տրան ընցնում ըն, քյինիւմ: Էտ քառասունինջի ախպերը կյամ ա, տեսնում ախպերքը տանը չըն:

Հրցնում ա. -Ա՛ մար, պա ախպերքս հո՞ր ըն:

Մարն ասում ա. - Գյուղում չըմ:

Եշում ա, տեսնում ախպերքը կյամ չըն:

Էքյսը էս կուճուր ախպերը լա՜ց ա ընիւմ, ասում. - Յըես առանց ախպերքս կարում չըմ կենամ, ա՛ մար, տեղն ասե:

Վերչը մարը էտ խոխեն ծեռքեն ջանա յա կյամ, ասում ա. - Բա՛լա, դե քու ախպերքտ աշխարքս շոռ կյալու յըն քյեցալ, ապրուստ ճարեն, քյըեզ էլ տարալ չըն ընդրա հետե, վեր շատ ըս պիծի, կարել չըս ընդրանց նիետ շոռ կյաս:

Էտ պիծի թաղվածը եր ա կենում տրանց հետան քյինիւմ:

Հա՜րը տրան մին սոր ա տամ, ասըմ. - Քշերը էս սորը կը տինիս կլխըտակետ: Թա քշերը էտ սորեն կեսը տիւս կյա, ըռաշկետ ա՜ջա՜լ կա, վեր էրկունջի քշերը լոխ տիւս կյա, ըտրանա էլ իվիլ ա՜ջա՜լ կա, վեր իրեքինջի քշերը տիւս կյա, տափըմը խրվե, ըտրանց անա էլ իվիլ ա՜ջա՜լ կա: Էտ կուճի տղան էտ սորը յոր ա օնում, քյընիւմ:

Շատ ա քյնիւմ, խրեգյ ա քյընիւմ, տեսնում ա մին ավերակ ճեղաց: Տեսնում ա ճեղացումը իւրա՜ն ախպերքը քոն իլա՜ծ, էտ սորը տնըմ ա կլխըտակեն, քոն ինիւմ:

Քշերը մին վախտ եր ա կենում, տեսնում սորեն կեսը կլխըտական տիւս եկած: Եր ա կենում թողում ախպերքը քոն իլա՜ծ, սորը յոր օնում, քյընիւմ:

Շատ ա քյընիւմ, խրեգյ ա քյընիւմ, տեսնում ա շատ փիս թոզ ա անում: Մուտանում ա տեսնում մին մեծ կլխանի օշափ: Էտ տղան օշափեն կլխան շատ ա վախըմ:

Օշափն ասում ա. - Ամեզյը մին զարկ օնինքյ. առաչ յըես, հետավ տու:

Տղան համոզվում ա:

Առաչ օշափն ա զարկում: Էտ տըղեն ծին պըցրա՛նում ա երգյինքյը, տղան ազատվում ա: Հերթը հըսնում ա էտ տղին: Տղան զարկում ա, օշափի կլ՞խը կես ա տեռնում: Էտ տղան յոր ա օնում օշափին կլ՞խը կտրում, քցում խուրջինին մաչը, ետ քյընՙւմ ախպորցը կոշտը: Տրանց վէչ մին պեն ասում չի: Սուսըփուս քոն ա ինՙւմ :

Քշերավ էտ ախպերքը եր ըն կենում, տեսնում պուճուր ախպերը քոն իլա՛ծ:

Մեծ ախպերն ասում ա.- Մին քացի տվէք, եր կենա:

Եր ըն կցընում, քյընՙւմ:

Շատ ըն քյընում, խրեգյ ըն քյընում, մին ավերակի յըն պտահում: Էտ ավերակումը քոն ըն ինՙւմ : Էտ քշեր պիծի տղին սորը սաղ տՙւս ա կյամ: Տղան եր ա կենում, քյնՙւմ տեսնում էլիա թ՞զ ա պըցրանում: Էս դ՞նըմ տղան շատ փիս վախըմ ա: Մուտանում ա, տեսնում էրկու կլխանի օշափ:

Օշափն ասում ա. - Ամեգյը մին զարկ օնինք: Առաչ՝ յըես, ետավ՝ տու:

Օշափը զարկում ա: Էտ տղեն ծին երգյինքյ ա պըցրանում: Տղան ազատվում ա: Ետնան տըղան ա զարկում, օշափին էրկու կլ՞խը կտրում: Էտ տղան ուրխացած կլ՞խնին յոր ա օնըմ, քյընՙւմ, էլա սուսըփուս կյամ, ք՞ն ինՙւմ :

Առավոտը ախպերքը եր ըն կենում ասում.- Մին էտ լակուտին եր կցրեքյ հա՛լա՛ խբար պիրողին յշեցեք:

Էտ կուճի տղին եր ըն կցնում, էլիա ճըրնապարվում:

Էս դոնում մին ավերակ եխծե յա պտահում: Փշերը ըտեղ ք՞ն ըն ինՙւմ : Քշերը սորը տՙւս ա կյամ, տափը խրվում: Տղան եր ա կենում, քյնՙւմ տեսնում իրեքինջի ախպերը՝ իրեք կլխանի օշափը թուլ ինելավ կյամ ա:

Տղան էս դ՞նում վախըմ չի, սրտըպնդված ա ըն՞ւմ, մուտանում ա օշափին:

Օշափն ասում ա. - Իմ ախպորցս կլ՞խը հա՛լըփա՛թ կերալ ըս, վեր ըստեղ չըն: Ջա՛հիլ տղա, ամեգյս մին զարկ օնինք, առաչ յըես, ետավ՝ տու:

Օշափը զարկում ա, ծին պըցրանում ա երգյինքյը, տղան էլիա ազատվում ա, օշափին էրկու կլ՞խը կտրում ա, մինը յարալու անըմ, ետ քյնՙւմ : Տղան թաքուն քյնՙւմ ա օշափեն հետան տեսնում ա օշափը նի յա մենում մին վերի մաչ:

Մին պատառ սպասում ա, ետավ ընդրա հետան նի մենում էտ վերը:

Տեսնում ա մին ըխճկա գյո՞ւրգյում քո՞ն իլա՞ծ:

Ախչիգյը վեր էտ տըղին տեսնում ա, ասում ա. - Ետ քյնա, օշափը փիս կզնված ա, քյըեզ պըտըռ-պատառ կանի:

Տղան ասում ա, - Տու սուս ըրա, յըես տրան դիվանը ընելու յըմ:

Մին դո՞նըմ վեր թխում ա, օշափը մնում ա ըխճկանը գյո՞ւրգյո՞ւմը: Տղան քյընո՞ւմ ա էն մին օթախը, տեսնում ընդեղ քառասուն ախճիգյ: Տրանց անա, ամման մինան մին մուտանա յա հանում, տանում հըսցնում ո՞ւրա՞ն ախպորցը, մուտանեքյը հաքցնում ախպորցը մանները:

Ախպերքը քոն իլած տեղան հա՞լա՞ զո՞ւրթնանում չըն: Պուճուր տղան քո՞ն ա ընո՞ւմ: Ըռուըթանան եր ըն կենում, տեսնում նա քո՞ն իլած: Ըտրանք սկսում ըն իրեսնին լվանալը, տեսնում լըխճին մաններումը մուտանա կա: Կուճուր ախպերը զա՞րթնում ա, տեսնում ախպերքը զարմացած:

Ախպորցը յոր ա օնըմ, քյընո՞ւմ էտ ախճկորանցը կոշտը: Ամեգյը մինը յոր ըն օնըմ, ճընապար ընկնում: Քյնա՞լիս վախտը մին կյետ ա պըտահում:

Էտ կյետավը ընցնելի վախտը կյետան մին մարթ ա տո՞ւս կյամ, պիծի ախպորը ծիան փռնում, կըղնըցնում, ասում. - Քյըեզ նհետ պեն օնիմ: Մին պահանջ օնիմ:

Տղան ասում ա. - Տու ասի, յըես կադարիմ, մինակ ինձ պեց թող:

Էտ մարթը պեց չի թողում, տրան եր ա պերում ծիյին անա, քցո՞ւմ ճրին մաչը կուրցնում: Ճրին մին ղոլան քցո՞ւմ ա, էն մին ղոլան տըղան տո՞ւս ա կյամ, ախպորցը թափշուր անում ո՞ւրա՞ն կընեգյը, ինքյը էտ մարթին քշտեն մնում:

Էտ մարթը էտ պիծի ախպորը յոր ա օնում, քյնո՞ւմ ո՞ւրա՞ն բութկան: Ըտեղ էտ տղին ասում ա.- Քյինա՞, ինձ հետի Գյեղա՞ն-գյա՞լմա՞զ սարան Ռուստամ թաքավերին ախճիգյը պեր:

Տղան համոզվում ա: էրկուսավ քյընո՞ւմ ըն կյետին կոշտը, էտ պուճուր մարթը տղին մին ջիլա՞վ ա տամ, ասում.- Քցի ճըրին մաչը, մին սիպտա՞կ ծի յա տո՞ւս կյա՞լու, նստի, քյընա՞:

Տղան ջլա՞վը քցում ա ճո՞ւրը, մին սիպտա՞կ ծի յա տո՞ւս կյամ: Ծին նստում ա, քյնո՞ւմ կյետին էն մին ղոլը, ծին պեց թողում, ջլա՞վը յոր օնում, քյընո՞ւմ էտ կյետին մոտերքումը նստում:

Տեսնում ա մին պառավ ա կյամ: Հըրցնում ա պըռավան, ասում, - Թաքավերին ախճիգյը ըշտեղ ա ընո՞ւմ:

Պառավը պատմում ա, ասում. - Թաքավերին ըխճկանը հա̀րն օզում ա մարթի տա, քյնո̀ւմ չի, ասում ա՛ հավան չըմ տղին: Էն ա հըրսանիքը փռնած, վեչխարը մորթած, ամմա ախճիգյը համոզ չի՛:

Տղան ասում ա, - Քյնա̀ պեր ծեր տոն, յըես ընդրան համոզցընիմ, ինձ միար յոր օնիմ:Պառավն ասում ա, - Լա̀վ:

Քյնո̀ւմ ա ըխճկանն ասում: Նա հորը կանչում ա ո̀ւրա̀ն կոշտը, ասում, - Ա՛ հա̀ր, թող քյնա̀մ մին խըրեգյ ման կյամ, կյետին քշտերքը, էլիա կյամ:

Հա̀րը ուրխանում ա, ըխճկանն ասում ա.- Քյնա̀, ախճիգյս, քյնա̀ էս օրերը ման եք, սերտտ հինչ օզում ա, ըրա, քյնա̀:

Հա̀րը ուրխանում ա ընդրա հետի, վեր ախճիգյը խոսելիս չի իլա̀լ, միենգյ խոսում ա:

Ախճիգյը էտ պառավին նըհետ կյալիս ա, տեսնում մին սիրուն տղա կյետին քշտին կաղնած: Սիրահարվում ա էտ տղին յրա, ասում. - Յըես քյըզանից պուք չըմ կյալ:

Տղան ասում ա, - Դե վեր իտի յա, քյնա̀նք:

Ջլավը քցում ա ճո̀ւրը, ծին հանում, ախճիգյը յոր օնըմ, քյընո̀ւմ: Պերում ա հըսցնում էն մին կյեղ սըտանին, էն պուճուր մարթին:

Ախճիգյը տեսնում ա էտ մարթը մին կյեղ ա, մըրոքը՝ էրկու կյեղ: Ըտրանա վախում ա: Էտ տըղան ասած ա ինո̀ւմ, վեր «Քյըեզ հո̀ւրո̀ւ տամ, կըքյինիս, ետնան քյըեզ ազադելու յըմ ըտըղան, վախիս վեչ»: Էտ տըղան ախճիգյը տամ ա էտ մին կյեղ մարթին, ինքյը քյընո̀ւմ: Քյո̀ւնո̀ւմ ա, կյոողը կենում մին քո̀լու քըմակե, մընում ընդեղ: Էքյսը էտ մին կյեղ մարթը էտ ըխճըկանը թողըմ ա բութկումը, ինքյը քյընո̀ւմ վըերսի, մինչն ո̀ւրո̀ւգյո̀ւնը վըերս անըմ, կյամ, էտ ըխճըկանը նըհետ զրո̀ւց անըմ:

Էտ տըղան ըխճըկանը սըվըրցնում ա, վըեր էտ մարթը կյա, հըրցնի, տեսնա ընդրա հոքին ըշտե՞ղ ա: Ախճիգյը վիզա̀վ ա օնըմ, ասում ա. - Իմ հոքուս պարթկը ինի, հըրցնիմ, գյիդա̀մ:

Էտ մին կյեղ մարթը, վեր վըրսըտեղա կյամ ա, ըխճըկանան հրցնում ա, ասում. - Հը, քյեփտ հո՞ւնց ա:

Ախճիգյն ասում ա.-Քյեփս փիս ա, հո՞ւնց պիտի ինի, սաղ օրը միննըմինա̀կ, ինձ թողըմ ըս, քյընո̀ւմ, կոնյա հոքուտ տեղն էլ ա, ասըմ չըս, վեր նըհետը զո̀ւրո̀ւց անիմ:

Ասըմ ա. - Հոքիս էն ա էվլին մաչին:

Էքսը էտ տըղան կյամ ա էվուլը էրում, ամա հա̈լա̈ ըրխայինանում չի: Ըխճկանն ասում ա. - Բա̈լքյա̈ս խա̈փա̈լ ա̈, հա̈լա̈ ըսօր էլ մնանք, էլհա իըրցրու:

Էտ մին կյեղ մարթը վեր կյամ ա, էտ ըխճկանը անա իրցնում ա, ասըմ. - Քյեփտ հո՞ւնց ա:

Ասում ա. - Հո՞ւնց պիտի ինի, սաղ օրը մինա̈կ, սըերտս տըխուր, օշըմեթկըս քյըեզ յրա, հոքուտ տեղըն էլ դո̈ւզ չըս ասըմ, վեր կոնյա նըհետը զո̈ւրո̈ւց անիմ, վախտը անց կըենա, միչև քու կյալըտ:

Մարթն ասըմ ա. - Իմ հոքիս շատ տըժեր տեղ ա: Ընդրա նըհետ կարիլ չըս խոսիս:

Ախճիգյն ասում ա. - Կոնյա տեղը ասի, գյիդա̈մ:

Վեր շատ ա ասում, էտ մին կյեղ մարթը ասըմ ա. - Հոքիս էն ա Գյեղա̈նգյա̈լմա̈զ սարումը մին ա̈ռո̈ւծ կա, ընդրա հա̈քյվին մաչին մին բոթուլ կա, բոթուլին մաչին իրեք ծետ կա, իմ հոքին էտ իրեք ծետն ա:

Էտ տըղան էքյսի օրը լոխ գյո̈ւղո̈ւմ ա էտ ըխճըկանան, ջիլա̈վը քցում ա ճո̈ւրը, դա̈ստի էն սիպտա̈կ ծին կյամ ա, էտ տըղան ծիյին նստում ա, պըցրա̈նում երգյինքը, մին էլ քըշանում սորավը մին հենց թխում ա̈ռո̈ւծին, վեր ա̈ռո̈ւծը սատկում ա: Էտ տըղան ա̈ռո̈ւծին հա̈քյին ճըղում ա, բոթուլը տո̈ւս օնում, կոտրում, մաչան իրեք ծետ հանում, մինը սպանում, էրկուսը ձեռքին պահըմ:

Վեր տըղան ծետին մինը սպանում ա, էտ մին կյեղ մարթը ջա̈հտ ա անըմ, ո̈ւրա̈ն տոն քըցում, էտ ըխճկանը ասում. - Ինձ տար ճիրին կոշտը, ծըտին մինը սատկալ ա, յըես առանց ճիրի կարիլ չըմ կենամ:

Վեր էն տըղան ծըտերին մինն էլ ա սպանում, էն մին կյեղ մարթը էտ ըխճըկանը ասում ա. - Ինձ ճիրին մաչը կոխի, էլհա տո̈ւս կալ:

Էտ ախճիգյը ընդրան փոնում ա, քցում ճո̈ւրը հանում, քցում ճո̈ւրը, հանում: Վեր տըղան կյամ ա ըխճկանը կոշտը, ախճիգյն ասում ա, - Ծո̈ւտ ըրա էն մին ծետն էլ սպանի:

Տըղան էն մին ծետն էլ ա սպանում, վեր սպանում ա, էտ մին կյեղ մարթը դա̈ստի մըեռնում ա: Աշխարքըս ազադվըմ ա, լոխ՝ թա մարթ, թա հեյվան ազադվըմ ըն: Ժողովուրթը ուրխանըմ ըն, քյեփեր սարքում:

Ռոստամ թաքավերը քառասուն վեչխար ա մորթում, մեչան շախկա տամ, քյեփ սարքում, ո̈ւրա̈ն ժողովուրթին քըշտին էտ տըղին թա̈րիփ

անըմ: Ասում ա. - Վեչ մին ա՛ժդա՛հա՛ իտի դոչչաղոթուն չի ըրալ օխտանա-սուն տարվա մա չի: Էտ օխտանասուն տարումը օխտը հազար մարթ ա քյնացա՛լ Գյեղա՛ն-գյա՛լմա՛զ սարը, էլ ետ չի տըեռալ: Ետ ա տըեռնում էտ տըղին ասում- - Իմ ախճիգյս շատ լավըս ըրալ, վեր կյուղացալ ըս:

Պերում ըն օխտը օր, օխտը քըշեր հըսանիք անըմ: Տըղին նըստըցնում ըն թաքավերական թախտին:

Հրամմայում ըն վեր էն սիպտա՛կ օշափը, վեր ախպորցը թափշուր ար ըրալ, պերիլ տան կոշտը: Իտի էլ անըմ ըն: Էտ ըխճըկանն էլ փսակըմ ըն լոխճան մեծ վեզիրին տըղին նըհետ: Էլիա օխտը օր, օխտը քըշեր հըսանիքյ ըն անըմ:

Էտ քառասուն ախպորցը մաչին, կուճի ախպերը լոխճան դոչչաղ ա տո՛ւս կյամ, համ ո՛ւրա՛ն քառասուն ախպորցը հետե լա՛վ-լա՛վ ըխճըկերք ա ճարում, համ օշափներին ա կըտորում, համ էն մին կյեղ, մրոքը էրկու կյեղ կախարթ մարթին ա փըչըցնում, Գյեղա՛ն-գյա՛լմա՛զ սարին կըպըքըշկոռը ետ անում, ժողովուրթին արխայինցնում, համ էլ Ռոստամ էրկունջի թաքավերը տըեռնում: Իտի տըղերք թող մըեզ շատ ինին, խեղճ ընք, մեխկ ընք, աստուծ իտի տըղորցը շատ պահի, կոռանը ղվաթ տա, մեշկը դալար պահի:

53.ԾՈՒԿՆԸ ՓԸՌՆՈՂԻՆ ՏԸՂԱՆ

Ինըմ ա, չինըմ մին ծուկըն փըռնող ա ինըմ: Էտ ծուկըն փըռնողին ինըմ ա մին կընեգյ, մին տըղա: Ըտրանք ախկադ ին ապրըմ: Հարը տըղին նըհետ ամմեն օր ծուկըն ըն փըռնըմ, մին թահրավ ապրըմ:

Մին օր հարը հիվընդանըմ ա: Տըղան մինակ ա քյինըմ ծուկնը փըռնըմ: Դըբըրուգյունը թոռը քըցըմ ա կյետը մին վըեսկե ծուկըն ա տուս կյամ:

Էտ ծուկնը լուզու յա առնըմ, խոսըմ, ասըմ ա. - Ա՛յ տըղա, ջահիլ տըղա, ինձ էլիա ճուրը քըցի, քյըեզ մին լավութուն կանիմ ինձ ազադի, ինձ պեց թող, քյինիմ:

Էտ տըղան ուրան մըթկըմը ասըմ ա. «Ըստրանա ինձ հի՞նչ լավութուն անող կինի՛, վեր անի, լհա պեց թողիմ քյինի, կոզի ուրուգյունըս սոված մընանք»:

Իտի էլ անըմ ա: Տեռտակ ետ ա տըեռնըմ:

Հարը յրան կըզնըվըմ ա, ասըմ. - Ա՛ շան տըղա, պա մարթ ծուկնը կը փըռնի, մին էլ պեց թողի՞, էտ ըշտըղի ասած ա, աթաղան-անաղան իտի պեն չիլալ, թազա ճըտեր ըն տուս եկալ, արկաթի ծուվանք ըն ածըմ, վեչ մուհա՛լ, ախեր հի՛նչ մուհալ անիմ, կըլուխըս կըկյա:

Էտ տըղան հորը անգուճ չօնըմ: Ամմեն օր ուրան հացին փայը պերըմ ա, քըցըմ ծովը, ծուկնը կյամ ա, յոր օնըմ, օտըմ:

Մին օր էլ հարը դույմիշ ա ինըմ, ուշունց տալավ ընդրան տանան տուս ա քըցըմ, ասըմ. - Ա՛ էշի քոռա՛կ, բա յըես ամմեն օր չըրչարվիմ, ջափա քաշիմ, քըրթնունք թափիմ, հաց ըշխադիմ, տու տանիս ծուկնին տաս, դե կըլուխտ ըրփիլ մի, տուս եք տանան ռադ իլ, էլ աշկըս քյըեզ տեսնա վեչ, ըշտեղ օզըմըս, քյինի, էս էլ իմ բախտըս, լհա ասըմ ըն «տըղա ինի, տըղա ինի», էս էլ քյըեզ տըղա, տեսնամ դարդիս հի՞նչ դարման ա: Ախճիգյը հազարապատիկ ըստրանա լավա:

Էտ տըղան լաց ինելավ եր ա կըենըմ, կըլուխ յոր օնըմ, քյինըմ:

Քյինըմ ա, քյինըմ, ընգնըմ ա օտար երգյիրնի, ճընապարին մին պառավ մարթ ա ջըհում, ասըմ.-Ա՛ բալա, էտ ըշտե՞ղ ըս քյինըմ, իտի միննը-մինակ:

- Ապեր, քյինըմ ըմ աշխադանքի, վեր մին թահրավ կըլուխըս պահիմ:

Էտ պառավ մարթըն ասըմ ա. - Ա՛ դարիբ բալա, յըես էլ ըմ աշխադանքի քյինըմ, եք միննտեղ քյինինքյ աշխադինք, մին տեղ էլ ապրինք: Հինչ էլ աշխադինք, հալալ մեչան կես անինք:

Էտ տըղան ռազի յա կըենըմ։

Քյինըմ ըն, քյինըմ, շատ ըն քյինըմ, թա խըեգյ ըն քյինըմ, շատ նան խըեգյը ո̀ւրա̀նք ըն գյո̀ւղո̀ւմ, վերչը հըսնըմ ըն մին մըեծ, հարուստ քաղաքի։

Քյինըմ ըն ըտըղին թաքավերին մեծին կոշտը, ղաչանք անըմ, վեր ո̀ւրա̀նց աշխադանքի յոր օնի։

Էտ մըեծը ըտրանց գյա̀ղա̀ յա յոր օնըմ։

Էտ թաքավերին մին մարալ-ջեյրան ախճիգյ ա ինըմ։ Մին դո̀նըմ էտըխճըկանը լո̀ւզո̀ւն լալկվըմ ա։

Թաքավերը հիշքան դոխտուրնի յա կանչըմ, պեն չի տո̀ւս կյամ, վեչ մինը կարըմ չըն լըվըցնին։

Մին օր էտ պառավ մարթը, մին ճըպատ ծեռքին, քյինըմ ա թաքավերին կոշտը, ասըմ. - Թաքավերը ապրած կըենա, եկալ ըմ ախճիգյըտ լիվըցնիմ։

Թաքավերը կըզնըվըմ ա, ասըմ. - Ա՛ պառավ, պըլը-մել խոսիլ մի, պըլը-կատար չըս, էտ ա մեծ մարթ ըս, պըլըհո̀ւշտրի չըս, պաղեվըտ պահի՛, տու լալեգյ լիվըցնող չը՛ս, քյինի պենիտ։

Ամմա էտ մարթը ծեռք չի քաշըմ, ասըմ ա. - Չէ՛ վեր չէ՛, յըես կըլի-վըցնիմ։

Թաքավերըն ասըմ ա.- Դե վեր իտի յա, իմ ախճիգյըս լափ առոի տեն ընզածը իրեք հետ խուսուցըրու, թա կարիս խուսուցընիս, համ ախճիգյըս քյըեզ կտամ, համ էլ թաքավերոթունիս կեսը կտամ քյըեզ։

Էտ պառավ մարթըն ասըմ ա, - Թաքավերըն ապրած կենա։ Առաչի դո̀նըմը քու ըխճըկանըտ լիա̀ էս ո̀ւրո̀ւզյո̀ւն կը խուսըցնիմ։ Ըխճըկանըտ տիր մին օթախի քյո̀ւնջո̀ւմ, յա պուճախըմ, մին փա̀րդա̀ էլ քաշի, վեր իրեսը ըրվա վեչ, վեզիրներատ մինին էլ կան չի, վեր տեսնա, կյա քյըեզ ասի։

Թաքավերը իտի էլ անըմ ա։

Ո̀ւրո̀ւզյո̀ւնը վեզիրը կյամ ա, էտ պառավ մարթին նըհետ քյինըմըն էն օթախը ըշտեղ էտ ախճիգյըն ա։

Ըսկըըմ ըն վեզիր նան էտ մարթը խիլլա̀ զո̀ւրո̀ւց անիլը։

Վերչը էտ պառավ մարթը ասըմ ա. - Վեզիր, ախեր մունք շատ զրո̀ւց ըրինք, մըհեգյ էլ թող էս ճըպատը զո̀ւրո̀ւց անի։

Ասըմ ա, պըրծընըմ, ճըպատը թող անըմ, քըցըմ օթախին մեջտեղը։

Ճըպատը ասըմ ա, - Թաքավէրի ախճիգյ, լա՛վ լըսի հա՞, վերչըմը բէդմա ջողաբ տաս:

Վէզիրը շըշկըլված մընացալ ար տեղը մեխված:

Ճըպատը ասըմ ա.- Իլա՛լ ա, չիլա՛լ մին մարթ: Էտ մարթին իրեք տըղա յա իլա՛լ: Մին օր էտ մարթին ախպօրը մաղար ախճիգյը ծանդըր հիվանդանըմ ա: Քըշերավը էտ մարթին մեծ տըղան քյինըմ ա ո՛ւրա՛ն ղորփուրը ըխճըկանը զիրավ ընցնի:

Մին խիլլա՛ կընալանը ետը ղորփերըն ասըմ ա. «Թա՛ կարիս մին հենց ուստոթուն սըվերիս, մին փեշա՛կ սըվերիս, վեր օրը հա՛րո՛ւր մանեթ փող աշխադիս, ախճիգյըս վեր լիվանա, քյըեզ կըտամ»: Տըղան բեքյեփ քյինըմ ա ո՛ւրա՛նց տոն: Քյըսօրին միշնա՛կ տըղան ա կյամ ո՛ւրա՛ն ղորփուրը ըխճըկանը զիրավ ընցնի: Մին պատառ խոսելանը ետը, ղորփերը էլիա իտի յա ասըմ:

Իրեք ախպերքըն էլ ո՛ւրո՛ւր պեն չըն ասըմ, ո՛ւրա՛նց դա՛րդը-դեյիդը թաքուն ըն պահըմ: Վերչը մին օր ո՛ւրո՛ւր ասըմ ըն ո՛ւրա՛նց սըրտինը: Էքյսը իրեք ախպերքըն էլ ո՛ւրա՛նց հորը մընանք պարով ըն ասըմ, ճընապար ընգնըմ, քյինին ամեգյը մին փեշա՛կ սըվերին: Մեծ ախպերը տըեռնըմ ա իմաստուն, միշնա՛կ ախպերը՛ լա՛վ վազ տըվող, պուճուր ախպերը՝ հաքյիմ: Տըրանց անա ամմեն մինը օրը հա՛րո՛ւր մանեթ ա ախշադըմ: Մին օր մեծ ախպերը ասըմ ա. - Մեր ղորփորը ախճիգյը էն ա մըռնելի յրա, հարկավեր ա շո՛ւտ նի հըսնիլ:

Պուճուր ախպերը ասըմ ա, - Յըես ինդի մին ճար օնիմ, վեր խըմի, դա՛ստի լիվընալու յա, թա վեր շո՛ւտ հըսընող ինի:

Միշնա՛կ ախպերըն ասըմ ա. - Յըես շո՛ւտ, վազ տալա՛վ կըհըսցնիմ: Ասըմ ա, պըրծընըմ, ճարը յոր օնըմ, վազ տամ, մին մունուտըմը հըսցընըմ: Հիվանդը ճարը խըմըմ ա, լիվանըմ: Վերջը էտ իրեք ախպերը կյամ ըն յրա հըսնըմ: Էտ ախճիգյը մըհեկ էտ իրեք ախպորցան հո՞ւր բէդմա տան: Մըհեկ թաքավէրի ախճիգյ, տինինք թա տու վըս սուդյան, ախճիգյը հո՞ւր կըտաս:

Փա՛ռդին քըմական թաքավերին ախճիգյը ասըմ ա, - Պուճուր ախպորը:

Վէզիրը համ շատ ուրխանըմ ա, վեր թաքավէրին ախճիգյը խոսից, համ էլ առռի քար կըտրըմ:

Ճըպատըն ասըմ ա. -Խե՞ պուճուր ախպորը:

Թաքավերին ախճիգյը ասըմ ա. - Շատ պա̀րզ: Մեծ ախպորը իմաստո-թունը ընդրա ծեռքան ինք օնող չի ինելու, կյալու չըն կըլի̀խը պուք տան, խելքը մեչան հանին: Միշնա̀կ ախպերը լա̀վ վազ տըվող ա, էտ վազ տալը կյալու չըն ինքյ օնին ծեռքան: Պուճուր ախպորը հընտրած, քյիթա̀ծը լի̀ն էն ճարըն ա, վեր էն ախճիգյը խըմալ ա, լիվացալ, սըղացալ: Էտ ճարը խըլալ ըն ընդրա ծեռքան, թողալ տեռտակ:

Ճըպատը ասից. - Շատ դի̀ւզ ըս ասըմ, թաքավերի ախճի՛կ:

Վեզիրը վազ ա տամ թաքավերին կոշտը լոխ նաղլ անըմ: Թաքավերը ընգուջներին հըվատամ չի, ամմա դե վեր վեզիրը ասըմ ա, շատ ա ուրխա-նըմ: Էն մին օրը էտ պառավ մարթը թաքուհուն նըհետ ա քյինի̀ւմ էտ ըխճըկանը օթախը:

Ըտրանք մին խիլլա̀ զի̀ւրի̀ւց ընելանը ետը, էտ պառավ մարթը ճըպա-տը թող ա անըմ, քըցըմ, օթախին մեշտեղը, ասըմ. -Մունք շատ խոսեցինք, մըհեկ էլ թող ճըպատը խոսի: Թաքավերին կընեգյը մընըմ ա մաթ մընացած:

Ճըպատըն ասըմ ա. - Թաքավերի ախճիգյ, լա̀վ լըսի, պաղասխան ըս տալու: Ինըմ ա, չինըմ մին մարթ ա ինըմ: Էտ մարթին ինըմ ա իրեք տըղա: Տա ի̀ւրա̀ն տըղորցը ղըրկըմ ա կարթելի: Իրեք ախպերքըն էլ լա̀վ ըն կարթըմ, էն պեցի̀ւր շկոլըն էլ ըն ավարտըմ: Էտ իրեքին լա̀վ կըրթելի հետի բաղարկեքյ ըն տամ: Մեծին տամ ըն մին հիլի, միշնա̀կին՝ մին մոտացիկըլ, պուճուրին՛ մին կյա̀րմի̀ւր խընձի̀ր : Ըտրանք ետ ըն տըեռնըմ, թա կյան տոն:

Ճընապարին մեծ ախպերը եշըմ ա հիլուն, ասըմ. - Գյուղում ը՞ք հի՛նչ կա, մըզանա շատ հեռու կա մին կյեղեցիկ ախճիգյ: Նա շատ ծանդըր հիվանդ ա, շատ ապրի շատ, հենգյ մունուտ:

Պուճուր ախպերըն ասըմ ա.- Թա էս խընձի̀րան օտի, դա̀ստի կըլի-վանա:

Միշնա̀կ ախպերըն ասըմ ա. - Ցըես էտ խընձի̀րը դա̀ստի ընդրան կը հըսցնիմ:

Նա մուտացիկըլ ա նըստըմ, հենգյ մունուտումը խըձի̀րը հըսցընըմ էն ըխճըկանը: Ախճիգյը խընձի̀րը օտըմ ա, դա̀ստի լիվանըմ: Մըհեկ ախճիգյը պիտի փըսակվի ըտրանց անա մինին նըհետ: Վեր ի̀ւրի̀ւր քյեփի նի չի կյան, կործը սուդի յըն տամ: Թաքավերի ախճիգյ, տինինք թա̀ սուդյան

տու վըս, ախճիգյը հո՞ւր կըտաս:
Թաքավերին ախճիգյը ասըմ ա. - Ախճիգյը կտամ պուճուր տըղին:
Մարը՝ թաքուհին վեր լըսըմ ա ախճիգյը խոսըմ ա, ուրխոթունան տեղան եր ա թըռչըմ, ծըվծըվըմ:
Ճըպատը ասըմ ա, - Խե՞ բեդմա պուճուր տըղին տա՛ս:
Թաքավերին ա խճիգյըն ասըմ ա. - Շատ պարզ: Ընդրանք իրեքըն էլ լա̀վ կարթալ ըն , բադարկեքյ ստացալ, էրկուսին բադարկան էն ա ո̀ւրա̀նց ծեռքին, էն պուճուրին բադարկան էն ախճիգյը կերալ ա, մըհեկ պուճուրին ծեռքին բադարկա չի կա, ա̀վա̀զը էն ախճիգյը բեդմա պուճուր ախպորը տան:
Ճըպատըն ասըմ ա. - Թաքավերին ախճիգյը ապրած կենա, լոխ դո̀ւզ ա:
Թաքուհին վազ ա տամ թաքավերին կոշտը, լոխ ասըմ: Իրեքինջի օրը ո̀ւրո̀ւլգյո̀ւնը էտ պառավ մարթը քյինըմ ա էտ թաքավերին նըհետ, վեր ընդրա քըշտին ըխճըկանը խուսըցնի: Էրկուսավ՝ թաքավերը նան էտ պառավ մարթը խիլլա̀ զըրո̀ւց ըն անըմ:
Ըտրանա ետը էտ պառավ մարթը ճըպատը թող ա անըմ, քըցըմ օթախին մաչ տեղը:
Ճըպատըն ասըմ ա. - Թաքավերի ախճիգյ, լա̀վ լըսի, վեր վերչըմը իմ հարցիս դո̀ւզ ջողաբ տաս, վեր յըես էլ քյըզանա շունրակալ ինիմ: Ինըմ ա, չինըմ մին դո̀ւլգյա̀ր, մին դա̀րզի, մին իմաստուն: Ըտրանք հընգյերանըմ ըն, քյինըմ մոտիկ քաղաքը: Ճընապարին մըթնըմ ա: Ըտահանք քըշերը մընըմ ըն մին ծըմակըմ: Խոսկը մին ըն անըմ, վեր հերթավ քըշերը ղարավուլ քաշին: Առաչ ղարավուլ ա քաշըմ դո̀ւլգյա̀րը: Իմաստունը նան դա̀ռզին քոն ըն ինըմ: Դո̀ւլգյա̀րը վեր մըրսի վեչ, մին ծառ ա կըտրըմ, ըտրանա ըսկըսըմ մին կյեղեցիկ ախճիգյ շինըմ: Կոզի շատ ա չըրչարվըմ, ամմա շատ դա̀շա̀նգյ ա տո̀ւս կյամ էտ ախճիգյը: Մըհեկ էլ նոբաթը կյամ ա դա̀ռզո̀ւն, վեր ղարավուլ քաշի: Դա̀ռզին հա̀լա̀ գյո̀ւղո̀ւմ ա, թա ո̀ւրա̀ն անա մին տասը շագ հեռու մին դուրուլթո̀ւ կա, տա կյող ա: Յավաշ-յավաշ մուտանըմ ա, տըեսնըմ փեդից շինած ախճիգյ ա, կլխի յա ընգնըմ, վեր էտ էն դո̀ւլգյա̀րին պեներըն ա: Էտ դա̀ռզին էլ ըտրա հետի շո̀րեր ա կարըմ, վեր վախտը անց կըենա, մինչև իմաստունին նոբաթը կյալը: Ըտրանա ետը իմաստունն ա ղարավուլ քաշըմ: Իմաստունին աշկավըն ա ընգնըմ էտ կյերպարանքը, յավաշ-յավաշ մուտանըմ ա, եշըմ, կըլո̀խ ընգնըմ, թա

պենը հինչումըն ա, ինքըն էլ ի՛րա՛ն իմաստոթունըն ա պինըցնըմ, էտ անսունչ փեդի ըխճըկանը, ի՛րա՛ն սունչան սունչ ա տամ: Քըշերավը դի՛ւլգյա՛րը , դա՛ռզին եր ըն կըենըմ, տեսնըմ մին լա՛վ ախճիգյ ըտեղ կաղնած: Ըտրանց անա ամմեն մինը օզըմ ա էտ ըխճըկանը նհետ փըսակվի: Ըտրանք ի՛ւրի՛ւր նըհետ հի՛ջա՛թ ըն տամ: Ըտրա հետի էլ, կործը տամ ըն սուղին:-Թաքավերի ախճիգյ, տինինք, թա սուղյան տու վըս, հո՞ւր կըտաս էտ ախճիգյը:

Թաքավերին ախճիգյը ասըմ ա, - Յըես ախճիգյը կտամ իմաստունին:

Թաքավերը, վեր լըսըմ ա ըխճըկանը խոսիլը, օզըմ ա, թա օշը տանի:

Ճըպատըն ասըմ ա.-Խե՞, խե՞ կըտաս էն ախճիգյը իմաստունին:

- Ընդրա հետե, վեր դի՛ւլգյարը կարող ա իտի շատ փեդի ըխճըկերք շինի դա՛ռզին էլ կարող ա ինդի շատ շի՛րեր կարի, ամմա իմաստունը կարող չի էլհա մինին հոքի տա, քանի վեր առանց էն էլ ի՛ւրա՛ն հոքվեն կեսը տըվալ ա: Վեր ընդրա կորած հոքվին կեսը տեղը կյա, ըտրա հետի ախճիգյը պիտի իմաստունին տան:

Ճըպատըն ասըմ ա. - Լոխ դի՛ւզ ըսեցիր, թաքավերի ախճիգյ:

Թաքավերը էտ լոխ վեր լըսըմ ա, շատ ա ուրխանըմ, էտ պառավ մարթին ասըմ ա. - Դե վեր տու իմ ախչիգյըս խուսըցրալ ըս, իմ խոսկըս էլ խոսկ ա, ախճիգյըս էլ ա քունը, թաքավերոթունիս կեսըն էլ:

Էտ պառավ մարթըն ասըմ ա, - Թաքավերը ապրած կըենա, մըեզ ճընապար տիր դիբի մեր հայրենիքը: Հըրսանիքյը ընդեղ ընք անելու:

Թաքավերը ռազի յա կըենըմ: Օխտը օղտ ա վըեսկավ պեռնըմ, էտ պառավ մարթին, ի՛ւրա՛ն ըխճըկանը, մին էլ էն ջահիլ տըղին ճընապար տինըմ:

Ըտրանք հըսնըմ ըն ընդեղ, ըշտեղ ի՛ւրի՛ւր պըտահալ ըն: Էտ պառավ մարթը օրախ-օրախ էտ տըղին ասըմ ա.- Հես է՛ ըստեղ՝ մունք ի՛ւրի՛ւր պըտըհեցինք, ըստեղ էլ ի՛ւրի՛ւր անա կըպըրժանվինք:

Էտ ջա՛հիլ ախճիգյը ինձ հարկավեր չի, քյըեզ ըմ տամ, ըտրա նըհետ էլ էս օխտը օղտի պեռնը վըեսկեն: Յըես էն ձի՛ւկնըն ըմ, վեր տու ազադեցիր, հա՛լա՛ հաց էլ տըվիր:

Ասըմ ա պըռծըըմ, ձուկնը տըեռնըմ, ընգնըմ մոտի կյետը: Ախչիգյը նան տըղան ի՛ւրի՛ւր խըտտըմ ըն, պըչպըչորըմ, ի՛ւրա՛նց ճընապան ընգնըմ, կյամ հըսնըմ ի՛ւրա՛նց երգյիրը, կյամ ի՛ւրա՛նց տոն: Կյամ ըն տոն, տըեսնըմ

ո̀ւրա̀նց հա̀րը նան մարը հիվանդ, հոքյի տալիս: Վէր ո̀ւրա̀նց տղին տըեսնըմ ըն, թէքյ ընգած տէղան լոք ըն տամ, էր կըենըմ, լիվա̀նըմ: Ո̀ւրա̀նց տըղին հէտի մին լա̀վ հըրսանիք ըն անըմ, լոխ մին տոն տըեռած օրախ ապրըմ: Ըտրանք հասին ո̀ւրա̀նց մուրազին, մունք էլ հասնինք մէր մուրազին:

## 54.ԷՇԻՆ ԱՆԳՈՒՃԻՆ ՎՐԷՄԿԵՆ

Ինըմ ա, չինըմ իրեք ախպեր, մին հա̀ր ըն ինըմ: Ըտրանց մին արտ ա ինըմ, էտ արտավըն էլ մին թա̀հրա̀վ ապրըմ ըն, յո̀լա յըն քյինըմ:

Ամմեն դո̀նըմ արտը վեր կընանչըմ ա, մին ղըրըլթու կյամ ա, կոխ տամ, քյինըմ:

Հա̀րը քընենքյ ա անըմ, քընենքյ, վերչը էն մթկեն ա կյամ, վեր տըղորցը մինին ղարկի արտը, քըշերը ղարավուլ քաշին, տեսնան էտ հո՞ւ վա կյամ, արտը կոխ տամ:

Առաջի քըշերը մեծ տըղան ա քյինըմ:

Տա քըշերը քոն ա ինըմ, էլ զյուղում չի, թա հու վա արտը էլիա կոխ տըվալ:

Էրկունջի քըշերը միշնակ ախպերըն ա քյինըմ, միչն կես քըշեր զերթուն կենըմ, ամմա ետավ քոնը տանըմ ա: Քշերավը եր ա կենըմ, տեսնըմ արտը կոխ տված:

Իրեքինջի քըշերը պուճուր ախպերըն ա քյինըմ ղարավուլ քաշըմ: Միչն կես քըշեր քոն չի ինըմ, ամմա կես քըշերանը տենը քոնը տանըմ ա:

Տա մաննը կտրըմ ա, յրան աղ ածըմ, էլ ցավան նան հեռան քոնը տանըմ չի: Տեսնըմ ա դիբիլո̀ւսին երգյինքան մին ծիյավեր եկավ, արտը սկսից կոխ տալը:

Տըղան մուտացավ էտ ծիյավերին ասից - Տու հո՞ւ վըս, վեր մեր արտը, մեր ապրուստը իտի վըեննիտ տակըն ըս տամ, փըչըցնըմ:

Էտ ծիյավերը ասից. - Լավ, վեր իտի յըս ասըմ, վեր ապրուստ չօ̀նիք, յըես քյըեզ մին սուփրա տամ, վեր պենաս, հինչ օտելի պեն օզըմ ըս, յրան ինի:

Էքյսը էտ ծիյավերը էտ սուփրան պերըմ ա, տամ էտ տըղին: Ամմեն դո̀նըմ էտ տըղան պեց ա անըմ, աշխարքիս իրեսին հինչ օտելի պեն կա, տո̀Լս ա կյամ սուփրին յրան, ըտրանք օտըմ ըն, քըշտանըմ:

Մին դո̀նըմ էտ շենին քյոխվան կյամ ա, թա.-Պարթկըս տո:

Օզըմ ա, թա էտ սուփրան յոր օնի: Տրանք տամ չը́ն: Ամմա քյոխվան զոռավ յոր ա օնըմ: Էլիա ըտահանք սկսըմ ըն փիս ապրիլը:

Պուճուր ախպերը էլա քյինից քըշերը արտըմը կացավ, տեսավ էն ծիյավերը կյամ ա, ասից.-Ա́յ ախպեր ծիյավեր, բա ասիլ չը́ս, քյոխվան սուփրան զոռավ տարավ, պարթկի տեղ:

Էս դ՟ընըմըս ծիյավէրը ըտրան մին էշ տըվավ: Էշին անգուձան օրը իրեք մանեթ փող ար եր ընգնըմ:

Էտ ընդան իքը իտի ապրըմ ին: Մին դ՟ընըմ էշը տարին նալբանդին կոշտը, վէր նալին: Էտ դ՟ըրըմը էշին անգուձան իրեք մանեթ ա եր ընգնըմ: Նա՛լբա՛նդը վէր տա տեսնըմ ա, կոռծը կեսատ ա թողըմ, քյինըմ էտ էշին մընան մին օրիշ էշ պերըմ, նըհետը փոխըմ:

Էտ խըեղձ մարթը էշը տոն ա պերըմ, քըցըմ թա՛վլա՛ն, ամմա էշը ՟ըրա՛նցը չար, էշին անգուձան իրեք մանեթ չար եր ընգնըմ:

Պուձուր ախպէրը կյամ ա դաչանք անըմ, վէր էշը տան, ամմա ամալ չի կյամ:

Իրեքինջի դ՟ընըմը էլիա պուձուր տըղան քըշերը քյինըմ ա արտը, էտ ծիյավէրին տըեսնըմ, ըտրան ամմեն հինչը նաղլ անըմ:

Էտ ծիյավէրը էտ տըղին մին կացին ա տամ, անըմը Թոխմախ: Էտ Թոխմախը էնքան թակող ա ինըմ, էնքան թակող, վէր մինչև տարըն ասըմ չի «Թակիլ մի», թակիլը թա՛րգյ չի անըմ:

Պուձուր ախպէրը Թոխմախը յոր ա օնըմ, կյամ տոն, ընդըղան էլ կյամ ա քյոխվին տոնը, ասըմ. - Ա՛ քյոխվա, էշըս էլ ձարի տո, սուփրաս էլ տո:

Քյոխվան տամ չի:

Էտ պուձուր տըղան ասըմ ա.- Թոխմախ, քյըեզ տեսնամ հա՛յ: Թոխմախը սկըըմ ա էտ քյոխվին մին լա՛վ թակիլը: Էնքան թակըմա, վէր քյոխվան օզըմ ա, թա մըեռնի:

Ասըմ ա. - Ա՛ բալա, սուփրատ էն ա սանդուղումըս, քյինի եր կալ, մինա՛կ ինձ պեց թող:

Էտ տըղան սուփրան յոր ա օնըմ, ըտըղան քյինըմ նալբանդին կոշտը, ըտրան էլ ըտեղ էն Թոխմախավը մին լա՛վ կյոտըըմ:

Նա՛լբա՛նդըն ասըմ ա.- Թակել մի էշըտ էն ա կյումումը, քյինա եր կալ, մինա՛կ ինձ ազադի, ինձ քյըզանա ջամբար ըրա, մեխկ ըմ, խեղճ ըմ, խուխատար ըմ:

Էտ տըղան էշը նան սոփրան յոր ա օնըմ, կյամ տոն: Ըտրանա ետը իրեք ախպէրավ, ՟ըրա՛նց հորը նան մորը քըշտին օրախ ապրըմ ըն: Հա՛լա՛ մինչև օրըս էտ էշը անգուձան օրը իրեք մանեթ ա վէր քըցում ըտրանց հետի, սուփրան էլ ամմեն հինչը, ամմեն ուտելի պեն:

## 55.ՍՈՒՂՈՒՄՈՒՆ ԻՄԱՍՏՈՒՆԸ

Սուղումուն իմաստուն թաքավերը մին ա̀րա̀զ ա տըեսնըմ, վեր գյվա̀քիս երգյինքան մին աղվեսի հա̀քյո̀ւ յա կախ ընգած:

Էն մին օրը ժողովուրթին ասըմ ա. - Հու վեր կարի իմ ա̀րա̀զըս ասի, թա հի՞նչ ա կադարվելու, քըշռութունավը մին վըեսկե յըմ տալու, հու վեր կարի վէչ, կըլո̀խը կըտրիլ ըմ տալու:

Շատ մարթ ա կյամ, ամմա կարըմ չի գյիդա̀ ա̀րա̀զը պարին, թա չարը կըկադարի: Ըտրանց կըլո̀խը կըտրիլ ա տամ:

Մին շենացի մարթ էլ ըն տանըմ, թա ասի, էտ ա̀րա̀զը հի՞նչ ա կադարելու:

Ճընապարին էտ մարթին մին օց ա ջըհում, ասըմ, - Թո՞րըն ըս քյինում, ա՛ մարթ, քյինըմ ըս թաքավերին հի՞ նչ ասիս, տու հի՞նչ ըս գյո̀ւղո̀ւմ վեր հի՞նչ ասիս:

Կյուղացին ասըմ ա, - Յըես պեն չըմ գյո̀ւղո̀ւմ, յըես հունցու մին ուզուն ախմախ:

Օցը ասըմ ա. - Վախիլ միր, յըես քյըեզ կըսվըրցնիմ, մինա̀կ տու հինչու ստանաս, բեդմա ինձ նըհետ կես անիս:

Կյուղացին ռազի յա կըենըմ:

Օցըն ասըմ ա, - էտ ա̀րա̀զը խափեփայութո̀ւն ա, խորամանգոթուն, սոտ խոսիլ ա, վեր Սուղումուն իմաստունին երգյիրը լիգյըն ա:

Կյուղացին քյընըմ ա Սուղումուն իմաստունին կոշտը, ասըմ. - Թաքավերը ապրած կենա, խստի, խստի, խստի պեններ:

Սուղումուն իմաստունը տըեսնըմ ա վեր դո̀ւզ ա ասըմ, ըտրա քը-շըռոթունավը մին վըեսկե յա տամ:

Վըեսկեն յոր ա օնըմ, կյամ, ինքյը ո̀ւրա̀ն ասըմ. «Օցին հինչի՞ն ա հարկավեր վըեսկեն, հի՞նչ ա անելու, լա̀վն էն ա, տանիմ մըեր տոն»:

Սողոմոն իմաստունը մին էլ ա ա̀րա̀զ տըեսնըմ: Տըեսնըմ ա վեր գյվա̀քյիս թա երգյինքան մին թոր ա կախ ընգած:

Էքյսը կանչըմ ա համին էտ գյուղացուն, հըրցընըմ, թա ա̀րա̀զը հի՞նչ ա կադարելու:

Էտ կյուղացին մընըմ ա դո̀նգլի տըեռած, մըթկըմը ասըմ ա, «Քյինիմ էն օցին ասիմ, բա̀լքյա̀ս գյիդա̀»:

Քյինըմ ա օցին պո̀ւնին առաչին կաղնըմ:

Օցը տըեսնըմ ա ըտրան, ասըմ. - Ա՛ սըվիրես, էլիա եկալ ը՞ս, ասի տեսնամ հի՞նչ ըս ասըմ:

Կյուղացին լոխ նաղլ ա անըմ, համ էլ ասըմ, - էս դո՛նըմ հինչու տա, քյըեզ նըհետ կես ըմ ըննական:

Օցըն ասըմ ա. - Քյինի ասի, վեր էտ ա՛րա՛զը ա՛րո՛ւնիհեղոթուն ա, կըռև ա, մարթասպանոթուն ա, կտորած ա:

Կյուղացին քյինըմ ա Սուղումուն իմաստունին կո՛շտը, ասըմ, թա ա՛րա՛զը հի՞նչ ա կաղարելու: Վըեսկեն յոր ա օնըմ, կյամ: Ճընապարին մըտածըմ ա, վեր էս դո՛նըմ էլ խա՛փի օցին, յա քյինի օցին սպանի, լոխ վըեսկեն ինքյը յոր օնի:

Քյընըմ ա օցին պո՛ւնին առաչին կաղնըմ, տեսնըմ, վեր օցը նի յա մընըմ ո՛ւրա՛ն պունը:

Տա թըրավ թըխըմ ա, օցին հա՛քյուն կտրըմ, ինքյը տոն քյինըմ:

Օցը էտ մարթին հետան թաքուն քյինըմ ա, միչև ո՛ւրա՛նց տոն:

Կյուղացին նի յա մընըմ տոն, տո՛ռնը կապըմ: Մին էրկու սըհաթանը ետը էտ մարթին մեծ տըղան տո՛ւս ա կյամ տո՛ռնը, զյուղո՛ւմ չի, թա օցը հեն ա ըտեղ, օցը ըտրա վըեննան կըծըմ ա, ինքյը ետ տըեռնըմ, կյամ ո՛ւրա՛ն պո՛ւնը:

Էտ տըղան աղուլամիշ ա ինըմ, մըեռնըմ:

Մին խիլլա՛ վախտանը ետը Սուղումուն իմաստունը մին ա՛րա՛զ էլ ա տըեսնըմ: Գյվաքյիս թա երգյինքան մին ըլըքըստրակի կըլո՛իխ ա կախ իլա՛ծ:

Էքյսը հրամման ա տամ, վեր հու վեր էտ ա՛րա՛զը գյիղա՛, թա հինչ ա կաղարելու, վըեսկե կը ստանա: Հու վեր գյիղա վէչ, կըլո՛իխը կըտրել ա տալու: Էտ կյուղացին մին էլ ա օզըմ քյինի, ամմա տըեսնըմ ա, վեր շատին կըլո՛իխը կըտրըմ ըն, չգյիդալի հետի: Տա օզըմ ա մին էլ քյինի օցին կո՛շտը, նըհետը հաշտվի, վեր էլիա օցը ո՛ւրա՛ն սըվըրցնի:

Քյինըմ ա օցին պո՛ւնին քըշտին կաղնըմ:

Օցը պո՛ւնան տո՛ս ա կյամ, ասըմ. - Հը՛, ա սըվիրես, մըհեկ հինչի՞ յըս եկալ, մեթկըտ հի՞նչ ա, ասի տեսնամ:

Կյուղացին ո՛ւրա՛ն մեթկը ասըմ ա, համ էլ ո՛ւրթո՛ւմ օտըմ, վեր էս դո՛նըմըս ո՛ւրա՛ն փայը տալու վա:

Օցը ա՛րա՛զը հինչ բիդի կաղարի, ասըմ ա:

Կյուղացին քյինըմ ա Սուղումուն իմաստունին կո՛շտը, ասըմ. -

Թաքավերըն ապրած կենա, էտ ա̀րա̀զըտ հաղաղոթուն ա, պարե-կումոթուն ա, հաշտոթունա:

Կյուղացին վըեսկեն ստանըմ ա, կյամ տոն, էն տանը վըեսկեն էլ յոր օնըմ, քյինըմ օցին կոշտը, ասըմ. - Օց ախպեր, տո̀Lu եք, հեսե լոխ վըեսկեն պերալ ըմ քյըեզ նըհետ կես անիմ: Օցըն ասըմ ա.

- Մըհեկանց տենը ինձ պեն չի հարկավեր, տար աշկըտ կոխի, լհա̀ տըղիտ էլ նըհախ տեղը բաղի տըվիր, տար հինչ անըմ ըս, ըրա, ամմա էլ իտի պեն չանիս հա՛... Խըփը-խափի անիլը փիս պեն ա, մարթի ումիդ տինիլը, մին էլ խափիլը շատ փիս պեն ա: Իտի չըն անիլ, ախեր տիմացըտ կաղնածըն էլ ա՛ մարթ, հոքյի օնի՛, խելք օնի՛, հավատ օնի՛, բա՛... Խափիլը շատ փիս պեն ա, էլ անիս վեչ:

Կյուղացին շունրակալ ա ինըմ, վըեսկեն յոր օնըմ, օրախ-օրախ կյամ ո̀Lրա̀նց տոն:

56.ՀՈՒ ՎԵՐ ՄԻՆ ՊԵՆԻ ՀԵՏԱՆ ԸՆԳՆԻ, ԿՀԱՄՆԻ

Մին դ՞նըմ Սուղումուն իմաստունը ման կյալ տեղա էտ տըռնալիս տեսնըմ ա մին լա՛վ բախչա: Ըտեղ, մին կաղնու տակի, տեսնըմ ա մին մարթ դալուն կաղնի ծառին տեմ ըրած մին պեն ա կյիրըմ: Կյրածըն էն ա ինըմ, վեր Սուղումուն իմաստունը բեդմա ՞ուրա՛ն Ղարաղուշ ընըմավեր սև մորթավ գյա՛դին տա ՞ուրա՛ն դա՛շա՛նգյ ախճիգյը:

Սուղումուն իմաստունը շատ ա ստիբըմ էն մարթին, վեր կյըրա՛ծը ճընջի, ամմա էտ մարթը ասըմ ա. - Կյիրածը ճընջվիլ չի, ամմա մարթ հինչի օգի կըհասնի, կըռվավ ա, դավավ ա, սերավ ա, կըհասնի:

Սուղումուն իմաստունը բեքյեփ կյամ ա ՞ուրա՛ն պալատը:

Կընեգյըն ասըմ ա. - Էտ հի՞նչ ա պըտահալ, վըեր ըրփըքթավուր, սև օթի յըս տեռալ:

Տա լոխ կընգանը նաղլ ա անըմ:

Կընեգյըն ասըմ ա. - Քյեփտ քյոք պահի, յըես կըգյիդամ, թա՛ հինչ կանիմ:

Մարթըկընեգյ ՞ուր՞ուր նըհետ խորուրթ ըն անըմ, կանչըմ էն մորթին սև Ղարաղուշ ընըմավեր գյա՛դին, մին կանվերթ տամ, ղըրկըմ բախտ պիժանողին կոշտը:

Ըտրա մանին Ղարաղուշը գյուղում ար, ամմա դե հինչ ա՞նի, ՞ուրա՛ն տարը հունցու ասըմ ա, ինդի բեդմա անի: Տա հըղե յա ընգնըմ, քյինըմ:

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրեգյ, շատ նան խըրեգյը աստուծ ա գյ՞ուղ՞ւմ, հըղեցը պըտահըմ ա մին թաքավերի:

Էտ թաքավերը հըրցընըմ ա.- Ըշտեղ ըս քյինըմ, այ Ղարաղուշ: Ղարաղուշըն ասըմ ա. - Քյինըմ ըմ բախտ պիժա՛նողին կոշտը:

Էտ թաքավերըն ասըմ ա. - Յըես էլ մին պեն օնիմ փըսպըրելի բախտ պիժա՛նողին: Հինչ օգըմ ըս, քյըեզ կըտամ, մինա՛կ էտ բախտ պիժա՛նողին ասի, վեր էս հինչ յ ըգյիրըմը մին թաքավեր կա, վեր ՞ուրա՛ն հետի մին պալատ ա շինըմ, դաչ քյինելի հետի, ամմա շուտ պարան ա կյամ, թա խե՞ յա պարան կյամ, գյիդվըմ չի:

Ղարաղուշը ճընապար ա ընգնըմ, քյինըմ:

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խրեգյ ա քյինըմ, պըտահըմ ա մին ծովի: Մտածըմ ա, թա հունց անց կենա: Էտ մունուտին ծովան մին

դմ̈շմ̈նգյ ծո̈ւկըն ա տո̈ւս կյամ: Ծո̈ւկնը հըրցնըմ ա. - Թո՞րն ըս քյինըմ, ա՛յ Ղարաղուշ: Ղարաղուշըն ասըմ ա. - Բախտ պիժմ̈նողին կոշտը:

Ծո̈ւկնը ասըմ ա. - Յըես քյըեզ ծովավը անց կըկըցնիմ, մինմ̈կ յըես մին խընթիրք օնիմ բախտ պիժմ̈նողին անա: Վէր քյինիս, կասիս էս հինչ ծովըմը մին ծո̈ւկըն կա, ընդրա կըլո̈խը շատ փիս ցավըմ ա: Էտ ցավան վէր սմ̈ս ա հանըմ, ծովին ծո̈ւկնէրը լոխ կըտորվըմ ըն: Թա էտ խէ՛ յա իտի՛, գյուղվըմ չի՛:

Էտ ծո̈ւկնը Ղարաղուշին անց ա կըցընըմ ծովին էն մին դո̈լը, Ղարա-ղուշը ընգնըմ ա ո̈ւրմ̈ն հըղէն, քյինըմ: Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրէգյ, շատ նան խըրէգյը աստուծ ա գյուղո̈ւմ, հըսնըմ ա մին վանքի: Նի յա մըննըմ մաչը, տէսնըմ մին ծո̈ւրո̈ւնի մէչին աղոթկ ա անըմ:

Ղարաղուշը մին էլ տո̈ւս ա կյամ, տո̈ւսումը սպասըմ, միչև էտ ծուրունին աղոթկը կը պըրծնի:

Ծո̈ւրո̈ւնին վէր տո̈ւս ա կյամ, ըտրան տէսնըմ, հըրցընըմ ա.

- Ա՛ վէրթի, հի՞նչ խընթիրք օնիս:

Ղարաղուշը օզըմ ա, թա նաղլ անի, ամմա էտ ծո̈ւրո̈ւնին ասըմ ա,- Հմ̈լմ̈ քյինի ընդէղ մին ախպո̈ւր կա, էտ ըխպըրըմը իրէսըտ լվաց, էտավ էք ասի, թմ̈ հի՞նչ ըս օզըմ:

Ղարաղուշը քյինըմ ա, ծըեռքէրը լվանըմ, տէսնըմ ծըեռքէրըն էլ ա սիպտակյալ, իրէսըն էլ ա սիպտմ̈կյալ: Վէր նովին ճիրըմը ո̈ւրմ̈ն տէսնըմ ա, մըննըմ ա մմ̈թմ̈լ:

Էտ ա տըեռնըմ կյամ, թա էտ ծո̈ւրո̈ւնուն պատմի, ծո̈ւրո̈ւնին ասըմ ա, - Քյինմ̈ սաղ ջանըդ լվաց, էտավ էք ասի:

Քյինըմ ա լըղանըմ, սաղ ջանը սիպտմ̈կըմ ա:

Կյամ ա էտ ծըեր մարթին կոշտը, լոխ նաղլ անըմ, կանվէրթըն էլ տամ, էն օրիշ թաքավէրին խընթիրըն էլ ասըմ, էն կլո̈խը ցավըմ ծո̈ւկնին խընթիրըն էլ ասըմ, պըրծըընըմ:

Էտ ծըեր մարթը ասըմ ա. -Քըեզ էլիա դարդ օնի՞ս, թա չէ:

Ասըմ ա, - Չէ, մինմ̈կ լիա էն թաքավէրին նան ծո̈ւկնինըն ա: Էտ ծո̈ւրո̈ւնին ասըմ ա, - Կը քյինիս, ճընապարին, ծովին դրաղին էն ծո̈ւկնին կասիս, հմ̈լմ̈-լըզյմ̈ քյըեզ ծովին էն մին դո̈լը անց կըցընի: Վէր անց կըկըցնի, մին խիլլմ̈ էլ տէնը կըքյինիս, թմ̈զմ̈դմ̈ն ասիս, «Ա՛ ծուկնը, քու կըլխըմըտ մեծ պըռլյանդ կա»: Համ կասիս, համ էլ մին լմ̈վ կըլխին կը

թըխիս: Էտ ծո՞ւկնը սա՛բր ա կյալու, սա՛բրին նըհետ ըտրա պըրանան մին մեծ պըռըյանդ ա եր ընգնելու, յոր կօնիս, տինիս ջուբումըտ, քյինիս: Քյինա՛լիս կասիս, «Ա՜ ծուկնը լիա՛ էտ ա քու կըլխիտ ցավին մանին, մըհեգյանց տենը էլ կըրո՞խըտ ցըվիլու չի: Ետավ էտ ծըեր մարթը ասըմ ա. - Կը քյինիս համին էն թաքավերին ասիս, վեր ո՞ւրա՛ն էն պալատին պատը, վեր հիշքան շինըմ ըն, էլհա պարան ա կյամ, համին էն պատին տակի բընո՞վըրըմը էն ա վըեսկե կա, թընգյակին քարեր կա, քանի վեր ամառնը տաք ա ինըմ, ըտրանք թըքանըմ ըն, տըռըզվըմ, լենանըմ, պատը պարան տամ: Էտ ըսելանը ետը, էտ թաքավերան հինչ վեր օզիս տալու յա:

Ղարաղուշը կյամ ա, ետ տըեռնըմ, կյամ հըսնըմ էտ թաքավերին կոշտը, լոխ նաղլ անըմ:

Էտ թաքավերըն ասըմ ա,- Հիշքա՞ն վըեսկե յըս օզըմ, քյըեզ տամ, քու էտ ջափիտ հետի:

Ղարաղուշըն ասըմ ա, - Յըես քյըզանա վըեսկե չըմ օզըմ, յըես քյըզանա օզըմ ըմ քառասուն տըղա, քառասուն ախճիգյ, քառասուն տըղամարթ, քառասուն կընեգյ, մինէտ քան էլ ծիյանք, ո՞ւրա՛նց սարքերավը:

Թաքավերը էտ լոխ տամ ա:

Ղարաղուշը էտքանը եր կալած ճընապարվըմ ա դիբի Սուղումուն իմաստունին երգյիրը:

Տասը վերստի յրա նըստըմ ըն դինջանան: Էտ պըռըյանդնին վեր Ղարաղուշին վիզավըն ար քըցած, սաղ ճընապարին լո՞ւս ա տամ: Էտ լո՞ւսին շոխկը ընգնըմ ա Սուղումուն իմաստուն թաքավերին պալատին յրան: Էտ լո՞ւսին դա՛րդա՛ն վեզիրը կյամ ա, թա տըեսնա հի՞նչ ա:

Վեր վեզիրը կյամ ա, տըեսնըմ ըտրանց մեծին, ո՞ւրա՛ն մըթկըմը տինըմ ա, վեր թաքավերին ախճիգյը տա ըտրա: Էտ մըեթկը կյամ ա թաքավերին ասըմ.- Պեր ախճիգյըտ տանք էն տըղին:

Թաքավերըն ասըմ ա. -Բա՛լքյա՛ս էն տըղան օզըմ չի՜:

Վեզիրըն ասըմ ա. -Յըես կըքյինիմ, ասիմ, ա՛մա՛լ կըպերիմ:

Վեզիրը քյինըմ ա Ղարաղուշին ասըմ: Դե վեզիրը հու ճընանչըմ չի ընդրան, սա՛բա՛բը վեր սիպտա՛կալ ար:

Ղարաղուշըն ասըմ ա. - Թող ինքյը կյա, ասի, էն վախտը կօզիմ էտ ըխճըկան:

Վեզիրը քյինըմ ա թաքավերին, թաքուհուն, ո՞ւրա՛նը ըխճըկանը յոր օնըմ, կյամ:

Տըղան ռազի յա կըենըմ, էտ ախճիգյըն էլ ա ռազի կըենըմ։ Լոխ մինտեղ կյամ ըն Սուղումուն իմաստուն թաքավերին պալատը։

Ըտրանա ետը տասնըմինինջի օրը հըրսանեքյը ըսկսելի վախտը ա̀դա̀թ կար, վեր առաչ թաքավերը նան թաքուհին ծըեռք տան փըեսին, նոր նըստին։

Էտ վախտը փըեսան ասըմ ա. - Առաչ թող թաքավերըն նան թաքուհին նըստին ետավ ծառան։

Ըտրա ասածան պեն չըն կըլխու ընգնըմ։ Հըրսանիքին էն թո̀ւնդ վախտը փըեսան ո̀ւրա̀ն ջուբան հանըմ ա էն կանվերթը, տամ Սուղումուն իմաստունին։

Սուղումուն իմաստունը մընըմ ա մաթ մընացած, հրամմայըմ ա՝ հենգյ մունուտ հըրսանիքը կաղնի։

Ետավ էտ կանվերթը ծեռքին լոխճին ասըմ ա. - Հու վեր մին պենի հետա ընգնի, կըհասնի։

Հըրսանիքը էլհա սկըսըմ ըն, օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ, Ղարաղուշըն էլ ո̀ւրա̀ն հետի լա̀վ բախտավեր ապրըմ ա։ Սուղումուն իմաստունան էլ իմաստոթուն ա սըվերըմ, ընդրա մըռնելանը ետը ինքյը նստըմ կաhին։

## 57.ՄԱԽՈՐԿԵՆ ՅԱՇԻԳՅԸ

Իլա՛լ ա, չիլա՛լ մին մարթ, մին կնեգյ։ Ըտահանց խոխա չիլա՛լ։ Էտ մարթը եր ա կացալ թա. - Քյինում ըմ ըստուծու կոշտը, տեսնամ, խե մըեզ խոխա չինո՛ւմ։

Քյինո՛ւմ ա, քյինո՛ւմ մին դեր ա ջիհո՛ւմ ։

Դերն ասում ա. -Հշտե՞ ղ ըս քյինո՛ւմ ։

Թա. - Քյինո՛ւմ ըմ ըստուծու կոշտը։

Դերըն ասում ա.- Աստուծը լհա՛ յըես ըմ, հինչու օզում ըս, ասե։

Էտ մարթը ասում չի, քյինո՛ւմ ա։

Էտ դերը մին էլ ա շոռ տամ, կյամ առաշկը, թա. - Աստուծը յըես ըմ, հինչու օզում ըս, ասե։

Էտ մարթը ասում չի, քյինո՛ւմ ա։ Իրեքինջի դո՛նումը վեր էտ էլհա՛ տո՛ւս ա կյամ առաշկը, էտ մարթն ասում ա. «Դե մին ասիմ լհի , բա՛լի լհա՛ աստուծը էս ա»։ Ասում ա. - Դե մըեզ խոխա չինո՛ւմ, ասե, տեսնամ խե՞ իտի անարթար ըս մըեզ հետե։

Էտ դերը տո՛ւս ա օնում, մին խընձո՛ր տամ, թա տար մաչան հալալ կես ըրա, կեսը տու կեր, կեսը տոք կնգանտ։

Էտ մարթը տանում ա, շատ անգյո՛ւնը ինքյը յոր օնում, օտում, խըեգյը տամ կնգանը։ Դերը ասած ա ինո՛ւմ , վեր էրկու խոխա յա իննա՛կան, մինը ինձ, մինը ծըեզ։ Էտ կընեգյը խընձո՛րը վեր օտում ա, էրկու տղա յա ինո՛ւմ , մինը՝ լա՛վ, մինը՝ փիս։ Էտ խոխենքյը օրը տիրեկան ըն տեռնում։ Վեր վա՛ղա՛ն թմամում ա, դերը կյամ ա, թա խուխեն մինը տանե։ Էտ մարթը էն լա՛վ խոխան տանում ա, տինո՛ւմ կյո՛ւմաշեն մաշկեն։

Դերը վեր կյամ ա, ասում. - Պա խուխեն մինը հո՞ր ա։

Էտ մարթն ասում ա. - Լհա՛ էտ ա իլա՛լ,էլ կա վէչ։

Էտ խոխան կյո՛ւմա՛շէն մաշկան ըսկանում ա, ծեն տամ, թա. - Էնըմ ըստեղ։

Դերը էտ լա՛վ խոխան յոր ա օնում, քյնո՛ւմ։ Քյինո՛ւմ ա մին կյիրք եր կա՛լա՛ծ, մին քեռծու պտկե նստում։

Քառասուն օր, քառասուն քշեր էտ կյիրը ըտեղ կարթում ա, քեռծը ճղվում ա։

Դերը խուխեն ասում ա. - Նի մոտ էտ քեռծը, էն ա մաչին վեսկե, պեն կա, ծեռք չի տաս, մինա՛կ մին մախորկու աման կա ընդեղ, իրեք զնոփկա էլ յրան, էտ յոր կօնիս։

Էտ խոխան նի յա միննում, մախորկեն ամանը յոր օնում, պրծնում, ըսկսում վըեսկե, պեն հվաքելը: Քեռծը հոփ ա կյամ, էտ խոխան մնում ա ըտեղ: Շատ վեր կենում ա, եշում ա, տեսնում, մին ըսեղու ծակավ իշեղ ա կյամ: Քա՜նդը՜ւմ ա, քա՜նդը՜ւմ, տը՜ւս կյամ լը՜ւս աշխարք: Թը՜ւլա՜ցած, ճինջի-պոմբի ընելավ, քյինը՜ւմ ա մին չոբանու ջիհը՜ւմ վխճրնեն պիեյիս:

Էտ չոբանեն ասում ա.- Եք էս կուճի արխավը ինձ անց կըցրու:

Չոբանը զյուղում ա, թա՜ մազաղ ա անում, քյնում ա մին կուճի սիլլա՜ տամ, էտ խոխան վեր ա ընգյնում: Չոբանը տեսնում ա, վեր էտ խոխան օժա ընգած ա, արխավը անց ա կըցնում, տանում լա՜վ հաց տամ, ուտուցնում, պրծնում, քշտեն պահում:

Շատ վեր կենում ա, հա՜րա՜նց տոնը մենն ա ընգնում, ասում ա. - Քյինը՜ւմ ըմ տոն:

Էտ չուբըննեեն լա՜վ հաց, պեն ըն թխում, տամ էտ խուխեն, յոր ա օնում, քյինը՜ւմ:

Քյինը՜ւմ ա, քյինը՜ւմ, հղեննի էտ խոխան եշում ա, տեսնում մին մարթ մին հա՜նգիստի միակավ թկեյիս:

Էտ խոխան ասում ա. - Խե՞ թակում ըս էտ հա՜նգիստին:

Էտ մարթն ասում ա. - էն ինձ տասը մանեթ ա տալի, տվալ չի:

Էտ խոխան տասը մանեթ ա տամ էն մարթին, թա՜ թակել մեր: Քյինա՜մ ա, քյինա՜մ հըղեցը մին օշափ ա ջըհը՜ւմ :

Էտ օշափն ասում ա. - Մունք քըշերս ըստեղ բեղմա կենանք:

Էտ խոխան ասում ա. - Չէ՛, յըես քյինիլ բեղիմ:

Օշափն ասում ա. - Չէ՛, քյիննա՜կան չըս, յա տու քոն իլ, յըես ղարավուլ քաշիմ, յա յըես քոն ինիմ, տու ղարավուլ քաշի:

Էտ խոխան ասում ա, - Տու քոն իլ, յըես ղարավուլ քաշիմ: Օշափն ասում ա. - Չէ՛ տու քոն իլ, յըես ղարավուլ քաշիմ, վեր յըես քոն ինիմ, քյըեզ մին պեն կպտահե, տու կըլական չըս ինձ եր կցնիս:

Էտ խոխան ռազի չի կենըմ, վախում ա, թա ինքյը քոն ինի, օշափը ը՜ւրա՜ն ըսպանե:

Օշափն ասում ա. - Դե վեր տու վըս ղարավուլ քաշում, վեր մին պեն պտահե, կրակ կանիս, ժինջիլը կյիրմըրցնիս, քցիս պկավս, հանցու եր կենամ:

Օշափը քոն ա ինո՛ւմ, տղան ղարավուլ ա քաշում: Էն հա՛մա՛ն դերը, վեր էտ խուխետ տարալ ա ո՛ւրա՛ն նհետ, կյամ ա մախորկեն ամանը խլո՛ւմ, յոր օնում, քյինո՛ւմ :

Էտ խոխան կրակ ա անում, ժինջիլը կյրմըրցնում, քցում օշափեն վիզավը, եր կցնում:

Օշափը եր ա կենում թա.

- Հի՞նչ ա պտահալ:

Թա.- Իստի յա իլա՛լ, դերը եկալ ա մախորկեն ամանը խիլա՛լ, տարալ:

Օշափը էտ խուխեն մաշկեն նստցնում ա, քյինո՛ւմ :

Քյինո՛ւմ ա էն դերին տո՛ռնը, մախորկեն ամանը ինքյ օնում, տամ էտ տըղեն մըն էլ մաշկեն նստըցնում, տանում համան տեղը, հիշտեղ վեր քըշերեն քոն ըն իլա՛լ:

Օշափն ասում ա. - Բա՛լա, էս լիվոթունը, վեր մախորկետ ամանը ինքյ ըմ կա՛լա՛լ քյըեզ տվալ, քու ըրած լվոթունետ ա՛վա՛զն ա:

Էտ խոխան ասում ա, - Ցըես քյըեզ լվոթուն չըմ ըրալ:

Օշափն ասում ա, - Ցըես էն հնգյիստին մաչին մարթն ըմ, վեր էն ար մին մարթ ինձ թկեյիս, տու տասը մանեթ տվեր, ինձ ըզըղեցեր:

Էտ խոխան մախորկեն ամանը յոր ա օնում, քյինո՛ւմ: Հըղեն նի մտածում ա, ասում, - էս մախորկեն ըման են դա՛ռդա՛ն շատ չըչրվեցե, իսկի գյիդո՛ւմ չըմ, էս հի՞նչ պեն ա:

Ըտրա մաչի գունուփկեքյան առաչինը վեր հոփ ա տամ, ամմեն հինչավը լիգյը, սարքած սուփրա յա տո՛ւս կյամ, էրկունջինը վեր հոփ ա տամ, հրսանեքյ ա ինո՛ւմ, իրեքինջինը վեր հոփ ա տամ, ղըչըղնե յըն տո՛ւս կյամ, ղիմենեն ծըռքըրնուն: Էտ տղան վեր իտի յա անում, էն ըն ինո՛ւմ թաքավերեն ըխճկանը փայտոնավը համամ տնեյիս:

Թաքավերեն ախճիգըը տեսնում ա, էլ քյինո՛ւմ չի համամ, ետ ա տեռ-նում, քյինո՛ւմ տոն, հորը, թա. - Ա՛ հա՛ր, էն ա իլա՛լ մին խուխու ծեռքե մին մախորկու աման, հիշտեղա վերե յա, էն խոխան պիրիլ տվեք, էն ամանը ինքյ օնինքյ:

Թաքավերը ըխճկանը ասում ա.- Պա համոթ չի՞, մունք թաքավեր ինիլավ քյինինքյ էն խուխեն ծեռքան պեն ինք օնինքյ:

Ախճիգյն ասում ա.- Հինչ թա՛հիրը օզում ա ինի, քթիքյ, պերեքյ:

Էն խուխեն պիրիլ ըն տամ, մախուրկեն ամանը ինքյ օնում: Թաքա-

վերեն ախճիգյը հորն ասում ա.- Ժողովուրթեն լոխճին ղոնաղ ծեն տոք:
Հա̀րն ասում ա. - Պա էտքան հաց-պեն հի՞շտե՞ղա կինի:
Ախճիգյն ասում ա. - Քու պենտ չի, տու լհա̀ ծեն տո, թող կյան:
Հա̀րը ծեն ա տամ, մարթիք ըն կյամ, լոխ նստոտում: Էտ ղոնաղնեն տեսնում ըն, վեչ կրակ կա, վեչ խորագյ, վեչ պեն:
Թաքավերեն ծեն ըն տամ, ասում. - Թաքավերն ապրած կենա, պա տո̀ւզնը կուտրվեցենքյ, խե՞ հաց չըք տամ:
Թաքավերն ասում ա. - Դե իմ ախճիգյս ա ծըեզ ղոնաղ ծեն տվալ:
Թաքավերեն ախճիգյը ասում ա.- Մին իրեք ռոպեյանը ետը լոխ պաղրաստ ա իննական:
Ասում ա պրծնում, քյինո̀ւմ իրեքինջի զնոփկան հոփ տամ:
Ղըչըղնեն ղմենեն եր կալած տո̀ւս ըն տեռնում, ըսկսում լոխճին կտորելը: Լոխ փախչում ըն:
Թաքավերեն ախճիգյը մըն էլ ա հոփ տամ, ղչղնեն նի յըն տեռնում: Թաքավերեն ըխճկանը սուղի յըն տամ: Թաքավերեն ախճիգյը ջառ կանչիլ ա տամ:
- Մախորկու աման ա կորալ, հու վեր կուրցուրալ ա, կյա տանե:
Մինը կյամ ա, թա յըես ըմ կուրցըրալ:
Թաքավերին ախճիգյն ասում ա. -Հի՞նչ կա մաչին:
Թա̀- էրկու պա̀պրո̀ս:
Մինը՝ թա.- Օթ պա̀պրո̀ս:
Մինը թա.- Չորս պա̀պրո̀ս.- վեչ մինին էլ տամ չի թաքավերին ախճիգյը:
Մախորկեն տա̀րը, էն խոխան կյամ ա, թա̀. -Յըես ըմ կուրցրալ:
Թաքավերին ախճիգյը ասում ա. - Մաչին հի՞նչ կա»
Թա̀.- Իրեք կնոփկա»
Մախորկեն ամանը տամ ըն էտ խուխեն, թա եր կալ կորե, էլ ըրվաս վեչ:
Էտ խոխան մախորկեն ամանը յոր ա օնում, թա.- Յիշեցեքյ, յիշեցեքյ:
Եշում ըն, տեսնում առաչին կնոփկան վեր հոփ ա տամ, սուփրա յա պենվում, էրկունջի կնոփկան վեր հոփ ա տամ, հրսանեքյ, իրեքինջինը՝ ղչըղնե:
Թաքավերն ասում ա.- Պահ, ախճիգյս սխալվալ ա́: Առաչինին տեղը

իրեքինջինն ա հոփ ավալ:

Էտ խոխան մախորկեն ամանը յոր ա օնում, քյինո̈ւմ , տեսնում ո̈ւրա̈ն ախպերը կարտ խաղ ըրած, իլա̈ծա̈ն, չիլա̈ծա̈ն տանել տված, քյա̈սիբ հա̈րն էլ մին հավու պո̈ւնո̈ւմ:

Առաչին կնոփկան հոփ ա տամ, լա̈վ կերակուրնի, ջուռաբաջուռա բար-նուբարավ լիգյը սուփրա յա պենվում:էտ տըղան էտ կնոփկեն խնթրում ա, վեր ո̈ւրա̈ն հորը, մորը ջիհլցնէ: Սկըսում ըն լա̈վ ապրելը:

Դերը կյամ ա, թա. - Մախորկես ամանըս ինձ տոք:

Խոխան ասում ա. - Իրեքինջի կնոփկան հոփ տանք, ղչղնեն տո̈ւս կյան, հո̈ւրը վեր սպանին վեչ, էն յոր օնէ:

Ըտի էլ անում ըն: Ղչըղնեն տո̈ւս ըն կյամ, դերին սպանում, մախորկեն ամանը մնում ա խուխեն:

Չարը՝ ընդեղ, պարին՝ ըստեղ:

## 58.ՂՈՒԳՅԱՄԸ ՆԱՆ ՍՈՒՔՅԱՄԸ

Ընո̀ւմ ա, չընո̀ւմ մին թաքավէր: Էտ թաքավէրը քյան տարե յար, հինչ փըսակվալ ար, ամմա խոխա չօնէր: Էրգյան մըտըծելանը ետը թաքավէրը դե՛յա տամ ո̀ւրա̀ն գիդնականներեն, վար նահանք գյիդա̀ն, թա̀ մանին հի՛նչ ա, վար թաքավերեն խոխա չի ընո̀ւմ : Թաքավերեն գիդնականնեն կըրեցին վեչ գյիդա̀ն, կոզի շատ քնենքյի մեչ ընգյան:

Մին օր էլ թաքավերեն պալատն ա կյամ մին օզո̀ղ աշըղ, թաքավերեն անա փայ ա օզում:

Թաքավերն ասում ա. - Փայ չըմ տա՛լ, թա գյիդա̀ս վեչ, խե՞ ինձ խոխա չի ընո̀ւմ:

Աշըղը շատ թա խըրեգյ մըտըծելանը ետը ասըմ ա.- Թաքավերն ապրած կենա, թա մանին ասեմ, ինձ հի՛նչ փեշքյեշ կտաս:

Թաքավերն ասում ա,- Թա դո̀ւզն ըսեցեր, թաքավերոթունես կեսը քյըեզ կտամ:

Աշըղը ըստի յա ասում.- Երեք օր ինձ վախտ տաք, իրեք օրանը ետը քյըեզ մանին կասիմ:

Աշըղը ծանոթ ար շատ տըղերե: Նա մին խնձո̀րի ծառի տեղ ար գյո̀ւղում, հու նըրանա օտում ար, խոխա յար ընո̀ւմ: Էտ ծառը հեն ար մին կյետի քըշտե: Աշըղը քյընա̀մ ա ծառը պըցրա̀նում, մին խնձո̀ր պուկում, քըցո̀ւմ ծոցը, էրկունջինը պոկելիս բո̀ւրդա̀ն ծեռքան վեր ա ընգյում, ընգյում կյետեն մաչը: Ճարը կտրած աշըղը մին խնձո̀ր ա յոր օնըմ, կյամ թաքավերեն կոշտը:

Խնձո̀րը տամ ա թաքավերեն, ասում. - էտ խնձո̀րը կես կանես, կեսը տու կոտես, կեսը կընեգյտ: Մին տարե ընցած վեչ, ծեզ խոխա յա ըննական:

Թող խնձո̀րը թաքավերն նան թաքուհին օտեն, մունք խոսենքյ էն մին խնձո̀րին անա, վար պուկելիս աշըղեն ձեռքան ընգյալ ար կյետը:

Խնձո̀րը քյընա̀մ ա մին ճըղացե թըվքատանը մընամ: Ճաղացը վենն ա կենում: Ճըղացպանը կնգանը ղարկում ա, վար գյիդա̀ , թա ճաղացը խեյա վեննը կացալ: Կնեգյը քյընամ ա, տեսնում մին դա̀շա̀նգյ խնձո̀ր ընգյա̀լ ա ճըղացեն թըվքատոնը, թողում չի վար ճո̀ւրը կյա:

Էտ կընեգյը յոր ա օնում խնձո̀րը տանում մարթեն կոշտը, ասում. - Ա՛ մարթ, մին խնձո̀ր ըմ քըթալ ճըղացեն թըվքատանը:

Ճըղացպանն ասում ա. - Ա՛ կնեգյ, դե տընձկավը կես ըրա, օտենքյ, վար տա մեր ճաղացը էնքան վենն ա կըցըրալ:

Ճըղըցպանեն կնեգյը ըրեսուն տարե յա, հինչ փըսակվալ ար, ամմա խոխա չօնար: Խնձո՞ր են կերած օրան վար ընցնում ա իննը ամես, իննը օր, իննը սհաթ, իննը մունուտ, ճըղըցպանեն ընո՞ւմ ա մին տղա: Նա շատ ա ուրխանում, վար վածցուն տըրեկան ա, ո՞ւրա՞ն խոխա ըլա՞վ: Տղեն անումը տընո՞ւմ ա Ղուգյա՞ն:

Ճըղըցպանեն տղան տարավ ար մըծանում, օրավ ար մըծանում:

Թող ճըղըցպանեն տղան օրերավ մըծանա, խա՞բա՞ր տանք թաքավերեն անա:

Խնձո՞րը կերած օրան հիբը ընցնում ա իննը ամես, իննը սհաթ, իննը մունուտ, թաքավերեն կնգանն ընում ա մին շատ դա՞շա՞նգյ տղա:

Թաքավերը աշըղեն դե՛յա տամ, էն գիրդնականներեն էլա դե՛ տամ, նահանց աշըղեն քըշտեն հըմընչըցնում ա, դարկում ո՞ւրա՞նց տները:

Աշըղեն մեծ փեշքյեշ էլ ա տամ, ո՞ւրա՞ն պալատումը պահում:

Թաքավերը տղեն անումը տընում ա Սուքյա՞ն: Թաքավերեն տղա Սուքյա՞ն էլ ա օրերավ մըծանում, վեչ թա տարավ: Հիբը տառնում ա օխտը տըրեկան, թաքավերը ո՞ւրա՞ն մաղար տղեն դարկում ա շկոլ:

Ճըղըցպանեն տղան էլ ա մըծանում, հիբը տառնում ա օխտը տըրեկան, ճըղացպանը տղեն դարկում ա շկոլ: Շկոլումը Ղուգյա՞ն նան Սուքյաը ո՞ւրո՞ւր էնքան նման ըն ընո՞ւմ, թա իրեսավ, թա մըզերավ, վար հենց ըն գյուղո՞ւմ մին խնձո՞ր ա, մեչան կես ըրած:

Ղուգյա՞նը տըսնալավ, վար Սուքյա՞նը լա՞վ հնգեր ա, մընգյել հավադարիմ ա, Սուքյասեն ասում ա.- Եք ըխպը՛ րանանք:

Սուքյա՞նը ռազի յա կենում: Տհենց էլ էրկու խոխերքյը տա՞ռնում ըն հա՞լա՞լ ախպերքյ:

Օրերան մին օր թաքավերեն տղա Սուքյա՞նը ճըղըցպանեն տղա Ղուգյասեն դե՛յա տամ ո՞ւրա՞նց տոն: Ղուգյա՞նը ռազի յա ընո՞ւմ:

Տիսերանը ետը էրկուսավ քյընում ըն թաքավերեն պալատը: Թաքավերեն կնեգյը բըլկոնումը նստած, սըերտը թմփթմփալավ, համփերոթունը կուրցրած սպասում ար ո՞ւրա՞ն մաղար տղեն՝ Սուքյա՞նեն կյալին: Բո՞ւրդա՞ն տեսնում ա, վար Սուքյա՞նը կյամ ա, ամմա էրկուսավ, էրկուսն էնքան նման ըն ընո՞ւմ, վար թաքավերեն կնեգյը գյուղո՞ւմ չի, թա վե՞րն ա ո՞ւրա՞ն տղան:

Վար էլ ըն մուտանում, նա հըրցընում ա. - Սուքյա̀ս ջան, մինա̀կ ըս կյամ, թա̀ հընգեր օնիս:

Սուքյա̀նը ջողաբ ա տամ, ասում. - Չէ՛, այ մա̀ր, իմ ախպեր Ղուգյա̀ն էլ ա ինձ նըհետ:

Մարըը ուրխանում ա, վար ի̀ւրա̀ն տղան ի̀ւրա̀ն նման ախպեր ա քըթալ: Միրավ նահանց ընթունում ա:

Ճաշանը ետը տըղերքյը քյընամ ըն մին պատառ շոռ կյան, ի̀ւրա̀նց հետե ասին, խոսին: Ետնան Ղուգյա̀նը քյընի̀ւմ ա ի̀ւրա̀նց տոն:

Մին օր էլ Ղուգյա̀նը Սուքյա̀նեն ղե՞ յա տամ ի̀ւրա̀նց տոն: Սուքյա̀նը ռազի յա կենում:

Նահանք կյամ ըն ճըղըցպանեն տոնը: Ճըղըցպանեն կնեգյը տղորցը լա̀վ ղոնաղ ա անում, ետան տղերքյը քյընի̀ւմ ըն շոռ կյալի:

Նահանք տեսնում ըն, վար մին պառավ կընեգյ կոժավը ըխպըրան ճի̀ւր ա տանում:

Սուքյա̀ն ասում ա. - Ղուգյա̀ս, յըես էս քարը շպրտիմ, թա̀ քյընա̀ պըռավեն կոժը ծակե, էն մին ընգյի̀ւնավը տի̀ւս կյա, գյիդա̀ վար սաղ-սալամաթ մեր տոն ըմ քյընա̀կան, թա ծակե վեչ, մեր տոն չըմ հըսնըլական:

Ղուգյա̀նը Սուքյա̀նեն ասում ա, վար տհենց պա̀ն չանե, համոթ ա: Սուքյա̀նը ըսկանում չի՛, քարը յրա յա անում, պըռավեն կոժը ծակում, էն մին ընգյունավը տի̀ւս պիրըմ:

Պառավը Սուքյա̀նեն անեծք ա տամ, ասըմ. - Աշկտ մնա Նոյեմզար խանումեն յըրա:

Էտ օրանը ետը Սուքյաանը խըրեգյ-խրեգյ մաշվում ա: Սուքյա̀նը մին քըշեր ըրազումը տեսնում ա, վար մին ախճիգյ ի̀ւրա̀ն մին նկար տվավ, քյինից: Սուքյա̀նը զի̀ւրթնա̀նում ա, տեսնում մին նկար կա քըշտեն, ամմա ախճիգյը չիկա: Վար լի̀ւսանում ա, Սուքյա̀նը քյընի̀ւմ ա Ղուգյա̀նեն կոշտը, արազը նաղլ անում:

Ղուգյա̀ն ասում ա.-Դե վար տհենց ա, եք ըրկուսավ քյընա̀նք, էտ ըխճըկանը շոռ կյանք, քըթա̀նանք:

Սուքյա̀նը ռազի յա կենըմ:

Ղուգյա̀նը ասում ա.- Վըեննավ կարիլ չընք քյինանք:

Սուքյա̀նըն ասում ա.- Խե՞ վըեննավ, իմ հա̀ր թաքավեր ա, կասինքյ

էրկու լա՛վ ծի կտա, կըքյընանք:

Սհենց պայման կապած քյընամ ըն թաքավերեն կոշտը, թաքավերեն պատմում ո՛ւրա՛նց պայմանը: Թաքավերը ռազի չի կենում, քընենքյ ա անում, վար ո՛ւրա՛ն մաղար տղան էլ կըքյընա՛, էլ ետ չի կյա՛լ, էլլա կմնա առանց ժա՛ռա՛նգյ: Սուքյա՛սը վերքան հորը ղաչանք ա անըմ, տա՛ռնում չի՛:

Ղուզյա՛ն ասում ա. - Քյընա՛նք իմ հոր ասինքյ, կոզի ճղացպան ա, ամմա մըեզ քյո՛մա՛գյ կանե:

Սուքյա՛սը ռազի յա կենում:

Քյընա՛մ ըն ըրկուսավ ճըղըըցպանեն կոշտը, ո՛ւրա՛նց պայմանը, մընգյ էլ թաքավերեն ատկազն ասում: Ճըղացպանը դա՛ստի ճաղացը ծախում ա, էրկու լա՛վ ծի ինքյ օնում, տղորցը տամ:

Էրկու ախպերք՝ Սուքյա՛սն նան Ղուզյա՛սը հըղե յըն ըննում, թա վը՞րդեղ ըն քյընա՛մ, ո՛ւրա՛նք էլ չըն գյուղո՛ւմ : Օրը մըթնում ա, մին կանանչ տեղ եր ըն կյամ:

Սուքյա՛սն ասում ա,- Ղուզյա՛ս ջան, տու ստեղ կաց, յըես քյընա՛մ մին պա՛ն վըերս անեմ, պիրիմ օտինքյ:

Ղուզյա՛ն ասում ա.- Չէ՛ , յըես ըմ քյընա՛կան:

Վերչը Ղուզյա՛սը վըերսի յա քյընա՛մ: Սուքյա՛սը քոն իլա՛ծ վախտը կյո՛ւլերը կյամ ըն, ընդրան օտում, վըսկռնեն շաղ տամ: Ղուզյա՛սը վար տեսնում ա Սուքյա՛սը էլ կա վէչ, շատ մըտըըծելանը ետը, քյընամ ա, մին ծառնե տակե նստում, սկսում լա՛ց ինելը: Լա՛ց ինելիս նենջը կյամ ա, տըհենց էլ կես քոն, կես զա՛րթուն, բո՛ւրդա՛ն տեսնում ա ծառնեն յրա մին դուշ, ո՛ւրա՛ն ճըտերավը ծըլվըլում ա:

Նա անզուճ ա օնում, սկանում, վար դուշեն ճոտերը ո՛ւրա՛նց մորն անա հըըցնում ըն, - էս հո՞ւվ ա, էս տղան, վար սըհենց մինա՛կ ծառնեն տակեն քոն ա ըլա՛լ:

Ղուշն ասում ա, - Սա ճըղըըցպանեն տղան ա, ընդրան հընգերին կյո՛ւլե-ըը կերալ ըն, ինքյըն էլ մինա՛կ ա մընացալ, գյո՛ւղո՛ւմ չի, թա հի՞նչ անե:

Ճոտերն ասում ըն. - Խե՞մին հընար չիկա՞ Սուքյա՛սին նորու սըղըցնին:

Ղուշն ասում ա.- Խե՞ կա վէչ, վար էս տղան զա՛րթո՛ւն ընի,իմ ասածնեն ըսկանա, հինչ ասիմ, նըհենց անե, կըըլական ա Սուքյա՛սեն սըղըցընե, հըսնեն ո՛ւրա՛նց նպատակեն:

Ճոտերն ասում ըն. - էտ տղան հի՞նչ պիտի անե:

Ղուշն ասում ա. -Ցրես մըհենզյ իմ թեփուռներաս վեր կըքըցիմ, պետմա յօր օնե քյընյա օխտը սարան էլ տենը մին մեծ սար կա, ընդեղ ապրում ըն օխտը դև: Նահանք ախպերք ըն, նահանց բաղեն անմահական ճո՛ւրը պիրի, Սուքյա՛սեն վեսկեռքը ո՛ւրո՛ւր հըվաքե, էտ անմահական ճո՛ւրն էլ ածե յրան, իմ թըփուռներավըս քըսե, դյա՛ստի Սուքյա՛սը կըսաղանա, կը զարթնի նահանք ո՛ւրյա՛նց հըղեն կըքյընան, կը հասնին ո՛ւրյա՛նց մուրազեն:

Ճըտերը նորու մորն անա հըրցնում ըն.- Էտ դևերին անա հո՞ւնց անմահական ճո՛ւրը պիրի:

Մարն ասում ա. - Պիտի քյընյա՛, ցիրեկավ հըսնե ընդեղ, էն սարեն քըշտեն մին ախպո՛ւր կա, ընդեղա էլ յոր օնե:

Ղուզյա՛սը օրախ-օրախ եր ա կենում: Էտ վախտը ղուշը թռչում ա, հըռանում:

Ղուզյա՛սը հունցու ղուշն ասալ ա, նհենց էլ անում ա: Սուքյա՛սը նորու սըղանում ա: Ետնան էրկու ախպեր հըղե յըն ընգնում:

Շատ ըն քյնյա՛մ, թա խըրեզյ, ո՛ւրյա՛նք ըն գյուղո՛ւմ, հըսնում ըն մին դյա՛լին քոլ, տեսնում ըն կրակի ծոխ ա եր ընո՛ւմ:

Սուքյա՛սն ասում ա. - Հյա՛լբյա՛թ դևերը ըստեղ ըն ապրում:

Ղուզյա՛սն ասում ա. - Վեչինչ, քյընյա՛նք նահանց կոշտը:

Ըրկուսավ քյընո՛ւմ ըն դևերին տանը կըտրեն վեննը կենում: Ղուզյա՛սը վեննավը կտրեն թըխում ա, կտորը թըմփթըմփում ա:

Դևերեն կլխավերը տո՛ւս ա կյամ, վար տեսնում ա նահանց, ասում ա. - Լյա՛վ ա, շատ վախտ ա մարթու մըես չընք կերալ, մարթու մըես էլ կօտինքյ:

Նահանց տոն ըն տանում: Վար Սուքյա՛սն նան Ղուզյա՛սը տոն ըն նի մննում, դևերեն կլխավերը քառասուն դևերի միար կերակուրեն ղըզղանը նշանց ա տամ, վար խուրյա՛գյավ լիգյը ղըզղանը յոր օնե, ասում ա. - Թյա՛ էրկու ախպորավ կըրեցեքյ էս ղըզղանը պըցըրցընեքյ, գյիդացեք, վար ըստեղան սաղ սալամաթ քյընական ըք, թա չէ ծըեզ էրկուսեն էլ ուտըլական ընք:

Ղուզյա՛սը շատ թա խըրեզյ մըտըծելանը ետը ասում ա. - Ցոր էլ կօնինքյ, հյա՛լյա՛ վեր էլ կըտինինքյ, ետնան էլ տուք ըք պըցըրցնելու:

Դևը ռազի յա կենում:

Ղուզյա՛սը մինյա՛կ ղազանը յոր ա օնում, նըհենց տափավը կյամ, վար ղազանը մինչև կեսը վըեղեն մեչն ա խրվում: Դևերը հիշքան չըրչարվում

ըն, կարում չըն ղազանը վըեղան հանին։

Նահանք ղաչանք ըն անում Ղուզյանեն, Ղուզյանը ղազանը հանում ա յավաշ տինում վըեղեն յըրա։ Ընդեղան Սուքյանս նան Ղուզյանը տուս ըն կյամ, ուրանց հըղեն քյընում ։

Շատ ըն քյընամ, թա խըրեզյ, հըսնում ըն իրեք հըղըցու։ Ըտեղ տեսնում ըն մին պառավ մարթ կա նստած, պարով ըն տամ, պարով ինքյ օնում։

Ղուզյանը էտ պառավ մարթան հըրցընում ա, թա, - Պապե, էս իրեք հըղըցնեն վըրդեղ ըն քյընամ։

Պառավ մարթն ասում ա, - էս մինը քյընամ ա Նոյեմզար խանումեն պալատը, ստրանավ քյընացողը ետ չի կյամ։ Էս մինավը քյընացողը իցցուն տարանը ետն ա ետ տառնում, էս իրեքինջինավն քյընացողն էլ կանոխ ա ետ տառնում։

Սուքյանը վեր սկանում ա Նոյեմզար խանումեն անումը, ուրխացած Ղուզյանեն ասում ա. - Քյընանք Նոյեմզար խանումեն պալատեն թուշավը։

Վար հըղե յըն ըննում, էտ պառավ մարթը ետ ա կանչում նահանց, ասում. - Վը՞րդեղ ըք քյընամ, ա՛ ջըհըլնե։

Սուքյանն ասում ա. - Քյընամ ընք Նոյեմզար խանումեն հետան։

Էտ պառավ մարթն ասում ա. - Ընրա կոշտը քյընացողը էրկու հոքավ չըպիդի քյընա, էրկուհազար հոքավ պիդի քյընա։

Սուքյանն ասում ա. - Խե՞ մունք կարալ չը՞նք ընրա կոշտը հըսնինքյ։

- Չէ։

Ղուզյանը կըզնըրվում ա, ասում. - Ա՛ պառավ, թա զյուղում ըս հունց ամալ կըկյա ընրա կոշտը քյընալ, ասե, թա չէ կլուխտ կըտըրըլական ըմ։

Պառավը վըխելան նհետ ասում ա.- Ա՛ դուզի, ինձ սպանել մեքյ, լավ, կասեմ։ Շատ քյընաք, թա խըրեզյ, ծեր առաչը մին մըեծ պալատ ա ըննա-կան, տա հենց ընդրա պալատն ա։ Պըլատեն չորս անգյունը մեծ պատ ա քաշած։ Սուքյանը ծին կտա Ղուզյանեն, Ղուզյանը հըռուցանա ծին կըքշի, բըրդան էտ պատը պարան կըկյա։ Նի կըմննե պալատը։ Էտ պըլատեն ըռաչեն էրկու ծառ կա՝ մինը խնձորե, մինը՝ տանձի։ Էտ ծըռներան կը պուկե իրեք խնձոր, իրեք տանձ, կը պըցրանա Նոյեմզար խանում են կոշտը։ Իրեք խնձոր նան իրեք տանձը ընրան կտա, յետնան կասե. «Չոռ»։ Թա կըրացեր վեչ ասես «չոռ», դաստի տեղտ քար ըս կըտըրըլական։ - Քյընացեքյ, ամմա սայաղ կացեքյ, վեր էրկուստ էլ քար չըտառնաք։

Սուքյա̈նը նան Ղուզյա̈նը քյընո̈ւմ ըն։ Հինչ վար պառավն ասալ ար, կըդարըմ ըն։

Նոյեմզար խանումն ասըմ ա. - Ա՛յ տղա, խե՛ կանոխ չըս եկալ։ Էսքան ըսպասալ ըմ, օրուքշեր տանջվալ, յըես ջա̈հիլ-ջիվան, բա տու հըշտե՛ղ ըս իլա̈լ։ Պա հընգերտ հո՞ր ա։

- Հընգերս էն ա ըստեղերքյ, քյնամ դե տամ, կյա։

Էրկուսավ կյամ ըն, իրեք օր, իրեք քըշեր ընդեղ մնամ ըն։ Ետավ հըղե յըն ըննո̈ւմ Ղուզյա̈սեն հըրթնացուն քըթընալու հետե։

Կյամ ըն էլլա էն պառավ մարթեն կոշտը։ Էրգյան հարցըփորց ընելանը ետը, պառավը նշանց ա տամ Անթառամ խանումեն պալատը։ Ըտեղ էլ իրեք օր, իրեք քըշեր մընալանը ետը, հըղե յըն ըննո̈ւմ բըդա ո̈ւրա̈նց երգյիրը։

Թաքավերը ըսկանում ա ո̈ւրա̈ն տղեն կյալը, դա̈ստի քյնա̈մ ա ընդրան առաչը, ամմա տղան հորը նիետ խոսում չի, քյընա̈մ ա ճըղըըցպանեն կոշտը։

Ճըղացպանը օխտը օր, օխտը քըշեր Սուքյա̈սեն նան Ղուզյա̈սեն հետե հըսանեքյ ա անում։

Սուքյա̈նը ո̈ւրա̈ն թաքավեր հորը ժողովուրթեն փիս պիելեն դա̈ռդա̈ն ընրան թախտան եր ա քըցում, Ղուզյա̈սեն հորը՝ ճըղըըցպանեն թաքավեր տիննում։ Տհենց էլ ապրում ըն՝ ճըղացպանը հունցու թաքավեր, Սուքյա̈ն նան Ղուզյա̈նը հունցու ընրա տղերքյը։

Ընրանք հասեն ո̈ւրա̈նց մուրազեն, տուք էլ հասնիքյ ծեր մուրազեն։

Էն դա̈շա̈նգյ կյապո̈ւտ երգյինքան, էն ըլըվալավ անում ըրնեն քըշտան, վեր սաղ աշխարքես լո̈ւս ա տամ, ուտուլեղան ա տամ, քըշտըըցընում, մըեզ հետե կընըռնչ-կյա̈րմո̈ւր խնձո̈րնե վեր տա̈ռնա, վեր լոխ ժողովուրթը օտե-օտե, մին լա̈՛վ քըշտանա՛։

## 59.ԲԱԽՏԱՎԵՐ ՉՈԲԱՆԸ

Իլա̀լ ա, չիլա̀լ մին մարթ, մին կընեգյ ա իլա̀լ: Նահանք շատ քյա̀սիբ ըն իլա̀լ ըպրելիս, ամմա սիրավ, ո̀ւրո̀ւր նհետ հաշտ ըն իլա̀լ: Նահանց խոխա չի իլա̀լ:

Մին օր էլ մարթը կընգանը ասալ ա. - Ա՛ կընեգյ, քշերես մին ա̀րա̀զ ըմ տեսալ: Էտ ա̀րա̀զը իմ գյիդա̀լա̀վըս հըրըստոթուն ա, հղ յըմ ըննա̀կան, քյինա̀մ հըրըստոթունե շոռ կյա̀մ:

Կնեգյը ղաչանք ա անըմ, պղատանք ա անըմ մարթեն, թա̀ հի՞նչ ա̀րա̀զ ա տեսալ: Մարթն օզըմ չի ասե, ամմա էրգյան քընենքյ ընելանը ետը ասըմ ա.- Քըշերես ըրազումս վըններես մաչին էրկու տղա յըմ տեսալ: Տա հըրըստոթուն ա, բիդի հըղե ընիմ հըրըստոթունե շոռ կյամ:

Էն մին քըշըրհանը կնեգյը մարթին հըղե յա քըցում: Մարթը շատ թա խրեգյ քյնա̀լա̀նը ետը մին չոբանե յա պըտահում: Չոբանը ըտեղ պահում ար օխտը հըզեր վեխճար: Էտ օխտը հըզեր վըխճարեն նհետ օխտը շոն էլ օներ:

Նահանց զահմանը վեշ մինը կարըմ չար ընցնե: Չոբանը էտ մարթին տըսնելավ մընամ ա քար կտրած:

Վազ ա տամ բըղա̀ նա, հըրցընում. - Ա՛ մարթ, հինչի՞ հետե, վըրդե՞ղ ըս քյինա̀մ:

Էտ մարթը վեչ մին ջողաբ չի տամ, հըղե ընգած քյինամ ա: Չոբանը վեր շատ զոռ ա անում, ասում ա. - Քյընա̀մ ըմ հըրըստոթուն քթենամ, ա̀րա̀զ ըմ տեսալ:

Չոբանն ասում ա. - Հըզեր վեխճար տամ քյըեզ, մինա̀կ թող քու տեղ յըես քյընա̀մ:

Էտ մարթը ռազի չի ինո̀ւմ:

Անջախ վար չոբանն ասում ա. - Վըխճըրներեն սաղ սո̀ւրո̀ւն, մընգէլ օխտը շոնը քյըեզ ըմ տամ, մինա̀կ թա̀ յըես քյընա̀մ, էտ մարթը ասում ա՝ «հա»:

Օխտը հըզեր վեխճարը շներեն նհետ յոր ա օնըմ, օրախ-օրախ ետ տա̀ռնում տոն: Տհենց էլ մարթըկնեգյ ըսկսում ըն լա̀վ ապրելը:

Չոբանը հըղե յա ինո̀ւմ վար էն մարթեն ըրազըմը տեսած հըրըստո-թունը ինքյը յոր օնե:

Շատ ա քյընո՛ւմ, թը՛ խրեգյ ա քյընո՛ւմ, շատ նան խրեգյը ինքյը կգյիղը՛։ Նի յա միննում մին խընձո՛րի բաղ։ Տըեսնում ա մին ջը՛հիլ մին խընձո՛րի ծառնեն տակեն պարանց ընգյած, ծին քըշտան կապած։ Չոբանը ամեն հինչ դը՛ստի կըլո՛խ ա ըննո՛ւմ, ծին տանում ա օրիշ ծառնա կապում, ինքյը քըշտեն պարանց ըննո՛ւմ։

Կես քըշերը անցկացած չոբանը տեսնում ա թաքավերեն ախճիգյը, մին խուրջին վըեսկե եր կը՛լը՛ծ կյամ ա չոբանեն կոշտը, առանց ընրան ճըննընչելու ասըմ ա, - Կանոխ ըրա, հըղե ըննինքյ թաքավերեն վըեղան, կանոխ անց կենանք։

Չոբանը խուրջինը քըցում ա ծիյավը, ո՛ւրը՛նք էլ նստում ըն ծիյին յրա, բեջիթ քըշում, վար ըտեղան կանոխ անց կենան։

Ախճիգյը իմաստուն ա ըլո՛ւմ։ Կըսըհիըղե դը՛ստի կլո՛խ ա ըննո՛ւմ, վար տա ո՛ւրը՛ն մարթը չի, չոբան ա։ Ետնան հինչ վար ըսելի յա ընում, «չոբան» ա ասում, «չոբան» ա դե տամ։

Չոբանը մընգյէլ թաքավերեն իմաստուն ախճիգյը շատ թը՛ խըրեգյ քյընալանը ետը, հըսնում ըն մին օրիշ թաքավըրութուն։ Նահանք մըսըլըհաթ ըն անում մընան ըտեղ։ Տհենց էլ անում ըն։ Մընում ըն ըտեղ հունցվար մարթըկնեգյ։

Ո՛ւրը՛նց սեփական տոն չի ըլը՛լ։

Կնեգյը մարթին ասում ա. - Չոբան, քյընը՛ թաքավերեն կոշտը, ասե. «Թաքավերը ապրած կենա, քու պալատներան մինը մըեզ տո, վար մըեչին ապրինքյ»։

Կնեգյը վախտին մարթին դույուղ ա անում, վար թը՛ թաքավերը ամեսը չորս վըեսկե քըրեհավ տա, դաբուլ կը կենաս, թը՛ չէ, չէ՛։ Թաքավերը տհենց էլ պըհանջում ա։

Մեհետ կնեգյը չոբանեն դարկում ա, վար թաքավերեն դոնաղ կանչի։ Չոբանը քյնը՛մ ա թաքավերեն կոշտը։

Թաքավերն ասըմ ա.- Ցըես ծեր տոնն ըմ կյըլը՛կան էն վախտը, հիբը իմ օթախան չըրու ծեր տոնը գյը՛բը՛ քցիքյ։

Չոբանը ետ ա տը՛ռնում կնգանը ասում թաքավերեն պահանջը։

Կնեգյըն ասում ա. - Բեքեփանա միլ, տա էլ կլո՛խ կըպիրինքյ։

Ախրը վերչը նահանք ո՛ւրը՛նց տանան չելը թաքավերեն օթախը գյը՛բը՛ յըն քցում։ Կնեգյը չոբանեն դույուղ ա անում, վար թը՛ թաքավերը կյա, տու մին վըեննը կանոխ նի կմննես տոն։

Թաքավերեն նհետ կյալիս չոբանը մննան քցում ա կնգանը աաածը, վար ասալ ա, թա մին վըեննը կանոխ նի կմննես տոն: Չոբանը նան թաքավերը մինտեղ նի յըն միննում տոն, տեսնում կնեգյը մազերը սանդրում ա:

Թաքավերը վար տեսնում ա չոբանեն կնգանը, սիրահարվում ա, իշտահը խարաբ ա ընհում, վեշ մին պան օտում չի, մտածում ա, հունց անե, վար չոբանեն խափի, ինքյը փսակվե ընրա կնգանը նհետ:

Թաքավերը քյընում ա հուրան պալատը, չոբանեն դե յա տամ հուրան կոշտը ասըմ. - Չո՛բան, անջուկ ըրա, յըես հիվանդ ըմ, տու բիդի քյընաս, ընցնես երկու հուրհուր նի եկող սըրերեն ղաթավը, վար ըսկի դուշն հուրան թևավը, օըն հուրան պոռտավը կարըմ չի ընցնե էն սըրերեն քամակը, ընդեղ հենա մին քյահրիզ կա, էտ քյահրիզին կոխկի ծըղըքյներան բիդի պիրիս, վար յըես վըետ քաշիմ, լիվանամ:

Չոբանը բեքյեփ կնգանը կոշտն ա կյամ, թաքավերեն խոսկը ասում:

Կնեգյն ասում ա. - Բեքյեփանա միլ, չոբան, քյընա թաքավերեն կոշտը ասե. «թաքավերն ապրած կենա, ինձ էրկու փութ պամբակ տո, մընգյ էլ մին ծի, վար քյընամ ծըղըքյնե պիրիմ»:

Չոբանը քյընամ ա թաքավերեն կոշտը էլ լոխ ասում, հինչ վար կնեգյը թափշհուր ա ըրալ հուրան: Թաքավերը մթկումը տինհում ա, հենց անե, վար չոբանը էլ ետ չըտառնա:

Չոբանը էրկու փութ պամբակ, մընգյ էլ մին լավ ծի յա յոր օնըմ, հըդե ըննհում:

Շատ ա քյընամ, թա խըրեգյ, հըսնում ա հուրհուր նի եկող սըրերեն: Պամբակեն կեսը թող անում բըղա ծախ, կեսը բըղա աչ, տըհենց էլ սարերը հուրհուր անա հըռանում ըն, չոբանը ընցնում ա սըրերեն քամակը: Սըրերեն քամակը ընցնելավ, տեսնում ա մին ցորցորտ քյահրիզ, չորս անգյունը ծըղըքյնե փըռած: Չոբանը պըցըրնալավ տեսնում ա ընդեղ, վըրդեղ քյահրիզն սկսվում ա, մին ախճիգյ արկաթե ժինջիլավ կապած:

Ախճիգյը չոբանեն տըսնալավ դե յա տամ, ասում. - Մըղափուն ըս, ա՛յ ջահիլ, բեջիթ ըրա ըտեղա հըռաց, թա չէ դևը կըկյա քյըեզ պըտըռ-պատառ կանե: Էն քյըեզ նման շըտերեն ա կհըլ տըվալ:

Չոբանն ասում ա. - Յա յըես մեռնել պիտիմ, յա քյըեզ ըզադիլ պիտիմ:

Չոբանը կյողլ ա կենում ճըրին մեչին: Դևը կյալավ դաստի գյուղհում ա,

վար ո՛ւրա՛ն սըրհա՛ղա՛ն մարթ ա ընցալ, սկսում ա կյըռկյոռալ ըխճըկանը յըրա: Հըրցնում ա, թա հո՞ւ վա նի մտալ ո՛ւրա՛ն սա՛րհա՛ղը, ամմա ախճիգյը վեշ մին պա՛ն ասըմ չի:

Դնը կյըռկյոռալավ տեսնում ա, վար վեշ մինը կա վեչ, քոն ա ընում:

Չոբանը ճըրան տո՛ւս ա կյամ, օխտը կըլխանի դևեն մաչի կըլխեն նըհենց ա թըխում, վար դնը մեչան էրկու կես ա ընո՛ւմ:Դնը վերքան կյոռռում ա, ասըմ. - Մին էլ թըխե, մին էլ:

Ամմա չոբանը ասում ա. - Յըես իմ մորան մե հետ ըմ ծնվալ:

Դևեն սպընելանը ետը ախճիգյը ո՛ւրա՛ն ժինջիլներեն պընա՛լիքներեն տեղն ասում ա: Պընա՛լին դևեն մըքեն տակեն ա ընո՛ւմ:

Ըխճըկանը ժինջիլնեն պընալա՛վ, ախճիգյը նան չոբանը նստում ըն չոբանեն ծիյին վրա, քյընա՛մ չոբանեն կնգանը կոշտը:

Տոն կյալավ չոբանը ծաղեգյը տանում ա թաքավերեն տամ:

Թաքավերը տըսնալավ չոբանեն պիրած ծաղեգյը, հըվատում չի, կըզնըվելավ ասում ա.- Ռադ իլ, աշկես ըրևաս վեչ, իմ ասած ծըղըըգյներեն հետի քյընացողը ետ չի տա՛ռնում:

Չոբանն ասում ա. - Վեչ թա՛ մինա՛կ ծաղեգյն ըմ պիրա՛լ, էտ ծաղեգյը վարող ըխճըկանն էլ ըմ պիրալ:

Թաքավերը ծաղեգյը վարող ըխճըկանը տըսնալավ սիրահարվում ա ընրա յըրա, օզում ա չոբանեն մին էլ դարկե հենց տըեղ, վըրդըղա ետ չըն կյամ: Մըհենգյ էլ թաքավերը չոբանեն հրամայում ա, վար քյընա՛ մին խոր քո՛լա հըրեղան ծիյին կաթնը պիրի: Չոբանը մըհենգյ էլ հունց վար առաչ, բեյքեփ կյամ ա տոն, կնգանն ասում թաքավերեն խոսկերքը:

Կընեգյն ասում ա. - Չոբան, բեքյեփանա միլ, քյընա՛ թաքավերեն կոշտը, ասե. «Թաքավերն ապրած կենա, ինձ քառասուն վեղրա արաղ տո, քառասուն փութ պա՛մբա՛կ, քառասուն փա՛հլա՛, մին քառասուն էլ ծի»:

Չոբանը թաքավերին անա լոխ յոր ա օնում, հըղե ընո՛ւմ:

Շատ ա քյընամ, թա՛ խըեգյ ա քյընա՛մ, շատ նան խըեգյը աստուծ կգյիդա՛, հըսնում ա մին խոր քո՛լում էն քյա՛հրիզին, վըրդըղան հըրեղան ծին ճո՛ւր ա խմում: Չոբանը փահլըցը հրաման ա տամ, վար փոս կտրեն, քառասուն վեղրա՛ արաղ ածեն մեչը, ո՛ւրա՛նք էլ ետ քյընան ո՛ւրա՛նց տները: Ետնան ինքյը կյոըղ ա կենում մոտի տեղ: Չոբանը տհենց կյոըղը կացած, պատառ կենում ա, տեսնում ա ծին եկու, արաղը խմից, հարփից, վեր ընգավ:

Չոբանը ջլա̀վը քըցում ա ծիյին բողազը, ինքյը յրան նստում, ետ տա̀ռնո̀ւմ տոն, տանում ա ո̀ւրա̀նց կյումումը կապում:

Էն մին քըշըրհանա թաքավերեն հետի կաթն ա տանում: Թաքավերը մըհենգյ էլ տըսնալավ չոբանեն ջըլիս կըզնըվում ա, ասում ա.- էտ կաթնը իմ ասած ծիյին կաթնան չի:

Չոբանն ասում ա. -Վեշ թա̀ մինա̀կ կաթնն ըմ պիրալ, կաթնը տվող հըրեղան ծին էլ ըմ պիրալ:

Թաքավերը մըհենգյ էլ մթկումը ասում ա. -«Էրկու դա̀րդս իրեքը տա̀ռա̀վ»: Օզըմ ա չոբանեն ջիլիս փիս տեղ դարկե:

Էն մին օրը դե յա տամ չոբանեն, ասում. - Անգուճ ըրա, չոբան,- ո̀ւրա̀ն սանդողնեն նշանց ա տամ թաքավերը ասըմ ա.- տեսնո՞ւմ ըս, էս սանդողնեն, իմ թընգյակին պա̀ներս հենա ըտեղ, ամմա տահանց պընելիքյնեն մնացալ ա մորըս քըշտեն, մարըս էլ մըեռալ ա, քյընա առանց մին խոսկի էն մին ըշխարքան պընելիքյնեն պեր:

Չոբանը մըհենգյ էլ ա կյամ տոն, բեքյեփ նըստում: Կընանեքյը հըրցընում ըն, թա հի՞նչ ա պըտահալ:

Չոբանը նահանց ասում ա թաքավերեն ըռաջարկը:

Կնանեքյը ումեղ ըն տամ չոբանեն ասում. - Բեքյեփանա միլ, չոբան, քյընա թաքավերեն կոշտը ասե. «Թաքավերն ապրած կենա, ինձ քառասուն սաժեն փա̀ն, մընգյ էլ քառասուն փութ նոթ տո, վար քյընա̀մ»:

Չոբանը թաքավերան լոխ յոր ա օնըմ, փա̀ղը տարսում ա փընջըրին ըռաչին, քառասուն փութ նոթը շաղ տամ, ինքյը չոբանը յրան վեննը կենում, վար էրվի, մեռնե, վար քյընա էն մին աշխարքը: Հիբը վեր տվերան փա̀ղը նի յըն կըցընում, էրկու կնանեքյը չոբանեն մազնիսավ ո̀ւրա̀նց փա̀նջա̀րա̀վը քաշում ըն տոն, տըհենց էլ մին քանի վախտ կյողըլը կըցրած պահում ըն:

Բազի վախտ էլ կնանեքյը քյընա̀մ ըն թաքավերին կոշտը ասում. - Ա՜խ, խե՞ չոբանը եկու վեչ:

Թաքավերն ուրխանում ա, վար չոբանը կա վեչ, ամմա կնանոցը դինջըցընելի հետի ասում ա. - Վեչինչ, հեսա կըկյա:

Տհենց էլ էրգյան վախտ չոբանը կյողըլ կացած ա մնամ:Մին քըշըրհան ծաղեգյ վարող ախճիգյն ասում ա. - Չոբան, ջուբումս տհենց մին պընելիքյ կա, տար սանդողը պա̀ց ըրա, շո̀րերը հանե, տո ո̀ւրա̀ն:

Ախճիգյը մին էլ ասում ա.- Պա՛ն ա, թա թաքավերր հըրցընե, թա իմ հա՛ր, իմ մար հո՞ւնց ըն ապրում, կասես, վար քյա՛սիբ ըն ապրում, քյըզանա էլ շատ ըն տիժրոթուն անում, ասում ըն, վար մեր վերթին էնքան հըրըստոթուն օնե, ամմա մունք սհենց քյա՛սիբ ընք ապրում:

Չոբանը քյընա՛մ ա թաքավերեն կոշտը, պընա՛լիքյը տամ ա ընրան:

Թաքավերը նրանա հըրցընում ա ո՛ւրա՛ն հորը, մորը անա: Չոբանը կընգանը ասածը, հա՛լա՛ մին պատառ էլ յրան տընիլա՛վ թաքավերեն նաղլ ա անում: Թաքավերը տա սկընալավ, օզում ա ինքյն էլ քյընա՛ ո՛ւրա՛ն ծնողներեն տեսնա:

Թաքավերը հրամմայում ա քառասուն սաժեն փա՛ղ տա՛րսին ո՛ւրո՛ւր յրա, մընգյ էլ քառասուն փութ նոթ յրան շաղ տան: Թաքավերեն ծառանեն տըհենց էլ անում ըն: Թաքավերը յրան վըենն ա կենում, հրամմայում, վար նի կըցընին: Հիբը վար նի յըն կըցընում, թաքավերը փա՛ղեն նհետ էրվում ա, մոխեր տա՛ռնում:

Տըրանա ետը թաքավերեն տոնը, տեղը մնամ ա չոբանին: Չոբանն ո՛ւրա՛ն էրկու կընգանը նհետ ըտեղ ապրում ա:

Մեհետ էլ առաչին կնեգյը հըրցընում ա չոբանեն անա. - Տու հո՞ւնց եկար ինձ քըթա՛ր:

Չոբանը ո՛ւրա՛ն կըլխավն ընցածը լոխ նաղլ ա անըմ:

Կնեգյն ասում ա. - Դե վար տըհենց ա, քյընա՛ էն մարթն նան կնեգյն պեր: Մարթը մըզ հետի հա՛ր տա՛ռնա՛, կնեգյը մար:

Չոբանը քյընա՛մ ա նահանց պիրում թաքավերեն պալատը: Տհենց էլ նահանք հաշտ ապրում ըն ընդեղ: Ժողովուրթեն լավ պահում, ըզըդոթուն ըն տամ լոխճին:

## 60.ԴԵՎԸ

Ընո՞ւմ ա, չընո՞ւմ մին մարթ, մին կընեգյ: Ընդրանց ընո՞ւմ ա իրեք ախճիգյ:

Էդ ըխճըկերքը օզում ըն քյինա՞ն մոշ քաղեն: Կուճուր քերը շատ ա լաց ընում: Յոր ըն օնում ընդրան մին վըեղե պուլիգյ տամ, տական ծակ:

Իրեքավ քյընա՞մ ըն մոշ քըղելի: Ո՜ւրա՞նց ըմըննեն լըցած տոն ըն կյամ, ամմա կուճուր քըվերը ըմանեն մեչին մոշ չի ընո՞ւմ: Սա՞բա՞բը վեր քաղած մոշը ծակավը վեր ար տեռալ:

Քըվերքը վար տոն ըն իըսնում, մթենը վեր ար կոխում, ամմա կուճուր քերը մնացալ ար հա՞նդումը: Լա՞ց ար ընում:

Ընդրա առաչը մին դև ա տո՞ւս կյամ:

Դևն ասըմ ա.-Քյըեզ ուտըլական ըմ:

Ախճիգյը տանում ա տինում  փըշերեն տակեն, ինքյը քյընա՞մ ա կրակ պիրի, նի կըցնե փըշերը, ըխճըկանը խըրավե, ետնան օտե:

Նա վար քյինա՞մ ա, ախճիգյը լա՞ց ա ընում, ասըմ. - Ա՛յ ասթխեր, ա՛յ լո՞ւսնընգյա, ա՛յ քո՞լեր, ա՛յ սարեր, ինձ էտ դևան ազադ ըրեքյ, ըզըդեցեքյ:

Չելը դևեն կյալը ախճիգյը տո՞ւս ա կյամ, մին թա՞իրա՞վ էտ փըշերեն տական, փախչում շենը: Դևը կյամ ա, վար ըխճըկանը օտե, տեսնում ա ախճիգյը կա վեչ:

Շատ ա կըզնվում, մթկումն ասում ա. «Յա ընդրան պիտի քըթենամ օտեմ, յա օրըս օր չի ընելու, վըրդեղան վերե յա, պիտի քըթենամ»:

Ուրերան մին օր էտ ըխճըկանը տոնը մին դոնադ ա կյամ: Կուճուր ախճիգյը ընրան դա՞ստի ճնանչում ա: Դևն ա ընո՞ւմ:

Դևը էտ օրը օզում ա դոնադ մընա: Կուճուր ախճիգյը մորն ասում ա. - Ա՛ մար, էտ մարթին դոնադ մե՛լ ընթունել:

Հա՞րը լըսում ա, յրան կըզնըվում, ասում. - Կանուխ պիտիր մըծացած, վար մըեր տանը դունուղներեն ետ տաս:

Ախճիգյը վեշ մինին ասում չի, թա նա հու վա՛:

Վար մըթնում ա, լոխ հաց ըն օտում, քո՞ն ընո՞ւմ, էտ դոնադեն քըշտեն աղու տեղ ա ընո՞ւմ, էտ տեղավը լոխճին քընավ ա անում, թողում մինա՞կ կուճուր ըխճըկանը:

Էտ դևը տո՞ւս ա կյամ տո՞ռը, ուջաղեն յրա տինո՞ւմ մին մեծ ղազան, մին խիլլա՞ եղ ա նի ածում մեչը, ղազանեն տակը նի կըցընում:

Վար եղը սկսում ա ճըլճըլալը, եր ա կըցընում ըխճըկանը ասում. - Շո՛րերըտ հանե, վար ղըզանումը քյըեզ պիդի տըպակեմ:

Ախճիգյը ըղաչանք-պըղատանք ա անում դնեն, ասում. - Դե ՚ ինձ ուտլականը-ուտլական ըս, լի՛ թող քյընա՛մ մին կո՛լա ճո՛ւր պիրիմ, մըեր ախպո՛րը մին էլ տըեսնամ, ետնան կեր:

Դնը «հա» յա ասում:

Էտ ախճիգյը ճըրին յրա սո՛քյ ա ասում, ետնան էն դա՛շա՛նգյ Ղարա-բաղեն սըրերեն յիշիլավ ասում ա. - Ա՜յ սարեր, ա՜յ կընընչ-կյիրմիրին տվող հա՛նդեր, քո՛լեր, ա՜յ նախշուն ասթխեր, ինձ ըզըդեցեքյ դնին անա:

Տըյերան մին յըղոնիգյ մին թեփուռ ա վեր քըցում, ասում. - Ա՜յ աղճիգյ, ա՜յ սըվաբախտ, էս թեփուռը եր կալ, տար քու մոր, քու հոր աշկերը քըսի, վար զո՛ւրթնա՛նա՛ն, քյըեզ ըզադեն:

Ախճիգյը կո՛լան նան յըղոնիգյեն թեփուռը յոր ա օնում, կյամ տոն, ամմա թեփուռը կյեղում ա:

Էտ դնն ասում ա. - Բեջիթ ըրա, կը լո՛ւսա՛նա՛:

Էտ աղճիգյն ասում ա. - Գյուղո՛ւմ ըմ, վար ինձ ուտլական ըս, թող քյընա՛մ ծընողներես պաչիմ, ետնան կեր:

Դնն ասում ա. - Քյինա՛: Մինա՛կ կանոխ եք:

Ախճիգյը մորը, հորը իրեսան պաչում ա, թեփուռը նահանց աշկերն ա քըսո՛ւմ: Հա՛րը, մարը բիրդա՛ն աշկերնին պեց ըն անում:

Ախճիգյն ասում ա. - Եր կացաք, տեսաք չոլումը հի՜նչ ա կըդարվում:

Նահանք եր ըն կենում, տեսնում մեծ ղազանը կրակեն տըրա՛ծ, եղը մեչին ճըլթճըլթում ա:

Հա՛րը էտ դնին նհետ կռև ա անում, ընրա կլո՛խը կտրում, քցում ղըզղանեն մեչը, ետնան ասում. - Տու ուզելիս ըս ըլա՛լ օրիշին տհենց անիս, տու դըդվեցեր:

Չարը՝ ընդեղ, պարին՝ ըստեղ:

## 61.ՃՌՌԻՇԵՆ ՏՂԱՆ

Մըհետե էրկու ախպեր թաքավեր ըն ըլա̈լ: Նահանք ճոկ-ճոկ էրգյիր-ներում ըն ըլա̈լ թաքավըրոթուն ընելիս:

Կուճուր ախպերը լոխան հարուստ ա ըլա̈լ: Էտ էրկուսեն էլ խոխա չի ըլա̈լ: Ընցնում ա մին քանե տարե, շատ թա̈ խըեգյ, էն օրն էլ եկու, հիբը նահանց ըրկուքանեն կնանեքյն էլ խոխա պիրան: Էտ ուրերեն էրկու ախպերքյը մըեծ ուրխոթուն ըն սարքում ո̈ւրա̈նց պըըըկամներեն նան ժողովուրթեն ըռաչեն:

Խոխեքյը մըծանում ըն, տա̈ռնում իրեք տըըեկան: Մըեծ ախպորը՝ ախճիգյ ար, կուճուր ինը՝ տղա:

Ուրերան մին լա̈վ օր, կուճուր ախպերը նստած ո̈ւրա̈ն կահեն յրա քնենքյ ա անում, թա̈ խե՞ բիդի ո̈ւրա̈նց թաքավերոթունը ո̈ւրո̈ւշո̈ւ ճանգյ ընգնե, լա̈վ կինի, վեր ո̈ւրա̈ն ախպորը նհետ խնամի տա̈ռնա, էրկու թաքավերոթունն էլ միանան:

Էտ մըթկավը դե յա տամ մըեծ ախպորը, վար մըեծ ախպերը կյա: Մըեծ ախպերը կյամ ա: Նահանք ո̈ւրո̈ւր նհետ մըսլըհաթ ըն անում, ետնան կյամ ըն էն մըթկեն, վար մըեծ ախպորը ախճիգյը կուճուր ախպերը յոր օնե, ո̈ւրա̈ն քըշտեն պահե, ո̈ւրա̈ն տղեն նհետ սըվըրցընե, հուսումնարան քըցե, ո̈ւրա̈ն աշկեն ըռաչեն ինի՛: Մըեծ ախպերը էտ պա̈նը գյիդա̈լա̈վ, էտ խա̈բա̈րը սկընալավ ռազի յա ընո̈ւմ:

Ընդետանը մըեծ ախպերը ո̈ւրա̈ն դոշունավը ո̈ւրա̈ն ըխճըկանը դարկում ա կուճուր ախպորը կոշտը էն պըյմանավյը, վար խոխեքյը տասնըհենգյ տըըեկանը թըմամած փսակեն:

Խոխերքյը օր կանց օր մըծանում ըն: Նահանք ո̈ւրո̈ւր անա շատ սո̈րո̈ւն ըն ընո̈ւմ, ո̈ւրո̈ւր էլ շատ ըն սիրում, գյվա̈քի գյուղում չըն, վար քուր ու ախպեր չըն, մին մորա ծընված:

Նահանք շկո̈լ ըն քյընա̈մ ո̈ւրո̈ւր նհետ, երք ըսեւլավ, սէրավ՝ հունցը վար քեր-ախպեր:

Նահանք արտեն տասնըհենգյ տըըեկան հասակն ըն հըսալ:

Մին օր թաքավերը ո̈ւրա̈ն ըմըրաթեն վըեսկե բըլկոնան, եշում ա, տեսնում նահանք ո̈ւրո̈ւր նըհետ ո̈ւրա̈նց բաղըմը շոռ կյալիս, ամմա հունցու քեր-ախպեր, մին օրիշ պա̈ն տեսնում չի:

Մին օր էլ թաքավէրը դէ յա տամ էրկուսին էլ ո՛ւրա՛ն կոշտը, ասում, -Վէ՛րթիքյ, ինձ անգուճ կալէքյ, մըհէկանց տենը գյիդացէքյ վար տուք վէչ թա՛ քէր-ախպէր ըք, այլ դորփոր խոխէքյ ըք։ Ետնան տո՛ւս ա օնըմ թոխտը, վար մէչին կյրա՛ծ ա, թա՛ վար տասնըհէնգյ տըրեկան տա՛ռնա՛ն, պիդի փըսակվէն։ Պիդի հըրսանէքյ անէն։

- Ամմա յըէս օզում ըմ ծըէզ մին տարավ ղարկէմ մըէծ ախպորըս կոշտը, վէր համ սըվէրիքյ էլիա, համ էլ մըէծ ախպէրս ծէր կարոտն առնէ։

Մըէծ ախպէրը տըսնալավ, վար ո՛ւրա՛նց խոխէքյը մըծացալ ըն, վէզիրնէ յա ղարկում կուճուր ախպորը կոշտը, ասում, վար նահանց փըսրկվէլի վախտըն ա, թող կյա փըսակէն։

Վէզիրնէն խա՛բա՛րը տանըմ ըն կուճուր ախպորը։ Կուճուր ախպէրը մըէծ հըրըստոթունավ, վըէսկէ փէշքէշնէրավ հըղէ յա ընո՛ւմ դըբա մըէծ ախպորը թաքավէրոթունը։ Իրէք ամէս հղէ քյընա՛լա՛նը էտը հըսնում ա ախպորը ըմարաթը։

Ամմա ըխճըկանը հորը վէզիրնէն օզում չըն, վար թաքավէրը ո՛ւրա՛ն ախճիգյը տա ախպորը տըղէն։ Ամմա գյուղում ըն, վար հա՛լա՛ խոխէքյը իրէք տըրեկան ըն իլա՛լ, վար ո՛ւրա՛նց թաքավէրը խոսկ ա տըվալ, տրված խոսկն էլ էտ օտիլը ա՛մա՛լ չի կյա՛լ։

Ըտրա հէտէ էլ սուս ըն անում։

Կուճուր ախպորը էկած օրն էլ ըտահանց փըսակում ըն։

Քառասուն օր, քառասուն քըշէր հըսանէքյ ըն անում։ Քառասուն օրանը էտը ըխճըկանը յոր ըն օնում հըղէ ընո՛ւմ բըղա՛ տղեն հորը թաքավէրո-թունը։ Ըտեղ էլ ըն քառասուն օր, քառասուն քշէր հըրսանէքյ անում։

Մին ո՛ւրո՛ւզյո՛ւն ախճիգյը տղեն դէ յա տամ, վար մըսլըհաթ անէ ընրա նիհէտ։ Տղան նի յա մըննում ընրա օթախը, ծէռքան փըռնում, նստած զըո՛ւց հն անում։ Բո՛ւրդա՛ն էրգյինքյը ըրոտաց, կէծակը փըլըստրատէն տըվավ, էտ վախտը մին պա՛ն էտ տըղեն թխեց։

Տըղան ախ ընէլավ տափէն վէր ընգյավ, ասեց.- Ինձ մըննատ քըցիս վէչ, ա՛մո՛ւ ախճիգյ։

Խա՛բա՛րը հըսավ թաքավէրէն, վար տըղան մեռալ ա։ Թաքավէրը քար ար կտրալ, սկի կարըմ չար խոսէ։ Մըռնելու օրանը էտը օթ օր ընցավ, ամմա ախճիգյը թողում չար թաղէն։ Նա հրամմայեց վար վըէսկէ դութի շինին, տղեն հէտէ։ Թաքավէրը վըէսկէ դութի շինիլ տըվավ, օզում ին, թա՛ թաղէն, ամմա ախճիգյը թողում չար։

Մըռնելու օրանը ետը ընցավ մին ամիս։ Ախճիգյը հրամմայեց, վար մին ճոկ տեղ վըեսկե տոն շինին դութուն հետե։

Թաքավերը տոնը շինիլ տըվավ։ Ախճիգյը տղեն մեյիդին նհետ ապրում ար էտ տանը, օր կանց օր մաշվում։ Մին օր էլ մեյիդին չորս ա̀նգյո̀ւնը վըեսկե ճըրաքյնե յար վառալ, շարալ, ինքյն էլ կոխկեն նստալ։ Մընգյ էլ երգյինքյը ըրոտաց, տանը տափը ճաքեց, մին սըեվ ձեռք եր կալավ դութեն, քյընա̀ց։ Մընգյ էլ երգինքյը դինջացավ։

Էտ ախճիգյը զըրմանալան գյուղում չար, թա̀ հի՞նչ անե. -Ղութեն տանան վը՞րտեղ տարան, հի՞նչ քաշկու պա̀ն ա սա։

Քըղաքանը տո̀ւս իրեք հըղե յա պըժանվում ո̀ւրո̀ւր անա։ Ախճիգյը ո̀ւրա̀ն ամո̀ւն՝ թաքավերեն խնթրում ա, վար էտ պըժա̀ննման տեղը իրեք վըեսկե պալատ սարքե։ Ամեն մին պըլատեն հետե հազար վըեսկե աման ո̀ւրա̀ն քըթո̀ւներավը շինել տա, վար ո̀ւրա̀ն մարթեն բաղարաքյըն անե։ Ետնան էլ ասեց, վար էտ պըլատումը հաց օտողնեն պիտի ո̀ւրա̀նց կերած ըմըննեն նան քըթո̀ւնեն յոր օնեն ո̀ւրա̀նց նհետ։

Թաքավերը հարթնեն կարքաղրոթունը լըսելավ ո̀ւրա̀ն երգյիրին սաղ հըրըստոթունավը պըղրաստեց պալատը, ըմըննեն, լոխ տըվավ ըխճըկանը։

Ախճիգյը ըշխադողներեն, մընգյ էլ խորագյ սըրքողներեն կարքաղրեց, վար խորագյը պըլըտներումը ճոկ-ճոկ տեսակ ընին։

Տըհենց էլ սկսեց ժողովուրթեն պաղվիլը։

Հըղըցավը ընցնողներեն ուռունց հաց տալու, պաց չար թողում, պաղ-վում ար, թա̀ քյասիբեն, թա̀ մեղավերեն, թա̀ անմեղեն։

Էտ թաքավերոթունան հեռե մին շենում էրկու քյա̀սիբ ախպեր ըն ընո̀ւմ։ Նահանց մինը քոռ ար, մինը՝ քառ։ Էրկուսն էլ նախրչի յըն ընո̀ւմ։ Նահանց կործը էն ար, վար ամեն քըշերհանա քոռ ախպերը տանան տո̀ւս ար կյամ էնու-էնան էրկու-իրեք կապեգյ օզում։

Էն մին ախպերն էլ կովերըն ար պահում։ Ըն դրանց մին կտոր հաց ին տամ, օտում ին։

Մին քըշըրհանա քոռը էլլա քյընա̀մ ա կըպըզգյնե օզե։ Մուտանըմ ա մին առուտուրականի, դորմոթուն օզում։

Առուտուրականը կըզնըված ասում ա. - Ա՛յ դամմազնի, քըըըքանդ ինիքյ տու՛ք, մըեզ էլ ըք ծըեզ նման ըրա՛լ, ծըեր օրը քըցա̀՛լ։ Օրիշնեն

քյընամ ըն օտում, խըմում, վըեսկե աման նան քըթ̀ըլը յոր օնըմ, կյամ, տուք ըշխարքաս բեխ̀ըք̀ր, ըստ̀ուր -ընդ̀ուր անա կապեգյ ըք օգում:

Քոռը էտ խ̀ըք̀րը ըսկընալավ ետ ա տ̀ըռնում տոն: Ո̀ւր̀ուգյ̀ունը ախ-պորը կյ̀ըլ̀ընը ետը նաղլ ա անում առուտուրականեն ասածը: Նահանք իըվաքած հացեն կըտորնեն յոր ըն օնում իղե ընգյն̀ում բըղ̀ն էն պալատը, վըրդեղ ճ̀ըշ, մընգյ էլ վըեսկե յըն պըժ̀նում: Հըղըցումը էրկուսն էլ նըղանում ըն, մին ամես ար իըղե յին քյըն̀ըմ:

Քոռը նախրչի ախպորն ասում ա.- Եք էս քըշեր ըստեղ մընանք, էքյուծ քըշըրիանա էլհ̀ն կըքյըն̀նք, շատ ըմ նըղացալ:

Էրկուսն էլ էդ քըշեր մընամ ըն մին վիրի հ̀նդ̀ում : Ընդրանք ̀ուր̀ուր նիետ խոսում ին:

Նախրչի ախպերը ասում ա, - Մունք իըղեն գյուղում չընք, հո՞ւնց ընք քըթենում վըեսկե պալատը, համ էլ, մըն էլ ասե տեսնամ, էն առուտու-րականը հո՞ւնց ա ասալ, ի՞նչ ա ասալ.

- Առուտուրականն ասեց, վար պալատնեն վըեսկե յըն, նիանցա պե-ց̀ուր պըլըտնե վեչ մին տեղ կա վեչ: Նահանք քըշեր-ցիրեկ ճըր̀քի նման էրվում ըն, մըեզ լ̀ուս կըտան:

Ըտրանա ետը քոռը նախըրչի ախպորն ասեց,- Ծըրավալ ըմ, եր կաց ինձ հետե ճ̀ուր քըթեր խմենքյ, իըղե ըննինքյ:

Նախրչի ախպերը ըստեղ-ընդեղ շոռ ա կյամ, ճ̀ուր քըթ̀նում:

Տեսնում ա հեռե իըղըցին յրա էրկու պեց̀ուր ծառնը կա, ասում ա. - Ա՛յ ախպեր, ճըրեցե վե՛չ, ամմա իըեռե իըղըցեն յըրա էրկու ծառն ա ըրնում: Ընդեղ ախպ̀ուր կինի, քյընանք ընդեղան խմե:

Նահանք իըսան ընդեղ, վըրդեղ մին կյեղեցիկ բաղ կար, բաղեն մաչին, չորս պ̀ուլլ̀որքը վըեսկե, մին պարզ ախպ̀ուր ար քըլքըլում, ասես լի̀ն պոյանդ ինի: Վըեսկե բ̀ուլբ̀ուլ, ծըղըգյնե՛... էտ բաղը քոռ ախպորը շատ ա տուր կյամ, սըք̀րը վեր օթը շատ լ̀վ ար: Քոռ ախպերը խընթրից ըտեղ նստին, մին պատառ դինջ̀ն̀ն, քըշերը ըտեղ մնան, քըշըրիանը էլլա իըղե կընին:

Նախրչի ախպերը տեսնում ա էտ բաղը, վըեսկե ախպ̀ուրը, ասում. - Ա՛յ ախպեր, էս բաղը անդար չի ընիլ, տարը կկյա մըեզ մին պ̀ն կանե, եք մեր իըղեն շարունակենքյ:

Քոռ ախպերը շատ պընդեց ուրան ասածը: Մնացին: Ըխպըրան տենը էրկու պեցուր ծառնը կար, տակռեն փոչ: Նահանք նի մըտան էտ փոչ տեղը, քոն ըլան: Քըշըրհանը արևը հալա նոր ար շոխկը քըցալ էն հեռու սըրերեն, բուլբուլը հալա նոր ար սկսալ երք ասելը, բուրդան օթին մեչին մին հրեշ ըրևաց: Ընրա մեշկեն նըստած ին իրեք յըղոնեգյ: Ցըղոնեգյնեն ըխպըրին քըշտեն վեր եկեն: Ըտրանա եւոը երգյինքյը նորու հընդարդվեց: Հըրեշը պըցրացավ, յալեն յըրա պարանց ընգյավ, ըրնեն տակեն թըքանա: Ցըղոնեգյնեն ըխպըրին քըշտեն ուրանց թեփուռնեն հընեցին, տառան նախշուտ ըխճըկերքյ, հերթավ նի մտան ըխպըրին մեչը լըղացան:

Լըղանալանը եւոը էտ ըխճըկերքը հրամմայեցին էն հըրեշին, վար ծըռներեն յրա վըեսկե դութին վեր օնե, տինի տափեն: Հըրեշը տեղան վեր թռչեց, սև ծըեռքը մեկնեց, ծառնեն կլխան դութին եր կալավ, տիրավ ըխճըկորանցը քըշտեն, ինքյը էլլա քյընաց հեռե տեղ պարանց ընգյավ: Ըխճըկերքը հերթավ ամեգյը մին քար եր կալան: Ըռաչի ախճիգչը մին էրգյան պան կարթից, առանց թըխտե, եւոնան քարավ դութուն թըխեց: Ղութուն ղափաղը պացվեց: Էն մին ախճիգչն էլհա իտի կըրթելանը եւոը սընդողեն թըխեց:

Մեյիդը սըղացավ: Իրեքինջի ախճիգյն էլհա իտի առանց թըխտե կարթից, քարավ թըխեց: Պարանց ընգյած մեյիդը վեր կացավ, ըխճըկորցը նհետ սկսից խոսելը:

Ըխճըկերքյը ընդրան ըսեցեն. - Ա՛յ տղա, դաշանգյ տղա, խե՞ մըեր ծեռքեն տանջվում ըս, մըզանա նախշուն ախճիգյ չի կա՞, միննը-մինիս օգե, ամուտ ըխճըկանան ծըեռք քաշե, մուևք քյըեզ կըզաղենքյ:

Տղան նահանց ջողաբ տըվավ, թա. - Ցըես ընդրան վեշ մին վախտ մըննաս քըցիլ չըմ, ծըզ նմաններն ինձ հարկավեր չըն:

Էտ ջողաբը տալան եւոը, ըխճըկերքյը կըզնվում ըն, էլլա հերթավ կարթում ըն, քարավ սընդողեն թըխում, եւոնան էն հըրեշին հրամմայում, վար դութին պըցըրցնե ծառնը: Հըրեշը մընգյէլ ուրան սըև ծեռքավը դութին եր կալավ, տըրավ ծառնեն յըրա: Ըխճըկերքյը ուրանց թեփուռնեն կյեցեն, տառան յըղոնեգյնե, նըստեցեն հըրեշեն մեշկեն: Մընգյէլ երգյինքյը ըրոտաց, մթնեց, հըրեշը ըխճըկորանցը եր կալավ, երգյինքյը թռչից:

Քոռը նան նախըրչի ախպերը, առանց մին խոսկ ըսելու հղե ընգյան: Շատ քյընացեն, թա խըրեգյ, քըշերվա կեսեն նախըրչի ախպերը հըռուցա-

նա տեսավ մին ըրեքյնակու նըման պ̈ան ա ըրևում, ըտրա տակեն էլ սաղ քաղաքը ըրևում ա:

Նախըրչին քոռեն ասեց.-Մուտացալ ընք, պըլըտնեն ըրևում ըն:

Շատ քյընացեն թա խրեգյ, հըսան էն պըլըտներեն, վըրդեղ ճ̈աշ, մընգյէլ վըեսկե յըն պըժ̈անում:

Թաքավէր են ախճիգյը տահանց տեսավ, գյիդաց վար էրգյան հըղե յըն ընգալ, կարող ա պ̈ան տեսած ընին: Ղըրավաշներեն հրամմայից տահանց խորագյ տան: Ուտելանը ետը ախճիգյը նահանց տարավ մին ճոկ տոն, քըշերը մնալի հետե: Քըշերը ըտեղ մընացին: Քըշըրհանա թաքավերեն ախճիգյը քոռեն մընգյ էլ նախրչուն դե տվավ ӫւր̈ան կոշտը, խնթրեց նահանց, վար ӫւր̈անց օմրումը տեսած պ̈աները նաղլ անեն:

Նախըրչի ախպերն ասեց, - Թաքուհին ապրած կենա, մունք հի՞նչ պ̈ան ընք տեսալ շենըմը, վեր նաղլ անենքյ, իմ կործս կըվերը պահելն ա ըլ̈ալ, քոռ ախպերս էլ էս ու էն առուտուրականան փող ա հըվաքալ:

Էտ վախտը քոռ ախպերը կուփի յա տամ նախըրչի ախպորը, թաքուն փըսփըսում, թա, «Պա խե՛ հըղըցեն տեսածտ նաղլը չըս անում»: Մեհետ, էրկու հետ վեր իտի յա անում, ախըր-վերջը թաքուհին սկանում ա ըտրանց փըսփըսոցը, խընթրում, վար մին պ̈ան պատմեն, վար քըշերը անքոնութուն օնե, լ̈ավ անց կենա:

Սըհենց էլ նախըրչի ախպերը սկսեց նաղլ անելը թաքուհուն, լոխ, հինչ վար հըղըցումը տըեսալ ըն: Թաքուհին մեծ պատվավ էտ էրկու ախպորցը հըղըցու տիր̈ավ, շատ վըեսկե տվ̈ավ, մըն էլ խընթրից, վար են բաղը նահանք նշանց տան, վըրդեղ նահանք վըեսկե ղութին տեսալ ըն:

Քըշըրհանը թաքուհին նան էրկու ախպերը հղե ընգյան բըղա բաղը:

Շատ քյն̈ացեն, թ̈ա խրեգյ, հըսեն էտ բաղեն, վըրդեղ քոռ նան նախըրչի ախպերը ըլ̈ալ ըն:

Հստեղ էլ ա թաքուհին նահանց հըղըցու տընում բըղա ӫւր̈անց էրգյիրը, ինքյը մնամ բաղումը: Վար մթնեց, թաքուհին նի մըտավ ծառնեն փըչակը, քըշերը միչն լӫւս ընդեղ մնաց:

Քըշըրհանը, հ̈ալ̈ա արևը նոր ար տӫւս կյամ, մին էլ տըեսավ էրգյինքյը մթնեց, ըրոտաց, էրգյիրը թոխպավ պատեց: Բӫւրդ̈ան թաքուհին տըեսավ, վար մին հըրեշ էրգյինքան թըռչից ըխպըրեն կոշտը, ընրա յրան իրեք յըղոնեգյնե նստած: Ցըղոնեգյնեն մնացին ըխպըրեն քըշտեն, հըրեշն էլ

քյընա̈ց յալեն յրա պարանց ընզավ:Յըղոնեգյնեն թեփուռնեն հընեցեն, տա̈ռա̈ն նախշուն ըխճըկերքյ հերթավ լըղացեն ըխպըրին ճըրո̈ւմը, ետնան հըրեշին հրամմայեցին, վար դութին ծառնան յոր օնե: Հըրեշը տեղան եր թըռչից, սըև ծըեռքը մեկնեց, ծառնան դութին եր կալավ, տըրա̈վ ըխճըկըրանցը քըշտին, ինքյը էլլա մըխրե հըռացավ: Էտ ըխճըկերքյը հերթավ հինչ վար մին պա̈ն կըրթեցին, հերթավ դութուն քարավ թըխեցին, դութուն մաչան մին մարթ եր կացավ:

Էտ ըխճըկերքյը էտ տըղեն տնջիլա̈վ հըրցըրեն. - Ա՛ դա̈շա̈նգյ տղա, խե յըս տհենց տանջվում մըեր ձեռքեն, էնա տու էլ ըս պըռըվանում, օրերտ սըև ըն ընցնում, եք, մըզանա նախշուտ էլ ախճիգյ չի ըննա̈կան, մինը եր կալ, քու ա̈մո̈ւ ըխճըկանան ծըեռքյ քաշի:

Տղան ռազի չի կացավ: Էտ ըխճըկերքյը կըզնվեցեն, էլլա հերթավ դութուն թըխեցեն, էն հըրեշեն կընչեցեն վար դութին յոր օնե, տինի ո̈ւրա̈ն տըեղը: Հըրեշը դութին եր կալավ, ո̈ւրա̈ն սըև ծեռքավը, տարավ, տիրավ ծառնեն յըրա: Ըխճըկերքյը մընգյէլ ո̈ւրա̈նց թեփուռնեն կյեցեն, յըղոնեգյնե տա̈ռա̈ն, նըստեցեն հըրեշեն յրան, երգյինքյը թըռչեցեն:

Էտ լոխ թաքուհին տեսավ, ետնան կուճուր-կուճուր պըցըրացավ, դութին ծառնան մին թա̈հրա̈վ վեր կա̈լա̈վ, տըրավ ըխպըրեն քըշտեն, հինչ վար էն յըղոնեգյնին ըրալ ին, ինքյըն էլ ըրավ, Հինչ վար կարթալ ին, ինքյը կարթից, քարավ դութուն թըխեց: Էտ վախտը դութին պացվեց, ա̈մո̈ւն տղան դութան եր կացավ: Նահանք ո̈ւրո̈ւր խտտեցեն: Նահանց հետե շատ մեծ ուրխութուն ար:

Ախճիգյն ասեց, վար. - էք փախճինքյ:

Ամմա ա̈մո̈ւն տղան ռազի չըլա̈վ, հըրեշեն անա շատ ար վախում: Մըն էլ գյուղում ար, վար վըրդեղ էլ քյինի, հըրեշը ո̈ւրա̈ն քըթընըննա̈կան ա, տանջի:

Տըսներկու սըհաթ ո̈ւրո̈ւր քըշտե կացան քըշերավ: Տղան ըխճըկանան խընթրից, վար ո̈ւրա̈ն էլլա կախարթե, քանի հա̈լա̈ հըրեշը եկալ չի:

Ախճիգյը կյիժու նման տղեն կախարթից, դութին եր կալավ, տըրավ ծառնեն յրա, ծառնեն փըչակումը նստեց:

Քըշըրհանա էլլա երգյինքը դըղըրդաց, ըրոտաց, մըթնեց, երգյիրը թոխպավ պատեց:

Հըրէշն ըռա՜ն կախարթական յըղոնեգյներավը եկու, յըղոնեգյնեն ըխպըրին քըշտեն վեր եկեն, հընվեցեն թըեփուռներան, ըխպըրին մեչին լըղացան, ետնան հրամմայեցեն հըրէշեն, վար դութին պիրի: Հըրէշը դութին պիրավ, ըխճըկերքը պա՜ցա՜ն, տըեսան, վար տհենց չի ծասկած, հունց վար ըռա՜նք ըն ծասկալ, կըզնըրվեցեն, դութին ծըսկեցեն, հըրէշեն հրամմայեցեն, վար դութին տանն էն պեցըռ սարեն քամակը, ընդեղ, վըրդեղ կախարթներեն թաքավերն ա կենում:

Հըրէշը դութին եր կալավ, թըռչից երգյինքը, վըրդեղ քյընա՜ց, վեշ մինը քյընա՜ց վեչ:

Ախճիգյը մինա՜կ տըեսավ, վար մին մըթեն, խոր քոլավ ընցավ: Ճարը կըտրած ախճիգյը վեր կացավ, քյընա՜ց հա՜մա՜ն էտ քոլավը, վըրդըղավ հրեշը թոչալ ար: Տըհենց դը՞ւզ մին տարե էտ քոլումը տանջվեց, կյեցեն շը՞րերը ճըրղոտվեց, ինքյն էլ ըրեան սըվացավ, դա՜րդա՜ն մաշվեց, ծառներեն քըչըվավն ար սընվում:

Եկու էն օրը, հիբր վար ընրա՜ն մին տղա խոխա իլա՜վ քոլեն մեչին: Նա պա՜ն չար ճարում, վար խուխեն տա: Մին օր էլ ծառնեն տակեն նստած, խոխան խտտած, քը՞լումը մին պեցը՞ռ սա՜ս ըսկացավ: Նա վըխելան նհետ խոխան թողեց ծառնեն տակեն, ինքյը ծառը պըցըա՜ցավ: Քոլան մին առը՞ւծ տը՞ւս եկու: Էտ ա՜ռը՞ւծը նոր ար ծընալ, տը՞ւս ար եկալ օտելի պա՜ն ճարե, ըտրա հետե շոռ ար կյամ ըղեղերքյ:

Ա՜ռը՞ւծը մուտացավ, խոխան չըրըքթաթ տալավ բըղա՜ ա՜ռը՞ւծը քյընա՜ց, սկսեց ա՜ռը՞ւծեն կաթնը ծծել: Տհենց էլ ա՜ռը՞ւծը ամեն օր էտ հա՜մա՜ն վախտը կյա՜լիս ար, էտ խուխեն ծըեծ տալիս: Մարը էտ հա՜մա՜ն վախտը գյըղա՜լավ ծառըն ար պըցըա՜նը՞ւմ:

Խոխան կանոխ մըծացավ: Առողճ ար, շատ օժավ ար, ամմա մըխըրեգյ մըզմազոտ ար, ընդրա հետե, վար վիրի հեյվանու կաթնը ար ծըծալ: Մընգյ էլ լը՞ւզը՞ւ չար գյուղըում, մարը լա՜վ չար սըվըրըցըրալ, կարում չար: Նա տասը տըրեկան ար տա՜ռա՜լ, ամմա ըռա՜ն օժավը, ըռա՜ն ծըռքերավը վիրի հեյվաննե ար վերսում, ընդրանավ էտ քոլումը մորը նհետ օտում ին: Մարը օզում ար լը՞ւզու սըվըրցնե, ամմա էլհա լա՜վ չար տը՞ւս կյամ:

Նահանք քոլումը երգյան մընացեն: Մարը շատ ար մաշվալ, վար վիրի յըն ապրում:

Նահանք մին օր քոլավը քյընա՜մ ին, բը՞ւրդա՜ն մարը մին ըխպըրի

հըսավ, վըրդըղա վըեսկե քարեր ին վեր տա̀ռնում: Մարը գյիդա̀ց տա հինչ ա: Տղեն անա խընթրեց, վար էտ քըրերան իըվաքե: Տղան գյո̀ւղո̀ւմ չար, թա ըտրանք հինչ ըն, տեսած չար: Մարը տղեն անա ըրեսուն հատ եր կալա̀վ, տըրավ ծըմերեն ղաթումը:

Մարը տղեն անումը տիրալ ար «Ա̀ռո̀ւծի տղա», վար նա ա̀ռո̀ւծի կաթնավ ար մըծացալ, շատ օժավ ար: Մարը նան տղան էրգյան շոռ կյալանը ետը, թուղեցեն էտ ղալին քօլերը, հըսան մին լեն, կանանչ հա̀նդ: Մարը հըռնըցե տըեսավ, վար հանդումը չոբըննե կան: Նա հըսկըցրուց Ա̀ռո̀ւծեն տըղեն, վար քյընա̀ չոբաններեն անա մին յափունջի օգե, կյնալու հետե, կյեցեն շո̀ր չիկա: Ա̀ռո̀ւծեն տղան գյանքումը մարթ տեսած չար: Տրա հետե էլ նա մնաց մա̀թա̀լ, վար նահանց տեսավ շարքավ նստած զըո̀ւց անելիս:

Ա̀ռո̀ւծին տղան մուտացավ չոբաններեն, վար նստած ին մին պեցո̀ւր ծառնեն տակեն: Նա ծըմակեն գազաններեն նման յըա տըվավ, ծառնը կոտրեց, խըեգյ մնաց, վար չոբաններեն կտորե: Չոբաննեն ղե տվին, ո̀ւրա̀նց նհետ հաց օտե: Ա̀ռո̀ւծին տղան գյուղում չար, վար հացը օտելի հետե յա: Նա մին պատառ պերանը քըցից, տեսավ շատ համավ ա, հացը մընգյ էլ մնացած օտելի պա̀ները եր կալավ սկսեց օտելը:

Չոբաննեն վըխելան նհետ վեշմին խոսկ չասեցեն: Օտելանր ետը Ա̀ռո̀ւծեն տղան ծըեռքավ նշանց ըրավ՝ մին յափունջի տան: Նահանք դա̀ստի հըսկացան, վար օգում ա յափունջիներան մինը յոր օնե: Չոբաննեն մին քանե շենու հաց տըվեն, մին էրկու յափունջի տըվեն, մըեծ պատվավ հըղե քյըցեցեն: Ա̀ռուծեն տըղան քյընա̀ց մորը կոշտը: Մարը, վար էրգյան տարեքյ հացու իըես չար տըեսալ, ըստուծեն փառք տալավ հացը կերավ, յափունջիներան մինը կյեցավ, մինն էլ տղեն տըվավ, վար յըան քըցի:

Ըտրանա ետը քյընա̀ցին չոբաններեն կոշտը: Էս դո̀նումըս չոբաննեն շատ վըխեցան, Ա̀ռուծեն տղեն մորը ղաչանք ըրեն, վար ո̀ւրա̀ն տղեն ասի, վար մարթ չի սպանե:

Ա̀ռուծեն տղան օրանց օր սըվերում ար մարթու լո̀ւզո̀ւ, նահանց օրենքյնեն:

Մին քանե ամես չոբաններեն քըշտեն կըենում ըն: Մարը տեսնում ա, վար չոբաններեն ապրուստը պըրծընում ա: Մեհետ նահանց խընթըրում ա, վար Ա̀ռուծեն տղեն ո̀ւրա̀նց նհետ տանեն քաղաք մազերը եր անեն, քանի վեր մըզմազոտ ար, համ էլ օտելի պա̀ներ առնեն: Ըտրա հետե էլ մին

վըեսկէ հանեց ծըմերեն մեչան, տըվավ էտ չոբաններան մինին, վերը ո̈ւրա̈ն տղեն նհետ մընացածներան շատ ար մոտիկ:

Քաղաքը էնքան էլ հեռու չար: Քյընա̈ցին, Ա̈ռյո̈ւծեն տղեն տարան մազերը եր արին, իրեք սըհաթ զոռավ պըրծին խեղճ դա̈լլա̈քնին: Չոբանը փողը տըվավ, ամմա Ա̈ռուծին տղան ըտրա ա̈վա̈զը դա̈լլա̈քեն անջուկը պուկեց: Ետնան բազար քյընա̈ցին, ամեն հինչան առեն, էլլհա ետ տա̈ռա̈ն ո̈ւրա̈նց բինան, չոբաններեն կոշտը:

Հըղեցը էլ սաղ մարթ չի մնաց Ա̈ռո̈ւծեն տղան մինին անջուկն ար պուկում, մինին՝ ծըեռքը, մինին՝ վըեննը:

Չոբանն են էտ լոխ մորը նաղլ ըրեն: Մարը յավաշ-յավաշ լոխ կըլխու քյըցեց ո̈ւրա̈ն տըղեն: Տըղան խելունք մարթ ար տա̈ռնում, պարեկամ նան թըշնամի ար ճընանչում:

Էտ խա̈բա̈րը հըսալ ար թաքավերեն անջուկը, վար մին օժավ տըղա կա քըղաքեն քըշտերքեն, վար մինին առանց կըլո̈խ ա թողում, մինին՝ առանց վըննը-ծըեռք:

Թաքավերը հրամման ա տամ, վեր Ա̈ռո̈ւծեն տղան էտ ո̈ւրուզյո̈ւնը քյընա քոշտը, ամմա Ա̈ռո̈ւծեն տղան քյընա̈մ չի՛:

Էս դո̈նում էլ թաքավերը ո̈ւրա̈ն վեզիրներան ըրկունեն ղարկեց, մինգյ էլ մին դա̈ստա̈ սալդաթ, վար օժավ էլա Ա̈ռո̈ւծէն տըղեն պիրին ո̈ւրա̈ն կոշտը: Վեզիրնեն սալդաթներեն նհետ քյընա̈ցեն Ա̈ռո̈ւծեն տըղեն կոշտը, լոխ նաղլ ըրեն, հինչ վար թաքավերը հրամմայալ ար: Ա̈ռո̈ւծեն տըղան կըզնըվեց նահանց յրա, կեսեն կըտորեց, մին քանիսն էլ փախեն թաքավե-րեն կոշտը հըսան:

Նահանք ըլա̈ծը պըտմեցեն թաքավերեն, ըսեցեն.- Նա նհենց օժավ տըղա յա, վար ընդըրա մընանը քու երգյիրումըտ կա վեչ:

Մընգյ էլ ըսեցեն, վար. - Ա̈ռո̈ւծեն տըղեն անա կըման, ընդեղ մին չոբան էլ կա: Էտ չոբանը կարող ա Ա̈ռո̈ւծեն տըղեն մին թա̈հրա̈վ քու կոշտըտ պիրի, վար պիրի վեչ, կըլո̈խը կտրէ:

Խա̈բա̈րը չոբանեն հըսավ, չոբանը ընգյավ քընենքյի մեչ, ընդըրա հետե, վար ինքյը կարալ չի զոռ անէ Ա̈ռո̈ւծեն տըղեն: Մին հըղէ յար մնացալ, վար քյընա̈ մորը կոշտը, մորն ասէ, բա̈լքյա̈ս մարը մին ճար անէ, տանէ թաքավերեն կոշտը:

Մարը տըղեն նաղլ ըրավ, թա̈ հու վա՞ թաքավերը, հո՞ւնց պիտի ընրա

նիետ խոսե: Առնծեն տըղան լոխ հըսկացավ, թաքավերեն կոշտը քյընձլի հետե ռազի ըլձվ:

Նա չոբանեն նիետ հըղե ըլձվ քաղաքը: Հըսեն թաքավերեն պալատը, հունց վար մարըն ար ասալ թաքավերեն նիետ խոսեց: Թաքավերեն քախցը լընզնըն նըրձն տուր եկու: Թաքավերը ընրան լձվ պատիվ տըվավ: Ընդրանա ետը չոբանեն դարկեց, վար մորըն էլ պիրի: Չոբանը քյընձց մարն էլ պիրավ թաքավերեն կոշտը:

Թաքավերը տըեսավ, վար Առնծեն տըղեն մարը թաքավերական գյանք քաշած կնեգյ ա ըրվում:

Ընրան ձոկ կըննալու տըեղ տըվավ:

Թաքավերը Առնծեն տըղեն ուտուցունում ար նըրձն փձհլըվաններեն մընան:

Թաքավերը քառասուն փձհլըվան օներ ընդի օժավ, վեր մին տըեղ նաիանց մընան կար վեչ: Թաքավերը Առնծեն տըղեն նիետ կանդրախտ ար կապալ, վար նա նըրձն փձհլըվաններեն նիետ պիտի կոխըը կենա մին ամսանը ետը: Առնծեն տըղան շատ ար օրախ, վար պիտի կոխըը կըենար փձհլըվաններեն նիետ:

Թաքավերը խոսկ ար տըվալ, վար թձ հաղթե ընդրանց նըրձն ախճիգյը տալու ա Առնծեն տըղեն: Ախճիգյըն էլ սիրահարվալ ար Առնծեն տըղեն յըրան: Մին ամսանը ետը Առնծեն տըղան կոխըը կացավ թաքավերեն փձհլըվաններեն նիետ:

Ամեն մինին նիետ հենգյ մունուտան էվել կոխըը չար կըենում, դձստի սըտկըցընում ար, թող անում քըցնըմ տըենը: Թաքավերը գյուղնըմ չար, թձ հի՞նչ անե:

Առնծեն տըղան թաքավերեն ախճիգյը պահանջից:

Թաքավերըն ասեց. - Թա տու քառասունինջի փձհլըվանին էլ հախթես, էն վախտը ախճիգյըս քունն ա:

Առնծեն տըղան ռազի կացավ: Վերջի օրը նա կոխլ կացավ էտ փձհլըվանեն նիետ, վար վեշ մինը հձլձ ընրան հախտած կար վեչ: Առնծեն տըղան խիլլձ նըղացալ ար, քանի վար էն փձհլըվանն էլ ար օժավ: Ամմա վերչում էտ փձհլըվանեն կլոխըն էլ պուկից, թող ըրավ: Թաքավերը էլ կարում չի մին պձն ասե, ընգյնում ա մըտըրծունքե մեչ:

Էրգյան մըտըրծելանը ետը Առնծեն տըղեն ասում ա. - Առնծե տըղա,

ախճիգյըս քունն ա, մինա̀կ տու էս պայմանը կըղարե: Ինձ հետի էնքան լալ նան մարջան պեր, վար նրանա վըեսկե խոնչանե պըղըաստես քու հըրսըընքետ հետե:

Ա̀ռո̀ւծեն տըղան բեյքեփ քյընա̀մ ա մորը կոշտը:

Մարը զյիղա̀ց, թա̀ խե՞ յա բեյքեփ, ասեց. - Ա̀ռո̀ւծի տըղա, տու քյընա̀ թաքավերան մին ծի, մընզյ էլ էրկու փութ վըեսկե օզե, ետնան էլ լոխ միչև քըղաքան տո̀ւս կյալը ժողովուրթեն պըժանե, լալերն էլ, վար վըեսկուն անա թանզյ ա, կպիրիս էն ըխպըրա̀ն, վար մունք տըեսալ ընք:

Ա̀ռո̀ւծին տըղան էտ պայմանավը թաքավերեն կոշտը եկու, թաքավերեն անա վըեսկեն եր կալավ, հըղե ընգյավ:

Հըղեցը վըեսկեն լոխ պըժա̀նից ժողովուրթեն, ետնան քյընա̀ց հըսավ ընդեղ, վըրդըղա իրեքյ հըղե յըն պըժանվում: Նա էտ հըղըցումը մին պառավ մարթու պըտահեց:

Պառավ մարթը հըրցըրուց Ա̀ռո̀ւծեն տըղեն. - Վէրթի, վըրդեղ ըս քյընա̀մ էս հըղեցն հենց հըղե յա՛, վար քյընա̀ցողը ետ չի տա̀ռնում: Անզուճ ըրա, հինչ վար յըես ասիմ: Տու կըքյընա̀ս էս հըղըցավը, կըհասնես մին դա̀լին քոլե, վար էրկու սըրերեն ղաթումն ա: Ընդեղ մին ախպո̀ւր կա, վըրդըղա վըեսկե քարեր, մընզյէլ լալեր ա վեր տա̀ռնում: Վըեսկեն յոր ունելանը ետը, հիբը հըղե ըննիս, երզյինքյը տուղտուղլական ա, մըթնըլա̀կան ա էտ ըխպո̀ւրին եշող հըրեշեն օժան, ամմա տու ետ եշիս վեչ, էտ էրկու սարերը բեջիթ ծըսկըվըլական ըն, վար կարաս տո̀ւս կյաս, ըզըղվըլական ըս, թա չէ, ղաթումն ըս մըննական:

Ա̀ռո̀ւծեն տըղան ասում ա. - Պապե, շունըրակալ ըմ, դե յըես քյընա̀մ:

Ասում ա, հըղե ընո̀ւմ :

Շատ ա քյնա̀մ, խըեզյ ա քյընա̀մ, հըսնում ա էն ըխպո̀ւրեն, վըրդըղա վըեսկե, մընզյէլ լալ ար վեր տա̀ռնում:

Առուծեն տըղան վըեսկեն նան լալը հըվաքում ա, ծին նստում հըղե ըննո̀ւմ բըղա տոն: Քոլան հա̀լա̀ տո̀ւս եկած վեչ, երզյինքյը տըղտողաց, երզիրը մըթնեց, սարերը ո̀ւրո̀ւր թըխեցեն, ամմա Ա̀ռո̀ւծեն տըղան քոլան շուտ տո̀ւս եկավ: Նա վար պըլատան մուտացավ, թաքավերեն վեզիրնեն, մընզյէլ թաքավերը ընրա հետե յին մտածում, վար Ա̀ռո̀ւծեն տղան ետ ա եկալ, մըեռալ չի՛, բա հո՞ւնց կինի՛ ըխճըկանը հարցը: Ա̀ռո̀ւծեն տըղան մըեծ հաճողոթունավ տո̀ւս եկու թաքավերեն առաչը:

Թաքավերը մին պայման էլ օներ: Նա դե տվավ Առուծեն տըղեն, ասեց.- Ա՛ վերթի, ախճիգյս քունն ա, մինձկ էս պայմանն էլ կըդարե: Քյըեզ հետե օզում ըմ մին պալատ շինիլ տամ, քյընձ վըեսկե սուներ պեր, վար շատ պեցուր ինի, վար լձվ շափաղ տա, վար իտի պալատ վեչ մին երգյիրում ինի վեչ:

Առուծեն տըղան ասեց. - Լձվ, կըպիրիմ, ըտ էլ կըզըդարեմ:

Նա քյընձց ուրձն մորը կոշտը, բեյքեփ ընրան եշից: Մարը մընգյէլ գյիդձց ընրա դձրդը, ասեց. - Ա՛ վերթի, մընգյ էլ թաքավերեն անա օզե էնքան վըեսկե, վերքան բոըչի դունումն ըս օզալ: Էլիա առաչվա հըղըցավը քյընձ, էլիա էտ էրկու փութ վըեսկեն ժողովուրթեն տո, ամմա էս դունում տըժեր ա ըննձկան, սայաղ կաց:

Առուծեն տըղան լոխ թաքավերեն անա եր կալավ, վըեսկեն ժողովուրթեն պըժձնից , հըղե ընգյավ:

Էս դունում էլիա էն պառավ մարթեն պըտահեց: Նա Առուծ են տըղեն անա հըրցըրուց. - Վե՛րթի, էս դունում վը՞րդեղ ըս քյընձմ:

Առուծին տըղան ասեց. - Պա՛պե, յըես քյընձմ ըմ թաքավերեն հրամ-մանավը քառասուն վըեսկե ծառներ պիրիմ, վար սուն, սութուն շինել տա մին ինդի պլատու հետե, վար սաղ ըշխարքումս կա վեչ:

- Վերթի, էտ հըղըցավը վար քյընձս, էլ ետ չըս տըռնըլական: Տա շատ տըժձր պձն ա, ամմա յըես էլլա քյումձգյ կանեմ: Ընդըղա, վըրդըղա էն վըեսկեն նան լալը պիրալ ըս, ընդրանա իրեք անքամ շատ հեռե յա, վար հըսնես էն քոլեն, վըրդեղ քըշեր-ցիրեկ ծառները լուս ըն տամ: Ծիտ կըթողես մըխըրե հեռե, տու յըվըշ-յավաշ կմոտանաս հըրեշներեն պըլա-տեն, վըրդեղ հարուր հըրեշ ըն կենում: Նահանց մըեծին օխտը կլուխ օնե: Ընրա վեննը մին փեդ ա ծակըլ, հեսա տըսնըհենգյ տարե յա, տուս չի կյա՛մ: Տու թաքուն կը մուտանաս, ծիքյ կտաս, փեդը վըեննան կըհանես, ինքյտ էլ կյողըը կը կենաս, վար քյըեզ տեսնա վեչ, թա չէ, վերչը փիս ա ըննձկան: Ամմա մին պձն էլ ասեմ, վե՛րթի, վար տու գյուղում չըս: Սըրանա տըսնըհենգյ տարե առաչ քու հձր հձլձ նոր ար փըսակվըլ, քու հոր էտ հըրեշեն ըխճըկերքյը կյուղացըլ ըն, տարա՛լ: Քու հձր հեն ա մին վըեսկե դութում, մին սարե պըտկե: Վար փեդը տուս օնես հըրեշեն վըեննան, նա դինջանա, քոն ա ըննձկան օխտը օր, օխտը քըշեր:

Մինչև քոն ընիլը նա ըսըլական ա. «Ո՛վ պարի մարթ, վար էս

լըվոթունը ըրալ ըս, մեյդան տ՞ւս եք»: Ամմա տու տ՞ւս չիկյա՞ս, մինչև երթումնը չօտե ՞ւրա՞ն ջադու ըխճըկորցը անումավը: Ըտրանա ետը տ՞ւս կկյաս, ընրանա օզիս քառասուն վըեսկե ծառ, մընգյ էլ քու հոր վըեսկե դութեն էտ հըրեղան ըխճըկորցը նհետ:

Ա՞ռ՞ւծեն տըղան ասում ա, -Շունրակալ ըմ, պապե՛:- Ասում ա, հըդե ընգյն՞ում:

Նա դ՞ւզ իրեք ամես հըղե յա քյըն՞ում. մըթեն քոլերավ, պեցուր սըրերավ: Խրեգյ ար մընացալ վար հըսնե: Քոլեն վըեսկե շափաղը ընգալ ար ընդ՞ւր ծիյին յըրան, հըռուցանա նա հըրեշեն կյ՞ւռկ՞ռուցը սկացավ, վար տըսնըհենգյ տարե յա, տանջվում ար:

Ա՞ռ՞ւծեն տըղան շատ վախեց, քոլը հենց ար մին կախարթական աշխարք ինի: Նա ծին ք՞ւլան պատառ հըեռե կապեց, մուտացավ էն ծորեն վըրդըղան կյ՞ւռկ՞ռոց ար կյամ: Մուտացավ հրեշեն, ամմա հըրեշը ընրան տեսնում չար, շատ ար տանջվում ցավան նհետ: Ա՞ռ՞ւծեն տըղան վըեղը քանդեց, կյողը կընալի հետե, պըդրաստվեց, վար փեդը հըրեշեն վըեննան հանե: Նա փեդը տ՞ւս կալավ, հըրեշը մին հենց կյոռռաց, վար երգյինքյը տըղտ՞ղաց, աշխարքը մըթնեց, ամեն մին ծառնեն տական մին կազան տ՞ւս եկու, վար քըթ՞նա՞ էն մարթեն, վար ծըեռք ա տըվալ ՞ւրա՞նց թաքավերեն:

Հըրեշը դինջ քուն ըլա՞վ, մընացածնեն էլ ՞ւրա՞նց տեղերը չքըվեցեն:

Օխտը օր օխտը քըշերանը ետը հըրեշը զա՞րթնեց, կյոռռաց թա. - Հո՞ւ վը՞ս, տ՞ւս եք, մարթ ըս, թա՞ վիրի հեյվան, լա՞վ փեշքյեշ ըս ստննական, տ՞ւս եք լ՞ւս աշխարք, հինչ վար օզիս, եր կա՞լ ինձանա:

Ամմա Ա՞ռ՞ւծեն տըղան էն պառավ մարթեն ասածը մննան քըցալ չա՛ր:

Վար իրեքինջի դ՞նումը հըրեշը դե տվավ. -Հո՞ւ վըս, տ՞ւս եք մեյդան, ինձանա քու օզած փեշքյեշտ եր կալ, իմ իրեք ըխճըկանըս արնն ըմ ասըմ, ընդրանց անըմավը օրթում ըմ օտըմ:

Ա՞ռ՞ւծեն տըղան տ՞ւս եկու, հըրեշեն քըշտեն վըեննը կացավ:

Հըրեշը ընրա ս՞ւր՞ւն, ջա՞հիլ իրեսը տըսնալավ ասեց. - Ա՞ռ՞ւծե տըղա, միչև օրըս նհենց մարթ չի ըլա՞լ, վար իմ վըեղումս վըեննը տինի: Տու առաչի մարթն ըս, վար եկեր ստեղ, ինձ էլ լըվոթուն արեր, հինչ վար օզում ըս, ասե, քյըեզ կըախշեմ, հա՞լա՞, իմ ըխճըկորանցն էլ:

Ա՞ռ՞ւծեն տըղան ասեց.- Գյանքտ է՛լ էվիլ ընի՛, յըես պիտի տանեմ

քառասուն վըեսկէ ծառներ, մընգյ էլ իմ հոր վըեսկէ դութին, վար քու ըխճըկերքտ կախարթալ ըն, պիրալ, տըսնըհենգյ տարէ առաչ:

Հըրէշը պեցուր կյո̈ւռալավ հըվաքեց ո̈ւրա̈ն ղարավուլչիներեն, վար վըեսկէ բաղը պահում ին, նհանցա քըռըսունեն հրամմայեց, վար վըեսկէ ծառները պիրեն, էն մինին էլ զարկեց, վար ըխճըկորցը ղէ տա: Ընդրա ասածն են լոխ արին:

Հըրէշը ո̈ւրա̈ն ղարավաշն երեն կարքատրեց, վար Ա̈ռո̈ւծեն տըղեն մին սհաթումը քառասուն վըեսկէ ծըռներեն նհետ հըսցընեն ո̈ւրա̈ն երգյիրը, հա̈լա̈ իրեք ախճիգյն էլ նհետը: Ըխճըկերքը կըզնըվեցեն, ամմա հորը հրամման ար, բեղմա ընին:

Քըշրիանը Ա̈ռո̈ւծեն տըղան մեծ փէշքյեշներավ, քառասուն գյա̈ղա̈ հըրեշների, քառասուն վըեսկէ ծառնի, իրեք ըխճըկա նհետ հըղէ իլա̈վ բըղա̈ թաքավերեն պալատը: Հա̈լա̈ մին սհաթը թամամ չար, վար տեղ հըսան: Թաքավերը հըռուցանա տեսալ ար, վար կյամ ըն, հրամմայալ ար, վար տըռները ծասկեն: Ա̈ռո̈ւծեն տըղան տըսնալավ, վար տըռները ծասկած ա, օձավ կոտրից, նի մտավ քաղաքը: Թաքավերը վըխելան նհետ պըլատան տո̈ւս չար կյամ:

Վըեսկէ ծըռներեն շափաղը ընգյա̈լ ար սաղ քաղաքը: Իրեք օր քըղաքումը տո̈ւրո̈ւր կյըվող չիկար:

Ա̈ռո̈ւծեն տղան թաքավերեն ասեց. - Ամմա՛ն մին հըրեշեն նհետ մին կյումա̈շ տիր, վար նահանց ղարկենքյ ո̈ւրա̈նց տեղը:

Թաքավերը լոխ ըրավ, հինչ վար Ա̈ռո̈ւծեն տղան օզալ ար: Հըրեշներեն հըղէ քյցից ո̈ւրա̈նց երգիրը:

Մարը գյուղում չար, վար ո̈ւրա̈ն տըղան հորը դութին պիրալ ա՛:

Ա̈ռո̈ւծեն տըղան սաղ քըղաքեն օձավ ուստեքյը նան փա̈հլըվանեն հըվաքեց, մին շեբեթ չի քաշած պալատը շինեց: Նհենց մին պալատ, վար հա̈լա̈ ըշխարքումս իլա̈լ չար: Էտ պալատը լո̈ւս ար տամ, հունցու արևը:

Ա̈ռո̈ւծեն տըղան քյընա̈մ ա թաքավերեն կոշտը: Թաքավերը էս դոնում ռազի ըլա̈վ, վար ո̈ւրա̈ն ախճիգյը Ա̈ռո̈ւծեն տըղեն տա: Ա̈ռո̈ւծեն տըղան ետնան քյընա̈ց մորը կոշտը, լոխ նաղլ ըրավ:

Մա̈րը շատ բեքյըփացավ, հըրցրուց. - Ա՛յ վերթի, տու ամեն հինչ արեր, կըղըրեցիր, հի՞նչ կինի իմ խնթիրքս էլ կըդարես:

Ա̈ռո̈ւծեն տըղան ասեց. - Ա՛ մար, ասէ, յըես պաղրաստ ըմ քու հրամմանեն:

Մարը լոխ, հինչ վար ո̏ւրա̀ն կըլխավըն անց ար կացալ, նաղլ ըրավ:

Ա̏ռո̏ւծեն տըղան ասեց. - Ա՛ մար, լա̀վ, մինչև մին սհաթը կը կըդարիմ: Ամմա իմ հա̀ր սըղանալ չի՛:

Ա̏ռո̏ւծեն տըղան եկու պալատը, հրամմայեց էն կախարթ ըխճըկորցը, վար ղութին պիրին պըլատեն մեչը: Ղութին պիրան: Ա̏ռո̏ւծեն տըղան ղե տվավ մորը, մարը եկավ, տեսավ վըեսկե ղութին, մըետը քըցից էն խոսկը, վար ասալ ար մարթը, մըռնելիս վախտը:

Ղե տվավ. - Ա՛խ ղորփոր տըղա, յըես քյըեզ միննաս քըցալ չըմ, - ետնան օշան քյընա̀ց, վեր ընգյավ:

Ա̏ռո̏ւծեն տըղան հրամմայեց մորը ետ պիրին, մարը օշը կլո̏խը հըվաքեց:

Ետնան էն իրեք ախճիգյը հերթավ կըրթեցեն առանց թըխտի, ղութուն թըխեցեն, ղութին պա̀ց ըլա̀վ, հա̀րը զո̏ւրթնա̀ցավ, օշը կլո̏խը հըվաքեց: Աշխարքը լո̏ւսա̀ցա̀վ, լոխ ուրխացեն:

Սկսեցեն հըրսանեքյ անելը: Ա̏ռո̏ւծեն տըղեն փըսըկեցան թաքավերեն ըխճըկանը նհետ, մար նան հա̀րն էլ ո̏ւրո̏ւր նհետ: Քառասուն օր, քառասուն քըշեր հըրսանեքյ ըրեն:

Էն իրեք կախարթ ըխճըկերքն էլ կորան, քյեցեն ո̏ւրա̀նց տըեղը, միչև օրս էլ կան վեչ:

Երգյինքան իրեք խնձո̏ր վեր ընգավ. մինը՝ ասողին, մինը՝ կյրողին, մինն էլ կարթողին:

62.ՓԻՍ ԴԱՅԻՆ

Ընո՜ւմ ա, չընո՜ւմ մին մարթ, մին կնեգյ ա ընո՜ւմ: Տահանց ընո՜ւմ ա մին ախճիգյ:

Մին քանի վախտանը ետը հա՜րը մեռնում ա, մարը ըխճըկանը պահում ա չըրու տասնըհենգյ տըրեկանը: Ետնան մարը ազառամիշ ա ընո՜ւմ, մեռնում: Մարը մահու յրա թափշուր ա անում ո՜ւրա՜ն ախպորը, վար ըխճըկանը լա՜վ պահէ: Ախճիգյը մըծանում ա:

Դայուն կնեգյը մահու յրա թափշուր ա անում մարթին, վար ո՜ւրա՜ն մըռնելանը ետը նըհենց կնեգյ պիրի, վար լոխճան կյեղեցիկը ընի: Էտ մարթը էրգյան վախտ ման ա կյամ, ամմա կնգանը ըսածին նմանը ճարում չի՛: Քվորը ախճիգյըն էլ մըծացալ ար, նիհենց նըխշունացա՛լ, վար նմանը կար վէչ: Էտ մարթը մտածում ա քվորը ըխճըկանը յոր օնէ, ամմա ախճիգյը օզում չի, քընէքյ ա անում մին ճար, մին հնար քըթենա տըրանա ըզադվէ:

Ճարը կըտրած նա քյընա՜մ ա մին ջադու պռավէ կոշտ, լոխ ընդրան նաղլ անում:

Ջադու պառավը ըխճըկանը սըվըրցնում ա, վար. - քյընա՜ դայուտ ասէ, վար քյըեզ հետէ երգյընքյի ռա՜նգյի մին շո՜ր ինքյ օնէ, ետնան կյենաս:

Ախճիգյը տըհենց էլ անում ա:

Դային շո՜րը ինքյ ա օնում, էտ ախճիգյը կյենում ա, էտ շո՜րեն մեչին ջիլիս ա նըխշունանում: Մընգյ էլ ա էտ ախճիգյը քյինում ջադվեն կոշտը:

Ջադուն ասում ա. - Քյինա՜ ասէ դայուտ, վար քյըեզ հետէ նիհենց շո՜ր ինքյ օնէ, վար ըրնեն ռա՜նգյին ընի, վար կյենաս լոխճին աշկերը ծկոտէ:

Ախճիգյը մընգյ էլ ա քյնա՜մ դայուն կոշտը, ասում. - Ինձ հետէ նիհենց մին շո՜ր ինքյ կյա՜լ, հունցու վար արնն ա:

Դային մընգյէլ ա կըդարում ըխճըկանը ասածը: Ախճիգյը կյենում ա շո՜րը քյընամ ջադվեն կոշտը: Նա էնքան նախշուտ ա՛ր, վար դայուն խելքը քյընա՜մ ար, կոզի պըռավալ ար:

Դային լոխ էտ շո՜րերը ինքյ ա կալալ վըեսկէ փողավ: Օրական էրկուիրեք վըեսկէ յար յոր օնում:

Ջադուն ըխճըկանն ասում ա. - Քյինա՜ դայուտ ասէ, վար էշը մորթէ, մորթեն եր կալ կյեց:

Ախճիգյը քյընա՜մ ա ասում: Դային էշը մորթում ա, մաշկում, ախճիգյը

կաշին կյենում ա, մընգյէլ քյինա̈մ ջաղվէն  կոշտը։

Ջաղուն ասում ա.- Բո̈լ ա, էտ մաշկը կոտրած դայյուտ անա հըռաց, էս երգյիրան տո̈ւս էք, վար դայիտ քյըեզ տեսնա վէչ։ Շո̈րերտ տիր մին սընդողէ մէչի, տիր մին տեղ։ Քյըեզ մին ճըպատ ըմ տամ։ Էտ ճըպատը ծեռքատ վէր չըքըցիս։ Վըրդեղ էլ քյընա̈ս, առանց սընդողէ քյընա, հիբը ճըպատավը տափէն թըխես, սանդուղը տո̈ւս ա կյըլական։

Ախճիգյը էշին կաշին կյեցած տո̈ւս ա կյամ ո̈ւրա̈նց երգյիրան քյընամ մին օրիշ երգյիր։ Իրեսն էլ սըվըցնում ա, վար գյիդա̈ն վէչ թա̈ նախշուն ա։

Դային օզում ա հետան իըսնէ, վար փըռնէ, ամմա ջաղուն նըհենց ա կըլըկապ անում, վար վէշ մին վախտ էտ ըխճըկանը քըթա̈նում չը՛ն։

Էտ ախճիգյը քյընո̈ւմ ա թաքավերէն տանը ծառա նի մննում։ Մին քանի վախտ ընցնելանը եըը, էտ ախճիգյը փորցում ա ճըպատավը տափէն թխէ։ Հէնց վար թխում ա, սանդողը տո̈ւս ա կյամ։ Ախճիգյը կաշին հանում ա, իրեսը սըրփում ետնան կյենում ա երգյընքյի ռա̈նգի շո̈րը։ Էտ վախտը թաքավերէն տղան տեսնում ա ըխճըկանը, ընդրա սիրունութունավը տարվում ա, հիվընդանու՛մ։

Թաքավերէն տղան մորը թխվասկ ա թխել տամ։ Մարն օզում ա խմորը հունցէ, էտ ախճիգյը ասում ա. - Թող յըես հունցեմ։

Հինչքան մարը թողում չի՛, ախճիգյը էլլա յա ըղաչում։ Վէրչը թխվասկը ինքյն ա հունցում։ Հունցելիս վախտը մըտանան մնում ա խմորէն մէչին։ Թխվասկը թըխելանը եըը էտ տղան օշափէն նման օտում ա։

Մըտանան մընում ա բողազըմը։ Մըտանան մին թա̈հրա̈վ հանում ա, տինո̈ւմ պա̈րցին տակէն, սկսում լիվա̈նա̈լը։

Լիվընա̈լանը եըը մորն ասում ա.- էտ մըտանան հուր մաննէ լա̈վ ընի, ընդրան էլ ո̈ւզըլա̈կան ըմ։

Էտ օրը քըղաքէն ըխճըկոցը լըխճին ղէ յըն տամ, ամմա մըտանան վէչ մինին մաննեն կյամ չի։ Վէրչումը ղէ յըն տամ էն ըխճըկանը, վերեն կյեցեն էշու կաշի յա՛։ Տրա հետէ ընդրան տնազ ին անում։

Մարն ասում ա. - Էտ ար պակա՛ս, վար յըես քյինա̈մ էտ դարավաշէն օզիմ, պիրիմ, ղէ էլ հինչ դա̈ռդ օնիմ, հինչ ցավ օնիմ, ղէ ասի սաղ ըշխարքումս մին մաննը մեղը ըմ տըռնըլական իլի… Հու վէր եր կենա մեզ ա տնազ տըլական։

Ամմա տըղան ասում ա, - Չէ՛, ա՛ մար, թող ընդրա մաննեն էլ փորցենքյ։

Տղան փորցելի վախտը տեսնում ա, վար մըտանան դ̀աստի էտ ըխճը-կանը մաննեն կյամ ա:

Ախճիգյը ճըպատավը թըխում ա տափեն: Սանդողը տո̀ւս ա կյամ: Էտ ախճիգյը կյենում ա լոխճան նախշուն շ̀որը, ըրևեն ռ̀անգյի, տ̀առնում հ̀ուրի-փ̀արի, վար ըրնին ասում ա. «Տու տո̀ւս մի կյ̀ալ, յըես ըմ տո̀ւս կյըլ̀ական», լ̀ուսնընգյին ասում ա. «Տ̀ուս մի կյ̀ալ, յըես ըմ տո̀ւս կյըլ̀ական»:

Էտ ըխճըկանը օզում ըն թաքավերեն տղեն հետե: Օխտը օր, օխտը քըշեր հըրսանեքյ ըն անում:

Չարը՝ ընդեղ, պարին՝ ըստեղ:

## 63.ԹՐԵՎԱՎԵՐ ԿՐՆԵԳՅԸ

Ընըմ ա, չընըմ մին մարթ, մին կնեգյ:

Էտ կնեգյը թըեվավեր ա ընըմ: Ամման ցիրեկ տանան թոչըմա: Էտ մարթը մին հետ եր ա կենում կնգյանը թըեվերը կյաղում, վար կարա վուչ ծմըկնեն թոչի, մնա տանը:

Քշրիանա կնեգյը եր ա կենում, վար ամման օրվա նման թոչի, քյնա̀ ծմակը, տեսնում ա վար թըեվերը տեղը չի:

Մարթին ասում ա.- Պա յըես քյըեզ ըսեցի հո՛ւչ, թա տհենց պա̀ն չանես, յըես գյուղումըմ լհա̀ տըհենց ըս ըրալ, վար մընամ տանը, ինձ տեսնաս, ամմա լա̀վ չըս ըրալ: Միհենգյ տու շատ նեղութուննի յըս քըշլա̀կյա̀ն :

Ընցնում ա մի քանե վախտ: Էս կնեգյը հունցը տան կնեգյ, ճո̀ւրն ա քյնա̀մ, կյամ, տես-տեն ա քյընա̀մ: Լոխ տըեսնում ըն, վար շատ ղա̀շա̀նգյ կնեգյ ա:

Խա̀քա̀րը հըսնում ա էս երգյիրին թաքավերեն, վար. - Պա ասել չը՞ս, թաքավերն ապրած կենա, էս հի՛նչ շենումը, էս հի՛նչ մարթին տանը մին լա̀վ, սո̀ւրո̀ւն, շարմաղ կնեգյ կա, ամմա ընդրան սզական չի՛: Նա թաքավերեն կսազի, խե՞ յըս թողում նա ընդրան ծեռքեն կենա:

Թաքավերը ծեն ա տամ էս մարթին, ասում. - Տո̀ւ քա՛նի կլխանի յըս, վար իմ երգյիրումս տհենց գյոզա̀լ ըս պահում, առանց ինձ դույուղ ընելի: Դե մըհենգյ հի՞նչ ըս ասում, քյընա̀ կնեգյըտ պեր ըստեղ:

Էս մարթը հակառակվում ա, ասում ա, - Հի̀նչ վար օզում ըս, տամ, ամմա կնեգյըս կարալ չըմ տամ, վար օզում ա հինչ ընո̀ւմ ա, ինի:

Թաքավերը մտածում ա, թա հի՞նչ փա̀նդ սարքե, վար էս մարթին կընեգյը ինքյ օնե: Մին քանի շատ տժա̀ր տեղեր ա ղարկում, համ էլ վախտ տընո̀ւմ, վար.-Ասած վախտս եկեր, եկեր, թա չէ կլո̀խտ կտրըլական ըմ:

Քանի տեղ զարկում ա, ասած վախտան էլ կանուխ ա կյամ:

Վերչյը թաքավերը կանչում ա էս մարթին, ասում.- Քյըեզ մին պա̀ն ըմ ասում, թա̀ էտ էլ կղարես ազաղ ըս, թա չէ, չէ՛ :

Մարթն ասում ա. - Թաքավերն ապրած կենա, հինչու ասես պատրաստ ըմ:

Թաքավերն ասում ա,- Քու առաչիտ մին պայման ըմ տընում: Քյնա̀ ընդեղ, գյուղում չըմ վը՞րդեղ, պեր էն պա̀նը, գյուղում չըմ հի՞նչ ա, թա̀ կըղարես, կընեգյըտ քյըեզ հալալ ա:

Թաքավերն օզում ար, վար տրան հենց տեղ ըղարկե, վար էլ ետ չի տ̀ա̀ռն̀ա̀, ինքյն էլ ընրա կնեգյը յըր օնե:

Մարթը կյամ ա նստում տանը, բեքյեփ, սկսում մտածելը:

Կնեգյը ետ ա տառնում հըրցնում, - Հը, խե՞ բեքյեփ ըս, հի՞նչ ա պըտահալ:

Մարթը ասում ա, - Դե թաքավերը ինձ սըհենց պայման ա ասալ, մընգյէլ գյուղում չըմ, թա հի՞նչ անեմ: Ասում ա. «Քյընա ընդեղ, գյուղում չըմ վը՞րդեղ, պեր էն պ̀ա̀նը, գյուղում չըմ հի՞նչ ա»:

Կնեգյն ասում ա, - Տեսա՞՞ր, վար քյըեզ ըսեցե… Քեզ էս յ̀ա̀լուխըս, վեր տըժեր ընգնիս, քեթըտ կսըրփիս, վեչ մին պ̀ա̀ն էլ ա ըննական չի՜:

Ասում ա, մին լ̀ա̀վ նախշուն յ̀ա̀յլուխ, վար նրա նմանն էլ ըշխարհիքումս ըլ̀ա̀լ չի, տ̀ո̀ւս օնում, տամ ընդրան ասում, - Դե քյըն̀ա̀, պարի ճընապար:

Մարթը քյըն̀ա̀մ ա քյըն̀ա̀մ, առաչը մին պալատ ա կյամ: Նի յա մըննում հսարեն մաչյը, մարթ չի կա, փ̀ա̀լ̀ա̀քյ̀ա̀ն̀ա̀վը եր ա ըն̀ո̀ւմ, նի մըննում տըները, վեչ մին մարթ, վեչ մին պ̀ա̀ն չի կա, ամմա տըները լ̀ա̀վ սարքած ա ըն̀ո̀ւմ: Վերչը քյին̀ո̀ւմ ա տեսնում մին ութաղում մին իրեք կլխանե օշափ քոն ըլ̀ա̀ծ: Ըտեղ մըխրե կենում ա:

Օշափը եր ա կենում, ասում, - էս հի՞նչ մ̀ա̀զ̀ա̀ յա եկալ, ըսօր էլ տրանավ յոլա կըքյնանքյ:

Օզում ա, թա օտե, էտ մարթը կնգանը տված յայլուխը մետրն ա քըցում, տ̀ո̀ւս օնում քեթը սրփում, օշափը տեսնում ա յայլուխը, ճընանչում:

Ասում ա. - Պա էս յ̀ա̀յլուխը քյըեզ տըվողը մեր կուճուր քերն ա , էս ա վերքան վախտ ա, նրանա խ̀ա̀բ̀ա̀ր չօնենքյ, տու հո՞ւ վըս, վար քյըեզ ա տըվալ:

Նա ասում ա. - Դե յըես ընդրա մարթն ըմ, քյըն̀ա̀մ ըմ տըհենց պ̀ա̀ն̀ո̀ւ հետա…

Օշափն ասում ա. -Դե էս ըշխարքըմըս հիշքան թըռչող կենթանի կա, նահանց թաքավերն ըմ, կանչիմ կյ̀ա̀ն, թա նահանք գյըղ̀ա̀ցեն, գյըղ̀ա̀ցեն, թ̀ա̀ չէ, չէ:

Կանչում ա հիշքան թռչող ղուշ կա, նահանց անա հըրցնում, ամմա վեչ մինը գյ̀ո̀ւղում չի, թա վըրդեղ ա, հինչ պ̀ա̀ն ա՜:

Էտ օշափը ասում ա.- Դե քյն̀ա̀, առաչըտ մին մեծ պալատ ա կյլ̀ա̀կան: Ընդեղ մին հենգյ կլխանի օշափ կա, ըն էլ ինձանա մեծ քերն ա, քյն̀ա̀ ընդրա կոշտը, հըրցրու:

Էտ մարթըտ շատ ա քյուն՜ում, խրեզյ ա քյուն՜ում, առաչը մին մեծ պալատ ա կյամ: Քյուն՜ում ա, նի մըննում պալատը, տեսնում մին հենգյ կլխանե օշափ ա կյամ սկսում ա ճ՜ուր հեռ ածելը, վար էտ մարթեն իփի, օտե: Էտ մարթը տ՜ուս ա օնում յայլուխը քեթը սրփում: Օշափը տեսնում ա, ճնանչում, վար տա Ուրան քվերը յայլուխն ա, էլ վեչ մին պան չի անում:

Հրցնում ա, թա. - Պա թո՞ոն ըս քյուն՜ում:

Մարթն ասում ա. - Դե սըհենց-սըհենց պանու հետա յըմ քյուն՜ում, հղեցը ծեր քվորը պըտահալ ըմ, ծեն ա տվալ, լոխ թռչող դուշերը, ծըմակեն ջանավարնեն եկալ ըն, հըրցրալ ա վեչ մինը գյըդացալ չի՜, մընգյէլ լհա քյուն՜ում ըմ տեսնամ վըրդեղ ըմ հըսնում:

Էս օշափըս ասում ա. - Դե յըես էլ ըշխարքումս հինչքան ցմաքումը ապրող հեյվան կա, նահանց թաքավերն ըմ, կանչիմ կյան, հըրցընիմ, տեսնամ նահանք կըգյիդա՞ն, թա՞ չէ:

Կանչում ա ցմաքումը ապրող հինչ հեյվան կա, թա մեծ, թա կուճուր, կյամ ըն, հրցնում ա, ամմա սահանք գյուդում չըն, թա ըտա հի՞նչ պան ա:

Օշափը ըստեղաս էս մարթիս հրղե յա քցում, համ էլ ասում.

- Դե քյնա, մեր մեծ քերը էնա ըռաչիտ մին պլատում: Քյնա ընրա կոշտը, բալքյան նա գյիդա:

Ըստեղաս էլ էս մարթըս հըղե յա ըն՜ում:

Շատ ա քյընամ, խրեզյ ա քյընամ, տեսնում ա մին մեծ պալատ եկու առաչը:

Պատ ա տամ հըսարավը, դըրբըզան քըթանում, նի մընում, քյուն՜ում եր ին՜ում, ամման օթաղ նի միննում, տեսնում վեչ մին մարթ չի կա՜:

Մին խիլլա վար կենում ա, մին զորբա ըրոտուց, ղըռղըռոց ա լըսում: Տ՜ուս ա կյամ եշում, տեսնում մին օշափ ա կյամ: Էտ օշափը հենց բեջիթ ա կյամ, վար սաղ աշխարքըս ըրոտում ա, համ էլ թոզան երգյինքյը թուխպալ ար: Էս օշափը կյամ ա, կյամ, հըսնում պալատը, տեսնում ըստեղ մին մարթ, օզում ա վար էտ օխտը կլխանե օշափը էտ մարթեն կուլ տա, ամմա էս մարթըս կնզանը տուված յայլուխը տ՜ուս ա օնում, քեթը սըրփում, օշափը տեսնում ա, ճնանչում:

Ընրան պչպչորում ա, ղոնաղ անում, վերչումը հրցնում ա, թա պա. - Թո՞ոն ըս քյընամ, հի՞նչու վըս շոռ կյամ:

Էս մարթըս ասում ա, վար դե սըհենց պանու յըմ քյնամ, թաքավերը իմ

ըռաչխս սըհենց պա̀ն ա տըրալ, լհա̀ յըես էլ չըմ գյուդո̀ւմ, թա̀ թոռն ըմ քյընա̀մ, հըղեցը քուվորցտ պըտահալ ըմ նահանք էլ չըն գյուղո̀ւմ:

Օշափըն աստւմ ա. - Դե յըես էլ աշխարքումս հիշքան ճըրո̀ւմը ապրող հըյվննի կա, նահանց թաքավերն ըմ: Ծեն տամ, լոխճան հըրցնեմ, տեսնամ, թա̀ տհենց պա̀ն ընի, նահանք պտի գյիդա̀ն, ասեն: Կանչում ա: Հինչքան վար ճըրո̀ւմ ապրող հեյվան կա, կյամ ըն, լոխճան հըրցնում ա, վեչ մինը գյուդում չի:

Օշափը հրցնում ա, թա. - Լոխըտ ըք եկա՞լ, թա՞ չէ:

Ասում ըն.-Լոխ ընք եկալ, մնաց ալ ա մին կյեռթնուկ, էնա ընրա վըեննը կաղլեզյ, կըրացալ չի կյա:

Ասում ա. -Քյընացեքյ ընդրան էլ պիրաք ըստեղ:

Քյունումըն պիրում: Օխտը կըլխանե օշափը ըտրանա հրցնումա:

Նա ասում ա. - Ըստեղավ քյըեցաք, ծմակեն մեչ տեղը մին պա̀ց տեղ ա ըննա̀կան: Էն պաց տեղեն կոխկումը էնա մին տոն կա, էս տանը մին ղըրադումը՝ մին թուրուն: Կըքյընա̀ս, կըքյընա̀ս նի մըննես էն թուրունը, տրանա տենը տու վըս գյուղո̀ւմ :

Էս մարթը քյնա̀մ ա, քյնա̀մ, հըսնում ա էտ տոնը, թուրունը քյըթա̀նում, նի մըննում մաչը:

Ըստեղ վար մին խիլլա̀ կենում ա, տեսնում ա մին օշափ եկու նի մտավ էտ օթաղըտ, ստո̀լեն քըշտեն մին տաքրետկու յրա նստից, ասից. - Ա՛ Ջըհան, սուփրան քցե:

Հինչ ուտելի, խմելի կա, կյամա ստոլեն իրեսը ո̀ւրա̀ն սարքավը լըցնում:

Օտում ա, քուշտանում, մեհետ էլ ասում. - Ա՛ Ջըհան, սուփրան հրվաքե:- Հինչ վար մնաց ալ ար ստոլեն, ինքյը-ինքյը հըվաքվում ա, կորչում:

Վար մի քանի հետ տհենց տեսնում ա, մին օր էլ վար օշափը կյամ ա, օտում, քյունո̀ւմ, նըանա ետը, ինքյը քյունում ա էն տաքրետկեն նստում, ասում.

- Ա՛ Ջըհան, դե կոզի յըես քյըեզ տեսնում չըմ, եր կալ մին ստաքան արաղ տո̀ւ, մինն էլ յըես, մին կյենաց խմինք:

Ջըհանը եր ա օնում ստաքանը, համ էլ ասում.- Էս ա յըես հարո̀ւր տարե յա էս օշափես քշտեն ո̀ւրա̀ն սըհենց ծառայում ըմ, հա̀լա̀ նա մին դո̀նում էլ չի ասալ, թա էտ մին ստաքանտ էլ տու խըմե: Դե վար տո̀ւ մին դո̀նո̀ւմ ըս եկալ, ինձ համեցեքյ ըս անում, էլ ես ստեղ կենալ չը՛մ: Յըես քյըեզ նըհետ կկյամ, քյըեզ կծառայիմ:

Էս մարթըս համաձայնվում ա, Ջըհանեն յոր օնե, ամմա ասում ա. -Պա տինինքյ թա տո՞ւ ինձ նըհետ կյամ ըս, յըես հի՛նչ զյիդա՛մ, թա ինձ նըհետ ը՛ս, թա չէ, ախեր տո՞ւ ըրևում չըս:

Ջըհանը ծծաղում ա, համ էլ ասում.- Արխային կաց: Յըես առաչ կընզնիմ, տո՞ւ վէլ հետաս եկ, ինձանա փոնած:

Սահանք մին օր եր ըն կենում, հըղե ըյնո՞ւմ : Շատ ըն կյա՛մ, խըեզյ ըն կյա՛մ, կյա՛մ ըն տեսնում մին տեղ օխտը մարթ ամեն մինին բոյը կես մետր: Սահանց քշտեն էլ մին օրիշ մարթ բոյը չորսը- հենզյ մետր:

Սահանք հըրցնում ըն էս օխտը մարթին անա, թա.- Էտ խե՞ ծեր բոյը էտքան ա, ամմա էն մինինը՝ էնքան:

Էս օխտը մարթն ասում ըն.- Մունք հինչա ծնվալ ընք, էս մարթիս հետի յընք աշխադում: Տեսնում ըք էսչանք փա՛ղըս, լոխ մունք ընք կըտորում: Օրական մունք ամեզյը հարո՞ւր սաջեն փա՛ղ ընք կըտորում: Մըեզ էնքան թակալ ըն, պինըցրալ, մնաց ալ ընք սըհենց:

Էս մարթըս ասում ա. Ծըեզ ինձ նըհետ տանեմ, կկյաք:

Նահանք էլ ասում ըն.- Հա, կկյանք, թաքյի մըեզ կոշտ պահես:

Էս մարթն ասում ա.- Ա՛ Ջըհան, մին սուփրան քցե:

Սուփրան ամեն հինչավ լսնվում ա:

Ասում ա. - Դե կերեքյ:

Ոտում ըն քշտանում, ամեզյը ո՞ւրա՛նց կացենը յոր օնում, սահանց նըհետ հըղե ընո՞ւմ: Վըրդեղ սովածանում ըն, Ջրհանը տահանց հաց ա տամ:

Կյա՛մ ըն, կյա՛մ, տեսնում ըն մին տեղ մին մարթ, կարկաժ ա ծախում: Հըրցնում ըն, թա տեսնաս կըրկաժին մինը հի՞նչու վա:

Ծախողը ասում ա. -Մինը տասը հըզեր մանեթ ա:

Ասում ա. - Ա՛յ մարթ, մին կարկաժը հի՞նչ ա, վար էտ քան թանգյ ըս ծախում:

Կարկաժ ծախողն ասում ա.- Սա կարկաժ չի, սրա մեչը լիզյը զորք ա, ո՞ւրա՛ն թոփավը, թո՞ւվա՛նգյավը:

Ասում ա.- Հը՛, դե նշանց տո:

Նշանց ա տամ: Մին կուճուր ծակավ սկսում ըն մըրչեմնի տո՞ւս տառնալը, ետնան զորք ըն տա՛ռնո՞ւմ, փըլյաղավեր, թոփավ, թվա՛նգյավ: Մըհենզյ էլ հրաման ա տաս, կյամ ըն էլհա մըչեմնի տա՛ռնո՞ւմ, նի տա՛ռնո՞ւմ էն կըրկաժեն մեչը:

Էս մարթըս հախը տամ ա, էս կարկաժը ինքյ օնում:

Ինքյը, Ջըհանը, էն օխտը մարթը, կարկաժը յոր ըն օնում, կյամ:

Կյամ ըն ո̈ւրա̈նց շենան մուտանում: Խա̈բա̈րը կյամ ա, վար էս ըրո̈ւգյո̈ւնըս թաքավերը էտ մարթին նշանածը տանում ա:

Կյա̈մ ըն շենին ղըրաղեն հրաման տամ, կըրկաժեն մաչան ամեն տեսակ զորք ըն տո̈ւս կյամ, շենավը պատ ընցնում: Էն օխտը մարթըն էլ ամեգյը հարո̈ւրու տեղակ, էրկու հարո̈ւր սաջեն մին օրումը փադ ըն կտըրում, սաղ շենին չորս ա̈նգյո̈ւնը պատ քյցում: Զորքըն էլ ընդրա քըմակավը:

Պատ ըն քցում, պըրծնում, փա̈ղը նի կցնում: Խա̈բա̈րը հըսնում ա թաքավերին, վար սաղ շենին չըրսըպո̈ւլյո̈րը կրակ ըն տուվալ: Էս վախտըս էլ էս մարթը, մընգյ էլ Ջըհանը կյամ ըն շենը, ո̈ւրա̈նց տոն, տեսնում թաքավերը օզում ա, վար ո̈ւրա̈ն կընեգյը տանե:

Ասում ա. -Թաքավերն ապրած կենա, ասածըդ կըդարալ ըմ, ամմա տո̈ւ տըմացալ չըս, վար կյամ:

Ասում ա.- Բա հո̂ր ա էն պա̈նը, վար պիրալ ըս:

Էս ըսելին նըհետը, Ջըհանը մին էրկու չըմփալախ ա տամ, համ էլ ասում.-— Հատե էտա ըստեղ:

Ջըհանը թաքավերեն ըսպանում ա, ինքյը էտ մարթին կնեգյը տա̈ռնում: Ջըհանը հենց էտ մարթին թևավուր կնեգյն ար, քթա̈վ: Կնեգյը տեռնում ա, թաքուհի, մարթը՝ թաքավեր, էս օխտը մարթըս թաքավերեն ծառանին, կարկաժըն էլ պահում ըն հունցու զորք:

Ուստուծանա իրեք խընձո̈ր վեր ըննի. մինը՝ ինձ, մինը՝ քյըեզ, մինն էլ, վըրդեղ մին դո̈ւզ մարթ կա, ընդրան:

## 64.ՂԼԵԳՅՉԻՆ

Ընհում ա, չընում մին ղլեգյչի։ Էտ ղլեգյչին օրը ըշխադում ա, օրը՝ օտում։

Մին դհնում կործ չի ինհւմ , վեր անե։ Նըղացած փոքըը սկսում ա փչել, կրակեն յրա յա տնում մին պղնձե ջամ։ Փոքըըն էնքան փչում ա, վար ջամը սկսում ա կյըրմրելը։

Էտ վախտդ մին տղա կյալիս ա ասում. -Ուստա՛, էտ ջամը խե՞ յըս տհենց անում, մղափուն չի՛։

Ուստան ասում ա. - Ա՛ բալա, վեչ մին պեն չիկա, վեր զիրավ ինիմ։

Էտ տղան ասում ա. - Դե վեր տհենց ա, տու փոքստ փչի, յըես քյըեզ հետե պան ըմ ծըրլական։

Ղլեգյչուն էտ փոքըը փչիլ ա տամ, վար ջամը ըսկսում ա կյըրմըրելը, էտ տղան ասում ա. -Ուստա՛, տու աշկերտ հոփ կալ։

Ուստան աշկերը հոփ ա օնըմ, բհւրդան էդ տղան ջուբան մին պան ա հանում, ջամը քցում, ասում ա, - Դե ուստա, ջամտ վեր կալ։

Ուստան ջամը վեր ա օնում, առչցնում մին քանե մուննուտանը ետը տեսնում ա ջամը վըեսկե յա տեռալ։

Ուստան եր ա կենում էտ տղեն կլխավը շոռ տամ, կյամ կոխկեն նստում։

Էտ տղան ասում ա, -Ուստա՛, տար վըեսկե ջամը բզարումը խարջի, պեր օտենքյ, ետավ էլա վըեսկե ջամ կշինինքյ։

Ուստան տանում ա էտ վըեսկե ջամը բըզարումը խարջում, օտելի պաներ առնում, պիրում, օտում ըն։ Սկսում ըն էտ տղան նան- ուստան հւրհւր նհետ ապրելը։

Ամմա ուստեն մին մար ա ընհւմ։ Էտ մարը շատ փիս կնեգյ ա ընհւմ։

Էտ տղան ուստեն ասում ա. - Քու մար փիս կնեգյ ա, պեր տըղնես փոխինքյ։

Էտ տղան նան ուստան քյինում  ըն շենին դրաղեն մին տոն ճարում, մեչին ապրում, ըստեղ էլ աշխադում։ էտ տղան նան ղլեգյչին շատ հարուստոթուն ըն կյհւտհւմ։ Ղլեգյչին էտ տղենան թաքուն հւրան օղտերեն վըեսկավ պեռնում ա, փախչում։

Ուստան վար քյինհւմ ա, ինքյն էլ եր ա կենում հետան քյինհւմ  հըս- նում, ասում. -Ուստա, ինձ հի՞նչ կտաս, վար ասեմ վըեսկեն վըրդեղ ա յըմ պիրալ։

Ղլեգյչին ասում ա. - Ասի:

Էտ տղան ասում ա. - Դե վար տհենց ա տու ասի, տեսնամ խե՞յըս ինձանա փախչում:

Էտ վախտը ղլեգյչին ասում ա. - Քշերս ըրա̀զո̀ւմս տեսնում ըմ իմ մար հրիշտրակ տա̀ռած եկալ ա քու պկեղ չոքալ, ասում ա. « Խե՞ յըս իմ տղան ինձա̀նա̀ հանալ», ասում ի. «Ցըես փախչիմ, կյամ քյըեզ ազադիմ»: Դե ասի, տեսնամ վըեսկեն վըրդեղա յըս պիրալ:

Տղան ասում ա, - Դե մին պա̀ն խոսկ տոր, վար ասեմ:

Ուստան ասում ա. - էս օղտերը պեռնած քյըեզ կտամ, թա̀քյ ասիս վըեսկուն տեղը,- համ ասում ա, համ էլ տղին վըռազցնում, ասում, -դե ասե, շո̀ւտ ըրա:

Տղան ասում ա, -Քյըեզ մատաղ, մին պատառ սպասի ըսըլական ըմ:- Ասում ա.- Ուստա, վախըմ ըմ ասիմ, ամմա էտ պաները ինձ չիտաս:

Էտ վախտը ղլեգյչին հրիշտրակ ա տա̀ռնում, էտ տղեն պկեն չոքում, տղան վերչին շունչումը ասում ա. - Կացի ասիմ: Ասում ա, թա̀ հիշտե՞ղա-յա վըեսկին ստացալ:

Քշերեն փիս վախտն ա ինո̀ւմ, տղեն թողում ա ըստեղ, ինքյը քյինո̀ւմ:

Շատ ա քյինո̀ւմ , թա խրեգյ, էտ ղլեգյչուն ո̀ւրա̀ն կործն ա: Քյինա̀լիս հղըցումը տեսնում ա, մին քո̀չ: Էտ քո̀չը քյինա̀լիս վախտը մին ըրախա յա քո̀չան վեր ընգնում:

Էտ վախտը ուստան քյինո̀ւմ ա էտ ըրախան վեր օնում, ասում.- Լա̀ց մի ընիլ, ինձ նհետ եք քյինա̀նք:

Շատ ըն քյինա̀մ, թա̀ խրեգյ, հասնում ըն ընդեղ, վըդեղ վար վըեսկե կա: Տեսնում ըն վեսկեն մին պեցո̀ւր սարի կլխե յա, էնքան պեցիր ա, վար էդ վախտը ուստան կլո̀խը պցրցնում ա, վար դիբի պեցիր եշի, փափաղը կլխան վեր ա ընգնում, ետ ա տա̀ռնում փափախը յոր օնի, էտ վախտը ընդրա հետան տո̀ւս ա կյա̀լիս օխտը կլխանի մին դև:

Դևն ասում ա. - Տու հի՜նչ օնես ըստեղ, ասի տեսնամ, տու յի՜ը, վար իմ ախպոր տղան խեխտեցիր, քշերեն կեսումը, հղցումը թաղեցիր:

Օխտը կլխանե դևը սպանում ա ղլեգյչուն, համ էլ ասում. - Տու քյինա̀ իմ ախպոր կոշտը, թող նա կյա:

Ըտրանա ետը դևը քյինո̀ւմ  ա, ըտրա ախպոր տղան կյա̀լիս ա:

Էտ վախտը էտ տըղան մին օղտ ա մորթում, կաշին հանում, կարում,

մեշուկ շինո՞ւմ , էն խոխան մեջին տինո՞ւմ ըռեխը կապում:

Էն խոխեն ասում ա, - Ցըես ճո՞ւճո՞ւ յըմ ըննա՛կան, դուշերը կյլա՛կան ըն քյըեզ տանին էն քերծեն պտոկը: Վէր քյըեզ տանեն ընդեղ հասցնեն, թուղլական ըն քարեն պտկեն: Էն վախտը տու կկտկըտըցնես օղտին մորթեն, դուշերը քյըեզ կհանեն:

Միչև էն վախտը, վար խոխան քերծեն կլո՞խը չար պցըրա՛ցած, քերծեն չորս դո՞լին ճո՞ւր չիկար: Էդ տղան վար պցրացավ քերծեն պտոկը, ընդրա չորս դո՞լը ճո՞ւր տա՛ռավ:

Տրանից մին խրեգյ ետը տեսնում ա, վար էդ ճրերեն տեղը կըտրած կլխնեքյ, մարթիքյ, մեյիդնի յըն եր տա՛ռա՛ծ:

Վախտին էտ տղան էտ խուխեն ասել ա, վար էտ քերծին հասնե, ո՞ւրա՛ն կանչի:

Էտ վախտը էտ րախան ծեն ա տալիս էն տըղեն:

Էտ տըղան տական պաղասխանում ա, - Հե՛յ,- ասում ա,- ըտեղին վըեսկան վէր ածե:

Էտ խոխան էնքան վըեսկե յա վէր ածում, վար էտ տըղան մտածում ա, թա հո՞ւնց բիդի տանի: Վըեսկեն օղտերը պեռնում ա, էտ խո խին թողում սարին պտկեն, ինքյը հդե ինո՞ւմ, քյինո՞ւմ :

Էտ խոխան մին խրեգյ սպասում ա, ետավ ետ ա տա՛ռնում կանչում:

Տեսնում ա վեչ մին սա՛ս չի կյա՛լիս, շատ ա վախում, աշկերը հոփ ա օնում, ճո՞ւրը ընգնում, լըղընալավ տո՞ւս ա կյա՛լիս ցամաքը, տեսնում էտ տըղան կա վե՛չ: Շատ ա վախում, լա՛ց ա ինո՞ւմ, ծվում, ծկլթում, կլոխ յոր օնում մին դո՞լի յրա քյինում:

Շատ ա քյինում, թա՛ խրեգյ, մին էլ տեսնում ա մին շենի ղըրաղե մին իշեղ ա ըրևում: Էտ լո՞ւսին յրա քյինո՞ւմ  ա, տեսնում մին տոն: Ընդեղ ապրում ին թաքավերին օխտը ըխճըկերքը, էտ տանը տո՞ռնը թակում ա, տո՞ռնը պեց ըն անում:

Էտ տըղան ասում ա.-Կարելի՞ յա:

Ըխճկերքյը ասում ըն.-Կարելի յա, տու կինիս մեզ ախպեր:

Էտ ըխճըկերքյը էտ տղեն սիրում ըն ո՞ւրա՛նց հալալ ախպոր նման:

Էտ ըխճկերքյը սկսում ըն պատմելը, թա՛.- Մեր հա՛ր Հայաստանեն թաքավերն ա, էս սհաթես թաքարներեն նհետ կռեվ ա անում, ամման էրկու ամռանը մին ո՞ւրա՛ն զորքերը ըղարկում ա, մըեզ տեսնում ըն,

մըզանա խ̀աբ̀ար տանում հորս։ Ասում ըն հենց մհեկ վախտն ա, էս էրկու օրը կյլ̀ական ըն, մըեզ էլ տննական ըն հորս կոշտը։

Հենց էտ խուսելիս վախտը զորքերը կյ̀ալիս ըն, տռանը պըրնոտվում։ Զորքերան մին զինվեր կյ̀ալիս ա, ասում. - Ըխճկե՛րքյ, պղրստվեցէքյ, վար էքյ̀ուծ քյնն̀ական ընք ծեր հոր կոշտը։

Էտ վախտը մեծ ախճիգյըն ասում ա.-Լ̀ավ կինի, դե քյինի, հի՞նչ ը՛ս կաղնալ, իմ հ̀ար կլսի, քյըեզ կսպանե։

Էտ վախտը էտ զինվերը տ̀ուս չի կյալիս, ասում ա. -Ցըես քյըեզ մատաղ, թողեր ծեր կուճուր ըխճկանը մոտ մնամ, մեռնում ըմ ընդրան հետե։

Էտ մեծ քերը շատ ա նղանում, ̀ուշ̀ունց ա տամ, ասում.-Կորի, շոն, շան տղա, քու ռեխտ հի՞նչ ա, վար թաքավերեն ըխճկանը նհետ զր̀ուց անես, էդ ասել ըս, էլ ասես վե՛չ։

Ամմա էտ տղան շատ ա ղաչանք անում, վեր էն կուճուր ըխճըկանը նհետ մնա։ Էտ վախտը, էտ կուճուր ախճիգյը տանան տ̀ուս ա կյ̀ալիս, տեսնում էտ տղան ղաչանք անում։ Էտ կուճուր ըխճկանը մթկումն էլ ա ին̀ում, վեր էտ տղեն նհետ ման կյա։ Էտ կուճուր ախճիգյը էդ վախտը քյին̀ում ա էտ տղեն վզավը փըթաթվում, պըչպըչորում։ Ըտրա մեծ քերը ռազի յա կըենում, վեր ̀ուր̀ուր քըշտի մնան։

Էտ վախտը մեծ քերը տրանց տանում ա երեսունըիննինջի օթախը, ասում. -Ըտեղ մնացէքյ։

Ըտրանք ըտեղ են մնում, ամմա մնացած ըխճկերքյը քյին̀ում ըն ̀ուր̀անց ախպորը կոշտը, զր̀ուց անում ̀ուր̀անց անցյալին մասին։

Էտ կուճուր ախճիգյը նան զինվերը վեր քնած ըն ըն̀ում, քշեր վախտը էտ տղան եր ա կենում, ասում.- Ախճի, հի՞նչ ըս անում էս վախտ իմ քշտես, տու թաքավերի ախճիգյ, յըես մին զինվեր, վեր քու հ̀ար գյիղ̀ա, հի՞նչ կասե։

Էտ տղան տկլոր եր ա կենում, փախչում, քյին̀ամ թաքավերեն կոշտը, ասում.- Թաքավերը ապրած կենա, էս քշեր լոխ զորքերը ըխճըկորցըտ նհետ ապրալ ըն։ Ամմա յըես քու հավադարիմ զինվեր ըտ ինիլ̀ավ, քու ըխճկորցըտ անա խաբար ըմ պիրել։ Ամմա մին օց եկավ վետներս ընզավ, վար ասիմ վեչ, ամմա լ̀ավ չի, վար ասիմ վեչ, մըհեկ տու յըս գյիդում, հունց օգնում ըս ըրա, էտ քու կործըտ ա։

Ըռավոտը զորքերը եր ըն կենում ըխճկորանցը աuում. - Դե սարքվե-ցեքյ, քյինա̈նք ծեր հոր կոշտը:

Էտ ըխճկերքյը սարքվում ըն, պալատին աչառնին տամ ըն ո̈ւրա̈նց ախպորը, աuում.- Էս պալատներեն օթաղնին լոխ կարող ըս քյինա̈ս, քառասունինջի օթաղանը կըման: Ամմա քառասուն օրանը ետը կյլա̈կան ընք:

Էտ տղան մնում ա ըդտեղ, էտ պալատ են լոխ օթախնին ա նի մննըմ, օզըմ ա քյինի քառասունինջի օթախը նի մըննի... Ախեր աuում ըն ղդըղա յա՛: Մին խոսքավ էտ ախպերը քյինո̈ւմ ա քառասունինջի օթախը պա̈ց անում, տեսնում մին օթախ մաչին մին փոս: Տա նի յա մըննըմ փոսին մաչը, ընդղավ քյինո̈ւմ , տեսնում առաչին մին բախչա յա պա̈ց ինո̈ւմ, մաչին էրկու տեղ ճիրի հովուզ: Էտ տըղան ըդտեղ նստում ա քնենքյ անըմ, թա̈ էս հի՞նչ լա̈վ բախչա յա: Էտ վախտը մին էլ ա տեսնում էրկու նախշուն դուշ թռած եկեն բաղեն ծառերեն յրա նըստեցեն: Էտ դուշերը էտ տըղին տեսնում չին, մուտանըմ ըն հովուզեն , շո̈րերը հանում, սկսում լըղանալը: Էտ վախտը տրանք ըխճկերքյ ըն տա̈ռնում:

Ըխճկերցը մինը մինին աuում ա. - Ծո̈ւրո̈ւրնետ հենց տեղ տիրիքյ, վար կյան վեչ տանին, մըզ էլ տկլոր թողին:

Տրանք էտ տղեն տեսնում չըն, սկսում ըն արխային լղանալը: Ամմա էտ տղեն տուր ա կյամ կուճուր ախճիգյը, էտ վախտը մեծ ախչիգյը եր ա կենում ո̈ւրա̈ն շո̈րերը կյենում, թռչում, քյինո̈ւմ: Կուճուր ախճիգյը օզում ա, թա̈ շո̈րերը կյենա, տեսնում ա շո̈րերը կա վեչ: Էտ տղան քյինում ա պալատը, հիվանդանում, թեքյ ընգնըմ:

Ըխճկերքը թաքավերեն քըշտան կյամ ըն, տեսնըմ ո̈ւրա̈նց ախպերը հիվանդ:

Աuում ըն. - Ախպեր, հի՞նչ ա հիվանդըթունըտ:

Ախպերն աuում չի:

Էտ վախտը ընդրանք աuում ըն.- Մունք զյո̈ւղո̈ւմ ընք հի՞նչ ա քու հիվանդըթունըտ, օզում ը՞ս աuինք:- Աuում ըն. - Տու քյեցալ ըս քառա-սունինջի օթաղը, տրա հետե էլ հիվանդացալ ըս:

Էտ վախտը խըրեզյ ա մնամ, թա̈ ախպերը մեռնե: Օխտը քվերքը օզում ըն, թա̈ ո̈ւրա̈նց սպանին:

Էտ վախտը ախպերը աuում ա. -Քյինա̈ցի քառասունինջի օթախումը

էրկու ախճիզյ տեսի, տրանցանա էտ կուձուր ըխճկանը սիրում ըմ:

Էտ վախտը քվերտինքը քյինո̀ւմ ըն էտ կուձուր ըխճկանը տեսնալի: Տեսնում ըն հովուզին մեչին էտ ախչիզյը լղանում ա:

Տրանց վեր տեսնում ա, ասում ա.- Եկալ ըմ լղանամ, ամմա շո̀րերըս տարալ ըն: Գյո̀ւղո̀ւմ չըմ հո՞ւ վա տարալ, տրա հետե էլ կարում չըմ քյինա̀մ:

Էտ ըխճկերքյը ասում ըն.- Եք քյինա̀նք մեր տոնը:

Տրանք պո̀ւրո̀ւմ ըն ո̀ւրա̀նց տոնը, փսակում ո̀ւրա̀նց ախպորը նհետ, ո̀ւրա̀նք էլ քոչում ո̀ւրա̀նց երգյիրը:

Ըտրանք հասեն ո̀ւրա̀նց մուրազեն, մունք էլ հասնինք մըեր մուրազեն:

65.ԿԱԽԱՐԹԸ

Մին հիվանդ մարթ, մին խուրջին օսուքը քըցած կյամ ա մին ծխպ՞ուրի քըշտե կաղնում: Էտ թծմ՞ուզ -թծքյ՞ուզ ծխպ՞ուրը, էտ զիլզիլծն ճ՞ուրը վեր տեսնում ա, կուժավ ճ՞ուր տանող կնանոցն ասում ա, - Ա կնանեքյ, մին պատառ ճ՞ուր տվաք, խմիմ:

Կնանեքյն ասում ըն. - Քյ՞ուլվիս տո՜ւ, քյինծ կոըե:

Մին օրիշ կընեգյ ասում ա. Ախճի, խե՜ ճ՞ուր չըք տամ:

Պիրում ա, կուժեն դըբետավը ճ՞ուր տամ էտ մարթեն, համ էլ ասում. - Ապեր, մեր տոնը հեն ա երի ընգյուննեն , կըկյաս մեր տոնը:

Էտ մարթը ասում ա.- Խե՞ չըմ կյա՜լ, կըկյամ:

Վեր մթնում ա, քյինծմ ա ընդահանց տոնը: Մարթն ասում ա. - Ա՜ կնեգյ, էս հի՞նչ մարթ ա:

Կնեգյն ասում ա.- Մարթ ա իլի , ղոնաղ ա՜:

Մարթն ասում ա. - Դե հաց շինի, օտենքյ:

Ղոնաղն ասում ա.- Յըես մինակ խուխե մես ըմ օտում:

Ըտահանց էլ մինակ մին տղա խոխա յա ին՞ում, պ՞ուր՞ում ըն խոխան մորթում, ՞ուփ՞ում, տ՞ուն՞ում ղունաղեն ըռաշկեն:

Քշրիանը լսում ըն մին խուխե սծս:

Կնեգյն ասում ա. - Ա մարթ, էն հի՞նչ սծս ա:

Մարթն ասում ա.-Դե հի՞նչ գյիղծմ, մին խոխա ունինքյ, էն էլ մուրթեցենքյ:

Եր ըն կենում տեսնում ՞ուրծնց խոխան ՞ուր՞ուրուցումը: Էտ ղոնաղըն էլ կա վեչ:

Նոր գյ՞ուղ՞ում ըն, վեր էտ կախարթ ա իլծլ: Խոխին վըսկոներան նոր խոխա յա շինալ, ինքյը քյացծլ:

Կախարթը ըտաղատ քյինծմ ա, տեսնում մին մարթ ցծքյ ա պ՞ուր՞ում:

Ասում ա. - Ա՜ մարթ, խե՞ կարում չըս ապրես:

Էտ մարթն ասում ա. - Դե հի՞նչ անիմ, քյծսիբ ըմ:

Էտ մարթը էտ ցծքյին տեղը հաղուղի բաղ ա շինում, համ էլ ասում.-Դե, բիջարի, կեր:

Մին էլ քյինում ա, տեսնում մին մարթ փծղը մեշկին քյինծմ ա, ծմակին մեչավը, համ էլ ասում ա, -Ուխա՜յ, հի՜նչ լծվ խընձ՞ուրի ծառեր ըն է՜:

Էտ մարթը ծմակը խընձ՞ուրի ծառեր ա շինում, համ էլ ասում, - Դե,

քյինձ բիջձրի, ապրե։

Ըտըղատ էլ քյինձմ ա, տեսնում մին մարթ քարը շլձկին քյինո՛ւմ ա, համ էլ ասում, - Խուվա՛, հի՛նչ լձվ վեխճըրնի յըն է՛։

Էտ մարթը սաղ քարերը վեխճըրնի յա շինում, ասում, - Դե տու էլ ըտրանավ ապրե։

Ո՛ւտո՛ւնց անա վեչ մինը գյո՛ւղո՛ւմ չի, վեր էտ մարթը կախարթ ա։ Էտ մարթը քյինձմ ա մին տարի կենում, ետնան ասում. «Քյինձմ, տեսնամ ըտահանք հի՛նչ պձնի յըն»։

Կյամ ա տեսնում ըտահանցա էն վըչխըրատարը մին վեչխար մորթած քյեփ ա անում։ Էտ մարթն ասում ա, - Մին պատառ ինձ տվաք։

Ասում ըն, - Խե՛, մըզնիետ վեչխար ըս ըշխադա՛լ։

- Լձվա, լըհձ մին թիքյձ տվաք։

Էլիա տամ չըն։ Էտ մարթը ձեռքերը տո՛ւրո՛ւր ա տամ, լոխ վեչխարնին քարեր ըն տառնում։ Ըտաղատ կյամ ա խնձո՛րեն բաղը։ Տեսնում ա խնձո՛րը քաղում ըն։

Ասում ա, - Մին խնձո՛ր տվաք։

Ասում ըն. - Կլխներաս ըռադ իլ, կորե։

Էտ մարթը ձեռքերը տո՛ւրո՛ւր ա տամ, բաղը տձռնում ա էլիա էն հձմձն ծմակը։

Ըտաղատ կյամ ա հաղողին բաղը։

Ասում ա. - Մին ճիթ հաղուղ տվաք։

Նո՛քյձրն ասում ա, - Թող քյինձմ տղեն անա հրցնիմ։

Քյինձմ ա, կյամ, ասում,- Տամ չի, ասալ ա, քյինձ սրտեն թխե, ասե՛ քյինձ, կորե։

Էտ մարթը ծեռքերը տո՛ւրո՛ւր ա տամ, էտ բաղն էլ ա տառնում ծմակ։

Մին էլ քյինամ ա, էն խոխան վեր կերալ ա, ընահանց տոնը։ Ասում ա, վեր ինքը ընահանց խոխան օտողն ա։

Ասում ըն. - Բա հո՛ւնց անինքյ, մեր կլխեն մեր աշկեն յրան ըս եկալ, պարով ըս եկալ, պեր վըրեննիտ տակը կանանչ-կյձրմո՛ւր թիլ քըցինք։

Էտ մարթն ասըմ ա. - Վեր ըտհենց ա, ամման քըշեր 400 մանեթ ա կյալու ծեր տոնը, ծեր պերցին տակը. լձվ տոն շինեցաք, լձվ ապրեցաք։

66.ԱՇԿԸ ԾԱԿ ՄԱՐԹԸ

Ըլա՜լ ա, չիլա՜լ մին մարթ: Էտ մարթեն իլա՜լ ա մին ախճիգյ, մընգյ էլ մին տղա:Էտ ախճիգյը նան տղան մըծանում ըն, ո՜ւրա՜նց հսակեն հսնում: Տահանց հա՜րը ըխճկանն էլ ա փսակում, տղեն էլ: Տահանք տնըվերվում ըն: Էրկունեն էլ շատ խոխա յա ընում, էրկունն էլ բախտավէր ըն ընում: Ո՜ւրա՜նց գյանքում լա՜վ քեր-ըխպրոթուն ըն անում: Քերը առանց ախպորը, ախպերն էլ առանց քվորը թքյա՜ չըն տընում պըրըններումը: Մին օր վար մինը մինին տեսնում չար, էտ օրը մթնում չար:

Ղորթ ա տահանք էնչանք սերավ ին, ամմա ախպորը մին քանի խըսյթնեն քվորը տուր չար կյամ: Տա նա յար, վար ախպերը շատ ո՜ւրո՜ւշո՜ւ խոսկավ ընո՜ղար, կանոխ հվատող ար, ըստուծապաշտ ար, համ էլ քըշկերեն հվատում ար: Տրա հետե էլ քերը միշտ նասյաթ ար տամ ախպորը, վար. - Ա՛յ ախպեր ջան, դո՜ւզ ա էնչաք մծացալ ըս, ամմա հա՜լա՜ խելքտ հետատ հըսալ չի, տրա դա՜րդա՜ն էլ գյանքումտ շատ վախտ ըրածըտ ճո՜ւրն ա տանում, ա՜մա՜գյտ կյետն ա տանըմ, տու էլ շատ կփուշմանես, ամմա եռե կինի, ընցածը էլ կարալ չյըս ետ պիրիս: Տրա հետե, եք քու էտ կանուխ հվատալտ, ըրա՜զին հվատալտ թա՜րգյ ըրա:

Ախպերը քվորը վըզա՜վ ա օնում, վար. - Լա՜վըս ասում, ա քեր, իմ էս կարճ խելքըս էլա տհենց ասում, ամմա անղար անիմ է՛, էտ աթաղան, բաբաղան մնացած խսյաթնեն, կարում չըմ վիրըցնեմ, յըես էլ ըմ գյուղո՜ւմ, վար էտ հվատալը իմ կլո՜խըս մին քյա՜լա՜գյա պիրըլա՜կան, ամմա վար հվատում չըմ, գյուղո՜ւմ ըմ, թա՜ էն սհաթը տըրքվըլական ըմ, ասում ըմ վար կանոխ չըմեռնեմ, մին քանի տարե էվել ապրիմ, ասումըմ ըրզներեն հվատամ, վար կանուխ չի տրաքվիմ:

Էրգյան ըպրելի հույսավ էտ մարթը միշտ հվատում ար ըրա՜զներեն, ո՜ւրա՜ն գյանքըմ էլ դաստ ար անում կըղարե: Մին դո՜նում ըրազի տեսնում ա, վար ո՜ւրան քաշկերը դինջոթուն չըն տամ, ըստեղ- ընդեղ սղիբում ըն , վար քյնա՜ էս հինշ ծրա՜ն տանը պատը քանդի, էն ա մին վըեսկու պուլիգյ կա, եր կալ: Էտ մարթը քյնամ ա ըրա՜ զումը տեսած ծրան տանը պատը քանդում, վըեսկու պուլիգյ չի քթենում: Սաղ օրը չըչարվում ա, օրը մթնցընում, տարած հացը կլխցնում, շո՜րերը ճըրղոտում, քըթնունք թափում, ո՜ւրո՜ւզյո՜ւնը նղացած տա՜րտա՜կ քյնամ տոն: Ամմա ո՜ւրա՜ն էտ չըչըրմունքեն անա տանը վեշ մին պա՜ն էլա ասում չար: Մին քանե օր վեչ

մին տեղավ էլա քյնա̈մ չար, ո̈ւրթո̈ւմն ար օտում, վար էլ ըրա̈զո̈ւ, մրա̈զո̈ւ հիվուլական չի: Ամմա թա̈զա̈ մին ա̈րա̈զ ար տեսնում, վրդեղ ո̈ւրա̈ն բիյաբուռ ըն անում, թա̈.- Հի՞նչ անխելք մարթ ըս, մունք քյըեզ վը՞րդեղ ընք նշանց տվալ, տու էլ վըրդեղ ըս քյնա̈ցա̈լ քա̈նդալ: Ցըես ասալ ըմ, վար աչի պատը քանդիս, տու քյնացալ ըս ծախինը քա̈նդա̈լ: Քյնա աչի պատը քանդի, տես վեսկավ լիզյը պուլիզյը տո̈ւս ա կյամ, թա̈ չէ:

Էտ մարթը ո̈ւրա̈ն նախատում ա, ասում ա,- Ա՛ կարկաժ, խոսքը վար ասեն է՛, մինչև վերշը կսկանան, տու լիա̈ ըսկացալ ըս պա՛տ, զո՛ւ ըրալ, քյնա̈ցա̈լ, թա̈ վե՞ր պատ ա, թա̈ վե՞ր պտատակ, տրանա խա̈բա̈ր չըս իլա̈լ, քյընա̈ցա̈լ ըս օրերավ չըրչարվալ, օժտ կուրցըրալ, լանթերըտ ճըղոտալ, տա̈րտա̈կ եկալ տոն, էտ հա̈լա̈ քյըեզ խըրեզյ ա, էլ տու ինիս, տու, հա̈լա̈ մին պա̈նին տակ նան կյլո̈խը զյիդա̈լու, կյլո̈խտ քամուն չի տաս:

Էտ մարթը էլիա եր ա կենում շա̈լա̈քո̈ւլան հըվաքում, հղե ինո̈ւմ բիդի ո̈ւրա̈ն տնեըը: Քյնամ ա հա̈մին ընդեղ, վրդեղ մին քանի օր առաչ քնդըքանդի յա ըրալ պատերը: Էս դո̈նում էնքան ուրխացած, վար ասես լիա̈ վըեսկուն պուլիզյնեն ճոխտ-ճոխտ ա տո̈ւս կյլա̈կան, էլ վեչ ալո̈ւն ա եշում, վեչ վա̈լուն, կլո̈խն ա պատեն նի կյամ, վեջա̈ն չի՛, ծեռքն ա քարեն նի կյամ, վեջա̈ն չի, էնքան, չա̈շմիշ ըլա̈ծ, թա̈յդի, պատը քանդում ա, տակը պա̈ց անում, պատեն տակը վար փչանում ա, պատը դռռալի վեր ա կյամ: Մին զեռ քար ըննո̈ւմ ա էտ մարթին վըետանը, վըեննը փշրում: Էտ մարթը մնում ա մըլըլըմիշ կյա̈լիս, կարում չի, թա̈ տեղան տո̈ւրո̈ւր կյա: Մին քանի օր սոված, ծարավ մնում ա էտ պատեն տա կեն վեր ընգած: Ո̈ւրա̈նց տնեցեքյ էլ հետան շոռ ըն կյամ, վերչը կյամ ըն էտ պատին տակեն տրան քթա̈նում, տեսնում վըեննը փշրած, ռա̈նգյը ռուշը փոխած, սա̈սը ծվա̈նզյած: Տրան իրեսեն խուսելավ, թո̈իմաթ տալավ, տանում ըն ո̈ւրա̈նց տոն: Վըետանը դա̈րդա̈ն մին քանե ամես կարում չի, թա̈ տեղան տո̈ւրո̈ւր կյա:

Էտ մարթեն վըեննը, վար լվանումա, էլիա սկսում ա ըստեղ-ընդեղ քյնալը: Էտ խսյաթը, վերչանք ասում ա բաթմիշ անե, ամմա կարում չի՛: Ինքյն էլ վեչ մին պա̈նի պկսոթուն չար քաշում, վերերը դա̈նա̈վ ար լիզյը, տոնը հյվանավ ար լիզյը, ամմա էլիա էտ մարթին աշկը ո̈ւրա̈ն իլա̈ծավը քուշտանում չար, ասում ար հունց օզըմ ա ինի՛, օրիշ տեղա մին պա̈ն պիրի: Վար վեսկուն անումը ըսկանում ար, վենը-ձեռքը տափան կտրում ար:

Էտ մարթը մին քշեր ըրազի տեսնում ա, վար մարթիք ասում ըն, - Էս հի՞նչ ծմակումը, էս հինչ ծառէն տակէն էն ա վըեսկէ կա, քյնա՛ տո՛ւս կալ, պեր լա՛վ ապրէ:

Էտ մարթը մին օզում ա քյինա, մին էլ սերտը տամ չի:

Քյնա՛մ ա ո՛ւրա՛ն քվորը մեծ տղեն նհետ նաղըլ անում, - Ա՛ քըվոր տըղա ըրա՛զի իստի պա՛ն ըմ տեսալ, եք քյնա՛նք հանինք:- Հա՛լա՛ էտ տըղան հվատում չի, ամմա վըեսկուն վըետը տրան էլ ա տո՛ւրո՛ւր տամ:

Ուրկոքան եր ըն կենում, հա՛ջա՛թ-մա՛ջա՛թ յոր օնում ու քյնում բիդի ծմակը: Հըղըցեն կեսումը էտ տղեն մետը հի՞նչ ա ընգնըմ, դայուն թողում ա մինա՛կ, ինքյը ետ տա՛ռնում:

Էտ մարթը մըթկումն ասում ա. «Հազըր քվորս տղան ետ ա տեռալ, մին յըես կանուխ քյնա՛մ տեսնամ»:

Շատ ա քյնա՛մ, խրեզյ ա քյնա՛մ, քյնա՛մ ա մննում ծմակեն խոր-խոր տեղերը, լոխ ո՛ ո՛ւրո՛ւր նման ծառեր, գյուղո՛ւմ չի, թա՛ վեր ծառեն հետի յըն ասալ:

Շատ տես ու տեն խըլըշկոտում ա, ամմա խելքը ճո՛ւր չի խմում, տա ասում ա. «Հա՛լբա՛թ ո՛ւրա՛ն տեսած ծառըն ըստեղ չի»:

Տա էլիա հըղէ յա ընգնըմ, ծմակեն մաչավը, քյնում ա հսնում մին խոր ծո՛ր, մտնում ա էտ ծո՛րը վար քյնա, ըրազումը տեսած ծառը քյթա՛նա՛: Մին էլ ա տեսնում էն յա՛լա՛ն մին պա՛ն բիդի ո՛ւրա՛ն թո՛ւլ ինիլա՛վ կյամ ա: Տա կլո՛խ ա ըննում, վար տա արչ ա կյամ, օրիշ պա՛ն չի ինիլ, սկսում ա ծո՛րավը փախչիլ:

Մընչանք փախչում ա, վար հսնում ա ընդեղ, վըղեղ քվորը տղան ետ ա տա՛ռա՛լ, վըեններըը թո՛ւլա՛ցած, ծեռքերը բուշացած, հա՛լը կտրած նստում ա ըտեղ, աշկը քըցըմ հըղեն նըեր վար էս ա քվորը տղան կկյա: Քվորը տղան էլ կյամ չի:

Քշերը յրա յա հսնում, էտ մարթին վննըծեռքը հա՛լա՛ թո՛ւլ ա, կարում չի տեղան տո՛ւրո՛ւր կյա, մնամ ա տեղ պըըանված: Քշերվա էն տա՛ռնը վախտը, էտ մարթեն ընջուկավը սա՛ս ա ընգյնո՛ւմ : Հա՛լա՛ տա մին վախում ա, ետնան տեսնալավ, վար մրթասա՛ս ա, մխրէ ըրխյնանում ա: Ինքյն էլ ա սաս-սո՛ւս անում: Էտ մարթիքյը վար կյամ ըն մուտանում, տահանց ծիյանը մնում ըն հղըցումը վըենը կացած, վերքան չըրչարվում ըն էտ մարթիքըլը, ծիանքը տեղան տո՛ւրո՛ւր չըն կյամ:

Տահանք ասում ըն, վար ծին խելունք ապրանք ա, հա̀լբա̀թ մին պան կա, վար քյնում չըն: Տհանցան մին քանենը, վեր ըն կյամ ծիանցան, ըտեղեքյ շոռ կյամ: Վերչը քյնամ ըն էտ մարթին քթա̀նըմ:

Տրան փռնում, կպոտում, տուրութակ ընելավ պիրո̀ւմ, հա̀լա̀ օզըմ ըն, թա սպանին, ասում ըն.- Տու հինչ իլա̀թ-միլա̀թ ըս, վար քշերվա էս վախտըս ըստեղ ըս:

Հա̀լբա̀թ տո̀ւ փիս մարթ ըս, ըստեղ կյողլ ըս կացալ, վար մըեզ մին ղարաթ անիս:

Էտ մարթը հինշքան ղանչանք ա անում, վար հվտցնե, վար հղըցու յրա մարթ ա, օզում ա քշերը ըտեղ ընցցնե, էքյսը հղե ինի: Էտ մարթիքյ տըրան հվատում ըն, սպանում չըն: Լո̀ւսանում ա, էտ մարթիքյ քյնամ ըն ո̀ւրա̀նց կործեն, նա էլ մնում ա ըտեղ:

Էքյսը քվորը տղան կյամ ա: Էտ մարթը դինջացած ա ընո̀ւմ: Էրկու հոքավ եր ըն կենում, հղե ընգնըմ: Շատ ըն քյնա̀մ, խրեգյ ըն քյնա̀մ, քյնա̀մ ըն հսնում ծմակեն էն ղալին տըեղը: Ըսկսում ըն աշկ ածել, թա̀ էն վե՞ր ծառը կինի, վար ըրազի տեսալ ա:

Տա̀հա̀նց պտահում ա մին ախպո̀ւր, ընդրա քշտեն մին մեծ հճարե յա ընում: Տահանք սկսում ըն հճարեն տակը քանդիլը: Շատ ըն քանդում, խրեգյ ըն քանդում, քնդելիս փոսան մին չեչուտ քար ա տո̀ւս կյամ: Էտ երկու մարթը մին հանգավ էտ քարը պուկում ըն: Մինչև պուկիլը էտ մարթիքյ էն մթկեն ին, վար քարը պուկեն, տական վըեսկե յա տո̀ւս կյլա̀կան: Ամմա վար քարը պուկում ըն, տեսնում ըն քարեն տակը վերթնավ լիգյը: Էտ վերթները ընգնում ըն էտ մարթկանցը ջանավը, էտ մարթիքը տո̀ւս ըն տա̀ռնում, ըսկսում փախչիլը, կոզի փախչում ըն, ամմա էտ վըրթներան կարում չըն պրծնին, վերթները տահանց ծառն ա եր հանում: Քյնա̀մ ըն տահանք շո̀ւրո̀ւրնեն հանում, թափ տամ, վերթները թիմզցնում, շո̀ւրո̀ւրնեն կյենում ըն, թուշ քյընում տոն:

Տանը տահանց մին լա̀վ թուքու-թո̀հմա̀թ ըն տամ. - Արա, ա շան տղեքյ, խե՛ ծեր տներումը վեր չըք տա̀ռնում, ծեր կործն անեք, ծեր կործը թողած քյնա̀մ ըք ստեղ-ընդեղ տանջվում, տա̀րտա̀կ, ճինջի-պոմբի ընելավ կյամ: Ետ վար տուր էք, մին դո̀նըմ էլ իսկի ճինջի-պոմբի ընելավ էլ չըք կյլա̀կան, քյննա̀կան ըք վըեննավ, ծեռքավ տար մին կրակու մեչի: Խըլքնետ կլխներետ ժաժ ըրեք, ծեր տներումը վեր տա̀ռա̀ք, ծեր կործն ըրեք, ծեր ըլա̀ծչլա̀ծը բոլ ա ծըեզ:

Էտ մարթը ասըմ ա. - Հա, լա̈վըս ասըմ:

Ամմա վար ա̈րա̈զ ար տեսնում, ջանը էլիա մըմող ար ըննո̈ւմ:

Մեհետ էլ տեսնում ա, վար ո̈ւրա̈ն թքութո̈իմա̈թ ըն տամ, վար. - Ա՛ կյիժ մարթ, տու խե ասածն սկանում չը՛ս, քու կլխատ տո̈ւս պա̈ներ ըս անո՛ւմ, տրա դա̈րդա̈ն էլ կործտ աջող չի ընցնում:

Էտ մարթը մնում ա ըրմաըած: Ասում ա. - Էս հի՛նչ ա, քոն իլա̈ծ վըխտես տըեսած արազը կդարըմ ըմ, վէչ մին տեղի չըմ հսնում, հա̈լա̈ տրանա ետն էլ իրեսս էնքան թըքըմոր ա կյամ, յըես հո՛ւնց անիմ, վար էլ իրեսըս թըքըմոր չի կյա՛:

Մեհետ էլ վար արազ տեսնամ, դա̈ստի եր չըմ կըննական, մինչև վերչը կըննական ըմ, տեսնամ հի՛նչ ա տա̈ռնում, նոր ընդրա հետան քյնա̈մ, ըրազեն տեսածը կդարիմ, տեսնամ էս դո̈նումը հի՛նչա տեռնում:

Մեհետ էլ էտ մարթը ըրազի տեսնում ա, վար ո̈ւրա̈ն բիշտի- բիշտի յըն անում, վար. - Ա՛ մարթ, խե՛ քու ըպրելի տո̈ռնտ գյուղո̈ւմ չը՞ս, քյըեզ հինչու ասում ըն, տու է՛ն ըրա, վէչ թա̈ ասածը թողե, քյինա̈ կլխատ տո̈ւս պաներ ըրա, մունք քյըեզ ըսեցինքյ, վար, էս հինչ ծմակեն, էս հինչ ծառնեն տակեն, էս հինչ տեղը, մին վըեսկու կարաս կա, տու քյնա̈մ ըս էտ նշանը տված տեղը թողում, էն մին ընգյո̈ւնա̈ն քանդըմ, տրա դա̈րդա̈ն էլ վըեսկեն տեղը վերթն ա տո̈ւս կյամ, ջանավտ ընցնում:

Ետ մարթը ճելլի եր ա կենում, քյընամ քվորը տղեն կոշտը, թա. - Արա՛, պա ասի՛լ չը՛ս, թա̈ մունք սխալ ընք քանդալ, էս քշեր ըրազում ինձ ըսեցեն, վար պիտի էն ծառնեն ծա̈խի ա̈նգյո̈ւնը քանդի, վեր վըեսկե տո̈ւս կյա, ամմա մունք քյնացալ ընք աչի անգյո̈ւնը քանդալ, տրա դարդան էլ վըեսկու տեղակ վերթն ա տո̈ւս եկալ:

Քվորը տղան ասում ա. - Քյնա̈ կործիտ, կլխատ ծեռք ը՛ս եր կա̈լա̈լ, թորը քյնամ ըս քյնա, յըես ջան չօնիմ բաղա տալի, իմ ըլա̈ծ-չիլա̈ծըս ինձ բոլ ա, փորս չի սոված, վըեննս չի պա̈ց, հի՞նչ օնիմ ըստեղ-ընդեղ չըրչըրվիլիս, թա̈ հա՛յ մին տեղ վըեսկու կարաս քթա̈նա̈մ, հա՛յ պուլիզյ քթա̈նամ, յըես կյամ չըմ, տու թորը քյնա̈մ ըս քյընա̈:

Ամմա էտ մարթը հմոզում ա էտ տղեն, վար. - Ա՛ տնաքանդ, միչև միհենգյի ա̈րա̈ըը կեսատ ըմ ըլա̈լ սկնալիս, ամմա միհենգյ մինչև վերչն ըմ ըսկտցալ, միհենգյ դո̈ւզ ա ըննա̈կան, հենց ա իսկի ա̈րա̈զ չինի, լհա̈ ասես ըըըկյո̈ձի յա, լհա̈ ասես քըշտան ըմ կյա՛մ: Էս դո̈նումըն էլ վար սոտ ինի, էլ

վէչ յըես, վէչ տու, ինձ նհետ էլ վէչ կխոսիս, վէչ պարյօր կտաս, վէչ էլ մըթատեղ կըտինիս:

Էն տղան ասում ա. - Ա հանց ա էս դո՜նո՜ւմը ղորթ ինի՛, մին քյինա՛մ տեսնամ վար ղորթ ինի, նրա քյա՛լլա՛ն թափ ըմ տլական, տա՛րտա՛կ թողիմ, լօխ յըես յոր օնիմ, վար սոտ ինի, տրան մին լա՛վ ծեռքըս ըմ ուննական, շան նհետ կապիմ:

Էտ մարթ նան տղան եր ըն կենում հացավ քսակնեն լցնում, քսակնեն յոր օնում, վար վրեսկեն ածին մաչը, քյնա՛մ: Քյնա՛մ ըն, քյնա՛մ, շատ ըն քյնա՛մ, խրեզյ ըն քյնա՛մ, հըսնըմ ըն համին ծմակը, համին ծառեն տակը, միենզյ էլ սկսում ըն ծառեն ծա՛խի անզյունը քանդում: Քանդում ըն, քանդում, քյընամ մին սալ քարու տեմըննո՜ւմ, էտ քարը կարում չըն վէչ կոտրին, վէչ էլ պիցիրցընին: Էտ մարթը քվորը տղեն դարկում ա տոն, վար համ հաց պերի, համ էլ զուփուն, ամմա ինքյը մնում ա էտ փոսեն քշտեն նստած:

Էն տղան քյնա՛մ ա տոն, հաց յոր օնում, զուփուն յոր օնում, կյամ, էտ սալ քարը կուտրատում, էն էխշավը վար վըեսկեն քարեն տակեն ա իննա՛կան: Ամմա քարը կտրելանը ետը պարզվում ա, վար մին քարե նավ ա, մաչը վըսկոներավ լիզյը: Էտ վըսկոներեն դաթը շոռ ըն կյամ, վէչ վըեսկե յա ինո՜ւմ, վէչ էլ մին պան: Էտ մարթը նան էտ տղան ո՜ւրո՜ւր իրեսե խոսում ըն, ո՜ւրո՜ւր պակաս-պռատ ասում, նղացած հղե ինո՜ւմ տոն: Ինքյն էլ վէչ մին տեղ ըն քյնա՛մ, վէչ էլ մին հրղըցավ մինը ըռաշկեն ա քյնա՛մ, մինը դըետ: Վերչը էտ մարթիքյը հսնըմ ըն տոն, էլ իրիսատեղ չի ընում, վար տանը խոսեն:

Քվորը տղան ասում ա.- էլ յըես ինիմ, յըես, էտ մարթին նհետ վըեննը փոխեմ, ջանես կեսը մշվըցրե ըտրա նհետ էնքան տես ու տեն քյնա՛ցե, խուտուրու տեղան:

Էտ մարթըն էլհա ո՜ւրա՛ն մթկումը ասում ա. «Յըես էլ ըրա՛զո՜ւ հվտլական չը՛մ, զյանքիս կեսը տհենց տեղը փըչըցրե, բող ա՛, հերիքյ ա՛, հի՞նչս ա պակա՞ս, վար խուտուրու չըրչարվում ըմ, խուտուրու էտ ծմկներումը տանջվում ըմ»:

Ամմա էտ մարթը էրկու մթկանե յա ինըմ: Համ տհենց ա ասում, համ թա՛, վար. «Էն վերան տներան վըեսկեն պուլիզյավ տո՜ւս կյար, էն ծառեն տական վըեսկե կարասը տո՜ւս կյար, հո՛ւ զյո՜ւղո՜ւմ ըս յըես հի՛նչ մարթ կը

տեռնի»: Վըեսկեն վար մետն ար ընգնում, աշկերը չըռում ար, աշկերը չորս անըմ: Մին խիլլա՛ վախտ էտ մարթը ա՛րա՛զ չի տեսնում, վենները, ձեռքերը միիրե դինջանում ա, ի՛ւրա՛ն հալալ կործեն ա կենում: Համ էլ քնենքյ ար անըմ, վար. «Էս աստված ինձանա խռաված ինի, էլ ա՛րա՛զ չըմ տեսնըմ, չինի թա՛ աստված ինձ մին ղուրաթ անե»: Մեղա յա կյամ, վար հինչ ա՛րա՛զ տեսնամ կըղրվլական ա, ա՛րա՛զը ըստուծու պա՛նն ա, աստված ամեն մարթու ա՛րա՛զ տեսնալ չի տամ, ա՛րա՛զը նրա յա տեսնալ տամ, հու վեր ըստուծու հըղըցումն ա, հու վեր արթար ա, պա յըես հո՞ւնց տի՛ւս կյամ ըստուծու հըղըցան, վար տի՛ւս կյամ, աստված ինձ ղուրաթ կանե, պատիժ էլ կտա, ըսկի օր ու պերի չըմ տեսնալ:

Տրանա ետը էտ մարթը քնենքյ ա անում. «Վար միընգյ էլ ա՛րա՛զ տեսնամ մին մարթու էլ ըսլական չըմ: Բա՛լի լիհա՛ մարթու ասում ըմ, տրա հետե չի վըեսկե տի՛ւս կյամ, աստուծու պանալի՛, հո՛ւ վա գյի՛ւղի՛ւմ, մեհետ վըեսկեն վերթնը կշինի, մեհետ էլ վեսկեռք կշինի՛»:

Էտ մտածմունքներավը էտ մարթը մնում ա տըկըկլի՛խ ընելիս. «Պա վեր մինա՛կ քյնա՛մ, յըես հո՛ւնց կանիմ...

Վերչը կյամ ա էն համոզման, վար. «Աստվա՛ծ-ա՛ստված մըընգյ էլ վար ա՛րա՛զ տեսնամ տազ ըրած եր ըմ կննական հղե ինիմ, վե՛չ մարթու վըմ ըսլական, վեչ էլ մեր տանը»: Մըընգյ էլ ասում ա. «Չէ, բա բալաս տեղս գյիդա՛ վեչ , վար հետաս կյա, բա՛լքյաս մին պեն ա ջըհի՛ւմ»:

Էտ մարթը վճռում ա, վար մին էլ ա՛րա՛զ տեսնա, կենդ ի՛ւրա՛ն կուճուր ըխճկանը ասե, նորու քյինա ըրազումը տեսածեն հետան:

Շատ ա ընցնում, խրեգյ ա ընցնում, էտ մարթը մին ա՛րա՛զ ա տեսնըմ. վար գուվաքյի մին քերծում, մին քարու տակե, մին փոս կա, վըեսկավ լիգյը:

Էտ մարթը մնում ա մտծելիս, մինա՛կ քյնա՛, թա՛ հնգերավ քյնա՛: Մինգ էլ սըերտ չի անում, ասում ա հընգերավ քյինա, վախում ա թա՛ էլիա փոչ տի՛ւս կյա:

Վերչը օզըմ ա մինա՛կ քյնա՛:

Էտ մարթը եր ա կենում մին օրան պրիպասը յոր օնում, քըսակ- մըսակ յոր օնում, վար վըեսկեն ածե մաչը, հջիթնեն շլա՛կում, հղե ինի՛ւմ: Էտ մարթը քյնա՛մ ա, քյնա՛մ, հսնում չի ըրա՛զումը տեսած տեղը: Հղցումը հացը կլխում ա, հջթնեն թողում ա հըղցեն դրաղեն, ինքյը էտ տառնում տոն,

մինգ էլ էրկու օրվա հաց ա յոր օնում, հղե ինո՛ւմ, քյնա՛մ ա, քյնա՛մ, վերջը հսնում ա ըրա՛զումը տեսած տեղը։

Քյնա՛մ ա շոռ կյամ, շոռ, դե էտ քերծումն էլ հըզեր քար կա, վե՞րեն տակը պըտոե, վար քիթենա, վերջը մին քարու տակ քանդում ա, մին հանգավ էն քարը պուկում, տեսնում տակեն վեչ մին պեն էլա, կավուչ, քոռը-փեշմա՛ն մնամ ա տեղը նստած։ Էնքան բզա՛րա՛ծ ա ինո՛ւմ, վար կարում չի թա՛ քյնա՛ տոն։ Սոված ծարավ մնում ա տեղը նստած։ Էքյսը էտ մարթը հղե յա ընո՛ւմ տոն հենց առաջին քշերը, նորու ա՛րա՛զ ա տեսնում, վար էլիա ո՛ւրա՛ն նախատինք ըն տամ, վար նշանց տված քարեն տակը չի քանդալ, քյնա՛ցա՛լ ա քնդելի քարեն տակը թողալ, օրիշ քարու տակ քանդալ։

Ըրազումը նրան ասում ըն. - Վար էն քարը թողալ ըս վըեսկեն տակեն, օրիշ քարու տակ քանդալ, դե միենգյ քյինա՛ էն քարեն անա տենը մին մեծ քար կա, ընրա տակը քանդի, տըես վըեսկե կա՞, թա վեչ։

Էտ մարթը եր ա կեննում իրեք օրվա հաց յոր օնում հջթնեն շլա՛կում, հղե ինո՛ւմ։ Քյնա՛մ ա հսնում համին քերծը, շոռ ա կյամ էն քարը քթա՛նում, վերին տակեն վըեսկե պիտի ինի։ Ուրխանում ա, ասում, «էս ա վըեսկեն տո՛ւս կկյա, քսկնես կլցնիմ շելա՛կըս թմամիմ հղե ինիմ տոն։ Դե ընդըղանը եղը հո՞ւ կկարե, իմ հետաս հըսնե, ըրածըս անե, լա՛վ ա լհա՛ օրիշ մարթու ըսեցե վեչ»։ Էտ մարթը սկսում ա ծանդր ըշխադանքը։

Էտ քարը մեծ քար ա ընո՛ւմ, էտ մարթին աշկը վախում ա տըրանա։ Ասում ա. «Էս հի՞ք բիդի քանդիմ, իշտա՛ս վերջանք վըեսկե կա տակե՛ն»։

Էտ մարթ սկսում ա քարեն չորս ա՛նգյունը քանդիլը, ամմա էտ քարն էլ հենց քար ա, վար վեչ ճոնդն ա ըրեվում, վեչ պուճախը։ Քանդում ա, քանդում, կարում չի, թա՛ տակը պեց անե։ Օրը մթնում ա, ինքյն էլ շատ չըչրվելանը եղը, էտ քարեն քշտեն հաց ա օտում, պրծնում, քոն ինում, վար էքյսը եր կենա աշխադանքը շարունակե։ Հեռե տեղա եկա՛ծ, սաղ օրը չըչարված, վստակա՛ծ, էլ կարում չի, լհա՛ քնավ ա ընցնում, հենց պենդ քոն ա ինո՛ւմ, վար ունջուկումը թոփ էլ տրքցնիս, եր չի կենալ։ Էտ մարթը ըրա՛զի տեսնում ա, վար վըեսկեն փոսը պա՛ց ա ըրալ, ամմա էտ փոսը խոր ա, ծեռքըն օզում ա թա՛ մեկնե, հսնում չի։ Մըններեն պտոկնեն էլ վար նի յա հսնում վըեսկուն, վյըեսկուն վար նիյա կյամ, ցըտոթունը զյուղո՛ւմ ա, մանները ցըցուրտանում ա, էտ մարթը շատ զոռ ա անում, վար կռանա վըեսկեն հափոե, ամմա ծեռքը նի չար հսնում։ Մխրե էլ էլ զոռ ա անում,

վար ծեռքը նի հսնե - բո̀ւրղա̀ն օ զում ա թա̀ կլխեն յրա իննի վերը։

Էտ մարթը լոք ա տամ, եր կենում։ Տու մի ասիլ էտ քերծումը մին արչ ա ինո̀ւմ ըպրելիս, կյամ ա, պտահում էտ մարթին, ըսկսում թա̀նթո̀ւլա̀վը խաղ անելը։ Վերչն էլ սկսում ա թուլուլ տալը։

Հենց էտ վախտը, էտ մարթը զո̀ւրթնանում ա, եր կենում, տեսնում իրեսը չընգռոտած, ըռնփալալ, եր ա կենում, թա̀ փախչի, արչը խտտում ա թո̀ւլ ըննո̀ւմ, տանում ներքե ծորումը էտ մարթին ծեվծեվ անում։ Օրեր ա ընցնում, էտ մարթը տոն չի կյամ։ Տնացեքյ շոռ կյալավ կյամ ըն հետը քթանում, տեսնում էն վըեսկե օզող մարթը արչու փայ ա տա̀ռա̀լ։

- Տհենց ա ինո̀ւմ հա՛, հու վար ո̀ւրա̀ն իլա̀ծա̀վը պավական չի ըննո̀ւմ, բավարարվում չի՛, ըշկըծկոթուն ա անո՛ւմ, ըսկի մին տեղ չի հսնում, էտ մարթին նման արչու փայ ա տա̀ռնում։

Մարթը հիշքան կարա, աշկը կոշտ կպահե։ Հիշքան ըշկծկոթուն անե, կյլո̀խը տա̀րտա̀կ կմնա, փորը սոված, մուրազեն էլ հսնել չի, ամմա էն մարթը, վար ո̀ւրա̀ն աշխադանքավը ապրե, օրիշի աշխադանքեն յրա չինի աշկը, բախտը տհենց մարթեն վըեններըը կփթաթե։ Ամմա աշկը ծակ մարթեն վըենները, բախտի տեղ, արչը կփթաթե։

## 67.ՀԱԹԵՐՔԻՆ ՀԻԼԻՆ

Ղարաբաղի Հաթերք շենումը հիլի տեսած չըն ինո՞ւմ: Մին օր էտ շենն ա կյամ մին ղըլըցե: Էտ Շուշի-Ղալա շըհա՛րա՛ն եկածը էքյսը քըշերավը իրեսը լվանալիս, մազերը սանդրելիս, ջուբան մին հիլի յա տուս օնում, մեչին եշում: Ետավ հունց ա ինո՞ւմ, էտ օրը ո՛ւրա՛ն կործերը էտ շենումը պըռծնելանը ետը, էտ հըեռու շենին կործերը քննելանը ետը, էտ շուշի-ղըլըցե մարթը քըշերը կենում ա, վեր էքյսը ետ տըեռնա, կյա Շուշի-Ղալան:

Էտ քըշեր լուվին ծըեռքան տըեղումը էնքան շըռտըշռոտի յա անում, էնքան պըրըն-պարան ա անում, յորղան-դոշակ ծըռըցընում, տափին եր քըցո՞ւմ, մին էլ ճոնդան ծիքյ տամ, էլիա քըցո՞ւմ յրան, վեր կաստո՛ւմեն պենջակը, վեր էն ար կոխկի տաբըրետկին տիրած, եր ա ընգնո՞ւմ, ծոցին հիլին էլ ընգնո՞ւմ թախտին տակը:

Էտ մարթը էքյսը եր ա կենում, շո՞րերը կյենում, պինջա՛կը յոր օնըմ, թափ տամ, կյենում, ետ տըեռնում կյամ Շուշի-Ղալան, էն մին քըշերը համին էտ թախտին տնատարն ա քոն ինո՞ւմ: Ուռութանա, վեր արևը տամ ա էտ թախտին քըշտի ակուշկավը, էտ տնատարն էլ օզում ա թա՛ եր կըե-նա, ըտրա աշկըն ա ընգնում թախտին տակին մին պըծըպածին ընելիս պեն: Յոր ա օնըմ եշում, տես-տեն շոռ տամ, ծընդըր-թիթև անում, ընգու-ճին տըոնում, էլիա մին լա՛վ եշում-տեսնում ո՛ւրա՛ն հորը պատկերըն ա...

Տու մի ասիլ, հիլի տըեսած չի, էտ վեր ո՛ւրա՛ն տեսնում ա, ինքյըն էլ շատ նման ա ինո՞ւմ ո՛ւրա՛ն հորը, գյուղո՞ւմ ա թա՛ հորը պատկերն ա:

Յոր ա օնում պաչում, պըչպըչորում, թա՛.-Ա՛ հա՛ր, բա խե՛ մըեռեր, բա քյըեզ հո՞ւ ասից մըեռե, էշիտ հո՛ւ չու ասից, հո՛ւ ասից տեղտ ծոխ ա, եր էն ղո՛լին նստե, վեր տու մըեռեր:

Իտի մին խըրեգյ ղըրդըհա՛ն ա ինո՞ւմ, ետնան էտ հիլին տինո՞ւմ դոշակին տակեն, կյեղում: Իտի ամման ուռութանա հանում ա, պըչպըչորում էլիա կյեղում:

Մին օր էլ կընեգյը դույմիշ ա ինո՞ւմ , ասում ա. - Էտ հի՛նչ ա, մին ինձ տո տեսնամ, վեր իտի պըչպըչորում ըս: Մարթը տամ չի, էլիա կյեղում ա:

Վեր մարթը քյինո՞ւմ ա հանդը, էտ կնեգյը դոշակին տակը պըտըռում ա, հիլին հանում, լեշում, տըեսնում մին կընգա պատկեր ա, չո՛ւնքի ո՛ւրա՛ն

պատկերը հիլումը տըսնալավ, գյուղում ա, թա մին օրիշ կընգա պատկեր ա.

Ասում ա. - Հա̀լբա̀թ տոն կըկյաս, ա մարթ, յըես քու դիվանըտ կանիմ, մհենգյ էլ սիրական ը՞ս պահում:

Էտ կնեգյը սաղ օրը տեղը-տեղ չի տամ, թա̀ նստե:

Ո̀ւրո̀ւգյո̀ւնը մարթը նղացած հա̀նդա̀ն կյամ ա, կնեգյը յրա յա տամ, կըռեվ քցո̀ւմ, թա̀.- Մըզա̀մ տու սիրական օնի՞՜ս...

Մարթը ո̀ւրթո̀ւմն ա օտում, չըքըչոք անում, ասում.-Յըես խաբար չըմ իտի պենի, յըես սիրական չօնիմ...

Կնեգյը թա̀.- Չէ, վեր չէ սիրական օնիս հա̀լա̀ խոսում էլ ը՞ս՛, օզում ը՞ս հըստաղիմ:

Էտ կնեգյը քյնում ա թախտին դո̀շա̀կին տական հիլին հանում, մարթին ըռաշկեն տինում :

Մարթն ասում ա.-

-Տնաքանդի կնե՛գյ, էս հու իմ հոր պատկերն ա, բեղավեր, մըքավեր: Պա քու ըստինտ-ընդինտ, պա նիախ տեղան տոնը խե՞ կըռեվ ըս քցում:

Կընեգյը թա̀.-Չէ՛, վեր չէ՛ տա կընգա պատկեր ա, դե վեր

Էտքան ասում ը՞ս, ինձ տո մին էլ եշիմ:

Վեր մին էլ ա եշում, լափ հավան կլխին ա տամ, ըսկսում ա ճըղճըղալը, բըղբըղալը թա̀.- Քու սիրականետ պատկերն ա:

Սկսվում ա տուրութակը:

Վերչը քյնում ըն շենին տերտերին կոշտը, կանչում տոն, վեր կյա կործը քննե, տեսնա հո՞ւ վա դո̀ւզը, հո՞ւ վա սոտը:

Տերտերը լոխ ըսկան ում ա, ասում. - Ա՛ վեր թի՛, էտ զատը ինձ տո տեսնամ հո̀ւր պատկեր ա:

Հիլին յոր օնըմ, նշում, տեսնում մին մըրքավեր տերտերի պատկեր:

Նմնցընում ա Շուշի-Ղալին առաչնորթարանումը նստած վարթաբե-դեն, ասում. - Ա՛ վերթիքյ, քյնեցեքյ ծըեր տանը դինջ կացեքյ, սա հու մըեր վարթաբեդին պատկերն ա:

Ըտեղ էտ տերտերը իրեսին խըչըկընքում ա, էտ պատկերան պաչում, տանում ժամումը տինում, ամման ուռութանա ժամ ասելիս եշում, իրեսին խըչըկընքում, դերացուն էլ առաչին խունգ ա ծըխում…

## 68.ՀԱԹԵՐՔԻՆ ԻՐԵՔ ԴԵՐԸ

Ինիս ա, չինիս, մին շեն անըմը Հաթերք: Էտ շենին ժողովուրթը էնքան խավար ըն ինիս, վեր ՞ւրա̀նց շենին ըլա̀ծ-չըլա̀ծ իրեք դերին նըհախ տեղան կուտուրեւ ըն: Դե տես, հո՞ւնց ա ինիս:

Էտ շենացեքյ ըսես ըն, վեր պերեքյ տանիքյ աղ վարինքյ, հանցու վեր ամմեն դ՞նում քյինինքյ վէչ Նախճըվանան չըրչըրվելավ աղ պիրինքյ: Տընես ըն մին խամ տեղ աղ շաղ տաս, վըրես: Էտ արտում տեղեն զիզ ա փըսնես: Ըտահանք գյիդա̀ս ըն, թա̀ լըհա աղը էտ ա: Քյիս ըն տըսնաս էտ տեղեն զիզուն յըրան պըրթպըրթ՞տ ճանջեր ըն նըստալ: Տահանք գյիդա̀ս ըն, թա էտ ճանջերը աղեն արտը փըչըընիս ըն: Եր ըն կընաս թոռավ-թըրփա̀նգյա̀վ քյիս, թա̀ հանցու վեր ճա̀նջերը կըտորին:

Քյիս ըն, նի տռնաս արտը, կոխ տաս, ճա̀նջերեն թըկես, փըխչըցընես: Բիրդան մին ճանջ քյիս ա մեծ դերեն դոշին վեր կյաս: Դերըն ՞ւրա̀ն ախպորը ծեռքավ իմըցնես ա, վեր թըրփա̀նգյըն յըրա անե, ճա̀նջեն ըսպանե: Ախպերըն էլ թըրփա̀նգյը թ՞ւշ ա ընես, ախպորը սըրտան տաս, հանցու վեր ճանջեն ըսպանե, ամմա ՞ւրա̀ն ախպորը՝ մեծ դերին ա ըսպընես:

Էտ պըտըհմունքանը ետը ընցնես ա մին խիլլա̀ վախտ: Երգինքյը թուխ-պես ա, իրիքյնակը ըրվաս չի՜: Շենացեքյ մըսլհաթ ըն ընես, վեր քյինին շոռ կյան, իրիքյնակը քըթենան:

Քյիս ըն, շատ շոռ կյաս, խըրեգյ շոռ կյաս, ըտ էլ աստուծ ա գյիդա̀ս: Մին էլ քյիս ըն մին քըրըտակու յիշիս, տըսնաս, ըտեղ մին պեն ա պըծըպածի ընես:

Գյիդա̀ս ըն, թա̀ էտ իրիքյնակըն ա:

Պիրիս ըն մաշնակ դերին վըններան փըռնես կլ՞խը նի քըցիս, հանցու վեր իրիքյնակը փըռնե, տ՞ւս օնե: Տու մեր ասել, էտ պըծըպածե անողը կյ՞ւլ՞ւ աշկեր ա: Կյ՞ւլը բ՞ւրդա̀ն դերեն կլ՞խը քըցիս ա ըռեխը: Տ՞ւսկյ՞ւսին մարթիքյը վըններան փըռես ըն, ձիքյ տաս: Բ՞ւրդա̀ն կլ՞խը պուք ա կյաս: Դերին տ՞ւս ըն օնես, տըսնաս կլ՞խը յըրան չի՜: Տըրանք գյիդա̀ս ըն, թա̀ դերը տանան առանց կըլ՞խ ա տուս եկալ:

Քյիս ըն դերըկընգանան հըրցընես. - Ա՜ ղըրակեն, դերը վեր տանան տ՞ւս ա եկալ, կըլ՞խը յրան ա իլա̀՞լ, թա̀ չէ՜:

Դըրակենըն ըսես ա, - Ցըես գյիդա̀ս չըմ կըլ՞խը յրան ա իլա̀լ թա̀ չէ, մինա̀կ փըռթուշ օտելիս տեղը մըրոքը տըմբտըմբացալ ար:

Ետնան վեր տըսնաս ըն դերը առանց կլխե մըռնիս ա, տընես ըն թըղես:

Հաթերքըմը թոխպ օրեր շատ ա ինիս: Գյիդա̀ս ըն, թա̀ էտ արտերեն վնաս կտա: Ժողովուրթեն հըվըքես ըն, ամմեն մինը մին պեն ա յոր ունես, վեր քյինին սարեն յըրա վըեննը կացած թուխպեն թըկելավ ետ տան: Էտ կուճի դերը մին ծակ մա̀ս ա յոր օնես, քյիս: Ժողովուրթը գյիդա̀ս ա, թա̀ վեր մասը ծակ ըլած չի ինի, թոխպը ետ կըտեռնա: Գյիդա̀ս ըն, թա̀ թոխպը լոխ էտ ծակավըն ա եկալ: Էտ կուճի դերին էլ ըն սպընես:

Մըհենգյ ո̀ւրա̀նց կյիժոթունան էտ իրեք դերին էլ կուտուրես ըն:

Դե ետնան տըսնաս ըն, վեր ո̀ւրա̀նց վարած արտերը վեչ մին պեն չի տըվավ, էնքան կոխ ըն տըվալ, վըննատակ ըրալ, ըսես ըն: -Դե մըեր բախտն էլ իստի յա իլի́, Ճարտարը հացավ լիգյը, Գիշին կյինավ լիգյը, մունք էլ իստի ծըոքըռնես տեռտակ, դա̀դա̀րգյուն:

69.ԱԺԴԱՀԱԿԸ

Ինո՛ւմ ա, ինո՛ւմ չի մին կնեգյ, մին մարթ ա ինո՛ւմ: Էս կնեգյ նան մարթը մինը մինու նհետ փրսակվում ըն:

Շատ տարե յա ընցնըմ, էս կնգան նան մարթեն խոխա չի ինո՛ւմ: Վերչը շատ վախտ ա ընցնըմ, տահանց մին խոխա յա ինըմ: Էն էլ մին տղա խոխա: Հնգեր, հըրեան, պարիկամնի, ծանոթնի, հըվաքվում ըն, վեր ըչկըլո՛ւսիքյ տան էտ կնգան նան մարթին:

Կյուվուղնեն հի՛նչ ըն տեսնըմ, վեչ թա՛ խո՛խա՛ յա, լափ մին պատիժ, հրաշկ պեն, վեր ինդի պեն հա՛լա՛ ո՛ւրա՛նց օրումը էն ա վեր տեսնըմ ըն: Կյուվուղնեն՝ հնգեր հրեան, պարիկամ, ծանոթ, քշըռում ըն, տեսնըմ խոխան հենգյ փութանոց ա:

Տա՛տմա՛րըն ասըմ ա, - Ստի խոխա հա՛լա՛ ես տեսալ չը՛մ: Էս ա հարո՛ւր քռասուն տարե յա, վեր տըտմըրոթուն ըմ անըմ, հա՛լա՛ յըես մորան իլա՛ծ սըհաթաս չուրու մըհենգյ հենգյ փութանոց խոխա չըմ տեսա՛լ: Ըստրան անըմը բեղմա մին հենց անըմ տինինքյ, վեր իստի պատիժ պեն ա, վերչումը ստրանա լա՛վ տղամարթ տո՛ւս կըկյա:

Ստի պենի ըշկըլո՛ւսիքյ կյուվուղնեն ըրմանում ըն: Սահանց նհետ մին մեծ պառավ մարթ ա ինո՛ւմ , Սամսոն ընումավ:

Սամսոնըն ասըմ ա. - Ա՛ ժողովուրթ, յըես իմ օրումըս ստի պեն տեսալ չըմ, ամմա ճարըն էս ա, վեր սա հիբը օզում ա ինի , վերչումը ա՛ժդա՛հա՛ յա տյո՛ւս կյըլական, յըես ըտրա անո՛ւմը տնում ըմ Աժդահակ:

Կյուվուղներան մին օրիշըն ասըմ ա.- Պա վեր Թմամեն հենգյ փութանոց մին խոխա յա իլա՛լ, կաթն ա՞ իննա՛կան՛, վեր ծեծ տա:

Թամամ բաջին ասըմ ա. - Իմ տոնըս, տեղըս մատաղ իմ բլես, վեր աշկես սըվը-սիպտա՛կն ա: Վեչ թա մինակ ծեծըս, իմ ջանըս էլ ա մատաղ, թա՛քյ կենա, խոխաս մըծանա:

Թմամեն հետե շատ տիժեր ար: Ինքյը միչև խոխան պիրիլը ըշխըղելիս ա իլալ հարուստ Միրզին հետե:

Իրեք օրանը ետը Միրզան ծեն ա տամ Թմամեն նան Թմամեն մարթեն, վեր քյինա՛ն ըշխադին, Թամամը քըղըհան անե, ո՛ւրա՛ն մարթըն էլ վըղապեն անե ո՛ւրա՛ն միար: Ստի տնջվիլավ, չըրչըրվիլավ Թամամ բաջին շելակն կապում Աժդահակեն, քյընա՛մ քըղըհան, կյամ: Մին թահրավ Աժդահակին պահում ա, մծըցնըմ:

Էտ վախտը շկոլումը կընդ-կընդ հարուստներեն խոխենքյըն ին թողում կարթին, մին պեն գյիդա̀ն։

Խեղճ Թամամ բաջուն խոխան թողում չըն կա̀րթի։

Ասըմ ըն. - Հա̀լա̀ ծըծա ետ չըս ըրալ։

Հարուստնեն ստի միանա փոնելավ, թողում չըն, թա̀ խեղճ քյա̀սիբ Թամամ բաջուն տղա Աժդահակը կա̀րթի։

Աժդահակը քառասուն տարի ծեծ կերավ, քառասուն տարանը ետը Թամամ բաջին ծըծա ետ ըրավ, տվավ շկոլ, վեր կյիրըճանանչ տեռնա։

Աժդահակը նի մտավ շկո̀լ, ըշտեղ սվերըմ ին դո̀վլա̀թա̀տարերեն, հարուստներեն խոխենքյը։

Մունթերը տնազ ին անում, ասում, թա̀.- Համութ չի՛, վեր քառասուն տրեկան, եկալ ըս մինինջի մունթը տեռալ, օխտը տրեկան, օթ տրեկան խըլխոցու հնգյեր ընզա՛լ։

Էսքան տնազանը ետը Աժդահակը կյամ ա ո̀ւրա̀ն ապորը կոշտը, ասըմ. - Ա՛պա, խոխենքյը, էն շկո̀լեն մունթերը ինձ տնազ ըն անըմ, թա̀ խե՞ եկալ ըս օխտը-օթ տրեկան խըլխոցու հնգյեր տեռալ։

Հա̀րըն ասըմ ա. - Բալա, ապան քե մատա՛ղ, նաանք հի՞նչ մունթեր ըն, հի՞նչ խոխեքյ ըն, վեր քյըեզ տնազ ըն անըմ։ Հու վեր քյըեզ տնազ անե՛, մին սիլլա̀ տո ռըխեն, էլ տնազ չանել։

Էքյսը քյո̀ւնում ա շկոլ, էտ խըլխոցան մին քանե հոքյի տնազ ըն անըմ։ Վեր տնազ ըն անըմ, Աժդահակը սիլլա̀ յա տամ, տաանց կլո̀խնեն պուք ա կյամ։ Ստի մին քանե մունթու կլո̀խ պուք ա տամ, մինա̀կ մեհետ սիլլա̀ տալավ։ Ծեն ըն տամ քյուխվեն։

Քյոխվան կյամ ա, թա̀ փըռնե Աժդահակեն, թա̀. - Խե՞ խըլխոցու թխալ ըս, սպանալ։ Աժդահակը թխում ա, քյուխվեն կլո̀խըն էլ պուք տամ։ Ծեն ըն տամ պրիստավեն, զարադավոյեն, ղըրղեն, վեր մին ճար անին, էլ քոխվա չի թողալ, էլ հարուստու մունթ չի թողա՛լ, էլ դարդա չի թողալ, լոխճին կտորալ ա՛։

Պրիստավըն օզում ա մին հնար քթենա, առանց Աժդահակեն նհետը խուսելու, ընդրա կլո̀խը բաղու տա։

Նի յա մըննըմ շկափին մեչը ծեն տամ, կակուղ լո̀ւզվա̀վ ասըմ. - Է՛յ, քյըեզ ղարկինքյ քյընա̀ ծմական միկա փա̀ն, ճեխ պեր բա̀քմա̀զ իփիլի հետե։

Պրիստավըն օզում ա, վեր ղարկի մին հանց ծմակ, վեր ասլաննեն օտին, թողին վեչ, թա՛ սաղ-սըլըմաթ կյա տոն:

Պո՛ւրո՛ւմ ըն մին ըրբա, մին ճոխտ կյումա՛շ տամ, վեչ ցակատ ըն տամ, վեչ կացեն: Աժդահակը ըրբան լծըմ ա, քյընա՛մ:

Շատ ա քյընա՛մ, խրեզյ ա քյընա՛մ, հսնում ա մին քաղաք, անըմը Շուշի: Էտ քաղաքան անց ա կենըմ, հըսնըմ մին ծմակ: Էտ ծմակը մին հանց ծմակ ա ինո՛ւմ, վեր ընդեղ քյընողը էլ ետ չի կյամ: Հինչ մարթ քյընամ ա, ըսլըննեն օտում ըն:

Էս Աժդահակը քյընա՛մ ա էտ ծմակը, ըրբան ըտեղ տո՛ւս ա օնում, պըրծընում, սկսում ա փա՛ղ անելը, էն էլ ծեռքավ: Քառասուն-իցծուն կյեղ հաստ փըղերեն ծեռքավ շըրըմփըցընում ա, կյերան- կյերան փա՛ղերը նի տամ ըրըբան, կպոտում, պրծընում, ինքյը քոն ինըմ: Հենգյ քշեր-ցիրեկ քոն ա ինըմ: Զո՛ւրթնա՛նըմ չի: Սաղ ժողովուրթը զյուղո՛ւմ ըն, թա՛ ըսլըննեն կերալ ըն: Հենգյ օրանը ետ Աժդահակը քունա զըրթնա՛նում ա, տեսնըմ կյումա՛շ չիկա: Կյումըշներեն ըսլըննեն կերալ ըն, ծմակումը մին թալա տեղ նստոտալ: Էս Աժդահակը ըսլըններեն փըռնոտում ա, ըրբան լծըմ, պիրում քաղաքը: Ժողովուրթը զըմանում ա, վեր Աժդահակը ըսլըննուն պերալ ա քաղաք: Էս պենը տարածվում ա սաղ ըշխարքումըս: Սա թողինքյ ըստեղ, խոսինք պրիստավան:

Պրիստավը տեսնում ա, վեր Աժդահակը էիա ծմական ետ ա եկալ, էլ օրիշ հնար չի քթենում ընդրան պըտժելի: Պրիստավը վերչումը կյամա էն մթկեն, վեր կարքաղրե Թամամ բաջուն, վեր Աժդահակեն փսակե:

Տա կանչըմ ա, ասըմ.-Թա՛մամ, հե՛ Թա՛մամ, տո՛ւ օզում ըս աշխարքըս քանդի՞ս, խե՞ տղետ փսակում չը՞ս, վեր մին խելքու կյա, էլ քյոխվա չի մնաց, էլ հարուստ չի մնաց, էլ դարըղա չի մնաց, ախեր լոխճին էլ կտորի՛ց:

Թամամ բաջին քյինա՛մ ա պրիստավին կօշտը, ասըմ. - Պրիստավ աղա, յըեսհո՞ւնց անիմ է՛, մին պառավ կնեգյըմ, յըես էլ էտ ըմ օզում, վեր իմ խոխաս փսակվե, ինձ պահող չի կա՛:

Թամամ բաջին կանչում ա ո՛ւրա՛ն Աժդահակեն ասում. - Բալաս, մաման քե մատաղ, պա յըես պռավալ ըմ, քու հա՛ր պռավալ ա, մըեզ պահող չիկա, պեր քյըեզ փսակինքյ, քյըեզ մըհար մին ախճիգյ օզիմ, վեր ինձ պահե:

Բեղմա ասիմ, վեր Աժդահակը մին շատ պարի մարդա ար դբի ո՛ւրա՛ն հա՛րը, մարը, ծընողներեն սիրում ար:

Ասըմ ա. - Ա՛ մար, բա տու խե՛ բիդիս ինձ փսակիլ, յըես ինքյս ինձ լա̈վ կըփսակիմ:

Էս խոսկերքըն ասում ա, պըրծնում, քյըն̈ամ մին ըրկաթէ քսան փութա-նոց միակ զակազ տամ, մին զո̈րդն̈, վեր պրուժինավեր ա ըն̈ւմ, հիշքան պեց ա թողում, էնքան էլ էրկըն̈անում ա: Մին էլ զակազ ա տամ մին քյա̈նդիր, հենգյ հա̈րո̈ւր մետր էրկընոթունավ: Յոր ա օնում էս կործիքնեն, ճընապա ընգնըմ, քյըն̈ամ, վեր ախճիգյ օզի:

Շատ ա քյին̈ամ, խըեգյ ա քյին̈ամ, ախրը տո̈ւս ա կյամ հղեն քյին̈ամ: Տեսնըմ ա մին մարթ էնքան հո̈ւն̈արռու, վեր դենգյնավ փոկ ա քաշում:

Աժդահակն ասում ա. - Ա՛խպեր տղա, էտ հի՞նչ մեծ հո̈ւն̈ար օնիս, վեր դենգյա̈վըտ փոկ ըս քաշում:

- Պա տու էտ ը՞ս ասում, ախպեր տղա, Աժդահակը ըսլըննեն պերալ ա քաղաք:

- Էտ լի̈ն̈ յըես ըմ, մին չինինքյ, էրկու ինինքյ, քյըն̈անք ախճիգյ օզիլ:

Էս էրկուսավ քյին̈ամ ըն: Շատ ըն քյին̈ամ, խըեգյ ըն քյին̈ամ, մին էլ տեսնում ըն մին մարթ հղեցը դրաղեն նստած, կյումաշու կաշվա, էն էլ էն թա̈հրը կաշվա, հստոթունը տասը սանդիմետր, տրեխ ա անում:

Աժդահակը ո̈ւրա̈ն հնգյերավը պարով ա տամ, ասում.- Ա՛յ մարթ, հի՞նչ մեծ հո̈ւն̈ար օնիս, վեր առանց բիզ, առանց տենակ, տրեխ ըս անում էտ թա̈հրի կաշվա:

- Տու էտ ը՞ս ասում, ախպեր տղա, Աժդահակը ըսլըննեն պերալ ա քաղաք:

- Էտ հենց յըես ըմ,- բաղասխանում ա Աժդահակը.- էրկու չինինքյ, իրեք ինինքյ, քյին̈անք,ախճիգյ օզինքյ:

Իրեքավ շատ ըն քյին̈ամ, խըեգյ ըն քյին̈ամ, մին էլ տեսնըմ ըն մին մարթ հղըցավը փախճում ա, մին ճղացու քար մին վեննը քցա̈ծ, միննն էլ էն մին վեննը քցա̈ծ:

Հետան ձեն ըն տամ. - Արա հե՛յ, էտ հո՞ւ վը՛ս, թո՞րըն ը՛ս փախչում, վեննը կա՛ց, տեսնանք հի՞նչ մարթ ըս, վեր իտի ա̈ժդա̈հա̈ յըս:

Մարթը վենն ա կենում, բաղասխանում.- Արա՛, պա տու էտ ը՞ս ասում, Աժդահակը ըսլըննեն պերալ ա քաղաք:

-Էտ հենց յըես ըմ.- բաղասխանում ա Աժդահակը,- իրեք չինինքյ չորս ինինքյ, քյըն̈ա̈նքյ ախճիգյ օզինքյ:

Չորսավ շատ ըն քյինա̈մ, խրեգյ ըն քյինա̈մ, մին էլ ըն տեսնում մին մարթ նստած հըղըցեն ղրաղեն, Մռավ սարեն նման մին սար մին ծեռքեն, - Քյիրս սարեն նման մին սար էլ էն մին ծեռքեն գյրվանքեքյ ա շինում:

- Էտ հի՞նչ ըս շինում .- Հըրցընում ըն ընղրանա:

- Գյրվանքեքյ ըմ շինո̈ւմ, մինը մին խրեգյ պակաս ա:

-Էտ հի՞նչ օժավ ըս, վէր էտ հսկա սըրերան գյրվանքյա յըս շինում:

- Պա, տու էտ ըս ասում, ախպեր տղա, Աժդահակը ըսլըննեն պերալ ա քաղաք:

Աժդահակըն ասըմ ա. - Էտ հենց յըես ըմ, չորս չինինքյ, հենգյ ինինքյ, քյինա̈նք ախճիգյ օզինքյ:

Հենգյ ա̈ժդա̈հա շատ ըն քյինա̈մ, խրեգյ ըն քյընա̈մ, քառասուն սութկա հղե յըն քյինա̈մ: Տրանց մեծը Աժդահակն ա ինո̈ւմ: Սրանք հենգյ հոքի, էնքան քյինա̈մ ըն, հըսնում ըն մին տեղ, եշըմ ըն, տեսնում, մին երգյիր, վէչ մարթ կա, վէչ սա̈ս-սեմո̈ւր, մինա̈կ շատ հեռէ ըրվամ ա մին պո̈ւլո̈ւր սիպտա̈կ պեն, տափեն վէր ընգած: Էտ պո̈ւլլո̈ւր պենը շատ պիծի յա ըրվամ: Քանէ քյինա̈մ ըն, էնքան մուտունալավ էն սիպտա̈կ պենը մըծանում ա: Քառասուն սութկա քյինա̈լա̈նը ետը հըսնում ըն էն սիպտա̈կ պենին կօշտը, տեսնում հի՛նչ, մին կալի չանք պո̈ւլլո̈ւր քար, վէր ընգած: Տեսնըմ ըն էս քարեն մեշ տեղան ծակ ա, էն ծական քըլքըլալի ծոխ ա տո̈ւս կյամ:

Էս հենգյ ա̈ժդա̈հեքյը, մնամ ըն մա̈թա̈լ, ցմաքված.

- Բա էս հի՞նչ պեն կինի, քընենքյ ըն անըմ, մին-մին եշում, վէչ մին պեն կարում չըն գյիղա̈ն, ճոկին, թա ստեղ հի՞նչ կինի՛:

Ստահանք լոխ եշում ըն Աժդահակին, թա̈ տեսնան նա հի՞նչ կասէ:

Աժդահակըն ասում ա.- Տղեք, ծըեզ տեսնամ, ղուվաթավ էս քարը բեղմա յոր օնինքյ, տեսնանք ըստրա տակեն հի՞նչ կա:

Չորս ղվաթլու ա̈ժդա̈հեքյը մնամ ըն մա̈թա̈լ, օզում ա թա սա̈հա̈նց լղեն ճաքէ, սահանց սըրտերնին օզում ա, թա ընգնէ հեռէ տեղ Աժդահակեն էս խոսկերքեն յրան:

Մնամըն մըտըըծելիս, թա̈ հո՞ւ կըկարէ էս զըեռ քարը պիցիրցնէ: Ախրը շատ ըն մաթալ մնում, խրեգյ ըն մաթալ մնում, տեսնում ըն մին խրեգյ ո̈ւրա̈նց անա հեռէ վրինի քռասուն կյումա̈շ ա ըրվամ: Սահանք փռնոտում ըն էս քռասուն կյումա̈շին կտորում, օտում: Էտքան մեսը մին սհաթումը օտում ըն, ուժուվանում:

Աժդահակըն ինքյը ուրան ասում ա. «Հարկավեր ա սահանց լոխճին օժը փորցած ճոկ-ճոկ»:

Պուրուն ա ուրան էն սուվթա հունարու հնգյերը, վեր առանց տենակ, առանց մին պեն, ղեյնավը փոկ էր քաշում, ասում. - Ախպեր փոկ քաշող, մին էս քարըս պըցըրցրու, տեսնանք ըստրա տակեն հի՞նչ կա:

Փոկ քաշող աժդահան փորցում ա, կարըմ չի էս քարը պըցըրցընէ:

Երկուինջի հնգյերին էլ ա ասըմ, էն էլ չի կարըմ պըցըրցնէ: Իրեքին-ջինը՝ ճղացեն քարերը վեններըը քցող աժդահան էլ չի կարում պըցըրցընէ:

Չորսինջի՝ սարերը գյըրվանքյա շինող աժդահեն էլ ա ասում. - Ախպե՛ր տղա՛, էս քարը մին հանց եր կալ շպրտե, վեր էլ ըստեղեքյ ըրվա վուչ:

Սա էլ փորցում ա, մին խրեգյ տեղան տուրուր ա տամ քարը, էլհա կարըմ չի պըցըրցնէ: Հերթը հըսնում ա ուրան, քառասուն տարէ ծեծ ստող, հարուստներեն մին սիլլավ կտորող, ըսլըննեն քաղաքը պիրող Աժդահակեն:

Էս մարթը էն ջուռա աժդահա ար, վեր մին դունում նափասը քաշից բիդի փոըը, մին ծեռքըն էլ տիրավ քարեն տակեն, միչն նափասը տուս ածելը, էս քարը մին ծեռքավ հանց թող ըրավ, վեր էս քարը ուրանց անա քռասուն վերստ հեռէ ընգավ: Հի՞նչ ըն տեսնում, տեսնում ըն մին վեր, մաչան ծոխ ա տուս կյամ: Էս վերեն ծակը շատ ա սահանց զըրմըցնում:

Աժդահակըն ասում ա.- Բեդմա նի մըննինքյ էս վերը, տեսնանք տափեն տակեն հի՞նչ կա, վեր ստի ծոխ ա տուս կյամ:

Չորս աժդահեքյը էլհա վախըմ ըն: Հի՞նչ անին, բեդմա Աժդահակեն ասածը կդարին: Էլհա ընդի, հունցու վեր քարեն յրա յա սահանց օժը փորցալ, օզում ա ստեղ էլ փորցի:

Պիրում ըն փոկ քաշող հունարուվեն կըռնըտըկերան կապում, քյին-դիրավ կախ տամ էս վերեն մաչընըվեր: Տա պատառ թըքանըմ ա, վեր քյինամ ա փոսեն մաչընըվեր, սկսում ա ճըղճըղալը. - Վա՛յ էրից, վա՛յ էրից, վա՛յ էրից:

Էս խոսկերեն դառղան ըստրան տուլ ըն օնում: Պիրում ըն էրկունջինը կախ տամ տրեխ քաշող աժդահեն, վեր քյընա տեսնա տափեն տակեն հի՞նչ կա:

Շատ ա քյինամ, խրեգյ ա քյինամ, մին էլ ըն տեսնում էլհա ճղղաց.

Վա՛յ էրից, վա՛յ էրից, վայ՛ էրից:

Ըստրան էլ ըն տո՞ւս օնում: Ճղացեն քարերը վըեննըրը քըցող ա՞ժդա՞հեն ըն կախ տամ, սա էլ նահանց նման կարում չի քյինա՞, էլհա տո՞ւս ըն օնում: Հերթը հըսնում ա սարերը գյրվանքյա շինողեն: Ըստրան էլ ըն կախ տամ, սա էլ չի կարում տիմա՞նա՞, շատ ա ճըղճըղամ.

- Վա՛յ էրից, վա՛յ էրից,վա՛յ էրից, էլհա տո՞ւս ըն օնում:

Հերթը կյամ ա հսկա ա՞ժդա՞հա Աժդահակեն:

Էս մարթը ո՞ւրա՞ն հնգյերունցը ասում ա. - Իմ կռնըտըկերաս կապեցեք, կախ տվեք, հիշքան ասիմ. «Վա՛յ էրից, վա՛յ էրից, ինձ տուս չօնիք, կախ տվեք քյինա՞մ, մին տեսնամ վըեղեն տակեն էս հի՛նչ երգյիր ա, վեր ըստի ծոխ ա տո՞ւս կյամ:

Աժդահակը յոր ա օնում ո՞ւրա՞ն քաան փութանոց ըրկաթե միակը, գյորղա՞ն, կախ ընգնո՞ւմ, քյինա՞մ:

Շատ ա քյինա՞մ, խըեզյ ա քյինա՞մ, հըսնում ա տափեն տակեն մին երգյիր, տեսնում ինքյը վեննը կացած ա վեց տռան ըռաշկե: Աժդա՞հակը քընենքյ ա անըմ, թա՞. «Յըես հի՛նչ անիմ, հո՛ւնց անիմ, վեր նի մըննիմ էս տռները, տեսնամ ըստեղ հի՛նչ կա»:

Աժդահակեն հնգյերունքը հա՞լա՞ եշըմ ըն, տեսնան, թա էն հի՛նչ խա՞բա՞ր ա պերում:

Առաչին տըռնավը նի յա մըննում, տեսնում մին զարմանալի պեն: Մին օշափ կլո՞խը տիրած մին պառավ կնգա ծընգան, օխտը օրվան քոն նի մտած, մին ղոլեն էլ ստոլեն յրան մին սերուն ախճիգյ:

Աժդահակը ինքյըն ո՞ւրա՞ն ասըմ ա. «Մունք հենց ախճիգյ օզելի յընք եկալ, էս լա՞վ տեռավ»: Էտ դա՞րըմը տեսնում ա պատան կախ տված գյիրին յըրա կյիրած քյոհնա՞ հայ լո՞ւզվավ, վեր էտ սերուն ախճիգյը մեծն ա ո՞ւրա՞նց քղաքումը, հորը պըլըտներան մին օթախըմ նստած, օշափըն էլ ո՞ւրա՞ն պառավ կընգանավը ընդըա յրան պահակ ա տիրա՞ծ:

Աժդահակը սազ ա անում ո՞ւրա՞ն քաան փութանոց միակը վեր օշափեն կլխեն թխե, սըտկըցնե :

Պառավը Աժդահակեն ասում ա. - Ա՛յ աստուծու ղոնաղ, տու հիշտեղա՞ն ըս ընգալ ըստեղ, սուսըփուս տո՞ւս եք, թա՞ չէ օշափը եր ա կըննական քյըեզ մեհետան կոլ տա, քյըեզ մըեհման անե:

Աժդահակը եշից վուչ պռավեն խոսկերեն, հանից քաան փութանոց միակը, մին հետ ինդի շըրըխկցըրավ, օշափեն կլխեն, վեր սաղ պատառը

մնաց կեռեքյը: Պըլատեն պռավեն էլ սպանից, ախճիգյը տո՛ւս կալավ էն ծակսեն ռեխը, հի՞շտ եղ չորս ա՛ժդա՛հեքյը քյա՛նդիրը կախ ըրած պահում ըն, թա՛ տեսնան Աժդահակը հի՞նչ ա ասըմ ո՛ւրա՛նց:

Սերուն ախճիգյը թողում ա ըտեղ, էրկունջի տո՛ռնըն ա օզում պեց անի տեսնա ըտեղ հի՞նչ կա: Թըխում ա, տո՛ռնը կոտրում, նի մըննում պալատը, տեսնում ընդըրա նման մին սերուն ախճիգյ, ամմա օշափը իրեք օր ա մնացալ, վեր քունուտեղա եր կենա:

Պառավ պըլըտականը նստած ա օշափեն կոխկեն, վըխցընում ա Աժդահակեն , թա՛, - Օշափը էս սհաթեն եր ա կըննական, քյըեզ կօլ տա:

Աժդահակը վախըմ չի: Թըխում ա: Մին թխելավը սպանում օշափեն, պըլըտական պռավեն: Սերուն ըխճըկանը տո՛ւս օնում, պո՛ւրո՛ւմ առաչին ըխճըկանը կոշտը, վըխցընում ա, վեր միչև ո՛ւրա՛ն կյալը վեչ մինը տեղան տո՛ւրո՛ւր չի կյա:

Ետնան նի յա մըննում իրեքինջի տոռնը: Էլհա ինդի տեսնում ա նահանց անա մին սերուն ախճիգյ: Իրեքինջի օշափը քոն իլա՛ծ, խըրեգյ ա մնացալ, վեր եր կենա, պառավն էլ կոխկեն, վըխցընում ա Աժդահակեն:

Աժդահակը եշում չի, սըտկըցնում ա օշափեն էլ, պռավեն էլ: Սերուն ախճիգյը պո՛ւրո՛ւմ էն էրկու ըխճըկանը կոշտը:

Աժդահակը չորսինջի տռնավը նի յա մննում, տեսնըմ էլհա մին սերուն ախճիգյ: Էլհա մին օշափ քոն, մին պառավ քըշտեն: Էտ ըխճըկանը դա՛ռդա՛ն կտորում ա էտ օշափեն էլ, պռավեն էլ, ախճիգյը էլհա պո՛ւրո՛ւմ էն իրեք ըխճըկանը կոշտը:

Աժդահակը նի յա մըննում հենգյինջի օթախը, ըստեղ մին ախճիգյ ա տեսնըմ: Էս ախճիգյը լո՛ւսնինգյին տեղը իշեղ ա տամ, ըրիքյնակեն տեղ լո՛ւս ա տամ, սերունոթունը մարթու ջան ա էրում: Էլհա մին լոխճան մեծ օշափ քոն իլա՛ծ, մին պըռավու կոխկե: Աժդահակը սպանում ա օշափեն նան պռավեն, էս ախճիգյը ո՛ւրա՛ն հետե յա յոր օնում: Վեր պո՛ւրո՛ւմ ա էն չորս ըխճըկանը կոշտը, էս ըխճըկերքը մնամ ըն մաթ մնացած, վեր ստի կեղեցկոթուն կա աշխարքումըս, բա էլ ո՛ւրա՛նք հինչացու յը՞ ն:

Միհենգյ խոսինքյ չորս ա՛ժդա՛հաներան: Ըստրանք սկսում ըն քյա՛նդիրավ էս սերուն ըխճըկորանցը տո՛ւս պիրիլը:

Հերթը հսնում ա հենգյինջի ըխճըկանը, վեր տո՛ւս կյա, էտ վերան:

Էս ախճիգյը օզում ա, վեր առաչ Աժդահակին տո՛ւս օնին, քանի վեր

ո՛ւրա՛ն կյեղեցկոթունավը տարվելու յըն էտ չորս ա՛ժդա՛հեքյը: Աժդահակեն էտ վերան տո՛Լս չըն ուննական:

Էս ախճիգյըն ասում ա. - Սիրելի Աժդահակ, ինձ վեր տո՛Լս օնին, յոր ըն ուննական փախչին, քյըեզ թողին ըստեղ, տու եք, տո՛Լս եք, ինձ էլ տո՛Լս կալ, եր կալ քյընանք:

Աժդահակը հվատում չի՛, ասում ա, - Տու տո՛Լս եք, ինձ իմ հնգյերունքըս տո՛Լս ըն ուննական:

Հենգյինջի ախճիգյըն ասում ա. - Սիրելի Աժդահակ, ինձ վեր տո՛Լս օնին, քյըեզ տո՛Լս չըն ուննական, յըես վեր տո՛Լս կյամ, ըստեղավ կըքյինա՛ս, ըռաշկետ մին տո՛ռն ա իննական, նի կը մննիս ընդեղ, մին կա՛լ ա իննա՛կան, էրկու վեչխար լծած, կամները քըշելիս, ջա՛հտ կանիս սիպտա՛կ վչխարեն յրան նստիս, վեր քյըեզ լո՛Լս աշխարիք հանե, թա՛ չէ, վեր ընգնիս սև վչխարեն յրա, քյըեզ հանելու յա սև երգյիր:

Ըխճըկանըն ասած էս խոսկերքը կադարվում ա: Ըխճըկանը չորս ա՛ժդա՛հեքյը տո՛Լս ըն օնում, յոր օնում, փախչում, Աժդահակին թողում ըտեղ, վերեն մաչին:

Խոսինքյ Աժդահակին նեստա: Էտ չորս ա՛ժդա՛հեքյը եր կալին էտ սերուն ըխճըկորանցը փախեն:

Աժդահակը մնաց էտ վերին մաչեն: Քյինա՛ց բիդի վեցինջի օթաղը: Էն օթաղումը էրկու վեխճար, մինը սև, մինը՝սիպտա՛կ լծած կամնին, կալ ըն թակում:

Աժդահակը օզում ա, թա՛ սիպտա՛կ վխճարեն յրա նստե, բո՛Լրդա՛ն ընգնում ա սևեն յրան: Սևըն ընդրան տո՛Լս ա պո՛Լրո՛Լմ սև երգյիր:

Էտ սև երգյիրումը Աժդահակը քյինա՛մ ա մին պառավ կընգա տոն: Ընդեղ ծրավում ա, ճո՛Լր ա օզում, պառավը քյընամ ա կյուզո՛Լմ, պիրո՛Լմ տամ Աժդահակին, ընդրան հետե, վեր ճո՛Լր չի կար էտ ըշխարքումը:

Մին ճո՛Լր կար, մաչին մին գյուրզա՛ օխծ, վեր ժողովուրթը քանե հետե ճո՛Լր ա յոր օնում, մին մարթ ըն քիցո՛Լմ ըռեխը, ետնան ճո՛Լր յոր օնում: Էս վախտը թաքավերեն ըխճըկանը հերթն ա ընո՛Լմ, վեր բեդմա ըռեխը քցին, ճո՛Լր յոր օնին:

Աժդահակը կյամ ա թաքավերեն ըխճըկանը հետե պադրաստած տեսըտենը ստում, ո՛ւրա՛ն գորդանը յոր օնում, լենքին պահում, ընգնում էտ ճի-րին մաչին գյուրզին ըռեխը: Գյուրզին կտորում ա ըտեղ, մին տասը սաջին փա՛դու չանք թուփ անում:

Ըտրանա ետը քյինա̀մ ա թաքավերեն կոշտը, ասում.- Ինձ լո̀ւս աշխարհք տո̀ւս կալ, ինձ մին նպատակ օնիմ:

Թաքավերն ասում ա. - Ցըես կարալ չըմ, մինա̀կ մին պայման կա, թա̀ կարիս անիս, տու տո̀ւս կկյաս լո̀ւս աշխարհքը: Էտ պայմանն էն ա, վեր մեր էս երգյիրումը կա մին Ծովինար-դուշ: Նա մին էրգյան չինարու յրա պո̀ւն ա տիրալ, ձոտեր ըրա̀լ, թառ իլա̀լ: Մին մեծ գյուրզա օխծ կա, միշտ կյամ ա էտ դուշին ձոտերը օտում: Էս տարե էլ վեր օտե, էլ Ծովինար-դուշը մարթ չի տո̀ւս ուննական լո̀ւս աշխարհք:

Աժդահակը քյինա̀մ ա, էտ օխծը սպանում, տասը սաջեն փԱդու չանք թուփ անըմ, ետնան չինա̀րուն տակեն քոն ինո̀ւմ:

Ծովինար-դուշը կյամ ա, վեր էտ մարթեն սպանե, ձոտերը թողում չին, ասում ըն. - Տա յա մըեզ ըզադալ:

Էտ դուշը կյամ ա Աժդահակեն կոշտը:

Աժդահակը ասում ա. - Ինձ լո̀ւս աշխարք տո̀ւս կալ:

Ծովինար-դուշը ռազի յա ինո̀ւմ: Ասում ա. -Քյընա̀ օխտը փութ վխձարու տիմա̀կ պեր, օխտը տեգյ ձո̀ւր, մաշկես կապե, նստե մաշկես, հիշտեղ ծուլվամ-ծըկըլթամ, մին փութ տիմա̀կ, մին տեգյ ձո̀ւր պերանըս կըքցիս, վեր կարիմ քյըեզ տո̀ւս պիրիմ լո̀ւս աշխարհք: Վեր մին մըսխալ պակաս ինի, կարել չըմ տո̀ւս օնիմ:

Աժդահակը քյինա̀մ ա թաքավերեն կոշտը վխձարու տիմա̀կ օղում:

Թաքավերըն ասում ա. - Իմ վխձըրնես քեզ դուրբան, քյինա̀, մըթոտե, ձուրն էլ հանե ընդեղ, վեր ըզադալ ըս, երկալ, հիշքան օզըմ ըս:

Աժդահակը քյընա̀մ ա վխձըրնեն մըթոտում, ձուրն էլ յոր օնում, պիրում Ծովինար-դուշեն մաշկը կապում, մաչին նստում: Դուշը հղե յա ընգնում, հղեցը կեսումը խըեգյ ա մնում, վեր տո̀ւս պիրի, վերչին մին տեգյ ձո̀ւր նան մին փո̀ւթ տիմա̀կը օզում ա քցի պերանը, մին տըմա̀կ վեր ա ընգնում: Աժդահակը ջա̀հտ ա անում, ո̀ւրա̀ն վեննենը փափուկ մսան կտրում, քցո̀ւմ Ծովինար դուշեն պերանը: Ծովինարը կլո̀խ ա ընգնում, մին թա̀հրա̀վ տո̀ւս ա պո̀ւրո̀ւմ լո̀ւս աշխարհքը: Լո̀ւզվեն տակեն պահում ա էտ մսեն թիքյա̀ն:Ետնան տո̀ւս օնում, տընո̀ւմ Աժդահակին կտրած վետանը յրա, ո̀ւրա̀ն թեփուռան մինը պուք տամ, քո̀ւմ, լիվա̀նում ա: Ետնան Ծովինար-դուշը ասում ա.- Ինք առ իմ թեփուռներս էրկունը, ըշտեղ նեղըն ընգնիս ո̀ւրո̀ւր քըսի, յըես քըշտետ ըմ իննա̀կան:

Աժդահակը ո̀ւրա̀ն քսան փութանոց միակը յոր ա օնում, էլիա հղե ինո̀ւմ:

Շատ ա քյինո̀ւմ, խրեգյ ա քյինո̀ւմ, մին էլ ա տեսնում ո̀ւրա̀ն դավաձան հընգյերունքը էն ըն հազարավեր զորքավ ո̀ւրա̀ն էն հենգյ դա̀շա̀նգյ-սո̀ւրո̀ւն ըխձըկորցը փսակում, վեր տանին: Աժդահակը ըտրանց լոխձին կտորում ա, էն լոխ վըեսկեն, հարըստոթունը յոր օնըմ, էտ ըխձըկերքը ազադում, պերում ո̀ւրա̀նց շենը: Չորսին փըսակում ա, հինգինջինն էլ ինքը յոր օնըմ, նհետը փըսակվըմ:

Ըտրանա ետը Աժդահակը բախտավեր կյանք ա քաշում:

Էն ասթխերավ լիքը երգյինքան իրեք խընձո̀ր ա եր ընգնում. Մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ էս հա̀քյա̀թը լո̀ւս աշխարք քըցողին:

## 70.ՀԱՐՈՒՍՏԸ ՄԸՆ ԷԼ ՔՅԱ̈ՍԻԲԸ

Ընո̈ւմ ա, չի ընո̈ւմ մին հարուստ մարթ ա ընո̈ւմ: Էտ մարթին կնեգյը խոխա չար պո̈ւրո̈ւմ: Էտ հարուստ մարթըտ մին դո̈նում եր կալավ ո̈ւրա̈ն ծառանեն, քյինից էրո̈ւշ երգյրնե ապրանքնե ինքյ ունելի, ծխելի:

Հըղեցը տահանք մնում ըն մին շենում, մին քյա̈սիբ մարթու տան: Ըրո̈ւգյո̈ւնը հաց ուտելի վախտը, էտ քյասիբ մարթին պիծի խոխան կյամ ա տահանց կոշտը, սկսում տահանց նըհետ խաղ անելը:

Հարուստը էտ խուխեն շատ ա սիրում, ընդրան հետե, վեր ո̈ւրա̈ն խոխա չօնար:

Էտ հարուստըտ էնքան ա սիրում էտ խուխեն, վեր խուխեն մորը, հորը աւում ա. - Էտ խուխեն տեղ վըեսկե տանք, խոխան մըեզ կըտա՞ք:

Մարթ նան կնեգյ մըսլըհաթ ըն անում, ասըմ. - Վեր տանք, վըեսկեն ինքյ օնինքյ, մըեզ էլհա խոխա կինի:

Ըռութանա խոխան տամ ըն տրանց, վըեսկեն ինքյ օնում: Հարուստը ո̈ւրա̈ն ծառաներեն նըհետ խոխան յոր ա օնում, քյնո̈ւմ ըն ո̈ւրա̈նց հըղեն:

Հըղեցը պտահում ըն մին բխտըյեշու: Հարուստը բախտեն եշիլ ա տամ:

Բըխտըյեշին ասում ա. - Տու շատ հարուստ մարթ ըս, ամմա կնեգյըտ խոխա չի պիրում: Մին քանե տըռնանը ետը մին խոխա յա իննա̈կան, ամմա քու հարուստոթունըտ մին քյսիբու փայ ա տռնըլական:

Վեր բըխտըյեշին ասըմ ա, պըրծնում, սրանք միկա տեն ըն կենում, էտ խոխան թողում ծմակեն մաչին, մին ծառու փչակում, ո̈ւրա̈նք քյինո̈ւմ:

Էտ հարուստը քյինա̈լա̈նը ետը, քյա̈սիբը ո̈ւրա̈ն կնգանը նհետ մըսլըհաթ ա անում, վեր էտ վըեսկավը տներ շինին:

Քյա̈սիբը մին քանե մարթ ա յոր օնում, քյինըմ ծմակը, վեր փադ կտրե, պիրի:

Ծմակումը նա լսում ա մին խոխու լա̈ցու սա̈ս: Բիդի ինդի քյնո̈ւմ ա, տեսնում ո̈ւրա̈ն խոխան: Յոր ա օնում պո̈ւրում տոն:

Տահանք էտ փողավը մեծ-մեծ տներ ըն շինո̈ւմ, մաչին ապրում: Տղան կյամ ա տեռնում տասնոթ-քսան տրեկան:

Հարուստը ո̈ւրա̈ն առուտուրը օրիշ երգյիրնըերում պըրծըընելանը ետը կյամ ա տոն: Անց ա կըենըմ մին խիլլա̈ վախտ: Էտ հարուստը մըն էլ ա որոշում, վեր քյինի նորու, տական էլհա առուտուրի:

Քյնամ ա էլհա էն հա̈մա̈ն շենը, վեր առաչի դյո̈նումը ըլա̈լ ա: Տեսնում ա

էն քյա̈սիբը լա̈վ-լա̈վ տներ շինած, մաչին ապրում ա: Քյինո̈ւմ ա, նի միննում ընդեղ: Հարուստը մըն էլ քյա̈սիբը ո̈ւրո̈ւր նըհետ զրո̈ւց ըն անում, թա̈ էս տները հո՞ւնց ա շինալ:

Քյա̈սիբը նաղլ ա անըմ, ասըմ. - Մին դո̈նըմ մին հարուստ եկալ ա, մնացալ մեր տանը, հունցը տուք: Իմ խոխաս եր ա կալալ, հոքյըրվերթի, ետնան էս օյինը տրալ կլխես:

Քյա̈սիբը մանրամասը նաղլ ա անում, հինչ վեր հարուստին դո̈լան կըդարվալ ա:

Հարուստն ասում ա:- Պա էտ խոխան հո՞ր ա:

Քյա̈սիբն ասում ա.- Կկյա:

Հարուստեն մեթկը փոխվում ա, օզում ա, վեր էտ տղեն կլխեն մին քյա̈լա̈գյ տինի: Ասում ա.-Պա, մարթ չինի՞լ ստեղ, վեր ղարկինքյ, քյինի մեր տոնը, թըխտեր ըմ թողալ, պիրի:

Քյա̈սիբն ասում ա,- Պա մեր խոխան հի՞նչ ա, կըքյինի:

Մին խըրեգյ կենում ըն, տեսնում խոխան կյամ ա: Էտ հարուստը մին թոխտ ա կյրո̈ւմ, մաչին կյրում, վեր. «Ա կնեգյ, էտ խոխան վեր կյա, կտաք ղասբեն կլո̈խը կտրե»: Էտքանանը ետը, էտ տղեն ասում ա,- Կտանիս տաս մեր կնգանը, թըխտերը կտա, ճեյլի կպիրիս:

Խոխան թոխտը յոր ա օնում, քյնո̈ւմ տահանց տոնը: Ըռութանան տեսնում ա տահանք տանը քոն իլա̈ծ: Ինքյն էլ, տըռանը բլկոնեն մին կառավաթա ընո̈ւմ ակուշկեն տակեն, յրան պարանց ա ընգնում միչև վեր եր կենան: Տղան քնավ ա ընցնում: Հարուստեն ախչիգյը եր ա կենում, տեսնում մին տղա, կլխեն մին լա̈վ փափախ, մաչին մին թոխտ, ինքյն էլ քոն իլած: Ախճիգյը թոխտը յոր ա օնում, տեսնում մաչին կյրած, վեր. «Ա կնեգյ, էտ տղեն տոռ ղասբեն, սպանե»:

Ախչիգյը էտ թոխտը ճղորտում ա, մին թոխտ կյըրո̈ւմ, տնո̈ւմ փըփաղեն մաչին, վեր. «Ա կնեգյ, էտ տղան վեր կյա ըտեղ, կիվաքիս իմ պարիկամ-նիս, մին լա̈վ հըսանեքյ անիս, ախչիգյըս տաս ո̈ւրա̈ն»:

Կնեգյը ուռութանան եր ա կենում, տեսնում ըտի պեն: Ծեն ա տամ ո̈ւրա̈ն պարիկամներեն լոխճին, մին լա̈վ հըսանեքյ անում, տրան հետե:

Շատ ըն կենում, խըրեգյ ըն կենում, էտ ըխճըկանը մին խոխա յա ինո̈ւմ: Խա̈բա̈րը պիրում ըն, վեր հարուստը կյամ ա: Մին պեն, վեր էտ հարուս-տեն կնեգյը էրկու տղա էլ ա ընո̈ւմ պիրած, մըծըցըած: Վեր հարուստը

կյամ ա տանան մուտանում, փեսան, ախչիգյը՝ խոխան խտտեն, ո՛ւրա՛ն խոխենքյը, քյնո՛ւմ ըն, թա՛ տեսնան:

Էտ հարուստը, վեր էտ տղեն տեսնում ա, ասում ա.- Պա էս տղան հո՞ւ վա, էս պիծի խոխան հո՞ւ վա:

Կնեգյն ասում ա.- Տա քու փեսատ ա, էս մինն էլ քու թոռնըտ ա:

Կյամ ըն տոն, հարուստը մթկումը որոշում ա, վեր էտ տղեն սպանել տա:

Քյնո՛ւմ ա ո՛ւրա՛նց դա՛մո՛ւրչուն կոշտը, ասում.- Մին տղա յըմ ըղրկըլական կոշտտ, վեր կյա, կըքցիս կրակը, էրիս:

Էտ ասում ա, կյամ տոն, ո՛ւրա՛ն փսեն, թա՛.-Բա՛լա, բա՛լա, մին վազ տո, քյինի դա՛մո՛ւրչո՛ւն ասե խըլեղըս քե տա պեր:

Փեսան տո՛ւս ա կյամ, թա՛ քյնի, դըրբըզումը հարուստեն մեծ տղան պտահում ա:

Ասում ա. - Ըշտե՞ղ ըս քյինո՛ւմ:

Ասում ա.-Քյինում ըմ դա՛մո՛ւրչո՛ւն անա հորըտ խըլեղը պիրիմ:

Տա ասում ա.- Տու քյինի տոն, յըես քյինամ պիրիմ:

Տղան քյընամ ա, փեսան կյամ ա տոն: Հարուստըն ասում ա. - Պա խըլեղս հո՞ր ա:

Փեսան ասում ա. - Ծեր տղան պտահից, ասից, վեր յըես կքյնա՛մ պերիմ:

Հարուստը կըզնըվըմ ա, եր ա կենում վազ տամ, քյինո՛ւմ, տեսնում տղան քցա՛ծ կրակեն մաչը, էրած:

Հարուստը մին էլ ա պայման կապում դասաբեն նհետ, վեր տղան ըղարկե, քյինի, հանցու կլո՛խը կտրե: Կյամ ա տոն, փսեն թա. - Բա՛լա, բա՛լա, քյինի քաղաք, դսաբեն ասե էրկու գյրվանքա մես տա, պեր:

Փեսան տո՛ւս ա կյամ, դըրբզումը պտահում ա հարուստեն պիծի տղան, թա՛. - Հշտե՛ղ ըս քյինում :

Ասում ա. - Քյնում ըմ քաղաք, մես պիրիմ:

Հրուստեն տղան ասում ա. - Համոթ ա, տու քյինի տոն, յըես քյինիմ պիրիմ:

Փեսան կյամ ա տոն, հարուստն ասում ա.- Պա մեսը հո՛ր ա:

Ասում ա.- Ծեր տղան պտահից, ասից. Յըես կըքյինիմ պիրիմ»:

Հարուստը շատ կզնված, կըլխեն վայ տալավ եր ա կենում, քյինո՛ւմ , տեսնո՛ւմ էտ մին տղեն էլ դասաբը սպանած:

Փուշմ̀նած կյամ ա տոն, կնգանը ասում. - Ա՛ կնեզյ, մեր էս փեսան սա յա, սա յա, սա յա,- պատմում ա, թ̀ հո՞ւնց իլ̀ավ, վեր ընգ̀ավ ո̀ւր̀անց տոն: Բխտըյեշին էլ ասալ ա, վեր քու հարուստոթունիտ պիտի տ̀ըր տըեռնա մին քյ̀ասիբ տղա: Տրանա ետը ո̀ւր̀ան հինչ հրուստոթուն օնե, տամ ա էտ քյիսիբին տղեն, ինքյը հռանում ո̀ւր̀ան իլ̀ածան:

## 71.ՔՈՒՐԸ ՆԱՆ ԱԽՊԵՐԸ

Իլա̀լ ա, չիլալ մին ախպեր, մին քո̀ւր: Ըտրանք կարում չըն իլա̀լ ապրին: Քո̀ւրն ասում ա, - Ա՛յ ախպեր, քյինա̀նք ամեզյս մին տեղ կլխնես պահինք:

Ախպերն ասում ա. - Հա, քյինա̀նք:

Տրանք քյինա̀մ ըն: Քո̀ւրը մնում ա մին պառավի տան, ախպերը քյինո̀ւմ ա, քյինո̀ւմ, մին տան հըսնում, ասում,- Ինձ վեր կալիք, ձեր տանը պըհեցեք:

Նահանք ասում ըն, - Լա̀վ կինի:

Յոր ըն օնո̀ւմ, ո̀ւրա̀նց քշտեն պահում: Տրանց ինո̀ւմ ա էրկու խոխա: Մարթըկնեզյ մին օր քյնա̀մ ըն օրիշ տեղ:

Էտ տղեն ասում ըն. - Խխորցը կլըըցնիս:

Տա յեր ա օնո̀ւմ մին մեծ ղզղան ճո̀ւրը իփ ածում, խխոցը նստըցնում մաչին: Խըլխոցան մինը մեռնում ա, մինը մնամ ա սաղ:

Մարթըկնեզյ կյամ ըն, տեսնում էտ խխոցը իտի ըրած: Սկսում ըն լաց ինիլը: Վերչը հինչուվերե, էն մին խոխան լըվա̀նում ա:

Խազայինը մին դո̀նում ասում ա, - Խուխեն տո̀ւս կալ տոռնը, օթ ձձի:

Տո̀ւս ա օնում տո̀ռնը, խոխան լա̀ց ա ինո̀ւմ, հա̀րըն ասում ա, - Վեր մին էլ լա̀ց ինի, կթխիս, սպանիս:

Ըտրա խելքը կտրում ա, հվատում ա: Վեր մեհետ էլ ա տանում տո̀ռնը, վեր խոխան լա̀ց ա ինո̀ւմ, յոր ա օնում խուխեն մաչան էրկու կես անում, տամ շներեն: Հա̀րը նան մարը մին էլ ըն լա̀ց ինո̀ւմ:

Ըտրանա ետը մարթըկնեզյ մսլըհաթ ըն անում, տրա քշտան քյինին մին հեռու տեղ, կլո̀խ յոր օնին, կոռչին: Գյուղում ըն, վեր ո̀ւրա̀նց կլխնեն էլ ա քյա̀լա̀գյ կյա̀լո̀ւ, վեր ըտրա շուրշուփը տեսնան վէչ: Տահանք վեր մսլհաթ ըն անում, էտ տղան ըսկանում ա:

Մեհետ եր ըն կենում, թա̀ քյինա̀ն: Բիշի, կթնահունց ըն թխում, վեր յոր օնեն քյինա̀ն: Պադրաստում ըն, տնո̀ւմ միշուկումը, տինում տանը, վեր քյինա̀լիս տանին: Սա եր ա կենում, նի մննում միշուկեն մաչը: էքյսը եր ըն կենում մեշոկը շիլակում, քյինո̀ւմ:

Հղեննի մին շոն ա պտահում մարթըկնեզյ ասում ըն. - Հա՛յ մեր տղան ըստեղ ինի հա՛:

Էտ տըղան միշուկեն մաչան ասում ա.- Յըես էս ըմ ըստեղ:

Տահանք մնում ըն զյո̀ւնաքար: Վերջը տղան միշուկեն մաչան տո̀ւս ա կյամ, շոնը ըսպանում:

Մարթըկնեգյ օգում ըն տրան կլ՛ոխը վարին: Քյին՛ա՛մ ըն մին ծովու ղրաղէ մսլհաթ անում, վեր քշերը քցին ծովը: Էտ տղան կլխու յա ընգնում: Եր ա կենում, ՛ուր՛ան տեղը փոխում, քյին՛ոււմ կնգանը տեղը: Քշերը մարթը կնգանը կուփէ յա տամ, քցում ծովը, գյ՛ուղ՛ում ա, թ՛ա էն տղան ա:

Մարթն ասում ա. - Ա՛ կնեգյ, դե եր կաց տղան քց՛ալ ընք ծովը:

Էն տղան զ՛ուրթն՛անում ա, թ՛ա. - էս ըմ ըստեղ:

Մարթը տեսնում ա, վեր տղան չի քցալ ծովը, սկսում ա լ՛աց ինիլը կնգանը դ՛արդ՛ան: Էտ մարթը կլ՛ոխ ա յոր օնում, էտ տղեն քշտան, քյին՛ոււմ: Էտ տղան քյին՛ոււմ ա մին չոբանու կոշտը, չոբանեն խաթերը քթենում, շ՛որերը փոխում, ՛ուր՛ան շ՛որերը տամ ընդրան, վըխճըրնեն էլ ինքյ օնում, կյամ ծովեն կոշտը:

Էտ մարթը կյամ ա, տեսնում, մնում կյիժված, թ՛ա.- Էտ ըշտըղա՞ յըս պերալ:

Տղան ասում ա. - Ծովեն մաչան ըմ պերալ:

Աղան հարց ա տամ.- Պա ես հո՞ւնց պիրիմ:

Նա ասում ա.- Շ՛որերըտ փոխէ, թրչի մեր, ծովին մեչին վըխճըրնեն կյ՛ալու յըն իրեսը ընգնին: Ճելլի չանիս տ՛ոււ կյաս, կքյին՛աս տական էլ կպիրիս, ընդեղ էնա ամմեն կենթանուց լիգյը վախիս վեչ հա՛, կքյին՛աս:

Աղան շ՛որերը փոխում ա, մին զըեռ միակ յոր օնում, վեր նի մըննի ծովեն մաչը, ծովեն կոխկեն մին խիլլ՛ա նստում ա, մտածում. «էս ըշտղա՞ յա պերալ, էս շան տըղան, բա ծովեն մաչին վեչխար կինի՞»: Մին էլ նորու մտածում ա, թ՛ա ըշտղա՞ յա պերալ, պա էսքան վըխճըրնեն ստրան հո՞ւ տվավ, վեր ըրալ ա առաչը: Աստուծ ըսելավ, փ՛առքյ տեր աստված ըսելավ օզըմ ա նի մըննի ծովը, մինը կյամ ա կոշտը:

Տա հրցընում ա, ասում.-Ա՛ մարթ, իստի պեն, ծովեն տակեն վեխճար կինի՞ է

Տա ասում ա. - Հա, լոխ վըխճըրնեն ընդեղան ընք պ՛ուր՛ում:

Վեր իտի յա ասում, տա միակը յոր ա օնում, ընգյնում ծովեն մաչը: Ծո-վեն մաչին մին մեծ փեղ ա ընըմ, փաղը նի յա մըննում փորը, մեռնում ա:

72.ԴԱՆԳԼԱ ԿՆԵԳՅԸ

Ինըմ ա, չընըմ, մին մարթ ա ինըմ: Տըրան ինըմ ա մին դանգլա, դոդոշ կնեգյ: Մեհետ էտ կնեգյը քյնե̈ւմ ա ճե̈ւրը: Կյեռթնուկնեն կռկռամ ըն:

Էտ կընեգյն ասըմ ա. - Հի՞նչ ա, Ջլիհան բիբի, սանղերքը պիրիմ պուռթը կյզի՞ս:

Կյեռթնուկնեն մին էլ ըն կռկռամ: Էտ կնեգյը գյիդե̈ւմ ա, թա ասըմ ըն՝ «պեր»:

Քյնե̈ւմ ա տոն, պռթի թիլին վըեստերը պիրե̈ւմ ճե̈ւրը քցում, վեր կյեռթնուկնեն գյա̈քա̈ կյործին:

Էն մին օրը կյամ ա ճե̈ւրը, կռանում, տեսնում մին պսպղուն պեն: Էտ կնեգյը էտ փլստրատին տվող պենը յոր ա օնում, քյունե̈ւմ տոն:

Ուրե̈ւլգյե̈ւնը մարթը կյամ ա, ասում ա.- Ա՛ մարթ, էրեգյ վըեստերը տարալ ըմ տըվալ Ջլիհան բիբուն վեր գյա̈քա̈ կյե̈րծե, էս պենն էլ գյե̈լումն ա իլա̈լ, պերալ ըմ, անկյին քար ա:

Մարթը ասըմ ա. - Ա՛ կնեգյ, օրիշ տեղ ասիս վուչ: Տա անկյին քար ա:

Էքյսը էտ կնեգյը անկյին քարը տամ ա, մին պեռնը ժեվեր ինքյ օնում, տոնը սարքում:

Մարթին կյալի վախտը վազ ա տամ մարթին առաչը, ասըմ. - Ա՛ մարթ, տոնը սարքալ ըմ, մին եք տես, էն պծըպածի ընելիս քարը տվալը ըմ, մին պեռնը ժեվ ինքյ կա̈լա̈լ:

Մարթը կզնվում ա, կնգանը տանան տե̈ւս քցում:

Կնեգյը քյունե̈ւմ ա, տեսնում քյե̈ւչե̈ւմը մին օղտ վըեսկավ պեռնած: Էտ օղտը քըշըմ ա, կյամ բիդի տոն, ծեն տամ: Մարթը տոռնը քլըում ա, վեր կնեգյը կարե վուչ նի մննե:

Ասըմ ա. - Ա՛ մարթ, կըռըմեռ պելին ա, եկալ ա, տե̈ռնը պեց ըրա, կյա:

Մարթն ասում ա. - Ա՛ կնեգյ, ռադ չյը՞ս իննա̈կա՛ն կլխաս.- ըսկսում ա ե̈ւշե̈ւնց տալը:

Կնեգյն ասըմ ա. - Ա՛ մարթ համռթ ա, կըռըմեռ պելին կյամ ա, տե̈ռնը պեց:

Մարթը տե̈ռնը պենում ա, տեսնում մին օղտ, վըեսկավ պեռնած: Մարթն ուրխընալավ պիրում ա տոն, պեռնը քանդում, տղվարըմ, օղտը մորթում, ածում, կյումըմը մին տեռտակ ցորնի վեր կար, ընդրա մաչը, ինքյը ըռըջկետանը կապըմ, չինը յոր օնըմ, գյվա̈քյիս-թա հոնձ ա քյընըմ:

Ընդետանը կնգանն ասըմ ա, - Ա՛ կնեգյ, օրիշ տեղ ասիս վուչ, հա՛…

Կնեգյը քյունում ա տո՞ւսը, տեսնում մին թորք օղտեն շոռ ա կյամ:

Էտ կնեգյն ասըմ ա,- Կըռըմեռ պելուն ը՞ս շոռ կյամ, էնա մեր տանը, մեր մարթը վըեսկեն եր ա կալալ, ո՞ւրա՛ն մոռթալ ածալ վերը:

Թորքը կյամ ա մարթին ասում, մարթը վզավ չօնում, ասըմ ա- Էտ պենը հիքի՞ յա իլա՛լ:

Թորքը ասըմ ա,- Մին էրկու օր ա:

Կնգանան հրցնում ա, կնեգյն ասըմ ա. - Հնձին վըդին ա իլա՛լ:

Վերչը թորքը տեսնըմ ա, վեր ըտրանց անա պեն չի տո՞ւս կյամ, սուդի յա քըցում կործը: Էտ մարթը քյունո՞ւմ ա սուդը: Կնգանն ասըմ ա, տո՞ռնը կպահիս: Կնեգյը տեսնում ա, վեր մարթը ետէ յա կյամ, տռները պուք ա տամ, շլա՛կում, քյունո՞ւմ սուդը, էն վախտն ա տեղ հսնում, վեր մարթին խուսուցնում ըն:

Մարթը վեր կնգանը տեսնըմ ա իտի, ասըմ ա.- Տեսնում ը՞ք, ընդրա խելքը կլխե՞ն ա, վեր ըտրա ըսածին եշում ըք: Վեր խելքը կլխեն ինի, տռները կշլակե կյա՛, ասալ ըմ տռանը եշի, շլա՛կալ ա, եկալ:

Էտ մարթիքյ տեսնում ըն, վեր էն կնգանը խելքը կըլխեն չի, մարթին ըզադում ըն:

## 73.ՊԱՐՍԵՂԸ ՆԱՆ ԱՐՍԵՆԸ

Իլա̀լ ա, չիլա̀լ մին մարթ: Էտ մարթը ո̀ւրա̀նց շենին էլին տվարածն ա իլա̀լ, ո̀ւրա̀ն հալալ ըշխադանքավը տոնը պիելիս: Էտ մարթին ինո̀ւմ ա մին կնեգյ նան մին պուճուր մաղար-գյուղա̀ր տղա: Էտ տղին անումը ինո̀ւմ ա Պարսեղ:

Էտ մարթին կնեգյը միշտ մարթին իրեսն յեր խոսում ա, ասըմ. - Խալ-խերը ո̀ւրո̀ւր կլխե տներ ըն շինում, հեյվաննե օնին, վըխճըրներեն սո̀ւրո̀ւն իմբարվում չի՛, ծյանուցը իլխին հեսաբ չօնե՛, տու հի՞նչ ըս, շենին տա-վարը տանում ըս, պահում, պիրում, սոված փորավտ տանը վեր ըննո̀ւմ:

Էտ մարթը զա̀հլա̀ն տնելան, մին օր հեյվանը տանում ա շատ հեռե տեղ: Խոխան էլ ո̀ւրա̀ն նիետ տարած ա ըլնո̀ւմ: Հեյվանը խուլխեն թափշուր ա անում, ինքյը քյինո̀ւմ:

Շատ ա քյինո̀ւմ, խրեգյ ա քյինո̀ւմ, ընգնում ա մին օրիշ տերոթունի վըեղ: Էտ վըեղավը էնքան քյինո̀ւմ ա, վեր հսնում ա մին ծմակ:

Ծմակն էլ հի՞նչ ծմա՛կ, վեր ծռերեն եշում ըս, փափաղըտ վեր ա ըննո̀ւմ, երգյինքըն ըս շոռ կյամ, ասթխեր չըս տեսնում:

Էտ մթեն ծմակավը էտ մարթը մնչանք քյինամ ա, վեր հսնում ա մին գլո̀ւլլո̀ւ բաղ, էտ բաղին չորս ընգյո̀ւնա̀վը հասար ա ինո̀ւմ քաշած, ըրկաթե դրբզան յրա ըրած:

Էտ մարթը շատ ա չըրչարվում, վերչը դրբզին կլխավը նի յա մըննըմ բաղեն մաչը:

Էտ մարթը վեր մըննում ա բաղը, ըրմանում ա, վեր էլ ըշխարքես տակեն, կլխեն հինչ ծառեր կա, էտ բազումը ճարվում ա: Հինչ քախծըր բարնուբար, ցորտ-ցորտ ըխպըրնի ասիս, էտ բազումը ճարվում ա:

Էտ բաղավը շատ ա քյինո̀ւմ, խրեգյ ա քյինո̀ւմ, տեսնում ա մին լա̀վ պալատ: Նի յա մննում էտ պլատեն մաչը: Էտ պլատումը բա̀զի օթախ պեց ա ինո̀ւմ, բա̀զինը քլլած, նի յա մննում մին պեց օթախ, տեսնում իփած մես, օրիշ պեներ, մին տեղ ղզղըններն խուրազյավ լիգյը, պուժկըններն կյինավ լիգյը:

Շոռ ա կյամ էտ տները քյիլիղներեն պնելիքյնեն քթենում: Պենում ա տոները նի մննում, տեսնում մին տան վըեսկե յա վեր ածած, մին տեղ արծաթ ա թեղ տված, էտ ըրծաթան էլ, վըեսկան էլ մին խիլլա̀ յոր ա օնում, փլավան օտում, կյինան խմում, շելա̀կը լիգյը, փորը կռշտ ըտըղան ետ ա տեռնըմ, կյամ:

Շատ ա կյամ, խրեգյ ա կյամ, իր սնում ա ո՜ւրա՜նց շենր:

Էտ պիրած ըրծաթավր, վրեսկավը ո՜ւրա՜ն հետե պըլըտնե յա շինում, մին քանե տարե խանու նման ըպրելանր ետը, էտ մարթին աշկր ծակվում ա, ասում ա.-Մին էլ քյինա՜մ, էլիա շելա՜կս վրեսկավ, ըրծաթավ լցած կյամ:

Էտ մարթր հղե յա ինո՜ւմ բիդի վրեսկուն մա՜ղա՜նր:

Էն պալատր էն վեր վրեսկեն, արծաթր պերալ ար, մին օխտր կլխանի օշափու պալատա իլա՜։ Էտ օշափր հա՜նդա՜ն կյամ ա, տեսնում, ո՜ւրա՜ն կյինան խմած, փլավան կերած, վրեսկան, ըրծաթան եր կալած, քյնա՜ցած:

Տա ասում ա.- Էս մարթր, վեր էս մա՜ղա՜նր ճընանչալ ա, մընգ էլ ա կյլա՜կան, մին բուսր պահիմ, տեսնամ էտ հի՞նչ իլա՜թ-միլլա՜թ ա, վեր ռիսկ ա րրալ, եկալ ըստեղ:

Էտ մարթր էրկուինջի դո՜նո՜ւմր, քյինո՜ւմ ա, թա՜ վրեսկե պիրի, օշափր փռնում ա էտ մարթին վեզր կտրում, տինում ղզանումր, իփում, օտում:

Շատ ա ընցնում, խրեգյ ա ընցնում, էտ մարթին տղան մծանում ա, խելքր կտրում ա, մորան հըրցնում ա, թա- Ա՛ մար, ապան հո՞ր ա, թո՞ռն ա քյեցա՛լ, խե՞ չի կյա՛մ:

Մարր խուխեն ըսկցնում ա, վեր պենր հինչումն ա: Նա ասում ա. - Քու հա՜ր մին քյա՜սիբ մարթ ա իլա՜լ, շենին տավարր պիելիս, քյնա՜ցա՜լ ա գյուղում չըմ ըշտեղա վրեսկե պերալ, տները շինալ, հեյվաննի ինքյ կա՜լա՜լ, լա՜վ հրուստացալ: Ամմա վեր ծեռքեն վրեսկեն կլխալ ա, քյա՜ցա՜լ ա վեր մընգյ էլ վրեսկե պիրի: Քյինա՜ցա՜լ ա, էլ ետ չի եկա՛լ:

Էտ կուճուր տղան եր ա կենում հորր հետան քյինա՜մ: Տա սորաղ ընելավ քյինո՜ւմ ա, տո՜ւս կյամ օշափեն երգյիրր:

Շոռ կյամ պալատնեն, վրեղերր: Տա կլխու յա ըևո՜ւմ, վեր էտ պալատր օշափու պալատ ա, հա՜րն էլ եկալ ա էտ պալատր, տրա հետե էլ օշափր հորր կերալ ա, տրա հետե էլ միշտ ինքյր զենքավ, զրահավ ա շոռ կյամ, սայաղ ա կենում:

Օշափր վեր հա՜նդա՜ն կյամ ա, տեսնում ա վեր ո՜ւրա՜ն պալատան մրթավետ ա կյամ: Շոռ ա կյամ ամմեն մին ծակըծուկ, քթենում ա էտ տղեն: Տահանք կըռև ըն անում: Օշափրն օզում ա՝ ընդրան օտե, ամմա տղան հախտում ա, ո՜ւրա՜ն թորավր տամ ա, էտ օշափեն օխտր կլոխր անցկցնում, ամմա մաչի կլխան մին ճիլ մնամ ա սաղ, վեզր մնում ա կախ իլա՜ծ:

Էտ օշափը ղաչանք ա անում, վեր էտ տղան մընգյէլ թխե, ամմա էտ տղան թխում չի՛: Էտ տղան պլատեն պինձլիքնին յոր ա օնում լոխ օթախնին կրենդ-կրենդ պրավերկա անում, տեսնում մին օթախ վրեսկավ լիգյ, մինը՝ ըրծաթավ, մինը մարթու մեյիդավ լիգյը: Մընգյէլ էտ տները լոխ կրենդ-կրենդ քըլլում ա, տո՞ւս կյամ բախչան:

Մըխըե վախտ տղան ըտեղ ապրում ա, խելքը փչում ա, վեր քյինձ ո՞ւրձնց ըլձծ չլձծը ծախե, մարը յոր օնե, կյա ըտեղ ապրե: Էտ մըթկավը ըլձծ, էտ տղան հղե յա հինո՞ւմ, բիդի ո՞ւրձնց շենը:

Քյինձմ ա մեթկը մորը նհետ ասում, ամմա մարը ղաբո՞ւլ չի հինո՞ւմ: Տղան ասում ա.- Կյաս, կյաս վեչ, յըես քյիննձկան ըմ:

Մարը տըեսնըմ ա, վեր տըղան կոխկը տեմ ա ըրալ, ինքյն էլ ա ռազի կենում: Ո՜ւրձնց տները, հեյվաննին լոխ ծախում ըն, հղե հինո՞ւմ օշափեն աշխարքը: Մին խիլլա վախտ ըտեղ ապրում ըն, մարը տանը նըստո՞ւմ ա, տղան էլ քյինո՞ւմ ա վըերս անում, պիրում, մարը տանը խորագյ ա իփում, օտըմ ըն:

Մին դո՞նըմ էլ տղան վըերսի քյինձլիս, մարը շատ ա ղանչանք անում, ասում.- Հես ա խիլլա վախտ ա ըստեղ ապրում ընք, ամմա սաղ պալատը ճընանչըմ չըմ: Պնալիքնին ինձ տո, տեսնամ ըստեղ հի՞նչ կա, հի՞նչ չիկա:

Տղան ռազի չի կենում, ամմա մարը շատ ա ղանչանք անում:Տղեն յրա ազդում ա, տղան պնձլիքնին տամ ա մորը, համ էլ ասում.-Ա՛ մար, կարող ըս օթախնին լոխ պենաս, կընդ վերչին օթախան կման:

Մարը լոխ օթախնեն պեց ա անում, էտ տանը իլձծ չիլձծը տեսնում, վերչի օթախը պեց չանում:

Շատ ա մտածում, խրեգյ ա մտածում, ասում ա.- Մին պեց անիմ, տեսնամ հի՞նչ կինի:

Պեց ա անըմ, տեսնում հի՞նչ, լոխ մեյդեր ա, վսկրնե, վեր տեսած: Ամմա ընգուճավը մին սձս ա ըննո՞ւմ: Տա շոռ ա կյամ, տեսնում էտ օթախին մեչին մին վեր, էտ վերան մին տնքտնքոց ա կյամ:

Մուտանում ա, տեսնում էն օշափն ա, վեր կլխեն մինին մի ճիլը սաղ ար մնացալ: Տա քշտեն մեյդերը լոխ կերալ ա, ապրալ: Էտ կնեգյը տրան տընևալավ խեղճըն ա կյամ, հիբը վեր հաց ա օզում, ճո՞ւր ա օզում, էտ կնեգյը տանում ա տամ:

Էտ օշափը լվձնո՞ւմ ա: Օշափ նան էտ կնեգյը պարիկամանում ըն:

Էտ օշափեն անա էտ կնեգյը պատճառավեր ա տեռնում: Վեր տղան գյիդա՚ վուչ, էտ կնեգյը պիրում ա ուրա՚ն շո՛րում պտտորում, վեր լափ մահլում ա տեռնում, էտ տղան հրցնում ա.- Ա մա՚ր, էտ հի՞նչա յա՛:

Մա՚րըն ասըմ ա. - Ա՛ բալա, շատ մեչ ըմ կերալ, նրանա յա:

Տղան միամիտ, աշխարքաս բեխաբար ա ինո՛ւմ, հվատում ա մորը: Մին օր էլ տղան վեր վըրսատեղ ա ինո՛ւմ, էտ կնեգյը ազադվում ա: Հո՞ւնց անե, հո՞ւնց չանե, էտ պիճը պո՛ւրո՛ւմ ա պա՛րո՛ւր անում, տանում տինում էն կուրմունջեն յրա, ըշտըղավ տըղան կյալու յա:

Տղան վըերսատեղա կյալիս տեսնում ա կըմուջեն մին պա՛րո՛ւրո՛ւմ խոխա յա լա՛ց ինո՛ւմ :

Յոր ա օնում պո՛ւրո՛ւմ տոն, տամ մորը, ասում. - Ա՛ մար, աստված ինձ մին ախպեր ա տըվալ:

Մարը վայ-վրուդ ա անըմ, ասում.- Պա էս խոխան հի՛նչավ կպահենքյ, հի՞նչ կտանք:

Տղան ասում ա.- Աստված թա՚ էս խոխան տվալ ա մըեզ, քու ծծերըտ էլ կլըցնե, կաթնը կտաս:

Տհենց էլ տեսնում ա, սկսում ա ծեծ տալ խուխեն: Խոխան օրանց օր մըծանում ա: Էտ տըղեն կնքում ըն, անըմը տընում Արսեն: Արսենը շատ ա սիրում Պարսեղին: Արսենը մեծ ախպորը հետան մեռնում ար: Էն ըշտեղ քյինամ ա, ղանչանք ա անում, վեր ո՛ւրա՚ն էլ նհետը տանե: Մեծ ախպերն էլ ընդրա խոսկը կոտրում չի, ընդրան շատ ա սիրում:

Տահանց մա՚րը լավ պարիկամոթուն ա անում օշափեն նհետ:

Մին ղո՛նում էլ Արսենը լսում ա տահանց զրուցը:

Հա՚րը նան մարը խորուրթ ըն անում, վեր մին հնար քթենան Պարսեղին սպանին:

Էտ խոսկը վեր Արսենը սկանում ա, քյինում ա ախպորը առաչը, ընդրան խաբար տամ, ասըմ.- Մեր ծնողնին խորուրթ ըն ըրալ, վեր քյըեզ սպանին: Սայաղ կաց, վեր կարան վեչ սպանին:

Օշափը հինչ վեր էլ անըմ ա, կարում չի Պարսեղին սպանե: Ճարը կտրած կյերպարանքը փոխում ա, վեր թաքուն կարե վնաս տա Պարսեղին:

Մին ղո՛նում, վեր Պարսեղը քյեցալ ար հա՚նդը, նա արչ ար տեռալ, քյեցալ կըմուջեն տակեն կյողըը կացալ, վեր Պարսեղը կյա՚լիս, օտե ընդրան:

Ամմա Արսենը հորան իվիլ ա ինո՛ւմ պիճ: Քյինում ա էտ կուրմունջեն

կոխկին մըչանք կենում, վեր ախպերը կյամ ա, ընդրան խա̀բա̀ր ա տամ, ինքյն էլ նհետը կյամ։ Օշափը վեչ մին պեն կարըմ չի շինի։ Մեհետ էլ էտ օշափը մին օց ա տեռնում, քյինա̀մ տըռանը կլխեն կյողլը կենում, վեր Պարսեղը տոն նի մըննելիս պկավը տա, խեխտի։

Ամմա Արսենը վազ ա տամ, ախպորը դույուղ անըմ, վեր պենը հին-չումն ա, ինքյն էլ ախպորը օսերին նստում, նի մըննում տոն։ Էս դո̀նումն էլ չի օշափը կարում աասծը անե։

Մեհետ էլ էլիա օց տեռած քյինա̀մ ա, նի մըննըմ կյումեն հուճորքը, վեր Պարսեղը ծին տանե կապե, վիզավը տա, խեխտի։ Էս դոնումն էլ Արսենը ախպորը ղանչանք ա անում, վեր ծին ինքյը տանե կյումըմը կապե։ Կու-ճո̀ւր ախպոր փա̀նդերավը Պարսեղը պըրծընում ա ամմեն մին փոր-ցանքա։

Պարսեղը մտածում ա, փսըկվիլի վախտը կյամ ա, ամմա դե էտ դո̀լի սամթերքումը ախճիգյ չիկար, վեր նհետը փսակվեր։ Մորը նհետ խոսկը մին ըն անում, տա տանան տո̀ւս ա կյամ, քյինո̀ւմ մին թա̀զա̀ թաքավերու աշխարք։

Մինչի հղե ինիլը կուճուր ախպորը նհետ խոսում ա ո̀ւրա̀ն նպատակին մասին։ Մին պեց տա̀նա̀կ էլ տինո̀ւմ ստոլեն, համ էլ ասում.

- Տա̀նա̀կը վեր նհետ ինի́, նշան ա, վեր ինձ մին տժբախտոթուն ա պտահալ, հետաս կկյաս։

Տա հղե յա ինո̀ւմ, քյինա̀մ։ Էտ թաքավերոթունան տո̀ւս ա կյամ, նի մննում օրիշ թաքավերոթուն։ Ընդրա առաչին ինո̀ւմ ա մին մեծ ծմակ։ Էտ ծմակը քյինա̀լիս մին պռանչուց ա ըսկանում, քյինո̀ւմ ա, տեսնում մին փա̀լա̀նգյ, վըեննը մին ղա̀լա̀մ ընգյած, ղա̀լա̀մն էլ ա̀ռնա̀ծ։ Էտ փա̀լա̀նգյը կարում չի տեղան տո̀ւրո̀ւր կյա։ Ղա̀չա̀նք ա անում էտ մարթին, վեր ո̀ւրա̀ն թրավը թխե, վըեննը ազադի, հինչ վեր օղի, կտա։

Էտ տղան ասում ա.- Վախըմ ըմ քյըեզ ըզադիմ, ինձ վնաս տաս։

Փա̀լա̀նգյըն ասում ա. - Վընաս չըմ տալ, հինչ վեր օզիս, նհենց կանիմ։

Պարսեղն ասում ա - Քու ճտերատ էրկունը ինձ կըտաս։

Թըրավ թըխըմ ա, վըեննին վահրը տո̀ւս ա կյամ, վըեննը դինջանում։

Էտ փա̀լա̀նգյը ո̀ւրա̀ն ճտերան էրկունը տամ ա Պարսեղեն։ Տա Փլա̀նգյեն ճտերը եր կալած հղեն շարունակում ա։

Շատ ա քյինո̀ւմ, խըեգյ ա քյինո̀ւմ, տեսնում ա ծմակեն մաչին մին

դՙաշՙանգյ տեղ, մին լՙավ տոն շինած: էտ տղան նի յա մըննըմ էտ տոնը, տըեսնում ա մին լՙավ, դՙաշՙանգյ ախճիգյ էտ տանը նստած:

Էտ ախճիգյը էտ տղեն ասում ա. - Հու կյամ ա էս սամթերքը, պիտի ինձ նհետ կըռեվ անէ, միհենգյ տու յա պիտի ինձ նհետ կըռեվ անիս, յա թՙա չէ վեննըտ վետանըտ առաչին չըս կարալ տինիս:

Տղան համաձայնվում ա կըռեվ անէ:

Պարսեղը նան էտ ախճիգյը կըռեվ ըն անում: Տու մի ասիլ, էտ տանը մին վեր կա կտրած, կլխավը մին գյՙաբՙա քըցած, էտ ախճիգյը օգնում ա, թա Պարսեղին քցի էտ վերը:Էն փլՙանգյին ճոտերը յրա յըն պըրծնում, էտ ըխճկանը յրան, էտ ախճիգյը Պարսեղեն պեց ա թողնում: Պարսեղը ըզադ-վում ա:

Պարսեղը ՙուրՙան փլՙանգյին ճոտերը եր կալած հղեն շարունակում ա: Քյինՙամ ա, հսնում թաքավերեն քաղաքը: Փլՙանգյեն ճոտերը ծմակըմը կյե-ղում ա, ինքյն էլ քյինՙամ մին պառավ կնգա տոն, ղոնաղ ինՙում:

Մին օր էտ թաքավերը ազառամիշ ա ընՙում: Հՙաքյիմնեն ասում ըն. - Պիտի մրալու կաթնը խմէ, վեր լվՙանՙա:

Էտ թաքավերին էրկու փեսա յա ընում, մինը՝ գեներալ, մինն էլ՝ իշխան: Տահանք շատ ըն չըչարվում, խըեգյ ըն չըչարվում, կարըմ չըն մրալու կաթնը ճարին: Մին փեսան էծու կաթն ա պիրում, մեշնՙակ փեսան էլ վխճարու կաթն ա պիրում, ամմա տըհանցա մինն էլ թաքավերեն քյՙումՙագյ չի անում: Էտ խՙաբՙարը Պարսեղը սկանում ա:

Կյամ ա թաքավերեն կօշտը, ասում. - Թաքավերն ապրած կըենա, վեր յըեւ քյըզհետէ մրալու կաթնը պիրիմ, ինձ հի՞նչ կտաս:

Թաքավերն ասում ա.- Թաքավերոթունես կեսը քյըեզ կտամ: Էտ Պարսեղը ՙուրՙան զենքը-զրահը կապում ա, փլՙանգյին ճոտերը յոր օնում, նի մննում ծմակը: Ճոտերը սաղ ծմակավը շոռ ըն տամ, էտ ծմակում հինչ ապրանք ընՙում ա, լոխ ղալ մեչ անում, մին մարալ փոնում, կթում, պիրում թաքավերեն հետէ:

Ամմա թաքավերեն էն էրկու փեսան, էն տղեն հետը պահում ըն, տղան վար կյամ ա քաղաք, ընդրան փոնում ըն, կաթնը խլում, էն տղեն էլ տոն քցում:

Կաթնը պՙուրՙում ըն թաքավերեն հետէ: Թաքավերը խըմում ա, լվՙանում: Մին խիլլՙա վախտանը ետը, էտ թաքավերը էլհա հիվանդանում ա:

Էս դ՞ոնում էլիա հ՞աքյիմնեն ասում ըն. - Պիտի մըրալու մես օտե:

Էտ փըեսեքյը քյին՞ամ ըն էծու, վխճարու մես պ՞ուր՞ում, ամմա վեչ մինն էլա օքութ չի անում:

Ըտեղ թաքավերը մին պեն ա կըլխու ընգնում:Ասում ա. - Էտ հո՞ւնց ա, կաթնը պերալ ըք, ամմա մեսը կարըմ չըք պիրիքյ:

Էտ փըեսեքյը քյին՞ամ ըն, էն տղեն քթ՞անըմ, մեծ ռուշվաթ վըզ՞ավ օնում, ամմա էլ տղան ասում ա. -Ծեր մին պենը էլա հարկավեր չի՛, ինձ մին փեչատ օնիմ, պիրաք ծեր ջանը փիչատիմ, ետնան քյին՞ամ, մեսը պիրիմ ծըեզ տամ:

Տըհենց էլ անըմ ըն: Թաքավերը էլիա յա լվ՞անում: Ամմա էտ թաքավերին պռաված վախտըն ար, հիվանդըթունը նրանա ծեռք չար քաշում: Թաքավերը մին էլ ա հիվանդանում: Էս դոնում էլ ծանըր:Հ՞աքյիմնեն ասում ըն, վեր պիտի մրալու սըերտ ճըղե, սրտին մեչին ՞ար՞ունը խառնե կաթնեն նհետ խմե: Տա հո՞ւնց ծեռք կպերին, փսոտենքյը մնացալ ին մտըծելիս: Էլիա քյին՞ամ ըն էն տղեն կոշտը:

Էն տղան ասում ա. - Կաթնը կպիրիմ ծըեզ տամ, ամմա սըերտը յըես պիտի պիրիմ:

Կաթնը պիրում ա, տամ փսոտանցը, սըերտն էլ ինքյն ա տանըմ, թաքավերեն աշկեն ըռաչին ճղում, խառնում կաթնեն նհետ, թաքավերը խմում ա, լվ՞անում:

Թաքավերը լվ՞անալան ետը ՞ուր՞ան ծառաներան հըցնում ա. - Հի՛նչ մարթ ըս, հո՞ւ վըս, հո՞ւ չըս:

Էտ տղան նաղլ ա անում ՞ուր՞ան անա: Թաքավերը գյիդ՞ալ՞ավ վեր մրալին կաթնը, մեսը էտ տղան ա պեր՞ալ, ամմա փսոտենքյը խ՞ափ՞ալ ըն, թ՞ա ՞ուր՞անք ըն պերալ, փսոտանցը տ՞ուս ա անում պլատան, նահանց վեչ մին պեն էլա տամ չի, ամմա ՞ուր՞ան կուճուր ախճիգյն էլ Պարսեղին նհետ փսակում ա, օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ա անում, խոսկ տամ, վեր ՞ուր՞ան մռնելանը ետը թաքավերը Պարսեղեն նշանակին: Փսկվելան ետը Պարսեղը միշտ վըերսի յա քյին՞ամ, ամմա միշտ ՞ուր՞ան առուծեն ճոտերը նհետը տանում ա:

Մին դ՞ոնում էլ քյին՞ամ ա, հսնում ծմակեն էն տեղը, ըշտեղ եկալ ա, պտահալ ծմակումը շինած մին պլատու, մեջին էլ մին դոչչաղ ըխճկան: Էտ ախճիգյը ստիբում ա տղեն, վար կըռեվ անեն, ամմա էն պայմանավը,

վեր առուծեն ճոտերը կպոտեն, նոր կըռեվ անեն: Տհենց էլ անըմ ըն: Էտ ախճիգյը հախտըմ ա տղեն: Տըղեն քըցըմ ա վերեն մաչը: Առուծեն ճոտերը վերչանք ծիքյ-ծիքյ ըն անըմ, վեր տըրո̀ւչը քյո̀ւմա̀գյ անին, ամմա կարըմ չըն: Հենց էտ վախտը փակվում ա էն տա̀նա̀կը, վեր ո̀ւրա̀նց տանն ա թողալ, ստոլեն յրան, վեր հիբը վեր փակվե, նեղ տեղ ա, հետան կյան: Արսենը տըրսնալավ վեր տա̀նա̀կը փակվալ ա, ախպորը հետան քյինո̀ւմ ա: Շատ ա քյինո̀ւմ, խրեգյ ա քյինո̀ւմ, հսնում ա էն ծմակը, վրդեղ ախպերը տո̀ւս ա կա̀լա̀լ առուծեն վետանը փոշը, էրկու ճոտ եր կա̀լա̀լ: Տա տեսնում ա հա̀մա̀ն առուծեն վետանը ղա̀լա̀մը ընգած, ղա̀լա̀մըն էլ ա̀ռնած: Առուծը կարում չի տեղան տո̀ւրո̀ւր կյա:

Էտ մարթին ղաչանք ա անըմ, ասում, վար. - Մին դո̀նում էլ ըս տու ինձ ըզադալ, մհենգյ էլ ըզադե, էրկու ճոտ էլ մհենգյ կտամ:

Արսենը էնքան Պարսեղին նման ա ըննո̀ւմ, վեր առուծը գյիդո̀ւոմ ա, թա̀ էն առաչվա տղան ա, վեր ո̀ւրա̀ն ըզադալ ա: Արսենը կլո̀խ ա ըննո̀ւմ, վեր Պարսեղը էս հղցավն ա քյացալ, ինքյն էլ էտ առո̀ւծեն ա պտահալ:

Արսենը վեր առո̀ւծեն վետանը ղա̀լա̀մը տո̀ւս ա օնում, էրկու ճոտը ինքյ ա օնում, հղեն շարունակում:

Շատ ա քյինո̀ւմ, խրեգյ ա քյինո̀ւմ, հսնում ա թաքավերեն քաղաքը: Քաղաքեն ժողովուրթը ո̀ւրո̀ւր անավ ըն ընգալ, վեր թաքավերեն փեսան քյեցալ ա վերսի, էլ եկալ չի: Էս տղեն տըրսնալավ ըստեղ ասում ըն, վեր թաքավերեն փեսան եկալ ա, էտ տղան դա̀ստի կլո̀խ ա ըննո̀ւմ, վեր ո̀ւրա̀ն ախպերը թաքավերեն փեսան ա տեռալ, ծեռքը տննո̀ւմ ա ճկատեն, վար գյըվանքիս թա ազառու յա, խնթրում ա էտ մարթուցը վեր ո̀ւրա̀ն տանին թաքավերեն պալատը, ո̀ւրա̀ն օթախը:

Տհենց էլ անում ըն: Վեչ հաց ա օտում, վեչ ճո̀ւր ա խմում, վեչ էլ խոսում ա կնգանը նհետ, կնեգյը մնում ա ըրմացած: Ո̀ւրո̀ւգյո̀ւնը վեր կնեգյը տեղերը շինո̀ւմ  ա, վեր քոն ինեն, էտ տղան ղա̀մա̀ն տո̀ւս ա օնում, տնում ո̀ւրա̀ն նան կնգյանը ղաթավը, վեր սահմանը հնցնե վեչ: Կնեգյը ըրմանում ա, վեր հինչի հետե յա տհենց անում: Էտ տղան վեր քըշըրհանա եր ա կենում: Կնգանան հրցնում ա, թա̀ ինքյր վեր հղցավ ա քյնա̀ցա̀լ վըերսի, օշը կլխեն չիլա̀լ, մըտան ընգալ ա, թող նշանց տա: Քյինա̀ցա̀ծ հղեն նշանց ըն տամ: Էտ տղան եր ա կենում ո̀ւրա̀ն առուծեն ճոտերը յոր օնում, քյինա̀մ:

Շատ ա քյինո̀ւմ, խրեգյ ա քյինո̀ւմ, հսնում ա էն ղոչչաղ ըխճըկանը պա-լատը, տեսնում մին շատ ղա̀շա̀նգյ ախճիգյ քշտեն էլ էրկու առո̀ւծի ճոտեր: Էտ տղան կլո̀խ ա ըննո̀ւմ, վեր էտ էրկու արռո̀ւծեն ճոտերը ո̀ւրա̀ն ախ-պորըն ա: Տա սղիբում ա ըխճկանը, վեր ախպորը տեղը ասէ: Էտ ախճիգյը հա̀լա̀ մին վզա̀վ չօնում, ետնան ասում ա. - Հա̀լա̀ եք մին կըռեվ անինքյ, ետնան կասիմ:

Էտ ախճիգյն ասում ա.- Կըռեվը կըռեվ, ամմա պետք ա առո̀ւծեն ճոտերը կապենքյ:

Ամմա տղան ռազի չի կենում: Տահանք կըռեվ ըն անում, առո̀ւծեն ճոտերը քյո̀մա̀գյ ըն անում տղեն: Տղան հախտում ա, վերը պա̀նո̀ւմ, տեսնում վար ախպերը վերումն ա: Տո̀ւս ա օնում, էրկու ախպերը չորս ճոտերավ էտ ըխճկանն էլ յոր ըն օնում, քյինա̀մ թաքավերեն պալատը: Ըտեղ ամմեն հինչ պարզվում ա: Էտ ղոչչաղ ըխճըկանն էլ փսակում ըն Արսենին նհետ, մեծ ախպերը ո̀ւրա̀ն կնգանավը նան թիգյնապահերավը կուճուր ախպորը տանում ա, թողնում ո̀ւրա̀նց տանը: Էրկու ախպորըն էլ մարը թա̀զա̀ղա̀ն հրսանեքյ ա անում ո̀ւրա̀նց տանը:

Կուճուր ախպերը ո̀ւրա̀ն կնգանավը մնում ա ո̀ւրա̀նց տանը, ամմա մեծ ախպերը ետ ա տեռնըմ թաքավերեն պալատը: Թաքավերը պռավծ ա ընո̀ւմ, կանուխ մեռնում ա: Պարսեղին նըշանակըմ ըն թաքավեր, ամմա Արսենն էլ ո̀ւրա̀նց պալատումն ա տարը տըըա̀կան տեռնում: Էրկու ախպերն էլ խուխատար ըն տըեռնում: Ո̀ւրա̀նց գյանքեն մեչին էրկու ախպերն էլ լա̀վ պարիկամոթուն ըն անում, կոզի հորավ խորթ ըն հինո̀ւմ, մորավ հալալ ըն ընո̀ւմ: Տրա համար էլ ո̀ւրո̀ւր հետե թըեվըըթիգյունք ըն ընո̀ւմ, մինը վար նեղ տեղ ար ընո̀ւմ, էն մինը նեղ օրեն հսնում ա: էսքանավըն էլ նաղլը պրծնում ա:

## 74.ԼԱ̀Վ ՏԸՆԴԵԳՅՈՒՆԸ

Ինըմ ա, չինըմ մին շենըմ մին քյա̀սիբ մին էլ մին հարուստ տոն ա ինըմ: Ըտրանց ինըմ ա ո̀ւրո̀ւր յաշի էրկու տըղա:

Ըտրանց փըըրկվելի վախտը վեր կյամ ա, էրկուսըն էլ նշանվըմ ըն:

Հըրսանիքյին օրը հարուստին տըղան վեր տեսնըմ ա քյա̀սիբին տըղին նշանածին, հորըն ասըմ ա. - Ա՛ հա̀ր, խե չը՞ս էն ախճիգյը ինձ հետի օզալ:

Հա̀րըն ասըմ ա,- Տա անկըտրելի ծըմերուկ ա, գյիդվա̀լ չի, վըերըն ա լա̀վը, վըերը՝ փիս: Տըրկյո̀ւսիլ մի, հա̀լա̀ վախտ կա՛:

Հըրսանիքյնին պըրծընըմ ա, ամմեն մարթ քյինըմ ա ո̀ւրա̀նց տոն: Քյա̀-սիբին հարսը տեսնըմ ա, վեր էտ տանը մին կարք չիկա, լոխ շաղված, եր տըեռած, տոնը եխտոտ, տըկըկլոխ իլա̀ծ, մինը տանըմ ա, մինը պերըմ, էլ գյուղվըմ չի, թա հո՞ւ վա մեծը, հու վա պուճո̀ւրը, լոխ եր ածած, եր փըռած, աչ ըն թըխըմ, ծախ շըպըրտըմ, ծախ ըն թըխըմ, աչ շըպըռտըմ:

Էտ հարսըն ասըմ ա.- Էս տանը մին մեծ պիտի, իստի ա̀մա̀լ չի կյալ, իստի հիշքան էլ աշխադիք, պեն չի ըրվալ, օջաղըն էլ կըքա̀նդվի...

Սկեսուրըն ասըմ ա.- Տու մեծը իլ, կառավարե, լա̀վ տոն տըեռիքյ:

Հարսը ռազի չի կըենըմ, ասըմ ա.- Քանի վեր ինձա̀նա̀ մեծը կա, խե՞ բեղմա յըես կառավարիմ:

Էրգյան խոսելանը ետը, հարսը ռազի յա կըենըմ, ասըմ.- Դեվեր իտի յա, էն վախտը բեղմա ինձ անգուճ օնիքյ, վեչ մինը ծըեռքը տերտակ էս մըղակավըս բեղմա նի չի մըննի, լա̀ վեր մին լա̀վ պեն էլ պերի վեչ, մին չոփ ա, մին քար ա, մին տերտակ պեն ա, յոր օնի կյա տոն:

Էտ հարսին ասածնին անըմ ըն:

Մին դո̀նըմ պատրունը ծըմակ ա քյինըմ, ամմա կացինը տանն ա թողըմ, մըտան քըցըմ ա յոր օնի:

Ասըմ ա. - Այ հա՛յ, պըռավալ ըմ, մըտաս պեն ա ընգնըմ, աշխարքիս մըթկերին դո̀նըն ըմ ընգնըմ, շաղվըմ:

Տա ետ ա տըեռնըմ, թա կյա տոն, կացինը յոր օնի, մըետըն ա քըցըմ հարսին ասածը, վեր տերտակ ծըեռքավ տոն չի կյան: Տա տես ա եշըմ, տեն ա եշըմ, տըեսնըմ ա մին սպանված օց:

Էտ օցը յոր-օնըմ, քըցըմ էշին յրա, կյամ տոն: Վեր տանան մուտանըմ ա, մըթկըմը ասըմ ա. -«Հարսըս օցան կը վախի, ջահիլ ա բըրդան մին պեն կինի»:

Տա տանըմ ա օգը քցըմ կըտերը, կյամ տոն, հարսին աըմ.-Մին պեն ըմ պերալ, ամմա էքյուծ նշանց կըտամ:

Էրկունջի օրը հարսը պըցըանըմ ա կըտերը, տեսնըմ մին թընգակին քար, վեր Ջումրուտ դուշը կըտուցան եր ա քըցալ, թողալ ըտեղ, օգը եր կալալ, տարալ:

Էտ հարսը էտ բարը յոր ա օնըմ, կյամ տոն: Էքյսը թաքավերին չա̀ռչին ջա̀ռ ա կանչըմ, աըմ.- Ա՛ ժողովուրթ, տո̀ւս եկեք, տո̀ւս եկեք հա, տո̀ւս եկեք:

Թաքավերին հրամմանն ա, թաքուհին մին թընգյակին քար ա կուրցրալ, հու վեր ճարալ ա, պերի տա: Թաքավերը ճարողին իրեք քըսակ վըեսկե յա տալու: Ա՛յ ժողովուրթ, լա̀վ ըսկացեքյ, իրեք քըսակ վըեսկե՛:

Էտ վեր լըսըմ ըն, պատրոնը նան հարսը եր ըն կըենըմ, քյինըմ թաքավերին պալատը, էտ անկյին քարը տամ թաքավերին:

Թաքավերը ըտրանց իրեք քսակ վըեսկե յա տամ: Ըտրանք յոր ըն օնըմ, կյամ տոն:

Էտ վըեսկավը ո̀ւրա̀նց հետի լա̀վ-լա̀վ պալատնի յըն շինըմ, վեր էտ պալատներին շոքը ընգնըմ ա, էն հարուստին տոնը ծասկըմ:

Էտ հարուստ տըղին հա̀րը ո̀ւրա̀ն տըղին աըմ ա. -Վեր քյըեզ ըսեցի անկըտրելի ծըմերուկ ա՞, հետե մերը խակ, անհամ ա տո̀ւս եկալ, ո̀ւրա̀նցը քախծըր, կյա̀րմո̀ւր:

Թող ծըեր պենն էլ միշտ հաճող ինի՛, ա՛ հա̀քյա̀թ լըսողնի՛:

75.ՊԱՐԻ ԿՆԵԳՅԸ

Մին թաքավեր ո՛ւրա՛ն ըխճըկանը նհետ տո՛ւս ա կյամ, ման կյալ: Հա՛նդըմը մին ջա՛հիլ տղու յըն պըտահըմ, մին մեծ պեռնը ցա՛քյ շլակեն տընքտընքալավ քյընա՛մ ա:

Թաքավերըն ասըմ ա.- Ախճիգյ ջան, էտ տղան խե՞ յա ինդի փիս ապրում:

Ախճիգյըն ասըմ ա.- Ա՛ հա՛ր, նա մեղավեր չի՛, ընդրան վեր կնեգյ ինի, ինդի չի ապրել, կնեգյըն ա մարթուս գյանքը:

Հա՛րըն ասըմ ա.-Ապրիս, ախճիգյըս , վեր իտի խելք օնիս:

Ըտեղ թաքավերեն ախճիգյը սիրահարվըմ ա էտ տղեն յրա:

- Ա՛ հա՛ր, վեր օխտը երգյիր փչանա, յըես քյըննա՛կան ըմ էտ տղեն:

- Ախճիգյըս, պե՛լ չը՛ս, կյիժ՛ չյը՛ս, տի պեն կինի՛, իսկի տա տեսնված պեն ա՛, վեր ինի, խալխը մըզանավ կըծըծաղին, մազաղ կանին, կասին թաքավերեն ախճիգյը քյինա՛ց մին ախկաղ տղու:

- Զարմանալի պեն ըս ասըմ, ա հա՛ր, նա հի՛նչ մեղավեր ա, վեր ախկաղ ա: Ա՛ հա՛ր, թա՛ տրան տվեր, կըքյինա՛մ, տրան չի տվեր, ինձ կըսպանիմ:

Թաքավերը տեսնըմ ա, վեր ախճիգյը դո՛ւզ ա ասըմ, համ էլ պենդ ա նեստա կացալ էն տղեն անա, կանչում ա էն տղեն, ասըմ.- Ա՛ ջա՛հիլ, ախճիգյըս քյըեզ ըմ տամ, քյինա՛ ապրի, իմ վեղըմը ախկաղ մարթ չի պիտի ինի:

Տղան շունրակալ ա ինո՛ւմ:

Ախճիգյըն ասըմ ա:-Ա հա՛ր, վեր քյինա՛մ ըս, մին քսան մանեթ փող տո:

Հա՛րը քսան մանեթ փող ա տամ, քյինա՛մ պալատը: Թաքավերեն ախճիգյը էտ տղեն նհետ քյընա՛մ ա տըղեն տոնը, տեսնըմ մին քյա՛սիբ տոն, մին քանե շո՛րը մո՛ր, օրիշ վեչ մին պեն:

Կնեգյըն ասըմ ա. - Ա՛ մարթ, կա էս տասը մանեթը, քյինա՛ բազար, առուտուր ըրա, պեր:

Մարթը յոր ա օնըմ տասը մանեթը, քյընա՛մ:

Հղեննի մին մարթ ա պտահըմ, ասըմ ա. -Ըշտեղ ը՞ս քյընա՛մ:

Ասըմ ա.- Քյինա՛մ ըմ էս տասը մանեթին առուտուր անիմ, կյամ:

Էտ մարթն ասըմ ա.- էտ տասը մանեթը ինձ տո, մին լա՛վ պեն սըվըրցընիմ:

Միամիտ տղան փողը տամ ա ո՛ւրան, ասըմ.- Հինչ վեր ա, հա՛լբա՛թ մին լա՛վ, հարկավըրական պեն կինի՛:

Էտ մարթըն ասըմ ա.-Քշերը քյա̀րվանը ծո̀րում վեննը չանիս, միշտ թումբումը վըեննը կանիս:

Էտ տղան ետ ա տեռնըմ փոխըփեշմա̀ն կյամ տոն:

Ասըմ ա.-Ա՛ կնեգյ, ստի-ստի պեն ա պըտահալ:

Կնեգյըն ասըմ ա.- Վեչինչ, մտածել մեր, երկալ էս տասն էլ, քյընա̀:

Էտ տըղան նորու քյընա̀մ ա բազար:

Էս դո̀նհո̀ւմն էլ մին մարթ ա պըտահըմ, ասըմ.- էտ տասը մանեթը ինձ տո, մին լա̀վ պեն սըվըրցնիմ:

Տամ ա ո̀ւրա̀ն: Էն մարթըն ասըմ ա.- Հինչու յըրա քյընա̀ս, ռիսկավ կըքյընա̀ս:

Կյամ ա տոն, կընգանը ասըմ.- Ա՛ կնեգյ, իստի-իստի պեն ըմ ըրալ, կնեգյըն ասըմ ա.- Վեչինչ, աստված մեծ ա, մտածիս վուչ:

Մին քանի օրան ետը մարթըն ասըմ ա.- Ա՛ կնեգյ, տու տոնը պահե, յըես քյինա̀մ ըշխադանք անիմ: Պադրաստվում ա, քյընա̀մ:

Հըըցումը ընգնում ա մին թա̀րա̀քյամու նհետ:

Քյընա̀մ ըն: Շատ ըն քյինա̀մ, թա̀ խըրեգյ, մին ծո̀րավ քյընա̀լիս պըտահըմ ըն մին օրիշ վեր եկած քյըրվանու:

Քյըրվանեն մեծն ասըմ ա.- Մունք էլ ստեղ վեր կյա̀նք:

Էտ մարթըն ասըմ ա.- Ծո̀րումը լա̀վ չի, անց կենանք էն թումբումը վեր կյանք:

Տի էլ անըմ ըն: Քշերվա կեսին մին վարար սել ա կյամ, էն ծո̀րին քյարվանը քըշըմ: Տահանք ըզադվըմ ըն: Ստեղ քյարվանեն մեծը տրան մին օղտապեռնը վըեսկե յա տամ: Ըտըղան հղե յըն ինո̀ւմ: Մին անճո̀ւր ճընըպարավ քյընա̀լիս շատ ըն ծըրավըմ: Մին հովուզ ըն քթենըմ: Վեչ մինը ռիսկ չանըմ նի մընննի, ճո̀ւր տո̀ւս օնե: էտ տղան նի յա միննըմ, մին քանե հետ քյա̀նդիրը կախ ըն տամ, ճո̀ւրը լիգյը կոժը տուս օնում, մարթուցըն էլ, ըպրանքն էլ բավարարում:

Էտ տըղան օզում ա թա տո̀ւս կյա, բո̀ւրդա̀ն մին տո̀ռն ա պենվում, մին հո̀ւրո̀ւփերի ախճիգյ ա տո̀ւս կյամ:

Էտ ախճիգյըն ասըմ ա,- Տու հի՞նչ մարթ ըս, վեր նի յըս մտալ, ճո̀ւր տո̀ւս կա̀լա̀լ, խըմալ ըք: Վեր էտքան ռիսկավ ըս, կա էս էրկու նոռնը, հարկավեր կըկյա:

Էտ տըղան վեր տո̀ւս ա կյամ, էս դո̀նումը քյըրվանեն մեծը մին օղտապեռնը վըեսկե էլ ա տամ ո̀ւրա̀ն:

Քյըրվանեն մարթոցան մինը ետ ար տեռնըմ ո̀ւրա̀նց տոն: Էտ տըղան նոռնեն մինն էլ, վըեսկեն էլ տամ ա, տանըմ ա կնգանը տամ, միչև ո̀ւրա̀ն ետ կյալը, վեր կնեգյը յոլա քյինա̀:

Կնեգյը ստանըմ ա վըեսկեն էլ, նոռնըն էլ: Նոռնը պճըղում ա, թա̀ տա սկեսվերը, ինքյն էլ օտի, էտ նոռնեն մաչան էնքան անկյին քար ա վեր տեռնըմ, վեր տոնը լըցնում ա: Ղոչչաղ կնեգյը էն ղարաղամեն տեղը, անկյին քարերան ծըխիլա̀վ, մին ինդի պալատ ա շինիլ տամ, վեր ո̀ւրա̀ն հորը պալատան պեցո̀ւր ա ինո̀ւմ:

Մարթը ղարիբոթունում շատ ա կենում, թա̀ խըեգյ, վերչապես կյամ ա, տեսնըմ ո̀ւրա̀ն ղարաղամեն տեղը մին մեծ պալատ: Մնամ ա զըմացած, թա̀ էս հի՞նչ հրաշկ ա:

Մտածըմ ա, ասըմ.- Հա̀լբա̀թ մին թաքավեր եկալ ա մեր քաղաքը եր կա̀լա̀լ, իմ տանըս տեղը պալատ շինիլ տվալ:

Ըստրանա-ընդրանա հըրցնըմ ա, թա̀ փլանքյասեն տոնը ը՞շտե՞ղ ա: Էտ մարթըն էլ էնքան ղարիբոթունում կենըմ ա, վեր հըրըվաննին ճնանչում չըն:

Ասըմ ըն.- Պա հատե, էտ պալատը ընդրանն ա: Մարթը վախում ա, թա̀ նի մըննե, մին էլ ռիսկ ա անըմ, նի մըննըմ պլատեն դըրբըզավը, տո̀ռնը թակըմ, ո̀ւրա̀ն կնեգյը տո̀ւս ա կյամ, տեսնըմ ո̀ւրա̀ն մարթըն ա, ո̀ւրո̀ւր պըչպըչորըմ ըն, քյընա̀մ մաչ դո̀լ:

Մարթըն ասըմ ա.- Էս հի՞նչ հրաշկ ա, ա՛ կնեգյ:

Կնեգյըն ասըմ ա. - Քու ղարկած նոռնեն մաչեն իլա̀ծ անկյին քարան ըմ շինալ:

Մարթըն ուրըխացած ասըմ ա.- Ա՛ կնեգյ, պա ընդրանա մինն էլ պերալ:

Պըճըղում ըն , սաղ պալատը անկյին քարավ լըցնըվում ա: Մին պալատ էլ ըն շինիլ տամ, թաքավերեն կանչըմ ղոնաղ: Թաքավերը կյամ ա, պալատնեն տեսնըմ, մնըմ քըացած: Ախճիգյը լա̀վ քյեփ ա նշանց տամ հորը, ետավ էլ ասըմ.- Ա՛ հա̀ր, մետա ա՛ , վեր էս տղեն տեսենքըյ, գա̀քյը շլակած, ըսեցե նա մեղավեր չի, կնեգյ չօնե, ըսեցե նա կարող ա ըշխադե, հրուստանա , տեսե՞ր վեր յըես դո̀ւզ ըմ ասալ…

Թաքավերը խըտըտում ա փսեն, ըխճըկանը, ասըմ.- Ծեր ըրըրմունքեն հետե տուք արժան ըք տեռնալ թաքավեր-թաքուհի: Ծըեզ ըմ տամ իմ թաքավերոթունս, վայելեցեքյ:

Էն օրանը տեսը նաիանք տեռնըմ ըն թաքավեր-թաքուիի։ Աշխարքը ըպրուստավ լցնըմ, քյըսըբըրութունը վերացնըմ։

Մեր էն վա̀րթա̀վ լիգյը բըխչան իրեք փոնջ վարթեր քըղեցե, մին փոնջը՝ ըսողեն, մին փոնջը՝ լըսողեն, մինն էլ էս հա̀քյա̀թնին լո̀ւս աշխարք քըցողեն։

76.ԴԵՐ ՏԸԵՌԱԾ ՄԱՐԹԸ

Իլա̀լ ա, չիլա̀լ մին մարթ, մին կընեգյ ա իլա̀լ: Ըտահանք շատ քյա̀սիբ ըն իլա̀լ: Մին թա̀հրա̀վ կըլխընին պահըմ ըն իլա̀լ: Մին հետ շենըմը հըրսանիքյ ա ինո̀ւմ: Էտ կընգանն էլ ըն ծըեն տամ, տանըմ, նըստըցընըմ սուփըրեն կըլխեն: Ամմա վըեր քյոխվեն կնեգյը կյամ ա, տընատարըն ասըմ ա,- Ա՛ խչի, պատառ տըվըեր կաց, քյոխվակենը նստե:

Էտ կընեգյը պատառ տվըեր ա կըենում, քյոխվակենը նստում ա:

Մըն էլ վըեր դերեն կընեգյըն ա կյամ, ասըմ ըն. - Ա՛խչի, պատառ տվեր կաց դիրա̀կենը նըստե:

Պատառ էլ ա տվեր կըենում, դիրա̀կենը նստըմ ա:

Աստէլամ վըեր հարուստ կընեգյ ա կյամ, ասըմ ըն.- Ա՛խչի, պատառ էլ տվեր կաց:

Իստի տվեր կնալավ, էս կընեգյը ընգնըմ ա առե մըղակը: Կենըմ չի, եր ա կենըմ, կյամ տոն:

Մարթին ասըմ ա.- Տու վըս, վեր տու վըս, բեդմա դեր տըեռնաս:

Մարթն էլ ճարը կըտրած ասըմ ա.- Ա՛ կնեգյ, լա̀վ: Հինչու ասըմ ըս, կանիմ, թա̀քյ լըհա̀ քու քյեփավըտ ինի:

Էտ մարթը իրեսը վեր չի անըմ չըքյելանը մըրոքը ըրգյընանըմ չի:

Վեր մըրոքը ըրգյընանում ա, տանան տո̀ւս ա կյամ, քյընո̀ւմ թա̀ դեր տեռնա, ամմա վեչ փիլոն օնե, վեչ էլ խաչ:

Շատ ա քյընո̀ւմ, թա̀ խըրեգյ, ախրը տո̀ւս ա կյամ մին շեն: Տու մեր ասիլ, էս շենումը դեր չի ինո̀ւմ: Էս շենացիքյ տեսնում ըն, վըեր էտ մարթին դերու մընան էրկան մրոք օնե, ամմա դերու շենքը-շնորք չօնե, յանի քյի, խաչ, ավետարան, փիլոն չօնե, մուտանըմ ըն, հըցընում.- Ա՛ դեր, հի՞նչ ա պըտահալ, հի՞նչ դազաբու յըս եկալ, էտ հի՞նչ հա̀լո̀ւմ ըս:

Դերըն ասըմ ա. Ա՛ վերթիքյ, տո̀ւս ըմ եկալ, թա̀ կա̀լերը օրթնիմ, էն դոլավը ընցնելիս տեղը, կյողերը ինձ յրա տեռեն, ինձ թըլընեցյեն: Հըմնչելաս նըհետ մեր շենը չի քյընա̀ցե, կըլո̀խ եր կալե թա̀ կորչիմ, տո̀ւս եկե էս շենը:

Շենացիք շատ ըն ուրխանըմ, վըեր ո̀ւրա̀նց շենն ա տո̀ւս եկալ էտ մարթը: Տանըմ ըն տնո̀ւմ ո̀ւրա̀նց դեր: Էտ դերեն շատ լա̀վ պահում ըն:

Քյընո̀ւմ ըն դերին կնեգյըն էլ պո̀ւրո̀ւմ: Էտ կընեգյն էլ ա շատ ուրխանում, վեր դըրա̀կեն տեռավ, վըեր ամմեն տեղ սուփրին կլխեն ըն նըստըցնում:

Էս շենացիքյ մըչանք դոնգի յըն ընո̀ւմ, վեր ըսկի կըլխո̀ւ չըն ընգնում, թա̀ բա դերը ժամումը հի՞նչ բիդի ասե, հի՞նչ բիդի անե:

Մին օր էլ շենումը մին մարթ ա մեռնում: Էս մարթը քյա̀սիբ ա ընո̀ւմ, ամմա դե չորս ախպեր ա ընո̀ւմ ըտրան: Վեր տանում ըն թա̀ թաղին, դերը սաբավ ժամ ա ասըմ.

- Ալելույա՛, ալելույա՛՛՛, քյինիմ Ծա̀մծո̀ր՛, կյամ Ծըկոռե՛, ընդղան էլ կյամ Բընազու՛ր... Ընդըղան ետ տըեռնամ էլիա կյամ Ծկոռե՛, Ալելույա՛՛՛...

Իտի մին քանե հետ ասըմ ա, վերչը էտ մարթին տանըմ ըն թաղում, կյամ տոն:

Շատ ա ընցնում, խրեգյ ա ընցնում, էտ շենին խուջեն տղան մեռնում ա:

Վեր տանըմ ըն, թա̀ թաղին, դերը խուջեն պադեվ ընելե հետե ժամ ասելը պատառ ըրկընցընում ա:

Ասում ա.- Ալելույա՛, ալելույա՛՛՛, քյինիմ Ծա̀մծո̀ր՛, կյամ Ծկոռե, ընդըղան էլ կյա̀մ Բընազո՛ւր, ընդըղան էլ կյամ Տըրպզո՛ն[1], ալելույա՛, ալելույա՛՛՛...

Ըստեղ էն քյա̀սիբ մարթին ախպերքյը կըզնվում ըն, թա̀ խե՞մեր ախպորը հետե քյեցավ վեչ Տըրպըզոն, խոջեն տըղեն հետե քյըընո̀ւմ ա:

Ընդահանք կյամ ըն դերին փռնում, մին լա̀վ թակում, հա̀լա̀ քըցում, խաչը նան ավետարանը ծըեռքան ինքյ օնում, թող անըմ: Դերը թակված, փշրված կյամ ա տոն:

Կնեգյը ասըմ ա.- էտ հի՞նչ ա պըտահալ:

Դերը լոխ նաղլ ա անըմ, թա̀.-Պա ասել չը՞՛ս իստի-իստի պեններ ա եկալ կըլո̀խս: Կնեգյն ասըմ ա.- Աշկըտ էլ ըն հանալ, ըռխետ հերիք չա՞՛ր Ծա̀մծո̀րը, Ծըկոռե՛ն, Բընազու՛րը, վեր ընդըղան էլ քյեցեր Տըրպըզո՛ն, քյըեզ տեղն ա, առռե լա̀վ ըն ըրալ, վըեր քյըեզ քյութըկաթակ ըն տըվալ:

Մըթըկնեգյ եր ըն կենում կյամ ո̀ւրա̀նց շենը: Էլիա էն քյա̀սիբն ըն, էն քյա̀սիբը:

Մարթը բիդի ո̀ւրա̀ն խելքավը, ո̀ւրա̀ն քըռթնընքավը ապրե, թա̀ չէ ո̀ւրո̀ւշո̀ւ խփիլա̀վ ապրուստ չի ինի՛լ:

[1] Ծա̀մծո̀ր,Ծկոռեն,Բնազուր գյուղեր են, Տրպոզոնն էլ Տրապիզոն քաղաքն ա:

77.ԴՌՆԱՂԸ

Մին դ՞նում մին թա՛զա՛ գյա՛լան բէխաբար մարթ ղոնաղ ա ընգնըմ մին տան:

Էտ տանը ինըմ ըն մին մարթ, մին կընեգյ: Ըտրանք էտ ղոնաղին պադն ըն տամ, ղազ ըն մորթում, տըպակում, փորը խնձ՞րավ լցնըմ, կյինի-արաղ եր տինում, չայ-պեն ածում, տինում ըռաշկեն, վըենները լըվանում, բա՛ստա՛միշ անում, լա՛վ փափուկ, թա՛մ՞ւզ, թա՛զա՛, ղարաբաղու վեխճարի պըռթա՛ շոլկի յըրղուն-դ՞շա՛կըմ քընցնում:

Քըշերվա կեսին տնատարը եր ա կենում, տ՞ւս կյամ տ՞ռնը: Հա՛լա՛ մին երգյինքին եշում ա տըեսնում, պա՛րզ, թա՛զա՛ օթումը էն մոք կյա՛պ՞ւտ երգյինքըմը աստխերը փըլըստրատին ըն տամ:

Ասըմ ա.- Մա՛սսա՛քըտ ճաքէ Ղարաբաղի երգյի՛նքյ, էտ հի՞նչ ա քու հա՛լըտ, ասիս լհա՛ յըես էլ ինիմ երգյինքա՛ն կախ ընգած, ասիս լհա՛ վըեններս տափին չինի՛...- Պա՛հ, պա՛հ, պա՛հ, փա՛, մին տըես էն սարերան հի՞նչ սա՛րին քամի յա կյամ է՛, լոխ ծաղկի վըետ ա՛:

Էտ մարթը համ ասում ա, համ մին լա՛վ սունչ քաշում, վըետ քաշըմ: Էլ գյուղ՞ւմ չի, վեր էտ վախտը միչն ինքյը տեսա՛վ-տնա՛վ ա ընգալ, ղոնաղը եր ա կացալ նի մտալ ՞ւրա՛ն կընգանը ծոցը: Էտ տնատարը իտի մուլի-շուլի ընելավ ետ ա տըեռնում, ծանդըրըմըեծ կյամ տըվարեն ղալին քըշ-տավ մին պուճուր բախճա կար, մեչին վարթ, կընանչի, տես-տեն, եշում տեսնում, մին վարթ հենց պըճղվալ ա ասիս օզումա թա՛ լհա՛ տրաքվի՛, ճաքվի՛, փ՞ւ կյա՛,՞ւրա՛ն դա՛շա՛նգյ ինիլավը մարթի հոքի փառավերի՛:

Ասում ա. -Պա՛հ, քու մըեռալը վա՛յ տամ, հա՛լա՛ մին էս քյափ՞ւրին եշի է՛, ա՛սիս լհա՛ մին մարալ-ջեյրան, մեշկը պերա՛կ ախճիգյ ինի, մին տըես հունց ա ըրորվում, վի՛յ աման ա՛, լհա՛ էն երգյինքին, էն պըլպըլալիս տեղը դինջ չի կենող, էն կյա՛պ՞ւտ երգյինքըմը լըղլըղալիս, ծըփծըփալիս լ՞ւս աթըլխը ինի՛, քըշացած եկած մեր բախչան:

- Հըսս, ուխա՛յ, վըետիտ մատաղ,- ասում ա, պըրծնըմ, մին էլ մին լա՛վ վըետ քաշում, ետ տեռնում տոն: Էտ վախտը ղոնաղը կընգանը քըշտան տ՞ւս ա կյամ, շ՞րերը կյենում, հայդա՛...

Տնատարը ետավ գյուղ՞ւմ ա, ետավ ա կըլխի ընգնըմ, վեր ղոնաղը եկալ ա ՞ւրա՛ն կընգանը կոշտը: Տեռնըմ ա մին օթի-օրփա՛թ , մին ՞ւրփըլթա՛վուր, ՞ւրա՛ն մեչին օռած, տըռռոն տեռած:

Առաչ մին լա̀վ կրնգանը փըչէչը քանդում ա, բիչերը ծիքյ-ծիքյ անըմ, ետավ եր կենում, լամբը վառում, կրնգանը առաչը քըցո̀ւմ, ասում.- Դե հա՛, շո̀ւտ ըրա քյինինք, էն դոնաղին կըլխին տես հա̀լա̀ հի՛նչ ըմ տինելու, կաց հա̀լա̀ մին փըռնիմ, ախցան ըմ ընելու:

Ամմա միչև ո̀ւրա̀նց հասնիլը, դոնաղը հասած ա ինո̀ւմ Արազին դրաղը, մըթեն ա ինո̀ւմ, կարմունջը ճարում չի, ամմա ըտրանց փա̀նա̀րին ճրա̀ք-յին լո̀ւսավը կարմունջը ճարում ա, անց կենում էն մին թա̀րա̀փը:

Էտ տընըտրո̀ւչ կրնգանը անըմը Հերիքյնազ ա ինո̀ւմ: Մարթը տեսնում ա, վեր դոնաղը կարմունջն անց ա կացալ, հավան նստում ա, կըտաղո-թունը անց ա կենում, արխայինանում ա, վեր կըռվա-դավա պըրծալ ա, ասում ա. - Հերիքյնազ, տեսնաս դոնաղը մըզանա ռազի քյինի՛ց:

Հերիքյնազն ասըմ ա.- Բա խե՞ չի ռազի քյինի՛լ...

Աշխանման դազը,

Տանան Հերիքնազը:

Ճրաքին լո̀ւսան Արազը...

Պա հա̀լա̀ սազի չինի՛:

## 78.ՃԸԿԸՏԱԿՅԻՐԸ

Ընո՛ւմ ա, չի ընո՛ւմ իրեք մարթ ա ընո՛ւմ, մին աստուծ: Էրկու աստուծ չիկա: Էտ իրեք մարթը ո՛ւրո՛ւր նհետ հո՛ջա՛թ ըն տամ, թա՛ ճըկըտակյիրը դո՛ւզ ա, թա՛ չէ:

Էրկուսն ասում ըն՝ դո՛ւզ ա, ամմա մինն ասում ա.- Մարթ պենը հունցը փռնի, ինդի էլ կքյինի, հի՞նչ դո՛ւզ, հի՞նչ սոտ:

Մին օր էտ անհավատ մարթին տոնը էրկու ղոնաղ ըն կյամ:

Էտ ղոնաղներին քշտին նա էլիա ասում ա. - Մարթ պենը հունցը փռնի, ինդի էլ կքյինի, խաթան երի ո՛ւան չի կյամ:

Էտ մարթը ամեն դո՛նում օրիշներին քշտեն հո՛ջա՛թ ա տամ, ո՛ւրա՛ն ասածի ար: Էտ մարթը օզում ա, թա՛ տո՛ւս քյինի, մին էլ ա տեսնում էտ վախտը մին մըեծ դուշ քշանում ա, թևը քցո՛ւմ ըտրա շքռամեչը, պցրա՛նում երե դո՛ւը:

Շատ ա տանում, թա՛ խրեկ, զյիդվա՛լ չի, մինա՛կ տեսնում ա, վեր տանըմա տընո՛ւմ մին տան առաչի:

Էտ տանը չորս դոլերքը ճո՛ւր ա ընո՛ւմ: Էտ դուշը ըտրան թողըմ ա ըտըեղ, ինքյը թռչում:

Էտ մարթն ասըմ ա,- Էս ըշտե՞ ղ ըմ ընգա՞լ, էտ հի՞նչ ա իմ կըլո՛խս եկալ: Տա մտածըմ ա, թա հունցու աստծու ղազաբը եկալ ա, ինդի յէլ կքյինի: Միեզյ ընզալ ա իլի՞ խաթի մեչ:

Տես ա եշում, տեն ա եշում, ետավ ակռշկին մեչ ղոչն ա եշում, տեսնըմ մին շատ կյեղեցիկ ախճիզյ, մին շատ կյեղեցիկ տըղա նստած: Էնքան կյեղեցի՛կ, էնքան կյեղեցի՛կ, վեր ասում ա.- Ա՛յ արև, տու տո՛ւս մի կյա՛լ, յըես ըմ տո՛ւս կյալու:

Ընդրանք էտ մարթին ասում ըն.- Դայի, հո՞ւնց ընգիր ըստեղ, չորս դո՛ւը ճրա՛վ ծասկված տեղ ա, քյըեզ հո՞ ւնց հսցրին: Էտ մարթը նաղլ ա անում, թա՛ բա ասիլ չը՛ս, իստի, իստի պեներ:

-Լա՛վ, դայի, նի մոտ տոն, մեր քշտին կաց:

- Բա տուք հո՞ւնց ըք ընգալ էս չորս դոլը ճրավ լիքը տեղը,-հըրցնում ա էտ մարթը:

Տղան նաղլ ա անում ասըմ.- Իմ ծընողներին խոխա չի ըլա՛լ: Յըես վեր ծընվալ ըմ, փալչին ասալ ա, թա՛ վըեր էտ տղան հիբը փսակվի, հարսին ծեռքը ծեռքին տինի, էն վախտը տըենակավ պիտի մըեռնի՛, ըտրա հետի

էլ իմ հӧր տիրӧլ ա էս չորս դոլը ճրերավ պուլլուրպատիկ տըեղը, վըեր յըես տենակին իրեսը տըեսնամ վըեչ՜: Իմ կերածս էլ միշտ ըղարկըմ ա Թӧռլӧն դուշին մըեշկին տրӧծ: Եմիշը, ծմերուկը, խյարը, ամեն հինչ յըես օտում ըմ կտորած, պադրաստ:

- Բա էտ աղճիգյը հո՞ւ վա:

- Էս ախճիգյն էլ իմ նշանածն ա, ըսօր ըն պըերալ ինձ միար:

Ընդրանա ետը տղան համեցեքյ ա անում էտ մարթին, թӧ եմիշ, ծըմերուկ օտի:

Էտ մարթը հրաժարվում ա, օզում չի՜, ամմա տղան ասըմ ա.-Չէ՜, վըեր չէ, տու մըեզ նհետ պիտի օտիս:

Էտ մարթը հանըմ ա տենӧկը մին դիլիմ եմիշ կըտրըմ, եմիշին դիլիմը շիլթӧ-շիլթӧ կըտորըմ, օտըմ:

Էտ տղան ասըմ ա,- Հինչ կինի՜, տենակըտ տաս, յըես էլ տըենակավ օտիմ:

Էտ մարթը տամ չի, հրաժարվում ա: Ամմա էտ տղան շատ ա խնթրում: Էտ մարթը տամ ա: Տըենակավը ուտելի վախտը էտ տըղեն հազը փռնըմ ա, սունչը նի քըշելիս տենակը կո՛լ ա քյընըմ: Տըղան տեղնուտեղը մահանըմ ա՜:

Էտ մարթը մընըմ ա կրակի մեչ ընգӧծ: Գյուղո՛ւմ չի, թӧ հի՞նչ անի, կլխին տալավ տո՛ւս ա կյամ, ասըմ,- Տոնըս քանդվի՜ց, էս հի՞նչ դազաբի եկե:

Էտ վախտը էն մըեծ, Թӧռլӧն դուշը էլհա կյամ ա, ո՛ւրӧն թևին յրան ընդրան տանում:

Հսնում ըն: Տանըմ ա տըննո՛ւմ ո՛ւրӧնց տան շեմքին: Ըտըեղ ըտրան եր ա տնո՛ւմ, ինքյը ետ թռչում:

- Տըես հի՞նչ դազաբի հասի էէ՜ ,- մըթկըմը ասըմ ա էտ մարթը:

Ղոնաղնին շատ կըենալավ նիգյարան ըն մնըմ: Ըստեղ էտ մարթը նաղլ ա անում ո՛ւրӧն կլխին եկածը, ասում վըեր ինքյը դӧլӧթ ա ըրա՜լ, վըեր գյիդացալ ա, թӧ մարթը հունց կործը փոնի, ինդի էլ կքյնի՜:

## 79.ՔԱՉԱԼ ՃՈՏԸ

Ինըմ ա, չինըմ մին տոն: Էտ տանը նանը միշտ հավ ար թոխսը տինըմ: Մին դը̀նըմ էլ հավը թոխս ա տինըմ, ըսպասըմ մինչև ճոտերը տը̀ւս կյալը: Վեր ճոտերը տը̀ւս ըն կյամ, ըտրանց մեչին մին քաչալ ճոտ ա ինըմ: Էտ քաչալ ճոտին յրան թեփուռ չի փսնըմ, ըտրա հետի էլ քաչալ ըն ասըմ:

Քաչալ ճոտին հընգյերնին մըծանըմ ըն, ամմա ինքյը մին օրիշ թա̀վը̀ւր ա ինըմ, մին օրիշ հանգի, մին օրիշ թա̀հրի, մին օրիշ ջուռա:

Էտ քաչալ ճոտը բըրըշըմ չի հավերին նըհետ, ամմեն օր էլ էտ տանը մին վընաս ա տամ:

Տընատարը մին չի, էրկու չի, տըմանըմ ա:

Մին օր էլ քաչալ ճոտը կըտկոտըմ ա ը̀ւրա̀ն մար թուխսըկանին, ըսպանըմ:

Մին քանի օրանը ետըն էլ էն մընացած հավերին ա կըտկոտելավ ըսպանըմ:

Վերչը տընատարը յոր ա օնըմ, տանըմ բազար, վեր ծախի: Բըզարըմը լոխ ասըմ ա, կյեղըմ չի քաչալ ճըտին ըրարմունքը: Էտ բըզարըմը թաքավերին մարթկանցան ինըմ ա:

Ըտրանց անա մինը հընգյերին ասըմ ա.- Եք էս քաչալ ճոտը առնինք, տանինք տանք թաքավերին՝ ծըծըղցնելի հետի:

Իտի էլ անըմ ըն:

Թաքավերը վեր տըեսնըմ ա, մին լա̀վ ծըծաղըմ ա: Ըտրան տանըմ ըն քըցըմ հավերին պը̀ւնը:

Թաքավերին տոնը դոնաղ, պեն եկած վախտը տը̀ւս ըն օնըմ, ըտրանավ ծըծաղըմ:

Մին հետ էլ թաքավերին գյա̀ղա̀ն կյամ ա, կըլը̀խ տամ, ասըմ, - թաքավերը ապրած կըենա, էն քաչալ ճոտը կըտկոտալ ա լոխ հավերին, կըտորալ:

Էտ վեր լըսըմ ա, թաքավերը ըջըղվըմ ա, ասըմ ա.- Տարե́ք, էտ քաչալ ճըտին ղազերին խառնեցիք, վեր ղազերը ընդրան կըտկոտին, սըտկըցնին:

Գյա̀ղեքյը թաքավերին հրամանը կադարըմ ըն: Քաչալ ճոտը ըտեղ էլ չի դինջա̀նըմ, մին քըշերվա մեչի լոխ ղազերին կըտորըմ ա, ինքյը մինա̀կ դինջըմը քոն ինըմ էտ ղազերին լեշերին յրան:

Էքյսը ղազ պահողնեն վեր պը̀ւնին տը̀ռնը պենըմ ըն, վխվըխելավ մին

էլ էտ ըն տըեռնըմ, քյինըմ թաքավերին պալատը, չոքըմ թաքավերին առաչին, ընդրա վըեննէրը պաչըմ, մին թա̀հրա̀վ ասըմ քաչալ ճըտին պեննըը: Թաքավերը ըջըղվըմ ա, հրամմայըմ ա վեր քաչալ ճըտին տանին քըցին ծըմակը, վեր կյո̀ւլի, աղվեսի փայ ինի՛:

Ծըմակըմը քաչալ ճոտը մին աղվես ա տըեսնըմ, ասըմ.- Ճընապարաս տենը քյինի՞, թա̀ չէ քյըեզ կո̀լ կըտամ:

Աղվեսը ասըմ ա.- Տու հի՞նչ ըս, հի՞նչ զիբիլ ըս, հինչ օժի տար ըս, վեր ինձ կո̀լ տաս, ըստրան եշի: Քյըեզ մընան հազար թեփռավեր հավ ըմ կո̀լ տըվա՛լ, քյըզանա յը՞մ վախելը՛ւ:

Էտ վեր լըսըմ ա, քաչալ ճոտը յրա յա պըրծընըմ, աղվեսին կո̀լ տամ: Ընդրանա ետը ո̀ւրա̀ն ճընապան քյինըմ: Շատ ա քյինըմ, թա խըրեգյ, ճընապարին մին կյո̀ւլի յա թո̀ւշ ինըմ:

Էտ կյո̀ւլին հրամմայըմ ա, ասըմ,- Հեռաց ճընապարաս:

Կյո̀ւլըն ասըմ ա,- Քյըեզ մընան կըզտի-պըզտի պեններին հի՞նչ ծըեռք տամ, նըհախ տեղը թաթերըս յըխտուտցընիմ, էշեր ըմ կերա՛լ, պոզավեր-ընգըճավեր հեյվաննի յըմ կերա՛լ, կյումշնի՛, կովե՛ր, ծիյա՛նք, եզներ ըմ կե-րա՛լ, տու հի՞նչ ըս, հո̀ւնա̀րըտ հի՞նչ ա, վեր հա̀լա̀ ինձ յրա էլ ըջըղվըմ ըս:

Էտ վեր լըսըմ ա, քաչալ ճոտը յրա յա պըրծընըմ, կյո̀ւլին կո̀լ տամ, ինքյը ճընապար ընգնըմ, քյինըմ: Քյինըմ ա, քյինըմ, մին վարար կյետի յա ռո̀ւ-ջա̀հ կյամ: Էտ կյետին հրամմայըմ ա վեր ցըմաքի, վեր ինքյը ազադ անց կենա:

Ասըմ ա,- Ա՛ կյետ, ըռըհելըտ քաշի, վեր յըես անց կենամ:

Կյետը լո̀ւզու վա առնըմ, ասըմ,-է՛ս հի՞նչ տընա̀զ պեն ա, յըես իմ վարար ճիրա̀վըս մարթկանց ըմ քըշա՛լ, պոզավեր-ընգըճավեր հեյվաննի յըմ քըշա̀՛լ, կյումո̀ւշնի, եզներ, կովեր, ծիյանք,էշեր ըմ քըշա̀՛լ, մըհեկ տու հի՞նչ ըս, վեր ինձ նըհետ հո̀ջա̀թ ըս տամ: Վըեղըս կըլխիտ հա՛, կըլո̀խըտ մոշավ անի՛մ, քյինի ծառին տակին տըմկի՛:

Քաչալ ճոտը վեր էտ լըսըմ ա, թո̀ւնդո̀ւմը ըջըղվըմ ա, հու՛ ու՛ վա անըմ, սաղ կյետը նի քաշըմ պոկը ընդըղան էլ փորը, օռչըմ, տըռըզվըմ, անց կըենըմ, քյինըմ:

Քյինըմ ա, քյինըմ, հըսնըմ ա մին օրիշ թաքավերի պալատ: Էտ պալատին առաչին քըթոթ անելիս, մին վըեսկե յա ճարըմ, ծուղրուղու՛ յա կանչըմ, ասըմ.- Թաքավերըն ապրած կըենա, մին վըեսկե յըմ ճարա՛լ:

Թաքավերը լըսըմ ա, ո՛ւրա՛ն գյա՛դոցը ըղըրկըմ ա, վեր քյինին էտ քաչալ ճոտան վըեսկեն ինքյ առնին, պերին։

Քաչալ ճոտը կանչըմ ա.- Ծուղրուղու՜, թաքավերը ինձանավ ա ապրըմ։

Էտ վեր թաքավերը լըսըմ ա, շատ ա հըմանչըմ։

Ասըմ ա.- Վըեսկեն էտ տըվեք, տըվեք էտ քաչալ ճոտին։

Գյաղեքը վըեսկեն էտ ըն տամ։

Քաչալ ճոտը կանչըմ ա, ասըմ,- Ծուղրուղու՜ թաքավերը ինձանա վախըմ ա, վըեսկեն էտ տըվա՜վ։

Թաքավերը էտ վեր լըսըմ ա, թո՛ւնդո՛ւմը ըջըղվըմ ա, ասըմ. - Քյինացիք պերիք էտ քաչալ ճըտին, տեսնամ տա հի՞նչ պեն ա, վեր իտի կապը կըտրած ա, իրեսը պեց ա, անաբուռ, անհամանչ ա, իտի իրեսը պըռթըճիրա՛վ լըվա՛ցած ա, անիրես շոն ա, թաքավերին առաչը խոսկ կըտանի, մին պո՛լկ սաղդաթի մեչի կըկենա, ախեր ասըմ ը՜ն, վեր օխծին կըլո՛խը ցավըմ ա, տանըմ ա, տինըմ ճընապարին մեչ տեղը, վեր քյինող-եկող կոխ տան, մըհեկ էտ քաչալ ճոտըն ա։

Գյաղեքյը քյինըմ ըն, պերըմ։ Թաքավերը ըտրա յրան կըզնըվըմ ա, հրամմայըմ ա մորթին, կյերակուր իփին, հացին վախտը պերին, օտին։

Իտի էլ անըմ ըն։ Թաքավերը քաչալ ճըտին մըսան օտըմ ա։

Բողազավը քյինելիս, էտ քաչալ ճոտը կանչըմ ա.- Ծուղրուղու՜, թաքավերին բողազին նեղ տեղերավն ըմ քյինըմ։

Վեր թաքավերը կո՛լ ա տամ, քաչալ ճոտը թաքավերին փորըմը սկսըմ ա կանչիլը։ - Ծուղրուղու՜, թաքավերին փորավըն ըմ քյինըմ։

Թաքավերը լափ ըջըղվըմ ա, լափ հըմանչըմ, իրեսին աբուռը եր ա կյամ էն ղոնաղներին քըշտին։

Նա գյաղա՛-գյո՛ւղին հրամմայըմ ա, ասըմ.- Վեր յըես զախոտ քյինիմ, եկեք, էս քաչալ ճըտին ծըեր թըրերավը թըխեցիք, ըսպանեցիք։

Գյա՛ղա՛-գյո՛ւղեքյը իտի էլ անըմ ըն։

Քյինըմ ըն զախոտըմը ո՛ւրա՛նց սոր-սոր թըրերավը մին հենց թըխըմ, վեր թաքավերին գյավակը կըտրըմ ըն։

Քաչալ ճոտը տո՛ւս ա կյամ, կանչըմ.- Ծուղրուղու՜, բա իտի էլ պե՞ն կինի՜, գյավակը կըտրած թաքավե՞ր կինի՜...

80.ԷՐԿՈՒ ԱԽՊԵՐ

Ինո̀ւմ ա, չընո̀ւմ էրկու ախպեր: Մեծ ախպերը փսակված ա ինո̀ւմ, ըստրան ինո̀ւմ ա քսանըչորս ծի, պիծի ախպորը ինո̀ւմ ա տասնըչորս ծի: էտ պիծի ախպերը շատ քյա̀լա̀գյչի յա ինո̀ւմ:

Մեհետ էտ պիծի ախպորը ծիյանցան մինը ըստակում ա: Տա մաշկում ա, լա̀վ է՛՛, լա̀վ չուրուցնում տեսնում ա ժեժտու նըման վեր նի յըս կյամ, ճըռճռում ա՛... Պիծի ախպերը կաշին յոր ա օնում, քյնո̀ւմ... Քյինո̀ւմ ա, քյինո̀ւմ, շատ ա քյինո̀ւմ, թա̀ խրեգյ, մըթնում ա: Լհա̀ հսնում ա մին շէն, էշում ա, տեսնում մին ճըրաքյ ա ըրվամ:

Էտ ճըրաքյին յըրա քյինո̀ւմ ա, մին տոն ա տո̀ւս կյամ, տո̀ռնը թակում ա.- Ա՛ տնատար, կթողի՞ս քշերս ըտեղ քոն ինիմ, ղարիբ մարթ ըմ:

Էտ կնեգյը թա̀. - Քյո̀ւլիմ քյա̀լլա̀տ, կորեր ըստղա՛ս, մեր մարթը տանը չի, կկյա կասիմ կոնղըտ կըկտրե:

Էտ մարթը ետ ա տըեռնըմ, էտ տռանը մին խոտու տեզ ա ինո̀ւմ, ծակում ա, նի մննում, վեր մըրսե վէչ: Ակուշկավը վեր էշում ա, տեսնում ա մին մարթ ստո̀լեն նստած, բիշի, թա̀ժա̀ հաց, իփած հավ ըռաչին տիրա̀ծ օտում ա:

Էտ վախտը, էն սիրավ սո̀հրա̀թ ընելիս վախտը վեր մարթ գյո̀ւղո̀ւմ չի, թա աշխարքս հի՞նչ ա՛, մին թըմփթըմփոց ա կյամ, ըհը՛... էտ կնգանը մարթը կյամ ա, տո̀ռնը, թակում.- Ա՛ կնեգյ, տո̀ռնը պեց:

Էս վեր լըըմ ա, դաստի էն մարթը բիշուն նըհետ նի յա մննում՛ սանդողը, իփած հավն էլ էտ կնեգյը տինում ա փիչումը....

Տո̀ռնը պենում ըն, մարթը նի յա մննում, ասում.- Պառռո̀ւզյո̀ւն, ա կնեգյ, հաց չըս շինալ, պա տո̀ւզն ըմ, հաց պեր օտինքյ:

Կընեգյը մին հաց ա տինում մարթեն ըռաչին, ասում.- Էս ա, կեր, քյինի պենետ:

Հինչու իլա̀ծ ա ինո̀ւմ, էտ կյողըը կացած տղան տեսնում ա: Եր ա կենում, կաշին շըլա̀կում, կյամ թա̀.- Ա՛ տնատար, ղոնաղ չը՛ք պահիլ՛:

Կնեգյը դա̀ստի ջողաբը տամ ա, թա̀.- Կորեք ըտղատ, քյո̀ւլիմ քյա̀լլա̀տ: Միենգյ էլ ա իլա̀լ եկած:

Մարթն ասում ա.- Ա՛ կնեգյ, իտի մել ասել, մեհետ էլ յըես կինիմ մին ղա̀րիբ տեղ, լա̀վ չինիլ, ղոնաղը ըստուծանա յա, տըռնան ետ չըն տալ:

Տղան նի յա մննում, կա̀շին տինո̀ւմ տակեն, նստում: Ըսկսում ա ճըռճըռցնելը:

Վեր ըստա ճըռճոցնում ա, տնմտմրը ասում ա.- Դե բո՛լ ա խըեգյ ճըռճըռցու: Էտ հի՞նչ ա, ըտրա ցավը:

Տղան ասում ա.- Բալամ էս կաշին իմաստուն կաշի յա, մին պեն ա ասում, ամմա դե ասել չը՛մ:

Էտ մարթը շատ ա խընթրում, տղան ասում չի, ամմա վեր շատ նեղում ա, տղան ասում ա.- Գյիդո՞ւմ ը՞ս հի՞նչ կա, կա՛շին ասում ա վեր էն ա փիչումը իփած հավ կա, խե՞ տու հացըտ ցամաք ըս ուտում, տո՛ւս կալ կեր:

Կնեգյն ասում ա.- Քյո՛ւլլիմ ըտրա քյա՛լլա՛ն, սուտ ա ասում, իփած հավը հշտըղա՞ յա:

Մարթն ասըմ ա.- Ա՛ կնեգյ, փիչին տոռնը պեց, վեր սուտ ինի, ըստրան մին թիքյա թողել չըմ ըստեղ վեր կենա:

Կնեգյը փիչին տոռնը պեց ա անըմ, տեսնըմ ա մին տըելքում՝ իփած հավը տիրա՛ծ: Յոր ա օնում, տինո՛ւմ ստո՛լեն: Էտ տղան մին էլ ա ճոռճոցնում:

Մարթը ասըմ ա.- Մըհենգյ հի՞նչ ա ասում:

Ասում ա.- Ասել չըմ, ասել չըմ:

Էլհա վեր շատ զոռ ա անըմ, ասըմ ա.- Գյուդում ըս հի՞նչ ա ասում, ասում ա էն ա սընդողումը էրկու բիշի էլ կա, մին մարթ էլ:

Կնեգյը սկսում ա ո՛ւշո՛ւնց տալը, թա.- Քու ըստինըտ, ինդինըտ, տո՛ւս եք տանաս կորեր:

Մարթն ասում ա.- Ա՛ կնեգյ, սանդողը պեց, վեր մաչին մարթ չինի, դա՛ստի ըտրա կլո՛խը կըտըըլական ըմ:

Սանդողեն մաչին մարթին վըենները, ձեռքերը ըսկսում ա սազ ածելը, տըմբլա թակելը, տողտի նման տըղտո՛ղալը: Սանդողը պենում ըն, տեսնըմ մին մարթ մաչին: Էտ տղան նան տնատարը յըրան ըն տեռնըմ, կոնդը կտրում... Պենան տո՛ւս ա կյամ, վեր կնեգյը սիրական ա իլա՛լ պըհեյիս:

Նստում ըն մին լա՛վ ուտում, խըմում, տըռզվըմ, տըռզիկ-ճոտիկը տա՛ռնում:

Տնատարը ասըմ ա.- Հինչ տամ, էտ իմաստուն կաշին ինձ տաս:

Տղան տեսնըմ ա, վեր հինչու ասե, էլհա ինքյ ա ուննական, ասըմ ա.- Ծախըմ չըմ:

Էտ մարթը շատ ա սղիբում, էտ տղան ասըմ ա.- Մին փըրգոն վըեսկե տո, քյըեզ տամ:

Էտ մարթը մին փրգոն վըեսկե յա տամ, ըստակած ծիյին կաշին ինքյ օնում: Տղան մին փրգոն վըեսկեն պո̀ւրո̀ւմ ա տոն:

Մեծ ախպերն ասում ա.- Ա՛ պիծի մեռռա՛ծ, էտ ըշտղա՛ յա:

Պիծի ախպերը ասում ա.- Բալամ, ինդի պատառ տենը, ըստակած ծիյին կաշուն մին փրգոն վըեսկե ըն տամ: Մեծ ախպերը ո̀ւրա̀ն քանը-չորս ծիյան քանը մորթում ա, կաշին չուրուցնում, տանում մին փրգոն լծում մնացած չորս ծիավը, տանում քաղաք, ծեն տամ. - Այ լա̀՛վ կաշի՛, այ լա̀՛վ կաշի՛:

Դե քըղաքըմը վըննմաններին դուքյանին լիգյը կաշի յա՛, հո՞ւ վա ինքյ ուննական: Ինքյ օնող չիկա:

Ետ ա պո̀ւրո̀ւմ տոն, ասում. - Ա՛ պել մեռռած, քըշերս քյըեզ ըսպըննա-կան ըմ, վեր ինձ խափալ ըս:

Վեր քոն ըն ինո̀ւմ, պիծի ախպերը քյնամ ա մորը տեղը, մորը տանում ո̀ւրա̀ն տեղը, մորը լեչակը քցում ո̀ւրա̀ն կլխեն, քոն ինո̀ւմ:

Քշերը մեծ ախպերը ղաման յոր ա օնում, թըրախկ մորը կլո̀խը կըտ-րում: Ո̀ւռութանան պիծի ախպերը մորթած մորը մին փըրգոնըմ նըս-տըցնում ա, կլո̀խը պընդըցնում, քշում բիդի քաղաք: Տանըմ ա քշերավը մին ստալավոյու տռան փրգոնը վենն անում, զակազ ա տամ, ա̀րա̀ղ պերին մորը հետե, գվա̀քիս թա̀ մըրսած ա՛: Ա̀րա̀ղը պուրում ըն, ասըմ.- Կա՛: - Խոսում չի:

- Կա՛:- Խոսում չի:

Ստալավոյին գյա̀ղա̀ն կըզնըվելան վեր ըստաքանը տամ չի մորը կըլխա՛ն, կլո̀խը կախ ա անըմ, տղան հարայ ա տամ, թա̀ իմ մոր սպնեցեն, իմ մոր սպնեցե՛ն...

Ստալավոյին վարիչը տղեն քաշ ա տամ ստալավոյը, թա̀. - Հինչու օզիս կըտանք, մինա̀կ թա̀ բիյաբուռ չանիս մըեզ:

Վարիչը պիրում ա ո̀ւրա̀ն փողավը դութի շինիլ տամ, տանում թաղում, բաղարաքյ անում, մին փրգոն վըեսկե էլ ա տամ, թա̀ տար: Պիծի ախպերը վըեսկեն եր կալած քյընո̀ւմ ա տոն:

Մեծ ախպերը ասում ա.- Ա՛ պիծի մեռռած, էտ ըշտըղա՞ յա:

Պիծի ախպերն ասում ա.- Ինդի մին խըեգյ տեն, մըեռալը յաման կյին ա քյինո̀ւմ...

Մեծ ախպերը կնեգյը, չորս խոխան մորթում ա, փրգոնը լըցնում, տանում քաղաք:

Ծեն ա տամ.- Այ լա՜վ մըեռալ, այ լա՜վ մըեռալ:
Կյամ ըն ըտըան մին լավ թակում, թա.- Հի՜նչ ա, մունք մըեռալը տանում ընք հի՞նչ անինքյ, սաղ էլ չի, թա պինըցնինքյ:
Քըռուփեշմա՛ն, օնքերը ո՛ւրո՛ւր տված, կնեգյը, մին էլ չորս խոխան մին փոս ա ածըմ, վըեղավ անըմ, ֆուրգոնը տեռտակ յոր օնըմ, կյամ տոն, ասում. - Ա՜ պիծի մըեռած, քյըեզ էքյուծ տընննական ըմ, քցիմ ծովը: Բո՛լ ա հիշքան քյալա՛գյ եկեր:
Պիծի ախպերը օզում ա, թա փախչի, մեծ ախպերը քըցում ա պարկը, ըռեխը պենդ կապում, հայդա, դիբի ծովը: Մին դո՛ւզավ քյինիյիս, վըխ-ճարու սա՛ս ա ընկանում պիծի ախպերը:
Ասում ա.- Ըստեղ հալբաթ չոբան կա:
Կյոռում ա պարկեն մաչան, թա.- Վա՜յ, իմ ախպեր ինձ տանում ա քաղաք, քյընում չը՜մ, օզըմ չը՜մ:»
Մին չոբան ընկանում ա, ասում.- Պա ինձ չի՞ տանի՜ն քաղա՜ք: Ախպե-րը պարկը քցում ա տափեն: Ասում ա պատառ դինջա՛նամ: Քընավ ա ընցնում: Չոբանը կյամ ա թաքուն պարկը պենում, թա.- Կա իմ փափաղըս, շո՛րերըս, միակըս կյեց, քյինի վըխճըրնեն տար տու պահե, յըես նի մննիմ պարկը, գյիդա՛ն, թա տո՛ւ վըս, տանին քաղաք: Իտի էլ անում ըն:
Չոբանը նի յա մըննըմ պարկը պիծի ախպերը ըռեխը կապում ա, միակը յոր օնում, քյնո՛ւմ վըխճըրներեն կոշտը:
Մեծ ախպերը եր ա կենում, պարկը շըլակում, քյնում: Տանում ա քցում ծովը, հետան էլ, թա.
- Դե քյինի՜, էլիա՞ կկյա՛ս ինձ քյա՛լա՛գյ կյաս:
Ետ ա տեռնում, կյամ տոն:
Չոբանը ծովումը խեխտվում ա:
Ո՛ւրո՛ւլգյո՛ւնը պիծի ախպերը վըխճըրնեն եր կա՛լա՛ծ պո՛ւրո՛ւմ ա, թա.- Ա՜յ ախպեր, դալեն տո՛ռնը պեց, վըխճըրնեն նի անինքյ...
Մեծ ախպերը խըրեգյ ա մնամ, թա կյիժվի: Ասում ա.- Ա՜ պել մըեռած, պա քյըեզ քցեցե վո՞ւչ ծովը, էտ վըխճըրնեն ըշտըղա՞ յա: Պիծի ախպերն ասում ա.- Ա՜յ ախպեր, հա՛լա՛ խոր տեղերը չըմ ընգա՜լ, վեր խոր տեղն ընգած ինի , շատ վեխճար կպիրի:
Մեծ ախպերն ասում ա.- Յըես էլ ըմ քյիննա՛կան, ընգնի՜մ ծովը, առե խոր տեղը, հանցու քյըզանա շատ պիրիմ...

Սաղ շենը էտ մասին ըսկանում ա... Լոխճան առաչ դերը կյամ ա, ասում.- Ա՜ վերթիքյ, թողեցեքյ յըես առաչնի միննիմ ծովը, ետնան տուք:

Իտի յա ասում հանցու շատը ինքյը յոր օնե: Վեր ընգնում ա ծովը, շըլա̀քան մնամ ա ճյիրին իրեսեն: Ճո̀ւրը վեր լըփլըփում ա, շըլա̀քան տո̀ւրո̀ւր ա տամ, ժողովուրթը գյուղո̀ւմ ա, թա̀ դերը ասում ա.- Ա՜ ժողովուրթ, էնա վեխճար շատ կա, եկեքյ:

Լոխ ո̀ւրո̀ւր հետա նի յըն տեռնում ճո̀ւրը, կըտորվում:

Ետնան էրկու ախպերը փսակվում ըն, հա̀շտ ապրում, վյըխճըրնեն պահում ըն, հըրուստանում, կնգատար, թուռնատար ըն տեռնըմ, շենը նոր ավաղ անում: Մեծ շեն ա տեռնում:

81.ԹԱԶԱ ՓԸՍԱԾ ԽԸԽՈՐՅԸ ՀԵՏԵ

Մեհետ մին քանի խոխա մին տեղավ քյնիյիս ըն ինո̀ւմ, ո̀ւրա̀նց հետե խաղ ընելավ: Քյնո̀ւմ ըն մին բախճի պտահում: Ըտեղ շատ տա̀նձը-խնձո̀րու ծառեր ա ինո̀ւմ: Ծըռերան խնձո̀ր, տա̀նձ ըն քաղըմ, օտում, ծըռերեն տա̀լերը կուտրատում, թա̀. Ըստրա տըերոնը, ըստինը, ընդինը, էս խե՞ մերը չի, ասըմ ըն, փախչում, թա̀ քյինին ո̀ւրա̀նց տոնը:

Էտ վախտը տրանց առաչին մին պառավ մարթ հղենի քյնո̀ւմ ա ընո̀ւմ, շատ ծրաված:

Էտ խոխեքյը վեր քյինո̀ւմ ըն, հսնում էտ պռավեն, պառավըն ասում ա.- Ա՛ վերթիքյ, մին վետը կացեքյ, բա̀լքյա̀մ ծեր ծեռքեն ճո̀ւր ընի, բա̀լքյա̀մ ըստեղաս մոտե ճո̀ւր կա, ախեր պերանս չուրացալ ա, կարըմ չըմ քյինիմ:

Էտ խխոցան մինը ասում ա.- Դա՛յի, նստե:

Նստում ա, ջուբան մին խնձո̀ր ա տո̀ւս օնում, տամ էտ պռավեն: Պառավը օտում ա, համ ծարավոթունըն ա քաշում, համ էլ էտ խնձո̀րը ընդրան շատ ա տուր կյամ: Խնձո̀րը վեր օտում ա, պըրծնում, տափը մաննավ քանդում ա, էտ կորեզը քցում ըտեղ, վըեղավ անում:

Խոխերքը ասում ըն.- Դայի, խե՞ յըս իտի անում:

Դային ասում ա.- Բա՛լա, էս խնձո̀րի ծառը վըրողեն մատաղ, ղորմի ընդրան, ծրվոթունըս քաշից, էտ մին, էրկունջինն էլ շատ համեղ ար, յըես էլ ըստեղ վարիմ, մին խնձո̀րե փսնե, հանցու մին դո̀նո̀ւմ մըեզ նման մինն էլ կյա ծրաված օտե, մըեզ ղորմի տա:

Խխոցան մինը ասում ա.- Դա՛յի, պա տու էնքան կննական ը՞ս, վեր էտ սերմը ծառ տեռած տեսնաս:

Դային ասում ա. -Բա՛լա, վարալ ըն կերալ ընք, վարինքյ,հանցու օտին: Մունք բիդի մըզանա ետը եկածներեն հետե շատ պեն թողինքյ, հունցը մեր պապերն ըն մըեզ հետե թողալ, քյեցալ:

Շատ ա ընցնում, թա̀ խըեզդ, էտ խխոցան մինը մեծ մարթ տեռած, հիվանդացած ա ընո̀ւմ: Տանըմ ըն դոխտուր: Ետ տեռած կյալիս արևը կըծանում ա: Կյա̀մ ըն հըղըցեն ղըրաղեն տեսնում մին խընձո̀րե: Տակեն նստում ըն, դինջա̀նում:

Պըռավեն խըեւքը կլո̀խն ա կյամ, եր ա կենում տեղը նստում, տեսնում էտ խնձո̀րեն էն ծառն ա, վեր ինքը խընձո̀ր ա տվալ ճընապավը քյնա̀ցող հլվերեն, էն էլ կորինձը տընգալ ա:

Մեննը ընգելավ ընդրան խոսկերքը, ասում ա.- Պա՛, ղորմի քյըեզ հա՛, ա՛ ծառ վարող, վըսկոնետ լո̀ւս տեռնա:

82.ԻՐԵՔ ՀԸՐՍԱՆԵՔՅ

Ամմեն ուռութանա իրիքյնակը տո̀ւս կյալը նբաստ թխես ա Կքավա սարեն ճկատեն:

Էտ Կքավա սարը էնքան դա̀շա̀նգյ սար ա, վեր ամմեն մին հղե քյնող ընդրա պեցո̀ւր քրերեն, թխպըմը կորած սրերեն յըշիս ա, դորթ-դորթ վեր պըռըշեն ճո̀ւրը քյինիս ա՛:

Ամմեն ուռութանա, հա̀լա̀ լո̀ւսը լա̀վ չտված, չուբուննեն վեր ըսկսես ըն վխճրիավա ածելը, մարթիս հոքյին փառավերվես ա, սըերտը վըենն ա կընաս:

Միետ քյո̀հնա̀ վըխտեն մին պառավ կնեգյ Կքավա սարեն կլխեն մին սորփ ա շինիլ տաս, վեր ժողովուրթը միշտ ըտեղ սորփ քյեցած տեղը ո̀ւրա̀ն մընըընեն քցին: Ղուրթորթ վար աստուծ դորմի էտ պռավեն: Ըտրա շինած տեղը շատ լա̀վ տեղ տո̀ւս եկավ:

Վըրթեվուրը կյալ նբա̀ստ հիլբիհա̀լ սաղ ժղովուրթը կնընչկյա̀րմո̀ւր կյեցած ամեգյը ո̀ւրա̀նց ազկեն նիետ քյիս ըն ըտեղ, քյեփ ընես, զուռնա ըծես, պար կյաս, ա̀հետ էլ ըսկսես քյեփ անելը, օտիլ-խմելը:

Ջա̀հիլ ըխճկեքյն էլ ո̀ւրա̀նց հավան կացած հընգերունցը նիետը քյիս ըն ծաղեգյ քըղես ջանգյո̀ւլո̀ւմի հետի, ծաղեգյը մին օշնակ ըծես, ճիրա̀վ լըց-նես, մեչը ամեն մին ըխճրկանա մին նշան ա քըցիս, էլա երք ըսելավ կյաս ո̀ւրա̀նց մրիլին նիետ խռնվես: Հա̀մա̀ն էս ժողովուրթը պարի, շատ հալալ մարթիքյ ըն իլա̀լ: Ըստրանց բըղերեն տա̀նձը, խնձո̀րը, միասուրը, պամա-դորը, վեր վեր էլ տեռնա, փթե, էլիա հրեվանը հրվանեն բոստանեն, բա-ղեն, ծեռքը նի չի տալ: Ըստըա հետե էլ ընդրանց շենին անըմը տըրա̀լ ըն «Հալալքյա̀նդ», էս Հալալքյա̀նդա̀ երե բաղեն եխծուն քշտեն Խաչի ընըմավ երեսունըէրկու տըրեկան մին լա̀վ մարթ ա ըլա̀լ ըպրես: Էս մարթը ո̀ւրա̀ն կընգանը նիետ էնքան դոստ ա իլա̀լ, վեր միշտ մին հըլավըմ ըն իլա̀լ քոն ինիս, մին ըմանըմ ըն իլա̀լ հաց ուտես: Մինը վեր չոռ ա իլա̀լ ըսես, մինըն էլ ջան ա իլա̀լ ըսես:

Մեհետ էլ Խաչին ո̀ւրա̀ն կընգանը նիետ մին լո̀ւսնընգյա̀ քշեր բլկոնեն նստած սկսես ըն ըխշարքես լա̀վ նան փիս պիներան խոսելը:

Ըտրա կնեգյը ափաթը կտրես ա, թա.- Խա՛ չի, ա՛ մարթ, դո̀ւզըն ասե, էտ վեր տի հետաս մտըկմետակ ըս կյաս, ինձ շատ ը՞ս սիրիս, թա̀ խրեգյ:

Խաչի ըսես ա.- Դե ա̀վա̀լ տու. ասե, հետան էլ յըես ասիմ:

Կնեգյը ըսես ա.- Ցըես քյըեզ էնքան ըմ սիրիս, հինչքան սեմիշկան ըրեվեն:

Խաչի ըսես ա.- Ցըես էլ քյըեզ էնքան ըմ սիրիս, հինչքան պիրինձը իրիքյնակեն: Հինչ կլ՞իննետ դ՛անգյ անիմ, շատը-խրեգյ խուսելանը ետը ըստահանք ըսկսես ըն ՞ուր՞ուր քշտավը պարանց ընգնելը, քոն ինիլը:

Քշերը շատ ա ընցնես, խրեգյ ա ընցնես, էլ ետքան գյիդ՛ա չըմ, Խաչին ըսկըսես ա մին զ՞ուլ՞ում ՛արմ՛զ տըեսնալը: Էն տսնաս ա մին ջլիս սև օխծ կնգանը ծոցան կլ՞իխը տ՞ուս ա ունես հըլբիհ՛ալ ՞իր՛ան սրտան կծես, թ՛ա փախչի, Խաչին հըլբըհ՛ալ փռնես ա թող ընես: Թ՛արսո՞ւ նման քյիս ա, ընգնես ՞իր՛ան էրկու տղեն կարավաթեն յրա: Օխծը ըսես ա, թ՛ա խխոնցը կծե, բ՞ուրդ՛ան էրկու ըլըվալավ ընես ըխճըկերքյ ըն տ՞ուս կյաս, էտ օխծեն ըսպնես:

Խաչին քնումը սաբավ ըսես ա թա.- Էտ ըխճըկերանցը ըրած լավոթու-նեն հետե կլ՞իխ տա, բ՞ուրդ՛ան կլ՞իխը նի յա կյաս կնգանը քթեն, կնեգյը լոք ա տաս, «ա՛ մարթ, ա մարթ» ընես, եր կըցնես:

Մարթը թառանչ քշիլավ ըսկսես ա ՛արմ՛զը նաղլ անելը: Չիքերանը ՛արմ՛զը պրծնելը, լ՞ուսընաս ա:

Մըրթըկնեգյ ըսկսես ըն քենեքյ անելը: Խաչին քյինիս ա բազարը, ՞իր՛ան էրկու տըղերանցը նըհետ, համ էլ մտըծես ա, ըսես.- Հիբը ինիս ա ինի, իմ կնգանաս ինձ վնաս ա կյլ՛ական: Ցըես կլ՞իխ ըմ յոր ուննական քյինիմ մին օխտը տարե ըստեղ-ընդեղ ապրիմ, ետնան էլ կյամ կոշտը, թ՛ա ՞իր՛ան լ՛ավ կպահե, էլիա իմ կնեգյս ա, թ՛ա փիս կպահե, թող աստուծ պատիժ տա:

Խաչին քյիս ա տսնաս մին պառավ կնեգյ հեն ա բզարեն դրաղեն նստած, մին ծետ, մին էլ էրկու ծտու ծու ծեռքեն ծխես:

Խոխենքյը տեսնալը նըպատ լ՛ացըն ինիս, թ՛ա.- Ապա, ինքյ կալ, մըեզ տո:

Խաչին էլ մտծես ա, վեր էս ա կլ՞իխ ըմ յոր ունես, քյինիմ, խխոնցըս քյեփեն հոր նի կյամ:

Տրանց հետե էտ էրկու ծուն ունքյ ա ունես թա կյա, պառավըն ըսես ա.- էտ էրկու ծուն համան էտ ծտենն ա, էս ծետն էլ մեր տանը պատըմն ա միշտ պ՞ուն տինիս: Խոխենքյըս լոխ մեռալ ըն, մինջ՛ա մնացալ ա էս ծետը էս իմ հնգյերն ա: Կլխավըրտ շոռ տամ, շատ ըմ խնթրես, վեր մին լ՛ավ տեղ պահիս, ճոտեր անի, հու վեր ըխշարքըմ օրիշին բըլենեն կուտուրես ա, աստված էլ ընդրա բըլենեն կուտորե՛:

Խաչին պրիս ա էրկու ծո՞ւն տնիս ո՞ւրա՞ն օթախներեն մինո՞ւմը, ծեռըն էլ թո՞ւլ ընես տանը, ինքյը կընգանը ըսես.- Հինչ մարթ էլ կյա՛, թողիս վեչ նի մննէ էս օթախը: Թող ճոտեր անէ:

Խոխենքյըս միշտ թո՞ւլ կանիս, հանցու խաղ անին, ինքյը փռնես ա խխոնցը պըչպըչորես, կնգանըն էլ կո՞ւլա՞վը ընգնես, աղի ըրտասունքնեն շըռռըցնելավ կլո՞ւխ յոր ունես, քյիս: Թա՞ բիդի ըշտեղ ա քյիս, ըտ էլ աստուծ կգյիդա՞:

Կնեգյը շատ ա լա՞ց ընիս, խրեգյ ա լա՞ց ընիս, էտ աստուծ կգյիդա՞, ըսկըսես ա ինքյը ո՞ւրա՞ն խելք տինիլը, ըսես ա.- Աստված իմ աշկերս քուռըցնես ա հինչ տեռնա, մարթս վեր ի ստի բէյնամուս ա, պա քյիս ա, քյինի, հա՞լա՞ հանցըմ մեկալ օրան ախճիգյը ինիմ:

Իստի լա ըսես վազ տաս բիդի հիլին, թա՞ տեսնա ջա՞հիլ ա՛, թա՞ պառավ: Մին խիլլա ծոմռոտելանը եսը, ըսես ա.- Խե՞ յըս գյիդա՞ս չը՛մ, վեր ամմեն թոշես մինը հանց ա մղըըճա՞նջո՞ւ աշկ ինի պըլպըլաս: Խե՞ գյիդաս չը՛մ, վեր աշկերըս հանց ա փըլստրատին տվող մտանու աշկ ինի: Վըեղըն իմ կլխե՛ս, լհա՞ ասիս տանն ըմ մըննակա՛ն:

Իստի յա ըսես, պրծնես, հըլբըհա՞լ վազ տաս քյո՞ւչան, թմաշա ընելու հետէ: Թա՞րսու մնան մին ախմախ շան տղա թա՞ռը ծեռքեն, երք ըսելավ կյամ ա թա ըտրա դըրբզեն քշտավը քյինի՛, էտ բէյնամուս կնեգյը հըլբըհա՞լ սիրահարվես ա ըտրա յրան, սոտ տեղան ճպղես, շրոմփ վեր ընգյնես, թա՞ հանցու վեր էտ երք ասողը կյա, պցրցնէ:

Պա լհա՞ տրա մթկավը չի տռնա՛՛՛ս:

Էտ տղան տեսնալըն նըբա՞ստ, հլըբհա՞լ կյաս ա կուռնան փռնես, յոր օնես:

Էտ բէյնամուսը աշկերը հլբիհա՞լ պըցըհոփ ա ըսես, թա՞.- Տու ինձ սըղըըցրալ ըս, ա՞հետ էլ տար մեր տոն:

Տղան տըննես ա ըտրան տոն, էտ կնեգյը հացա, զատա շինիս ա, սկսես ըն օտելը,

Էտ տղան ըսես ա.- Մարթ օնի՞՛ս:

Էտ բէյնամուսն էլ շիլ ա ընգնես ըսես.-Չէ, քաանըօթ տըըեկան ըմ:

- Դէ լա՞վ, վեր քաանըօթ տրեկան ըս, իտի էլ դա՞շա՞նգյ, խե՛ չըքրանը մհենգյ մարթու չըս քյեցա՛լ:

Կնեգյը ըսես ա.- -Քյեցալ ըմ է՛, խրեգյ ըմ կացալ, էրկու տղա օնիմ:

Էրկու տըղեն անըմը տալանը ետը էտ տըղան իլբիա̀լ ըսես ա, թա̀ տո̀ւս կյա, էտ կընեգյն ըսես ա. - Վեննը կաց, մին պեն ասիմ, վեր մեռնիմ էլ, յըես կյաս ըմ քյըեզ:

Էտ տղան ըսես ա.- Դե թողե քյինիմ, փող թուփ անիմ, կյամ քյըեզ օզիմ, էտ տղան քյիս ա եշիլ տաս, տըեսնա էտ պեննեն կլո̀խը հի՛նչ տո̀ւս կկյա:

Ցիգանը ըսես ա.-էն կնեգյը շատ ա քյըեզ սիրիս, ամմա հեն ա տանը էրկու ծտու ճոտ կա, քյինի մորթել տո, կեր, քյըեզ հինչ վնաս- կյա ընդրանա յա իննա̀կան:

Տղան կյաս ա տները շոռ կյաս, վերչին տոնը էտ կնեգյը թուղես չի պենա:

Խիլլա̀ խուսելանը ետը պնա̀ս ա, տըսնաս իրեք ծետ մաչին, ըսես ա.- Ստրանք մորթե, իփի, ո̀ւրո̀ւզյո̀ւնը կյամ, օտիմ:

Կնեգյը ըսես ա, թա̀ մազերը քանդի, ըսես ա.- Թող վեխճար մորթիմ, համոթ ա:

Տղան ըսես ա.- Չէ՛:

Վերչը կընեգյը մըրթուտես ա, շինիս, քյիս թա̀ ճո̀ւր պիրի, կյաս ա տըսնաս տըղեքյը ըշկո̀լան եկած, կերած: Կիճի տղան կըլխընեն ա կո̀լ տվալ, սկսալ զկռհատ կյալը, իլբըհա̀լ վըեսկե յա վեր տեռալ, ամմա մեծը, օտելըն նըբաստ իլբիա̀լ իմաստուն ա տեռալ:

Մարը էտ պենը տեսնալը նբա̀ստ տըրանց ըսկսալ ա թակելը, թա̀.- Տուք խե՞ կերալ ըք:

Խոխեքյը տո̀ւս ըն տեռալ բիդի շկո̀լը փախալ:

Սիրականը եկալ ա, թա.- Պա հի՞նչ տեռավ:

Կնեգյը թա.- Պա իստի իստի պեն:

Սիրականը թա.- Դե վեր իստի յա, ըտանց կտորել տո:

Մարը քյա̀թա̀ յա̀ թըխես, ճար ըծես մաչը, վեր կյան օտին, կտորվին: Հա̀մա̀ն իմաստուն ախպերը թուղես չի:

Կյալը նբա̀ստ իլբըհա̀լ ըսես ա.- Մաման մատաղ, պա կերեքյ շատ ըք սոված:

Իմաստունը ըսես ա.-Մամա՛, մեր վարժաբեդը շատ տա̀ս ա տըվալ, մջալ չօնիքյ:

Մըհետ էլ յորղանը ճրես ա, վեր կյան քոն ինին, կտորվին: էլիա իմաստուն ախպերը թուղես չի:

Էրկանըկարճ մտածելանը ետը ծեն ա տաս մին մարթու, մին փութ վըեսկե տաս, թա̀.- Տար ծըմակըմը կտորե ըտրանց:

Էտ մարթը ընես ա առաշկը, թա տանե, կտորե:

Հղեցը իմաստունն ըսես ա.- Ապեր, մըեզ ըշտեղ ը՞ս տընես:

Ըսես ա.- Ապերը ծըեզ մատաղ, հի՞նչ կյեղիմ, ծեր մար խստի քյա̀լա̀գյ ա ուզիս պիրի ծեր կլո̀խը:

Իմաստունը ախպորըն ըսես ա.- Ախպեր վըեսկե վեր ածե: Կիճի ախպերը վեր զկռհատ ա կյաս, վըեսկե յա վեր տըռնաս:

Իմաստունը մաննը կտրես ա, էրկու հըրվնեն ըռնըթաթախ ընես, տաս հո̀լո̀վո̀ւրեն , թա̀.- Քյինի խբարը տար վեր կտորալ ըս:

Տրանք շատ ըն կյաս, խըրեգյ ըն կյաս, կյաս ըն հսնես մին խոր ծմակ, տսնաս էրկու հղե, մինին մեչ տըեղը մին փա̀ղի յրա կյըրած, թա̀. «Ըստեղավ քյինողը ընգնե սովու մաչ»: Մինին էլ կյիրած. «Ըստեղավ քյինողն էլ ընգնե օրա̀ն հղե»: Էրկու-իրեք սհաթ ո̀ւրո̀ւր անա լա̀ց ինիլավ պուչպուչուրես ըն, պժինվես, հանցու վեր ամմեգյը ո̀ւրա̀նց ջանը քյինին պահին, ջընըրնեն յաղու ծեռքա ազադին:

Իմաստունը շատ ա քյիս, խրեգյ ա քյիս, տսնաս ա մին տըեղ տափերը լոխ ա̀րո̀ւն ա: Ըռնեն մաչավը քյիս ա, թա̀ ճո̀ւր քթենա, խմե, տսնաս ա էնա մին ախպո̀ւրո̀ւ ղրաղե մին պառավ նստած:

Ըսես ա.- Ա՛ մար, յանի հի՞նչ կինի, վեր թողիս ճո̀ւր խմիմ:

Պառավըն ըսես ա,- Բա՛լա, ախեր կըկյան ինձ էլ, քյըեզ էլ մորթին, էս ախպուրը թաքավերեն ախպո̀ւրն ա: Վեչ մինը իրավունք չօնե ըստղան ճո̀ւր խմե, պա տսնաս չը՞ս աշխարքս ո̀ւրո̀ւր կոխած:

Ըսես ա.- Ա̀զի ջան, էս հի՞նչ ա̀րո̀ւն ա է՛, ախե՛ր:

Պառավըն ըսես ա.-էտ էրկու թաքավերը էս ա օխտը տարե յա կռվես մին ըխճկա դա̀րդա̀: Մին թաքավերեն մին ըշկանե տղա օնե, ըսես ա թա էն մին թաքավերեն, վեր մին հո̀ւրիփա̀րի ախճիգյ օնե, օզե, ախճիգյը քյիս չի, տրա հետե կռեվ ա, տու ըստըղաս քյինի, խըեղճ ըս, քյըեզ մորթիլու յըն:

Իմաստունը յիշիս չի, հղե յա ինիս:

Պառավը ըսես ա.- Ա՛ բալա, վեր քյիս ըս ըռշկետ էն ա ծմակեն մաչին մին թըռչկան ծի կա, թա̀ վեր կա̀րիս էտ ծին յեր ինիս, սաղ ըս մննական, թա̀ չէ՝ չէ:

Իմաստունը կյաս ա տսնաս ծմակեն խորքումը մին ծի: Զլա̀վը ըսես ա թա կտրե, փախչի: Կյաս ա թա փռե, թուղես չի: Շատ ա չալմիշ կյաս, խրեգյ ա չալմիշ կյաս, կրես չի: Ըտըեղ էլ քունավ ա ընցնես:

Ըրա̀զըմը տսնաս ա, վեր մին ախճիգյ կյաս ա, թա̀.- Մղափո̀ւն ըս տու, ա՛ ջա̀հիլ տղա՛, վեր եկալ ըս ըստըեղ, քյըեզ ըսպննական ըն: Եք խոսկես անջուկ կալ, ըզադվե: Հեն ա ծիյին անա վերը ծառենը փչակումը մին քար կա, քարեն տակեն էլ ծիյին մա̀զա̀ն մին մա̀զ: Քյինի վեր կալ, կտրե, ծիյին օծը պկըլական ա, վեր իլ, հանցու քյըեզ սպանող չինի :

Բո̀ւրդա̀ն էտ տղան լոք ա տաս, տսնաս ա̀րա̀զ ա:

Եր ա կընաս մթկեն դո̀նը ընգած քյիս, տըսնաս դո̀ւզ: Մա̀զը կտրես ա, կյաս եր ինիս ծին, ընգնես հղեն:

Քյիս ա, տըսնաս ըռշկեն մին պեցո̀ւր հասար քաշած պալատ: Ծին քշիս ա, լոք տաս, նի միննես մաչը, ծին կպես: Քյիս ա տսնաս մին ախճիգյ հեն ա սև շո̀րեր կյեցած մին կարավաթու յրա նստած: Հինչքան խուսես ա, ջողաբը տաս չի՛:

Ըռշկեն չուքես ա, դաչանք ընես, թա.- Ա՛յ դունյա գյո̀զալի, խե՞ չըս խուսես, յըես փասանթես մարթ չը՛մ, ասե տեսնամ դա̀րդըտ հի՛նչ ա, վեր սև ըս կյեցալ, դա̀րդիտ դա̀րմա̀ն կանիմ:

Ախճիգյը խղճաս ա, ըսես.- Ա՛յ տղա, ինձ հետե իմ հա̀ր ո̀ւրա̀ն զորքավը օխտը տարե յա կռեվ ա ընես, ա̀րո̀ւն թփես, ո̀ւզիս չի, վեր ինձ տա մին քոռ տղու: Էտ հավլամիշ իլա̀ծ տղան էլ էրկու վըեննը տիրա̀լ ա մին չըմըշկում, թա̀ չէ՛, վեր չէ՛, յըես էտ ախճիգյը բեդմա̀ օզիմ:

Տղան ըսես ա. - Յըես կըքյինիմ քյո̀մա̀գյ ինիմ:

Թռչկան ծիյին մին շալլըեղ ա թխես, թռչիս:

Քյիս ա, տըսնաս էրկու զորքը ո̀ւրո̀ւր նհետ կռեվ մտած: Մինին բայդաղը սև ա, էտ ըխճկանը հա̀րն ա, ուզիս ա ասե, վեր մին ախճիգյ օնիմ ըն էլ օրը սև ա, էն մինին բայդաղն էլ կյա̀րմո̀ւր: Էն մին թաքավերն էլ ո̀ւզիս ա ըտրանավ ասե, վեր աշխարքս վեր իստի կյա̀րմո̀ւր ա̀րո̀ւն անիմ, բիդի տղես սիրածը ո̀ւնքյ օնիմ:

Թաքավերնին յշիս ըն, տսնաս ծմակեն ըռխեն թոզը յեր ա ըլա̀լ երգյինքյը, ամմա զորք չի ըրվաս:

Իմաստունը ծին քշիս ա տղեն հորը զորքեն յրա, մեհետ վեր հո̀ւլլո̀ւրես ա, թաքավերեն կլո̀խը եր ա ինիս երգյինքյը: Մըն էլ վեր հո̀ւլլո̀ւրես ա, զորքեն կեսը քյիսա:

Ըխճըկանը հա̀րը ըսես ա, թա̀ քյոմագյ ինի, իմաստունը թողես չի, ըսես ա.- Ընդրանք մեղավեր չըն, մեղավերը ըսպանված ա, հինչքան ա̀րո̀ւն ա ըրալ, բո̀լ ա, քյեցեքյ, ըպրեցեքյ:

Էրկու թրա̀փեն զորքը թաքուն կյաս ըն, թա տըեսնան էտ հի՞նչ աստուծ ա, վեր բո̀ւրդա̀ն ա̀րո̀ւնը ճրավ ա լվա̀ցա̀լ:

Կյաս ըն, տըսնաս մին դա̀շա̀նգյ տղա: Ըխճկանը հա̀րը հրաման ա տաս էրկու զորքեն, վեր էս մարթին խաթրու բիդի օխտը օր քյեփ անիքյ: Օխտը օր, օխտը քշեր քյեփ ըն ընես: Ըտրանա ետը էրկու թրա̀փեն ժողովուրթը ըսկսես ըն սերավ ապրելը: Թաքավերեն ախճիգյըն էլ սև շո̀րերը տեն ա քցես:

Էն աստուծը, մին ծեռք շո̀ր ա̀ր կյեցալ, վեր ըշխարքըմս հինչ ըռա̀նգյ ասիս, յրան ըլըվալա̀վ ար ընես: Ինքյն էլ ուրխոթունան հոըշնալ, ալավալա̀վար ընես:

Կոզի լոխ ուրխացալ ըն, ամմա ըխճկանը հետե ասիս մին կռեվը պրծալ ա, մինըն էլ թա̀զա̀ յա ըսկսալ: Սրտեն մաչը մին կրակ ա ընգալ, սեր կրակը, վեր մարթի խըրավես ա, քյո̀մո̀ւր շինիս: Ըսես ա թա̀ քարերը, քո̀ւլերը, քա̀նդի:

Աշկերը տոնաս ա ամմեն մինը մին խնձո̀ր, ընդրա հետե անքոն անդարար մտըծես ա, ըսես ա.- Վեր մեռնիմ էլ, յըես քյիս ըմ էտ տղեն:

Էտ պենը հսնես ա էտ տղեն: Տղան սուսըփուս կյաս ա ըխճկանը տոնը, ո̀ւրա̀ն սրտենը պըտմես, ըսես ա.- Ցըես քյրեզ սիրիս ըմ, հունցու վեր մարթին հետե ճո̀ւր նան հացը: Ամմա ինձ մո̀հլա̀թ տո, քյինիմ սրտըմըս մին ցավ կա, առնիմ, կյամ:

Տղան խոսկ ա տաս, հղե ընգնես, թա̀ ըշտեղ ա քյիս, աստուծ կգյիդա̀, մին էլ ինքյը կգյիդա̀: Լա̀վը լհա̀ լա̀վա, աստուծ փիս կնգանը, դավաճան սիրածեն, փիս հնգյերեն, չար ըխճկանը մեսը փըթըցնե թափե տափեն յրան, մնա լհա̀ վսկոնեն, մին էլ երեսունըէրկու պատրոնը:

Իմաստունը կյաս ա, հսնես մին նոր աշխարք, տսնաս մին ջա̀հիլ տղա, էն աստուծը, վեր կրակ էլ քցիս, խնձըռնավետը վեր չի ինի՛լ, հեն ա մին բո̀լո̀ւկ ղազ ըրած առաշկը, պըհես:

Էտ իմաստուն տըղան ըսես ա. - Ախպեր տղա, տու ho՞ւ վըս, ho՞ ւր ղզարած ըս:

Ղզարածը ըսեսա.-Քանե վեր ըշխարքումըս կնգանը խափիլը, մարթկանց ըշկըկպոթունը կա, էտ ա տու վէլ ըս հվարած տոնլական, սուս ըրա, քյինի:

Իմաստունը ըսես ա.- Ա՛ խպեր, թա՞ տո՞ւզն ըս, միկա հաց տամ, կեր:

Ղզարածը ըսես ա.- Քու հացըտ հարկավեր չի, իմ ըրտուսունքնիս ինձ կքշտըցնե:

Ըստի յա ըսես, ըսկսես լա՞ց ինիլը: Իմաստունը թուղես ա, կյաս մին տռնավ նի միննես, թա.- Բա՛ջի, ինձ ղոնաղ չը՞ս անել:

Մին պառավ ըսես ա.- Ղոնաղ կանիքյ, ամմա շո՞ր չօնիքյ:

Ըսես ա.-Վնաս չօնե, թա՞քյ լհա՞ տռանը չմնամ:

Ո՞ւրո՞ւզյո՞ւնը էտ ղզարածը կյաս ա համին էտ տոնը: Պառավը քյիս ա, թա՞ կվերը կթե: Էտ իմաստուն տըղան բո՞ւրդա՞ն տեսնում ա մին շարման-վըլլաման ախճիզյ եկավ, ասիս լհա՞ մըրհացու կրոյնը ինի: Պո՞ւլլո՞ր, ղա՞շա՞նգյ, աշկերըն էլ ասիս էրկու աշկ ինի էրգյինքումը, ղոշին էլ վեր եշիս, ամման աստուծ, ասիս ղույի պերց ինի:

Էտ ախճիզյը ըսես ա.- Ղազերը լոխ պերա՞ լ ըս:

Ղզարածը ըսես ա. - Հա, խանըմ ջան:

Ախճիզյը ըսես ա.- Վեր իտի յա, փռնե էս խնձո՞րը կեր, վեր սերտըդ դինջանա, խեղճ ըս:

Տանը խալխը լոխ հըվըքվես ըն, ըսկսես ըն հաց օտելը: Ղոնաղն էլ ա սկսես օտելը:

Հացը օտելանը ետը պառավը ըսես ա.- Ղոնաղը շատ պեներ գյիդող կինի, մին պեն ասե, քշերը անջուկ օնիքյ:

Ղոնաղն ըսես ա.- Ցըես իրեք պընզըլ ըմ ըսլական, թա՞ վեր քթիքյ, յըես ըստղաս տո՞ւս կըկյամ, թա՞ վեր քթիքյ վեչ, էս ղզարածն էլ, էս ախճիզյն էլ ինձ բեղմա տաք:

Պառավը ո՞ւրա՞ն շատ գյո՞ւղո՞ղի տեղ տինիլա՞վ ըսես ա. - Հա, լավ,հի՞նչ կինի՛, աշխարքս ա՞մա՞լ, տու վէլ ջամալ, ասե: Թա՞ չէ ըռշտոտումըս կյամ ա, ամմա հա՞լա՞ քոն ինիլի վախտ չի՛:

Ղոնաղը ըսես ա. էն հի՞նչն ա, վեր մին թառանչը տո՞ւս ա կյաս իրեք սրտա, համ էլ մին ցավ ա տո՞ւրո՞ւր տաս իրեք սրտըմըն էլ: Էն հի՞նչ ա, վեր էրկու չոր կլո՞խ հեն ըն մին չոր կրկաժըմ տիրա՞ծ: Էն հի՞նչ ցավ ա, վեր քարըքար ընգա՞ծ մարթկանցը ծիքյ ա տաս, պիրիս ո՞ւրա՞ն ո՞ւրո՞ւրուցեն կոշտը:

Վեչ մին հարցեն էլ պառավը կրես չի բաղասխանը տա, ըտրա հետե խնթրես ա, վեր բաղասխաննին ասե:

Ղոնաղն ըսես ա. -Էտ էն թառանչն ա, վեր էս սհաթիս բիդի քաշի ախպերը, քթնծ ախպորը հետե, էտ էն թառանչն ա, վեր թաքուն սիրահարված ախճիգյը, բիդի սերը տա իմ ախպոր, էտ էն թառանչն ա, վեր իմ ախպերը բիդի սիրի, ուրխանա: Էտ հարազատներին ո̀ւրո̀ւր տըեսնալի թառանչն ա, վեր իրիքյնակը սրտըմը կրակ ա ըրալ:

Էրկունջինն էլ էն ա, վեր իմ ըխպրակեն իմ ախպոր հըրփըցրալ ա, ախպերըս սըերտը թափալ ա, ինքյը ծտեն կլխնեն եր ա կնլալ կյեղալ, հեն ա մին յիշիգյըմ, հանցու վեր իմ ախպեր օրո̀ւշ տեղ չի քյինի քըշտեն կենա:

Իրեքինջինն էլ, վեր մարթին երգյիրը ծիքյ ա տաս, տնես ո̀ւրնն ծնված տեղը:

Ուրխունալան նհետ օխտը սհաթ ախպերք-ախպերք ո̀ւրո̀ւր անա պուք չըն կյաս:

Մին լնվ քյեփ ընելանը ետը եր ըն կնաս, իմաստուն ախպորը նշանածն էլ քյիս յոր ունես, չուրսեքան քյիս ո̀ւրննց ո̀ւրո̀ւրուցեն կոշտը, ո̀ւրննց վըեղը:

Էրկու ախպերը քյիս ըն մին ծանոթ դամո̀ւրչո̀ւ տոնը նի միննես, էրկու խանչալ շինիլ տաս, սրքես, պտրստես, կյաս ո̀ւրննց ծնող մորը կոշտը հնես, կլո̀խը տական նհետ կըտրես, տռանը մին մեծ փոս կտրես, կրակ ըրես, ծախող մորը ջնմղնքը կրակը շըպրտես, իրիս: Միչև օրս էլ հա ծոխ ա ըրես:

Ամմեն մին հղենի քյնող զզվես ա, ըսես.- Թո̀ւ, էս ծոխան հի՞նչ փիս վըետ ա կյա՜ս:

Օխտը օր, օխտը քշեր ըսկըսես ըն հըսանեքյ անելը: Լհն հըսըրնքեն շո̀րերը կյնաս տեղը, ղնրիբ հնրն էլ նի յա միննես, տեղնուտեղը հաստըպերնկ մըտծելավ կլո̀խ ընգնես դավաճանեն պեները: Հըրսըրնքեն կեսը չհըսած, պարի տղերքյը ղնրիբ հորը հետե մին կնգացու յըն քթնես, ետնան էրկու տղեն նան ո̀ւրննց հորը հըսանեքյը մին տեղ ըն ընիս:

Ներակ ընդրան, ա՛ ժողովուրթ, վեր շատ տընջվելանը ետը գյանքին վերջն էլ շատ պարի, շատ բախտավեր կինի՛, շատ լնվ, սրտեն օզածը կինի, կըկադարվե:

Աստված դավաճանեն, կեղծեն, հիմարեն, ծո̀ւլեն մըզանա հըեռե տանե:

Էրկու տղան նան մին հնրը հսեն ո̀ւրննց սրտին մուրազեն: Դե իմ մուրազս տըեղ չի հըսավ, տուք էլ լոխ հսնիքյ ծեր մուրազեն:

## 83.ԹԱՔԱՎԵՐԻՆ ՊՈՒՃՈՒՐ ՏՂԱՆ

Մի թաքավերի իրեք տղա յա ինո՛ւմ: Էտ թաքավերեն տղերքյը մրծանում ըն: Թաքավերը մտածում ա, վեր էս իմ թաքավերոթունս մին ժամանակավեր պեն ա, փորցիմ տեսնամ տղորանցս վե՞րն ա լա՛վ, ընդրան տամ, յըես էլ պըռավալ ըմ:

Էն մին օրը մըեծ տղին ղարկըմ ա բազար: Տասը մանեթ փող ա տամ, ասում.- Քյնա՛ բազար, տես-տեն ինքյ կյա՛լ պեր:

Մըեծ տղան տեսը-տեն ման ա կյամ, վեչ մին պեն ո՛ւրա՛ն տուր չի կյամ: Կյամ ա տեսնում պատեն տակեն վեքյի յըն խաղ անըմ:

Եշո՛ւմ ա, եշո՛ւմ, ետավ ինքյն էլ ա խաղ անում:

Ասում ա.- Լա՛վ պեն ա, յըես էլ խաղ անիմ:

Խաղ ա անում, փողը լոխ տանել տամ, տերտակըըոշ տոն քյնո՛ւմ:

Թաքավերը էն մին բազար օրը մեշնա՛կ տղան ա զարկում բազար: Էլիա տասը մանեթ փող ա տամ: Էտ տղան քյնո՛ւմ ա բազար, տես ման կյամ, տեն ման կյամ, էլա վեչ մին պեն ո՛ւրա՛ն տուր չի կյամ: Տեսնում ա փայտոնին մաչին զարմոն ածիլավ տես ըն քյնո՛ւմ, տեն ըն քյնո՛ւմ: Ո՛ւրա՛ն տուր ա կյամ, նստում ա, քյեփ անում, փողը խարջում, տերտակըըոշ տոն կյամ:

Թաքավերը ասում ա.- Համ մըեծս ա բեղասըլ, համ էլ մեշնա՛կս, եր կենամ պուճուր տըղիս ղարկիմ:

Ըտրան էլ ա տասը մանեթ փող տամ, ղարկըմ բազար: Պուճուրը յոր ա օնըմ հըղե ընգնում: Տես ա ման կյամ, տեն ա ման կյամ, վեչ մին պեն ո՛ւրա՛ն տուր չի կյամ: Ասում ա քյնա՛մ տոն, ինձ վեչ մի պեն հարկավեր չի:

Կյամ ա, կյամ, հըղըցեն կեսըմը ասում.- Հայրիկիս հետե մին փոնջ մնեշա՛կ քաղիմ:

Եշըմ ա տեսնում կոխկի հա՛նգիստարանումը մին մարթ մին մըեռալ տո՛ւս կալած փաղավ թակում ա: Էտ մեռալն էտ մարթին հենգյ մանեթ պարտք ա ինո՛ւմ: Ըտրա հետե էլ ամեն օր թակում ար:

Էտ մարթը կյամ էր մըռալին ասում.- Փողս տո:

Թաքավերեն պուճուր տղան տեսնում ա, վեր էտ մարթը էտ մըռալին չրչարում ա, ասըմ ա.- Ա՛յ ախպեր, խե՞ յըս թակում:

Ասում ա.- Ինձ պարտկ ա, բիղի պարտկս տա:

Էտ տղան ասում ա,- Յըես էտ մարթին պարտկը տամ, էլ կյաս վեչ չըրչարիս:

Ասում ա.- Չէ, չրչարել չըմ:

Տո̀ւս ա օնըմ հենգյ մանեթ տամ էտ մարթին, էն էլ չրչարում չի էտ մռնին, թողում ա, քյընո̀ւմ: Էտ տղան մին փոնջ մնեշա̀կ ա քաղըմ, քյնո̀ւմ հորը կոշտը:

Բեքյեփ հա̀րը ուրխանում ա, վեր տղան մին փոնջ մնեշա̀կ ա քաղալ ո̀ւրա̀ն հետե, տերտակ չի եկալ, ամմա հըրցընում ա.-Բա՛լա, խե՞ բեքյեփ ըս:

Տղան ասում ա.- Հայրիկ, քյըեզ ըսելի չի՛: Շատ փիս պեն ըմ ըրալ:

Հարը ստիբում ա, ասըմ, ասի տըեսնամ հի՞նչ ըս ըրալ:

Տղան նաղլ ա անում կլխավն ընցածը.- Ա՛ հա̀ր, ըզըղեցե մեռալը էն մարթեն անա, հենգյ մանեթ տվի:

Թաքավերը շատ ուրխանում ա, վեր ո̀ւրա̀ն տղան տի խղճմտանքով ա, ասում ա.- Շատ լա̀վ ըս ըրալ: Էտ հացը հիբը ինի ուտլական ըս, տա քյըեզ համար մին կուտուր հաց ա:

Մին էրկու տարի յա անց կենում:

Էտ տղան ասում ա.-Հայրիկ, յըես օզում ըմ օրիշ քաղաք քյընամ, ինձ հետե ըշխադիմ: Ինձ մի խուրջին փող տոր, քյնիմ օրիշ քաղաքում մագազին պենամ, առըտուր անիմ:

Մարը եր ա կենըմ, լա̀վ պաշար անըմ տղեն հետե, մին խուրջին էլ վըեսկե յա տամ, մին ծի էլ նիետը: Տղան քյնա̀մ ա:

Շատ ա քյնա̀մ, խըրեգյ ա քյնա̀մ, հըղըեցը մին մարթի յա ռուջա̀ հընո̀ւմ: Էտ մարթը համին էն մըռալեն հոքյին ա ինո̀ւմ վեր ինքյը ազադալ ար: Էտ տղեն քյո̀մա̀գյ ա անում, ամմա էտ տղան գյուղում չի, վեր էտ մարթու կեր-պարանքավը ո̀ւրա̀ն ըզադած մարթին հոքին ա: Ուրո̀ւր նրիետ խոսում ըն:

Էտ մարթը հըրցընում ա.- Ըշտե՞ղ ըս քյընո̀ւմ :

Տղան ասում ա.- Քյընում ըմ փլան քաղաքումը մագազին պեց անիմ, առըտուր անիմ:

Ասում ա.- Ա՛խպեր, ինձ փող չօնիմ, ամմա առըտուրումը կլո̀խս լա̀վ ա, եք ըխպրանանք, խոսկերնիս մին անինքյ, յըես հինչ ասիմ, իմ խոսկավս քյինի:

Թաքավերին տղան համոզվում ա: Ասում ա.- Հինչ աշխադինքյ, կես անինքյ:

Խոսկը մին ըն անում, քյընամ:

Քյընում ըն հըսնում մին քաղաքի։ Մազզին պենում, լա̀վ առըտուր անում։ Էտ քաղաքումը մին թագավերի ախճիգյ ա ընո̀ւմ շատ կյեղեցիկ։ Ճա̀րը սըվըրցնում ա, թա̀ քյինի էն տըղորցը կըլխընեն կըտրե։ Ախճիգյը կյամ ա մազզինը, ամմա էն հոքին մարթի կերպարանքավ իմաստուն ա ընում, հըսկանում ա, վեր թաքավերը ավըրցըալա, թա̀ կլխնին կտրե։ Ըխճըկանը ճընապար ա տնում, ասում՝ Էքյուծ կըկյանք։

Ետավ ետ ա տըեռնում թաքավերին տղին ասում.-Ապրանքը ծախինքյ, քյինինքյ, էս քաղաքեն թաքավերը մըեզ նըհետ լա̀վ չի։

Ամմա էս քաղաքեն թաքավերը էքյսի օրը հրամման ա տամ էտ տղո-րանցը, վեր. - Եկեք ըխճըկանըս ուզեցեքյ։

Էտ իմաստունը ասըմ ա.- Քյնանք, ամմա ընդրանց խորազյան օտինքյ վեչ։

Տհենց էլ անում ըն։

Էքյսի օրը կյամ ըն տոն, ո̀ւրա̀նց սաղ ապրանքը ծախում։ Ծխելանը ետը թագավերին աղճիգյը օզում ըն։ Էտ ըխճըկանը ծոցումը օխծ ա ինո̀ւմ, վեր սո̀ւվթա̀ քշերը էտ օխծը կծիլ պիտի էտ տղեն։

Էն մին տղան թաքավերեն տըղեն ասում ա,- Առաչին քշերը յըես ըմ քյննա̀կան ըխճըկանը կոշտը։

Թաքավերեն տղեն քյեփին նի յա կյամ։ Ասում ա.- Դե վեր ո̀ւրա̀ն հետե յա օզում, խե՞ իմ ընըմանե օզից։

Վերչը համոզվում ա։ Էտ տղան քյնամ ա էտ ըխճըկանը կոշտը ասում, վեր շո̀րերը լօխ հանե, կյա կոշտը։ Աղճիգյը տեմ ա կաղնում, շո̀րերը հանում չի։ Էտ տղան խնթիր ա տնո̀ւմ, վեր թա̀ ո̀ւրա̀ն սիրում ա, շո̀րերը հանե։ Ախճիգյը ստիբված շո̀րերը հանում ա։ Շո̀րերը վեր հանում ա, իրեք օխծ ա վեր ընգնում։ Էտ տղան խանչալը քաշըմ ա էտ իր եք օխծեն սպանում։ Էտ տղան տրանից ետավ ինքյը դա̀ստի տո̀ւս ա կյամ, թաքավերին տղին դարկում ըխճըկանը կոշտը։ Ախճիգյը տեմ ա քյնում ո̀ւրա̀ն հոր սաածներին, էտ տղորանց նհետ փախչում ա։ Քյնում ըն հասնում էն տեղը, վեր էտ էրկու հընգերը հընգերացալ ըն։

Էտ հոքին ասում ա.- Մըեր աշխադանքը պետկ ա կես անինքյ։

Թաքավերին տղան համածայնվում ա։ Կես ըն անում, մնամ ա ախ-ճիգյը, էտ հոքին խանչալը հանում ա, վեր էտ ըխճըկանն էլ կես անե, ամմա էտ ախճիգյը վախըմ ա վախելան նըհետ մին օխծ էլ ա պըրանավը

վեր ընգնում: Էտ տղան խանչալը քաշում ա, էտ օխծը սպանում: Քյընձլիս բո̀ւրդա̀ն էտ տղին աշկան վեր ա թռչում էտ հոքին կորչում:

Թաքավերեն տղան մնամ ա մինա̀կ: Ըտեղ շատ տխրվում ա, վեր ո̀ւրա̀ն հնգերը աշկեն ըռաչան կորավ: Շատ մտածելանը ետը, էտ ըխճըկանը նըհետ կյամ ա ո̀ւրա̀ն հորը տոնը: Հա̀րը շատ ուրխանում ա, վեր ո̀ւրա̀ն տղան էտքան հարստոթուն ա պերալ, համ էլ մին ախճիգյ: Ամմա էտ տղան շատ տխուր ա ինո̀ւմ:

Թաքավերը հըրցնում ա.- Խե՞ յըս տխուր:

Տղան նաղլ ա անըմ: Հա̀րը ասում ա, վեր էն հոքին քյըեզ էտքան քյո̀մագյ ա ըլալ, էն հոքին ա իլա̀լ, վեր ա թռալ:

Հա̀րը պերում ա տղեն հետե մին լա̀վ հըրսանեքյ անում, տղեն փսակում, թաքավերոթունն էլ տամ էտ տղեն:

84.ԹԱՔԱՎԵՐԻՆ ՊՈՒՃՈՒՐ ՓԸԵՍԱՆ

Իլա̀լ ա, չիլա̀լ մին թաքավեր: Էտ թաքավերեն իլա̀լ ա իրեք ախճիգյ: Կուճուրը քյա̀սիբ տղու վա տվալ, էն էրկունն էլ հըրուստու:

Մին օրն̀ւշ թաքավեր եկալ ա էտ թաքավերեն թա̀.- Յա քառասուն ըտժանէ տոնըտ տոք, յա քառասուն տարվա հացամթերքըտ տոք, թա̀ չէ կյամ ըմ քյըեզ յրա կռեվ:

Թաքավերը համոզվում չի՛: Կյամ ըն կռեվ: Կուճի ախճիգյը կյամ ա մարթին ասում, - Աղա̀, եր է, եկալ ըն կռեվ:

Մարթն ասում ա,- Ա՛ խչի, անումը տամ մե՛ր, վախումը ը՛մ:

Վեր կռեվը սկսվեց, կնեգյը քյինա̀ց հա̀րա̀նց տոն: Մարթը քմակեն եր ա կենում, վեր սիմին ծիքյ չի տամ, մին թռչկան ծի էլ ա կյամ, մին ծեռք շո̀ր էլ: Շո̀րերը կյենում ա, ծին եր հինո̀ւմ , քյինո̀ւմ թաքավերեն կոշտը, ասում.- Յա զորքըտ ե՛տ տո, յըես մինա̀կ կռեվ անիմ, յա ետ ըմ տեռնըմ:

Տղան կռեվ ա անում, հախտում, զորքը ետ տամ, կյամ նի մըննում տեղը:

Կնեգյը կյամ ա տոն, տեսնում տանը, պըլլո̀ր ա անում, թա̀.- Կայյե՛, կա՛, մըեռնիս տու, հանե՛, տղան էն ա է՛, եկու, հախտից, քյինաց:

էքյսըն էլ ա կռեվ ինո̀ւմ: Էլիա էտ տղան սիմին ծիքյ ա տամ, թռչկան ծին կյամ ա, եր ա ինո̀ւմ, քյինո̀ւմ, հախտում, կյամ տոն:

Կնեգյը էլիա կյամ ա, թա̀.- Դալուտ տափան կենա՛, տեղատ եր է՛ է՛ է՛, տղան նա յա՛, թա տո՞ւ:

Իրեքինջի դո̀նումը վեր քյինամ ա, կռեվը պրծնելու յրա ծեռքան յարա-լու յա տըեռնըմ: Թաքավերը յոր ա օնում, ո̀ւրա̀ն նշնվե յըյլեխավը յարալու ծեռքը կապում: Էտ տըղան կյամ ա, նի մենում տեղը: Կնեգյը կյամ ա նի մննում տոն, մարթին խա̀բա̀ր տամ, թա̀.- Ա՛ մարթ, կռեվը պրծալ ա, լհա̀ պրծնելու յրա էն տղեն ծեռքը յարալու տեռավ, ետ քյինա̀ց:

Էս մարթը ծեռքը տեղեն տական տո̀ւս ա օնում, կնեգյը յայլեխը տեսնում ա, վազ տամ հորը կոշտը:

Հա̀րը տեսնում ա, ասում.- Պերեքյ ստեղ:

Տղան կյամ ա: Թաքավերն ասում ա.- Ա՛յ տղա, վեր էտքան քաջ ըս, հի՞նչս ըս օզում, քյըեզ տամ:

Տղան ասում ա.- Վէչ մին պեն: Էս քղաքումս էրկու նոքյար օնիմ, օզում ըմ տեսնամ:

Սաղ քաղաքը վըեննն ըն անում, լոխճին եշում, նո̀քյա̀րնին ըտեղ չըն ինո̀ւմ ։

Թաքավերը ձեն ա տամ ո̀ւրա̀ն էրկու փսեն, ասում. - Բա՛ խե՞ տահանք ը՞ն։

Ասում ա. - Հա՛, տահանք ըն։

Թաքավերն ասում ա. - Դե վեր իտի յա, տու իմ տեղս նստե, մնա հունց վեր թաքավեր, քու բաջանաղնետ էլ նո̀քյա̀րնե։ Պնո̀ւցո̀ւրու, հիշքյան քյեփըտ տամ ա՛ ։

## 85.ՃԸԿԸՏԱԿՅԻՐԸ ՍՈՏ Ա

Իլա̀լ ա, չիլա̀լ մին թաքավեր։ Էտ թաքավերեն մին մաղար տղա յա իլա̀լ։

Տղան հորն ասըմ ա.-Ապա, թո̀ւլ տո, քու երգյիրըտ շոռ կյամ։

Թաքավերն ասըմ ա,- Հի՞նչ կինի՛, վերթի, քյինա, քյըեզ կիարկին։

Էտ տղան հղե յա ինըմ, քյնամ։ Ընկըըմ ա շոռ կյալը, քյինըմ ա տեսնըմ մին ծմակու ղրաղե մին կրակ, մին տղա կոխքեն նստած, մին քանե թոխտ քշտեն։ Էրկու թոխտ ա կյիրում, մինը քըցո̀ւմ կրակը, մինը տինո̀ւմ քշտեն։ Քյնա̀մ ա էտ տղեն պարով տամ, քշտեն միկա վըեննը կենում, ետնան հըրցընըմ։

Ասըմ ա.- էտ հի՞նչ ըս անում, ախպեր, կյիրում ըս, կրակ տա՛մ։

Էտ տղան ասում ա.- Յըես մարթկանց ճըկըտակյիրն ըմ կյըըմ։

Ասըմ ա.- Դե պեց ըրա իմ ճըկըտակյիրս տեսնամ։

Էտ տղան պեց ա անըմ, կարթըմ, ասըմ ա.- Քյիննա̀կան ըս, թա̀ մին ախճիգյ օզիս, հըղեցը քյըեզ ըսպննական ըն։

Ասում ա,- Պա յըես մաղար տղա յըմ, ումբուրս պատառ էրկընցրու։

Էտ կյրող տղան ասըմ ա.- Կա մին կուտուր հաց, պատառ աղ կեր, հինչ տիժեր տեղ ընգնիս, կասիս՝ «Տու ինիս մեր ըղըհացը։ Տղան հղե յա ինո̀ւմ։ Քյնա̀մ ա, քյնա̀մ, տեսնըմ մին քանե վըերսկաննի յըն կյամ։ Մինին խտտին մին ջեյրան։ Էտ ջեյրանը ըտրան շատ ա տուր կյամ։ Ետ ա տեռնում, կյամ տոն, հորը կոշտը։

Հորն ասըմ ա.- Ա՛ հա̀ր, շատ շոռ եկե, վեչ մին պեն ինձ տուր չի եկավ, մինա̀կ վըերս անիլը ինձ տուր եկավ։ Թող մին հետ քյինիմ վըերսի։

Թաքավերը հրամայըմ ա քըռասուն վըերսկան պաղրաստ կյան կոշտը։ Էտ տղեն անավ քառասունըմին հոքի քյինո̀ւմ ըն վըերս։ Էտ տղան քյինա̀լիս մին ջեյրան ա տեսնըմ փըխչիլիս։ Ջեյրանը նի յա մննում ծմակը։

Տղան հրամման ա տաս,- Շրջըպըտեցեքյ ջեյրան են, հո̀ւր քշտավ փախչի, կարե վուշ փռնե, ըսպննական ընք։

Նի յըն մըննըմ ծմակը չո̀րք անգյունը կտրըմ։ Ջեյրանը կյամ ա թաքավերեն ժռանգյին կլխավը լոք տալավ անց կենում։ Լոխ հըվաքվում ըն, վեր թաքավերեն տղեն սպանին, վեր կըրացալ չի փռնե։

Թաքավերեն տղան ասըմ ա.- Յըես ատկազ չըմ անըմ ծեր խոսկը, մինա̀կ ինձ էրկու օր մո̀հլա̀թ տվեք, քյինիմ ջեյրանը սաղ փռնիմ, պիրիմ։

Եր ա ինըմ ծին, քյընըմ։

Քյինո՞ւմ ա, թա փոնե, ջեյրանը կլո՞խ ա ընգնըմ: Էրկու օրը թմամըմ ա, կարըմ չի փռնե, ջեյրանը փախչում ա:

Մին ճրա՞վ անց ա կենըմ, խմըմ, վըեննը կախ ա անըմ, վըեննը փոշ ար նի մըտալ:

Մին թա՞հրա՞վ քյինա՞մ ա մին պառավ կնգա կոշտ, ղաչանք անում, թա՞.- Հետաս կյվող կա, վեննես փոշը տո՞ւս կալ, փախչիմ:

Պառավն ասըմ ա.- Քըյեզ կործ չօնիս, փոշը տուս կօնիմ,տու իմ քշտես կաց: Ցըես թողիլ չըմ քյըեզ ծեռք նի կյա:

Տղեն աշկը նի յա ընգնում, քյինո՞ւմ ա թո՞ւշ պռավեն կոշտը:

Պառավը կզնվըմ ա, ասըմ ա.- Ա՛ տղա, էտ հի՞շքան ա աշկտ օնքետ կլխան իլա՞ծ, վեր օզում ըս սաղ ջեյրան փռնի՛ս:

Տղան սվիրես կլո՞խ ա յոր օնում, քյինում, էլ հնգերունցը իրեսը չի տո՞ւս կյամ:

Քյինա՞մ ա մին տոն, ղոնաղ ընգնում, տանը մին ախճիգյ, մին կնեգյ ա ինո՞ւմ: Ըխճըկանը յրան սիրահարվում ա, յոր ա օնում, թա՞ կյա տոն, հըղըցըմը ո՞ւրա՞ն հնգյերունքը օզում ըն թա՞ սպանին:

Տղան ասըմ ա,- Տուք ինիք մեր կերած ըղըհացը:

Էս վեր ասըմ ա, հընգեր վըերսկաննեն ըտրան բրախ ըն տամ, տա քյընըմ ա հսնըմ ո՞ւրա՞նց տոն:

## 86.ՔԱՌԵՐԵՆ ԲԱԽՏԸ

Իլա̀լ ա, չիլա̀լ մին քառ մարթ։ Էտ մարթը ն̀ւրա̀նց շենին էծ պահող չոբանն ա իլա̀լ։ Մեհետ էծերը տընես ա ընես մին լենջոտ տեղ, ինքյը կյաս, թա̀ մին խըրեգյ հաց օտե։ Կյաս ա հաց ուտես, քյիս, տըսնաս էծերը կորալ ըն։ Քյիս ա, թա̀ շոռ կյա։

Շատ ա շոռ կյաս, խըրեգյ ա շոռ կյաս, քըթընա̀ս չի։ Քյիս ա տըսնաս մին մարթ վար ա ընես։

Իծա̀րածը հըրցընես ա էտ վար ընողան, թա̀. - Մեր էծերը տըեսալ չը՞ս։

Վար անողը թա̀. - Ըսօրե ըստըղան տենը, էնքան տեղը վարալ ըմ։

Ըսես ա, ծեռքն էլ մկընես, նըշանց տաս։ Տու մեր ասել, էտ մարթն էլ ա քառ ընիս, վեր իծարածը հըրցնես ա ըծերեն տեղը, ինքյը գյիղա̀ս ա, թա̀ հըրցընես ա, թա̀ ինքյը հինչքա՛ն ա վար ըրալ։ Վեր վար անողը նըշանց ա տաս ծեռքավը, թա̀ հինչքան ա վարալ, իծա̀տարը գյիղա̀ս ա, թա̀ ն̀ւրա̀ն ըծերեն տեղըն ա նշանց տաս։ Ծեռքը մեկնած թ̀ուշավը քյիս ա, էծերը քըթընա̀ս։ Պիրիս ա, թա̀ մին էծ տա վար ընողեն, վեր իծերեն տեղը ասալ ա՛։

Թա̀րսու նման էտ էծը, վեր պտի տա վար ընողեն, պոզը կոտրած ա ինիս։

Վար անողը գյիղա̀ս ա, թա̀ չոբանն ըսես ա թա̀. «Էս էծեն պոզը խե՞ կոտրալ ըս»։ Բաղասխանը տաս ա, վեր ինքյը չի կոտրալ։

Վերչը կըռըեվ ա տըռնաս։ Վեր կըռըեվը թ̀ունդիս ա, քյիս ըն, թա̀ մին մարթու կյենգյա̀տ անին։ Հըղըեցը մին հարթն ա ջըհիս, խուրջինը օսավը քըցած քյինիս։ Իծա̀տարը, մըն էլ վար անողը էտ հարթնեն ամեգյը ն̀ւրա̀նցըն ըն ըսես։ Բախտը կըտըրված, էտ հարթըն էլ ա ինիս քառ, ինքյն էլ մա̀րթան տ̀ուս եկած, քյիս ա ինիս ն̀ւրա̀ն հա̀րա̀նց տոն։

Տա էլ գյիղա̀ս ա, թա̀ էտ մարթիքյը ըսես ըն, թա̀. -«Ետ տըեռ, քյինի քու պըտրունանց տոնը»։

Տա էլ ըտրանց կյընգյատեն պըղըսխընես ա, թա̀.- Ծեր հի՞նչ կործըն ա, թա յըես մարթիս նըհետ ըպրես ըմ, թա̀ չէ, ընդրանք փիս ըն, յըես վեր մըեռնիմ, քյնիլ չըմ ընդահանց կոշտը՛։

Էտ իրեք հ̀ուքյին քյիս ըն, թա̀ մին օրիշ մարթու քըշտե նաղլ անին։ Շատ ըն քյիս, խրեգյ ըն քյիս, ըտէլ աստուծ ա գյիղա̀ս, մըթնես ա։ Տահանք ընգես ըն մին մըթեն ծ̀որ։ Քյիս ըն նի մըննես մին ծրա̀նա̀լիգյ ճեղաց։ Էն էրկու մարթը նի յըն միննես ճըղացեն նավը, հարթնըն էլ նի յա միննես

տողը: Քշերվա մին վախտ տըսնաս ըն կյողերը մին խիլլա̀ տավար ըն պիրիս, նի ընես էտ ճեղացը, ո̀ւրա̀նք էլ տըռանը նստուտես, վեր կես անին: Տավարը պիժնես ըն, թա քյինին: Էտ իրեք հոքյին վըխելնան նհետ վեր տո̀ւս ըն տըռնաս, կյողերը գյիդա̀ս ըն, թա̀ ըտրանք քաշկեր ըն, վըխելնան նըհետ թուղես ըն լըղաճաք փըխճիս, էն քըշերվան կեսեն, էն քըրերեն մաչավը, վըննըծեռք ըրած, կըլխընեն ճուրդուտելավ, վըննըրնեն ցա̀քյը ծըկուտելավ, մին բա՛շ:

Էտ կյուղացած տավարըն էլ մնաս ա էտ քառ ջըվըրներեն: Ըտրանք ո̀ւրա̀նց մաչին պըժըննես ըն, ամեգյը ո̀ւրա̀նց պաժինը յեր կալած, քյիս ըն ո̀ւրա̀նց տոն: էտ հարթնըն էլ ետ ա տըռնաս ուրա̀ն պըտրունանց տոն:

Մարթը վեր տըսնաս ա կընեգյը էտքան տավար ա պերալ, ըսես ա.- Ա՛կընեգյ, ջանետ մատտաղ է՛, քյըեզ տո̀ւս ընողին քայլլա̀ն... մըհենգյանց տենը քյըեզ տո̀ւս չըմ քըցլա̀կան, մըհենգյանց տենը քյըեզ շատ ըմ սիրլա̀կան, հինչ ասիս ըննական ը՛մ...

87.ՉՈՐԲԱՆԵՆ ՍԵՐԸ

Ընո՞ւմ ա, չընո՞ւմ մին մարթ, մին կնեգյ ըն ընո՞ւմ: Էտ մարթին ընո՞ւմ ա օխտը ախճիգյ:

Մին օր էտ մարթին կնեգյը մըեռնում ա: Տանը հոքսը ընգնում ա էտ մարթին յըրա: Էտ մարթը սդիբված ա ընո՞ւմ, վար մին թա̈զա̈ կնեգյ անէ: Ըտենց էլ անում ա: Մին թա̈զա̈ կնեգյ ա պիրում:

Թա̈զա̈ կնեգյը օզում չի, վար էտ ըխճըկերքը ո՞ւրա̈ն քըշտեն ապրին: Նա միշտ սըվըրցնում ա մարթին, վար էտ խոխեքյը ո՞ւրա̈ն աշկեն ըռաչան հըռըցնէ: Էտ խըեղճ մարթը սդիբված ա ընո՞ւմ կադարէ կնգանը պահանջը:

Մին օր էտ մարթը նան կնեգյը պայման ըն կապում, վար հունց անին, վար էտ խխոցը հըռըցնեն ո՞ւրա̈նց անա:

Էտ խարդախ կնեգյը մարթին սըվըրցնում ա, ասըմ ա,- էքյուց կասիս, «Ա́ խոխեքյ, եկեքյ քյնա̈նք քո՞լը, փա̈դ պիրինքյ»: Կտանիս խխոցը թողիս մին խոր ծորում, տո՞ւ փադ անիս, կյաս:

Էտ անճար մարթը ռազի յա կենում կնգանը խոսկին: Ըտրանա ետը տըհենց էլ անում ա: Քշըրհանը էտ մարթը ամման մին խոխեն հետէ յոր ա օնում մին հաց, քյնա̈մ ըն քո՞լը:

Էտ մարթն ասըմ ա.- Խոխեքյ, գյուղում ը՞ք հինչ կա, յըես ծեր պաժին հացը թուլուլ տամ, քյնա̈ցեքյ, ընդըղան պիրեքյ:

Դէ խոխեքյն էլ շատ սոված ըն ընո՞ւմ, քյնա̈մ ըն թուլուլ տված հացեն հետան: Ո՞ւրո՞ւր հետա էտ մարթը հացերը թուլուլ ա տամ: Էտ խոխեքյը քյնամ ըն ամեգյը ո՞ւրա̈նց հացը քթա̈նում, օտում:

Մըընում ըն էտ ծո՞րումը: Միշնա̈կ ախճիգյը հացը օտում ա, պըրծընում: Մին քանէ հետ ապա յա կանչում, վար ո՞ւրա̈նց ըտեղան տո՞ւս օնէ, ամմա վէչ մին սա̈ս-սա̈մուր չի կյամ:

Հա̈րը փա̈դ ա անըմ, էշին պեռնում, ո՞ւրա̈ն քյո՞հնա պենջակը թողում ծառան կախ տված, ինքյը քյնո՞ւմ տոն, վար խոխեքյը գյիդա̈ն, թա ո՞ւրա̈նց ապան ընդեղ ա, վախեն վէչ:

Ըխճըկորանցը մեծ քերը ասըմ ա.- Վախում մեքյ, հեն ա ապան յալումը, հնե́, պենջա̈կը ըրեվում ա, եկեքյ քյնա̈նք ապուն կոշտը:

Տահանք մին կերպ թումբավը պըցըրանում ըն, քյնա̈մ, տեսնում ապա, պա̈ն չիկա, մինա̈կ քյո՞հնա պինջա̈կն ա ըտեղ քըցած:

Անդար մնացած ըխճըկերքյը սկսում ըն լա̈ց ինիլը:

Խխոցը հա̀րը հըսնում ա տոն, ասըմ.- Ա՜ կնեզյ, խոսկավըտ ընզի, տարի իմ ազիզ-պո̀ւզո̀ւզ խոխեքյս թուղեցե անդար ընդերու են ծմակումը:

Խորթ մարն ասըմ ա.- Հողեմ քու խխոցըտ կըլո̀խը, նահանք հի՞նչ օքութ ին տլական մըեզ, հազըր մունք մինա̀կ լա̀վ կապրինքյ: Մեր պիրա̀նին թիքյա̀ն հալալ կինի:

Ամմա էտ մարթը միշտ թաքուն խխոցը դա̀րդա̀ն լա̀ց ա ընո̀ւմ, ամմա կնզանը վեջան չի ընո̀ւմ: Թողինքյ տահանք ըտեղ, խոսինքյ էն ըխճըկո-րանցն անա, տեսնանք հի՞նչ տա̀ռա̀ն:

Հացեն հետան քյնա̀ցած ըխճըկերքյը ո̀ւրո̀ւր ծեն ըն տամ, քթանում, ճընապարհվում ըն բիդա̀ մին շեն:

Քյնա̀մ ըն քյնա̀մ, տեսնըմ ըն մին իշեղ ա ըրեվում: Մեշնա̀կ ա խճիզյը ասըմ ա. - Ա՜ քեր, էն ըրեվող ճրա̀քյը հենց ա շենու ճրա̀քյ ինի , քյնա̀նք, քըշերը կըմընանք ընդեղ: Մըեզ կյո̀ւլերը ոտել չը՜ն:

Քյնա̀մ ըն, հըսնում մին կյումի, վըրդեղ վար թաքավերեն ծիանքն ա ընո̀ւմ կապած, չա̀միչըն էլ առաչնին ածած: Էտ ըխճկերքյը քյնա̀մ ըն կյու-մեն կտերը ո̀ւրո̀ւր կոխկե սոված նստում: Լոխճան պուճուր ախճիզյը կլո̀խը տինո̀ւմ ա մեծ քվորը ծնգին, սկսում ա վըեղը քա̀նդիլը: Մին չամենչ ա քթա̀նում, ասըմ ա.- Ա՜ քեր, հըսե ըստեղ քընդեցե, մին չա̀մենչ քթա̀:

Էտ պուճուր ըխճըկանը լոխ էլ եշում ըն, ո̀ւրա̀նք էլ մին չոփ ըն յոր օնում, սկսում կյումին ըխպըհարը քանդիլը: Ըստեղ լոխ էլ չամենչ ըն քթա̀նում, ոտում: Քնդելավ մին ծակ ա պենվում:

Մեծ քերը ասըմ ա. - Հու կըմըտնե էս ծակավը, տեսնա մեչին չամենչ կա՞, տո̀ւս օնե, պիրի ոտենքյ:

Էլհա պուճուր ախճիզյն ա նի մննում, տեսնում թաքավերեն ծիանքը կապած, չամենչյըն էլ առաչնին ածած: Կյոքյը մին լա̀վ չա̀մչա̀վ լըցնում ա, տո̀ւս կյամ, պիրում տամ մնացած քվո̀րցը, ոտում ըն, ըտեղ էլ ապրում:

Մին օր թաքավերը ո̀ւրա̀ն նա̀զիր-վա̀զիրին ասըմ ա.- Ծիս պեր նըս-տիմ, քյնա̀մ ըմ կործավ օրիշ տըեղ:

Ծին պիրում ըն: Թաքավերը տեսնում ա լըղարած:

Նազիրին ասըմ ա. - Թա̀ միչև մին էրկու օրը գյըղացեր վեչ, թա̀ հո՞ւ վա ետ չամենչը ոտում, քյըեզ կործա հննական ըմ:

Մին քշեր ծիապանը ախոռումը կյողլ ա կենում, տեսնում էն ա մին կուճուր ախչիզյ, կինա̀ր մին տասս տրեկան, նի մըտավ կյումը, կյոքյը չա̀մչա̀վ լցավ, օզից վար ծակավը տո̀ւս կյա:

Էտ վախտը նա̀զիրը մըտածում ա, ասըմ ա. «Բո̀ւրդա̀ն փըռնիմ, կըվա-խէ, պա̀ց թո դիմ, ծիյին վնաս ա»:

Որոշում ա, վար դինջ մուտանա, ասէ. «Տու հո՞ւ վըս»:

Նա̀զիրը կենում ա, էտ ախճիգյը տուս ա կյամ կտերը, ինքյն էլ ա տո̀ւս կյամ, ասըմ.- Էտ հի՞նչ իլլա̀թ-միլլա̀թ ըք, վար առանց հըրցընելէ թաքա-վերէն ծիյին փայը յոր ըք օնում, օտում, ծիյին մըշվըցնում :

Մեծ քվերքը նաղլ ըն անըմ, վար ո̀ւրա̀նք եթիմ խոխեքյ ըն, խորթ մոր դա̀րդա̀ն ընգալ ըն ըտեղեքյ:

Նա̀զիրըն ասըմ ա.- Մեր թաքավերը լի̀ա արհեստավերի հետա յա շոռ կյամ, վար կործ տա, պահէ:

Ըխճըկերքյը ասըմ ըն. - Վախըմ ընք, թա մեզ խափիս տանիս, մըեզ կտորել տաս:

Նա̀զիրը տահանց ըրխըյնըցընում ա, թաքավերէն կոշտը տանըմ, ասըմ.- Թաքավերն ապրած կենա, քըթա̀լ ըմ ծիյին չամենչը օտողներէն:

Թաքավերը էնքան պարի մարթ ա ընո̀ւմ, վար տահանց մին ցորտ խոսկ էլա ասում չի, անջախ պիրում ա տահանց լա̀վ ուտըցնել տամ, լա̀վ կյենալի շո̀րեր ա տամ տահանց, ամմեն մինին էլ մին կործի յա տընում: Պտի ասիմ, վար էտ ըխճըկորանցը մեչին պուճուր ախճիգյը լոխան կյեղե-ցիկըն ա ընո̀ւմ: Տրան թաքավերը կյըռնարածի կործ ա տամ:

Մին օր էտ ախճիգյը կյառները տանում ա հա̀նդը, համ էլ իլիգյ ա մանըմ: Մին օր հա̀նդին մին չոբան տեսնում ա էտ ըխճըկանը, սկսում ա ընդրա նհետ սեր փշրիլը:

Էտ ախճիգյը ասըմ ա.- Տա իմ պա̀նը չի, թաքավերան հըրցըրու:

Չոբանը քյնում ա թաքավերէն կոշտը, ասըմ.- Թաքավերն  ապրած կե-նա, թողեր սերտըս պա̀նա̀մ քշտետ:

Թաքավերը թո̀ւլ ա տամ: Չոբանը նաղլ ա անըմ, վար ինքյը սիրում ա կյառնը պահող ըխճըկանը: Էն ախճիգյն էլ ո̀ւրա̀ն ա սիրում:

Թաքավերն ասում ա. - Ա՛յ չոբան, թա̀ կարաս կատարիս իմ ըսըծնես, ախճիգյը քյըեզ ինի: Քյըեզ տամ ըմ էրկու չըվալ ցորէն, թա̀ կարաս մին օրում համ վարիս, համ հըսցընիս, համ հնձիս, կալսիս, ցորէն շինիս, աղճիգյը քյըեզ ըմ տըլական:

Չոբանը տխուր-տրտում քյնամ ա ջաղու պառավէն կոշտը:

Պառավը նրան թա̀հրերը լոխ սըվըրցընում ա, համ էլ մին կախարթա-

կան մուտանա յա տամ էտ չոբանեն, ասում.- Կըքյնաս մին հանդըմ վըեննը կենաս, սրտիտ օղածը մուտանեն ասիս, նա լոխ կաղարիլու յա:

Չոբանը քյնում ա, մին մեծ դո̀ւզո̀ւմ վըեննը կենում, ո̀ւրա̀ն սրտին դա̀րդը ասըմ մուտանեն, տա էլ կաղարում ա: Մին օրվա մեչի ցորենը հըվաքում ա, ածում չըվըլնեն, պիրում թաքավերեն տոնը:

Ասում ա. - Թաքավերն ապրած կենա, հրամմանըտ կըդարալ ըմ, ախճիգյը տամ ը՞ս, թա՞ տամ չըս:

Թաքավերն ասում ա.- Հա̀լա̀ չէ, մին պան կա, վար ըն էլ կաղարիս տըլական ըմ: Ա՛յ չոբան, թա̀ կարիս շվետ ըծելավ վըխճըրներեն պըցըրցընիս ըշտըրակեն կլո̀խը, ախճիգյը քունն ա:

Չոբանը քյնում ա, նըստում թաքավերեն շինիլ տված ըշտարակեն կլխեն, սկսում շվեն ածելը: Վըխճըրնեն պըցրանում ըն, պըցրանում, մին կոտրած տեղ ըն հսնում, ընդեղ էլ լհա̀ ո̀ւրո̀ւր հետա վեր ըն տա̀ռնում, սրտկոտում:

Չոբանը երե ղոլան ասում ա.- Ախճիգյը տամ ը՞ս, թա̀ չէ:

Թաքավերն ասում ա.- Վար տու կըրեցալ չըս քու շվետ ըծելավ վըխճըրնեն հըսցընիս քու կոշտըտ, ախճիգյը քյըեզ չի հըսնիլ:

Չոբանը տըեսնում ա, վար հըսավ վեչ ո̀ւրա̀ն նպատակեն, ո̀ւրա̀ն աշտարական քցում ա տափը, տըհենց էլ մեռնում ա:

88.ՋԵՅՐԱՆԸ

Իլա̀լ ա, չիլա̀լ մին թաքավէր։ Ո̀ւրա̀ն գյանքըմը օզալ ա մին ջեյրան սաղ փռնե, կըրեցալ չի փռնե։ Մթկըմը տիրա̀լ ա տո̀ւս կյա հա̀նդ, հո̀ւր կլխավ ջեյրանը լոք տա, ընդրան սպանե։ Ո̀ւրա̀ն էլ իրեք տղա յա իլա̀լ։ Տղերքյը հա̀նդըմը կըրացալ չըն փռնին։ Կուճի տղան էլ ա էտ խոսկեն դաբուլ կա-ցալ, ամմա ջեյրանը ամման վախտ ո̀ւրա̀ն կլխավն ա լոք տվալ։

Էտ կուճի տղատ վազ ա տամ ջեյրան են հետան, թա̀ փռնե, ջեյրանը նի յա մննում մին դըրբըզա։ Էտ տղան դըմա̀վ թխըմ ա, կլո̀խը կտըրըմ։ Վըզա̀ն մին թիքյա մնամ ա, պիրում ա քվորը տոն, քցում մին վէր։ Հորն անա վըլխելան նհետ էտ տղան քըվորը յոր ա օնըմ, ճոկ տեղ ապրըմ։

Ինքյը վըերս ա անում, քո̀ւր-ախպէր օտում ըն։ Մեհետ քո̀ւրը վերեն քշտավը քյինա̀լիս մին սաս ա ընգուճավը ընգնըմ։

Ասըմ ա.- Ա՛յ ախճիգյ, ծեր տանը փլան յըշիգյըմը էնա ճար կա, քյինա̀ պեր, վեզըս քսի, աղանամ։

Ախճիգյը քյինամ ա պիրո̀ւմ, ճարը քսում վեզը, ջեյրանը լվա̀նում ա մին լա̀վ տղա յա տեռնում, ասըմ ա.- Ա՛յ ախճիգյ, յըես քյրեզ օզում ըմ, եք մինտեղ ապրինքյ, քու ախպոր անա թաքուն։

Ապրում ըն, մին խոխա յա ինո̀ւմ։ Քո̀ւրը վախըմ ա ախպորը անա, խոխան տանըմ ըն տինո̀ւմ  էն հըղըցըմը, վերավը պիտի ախպերը կյա։

Ախպերը վըրըսըտըեղա կյա̀լիս, ջո̀ւմ ա էտ պա̀րո̀ւրեն։ Պա̀րո̀ւրը յոր ա օնըմ պիրում տամ քվերը, թա̀ պահե։ Քո̀ւրը պահըմ ա, մծըցնըմ։

Էս ջեյրան տղան, կնգանը ափաթը կտրում ա, ասըմ. – Եք քու ախպոր սպանինքյ, մունք տնստոն ապրինքյ։

Խոխան ըսկանըմ ա։

Ջեյրանն ասըմ ա.- Յըես օց ըմ տռնլական, վէր քու ախպէր կյա, թա մղակավը նի մննե, կըլխան կծլական ըմ։

Առաչի օրը վէր խոխան տեսնըմ ա էտ տըղեն, կյամ ա, վազ ա տամ, ասըմ ա.- Դայի, թող օսերիտ նստիմ։

Նստըմա, օցը կծում չի։

Ջեյրանը տեսնըմ ա, վէր խոխան պենու սետ ա, կնգանն ասըմ ա.
Քու ախպոր անա հրցրու ցիրեկը հի՞շտեղ ա ինո̀ւմ, քյինա̀մ, սպանիմ։

Էլիա խոխան ըսկանըմ ա, ցիրեկը քյինըմ ա հղեն կտրում, հորը սպանում։

Դային ասըմ ա.- Բալա, էտ հի՞նչ ա̀րո̀ւն ա:

Խոխան ասըմ ա.- Վէչինչ, ծէտ ըմ սպանալ:

Կյամ ըն տոն, էտ խոխան դայուն քշտէն մորը խայտառակըմ ա, վեր ո̀ւրա̀ն ախպորը փորցանքների մաչ ա քցալ, մորը ըսպանըմ ա, ըտրանա էտը դային նան խոխան մինտեղ ըն կենըմ:

Խոխան մըծանըմ ա: Ասըմ ա.- Դայի, հիշքան տու ինձ պահալըս, էնքան էլ յըես քյըեզ պիտի պահիմ:

Ըտրանք կյամ ըն մին լա̀վ քաղաք: Քըղաքեն տրո̀ւչը կոշտն ա քյինո̀ւմ:

Էտ տղան ասըմ ա.- Մին կործ տոք անիմ:

Թաքավերն ասըմ ա.- Հի՞նչ կործ տամ:

Ասըմ ա.- Քըռասուն ծի, քըռասուն ճո̀րե տոք, ամեն օր քյինիմ փա̀ղ անիմ:

Քյինա̀մ ա ո̀ւրա̀ն հետե էրկու փութանոց մին կացեն շինիլ տամ, քյինըմ ծմակը փա̀ղո̀ւ. ճո̀րեքը ծըռերան կապած ա ինըմ: Քյինա̀մ ա ճո̀րեքը թա̀ պիրի, պեռնե, տեսնըմ ա ճո̀րե չի կա: Մին բա̀բո̀ւռ քըռասուն ճո̀րեն կե-րած, ընդեղ վըեննը: Փռնըմ ա բա̀բո̀ւռը պեռնում, ինքյն էլ մին մեծ ծառ շլա̀կում, կյամ քաղաքը:

Թաքավերը լըղըպատառ ա ինըմ: Ո̀ւրա̀ն նո̀քյարներեն ասըմ ա. - Էս տղեն կլո̀խը հարկավիր ա կերած, թա̀ չէ ինքյը մեր կլո̀խը կօտե:

Տղեն կանչըմ ա կոշտը, ասըմ.-Ա՛յ տղա, փլան ծո̀րումը հենգյ դև կա, իրեք տարվա խարջս հա̀լա̀մ տվալ չըն, քյինա̀ պեր:

Տղան դաբուլ ա կենըմ, ասըմ ա.- Ցըես կքյինիմ, ամմա բա̀բո̀ւռը լա̀վ պիտի պահիս:

Քյնա̀մ ա տղան տըեսնըմ դեվերը նստոտած: Մին դև ասում ա.- Հա՛, իմ քյըսօրվա թիքյաս եկավ:

Վեր իտի յա ասըմ, էտ տղան մին սիլլա յա տամ, դևը վեր ա ընգնում:

Տղան ասըմ ա.- Խարջը տվեք:

Դեվերը մնամ ըն շշկլված, ասում ըն.- Խարջը տված ա:

Տղան առաչն ա անում, պիրում թաքավերեն կոշտը:

Կյամ ա տեսնում բա̀բո̀ւռը սոված ստակած, ինքյն էլ թաքավերեն, ընդրա ըխճկանը, կնգանը, ըսպնոտըմ ա: Դային նան ինքյը քաղաքում տըռնըմ ըն թաքավեր, ո̀ւրա̀նց հետե ապրըմ:

89.ԱՐՉԸ ՆԱՆ ԱԽՃԻԳՅԸ

Ընո՛ւմ ա, չընո՛ւմ մին մարթ, մին կնեգյ, տրանց մին ախճիգյ ա ընո՛ւմ: Էտ մարթեն կնեգյը մեռնում ա, քյինում ա մին օրիշ կընեգյ անում:Ետվակենը ո՛ւրա՛ն հետան էրկու ախճիգյ ա պերում: Խորթ ախճիգյը սերուն ա ընո՛ւմ, ամմա ետվակնգանը պերած ըխճըկեքյը կյեշ ըն ընում, սև-սև, իրններեն եշվում չի՛:

Մարը խորթ ըխճկանը շատ ա պինըցնըմ, թոռն են մոխերը կտրել ա տամ, ըշտեղ մին եխտոտ պեն կա, էտ ըխճկանն ա անել տամ: Խորթ մարը ո՛ւրա՛ն ըխճկորանցը թա՛զա՛ շո՛րեր ա կյըեց տամ: Ո՛ւրո՛ւլյո՛ւնը ղարկում ման կյալ, ղարկում ղոնախըղ թաքավերեն պալատը: Խորթ ախճիգյըն էլ տանը պենն ա անում:

Մին օր էլ էնչանք պեն ա անում, նղանում ա, նստում ա լա՛ց հինո՛ւմ, նղվարվում, քնավ ընցնում:

Արա՛զին մին կնեգյ ա կյամ, էտ ըխճկանը մարըն ա ընո՛ւմ, ասում ա.- Ա՛ բալա, եր կաց, շատ մել ընջըմիշ ինիլ, կա շո՛րեր տամ, կյըեց քյինի ղոնախըղ, ամմա հենց ըրա սհաթի տսներկուսեն կյաս:

Ախճիգյը կյըենում ա շո՛րերը քյինո՛ւմ թաքավերեն պալատը:

Էհա՛ վեր նի յա մննում, լոխ ընտրան ըն եշում: Թաքավերեն տըղան տեսնում ա թա՛ չէ, հավան ա կենում:

Տսներկուսըն ա տեռնում թա՛ չէ, ախճիգյը քյնո՛ւմ ա տոն: Էրկու ո՛ւրո՛ւլյուն կյամ ա, էլհա վախտեն քյինո՛ւմ :

Իրեքինջի ո՛ւրո՛ւլյունը շաղվում ա, վախտը թմամում ա, թայղի յա ընգնում, չա՛քմա՛ն, տո՛ւս կյալիս տեղը հանվում ա, մնըմ ընդեղ:

Թաքավերեն տղան յոր ա օնում, հետան տո՛ւս կյամ: Էտ ախճիգյը կյամ ա տոն, շո՛րերը հանում, ո՛ւրա՛ն տեղը նստում:

Թաքավերեն տղան չա՛քմա՛ն յոր ա օնում ընգնում տընըստոռն տըեսնա՛ վե՞ր ըխճկա վըեննեն կկյա, նրան էլ օզի: Հերթը կյամ ա էտ ըխճըկանը տոնը: Խորթ ըխճկեքյը կյենըմ ըն վըննըրներեն կյամ չի:

Հերթը կյամ ա էտ խորթ ըխճըկանը: Էս վեր կյենըմ ա, վըեննեն լա՛վ ա մըննում:

Թաքավերեն տղան ասում ա.- Էս ա վեր կա, տրան օզիլ բիղիմ:

Վերչը օզում ա, տանում ո՛ւրա՛նց տոն:

Խորթ մարը օզում ա քյա՛լա՛գյ կյա, կզնվելան տրաքվում ա:

Թաքավերեն տղեն կյենգյա̀տվում ա ըխճկանան, ասում ա.- Տու բախ-տավեր չըս ըննա̀ա̀ն, տո̀ւս քցի քյինի հորը տոնը:

Թաքավերեն տղան անգուջ ա օնում, տո̀ւս ա քըցում:

Միենգյ էլ մարթին յախան օնում ա, թա̀ ախճիգյըտ ստեղ կենալ չբիղի, տար ջիա̀նղա̀մը քըցի, կուրցուրու:

Մարթը ճարը կըտրած պաղրաստոթուն ա տըեսնում, ըխճկանը տանում մին հանց տեղ, վեր խըրեգյ ջվըրնե կան: Ըստըեղ մին օրա̀ն տան ա թողում, ինքյը կյամ:

Ախճիգյը ո̀ւրո̀ւգյո̀ւնը նստում ա, թա հաց օտե, տանը պուճախան մին մոկուն ա տո̀ւս կյամ, ասում.- Սե՛րուն ախճիգյ, պեց թող, յըես էլ օտիմ քյըեզ նըհետ:

Ախճիգյը ասում ա.- Օտում ը՞ս, կեր:

Մոկունը համ օտում ա, համ էլ ասում.- Էս ա մին արչ ա կյըլա̀կան զնգյո̀լակը ծեռքեն, ըսլական ա. «Կյամ ը՞ս մին հաղ հաղ անինքյ», կասիս. «Հա»: Զընգյո̀լակը քյըեզ ա տըլա̀ա̀ն, յոր կօնիս, ճրաքյըն էլ հընգյըցնա̀ա̀ն ա, տու զնգյո̀լակը ծեռքետ վազ ըս տըլա̀ա̀ն, թա̀ վեր փոնից, քյըեզ ուտըլա̀նա̀ ա, թա̀ չէ, քյըեզ մին ըրբա վըեսկե յա տըլա̀ա̀ն:

Ասում ա, պըծնում քյնո̀ւմ:

Արչը կյամ ա.- Սե՛րուն ախճիգյ, պեց թող յըես էլ օտիմ իլի՛:

Ախճիգյը թողում ա:

Արչը ասում ա.- Սե՛րուն ախճիգյ, գյուղում ը՞ս հինչ, եք մին հաղ հաղ անինքյ: Յըես զընգյո̀լակը քյըեզ տամ, ծեռքետ զընգզընգցընելավ վազ տո, ճրաքյըն էլ հընգյըցնինք, վեր քյըեզ փոնիմ, ուտըլա̀ա̀ն ըմ, վեր փըռնիմ վեչ, քյըեզ մին ըրբա վըեսկե ըմ տըլա̀ա̀ն:

Լիա̀ վեր ճրա̀քյը հընգցնում ըն, մոկունը տո̀ւս ա կյամ, զընգյո̀լակը յոր օնում, ինքյը զընգզընգցնելավ վազ տամ, արչը կարըմ չի փոնե, նղանում ա, ասում ա.- Եք վըեսկեն քյըեզ տամ, քյինի:

Մին ըրբա վըեսկե յա տամ, ախճիգյը մաչին նստում ա, իղե իննո̀ւմ ո̀ւրա̀նց տոն:

Խա̀քա̀րը հըսնում ա խորթ մորը:

Հըրևաննին կյամ ըն, ասըմ.- Ա՛խչի, պա ասել չըս խորթ ախճիգյըտ մին ըրբա վըեսկե յա պո̀ւրո̀ւմ:

Խորթ մարը ասում ա.- Չըչէմի՛ն, չէ՛, տըեսնաս վսկըռքնեն ա, ըրբան ածած չըխ չըխկցնելավ պո̀ւրո̀ւմ ըն:

Էհա վեր ըրբան տըռանը վըենն ա կենում, խորթ մարը մարթին ասում ա.- Շտեղ քու ախճիգյըտ ըս տարալ, իմն էլ տար ընդեղ:

Մարթը, կրակ ընգած էտ կըլնգանը ծեռքեն, եր ա կենում, խորթ ըխճկանը տանում, ընդըեղ թողում:

Ուրուլգյունը հացը ուտելիս մոկնը կյամ ա թա.-Սե՛րուն ախճիգյ, մին խրեգյ սպաս տո, թող յըես էլ օտիմ:

Թա.- Կորե՛ր, իսկի կա վեչ, թա ես օտիմ, մնացալ ա քյըեզ տամ:

Մոկունը քյնամ ա: Արչը կյամ ա, ասում.- Սե՛րուն ախճիգյ, կյամըս հաղ անինքյ:

Ախճիգյը ռազի յա կըենում, հաղ ըն անում, մոկունը կյամ չի քյումագյ ինի: Արչը ըխճըկանը փռնում ա, օտում: Էքյսի օրը վեր հարը քյինում ա, թա պերի, վսկոռքնեն ա ածում էն ըրբան, տանում:

Խորթ մարը կյետեն դրաղեն ա ինում, քյինում ա կյետը ընգնում: Թաքավերեն տղան շատ ա շոռ կյամ, թա խրեգյ, վերչը կյամ ա ուրան կըլնգանը տանում, հորըն էլ տանում ուրանց նըհետ պահում:

Ըստուծանա իրեք խնձոր վեր ընգնե, մինը՝ պատմողեն, մինը՝ լըսողեն, մինն էլ՝ էս հաքյաթը լուս աշխարք քըցողեն:

## 90.ՊՌՇՎՈՒՑ ԼԸ̀Վ ԱՊՐԵԼԸ

Ինո̀ւմ ա, չինո̀ւմ մին թաքավեր ա ինո̀ւմ: Էս թաքավերեն ինո̀ւմ ա մին կնեգյ, էրկու տղա:

Մին քշեր թաքավերեն կնեգյը ա̀րա̀զ ա տըեսնում: Ըրա̀զո̀ւմը մին սիպտա̀կ մըրքավեր մարթ ա կյամ, ըտրան ասում.- Ցըես ըստուծանա յըմ ղարկված, քյըեզ մին պեն ըմ ասում: Օզում ըս մհե՞նգյ լա̀վ ապրիս, թա̀ պըըվուց:

Էս կնեգյը մնում ա քար կտրած: Ըստրա սիպտա̀կ մազերը, բոյը, բուսաթը տըսնալավ: Ասում ա.- Դե վեր իտի յա, թող մարթիս նեստան հըրցնիմ, տահամ հի՞նչ ա ասում, ետնան:

Միպտա̀կ մըքավերը բո̀ւրդա̀ն կորչում ա:

Էդ քշերը թաքավերեն կնզանը քոնը տանըմ չի, մտածում ա, թա̀. «Էս հի՞նչ իլլա̀թ-միլլա̀թ ա, վեր ինձ ստի պեն ասից»:

Էտ քշերը, թա̀ տուք ընդրա պլատումը քոն ըք իլա̀լ, ինդի էլ ինքյը:

Լո̀ւսանում ա: Էտ կնեգյը եր ա կենում, քյնա̀մ մարթին ասում, թա̀.- Պա քշերըս ըստի ա̀րա̀զ ըմ տըեսալ, իստի, իստի պեն ա եկալ կլո̀խս, մհենգյ գյուղում չըմ, հի՞նչ անիմ:

Թաքավերը շատ ա մտածում, խըեգյ ա մտածում, կնզանը ասում ա.- Ա́ կնեգյ, վեր մին էլ կյա, կասիս վեր մարթս ասալ ա, թա̀. «Օզում ըմ պըվուց լա̀վ ապրիմ»:

Կնեգյը մին էլ ա ա̀րա̀զ տըեսնըմ, էլհա̀ հա̀մա̀ն էն մարթը մին էլ ա կյամ, էլհա ինդի ասում:

Էս կնեգյը իրեսը խըչըկնքելավ, վխվխելավ ասում ա մարթին ասածը:

Լո̀ւսանում ա թա̀ չէ, զարթնում ա: Մին քանե օրանը ետը ստահանք սկսում ըն քյախբանալը: Վերչը հի՞նչ կլո̀խտ ցվըցնիմ, էնչանք ըն քյախբա-նըմ, վեր մարթն ասում ա.-Ա́ կնեգյ, դե վեր իստի յա տըռալ, եք էս խոխենքը յոր օնիքյ քյնա̀նք, աստուծ մեծ ա, հա̀լբա̀թ մըեզ քյո̀մա̀գյ կանե:

Եր ըն կենում հըղե ընզնում:

Շատ ըն քյնո̀ւմ, խըեգյ ըն քյնո̀ւմ, ըտ էլ աստուծ ա գյիդո̀ւմ, մին ծմակու տեմ ըն ընզնում: Տըեսնում ըն ծմակումը ծոխ ա եր ինո̀ւմ :

Մարթն ասում ա,- Ա́ կնեգյ, քյինա̀նք, հինչ կինի́, կինի́:

Քյինա̀մ ըն, մուտանըմ, տըեսնըմ ղըչըղնե: Օզում ըն ետ տեռնան, ստա-հանք տըեսնում ըն:

Տրանք խփիլա̀վ տանում ըն ո̀ւրա̀նց կոշտը, կոշտ հաց տամ ըտահանց, խխոնցը մին լա̀վ քշտըցնում, թա̀ դէ քոն իլիքյ: Քոն ըն ինո̀ւմ:

Էքյսը մարթը, կնեգյը, խոխենքյը եր ըն կենում, թա̀ քյինա̀ն, էս փոչ իլա̀ծնեն թողում չըն: Ասում ըն:- Ցա իրեք մանեթ փուլ տվեք, յա էլ իրեք տարե կնեգյըտ բեդմա պահինքյ:

Ճարը կտրած, խեղճ մարթը կնեգյը թողում ա, խոխենքյը յոր օնում, քյնո̀ւմ :

Շատ ա քյնո̀ւմ, խրեգյ ա քյնո̀ւմ, հըսնում ա մին կյետու: Թարսու նման էս կյետն էլ վըրարած ա ինո̀ւմ: Խուխեն մինը շլա̀կում ա, թա̀ տանե ընցըց-նե, ետնան կյա էն մինն էլ տանե: Լհա̀ կյետեն մաշտեղը շլա̀կենը հարայ ա տամ, թա̀.- Կյո̀ւլերը մեր խուխեն տարեն:

Էտ մարթը ետ ա տեռնում, թա տըեսնա հի՞նչ ա, բուրդան էտ մինն էլ շլա̀կան ա վեր ընգնում, ընգնում կյետը: Խեղճը մնամ ա քըրացած: Ասում ա.- Էս հի՞նչ խաթա յա, վեր ինձանավ ա ընգա̀լ: Կնեգյըս դչղնեն խլեցեն, խոխենքըս էլ ըստեղ ծեռքաս ընգեն, մհենգյ յըես թո՞րը քյինա̀մ, ըշտեղ կլխես վա՛յ տամ:

Ընգնում ա հղեն քյնո̀ւմ: Քյինա̀մ ա, հսնում մին քաղաք, տըեսնում ժողովուրթը թուփ տըեռած, հինչ վեր մին պեն ըն օզում անին:

Հըրցնում ա մարթոցը նեստա, թա.- Էտ հի՞նչ ըք անում, էս հի՞նչ ղլմղալ ա:

Էտ մարթիքյըն ասում ըն:- Թաքավեր ընք ճոկում, մին դուշ կա, պեց ըն թողում, հո̀ւր կըլխե վեր կյա, ընդրան էլ տիննա̀կան ընք թաքավեր: Դուշը պեց ըն թողում, անդարըտ կյամ ա թուշ ըտրա կլխեն վեր կյամ: Մարթիքյը կյամ ըն, տըեսնըմ իտի քյա̀սիբ, ճընթոնին կյեցին մարթ: Ասում ըն.- Ըտրանա թաքավեր կինի՞՜, նորու դուշը պեց թողեցեքյ:

Նորու պեց ըն թողում, էլհա կյամ ա ըտրա կլխեն վեր կյամ: Էլհա ինդի յըն ասում, համ էլ էտ մարթին տանում քըցում մին տոն:

Դուշը նորու պեց ըն թողում, օթումը միկա շոռ ա տամ, կյամ, ակուշ-կավը նի մննում, էլհա տրա կլխեն վեր կյամ: Ճըրընեն կտրած պիրո̀ւմ ըն, տրան տինո̀ւմ թաքավեր:

Մին քանե տարե թաքավեր կենըմ ա, ժողովուրթը տըեսնում ա, վեր տա լա̀վա, շատ հավան ըն կենում, խռսած տեղն էլ ըրեվավը ո̀ւրթո̀ւմ ըն օտում:

Հա՜, միենգյ էլ տըեսնանք էն կնեգյը, էն խոխենքյը հի՞նչ տըեռեն: Էս կնեգյը իրեք տարե մնալանը ետը, պեց ըն թողում, թա քյինա՛: Տա հղե յա ընգնում, կյամ, կյամ տո՛ւս կյամ էտ քաղաքը:

Քյա՛սիբ ջուվար ա իլի՜, ասում ա.- Միկա հաց տվեքյ օտիմ:

Ըտրան ասում ըն.- Լի՛ն մեր թաքավերեն պլատումը մին կնեգյ ա հա՛ջա՛թ, հանցու կարտոշկա քչվե, առռե լափ տու վըս, վեր կաս:

Տանըմ ըն, էս կնեգյը ըսկում ա ըտըեղ հցըփոր ըշխադելը: Մին քանե օրանը ետը համին էտ քաղաքըն ըն կյամ էրկու ջա՛հիլ տղա: Միենգյ ծզանա մինը կը հըրցնե, թա՛ ըտահանք հո՞ւ վը՜ն:

Էտ հա՛մին էտ մարթին խոխեքյըն ըն, ամման մինը մինան բեյխա՛բա՛ր:

Ըտահանց մինը վեր կյո՛ւլյը տարած ա ըլա՛լ, չըբունննեն խըլում ըն, պահում, մըծըցնում, պեց թողում, թա քյինա քյըզետե ապրե: Էն մինն էլ վեր կյետը տարած ա ինո՛ւմ, ճղացպանը ըզադում ա էլհա պահում մին քանե տարե, պեց թողում:

Ըտահանք կյամ ըն մինտեղ տեռնում, մինը մինա՛ն բեյխա՛բա՛ր, կյամ էլհա էդ պլատումը նո՛քյա՛ր ընգնում:

Մին օր նստում ըն, թա՛ դինջանան, սկսում ըն ո՛ւրո՛ւր կլխավը անց կացածը նաղլ անելը:

Տեսնում ըն վեր լի՛ն ստահանք ախպերքյ ըն, ո՛ւրո՛ւր կո՛լա՛վըն ընգնում, լա՛ց ինո՛ւմ, ուրխանու՜մ:

Տու մել ասել, էդ խոսկերքյը ըսկանում ա էտ կնեգյը: Տո՛ւս ա կյամ, վեր ըն էլ ստահանց մարն ա: Վազ տալա՛վ կյամ ա ուրկուքանոց պչպչորում, կո՛լո՛ւքը ընգնում:

Ետ վախտը թաքավերը տըռանը նստած ա ընում: Աշկըն ա ընգնում էտ պենը, ծեն ա տամ, պո՛ւրո՛ւմ կոշտը, հըրցնում.- Էտ հի՞նչ ա: Ըստրանք նաղլ ըն անում:

էս մարթըն ասում ա.- Պա տուք իմ խոխեքյս ըք, սա իմ կնեգյս ա: Տըեռնում ըն ո՛ւրո՛ւր քթա՛ծ:

Էդ կնեգյը տըեռնում ա թաքավերեն կնեգյը, խոխենքյն էլ թաքավերեն տղեքյ: Ըտրանա տենը ըտահանք սկսումըն լա՛վ ապրելը:

## 91.ԷՐԿՈՒ ԳՈԴ ՅՈՐԵՆ

Իլյա՛լ ա, չիլյա՛լ մին մարթ, մին էլ մին կնեգյ: Էտ մարթը շատ վխելիս ա իլյա՛լ ո՛ւրյա՛ն կընգանան: Ամուն օր մարթին թըկըմիակավ դրկելիս ա իլյա՛լ ծմակ, փյա՛դյա՛-մյա՛դյա՛ պիրիլ տալիս, ծխելիս, մին քանէ կպեկա, պենա դո՛ւզո՛ւցնելիս, յո՛լա քյնյա՛լիս:

Մին օր կնեգյը մին տասը հաց ա թխում, հինչ հա՛ց, ջանըմ, խուխու պլիթնէ՛ , ըն էլ կյյա՛րի քյո՛ւլթեր:

Ո՛ւրո՛ւզյո՛ւնը չելանը քոն ինիլը մին ճոթ տնում ա մարթին ըռըշկին, ինքյը պըրանում, համ էլ ասում.- Ա՛ մարթ, էքյուծ քշրիանա, չելյա՛նը լո՛ւսյա՛նալը, եր ըս կենում քյինում ծմակը, էլ գյո՛ւդո՛ւմ չյը՛մ, հունց քյինում ը՛ս, վեր յըես հեն ինիմ քոն իլյա՛ծ:

Խըեղճ մարթը վըխվխելավ, լո՛ւզին կըտըրած լիյա՛ մին խոսկ ա ասըմ.- Լը, լը, լը... յա՛... յա՛... վ... վ, ա՛յ... կը...ն...է՛գյ:

Կընեգյը ասում ա, պըրծնում, հիլըիյա՛լ լամբը հընգյըցնում, քոն ընո՛ւմ: Մարթը քըռըքոռի տալավ, մին թյա՛հրյա՛վ տեղերը քցում ա, մըրափում: Քըշրիանա մըթըն-մըթեն եր ա կենըմ, թյա՛ քյինյա՛, միենգյ էլ տըեսնըմ ա, վեր հացը խըրեգյ ա, մտածում ա, թյա՛ հո՛ւնց անէ, վեր մին հաց կյուղանա, կընգանան թաքուն:

Հացը տիրած ա ինո՛ւմ շկափեն յրա: Կուճուր-կուճուր քյընո՛ւմ ա, թա յոր օնէ, բո՛ւրդյա՛ն մին աման ա վեր քցում, կոտրում:

Շըրխկոցեն յրան կնեգյը եր ա կենըմ, սկսում ճըղճղալը,- Ա՛ թաղված, կյեղված, էտ հի՛նչ ըս անըմ, հը՛, միէ հո՛ ւնց ըս, վեր եր կենամ ջանըտ ախցան անի՛մ:Մարթը տո՛ւղտո՛ւղալավ ասում ա.- Ա՛ կընեգյ, ջանետ մատաղ, վէշ մին պեն չըմ անըմ, քյինում ըմ ծմակը, ցկատեն ըմ շոռ կյա՛մ:

Կնեգյն ասում ա.-Ա՛ փչանաս տու, ըտեղ ցակատը հի՛նչ ա անում:

- Ա՛ կնեգյ, պա յըես քը մատաղ, պա յըես տիրալ ըմ ըստ եղ, հվատըմ չը՛ս, հասէ եր կալի:

Էտ վախտը բո՛ւրդյա՛ն շիրեփը ճյա՛նգյըն ա ընգնում, զյուղո՛ւմ ա, թյա՛ ցակատըն ա: Մթկումը ասում ա. «Ա՛յ աստուծ, էս հինչ աճողութո՛ւն ար, վեր ցակատը ստեղ ար»: Հյա՛լյա՛ գյիդում չի, թյա՛ ծեռքենը շիրեփըն ա: Մարթը մին թյա՛հրյա՛վ տո՛ւսա կյամ, մըթեն- մըթեն հղէ ինո՛ւմ բիդի ծմակը:

Քյինյա՛լիս կընգանը յրա կըզնված ինքյը-ինքյը խուսելավ, ասըմ ա. «Ա՛րա, պա իտի էլ օյին կինի՛, վեր յըես ընգալ ըմ էս էս քյուփուրեն

ճանգյը: Ասում ա՝ էտ հի՞նչ ըս անըմ: Ատտա շան ախչիգյ, տըեսնըմ չը՞ս հինչ ըմ անը՛մ, լափ իստի ծըեռքըս մըեկնըմ ըմ, չորս հաց յոր օնիմ, տանիմ, հա̈նդին օտիմ»:

Ինքյը-ինքյը խուսելավ քյինա̈լիս մին ծառ ա պտահում, շիրեփավը թխում ա, թա կըտրե, բուրդան շիրեփը կոտրում ա: Ինքյըն էլ գյուղո̈ւմ ա, թա̈ ցըկատեն շուղուփն ա տո̈ւս եկալ:

Ըսկըսում ա ձեռքերը տափը քըսելը, թա̈ քիթենա: Տեսնըմ ա վեր քըթենում չի, ուստուծեն ղաչանք ա անըմ.

- Աստուծ-աստուծ ցըկատես շըղուփը քըթիր, քյըեզ երկու գող ցորեն կտամ:

Ասում ա պըրծընում, էլհա ծեռքերավ տըփտըփըմ: Բո̈ւրդա̈ն շիրեփեն կյուշը ծեռքն ա ընգնում:

Մարթը կըզնված ասում ա.- Ա՛ ժողովուրթ, մին տեսեքյ էս աստուծը հիշքան ա չար, հա̈լա̈ ցըկատես շուղուփը քըթընա̈լու, գողը ղարկալ ա, թա̈. «Էրկու գող ցորեն ղարկեյ»: Թո՛ւու՛՛, նա̈հլա̈թը քյըեզ, չար սըտանա՛:

92.ՀԱՎԸ

Ընըմ ա, չընըմ մին մարթ, մին կնեգյ: Ո̀ւրո̀ւր նհետ շատ ըն ապրալ, խրեգյն ապրալ, կնեգյը խոխա չի պըերալ: Կնեգյը մարթին ստիբալ ա, թա̀ քյինա մին օրիշ կնեգյ պեր, թա̀քյի մին խոխա ինի՛: Ախճկանը մա̀րն էլ ա շատ ստիբալ:

Տղան ասալ ա, թա̀.- Ցարաբ բա իտի պե՞ն կինի՛, հա̀լա̀մ կնեգյըս տանը սաղ-սըլըմաթ, քյինիմ մին էլ պիրիմ: Ինձ օրիշ կնեգյ չի հա̀ջա̀թ, իմը իմ կնեգյս ա: Չէ, ախպեր:

Կնեգյը շատ ա դիլխոր ըրալ, քյեցալ մորն էլ ասալ:

Մարը եկալ ա փսեն ափաթը կտրալ, թա̀.- Քյինա̀ կնեգյ պեր, վըեր խոխա ինի:

Փեսան քյինա̀մ ա բազար մին զա̀մբո̀ւլ տես-տեն ինքյ օնում, պիրըմ տոն, մին լա̀վ էլ հավ ա ինքյ օնում, էլիա պիրում տոն:

Մին օր փեսան կնգանն ասըմ ա.- Ցըես քյըեզ նհետ քոն չըմ ինո̀ւմ , տեղս տար հավեն քշտեն քցի՛…

Կնեգյը ըրմընալավ տանըմ ա հավեն քըշտեն տեղը քցում: Էտ մարթը քոն ա ինո̀ւմ: Մին քանի քըշեր քոն ա ինո̀ւմ , ախրը չէ, տոնը կըռեվ ա տեռնըմ:

Կնեգյն ասըմ ա.- Խե՞, էտ հի՞նչ կարք ա, պա մարթին կնեգյ կինի տանը, տեղը հավեն քշտեն կքցի՞:

Կնեգյը կըռեվ ա անում, զեմքուչն էլ ա կյամ, կըռեվ անըմ:

Մին օր էլ մարթը կյամ ա տոն, ծեն ա տամ կնգանը, զըմքուչին ո̀ւրո̀ւր քշտե նստըցնըմ. Ասըմ.- Պա տուք ինձ ասըմ ըք քյինա̀ կնեգյ պեր, թող խոխա ինի, էտ հա̀լա̀մ հավ ա, վեր կըռեվ ըք անում, վեր կնեգյ ինի՛ հի՞նչ կանիքյ, յըես դա̀սիդ ծըեզ փո̀րցալ ըմ:

## 93.ԹԸՌՉԸԿԱՆ ՀԱՐՍԸ

Ինըմ ա, չի ինըմ մին թաքավեր ա ինըմ: Էտ թաքավերին մին տղա յա ինըմ: Մի քանի վախտանը ետը թաքավերին տղան հորն աըմա.

- Ա՛ հա̀ր, օզում ըմ ախճիզյ օզիմ:

Հա̀րը տղեն ասում ա.

- Քինա հարո̀ւր մանեթ փող ըշխադե, պեր, քյըեզ հետե հըրսանեքյ անիմ:

Տղան տանան տո̀ւս ա կյամ, քյնա̀մ մոտիկ քղաքումը մին հարուստի տան նո̀քյա̀ր նի միննում: Տարին տասը մանեթ փող ա ըստանում:

Մի քանե վախտ վեր կործ ա անում, հարուստը նո̀քյա̀րեն ասում ա.

-Մունք քիննա̀կան ընք քյարվան, պեթկա պաղրաստոթուն տեսնանք, իրեք ամես քյննա̀կան ընք, իրեք ամես ետ ընք կյըլլա̀կան:

Տրանք ճընապար ըն ընգնո̀ւմ: Ճընապարը կյետեն դրաղավըն ա ինո̀ւմ:

Շատ ըն քյնա̀մ, խրեզյ ըն քյնա̀մ, քյնա̀մ ըն տո̀ւս կյամ մին մեծ սարու տակ: Էտ սարը էնքան պեցո̀ւր ա ինո̀ւմ, վեր վեչ մինը կարում չի տական եշի, փափաղը վեր ա ընգնըմ:

_տ սարեն կլխեն մին մեծ դուշ ա ինըմ կաղնած: Հարուստը ետ ա տեռնըմ նո̀քյա̀րեն ասում.

-Էն դուշը տեսնում ը՞ս, էն մըզանա մինին տըննական ա, քանի տարալ չի, եք էս եզներան մինը մորթինքյ, մաշկինքյ, մունք էլ կյողլը կենանք, վեր դուշը կյա, էտ եզանը մեսը յոր օնե, քյինա̀, մունք էլ տո̀ւս կկյանք մեր ճընապարը կշարունակինքյ:

Նո̀քյա̀րը հոժարվում ա, պիրըմ ըն եզնը մորթում, մաշկում, ճընա-պարեն մաչտեղը մեսը վեր քցում:

Հարուստը նո̀քյա̀րեն աըմ ա.-Եք քյըեզ տինիմ մորթուն մաչին, կյեղվե, թա չէ քյըեզ կտանե:

Պերում ըն տղեն տինում  մորթուն մաչին, պենդ-պենդ կապում, վեր քցում, մեսն էլ կյետը քցում, ո̀ւրա̀նք կյողլը կենում:

Դուշը թռչում ա, կյամ, տես եշում, տեն եշում, տեսնում վեր վեչ մին պեն չիկա, էտ մորթեն յոր օնում, քյինո̀ւմ:

Ետ սարեն կլխեն դուշը պեց ա անում, տեսնում մին տղա յա: Էտ տղան եր ա կենում, տեսնում էն ա սարեն կլխեն: Սարեն կլխան կանչում ա.-Հե՛յ, հե՛յ խազալին՛, պա ես հո՞ւնց կյամ:

Հարուստն ասումա.- էտ քարերան վեր ածե, ետավ էլ տու եք:

Ետ տղան քարերան հինչքան կարում ա, վեր ա ածում: Էտ քարերը շատ թա̀նգյանուց քարեր ա ին̀ում: Էտ մարթը էտ քրերավը եզները պեռնում ա, ճրնապար ընգնում, էն տղեն էլ թողըմ ա ընդեղ:

Երեք օր էտ տղան մնում ա ըտեղ: Վերչը ըրա̀զըմը տըեսնըմ ա, վեր մինն ասում ա.- Եր կաց, ըտեղ մին քար կա, պըցըրցրու, տակավը ճրնապար կա, քյինի հըսե սարեն տակը:

Էտ տղան իտի յա անում: Քարը պըցըրցնում ա, փա̀լա̀քյաններավը քշանում, տ̀ուս կյամ մին տոն:

Էտ տանը մին պառավ ա ին̀ում նստած: Ըտրա ներքե պռոշը տափն ա սիրփըմ, երե պռոշը՝ պատալըկը:

Էտ պառավը վեր տըեսնում ա էտ տղեն զարմանըմ ա, հրցնում ա,- Տու հո՞ւնց ըս եկալ ըստեղ: Վեր տղերքս կյան, քյըեզ կօտին:

Պառավը մտածում ա, թա̀ հո՞ւնց անի, վեր էս տղեն վնաս չի տան: Տանում ա էտ տղեն ա̀վլին քամակեն կյեղըմ: Ո̀ւր̀ուգյ̀ունը տղերքը վեր կյամ ըն, ասըմ ըն, թա̀- Ա՛ մար, էս հի՞նչ ա, մըրթ-մըրթավետ ա կյամ:

Մա̀րն ասըմ ա.- Մարթ, պեն չի կա ըստեղ:

Տղերքյը հվատում չըն:

Մարը տըղորցն ասըմ ա.- Ո̀ւրթ̀ումնը կերեքյ իմ տված կաթնավս, վեր վնաս չըք տալու, ասիմ:

Տղերքյը ̀ուրթ̀ումն ըն օտում: Մարն ասում ա.- Իմ քվոր տղան ա, եկալ ա:

Ըտըղան տղան տ̀ուս ա կյամ, մին քանի վախտ ըտրանց նհետ ապրըմ: Ընդրանց տոնը մին քանի օթախ ա ին̀ում: Էտ տղան ամմեն մին օթախ պեց ա անում, ման կյամ: Ընդեղ մին տ̀ռն ա ին̀ում , պեց չըն անում, էտ տղան վեր շատ ա խնթրում, պեց ըն անում, տըեսնում, վեր ըտեղ իրեք կյեղեցիկ ախճիգյ ըն նստած:

Տղան էտ պռավեն ասըմ ա.- Ցըես պիտի էտ ըխճըկորանցը մինին օզիմ:

Պառավըն ասում ա.- Դե վեր օզում ըս, օզի: Էքյուց կքյնա̀ս մեր բաղըմը հովուզ կա, ̀ուրա̀նք քյննա̀կան ըն ըղնալի, կքյնաս մինին հալավը կյուղանաս, հինչքան էլ վեր ասե, տաս վեչ:

Էքյսը էտ տղան քյնամ ա բաղը, էտ ըխճըկերքը վեր կյամ ըն ըղընալի, մինին հալավը կյուղանում ա: Էն մնացածը հըլըվնեն կյենում ըն, քյնում,

ամմա էտ մինը մընըմ ա տկլոր: Հինչքան խնթրում ա, վեր հալավը տա, էտ տղան տամ չի, յոր ա օնում էտ ըխճըկանը կյամ տոն:

Ըտեղ էտ տղան տրան նհետ ապրում ա, տրանց մին տղա յա ինո՞ւմ :

Ըտեղ շատ ըն կըենում, խրեգյ ըն կըենում, վերչը էտ տղան ասում ա,- Ցըես օգում ըմ քյինիմ իմ հորս աշխարքը, լո՞ւս աշխարքը, պառավը հոժարվում ա:

Մեծ տղան նան մեշնա՞կ տղան աըըմ ըն.- Մունք կտանինք

Ամմա մարը ռազի չի ինո՞ւմ, ասում ա.- Տուք տրանց վնաս կտաք:

Վերչը պուճուր տղան տանըմ ա լո՞ւս աշխարքը, պեց թողում, ըտեղ տաիանք շատ ըն քյնո՞ւմ, խրեգյ ըն քյնո՞ւմ, հսնում ըն մին կյուղի: Ըտեղ սկսում ըն ապրիլը:

Տաիանց մի տղա էլ ա ինո՞ւմ: Ըտեղ մին պելի յըն փռնում: Մին օր էտ պելուն տղան փսակվում ա, ըտրանց էլ ըն կանչում: Տրանք ո՞ւրա՞նց խոխեքյը յոր ըն օնում, քյնում հըրսանեքյ: Էտ հըրսնըրնքումը հու վեր պար ա կյամ, էտ հարսը հավան չի կենում:

Վերչը տրան ստիբում ըն, վեր ինքյն էլ պար կյա, էտ հարսը ետ ա տեռնում, ասում.

- Ինձ մին հալավ օնիմ, հիբ վեր հաքնիմ էն վախտը կյիլա՞կան ըմ, պար կյամ:

Վերչը էտ հալավը կյենում ա պար կյամ: Մեհետ մին տղան ա յոր օնում, պար կյամ, մեհետ էլ էն մին տղան, վերչումն էլ էրկու տղան խտտում ա, թա՞ պար կյա, թռչում ա, քյնո՞ւմ : Հետան հինչքան թվա՞նգյըն տրքցնում, նի չի կյա՛մ:

Ըտեղ էտ տղան քոռըփեշմա՞ն, կյամ ա տոն, մտածում, թա՞ հունց անե, վեր էլիա քյինա՞ ընդեղ:

Վերչը ասում ա. «էլիա քյնամ էն քյո՞հնա՞ հարուստին կոխկը նո՞քյա՞ր մննիմ, բա՞լքյա՞ս քյնամ էլիա ընդեղ»:

Շատ ա կյամ, խրեգյ ա կյամ, վերչը էտ հրուստեն քթենում ա, նո՞քյար նի մննում ընդրա տանը:

Էլիա կյամ ա էտ հարուստն ասում,- Մունք պետք ա քյնա՞նքյ քյարվան, վեց ամսվա պաղրաստոթուն տես:

Մին օր էլ ճընապար ըն ընգնում: Վերչը էլիա քյինա՞մ ըն, հսնում էտ սարը: Էլ հա եզն ըն մորթում, տղեն մորթուն մեջին կապում: Ղուշը կյամ ա, տղեն տանում, պեց անըմ: Վեր խազայինն աըըմ ա.

- Քարերան վեր քըցի, էտ տըղան ասում ա.

- Էլ ըստեղան քար չըմ վեր քցիլ, էլ էն նո̈քյա̈րը չը՛մ:

Էտ մարթը եզները տերտակ յոր ա օնըմ, կյամ տոն: Էտ տղան էլիա էտ քարը պըցըրըցնում ա, կյամ պռավեն կոշտը, լոխ նաղլ անըմ, հինչ վեր կլխավը ընցալ ա:

Էտ տղան քյնամ ա ընդեղ, իշտեղ վեր ո̈ւրա̈ն կնեգյն ա ապրըմ: Տեսնում ա, վեր էն մեծ տղան կյիրք ա կարթում:

Տղեն անա հրցնում ա.-Հշտեղ ա քու մոր հալավը:

Տղան նշանց ա տամ, էտ տղան յոր ա օնում, էրում:

Կնեգյը կյամ ա ասում,- Իմ դա̈րդա̈ս քու կըյո̈խտ շատ օյիննի յա կյալու:

Մարթն ասում ա.- Վէչինչ, հինչ օզում ա, թող ինի:

Ըտրանք եա ըն տեռնում, կյամ լո̈ւս աշխարք, կյամ ըն հըսնըմ էն քաղաքը, իշտեղ վեր ո̈ւրա̈ն հա̈րն ա ապրըմ:

Էտ քըղաքումը տոն ըն փռնում, ապրում: Խա̈բա̈րը հսնում ա թաքավեթեն, վեր տղան ըտեղ ա ապրում: Թաքավերը նըղանում ա, վեր տղան եկալ ա, եկալ չի հորը տոնը:

Ո̈ւրո̈ւգյո̈ւնը տղան, ո̈ւրա̈ն կնեգյը խոխեքյը յոր ըն օնըմ, կյամ թաքավերեն տոնը: Թաքավերը վեր տեսնում ա հարսեն, մըթկումը ասում ա, «Յըես պիտի տղես սպանիմ, հարսիս նհետ ապրիմ»:

Էն մին ո̈ւրո̈ւգյո̈ւնը հա̈րը տղեն դոնաղ ա կանչում:

Վեր մարթը օզում ա քյինի, կնեգյը ասում ա.- Ա՛ մարթ, վեր քյնաս քու հոր կոշտը, առաչիտ ճարած խորագյ ըն տննա̈կան: Վեր ասե, խե՞ քու ըմանատ չըս օտում, կասիս, վեր շատ ա, կարում չըմ օտիմ:

Տղան քյնա̈մ ա հորը տոնը: Մին խրեգյ խուսելանը ետը հա̈րըն ասըմ ա.-Հաց պերեքյ, օտինքյ:

Ծառան պիրում ա հացը քցում: Էտ վախտը տղան ո̈ւրա̈ն ամանը տինում ա հորը ըռաչին, ինքյը թաքավերին ամանը յոր օնըմ:

Ըտեղ թաքավերը հըրցնում ա.- Խե՞ օտում չըս:

Տղան ասըմ ա.- Յըես տանը կերալ ըմ, ետնան եկալ: Հացը ուտելան ետը, տղան քյնա̈մ ա տոն:

Թաքավերը տեսնում ա, վեր էս ամալը անց չի կացավ, միհենգյ էլ օզում ա մին օրիշ պեն անե: Պիրըմ ա տանը մղակըմը մին մեծ հոր ա քանդըմ, էրկու մեծ ըզղան իփած ճո̈ւր ա հզըրում, հորեն կլո̈խըն էլ գյա̈բա̈վ

ծասկըմ, վեր տղան կյա, անց կենա, ընգնէ հորը, էն ճ՛ուրն էլ ածէ կլխեն:

Մարթը վեր օզում ա քյնի, կնեգյը ասըմ ա.- Մեր թուլան էլ եր կալ, հշտեղավ թուլան քյնա՝, ընդեղավ էլ տու կքյնա՝ս:

Իտի էլ անում ըն: Թուլան հշտեղավ քյնա՝մ ա, տղան էլ ընդեղավ ա քյինամ: Վեր կյամ ա մղակեն կոխկըն ա հըսնըմ, թուլան լոք ա տամ, տղան էլ ա լոք տամ: Ընդըղան տղան կյամ ա տոն:

Թաքավերը վեր տեսնըմ ա էս դ՛ոնըմ էլ չի պեն տ՛ուս եկալ, մեհետ էլ մին օրիշ պեն ա մտածում:

Ո՛ւրա՝նց քըղաքան հեռու մին ծմակըմ մին փոս ա քանդում, ինքյն էլ խոր, ՛ուրա՝ն կործ ընողն երեն ասում ա,- էքյուծ քյննա՝կան ընք վըերսի:

Էքյսը վեր օզում ըն քյնա՝ն վըերսի, կնեգյը տղեն ասըմ ա. - Քյինիլ միր, վեր քյինիս քու հա՝ր կլխետ մին օյին ա պիրլա՝կան:

Տղան էլ ասըմ ա, - Վեշ մին պեն չի ինի՛լ:

Կնեգյն ասըմ ա.- Դէ վեր լըըմ չըս ինձ, քյըեզ նհետ էլիա թուլան եր կալ:

էքյսը տղան ծի յա նստում, ՛ուրա՝ն հորը նհետ ճընապար ընգնում:

Շատ ըն քյնա՝մ, խրեգյ ըն քյինա՝մ, հա՝րն ասում ա.- Եկեքյ հաց օտինքյ, սոված ըմ:

Պիրըմ ըն հաց օտին: Հա՝րը տանը իրեք հաց ար թըխել տըվալ ինքյն էլ էնքան աղ ա քըցել տըվալ, վեր կարըմ չըն օտին:

Տղան վեր օտում ա, շատ ա ծրավըմ, հորն ասում ա.- Ծարավ ըմ, ճ՛ուր ըմ օզում:

Հա՝րն ասըմ ա.- Պեր աշկետ մինը տ՛ուս օնիմ, փոսավը մին ճ՛ուր տամ: Ետ ի էլ անում ըն: Աշկը տ՛ուս ա օնում, փոսավը մին ճ՛ուր տամ, վեր աշկը վեր ըն քցում, էտ թուլան յոր ա օնում, տինն՛ում լ՛ուզվեն տակեն:

Մին խրեգյ վեր քյինա՝մ ըն, էլիա ճ՛ուր ա օզում: Հա՝րը պիրում ա էն մին աշկըն էլ տ՛ուս օնում, փոսավը մին ճ՛ուր տամ: Վեր քյնամ ըն, հսնում փոսեն կոշտը, քմակեն կուփե յըն տամ, քցում փոսը: Թուլան էլ էն աշկերը տանում ա, փոսեն մաշին կյեղում:

Ո՛ւր՛ուզյ՛ունը վեր կյամ ըն տոն, մարթը կյամ չի:

Կընեգյը հորն ա հըրցնում.- Տղատ հո՞ր ա:

Հա՝րն ասըմ ա.- Պա եկալ ա, տոն չի եկա՞լ:

Կնեգյը գյիդ՛ում ա իլա՝լ մարթը հիշտեղ ա:

Ո՛ւրա՝նց հրևան էրկու մարթ ա կանչըմ, թուլան էլ տինում նհետնեն, ասըմ.- Հիշտեղ թուլան քյնի, տուք էլ կքյինիքյ:

Քյնու՞մ ըն, վեր հըսնում ըն հորեն կոխկը, թուլան կնձկոնձում ա: Ըտեղ կաղնում ըն: Էտ տղան հա՜լա սաղ ա ինու՞մ, պաղասխանում ա, ըտըղան տու՞ս ըն օնում, պիրըմ տոն, ետավ կնեգյը ասըմ ա.- քյե՜ցեքյ, թուլան ծըեզ տննական ա մին փոսու կոխկ, աշկերը հեն ա ընդեղ, յոր կօնիքյ կյաք: Մին հատ էլ թև ա իննա՜կան, էն էլ յոր կօնիքյ: Իտի էլ անում ըն:

Աշկերը, թևը պիրըմ ըն: Աշկերը տինու՞մ ըն տեղը, թևն էլ քսում, աշկերը լիվըցնում:

Խա՜բա՜րը հսնում ա հորը, վեր տղատ սըղացալ ա, էն ա տանը:

Թաքավերը միենգյ էլ մին օրիշ պեն ա մտածում:

Պիրըմ ա մին մինգյանա շինիլ տամ, վեր տըղեն քըցի մաչը:

Թաքավերը տղեն կանչում ա, պիրում տոն, հաց ըն օտում, չայ ըն խմըմ:

Ըտեղ թաքավերն ասըմ ա.- Ցըես քյեզ մին հարստոթուն նշանց տամ, քյինի եր կալ, յըես էս ա պռավալ ըմ, տու վըս թաքավեր տոնըլական, վեր մեր ամմեն պենին տեղը գյիդա՜ս: Ցըես մին մաշին ըմ շինիլ տվալ, վեր օզիս մարթու պատժիս, մաչը կքցիս, հոփ տաս:

Թաքավերը տանըմ ա նշանց տամ, համ էլ ասըմ.- Նի մոտ մաչը, նշանց տամ:

Տղան ասըմ ա.- Եք տու նի մոտ, քանի վեր յըես պիտի պատժիմ, ես պիտի սըվերիմ:

Իտի էլ անում ըն: Նի յա միննում:

Տղան վեր մեհետ շոռ ա տամ, թաքավերն ասում ա.- Ցա՜վ ա տամ:

Տղան էլ ասում ա,- Պա վեր տու օզալ ըս ինձ զհա՜րավ խորագյ տաս, ինձ ցավ չի տվա՞՜լ:

Մեհետ էլ ա շոռ տամ, թաքավերն ասում ա,- Լա՜վ, բոլա, ցա՜վ ա տամ:

Տղան ասում ա,- Պա վեր փոսը կտրալ ըս, ինձ քուռըցրալ, ինձ ցավ չի՞ տվա՜լ:

Ըտեղ թաքավերը մեռնում ա:

Տղան քյնա՜մ ա ու՞րա՜ն կնեգյը, խոխեքյը յոր օնում, քյնա՜մ հորը պալատումը լա՜վ ապրում: Ըտրանք հասեն ու՞րա՜նց մուրազեն, տուք էլ հըսնիք ծեր մուրազեն:

Երգյինքան իրեք խնձո՞ր ա վեր ընգյնում, մինը՝ ասողին, մինը՝ կյիրողին, մինն էլ էն հեռու, շատ հեռու տեղի կարթողին…

## 94.ԹԱՔԱՎԵՐ ԾՌ̀ՒԿՆԸ

Իլ̀ալ ա, չիլ̀ալ մին թաքավեր ա իլ̀ալ: Էտ թաքավերը շատ ա կացալ, խրեգյ ա կացալ, հիվանդացալ ա: Ճար չըն քիթ̀ալ, վեր սըղըցնին: Թաքավերեն տղան քյեցալ ա ճարու:

Մին փալչի ասալ ա.- Էս հինչ ծովումը ծ̀ուկների թաքավեր կա, վեր էն օտե, կսըղանա:

Մին ծ̀ուկըն փըռնող քյինո̀ւմ ա ծ̀ուկներեն թաքավերեն փռնում թ̀ա պիրի, թաքավերեն տղան կյամ ա, ջիհում, ասում.- Էտ հի՞նչ ըս տանում:

Էն ծ̀ուկնը փըռնողը ասում ա.- Ծ̀ուկներեն թաքավերը տանում ընք տանք քա հոր, հանց ու օտե, սըղանա:

Թաքավերեն տղան ասում ա.- Էտ ծ̀ուկնը տարեք քցեցեքյ ո̀ւր̀ան տեղը, վեր թաքավերը ծըզ յրա յա թաքավեր, էտ ծ̀ուկընն էլ ծովեն յրա յա թաքավեր:

Էտ ծ̀ուկնը փըռնողը տանում ա ծ̀ուկնը քցում ծովը, ճելլի քյինո̀ւմ թաքավերեն ասում.- Տղատ թողալ չի ծ̀ուկնը պիրիմ:

Թաքավերը տղեն յրա կզնվում ա, ասում.- Վեր իմ դուշմ̀անս տու վըս, քյինի, էլ աշկըս քյըեզ տըեսնա վեչ:

Թաքավերեն տղան հղե յա ընգնում, քյինո̀ւմ: Հղեցը մին պառավ կնեգյ ա ջիհում:

Էտ կնեգյը հրցնում ա, ասում.- Հիշտե՞ղ ըս քյինո̀ւմ:

Թաքավերեն տղան ասում ա.- Հղես էրկան ա՛:

Պառավն ասում ա.- Ցըես էլ ըմ քյըեզ նհետ կյամ:

Թաքավերեն տղան ասում ա.- Ցըես՝ ջահիլ, տու՝ պառավ, կարել չըմ քյըեզ նհետ կյամ:

Պառավն ասում ա.- Չէ՛, վեր չէ՛:

Վերչը նհետը քյնում ա:

Մին ծմակում էտ պառավն ասում ա.-Մին պայման կապինք, հինչ վեր ծեռք պիրինք, ըշխադինք, մաչան հալալ կես անինքյ:

Թաքավերեն տղան ասում ա.- Դե հի՞նչ ըմ ասում, իտի անինք:

Շատ ըն քյինո̀ւմ, խրեգյ ըն քյինո̀ւմ, մին քաղաքու վըն հըսնում: Թաքավերեն տղան մին վաճառականու ախճիգյ ա տեսնում, ո̀ւր̀ան̀ան քյինո̀ւմ:

Էտ պառավը տրան ետ ա պերում, ասում.- Էտ հի՞նչ ա պտահալ, հի՞նչ ա իլ̀ալ:

Տղան ասում ա.- Դե, էն ախճիգյը օզիլ բեղինքյ ինձ հետե:

Էտ պառավը քյինո̈ւմ ա վաճառականեն ասում:

Վաճառականն ասում ա.- Իմ փստտենքյս մին քըշեր էլ չըն ապրում:

Թաքավերեն տղան ասում ա.- Օզում ա լի՞ն մին ժամ ինի՞:

Պիրո̈ւմ ըն լա̈վ հրսանեքյ անում: Քշերը վեր էն ախճիգյն նան էն տղան քյինում ըն, թա̈ քոն ինին, էն պառավն էլ ա քյինո̈ւմ, նի մնում ընդրանց տեղը: Թաքավերեն տղան շատ ա ղանչանք անում, վեր կնդակ էտ քիշերը քոն չինի ո̈ւրա̈նց նհետ, պառավը ըսկանում չի: Նըհտոնուն քոն ա ինո̈ւմ:

Տղան խռավում ա օշը տեն անում, ախճիգյն էլ խռավում ա օշը տեսն անում: Վեր քունավ ըն ընցնում, էտ ըխճըկանը պիրանան իրեք օխծ ա տո̈ւս կյամ, թա թխե, էն տղեն ըսպանե:

Էտ պառավը փռնում ա, քցում միշոկեն մաչը, եր կենում, քյըընո̈ւմ օրիշ տեղ քոն ինո̈ւմ:

Վեր լո̈ւսանում ա, վաճառականը մարթ ա ըղարկում, վեր քյինին փսեն մեյիդը տանին, թաղին: Էտ մարթիքյը քյինո̈ւմ ըն տեսնում տղան սաղ, իրեսը լվանայիս:

Քյնո̈ւմ ըն վաճառականեն ասում: Վաճառականը շատ ա զարմանում, քյինում ա տեսնում ղորթ ա:

Շատ ուրախանում ա, միչն էտ տղեն կյալը երեսունիննը փեսա յա իլա̈լ էտ մարթին, ամեն մինը մին քշեր էլ չի կացալ, լոխճին կլխնեն կտրած, մին տան թուփ ըրած ա իլա̈լ:

Վաճառականը եր ա կենում շատ հարստոթուն տամ ըխճկանը, հղե տինո̈ւմ:

Վեր շատ քյնում ըն, էտ պառավն ասում ա. - Պայմանը, պայման ա, հինչ վեր կա, հալալ կես բիղի անինքյ: Պիրում ըն իրեք ծի ո̈ւրա̈ն պեռնավը մին ընգյո̈ւնի տինո̈ւմ, իրեքն էլ մին ընգյո̈ւնի տինո̈ւմ, մին ծի ո̈ւրա̈ն պեռնավը մնում ա: Էտ տղան տամ ա պռավեն: Պառավը յոր չօ-նում, ասում ա.- Մաչան հալալ կես բեղի անինքյ: Ասում ա, պրծնում մին ղամա տո̈ւս օնում ծին մաչան հալալ կես անում:

Թաքավերեն տղան ասում ա.-Դե պրծալ ընք, քյինինքյ:

Պառավն ասում ա.- Չէ, կնեգյտ էլ բեղմա մաչան կես անինքյ: Էտ տղան շատ ա հա՛յ-հա՛յ անում, ասում.- Լոխ քյըեզ, մինա̈կ կնեգյս ինձ:

Էն պառավն ասում ա.- Չէ՛:

Ըխճկանը կոներան կապում ա, ծառան կախ տամ, ղաման տո̀ւս օնում թա կես օնէ, ախճիգյը ծուվամ ա: Վեր ծուվվամ, ա պիրա̀նա̀ն մին օխծու ճոտ ա տո̀ւս կյամ: Պառավը դա̀ստի ըխճկանը ազադում ա:

Էտ պառավը թաքավերեն տղեն ասում ա: - Էլ ինձ պեն չի հա̀ջա̀թ, տու ինձ մին լըվոթուն ըս ըրա՛լ, յըես էլ քյըեզ ըմ լըվոթուն ըրա՛լ:

Էտ տղան ասում ա.- Յըես քյըեզ լըվոթուն չըմ ըրա՛լ:

Պառավն ասում ա.- Յըես էն ծո̀ւկնըն ըմ, վեր ծովը քցիլ ըս տվալ, թողալ չըս ինձ ըսպանին, տան քա հոր, յըես էլ քյըեզ էն լըվոթունըն ըմ ըրալ, վեր էս ըխճկանը պիրա̀նա̀ն տո̀ւս եկած օխծերը վեր երեսունըիննը տղա յըն ըսպանալ, ըսեցալ ըն, թա̀ էն քշերը քյըեզ էլ սպանի՛ն, յըես ըզադա՛լ ըմ:

Ասում ա, պրծնում, օխծերը տո̀ւս օնում, նշանց տամ: Յետավ սպանում ա էտ լոխ օխծերը, ինքյը աշկա կորչըմ:

95.ՓԻՍ ԿՆԵԳՅԸ

Ինըմ ա, չինըմ մին մարթ, մին կնեգյ, էտ մարթին անըմը Ղàզàր ապեր ա ինըմ, ինքյն էլ շատ վխըլկոտ: Հիբը տո՞ւս ա կյամ տոռնը, կնգանը նհետ ա տո՞ւս կյամ:

Կնեգյը էզզàն մարթին նըհետ կըռն ա անըմ, մարթին ինջիմիշ անըմ, ասըմ.- Հի՞նչ ա, թմբàլու նման վեր ըս ընգալ տանը, քյինըմ չըս, թà մին շելàկ չոփ պիրիս:

Մին օր էլ կնեգյը կըռն ա անում, չաթուն տինըմ ձեռքին, թà քյնի հիշտղա օզում ըս, մին շելակ փàդ պեր:

Ղàզàր ապերը եր ա կենում, չաթուն յոր օնում, ուռութանան վխվըխե-լավ, ճինջի-պոմբի ընելավ տանան տո՞ւս կյամ:

Քյինում ա, քյինում մին կյետու պտահըմ: Կյետեն քշտեն նըստում ա, թà մին թիքյà դինջàնà, տըեսնըմ ա մին կյեռթնուկ կյետան լոք տվավ, ընգավ կոխկը:

Ղàզàր ապերը վխելան տափեն վեր ա ընգնում: Կյեռթնուկը կյամ ա, ձեռքին յըրան ընգըմ: Նա վխելան սկի զյիդըմ չի հի՞նչ ա, փռնըմ ա, տինիմ ծոցըմը:

Մին պատառ դինջընալան ետը, եր ա կենում, հղե ընգնում:

Միենգյ էլ մին կորե յա պըտահում: Էտ կորեն էլ ա յոր օնըմ, տինըմ ծոցըմը: Էլիա յա հղեն ընգնում:

Քյինըմ ա, քյինըմ, տեսնըմ ա ծմակըմը մին ծոխ ա եր ինըմ: Վխվխելավ մուտանըմ ա, տեսնըմ մին տոն, ծակավը յեշըմ ա, տեսնըմ էրկու օշափ նստած: Ինքն էլ փիս տո՞ւզն ա ինըմ:

Դàրդàն յանշաղ տեռած, ասըմ ա.- Հի՞նչ անիմ, հի՞նչ չանի՛մ:

Ախրը սրտըվերվում ա, նի մըննըմ:

Նի յա մըննըմ, պարյօր տամ, ասըմ.- Ախպեր չը՞ք յոր օնել ինձ:

Ընդրանք ասըմ ըն.- Խե՞ չընք յոր օնել, էրկու չինինքյ, իրեք ինինքյ:

Պիրըմ ըն ըտրան հաց, չայ տամ, օտըմ ա, քոն ինըմ: Ըռավետը եր ըն կենըմ, քթեվ անըմ:

Էտ օշափնեն ասըմ ըն.- Ղàզàր ապեր, մին տու վէլ շո՞րերտ պըտըռե, տես լո՞ւ, վիչիլ կա՛, թà չէ:

Ղàզàր ապերը ծոցան կյեռթնուկը տո՞ւս ա օնըմ, թà.-Հսե՛, իմ վիչիլըս էս ա:

Էտ օշափնեն զրմանըմ ըն: Միենգյ էլ ծեռքը քցըմ ա, կորեն տո՞ւս օնըմ, թա՛.-Հսե՛, ըս էլ իմ լո՞ւս ա՛: Տրանք մնըմ ըն ըրմացած, մինը մինու իրեսու յիշիլիս:

Միենգյ էլ ասըմ ըն.- Ղա՛զա՛ր ապեր, դե կուռնուտակատ մին մազ տուս կալ, տեսնանք հո՞ւնց ա:

Ղա՛զա՛ր ապերը ծեռքը քցում ա կուռնուտակեն մազի չաթուն տո՞ւս օնըմ:

Էտ օշափնեն վխելան ասըմ ըն. - Մազըտ քաշի՛:

Ղա՛զա՛ր ապերը տեսնըմ ա, վեր էտ ուշուփնեն վախըմ ըն, ինքյն էլ մեծ-մեծ պեներ ա խոսըմ:

Ասըմ ա. - Մին պատառ ձո՞ւր տվեքյ: Ուշուփնեն, մին մեծ դո՞լչա յա ինըմ, տամ ըն ո՞ւրա՛ն, վեր ձո՞ւր խմե:

Ղա՛զա՛ր ապերը տեն ա քըցըմ, թա՛,- Ստրանավ մարթ կըքուշտանա՞՛, մին էն լապատկան ինձ տվեք, քյինիմ մին մեծ գյո՞լ անիմ, յրան ընգնիմ, խմիմ, քուշտանամ:

Ուշուփնեն վեր տըեսնըմ ըն ստրան ստի, ասըմ ըն.- Ստա մեր կլո՞խը քյա՛լա՛գյ ա պիրլա՛կան:

Վերչը էտ օրն էլ ըն լո՞ւսո՞ւցընըմ: Էքյսը ըռավետը եր ըն կենում, քյինըմ ծմակը փա՛դո՞ւ: Էտ էրկու օշափը սկսում ըն փա՛դ անելը, ամմա Ղա՛զա՛ր ապերը փադ չի անո՛ւմ:

Էտ օշափնեն ասըմ ըն.- Ղա՛զա՛ր ապեր, խե՞ փա՛դ չըս անըմ:

Ասըմ ա.- Ստի եշըմ ըմ, թա՛ լիա՛ մի դո՞ւնո՞ւմանց էս ծմակը պուք տամ, տան իմ:

Էտ օշափնեն վեր սկանում ըն, դանչանք ըն անում, ասում. - Լա՛վա, լա՛վ, թող կենա ամմեն օր կյանք փադ անինքյ, տանինքյ, հանցու ցրտումը չի մնանք:

Վեր իտի ըն ասըմ, Ղա՛զա՛ր ապերն էլ ասըմ ա.- Դե, վեր օզըմ չըք, անել չըմ ծեր խաթրու: Ասըմ ա, նստում:

Էտ ուշուփնեն փա՛դ ըն անըմ, պըրծնըմ, եր կենում, քյընըմ տոն: Տանը էտ ուջուփնեն ասըմ ըն.

- Էտ վեր կենա, մըեզ քյա՛լա՛գյ ա կյիլա՛կան, լա՛վն էն ա, ասինքյ. Եք ըխպրութունա տո՞ւս կյանք»:

Ընդրանք ո՞ւրո՞ւգյո՞ւնը ասըմ ըն.- Ղա՛զա՛ր ապեր, եք ըխպրութո՞ւնա տո՞ւս կյանք, բո՞լ ա, հինչքան ըխպրոթուն ընք ըրալ:

Ղա̀զա̀ր ապերը՛ թա̀.- Պա ե՛կեք, հի՞նչ ըմ ասըմ:

Ուշուփնեն թա̀.- Վեր մին չուվալ վըեսկե տանք, բո̀լ չի՞:

Ղա̀զա̀ր ապերը թա̀.- Բո̀լ ա:

Եր ըն կենըմ մին չվալ վըեսկե ածըմ, մին օշափ էլ յոր ա օնըմ, շիլա̀կըմ, կլխավն էլ Ղա̀զա̀ր ապորը, թա̀ տանե, ո̀ւրա̀նց տանը թողե:

Հըղցեն օշափը ասըմ ա.- Ղա՛զար ապեր, սկյի օծըտ ըրվամ չի:

Ասըմ ա.- Ընդրա համար, վեր օծըս յըրատ չըմ քըցա՛լ, ջուբան բիզը հանըմ ա, սկըսըմ խըզատակը ծակըմ:

Օշափը թա̀.- Օծըտ քաշի՛, քաշի՛: Ղազար ապերը բիզը քաշըմ ա:

Քյինըմ ըն, հսնում շենը: Խոխեքյը զըմացած ծակը ծուկան սկըսըմ ըն եշիլը:

Օշափը հրցնում ա, թա̀.- Ղա̀զա̀ր ապեր, խե՞յըն ստի եշում:

Ղա̀զա̀ր ապերը՝ թա̀.- Ծակ-ծուկ կապըմ ըն, հանցու վեր քյըեզ օտին: Օշափը վխելան նըհետ վեր ա քցում վըեսկուն չո̀ւվալը, փախչում:

Հղեննի ուշափեն մին մարթ ա պտահում, կըղնցնում ա, ուշափեն՝ թա̀.- Ա՛յ ախպեր, հի՞նչ ա պըտահալ, վեր իտի փախչըմ ըս: Էս օշափը կլո̀խը եկածը պատմըմ ա:

Էտ մարթը՝ թա̀.- Պե՛լ ը՞, կյի՛ժ ը՞ս, պա էն վխլկոտ մարթը հի՞նչ ա, վեր տու ընդրանա փախչըմ ըս: Եք քյինինքյ վըեսկեն յոր օնինքյ, կես անինքյ:

Էտ օշափը թա̀.- Չէ, վախըմ ըմ:

Վերչը քյինըմ ըն: Էտ օշափը էտ մարթին ասըմ ա.- Դե եք մեր վընըրնեն ո̀ւրո̀ւր անա կապինքյ, հանցու վեր տու փախչիս, ինձ էլ տանիս:

Քյինըմ ըն: Ղա̀զա̀ր ապերը վեր տեսնըմ ա, կնզանը ասում ա.

- Ա՛ կընեգյ, մին էն ճըղըցաքարը ինձ տո, յրա անիմ էս շան տըղեն սպանիմ:Էտ վեր օշափը սկանում ա, մին բաշ փախչըմ ա, էտ մարթն էլ հետան քաշ ըրած տանըմ: Էտ մարթը տափերն ա քսվում, մեռնում: Վըեսկեն մնամ ա Ղա̀զա̀ր ապորը: Ընդրանավ լա̀վ-լա̀վ տներ ա շինըմ, էտ տըներըմն էլ օտըմ, խըմըմ, պարանց ընզնըմ, քոն ինըմ:

Ուստուծանա իրեք խնձո̀ր վեր ընզնի. մինը՝ լսողեն, մինը՝ կյիրո̀ղեն, մինն էլ՝ էս հա̀քա̀թը լո̀ւս աշխարք քըցողեն:

96.ԱՂՎԵՍԸ ՆԱՆ ՓԸ̀ԼԸ̀ՆԳՅԸ

Մեհետ ջանավարն են հըվըքվեց են, վեր ը̀ւրը̀նց հետե թաքավեր ճո-կին: Հը̀ւր ճոկեն, հը̀ւր չի ճոկեն, ախեր թաքավերը բիդի ամենազոռավը ինի՛, տրա հետե փլը̀նգյին ճուկեցին թաքավեր: Փը̀լը̀նգյը ը̀ւրը̀ն հետե բիդի մին հանցը յոր օնե, վեր ը̀ւրը̀ն ըսըծնեն, օզըծնեն անե: Փը̀լը̀նգյը յոր ա օնում ըղվեսեն:

Մեհետ փը̀լը̀նգյը նան աղվեսը նստոտած սը̀հբաթ ին անում, թը̀ հի՞նչ անին, վեր ուտելի պեն քըթենան:

Ախրը Փը̀լը̀նգյը ըղվեսին ղարկում ա, թը̀.- Քյինը̀ շոռ եք հյվանա, պենա քթի, մես պեր օտեմ: Աղվեսը քյինը̀ւմ ա, տեսնըմ մին ծորում մին քանե եզենքյ ըրածըմ ըն: Տես ա վազ տամ, տեն ա վազ տամ, տեն ա լոք տամ, տես ա լոք տամ, տեսնում ա, վեր վեչ մին պեն չի կըըլական շինի, ետ ա տեոնըմ քոռըփեշմը̀ն կյամ փըլը̀նգյեն կոշտը:

Փը̀լը̀նգյը յրա յա պըրծընում, թը̀. - Հոր ա՞ պերած պենըտ:

Աղվեսն ասըմ ա.- Թաքավերն ապրած կենա, քյեցե էլ սար, էլ ծոր չըթուղեցե, լոխ շոռ եկե, ամմա վեչ մին պեն չըքըթի: Հանե էն ծ՛որումը մին խիլլա եզենքյ ըն ըր ածում, դե հի՞նչ անիմ, զոռըս պատից վուչ, ըտրա հետե էլ կրեցե վուչ վեչ մին պեն պիրիմ:

Փը̀լը̀նգյը հը̀ւրսոտված եր ա կենըմ, թը̀.- Պա խոսած տըեղը լիը̀ կասիս օլքյը̀ս տըկտյեր կանեմ, էտ խե՞ մըհենգյ կըրեցեր վո՛ւչ, թը̀ մին մխալ մես քըթենաս օտես, դե տու ըստեղ կաց, յըես քյինամ, տըես հի՞նչ ըմ ըննական:

Փը̀լը̀նգյը քյինը̀մ ա ըղվեսին նշանց տրված ծը̀րը, տըեսնըմ եզենքյը հը̀լը̀ ընդեղ: Մին եզան մաշկե վեր չը̀նչըմ ա, եզանը մաշկը կոտրըմ ա, եզնը վեր ա ընգյում, փը̀լը̀նգյը էն վեր ընգյած եզանը շլը̀կում ա, յօր օնըմ, կյամ:

Աղվեսը ասըմ ա. -Թաքավերն ապրած կենա, հունց յըխնեցեր էտ մեծ եզանը:

Փը̀լը̀նգյը գյառլը̀միշ ա ընը̀ւմ, թը̀.- Յըես ստրան յըխնեցե իմ չընչը̀ւլ-ներես օժավը, իմ չնչը̀ւլնես ա վեր ինձ պահըմ ա, ծըլքյը̀ւմս հինչու ասես, չնչը̀ւլներավըս կըեխնեմ:

Պա հի՞նչը կըկարե քյըեզ եխնե, հի՞նչ հեյվան, յա հի՞նչ պեն քու չնչը̀ւլներետ կըեխնե:

Փա̀լա̀նգյն ասըմ ա.- Օլքյո̀ւմըս տի մին պեն չկա, վեր ինձ եխնե, յա մին պեն չկա, վեր յըես կարիմ վուչ իմ չընչո̀ւլներավըս ճութռոտեմ, զիլըա̀-զիլըա̀ անեմ, օզըմ ըս ժնջիլավ կըպոտե, մին ա կըկըտրիմ, մինա̀կ վիշավ վեր կըպոտես, բա̀լի կարիմ վուչ, ընդրա հետե, վեր պերակ ա, չընչո̀ւլնես կըցըվըընե:

Աղվեսը հըրցըփորց ընելավ գյո̀ւղո̀ւմ ա փըյա̀նգյեն յխնելու թահրը:

Շատ ա քընենքյ անըմ, թա̀ հո՞ւնց անե, վեր մըխրե վիշ քթենա: Ախրը թա̀հրը քթենում ա:

Աղվեսը քյինա̀մ ա մին հըղըցում վեր ընգյնո̀ւմ, յանի քի սատակած ա: Մին հըղըցավուր կյամ ա, թա̀ քյինա̀, տեսնըմ ա աղվեսը վեր ընգյած, մտածում ա, թա̀. «Էս լըհա̀ լա̀վա, ինձ մորթե յա հարկավեր: Յոր ա օնըմ, տինո̀ւմ ուլախեն պեռնեն մաշ տեղը, ինքյը առաչ ա ընգնում, ուլախը հետան քցո̀ւմ: Աղվեսը ուլախեն պեռնան մըխրե վիշ ա կյո̀ւղանում, լոք տամ, փախչում:

Քյնո̀ւմ ա, տեսնըմ Փա̀լա̀նգյը դոյունջան կերած, մտակված, ինքյն էլ քըշտեն տապ ա անում, ըսկսում Փլա̀նգյին չընչո̀ւլնեն կպոտելը: Փա̀-լա̀նգյը քնուտեղա եր ա կենըմ, տեսնըմ ո̀ւրա̀ն կպոտած, աղվեսն էլ ո̀ւրա̀ն հետե օտըմ ա-խըմում քյեփ անում: Փա̀լա̀նգյը տես ա զոռ անըմ, տեն ա զոռ անըմ, ամմա կարըմ չի ըզադվե:

Էրկու օր տի սոված վեր ընգած կենում ա, ախր մին մոկուն կյամ ա կծոտում, վիշը կտորում, Փա̀լա̀նգյը ըզադվում ա: Աղվեսը փախչում ա հա̀քյին պըցըրցնելավ, ընդեղան Փլա̀նգյին տընազ անում:

Փա̀լա̀նգյը ծեն ա տամ, հարայ-հըրոցը քցում ընդեղեր, թա̀. - Եք ըստեղ, պեն ըմ ասըմ, վախել մել, քյըեզ նի չըմ կյլա̀կան:

Աղվեսն ասըմ ա.- Ըսելինըտ հարկավեր չի, քյինա̀՛, ըշտեղ քու չնչո̀ւլիտ զոռան նաղլը անիս, լա̀վ գյիդա̀, վեր թաքավերը մինա̀կ ծեռքու զոռավ կարել չի յո̀լա քյինա̀, լա̀վ ա կըլխետ զոռը ինի շատ, հինչ թա̀ ծեռքետ:

## 97.ՍԱՌԱՆ ԿՅԱՄ Ա՛...

Ընըմ ա, չինըմ մին մարթ, մին կընեգյ: Մարթը խեղճ մարթ ա ինըմ, կընգանը ծըեռքին մին փալաս, մին թո̈ւլըբռշ, մին ասծու ընեծա՛ծը: Կընեգյը՝ Սառան, ըտրա կըլխին ճուղուպուր ար կոտըըմ, ըտրա կըլխին նստալ ար:

Մին օր էլ, մին փո̈ւսո̈ւնգյո̈ւ օր, ցորտ-ծըմեռնը ըտրանց շենն էլ սարեբին յրա՛ն, հինչ ցո՛րտ, ղայյա՛ր, էտ կընեգյը ետ ա տըեռնըմ ո̈ւրա̈ն էտ «թո̈ւնի հարա՛յ» մարթին ասըմ.- Ա՛յ մարթ, հի՛նչ ըս տանը վեր ընգալ, քյինի աշխադանք ըրա:

Մարթըն ասըմ ա.- Ա՛յ կընեգյ, էս ծմըռնեն կըեսին հի՞նչ աշխադանք, հի՞նչ պեն, հինչ զատ կա՛, վեր յըես աշխադանքի քյինիմ:

Սառան ըջըղվըմ ա, մարթին կուփի-կուփի անելավ, յումբրուղլամիշ անելավ, տանան տո̈ւս քըցըմ, համ էլ ասըմ.- Մոխերըս կըլխիտ, թո̈ւլ պենջա̈ր, ցեխըս նան վըեղըս կըլխիտ, հունց չի՛ աշխադանք կա, բա հոնձ անելը աշխադանք չի՛, քյինի արտը հընձի: Վըեններըս օտիս տու, ղըբըննես նըհետը, թա̈ ցորտ ա, հի՛նչ ըս տանը եր ընգալ:

Մարթը տըռնան վըխվըխելավ ասըմ ա.- Ա՛յ ախմախ կընեգյ, ծըմեռնը արտ կինի՛, վեր քյինիմ հընձիմ:

Սա̈ռա̈ն լափ կըզնըվըմ ա, ասըմ.- Էլհա ա̈րո̈ւնըս պըրտողեցի՞՛ր, ա՛ տափը նի մըտած, վեչ եր կացա՛ծ: Բա իստի էլ պեն կինի՞, վեր սա յա իմ կըլո̈խըս պերում, ինձ էքան խուսուցընըմ, ծենըս աշխարքը քըցըմ: Ա՛ հիմմար-անասուն, օրաղըտ եր կալ, քյինի, ըստեղ արտ չիկա՛, մին օրիշ երգյիրըմ կինի, էտ երգյիրներըմը մըհեկ ամառն ա, արտերին հընձին լա̈վ վախտըն ա, քյինի ընդեղ հո̈նձ ըրա:

Էտ մարթը վեր էտ խոսկերքը լըսըմ ա, լափ լըղին ճաքըմ ա, ծենըծունը կըտրած, ճըպաղած, կոչ յեկած, ասըմ ա.- Ա՛յ կընեգյ, տու ինիս, էն աստուծը, վիրն՝ աստուծ, ներքն՝ տու, յըես էն երգյիրին տեղը գյուղում չըմ, ըշտեղ մըհեկ ամառն ա, հո̈ւնձին լա̈վ վախտըն ա, ինձ քըըըքար մի քցցիլ:

Սառան մին լա̈վ, իրեքպատաժանի ո̈ւշո̈ւնց ա տամ, մին կուտուր չոր հաց, մին էլ օրաղը թող անըմ, քցցըմ հայաթը, ինքյը նի մընըմ տոն, տոռնը քըլլըմ: Էս մարթը մընըմ ա հայաթըմը ծո̈ւնին մեչին շըշկըլված, կաղնած... Ըշտեղ քյինի՛, հի՞նչ անի շատ վեր քընենքյ ա անըմ, ցըրտան

տըղտո՞ղալավ նի յա մըննըմ ո՞ւրանց կյումը, ընդեղ լա՞ց ինըմ: Էլիա մեթկ ա անըմ, թա՞ հունց անի, վեր էտ լա՞չա՞ռ կընգանը անա ազադվի, ընդրա օվտա՞ն կյա:

Օրը ընցալ ա՞ր: էտ կընեգյը ակուշկավը եշըմ ա, տըեսնըմ էլ մարթը հայաթըմը չի, ասըմ ա հա՞լբա՞թ քյեցալ ա: Ըսկըսըմ ա լա՞վ պադրաստո-թուն քաշիլը, վեր դըբրո՞ւգյո՞ւն չախը սիրականը կյալո՞ւ յա, ո՞ւրա՞ն յոր օնի քյինին էտ սիրականին տոնը, ընդեղ խալվաթ ա, հըրեվաննին գյիդա՞լ չըն:

Տա ըսկսից օտելի պեներ պադրաստիլը, վեր նիետը տանի: Հավեր մորթից, քյա՞թա՞ թըխից, եղածու ըրավ, կյինի-արաղ շինից, օրիշ լա՞վ-լա՞վ խորագյնի իփից, կապից մին մեծ բոխչըմ, ինքյըն էլ սպասից:

Մին էլ տըեսավ սիրականը եկը կըտերը կաղնից, մին քյա՞նդիր կախ տըվավ: Էտ կընեգյը թըյդը-թա՞յդի բոխչան քյինդիրա՞ն կապից, ինքյը կախ իլա՞վ, վեր սիրականն էլ պըցըցնի: էտ լոխ էն մարթը կյումին ակուշկավը տըեսնում ա:

Սիրականը տընքտընքալավ քյա՞նդիրը սկսից հո՞ւրթավը պըցըրցնելը, հա՞լա՞ կըեսը հասած, էտ մարթը կյո՞ւման տո՞ւս ա կյամ, ասըմ,- Ա՛յ կընեգյ, ա՛յ կընեգյ, Սառա, էտ հո՞ր ըս պըցրա՞նըմ:

- Ա՛յ մարթ, բա տու հո՞նձի չը՞ս քյեցալ, բա հի՞նչ օնիս ըստեղ:

Մարթըն ասըմ ա, - Ա՛ կընեգյ, լիա՞ հո՞նձա յըմ կյամ, ասի տըեսնամ էտ ըշտեղ ըս քյընըմ:

Կընեգյը ըջղվըմ ա, ասըմ.- Չոռ ըմ քյինըմ, ցավ ըմ քյինըմ, խստիբուջա-ղըն ըմ քյինըմ, ա շոն, շան տըղա, տըեսնըմ չըս հոր ըմ քյինըմ: Մեր հո՞ւրթին քըշտին մին ցիցեռնակի պո՞ւն կա, քյընըմ ըմ ճտերին ակը տամ, տըեսնամ...

Ա՛յ կնեգյ, պա էտ բոխճան հո ր ըս տանըմ:

- Քոռ մընա՛ս, բա տեսնըմ չը՛ս, վեր ցիցեռնակին ճըտերին հետի յըմ տանըմ,- ճըղղաց կընեգյը:

Մարթը ըջըղվից, ըսկըսից ճըղճըղալը, բըղբըղալը, ընդրա էտ սա՞սա՞ն հըրեվաննին տըներան տո՞ւսեկյին: Էտ կընգանը սիրականը վախելան նըհետ քյա՞նդիրը պեց թողից, փախավ: Էտ կընեգյը վեր ընգավ, տափան կացած ըսկսից քյո՞հնա տերման քամիլը, ո՞ւշո՞ւնց տալը, կյըռկյոռալը, հարայ տալը:

Վըեր տըեսնըմ ա հըրեվըննին հըվաքվըմ ըն, էտ կընեգյը ասըմ ա.- էս

տոտոնը կրակ ընգածը, էս ո̈ւրո̈ւրուցը կյո̈ւլ տարածը ինձ ըսպանից, ամանգյո̈ւնիդը, ինձ էս քյանդիրա̈վը խեխտից, էս խըզռոկը տարածը հոքիս հանից էս խռոկը պըկան կացածը հա՛… Ինձ գյոմփից, ինձ դոմփից, շո̈ւտ ըրեք, քյեցեքյ քյոխվին կընչեցեքյ կյա՛... էս կարկուտ տարածը, էս վեչ մխթա̈րա̈ծը քյա̈նդիրը պոկըս ա քըցալ, ա հըրըվըննե, հեսե՛ տըեսեքյ, էս քունձռոտը, էս խըռըզնըհատը, էս կըլո̈խը մոշավ ըրածը էս, էս, էս…

Սաղ շենը ըտրա ծենան տո̈ւս ա կյամ, կյամ ըտեղ, տեսնըմ էտ խեղճ մարթը վախան չուրացալ ա, չըպըռկվալ, մընացալ լո̈ւզո̈ւն կըտրած, կաղնած:

Էտ կընեգյն էլ ճըղճըղըմ ա, թըվիլ-թա̈վիլ անըմ, թա̈.- Վա՛յ, վա՛յ, վա՛յ, ա՛ հըրըվըննի, վա՛յ կոխկաճաղըս կոտրալ ա, վա՛յ օմբաս, վա՛յ տունդիս, վա՛յ մաշկիս հոռը կոտրալ ա՛, վա՛յ ծո̈նգնըս, վա՛յ վըեննիս ծո̈ւկնամեսը վա՛յ, վա՛յ բլակըս, արմունգըս, վա՛յ կըլխիս ղափաղը վա՛յ, վա՛յ, պոռտըս, վա՛յ ճըղմըղընքնիս նան կյրաղինիս, վայ սըրտիս տախտակըն նան սըերտըս, վա՛յ…

Լոխ էլ հըվատըմ ըն, վեր մարթը օզացալ ա էն քյա̈նդիրա̈վը կընգանը կախ տա, քյա̈նդիրըն էլ կըտրալ ա, էտ կընեգյը եր ա ընգա̈լ: Քյոխվան վեր կյամ ա իտի տեսնըմ, էտ մարթին դուսաղ ա անըմ: Էրկու զոռի տըղա-մարթ փըռնըմ ըն ըտրա ծեռքերը, վըենները կըպոտըմ, դուսաղխանան ըղըրկըմ:

Էրկու օրանը ետը էտ կընեգյը ո̈ւրա̈նց հայաթըմը սաղ-սալամաթ, օրախ-օրախ ման ա կյամ, ո̈ւրո̈ւգյո̈ւննին էլ սիրականին տոն պերըմ: Հենգյ տարե էտ մարթը դուսաղխանըմը նըստըմ ա, վեր հենգյ տարեն թըմամըմ ա, կյամ ա տոն: Վեր կյամ ա տոն, ո̈ւրա̈նց տոնը ճընանչըմ չի, սա̈բա̈բը վեր տոնը, հայաթը փիսացալ ար, չափարը ծըռվալ, կուտրատալ, հայաթըմը մին ծառ չիկար, կընեգյը լոխ կտորալ ար, ծըմեռնը էրալ, տոնը ծո̈րա̈նա̈-վերա̈նա̈ ար տեռալ, աշկա ընգալ. դե անտըղամարթ տոնը հի՞նչ կինի՛, էն էլ աննամուս, տընաքանդ կընգա ձեռքի, վեր բուջի-բուջի չի անի տոնը շինի, հա̈լա̈ քա̈նդի, հի՞նչ կինի…

Նի յա մըննըմ տոն, տըեսնըմ տանը քյա̈նդիրա̈վ մին ճոժկ քըցած, կընեգյը մեչին թեքյ ընգա̈ծ, ո̈ւրա̈ն պուճուր ախճիգյըն էլ ըրօրըմ ա, վեր հանգյիստ, դինջ քոն ինի:

Վեր մարթին տեսնըմ ա, դաստի եր ա թըռչըմ տըեղան, մարթին էն չոր-

չոփ տըեռած վիզան կախ ընգըմ, պըչպըչորըմ, ասըմ.- Ա՛ մարթ, քու քյընալանըտ ետը իմ քոնըս առանց քյըեզ քիշեր- ցիրեկ տարալ չի՛, ճարըս կըտրալ ա, քյա՛նդիրա ճոժկ ըմ քըցալ, խոխին էլ ասալ, վեր ինձ ըրօրի, բա՛լքյա՛ս մին խըրեգյ քոն ինիմ,- մըեռնիմ վեչ ինքյըս ինձ ուտելան, անքոն մընալան:

Էտ մարթը լոխ կըլո՛խ ա ընգնըմ, թա՛ ճո՛ւրը ըշտըղավ ա քյինըմ, թա՛ ինքյը հինչ բեդմա անի, վեր էտ ասծու կըրական ազադվի, էտ լա՛չա՛ռ կընգանը ծեռքան դո՛ւղո՛ւնը դո՛ւթմիշ չինի, թոքը նի չի կըենա էրվի՛:

Մին քանի վախտանը ետը էտ մարթը կըկըղ-կակող կընգանըն ասըմ ա.- Ա՛ կընեգյ, Սառա, բա գյուղո՛ւմ ը՞՛ս հինչ կա, բա ասիլ չը՞ս էն վեր ծըմակը փա՛դի քյեցի, տեսնամ ընդեղ մին վեր կա, մեչին եշեցի, տեսնամ էն ա մաչին վըեսկե կա, եք ո՛ւրո՛ւցյո՛ւնըս քյինիքյ, պերինք, ամմա հընգյեր-հըրեվան գյիդա՛ն վեչ հա՛:

Կընեգյը ուրխացավ, ռազի կացավ, պարկերը, խուրջինը հըզըրից, թա՛զա՛ քյանդիրը եր կալավ:

Քըշերը մարթը նան կընեգյը եր կացին, շենան տո՛ւս եկին, քյեցին ծըմակը: Ծըմակըմը շո՛ւտանց մին խոր վեր կար:

Վեր եկին էտ վերին կոշտը, մարթըն ասից.- Ա՛յ կընեգյ, քյանդիրը մեջկաս կապի, ինձ կախ տո, քյինիմ վըեսկին հանիմ:

Էտ կընգանը աշկը ծակ ար, ինքյըն էլ հինչ ինըմար համփ ար անըմ, ճեպըրըմ, բոմփըմ, դիբի ո՛ւրա՛ն պըերանը: Մին խոսկավ շատ ըոըխեվեր կընեգյ ար:

Վըեր վըեսկուն անըմը լըսըմ ա, ասըմ ա.- Չէ՛, ա մարթ, քյա՛նդիրը տու իմ մեշկաս կապի, յըես քյինիմ վըեսկեն պերիմ:

Մարթը թա՛.- Հի՞նչ կինի՛...

Կընգանը մեշկան քյա՛նդիրը կապըմ ա, քըշըցնըմ վերին մաչը, կեսըմը քյա՛նդիրը պեց թողըմ: Վեր կընեգյը թըրըմփալի եր ա ընգնըմ, վերին ատակին տակը, էտ մարթը վերին ըոըխին մին մեծ քար ա տինըմ, իրեսին խըչըկընքըմ, դինջացած տոն կյամ:

Էքսը հըրըվըններին ասըմ ա.- Բա ասիլ չըք, ա հըրըվննե, կընեգյըս տանան փախալ ա, էլ օզըմ չի ինձ նըհետ ապրի:

Էն լոխճան մոտի հըրեվանը, թա.- Վո՛ւյ, պոչերըս կըտորիմ, բա իտի պեն կինի՛:

Էտ մարթը թա՜.- Բա հի՛նչ:

Անց ա կըենըմ մին տարի, էրկու տարի, էտ մարթը սըէրտը դինջ ապրըմ ա:

Մին հետ ինքյը-ինքյը ասըմ ա. «Քյինիմ տեսնամ էս կընեգյը հինչ իլա՜վ, սաղ ա՞, ըէյրու վա, թա՜ չէ»...

Տա թաքուն քըշէրը էր ա կըենըմ, քյա՜նդիրը յոր օնըմ, քյինըմ ծմակը, էտ վէրին պէրանը պեց անըմ, տըեսնըմ մին պեն ա տուրո՜ւր կյամ, տա քյանդիրը կախ ա տամ, ասըմ. «Թա՜ կընեգյըս ինի, հա՜լա՜ վէրան տո՜ւս չըմ օնելու, հա՜լա՜ ուրթում բէդմա օտի, վէր խելունք կինի, հընազանդ կինի, տընարար կինի, էլ սիրական չի պահիլ... Թա՜ ո՜ւրթո՜ւմնը չի օտիլ, էլհա քյանդիրը պեց կըթողիմ, վէրը քըցիմ»:

Վէրին պըրանին քըշտին տեսնըմ ա մին պըռթպըռթոտ զատ, հեյվանի մընան:

Էտ պըռթպըռթոտ հեյվանը ղաչանք-պըղատանք ա անըմ, ասըմ. -Ա՛յ մարթ, ինձ էս վէրան հանի, յըես քու լըվոթունըտ մըտաս քըցիլ չըմ, ինձա-նա վախիլ մի, յըես քյըեզ վեչ մին պեն չըմ անիլ, մինա՜կ լհա՜ ինձ վէրը չի քըցիս, տո՜ւս պէրիս:

Էտ մարթը ըտրան տո՜ւս ա պէրըմ, էլհա վէրին ըռեխը ծասկըմ: Էտ պուզավէր ընգըրձավէր, հաքյվավէր, պըռթպըռթոտ հեյվանը ասըմ ա.- Յըես սաղանա յըմ, ինքյն էլ սաղանուցը թաքավէրը:

Էրկու տարի ըստրանա առաչ մին կընեգյ եկավ մեր սաղանոցը պո՜ւնը ընգավ. էս ա էրկու տարի յա, մըեզ տանջըմ ա գյանք չի տամ օրը-իշեղ չի տամ, մեր օրը սև ա ըրալ, խավար ա ըրալ, մըեզ մանններին յրան պար ա ածալ, հունցու ածալ ա, ինդի էլ պար ընք եկալ, էնքան վէր ջանա յընք եկալ, ախպէ՛ր, էլ տըմանըմ չընք: Մըհեկ տու ինձ ազադեցիր, էտ մեծ լըվոթունը ինձ ըրիր, ըտրա ա՜վա՜զը յըես քյըեզ մին մեծ լըվոթուն կանիմ: Անջուկըտ ինձ յրա պահի, յըես քյինալու յըմ թաքավէրին ըխձըկանը մեչը նի մըննիմ հիվանդըցընիմ: Լոխ հա՜քյիմնին պէրելու յըն, կըրելու չըն թա՜ լըվըցնին: Քյինելույըն լոխձան լավ հա՜քյիմը պէրին, էլհա կըրելու չի, թա՜ լվըցնի, յըես մեչան տո՜ւս չըմ կյալու, մինչև տու կյաս վեչ: Թաքավէրը բոլ-բոլ վըեսկէ յա տալու, հու վէր լիվըցնի: Տու շո՜րէրըտ կըփոխիս, հա՜քյիմի շո՜րէր կը կյենաս, կյաս, ասիս. «Թաքավէրըն ապրած կընենա, յըես կըպըժըժկիմ»: Էն վախտը յըես էտ ըխձըկանը մեչան տո՜ւս կըկյամ, ախճիգյը

կըլվա̀նա, ըտրան ա̀վա̀զը քյըեզ մին բոլ վըեսկե կըտան: Էտ էլ ընդրան ա̀վա̀զը, վեր տու էն լա̀չա̀ռ կընգանը ծեռքան ինձ ազադեցիր: Ամմա էն էլ ասիմ քյըեզ, վեր իմ կործըս մարթկանց հիվընդցնելըն ա, ամման վախտ կյաս վեչ, թա̀ փըլանքյա̀սին կըլիվըցնիմ հա՜, լհա̀ էս մին դո̀նըմը կըկյաս, վեր էրկունջի դո̀նըմըն եկիր, քյըեզ բըթա̀րա̀փ կանիմ, հոքիտ կըհանիմ:

Մին քանի օրանը ետը լըսըմ ըն, վեր թաքավերին ախճիգյը հիվանդացալա, վեչ մին պըժիժկ ճար չի անըմ: Էտ մարթը հա̀քյիմի շո̀ր ա կյենըմ, քյինըմ թաքավերին պալատը, ասում, վեր ինքյը պժիժկ ա, ինքյը կըլիվըցնի: Թաքավերը ռազի յա կըենըմ: Էտ սըտանան վեր ըտրան տըեսնըմ ա, էտ ըխճըկանը մեչան տո̀ւս ա կյամ, քյինըմ: Ախճիգյը լըվա̀նըմ ա:

Թաքավերը ուրխանըմ ա, ասըմ.- Համ ախճիգյըս քըյեզ, համ էլ թաքավերոթունիս կեսը:

Էտ մարթը ռազի յա կըենըմ:

Պերըմ ըն քառասուն օր, քառասուն քըշեր հըրսանիք անըմ: Մին քանի վախտ վեր անց ա կըենըմ բիրդա̀ն լըսըմ ըն, թա̀ մին օրիշ թաքավերի տըղա հիվանդացալ ա: Էտ թաքավերը խընթրալ ա, վեր էս թաքավերին փըեսան, էտ լոխճան ընըմավեր պըժիժկը, քյինի, լըվըցնի էտ տըղին:Էտ մարթին անցավ կըլո̀խը, ցավլի մաչ ա ընգնըմ, ջանը մըղմոռ ա ընգնըմ, թա̀ բա հո՞ւնց անի, հո՞ւնց չանի, վեր ա̀մա̀լ կյա: Քյինի վա՜յ ա, քյինի վեչ վա՜յ ա:

Վերչը ճարը կտրած քյինըմ ա, հըսնըմ հիվանդին:

Վեր սըտանան ըտրան տեսնըմ ա, ճարը կըտրած տո̀ւս ա կյամ, ամմա մըթկըմը ասըմ ա.-Վե՜ չինչ, յըես քու ճա̀շըտ կիփիմ, յըես քե նշանց կըտամ՝ ըշտեղ ա «Դառթունց շանը կըլո̀խը թաղած»...

Հիվանդը լըվա̀նըմ ա, էտ մարթը տըղտո̀ղալավ տո̀ւս ա կյամ քյո̀ւչա̀ն, տեսնըմ օդտերը վըեսկավ պեռնած ո̀ւրա̀ն ըն յեշըմ, վեր հըղե ինի տոն, թաքավերին պալատը:

Էտ դա̀րըմը սըտանան կյամ ա ըտրա պըկան փըռնըմ, ասըմ. - Ա՜րա, ա՜յ ախմախ, բա յըես քյըեզ ասեցի վե՜չ, վեր տու օրիշ հիվանդի կոշտ չի կյաս, խե՞ յըս եկալ, էնքան վյըեսկեն, թաքավերին ախճիգյը, թաքավերութունը քյըեզ հերիք չա՜ ր, դե վեր եկալ ըս, մըհեկ էն հիվանդին տեղ, քու հոքիտ ըմ հանելու:

Էտ մարթը տըղտո̀ղալավ ասըմ ա.- Կա՜ց, կա՜ց, եկալ ըմ ըստեղ քյըեզ

մին պեն ասիմ, վեր էն կընեգյը՝ Սառան վերան տո՞ւսա եկալ, էն ա հետատ ման կյամ.... Սառռա՛ն կյամ ա՛:

Էս սըտանան վեր էտ լսում ա, վըննը-ծըեռքը տափան կտրվըմ ա, տափը տեղ չի տամ վեր կաղնի, հենց ա տըեռնըմ օթի օրփա՜թ թո՞ւլա՜նըմ, խըղճանըմ, ասիխ լի՜ մեշկը կոտրըմ ա , ասըմ ա.- Յըես քյըեզ մատա՛ղ, քու ջանիտ մատա՛ղ Սառին մին խըրեգյ զիրավ ըրա, միչն յըես փախ չիմ, կոռչիմ էս լո՞ւս ըշխարքաս:

Սըտանան վեր Սառին անըմը չըսըմ ա, էտ մարթին բողազը պեց ա թողըմ, էս լո՞ւս ըշխարքաս չըքվըմ: Միչն մըհեկ էլ էտ սաղանեքյը մարթկանց իրեսը չըն տո՞ւս կյամ:

Էտ խեղճ մարթըն էլ իտի թաքավերի փըեսա յա տըեռնըմ, ո՞ւրա՜ն հետի օրախ, բախտավեր ապրըմ:

Նա ո՞ւրա՜ն դա՜րդը-ցավան ազադվից, պարով մունք էլ մեր ցավան, դա՜րդա՜ն ազադվինք, մին լա՜վ, օրախ ապրինք:

## 98.ՄԱՐԹԻՆ ՏԸԵՂԸ ՌՒՐԱՆ ՀՌՔՅԻՆ ՏՎՌՂ ԿՆԵԳՅԸ

Ինիս ա, չինիս մին թաքավեր մին թաքուհի: Ըտրանց ինիս ա մին մաղար-գյո՞ւղար տղա: Թա՛ օրիշներինը տարավ ին մրծընաս, ըտրանց տըղան օրավ ար մըծընաս:

Մին խիլլա՛ ժուկ-ժամանակ ա ընցնես, կյաս ա էտ տըղեն փըսըկելի վախտը:

Հա՛րն ըսես ա.- Ա՛ բալա, ա աշկես սըվըսիպտա՛կ, քյինի աշխարքըս ման եկ, քյըեզ հետե մին լա՛վ, մարալ-ջեյրան ախճիգյ օզե, հըրսանեքյ անինքյ:

Էտ տըղեն մարը պադրաստոթուն ա տըսնաս, պաշար ա պըդրըստես, տըղեն հղե տինիս: Էտ տրղան շատ ա քյինիս, խրեգյ ա քյինիս, հըսնես ա մին հըղըցու խաչմերուկ, մին պառավ մարթ էլ սիպտա՛կ մըրոքը չուրու կյոտկատեղը, էն ա ինիս ընդեղ նստած:

Էտ տրղան պարյօր ա տաս, թա՛ ընցնե, էտ պառավ մարթն ըսես ա.- Ա՛ վերթի, ա՛ թըքըրվերե տըղա, էտ իտի թայդի ըշտե՞ղ ըս քյինիս:

Էտ տըղան ըսես ա.- Քյիս ըմ ախճիգյ օզելի: Համոթ չինի հըրցնելը, բա տու հո՞ւ վըս, պապե :

Էտ պառավ մարթն ըսես ա.- Ա՛ վերթի, վեր գյիդիր թա՛ յըես հո՞ւ վյըմ, հըրցնել չիր, յըես քու հոքյիտ հանողն ըմ, քու ճակատակյիրտ իտի յա կյիրած, վեր փըսակվելի օրըտ մըեռնիս:

Էտ տըղան վեր լըսես ա, ետ ա տըռնաս քյիս տոն:

Ծընողնին հըրցնես ըն, ըսես.- Ա՛ վերթի, պա խե՞ ետ ըս եկալ տեռտակըբոշ:

Տըղան լոխ նաղլ ա ընես:

Թաքավերը նան թաքուհին ըսես ըն.- Լոխ սուտ պեներ ա, հըվատալ մեր, իտի պեն չինիլ, ջադու պըռավու խոսկերք ա, էտ ա փըսըկվելի վախտըտ ընցնես ա, մունք էլ պըռավալ ընք, բեդմա վեր ռազի կեննաս:

Էլիա մին խիլլի վախտ ա ընցնես:

Էտ տըղան տըռնաս ա քըռասուն տըրեկան: Ծընողնին դաչանք-պըղատանք ըն ընես, վեր փըսակվե: Էլիա էտ տըղան պըդրըստվես ա, ախճիգյ հավան կընալի :

Էս դո՞նըմ մին օրո՞ւշ ճընապարավ ա քյիս, ամմա էլիա համին էն պառավ մարթին ա ռուջա՛ն կյաս:

Էտ տըղան պարյոր ա տաս, թա̀ քյինի, էտ մարթը ըտրան կըղնցնես ա ըսես.- Թաքավերի տըղա, էտ ըշտե՞ղ ըս քյինիս իտի թայղի:

Էտ տըղեն ըսես ա.-Քյինիս ըմ ախճիգյ հավան կընալի, վեր փըսակվիմ: Բա տու հո՞ւ վըս:Էտ պառավ մարթը ըսես ա.- Ցըես քու հոքյիտ հանողն ըմ, վերթի: Թաքավերին տըղան մետն ա քըցիս հոըը նան մորը ասածնին , էլ մըհա̀լ չի քըցիս ըտրա ըսածեն, ընգնես ա հըղեն, քյիս:

Շատ ա քյիս, թա̀ խըեգյ ա քյիս, հըսնես ա մին քաղաք: Էտ քաղաքին թաքավերը մին մաղար ախճիգյ օնար: Էտ տըղան հավան ա կընաս, փըըըկվես, մեծ պեժինքյավ ետ տըռնաս հ̀ուրա̀ն հայրենիքյը:

Ծընողնեն օխտը օր, օխտը քըշեր հըրսանեքյ ըն ընես: Հըրսընքանը ետը, վեր բեղմա էտ թա̀զա̀ փըսակվածնին հ̀ուրա̀նց սերը վայնլին, բհ̀ուրղա̀ն ըտրանց օթախին տհ̀ռնը թըկես ըն: Տու մի ասիլ ըտրանը տըռանը քըշտեն, համին էն հոքյի հանող պառավ մարթն ա, եկալ ա, վեր փըսակեն առաչի քըշերը հ̀ուրա̀նց տըղեն հոքյին հանի:

Հա̀րը խնթրես ա, ղաչանք-պըղատանք ընես, ըսես.- Ա՛ ճակատակյիրը կըղարող ծհ̀ուրհ̀ունի, շատ ըմ խընթրես, ըտրան ա̀վա̀զը իմ հոքյիս հանե:

Էտ պառավ մարթը ռազի յա կընաս: Հորը հոքյին առնելիս, հարը տըմնաս չի ցավեն, փըխչիս ա, ըսես ա.- Հ̀ուր հոքյի ըռնելի հետե եկալ ըս, ընդրա հոքյին էլ առ:

Եռնան մարն ա կյաս, ղաչանք-պըղատանք ընես, ըսես.- Ա՛ հոքյի հանող ծհ̀ուրհ̀ունի, շատ ըմ խնթրես ըտրան ա̀վա̀զը իմ հոքյիս հանե, մեխկ ա, ջա̀հիլ ա, թող մուրազեն հըսնե:

Էտ պառավ մարթը ռազի յա կընաս: Լհա̀ ուզիս ա, թա մորը հոքյին հանե, մարը տըմընաս չի՛, փըխչիս ա հ̀ուրա̀ն օթախը:

Էտ լոխ թա̀զա̀ հարսը տըսնաս ա, հա̀լա̀ հ̀ուրա̀ն մուրազեն հըսնելու, ըսես ա.- Ա՛ հոքյի հանո՛ղ, ա՛ հոքյի հանո՛ղ, իմ ազիզ, սիրած տղես, իմ թա̀ռլա̀ն նըշնածես ա̀վա̀զը իմ հոքյիս հանե, շատ ըմ խընթրես:

Էտ ծհ̀ուրհ̀ունին տըսնալավ էտ թա̀զա̀ հարսին ազնիվ, պարի, հ̀ուրա̀ն նըշնածեն հետե հ̀ուրա̀ն ջանը մըտան քըցող ըխճըկանը, ըսես ա.- Վեր տու իտի ազնեվ ըս, վեր տու իտի հավաղարիմ ըս, յըես էս տըղես հոքյին քյըեզ ըմ բըխշես, քյե՛ցեքյ ըպրեցե՛քյ օրախ, բախտավեր:- Ըսես ա պըրծընես, ինքյը ըթտըբաթտի տըռնաս:

Ըսես ըն հա̀լա̀ մինչև ըսօր էլ մարթըկընեգյ հ̀ուրհ̀ուր նըհետ ըպրես ըն

հա̀շտ, մին խոսկու, էրկու ջան մին հըլավում, էրկուսը մին ջան, մին հոքյի տըեռած, մին պերցի, մինը մինին ըրևավը ո̀ւրթո̀ւմ ուտես…

Երգյինքան իրեք զա̀մբո̀ւլ գյիլլա̀ս կախ տվեն։ Մին զա̀մբո̀ւլը՝ ըսողեն, մին զա̀մբո̀ւլը՝ կյիրողեն, էն մին զա̀մբո̀ւլն էլ էս հա̀քյա̀թը լո̀ւս աշխարք քըցողեն։

## 99.ՓԻՍ ՄԱՐԸ

Իլա̀լ ա, չիլա̀լ մին թաքավեր ա իլա̀լ, ըտրան մին կնեգյ ա իլա̀լ: Վեր էտ կնեգյը պատճառավեր ա տեռալ, ասալ ա.- Վեր կնեգյըս խոխան պիրի, մուրթուլական ըմ:

Էտ կնեգյը մին տղա յա պիրում պրծնում, օնքերը ո̀ւրո̀ւր տամ, նստում: Էտ պո̀ւրո̀ւրեն տըղան լո̀ւզո̀ւյա ինո̀ւմ, խոսում:

Ասում ա.- Ա՛ մար, խե՞ օնքերըտ ո̀ւրո̀ւր ըս տուվա՛լ:

Ասում ա.- Դե քու հա̀ր ինձ ըսպննական ա:

Էտ խոխան ասում ա.- Ինձ տար իմ հոր մղակումը վեր տիր:

Մարը իտի պտատած տանում ա, տինո̀ւմ հորը մղակումը: Հա̀րը տո̀ւս ա կյամ, տըեսնում մղակումը մին պա̀րո̀ւր:

Ասում ա. - Էս հի՞նչ պա̀րո̀ւր ա:

Էտ խոխան ասում ա.- Ա՛ հա̀ր, յըես ըմ, ըսկացալ ըմ, վեր իմ մոր ըսպննական ըս, եկալ ըմ ասիմ, վեր իրեք տարե ինձ բախշիս:

Հա̀րն ասում ա,- Քյեզ ըմ բախշում:

Էտ խոխան վեր իրեք տիրեկան ա տեռնում, մարը էլիա օնքերը ո̀ւրո̀ւր ա տամ:

Խոխան ասում ա,- Օնքերըտ ո̀ւրո̀ւր մեր տալ, քյիննա̀կան ըմ էլիա քյըեզ ինձ բախշիլ տամ:

Ասում ա, պրծնում, քյինո̀ւմ հորը՝ թա̀.- Ա՛ հա̀ր, իրեք տարեն էլ ինձ բախշի:

Հա̀րը բախշում ա: Տղան տեռնում ա վեց տրեկան: Մարը էլիա օնքերը ո̀ւրո̀ւր ա տամ:

Էտ խոխան քյինո̀ւմ ա հորը թա.- Ա՛ հար, իրեք տարեն էլ ինձ բախշի:

Հա̀րն ասում ա.- Չէ, էլ կարել չըմ, ըսպանել բիդիմ:

Էտ խոխան քյինո̀ւմ ա մին լա̀վ ծի ճոկում, եր ինո̀ւմ, մարն էլ եր ա հանում թա̀րքյեն, քյինո̀ւմ:

Շատ վեր քյինո̀ւմ ըն, տեսնում ըն ծմակումը մին շինոթուն ա ջիհում: Ըսկսում ըն ըտեղ ապրել:

Տղան քյնում ա վըերս անում, պիրում: Էտ տները լոխ պեց ա ինո̀ւմ, մինա̀կ մինը՝ քլլած:

Տղան ասում ա- Ա՛ մար, էտ քլլած տո̀ռնը պենաս վէչ, թող իտի կենա:

Տղան քյնո̀ւմ ա հա̀նդը, մարը եր ա կենում էտ տոռնը պենում, տեսնում

ըտեղ մին օշափ: Ըսկսում ա էտ ուշափեն նհետ թաքուն ապրելը:

Էտ կնեգյը ուշափեն ասում ա.- Հո՞ւնց անինք, վեր տղես կլո̂խը վա-րինքյ, սպանինքյ, յա կուրցնինք:

Ասում ա, պրծնում, սըտըստ հիվընդանում:

Տղան ասում ա.- Ա՛ մար, հի՞նչ կօտիս, վեր սղանաս:

Մարն ասում ա.- Առո̂ւծո̂ւ կաթնը կօտիմ, վեր սղանամ:

Տղան եր ա կենում հղեն ընգնո̂ւմ, քյինո̂ւմ:

Քյինո̂ւմ ա, քյնո̂ւմ, մին մարթ ա ջիհո̂ւմ:

Էտ մարթն ասում ա.-Բա՛լա, հիշտե՞ղ ըս քյիննո̂ւմ:

Թա դե.- Քյիննո̂ւմ ըմ առո̂ւծո̂ւ կաթն ճարիմ ի մոր[1] հետե:

Էտ մարթն ասում ա.- Քու մար լա̂վ հղյըցու յրա չի, ամմա վեր օգնում ըս տանիս, քյինի փլան ծառու փչակում կյողլը կաց, մին կաղլեգյ առո̂ւծ ա կյիլա̂կան, էն ա էտ առո̂ւծին վըեննը օռած, վեննը կպրծցնիս: Ըտրանա ետը հինչ օզիս, տալու յա:

Էտ տղան քյնո̂ւմ ա, փչակումը կյո̂ղլը կենում, տըեսնում մին վըեննը օռած առո̂ւծ եկավ պարանց ընգա̂վ, ճոտերը ըսկսեցին ծծելը:

Էտ տղան մին չոփավ առո̂ւծին վըեննը պրծցնում ա:

Առո̂ւծը եր ա կենում, ըսկսում խոսելը.- Տու էտ լվոթունը վեր ըրալ ըս, յըես էլ քյըեզ բեղմա լվոթուն անիմ: Ասե՝ տըեսնամ հի՞նչու վըս եկալ:

Էտ տղան ասում ա.- Յըես կաթնու վում եկալ, վեր տանիմ, ի մար օտե, սղանա, էն ա հիվանդ:

Էտ առո̂ւծն ասում ա.- Քու մար լա̂վ հղյըցու յրա չի, ամմա վեր օգնում ըս, քյինի հանե, ինդի տըվեր առուծու հոտեր կան, մինը ըսպանե, կուպ-րուն տո̂ւս քցի, պեր կաթնավ լցնիմ, քյըեզ տամ:

Էտ տղան քյիննո̂ւմ ա, կուպրուն տո̂ւս քցում, պիրում, տամ առո̂ւծին: Առո̂ւծը կաթնավ լցնում ա, էրկու առո̂ւծո̂ւ ճոտու նհետ ո̂ւրա̂ն տամ, թա քյինի:

Էտ տղան կաթնը տանում ա, տամ մորը: Մարը օտում ա, սղանում: Մարը մըն էլ ա հիվընդանում:

Տղան ասում ա.- Ա՛ մար, հի՞նչ կօտիս:

Մարն ասում ա. Փլան տեղը ասում ըն անմահական խնձո̂ր կա, վեր պիրիս կօտիմ, սղանամ:

---

[1] *Իմ մոր (Ծ. Կ.)*

Էն տղան ծին եր ա ինո՞ւմ, առո՞ւծին ճոտերն էլ յոր ա օնում, քյինո՞ւմ:

Քյինո՞ւմ ա, հսնում մին խնձո՞րու բախճա, նղացած ծին կապում, ինքյը պարանց ընգնում, քոն ինո՞ւմ: Մին վախտ զո՞ւրթնանում ա, տըեսնում առո՞ւծնուն պիրիններն ըռնփալալ:

Ասում ա.- Պա՛հ, շան տղես ընդրնեն ծիս կերալ ըն:

Մին էլ եշում ա, տըեսնում ծին ընդեղ: Եր ա կենում, թա՛ քյինի, տեսնո՞ւմ օխտը օշափ ըսպնոտած, ընդեղ վեր ածած: Քյնո՞ւմ ա տըեսնում, ընդեղ մին տոն: Պենում ա, նի մննում, տըեսնում մաչին մին ախճիգյ:

Էտ ախճիգյն ասում ա.- Պա վեր տու ինձ էտ ուշուփներան ըզադալ ըս, յըես քյըեզ հի՞նչ լվո՞թուն անի՛մ:

Էտ տղան ասում ա.- Յըես եկալ ըմ խնձո՞ր տանիմ, ի մար[1] հիվանդ ա, հանցու օտե, աղանա:

Էտ ախճիգյըն ասում ա,- Քու մար լա՛վ հըղցու յրա չի՛: Դե վեր օզում ա, կտամ, կտանիս, ամմա ասում ըմ ինձ օքնիս, քյինինք իմ հոր թաքավերոթունը, յըես թաքավերու ախճիգյ ըմ:

Էտ տղան ասում ա.- Չէ, խնձո՞րը տանել բեղիմ, ի մար օտե աղանա:

Էն ախճիյըը ո՞ւրա՛ն մտանան տամ ա էն տղեն, տղան էլ առո՞ւծնեն տնում ա ըխճկանը նհետ, հանցու տանե ո՞ւրա՛ն հորը կոշտը, ինքյը խնձո՞րը յոր ա օնում, քյինո՞ւմ: Տանում ա տամ մորը: Մարը օտում ա, աղանում:

Մարը տըեսնում ա, վեր կարում չի տղեն հանց տեղ ըղարկե, վեր կյա վէչ, ուշափեն ասում ա.- Եք ըսպանինք:

Օշափն ասում ա.- Յըես իտի տղեն նի չըմ կյալ:

Մարը տղեն աշկերը տո՞ւսա տամ, թողում քոռ: Առո՞ւծնեն քյընո՞ւմ ըն, կորչում: Էտ տղան եր ա կենում քյինո՞ւմ-քյինո՞ւմ, տո՞ւս կյամ, էն ըխճկանը հոր թաքավերոթունը: Տուս ա կյամ մին տեղ, տըեսնում ըտղատ ճո՞ւրո՞ւ քչքչոց ա կյամ: Գյիղո՞ւմ ա, վեր ըտեղ ախպո՞ւր կա: Ըխճկերքը կյամ ըն, թա ճո՞ւր տանին:

Էտ տղան ասում ա.- էտ ամանը ինձ տըվեք միկա ճո՞ւր խմիմ:

Ընդրանք ասում ըն.- էս ամանը թաքավերեն ըխճկանը ամանն ա, չի կարելի:

Ախրը վեր էտ տղան շատ ղանչանք ա անում, կոլան տամ ըն ո՞ւրա՛ն, ճո՞ւր ա խմում պրծնում, մուտանան քցո՞ւմ կուլեն մաչը:

---

[1] *Իմ մարը*

Թաքավերեն ախճիգյը ճո̀ւրը խմում ա պրծնում, տըեսնում ո̀ւրա̀ն մու-տանան կուլեն մաչին: Հրցըփորց ա անում, քյնում ըն էն տղեն ճարում, տըեսնում քոռ:

Յոր ա օնում, կյամ հորը կոշտը, թա̀.- Ա՛ հա̀ր, էս տղան ինձ ըզադալ ա, հի՞նչ թա̀հրը օզում ա ինի, տու ըստրա սըղըցրու:

Թաքավերը շատ ա չըչարվում, կարում չի, թա̀ սըղըցնե:

Մեհետ էն տղան նան թաքավերեն ախճիգյը զըո̀ւց ընեյիս, թաքավերեն ախճիգյը եշում ա, տեսնում էրկու մոկնը տո̀ւս եկեն, ո̀ւրո̀ւր նհետ խաղ ըրեն: Խաղ ըրեն, մինը թխից մինին աշկը վեր ածից, Մըն էլ լոք-լոք ըրեն, լոք-լոք, էն մինը մին խոտ կտրից պերավ քսից էն քոռ աշկը սըղըցրուց:

Թաքավերեն ախճիգյը էտ վեր տըեսնում ա, քյինո̀ւմ ա էտ խոտան մին խիլլա կտրում, պիրում քսում էն տղեն աշկերը, սղցնում:

Թաքավերը էտ տղեն մըն էլ ո̀ւրա̀ն ըխճկանը հետե օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ա անում: Էն տղան քյինո̀ւմ  ա առո̀ւծներեն քթենում, պրծնում, քյինո̀ւմ մորն էլ քթենում, տըեսնում ուշափեն նհետ փսակված: Մորը մաչան էն հանգին ա հալալ կես անում, վեր մին կաթ ա̀րո̀ւն չի կաթում: Կեսը տամ ա մին առո̀ւծին, կեսն էլ էն մին: Օշափեն էլ նի չի կյամ:

Մեր ռա̀նգյ-ռանգյ, ջուռաքաջուռա ծըղըզյներավ լիզյը բախչան իրեք փոնջ թոփ վարթեր պերեք. մինը՝ ասողին, մինը՝ կյիրողին, մինը՝ կարթողին:

## 100.ԱԾԱՏՈՒՐԸ ՆԱՆ ՎԱՐԹԻՆ

Իլա՛լ ա, չիլա՛լ մին մարթ, մին կնեգյ: Տահանց խոխա չի իլա՛լ: Էտ մարթը շատ ա դա՛րդ ըրալ, ինքյն-ինքյը քնենքյ ըրալ, թա՛.- Բա յըես էսքան հարուստ, ինձ խոխա չօնիմ, վըեր մռնելանըս ետը հարըստոթունիս տրո թուն անե:

Տի շատ ա կենում, խրեգյ ա կենում, մին պառավ կնեգյ կյամ ա, ասըմ. - Գյուղում ը՞ս հինչ կա, քյինա՛ ծակ կարմունջեն քշտեն մին բութկա շինիլ տո, եկող-քյնողին հաց տո: Կյվողը քու հոր ղորմի կտա, աստուծ էլ մեխկը կկյա, քյըեզ մին խոխա կտա:

Էտ մարթը իտի էլ անըմ ա: Համին էտ վախտ են մին հարս մին տղի նհետ ման ա կյամ, մին խոխա պիրում, նշանածը թողում ա, փախչըմ: Հարսը հմնչիլան նհետ խոխան յոր ա օնում, տանում կըրմունջեն քշտեն տինում: Էտ մարթը կյամ ա յոր օնում, տանում տոն, կնգանն ասում, վեր մին խոխա յա քիթա՛լ: Ըտրա հետե էլ անըմը տնըմ ըն Ածատուր, Աստուծ տված:

Օխտը տռնանը ետը, էտ մարթին կնեգյը մին ախճիգյ, մին տղա յա պիրում, ըխճկանը անըմը տնըմ ըն Վարթի:

Անց ա կըենում մին խիլլա վախտ: Մին ամեռնը էտ մարթը ասըմ ա ո՛ւրա՛ն տըղեն. Տու նան Վարթին տանը կացեքյ, տանը եշեցեքյ, մունք քյինա՛նք սարը:

Ածատուրը նան Վարթին մնըմ ըն տանը: Հա՛րը, մարը, տղան քյինո՛ւմ ըն սար: Մին օր Ածատուրը տո՛ւս ա կյամ տռռնը:

Մին պառավ ա ջիհո՛ւմ, ասըմ.- Բա՛լա, գյուղում ը՞ս վըեր ըտրանք քու հա՛ր, քու մարը չըն, էտ տանատ քյըեզ փայ չօնիս, քյըեզ քթա՛լ ըն, տրա հետե անումտ Ածատուր ա: Քյըեզ փայ կինի են վախտը, վըեր փսակվիս Վարթուն նհետ:

Տղան կյամ ա տոն, պըլլացած:

Թայդի յա ընգյնում, Վարթուն ասըմ.-Յըես քյըեզ ո՛ւզլա՛կան ըմ:

Վարթին պղնձե դո՛ւչան յրա յա անում, տղեն կլո՛խը ճղում: Վըեր կյամ ա հորը նան մորը կյալի վախտը, Ածատուրը վազ ա տամ հորը կոշտը, խա՛բա՛ր տամ, ասըմ.- Ապեր, ջըհըլնեն եկալ ըն Վարթուն պչպչորալ, ջիհա՛լ ըմ, Վարթին դոլչան յրա յա ըրալ կըլո՛խս ճղալ:

Հա՛րը ղաման տնըմ ա ո՛ւրա՛ն տղեն ծեռքեն, ասըմ.- Կա՛, քյինա Վար-

թուն եր կալ, տար մին քյիհրիզի դրաղե ծկոտե, առնոտ շո՞րերը պեր ինձ նշանց տո:

Տղան տի յա անում, շո՞րերը եր կալած կյամ ա, թա՛ տա հորը, տեսնում ա հորը հոքյին տո՞ւս ա կյամ, դա՛րդա՛ն օզըմ թա՛ մեռնե:

Վարթին վըեր օշը կլո՞խն ա հվաքում, տըեսնըմ ա տկլոր ա: Եր ա կենում հըղեն ինգյնում, քյինա՛մ:

Քյինա՛մ ա, քյինա՛մ ցիրեկը կյոդլ ա կենում, քըշերը քյընամ, մին օրիշ քյիրիզու յրա, մին լա՛վ բաղու կոշտ, մին ծառա նիհ ինո՞ւմ, կոչ կյամ: Էտ հա՛մին բաղը մին թաքավերի յա ինո՞ւմ: Թաքավերեն՛ տղան ըրա՛զո՞ւմը տըեսնըմ ա մին մարթ կյամ ա կուփե-կուփե անըմ, ասըմ՝ «Նշանածըտ էն ա ծեր բաղըմը տկլոր, մին ծեռք շո՞ր տոր, կյենա, եր կալ եքյ»: Էտ քշերը իրեք դո՞նըմ իտի ա՛րա՛զ ա տըեսնըմ էտ տղան: Ըռութանա եր ա կենում սնդողան մին ծեռք շո՞ր յոր օնում, ծին եր ինո՞ւմ, քյո՞ւնո՞ւմ բաղը: Սաղ բաղերը շոռ ա կյամ, քյըհրիզին քըշտավը թա՛ անց կենա, ծին անց չի կըենում:

Էտ ախճիգյն ասըմ ա.- Ա՛յ տղա, ճիրին մաչին շոխկս ըրե-վում ա, ծին խըրթնալ ա, խե յըս ծիյին թխում, վախըմ ա անց կըենա: Տղան վըեր ըսկանում ա, կլխըյեր եշըմ ա, տըեսնըմ մին տկլոր ախճիգյ ծառեն նստած: Վըեր եշում ա, շափաղը ըշկերեն ա տամ, աշկերը ծկոտում:

Տղան ասըմ ա.- Հի՞նչ միլլա՛թ ըս, էս քըշերեն էտ ծառեն յրա:

Ախճիգյն ասըմ ա.- Մին ծեռք շո՞ր տոք, կյենամ, ծառան եր կյամ, ասիմ, թա՛ յըես հու վըմ:

Տղան դարյան տամ ա ո՞ւրա՛ն, էտ ախճիգյը կյենըմ ա, ետնան նաղլ անըմ ընցածը: Թաքավերեն տղան էտ ըխճկանն ո՞ւրա՛ն հետե կնեգյ ա յոր օնըմ, տանըմ պալատը, ո՞ւրա՛ն օթախը:

Համին քշրիանան, ծառանեն կյամ ըն տղեն տո՞ռնը տըեսնան խե տեղան եր չի կենըմ: Ախեր տղան ամեն քշրիանա եր ա կացալ նո՞քյար-ներեն հըղե քըցա՛լ հա՛նդերը, ծիյենը տղվարալ, միհենգյ քյըսօր ա տըեռալ, հալամ զո՞ւրթնանըմ չի:Վեզիրը կյամ ա տռնեն ծակավը տեսնըմ չորս վըենն ա ըրնում: Նախանձան նան չկամոթունան ըսկըսըմ ա ո՞ւրա՛ն մեսն օտելը: Ասըմ ա. «Խե՞ ո՞ւրա՛ն հետե կնեգյ ա ճարալ, ինձ հետե վուչ»:

Վերչը զո՞ւրթնցնըմ ա, տեսնում մին մարալ ախճիգյ պիրած, վեր ըրնեն ասըմ ա. «Տու տո՞ւս մի կյալ, յըես ըմ տո՞ւս կյալու»: Վեզիրն օզըմ ա, թա տրաքվե:

Շատ ըն ապրում, խրեգյ ըն ապրում, հարսը մին տղա, մին ախճիգյ ա պիրում: Խոխեքյը տո̈ւս ըն կյամ, թա հայաթըմը հըրվանեն խխորցը նհետ խաղ անին, ծառեքը թողըմ չըն:

Էտ հըրվանեն խոխան ետ ա տըեռնըմ ասում.- Բալա, էսա իմ պապունց տանը հրսանիքյ ա իննա̈կան, քյըեզ թուղլական չըմ կյաս, թմաշա անի՛ս, է՛, վըեր թողում չըս քյըզնհետ հաղ անիմ:

Խոխեքը վազ տալավ կյամ ըն մորը համ ասըմ, համ էլ ասըմ.

Մամա, մեր պապունց տոնը վե՞րն ա, հի՞ք ա հրսանեքյ ինելու, վըեր մուեք էլ քյինինքյ, թմաշա անինքյ:

Մարը ըսկսըմ ա լա̈ց ինիլ: Մարթը կյամ ա, տըեսնում լա̈ց ինիլիս:

Ինքյը-ինքյը քնենքյ ա անում, ասըմ. «Հա̈լբա̈թ հորը տոնը սերտը օզալ ա»:

Եր ա կենում էտ տղան քառասուն ծառա , մին վեզիր տինո̈ւմ կընգանը նհետ, փայտոնեն լծըմ, խխոցավը հղե տինըմ: Համ հղե յա տինըմ, համ թափշուր անըմ, ասըմ.- Ծո̈րըմը փյտունննեն տո̈ւս չանիք, ամմեն դո̈նըմ դո̈ւզըմը կղինջանաք:

Դե վեզիրն էլ տի մին պենու վա իլա̈լ մաթա՛լ, եր ըն կենում հղե ինո̈ւմ:

Շատ ըն քյինո̈ւմ, խրեգյ ըն քյինո̈ւմ, վեզիրը պիրըմ ա փյտուննեն մին խոր ծո̈րըմ տո̈ւս օնում, թա դինջանան:

Նոքյարն են հիշքան հա՛յ-հա՛յ ըն անում, վեզիրը ը սկան ում չի՛, կզնվըմ ա, թա.- Մեծը յըես ըմ, թա տուք: Տարեքյ ծիյանքը պհեցեքյ:

Նո̈քյարն են տանում ըն ծիյանքը ըրըծցնըմ, մինը վեզիրին բուսը պահըմ ա...

Վեզիրին մեթկը ծոռ ա ինըմ, խխոցը քունավ ա անըմ, Վարթուն էլ օզըմ ա ծեռք քցի: Վարթին համոզվըմ չի, վեզիրը էրկու խուխեն կլո̈խը կտրըմ ա, էլլա չի համոզվում:

Վըեր կյամ ա, թա Վարթուն կլո̈խը կտրե, Վարթին ասըմ ա. - Լա̈վ ա թող քյինամ էն դո̈լը, կյամ:

Վեզիրը շատ գյիդա̈ցած մարթ ա ինո̈ւմ: Պիրում ա վըեննան մին քյա̈նդիր կապում, պեց թողում: Վարթին քյա̈նդիրը կտրըմ ա, փախչըմ:

Վեզիրը հարայ-հուրայ յա անըմ,-Եկե՛քյ, հա՛ եկե՛քյ, ղըչըղնեն եկեն յրա տվեն խխոցը կուտուրեցեն, Վարթուն տարեն...

Նոքյարներան վեչ մինը հվատում չի:

Էն բուսը պահող նոքյարն ասըմ ա.- Ցըես տըեսալ ըմ հու վա խխոցը մորթալ:

Խխոցը ըսպանող, Վարթուն չոլերը քըցող վեզիրը տեղը պնդըցընըմ ա, ասըմ.- վեչ մինին ասիքյ վուչ, թա չէ կլխընետ կըտրլական ըմ:

Վարթին շատ ա քյինո՛ւմ, խրեգյ ա քյինո՛ւմ, եշըմ ա, տըեսնում մին հանդի մին չոբան վեխճար ա ըրըծցնըմ:

Ծեն ա տամ չոբանեն, ասըմ.- Ա՛յ չոբան, ինձ հետե մին ծեռք շո՛ր ճարե, պեր կյենամ:

Էտ չոբանը սա՛սին յրա ճընանչըմ ա, վեր ո՛ւրա՛ն խազայինին ախճիգյն ա:

Մին վեխճար ա մորթում, մորթեն շո՛ր չինո՛ւմ, կյեց տամ, թըփանավըն էլ կլո՛խը ծասկըմ: Մեսը խըտվում ըն, օտում: Ախճիգյը չուբանեն ճընան-չըմ ա, ըսկըսըմ ա կլխավը անց կացածը նաղլը անելը: Վըեր մթնըմ ա, քյինա՛մ ըն տոն, չոբանը քյինա՛մ ա խազայինին ասըմ, վըեր ինձ մին հոգեր օնիմ, տղա յա, անումը Քաչալ: Քաչալը յոր ա օնում պիրըմ տոն:

Խազայինին ասըմ ա.- Դե մեր տոնը էրկու ղոնաղ ա եկալ, կարելի յա՞ ըստեղ քշերս կենան:

Թաքավերին տղան, վեր լոխ գյուղում ա, ըսկսում ա շոռ կյալը: Կյամ ա ղոնաղ ընգնում էտ տանը:

Վեզիրը կլխու յա ինգյնըմ, վեր Քաչալը Վարթին ա:

Ո՛ւրո՛ւգյ ո՛ւնը նստում ըն, թա հաց օտին:

Քաչալը ասըմ ա.- Խազա՛յին, խնթըրըմ ըմ ո՛ւրո՛ւգյո՛ւնս էս տանս ղեկավարրոթունը ինձ տաս:

Խազայինն ասըմ ա.- Հինչ կինի, լա՛վ կինի :

Քաչալը ըսկըսըմ ա կլխավը անց կացածը նաղլ անելը: Համ նաղլ ա անըմ համ մորթեն կյեցան հանում, լոխ ճընանչում ըն, վըեր տա Վարթին ա: Մար, հա՛ր, ախճիգյ խառնվըմ ըն: Ասծատուրն օզըմ ա, թա՛ փախչի, չոբանը թողըմ չի՛, վեզիրին նան Ասծատուրին ծիյին հա՛քյվա՛ն ըն տամ, քաշ-քաշ անում, ըսպանում:

Վարթուն թա՛զա՛ղան օխտը օր, օխտը քշեր հըրսանիքյ ըն անըմ, էն տղեն նիետ: Ընդրանք էն վըխտանը մինչև ըսօր բախտավեր ապրըմ ըն: Ընդրանք հասեն ո՛ւրա՛նց մուրազեն, մունք էլ հըսնինքյ մեր մուրազին:

101.ԿՈՐԱԾ ԵԶՆԸ

Իլա՛լ ա, չիլա՛լ մին մարթ, մին կնեգյ ա իլա՛լ: Ըտահանց մին կավ ա իլա՛լ: Շատ ըն կացալ վեչ էտ կավն ա ծնալ, վեչ էլ էտ կնեգյն ա խոխա պերալ: Վերչը կնեգյը պատճառավեր ա տեռալ, կավն էլ յղե յա տեռալ: Ամմեն օր էտ մարթը կավը տանում ա իլա՛լ ըրըծըցնում, պիրում:

Մեհետ էտ կավը նստած օզում ա, թա՛ ծնե, մին ջուվար մշտլեղչի յա կյամ, թա՛ կնեգյըտ մին տղա յա պերալ: էտ մարթը կավը թողում ա ծնեյիս, ինքյը քյինո՛ւմ տոն:

Մին քանե տարե յա ընցնում, էտ տղան վեր մծանում ա, խելքը կտրում ա, հորն ասում ա,- Ա՛ հա՛ր, պա խե՞ մըեզ մին պեն էլ օնինքյ վեչ:

Հա՛րն ասում ա.- Մըեզ մին կավ ա իլա՛լ, հա՛նդին ըսեցալ ա, թա՛ ծնե, վեր ըսկացալ ըմ, թա՛ քու մար քյըեզ պերալ ա, կավը թողալ ըմ ծմակումը, յըես եկալ տոն, էլ գյիդո՛ւմ չըմ, թա՛ հի՞նչ ա տըեռալ:

Տղան ասում ա.- Ա՛ հա՛ր, յըես քյիննա՛կան ըմ, մեր կավը քթենամ:

Եր ա կենում հղեն ընզնում, քյինո՛ւմ: Վեր շատ ա քյինո՛ւմ, նղանում ա, մին ծառու տակե, պարանց ա ընզնում, քոն ինո՛ւմ: Քոն իլա՛ծ տեղը ա՛րա՛զ ա տեսնում:

Ըրա՛զի մին դուշ կյամ ա, ասում. «Վեր եր կենաս աչի կուռան յրա կքյինիս, ընդեղ մին ախպո՛ւր ա ջիհիլա՛կան, էտ ըխպրին քշտեն մին քար կա, տակը փոչ, նի կմննիս էտ քարեն տակը: Կեսօրեն ծեր կավը էրկու աչառ, մնել մին դանա եր կալած կյըլական ա»:

Էտ տղան բո՛ւրդա՛ն զուրթնան ում ա, տըեսնում ա ա՛րա՛զ: Հինչ վեր էտ դուշը ասալ ա, էտ տղան էլ ինդի յա անում: Քյինո՛ւմ ա, նի մննո՛ւմ էն քարեն տակը, տըեսնում կավը ղնոտանցը նհետ եկավ: Կավը կյամ ա էտ քարը լո՛ւզ տամ:

Տղեն հա՛րը ասած ա ինո՛ւմ, վեր կավեն անումը Խինա՛ յա:

Էտ տղան ասում ա.- Հա՛ծ, հա՛ծ Խինա՛:

Էտ կվեն լո՛ւզո՛ւ յա ինո՛ւմ, ըսկսում ա խոսել, ասում ա.- Խե՞ նի յըս մտալ քարեն տակը, տո՛ւս եք:

Տո՛ւս ա կյամ:

Կավն ասում ա.- Ցաղուզ եկա՞լ ը՛ս:

Տղան ասում ա.- Եկալ ըմ քյըեզ տանի՛մ:

Կավն ասում ա,- Քա հոր աշկերը սվանա, յըես կյա՛լ չը՛մ, ամմա էս էրկու աչառը տար, զիրավ վար ըրա:

Էտ ըչուռնուն պոզերը անկյին քարերից ա ինո՞ւմ:

Կավն ասում ա.- Փլազավ պտատե, հանցու օրիշ տըեսնա վե՛չ, էտ պո-զերը լո՞ւս ըն տա՛մ:

Էտ տղան իտի յա անում, պրծնում, ըչռնեն յոր օնում, հղե ընգնում: Մին կյուղ ա ջիհո՞ւմ: Էտ տղան ըտեղ դոնաղ ա ընգնում: Հաց ա օտում, պրծնում, տնատարն ասում ա, իշեղը տար ըչռնուն խոտ տոք:

Տղան ասում ա.- Իշեղը հա՛ջա՛թ չի, ինղի կքյինիմ:

Էտ տղան վեր նի յա մննում կյումը, տնատարը հետան թաքուն քյինո՞ւմ ա, եշում, թա՛ տեսնա հի՞նչ ա անում: Եշում ա, տեսնում էտ տղան պոզեն պտատանը ետ ա տամ, կյումը լո՞ւսանում ա:Ո՞ւրո՞ւզյո՞ւնը քոն ըն ինո՞ւմ:

Էքյսը էն տղան եր ա կենում, թա՛ քյինի, տնատարն ասում ա. - Մին պայման կապինքյ, թա՛ օխտը չուվալ կորեկը յզներավըտ կարիս մին օրումը վարիս, եզները քու, թա՛ կարիս վեչ, եզները ինձ:

Էտ տղան քյինո՞ւմ ա յզներեն քշտեն ըսկսում լաց ինիլ:

Եզներն ասում ըն.- էտ հի՞նչ ա:

Ասում ա.- Դե իստի իստի յա իլա՛լ:

Եզներն ասում ըն.- Լա՛ց մեր ինիլ, քյինի օխտը քոլ կտրող էլ օզի, օխտը սերմող էլ:

Տղան քյինո՞ւմ ա օխտը քոլ կտրող էլ պիրո՞ւմ, օխտը սերմող էլ: Միչն մթնելը չորս չուվալ վարում ըն: Վեր մթնում ա, էտ տղան շատ ա վախում:

Եզներն ասում ըն.- Վախել մեր, մունք պռնչ-պռանչք ընք ըննական, իրիքյնա՛կը կյիլական ա մնել ո՞ւրա՛ն տեղը:

Եզները պռնչ-պառանչ ըն կյամ, իրիքյնակը կյամ ա ո՞ւրա՛ն տեղը, մնացածն էլ ըն վարում, կյամ տոն:

Էտ տղան կյամ ա քոն ինո՞ւմ, թա՛ էքյսը եր կենա քյինի, էն մարթն ասում ա.- Ա՜սետ էլ մին օրիշ պայման կապինքյ, թա՛ կրեցեր էն օխտը չվալ կորեկը հվաքիս, եզները՝ քու, թա՛ կարիս վեչ, եզները՝ ինձ:

Էտ տղան քյինո՞ւմ ա եզներեն քշտեն ըսկսում լաց ինիլը: Եզները հրցնում ըն ասում. - Էտ հի՞ նչ ա իլա՛լ:

Տղան նաղլ ա անում, վեր իստի յա իլա՛լ:

Եզներն ասում ըն. - Լաց մեր ինիլ, քյինի մին շալ էլ օզի, օխտը նիհանող էլ:

Տղան քյինո՞ւմ ա մին շալ էլ պիրում, օխտը նիհանող էլ: Եզները վեր

պռանչում ըն, հինչքան դուշեր կան, լոխ կյամ ըն էտ կորեկը հվաքում, ածում շալեն, նի հանողն էլ նի յա հանում, տանում ըն տամ տնատըեռնը:

Քյինո՜ւմ ա քոն ինո՜ւմ: Էքյսը եր ա կենում, թա՜ քյինի, տնատարն ասում ա.- Մհենգյ էլ մին օրիշ պայման կապինքյ: Մին զըեռ ըզղան ճիրավ լցնինք, տնինքյ կրակեն, թողինքյ պլպլթա: Իտի պլպլթայիս, վեր կարիս նի մննիս մաչին լղանաս, տո՜ւս կյաս եզները՝ քո՜ւ, վեր կարիս վէչ, եզները՝ ինձ:

Էտ տղան քյինո՜ւմ ա եզներին քշտեն լաց ինո՜ւմ, եզները ասում ըն. - էս հի՞նչ ա:

Ասում ա. - Լա՜ց մեր ինիլ, քյինի շո՜րերտ հանե, կրակեն քշտեն վըեննը կաց, վեր պռանչիմ, նի կմննիս, լղանաս, տո՜ւս կյաս:

Էտ տղան քյինո՜ւմ ա, շո՜րերը հանում, կրակեն քշտեն վըեննը կենում, էն մարթն ասում ա. - Խե՞ նի չըս մննում:

Տղան ասում ա.- Ցորտ-ցորտ ա, կենում ըմ կծա՜նա:

Ասում ա.- Չէ՛, էն ա պլպլթալիս, նի մոտ:

Վեր եզնը պռանչում ա, էտ տղան կլխեն յրա տամ ա մաչին, լղանում, տո՜ւս կյամ, թա՜.- Պա վեր ասում ըմ թող կծա՜նա :

Էտ մարթը տեսնում ա,վեր կարում չի եզները ինքյ օնե, կնգանն ասում ա.- Տու հաց ըրա, ասե, էք քյո՜մագյ իլ, վեր կյա, թա՜ քյո՜մա՜գյ ինի, կոյփե տոք, քցի թուրունը, խրաված ըրա, թուռնեն տո՜ւսան կախ տոք, յես էլ քյինիմ քու քվեր հետան, հանցու տենան վեր եշինքյ ըրվա:

Էտ խոսկերքը էն տղան լոխ ըսկանում ա:

Տնատարը վեր եր ա կենում, քյինո՜ւմ քուվերը հետան, կնեգյը հաց ա անում: Վեր խումորը հունցում ա, պրծնում, քյինո՜ւմ ա թուրունը, էն տղեն ասում.- էք քյո՜մագյ իլ թուրունը նի կըցընինքյ:

Էտ տղան եր ա կենում, քյինո՜ւմ թուրունը, վեր էն կնեգյը ասում ա.- Եր թուռնեն ղրղնեքյը սրփի:

Էն տղան ասում ա.- Դե յըես տղա խոխա յըմ, թուրուն սըրփած չըմ, տու նշանց տոք, յըես էլ սվերիմ, սըրփիմ:

Էտ կնեգյը օվո՜ւլը յոր ա օնում, թա՜ սըրփիլը նշանց տա, էն տղան էտ կնգանը կուփե յա տամ, քցո՜ւմ թուրունը: Մին լա՜վ խրաված անում, թուռնեն տո՜ւսան կախ տամ, ինքյը քյինո՜ւմ տանը հինչքան լա՜վ-լա՜վ պեներ կա, սրփում, յոր օնում յզներեն նհետ քյինում: Էն մարթը քո՜ւլըը եր

կա̀լա̀ծ, ուրխացած կյամ ա, քուվերը ղոնաղ ա պո̀ւրո̀ւմ: Տենան վեր տո̀ւս ըն կյամ, էն խրաված մեսը ըրվամ ա: Ախպերը գյոա̀նում ա քուվերը քշտեն, ասում ա.- Մին տես կնեգյըս հի՞նչ լա̀վ խրաված ա ըրա՛լ, քյին-նա̀կան ընք մին լա̀վ ղունախլեղ սարքինքյ:

Մինենգյ կյամ ըն, մուտանում, տըեսնում ո̀ւրա̀ն կնգանն ըն խրավալ, տոնն էլ սրփալ, եր կալալ, քյեցալ:

Չարը՝ ընդեղ, պարին՝ ըստեղ:

102.ԹԱՔԱՎԵՐԵՆ ԱԽՃԻԳՅԸ

Իլա՛լ ա չիլա՛լ մին թաքավէր ա իլա՛լ։ Տղեն փսկվելի վախտը եկալ ա։ Հա՛րը փսակալ չի, տղան էլ հմանչալ ա, թա՛ հորը ասե՝ փսակվում ըմ։

Ախրը վեր հորան հույսը կտրալ ա, մին հա՛յրա՛ վըեսկե յա եր կալալ հղե ընգալ քյեցալ։

Քյեցալ ա, քյեցալ, մին կընդակ պռավու տան դոնադ ընգալ։ Ուռութա-նա վեր էտ տղան եր ա կացալ, թա՛ իրեսը լվանա, տեսալ ա մին շափադ ընգած ընդղերքեն։

Էտ տղան ասալ ա. -Ա նանի, էս հի՞նչ պեն ա, տըեռ իրիքյնակը տո՛ւս կյալու, շափաղը տըվալ ա ըստըղեքյես։

Պառավն ասում ա. - Ջանըս քյը մատաղ, հա՛լըա՛թ թաքավերեն ախ-ճիգյը տո՛ւս ա եկալ տոռնը։

Տղան ասում ա. -Ա ՛ նանի, ա՛մա՛լ պեր թաքավերեն ախճիգյը ինձ հետե օզինքյ։

Պառավն ասում ա.- Ջանս քյը մատաղ, թաքավերը ըխճկանը փսակում չի՛, հու վեր կյամ ա, թա՛ օզի, կոնղը կտրում ա։ Էն ա մին տոն կլխավ լցած։

Էտ տղան սուս ա անում։

Ըտեղ մին դամուրչի յա ինո՛ւմ։

Էն տղան վըեսկե յա տամ, թա՛.- Ինձետե քսան մեխ շինի, մին կյեղ, էրկան, մաննես մչանք հաստեզյ։

Դա՛մո՛ւրչին մեխերը շինո՛ւմ ա, պիրում տամ էտ տղեն։ Էտ տղան տա-նում ա քշերը մեխերը թաքավերեն պըլատեն, ըխճըկանը թըրափե պա-տեն թխում, եր ինո՛ւմ, քյինո՛ւմ թաքավերեն ըխճկանը ձեռքըյալեխը կյուղանում, պո՛ւրո՛ւմ։

Էն մին քշերն էլ քյնում ա մուտանան կյուղանում, պո՛ւրո՛ւմ։ Իրեքինջի քշերը քյինում ա թաքավերեն ըխճկանը եր կցնում։

Ախճիգյն ասում ա. - Պա տու հո՞ւ վըս, հի՞նչ ըս, վեր եկալ ըս ըստեղ։

Էտ տղան ասում ա.- Ըսկացալ ըմ, թա՛ քու հա՛ր քյըեզ փսակում չի, իմ հա՛ր էլ ինձ չի փսակում, եկալ ըմ, թա՛ քյըեզ օզիմ։

Էտ ախճիգյն ասում ա.- Քյինի, էքյուց ո՛ւրո՛ւզյո՛ւնը կկյաս։

Թաքավերեն տղան քյինո՛ւմ ա, էքյսը էտ ըխճկանը յոր օնում, քյինո՛ւմ բիդի ո՛ւրա՛ն հորը տոնը։

Քյինո՛ւմ ըն։ Կըսըհիդղե էտ տղեն մենն ա ընգնում, վեր հա՛յրա՛ն վըեսկավ լիզյը թողալ ա պռավեն տանը։

Էտ տղան ասում ա.- Ցըես քյինիմ պիրիմ:

Ախճիգյն ասում ա,- Չէ՛, յըես քյինիմ:

Վէրչը ախճիգյը թողում ա ըտեղ, ինքյը քյինո՛ւմ, թա՛ հա՛յրքա՛ն պիրի: Մթնում ա, էտ ախճիգյը վէր մրսում ա, մին ծառէ տակէ կոչ ա կյամ:

Մին լոթկաչի կյամ ա, թա՛,- Ա՛ քո՛ւր, ըտեղ խե՞ մրսում ըս, եք լոթկումը նստէ դըլըրդալու անինքյ, հանցու մրսիս վէչ:

Էտ ախճիգյը քյնո՛ւմ ա լոթկումը նստում, լոթկաչին լոթկան քշում ա ո՛ւրա՛նց տո՛ռնը: Էտ լոթկան կապ ա տամ, ո՛ւրա՛նք քյինո՛ւմ ըն տոն:

Թաքավէրեն ախճիգյը էտ լոթկաչուն ասում ա,- Ծըեզ վէտաց ճըռնապարհ չօնի՞քյ:

Էս լոթկաչին ասում ա. - Էն ա օնինքյ, ամմա քյըեզ կնդակ պեց չըմ թողել, քյըեզ նհետ կկյամ, հանցու փախչիս վէչ:

Էտ լոթկաչին ասում ա, թա՛ նհետը քյինի, ախճիգյն ասում ա.- Վէր վախում ըս, թա՛ կփախչիմ, մին քյինդիրա՛վ վըեննըս կապէ:

Պիրում ա քյինդիրա՛վը վըեննան կապում, ճոնդը փոնում: Էտ ախճիգյը քյա՛նդիրը վըեննան ետ ա անում մին քոլա կապում, ինքյը լոթկան եր ինո՛ւմ քյինո՛ւմ, տո՛ւս կյամ էն համան տեղը, հիշտեղ վէր թաքավէրեն տղան թողալ ա: Լոթկան մին կեռա կապ ա տամ ինքյը ընդեղ նստում:

Մին մարթ ա կյամ, մին թվանգյ ծեռքեն, բիդի էտ ախճիգյը:

Կյամ ա մոտանում, թա՛.- Պա տու հի՞նչ իլլա՛թ միլլա՛թ ըս, վէր ըստեղ ըս:

Էտ ախճիգյը իմաստուն ա ինո՛ւմ, զյուդում ա, վէր տա լի՛ա՛ թաքավէրն ա, վըերսի յա եկալ:

Ասում ա. - Ցըես ըսկացալ ըմ, վէր ծեր թաքավէրեն երեսունըինը կնեգյ օնէ, յըես էլ եկալ ըմ վէր հանցու քառասունը տեռնանք:

Էտ մարթը ասում ա.- Դէ եք քյինինքյ:

Ախճիգյը ասում ա.-Չէ՛, թող թաքավէրեն կնանեքյը ո՛ւրանց զյիյիմավը, պարիպասավը կյան ըստեղ, օտինքյ, խմինքյ, քյեփ անինքյ, ետնան կյանքյ:

Էտ մարթը քյնում ա կնանուցը ըղարկում, ըտեղ օտում ըն, խմում, պրծնում, էտ ախճիգյը ասում ա.- Եկեք տանիմ նշանց տամ, տեսեք հի՞շտեղա յըմ եկալ:

Տանում ա էն երեսունինննը կնեգյը անում լոթկան, քշում քյինում: Վէր մթնում ա, լոթկան կապում ա մին կեռա, ո՛ւրա՛նք ծմակումը կենում ըն:

Քառասուն օշափ ըն կյամ, թա̀. - Տուք հո՞ւ վըք:

Էն ախճիգյն ասում ա. - Մունք քառասուն հոքի յընք, ըսկացալ ընք, վեր տուք էլ քառասուն օշափ ըք, եկալ ընք ծըեզ կնանեքյ:

Օշափնեն ասում ըն. - Դե քյինիպքյ մեր տները:

Էն ախճիգյն ասում ա. - Քյեցեքյ կյինի, ա̀րա̀ղ, հաց, տես-տեն պերեքյ, ուտինքյ, քյեփ անինքյ, ետնան:

Էտ օշափնեն ամմեն օր մին մոտե շեն ա ինո̀ւմ, թլանում ըն: Էլհա յըն քյինո̀ւմ նի տեռնում էտ շենը թլանում, յոր օնում, կյամ:

Էտ ախճիգյը ընդահանց քմակեն երեսունըինը կնգանը սվըրցնում ա, թա̀. -Ծըռքըռնումտ մարթը մին քար կտինիքյ, վեր կյինի տան, խմիքյ վեչ, էն ղո̀լավը վեր կածիքյ: Մարթը ո̀ւրա̀ննեն թուշին նստլական ընք, վեր հարփին, ղմենեն յոր կօնիքյ, մարթը ծեր թուշին նստածեն ըսպանիքյ:

Ուշուփնեն կյամ ըն, ուտում, խմում, ո̀ւրո̀ւզյո̀ւնը վեր տեռնում: Էտ կընանեքյը եր ըն կենում մարթր ո̀ւրա̀նց թուշինին ըսպանում: Էն ախճիգյն էլ ուշուփներեն մեծեն ա սպանում: Ըտահանք ուշուփնուն շո̀րերը կյենում ըն: Էն ախճիգյն էլ ընդրանց մեծեն շո̀րերն ա կյենում, ուշուփներեն մեծեն կլո̀խը կտրում, յոր օնում քյինո̀ւմ էն հա̀մա̀ն շենը, վեր ուշուփնեն թլնեյիս ըն իլա̀լ:

Ժողովուրթը զյիղո̀ւմ ա, թա̀ ուշուփնեն ըն, էլհա եկալ ըն: Լոխ կյողլ ըն կենում, ասում ըն. - էս հի՞նչ պեն ա՛, վեր միչև միենգյ օրը մեհետ ըն իլա̀լ կյալիս, միենգյ էլ օրը էրկու հետն ըն կյամ:

Էտ կնանեքյը շատ հա՛յ-հա՛յ ըն անում, վեր ո̀ւրա̀նք ուշուփնե չըն, ուշուփնեն կտորողըն ըն, ընդրանք հվատում չը՛ն: Էրկու պռավե ըղարկումըն ընդահանց կոշտը:

Պռվնեն վեր տեսնում ըն ուշուփնուն մեծեն կլո̀խը կտրած, հվատում ըն, վեր ուշուփնուն կտորողնեն ըն:

Էտ շենին ժողովուրթը էտ ըխճկանտ թաքավեր ա տինո̀ւմ:

Էտ ախիիգյը ո̀ւրա̀ն հորը տանան կյեցած շո̀րերա̀վը նկարվում ա, տամ դրբզան, քշտեն էլ մին ախպուր տո̀ւս օնըմ, մին մարթ տինո̀ւմ ըտեղ, թա̀.- Հու վըեր կյա էտ նկարեն եշի, կփռնիս, պիրիս:

Մեհետ մին մարթ կյամ ա նկարեն եշում, ո̀ւշո̀ւնց տամ, թա̀- Տու քյեցեր հերիքյ չի, լոթկաս էլ տարեր:

Էտ մարթը ըտրան փռնում ա, տանում էտ ըխճկանը կոշտը, թա̀. - Իստի յա ասալ:

Էտ ախճիգյը ասում ա. - Տարեքյ քցեցեքյ տակե պաղվալը, օրը իրեք հետ թկեցեքյ:

Մին մարթ էլ կյամ ա, թա̀.- Տու քյեցեր հերիք չի, երեսունըիննը կնեգյս էլ տարեր: Ըտրան էլհա փռնում ըն, տանում:

Էն ախճիգյը ասում ա.- Տարեքյ քցեցեքյ մաչի հարկը, օրը էրկու հետ հաց տվեքյ:

Մին տղա կյամ ա, նկարեն եշում, ո̀ւրա̀նա̀ն քյինո̀ւմ, վեր ընդնում: Ընտրա էլ ըն տանում:

Էտ ախճիգյն ասում ա. - Քցեցեքյ երե հարկը, օրը իրեք հետ հաց տվեքյ:

Էն լոթկաչուն, վեր նկարեն ո̀ւշո̀ւնց ա տվալ, թիքյա̀-թիքյա̀ կտորում ըն: Էն մինն էլ թաքավեր ա ինո̀ւմ, ո̀ւրա̀ն երեսունըիննը կնեգյը տամ ա ո̀ւրա̀ն: Էն ո̀ւրա̀նա̀ն քյինողն էլ, ո̀ւրա̀ն նշանածն ա ինո̀ւմ , նիետը փսակվում ա:

Ըտրանք հասեն ո̀ւրա̀նց մուրազեն, տուք էլ հասնիքյ ծեր մուրազեն:

103.ԱՅԱՆ ԾԸԾԸՂԵՍ Ա

Ընիս ա, չընիս մին մարթ, մին կնեգյ: Ըտրանց ընիս ա էրկու տղա: Մեծը խ՞լ՞ւնք ա ընիս, պիծինը՝ պըել: Մին տարե սով ա ընգնես: Էտ մարթը նան ՞ւր՚ան կնեգյը մըռնես ըն: Խոխեքյը մնաս ըն անղար:

Ըտրանց տատը յոր ա ունես, պիես, թա. - Էսա մըծացալ ըն, ՞ւր՚անք էլ հած խոխեքյ ըն, թող քյինին կործ անին, կյան ինձ պաիին:

Էտ խոխեքյը ըսկսես ըն կործ ընես, էտ պառավը պիես: Մեծ տղան լ՚ավ ա կործ ընես, պիծի տղան շան ՚ամ՚ագյ էլ չի ընես: Մին օր, էտ պառավը հիվընդընաս ա: Մեծ տղան տանը կնաս ա, ըտրան հաց, ճ՞ւր տաս, լըղըցնես, վերչը թամուզ պիես: Ամմա էն պիծի տղան քյինիս ա ծմական փադ ընես, պիրիս:

Մին օր հավան փիս ա ընիս: Էտ պըելը ետ ա տըռնաս, թ՚ա ըսօր էլ թող այան յըես պաիիմ, տու քյինի հ՚անդը: Մեծ ախպերը, վեր քյինիս ա, էտ պիծինը պիրիս ա մին ղըզղան ճ՞ւր իփիս, այուեն թեշտումը տինիս, ըծես էն հիվանդ պռավեն յրա, սաբավ լըղըցնես ա:

Այան մնաս ա թեշտումը, մըռնես ա, մնաս կըռքնեն պեց:

Մեծ ախպերը կյաս ա, թա. - Ա՛ մեռա՛ծ, այան հո՞ւնց ա:

Թ՚ա.- էն ա ծըծըղես, ըռութանան, վեր լըղըցրալ ըմ, էն վըխտանց միչև միենգյ էն ա ծըծըղես:

Մեծ ախպերը ըսես ա. - Ա՛ մեռած, պա այան հինչու հիվընդացալ ա, կըես չի թ՚ա խոսե, էտ հո՞ւնց ա, վեր միենգյ ծըծըղես ա:

Պիծի ախպերը ըսես ա.- Հըվըտաս չըս, քյինի տըես:

Մեծ ախպերը քյինիս ա տըսնաս այան մըեռա՛ծ: Ըսես ա.- Ա՛ փուչացած, դե վեր այուն ըսպանալ ըս, տու տանը կաց, յըես քյինիմ մեր պարիկամըերեն ասիմ, կյան, տանինքյ, թաղինքյ:

Մեծ ախպերը վեր քյինիս ա, էտ պիծինը պիրիս ա մին չաթու կպես այուն պկան, քաշ տաս: Վեր հանես ա մին ճիրճեմնը տեղ, չաթուն կտրվես ա, էտ պըելը ըսես ա.- Պեներս օնգատըն ընգավ, այան թըրթըվ՚ացալ ա:

Էտ ղաթումը մեծ ախպերը կյաս ա, թ՚ա.- Ա՛ տափը մտած, ա քիմս՚ամըեռ, էս քաղաքեն մաչին մըեզ խայտառակ ըրեր:

Պրիս ըն լի՚ա ընդի, հըղըցումը մին փոս կըտրես, այուն թըղես պըըծրնես, ՞ւր՚անք քաղաքան տ՞ւս կյաս:

Շատ ըն քյինիս, թ՚ա խրեգյ, էտ աստուծ կզյիղ՚ա, մըն էլ ըն տըսնաս մին

պառավ կնեգյ, մին սո՛ւրո՛ւ վեխճար ըրած առաչը, պըհես ա: Տահանց վեր տսնաս ա, հըրցըփորց ա ընես, տըսնաս վեր անդար ըն , ըսես ա.- Ցըես մինա՛կ մին կնեգյ ըմ, եկեքյ յըես ծըեզ պահիմ, տուք էլ կործ կանիքյ, ինձ պահիքյ:

Տահանք քյինիս ըն, ըսկսես ըն էտ պռավեն վրեխճարը պըհես, փա՛ղը այքիս, վերչը տոնը պըհես ըն:

Մին օր տանք հաց չինիս: Պառավը ըսես ա.- Մատաղ ընիմ ծըեզ, քյեցեքյ հա՛նդը, յըես հաց ըմ թըխըլական, յոր օնիմ, կյամ:

Տահանք քյինիս ըն: Օրը քյսօր ա տռնաս, պառավը կյաս չի՛, ո՛ւրա՛նք էլ էն ըն ինիս տուզնը:

Մեծ ախպերը ըսես ա. - Տու հեյվըններեն եշի, յըես քյինիմ մին խա՛բա՛ր պիրիմ:

Պիծի ախպերը ըսես ա. -Լա՛վ, քյինի, քյինի՛:

Էտ մեծը վեր քյինիս ա, պիծի ախպերը յեշիս ա կըլխըեր, թա՛ տըեսնա՝ արևը հի՞շտեղ ա, ախպերն էլ ա յըտընական, թա՛ չէ: Վեր կլո՛խը պըցըրցնես ա, տըսնաս ա մին տա՛նձի ճուռճուփած, ուրխընաս ա, թա՛ լիա՛ եր ինիմ օտիմ, միչև հացը կյալը կենամ:

Պիծի ախպերը հեյվանը պիրիս ա ծառեն տակեն մազյալ ընես, ինքյը եր ինիս ծառը: Հեյվըներեն ըսես ա. - Ցըես շըղըհըրըլական ըմ, վեր մինը կերեքյ, վայը ծըեզ տարալ ա, կյըլա՛կան ըմ ծըեր դիվանը անիմ, ծըեր կլո՛խը օյին պիրիմ, ծըեզ մին-մին կտորիմ: Օտիքյ վուչ, կիըվաքիքյ, թուփ-թուփ անիքյ, յըես վեր ծառան վըեր կյամ, ծեր փայն էլ ըմ տըլական:

Եր ա ընիս մին լա՛վ շըղըհըրես, սաղ ծառեն հիշքան տա՛նձ ա ինիս, վեր ընես, ծառեն տակը լըցնես ա: Դե huած տա՛նձ, տուզնը, մազյալ տեռած հեյվան, յըրան ըն տըռնաս hանց օտե՛ս, վեր մինն էլ չըն թուղես տակեն: Էտ պըելը ծառան հիշքան ճըղճըղոց ա տաս, փորը ճըղուտես, դե հեյվանը հի՞ր ա ըսկըռնաս, թա՛ էն հի՞նչ ա ըսես:

Սուս ըրած ուտես ըն, պըրծնես, ծառեն տակեն պարանը կյաս: Մին չաթլակ տանձ կյաս ա ընզնես մին սըև էծու պոզի, իտի կըռնաս: Էտ պըելը կըզնըված, ծառան վեր ա կյաս, տըսնաս տակեն պեն չիկա:

Փռնես ա լըխճին կուտուրես, թուղես մինա՛կ էն սըև էծը, թա՛. -Էս ա մինա՛կ իմ փայըս պահալ, յըես էլ ո՛ւրա՛ն ըսպանել չը՛մ:

Մեծ ախպերը կյաս ա, տսնաս, հեյվանը լոխ կըտորած, վեր ածած:

Հարայ ա տաս, վայ-վայ ընես, թա̀ խե ըստի յա:

Էտ պըել մըեռածըտ լոխ նաղլ ա ընես, հինչու իլալ ա:

Մեծ ախպերը ըսես ա.- Ա՛ կյիժ մըեռա՛ծ, ա՛ տափը մտած, ա՛ պիծի օլաբան, ինձ դա̀րդա̀տ յանշաղ ըս շինա՛յ, պա մեր վթա̀նան մըեզ խայտառակ ըրեր, քուչեցե, եկե ըստեղ, պա մըհենգյ թո՞րը քյինիմ:

Պիծինը ըսես ա. - Վախել մեր, յըես պռավեն ջողաբը տլական ըմ:

Պիրիս ըն էտ հեյվանը լոխ շըլըկես, պըրիս չո̀լումը վեր ըծես, ո̀ւրա̀նք քյինիս տոն, թա̀ հաց օտին: Պառավը պիրիս ա վեց ծու իփիս, տաս մեծ ախպորը, իրեքը իփիս, տաս պիծի ախպորը:

Էտ պիծինը խըռըվես ա, թա̀.- Խե՞ իմ փայս խըեգյ ա, ուտես չըմ:

Պառավը ըսես ա.- Դե, ջանետ մատաղ, ամմեն օրվա պորցիտ ա ըլի՛, խե խռա վալ չըս, մըհենգյ խըռըվես ըս:

Պիծինը ըսես ա.- Խե՞ յըես համ դո̀նումը հինգը-վեց վեխճար շլակիմ, պիրիմ չոլմը տինիմ, համ էլ փայս խըեգյ ընի:

Պառավը ըսես ա.- Խե՞ վեխճարը վեններ չօնե՞, վեր կյա, խե՞ տու վըս շըլըկես:

Էտ պիծի ախպերը տո̀ւս ա կյաս, վա՛յվա՛յ ընես, հարա ՛յ տաս, թա̀ եկալ ըն մեր վեխճարը լոխ չոլմը կըտորալ: Պառավը տո̀ւս ա կյաս, տըսնաա ղըրթ-ղորթ սաղ վեխճարը կտորած, ամենին կլո̀խը ո̀ւրա̀ն քըշտեն տըրած:

Էտ խոխեքյը լաց ըն ընես, վայ-վայ ընես, թա̀.- Էս հո̀ւնց կապըինքյ, մըհենգյանց տենը:

Պառավը գյունաքար-գյունաքար ըսես ա.- Չէ, բալամ, խե՞ լա̀ց ըք ինիս, տըեռած չպիդար, վեր տըեռալ ա, դե հի՞նչ անինքյ:

Տահանք սուս ըն ընես, քյինիս տոն:

Մեծ ախպերը ըսես ա.- Ա՛ մըեռած, կոզի սաղ վեխճարը կտորեցեր, լհա̀ ինձ խայտառակ տըռնալա ըզըդեցեր:

Պիծի ախպերը ըսես ա.- Պա նըհախ ըն ասալ, թա̀ աստուծ դա̀րդը ընդրան տա, հու վեր դա̀րմա̀նը գյիդա̀ս ա:

104.ԱՐՋԸ

Մին դ՞նըմ մին մարթ քյնում ա քոլ, թա՛ փադ անե: Էտ քոլումըտ մին արջու պ՞ՙւն ա ըն՞ւմ, արջը պ՞ւնան տ՞ւս ա կյամ, թա՛ էտ մարթիտ օտե:

Էտ մարթը արջին ասում ա. - Էնա օղտերը կյամ ըն, քյըեզ ուտլական ըն:

Արջն ասում ա.- Պա հո՞ւնց անըմ:

Մարթըն ասում ա.- Նի մոտ չուվալը ծառան կախ տամ, վեր կարին վեչ քյըեզ օտեն:

Արջը նի յա մննում չուվալը, մարթը արջեն կախ ա տամ ծառան, սկսում թակելը, համ էլ ասըմ.- Կրճա՛լա՛ծ, ըրգյընա՛լա՛ծ,- համ ասում ա, համ թակում:

Արջը բ՞ւրդա՛ն տափեն վեր ա ընգնում, չուվալան տ՞ւս կյամ, փախչում, քյին՞ւմ շատ արջեր հվաքում, կյամ, վեր էտ մարթեն օտին: Էտ մարթը փա՛դը թողում ա, էշին էլ թողում փա՛դին քշտեն, եր ըն՞ւմ մին ծառ: Արջերը կյամ ըն ծառեն տակեն պայման անըմ, հունց անին, վեր էտ մարթին օտին:

Ընդրանք ասըմ ըն.- Ո՛ւր՞ւր կըլխե վըեննը կենանք, մինա՛կ էտ թակված արջը լոխճան տակեն ինի: Տհենց շրվելավ քյնա՛նքյ, հասնինքյ էն մարթին:

Տհենց էլ անըմ ըն: Արջը վեր հըսնում ա էն մարթին, մարթ կըրկնում ա ՞ւրա՛ն խոսկերք: -Կրճա՛լա՛ծ, ըրգյընա՛լա՛ծ, միենգյ էլ սրանք ըն ինձ թակում, ըրգյնա՛լա՛ծ, կրճա՛լա՛ծ:

Արջը ըսկընալավ էն մարթին խոսկը, վեր ՞ւրա՛ն թկելիս ասալ ա, գյ՞ւղ՞ւմ ա թա՛ նահանց թակում ա, տական տ՞ւս ա պըրծնում, մեկալն էլ վեր ըն տեռըմ, կտ՞րվում: Էտ մարթը ծառան վեր ա կյամ: Էտքան ա՛մա՛լըտ ընդրան ասալ ար մին աղվես: Էտ մարթը էշը պեռնում ա, տոն քյինա՛, հըղըցումը աղվեսին ջի՞ւմ ա:

Աղվեսն ասում ա. -Հախս տռ:

Էտ մարթը մըխրեգյ մտածում ա: Էտ սհաթեն բ՞ւրդա՛ն փորը ղողռամ ա:

Աղվեսըն ասում ա.- Էտ հի՞նչ ա պըտահալ, մարթ ախպեր:

Մարթըն ասում ա.- Մին տըռնե սով ա իլա՛լ: Էտ տըռնեն էրկու շոն ըմ կոլ տվալ, միենգյ էլ մինն ասում ա. «Յըես ըմ տուս կյամ օտիմ էտ աղվեսին», էն մինն էլ ասում ա. «Յըես ըմ տուս կյամ»:

Աղվեսըն ասում ա.- Դե մին մըխրե քյըեզ պահե, փախչիմ, հռանամ:

Էն մարթը սըհենց էլ անըմ ա: Ետնան էշը պեռնած քյինամ ա տոն:

105.ՀՈՆՁ ԸՆՈՒՂՆԻՆ

Մին ըմըռնե մեր Ավանես ապան, մընգլ էլ ո՞ւրա՛ն տըններկու տրեկան տղան՝ Զախարը քյեցալ ըն հոնձ անել: Պատառ վեր հոնձ ըն անում, սուվուծանում ըն, նստում ըն հաց օտել: Հա՛րը տղան, տղան հա՛րա՛ն շատ օտող ըն ընո՞ւմ:

Տղան վեր տեսնում ա հա՛րը մըեծ-մըեծ ա օտում, ինքյն էլ ա մըեծ-մըեծ օտում:

Վերչը վեր մին լա՛վ օտում ըն, տղան ասում ա.- Ա՛պա, տեսնում ը՞ս հինչ լա՛վ կերե՞նքյ, էսքան հաց օտել կինի՞:

Հա՛րն էլ ասում ա.-Պա դե, յըես մին մըեծ մարթ, ղոչաղ ասլան, օտող, տու էլ մին մըեծ տղա, ասլան բալասի, ղվաթավ, ինքյըտ էլ օտող:

Սկսում ըն հոնձ անելը: Հա՛լա՛ մին պատառ հոնձ ընելու, նղանում ըն, տղան ասում ա,- Ա՛պա նըղացալ ըմ, եք դինջա՛նա՛նք:

Նստում ըն, թա դինջա՛նա՛ն, եշում ըն, տըեսնում արտան հա՛լա՛ մին թիքյա՛ յըն հընձալ:

- Ա՛պա, բա խե՞ իստի խըրեգյ ընք հընձալ:

Հա՛րն ասըմ ա.- Ապան մատաղ, պա դե յըես մին պառավ մարթ, տու մին կուճո՞ւր խոխա, հունց շատ հնձի՞նքյ:

## 106.ԵՐԳՑԻՆՔԻ՝Ն ՎԵՐ ԸՆԳԱ՝Ծ ԽԱՆՉԱԼԸ

Իլա՝լ ա, չիլա՝լ մին կնեգյ, մին տղա: Էտ կնեգյը շատ քյա՝սիբ ա իլա՝լ: Էտ կնգանն ըն տվալ ո՛ւրա՝նց կյուղին տավարը, վեր տանե ո՛ւրա՝ն տղեն նհետ պահե: Մարը նան տղան տավարը ըսկսալ ըն պահիլը: Մին օր էլ տավարը պըհելիս երգյինքյը մթնալ ա, կըծկեծին ա ըրալ, ըրուտացալ, շըմփշըմփալի թոռը նի կա՝լա՝լ, լիա՝ ասիս էս սիաթես աշխարքը փուլ ա կյլա՝կան:

Էտ տղան տավարը թողըմ ա դո՛ւզո՛ւմը, ինքյր նի մննում մին քարու տակ: Վեր կըծըկրակ ա անում, մթնվում, երգյինքան մին վըեսկե խանչալ ա եր ընգնում, էտ տղեն կողքեն տնգվում: Տղան էտ խանչալը յոր ա օնում, տանում տոնը: Քշերը տրան ա՝րա՝զ ըն տամ, վեր.«Էտ խանչալն օնե քըռասուն կյումշի օժ, կկապիս մեշկիտ, հենց կանիս, վեր մին մարթ էլա գյիդա՝ վեչ: Էտ խանչալը քու մեշկատ վեր եր կալին, տու մեռած ըս»: Էտ օրանը ետը տղան տըեռնըմ ա մին ջանավար, տա մին կյումաշը մին ծեռքավն ա խըղըցնըմ: Մին օր էտ տղան քնենքյ ա անըմ, ասըմ ա՝ օժը կա, ամմա հարկավեր ա մին փեշա՝կ սվերիլ:

Տավարը տամ ա մորը, վեր պահե, ինքյը եր կեննում ո՛ւրա՝նց շենան տո՛ւս կյամ, թա՝ տըեսնա հի՞շտեղ ա ա՝մա՝լ կյամ մին լա՝վ փեշա՝կ սվերած, լա՝վ էլ ապրած:

Ընգո՛ւմ ա հղեն քյնո՛ւմ: Շատ ա քյնո՛ւմ, թա՝ խըրեգյ, էտ ինքյն ա գյո՛ւղո՛ւմ : Օխտինջի օրը մին հըղցավ քյնա՝լիս, ո՛ւրա՝ն նման մին ջա՝հիլ ա ջիո՛ւմ: Ըտահանք ո՛ւրո՛ւր անա հըրցըփորց ըն անըմ, էս տղան ասըմ ա, վեր ինքյը մին եթիմ տղա յա, օնե մինա՝կ մին մար, ո՛ւրա՝ն էլ օնե քըռասուն կյումաշու օժ: Քյնա՝մ ա, վեր մին լա՝վ տըեղ քթենա, փեշա՝կ սվերե, ապրե:

Էն մինն էլ ասըմ ա, վեր ինքյն էլ ծովումը ասեղ կը քթենա, ինքյն էլ ա օզում իտի մին տըեղ քյնի: Ասըմ ըն՝ մին չինինքյ, էրկու ինինքյ, մին տըեղ քյնինքյ: Միհենգյ էլ էրկու հոքավ ընգնըմ ըն հղեն, քյնո՛ւմ:

Շատ ըն քյնո՛ւմ, խըրեգյ ըն քյնո՛ւմ, ո՛ւրա՝նք ըն գյուղում, էլիա՝ մին հըղըցում մին տղա յա ջիո՛ւմ: Էլիա ըսկսում ըն ամեգյը ո՛ւրա՝նց գյիդա՝ցածը ո՛ւրո՛ւր ասիլը: Էս նոր տղան էլ ասըմ ա, վեր ինքյը ասթխագետ ա, վեր ասթխը ծլամ ա, գյուղում ա հո՛ւր ասթխ ա, հո՞ւ վա մեռալ: Ըստահանք ո՛ւրո՛ւր նաղլ ըն անըմ ո՛ւրա՝նց թաքուն-աշկարը: Էտ տղան էլ ասըմ ա, վեր ո՛ւրա՝ն մաշկեն մին խանչալ կա, վեր յոր օնին, ինքյը մեռած ա: Ըտրանք իրեքավ ըխպըրանում ըն:

Շատ ըն քյնա̈մ, խըրեգյ ըն քյնա̈մ, հըսնում ըն մին քաղաք, տըեսնըմ ըն, վեր էտ քաղաքը շատ կյեղեցիկ, ղա̈շա̈նգյ ա, ամմա մաչին մարթ, սա̈ս, սեմո̈ւր չիկա: Շատ ման կյալանը ետը քյնո̈ւմ ըն նի մըննում մին տոն, տըեսնում մին հո̈ւրի-փա̈րի ախչիգյ:

Էտ ախչիգյը ըտրանց ասըմ ա.- Տուք մղափուն ըք, քյեցեքյ ըստեղան, թա̈ չէ, էս սհաթըս օշափը կյալու ա ծըեզ ղինա̈ր-ղինա̈ր անե:

Էտ քըռասուն կյումաշու օժին տար տղան ասըմ ա.- Տու վախել մեր:

Ո̈ւրա̈ն էրկու ախպերը կյողը ա կցնում, ինքյն էլ ըխճկանը քշտեն նստում, ըսկսում զըուցը: Մին էլ, ըհը՛, տըեսնում ըն մին ծառ ջնաղեն տըա̈ծ օշափը եկու:

Լհա̈ վեր տանը մղակավը նի մտավ, տըեսավ էն տղեն թա̈ չէ, խիլյա̈ ուրխացավ, համ էլ թա̈.- էս հի՞նչ լա̈վ պեն ա, հեսա մին սուտկա յա շոռ ըմ կյամ, մին պեն չըմ քթենում, տու մի ասիլ, վըերսը եկած, տանը նստած ա, յըես էլ բեյխա̈բա̈ր:

Վերչը էտ քըռասուն կյումաշու օժի տա̈ր տղան, մին էլ օշափը կոխըլ ըն կենում: Էտ տղան օշափեն վեր տափեն ա կյամ, ծենը ծունը կտրըմ ա: Տղան ըտրան տանըմ ա, ռա̈ղ անըմ: Ընղետանը ախպերքյը տո̈ւս ըն կյամ: Էն ծովըմը ասեղ քթենող տըղեն թողըմ ըն ըխճըկանը քշտեն, ո̈ւրա̈նք քյնո̈ւմ:

Հըսնըմ ըն մին շըհա̈ր, տըեսնում էլհա կարքին-սարքին շըհա̈ր ա, ամմա մեչին մարթ չիկա: Էլհա քյընըմ ըն նի մննում , տըեսնում մին տոն, մին ախճիգյ:

Ախճիգյն ասըմ ա. – Շո̈ւտ արիքյ, քյեցեքյ, թա̈ չէ օշափը կյալու յա, վա՛յ ծըեզ:

Էն քըռասուն կյումաշու օժ տվող տղան ասըմ ա.- Վեչինչ, մըեզ մին պեն չի ինիլ:

Էն աթխազետ ախպորը կյողը ա կցնում: Օշափը կյամ ա: Ըսկըսում ըն կոխըլը կենալը: Կոխըլը կենում վախտը էտ տղան հախտըմա, օշափեն տփըրկցընըմ, ըսպանըմ: Աթխազետ տղեն էլ թողում ա էտ ըխճկան քշտեն, ինքյը քյնա̈մ:

Շատ ա քյնա̈մ, խըրեգյ ա քյնա̈մ, հըսնըմ ա մին սո̈ւրո̈ւն ղա̈շա̈նգյ շհա̈րի: Տըեսնըմ ա մին մարթ էլա կա վէչ, նի յա մնում մին տոն, էլհա մին մինա̈կ ախճիգյ ա պտահըմ: Էտ ախճիգյը լոխճան ղա̈շա̈նգյ ա ինըմ, համ էլ խո̈լո̈ւնք:

Էտ տղեն ախճիգյն ասըմ ա,- Տո̀ւս եք, թա̀ չէ օշափը կկյա, քյըեզ օտե:

Օշափը կյամ ա, տըեսնում էտ տղան նստած:

Ասըմ ա.- Դէ վեր եկալ ըս ըստեղ, գյիդա̀ վեր իմ էրկու ախպորս սպանալ ըս, միենգյ կոխլ ընք կննական, վեր հիտեցե, քյըեզ ըստըկցըննական ըմ:

Տասնըհենգյ սութկա կոխլ ըն կենում: Քըռասուն կյումաշու օծի տա̀ռը հախտըմ ա օշափեն, սպանըմ: Ետնան էտ ըխճըկանը նհետ փսակվըմ, ո̀ւրա̀ն հետե լա̀վ ապրըմ:

Էտ տղեն երգյիրան մին թաքավեր էտքանը գյուղըմ ա: Օզըմ ա, վեր էտ տղեն կնեգյը տանե ո̀ւրա̀ն հետե ո̀ւրա̀ն թաքավերոթունը:

Ասըմ ա.- Հու վեր կարե էտ ըխճկանը պիրի, քաշավը մին վըեսկե յըմ տալու: Վեչ մինը վեզ չի օնըմ:

Մին պառավ վեզ ա օնըմ:

Պառավը կյամ ա էտ տղեն տոնը ասըմ, վեր թողին ղարավաշոթուն անե: Տղեն կնեգյը օզում չի:

Տղան ասըմ ա.- Ցըես իմ մոր մետս ըմ քցում, էս կնզանն ըմ նմընցնըմ, թող կյա:

Էտ պառավը կյամ ա ըսկըըմ կործ անիլը:

Մին օր պառավն ասըմ ա. Տու մարթիտ սեկրետը գյուղում ը՞ս:

Կնեգյն ասըմ ա.- Չէ՛:

Պառավըն ասըմ ա.- Պա տուք հո՞ւնց մարթըկնեգյ ըք, վեր ո̀ւրո̀ւր սեկրետ գյուղում չըք:

Կնեգյն ասում ա. – Ցըես գյիդա̀լ պիտիմ:

Ո̀ւրո̀ւգյո̀ւնը, վեր մարթը կյամ ա տոն, կնեգյը օնքերը ո̀ւրո̀ւր ա տամ: Մարթը հըրցնում ա պաճառը:

Կնեգյը հըրցըփորց ա անըմ մարթան, ասըմ ա. – Քու սեկրետըտ գյուղում չըմ. Ըտրա հետի էլ ըստի յըմ:

Մարթն ասըմ ա. - Իմ սեկրետըս վեչ մինը գյիդըմ չի՛, մինա̀կ յըես ըմ գյո̀ւղո̀ւմ, դե քյըեզ ասըմ ըմ , հենց ըրա օրիշ գյիդա̀ վեչ:

Ուռութանան պառավը եր ա կենում էտ կնզանան հըրցընում մարթին սեկրետը: Ախճիգյն ասում ա, վեր ո̀ւրա̀ն մարթին մեշկումը մին դա̀մա̀ կա, տա ընդրա օծն ա: Հու յոր օնե մեշկան, դա̀ստի տղան մըռնելու յա:

Պառավը քշերը դա̀մա̀ն հանըմ ա, տանըմ քցըմ ծովը: Տղան մեռնըմ ա:

Մին էլ մին թիլիսիմ ա սարքում ծովեն ղրաղեն, միչև էն թաքավերեն երգյիրը։

Ետավ կյամ ա տոն, էն կնգանն ասում.- Քյնանք ծովեն ղրաղը։ Հենց էտ վախտ թլիսիմը էտ տղեն կնգանը տանում ա էն թաքավերեն երգյիրը։

Խա̀բա̀րը տանք ախպորը։

Մին ուրուշյուն աթխագետ ախպերը ըրա̀զումը տեսնում ա, վեր ախպորը աթխը ծլլաց, վեր ընգավ։ Գյիդա̀ց, վեր ախպերը մեռավ։ Տա քյունըմ ա ծովումը ասեղ քթենող ախպորն ասըմ, վեր իստի պեն կա։ Ըտահանք գյիդում ըն, վեր խանչալը եր ըն կալալ, քցա̀լ ծովը։

Ասեղ քթենող ախպերն ասում ա. -Յըես քյնա̀մ ըմ ծովըմը ման կյամ։ Էրկու սուտկանը ետը վեր տուս եկե, եկե, վեր տուս չեկե, գյիդա̀ վեր պեն ա պտահալ։

Էրկու սուտկանը ետը քթա̀նում ա ղա̀մա̀ն մին ծուկնի մեշկի ղարխ իլա̀ծ։ Եր ա օնում, պիրում։ Պիրում ա կապում ախպորը մեշկը։

Ախպերը եր ա կենում, ասում.-Պա՛հ, էս հի՞նչ շատ ըմ քոն իլա̀լ։

Ըտահանք նաղլ ըն անում պըտահածան։

Տղան ասըմ ա.- Լավ, տուք քյե՛ցեքյ ծեր տեղերը, յըես քյննա̀կան ըմ, կնգանս քթենամ։

Քյունում ա հա̀մա̀ն տեղը, իիշտեղ վեր կնեգյը կյողլ ար կացալ։

Էտ տըղան քյնում ա մին պըռավու տոն, հըրցնում ըտեղի թա̀զա̀ խբըրներեն անա։ Պառավն ասըմ ա, վեր թաքավերը իստի մին կնեգյ ա պերալ։ Կնեգյը օզում չի թաքավերին նհետ ապրե, ըտրա հետե էտ կնգանը դուսաղ ա ըրալ։

Տղան ասըմ ա.- Պառավ, կկարի՞ս էս մուտանան տանիս տաս ուրա̀ն, համ էլ ասիս, վեր ուրուշյունը սհաթի օխտին կյլական ըմ քյըեզ տանիմ։

Էտ վախտը մին քաչալ ըտեղ ա իննում, էտ լօխ լըսում ա, քյընում ա յոր օնում էտ ըխճկանը, ասըմ.- Մարթտ յըես ըմ, քյնա̀նք քոն իինիքյ։

Քոն ըն իննում։ Քաչալը ըխճկանը կլ̀խը կապում ա ուրա̀ն փեշկան, հանցու փախչի վեչ։

Ախճիգյը տեսնում ա, վեր տա ուրան մարթը չի, փեշկը կտրում ա, փախչում, կյամ մին երգյիր, տեսնում թաքավերը մեռած։ Թաքավերեն ղուշը պեց ըն թողում, հուր կլխե վըեննը կենա ընդրան տինին թաքավեր։ Ղուշը կյամ ա էտ ըխճկանը կլխեն կաղնում։ Պուրում ըն էտ ըխճկանը

թաքավեր ճոկըմ: Էտ թաքավերը ոˆւրա̈նց կլխավեր քյոˆւչին յրա մին ախ-պոˆւր ա շինում, ոˆւրա̈ն պատկյերը քաշիլ տամ, տամ ըտեղատ, ղարավուլ-չոցը ասըմ. -Հու վեր ըտեղավ քյնալիս ախ անի, փռնեցեքյ պիրաք կոշտս: Մին օր քաչալը կյամ ա պատկերը տըեսնըմ, ըսկսում ուշունց տալը: Ըտրան փռնում ըն, տանում դուսաղխանան: Մեհետ էլ մին ջա̈հիլ տղա յա կյամ, պատկերը տըեսնում: Ըտեղ ըտրա օշը տանում ա: Ըտրան էլ ըն պիրում թաքավերին կոշտը: Թաքավերը երկունեն էլ խուսուցընըմ ա, ըտրանց դիվանը անըմ:

Քըչալեն ասըմ ա. - Խե՞ պատկերը տեսնալավ ոˆւշոˆւնց ըս տվալ:

Քաչալն ասըմ ա. -Մեհետ էն ըմ իլա̈լ մըեր քըղաքումը, իստի մին պառավ եկալ ա, էս հա̈մա̈ն ըխճկանն ասալ, վեր մարթըտ կյալու յա, սհաթի օխտին տոˆւս կկյաս, հանցու մարթըտ կյա, տանե: Ցըես քյա̈ցալ ըմ խա̈փա̈լ, պիրալ իմ կոշտս: Ինքյն էլ ինձ ա խա̈փա̈լ:

Կյամ ա էտ տղեն հըրցնում.- Խե՞ էն պատկերը տեսնալավ օշտ տարալ ա:

Տղան նաղլ ա անըմ ոˆւրա̈ն քաշածը, ոˆւրա̈ն կլոˆւխը եկածը: Ախճիգյը դա̈ստի գյուղոˆւմ ա, վեր ոˆւրա̈ն մարթն ա, ոˆւրա̈ն ժողովրթեն իմաց ա տամ, վեր թա̈ թողըմ ըն ոˆւրա̈ն մարթը թաքավեր ինի, կենում ա ընդեղ, թա̈ թողում չըն, քյընում ա մարթին նհետ: Ժողովուրթը ռազի յա կենըմ: Ըտրանք էրկուսավ տա̈ռնըմ ըն թաքավեր-թաքուհի. Ընդրանա ետը ըսկըսում ըն լա̈վ, սէրավ ապրիլը:

Ընդրանք հըսին ոˆւրա̈նը մուրազեն, մունք էլ հըսնինք մըեր մուրազեն:

107.ՕԽԾԸ

Ժուկավ ժամանակավ իլա̀լ ա, չիլա̀լ մին մարթ, մին կնեգյ: Տահանց օխտը ախճիգյ ա իլա̀լ: Տահանք վեչ մին ըպրուստու տար չըն իլա̀լ:

Էտ մարթը մին ո̀ւրո̀ւգյո̀ւն շատ ա քնենքյ անըմ, ասըմ ա.-Ա՜խ, աստուծ, հի՞նչ կինի, վեր եր կենամ, տըեսնամ արտըս փսած:

Էքյսի օրը եր ա կենում, տըեսնում արտը փսած:

Կյամ ա տոն, ո̀ւրո̀ւգյո̀ւնը, վեր թեքյ ըն ընգնըմ, թա̀ քոն ինին, ասըմ ա.-Ա՜խ աստուծ, հի՞նչ կինի, եր կենամ տըեսնամ արտըս հսած:

Եր ա կենում, տըեսնում արտը հսած:

Մին օր էլ կյամ ա, ասըմ.- Ա՜խ, աստուծ, հի՜նչ կինի, եր կենամ, տըեսնամ արտըս հինձած, թակած, հազըր:

Քշրիանա եր ա կենում, տըեսնում արտը հինձած, փընջած, կա̀լո̀ւմը թակած, կյո̀ւտա̀ծ, մին թե մաչին տընգած, մին շահմար օխծ թյինն կոթավը զիրավ տված:

Էտ մարթը վեր տըեսնըմ ա, օխծը ինսանու լեզվավ խօսում ա. ասըմ ա.- Հի՞նչ կտաս էս ցորնեն մաչան վեր կյամ, տանիս հալալ օտիս:

Մարթն ասըմ ա.- Հինչո՞ւ օզիս:

Օխծն ասըմ ա.- Օխտը ըխճկանատ մինը ինձ տոր:

Հա̀րը ետ ա տըեռնըմ, կյամ տոն: Էտ պենը վեր ըխճկորանցը ասըմ ա, վեչ մինը համոզվում չի:

Լոխճան պուճուր ախճիգյն ասըմ ա.- Ապա, յըես կքյինիմ, թա̀քյի դա̀նը քյըեզ տա, տանիքյ օտիքյ:

Օխծը ախճիգյը յոր ա օնում, տանում:

Քյինալիս, օխծը ասըմ ա.- Տու քարեն յրա նստե, յըես կըամ ըմ, վեր տրաքոց ըսկանաս, վախիս վեչ:

Օխծը քյնա̀մ ա քարեն քմակեն տրաքում, մին լա̀վ տղա տեռնում, կյամ տեսնում ըխճկանը պռոշը ճաքած:

Տղան ասըմ ա,- Պա ըսեցե վո՜ւչ, վախիս վո՜ւչ:

Ախճիգյը տազ ա անըմ: Մին տարե կենում ըն, մին խոխա յա ինո̀ւմ:

Ախճիգյըն ասըմ ա.- Ինձ տար իմ հա̀րա̀նց տոնը, ըեերտս իմ հոր, ի մոր, իմ քվորցս օզըմ ա:

Տղան ասըմ ա.- Մին ամսումը թա̀ կարիս մին պոլիգյ ըրտըսունքավ լցնիս, մին ճոխտ ըրկաթե չմոշկ պուք տաս, քյըեզ կտանիմ, թա̀ չէ, տանիլ չը՜մ:

Ախճիգյը լա̀ց ա ինո̀ւմ, լաց, խրեզյ ա մնըմ, աշկերը քռուցնէ:

Էտ վախտը մին պառավ կնեգյ տըեսնըմ ա, ասըմ.- Այան մատաղ քյըեզ, խե՞ լա̀ց ըս ինո̀ւմ, եր կալ մին հափուռ աղ քցի պուլիգյին ճրին մաչը, էտ ըրկաթէ տրխնետ էլ տիր տռանը տակեն, տոռնը պեցըհոփ ըրա, պուկե:

Ախճիգյը ըտի յա անըմ: Տղան տանըմ ա հա̀րա̀նց տոն: Քյնամ ա տըեսնում քվերքը տանը մնացած: Էքյսը քյո̀ւնո̀ւմ ըն կյետը լվասկ անին: Մըեծ քո̀ւրը կուճի քըվորը կուփէ յա տամ, քցո̀ւմ ճո̀ւրը, ընդրա շորերը կյենըմ, խոխան խտտում: Էտ խոխան շատ ա լա̀ց ինո̀ւմ, ծովեն դրաղան մին ղարղու յըն կտրում, թո̀ւթա̀գյ շինո̀ւմ: Վեր ածըմ ըն, խոխան տազ ա անում, վեր կտրում ըն, խոխան ըսկըսըմ ա լա̀ց ինիլը: Էտ խորթ մարը թո̀ւթա̀գյը քցո̀ւմ ա կրակը, էրում, մոխերը տեն ածում: Մոխրեն տրեղը մին չինարի յա փսնում, խոխան վազ ա տամ, քյինո̀ւմ ծառեն տակեն նստում:

Էտ կնեգյը հո̀ւնց անում ա, ծառը կտրել ա տամ: Կտրելիս մին տաշեղ լոք ա տամ, ընգյնըմ պռավեն հուրթնը վեր, տեռնըմ մին ախճիգյ, փրդին քմակեն կյողլը կենում: Վեր պառավը տանան տո̀ւս ա կյամ, տաշեղը աղճիգյ ա տըեռնում, պռավեն տոնը սրփում, թիմըզցնում:

Պառավը կյամ ա, զըմանըմ, հըրըվններան հըընում, թա̀.- Էս հի՞նչ պեն ա:

Հըրըվըննին ասըմ ըն.- Բուսը պահէ:

Մին օր պառավը տանը կյո̀ղլ ա կենում, տըեսնում մին տաշեղ էկու, տանը մաչին տըրաքից, ախճիգյ տըեռավ, տոնը սրփից, թմըզցըրավ:

Էկու, թա̀ կլըվի տաշեղ տըեռնա, պառավը փռնից, ընդետանը հըցրավ, ասից.- Տու հի՞նչ իլլա̀թ-միլլա̀թ ըս, վեր էկալ ըս իմ տոնս:

Ախճիգյը ասից.- Ցըես փլան տղեն կնեգյն ըմ, կլո̀խս ըստի օյին ա էկալ:

Մին քանէ ամես պառավը էտ ըխճկանըտ պահըմ ա: Օրերան մին օր էն հա̀մին տղեն տանը պըռթի միջի յա ինո̀ւմ: Էտ ախճիգյն էլ ըն տանում:

Տղան կյամ ա մըջըրվերեն մաչին վըեննը կենում, ասըմ.- Բազար ըմ քյինո̀ւմ, հո՞ւ վա հի՞նչ օզում, առնիմ, պիրիմ, տամ:

Կնանեքյը մինն ասըմ ա ինձ հետէ մին մուտանա պեր, մինը թա̀ հիլի պեր, մինը՝ ասեղ:

Վեր նոբաթը կյամ ա էտ ըխճկանը, ասըմ ա.- Ցըես խնթրըմ ըմ, վեր ինձ հետէ մին մժմա̀հի, մին դեգյուն, մին նոռնը, մին տենակ պիրիս:

Վեր էտ ախճիգյը տի չի ասըմ, էտ տղեն խոխան կյամ ա, էտ ըխճըկանը գյո̈ւրգյո̈ւմը նստում: Տղեն հղե յա ինըմ, քյընըմ բազար, ամման հինչան ինքյ օնում, պիրում: Վեր կյամ ա, լոխ մջիվերնին ուրխանում ըն, պիրըմ ա ամեգյը ո̈ւրա̈նց զակազը տեղաց անում, էտ ըխճկանենն էլ տամ ըն ո̈ւրա̈ն:

Ախճիգյը օթախեն մաչտեղը նստըմ ա լոխ կըլխավն անց կացածը նաղլ անըմ, ասըմ.- Ա՛ մժմա̈հի, տու շոռ տո:- Շոռ ա տամ: - Ա՛ նոռնը, տու ճքճքոտվի:- Ճքճքոտվում ա:

- Ա՛ դեգյուն, տու պար եք:- Պար ա կյամ:

- Ա՛ տենակ, նիմըտ սըերտս:

Վեր տենակը լօք ա տամ, թա նի մննե սըերտը, խոխան կոթան փոնըմ ա, էն քուրը ասըմ ա.- Ա՛ թաղված, խե՛ թողում չըս, նի մննե սըերտը:

Ըտըեղ լօխ կլո̈խ ըն ընգյնում, վեր էտ քո̈ւրն ա ըտրան կյետը քըցա̈լ, համին էտ քո̈ւրը: Էտ քվորը ծիյին հա̈քյվա̈ն կապում ըն, քաշ՛քաշ անըմ, էտ ախճիգյը տամ էտ տղեն, ո̈ւրա̈ն նշընածեն: Խոխան էլ յոր ըն օնում, տանըմ ո̈ւրա̈նց տոնը, ո̈ւրո̈ւր նիհետ սերավ ապըրըմ:

## 108.ԹԱՔԱՎԵՐԻՆ ԱԽՃԻԳՅԸ ՆԱՆ ՈՒՐԱՆՑ ՆՈՔՅԱՐԸ

Ինուլ ա, չինուլ շատ քյանիք մին մարթ: Էտ մարթին ինուլ ա հենգյ խոխա: Էտ մարթը կարում չի խոխեքյը պահի: Տղորցան մինը տանում ա, վեր քաղաքումը նոքյար տա: Մին թաքավերի տան էտ տղան նոքյար ա տըեռնում: Էտ թաքավերին ինուլ ա մին ախճիգյ: Էտ տղան շատ ըտեղ մնալավ, թաքավերեն ախճիգյը սիրում ա էտ տղեն, ամմա հարը գյուղուլ չի: Էտ ախճիգյը վեր մծանում ա, հարը օզում ա մարթու տա, վերքան հարուստու տղերքյ ըն կյամ, վեր էտ ըխճկանը օզին, վեչ մինին քյինամ չի:

Ախճիգյըն ասըմ ա,- Ցըես քյինամ ըմ մեր նոլքյարեն:

Թաքավերը, վեր ըսկանըմ ա, հրամմայում ա, վեր էրկուսին էլ քաղաքան տուս անին: Մորը մեխկն ա կյամ, ըխճկանը թաքուն իրեք հարուր մանեթ փող ա տամ:

Էտ ախճիգյը նան տղան շատ ըն քյինամ, թա խրեգյ, վերչը հսնըմ ըն մին շեն: Էտ շենումը մին տան ապրում ըն:

Մին քանի օրանը ետը ախճիգյը էտ տղեն ասըմ ա.- Խե՞չըս քյնամ ըշխադանք անըմ:

Տղան ասըմ ա.- Փող չիկա, տերտակ ջուբավս շտե՞ղ քյնամ:

Ախճիգյը մորը տված փողան հարուր մանեթ ա տամ, ասում. - Քյնա ըշխադանք ըրա:

Տղան եր ա կենըմ, քյնամ:

Շատ վեր քյնամ ա, նղանըմ ա, հըղըցըմը մին տեղ նստում ա, վեր մին պատառ դինջանա: Տըեսնում ա, մին մարթ ա կյամ:

Էտ մարթն ասըմ ա.- Թո՞րն ըս քյնամ:

Էտ տղան պադասխանում ա, վեր ըշխադանքի յա քյնամ:

Էտ մարթն ասում ա.- Հի՜նչ կտաս, վեր մին խոսկ սվըրցնիմ քյըեզ:

Էտ տղան ասում ա.- Վեչ մին պեն չօնիմ, մինակ հարուր մանեթ փող օնիմ:

Էտ մարթը փողը յոր ա օնում, ասըմ.- Վեր քյնաս տեսնաս մին տեղ մին տղա ախճիգյ ա օզում, վեր քյզանա հրցնե, թա. «Վե՞րն ա լավ», կասես, վեր վերը աշկըտ փռնում ա, էն էլ լավն ա:

Էտ տղան ետ ա տեռնում, կյամ տոն: Կնեգյը հրցընըմ ա, թա, - Խե՞ եկալ ըս.

Տղան պադասխանում ա, վեր հըղըցումը մին խոսկ ա սվերալ եկալ:

Մին քանի օրանը ետը կնեգյը հա̈րո̈ւր մանեթ էլ ա տամ, աըըմ. - Քյնա աշխադանքի։

Էտ մարթը փողը յոր ա օնում, քյնամ։

Վեր նղանըմ ա, հըղըցումը նստում ա, թա դինջա̈նա̈։ Էլիա մին մարթ ա կյամ, հըցնում.- Թո՞րն ըս քյնամ։

Էտ տղան ասում ա.- Քյնամ ըմ աշխադանքի։

Մին էլ ա հըցնըմ.-Հի՞նչ կտաս, վեր մին խոսկ սվըցնիմ քյըեզ։

Էտ տղան աըըմ ա.- Վէչ մին պեն էլա օնիմ վէչ, մինա̈կ հա̈րո̈ւր մանեթ փող օնիմ։

Էտ մարթը փողը յոր ա օնում, ասում.- Վեր քյնաս տըեսնաս մին տեղ մին կռէվ, յա քու տանըտ մին պեն պտահած, կնեգյըտ մինին նհետ խուսելիս, կասիս. «Համփերոթունը զյանք ա»։

Փողը տալանը ետը էտ տղան կյամ ա տոն։

Կնեգյը հըցընըմ ա.- Մհե՞նգյ խե եկալ ըս։

Մարթն ասում ա.- Հըղըցըմը մին խոսկ ըմ սվերալ, փողը տվալ ըմ, խոսկը առալ, տրա հետի էլ եկալ ըմ։

Էրկու օրանը ետը կնեգյը վերջի հա̈րո̈ւր մանեթը տամ ա ըտրան, աըըմ.- Էս դո̈նում քյնա՛, տես հի՞նչ ա տըեռնըմ։

Մարթը քյնամ ա, քյնամ, շատ ա քյնամ, թա̈ խըեգյ, հըղըցըմը պտահըմ ա մին օղտերի քյա̈րվանու։ Քյնամ ա ընդեղ։

Ընդրանցան մինը էտ մարթին աըըմ ա.- Ըստեղ մին վեր կա, հո̈ւրը քցըմ ընք, թա̈ ճուր հանի, էլ կյամ չի, վեր տու քյնա̈ս, էս կոլան լցնիս, պիրիս, էս օղտը ո̈ւրա̈ն պեռնավը քյըեզ ըմ տըլական։

Էտ տղան կոլան յոր ա օնում նի մննըմ վերը։ Վեր հսնում ա վերին տակը, տըեսնում ա մաչին էրկու ախճիգյ նստած, մինը մինին անա ղաշանգյ, մին օշափ էլ ընդրանց քշտին քոն իլա̈ծ։

Էտ ըխճկերքը վեր տըեսնում ըն էտ տղեն, ասում ըն.- Շուտ ըրա կոժըտ լցեր, տո̈ւս եք, թա̈ չէ, օշափը վեր եր կացավ, քյըեզ թիքյա̈-թիքյա̈ յա ըննական։

Տղան լցնըմ ա, թա̈ տո̈ւս կյա, օշափը եր ա կենում, աըըմ.- էս հի՞նչ մրթավետ ա։

Տես ա եշում, տեն հըթոթում, վըտվետում, տըեսնըմ էտ տղեն, աըըմ.- Եք ըստեղ։

Տղան քյնամ ա, օշափը հրցընըմ ա, ասում.- Վեր մին քանի հարց տամ, գյիդա՛ս, կոլատ ճրավ լըցընլական ըմ, քյըեզ տամ, թա՛ չէ, քյըեզ ուտլական ըմ:

Օշափը ասըմ ա.- էս ըխճրկերանցան վե՞րն ա լավ:

Տղան մետըն ա քըցըմ ո՛ւրա՛ն սվերած խոսկերքը, ասում.- Վերին աշկըտ փըռնըմ ա, էն էլ կյեղեցիկ ա:

Օշափը կոլան լցնում ա, իրեք հատ էլ նոռնը տամ էտ տղեն, ասըմ.- Տո՛ւս եք քյինա, գյիդա՛ցիր:

Էտ տղան վեր տո՛ւս ա կյամ, խոջան ընդրան մին օղտ պեռնած կտոր ա տամ: Էտ տղան կյամ ա տոն, պերըմ ա թողըմ տանը, հանցու մին էլ քյնա՛ աշխադանքի: Թողում ա, քյնա՛մ:

Շատ ա կենում, թա խրեզյ, վերչը մին օր աշխադանքի տեղան էտ մարթը կյամ ա տոն, վեր կյամ ա, տըեսնըմ ա ո՛ւրա՛նց վըեղե տանը տըեղը մին լա՛վ քարե պալատ շինած: Հըրցընըմ ա շենին խխոցան, ընդրանք ասըմ ըն, վեր տա ո՛ւրա՛ն տոնն ա: Փլա՛քյա՛նա՛վը վեր պիցրանըմ ա բալկոնը, ակուշկավը տըեսնում ա մին կուճուր խոխա պոլեն յրա խաղ ա անում, ամմա ո՛ւրա՛ն կնեգյը էլ մին մա՛րթու նհետ նստած խոսում ա: Էտ տղան օզում ա ակուշկավը քարավ թխե, էն մարթին սպանե, մին էլ ասըմ ա. «Համփերոթունը գյանք այ»: Նի յա միննում տոն, կնեգյը մարթին պերած աշխադանքը տղվըրելան եսը կյամ ա տոն, մարթին ծանոթացնում էն մարթին նհետ, թա՛ տա մեր կնքավերն ա, սա էլ մեր խոխան:

Մարթը կնգանը անա հրցնում ա.- էս տոնը պա հի՞ նչավ ըս շինալ:

Էն էլ ասում ա.- Էն վեր իրեք նոռն ըս պերալ, մեչը պռլյանդ, ալմաստ քարեր ա իլա՛լ, ընդրանավ ըմ շինալ:

Վերչը տրանք վեխճար ըն ինքյ օնում, ըխճկանը հորը նան մորը ղոնաղ կանչում: Փայտոն ըն սարքում, ղարկում ընդրանց հետան:

Ըխճկանը հա՛րը, մարը եր ըն կենում, կյա՛մ, քյեփ անըմ, քյինա՛մ: Էտ մարթն էլ ո՛ւրա՛ն կնգանը նան խուխեն նհետ ապրում ա բախտավեր, անցավ, անդա՛րդ:

# ՀԱՎԵԼՎԱԾ

## 1.ԳՅԱՆՔԻՆ ՕՐԵՐԸ

Շուշվա Ղալին դա̀րզի Ալիքսանին տոնը մին ղոնաղ ա կյամ:

Ալիքսանը էտ ո̀ւրո̀ւգյո̀ւնը լա̀վ պաղրաստոթուն ա քաշըմ, մին քանի ղոնաղ էլ ընդրա կըլխեն կանչըմ, պատեվ տամ:

Էտ ղոնաղին աշկը փըռնըմ ա էտ Ալիքսանին հըրեվանեն կընեգյը: Ըտրա նըհետ սիլի-բիլի յա անըմ, էտ օրը էտ ղոնաղեն հետե լա̀վա անց կըենըմ:

Ղոնաղը չամադանան մին ղալին, հաստ տետրակ ա հանըմ էտ օրը կյիրըմ:

Ալիքսանը տըեսնըմ ա, ասըմ.- Էտ հի՞նչ ըս կյիրըմ:

Ղոնաղըն ասըմ ա.- Գյանքիս օրերըն ըմ կյիըըմ: Էտ ա էտքան զըեռ մարթ ըս, գյուղում չը́ս, վեր մարթիս գյանքըմը լոխ օրերը չի լա̀վ անց կըենըմ: Իմ գյանքիս լոխճան լա̀վ օրերը քառասունըիրեքըն ա իլա̀լ: Էս օրըս էլ կըտըեռնա քառասունըչորսը:

Ալիքսանը ճաղար աշկերը չըռած ասըմ ա.- էտ ղո̀ւզ ը՞ս ասըմ:

Ղոնաղը թա̀.- Բա հի́նչ… Մընացած օրերը ո̀ւրո̀ւր նըման ըն:

- Դե վեր իտի յա́, իմ գյանքըմըս մինա̀կ մին լա̀վ օր ա իլա̀լ, էն օրը առաչի ղո̀նըմը պա̀չա̀լ ըմ իմ սիրելի Թա̀զա̀գյո̀ւլիս:

Ղոնաղին ասըմ ա,- Հա́, Ալիքսան, կյիրի́, կյիրի́, վեր էս աշխարքըմըս մին օր ըս ապրա́լ:

## 2.ԽԼԵԶՆԸ

Ինո՞ւմ ա չինո՞ւմ էրկու ախպեր ըն ինո՞ւմ: Մեծ ախպերը շատ խելունք ա ինո՞ւմ, ամմա պուճուրը՝ պըել: Ըտրանք էրկուսն էլ ո՞ւրո՞ւր քըշտի յըն ապրում:

Մին քանի տարի ընցնելանը ետը պըել ախպերը մեծ ախպորն ասում ա.

- Էլ յըես քյըեզ նհետ օզում չըմ ապրիմ:

Մեծ ախպերը ճարը կտրած, տո՞ւս ա կյամ, սաղ ըլա՛ծ-չըլա՛ծը ինքյն ա յոր օնում, մինա՛կ մին եզնը պըել ախպորըն ա տամ:

Օրերան մին օր էտ կուճի ախպերը յոր ա օնում եզնը, վեր տանի ծախի բըզարումը: Ծմակեն մաչավը քյնա՛լիս մին խլեզն ա տո՞ւս կյամ: Էտ խլեզնը վըենն ա կենում, եշում էտ մարթին:

Պըելը մուտանում ա, ընդրան ասըմ.- էս եզնը ծախում ըմ, կյինը տասը մանեթ ա, առնում չը՞ս:

Խլեզնը կլխավ ա անըմ:

- Ա՛ խլեզնը, տըես հա՛, օրփա՛թ օրը կյլական ըմ փողը տանիմ:

Խլեզնը էլհա յա կլխավ անըմ: Կյիժը հաշվըմ ա եզնը ծախած, թողըմա ծմակըմը ետ տա՛ռնո՞ւմ, կյա՛մ տոն:

Օրփա՛թ օրը քյնամ ա հա՛մա՛ն էն տեղը, վեր եզնը ծախալ ա խլեզնին յրան: Տըեսնըմ խլեզնը ընդեղ կաղնած, ամմա եզնը կա վէչ:

Փողը օզում ա, խլեզնը տեղան տո՞ւրո՞ւր չի կյամ:

Կյիժը կզնվում ա, մըհակը եր ա պիրում, թա՛ թխի խլեզնին: Խլեզնը նի յա մըննըմ քարեն տակը: Կյիժը քարը պցրցնըմ ա, տեսնըմ խլեզեին կոխկին մին կարաս վըեսկէ: Պըելը կլխան մին տասը մանեթ ա յոր օնում, ասըմ. - Տե՛ս, ա՛ խլեզնը, իվիլ եր չըմ կյա՛լա՛լ հա՛, էքյուց ինձ շառավ չի տա՛ս: -Տասը մանեթը յոր ա օնում, կյամ տոն:

Մեծ ախպերը հըրցնըմ ա, թա՛.- Ցըեզնը հո՞ւր յրա ծըխեցիր:

Պըելը սկսըմ ա նաղլ անիլը: Խելունքը վեր լսըմ ա մին կարաս վըեսկուն անըմը, խնթրըմ ա կիճի ախպորը, վեր տանի տեղը նշանց տա: Մեծ նան կիճի ախպերքը եր ըն կենում, քյնո՞ւմ:

Շատ ըն քյընո՞ւմ, խրեզյ ըն քյըո՞ւմ, հըսնըմ ըն համին էն տեղին, շտեղ վեր վըեսկեն ա: Մեծ ախպերը վըեսկեն ածըմ ա մեշոկին մեչը, շըլա՛կըմ ըն, կյամ:

Ո՝ւրո՝ւզյո՝ւնը վեր մթնըմ ա, ընդրանք հըսնըմ ըն մին տան: Ըտեղ եր ըն կյամ, տեսնըմ ղաչաղնի: Ընդրանք կըռեվ ըն անում: Պըել ախպերը ընդրանց լըխճին սպանում ա, տանը քա՝նդած տըռները շըլա՝կում, ճընապար ընգնում:

Մեծ ախպերը վըեսկուն մեշոկը շըլա՝կած, կուծինն էլ տըռները շըլա՝կած պցրա՝նում ըն մին չինա՝րի ծառ:

Քշերվա կեսին մին քյարվան ա կյամ, էտ չինա՝րուն տակին վեր կյամ:

Մին խըրեզյ վեր կենում ըն, էտ կուծի ախպերը ասում ա. -Մեշկս ցավըմ ա, տոռնը տըվեր ըմ քըցըմ:

Մեծ ախպերն ասըմ ա. -Ա՛ պըել, հի՞նչ ըս ասըմ, տըրանք յրա կտա՝ռնան մըեզ կըսպանին:

Պըելըն ասըմ ա. -Չէ՛, վեր չէ՛, վեր ըմ քցըմ: - Տռները ծառին ճղները կուտրատելավ ընգնըմ ա տակին մարթկանցը կլխին:

Ըստրանք էտ հրաշկը վեր տեսնըմ ըն, թողում ըն ո՝ւրա՝նց հարըստըթունը, փախչըմ:

Ախպերը ծառան եր ա կյամ: Մեծ ախպերը սկսում ա ըտրանց վըեսկեն հվաքելը, ամմա կուծին ըտրանց քյուլքերն ա հըվաքում: Տանըմ ա տոն, վեր տակը քցի, տեղը տաք ինի:

## 3.ԹԱՔԱՎԵՐԸ ՆԱՆ ԽԵԼՈՒՆՔ ԱԽՃԻԳՅԸ

Մին թաքավեր ո՛ւրա՛ն վեզիրին կանչըմ ա, ըտրա երի ատաժը փորցելի հետի, տըեսնալի հետի խելունք ա՛ , թա՛ չէ, ասըմ ա. - Քյինի ինձ հետի մին հենց քախծըր պեն պեր, վեր լոխճան քախծըրը ինի:

Վեզիրը քյինըմ ա մին վեխճարի լո՛ւզո՛ւ. ճարըմ, պերըմ տամ թաքավերին: Թաքավերը սուս ա անըմ, տըեսնըմ ա, վեր դո՛ւզ ա վեզիրին ըրածը:

Էրկունջի դո՛նըմըն էլ թաքավերը կանչըմ ա վեզիրին, ասըմ. - Քյինի ինձ հետի մին կըծո, աղու-լըղի պեն պեր, վեր լոխճան կըծո, աղու ինի:

Էտ վեզիրը էլիա քյինըմ ա, մին վեխճարի լո՛ւզո՛ւ ճարըմ պերըմ, տամ թաքավերին:

Թաքավերը ըջըղվըմ ա, վըեննը տափին կյամ, ասըմ.-Տարեքյ ըտրան էս սըհաթիս կախ տվեքյ:

Վեզիրը չոքըմ ա թաքավերին առաչին, խընթըրըմ, ասըմ. - Թաքավերըն ապրած կըենա, իրեգյի քու լո՛ւզո՛ւտ քախծըր ար, ըսօր կըծո յա:

Թաքավերը վեր էտ խոսկերքը լըսըմ ա, վեզիրին ազադըմ ա:Անց ա կըենըմ մին խիլլա՛ վախտ, էլիա թաքավերը վեզիրին կանչըմ ա ո՛ւրա՛ն կոշտը, ասըմ.-Քյինի ինձ հետի մին վեխճար պեր, վեր ընդրա մին մասը հում մըես ինի, մին մասը իփած, վեխճարըն էլ հրեն ինի քըշտիս ըրածըմ:

Ըտրա բաղասխանին հետի թաքավերը քառասուն օր վախտ ա տամ:

Վեզիրը ճընապար ա ընգնըմ, քյինըմ:

Քյինըմ ա քյինըմ, շատ ա քյինըմ, թա՛ խըրեգյ, ինքյը կը գյիդա, մին մարթի յա ջիհըմ: Էտ մարթին նըհետ քյինըմ ա, քյինըմ, մին կյետի յա ռուջա՛հ կյամ:

Վեզիրը էտ մարթին ասըմ ա.- Եք էս կյետին մին կարմունջ շինինքյ: Էտ մարթը թա՛. - Կյիժ ըս, հի՞նչ ըս , թա կըլխիտ ծիյա քացի տըվալ:

Էլիա քյինըմ ըն, քյինըմ, վեզիրըն ասըմ ա.- Եք էս ճընապարին մին փա՛լա՛քյա՛ն շինինք:

Էտ մարթը մընըմ ա մաթ մընացած: Ասըմ ա.- Կըլխիտ դութմա յա թըխալ, հի՞նչ ա, թա՛ կյիժոթունըտ փըռնալ ա: Իտի պեն կինի՞: Էլիա էտ մարթը հըսկանըմ չի, թա՛ էտ վեզիրը հի՞նչ ա ասըմ: Քյինըմ ըն, քյինըմ, հըսնըմ մին շենի: Ըտեղ վեզիրը էտ մարթին- ասըմ ա.- Հենց ա էս շենըմը ժամ չինի՛, վեր քյինիմ աղոթկ անիմ:

Էտ մարթը ասըմ ա.- Հո՞ւնց թա՛ ժամ չի կա, էնա կա՛:- Տանըմ ա տըեղը նշանց տամ:

Վեզիրը նի յա մըննըմ ժամը, էտ մարթը կյամ ա ուրա՛նց տոն:

Վեր կյամ ա տոն, ուրա՛ն ըխճըկանը նաղը ա անըմ: Ախճիգյը իմաստուն ա ինըմ, դա՛ստի աըըմ ա.- Ա՛ հա՛ր, էն վեր ասալ ա. «Եք էս կյըետավը կարմունջ քըցինք», ըտրանավ օզացալ ա ասի՝ յա յըեւ շո՛րերըս հանիմ, քյըեզ կյետավը անց կըցնիմ, յա տու շորերըտ հանի ինձ կյըետավը անց կըցըրու:

Հա՛րըն ասըմ ա.- Բա է՞ն, վեր ասալ ա, թա՛ եք մին փա՛լա՛քյա՛ն շինինք էս ճընապարին:

Ախճիգյը ասըմ ա.- Ա՛ հա՛ր, ըտրանավ էլ օզացալ ա ասի՝ եք զո՛ւրո՛ւց անինք:

Հարըն ասըմ ա.- Բա է՞ն, վեր հըրցըրալ ա, թա՛ ծըեր շենըմը ժամ կա՞, թա՛ չէ:

- Ա՛ հա՛ր, ըտրանավ էլ օզացալ ա ասի՛ ծըեր շենըմը մինը կա վէչ, վեր ինձ ո՛ւրա՛ն տոնը ղոնաղ տանի:

Ախճիգյը հորը խընթըրըմ ա, վեր քյինի, էտ մարթին քըթնի, պերի ո՛ւրա՛նց տոն:

Հա՛րը քյինըմ ա ժաման թուշ պերըմ ո՛ւրա՛նց տոն: Վեր տոն ա կյամ, էտ վեզիրը տըեսնըմ ա էտ ըխճըկանը, ասըմ.- Ափսուզ էս տոն, վեր հո՛ւրթը ծոռ ա:

Էտ ախճիգյը կըլխի յա ընգնըմ, թա՛ վեզիրը ըտրանավ հի՞նչ ա օզըմ ասի:

Էտ ախճիգյը ասըմ ա.- Ա՛յ ղոնաղ, տու հուրթին ծոռ ինելին մի եշիլ, տու ընդրա ծոխին եշի, վեր դո՛ւզ ա եր ինըմ:

Վեզիրը տըսնալավ վեր էտ ախճիգյը շատ պեն ա զյուղում, թաքավերին աաածը ըտրանա հըրցընըմ ա:

Էտ ախճիգյը վեզիրին ասըմ ա.- Քյինի մին ղոչ առ, ծըվա՛նքը հանի, մինը իփի, մինը հում թող, վեխճարին նըհետ տար թաքավերին առաչին տիր, մին պատառ էլ խոտ տար, վեխճարը խոտը կօտի, ծըվա՛նցը մինը հում մըեւ կինի, մինն էլ իփա՛ծ մըեւ:

Վեզիրը ըտըղան քյինըմ ա թաքավերին կօշտը, վեխճարը տանըմ, մըեսըն էլ նըհետը, իփածը ճօկ, հումը ճօկ, տինըմ թաքավերին առաչին, ասըմ.- Թաքավերը ապրած կըենա, քու աաածըտ պերալ ըմ:

Թաքավերը մաթ ա մընըմ, թա՛ էտ վեզիրը ըշտղան ա էտ լոխ զյուղում: Ստիբըմ ա, վեր լոխ ասի:

Վեզիրըն ասըմ ա, վեր իստի-իստի մին ախճիգյ ա ասալ։ Թաքավերը մարթ ա յոր օնըմ, քյինըմ էտ ըխճըրկանը պերըմ։ Ախճիգյըն էլ հորը ասած ա ինըմ, վեր թաքավերը կյալու յա ու՛րա՛ն հետան, վեր հա՛րը տա, տանի։

Թաքավերը էտ ըխճըրկանը յոր ա օնըմ, պերըմ ու՛րա՛ն պալատը, ասըմ. - Տըես իմ թաքավերոթունըս քու քըշտիտ ըմ թողըմ, իմ քառասուն կընեգյըս քու քըշտիտ ըմ թողըմ, մին տարանց ետը կյալու յըմ, քյըզանա օզելու յըմ, վեր քյըզանա մին տըղա ինի։

Ասըմ ա, ու՛րա՛ն վեզիրնըերին նըհետ քյինըմ մին յաբանա չո՛լըմ մին չա՛ղիր եր թողըմ, մեչին կըենըմ ըն։

Էտ ախճիգյը տըղամարթի շո՛րեր ա կյենըմ, զենք կապըմ, թաքավերին քառասուն կընզանը, ու՛րա՛նց ղարավաշներավը կընզա շո՛րեր կյեց տամ, ծիյանք ըն նըստըմ, քյինըմ էտ թաքավերին կոշտը։ Վեր տըեղ ըն հըսնըմ, մին խըրեգյ հըեռու էտ կընանոցը կյողլ ա կըցընըմ, ինքյը քյինըմ թաքավերին խումբը։ Ըտրանց պարիյօր տամ, նըստըմ, թաքավերին նըհետ մա՛րջա՛վ նարդի հաղ անըմ։ Առաչի դո՛նըմը հու վեր տանի, բեղմա ու՛րա՛ն լոխ ծիյանքը տա տանողին։ Հաղ ըն անըմ, ախճիգյը տանըմ ա, թաքավերին լոխ ծիյանքը քըշըմ, պերըմ ու՛րա՛ն հընգերունցը կոշտը։

Էրկունջի դո՛նըմը հաղ ըն անըմ մարթկանցավ, հու վեր տանի, հիշքան ընդեղ մարթ կա, ու՛րա՛նն ա։ Հաղ ըն անըմ, էլիա էտ ախճիգյը տանըմ ա։ Էտ լոխ մարթիքյը հըվաքըմ ա, տանըմ։ Իրեքինջի դո՛նըմը հաղ ըն անըմ էտ ըխճըրկանավը։ Էտ ախճիգյը գյիդալավ տանիլ ա տամ։

Թաքավերը ըտրան վըեսկե լենթ ա տամ, համ էլ մըրթկըմը ասըմ.

- Թա՛ տըղա պերի էնա ըտրան կօզիմ, թա՛ ախճիգյ պերի, ըտրան կը կուրցունիմ։

Ախճիգյը թաքավերին քըշտան կյամ ա էտ կընանոցը կոշտը, ծիյանքը նան էտ կընանոցը պերըմ պալատը։ Մին տարանը ետը էտ ախճիգյը մին տըղա յա պըերըմ։

Վեր թաքավերին ետ տըռնալի վախտը կյամ ա, ետ ա տըեռնըմ, տըեսնըմ լոխ ծիյանքը վըերց ըն տըեռալ, կընանիքյը՝ տըղամարթ, էտ ախճիգյըն էլ մին տըղա յա պըերալ։

Թաքավերը ու՛րա՛ն հարուստոթունը էտ ըխճըրկանն ա տամ, հունցու մին ամմեն հինչ գյիդող իմաստունի։

4.ՍԵՐԸ

Ընո՟ւմ ա, չընո՟ւմ մին մաղար տըղա յա ընո՟ւմ: Էտ մաղար տըղան հա̈յլա̈ փըսակված չի ընո՟ւմ: Հիշքան հա̈րը, մարը ղաչանք ըն անըմ, թա̈ փըսակ-վի, փըսակվըմ չի, ասըմ ա. «Բաբ ախճիգյ չի կա՛»: Անց ա կըենըմ խիլլա̈ վախտ:

Մին դո՟նըմ էլ էս տըղան Շուշի քաղաքին մին մըեծ քյո՟ւչավ քյինելիս, էն մըեծ-մըեծ տըներին քյո՟ւչի բալկոններին մինին մըեչին մին դա̈շա̈նգյ, մարալի նըման ախճիգյ ա տըեսնըմ կաղնած, մին շատ կյեղեցիկ ախճիգյ:

Էտ տըղան ո՟ւրա̈ն մըթկըմը ասըմ ա. «Դո՟ւզ ա, Շուշի քաղաքին ըխճը-կերքը լոխ էլ կյեղեցիկ ըն, ծըռքըճիրավ, տընարար, մանները վըեսկե՛... Աշխարքիս էն ճընդան կյամ ըն Շուշի-Ղալիցը ախճիգյ օզըմ, տանըմ: Հու վըեր էլ տանըմ ա, փըշմանըմ չի. տոնը վըեր տըեռտակ էլ ա ինըմ, լըց-նըվում ա, ամմա էս իմ տըեսած ախճիգյըն օրիշ պըեն ա՛ ... »

Կյամ ա տոն, ասըմ.-Ա՛ մար, յըես մինչև մըհեկ օզացալ չըմ փըսակվիմ, ամմա մըհեգյ օզյըմ ըմ: Էս հինչ տըեղը մին ախճիգյ ըմ տըեսա՛լ, վըեր արևին ասըմ ա. «Տո՟ւս մի կյալ, յըես ըմ տո՟ւս կյալու», լո՟ւսնընգյին ասըմ ա. «Տո՟ւս մի կյալ, յըես ըմ տո՟ւս կյալո՟ւ»: Էտ ախճիգյը տուրըս ա եկալ:

Հա̈րը նան մարը ուրխանըմ ըն: Քյինըմ ըն էտ ախճիգյը օզըմ, պըերըմ ո՟ւրա̈նց տոն, մին լա̈վ հըրսանիք անըմ:

Էն մին քըշերը, վըեր տըղան թեքյ ա ընգնում էտ ըխճըկանը նըհետ, տըղան մուտընալան առաչ ասըմ ա.- Յըես էրկու պըեն բիդի ասիմ քյըեզ, թա̈ համոզ ը՞ս, իմ կընեգյըս կինիս, թա̈ համոզ չըս, մունք կինինք հունց վըեր քյո՟ւր նան ախպեր:

Ախճիգյն ասըմ ա.- Ասի՛, տըեսնամ հի՞նչ ըս ասըմ:

Տըղան ասըմ ա.- Վըեր յըես մըեռնիմ, տու բիդի փըսակվիս վըեչ, թա̈ տու մըեռնիս, ես բիդի փըսակվիմ վըեչ:

Ախճիգյը համոզվում ա:

Քըշերավը լո՟ւսը ծըքյծըքյո՟տըելիս էտ տըղան մըեռնըմ ա:

Ընդրանա ետը էտ ախճիգյը ամուն օր կանուխ քըշերավը քյընո՟ւմ ա երի հա̈նգյիստը, էտ տըղին կյըրեզմանին յրան լա̈ց ինո՟ւմ: Ինքյն էլ փըսակվում չի:

Երի հա̈նգյիստին տակավը մին շոսսե ճընապար ա ինո՟ւմ:

Մին դո՟նըմ էտ ճընապարավը մին պեխի ախպո՟ւրը քյընող փայտոնչի լըսըմ ա էտ ըխճըկանը սոքյը նան շիվանը:

Էտ փայտոնչին ու՛րա՛ն հընգյերին ասըմ ա,- Տըեսնաս էն հո՞ւ վա ինդի լա՛ց ընո՛ւմ, քյինիմ, տըեսնամ:

Ամմա հընգերն ասըմ ա.- Պըեն չօնի՞ս, հըղետ քյինի՛, հու վըեր լա՛ց ա ինըմ, թող լա՛ց ինի, քյըեզ հի՞նչ:

Էտ տըղան համփերում չի, քյընո՛ւմ ա, տըեսնըմ էտ ըխճըկանը, ըտրա կյեղեցիկ ինելան մաթ ա մընըմ, եա ա տըեռնըմ հըրցընըմ, թա՛. -Ա՛յ ախճիզյ, էտ հո՞ւր հետի յըս իտի լա՛ց ինըմ, մարըտ ա՞, թա՛ հա՛րըտ ա, քյո՞ ւրըտ, ախպերըտ ա՞, թա՛ սիրածըտ:

Ախճիզյըն ասըմ ա.- Լա՛ց ըմ ինըմ իմ սիրածիս հետի: Էս ա օխտը տարի յա ամեն ըռավուտ կյամ ըմ ըստըեղ, լա՛ց ինըմ:

Տըղան ասըմ ա,- Նիախ տըեղան ըս լա՛ց ինըմ, տա շո՛ւտա՛նց ա վըեղ տըեռալ, իտի մանիլ, թո՛ղ, քյինի մին օրիշ տըղի, մըղափուն ըս, ջա՛հիլ ըս, էտ աշկերիտ լո՛ւսը եր մի ածիլ լա՛ց ինելավ… Հա՛լա՛ սոքյ էլ ըս պահըմ սըեվ շորերըմ… Սըեվ զազը կըլխիտ…

Էտ ախճիզյն ասըմ ա,- Ցըես միչն իմ զյանքիս վըերչը իստի սոքյ ըմ պահելու:

Էտ տըղան ասըմ ա.- Սիրածըտ շո՛ւտի յա վըեղ տըեռալ, թա՛ հըվատըմ չը՞ ս, պըեց անիմ տըես:

Էտ տըղան քյընըմ ա մին թի պըերըմ, վըեղը քանդըմ, վըեսկուռնին պըեց անըմ: Էտ ախճիզյը տըեսնըմ ա, մընըմ կաղնած: Ետավ էտ տըղան չոքըմ ա էտ ըխճըկանը առաչին, ասըմ.

- Ցըես քյըեզ մատաղ, բոյիտ մատաղ, ջանիտ մատաղ, ցավըտ տանիմ, եք ինձ նըհետ փըսակվի, քյըեզ կըլխիս յրան կպահիմ, քյըեզ թողիլ չըմ, վըեր մին մազըտ էլ ծըռվի, մինը քյըեզ խըեթ եշխ էտ ախճիզյը համոզվըմ ա էտ տըղին նըհետ փըսակվի: Ամմա հընեց առաչի քըշերը պաչելանը ետը համ ախճիզյըն ա մըեռնըմ, համ տըղան:

Էրկուսին էլ մին տըեղ ըն թաղըմ, էն երի հանգիստըմը:

5.ԾԸԼԼԱԼԻՍ ԱՍԹԽԵՐԸ

Մին մարթ ասթխերը ծըլլալիս ասըմ ա.- Ա՛յ ասթխեր, դիլա̀նկըս տոր, յըես օզըմ ըմ, վըեր հինչ փըռնիմ վըեսկե տըեռնա:

Էս մարթը քյա̀սիբ մարթ ա ինըմ, աշկը օրիշի յրա: Ըտրա խընթիրքը կադարվըմ ա:

Էն մին օրը տըենակը յոր ա օնըմ, թա̀ հացը կտրի, հացն էլ, տըենակըն էլ վըեսկե յըն տըեռնըմ, օզըմ ա թա̀ ճո̀ւր խմի, ճո̀ւրը վըեսկե յա տըեռնըմ, հինչու օզըմ ա թա̀ օտի, վըեսկե յա տըեռնըմ: Էտ մարթն ասըմ ա.

- Ջըհար տըեռնա իստի սըրտինըս կադարվիլը, ինձ հիբի յա բախտ իլա̀լ, վըեր մըհեզյ ինի՛:

Ետնան էտ մարթը իտի էլ մընըմ ա սոված, ծարավ, իտի էլ մըեռնըմ ա:

6.ՊԸՐԿԸՓՈԽԱՆ ԿԸՆԵԳՅԸ

Մին շենացի մարթ ա ինըմ: Շատ ա ըշխադըմ կյա̀րի հաց ա ՛օտըմ, խրեզյ ա ըշխադըմ, էլլա յա կյա̀րի հաց օտըմ:

Մին օր կընգանան ըտրա պատճառը հըրցընըմ ա:

Կընեգյըն ասըմ ա.- Հենե՛, քու ախպեր Շիրվանըմը, հիբը ընդըղան դիբի Ղարաբաղ փըչըմ ա, մըեր ցորենը կորչըմ ա:

Էտ մարթը եր ա կըենըմ Ղարաբաղան Շիրվան քյինըմ, ախպորը կոշտը, թա̀ ախպորըն անա հըրցնի, գյիդա̀:

Վեր հըսնըմ ա Շիրվան, ախպորը լոխ նաղլ ա անըմ: Էտ ախպերը եր ա կըենըմ կրակ անըմ, Ղազանը երգյինքան կախ տամ: Էտ Ղարաբաղան եկած ախպերը հըրցընըմ ա, թա̀.- Ա՛ յ ախպեր, խե՞ յըս ղազանը էտքան հըեռու տըրա̀լ, ախեր թըքանալ չի ...

Էն Շիրվանըմը կըենող ախպերը ասըմ ա.- Բա հո՞ւնց կինի՛, վըեր յըես ըստըղան փըչիմ, քու ցորենըտ շաղ կյա, ըտըեղ օրիշ պըեն կա, քյինա̀ ճարի:

Էտ ախպերը ետ ա տըեռնըմ, կյամ տոն, ո̀ւրա̀ն նըհետ էլ ո̀ւրա̀ն ախպորը տըղին պըերում ա ո̀ւրա̀նց տոն:

Էտ ախպորը տըղան, էտ կուճի մըեռածը, գյուղո̀ւմ ար, վըեր ո̀ւրա̀ն ամո̀ւն կընեգյը սիրական օնի, վըեր հացը նան ցորենը տամ ա ընդրան:

Վըեր շենն ըն հըսնըմ, էտ տըղան, էտ կուճի տափը մըտածը, աղվեսութուն ա անըմ: Ա̀մո̀ւն կընեգյը հիբը օզըմ ա սիրականը պըերի ո̀ւրա̀ն

կոշտը, հավ ա իփըմ, լա̈վ-լա̈վ պեներ ա թըխըմ, կյինի, արաղ ա եր տինըմ: Մին օր սիրականը կյամ ա ըտրանց տանը քոն ինըմ:

Էտ տըղան, էտ կուճի ըզըզա̈մըեռը, յոր ա օնըմ թա̈զա̈ հալած յեղը ածըմ էտ կընգանը սիրականին պըերանը: էտ մարթը մըեռնըմ ա: Ըտրա մըեյիդը քըշերվա կըեսին քաշ տալավ տանըմ ա ո̈ւրա̈նց տո̈ռնը, տըռնին քըմական ասըմ,- Շո̈ւտ ըրիք, տո̈ռնը պըեց ըրիք, թա̈ էչ զինքյս կը սպանիմ:

Տանը լոխ քոն իլա̈ծ ըն ինըմ, տո̈ռնը պըեց չըն անըմ: Էտ կուճի գյուելլա̈նի եկածը, էտ վեչը-փուչը մեյիդը տանըմ ա, քշա-քաշ ընելավ ղարաղամին կըտերը, հո̈ւրթա̈վը վըեր քըցըմ մըեչ կո̈ւս, ինքյը փախչըմ:

Էտ թըմփոցին յըրան լոխ եր ըն կըենըմ: Գյո̈ւղում ըն, թա ըղորթ-ըղորթ ինքյն ա ընգալ, մըեռալ: Ըսկըըմ ըն լա̈ց ինիլը:

Ընդրա սիրած կնեգյըն էլ չոր կաշվի պարկի փոխան ա կյենըմ, վըեր լա̈ց ինելիս ծնգներին թխի, վըեր ծըենը լա̈վ եր ինի, պեցո̈ւր ծըեն հանի:

Ամմա հըվաքված կընանիքը լոխ գյուղո̈ւմ ըն, թա հո̈ւր պըեներ ա, հո̈ւր փա̈նդըփըլեքյ ա՛, մարթը հո՞ւր խաչավ ա թաղվալ: Էտ կընանեքյը լա̈ց ինելիս, ո̈ւրա̈նց սո̈քյ ասելիս վախտը, ասըմ ըն:

- Հո՞ւ ըրա՛վ, հո՞ւ չըրա՛վ, պըրկըփոխան կընեգյն ըրա՛վ... Հո՞ւ ըրա՛վ, հո՞ւ չըրա՛վ, պըրկըփոխան կընեգյն ըրա՛՛՛վ...

## 7.ՋԱՆԱՎԱՐԸ

Ընո̈ւմ ա, չընո̈ւմ մին ջանավար: Էս ջանավարը քյինըմ ա, քյինըմ, հասնըմ մին ծիյի, ասըմ.- Ա՛ ծի, քյըեզ կօտիմ:

Ծին ասըմ ա:- Ինձ կարիլ չըս օտիս՛, յըես կըճղակնի օնիմ, քացի կտա՛մ:

Էտ ջանավարը քյինըմ ա, քյինըմ, հասնըմ մին կյումաշի, ասըմ: - Ա՛ կյումաշ, յըես քյըեզ կօտիմ:

- Կարիլ չըս օտիս, եխտոտ ըմ, առաչ ինձ լըվաց, ետավ:

Էտ ջանավարը քյինըմ ա, քյինըմ, հասնըմ մին ծըմակ: Ըտեղ նըստըմ ա, ինքյը ո̈ւրա̈ն քընենքյ անըմ, ասըմ. «Ես պըտըըհեցի մին ծիյի, ասից՝ ղըռնաղնի օնիմ, ամմա մըղափուն լոխ կըերած պիտի, մինա̈կ ղըռնաղնին թողած: Յըես պըտըըհեցի մին կյո̈ւմա̈շի, թողած չըպիտի, կըերած պիտի, մինա̈կ կաշին թողա՛ծ: Ընդրանա ետը յըես պըտըըհեցի մին վըեխճարի

ա՛խ, ա՛խ, եշած չպիտի, կըերած պիտի, աշկերս իրե տան քյընա՛ց»:

Էտ վախտն էլ չոբանը ո՛ւրա՛ն շըներավը էն ար խիլլա՛ հեռու նըստած: Չոբանը տըեսնըմ ա էտ դըռդյո՛տված կյո՛ւլ-ջանավարին , թաքուն-թաքուն կյամ ա, հա՛քյվա՛ն փըռնըմ, շըներն էլ մին դոլան ըն յրա պըրծընըմ:

Էտ դա՛րըմը կյո՛ւլն ասըմ ա. -Ա՛խ, էս հի՛նչ ըրի, տու մի ասիլ,վըեր խոսիլըն էլ ա դըդըղա, խոսիլըն է՛, խոսիլը՛՛՛, հա՛լա՛ օտիլը ջըհա՛ննա՛մը... Խոսի՛լը...

8.ՕԺԱՎԸ

Մին մարթ քյընըմ ա ճո՛ւր խըմի, տըեսնըմ ա ճո՛ւրը շատ ա ցորտ-ցորտ:

Ասըմ ա.- Ա ճո՛ւր, էտ հի՞նչ սառնը ըս, էտ հի՞նչ օժավ ըս...

Էտ ճո՛ւրըն ասըմ ա.- Թա օժավ ըմ, խե՞յա երգյինքյը ինձանա ճո՛ւր քաշըմ:

Էտ մարթն ասըմ ա.- Ա՛ երգյինքյ, էտ հի՞նչ օժավ ըս:

- Թա վըեր օժավ ըմ, խե՞յա ինձանա թոռ եր տըեռնըմ:
- Ա՛ թոռ, էտ հիշ՞քան օժավ ըս:
- Թա վըեր օժավ ըմ, խե՞յա ինձանա խոտը կընանչըմ:
- Ա՛ խոտ, էտ հիշքա՞ն օժավ ըս:
- Թա վըեր օժավ ըմ, խե՞յա վըեխճարը ինձ օտըմ:
- Ա՛ վյըեխճար, էտ ի՞նչ օժավ ըս:
- Թա վըեր օժավ ըմ, խե՞յա դասաբը ինձ մորթըմ:
- Ա՛ դասաբ, էտ հի՞նչ օժավ ըս:
- Թա վըեր օժավ ըմ, խե՞յա մոկնը կընգանըս շո՛րերը օտըմ:
- Ա՛ մոկնը, էտ հի՞նչ օժավ ըս:
- Թա վըեր օժավ ըմ, խե՞յա կատուն ինձ օտըմ:
- Ա՛ կատու, էտ հի՞շքան օժավ ըս:
- Հա՛, օժավ ըմ, փափուկ տըեղի տա՛ր ըմ, մըկներին ահըն ըմ:

9.ԸՌՌԻՍԵՆ ՏԸՂԱՆ

Ինըմ ա, չինըմ մին թաքավեր: Էտ թաքավերին տըղան հիվանդանըմ ա: Թաքավերը մարթիքյ ա ղըրկըմ աշխարքիս էն ճրնդերը, վեր պժիժկ ճարին, տեղ-դյարման ճարին, ի՛րյան ջյահիլ-ջիվան տըղին մին ճար անին: Ամմա վեչ մինը ճարվըմ չի:

Թաքավերը խոսկ ա տամ համ ի՛րյան ալագյո՛զ ախճիգյը տա, համ թաքավերոթունին կեսը, ամմա էլհա ճարը-փիթիգյ անող չի տո՛ւս կյամ:

Մին օր թաքավերին կոշտըն ա կյամ մին մարթ, ասըմ.- Թաքավերը ապրած կենա, յըես դեղը գյուղում ըմ, տըեղը գյուղում չըմ:

Թաքավերը մին ուրխանըմ ա, մին կըզնըրվըմ , ասըմ. Դե շուտ ըրա ասի, հո՞ւնց թա դեղը գյուղում ըմ, տըեղը գյուղումը չըմ:

Էտ մարթըն ասըմ ա.- Դեղը էն ա մին ըռուս տըղի մըտանու մեչի, թա կարիքյ էտ մըտանին պերիք, քըցիք ճիրին մեչը, ընդրանավ էտ տըղին լըղըցնիք, հիվանդոթունը անց ա կըենելու, լիվընյալու յա, թա կարիքյ վեչ, չէ՛: Էտ ըռուս տըղին հեռու տեղ բեղմա քիթնիք:

Թաքավերը ի՛րյան մարթկանցան ղարկըմ ա, ամմա էտ ըռուս տըղին քըթենալը աճողվըմ չի:

Էն վախտը թաքավերին ախճիգյը ասըմ ա.- Ա՛ հյար, ինձ մըհար մին ճոխտ տըղամարթի չյաքյմյա կարիլ տո, տըղամարթի շո՛րեր կարիլ տո, զենքը-զըրահ պադրաստիլ տո, մին ծի տո, վեր վեչ մինը նստած չինի, մին էլ մին ղամշի տո, վեր վեչ մինը պընըցըրած չինի, մին էլ մին պուճուր իմաստուն շոն տո, յըես կըքյինիմ պերիմ էտ մըտանին:

Հյարըն ասըմ ա.- Կարիլ չըս, կըքյինիս կըլո՛խըտ բաղի տաս:

Ախճիգյը կոխկը հըստըցնըմ ա, քյինըմ:

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըեգյ ա քյինըմ, շատ նան խըեգյը աստուծ կը գյիդա , հըսնըմ ա մին տան: Էտ տանը տո՛ռը թակըմ ա: Տո՛ռը պեց ա անըմ մին պառավ կընեգյ, մին էլ ընդրա տըղան մին ըռուս տըղա:

Էտ ախճիգյը տըեսնըմ ա, վեր էտ ըռուս տըղան ի՛րյան շատ ա եշըմ, ի՛րյան կյեղեցկոթունան հայիլ-մայիլ ա մընացալ, ամմա վեր ծըեռքերին ա եշըմ, ծըեռքերը ըխճըկա յա, շո՛րերին ա եշըմ, շո՛րերը տըղի յա:

Էտ ըռուս տըղան ի՛րյան մորըն անա հըրցնըմ ա, ասըմ.

*- Մամա, նա նըման ա ըխճըկա,*

*Ծըեռքը նան վըեննը ըխճըկա,*

*Ասի տըեսնամ, հու՞վա նա:*

Մարըն ասըմ ա.- Ա՛ վեր թի, մին մաղ վարթ քաղի, տար դիմացը, վըեննին տակին փըռի, վեր մինչև ուռութանա ճըլլորի, ախճիգյ ա, վեր ճըլլորի թըռմոշկի վեչ, տըղա յա:

Ըռուս տըղան իտի էլ անըմ ա:

Թաքավերին ախճիգյը ո՞ւրա՛ն պուճուր, իմաստուն շանն անա հըրցընըմ ա, թա՛ հի՞նչ անի, էտ շոնը մարթու լո՞ւզվա՛վ ասըմ ա, «Քըշերավ շո՞ւտ եր կըկենաս, թըռամած թըռմոշկած վարթերը տեն կածիս, տեղը թա՛զա՛ վարթեր քաղիս, վըններիտ տակին փըռիս, ամմա կոխ չի տաս»: Թաքավերին ախճիգյը իտի էլ անըմ ա:

Քըշերավ մարըտըղա եր ըն կըենըմ, տըեսնըմ վարթերը ճըլլորալ չըն, ուրեմը տըղա յա:

Էտ ըռուս տըղան էլիա հըվատըմ չի, մորըն ասըմ ա.

*- Մա՛մա, նա նըման ա ըխճըկա,*<br>*Ծըեռքը-վըեննը ըխճըկա,*<br>*Ասի տըեսնամ, հո՞ւվա նա...*

Մարըն ասըմ ա.- Մին տեղ վյըերսի քյինացիք, թա՛ քյըզանա շատ վըերս ըրավ, տըղա յա, թա քյըզանա խըրեգյ վըերս ըրավ, ախճիգյ ա:

Ըտրանք քյինըմ ըն ծըմակը, ըսկըսըմ ըն վըերս անիլը: Տըղան ըխճըկանան շատ ա վըերս անըմ, ամմա էն պուճուր շոնը թաքուն էն տըղին ըրած վըերսը քաշ ա տամ, պերըմ էտ ըխճըկանը վըերսին յրան տինըմ: Ըխճըկանը վըերսը շըտանըմ ա, տըղինը՝ խըրեգյանըմ: Տըղան տըեսնըմ ա, վեր ո՞ւրա՛ն վըերսը խըրեգյ ա, ըխճըկանը վըերսը՝ շատ, բեքյեփանըմ ա: Իտի բեքյեփ կյամ ա տոն, մորըն ասըմ.

- Մա՛մա, ախճիգյ ա, ախճիգյ ա,<br>Վարթ նան ծաղկի փընջիգյ ա,<br>Ծըեռքը նան վըեննը ըխճըկա,<br>Մա՛մա, ասի հո՞ւ վա նա...

Մարը մըտածըմ ա մըտածըմ, ասըմ. – Քյընացիք մինտեղ համամ, ընդեղ կը տեսնաս, թա՛ հու վա:

Պուճուր շոնը թաքավերին ըխճըկանը ասըմ ա. «Վեր համամ քյինիքյ, յըես ծիյանքը կըկըռվըցնիմ, տու տո՞ւս կըկյաս ծիյին կապը ետ քաշիս, յրան նստիս փախչիս, էլ օրիշ ճար չի կա»:

Էտ ըռուս տըղան ըխճըկանը ասըմ ա.- Քյինինք համամ:

Ախճիգյըն ասում ա.- Հի՞նչ կինի:

Քյինըմ ըն: Տըղան շ՛ո՛րերը հանըմ ա, ըսկըսըմ լըղանալը: Ախճիգյը շ՛ո՛րե-րը հանըմ չի, ամմա ինդի յա նշանց տամ, թա յավաշ-յավաշ վըննամանին հանըմ ա, կոճակնին պեց ա թողըմ:

Էտ ըռուս տըղին մաննին մըտանին ախճիգյը տըեսնըմ ա, ասըմ.

Ա՜խ, հի՞նչ լ՛ա՛վ մըտանի յա:

Էտ ըռուս տըղան մաննան մըտանին հանըմ ա, տամ ՛ո՛ւր՛ա՛ն: Ախճիգյը մըտանին մաննըն ա քըցըմ, ասըմ.- Հ՛ա՛լ՛ա՛ տըես հինչքա՜ն ա սաղըմ:

Ըռուս տըղան ասըմ ա.- Թ՛ա՛ քյըեզ տուր ա կյամ, քյըեզ ինի:

Էտ վախտը տ՛ո՛ւս՛ո՛ւմը ծիյանքը կըռեվըն անըմ: Ախճիգյը ասըմ ա. – Դե լ՛ա՛վ, քանի վեր հ՛ա՛լ՛ա՛ իմ շ՛ո՛րերըս հանալ չը՜մ, քյինիմ ծիյանցը հաղաղ-ցընիմ: Թաքավերին ախճիգյը համաման տ՛ո՛ւս ա կյամ, ծին նըստըմ, շոնն էլ յոր օնըմ, փախչըմ մին բաշ ՛ո՛ւր՛ա՛ն հորը պալատը:

Հ՛ա՛լ՛ա՛ ճանապարին, խաբարը քյինըմ ա թաքավերին, թ՛ա՛ ախճիգյըտ կյամ ա:

Թաքավերը մեծ թ՛ա՛նթ՛ա՛նավ, մեծ հանդեսավ ընդրա առաչըն ա տ՛ո՛ւս կյամ: Տանըմ պալատը: Մըտանին քըցըմ ըն ճըիրին մեչը, էտ ճիր՛ա՛վը թաքավերին հիվանդ տըղին լըըցնըմ:

Էտ տըղան լ՛ա՛վանըմ ա:

Մեծ ուրխոթուն ըն անըմ, ղոնախլըղնի, քյեփեր:

Ըռուս տըղան ՛ո՛ւր՛ա՛ն մին լ՛ա՛վ ՛ա՛վլ՛ա՛վը թակած, կյ՛ա՛րմ՛ո՛ւր կըծըպուղուն տըեռած, համաման տ՛ո՛ւսա կյամ, տըեսնըմ ախճիգյը փախալ ա: Կյամ ա մորը կոշտը ասըմ.

*- Մա՜մա, ախճիգյ ա,*<br>*Ախճիգյ ա, վարթի փընջիկ ա,*<br>*Ծըեռքը-վըեննը ըխճըկա,*<br>*Ասի , տեսնամ հո՞ւ վա նա,*

Մարըտըղա խոսկը մին ըն անըմ, վեր տըղան քյինի էտ ըխճըկանը ճարի:

Էտ ըռուս տըղան ՛ո՛ւր՛ա՛ն զենքը, զըրահը կապըմ ա, ծի նըստըմ, հղե ինըմ:

Շատ ա քյինըմ, թ՛ա՛ խըրեգյ ա քյինըմ, շատը նան խըրեգյը աստուծ

կըգյիդա̀, հըսնըմ ա հա̀մին էտ թաքավերին պալատը։ Տո̀ռնը թակըմա։ Հա̀ր ու ախճիգյ քյինըմ ըն տո̀ռնը պեց անըմ, տըեսնըմ էտ ըռուս տըղան ա։

Ախճիգյըն ասըմ ա.- Ա՛ հա̀ր, էս համին էն ըռուս տըղան ա, վեր մըտանին պերալ ըմ։

Թաքավերը քանի վեր խոսկ ար տըվալ, վեր հուվեր ո̀ւրա̀ն տըղին լըվըցնի, համ ախճիգյըն ա տալու, համ էլ թաքավերոթունին կեսը, իտի էլ անըմ ա, ո̀ւրա̀ն խոսկը տափը չի քըցըմ։

Պերըմ ա օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ա անըմ։

Ընդըրանք հըսին ո̀ւրա̀նց մուրազին, տուք էլ հըսնիքյ ծեր մուրազին։

Երգյինքան իրեք կյա̀րմո̀ւր, փափուկ, քախծըր խնձո̀ր ա եր ընգնըմ. մինը՝ ասողին, մինը՝ կյրողին, մինն էլ՝ թախտին յրա թեքյ ընգած քոն ինո̀ղին։

## 10.ԽԵԼՔԻ ՅԸՄ ԵԿԱ՛Լ

Ինըմ ա, չինըմ մին հարուստ մարթ։ Էտ հարուստ մարթին հազար-ներավ տավար-վըեխճար ա ինըմ, ամմա ինքյը շատ սկուպոյ ա ինըմ։

Մին հետ էտ հարուստ մարթը կըլխըցավան ընգնըմ ա։ Տա քյինըմ ա հա̀քյիմին կոշտը։

Հա̀քյիմը ըտրան ասըմ ա, վեր օրական երկու-իրեք վըեխճար մորթի, հըղողը ուտի։

Էտ մարթը սկըպոյ ինելին դա̀րդա̀ն ո̀ւրա̀ն վյըեխճարներան մորթում չի, խուրջինը քըցըմ ա ծիյին յրան, ինքյն էլ ծիլին նըստըմ քյինըմ մոտիկ քաղաքը՝ Շուշի, ընդեղ ղասաբան վըեխճարի կլո̀խ առնի, պերի տոն, ուտի։

Վեր կյամ ա մըես ծախողին կոշտը, հըրցընըմ ա, ասըմ.- Ա՛յ ախպեր, վըեխճարի կըլո̀խ օնիք ծախու, կյինը իիշքա՞ն ա։

Ղասաբըն ասըմ ա.- Խե՛ չօ՞նինք, կըլո̀խ էլ օնինք, մըես էլ օնինք, վըեխճարին կըլո̀խը երեսուն կապեկ ա՛ ։

Էտ հարուստըն ասըմ ա.- Բո՛, բո՛ բո՛, երեսուն կապե՛կ, էտ ի՞նչ թա̀նգյ ա։

- Թա̀նգյ ա՞, քյինի հըրեվան քաղաքամասը, ընդեղ իժան ա, մին կըլո̀խը քըսան կապեկ ա։

Քըսան կապեկին անըմը վեր լըսըմ ա, էտ հարուստ մարթը ծին քըշըմ

ա բիդի մոտիկ քաղաքամասը, թուշ քյինըմ մըես ծախողին կոշտը, տըես-նըմ մըես ծախողը էն ա կըռները եր քաշած, վըեխճար ա մաշկըմ:

Ասըմ ա.-Պա՛րով, ա՛յ ախպերացու, քանի յըս ծախըմ վըեխճարին կըլո̈խը:

Ղասաբըն ասըմ ա.- Աստծու պարին, ա՛յ ըխպըրացու, վըեխճարին կըլո̈խը քըսան կապեկ ա:

Էտ հարուստըն ասըմ ա,- Պա՛, բա՛, բա՛, բա՛, քըսան կապեկ վըեխճա-րի կըլո̈խ կինի, թա̈նգյ ա:

Մըես ծախող ղասաբը ասըմ ա.- Դե վեր թա̈նգյ ա, քյինի մըզանա մոտի քաղաքը, ղասաբխանան, ընդեղ տասը կապեկ ա:

Էտ հարուստ մարթը վեր տասը կապեկին անըմը լըսըմ ա, ծիյին կըլո̈խը շոռ ա տամ բիդի էն մին մոտիկ ղասաբխանան:

Վերչը ա̈մա̈լ ա կյամ, մին վըեխճարի կըլո̈խ առնի: Առնըմ ա, քըցըմ խուրջինը, խուրջինըն էլ քըցըմ ծիյին յրան, «այ դըլեյ-դըլեյ» անելավ ընգ-նըմ հըղեն: Ո̈ւրո̈ւզյո̈ւնը կարըմ չի տոն հըսնի, մըթնըմ ա, մին տան դոնադ ա ինըմ, մին հարուստ կընգա տան:

Էտ հարուստ կընեգյը ըտրան տանըմա տոն, պենովի-ծալովի հացին ըստոլին քըշտին նըստըցնըմ, ամմեն ջուռա ստելի պեներ, խըմելի պենե-րավ ըստոլը սարքըմ: Մին քանի մունուտանը ետը մին դա̈շա̈նգյ, ջահիլ տըղա էլ ա կյամ, պարով տամ, էտ ըստոլին քըշտին նըստըմ: Էտ կընեգյըն էլ, վեր ըստոլը սարքըմ ա, պըրծընըմ ինքյըն էլ ա կյամ նըստըմ, էտ հարուստ մարթին հըրցնըմ, թա̈ քաղաքըմը հո՞ւ օնի, հո՞ւ չօնի, հո՞ւ վա՛:

Էտ մարթը ասըմ ա, - Քաղաքըմը պարեկամ օնիմ, քյեցալ ըմ տըեսնամ:

Վեր լոխ նըստըմ ըն, էտ կընեգյը էտ ջահիլ տղին անա հըրցընըմ ա.- Օտինք, թակինք, թա թակինք, օտինք:

Էտ հարուստ մարթին ջանը սահ ա ընգնըմ, զյուղո̈ւմ ա, թա̈ ո̈ւրա̈ն ըն թակելու:

Էտ ջա̈հիլ տըղան ասըմ ա.-Թակինք, ետավ օտինք:- էտ վեր իտի ասից, էտ կընեգյը եր կացավ, քյինից էն մին օթախը ընդըղան մին խուրջին պերավ, մին մարթի կըլո̈խ մեչին, հանից, ինքյ նան էն ջա̈հիլ տըղան ամեգյը մին փեղ եր կա̈լա̈ծ, սկսեցին համ թակիլը, համ ո̈ւշո̈ւնց տալը: Լոխճան շատ էտ կընեգյըն ար թակըմ, ո̈ւշո̈ւնց տամ:

Վեր թակեցին, պըրծին, կըլո̈խը էլհա տիրին խուրջինին մեչին, տարին

էն մին օթախը, ո՜ւրա՛նք դինջ եկին նըստեցին, հաց կըերին: Կըերին, խըմեցին, ըստո՜ւը հըվըքեցին:

Էտ դոնաղ մարթը հըրցրավ, ասից.- Էն ի՞նչ կըլո՜խ ար, վեր տո՜ւք թակեցիք:

Կընեգյը ըսկսից նաղլ անիլը: Ասից.- Տըեսնըմ ըս էս շենքը, էս օթախնին:

Էտ հարուստ դոնաղը կըլխավ ըրավ, ասից.- Տըեսնըմ ըմ:

Էտ կընեգյը թա՛.- էս շենքը իմ մարթիս ար պատկանըմ, նա շատ մըեծ հարըստութուն օներ, տավարի իլխի, վեխճարի սո՜ւրո՜ւ, ամմա ինքյը սկուպոյ ար, մին կապեկի հետի տըղտո՜ղըմ ար: Հա՛ լա՛վ լըսի, մարթըս միշտ էն ար ինըմ հեյվաններին քըշտին, ամմա յըես, էս տըղան տըեսնըմ ը՞ս, ըստրա նըհետ քյեփ ի անըմ:

Վերչը մարթըս հիվընդացավ, մըեռավ: Ընդրա մահը ինձ հետի մին ուրխութուն ար: Ընդրա մահանը ետը էս հարուստութունը լոխ ինձ մընաց: Յըես իմ էս սիրականիս նըհետ փըսըկվեցի: Մըհեկ օտըմ ընք, խըմըմ ընդրա հարուստութունը, ընդրա կըլո՜խըն էլ կըտրած պահըմ ընք, ամմեն հաց օտելից առաչ մին լա՛վ թակըմ ընք, հենց ընդրա հետի, վեր իմ զյանքըս էլ ո՜ւրա՛ն նըման սև ար անց կըցնըմ, հենց ընդրա հետի, վեր խե՞ չար շուտ մըեռնըմ, իմ ջանըս էլ ազադ անըմ, քանի վեր մըեռնելի մարթ ար:

Էտ հարուստ մարթը, վեր էտ լըսըմ ա, ուրխանըմ ա, վեր ասալ չի, թա՛ հինչի հետի յա քաղաք քյեցալ, հինչի հետի յա իտի տըռնը-տուռնը ընգա՛լ:

Լհա՛ վեր մին խըրեգյ լո՜ւսացավ, ծին կյուման տո՜ւս քաշից, խուրջինը եր կալավ, քըցից ծիյավը ըտըղան քյինից:

Ճընապարին նա էտ առած վըեխճարի կըլո՜խը թող ըրավ, տեն քըցից, թա՛.- Գյոռըն չաթտասըն-փըլանքյաս, էլհա սկուպոյութուն կանի՞ս:- Ասից, ծին թո՜ւշ տոռ քըշից:

Քյինից կանչից ո՜ւրա՛ն կըլխավեր չոբանին, ասից.- Քյինի էս սըհաթըս վըեխճարին սուրույան իրեք մըեծ դոչ ճոկի պեր, վեր մորթինքյ:

Վեր չոբանը քյինից պերի, էտ մարթին կընեգյըն ասըմ ա. – Ա՛ մարթ, էտ ի՞նչ ա պըտահալ, բա՛լքյա՛ս կյիժվա՞լ ըս: Էս ա քանի տարի յա, տու իտի պեն չըս ըրալ, էս ա էքան տարի յա մունք մինտեղ ապրըմ ընք, տու էլ էտքան հարըստութունի տար, մին հետ ասալ չըս մին իտի պե՛ն: Մեր կըերած մըեսը էն ա իլա՛լ, վեր տու բազարան ամիսը մին հետ, էրկու հետ կես կիլո մըես ըս պերալ, իտի էլ մինչև մըհեկ ապրալ ընք:

Մարթըն ասըմ ա.- Ա՛յ կընեգյ, տու ինձ ասըմ ըս կյիժվա՞ լ ըմ, ամմա կյիժվալ չըմ, լափ լա̀վ խելքի յըմ եկա՛լ: Սկուպոյ մարթը շուտ կըմեռնի, մըռնելանը ետըն էլ ո̀ւշո̀ւնց կըտան, կըլո̀խը թակ կօտի, կասին գյոռըտ իստի-ինդի՛...

Կընեգյը էտ վըեր լըսից, օրախ-օրախ մարթին վիզավը փըթաթվիր ասից.- Ա՛ մարթ, յանի դուզ ը՞ս ասըմ, թա̀ սոտ:

-Սոտ ասողին հա̀րը, մարը... Սոտ ասողին օխտը պորտը... սոտ ասողը խավար-խասիս մընա, սոտ ասողը խըըըվ-խարավ կյա, աշկը պըլթա, ղարաչի տըեռնա, սոտ ասողին իստինը-ինդինը: Ասըմ ա պըրծընըմ կընգանը խըտտըմ, պըչպըչորըմ:

Կընեգյըն ասըմ ա.- Մըհեկ վեր տըեսնըմ ըմ խելքի յըս եկալ, իմ ջանըս-ջիգյարըս, իմ համեղը՛ս, իմ պըռթպըռթոտ շո՛նըս:

## 11.ՍԸԵՐՏԸ ՔԱՐ ՄՐԱՔՈՒՐԸ

Մին քանե դար ըստրանա առաջ մին քղաքու թաքավեր ուզիս ա, վեր մին կարմունջ շինի: Էրկու հետ էտ կարմունջը շինիս ա, լի̀ա վեր կյաս ա, թա պըծնելավ տըեռնա , պարան ա կյաս:

Իրեքինջի դո̀նումը շինիս տեղը մին դարվիշ ա կյաս, թա հըղըըցավը անց կենա, էտ թաքավերը փռնես ա ըտրան, թա.- Ա՛սե, տըեսնամ, շինած կարմունջս խե՞ յա պարան կյաս, հո՞ւնց անիմ, վեր իրեքինջի դո̀նումն էլ չի պարան կյա:

Էտ դա̀րվիշը ըսես ա.- Կարմունջը վեր շինիս, հա̀լա̀ կըեսըմը պատը քշիս տեղը մին ա̀զա̀փ ախճիգյ կտնիս պատըմը, հեմնիս, պարան չի կյլական:

Թաքավերը ըտրան լա̀վ պաղեվ ա ընես, հղե տնիս:

Ո̀ւրո̀ւզյո̀ւնը կյաս ա, ինքյը ո̀ւրա̀ն ըսես. «Ինձ հո՞ւ ախճիգյ կտա, թա՝ տար պատըմը տիր»:Ինքյը-ինքյը մտծելան ետը, ըսես ա. «Պիրիմ մին ժողով անիմ, տըեսնամ ժողովուրթը հի՞նչ կասե»:

Պիրիս ա ո̀ւրա̀ն երգյիրեն ժողովուրթը հվըքես, լոխ պըտմես, ետնան ըսես.- Հու վեր ինձ մին ա̀զա̀փ ախճիգյ տա, մին կարաս վըեսկե յըմ տլական ընդրան:

Էն վախտը քղաքումը մին շատ դա̀շա̀նգյ ախճիգյ ա ինիս: Տա եթիմ ա ինիս, ըտրան պիհես ա ինիս ո̀ւրա̀ն մրաքուրը:

Էտ վեր թաքավերեն խոսկը ըսկընաս ա, ինքյը ո̀ւրա̀ն ըսեs ա. – Բոլ ա հիշքան պահ ալ ըմ իմ քվոր եթիմը, տանիմ տամ թաքավերեն, համ ո̀ւրա̀ն պենը ա̀մա̀լ կըկյա̀, համ էլ յըես կըհրուստանամ: Բոլ ա հիշքան քյա̀սիբ ըմ կացալ:

Էքսը քվորը ախճիգլը յոր ա օնեs, տնեs տաս թաքավերեն, վըեսկեն յոր օնեs, կյաս:

Թաքավերը էտ ըխճըկանը տինիս ա պատըմը: Ըսկսեs ըն պատը հեմնել տալը: Վեր միչև էտ ըխճըկանը ծո̀յները հիմնիս ըն, ըտրա մրաքուրը կյաս ա, թա̀ տեսնա հունց ըն ընեs, էտ ախճիգյը, վեր տսնաս ա ո̀ւրա̀ն մրաքվերը, ըսեs ա.-Ա՛ մրաքուր, ա՛ մրաքուր շըրեցեն, միչև ծո̀յներս քըրեցեն, խղճա ինձ, ըզադե եթիմիտ:

Մրաքուրը ըսեs ա.- Վեչինչ բալա՛, թող շարի՛ն, միչև ծո̀յներտ թող քարի՛ն, աստված էնքան էլ անխեղճ չի, եթիմներին կըզադե:

Էտ ախճիգյը սուս ա ընեs, միչև կլո̀խը հիմնեs ըն: Մրաքուրը մին էլ ա կյաս, տըեսնա: Էտ ախճիգյը, վեր մըրաքվերը տսնաս ա, ըսեs ա.- Ա՛ մրաքուր, ա՛ մրաքուր, շրեցեն, միչև կլո̀խս քրեցեն, օրիշ պեն չըմ ըսեs քյըեզ, մինա̀կ, հիբը պատը պրծնին, քաշ տեռնաս, կյաս, վեզըտ դրի ինձ մեկնեs, ղաչանք անեs, յըես էլ տըեսնամ դինջ նի մըննիմ կյըեզման:

Պատը, վեր հիմնիս ըն, պրծնեs, կարմունջը էլ պարան չի կյաս: Էրկու օրանը ետը, վեր թաքավերը ուզիս ա թա̀ դոնախլըղ սարքե, ուրխոթուն անե, վեր կարմունջը պրծալ ա, սաղ սըլըմաթ, մարթ ա դրկեs, թա̀.- Քյեցեքյ էն ըխճկանը մըրաքվերն էլ ըսեցեքյ կյա:

Քըլնիս ըն, թա̀ ասին, տսնաս ըն մրաքուրը քաշ տըեռած, թոչից, քյեցավ կրմունջեն պատեն վեր եկավ, սկսից կըրկռալը: Են վխտան միչև միհենգյ էլ, քաշերը հիշտեղ վըենն ըն կնաս, վըզըրնեն ըրկընցընեs ըն, ետնան կոկռաս:

## 12.ՄՈՐԸ ԿՈՌՆԸ

Մըհետւե ինիս ա, չինիս մին քյա̈սիբ մարթ:

Ըզետ շատ տիժա̈ր ա ինիս ըպրես: Ըտրան միչն քանըհենգյ տրեկանը խոխա չի ինիս:

Ախրը քանըվեց տրեկանըմը ըտրա կնեգյը ճոխտակ խոխա յա պիրիս, մինը՛ ջանլու, էն մինը՝ մաշված: Կնեգյը, վեր խոխան պիրիս ա, տասն-իրեք օր կնաս ա, մռնես:

Մարթը շատ ա տխրվես, քյիս ա ո̈ւրա̈նց շենան մոտիկ մին խորթ կնեգյ պիրիս:

Էտ կնեգյը խխոցը նհետ բըրըշիս չի: Հա̈րը, վեր տսնաս ա պեննին թա̈հրը իտի յա, շատ ա մտծես, թա̈ խոխեքյը հո՞ւնց կաննեն: Էտ հա̈լա̈ վեր իտի յա, ետնան հի՞նչ կինի:

Քյիս ա հընգյիստարան, ո̈ւրա̈ն մըեռած կնգանը կոռնը թաքուն կտրես, մին մեծ փլասըմ փթթես, կըրես, պիրիս:

Ըտրանա ետը, կնգանը ըսես ա:- Վեր խխոցը թակիս, համին էս փլասավը կթակիս:

Էտ կնեգյըտ հինշքան խխոցը թըկես ա, ընդրանք էնքան ա̈րդա̈մ ըն ընես:

Մին օր մարթան թաքուն էտ կնեգյը շո̈րը յոր ա ունես, տնես տո̈ւս, պինա̈ս, տսնաս մին կտրած կոռնը:

Բիրդան մաննը կծես ա: Ըտրանա ետը, միշտ ո̈ւրա̈ն ծեռքավն ա թկես: Խոխերքը վեր տսնաս ըն շատ ա ո̈ւրա̈նց ղընամիշ ընես, փխչիս ըն:

Քյիս ըն, քյիս,քյիս ըն մին մթեն ծմակ ընգնես: Տըսնաս ըն հեն ա մին հըեռ տեղ մին պեն իշեղ-իշեղ ընես: Ըտրա բուրջը յոր ըն ունես քյիս:

Քյիսն, քյիս տսնաս մին բաբաթ կրակ ա, ընդրա կոխկեն մարթ չիկա: Կրակեն կոխկեն նստես ըն: Հա̈րը մին էրկու ճա̈թ տված ա ինիս, մինը թքցնիս ըն, հոռ ընես: Մինն էլ, վեր ուզիս ըն, թա թըքցընեն, տըսնաս ըն հեն ա մին լխլխկոց ա կյաս:

Եշիս ըն, տըսնաս հեն ա մին ղուրուլթու յա տո̈ւս կյաս:

Եշիս ըն տըսնաս մին մըեծ պեն ա, ամմա աշկերը փլստրատեն ա տաս:

Վեր մուտըննաս ա, տսնաս ըն վեր օշափ ա:

Օշափ, հի՞նչ օշափ, մին զըեռ, մին սար: Օշափը վեր մուտըննաս ա, աշկերը չռես, խոխերքը հըլվիս ըն: Մուտըննաս ա էլհա ետ քշվիս, ետնան քյիս էրկու եզնը կես ընիս, պիրիս ըտեղ վեր տինիս:

Ըսես ա,- Յրկե քշերեն մին քյըսիբի տոն ըմ քա̈նդա̈լ: Հետը պահալ ըմ, վեր եզները տո̈ւս ա ըրալ, քյեցալ ըմ, փխցրալ պերալ ճըրդոտալ: Միենգյ, թա̈ կարիքյ ինձ նըհետ բաշա-բաշ օտիքյ, ծըեզ սաղ-սալամաթ թող ըմ ընական, ըշտեղ օզում ըք, քյեցեքյ, թա̈ օտիքյ վեչ, ծըեզ բդի օտիմ:

Էս խխոցը մինը քյո̈ւհի յա ինիս, ըսես ա.- Օտիլ բիդիմ:

Բուղեն նեստա յա կնաս, կրես չի մա̈սրա̈փ անց կըցընէ: Էս մինը, վեր բուղերը յոր ա ունես, թա օտե, թաքուն կլխավը թող ա ընես, քցես դալդան: Օշափը, վեր տսնաս ա պենին թա̈հրը հինչումն ա, ժուլիգյին թո̈լ ա ընես: Քյո̈ւհո̈ւն յոր ունես, քշտեն պիես, վեր քյո̈ւքո̈ւցնէ, ետնան օտէ: Ժուլիգյը քյիս ա կյողլը կնաս: Էն մինն էլ խիլլի վախտ կնաս ա, գյիրավան քցես, ճղես: Քյիս ըն, քյիս, քյիս տսնաս հղեննի ավերակ տներ, շինոթուննի:

Կյաս ըն, կյաս մին վանք ա պտհես, նի յըն միննես մաչը, տսնաս պատեն մաչան միննն ըսես ա. - Վըեղու ծնունդնի՛, թըքըվերեն ըխճըկերքը կորեն, քյեցեն: Խե՞ տո̈ւրո̈ւր չըք կյաս:

Տղերքյը մնաս ըն մաթ մնացած: Վխելնան նըհետ տո̈ւս ըն կյաս, տսնաս էրկու դա̈շա̈նգյ ախճիգյ, վեր լհա̈ ըրեքյնակեն ըսես ըն. - Տեն կաց, մունք ընք լո̈ւս տաս:

Ըտրանք վազ ըն տաս ըտրանց հետան, վեր փռնին: Միչն հըսնելը ըխճկերանցը մինը հըլիս ա, պրզես, ըրվաս չի՛, ըսես ա՝ «Վեչ ըլա̈լ ըմ, վեչ էլ կինիմ»: Տղերքյը քյիս ըն տսնաս, հեն ա էն մինը ծվծվաս:

Տղերքանը մինը ըսես ա.-Ա՛ քուր, պա հինչ ա՛ պտահալ,հի՞նչ չի պտահալ:

Ըսես ա.- Դե իմ քուր ընզա̈լ ա վերը:

Էտ վախտա տըսնաս ա մին օխծ, ամմա վեր օխծ ասիմ մեխկ ա: Մին կյերան, համ հըկըհակու ընելավ, համ փշշըցնելավ կյաս ա, նի միննես վերը: Էտ ախճիգյըտ առռե մնաս ա ցմաքված: Փոխըփեշմա̈ն ետ ա տռնաս դիբի ո̈ւրա̈նց տոն, հորն էլ ըսես չի: Էտ տըղերքյը քյիս ըն թաքա-վերեն պալատը ճըրես, նի միննես:

Էտ տըղորցը մինը ըսես ա.- Թաքավերն ապրած կենա, հի՞նչ կտաս ախճիգյըտ ճարիմ:

Թաքավերն ըսես ա.- Թաքավերոթունես կեսը քյըեզ կտամ:

Էտ տղան քյիս ա մին էրկան քյա̈նդիր ինքյ ունես, կյաս վերեն կլո̈խը, հանցու վեր օխծը տո̈ւս կյա, ինքյը նի մըննէ, ըխճկանը ըզադէ: Ամմա

վխես ա, նի չի մընննես: Էս մին ախպերը քյա̀նդիրը պորտան կպես ա, նի մըննես, ըխճկանը նեստա կպես, էտ վերին քշտի վըխլըկոտ ախպերը տո̀ւս ա պիրիս: Ամմա ո̀ւրա̀ն ախպորը տո̀ւս չի աննես, վերըմըն ա թուղես: Թաքավերը մո̀լիա̀թ ա ընես, վեր ըխճկանը տա ըտրան:

Ախճիգյը թաքուն կնչես ա ո̀ւրա̀ն ծըռոտանցը, վեր քյինին էն տղեն վերան տո̀ւս օնին: Գյա̀ղեքյը քյիս ըն տո̀ւս ուննես, պիրիս: Թաքավերեն ախճիգյը ընդրան նհետ փսըկվես ա:

Ընդրանա ետը փիս ախպորը դիվանը ընես ըն, ո̀ւրա̀նք էլ լա̀վ ըպրես: Ժողովուրթը ըսես ա. «Լա̀վո̀թո̀ւնը վեր կյետն էլ քցիս, կորչել չի»:

13.ԱՌԱՆՑ ՀՈՐԸ ՆԱՆ ՄՈՐԸ ՊԱՉԱԾ ԱԽՃԻԳՅԸ

Ինիս ա, չինիս մին թաքավեր: Ըտրան ինիս ա մին տղա, էտ տըղին փըսըկվելի վա̀ղա̀ն ա ինիս:

Հա̀րը ըսես ա.- Ա՛ բալա, փըսըկվելի վա̀ղա̀տ ա, եք մին ախճիգյ օզի, փսակվե:

Տղան ըսես ա.- Ցըես պիտի հանց ախճիգյ օզիմ, վեր վէչ հա̀ր ինի պաչած, վըէչ մար:- Ըսես ա, եր կընաս, քյինիս:

Քյինիս ա, քյինիս, ո̀ւրո̀ւլգյո̀ւնը մին պառավ կընգա տան ղոնաղ ընգնես: Էտ տղան լոխ էտ տանը նաղլ ա ընես:

Էտ կնեգյը ըսես ա.- Էտ պըենը շատ տժեր ա: Ուռութանան եր կը կենաս, քյինիս, իըղեցը քյըեզ ջըհլա̀կան ա մին բաղ, մաչին էրկու նոռնի ծառ: Ամեն մին ծառան մինը կկտրիս: Քյըեզ ըսըլական ըն. «Մինն էլ կըտրի, մինն էլ, մինն էլ կըտրի», ամմա կտրիս վէչ: Էտ նոռնը յոր կօնիս քյինիս: Առաչըտ ճո̀ւր ա կյըլական: Էտ նոռնը վըեր ճո̀ւրճո̀ւր անե, մինը կը կըտրիս, քըցիս ճո̀ւրը:

Էտ տղան միկա վըեսկե յա տաս պռավեն, ինքը քյինիս: Քյինիս ա, քյինիս, պըտըհես մին բաղու: Երկու նոռն ա կտրես, տինիս շո̀ւրումը էլհա քյինիս: Տըսնաս ա մին կուճի կյետ: Ըտեղ էտ նոռնը ճո̀ւր-ճո̀ւր ա ընես: Էտ տղան նոռնը կտրես ա, քցիս ճո̀ւրը: Ամմա ճո̀ւրը ցմըքես ա: Էրկունջի նոռնը հա̀լա̀ իտի մնաս ա ջուբումը: Էտ տղան մըտըծես ա, ըսես ա, թա̀ մնաս ա մին նոռնը, էս հի՞նչ պիտի անիմ: Տըսնաս ա, վեր էլա մին ըխպըրի ճո̀ւր եկավ: Դաստի էտ նոռնը կտրես ա քցիս ճո̀ւրը: Տըսնաս ա մին կյեռթնուկ տո̀ւս եկավ: Վերչը էտ տղեն վըեննը կացած տըեղը էտ կյեռթնուկը մին հո̀ւրո̀ւ փարի ախճիգյ ա տըռնաս:

Ըտեղ ախճիգյը ըսես ա.- Ցըես ըստեղ կենամ, տու քյինի սազանդար երկալ եք, ընծելա̀վ քյինիքյ ծեր տոն:

Տղան ըսեսա.-Փախչիս վըէչ հա՛: Ըտրա հետե ախճիգյը սանդըըը տո̀ւս ա ունես, մին չինա̀րի ծառ ա տըռնաս ըխպըեն քշտեն, էտ ախճիգյը վեր ըսես ա՝ քըշացը, քըշընաս ա, պիցիրա̀ց պիցըցնա՛ս ա:

Էտ ախճիգյը՝ վըեր ծառը քըշընաս ա, եր ա ինիս ծառեն էն երի ճըեղնը: Տղան հղե յա ինիս ո̀ւրա̀նց տոն: Թաքավերեն տանը ծառան, մին կյըեշ ախճիգյ, կյաս ա ճո̀ւրը, տըսնաս էտ ըխճկանը շափաղը տված ճիրին: Դա̀ստի գյիղա̀ս ա, վեր էտ էն ախճիգյն ա:

Էտ ծառան սիրիս ա ինըմ թաքավերեն տըղեն: Էտ ըխճկանն ըսես ա.- Քըշաց, յըես էլ կյամ կոշտտ:

Էտ հըրեղան ախճիգյը ծառը քըշըընես ա, ծառան էլ ա քինիս կոշտը, ըսես.- Դե մին շո̈րերդ ինձ տո, տըեսնամ ինձ յրա կյաս ա:

Լիա̀ կյընաս ա, պըծնես, էտ հըրեղան ըխճկանը կուփի տաս, քցիս ըխպըրին նովը: Էտ ախճիգյը ճրին իրեսեն մին փունջ մընեշա̀գյ ա տըռնաս: Թաքավերեն տղան զուռնա-դըվալավ կյաս ա, տըսնաս մին փունջ մընեշա̀գյ ճրին իրեսին, դա̀ստի յոր ունես, տինիս ջուբումը:

Կյաս ըն էտ չինա̀րո̈ւն հինչքան ըսես ըն՝ քըշաց, չինա̀րին քըշընաս չի, թա̀ էտ ախճիգյը եր կյա: Պիրիս ըն ծառը կտրես: Թաքավերեն տղեն աղուն կթես ա, գյիդա̀ս ա, վեր ո̈ւրա̀ն տըեսած ախճիգյը չի՛: Տընես ըն տոն:

Մին քանի օրանը ետը էտ առաչվա ծառան, վըեր էտ տըղեն կընեգյըն ա տըեռալ, մարթին ծեռքան մընեշա̀կեն փոնջը ինքյ ա ունես քցիս փիչը: Էտ մընեշա̀կեն փոնջը մոխեր ա տըռնաս: Մոխերը կտրես ըն քցիս հայաթը: Հըյաթումը մին ճուղպուրե ծառ ա տըռնաս: Ամեն մին օր թաքավերեն տղան քյինիս ա էտ ճուղուպրեն տակեն դինջընաս:

Տահանց մին խոխա յա ինիս, կնեգյը ստիբիս ա, վըեր մարթը էտ ծառը կտրե, ո̈ւրո̈ւրուց շինին: Պիրիս ըն, կըտրես: Կտրես տեղը մին տաշեղ ընգնես ա մին պառավ կընգա պուժկու մաչ: Էտ տաշեղը ըտեղ հա̀մա̀ն ախճիգյն ա տըռնաս: Միշտ եր ա կընաս, տոնը հըվըքես, սրփես, շինես: Պառավը մին հետ կյողը ա կընաս, փըռնես էտ ըխճըկանը: Ըտահանք մին տեղ ըպրես ըն:

Էտ ախճիգյը ըսես ա.- Հո՞ւնց անի մ վեր թաքավերեն տղան գյիդա իմ ըստեղ ինիլըս:

Էտ պառավ կընեգյը ըսես ա.- Քյինիմ ա̀սիմ, վեր մեր տանը մին խոխու հաղալիք շինող կա, եկ խուխետ հետի հաղալիք շինել տո:

Թաքավերեն տղան կյաս ա, վըեր ո̈ւրա̀նց խոխեն հետե հաղալիք շինիլ տա: Պռավեն տանը ախճիգյը ըսես ա.- Քյինի մին հիլի էլ պեր, մին տենակ էլ, մին նոռն էլ, ընդրանա ետը շինիմ:

Թաքավերեն տղան տահանք պիրիս ա, տաս ո̈ւրա̀ն, ինքյը փըրդեն քըմակեն կյողըը կընաս: Էտ ախճիգյը նի յա մըննես էն մին փիրդին քամակը, սկսես դա̀րդերը մին-մին պատմելը: «Ա՛ տենակ, յըե՞ս պենվամ, թա՞ տու պինվաս: Ա՛ նոռնը, յըե՞ս պճղվիմ, թա՞ տո՞ւ, ա՛ հիլի, յըե՞ս

կոտրվի՞մ, թա՞ տու»: Նոռնը պճղվես ա, հիլին ճըք- ճըքուտես ա, տենակը պինվաս ա, լհա՛ էտ ախճիգյը ուզիս ա, թա տենակը յոր օնէ սըերտը կոխէ, էտ լոխ թաքավերեն տղան ըսկընաս ա, քյինիս դա՛ստի տենակը ծըերքան ինքյ ունես, թուղես չի, վեր ո՛ւրա՛ն վնաս տա, էտ ըխճըկանը յոր ա ունես քյինիս տոն: Ո՛ւրա՛ն կընգանը ծիյին հաքյվան կըպես ա, հըյաթավը մին շոռ ըծես, ըսպընես: Խուխեն էլ տաս ա, վըեր մին ղուլուղչի տանէ, պահէ: Էտ ըխճըկանը նըհետ էտ տղան փըսկվես ա, հըրսանիքյ ըն ընես, լոխճին ըսես:- Հազիր էսա ճարալ ըմ առանց հա՛ր, առանց մար պաչած ախճիգյը: Մին լա՛վ քյեփ ըրեքյ:

Ըտեղ լա՛վ ըպրես ըն: Էտ ըխճըկանը աշկին ըրտասունքը ցըմըքես ա: Լա՛վ-լա՛վ խոխերք ա պիրիս, ո՛ւրա՛ն խըխորցավ նան մարթավը ուրխընաս ա:

## 14.ՄԱ՛ՐԶԸ

Ինիս ա, չինիս մին մարթ, մին կնեգյ: Էս մարթը նան կնեգյը ո՛ւրո՛ւր նհետ լա՛վը ըպրես ըն ըլա՛լ: Մեհետ կնեգյը հիվնդնաս ա սոտ տեղանն հանցու վեր մարթին ղարկէ օրիշ տեղ:

Մարթը հըրցնես ա.-Ա՛ կնեգյ, հի՞նչ պիրիմ քյըեզ հետէ, վեր սղանաս:

Կնեգյը մարթին ըսես ա. - Ա՛ մարթ, աշխարքես տա կեն ամենալավ ճո՛ւրը պեր, վեր խմիմ, մին րոպեյումը կսղանամ:

Մարթը էրկան մտծես ա, վերչը քթենաս, վեր էտ ճո՛ւրը անմահական ճո՛ւրն ա, վեր հեռու տեղ ա ինիս:

Մին օր մարթը ճընապար ա ընգնես դըի էտ ճո՛ւրը: Ճընապարեն պտհես ա ծին քըշիս մին մարթ, էտ մարթը հրցնես ա.- Ա՛յ մարթ, շտե՞ ղ ըս քյի՛ ս:

Էն էլ ըսես ա.- Քյիս ըմ անմահական ճո՛ւր պիրիմ, կնեգյըս հիվանդ ա:

Էտ մարթն ըսես ա.- Քու կնեգյըտ խփիս ա, հիվանդ չի, ետ տա՛ռ քինիքյ տոն, կնգա խըելքավ մել ընգնե՛լ:

Էտ մարթը ըսես ա.- Իմ կնեգյըս լա՛վ կնեգյ ա, տհի պեները փռնել չի:

Էրգան մտծելանը ետը մարթը ետ ա տըռնաս, մա՛րջ կյաս հըղըցավերեն նհետ էն պյմանավը, վեր թա հըղըցավերեն սսածը դո՛ւզ ինի, էտ կնգանը մարթը հըղըցավերեն մին չվալ պրինձ տա, թա՛ ինքյը դո՛ւզ ինի, հըղըցավերը ո՛ւրա՛ն մին չվալ պրինձ տա: Կընգանը մարթը մտնես ա

ծիավերեն չվալեն մաչը, մինա̀կ աշկերը պեց թուղես, վեր ո̀ւրա̀նց շենը տեսնա, ո̀ւրա̀նց տոնը նշանց տա:

Ճընապարեն էրկան չրչըրվելավ, հսնես ըն շենը, շտեղ ըպրես ըն էտ կնեգյը նան էտ մարթը: Ծիավերը քյիս ա, հսնես տոնը, հրցնես. - Ա՛յ կնեգյ, էս իրիգյո̀ւնըս ղոնաղ կպահի՞ս:

Կնեգյը ըսես ա. -Խե՞ չըմ պահիլ, աշկես յրա, իմ մարթըս ղարկալ ըմ օրիշ տեղ, ըրխըյին ըմ ընդա կողմանի, կոըեվ չանել:

Էտ կնեգյը եր ա կնաս հավերը մըրթուտես, տըպըկես ղունաղեն հետե: Մարթը էտ լոխ տըսնաս ա, չվալեն մեչան աշկերը պլզած:

Հղըցավերը հրցնես ա. - Չվալեն մաչան եշող աշկեր, քու աստծըտ ա դո̀ւզ, թա̀ իմ աստծս:

Մարթը եր ա կնաս, մա̀րջը տաս, համ էլ էնքան կնզանը յրան կըզնվես ա, ըսես, - Ա՛յ քու հվդարիմ ինիլըտ կլխետ տամ, հա̀լա̀ քյըեզ նշանց կտամ, թա հունց կխափին, մարթին քմակեն քյեփ անին:

Ըսես ա, դա̀մա̀ն պիրիս, կնզանը սպընես:

## 15.ԿՅՈՒԼԻՆ ՄՈՐԹԵՆ

Ինիս ա, չինիս, մին պառավ մարթ նան մին պառավ կնեգյ: Տըհանց ինիս ա մին տղա: Էտ տղատ մըծընաս ա, տոնաս քսան տրեկան: Հա̀րը, մարը մըսլըհաթ ըն ըսես, վեր ո̀ւրա̀նց տղեն փսակին:

Մին կընըրնչկյա̀րմո̀ւր ուռութանա մարը, հա̀րը եր ըն կնաս, քյիս հըրե- վանաց ըխճըկանը նշան, հանցու վեր մին տարանը ետը փսակին ո̀ւրա̀նց տղեն նհետ: Էտ տղատ քսանըմին տըիկանումը փըսըկես ըն էտ հըրըվանեն ըխճկանը նհետ, օխտը օր, օխտը քշեր հըսանեքյ ըն ըսես:

Մին տարանը ետը էտ ախճիգյը մին տղա յա պիրիս, պատրոնը շատ ա ուրխունաս, հարթնենը հետե մին վըեսկե մեդալյոն ա ինքյ ունես: Էրգան վախտ տղան նան հարթնը ըպրես ըն: Մին օր էտ հարթնը ըրա̀զա̀վ ա ընգնես, քաշկերը ընդրա յըրան մին կյո̀ւլո̀ւ մոըթե յըն քցիս, հանց վեր էտ հարթնը կյո̀ւլըթուն անե: Ամեն քշեր շոռ կյա, ուռթանան կյա:

Էրգա̀ն վախտ կնա՛ս ըն, կնա՛ս, էտ հարթնը ամմեն քշեր կյո̀ւլըթուն ա ըսես, ամմա հարթնանը սկեսուր նան պատրոնը գյիդա̀ս չըն:

Մին քշեր էտ պառավ կնեգյը եր ա կնաս, տսնաս հարթնը տեղումը չի, խոխան ո̀ւրո̀ւրոցումը լա̀ց ա ինիս: Սկեսուրը եր ա կնաս, տե՛ս հարթնը,

տե՛ն հարթնը, ամմա ըրվաս չի: Պատրոնը քյիս ա ծըմըկնեն շոռ կյաս, տըընաս էն ա մին կյում ա շինած, հարթնը կյո՛ւլո՛ւ մորթեն շոռ կալած, մըռթմըռթալավ վըսկըռնե յա կըրծկործում, հունցը վեր ծմակեն կյո՛ւլը: Պատրոնը էնքան կնաս ա, վեր հարթնը քոն ա ինիս, եր ա կնաս մորթեն կըլխըտական տո՛ւս ունես, պիրիս քցիս թուրունը, իրիս: Հարթնը սկսես ա լա՛ց ինիլը վեր մորթեն քցալ ա թուրունը:

Տրանա ետը հարթնը վեչ մին կյո՛ւլըթուն չի ընես, խո՛ւլո՛ւնք ա մնաս, էլ քշեր-ցիրեկ շոռ չի կյաս, ո՛ւրա՛ն խոխան լա՛վ ա պըհես, մըն էլ թա՛զա՛դա՛ն հրսանեքյ ըն ընես, վեր հարթնը խո՛ւլո՛ւնքացալ ա, էլ ծըմըկնեն չի քյինիս: Տրանավ էլ քաթը պըրծընես ա:

## 16.Ա՛ՐԱ՛ԶԸ

Զուր չըն ասում, վեր կնանեքյը մին լո՛ւն օղտը շինող ըն:

Սեյդիշենացե Մուլքունց Վանին քշերն ըրա՛զո՛ւմը տըեսնում ա, վեր բեղեն տեղը մին թև կնանչի յա փսած:

Ինքյը-ինքյը փիս պենու տեղ ա տինում, փիս նշան ա, զյուղո՛ւմ, վեր մթամ թա քյամբախտըթուն պիտի ինի ո՛ւրա՛ն:

Վխելան նհետ եր ա կենում կնգանը՝ Զա՛ռնըշանեն նաղլ անում. - Ա՛ կնեգյ, պա ասել չըս, քշերս ըրազըմըս տըեսե բեղես տեղը մին թև կնանչի փսած:

Սա էլ ա մտածմունքու մաչ իյնո՛ւմ: Կոժը յոր ա օնում, քյինո՛ւմ ճո՛ւրը: Հա՛լա՛ հղեննի հըրվանեն կնեգյը ջո՛ւմ ա, տրան նաղլ ա անում, թա.- Ա՛խճի Գյուլգյազ, պա ասել չը՛ս, մեր մարթը քշերես ըրազըմը տեսալ ա, վեր բեղեն տեղը մին փոնջ կնանչի ար փսած:

Էտ Գյուլգյազը քյինո՛ւմ ա, տըեսնում թուռնեն մին խիլլա՛ խոխեքյ, կնանեքյ հվաքված: Նահանց նաղլ ա անում, ասում.- Բա ասել չը՞ք, Զառնըշանեն մարթը քշերես ըրազըմը տեսնար, վեր բեղերեն տեղը մին փոնջ կնանչի, մին փոնջ կուտեմնը փսած: - Կուտեմնըն էլ ինքյն ա իվիլցնում:

Տահանք լոխ ըրմանում ըն, քյնա՛մ ամեն մինը ո՛ւրա՛նց տանը նաղլ անում, ամեն մինը ո՛ւրա՛ն գյո՛րա իվիլցնելավ:

Նաղլ ըն անում, ասում.- Զառնըշանեն մարթը՝ Վանին, ըրազըմը տեսալ ա վեր բեղեն տեղը մին մին փոնջ կնանչի, կընձմնձուկ, խա՛զա՛զ, մին փոնջ կուտեմնը, մին փոնջ սողան, մին փոնջ ըեղիսկա, մին փոնջ

քյա̀րա̀վո̀լզ, մին փոնջ կլինձ, մին փոնջ քավառ, մին փոնջ նա̀նա̀, ռեհան, սամիթ, թարխուն փըսած:

Վէրջը իտի մինը մինա̀ն, մինը մինա̀ն խա̀բա̀ր տնէլավ, իվիլցընէլավ, տո̀ւս ա կյամ, վէր տասներկու փոնջ կընանչի փսած ա տըեսալ իրեսեն:

Մեհետ էլ էտ Վանին հանդան կյալիս տահանց շենացէ մին մարթ տրան իրեսեն շատ ա յէշում:

Վանին հըրցնըմ ա,- Խե՞ տի եշում ըս:

Էտ մարթըն էլ տըմանո̀ւմ չի, ասում ա.- Ա՛ մարթ, պա յըես ըսկացալ ըմ, թա̀ իրեսետ տասներկու փոնջ կնանչի յա փսալ, պա հո՞ր ա:

Վանին տրան իսկըցնում ա, ասում.- Ըրա̀զըմըս ըմ տըեսալ: Էն էլ վէչ թա̀ տասներկու փոնջ ինա՛ր, էնա ասէ մին բոստան ա իլա̀լ իլի՛:

Էտ մարթը մնամ ա ըրմացած, թա էտ մին թև կընանչին հունց ա տասներկու փոնջ տըեռա՛լ:

## 17.ԴԵՐՎԻՇԸ ԳՅԻԴԿԱՆ ՉԱՐ, ԱՄՄԱ ԿԼՈ̀ԽԸ ԵԿԱԾ ԱՐ

Ժուկավ ժամանակավ Ղարաբաղի շնըթկներան մինումը մին դէրվիշ ար ապրում: Մին օր էս դէրվիշը ո̀ւրա̀ն կյիրին եշիզ, ասից, վէր Ղարաբաղ տասսը տարի ո̀ւրո̀ւր յրա սով ա իննա̀կան:

Մին ամես ար հինչ էդ դէրվիշը տանա, կործա ընզա̀ծ քյո̀ւչա̀քյո̀ւչա ժողովուրթեն ծեն ա տամ, թա̀.- Ա՛ ժողովուրթ, ծեր թաղարեք յը միհենզյանց քշեցեքյ, տասսը տարե սով ա իննա̀կան:

Էս խոսկերքը ըսկընալանը ետը ժողովուրթեն վըննը-ծըեռքը տափան կտրում ա: Սաղ օրը քենեքյ ըն անըմ, էլ ծեռքներավը պեն չի կյա՛մ, թա̀ անին:

Խա̀բա̀րը տամ ըն Վա̀րա̀նդու Մելիքյ Շահնազարին: Մելիքյը նստած ար Ավետարանոց շենումը: Մելիքյին ասում ըն, թա̀ էս թավո̀ւր մին մարթ ժողովուրթեն մաչը պրավակացիա յա քցա̀լ, միհենզյ ժողովուրթը պենա, կործա ընզա̀ծ, սաղ օրը մտածում ա: Մին օր Մելիքյ Շահնազարը մարթիքյ ա զարկում: Էտ մարթիքը կյամ ըն դէրվիշին յոր օնում, տանում Ավետարանոց:

Մելիքյ Շահնազարը խուսուցնըմ ա դէրվիշին, ասըմ,- Հի՞նչու հետնէ յըս իտի պրավակացիա քցա̀լ ժողովրթեն մաչը: Տու քանի՞ կըլխանե յը՛ս, վէր իմ ժողովրթեն քընենքյի մաչ ըս քըցալ, իմ էն ազրայիլ ժողովուրթես ազադ

մըծացած, ազադ կերած խմած ժողովուրթեւ:

Դերվիշը պաղասխանում ա.- Դե Մելիքյ Շահնազարը ապրած իենա, կյիրքեն եշալ ըմ, տի յա նշանց ավալ, տի էլ ասալ ըմ, էլ հի՞նչ կը կարիմ ասիմ:

Մելիքյ Շահնազարը դերվիշին պատիժ տալի միար կանչում ա ո̈ւրա̈ն իրեք օքնականներեն, հանգամանքը նաղլ անում:

Միենգյ Մելիքյ Շահնազարը սահանց անա հրցնում ա, թա հի՞նչ ռա̈ն-գյի, հի՞նչ փորմի պատիժ տա դերվիշին:

Մո̈ւվթա̈ խոսկը տամ ա առաչին օքնականեն:

Սա եր ա կենում, ասըմ.- Վեր էս դերվիշը էս թա̈հրի պրավակացիա յա քցալ մեր ազադ, բոլ-բոլ ապրած ժողովուրթեն մաչը, յըես առաչարկում ըմ էս մարթին տինինք նոր հեմնիյիս պատեն մաչին, պատը հեմնինքյ:

Էս խոսկերքը լսելավ, դերվիշը ետ ա տեռնում թա̈. - Ա̈սլի հո՜:

Էրկունջի խոսքը Մելիքյ Շահնազարը տամ ա էրկունջի օքնականին: Սա էլ եր ա կենում խոսում, ետնան առաջարկում ա, վեր դերվիշին դմա̈վ շախ կա տան, դինա̈ր-դինա̈ր կտորին:

Էս դո̈նում էլ դերվիշը էլա ասում ա,- Ա̈սլի հո՜:

Իրեքինջի խոսկը Մելիքյ Շահնազարը տամ ա իրեքինջի օքնական են:

Սա էս տեսակ ա խոսում.- Մելիքյ Շահնազարը ապրած կենա, մարթ ա իլի՜, բա̈լքյա̈ս խելքը մին պեն ա կտրալ, վեր տի յա ասալ, յըես ռազի չըմ, վեր էտ մարթին սպանին: Եկեքյ մին հավուր հաշեվ անինքյ, թա̈ էտ մարթը հաստատ դո̈ւզ ա ասալ, թա լիա̈ կըլխան ա տո̈ւս տըվալ, թա̈ լիա̈ կըլխեն ա զոռ տըվա՜լ: Էն վեր ռայոնում էս տարե շատ պերք ա կյլական, ընդաղան դա̈նը, պերքը տեղափոխինքյ էտ դերվիշին ասած ռայոնը, պահեստնեն դա̈նա̈վ լցնինքյ, եկող տարեն, թա վեր պերքը կկյա՜, վնաս չի կա, իլա̈ծեն կլխեն իվլա̈ցածան, իլա̈ծան վնաս չօնինքյ, չիլա̈ծան վնաս օնինքյ: Թա վեր պերքը կյալ չի՜, էնա լիա̈ մեր պահեստնեն լիգյը կինի՜, ժողովուրթը նեղոթուն չի քաշի՜լ: Բա բա̈լքյիս սով իլա̈վ, էն չախը հո՞ւնց բիդի անինքյ: Էս մարթը պառավ, քյա̈սիբ մարթ ա, ըզըդեցեքյ քյնա ո̈ւրա̈ն քյըսըբութունեն:

Էս խոսքերքը լսելանը ետը, դերվիշը իրեքինջի դո̈նումը ասում ա.- Ա̈սլի հո՜...

Դերվիշին էս իրեք պաղասխանը շատ ա զարմացընըմ Մելիքյ

Շահնազարին։ Ընդրա հետե դերվիշին անա հըրցընում ա.- Դե՛րվիշ, էս էրկու. մարթը քյըեզ շատ զոռի ըսպնեցեն, ընդրա միար ըսեցեր. «Ա̀ալի հո՛», պա էս խեղճ մարթը քյըեզ ըզադից, բիդի քյըեզ խոսից, ընդրան խե՞ ըսեցեր. «Ա̀ալի հո՛»։

Դերվիշը Մելիքյ Շահնազարին պադասխանից. -Մելիքյ Շահնազարն ապրած կենա, խոսկը քունն ա, հինչու օզում ըս ըրա, ամմա՛ յըես մին պեն կասիմ քյըեզ, թա վեր սոտ տո̀ւս կյա, գյիդա վեր էն առաչվա ասածըս էլ ա սոտ իննա̀կան։ Տու ինձ ճնանշում չը՞ս։

Մելիքյն ասում ա. -Չէ։

Դերվիշըն ասըմ ա. -Յըես էլ վեչ քյըեզ ըմ ճնանչում, վեչ էտ քու օքնականներետ, վեչ էլ գյանքըմըս Ավետարանոց ընզա̀ծ ըմ իլա̀լ։

Մելիքյ Շահնազարը ռազի յա կենըմ, վեր հվատում ա. -Միենզյ՝ էն առաչվա հնգյերը, վեր ինձ պատեն մաչին տիրա̀վ հեմնից, նա հայտնի բիննա̀հու տղա յա։ Ընդրա հա̀րը ինդի լա̀վ ուստա յա իլա̀լ, վեր էտ փշա̀կավը շատ հրուստացալ ա, տղեն տասներկու տարե կրթցրալ, միենզյ քյըեզ օքնական ա։ Էն ո̀ւրա̀ն ումբրումը էտ ա տեսալ, տրա հետե էլ ինձ տինո̀ւմ ա պատեն մաչին հեմնում, ուրեմը՝ ո̀ւրա̀ն ա̀ալին ա քաշալ։ Տրա հետ էլ ըսեցե «Ա̀ալի հո՛»։ Էն էրկունջի հնգյերը, վեր ինձ տվարու մսի մնան շախ կա յա տվալ, հայտնի ղաբու տղա յա։ Ընդրա հա̀րը ղըբբու-թունավ էնչանք հրստացալ ա, վեր տղեն տասներկու տարե կրթցրալ ա, միենզյ քյըեզ օքնական ա։ Նա գյանքում միշտ արո̀ւն ա տեսալ, ըտրա հետե էլ ինձ դմա̀վ ա տամ, սպանում։ Էն էլ ո̀ւրա̀ն աալին ա քաշալ, հինչու տեսալ ա, էն ա աշկեն առաչը կալա̀լ, տրա միար էլ ըսեցե «Ա̀ալի հո՛»։ Ամմա էս իրեքինջի հնգյերը, վեր ինձ ըզադեց, ըտ էլ հայտնի ռանչպարի տղա յա։ Ընդրա հա̀րը էնքան լա̀վ վըղապենու տա̀ր ա իլա̀լ, էնքան հարուստութուն ա եր կալալ, վըեղան, վեր տղեն տասներկու տարե կրթե-ցալ ա վեր ըսօր քու կոխկետ նստած, կարում ա կլո̀խ տո̀ւս պիրի։ Միենզյ էտ մարթը գյանքումը արո̀ւն տեսած չի։ Տա ըռնու նիետ կործ չօնե, ընդրա հետե էլ ո̀ւրա̀ն հնգյերունցը տեմ ա կաղնալ, ինձ ըզադալ։ Էտ էլ ո̀ւրա̀ն աալին ա քաշալ, տրա հետե էլ ըսեցե «Ա̀ալի հո՛»։

Էտքանը Մելիքյ Շահնազարը վեր լըսում ա, ասըմ ա. -Դերվիշին ասածը էտ իրեք մարթին անա լոխ դո̀ւզ ա։ Ընդրանա ետը յըես ռազի յըմ իմ իրեքինջի օքնականիս խոսկին, վեր դերվիշին ազադինքյ։

Մելիքյ-Շահնազարը էն մին օրանը ետը սկսից ո՛ւրա՛ն պաղրաստո-թունը տըեսնալը: Ետնան դո՛ւզ տո՛ւս եկավ դերվիշին աածը: Շրջանումը էրգյան վախտը սով իլա՛վ, ժողովուրթը նեղոթուն քաշից: Ընդրանա ետը, քանի վեր Մելիքյ Շահնազարը ո՛ւրա՛ն թաղարեքյր շուտվա՛նից քաշալ ար, ժողովուրթն ազաղվից սովան:

## 18.ՎԸԵՍԿԵ ՋԱՄԸ

Ինիս ա, չինիս մին զորբա տղամարթ ա ինիս: Էտ տղատ մին օր տանան տո՛ւս ա կյաս, քյինիս հա՛նդը: Կյաս ա տըսնաս տոնը, պենը սաղ թըլանած, տարած:

- Հա՛յ հարա՛յ, էս հի՞նչ պեն ա, էս հինչ նաղլ ա, վեր իմ կըլո՛խս ա եկալ:

Ժողովուրթը թա՛.- Պա ասել չը՞ս, փլան տեղը մին թա՛րա՛քյամա կա, ընդրանք եկեն թըլընեցեն...

Էտ տղան եր ա կընաս, քյինիս թուշ բիդի էտ թա՛րա՛քյաման: Էլ մին պեն չըսես, լի՛ս սո՛ւվթա՛ խոսկը պարիյօր ա տաս, ըսես.- Պա ինձ ծըեզ հընգեր չը՞ք յոր օնել:

Ընդրանք էլ ըսես ըն, թա՛.- Տասնըմին չինինքյ, տասներկունը ինինքյ, մինա՛կ քյինիլ պիտիս մին էրկու վեղրա՛ ճո՛ւր պիրիս, ետնան:

Տա ասում ա.- Ճո՛ւրը պիրիլը շատ տիժա՛ր ա:

Էտ տղան համ իտի յա ըսես, համ էլ յոր ա ունես էրկու վեղրա, քյինիս ճրի:

Լի՛ս ուզիս ա թա՛ ճո՛ւր յոր օնե, տըսնաս ա տըերան մինը թռչած եկավ, տղեն յախան փռնից, թա՛.- Հո՞ր ըս տընես էտ ճո՛ւրըտ:

Ըտըեղ կըռեվ ա տըռնաս:

Էտ տղան տրան լի՛ս ուզիս ա, թա՛ սպանե, մին էլ տըսնաս ա, էլ մարթ չիկա: Լի՛ս քըշտեն մին վըեսկե ջամ ա վեր ընգած:

Էտ տղան յոր ա ունես, թա՛ տանե բըզարումը ծախե, մին էլ մին ջուհուդ տո՛ւս ա կյաս, շառավ տաս, թա՛.- Էտ իմ պապու ջամն ա:

Կործը սուդի յըն տաս:

Սուդը ըսես ա.- Թա՛ վեր կարես էտ ջամեն մընան մի օրիշ ջամ էլ պիրիս, էն վախտը էտ ջուհուդեն կախ ընք տըլական, վեր պիրիս վեչ, էն վախտը քյըեզ ընք կախ տըլական:

Տղան օզի, չօզի պիտի քյինի ճարի:

Եր ա կընաս օխտը տըրնեն մսլըհաթ տըսնաս, քյինիս։

Շատ ա քյինիս, խրեգյ ա քյինիս, մին շենում մին պռավու տան դռնաղ ա ընգնես։ Տա տըսնաս ա էտ կնեգյը շատ տուխուր։ Հըրցնես ա, թա̀.- Ա՛ մար, խե տուխո՞ւր ըս, հի՞նչ ա պըտահալ։

Պառավը թա̀.- Բա՛լաս, պա մեր թաքավերեն տղան մըեռալ ա, էս ա էրկու տարի յա միշտ քըշէրը ջա̀հիլ-ջհո̀ւլ չասավոյ ըն կըգնես հերթավ, մինչև ռութանան։ Ծեքյին մինը կյաս ա, լոխճին կուտուրես։ Թա̀ հի՞նչ պեն ա, ըտել չի գյիդվա̀ս։

Էտ տղան եր ա կընաս, քյինիս թաքավերեն կոշտը, ըսես. – Թաքավերն ապրած կենա, էս քըշեր էլ յըես ըմ քյիննական չասավոյ կենամ։

Ըտեղ թաքավերը ծըծըղես ա, ըսես.- Լա̀վ կինի։

Տղան ըսես ա.- Ինձ հետե մին փոս էլ կըտրել տվեքյ, մին ճպատ էլ տվեքյ, մինա̀կ վեր էս պենը կըլո̀ւխ պիրիմ, հինչ վեր օզիմ, պիտի տաք։

Ո̀ւրո̀ւր խոսկ ըն տաս։ Էտ տըղան քըշերը քյինիս ա թաքավերեն տղեն հանգյիստին քշտեն փոսը նի մննես։

Մին էլ ա տըսնաս սհաթի տասներկուսին սաղ աշխարքը տո̀ւրո̀ւր եկավ, մին ծիավեր թոչից, եկավ թո̀ւշ էտ հա̀նգյիստին կոշտը, շալլաղը հանից, մին դոնում թխելավը քարը տեն կըցրավ, մին էլ թխեց, վըեղը քա̀շվից, թաքավերին տղան տո̀ւս եկավ, ո̀ւրո̀ւր նըհետ խուսեցեն, ետնան էլիա շըլլաղավ թխից, լոխ ո̀ւրա̀ն տըեղը եկավ։ Մինա̀կ քարը ծոռ վեննը կացավ։

Էտ թևավուրը ուզես ա, թա̀ հլա̀ թոչի, փոսան էտ տղան տո̀ւս ա կյաս, ըտրան յախան փռնես.-Լա̀վ ըմ քթա̀լ, վըեննը կաց։ Տահանք ո̀ւրո̀ւր նհետ կըռըեվ ըն ընես։

Էտ տղեն օժը հըխտես ա, լհա̀ ուզիս ա, թա սպանե, գյիրթ տըսնաս ա էլ մարթ չիկա, մինա̀կ շալլաղը քըշտեն վեր ընգյած։

Էտ տղան շալլաղը յոր ա ունես քյինիս թաքավերեն կոշտը, ըսես.- Եք նիաշ տամ, թա̀ հո̀ւնց ա տըղատ սըղանալու։

Սաղ ժողովուրթեն ծեն ա տաս, էտ շալլաղավը թխես, թաքավերեն տըղան եր ա կընաս, սըղընաս։

Էտ տըղան ետ ա տըռնաս թաքավերեն ըսես.- է՛լ չի քու ջա̀հիլ, ջհո̀ւլիդ նիախ տեղան կըտորիլ տաս։

Թաքավերը հըրցընես ա.- Պա հի՞նչ տամ, վեր տըղաս սըղըցրալ ըս։

Էտ տղան ջամը հընես ա, թա̀.- Իստի մին ջամ տո:

Թաքավերը մնաս ա սառած, թա̀.- էտ վըեսկե յա, էտ էն ջաղու ըխճկորանցը ջամն ա, մըեզ ինիլ չի: Ուզիս ըս քշըռքավտ մին վըեսկե տամ:

Տղան յոր չունես, եր ա կընաս քյինիս:

Շատ ա քյինիս, խրեգյ ա քյինիս, մին օրիշ շհա̀ր ա նի մննես, տըսնաս ժողովուրթը լոխ տո̀ւզնը կուտըրվես:

- Էս հի՛նչ ա, հի՛նչ չի:

Թա̀.- Պա ասել չը՞ս, այլերը ծովեն էն մին ընգյո̀ւնա̀ն ա կյաս, սաղ թափվես ծովեն մաչը, գյիղա̀ս չընք, թա̀ էս հի՞նչ զորութո̀ւն ա:

Էտ տղան քյինիս ա թուշ թաքավեր են կոշտը, ըսես.-Թաքավերը ապրած կենա, էս դո̀նումս էլ յըես ըմ քյննա̀կան , այլերը պիրիմ, վեր պիրիմ, մինա̀կ հինչու օզիմ, ինձ բիդի տաս:

Խոսկ ըն տաս ո̀ւրուր: Էտ տղան քյինիս ա պրախոդ նըստես, հայդա ծովեն էն ա̀նգյո̀ւնը:

Լհա̀ քյինիս ըն պրախոդը այլերավ լցնես, պիրիս, ծովեն մաչավը տո̀ւս ընես տեղը, տըսնաս ա պրախոդը ըսես ա, թա̀ լհա̀ պըրանվե: Ցիշիս ա, տըսնաս, լհա̀ մինը վըեննավը կուփի յա տաս, թա̀ լհա̀ տակըն անե: Էտ տղան կըզնվես ա, թա̀ լհա̀ վեր ընցնե փա̀ղա̀վը տրան սպանե, մին էլ տըսնաս ա էլ մարթ չիկյա, մինա̀կ մին մուտանա ընգալ ա պրախոդեն մաչը: Էտ տղան յոր ա ունես: Ըսկսես ըն այլեր պիրիլը: Ժողովուրթը սովա ըզըրդվես ա:

Թաքավերն ըսես ա.- Հի՞նչ տամ:

Տղան թաքավերեն անա մինա̀կ մին ջամ ա ուզիս, ջամն էլ նշանց ա տաս:

Ամմա թաքավերն ըսես ա.- Օնինքյ վեչ: Օրիշ պեն օզե:

- Պեն չի հարկավեր: Տղան անց ա կընաս, փոխըրփեշմա̀ն քյինիս: Վեց տարեն թամամ ա ինիս, ուզիս ա քյինի տոն, մին էլ յիշիս ա տըսնաս մին հասար, մաչին լա̀վ-լա̀վ պալատնե: Դըրբըզան պինա̀ս ա լհա̀ նի մըննես, տըսնաս վեչ մին մարթ չիկյա: Մինա̀կ մին տան մին լա̀վ ստոլ սարքած, ամմա մարթ չիկյա:

Տղան ըսես ա.- Հա̀լբա̀թ ըստեղ մին պեն կա:

Կյո̀ղլ ա կընաս տռանը մղակումը, տըսնաս, ըհը՛, ճըղըվըղը ընգա̀վ:

Տասնըերկու ախչիգյ եկեն, պար եկեն, ստոլեն չորս ընգյո՛ւնեն նըստոտե-ցեն, սկսեցեն կյինի խմելը: Մո՛ւվթա՛ ստաքանը մին ախճիգյ խմես ա, թա՛. – Ցըես կխըմիմ էն քաջ տղեն կյենացը, վեր վախ չօնե, սաղ քյարվանը ծարավ կըտորեցե, լհա՛ էտ տղան օզից, թա՛ ինձ սպանե, զոռավ փախե, ըզըդվեցե, մինա՛կ ջամս ծեռքաս ընգավ:

Էրկունջի կյենացը մին օրիշ ախչիգյ խմես ա, թա՛.- Ցըես կխըմիմ էն քաջ տղեն կյենացը, վեր սաղ քաղաքը ո՛ւրա՛ն թաքավերեն ծեռքավը կուտորել ըմ տվալ, մինա՛կ մին քաջ տղա եկավ, թա՛ լհա՛ ինձ ըսպանե, զոռավ փախե, մինա՛կ շալլաղս ծեռքաս ընգա՛վ:

Իրեքինջի կյենացը մին օրիշ ախչիգյ ա խմես, ըսես.- Ցըես էլ կխըմիմ էն քաջ տղեն կյենացը, վեր սաղ քաղաքը տո՛ւզնը կուտուրվես ըն իլա՛լ, լհա՛ մին քաջ տղա օզից, թա՛ պրախողեն կլխեն ինձ ըսպանե, վխելաս փախե, ծեռքես մուտանան ընգավ պարախողը:

Խմես ըն, եր կընաս պար կյաս, թա՛ լհա՛ նստին, էտ կյո՛ղլ կացած տղան ուզիս ա, թա ճաքվե, տո՛ւս ա կյաս ըսես.- Ցըես էտ հա՛մա՛ն տղան ըմ:

Էտ ըխճկերքյը հըվըտաս չըն, թա՛.- Սոտ ըս ըսես:

Տղան տուս ա ունես ջամն էլ, շալլաղն էլ, մուտանան էլ լոխ ըտրանց նշանց տաս: Ըտրանք մընաս ըն շըշկըլված: Ո՛ւզիս ըն, թա՛ էտ տղեն կլխավը շոռ տան:

Հըրցնես ըն.- Պա հո՞ւնց ըս եկալ, էտ հի՞նչ պեն ա:

Տղան հանգամանք լոխ պըտմես ա: Էտ ըխճըկերքը, ամմեն մինը տո՛ւս ա ունես իրեք ջամ, տաս էտ տըղեն:

Տղան մնաս ա շա՛շված: Լհա՛ իրեք ջամ ա յոր ունես, ըսես. – Պա հո՞ւնց քյինիմ, ա ըխճըկերքյ, ախեր... Վա՛ղա՛նս թամամ ա:

Էտ ըխճըկերքըն ըսես ըն.-Մեր ծիավը քյինի, մին էլ եք:

Էտ տղան եր ա ինիս մին կյա՛րմո՛ւր ծի, թռչիս, քյինիս ո՛ւրա՛ն հա՛մա՛ն շըհա՛րը: Տըսնաս ա լհա՛ կախաղանը հազըր, վեր պիտի կախ տան տասնըմին հընգյերունցը: Տըղան ըտրանց կոշտն ա քյինիս, ջամերը նհաշ տաս: Էտ վեր տըըսնաս ըն, սոտ ըսելի հետե ջուհուղեն կախ ըն տա՛ս: Տղան ո՛ւրա՛ն տասնըմին հընգյերունցը յոր ա ունես, քյինիս բիդի էն ըխչըկերքը: Ընդեղ պիծի ախչիգյը ինքյն ա յոր ունես, ամմա մնացածը տաս ո՛ւրա՛ն տասնըմին հնգյերունցը, ամմեն մինը մինինն նըհետ փըըըկես ըն, մին լա՛վ հըրսանեքյ ընես, ըտըեղ լա՛վ ըպրես:

## 19.ՋԱ̀ՔՅԻ ԱՊԵՐԸ

Օխտանասունը հենգյ տրեկան Ջա̀քյի ապերը կոզի պռավածինի, ամմա շատ աշխադասեր ա, միշտ ընդրան հա̀ննդին կըտեսնաք: Թա հո̀նձին վախտը, թա̀ բաղեն մաննը կըտրեյիս, թա խոտ հնձելիս, տանը մին օր կենըմ չի:

Մին դո̀նըմ Ջա̀քյի ապերը հո̀նձ ա քյինո̀ւմ: Էշը փլանըմ ա, հա̀յբա̀ն յրան քըցո̀ւմ, չինը հայբին մաշին տնո̀ւմ, եր ինո̀ւմ էշը, քյինո̀ւմ:

Ջա̀քյի ապերը վեր ծա̀քյին հըսնում ա արտը, դա̀ստի սկսում ա հո̀նձը, մինչը քյըսօր: Քյսօրավախտը ետ ա տըեռնում, փնջաքեն տակեն նստում, կյո̀ւշը տո̀ւս օնըմ, մածունը ածըմ կյուշին մաչը, հացը նի փրթում, ճիրա̀ն խառնում նհետը, քթո̀լը յոր օնում, թա օտե, բո̀ւրդա̀ն տըեսնըմ ա կըռքնեն թողալ ա տանը, մընման ընգալ ա, թա̀ կըռքնեն տինի պիրա̀նըմը: Խըեղճ Ջա̀քյի ապերը եր ա կենըմ փրթո̀ւշը թողում ընդեղ, մին խիլլա̀ տեղ զարբ անըմ, շենան մուտանում սկսում կընգանը ծեն տալը: -Հե-հե՛՛ Բախ-ճագյո̀ւլ, հե՛՛՛ Բախճագյո̀ւլ:

Շատ ծեն ա տամ, վերչը ո̀ւրա̀ն կնեգյը՝ Բախճագյուլը ըսկանըմ ա.- Ա̀դա̀ Ջա̀քյի՛, հի՞նչ ա, էտ հի՞նչ ա, ասե ասե՛, էս ըմ ըսկընայիս, ասե տեսնամ հի՞նչ ըս օզում:

Ջա̀քյի ապերը՝ թա.- Ախչի, կըռքնես է՛, կըռքնես պե՛ր, պե՛ր, հաց ըմ օտում, ճելլի ըրա է՛՛՛, ճիլլի՛՛՛ եք:

Բախճագյո̀ւլը նի յա մընըմ տոն, թա կըռքընեն պիրի:

Ջա̀քյի ապերը քյինո̀ւմ ա, տըեսնըմ փրթո̀ւշը լօխ դուշերը կերած, մնում ա վա՛յ-վա՛յ ընելիս: Ետ ա տըեռնըմ, թա քյինի Բախճագլո̀ւլին ծեն տա, հանցու վեր նոր մածուն պիրի, տըեսնըմ Բախճագյո̀ւլը նի ա հսալ, կյամ ա:

Ասըմ ա.- Ա̀դա̀, Ջա՛քյի, էտ հի՞նչ ա պտահալ:

Ասըմ ա.- Ախճի, պա տըեսնըմ չը՛ս, էս շան տղեն ընդրնեն հի՞նչ ըն ըրալ, փո̀ւրթո̀ւշը լօխ կերալ ըն:

Բախճագյուլը ասըմ ա.- Վէչինչ, ա՛ մարթ, ջանըտ ինի սաղ, ըտրա հետե դա̀րդը-դեյիդ մանել, կքյինիմ մին էլ պիրիմ, տու լիա̀ լա̀վ հո̀նձ ըրա, էս կառավարոթունեն ջանեն մատաղ, հանց օրենքյ ա քըցա̀լ, հինչու օզըմ ըս, կա ու կա՛, պռաված, ծեռքա ընգած ջըվըրներեն էլ ա միա̀լ քցում, եշըմ ա, պահում ա, հատե պըռավալ ըս, սաղ կըռքնետ վեր ա տեռալ, վեր էս

օրենքյը չինար, քյըեզ հո՞ւ իտի կոքնե կտա՛ր։ Էն պիրիշա̀կ Նիկալայ են վխտեն լիա̀ սաղ-սըլամաթ մարթուցու հափուռը պող ին ածում։ Պրիստա-վը, քյոխվան մեզ շատ տընջեցեն, դե միենգյ տըես մինը-մինին անա վախըմ ը՞ն, լոխ էլ մին ջուռա ջըվըրնե յըն, հալալ քըրթնըրնքըմ ըն, հալալ օտում, վեչ մինը մինին աշխադանքը օտում չի, հու վեր անըմ ա, էն էլ օտում ա, հու վեր անըմ չի, օտում չի, պըրծավ քյինից։ Դե էլ մտածիս վեչ, մին պատառ էլ հնձի, քյինիմ մեր տանան մին պօլիգյ մածուն պիրիմ, համ էլ ասըմ ըն կօլխոզը պաները պժենըմ ա, քյաօրա ետ քյինիմ ստանամ, էլիա պիրիմ։ Ա̀դա̀, թա նըղացալ ը՞ս, հնձ տո պատառ էլ յըես հնձիմ։

Չէ՛, ա կնե՛գյ, տու քյինի մեր հեյվաններեն ուրուն ըրա, լա̀վ պահե, վեր միկա կաթնը տա, էս հո̀ւնձեն վախտը մածունն ա ինձ պահում, համ էլ ճելլի քյինի, դե միենգյ էլ կոքնես պերալ ըս, մածուն չիկա, ճելլի ըրա հացրու մին էս արտեն ջանեն ինիմ։

## 20.ՋԸ̀ՔՅԻ ԱՊՈՒՆ ՄՈՐՈՒՆ ՆԱՂԼԸ

Մեհետ կյարունքը մին բոզ էշ ունինքյ, նստեցե քյնա̀ցե, թա̀ Երգյան Գյո̀ւնան փա̀ղ պիրիմ։ Փա̀ղ ըրած կյալիս, մեր շընացե Շա̀միրը ինձ ջիից, թա̀.- Մաքյի դայի, մեր եզնը տեսալ չը՞ս։

Ըսեցե.- Չէ՛, քումմատա՛ղ։

Մին էլ պատառ վեր եկե ըտըղան, եշեցե տեսե, ճոխտակ եխծեն դո̀շումը, կինի տիենց մին քյան վերստը, մին պեն ա կյրմիրի տամ։

Ըսեցե.- էս կա, չիկա, մեր Շա̀միրին եզնըն ա։

Ըսեցե թա̀ ծեն տա՛մ, մնգ էլ կասիմ, այշի՛, չէ՛, էս ա ընդեղավ ըմ քյննա̀կան, յըես կտանիմ։

Քյեցալ ըմ, քյեցալ, մուտացալ էս կյարմո̀ւր պենին, տեսալ եզնը չի՛, մին մեծ մորե յա հսած, փըսած, կյրմըրա՛ծ։

Յրան ինգի՛, մին լա̀վ կերե։ Մին խուրջին կար էշիս յրան, կացենս եր կալի էս մորես ճղուրտեցե, ըծեցե խուրջինս, պերե տոն։

Խոխենքյս էտ մորուն կեսը կերեն, կեսն էլ կտուրեցեն չուրըցըրեն, չամենչ շինեցեն։ Հա̀լլա̀ միչև օրս էլ էտ մորեն մննաս քյնո̀ւմ չի՛։ Ամմեն տարե քյնա̀մ ըմ ընդեղ տեսնում, էլիա իտի մորե յա ինո̀ւմ փըսած... Մին լա̀վ օտում ըմ, էլիա կացենս յոր օնըմ, ճըղորտում էտ մորեն, խուրջինս ածըմ, պերըմ տոն։ Կեսը խոխենքյը օտըմ ըն, կեսն էլ չուրուցըրնըմ, սաղ ծմեռնը օտըմ։ Ամմեն տարե քյինամ ըմ ընդեղ, տեսնում, էլիա իտի մորե կա՛։

## 21.ՄԱՔՑԻ ԱՊԱՆ

Ստեփանակերտա մին օր Մաքյի ապան կյալիս ա ինո՞ւմ: Կյամ ա Դըշպուլաղա ճղցներան անց կենում, տեսնում մին Նրկյղեցե մարթ ըրբավը կյամ ա, տեղն էլ շատ դո՞ւզ ա ինո՞ւմ, ամմա ինքյը եզներեն հտնում չի, լիա՛ վեր ինքյը եշում ա Մաքյի դայուն, եզները տանում ըն ըրբան պարան տամ քարերեն յրան: Կզնված-կզնված ետ ա տեռնում, Մաքյի ապուն յրան ճըղղըմ, ասում.-Ա հի՞նչ ըշկավար ըս, աշկ օնիս է՛ քյըեզ, դայի՛:

Մաքյի ապան ետ ա տեռնում տրան աում.- Հա՛, աշկ օնիմ, պա քյըեզ մնան քոռ չում, վեր էս դո՞ւզ տեղս ըրբան պարան տամ:

## 22.ԲԱԳԼՅԱ̀Ր ԹԱՔԱՎԵՐԻՆ ՊՈՉԸ

Իլա̀լ ա, չիլալ մին թաքավեր ա իլա̀լ, անումը Բա̀գյլա̀ր: Ըտրա կլխեն իլա̀լ ա մին պոզ: Հինչ դա̀լլա̀ք կյալիս ա ըլա̀լ ըստրա իրեսը, կլո՞խը վեր ընելիս, էտ դա̀լլա̀քին կըլո՞խը կտրել ա իլա̀լ տալիս, մին հոր քցելիս ա իլա̀լ: Ըտրանց քաղաքումը մընըմ ա լիա̀ մին դա̀լլա̀ք, էն էլ պիրիլ ա տալիս, վեր իրեսը, կլո՞խը վեր անի: Վեր վեր ա անըմ, պըծնում, Բա̀գյլա̀ր թաքավերը աում ա,-Ցըես քու կլո՞խըտ պիտի կտրեմ:

Էս դալլաքը աում ա.- Բալա՛մ, խե՛ պիտի իմ կլո՞խս կտրես:

Ասում ա.- Վախըմ ըմ քեզ պաց թողեմ, ասես, վար իմ կլխիս պոզ կա:

Էս դա̀լլա̀քը խոսկ ա տալիս, վար վեչ մին տեղ ասիլ չի՛:

Դա̀լլա̀քը տոն քյնա̀լիս, հղցեն տըեսնում ա, վար էն ա փորը օռչում ա, օզում ա տրաքե, վար էտ թա̀զա̀ խա̀բա̀րը ասե վուշ: Տեսնում ա մին ճրա̀վեր, սա կռանում ա, էս ճըրըվերըմը իրեք դո՞ւնըմ աում,- Բա̀գյլա̀րը բաշեն պոզ օնի՛: Բա̀գյլա̀րը բաշեն պոզ օնի, - վար փորեն օռուցը քաշըմ ա, ինքյը կյա̀լիս ա տոն:

Էս ճըրըվերան մին դամիշ ա տո՞ւս կյալիս: Մին օր, մին չոբան տեսնում ա, վար էն ա ըտըեղ մին դամիշ փսած:

Չոբանը կյա̀լիս ա էտ դամիշը կտրում, մին ծվվան շինո՞ւմ : Սա փչելիս տեսնում ա էս ծվվանն աում ա,- Բա̀գյլա̀րին բաշին պոզ կա՛: Բա̀գյլա̀րին բաշին պոզ կա՛...

Չոբանը էս ծվվանը պերում ա շենումը մարթկանցը, խնոցը հըվաքում, սկսում ծվվան ածելը:

Էս հվաքված մարթիքյ լոխ լսում ըն։

Էտ խմբըրը տարածվում ա, հըսնում ա թաքավերեն։ Սա դմստի կլոխ ա ընգնում, վար սա էն դմլլքին պըններն ա։

Մին օր էտ դմլլքին կանչում ա, ասըմ.- Դա տու ըսեցեր վեչ, վար վեչ մինին ասել չըս։

Դմլլքը ուրթում ա օտում, վար ինքը վեչ մինին ասալ չի, մին ճըրըղվերա կըման։ Թաքավերը չոբանին կանչում ա, պերում, ասում։- Խե՞ յըս էս խմբըրը պմց թողմլ։

Չոբանը ասում ա,-Ինձ վեչ մինը ասալ չի, ճըրըղվըերան մին դամիշ ըմ կըտրալ, ծվվան շինալ, ածելիս տհենց ա ասալ։

Թաքավերը մին էլ ա իրեսը, կլոխը վեր անել տալիս, ետնան դմլլքին նան չոբանին կլոխը կտրել ա տալիս։

## 23.ՉԱՐ ՊԱՌԱՎԸ

Իլմլ ա, չի իլմլ, մին չար պառավ ա իլմլ։ Էտ պըռավեն էրկու ախչիգյ ա իլմլ, մինը՝ խորթ, մինը՝ հալալ։ Խորթ ախչիգյը շատ խելունք անջուկթիթև ա իլմլ, ամմա հալալ ախչիգյը թոքի յա իլմլ։ Ժուղովուրթը շատ սիրըմ, հարկում ա իլմլ խորթ ըխչկանը։ Ըտրա միար պառավը ուզեցալ ա, վեր խորթ ըխչկանը կուրց ընե, հանցու վեր ժուղովուրթը սիրի ուրմն հալալ ըխչկանը։ Պառավը մին հնարք չի քթմլ։ Ըշտեղ զարկում ար ըխչկանը, ախչիգյը վազ տալավ քյընում, կյմլիս ար։

Պառավը քնենքյ ա ըրալ քնենքյ, վերչը հնարը քյթմլ։ Էրկու հաց ա թխալ՝ մինը՝ լմվ, համմա էն մինը՝ շատ աղի։ Մին օր սա ըխչկերանցը վեր ա կըցըրալ, թա քյնում ընք Կըքավա սարը, շամ վառինքյ։ Ըխչկերքյը եր ըն կնաս մորը առաչը ընգնիս, քյինիս։ Շատ ըն քյինիս, խրեգյ ըն քյինիս, ըխչկերքը սուվուծընաս ըն։ Մհետ մարը էն սորուն հացը տաս ա հալալ ըխչկանը, ամմա աղի հացը տաս ա խորթ ըխչկանը։ Ըխչկերքյը օտում ըն։ Աղի հաց օտող ախչիգյը շատ ա ծրավում, ամմա ճուր չի ճարում։

Պառավը պիրըմ ա մին սարի պտոկ, մհետ ըխչկանը ըսես. - Էս չոր հացը թուլ ըմ տլական։ Ըստուծեն հրամանավը քյննմկան ա ախպուրը ճարի, կխմիս, մհետ կյաս։

Հացը թուլուլ ա տաս, խորթ ախչիգյը քյիս ա, քյիս, վեչ հացն ա ճրիս, վեչ ախպուրը։ Շատ վեր քյիս ա, պառավը մին էլ ուրմն հալալ ախչիգյը

փխչիս ըն, կյա̀ս տոն: Խորթ ախչիգյը շատ ա շոռ կյաս, համմա վեչ ախպո̀ւրն ա ճրես, վեչ հացը: Քշերը լա̀ց ինիլավ կյաս ա տոն:

Մարը ըսիս ա.- Ցա քյնի հացը ճարի պեր, յա քի կախ ըմ տլական քշերը:

Ախչիգյը ընգիս ա ծմկնեն, լա̀ց ինիլա̀վ շոռ կյաս, վեր հացը ճարի: Շատ վեր լա̀ց ա ընիս, ըրտսունքները մին կյետ ա տռնայս ըսկսիս քյնա̀լը: Էտ կյետեւ ճո̀ւրը հոսիս ա մին չուբանու: Չոբանը խմիս ա, տսնայս աղի: Էտ վեր տսնայս ա, զրմնայս ա: Եր ա կնայս էտ ճրիտ վա̀րը յոր ունես քյիս... Շատ ա քյիս, խրեգյա քյիս, տսնայս ա մին ախչիգյ նստած մուղուր, մուղուր կյալավ խըրըվխարավ կյալավ լա̀ց ա ինիս:

Հըցնիս ա.- Ա՛յ ախչիգյ, խե՞ լաց ըս ինիս:

Ախչիգյը մին-մին պտմիս ա ո̀ւրա̀ն դա̀րդը: Ա̀հետ եր ա կնայս, թա̀ քարնվեր ընգնի: Չոբանը թուղես չի, փռնես ա պիրիս ո̀ւրա̀նց շենը:

Ա̀հետ քյիս ըն չար պռավեն ըսիս.- Ա՛ պառավ, պա ասի՞լ չըս, ստի-ստի մին ախչիգյ տըեսալ ըն էն սարըմը կախ իլա̀ծ:

Պառավը ուրխունայս ա, չուբանեն ըսիս.- Վեր տո̀ւ տի լա̀վ խբար ըսսպիրալ տու կինիս իմ փեսեն:

Չոբանը տսնայս ա, վեր պառավը դա̀սիդ ա ըրալ, յոր ա ունես պռավեն ալ, ուրան ըխչկանն ալ տնիս էն սարը, ըշտեղան հացը թուլուլ ա տվալ, խորթ ախչիգյը ղարկալ ընդեղ: Մին մըեծ քերծա քցիս տակը, ըրկոքանեն ալ գյոռբագյոռ ըրիս:

Կյաս ա էն խորթ ըխչկանը հետե ո̀ւրա̀ն վըխճըրներան մին լա̀վը մուրթես, հրսանեքյ ընես, տնիս ո̀ւրա̀ն հորը տանը, թուղիս, ինքյը քյիս ո̀ւրա̀ն պենեն:

Էն օրանը ետը հու վեր հո̀ւրո̀ւ մին փսո̀թուն ա ընիս, ասիս ըն. – Ա՛խճի, չար պառավն ը՞ս:

## 24.ՏԸՂԱՆ ՀՈՐԸ ՓԵՇԱԿԸՆ Ա ՍԸՎԵՐԸՄ

Ինո՛ւմ ա, չինո՛ւմ մին մարթ մին կընեգյ, ըտհանց ինո՛ւմ ա մին տըղա: Մարթը շատ լա՛վ վըրես անող ա ինում: Պըռավըմ ա, կնգանը ասըմ.-Դե յըես ըսօր՝ էքյուց մըռնըլական ըմ, ամմա հանց կանիս խոխան փեշակըս սըվերե վուչ հա՛: Պեն ա, վեր քյըեզ անջուկ չօնե, կասիս, վեր միշտ աչ դոլի յրա վըերսե քյինի:

Հա՛րը մեռնըմ ա: Կնեգյը, տղան վեր մըծանըմ ա, տանըմ ա, թա՛ փեշա-կու տա: Հինչ փեշակու տամ ա՛, տըղան փախճում ա, կյամ, հինչ փեշակու տամ ա, փախճում ա, կյամ:

Վեր մըծանըմ ա, տըղան հոր թվա՛նգյը յոր ա օնըմ, պատրոնդաշը կապում, քյինո՛ւմ:

Քյինո՛ւմ ա միշտ բիդի աչ, վըրես անըմ, կյամ տոն:

Մին օր էլ ասըմ ա. «Բիդի ծեխ ըմ քյինա՛կան»:

Բիդի ծեխ վեր քյունո՛ւմ ա, շատ ա քյունո՛ւմ, թա՛ խըրեգյ, մին էլ ա տըեսնըմ մին ալավա ըռըչան կյամ: Թվա՛նգյը թուշ ա օնըմ, յըրա անըմ հա՛նգյո՛ւմ ա, քյինո՛ւմ ա տեսնում մին դուշ ա վեր ընգած, ամմա հա՛լա՛ սաղ: Պիրում ա տոն, վեր տանն ա տինո՛ւմ, հանց իշեղ ա տամ, քըշեր-ցիրեկ, վեր լոխ մաթ ըն մընըմ:

Թաքավերը ըտրա սա՛սը վեր ըսկանում ա, հրամմայում ա, կյամ ըն ըտրա տանան դուշը տանըմ թաքավերեն պալատը:

Էտ դուշը լո՛ւս ա տամ, ամմա խըրեգյ ա լո՛ւս տամ: Թաքավերը հըվաքըմ ա ո՛ւրա՛ն իմաստուններեն, ժողով ըն անըմ:

Թաքավերը ասըմ ա.- Դե հո՞ւնց բիդի անինքյ, վեր ես դուշը լո՛ւս տա, մին իմաստուն ասըմ ա.- Թաքավերըն ապրած կենա, վեր փիղու վըսկեռա տոն շինիս, էտ դուշը մաչին տինիս, սաղ թաքավերոթունիտ լո՛ւս կտա:

- Պա հո՞ւ կանե, հո՞ւ չանել:

Մին իմաստուն էն բուրջան ասըմ ա.- Էտ լուսը պիրող տըղան կպիրի:

Թաքավերը ասըմ ա.- Էտ տըղեն ծեն տըվեքյ, կյա ըստեղ:

Ծեն ըն տամ, պիրում թաքավերեն կոշտը:

Թաքավերը ասըմ ա. -Յա քյինի փիղու վըեսկեռ պեր, վեր մին պալատ շինին, յա էլ կըլո՛խըտ կըտըրըլա՛կան ըմ:

Էտ տըղան ասըմ ա. - Դե մին օր մոհլա՛թ տո, մըտածիմ:

Տըղան տո՛ւս ա կյամ, բեքյեփ մին հըղըցավ քինիյիս, մին մեծ մարթ ա ջիո՛ւմ, ասըմ.- Վեր թիս, խե՞ բեքյեփ ըս:

Տըղան նաղլ ա անում, վեր թաքավերը իստի, իստի պեն ա ասըմ:

Էտ պառավ մարթը ասըմ ա.- Դա̈րդ մեր անել, քյինի թաքավերան քառասուն օղտապեռնը կյինի օզի, քառասուն օղտապեռնը ա̈րա̈ղ: Վեր տա, կըտանիս փիղեն աշխարքը, էն ա ընդեղ մին քյա̈հրիզ կա, ամմեն քյո̈ւնո̈ղ կյամ ա ճո̈ւր խըմըմ: Քյա̈հրիզը կըկըտրիս, կյինին, ա̈րա̈ղը ածիս մաչը: Փիղերը կյըլա̈կան ըն խըմի՛ն, հա̈րփին, Տու կյո̈ղլը կկենաս, վեր խըմին վեր տեռնան, կըսկսիս վըսկըռքըհան անելը: Վըեսկեռը օղտերեն կըպեռնիս, պիրիս:

Էտ տըղան մին խիլլա̈ շնուրհակալ ա տեռնըմ: Ետնան կյամ ա, թա̈.- Թաքավերը ապրած կըենա, դէ քյինիլը քըինո̈ւմ ըմ, մինա̈կ քառասուն պեռնը կյինի, քառասունն էլ ա̈րա̈ղ պիղի տաս:

Թաքավերն ասըմ ա.- Աշկես յըրա:

Հըրամմայըմ ա, դա̈ստի պեռնըմ ըն օղտերը, էտ տըղեն տամ: Օղտերը ուրո̈ւր անա կապըմ ա, մինին կապան փըռնում, հայդա քյինո̈ւմ, յա՛ բա՛խտ, հի՞նչ կինի՛, կինի՛:

Քյինո̈ւմ ա, քյինո̈ւմ, հըսնում ա էն քյըհրիզեն: Ճո̈ւրը կըտրում ա: Վեր կյամ ա քյսօրեն վախտը, կյինին նան արա̈ղը ածըմ ա նավը, լըցնում, ինքյը կյողլը կենում: Տեսնըմ ա ըհը՛ էն ա փիղերը կյամ ըն: Մին թոզ ա պիցըա̈նըմ, սաղ աշխարքը օնում ա:

Կյամ ըն, հի՛նչ ըն կյա՛մ... Եկեն, եկեն խըմեցեն, վեր տեռեն, խմեցեն, վեր տեռեն...

Էն տըղան դա̈մա̈ն քաշում ա, ջընըրներեն ինո̈ւմ, լոխճին մըրթոտում ա, վըսկըռըհան անըմ, վեսկեռը սարու նըման կյուտում ա: Վեր լոխ մորթում ա, վըսկռնեն ճոկում, պիրո̈ւմ ա օղտերեն պեռնըմ, կյամ:

Խա̈բա̈րը կյամ ա, վեր տըղան վըեսկեռը պիրո̈ւմ ա:

Էտ տըղան պիրո̈ւմ ա թաքավերեն պըլատեն ըռաչին վեր ածում: Պիրըմ ըն մին պալատ շինում փիղու վըեսկեռա, էն դուշը տինո̈ւմ մաչին, սաղ ո̈ւրո̈ւն թաքավերոթունը լուսավերը՛մ:

Էտ թաքավերը տըղեն ասըմ ա. - Հի՞նչ ըս օզում:

Տըղան ասըմ ա.- Ախճիգյըտ:

Թաքավերը պիրում ա էտ տըղեն փսակում, տինո̈ւմ ո̈ւրան պըլատըմը, թաքավերոթունեն կեսըն էլ տամ ո̈ւրան:

Էտ տըղան ո̈ւրան մարը պիրում ա կոշտը, առոք, փառոք ապրում ըն:

## 25. ՍԻՐԱԿԱՆ ՊԱՀՈՂ ԿԸՆԵԳՅԸ

Ինո՛ւմ ա, չի ինո՛ւմ մին մարթ նան մին կնեգյ ըն ինո՛ւմ: Տրանք ո՛ւրո՛ւր նհետ լա՛վ ապրելիս ըն ինո՛ւմ: Կնեգյը սիրական ա պահելիս ինո՛ւմ, ամմա մարթը գյիդալիս չի ինո՛ւմ : Կնեգյը մտածում՛ ա հո՞ւնց անի, վեր մարթին անա ազադվի, դինջըմը քյեփ քաշի: Ըտրա հետե սոտ տեղան հիվան-դանում ար:

Մարթը կյամ ա, տըեսնում հիվանդ թեքյ ընգած: Հըրցնում ա. - Խե՞յըս հիվանդացալ, հի՞նչտ ա ցավում:

Կնեգյն ասում ա.- Մին անմահական խնձո՛ր ինի, օտիմ, կաղանամ:

Մարթը որոշում ա քյինի հշտղա վերե յա անմահական խնձո՛րը ճարե պիրի, կնեգյը օտե, թա՛քյ լհա՛ սղանա:

Ասըմ ա.- Տո՛ւ վըս իմ մալըս, մո՛ւլքյըս, դովլաթըս, տոնըս-տեղըս, իլա՛ծ-չիլա՛ծըս, սերըս-սո՛հբա՛թըս:

Եր ա կենում ճընապար ըն դնում, քյնո՛ւմ :

Քյնո՛ւմ ա, քյնո՛ւմ, շատ ա քյնո՛ւմ, թա՛ խրեգյ, շատ նան խրեգյը ինքյն ա գյիդո՛ւմ, մին էլ ա տեսնում մին մարթ մին ծիյապեռնը պիրինձ ծիյին քըցած տես ա կյամ:

Էտ ծիյավերը հըրցնում ա, ասում.- Ա՛յ մարթ, էտ հի՞նչ տեղ ըս քյնո՛ւմ:

Էտ մարթը սկսում ա նաղըլ անելը, ասըմ.- Կնեգյըս հիվանդ թեքյ ընգած ա, քյո՛ւնո՛ւմ ըմ անմահական խնձո՛ր պիրիմ, վեր կնեգյտ օտի, սղանա:

Էտ մարթը դա՛ստի կլո՛խ ա ընգնում էտ կնգանը պիճոթունը, ասում ա.- Խըեղճ ըս, եք, ետ տըեռ քյինինքյ, քու կնեգյըտ հիվանդ չի:

Էտ մարթն ասում ա.- Չէ, կնեգյըս ինձ խափել չի, իմ կնեգյըս հիվանդ ա: Էտ մարթը ասում ա:

- Դե եք ետ տըեռ քյինինքյ, թա՛ վեր քու կնեգյտ էն չինի սիրականին նհետ քյեփ ընելիս, յըես իմ մին ծիյապեռնը պիրինձս քյըեզ կտամ:

Էտ մարթը եր ա կենում էտ ծիյավերեն նհետ կյամ տոն, տըեսնում կնեգյը սիրականին նհետ քյեփ ա անում:

Դե էլ հի՞նչ, մընում ա փա՛ռթ տըեռած: Ասըմ ա.- Ա՛ տափ, տու ճըղվի, յըես մըեչը նի մըննիմ, վեր իստի խայտառակչոթունը յըես տըեսնամ վեչ:

## 26.ԱՇԿԸ ԾԱԿ ԽՈԽԱՆ

- Ա՛ կնեգյ, մի օխտը հատ դոլմա քցի, ոտիմ քուշտանա՛մ.- բեղերը հլո՛ր տալավ ասից Համաջիվանանց Համաջիվանը:

Ընդրա աշը ծակ պուճուր տըղան ասում ա.- Էշ էլ կոտիմ[1], մամա:

Ախճի՛, մին լա՛վ խըրաված ըրա:

Էլիա տըղան ասըմ ա,- էշ էլ կոտիմ:

- Ախճի՛, մին լա՛վ մածուն պեր, փըրթո՛ւշ անինքյ:

Էտ պուճուր տըղան յըա յա պերում.- էշ էլ կոտիմ:

Իտի հա՛րը հինչի անըմ տամ ա, տղան քըմական յըա էր պերըմ թա՛.-էշ էլ կոտիմ:

- Ա՛ կնեգյ, մին էն կյումեն թըրեքյը սըրփի պեր...

Հա՛րը խոսկը հա՛լա՛ ասալ չար պըրծա՛լ, վեր տըղան ասից. - Էշ էլ կոտիմ...

Լոխ սկսեցին ծըծաղելը: Էտ տըղան շվարած եշից, թա՛ խե՞ յըն ծըծաղում:

Նոր հա՛րը կլխու տիրա՛վ ընդրան, թա՛.- Էշի քոռա՛կ, թըրեքյը չուրուցնելի հետե յըմ օզում, վեչ թա՛ ուտելի:

## 27.ԳՅՈՒՎԱՄԻՇ ԿԵՎԱՆԸ

Մի խիլլա տարե ըստրանա առաչ մեր շենըմը դունյա-դունյա շոռ եկած մին մարթ կար: Ընդրան ասում ինքյ չանչախ Կեվան: էս Կեվանը վրդեղ նստում ար, փափաղը վեր կա՛լա՛ծ ո՛ւրա՛ն թարիփ ար անում, գյուվամիշ ար ընո՛ւմ, թա՛ յըես էս տեսի, էն ըրի, էս մարթեն կըլխեն էս քյա՛լա՛գյը պիրա, ամմա յըես, հինչ անուրի, ղարիբ տըեղ էլ ընգալ ըմ, վեչ մինը կըրացալ չի՛, թա՛ իմ կլխեն մին կուճուր մազեն պտտկեն էլա նի կյա:

Մին դո՛նում մեր շենին աղսախկալ մարթիքյը տո՛ւս ին եկալ, եխծեն պատեն տակեն վըեննը կացալ, չուբուխ ին քաշում, մսլըհաթ ին անում: Բո՛ւրդա՛ն տեսանք, մեր շնա՛ցե Ղա՛զա՛րը էշը եր իլա՛ծ, կլո՛խը քաշ քցա՛ծ կյամ ա: Դո՛ւզն ասած, տա մըեզ դաստի տեսավ վեչ:

Մթկեն դոնն ընգա՛ծ, էշը քշո՛ւմ ար, վար մեր հնգուրունցան մինը դգյասկած ասից:- Պարյօր, Ղա՛զա՛ր, էա կլո՛խտ կախ քցա՛ծ, էշըտ թո՞րն ըս չո՛ւ անում, լայաղ չըս անում պարյօր տաս մըեզ, հենց ա քյեփըտ էլ

[1] *Ես էլ կուտեմ:*

խարաբ ինի՛, մինթեվո՛ւր ըս:

Ղա՛զա՛րը բրղա՛ն վար տըեսավ մըեզ, էշը վըեննըրավ, պարյօր տվավ: Սկսեցին հարցնիլ Ղզա՛րա՛ն, թա՛.- Թո՞րն ըս քյնա՛մ, վըրդըղա՞ յըս կյա՛մ:

Ղա՛զա՛րը էշը պիհրան կապից, մեր քշտեն նստից, ըսկսից դըրդըհա՛ն ինիլը:- Չփուռանց Խաչուն անա մի քանի մանեթ ըմ եր կալալ վըղա՛վ, վա՛ղա՛ն ընցալ ա, կրեցալ չըմ նիսյան տամ: Մին ամսին մաչին եկալ ա իցցուն մանեթ տա՛ռա՛լ: Խաչին դիվան դա՛րա՛ յա սարքալ, պրիստավ ա ղարկալ, թա՛ պարտկս տո, յըես էլ օնիմ վե՛չ, վը՞րդըղա տամ, ըսեցե. «Տմա՛ց, նո՛քյա՛րո՛թո՛ւն, պա՛ն կանիմ, կտա՛մ»: Պրիստավը եկալ ա խոխա-ըրախա առաչը ըրալ, թա՛ յա պարտքը տո, յա Սիբիր ընք քշո՛ւմ: Տեսա վար ճար չիկա, ըսեցի Երեմը քյննա՛կան ա Թիփլիզ, յըես էլ նհետը քյնամ Թիփլիզ, օրենքյեն նաղլ անիմ, բա՛լքյա՛մ քյոմա՛գյ անե, մի թա՛հր անե: Երկըցա քյնա՛ցե մեր ա՛րզա՛ կյրող Միրզին կոշտը, մին աբասի փող տվե, վըեննան, ծեռքան պչեցե, ըսեցե, «Քյմմատաղ, ա՛ Միրզա՛, ինձ հետե մին ա՛րզա՛ կյրի»: Էտ ապրածը խոսկըս տափավը չի տրվավ: Մին աբասին եր կա՛լա՛վ, մին էրզյան ա՛րզա՛ կյրից: Տարա Թիփլիզ, դա՛րդըս մհե խրեզյ ար, էս Թիփլիզի կինտոնեն էլ մին քյա՛լա՛գյ պիրան կլոխս, վար մննաս ինգյնո՛ւմ չի՛: Ջբումս մի մանեթ փող կար, ըն էլ հնեցին, տարա՛ն:

Չանչախ Կեվանը, վար Ղզա՛րեն էս նաղլը ըսկանըմ ա, ըրմանում ա, թա.- Տհենց պա՛ն չնի՛լ: Օրիշը հի՞նչ ա գյո՛ւղո՛ւմ, թա քու ջըբումտ հի՞նչ կա, համ էլ հո՞ւնց ա նի մննում ջուբըտ, վար կլո՛խ չըս ընգնում:

Ղա՛զա՛րն ասում ա.- Դունյումըս տհենց մարթիքյ կան, վար ամեն փա՛նդ գյո՛ւղո՛ւմ ըն:

Չանչախ Կեվանն ասում ա.-Հես ա քյննա՛կան ըմ Թիփլիզ, տեսնամ էտ հի՞նչ տեսակ մարթիքյ ըն, վար տհենց պա՛ներ ըն անում: Պա յըես սաղ Ղալա՛ն, Գյա՛նջա՛ն, բիրղա՛ն մինչև Բաղդադ էլ քյնա՛ցած ը՛մ, ամմա տհենց մարթիքյ տըեսած չը՛մ:

Մին քանի օրանը ետը Կեվանը հըղըցու հաց ա շինո՛ւմ, մին բոթուլ ըրաղու նհետ տնում հա՛յբո՛ւմը, շլակում, քյնա՛մ Թիփլիզ: Վար հըսնում ա Թիփլիզ, հացը օտում ա, էտ ա՛րա՛ղն էլ լոխ խմում ա, պրծըընում, բութուլ-կան կոտրում, բութուլկեն պըենձիգյնին էլ նի ածում ջուբը, Թիփլիզին մեչավը տեսուտեն քյնամ:

Մին դա՛ստա ջա՛հիլնի, տըեսնում ըն ըտրան ջուբը չխկամ ա, գյուղում

ըն, թա̀ փուլ ա, խուսուցընում ըն, համ էլ ջուրը ակը տամ: Վար տըեսնում ըն պենձիկնի յա՛, պա̀ց ըն թողում: Ամմա էս Գյուվա̀միշ Կեվանը պա̀ն չի կլխու ընգնում:

Տա լիա̀ ո̀ւրա̀ն էշն ա քշում, ըչվըծա̀խ ա անում քյուչոցավը, տըեսնում ա ո̀ւրա̀ն անա մուտանող չիկա, ինքյը մուտանում ա էտ ջա̀հիլներին ասում.- Ցըես ծըեզ մատա՛ղ, էն օրը մըեր Ղա̀զա̀րը եկալ ա կոշտս նաղլ ընրալ, թա̀ էլ Թիփլիզ չի քյնա̀լ, ընդեղեն մարթիքյը փիս ջա̀հիլնի յըն լոխ ջուրգյիրնի յը՛ն: Պա հես ա էսքան, վա̀ղա̀ յա ըչվըծախ ըմ անում, էս քյուչոցավը ջուրս չխկըցնելավ, վեչ մինը մուտացավ վեչ ինձանա՛:

Էտ խոսկերեն յրան էն ղոլան մինն ասում ա.-Գյուվա̀միշ մի ինի՛ լ, լոխ կինտոնին, լոթիքյը ջուրըտ ըն մտալ, ինքյ կա̀լ կոտրած սախսիքյըտ:

Չանչախ Կեվանը բո̀ւրդա̀ն զըմանում ա, թա պա էս հո՞ւնց նի մտան ջուրս, վեր գյիդացե վու՛չ:

## 28.ԱՂՎԵՍԸ ՆԱՆ ՃՂԱՑՊԱՆԸ

Ըլա̀լ ա, չիլա̀լ մին ճղացպան: Սա ճղացումը նստած վախտը մին էլ ա տըեսնում ճղացեն քարը վըեննը կացավ: Տո̀ւս ա կյամ, թա̀ տըեսնա հի՞նչ ա, տըեսնում ա դոնգուզլըղը քար քցած: Նի յա միննում մեչ ղոլ, տըեսնում հաց չի կա: Մին վեչ, էրկու վեչ...

Մեհետ էլ, վեր քար ըն քցում, ճղացպանը կյողլ ա կենում, մին էլ ա տըեսնում, ըհը՛, մին աղվես էրկու հացը եր կա̀լա̀վ, թա̀ քյնա̀: Ճղացպանը թուշին հա̀քյվան փռնում ա:

Աղվեսն ասում ա.- Ամմա՛ն զյո̀ւնըղը՛ր, ճղացպան ախպեր, պա̀ց թող, հինչու ասես կանեմ, վըեր ասես քյինա̀ Ղալին քըերծան տակը ընգի, կքյինա̀մ...

Ըտրանք ըտրանա ետը ախպեր ըն տա̀ռնում: Միշտ մինտեղ ըն հաց օտըմ:

Շատ ըն կենում, խրեզյ ըն կենում, մին օր ճղացպանն ասում ա.- Աղվես ախպեր, պա օզում ըմ մին ախճիզյ օզիմ: Աղվեսն ասում ա. - Ճղացպան ախպեր, տու տազ ըրա, յըես քյըզ հետե թաքավերեն ախճիզյն ըմ ո̀ւզլական:

Ճղացպանն ասում ա.- Պա կըկյա՞՛:

Աղվեսն ասում ա.- Քյըեզ կործ չօնես:

Մին օր Աղվեսը թաքավերեն տըռնավը անց կնալիս մին արծաթ ա քըթենում:

Քյնամ տռնան ծեն տամ, ասում.- Թաքավերն ապրած կենա, մին ծեր չափը տոք, տանեմ Չանչախ թաքավերեն արծաթը չափենք:

Չափը յոր ա օնըմ, քյնում: Մըխրե կենում ըն, քըթած արծաթը տընում ա չափեն օքրուջումը պիրում : Թաքավերեն տանը չափը թափ ըն տամ, արծաթը մաչան վեր ա ընգնում:

Մին օր էլ, էլիա թաքավերեն տռնավը անց կնալիս մին վըեսկե յա քըթենում:

Քյընում ա, ասում.- Թաքավերը ապրած կենա, ծեր չափը տոք, տանեմ Չանչախ թաքավերեն վըեսկեն չափինք:

Տանըմ ա, միխրե կենում, վըեսկեն տինում օքրուջումը, պիրում:

Թաքավերն ուրան գյղենուն ասում ա.- Մին չափը թափ տվեք, էլիա մաչին մնացած կինի՛:

Չափը թափ ըն տամ, մին վըեսկե յա վեր ընգնում:

Թաքավերըն ասում ա.- էս շան տղես վեր քան վըեսկե օնե՛, վեր չափեն տակ են էլ ա մընում:

Մին քանե օրանը ետը աղվեսը քյնամ ա թաքավերեն տոնը, ասում.- Թաքավերն ապրած կենա, եկալ ըմ ախճիգյտ օզիմ Չանչախ թաքավերեն հետե:

Թաքավերը ծեն ա տամ տոն, պաղն տամ, ասում.- Լավըս ըրալ, շատ լավ կինի՛:

Աղվեսը սկսում ա Չանչախ թաքավերեն թարիփ անելը, թա. - Լավ, լավ տներ օնե, իլխի օնե, շատ պըներ օնե, բաղ օնե, բոստան օնե, հինչ գյիղամ էլ հինչեր օնե՛:

Ըխճըկանը օզում ըն:

Ճղացպանը ասում ա.- Ա՛ղվես ախպեր, պա յըես ալրոտ շորավըս ը՞մ քյննական թաքավերեն տոնը:

Աղվեսն ասում ա.- Տու արխային կաց, յըես ամմեն հինչ պիրըլական ըմ:

Աղվեսը տուս ա կյամ թըթամնած քյունում թաքավերեն տոնը, թա.- Պա ասել չը՛ք, Չանչախ թաքավերը կյալիս տեղը թըլանալ ըն, շորերը հանալ, պաց թողալ: Մին ծեռք շոր տվեքյ, տանիմ կյենա:

Թաքավերը եր ա կենում ուրան շորան մին ծեռք տամ աղվեսին, սա

տանըմ ա ճղըցպանեն շո̈րերը հանում, ածում կյըետը, էն պիրա̈ծ շո̈րերը կյեց տամ, տըեռնըմ ա մին աբրազովնի տղա, տրան էլ մին լա̈վ պընդըըցնըմ ա, վեր ընդըեղ խոսե վեչ, խոսած տեղըն էլ աղվեսեն ստերը պա̈ց չանե:

Քյինըմ ըն թաքավերեն տոնը, նշան տամ, կյամ:

Ճղացպանը ասըմ ա.- Պա էտ լըհա տըհենց, պա հըրսանեքյ ընք անում, հարսը հի՞նչ տեղ պիրինքյ:

Աղվեսը ասըմ ա. - Պա, ճղա՛ցպան ախպեր, յըես մըեռա՞լ ը՛մ, վեր տու մտածում ըս, քյըեզ հետե չորս ատաժանի տներ ըմ թփլակա՛ն, տավար ըմ պիրլա̈կա՛ն, վեր ուզլական էլ չըս, թա̈ քյըզհետե ճո̈ւր ածես, խմես, էտքանը յըես կանեմ, թա̈ վերչումն էլ իմ ղադրըս գյիղա̈ս: Կգյիղա̈ս, թա̈ չէ, էտ էլ տու վըս գյիղո̈ւմ:

Աղվեսը եր ա կենըմ, քյինում, տեսնըմ մին հարուստ մարթ ղըզըննեն կրակեն, խորագյ իփում:

Ասում ա.- Տուք էս տոնը բեղմա թափիքյ, Չանչախ թաքավերը ծըեզ յըրա հըրսընքավ կոըեվ ա կյըլա̈կան:

Քյինում ա էտ ո̈ւրո̈ւգյո̈ւնը Չանչախ թաքավերեն հրսանեքյը անում, հարսը յոր օնըմ, կյամ էտ տոնը, նո̈քյա̈րներեն էլ պնդըցնում, վեր հնազանդ ինին թա̈զա̈ թաքավերեն:

Հրսանեքյը պրծնում ա, լոխ ցըրև ըն կյամ: Մին վախտ, վեր խոսկ-խոսկու վեր ա կյամ, աղվեսն ասում ա.- Ճղա՛ցպան ախպեր, վեր մըեռնեմ, մին լա̈վ պաղարաքյ կանես, էսքան հարուստութունը քյըեզ ըմ տվալ:

Ճղացպանն ասում ա.- Արխային կաց, պա ըտէլ չըմ ըննակա՛ն:

Մին օր աղվեսը կյամ ա, Չանչախ թաքավերեն տռանը վեր ընգնում դիգյանցկանց սատկըմ: Թաքավերը կյամ ա վըեննավը քացի տամ, սա տո̈ւրո̈ւր չի կյամ:Նո̈քյա̈րներեն կանչում ա, ասում.- Եկեքյ տրան տարաք տըղվըեցեքյ:

Կյամ ըն ըղվեսեն տանըմ, թա̈ քցին փոսը, սա եր ա կենում, կյամ, թաքավերեն կոշտը, թա̈.- Էտ ա՞ քու բաղարաքյըտ: Համին էս պենը մին էլա անըմ:

Թաքավերը էլհա բաղարաքյ չանըմ: Աղվեսը կյամ ա, թա̈ կնգանը քշտեն փոչերը պաց անե, թաքավերը թողում չի, ասում ա.- Վեր մին էլ մըեռնես, բաղարաքյ կանեմ:

Իրեքինջի դը̀նըմը աղվեսը ղըրթըղորթ սատկըմ ա: Էս դյոնըմ թաքավերը մին լա̀վ բաղարաքյ ա անըմ, ըղվեսեն թաղըմ: Ամմա ափսոս վեր էս դը̀նըմ նա գյուղըում չի՛:

Էն հարուստութունը մնամ ա ճղըցպանեն ծեռքեն: Դե տըեսեքյ աղվեսը հինչքան խորամանգյ ա, վըեր ճղացպանը թաքավեր էլ շինից, ընդրա հետե էլ թաքավերու ախճիգյ օզից:

## 29.ՔԱՉԱԼ ԱԽՊԵՐԸ

Ընը̀մ ա, չի ընը̀ւմ մին թաքավիր: Տրան ընը̀ւմ ա մին կնեգյ, էրկը̀ւ տղա: Տղոցան պուճուրը քաչալ ա ընը̀ւմ: Էտ կնեգյը շուտ մեռնում ա: Թաքավերն օզում ա մին թա̀զա̀ կնեգյ օղի: Ման ա կյամ տեստեն, քյինա̀մ ա պտահում մին քյա̀սիբ կնգա: Ընդրան էլ ընը̀ւմ ա մին քաչալ տղա: Էտ կնեգյը շատ սիրուն ա ընը̀ւմ, դա̀շա̀նգյ, նախշուն: Թաքավերը տրան յոր ա օնում, տանում ը̀ւրա̀ն պալատը:

Մին քանե տըրնանը ետը էտ կնեգյն էլ ա մեռնում: Թաքավերը դարդ ա անում, թա խե՞ ինքյը էտքան քյամբախտ ա՛: Ետնան ինքյն էլ ա հիվանդանում:

Մռնելիս տա կանչում ա ը̀ւրա̀ն էրկու տղոցը ասըմ,- էս քաչալը հինչպես իմ կնգանս մեխկը, լա̀վ կպահիքյ, վեր տըեսնաք նըհետնիտ բըրշում չի, մին պեն կտաք, ը̀ւրա̀ն համար քյինա, ապրի:

Թաքավերին մռնելան ետը էտ տղերքյը սկսում ըն կարտի տալ: Քաչալը տոնը յօլա յա տանում, հեյվանը, նախիրը, տոնտեղ պահում:

Քաչալը վեր տըեսնում ա տահանք տոնը քա̀նդը̀ւմ ըն, մին դը̀նում կյամ ա տահանց ասըմ.- Բա տըեսնում չը՛ք, վար խալխը մին ղոլան ըն ծեր տոնը թըլանում, տուք էլ մին ղոլան: Հի՞նչ ըք անում, կարտի տալս վե՞րն ա, փլան-փեշմա̀քյանս վե՞րն ա, այ աննամուսնի՛, ծեր հոր օջաղը խե՞ քա̀նդը̀ւմ ը՛ք, այ ծեր անըմը կտրվի՛:

Էս մեծ ախպերը ասում ա. - Պա՛հ, տը̀ւ իր մնացալ, ա՛ քաչալ, վեր մըեզ պենըկլխու տինիս, տը̀ւս եկ, կորե մեր տանան:

Էս կուճուր ախպերը ետ ա տըեռնում, ասում.- Չէ, մեր հա̀րը ըտրան թափշուր ա ըրալ մըեզ, թող կենա:

Քաչալը քյնում ա ը̀ւրա̀ն կործին, տահանք էլ ը̀ւրա̀նց կարտի տալին:

Քաչալին հովսա̀լա̀ն կտրում ա, կյամ ա ասում.- Ա՛յ ախպերք, իմ փայըս տվեքյ, յըես քյինա̀մ ըմ:

Կուճուր ախպերը հիշելավ ուրան հորը խոսկը, եր ա կենում, մին կյեվաթ վրեսկե տալիս ըտրան, ասում.- Դե, պարի ճրնապար, տերը քյըեզ նհետ:

Միեկ քաշալին թողինքյ ճրնապարին, տըեսնանք հի՞նչ տեռեն էն էրկու ախպերքյը:

Էն էրկու ախպերքյը ըտի հաղ անելավ, ըտրանց տոնը, տեղը, իլանչիլանծը փըչանում ա:

Տահանք ասում ըն.- Էս տոնը մըեզ կյալիս չի, էս քաղաքը մըեզ կյալիս չի, մըեր կծեգյը ետ ա տվալ, եք հինչ վեր օնինքյ ծախինքյ, կլոխ յոր օնինքյ, քյինինքյ էս քաղաքաս:

Տրանք ճրնապար ըն ընգնում: Տահանց էլ թողինք հղըցումը: Միեկ քաշալ ախպորն անա խաբար տանք: Քաշալ ախպերը քյինում ա մին քաղաք, վերը վեր չորս դոլավը պատած ար, էրկու տոռն օներ, մինը՝ մաչը նի մննելի, մինն էլ տուս կյալի: Էտ նի մննելիք տռանը քշտին շինած ար էրկու ատաժանի մին տոն: Էտ տանն էլ ապրում ար մին նախշուն հարթնը, կլխեն վրեսկե փուլ տրած, հայավարի, իր եք փեշկանի, շողկումշափաղում: Միեկ տեսնանք էտ հարթնը հի՞նչ անղաթի, հի՞նչ մաամբի զատ ա, հի՞նչ ա անում[1]:

Էտ հարթնը միշտ ուրան կոլը կկոկե, տուս կկյա բալկոնը, կկաղնի, ղարիբ մարթկանց կկանչի, տանի քյեփավ անի, թըլանի, պեց թողնի: Իտիյութոնավ ժողովուրթին նա շատ վնաս կտա: Ինքյն էլ շատ հարուստ կապրի:

Քաղաքին տուս կյալի տռանը քշտին ապրում ար մին հարուստ առուտուրական:

Միենզյ նաղլ անիմ էտ առուտուրականին կաղարած պեներան, թա էտ հարուստըն հի՞նչ պենի յա ինում, վեր ըտի հարուստ ա: Էտ առուտուրականին ամմեն տեսակի հեյվաննի յա ինում, ամմեն տեսակ թանգյանոց, իժրնանոց ճոթը-կտորնի՛, չիթե՛ր, կնգա զարթարա՛նք... Վեր էտ զարթարանքը մուշտարուն նիաշ ա տալի, էն տեսակ իժան կյին ա ասում, վար մուշտարին մնում ա մաթ մնացած, ետնան էլ մաթ մնալան առնում ա:

---

[1] *Սրան հաջորդում է հետևյալ հատվածը.*

*«Էտ ղաթըմը ծըծաղեցին հաքյաթ չըսողնեն: Ասողը թա.*

*- Դե լավ անջուկ կալիքյ, ճվարանի տակա գյիլաս չի վեր տեռնում, խոսկ ա, զարափաթ չի»:*

*(Բանասացի հավելումն է: Ծ. Կ.)*

Վաճառականը էտ առնողներին տանում ա դո̈ւքյա̈նին քամակը, յա թըլան ում, յա թա̈ չէ, նահանց սաղ պեց չի թողում, սպանում ա:

Մհենգյ նաղլ անինքյ էտ էրկու ախպորցը անա, թա̈ տահանք հո՞ր քյնա̈ցին: Տահանք ման կյալավ, եկին հըսին էտ քաղաքը: Հղըցավը խըլըշ-կոտելավ քյինո̈ւմ ըն, ամմեն տըեղը, տեսնում մին լա̈վ, նախշուն հարթնը մին պալկոնում կաղնած, ո̈ւրա̈նց կանչում ա. - Ա՛յ ջահիլ տըղերքյ, հի՞նչ ըք օզում, հենց ըք խամ ընիքյ: Նղացած կինիքյ, եկեքյ մին ստաքան չայ խմեցեքյ, քյնա̈ցեքյ:

Տղերքը ասում ըն.- Ա՛ քո̈ւր, շատ ընք նղացած, շատ ապրիս:

Տահանք խուրջիննին տինո̈ւմ ըն մղակումը, ո̈ւրա̈նք նի մննում տոն, նստում: Մին ստաքան քախծր չայ ըն խմում: Էտ կնեգյը էրկունջի դո̈նումը չային մաչը քընըցնող տեղ ա քըցում, տամ տրանց: Տրանք խմում ըն, քոն ինո̈ւմ, դէ էտ հարթնը գյուղո̈ւմ ա քանի սհաթանը ետը բիդի զա̈րթնին:

Նա վախտից շո̈ւտ զո̈ւրթընըցնում ա տահանց, ասում.- Դեհա, եր կացեքյ, հես ա մարթս կկյա՛ կգյիդա՛ թա̈ օրիշ պենի յըք եկալ:

Հա, մուռացե ասիմ, վեր հիբը նահանք քոն իլա̈ն, էտ հարթնը նահանց խուրջիններան վըեսկեն թափից, տեղյը պենձիկի կտորտանք ածից:

Էտ տղերքը սրտաճաք իլա̈ծ վեր կացին, խուրջիննին եր կալին, քյի-նա̈ցին:

Հղըցումը կուճուր ախպերը մեծին ասից.- Ա՛յ ախպեր, ախեր խուրջինը թիթվացալ ա:

Էտ մըեծն էլ ասից.- Ա՛յ ախպեր, քոն ընք իլա̈լ , կերա՛լ ընք, դինջացալ ընք, ըտրա միար էլ թիթև ա ըրվամ, էս ա վեր մին խրեգյ քյնա̈նք, կծըն-դըըրանա :

Ըտրանք քյնա̈ցին: Կուճուրը höվա̈լա̈ չըրավ, խուրջիննին, պեց ըրավ, տեսավ լոխ պենձիկնի յա, խուտուրու-մուտուրու պա̈ներ ա: Էտ տղերքը տեռին թափառականնի:

Քաչալը լսից, վեր թաքավերին տղերքյը կլո̈խ ըն եր կալալ, կորալ: Էտ վախտը քաչալը ո̈ւրա̈ն խելունքոթունավը տեռնում ա թաքավեր: Թաքա-վերեն տղերքյը թափուրղա տըեռած կյա̈լիս ըն էտ թաքավերեն տանը ծառա նի մննում, չգյիդա̈լա̈վ, վեր թաքավերն էլ ո̈ւրա̈նց քաչալ ախպերն ա, ամմա քաչալը տահանց ճնանչում ա, ամեգյը մին պաշտոն ա տամ, պալատումը ապրում ըն, ո̈ւրա̈նք չգյիդա̈լա̈վ թա̈ հու վա էտ թաքավերը:

Մին օր թաքավէրը փսակվում ա իըրևան քաղաքին թաքավէրին ըխճըկանը նհետ: Ինքյը իըրսանեքյին վախտը նաղլ ա անում կլխավը եկածը: Իտի նահանք ճնանչում ըն ուրուր: Քաչալը տահանց լա̀վ պաշտոննի յա տամ, փըսակում, տընատա̀ր-խուխատա̀ր շինում:

Երգյիքան իրեք խնձո̀ր վէր ընգնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ կյրողին:

## 30.ԱՆԲԱԽՏ ԱԽՃԻԳՅԸ ԲԱԽՏԱՎԵՐՎՈՒՄԱ Ա

Ինո̀ւմ ա, չինո̀ւմ մին մարթ նան մին կնեգյ: Տահանց ինո̀ւմ ա մին ախճիգյ: Հա̀րը նան մարը շատ ըն սիրում ըխճըկանը:

Ասըմ ըն.- Մեր աշկին լո̀ւսը, մեր աշկին սըվըսիպտա̀կը, մեր տանը սո̀ւնը էս ախճիգյն ա:

Մին դո̀նըմ մին բախտու եշող ա կյամ, տահանց շենը: Օզում ըն ըխճըկանը բախտեն եշիլ տան: Տանում ըն ընդրա կօշտը:

Բախտին եշում ա, ասում.- էտ ախճիգյը օխտը տարե մըեռալ ա լըղըցնական:

Հա̀րը նան մարը շատ ըն տխրվում: Օզում ըն ո̀ւրա̀նց աշխարքան տո̀ւս օնին, վէր էտ մըեռալը լըղըցնե վէչ: Հա̀րը նան ախճիգյը ճընապարվում ըն: Շատ ըն քյնա̀մ, թա̀ խըրեգյ ըն քյինա̀մ, տեսնում ըն մին մեծ դո̀ւզում մին պալատ կա:

Հա̀րն ասում ա.- Ախճիգյս, քյնա̀նք, տեսնանք հի՞նչ կա էտ պալատումը:

Քյնա̀մ ըն:

Հա̀րը սկսում ա տո̀ռնը կուփե-կուփե անելը: Պա̀ցվում չի:

Ախճիգյն ասում ա.- Ա՛ հա̀ր, թող յըես տեսնամ կարում ը՞մ պա̀նա̀մ:

Ախճիգյը կյամ ա տռանը կուփե տամ, տո̀ռնը պա̀ցվում ա: Ախճիգյը նի յա մնըրմ, թա̀ հա̀րն էլ հետան նի մննե, ամմա տո̀ռնը էլհա նհետ ա ինո̀ւմ: Հա̀րը մնամ ա տռանը:

Հա̀րը ըխճըկանը ասում ա.- Տես հի՞նչ կա էտ տներումը:

Ախճիգյը նի յա մըննըմ, տները շոռ կյամ, տեսնում ա մին տոն, լիքյը վըեսկե, էն մինը՝ լիքյը պրինձ, շա̀քյար, շատ պա̀ներ մաչին: Մին տոռնը էլ պանում ա, տեսնում մին մարթ մըեռած, տիրած ընդեղ:

Կյամ ա տռանը կօշտը, ասում.-Ա՛ հա̀ր, էն ա ընդեղ մին մըեռալ կա:

Հա̀րը շատ ա լա̀ց ինո̀ւմ, ամմա ախճիգյն ասում ա. - Ա՛ հա̀ր, վէչինչ,

հա̀լբա̀թ ճկատես սհենց ա իլա̀լ կյիրված:

Պո̀ւրո̀ւմ ա տեսա-տենա տամ հորը: Հա̀րը քյինա̀մ ա: Ախճիգյը մնամ ա էտ տանը: Ախճիգյը էլհա սկսում ա տները շոռ կյալը: Մաթ ա մընում, թա̀ էս հի նչ իլա̀թ, միլլա̀թ ա, վար էսքան հարուստ ա իլա̀լ:

Էս ախճիգյը ամմեն օր իրեք դո̀նըմ էտ մռալեն լըղըցնում ա, ինքյն էլ մնում էտ տանը: Տո̀ռնը պանվում չի՛:

Վար կյամ ա մնում, մին տարե, տո̀ռնը պանվում ա: Էս ախճիգյը տո̀ւս ա կյամ բալկոնը, տես ու տեն եշում, մինա̀կ ինքյն ա ինո̀ւմ , էլ օրիշ մարթ չի ինո̀ւմ:

Շատ վար կենում ա, տո̀ւս ա կյամ, տեսնում մին ղարաչու դաստա յա քյինա̀մ: Ընդրանց ծեն ա տամ, պիրո̀ւմ ո̀ւրա̀ն կոշտը, տըեսնում մին ախճիգյ ըտրանց նըհետ, ասում ա.- Հի՞նչ տամ, վար էս ախճիգյը թողեքյ իմ քշտես: Մին լա̀գյան վըեսկե կտամ, թա̀քյի թողիքյ կենա: Էս ղարաչիքը ռազի յըն կենըմ:

Էտ ախճիգյը թողնում ըն ըտրա քշտեն, ո̀ւրանք քյինո̀ւմ: Էս ղարաչի ախճիգյը քյնա̀մ ա ճո̀ւր պիրում, տոնը սրփում, ամմեն հինչ անում, ամմա էն մեծ ախճիգյը էտ մարթին ամեն օր լըղըցընում ա, համ էլ քընենքյ ա անըմ, թա̀. «_տ մըեռալը սղնական ա՞, թա չէ»: Էս էրկու ըխճըկերքյը ապրում ըն ըտեղ: Հաց օտելիս էս ղարաչի ախճիգյը էն մին ըխճըկանը քշտեն հաց չի օտում, կենում ա, վար էն ախճիգյը տո̀ւս ա կյամ, ընդրանա ետն ա հաց օտում:

Էս ախճիգյը ասում ա. «Մին տըեսնամ էս խե՞ իմ քշտեն հաց չի օտում»: Մին օր տռանը քմական եշում ա, տեսնում, տա կյամ ա ստղլան հաց յոր օնըմ, տանըմ տինըմ օթախ են քյո̀ւնջերըմը, ետավ սըերտը թըկելավ կյամ էտ քյո̀ւնջերը, ասըմ. «Ա՛ քյո̀ւնջ, մին պատառ հաց տո իլի՛, ախկաղ ընք, սոված ընք»: Ետավ էն մին անգյո̀ւնը քյինըմ, էլհա իտի ղաչանք անըմ, էն քյունջումը տիրա̀ծ հացը յոր օնըմ, օտըմ:

Ըստրանք շատ վար կենում ըն, էտ մռալին լըղըցնում, վար մնամ ա օխտը օր, էտ մըեռալը սկսում ա պըպտալը:

Էտ հային ախճիգյը սկսում ա հմանչիլը, ո̀ւրա̀ն մըթկըմը ասըմ ա. «Էս տըղան վար եր կենա, պա համո՞ թ չի, հի՞նչ կասե»:

Վերչը կյամ ա մնում մին օր, էտ մարթին լըղըցնում ա, շո̀րերը պիրում տնում քշտեն, էս հային ախճիգյը հըմընչելան ընցնում ա էն մին օթախը,

ամմա ղարաչի ախճիգյը մնամ ա քշտեն վրեննը կացած: Էտ մըեռալը աշկերը պա̈նում ա, տեսնում էտ ղարաչի ախճիգյը քշտեն վեննը կացած:

Էս մըեռալը ո̈ւրա̈ն մըթկըմը ասում ա, «Կա, թա չիկա, ստա յա ինձ լըղըցնողը»: Եր ա կենում, շո̈րերը կյենում, էս ղարաչի ախճիգյը ո̈ւրա̈ն հետե օզում:

Ամմա վեր էն մին ախճիգյըն էլ ա տո̈ւս կյամ, ընդրան էլ ասում ա.- Քըյեզ էլ յոր կօնիմ հունցու ծառա:

Էտ մին ախճիգյն ասըմ ա,- Պա յըես ըմ օխտը տարե քյըեզ պահալ, քյըեզ ամմեն օր լըղըցրալ, էս ա մին տարե յա, վար տա էլ պիրալ ըմ կոշտս ինձ քյո̈մա̈գյ ինիլի հետե, խե՞ տի յըս անում:

Էս մարթը հվատում չի:

Էս ախճիգյը ասըմ ա.- Նա ղարաչի յա:

Էտ մարթը էլիա չի հվատում:

- Դե վար հվատումը չըս, մին տրան փորցի, տես դո̈ւզ ըմ ասը՞մ, թա̈ չէ:

Էս ղարաչի ախճիգյը էլիա տահանց քշտեն հաց չի օտում, կենում ա, վար տահանք տո̈ւս ըն կյամ, քմկներեն հաց ա օտում: Մին օր էս մարթը օզում ա էտ ըխճըկանը փորցի, տըեսնա, խե՞ ո̈ւրա̈նց քշտեն հաց չի օտում: Տռանը քշտեն վըեննը կացած տըեսնում ա էս ախճիգյը կյամ ա ստոլան հացը յոր ա օնում, տանըմ, տինըմ օթախեն քյո̈ւնջերըմը, ետավ տո̈շը թըկելավ ասըմ ա. -Ա՛ քյո̈ւնջ, մին թիքյա հաց տո, սոված մըեռե:- Ետավ հացը յոր օնըմ, տնո̈ւմ պըա̈նո̈ւմը, սըերտը թկելավ քյնա̈մ տանը էն անգյո̈ւնը, կյամ, մընգյ էլ յոր օնում, մընգյ էլ քյնում:

Էս մարթը տըեսնում ա, վար տհենց ա, նի յա միննում ասում, - էլ քյըեզ օզում չում:

Էս ղարաչի ըխճըկանը շինո̈ւմ ըն ո̈ւրա̈նց ծառան, ամմա էն մին ըխճըկանը յոր ա օնում հունցու կնեգյ:

Շատ ա անց կենում, թա̈ խըրեգյ ախճիգյը ասում ա,- Քյնալու յըմ իմ հա̈րա̈նց տոն:

Էս մարթը ռազի  յա կենըմ: Եր ըն կենում տեսա, տենա շինում, յոր օնում, քյնա̈մ հա̈րա̈նց տոն: Տըեսնում հա̈րա̈նց տոն ըշտըղա՞ յա, վըրդեղ իլա̈լ ա, ընդեղ չի՛: Մին քանի մարթա հրցնում ըն, ասում ըն, վեր հա̈րը մեռալ ա, մարը էն ա փլան տեղը: Տանում ըն մորը տոնը նշանց տամ: Ախճիգյը նի յա միննում:

Մո̀ւվթա̀ մարը ճնանչում չի ըխճըկանը, ետնան, որ ասում ա՝ յըես քու ախճիգյըղ ըմ, մորը օշը տանըմ ա, ընգնում տափը։ Ըտրանք զոռավ ետ ըն պերում։ Սկսում են նոր քյըեփ անելը։ Պիրում ըն ո̀ւրա̀նց լոխ պարի-կամներին կանչում, նորու հըրսանեքյ անում։ Էտ ախճիգյը միչև ո̀ւրա̀ն գյանքին վերչը ապրում ա շատ լա̀վ, օքնում ա ո̀ւրա̀ն մորը։ Իտի էլ ամբախտ ախճիգյը բախտավերվում ա, օրախ, հարուստ ապրում։

## 31.ԱՌՈՒԾԻՆ ՆԱՆ ԿԱՏՎԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Մին մարթ ա ինո̀ւմ՝ Շաբո անըմավ։ Էս մարթը ամմեն օր քյնամ ար քոլը մին շելա̀կ փեղ պիրում ծախըմ։ Էտ շելա̀կ փեղավը կլո̀խ ըն պահում։ Մին դո̀նըմ էլ ծմակ քյինա̀լիս ո̀ւրա̀նց կատուն էլ նհետը քյինա̀մ ա քոլը։ Էս մարթը մին կաղնե ծառ ա քթա̀նո̀ւմ, սկսում ճղորտիլ։ Էտ ծառըմըտ խո̀ւլեր կար, տժար ար ճղվում։ Մարթը սկսում ա չըրչարվելը, վար ճղե։ Կատուն էտ մարթին չորս ընգյուննին շոռ ա կյամ, վար մոկուն յա մին օրիշ պա̀ն քթենա, օտե։ Ման կյալիս բո̀ւրդա̀ն կատվին մին ա̀ռո̀ւծ ա պտահում։

Ա̀ռուծը եշում ա կատվեն կլխեն, վընկներեն, ջանեն, հաքյվեն, ետնան հըրցնում կատվեն անա, թա̀.- Կա՛տու ախպեր, տու հանց ըս մեր ազկան ինի՛ ս։

Կատուն ասըմ ա.- Հա, ծեր ազկան ըմ։

Ա̀ռուծը ասըմ ա.- Պա վար մեր ազկան ըս, խե՞ տհենց կուճուր ըս։

Կատուն պաղասխանում ա ըռո̀ւծեն.- Գյո̀ւղո̀ւմ չըմ ըտեղ հի՞նչ կա, առո̀ւծ ախպեր, վար տու վէլ մարթու ճա̀նգյ ընգնիս, տու վէլ կկըրճանաս։

Ա̀ռո̀ւծը ասըմ ա,- Կա՛տու ախպեր, մարթը էտ հի՞նչ պա̀ն ա՞ , վար քյըեզ էտքան կուճուրցրա լ ա։

Կատուն ասըմ ա.- Օզըմ ը՞ս մարթ տըեսնաս։

Ա̀ռո̀ւծն ասըմ ա.- Հա՛։

Կատուն առաչ ա ընգնըմ, ա̀ռո̀ւծը ընդրա հետան, թո̀ւշին կյամ ըն մարթին կոշտը։

Ա̀ռո̀ւծն ասըմ ա.- Պարյօր, մա՛րթ ախպեր։

Մարթն ասըմ ա.-Աստուծու պարին։

Ա̀ռո̀ւծը հըրցնում ա.- Մա՛րթ ախպեր, լըսալ ըմ օժավ ըս, եք կո̀խլը կենանք։

Մարթը ծիծըղելավ պաղասխանում ա.- Ըստեղ կոխլը կենամ հի՞նչ տա̈ռնա, էք քյնինքյ շենումը կոխլը կենանք, վար մեր շենին մարթիքյը տեսնան:

Մարթը օզում ա վար ա̈ռո̈ւծեն շենը տանե, վար սպանե, մհենգյ էլ բո̈ւրղա̈ն մտածում ա, վար ստեղ էլ կկարե սպանե:

Ա̈ռո̈ւծին ասըմ ա.- Ախպեր, տու օժա՞վ ըս:

Ասըմ ա.- Հա՜:

Մարթն ասըմ ա,- Վար օժավ ըս, մին վըեննըտ տիր էս փա̈ղին ղաթըմը, տեսնամ՝ օժավ ը՜ս.

Ա̈ռո̈ւծն գյիդո̈ւմ ա, թա ո̈ւրա̈ն ամմեն օրվա ծառերն ա, կլխավը լոք տամ էս ղոլը, էն ղոլը, վըեննը տինո̈ւմ ա էն տժա̈ր ճղվելիս ծառեն ճեխկեն մաչին: Մարթը սեպին թխում ա, սեպը տո̈ւսա պրծնում, ծառը ա̈ռո̈ւծին վըեննը հոփ ա տամ: Տես ա ծիքյ տամ, տեն ա ծիքյ տամ, տո̈ւս չի կյամ:

Մարթը տեսնում ա, վար ա̈ռո̈ւծը վըեննը կարում չի տո̈ւս օնե, սկսում ա կացնավը կլո̈խը թակելը: Թակելիս վախտը ա̈ռո̈ւծը ասում ա.

- Կա՛տու ախպեր, վար քյըեզ մչանք տա̈ռնա̈մ, պա̈ց ա թուղլակա՜ն:

Կատուն ասըմ ա.- Քու տոնըտ քանդվի վըրդեղա յա պա̈ց թուղլական, սպանալ ա, պրծա՛լ:

Տհենց էլ մարթը սպանում ա ա̈ռո̈ւծին, մորթեն տոն պիրում. մին քյո̈ւլքյ կարում, կյենում: Էտ օրվանից մի քանե տարե էտ քյա̈սիբ մարթը էլ մըսում չի՛:

## 32.ԹԱՔԱՎԵՐԵՆ ԿՈՐԱԾ ԱԽՃԻԳՅԸ

Իլա̈լ ա, չիլա̈լ մին թաքավեր: Ըտրա փըսըկվելանը եըտ ընտրա կնեգյը խոխա չի պիրալ: Ո̈ւրա̈ն վեզիրը շատ ա ըղոթըմ, ըստուծեն ղաչանք անըմ, վեր աստուծ թաքավերեն մին ժա̈ռա̈նգյ տա:

Պառավ վախտը էտ թաքուհին պատճառավեր ա տըեռնո̈ւմ: Վեզիրն ո̈ւրա̈ն կյըրքին եշըմ ա, ասըմ,- Թաքավերը ապրած կենա, կնեգյըտ մին ախճիգյ ա պըիլա̈կան, կյուղըննական ըն:

Թաքավերն ասըմ ա.- Աստուծ թող ինձ ախճիգյ տա, յըես հանց պահիմ, վեր կյուղանան վեչ:

Թաքավերեն կնեգյը ըզաղվըմ ա, մին ախճիգյ ա պիրում: Թաքավերը որոշում ա ըխճըկանը հետե ծովումը մին տոն շինի, ո̈ւրա̈ն հարմար-

թուններավը, վեր չար ծըեռք չի հըսնե։

Էտ ախճիգյը կյամ ա մըծանում։ Մեհետ էլ մին դա̀րվիշ ըսկանում ա, վեր իտի մին ախճիգյ կա։

Դա̀վրիշը եր ա կենում, քյինո̀ւմ էտ թաքավերեն երգյիրը։ Հնար ա քթենում, էտ ախճիգյը կյուղանըմ։

Քշրիանա թաքավերը ըսկանըմ ա, վեր ախճիգյը կյուղացալ ըն։ Եր ա կենում մարթ ղարկում շոռ կյալ։ Վեչ մին տեղ քթենըմ չըն։ Ճարը կտրած թաքավերը հայտարարոթուն ա կյիրում, ցենտրը քյուչեքան կըպցնըմ, վեր, «Հու իմ ախճիգյս քթենա, ախճիգյս էլ ըմ տամ ո̀ւրա̀ն, թաքավերո-թունես կեսն էլ։

Հայտարարոթունը մին սալդաթ կարթըմ ա, քյինո̀ւմ թաքավերեն կոշտը, ասում.- Ցըես քու ըխճըրկանըտ կքթա̀նամ, թա̀քյի հինչ պահանջ ասիմ, տաս։

Թաքավերը ղաբուլ ա կենըմ։

Սալդաթն ասըմ ա.- Տու կտաս ինձ մին պարախոդ, ո̀ւրա̀ն քշո̀ղավը, մծերավը, վեց տարվա պաշարավը, իրեք տարի հըղե յըմ քյիննա̀կան, իրեք տարե ետ կյամ։

Թաքավերը խոսկ ա տամ՝ իրեք օրումը էտ լոխ հըզըրե, հըղե քցի։ Սալդաթը կյամ ա, իրեք օրանը ետը, պաշարը յոր օնում, պրախոդումը նստըմ, հըղե ինո̀ւմ։

Իրեք տարի հըղե յա քյինո̀ւմ, հըսնում տեղ, պարախոդան վեր ըն կյամ, քյինո̀ւմ մին ծմակու ղրաղ։

Սալդաթն ասըմ ա.- Մինուքը ղարավուլ քըշիցեքյ, մնացածը քյինա̀նք վըերս։

Իտի էլ անում ըն։ Սալդաթը գյուղըմ ա, վեր դա̀րվիշը ըտեղ ա կենըմ։ Քյնա̀լիս թաքավերը մին մուտանա յա տամ սալդաթին, վեր ախճիգյը հիշտեղ տըեսնա ճինանչի։ Սալդաթը շատ ման կյալանը ետը, մին պնա̀լի յա քթենում, ամմա մթեն ա ինո̀ւմ, ետ ա տեռնում կյամ վեշչուն կոշտը։ Վըերսըտեղան հնգերունքը կյամ ըն, տըեսնըմ ղարավուլչին սպանած, խրավածը կերած, քյեցած։

Շատ ըն մտածում հնգերունքը, թա̀ հո՞ւ կինի սպանած, ամմա սալ-դաթը գյուղում ա, վեր տա դա̀րվիշին պենն ա։ Թաքուն ա պահում, վեչ մինին ասըմ չի, ասում չի, վեր ըստեղ դա̀րվիշ կա։

Էքյսը քնուտեղա եր ա կենում, հընգերունցը ասըմ.- Թող մըզանա մինը էլիա ղարավուլ վըեննը կենա, մնացածը քյինինքյ վըերս:

Իտի էլ անըմ ըն: Շատ ըն շոռ կյամ, խրեգյ ըն շոռ կյամ, քթենում չըն ըխծըկանը տոնը: Վըերսա ետ ըն կյամ, թա̀ հաց օտին, տըեսնըմ ղարավուլչին էլիա սպանած, հացը կերած, քյեցած: Սալդաթը գյուղում ա, էլիա ասըմ չի:

Քշերավ վեր ըն կենում, սալդաթը էլիա հա̀մին հրամանն ա տամ:

Հնգյերունքը ջողաբ-ջողաբ ըն ինո̀ւմ, ասըմ ըն.- Հի՞նչ ա, մըեզ պիրալ ըս ըստեղ կընդ-կընդ կտորի՞ ս, ղարավուլ չընք վըեննը կենում, մընզ էլ տու վըեննը կաց, մունք քյինա̀նք վըերս:

Սալդաթը ճարը կըտրած ղաբուլ ա կենըմ, ասըմ ա.- Լա̀վ կինի, մընզէլ յըես կկենամ, տուք քյեցեքյ:

Սալդաթը կենըմ ա, խորագյ իփում, պղրաստում, տըեսնըմ ա մինչև հնգյերունքը կյալը, մին բեղավուր աժդահա մարթ եկավ պարիյօր տվավ, Սալդաթը պարիյօրեն պարիյօր ա տամ. էտ էն դա̀րվիշն ա ինըմ:

Դա̀րվիշն ասըմ ա.- Խորագյը հազըր չի՞ , քցի օտինքյ:

Սալդաթն ասըմ ա.- Հա, պադրաստ ա, հինչ օզիս, կա:

Սալդաթը ըտրան խորա̀գյ ա տամ, իմացնըմ, թա հինչ կա ուտելի: Կյինի էլ ա տամ: Դա̀րվիշը հա̀րփըմ ա: Սալդաթը յոր ա օնում խանչալը, ըտրա կլո̀խը կտրում, թաղում, վեր հնգյերունքը գյիդա̀ն վուչ, թա̀զա̀ղա̀ն ըսկըսըմ ա խորագյ իփիլը մինչև հնգյերունքը կյալը: Հընգյերունքը հա̀նդին մսլահաթ ըն անում, վեր. «Քյիննա̀կան ընք տըեսնանք սալդաթըն սպանած: Պրախոդը յոր կօնինքյ, քյնանքյ»:

Կյամ ըն տըեսնում հի՛նչ, սալդաթը սաղ սըլըմաթ, խորագյ իփած, էնա եշըմ, թա կյան, օտին:

Հնգյերունքը զըրմանում ըն, ասըմ ըն.- էտ հի՞նչ պեն ա, վեր սպանալ չը՛ն:

Կյամ ըն օտում, խմըմ, քոն ինըմ:

Քշերավը եր ըն կենում, քյինո̀ւմ վըերս: Վեր շատ շոռ ըն կյամ, մին ծակ ըն քթենում, էն պնա̀լին քըցըմ ըն, պենվում ա: Տեսնըմ ըն ընդեղ մըեծ հարըստոթուն, վըեսկե, մին էլ էրկու պնա̀լի: Յոր ըն օնում պնա̀լիքյը, տո̀ւս կյամ, ըսկըսըմ շոռ կյալ ըխծըկանը հետան: Էլլա մին շինոթուն ըն քթենում: Ըտեղ ընդրանա շատ հարըստոթուն ա ինո̀ւմ, քանց սո̀ւվթո̀ւմը:

Էլիա յըն շոռ կյամ ըխճըկանը հետան:

Սալդաթը քթենում ա ըխճըկանը տոնը: Էն քըթա̀ծ պնալավը պենում ա, տըեսնըմ մին դա̀բրետկա, յրան նստած մին ախճիզյ, ծըքակործ ա անում:

Ախճիզյն աըըմ ա.- Ա՛յ տղա, յըես դժոխկի մաչի յըմ, տո՞ւ ինիս, տո̀ւս եք ըստեղան, դա̀րվիշը կկյա, քյըեզ ըսպանե:

Տղան ասում ա.- Ա՛յ ախճիզյ, վախե մել ընդրա կլո̀խը կնոխե յըմ կտրալ:

Համ աըըմ ա, համ հորը տված մուտանան նշանց տամ:

Ախճիզյը դա̀ստի գյուղում ա, վեր հա̀րն ա դարկալ էտ տղեն: Ասըմ ա.- Հարստոթունին տըեղերը, նշանց կտամ, վեր յոր օնինքյ, փախչինքյ: Ամմա դա̀րվիշին էրկու ախպերը կկյան, մըեզ կտորին:

Սալդաթն աըըմ ա.- Տըեղերը գյուղում ըմ:

Ախճիզյը հորը մուտանան յոր ա օնում, ո̀ւրա̀ն մուտանան տամ էտ տղեն, հարստոթունը նի յըն տամ պրախոդը վեր հղե ինին, ըխճըկանը մենն ա ընգյնըմ, վեր մին վըսկըճրա̀ծ դարյա թողալ ա ընդըեղ:

Ասըմ ա.- Տո̀ւ ըստըեղ կաց, յըես քյինիմ վըսկըճրա̀ծ դարյաս պիրիմ:

Տղան աըըմ ա.- Չէ՛, տու կաց, յըես քյինիմ, պիրիմ:

Ախճիզյը ասըմ ա.- Չէ՛, վախըմ ըմ հնգյերունքըդ քյըեզ դըշմընոթուն անին:

Տղան լըըմ չի, ըխճըկանը թողում ա ըտըեղ, քյինո̀ւմ դրյին հրեյին: Հնգյերունքը ղասիդ տղեն թողում ըն, պրախոդը խող տամ, քյինո̀ւմ:

Ախճիզյը պրախոդան հինչքան հարայ ա տամ, պրախոդը վըեննը չըն կցնում:

Քշողը յրա յա պըրծընըմ էտ ըխճըկանը յրա, թա թխե, վըխըըցնըմ ա, աըըմ.- Քյնա̀ հորըտ ասե, վեր տու սալդաթ չըս տըեսալ, վեր քյըեզ քըթենողը յըես ըմ, պրախոդ քշողը:

Ախճիզյը վխելան նհետ համածյնվըմ ա:

Սալդաթը ծովեն դրաղեն նստում ա, քնենքյ անըմ, թա հի՞նչ անի, հո՞ւնց անի միհենգյանց տենը: Եր ա կենըմ ընգյնըմ ծմակը, շոռ կյամ, վըերս քթենըմ, ապըըմ:

Մին ամես տի ապըըմ ա, մին դա̀րվիշ ա ջիհըմ: Էն համին դարվիշին մըեծ ախպերը:

Դա̀րվիշը օզըմ ա նի կապե սլդաթեն յրան, ըսպանի, սալդաթն աըըմ

ա.- Հինչ ասիս, կանիմ, թա̀քյի ինձ ըսպանիս վուչ:

Դա̀րվիշն ասըմ ա.- Վեր տի յա, յըես քյըեզ յոր կօնիմ նո̀քյա̀ր:

Տանըմ ա տները նշանց տամ, վեր թմիզցնի, ամմա առանց ո̀ւրա̀ն նի չի մննի:

Մին տարան վեչ պակաս ըտեղ կենըմ ա, ամմա քշեր, ցիրեկ քնենքյ ա անըմ, ասըմ ա. «Էս հի՞նչ զյանք ա, վեր յըես մաչին ըմ: Դե մհե վեր կըսպանե, թող սպանե»:

Մին հետ էլ յոր ա օնըմ, տո̀ռնը պենում, տեսնում մին սո̀ւրո̀ւ լղար ծիյանք: Վեր տո̀ռնը պենում չի՛, դա̀րվիշը կյամ ա: Օզըմ ա սպանե ըտրան: Սալդաթը ըղաչանք ա անում, վեր էլ պենալ չի: Վեր շատ ա ըղաչըմ, դա̀րվիշը մեխկն ա կյամ: Մեթկը փոխըմ ա, էլ ըսպանըմ չի:

Սալդաթը վեց ամսանը ետը տհենց էլ էն մին տո̀ռնն ա պենըմ տեսնըմ մըեծ կայք, հա̀րըստոթուն կա: Էլհա դա̀րվիշը կյամ ա, թա̀ թխե, սպանե, սալդաթը մչանք ըղաչանք, պըղատանք ա անըմ,վեր դա̀րվիշը ներըմ ա: Սալդաթը մին տռնանը ետը պենըմ ա իրեքինջի տո̀ռնը, տըեսնըմ քյո̀հնա պորթվելներավ լիզյը:

Դա̀րվիշը կյամ ա, թա̀  կլո̀խը կտրե, տղան էլհա միննաթ ա անում:

Դա̀րվիշը ասըմ ա.- Դե, վեր տի յա, քյըեզ իմ երզյիրաս տո̀ւս ըմ օնում:

Տղան լա̀ց ա ինո̀ւմ: Դա̀րվիշն ասըմ ա,- Հիշտեղ օզըմ ըս տանիմ:

Պիրում ա ղուլլուղին հախը տամ մին լղար ծի, մին էլ մին ճղած պորտվել:

Սալղաթն ասըմ ա,- Պա ըստրանավ հի՞շտեղ կհասնիմ:

Դա̀րվիշը ըտրանա իվիլ լղար ծի յա տամ:

Տղան ըղաչանք ա անըմ, ասըմ ա,-Տա փիս ծի յա, մին օրիշը տո: Դա̀րվիշը ասըմ ա.- Տա առաչվա ծիյան ճելլի յա քյինըմ: Ասըմ ա.- Նստե ծին, աշկերտ հոփ կալ, ծիյին մեհետ թխե, սաե վեր քաղաք ըս օզըմ քյինա̀ս, ծին կես սհաթըմը հըսցնական ա: Հիշտեղ փող հարկավեր կյա, պորթվելը թափ տո, փող ա վեր տռնըլական:

Սալդաթը յոր ա օնում վըեսկըշափաղ դարյան, մուտանան, պորթվելը, ծին եր ինո̀ւմ, քըղաքեն անումը տամ, մեհետ թխում, մինչը կես սհաթը տեղ ա հըսնում:

Քյինամ ա էլ իվիլ թնզյա̀նուց շո̀րեր ինքյ օնում, կյենըմ, հըրըստանըմ, ապրում: Էտ քաղաքը թաքավերեն նստած տեղն ա ինո̀ւմ, ըտըեղ մին

քանէ վախտ կենըմ ա, օրը տասներկու աման խորա̂գյ օտում, մին լա̂վ քյուքանըմ։ Մին քանի օրանը էտը թաքավերեն անա հըռակյիր ըն ստանում, վեր ախճիգըլը կյամ ա հըղեցն ա։ Լոխ հըզըրվըմ ըն տո̂ւս կյան թմաշա։ Թաքավերը էտ ստալավոյին տըռնանը ընցնելիս լսում ա, վեր ըտեղ խստի մին մարթ կա, օրը տասնըէրկու աման խորագյ ա օտըմ։

Թաքավերն ասըմ ա.-Պերեքյ տեսնամ։

Պուրում չըն։ Թաքավերը կյամ ա, թա̂ տեսնա, տղան տեղան եր ա կենում, դաբըրետկան տամ թաքավերեն, թաքավերն ասըմ ա. - Ախճիգըլըս կյուղացած ըն հըլա̂լ, մհենգյ կյամ ա, հըրսանիք ըմ ըննական, կկյաս։

Տղան ո̂ւրա̂ն ադրեսը տամ ա։ Էրկու օրանը էտը ախճիգյը պիրում ըն։ Սալդաթը մթկըմը ասըմ ա, «Հետաքըրքիր ա, քյինա̂մ, տեսնամ ախճիգյը հի՞նչ ա նաղլ անըմ»։

Ախճիգյը վըխելան նհետ ասըմ ա.- Ինձ պրախոդ քշո̂ղն ա քթա̂լ։

Սալդաթը կյամ ա տոն։ Էքյսը բիդի հըրսանիքյ ինի։ էտ ըխճըկանը բիդի տան էն պրախոդը քշո̂ղին։ Սալդաթը յոր ա օնում վսկըճըրա̂ծ դարյան, մուտանան քցո̂ւմ մաննը, սարքվըմ, քյնամ հըրսանիքյ։ Ինքյն էլ լա̂վ շո̂րեր ա հինըմ կյեցած։ Հըրսըընքըմը լա̂վ տեղ ըն նըստըցընըմ։ Փեսեն, ըխճըկանը ստոլեն պարյօր ա տամ։ Զրո̂ւց ա անում, կյինի յըն խմըմ, ըխճըկանը նան պրախոդ քշո̂ղին կյենաց ըն ըն խմըմ։

Սալդաթը ստոլեն տակեն մաննը էտ ա անում, մուտանան քըցած ծեռքավը ստաքանը յոր ա օնըմ, թա խմե, ըխճըկանը աշկավն ա ընգյնըմ մուտանան։

Ախճիգյը օշը կուրցըրած ճղղում ա.- Վէչ մինը կյենացս խմէ վուչ, տա չի ինձ քթա̂լ, օզում չըմ ըտրա նհետ փսակվի՛մ։

Դերը հրցընըմ ա.- Հինչ ա պտահալ, էս հի՞նչ ղազաբ ա մեր կլո̂խը եկալ։

Ախճիգյը օշը կլո̂խն ա հվաքըմ, ասըմ.- Ըմընեքյը հրամած ա, լոխ փուխեցեքյ, ետավ կասիմ հինչ ա պտահալ։

Ըմընեքյը փոխըմ ըն, թազադան ստոլ ըն պենըմ, ախճիգյը մին-մին նաղլ ա անըմ, ասըմ.- Ա՛ հա̂ր, վէչ թա պրախոդ քշո̂ղն ա քթա̂լ, էս սալդաթն ա քթա̂լ, հեսե իմ նշանածս, մուտանաս փոխալ ըմ մուտըննեն նհետ։ Սալդաթը էտ ա մնացալ, վըեսկե դարյին դա̂րդա̂ն։

Պըտմելանը էտը թաքավերը հրամման ա տամ՝ պրախոդ քշողեն

կլո՞խը կտրին: Ընդետանը ախճիզյը, թաքավերոթունեն կեսը, հարստոթու-նեն կեսը տամ ա սլդաթեն: Ետնան իրսանեքյ ըն անըմ, ո՞ւրա՞նց հետի փառավեր ապրըմ:

Ըտրանք իրսեն ուրանց մուրա զեն, մուեք էլ իըսնինքյ մեր մուրազեն: Երգինքյան իրեք խնձո՞ր ա եր ընգնըմ. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ տըռանը տական անջուկ տընողեն:

## 33.ՄԻՆ ԿՅՈՂՈՒ ՆԱՂԼԸ

Ինո՞ւմ ա, չի ինո՞ւմ մին կյող մարթ ա ինո՞ւմ: Էս մարթը միշտ կյուղոթուն ա անըմ: Էնքան կյուղոթուն ար ըրալ, վար լոխ ընդրան կյող ին կանչում:

Մին օր նա մտքումը տինո՞ւմ ա, էլ կյուղոթուն չանե: Ամմա վար ո՞ւրա՞ն ճընանչըմ ին հունցու կյող, որոշում ա ո՞ւրա՞նց սրջանան տո՞ւս կյա:

Ճընապարվում ա մին օրիշ սրջան, համ էլ ո՞ւրթո՞ւմն ա օտում, վեր էտ կործավը էլ զբաղվի վուչ:

Քյինո՞ւմ ա, քինո՞ւմ, մին տեղ մթնում ա, նի յա մննում մին տոն, ասըմ.- Խնթրըմ ըմ էս քշեր ինձ ղոնաղ պաhիքյ:

Տնատարն ասըմ ա.- Հի՞նչ կինի՛, ղոնաղն աստծունն ա՛:

Տա նի յա մննում էտ տոնը: Տրա համար տնեցեքյ չորս ծու յըն իփում: Օտում ա, քշերը քոն ինո՞ւմ: Առավոտը քշերավ եր ա կենում, ճընապար-վում:

Բիրդա՞ն ճընապարեն մետն ա քըցում, վեր կերած ծվեն հախկը տվալ չի: Էտ պենը հաշվի քցելա՞վ վեր կյուղոթուն ա, ետ ա տեռնում, վեր չորս ծվին հախկը տա: Վեր շեննան մուտանըմ ա, էն տնատարը ուշո՞ւնց ա տամ, ասըմ,- էն չորս ծվին հախը խե՞ չըս տվալ:

Էտ մարթն ասըմ ա,- Ա՛յ մարթ, մննաս ընգալ ա, եկալ ըմ վեր տամ, հի՞նչ ըմ տլական, ասե:

Հա՞շվում ա, ասում.- Չորս ծուն թոխս կը տնի, չորս ճոտ տո՞ւս կըկյար, ընդրանց էլ կմծցնի, ծու կըծին, մնէլ չորս թուխսուկան կտեռնար:

Աստի հաշիվ ընելավ կտեռնա էրկու հարո՞ւր հավ: Հախկը չորս հարո՞ւր մանեթ:

Էտ մարթը զարմանում ա, ասում.- Ա՛ մարթ, չորս ծու յըմ կերալ, ասե չորս ծուվեն հախկը տամ:

- Չէ՛, վեր չէ՛:

Ծուվեն տարը սուղի յա տամ: Էտ մարթը ճընապարավը մըտըծելավ քյինո՞ւմ ա:

Ճընապարեն պտահում ա մին չոբան, տեսնում ա, վեր էս մարթը տխուր ա, հըրցնում ա.- Ախպեր, խե՞ տխուր ը՛ս:

Ասում ա.- Հի՞նչ անի՛մ, վեր տխուր չինիմ: Հինչու կա, լոխ նաղլ ա անըմ:

Էտ չոբան ասում ա. – Դիմումետ մաչին ինձ էլ շհաղ կյիրի: Ցըես կործը ատկազ ըմ ըննական:

Էս մարթը իտի յա անըմ: Սուղը պավեսկա յա դարկում, վեր էս հինչ օրը ներկայանան սուղեն: Լոխ ասած օրը ներկայանում ըն սուղեն, համմա չոբանը մին թիքյա՛ ետանըմ ա:

Վեր կյամ ա, սուղյան աըմ ա. - Հիմմա՛ր, քանի՞ կլխանե յըս, վեր իմ ասած ժամանակին ներկայացալ չըս:

Չոբանն աըմ ա.- Սուղյան ապրած կենա, լոբի յի իփում, վեր պերիմ ըռաչավտ վարիմ, կանաչ-կյարմո՛ւր ծաղիգյնի տեռնա:

Սուղյան կզնվում ա, ասում.- Հիմմար անասուն, էփած լոբին կփսնե՞:

Չոբանը ասում ա.- Պա իփած ծուն ճոտ կտեռնա, վեր էտ մարթը իտի յա հաշիվ անըմ...

Ստրանավ կործը աթկազ ա տըեռնում:

## 34.ԷՇԸ ԲԱԴԱ ՏԱԼԸ

Հիլխեցե չա՛րչի Հա՛րա՛բեղը օզեցալ ա, թա՛ քյինա՛ Աղդամ ռանգյ-մռանգյ, լեղակ-մեղակ, թանակ, ասեղ, սանջեղ, բլափկա, վերչը՝ խուրդավաթ պի-րի, շենացուց յըան ծախե:

Էշին նստում ա, հղե ինո՛ւմ է վեր հսնում ա Խոջալլուվեն դո՛ւզը, վազոնեն հղեն հա՛լա՛ նոր քցած ըն ինո՛ւմ, հունց ա պտահում, էտ վազոնը հղցեն մաշտեղը վենն ա կենում:

Էս Հա՛րա՛բեղը մեթկ ա անում, վեր նստե էտ վազոնը:

Վերչը խուրջինը էշան վեր ա օնում, օսավը քցո՛ւմ, էշին վզոնեն քմա-կան կապում, ինքյըն էլ եր ինո՛ւմ վըզոնումը նստում: Վազոնը վեր խող ա ինո՛ւմ, քյինո՛ւմ, քմական էշը կարում չի հսնե, քաշ ա ինո՛ւմ հետան էնչունք տես-տեն քաշ-քաշ ա անում, վեր ստակում ա: Մհենգյ էլ մին տեղ էս վզոնեն ըռըշկեն պրավոզը պուք ըն տամ, վեր քյնա՛ հո՛ւր յոր օնե, նոր կյա:

Ինքյը վեր ա կյամ, հետան վազ տամ, թա,- Մըեզ թողած փախճում ըք, ա տնըքանդե՜ր, խե՞ թողում ըք ինձ:

Վերչյը տըրան մին կյերպ հսկցնում ըն, թա.- Էս ա կկյա, քյըեզ տանե, վախել մեր:

Կյամ ա, թա նորու նստե, մեն ա ընգնըմ էշը: Նորու վեր ա կյամ, քմակեն եշում, տեսնում էշին կլո՛խն ա մինա՛կ մնացալ կախ իլա՛ծ:

Ետ ա տըեռնում մեր Հա՛րա՛բեղը, էլ վազոն չի նստում, վեր զվանոկ ա տամ, թա՛ հղե ինի, հետան պըլլոր ա անում, թա՛,- Հի՜նչ ըս պռանչում, էշս, էշս բեղմա ծնիս, էշըս, կոնյա կաշին էլ չըս ինձ տվալ, թա տըրեխ անիմ, պա իտի մրթոթուն կին ի՜…

## 35.ՍԱԼԴԱԹԸ

Մեհետ մին սալդաթ ա ինո՛ւմ ո՛ւրա՛ն պոստումը վըեննը կացած: Թաքավերեն տղան մին ջուվարու նհետ զրո՛ւց ընելավ համ կյամ ա, քյինո՛ւմ, համ էլ, թա.- Մին իրեք հազար մանեթս բեղա՛ր, քյինի վաճառականեն ախճիզյը պիրի:

Էտ սալդա թը ըսկանում ա, թա,- Քու իստինըտ, ինդինըտ, յըես առանց մին կըպեկի էտ ախճիզյը կպիրիմ:

Թաքավերեն տղան քյինո՛ւմ ա հորը, թա.- Յըես իստի ըսեցե, մին սալդաթ իստի ասից:

Թաքավերը ծեն ա տամ էտ սըլդաթեն տանում, թա.- Էն հի՞նչ ա իլա՛լ, վեր ինդի յըս ասալ:

Սալդաթն ասում ա.- Պա դե կկարիմ պիրիմ: Թաքավերին ասում ա.- Մին թոխտ տոք, վեր ամմեն հինչ անելի իրավունք օնիմ, մինչև անքամ մարթ ըսպանելի իրավունք օնիմ, համ էլ իրեք տարե սըոկ տոք, պիրիմ:

Թաքավերը ռազի յա կենում: Ըտրան իտի մին թոխտ ա տամ, համ էլ իրեք տարե սըոկ ա տամ:

Էտ սալդաթը լոխ յոր ա օնում, քյինո՛ւմ: Քյինիյիս չախը մին գեներալ ա ջիհո՛ւմ: Էտ սալդաթը իսկյի միալ էլ չի տինո՛ւմ, չուբուխը ծիքյ տալավ քյինո՛ւմ ա: Էտ գեներալը կզնվում ա, ըսկսում ո՛ւշո՛ւնց տալը: Սալդաթը թոխտը տո՛ւս ա օնում, նշանց տամ, վեր իրավունք օնե ըսպանե: Գեներա-լը տո՛ւս ա օնում, մին իրեք հազար մանեթ տամ, ազադվում: Սալդաթը քյինո՛ւմ ա, տըեսնում սլդըթներեն մեծը սլդըթնուն հըղըցնում ա: Սուս

ըրած, չուբուխը քշիլավ քյինո՜ւմ ա, քշտուռնավը անց կենում, էտ սլդըթ-նուն մըեծը ետ ա տըեռնում, ըսկսում ըտրան ո՜ւշունց տալը:

Սալդաթը թոխտը տո՜ւս ա օնում, նշանց տամ, մին վեց հազար մանեթ էլ ըտրանա ինքյ օնում, քյինո՜ւմ : Քյինո՜ւմ ա ամենալա՜վ պիներան, ամմեն հինչան զակազ տամ, պիրո՜ւմ, լա՜վ ստոլ սարքում, դրաղեն նստում: Եշում ա, տեսնում վաճառական են ախճիգըը մին գեներալու նհետ կյամ ար:

Էտ ախճիգյը վեր էտ սլդաթեն իտի տեսնում ա, գեներալեն ասում ա.- Տու գեներալ ինիլա՜վըտ կարում չըս, թա ինդի պեներ առնիս, ամմա սալդաթն առնում ա:

Վերչը ո՜ւրա՜նք էլ ընդեղ դոնաղ ըն ընգնո՜ւմ, օտում պրծնում:

Էտ ախճիգըը գեներալին ասում ա.- Քյինի էն հինչ տըեղը, ասե էս հինչ վաճառական են ըխճըկանը զակազ տված սըհաթը տոք: Փողը տոք, երկալ, էս հինչ ժամեն եք էս հինչ տըեղը:

Էտ վեր էն ախճիգյն ասում ա, սալդաթը լոխ ըսկան ում ա, ինքյը եր ա կենում ըռաշկեն քյինում, միկա իվիլ փող տամ, սըհաթը յոր օնում, ասած ժամեն քյինո՜ւմ, քյինդիրավը պիցրա՜նում, քյինում ըխճըկանը կոշտը: Մթեն ա ինո՜ւմ, էն ախճիգյը ճընանչում չի, գյիդում ա, թա՜ գեներալն ա:

Սալդաթը սըհաթը տամ ա ո՜ւրա՜ն, պրծնում, թա քյինի, դասիդան մուտանան վեր ա քըցում, ասում,- Մուտանաս վեր ընգավ:

Էն ախճիգըը ասում ա.- Իմս տու եր կալ, էքյուծ յըես քունը կքթենամ պիրիմ, կփոխինքյ:

Մուտանան յոր ա օնում, պրծնում, թա,- Միննանուցս էլ ա վեր ընգալ:

Էս ախճիգըը էլիա ո՜ւրա՜ն միննանուցը տամ ա սլդաթեն: Սալդաթը յոր ա օնում, քյինո՜ւմ: Վեր լո՜ւսանում ա, էտ սալդաթը էլիա քյինո՜ւմ ա ստոլ սարքում, ընդեղ նստում, մուտանան, միննանուցը մանումը, ծեռքը տինո՜ւմ ճկատեն:

Վաճառական են ախճիգյը կյամ ա, իտի տեսնում, թա՜.- Ցըես օզում ըմ քյըեզ նհետ ծանոթանամ:

Սալդաթն ասում ա.- Ցըես մին հասարակ սալդաթ, տու վաճառական ու ախճիգյ, հո՞ւնց ծանոթանանք:

Ախճիգյըն ասում ա.- Վնաս չօնե:

Ծանոթանում ըն, թաքուն խոսք տամ, վեր փըսակվին: Էտ ըխճըկանը հա՜րը գյուղում չի՛: Ըտրա մին կորած պարախոդ ա ինո՜ւմ, հայտարարում

ա, վեր ծախում ա: Էտ սալդաթը ինքյ ա օնում: Պարախողը վեր քթենում ա, սալդաթը ապրանքը լոխ տո՞ւս ա տամ, յոր օնում:

Վաճառականը կյամ ա, տեսնում, ասում.- Եք յըես տու պարիկամանանք:

Իտի էլ անում ըն, ախճիգյը տամ ա էտ սլդաթեն: Իրեք տարեն վեր թմամում ա, էտ սալդաթը վաճառականեն ախճիգյը յոր ա օնում, քյինո՞ւմ, թա՞.- Թաքավերն ապրած կենա, վաճառականեն ախճիգյը պերալ ըմ:

Թաքավերը նորու հրսանեքյ ա անում:

## 36.ՊՐՈՖԵՍՈՐԵՆ ՔՈ՞ԻՐԸ

Ինիս ա, չինիս մին թաքավեր, ըտրա ինիս ա մին տղա: Էտ տղան վեր մծընաս ա, ո՞ւզիս ըն վեր մին գիղոթուն սվըրցնին:

Թաքավերը մսլըհաթ ա ընես, վեր տղան դարկե օրիշ երգյիր, ընդեղ կրթվե, ըտրա կնեգյը թուղես չի: Թաքավերը մին պրոփեսոր ա պիրիլ տաս, տանը տղեն կրթըցնելի հետե:

Մին քանե տարանց ետը, էտ տղան ո՞ւրա՞ն վարժաբեղին կյըրերըմը մին նկար ա տըսնաս, յրան հըըլ-մալիլ տոնաս, հիվընդնաս: Իրեք օր տանան տո՞ռնը չի տո՞ւս կյաս, վեչ հաց ա ուտես, վեչ ճո՞ւր ա խմես:

Թաքավերը նան թաքուհին ո՞ւրա՞նց երգյիրըմը դոխտուր, հա՞քյիմ, պեն չըն թուղես, լոխճին պիրիս ըն պալատ, ամմա վեչ մինը կըրես չի, թա՞, էտ տղեն ցավը գյիդա՞:

Վերչը մին պառավ կյաս ա, թա.- Յըես կգյիդամ ըտրա ցավը, թող կացեք կյա իմ կոշտըս, պեն ըմ ըսըլական:

Էտ տըղան կըրես չի քյինա՞, թո՞ւլ ա ինիս: Էտ տղեն հընգերը վեր կյաս ա պռավեն կոշտը, պառավը ըտրան ըղըկես ա էն տղեն կոշտը, ըն էլ տանան հա՞լա՞ տո՞ւս չի եկյալ, նկարը տեսած օրան:

Հնգերը վեր քյինիս ա կոշտը էտ տղան ետ ա տըռնաս, թա. -Ա՛ հընգյեր, պա ասե՞լ չը՞ս, էս ա իրեք օր ա սիրահարված, մըեռնըմ, խե կյա՞ս չըս ինձանավ ընցնիս:

Հընգյերը կյաս ա պռավեն ըսես, պառավըն էլ քյնիս ա թաքավերեն ըսես: Թաքավերը էն պրոփեսորեն ծեն ա տաս, նկարը տո՞ւս օնել տաս, թա՞.- Էտ հո՞ւր նկար ա:

Պրափեսորը ըսես ա.- Իմ քվեր նկարն ա:

Թաքավերը ըսես ա, դե քու քվեր պիտի տղես հետե ծզիմ:

Պրոփեսորը ռազի յա կընաս:

Թաքավերեն պլատըմը վեզիրներան մինն էլ ա ըշկըտրա̀ծ ինիս, թա ո̀ւրա̀ն ախճիգյը տա թաքավերեն տըղեն: Էտ պենը վեր ըսկընաս ա, ո̀ւզիս ա վեր խընգարե:

Կյաս ա թաքավերեն սըտըստ պեներ ա խաբար տաս:

Թաքավերը պրոփեսորեն կըպուտես ա, թա̀.- Քու քվեր անըմ վեր պեն կա՛, խե՞ ինձ ասալ չըս:

Պրոփեսորը ըսես ա.- Դե տրա ասողը թող մին նշան պիրի, հվատամ:

Էտ վեզիրը եր ա կընաս ամմեն հինչան յոր ունես, օղտերը պըռնես, թա տանե ռուշվաթ տա, վեր էն ըխճըկանան մին նշան պիրին:

Պրոփեսորեն քո̀ւրը կնաս ա ընիս մին օխտը ըտժանե տան կըլխե: Օխտը ըտաժումը ըտրա կոշտը քյինիս ա ընիս ո̀ւրա̀ն ախպերը մին թաքուն, օրիշ մղակավ:

Էլ դո̀ւշ դասաթ ընդրա կոշտը քյեցած չի հա̀լա̀: Էտ ախճիգյը մին օր եր ա կընաս, տսնաս ո̀ւրա̀ն տատը եկած կոշտը: Ըսես ա. - Հո՞ր ըս եկալ:

Տատը թա.- Եկալ ըմ կլո̀խըտ լվանամ:

Տո̀ւ մել ասել էտ վեզիրը պռավեն ռուշվաթ տված կինի մին չվալ վըեսկե, թա̀.- Թոռանըտ անա մին նշան պե՛ր:

Տատըն էլ կքյինի թոռանը կոշտը, թա̀.- Եկալ ըմ կլո̀խըտ լվա̀նա̀մ:

Կլո̀խը լվա̀նո̀ւմ տեղը մուտանան յոր կօնե, տո̀ւս կյա, պիրի տա վեզիրին: Էտ վեզիրն էլ կպիրի թաքավերեն տա:

Թաքավերն էլ ծեն կտա պրոփեսորեն, թա̀. - Պիտի քյըեզ սպանիմ, վեր ինձ խափալ ըս:

Պրոփեսորը ռազի յա կենըմ: Դե էլ հի՞նչ անե ընդրանա ետը:

Էտ ախճիգյը վեր տսնաս ա մտանան կա վուչ, ո̀ւրա̀ն պենը գյիդա̀ս ա: Եր ա կնաս տղու շո̀րեր կյնաս, քյնիս թաքավերեն պալատը, հարցըփորձ ընես, տսնաս լոխ տո̀ւս եկած թմաշա, վեր պիտի պրոփեսորեն կախաղան տան:

Վեր տըընաս ա, հինչու հետե յա, ետնան գյիդա̀լա̀նը ետը, էտ ախճիգյը ո̀ւրա̀ն շո̀րերը կյնաս ա, քյինիս թաքավերեն կոշտը թա̀.

Մտանիս քու պլատեն մարթիքյը եր ըն կա̀լա̀լ, ասե ինձ տան: Ըտել ո̀ւրա̀ն օրումը հա̀լա̀ տանան տո̀ւս եկած չի, ըտրա դա̀րդա̀ն էլ վեչ մինը ճնչիս չի, թա հո՞ւ վա:

Թաքավերը հրցնիս ա.- Հո՞ւ վա եր կա̀լա̀լ:

Էտ ախճիգյը էտ վեզիրին նշանց ա տաս, թա̀.- Էն ա եր կա̀լա̀լ:

Վեզիրը ո̀ւրթո̀ւմն ա ուտես թա̀.- Յըես եր չըմ կա̀լա̀լ, յըես ըսկի ճննչիս էլ չըմ, թա̀ տա հո՞ւ վա, իիջտեղեցե յա՛:

Էտ ախճիգյը ըսես ա.- Դե վեր իտի յա, մին թոխտ կյիրի, թաքավերն էլ թող փչա̀տե, վեր տու գյիդա̀ս չըս, թա̀ յըես հու վըմ, ինձ ճննչիս չը՛ս:

Վեզիրը թոխտը կյիրիս ա, թաքավերն էլ փչտես ա, տաս էտ ըխճըկանը: Էտ ախճիգյը թոխտը տաս ա թաքավեր են, թա̀.- Էս վեր ինձ ճննչիս չի, գյիդա̀ս չի յըես հո՞ւ վըմ, պա մուտանաս հո̀ւր անավ ա ձեռքը քցալ:

Թաքավերը մնաս ա ըրմացած էտ ըխճկանը խելքեն յրա: Պիրիս ա կործը քննես, տսնաս պենը հինչումն ա: Ցիրեկվա սհաթի իրեքին պրոփեսորեն կախ տալին տրեղը ո̀ւրա̀ն վեզիրին ա կախ տաս, պրոփեսորեն ըզըղես: Պրոփեսորեն քո̀ւրը ուզիս ա ո̀ւրա̀ն տղեն հետե, օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ընես:

## 37.ԱՐՋԸ ՆԱՆ ՄԱՐԹԸ

Մին մարթ ա ինո̀ւմ: Ամմեն վախտ քյնում ա ծմակը փա̀ղ պերի: Քյնամ ա տըեսնում մին քարու յրա մին արջ կաղնած:

Վեր եշում ա, տըեսնում մարթը քշտեն, ասում ա.- Հինչ օզիս քյըեզ կտամ, մինա̀կ վեչ մին տեղ ասիս վուչ պո̀ւնիս տըեղը:

- Էտ մարթին յոր ա օնում, տանում մին վըեսկու հոր նշանը տամ, ասում- Ամեն օր կկյաս մին քսակ վըեսկե տանիս:

Էտ մարթը յոր ա օնում վըեսկեն, քյնո̀ւմ տոն:

Կնեգյը ստիբում ա, թա̀.- Տար էս վըեսկուն տըեղը նշանց տո, տըեղն ասե:

Էտ մարթը ասում ա.- Ո̀ւրո̀ւզյո̀ւնը կասիմ:

Վեր կյամ ա քոն ինիլի վախտը, էտ կնեգյը ստիբում ա: Մարթն ասում ա,- Էս հինչ արջն ա նշանց տվալ:

Էտ վախտը արջը էն ա ինո̀ւմ ակուշկեն տական սկնալիս: Ասում ա,- Մարթ ախպեր, հա̀լբա̀թ մեհետ էլ կկյա̀ս ծմակը, յըես քյըեզ կասիմ:

Էտ մարթը տասը տարե յա տեռնում, ծմակ չի քյնո̀ւմ:

Մին օր կնեգյն ասում ա.- Յա քյնա̀ փա̀ղ պեր, յա տո̀ւս եք:

Էտ մարթը ճարը կտրած, վխվխելավ մին չվալ ա յոր օնում, քյնա̀մ

փա̀դու: Ծմակավը վխվխելավ քյնալիս մին աղվես ա տո̀ւս կյամ, ասում,- Մա՛րթ ախպեր, խե՞ վախում ըս:

Ասում ա,- Յըես էս հինչ արչան ըմ վախում:

Ասում ա, - Վեր էն արջին սպանիմ, հի՞նչ կտաս:

Ասում ա,- Հ՛ինչ վեր օզիս:

Էտ աղվեսը էտ մարթին յոր ա օնում, քյնամ մին հղըցու կոխկե կրակ անում, ասում.- ես էս մոխրումը թա̀վիլ տա՛մ, թոզ անիմ, էտ վախտը վեր արչը կյա, կասիս. «Արչ ախպեր, եք նի մոտ չվալը-աշկերըտ կքուռանա», էտ վախտը չվալեն ռեխը կկապինքյ, թուլուլ տանք:

Եշում ըն, տըեսնում արչը կյամ ա: Վեր կյամ ա, մուտանում, աղվեսը սկսում ա թա̀վիլ տալ:

Էտ արչեն մարթը ասում ա.- Եք նի մոտ չվալը, աշկերըտ մոխեր կտեռնա:

Արչը նի յա մըննում չվալը, կապում ըն, թուլուլ տամ:

Աղվեսն ասում ա. - Դե մըհենզյ, հինչը օզիմ բեղմա տաս: Տըես կօզիմ, վեր տու ինձ շլա̀կիս:

Մարթը շլա̀կում ա, տանում օբեն շներեն կոխկը: Շները հաչում ըն:

Էտ աղվեսն ասում ա.- Մարթ ախպեր, էտ հի՞նչ պտահից:

Մարթն ասում ա.-Շները քյըեզ ընղեղան տեսալ ըն, հաչումըն:

Աղվեսն ասում ա.- Մարթ ախպեր, օզում չը՛մ, շներըտ պահե, անց կենամ էն սարեն քամակը:

Աղվեսը վեր քյնա̀մ ա, մարթը ետ ա տըեռնում, չվալը վըեսկավ լցնում, կյամ տոն:

## 38.ԴՈԼՄԱ ԻՓԻԼԸ

Մեհետ մին կնեզյ, քյնամ ա հրըվանեն կոշտը, վեր խորազյ իփիլը սըվըրցնե:

Տա հրցնում ա,- Դոլման հո՞ւնց կիփին:

Հրեվանը տրան ասում ա. - Քյնա մեսը թակե:

Ասում ա.- Գյուղում ըմ:

Քյնա պրինձը մաչը ածե:

Ասում ա.- Գյուղում ըմ:

Այերը խառնե, աղը, տախտեղը ածե, սողանը, կյինձը, նա̀նա̀ն քըցե, խառնե:

Ասում ա. - Գյուղում ըմ:

- Տիրնըմը փըթաթե, տիր ղզղանումը:

Ասում ա. - Գյուղում ըմ:

Դե վեր գյուղում ըս, իտի էլ ըրա իլի՞, խե ե՞կալ ըս զա̀հլա̀ս տանում:

Պա է՛լ պեն բեղմա ինի՛, խե՞ ասում չը՛ս:

Հըրեվանը տեսնում ա, վեր երե ատաժը տերտակ ա, ասում ա.

- Քյնա̀ մին պատառ քաքուռ էլ տիր յրան, թող իփի:

Տա ասում ա,- Ըտել ըմ գյուղո̀ւմ:

Վերչը քյնամ ա մին մեծ քաքուռ տնո̀ւմ դուլմեն կլխեն, իփում: Շատ վեր իփում ա, վըետը ընգնում ա ընդեղեքյ: Մարթը հա̀նդա̀ն կյամ ա, պիրում ա, թա դոլման տինի ըռաշկեն, վըետը ընդեղեքյ յոր ա օնըմ: Մարթը մին լա̀վ ո̀ւշո̀ւնց ա տամ, փոնում մին լա̀վ տըմբըզում: Մարթը թակում ա, ինքյը տակեն օզում ա, վեր մարթին քշտեն արթար ինի, ասում ա.- Ա՛ մարթ, հրեվանըս ա սըվըրցըրալ, ես հո՞ւնց անիմ:

Էս մարթը տո̀ւս ա կյամ հրվանեն ո̀ւշո̀ւնց տամ: Հրեվանը տո̀ւս ա կյամ, տրան նաղլ անըմ, ասում.- Կնեզյըտ հիմմար ա, պահում ըս հի՞նչ անիս, դոլմա իփիլը էնքյը զիդա̀լիս, եկալ ա մեր զա̀հլա̀ն :

- Հա՛յ գյուղո̀ւմ ըմ, հա՛յ գյուղո̀ւմ ըմ. էտ ա՞զիդալը:

## 39.ԿՅՈՒԼ ՏԵՌԱԾ ԿԸՆԵԳՅԸ

Ընո̀ւմ ա, չընո̀ւմ մին թաքավեր, ըտրան ինո̀ւմ ա մին տղա: Տանում ըն բխտըեշուն կոշտը:

Բըխտըեշին ասում ա. - Վեր էտ տըղան փըսակվե, կյո̀ւլը ուտլական ա:

Թաքավերը մին ծի յա տամ տըղեն, վեր կոնյա ընդրանավ պըշտ-պանվե: Մին հետ տղան քյընո̀ւմ ա վըերս, պըտահում ա մին չուբանե: Տըեսնում ա էրկու շոն օնե, շները օզում ա:

Չոբանը ասում ա,- Ծիտ ինձ տո, շները քյըեզ տամ:

Ծին տամ ա, շները ինքյ օնում:

Քյինամ ա, քյինամ, տըեսնում ա մին կյըետ, մնամ ա վըեննը կացած: Շները քյինամ ըն մին ծիյի յըրա, տղան հետան: Քյինամ ըն տըեսնըմ մին պառավ նստած, մին կյետու դրաղե:

Էտ տըղան ասում ա.- Հո՞ւնց անիմ, վեր կյետավը ընցընիմ:

Պառավը տըեսնըմ ա, վեր շատ ա ղաչանք անըմ, ասըմ ա.

-Ա՛ բալա, կա մին մա̀զ տամ, տար քցի կյըետավը, անց կաց, ամմա մա̀զը ծեռքատ վեր չի տինի՞ս:

Տղան տանըմ ա մա̀զը քցըմ, կյըետավը անց կենում:

Քյինամ ա, տըեսնըմ մին պալատ, մաչին մի ախճիգյ: Ասըմ ա.

-Ա՛յ ախճիգյ, տու լիա իմ պենըս ըս, իմ փանդըս ըս, իմ ջանըս ըս:

Ասըմ ա պրծնում, փըսակվըմ, մնամ ըտըեղ: Համան կյո̀ւլը տղեն վընըիըտերավը կյամ ա, մընում կյետեն ղըրաղեն վըեննը կացած: Էտ տըղեն կնեգյը մազը տո̀ւս ա օնում մարթին ջուբան, թաքուն տանըմ կյըետավը քցում, կյո̀ւլը յոր ա օնում կյամ պալատը:

Էտ տըղան, տխուր նըստած, կընգանը ասում ա.- Քշերըս շները սըխ կկապիս, քյինա̀մ ըմ վըերսի:

Կնեգյը կյո̀ւլ ա տըեռնըմ, էն մին կյո̀ւլին նըհետ քյինո̀ւմ ծմակը, վեր էն տըղեն օտին: Շները պեց ըն ընգնում, կյամ ըզադըմ էտ տղեն: Տըղան ետ ա տեռնըմ, կյամ հորը տոնը, ո̀ւրա̀ն հետե ազատ ապրում:

## 40.ԱՇԸՂԸ

Մեհետ մին աշըղ ո̀ւրա̀ն շիգյիրդներեն նհետ քյնամ ա շեներքը շոռ կյամ:

Մին շենում մին լա̀վ սերո̀ւն հարթն ա տըեսնում, սկսում մտածելը: Ասում ա.- Տըեսնաս, վեր ըստա էսքան սերո̀ւն ա՛, ըստրա նշանածը հո՛ւնց կինի՛:

Ո̀ւրո̀ւգյո̀ւնը վեր մթնում ա, հու՞նց ա պտահում, քյինամ ա տահանց տանը ղոնաղ ընգնում: Տըեսնում ա տահանց տոնը մին ամպետք, շո̀րերը ճղըրտած մարթ եկավ, նի մըտա՛վ, պարիօր տվա՛վ, նստի՛ց: Աշըղը գյիդա̀ց, թա հրևանն ա, եկալ ա զըո̀ւց անին: Ամմա վար քշերը ըտեղ քոն իլա̀վ, նոր գյիդա̀ց, վեր տա ընդըրա նշանածն ա: Էտ աշըղը էրվից, խըավվից, սազը եր կալավ, ըտեղ մին խաղ կապից, ասից.

*Նա սարերեն լա̀վ խոտ ա,*
*Ծաղիգյ-ծաղկունքի վըետ ա,*
*Քոն իլ, եր կաց, բախտ օգե,*
*Գեղեցկոթունը սոտ ա...*

- Էտ հո՛ւնց ա, տու էտքան սերո̀ւն, ղա̀շա̀նգյ կնեգյ, ամմա քու նշա-նածտ ըտհենց փիս ա:

Հարթնը ասից,- Աստված, վեր լոխճին բախտ ա պիժենալ, իմ պաժինս էլ էս ա ընգա̀լ, յըես հի՞նչ անիմ։

Էտ աշըղը ըտեղ մնամ ա՛, թա̀ կըլխան ծեռք եր կալած հիշտեղ ա քյնա̀՛մ, միչև, միհենգյ էլ գյո̀ւղո̀ւմ չը՛նք։

## 41.ԱՐՉԸ

Ինո̀ւմ ա, չինո̀ւմ մին մարթ ա ինո̀ւմ։ Էտ մարթը մին օր քյնամ ա սարը խոտ հարել։ Վար հարըմ ա, պրծնում, խոտը տանում ա մին տանձի ծառի տակին թուփ անում, ինքյն էլ եր ինո̀ւմ էտ ծառը, տըեղ շինում, նի միննում մաչը։ Մինա̀կ կլո̀խը թողում պաց։ Էտ քշերը մին արչ ա կյամ եր ինո̀ւմ ծառը, սկսում տանձ օտելը։ Լա̀վ էլ լո̀ւսնգյա̀ քշեր ա ինո̀ւմ։ Արչը վար տանձը կտրում ա լուսնինգյին տեմ օնում, թա̀ տեսնա հսալ ա՞, թա չէ, էտ վախտը ծառեն յրա մարթը աշկերը պանում ա, տըեսնում մին ծեռք տանձը մեկնալ ա դիբի ո̀ւրա̀ն։

Էտ մարթը ասում ա.- Օզում չը՛մ, օզում չը՛մ։

Արչը վխելան, վեր ա կյամ, փախչում։ Քշերավը էտ մարթը եր ա կենում վխեցած կյամ տոն, էլ ըտեղ չի քյինա՛մ։ Արչը վխելան էլ կյամ չի էտ տանձին տակը։

## 42.ԱՇԿԱՎ ՏԱԼԸ

Գյո̀ւլզյա̀զ բիբին քյրեցալ ար մին օրե հրեվան շենը։ Կյալիս ըրտերեն մաչավըն ար կյամ։ Տըեսնում ա մին լա̀վ արտ, հասկերը էրգյան-էրգյան։ Տա ո̀ւրա̀նց արտըն ա ինո̀ւմ։

Ասում ա.- Պա՛հ, պա՛հ, փա̀՛հ, էս հի՞նչ լա̀վ արտ ա, տարը մըեռածըտ հո՞ւնց ա փսալ, լհա աստուծ մաչին նստած ինի։

Ո̀ւրա̀նց շնացե մին տղա խոխա նհետը կյալիս ա ինո̀ւմ ։ Ասում ա.- Գյո̀ւլզյա̀զ հասի, ծեր արտըն ա է՛, խե՞ ուշունց ըս տամ։

Գյո̀ւլզյա̀զ հասին իրեսեն խըչըկնքում ա, թա̀.- Հա՞, յըես էլ ասիմ, խե՞ ստի հասկերը կուճուր-կուճուր ա, փիս ա, ետնան ո̀ւրա̀ն մըթկըմը ասըմ ա. «Իստի ասիմ, վեր աշկավ չի տան, վո՛ւյ, մունք աշկ յոր օնող ընք, աստուծ վեչ անի, վեր մըեզ աշկավ տան, փիս աշկը տրաքե, ցըրեվ կյա, եր տեռնա։

43.ԽՈՐԹ ՄԱՐԸ

Մեհետ իլյա՛լ ա, չիլյա՛լ մին մարթ, մին կնեգյ, մին ախճիգյ: Էտ մարթին կնեգյը մըեռնում ա, էտ ախճիգյը շատ ա ասում,- Ապա, մին կնեգյ օզե:

Հյա՛րը քյինամ ա մին կնեգյ օզում, պիրում: Ընդրան ինո՛ւմ ա մին ախճիգյ: Էտ էրկու ախճիգյը ո՛ւրո՛ւր նիհետ բրիշում չըն:

Կնեգյը մարթին ափաթը կտրում ա, ասում.- Յա քու ըխճըկանըտ կլո՛խը վարե, յա չէ յըես տո՛ւս ըմ կյամ քյըզզանա:

Քշերավ քշրհանա մարթը եր ա կենում ըրբան լծում, ախճիգյը տինո՛ւմ մաչին, քյո՛ւնո՛ւմ փա՛ղու:

Փա՛ղ ընելիս հա՛րն ասում ա.- Ապան մատտաղ, տու ըտեղ կաց, յըես քյինա՛մ տիեր: Ըրած փա՛ղ կա, յոր օնիմ, կյամ: Ըխճըկանը խա՛փում ա, ըրբան լծում յոր օնում փա՛ղը, կյամ տոն:

Էտ ախճիգյը լա՛ց ա ինո՛ւմ: Վէրչը մնամ ա ծմակումը:

Մին պո՛ւն ա քթենում, նի մննում պո՛ւնը, կրակ անում, հաց թխում, թա օտե, մին մոկն ա կյամ, ասում.- Բա՛լա, պատառ հաց տռ:

Ախճիգյը տամ ա: Վեր հացը օտըմ ա, մոկունը էն ըխճըկանն ասում ա.- էս պո՛ւնը արչու պո՛ւն ա, էս սհաթես կյլյա՛կան ա, ասե. «Պարն քյըեզ»: Վախիս վուչ հա՛... Արչը մին զընգոլակ ա պիրլյա՛կան, ասե. «Եք խաղ անինքյ»: Արչը աշկերը կպլական ա, քյըեզ ասե. «Զանգը խըղըցրու, թա կարիմ փռնիմ, քյըեզ ուտլական ըմ, թա կարիմ վուչ փռնիմ, մին հա՛յքա՛ վըեսկե կտամ»: Արչը կյամ ա, ըխճըկանը մին զնգոլակ տամ, սկսում ըն խաղ անելը: Ախճիգյը զնգոլակը տամ ա մոկնեն, ինքյը նի մննում պոժկան: Արչը նան մոկնը էնքան վազվազ ըն անում, արչին հոքյին օզում ա, թա տուս կյա:

Արչն ասում ա. -Նղացալ ըմ, տո՛ւս եք, ըշկերես շո՛րը ետ ըրա:

Ախճիգյը տո՛ւս ա կյամ: Մոկնը զանգը տամ ա ո՛ւրա՛ն, արչին աշկերը պեց ըն անում: Արչը քյնամ ա մին հա՛յքա՛ վըեսկե պիրում, տամ ըխճկանը: Ախճիգյը յոր ա օնում, քյինո՛ւմ: Տոն քյինա՛լիս հորը ջհում ա, մին տըեղ քյինում ըն տոն: Խորթ մարը վեր տըեսնում չի՛, պլանում ա՛, մին էլ վեր վըեսկեն տեսնում չի,՛ ո՛ւրա՛նա՛ն քյինո՛ւմ ա՛:

Մարթին ասում ա,- Իմ ախճիգյս էլ տար ծմակը, հանցու վըեսկե պերի:

Հյա՛րը տանում ա, թողում ծմակումը, ինքյը քյինո՛ւմ փա՛ղ անում: Վերչումը կյամ ա, թա ախճիգյը պիրի, տըեսնում հի՛նչ... Ախճիգյը նի յա

մտալ արչին պ՞ւնը, հաց ուտելիս մոկունը մին թիքյա՝ օզալ ա, տվալ չի:

Արչը նի յա միննում պ՞ունը, գյուղ՞ում ա, թա համին ախճիգյն ա, զընգոլակը տամ ա ըխճըկանը, մին մնուտումը փռնում ա, օտում: Հա՝րը կյամ ա, թա ախճիգյը տանե, տըեսնում վսկոքնեն վեր տեռած: Նի յա հանում հա՝յբա՝ն, տանում: Խորթ մա՝րը նախանձոթունան օզում ա, թա մըեռնե, դե հի՜նչ վեր ա կտրալ ՞ւր՞ւշ՞ւ հետե, ինքյն ա նի ընզա՝լ:

44.ԹԱՔԱՎԵՐԸ ՆԱՆ ՎԵԶԻՐԸ

Ինըմ ա, չինըմ մին թաքավեր: Էտ թաքավերը մին օր ՞ւրա՝ն վեզիրին ղարկըմ ա, ՞ւրա՝ն հըրնան բա՝զյին անա տասը վըեխճար առնի:

Վեզիրը քյինըմ ա, առնըմ, թա պերի, էտ բա՝զյը մին թոխտ ա կյիրըմ, տամ էտ վեզիրին, վեր տանե տա թաքավերին:

Թոխտին մաչին կյիրած ա ինըմ. «Ծեր հրամմանավը տասսը վըեխճար ա ըղարկածս: Վեզիրը պերելիս, ճընապարին մին վըեխճար ա մորթըմ, օտըմ:

Մընացածը պերըմ ա, տամ թաքավերին, թոխտըն էլ նըհետը:

Թաքավերը կարթըմ ա, տըեսնըմ տասը վըեխճար ա կյիրած, ամմա վեզիրը իննըն ա պերալ:

Թաքավերը վեզիրին կանչըմ ա ՞ւրա՝ն կոշտը, ասըմ,- Վե՜զիր, տու բեղմա տասսը վըեխճար ինիս պերած, իննըն ըս պերալ:

Վեզիրըն ասըմ ա.- Թաքավերը ապրած կըենա, դ՞ուզ ա, իննը վըեխճար ըմ պերալ:

Թաքավերը կըզնըվըմ ա, ասըմ.- Ա՜յ մարթ, հունց թա դ՞ուզ ա, տու բեղմա տասսը վըեխճար ինիս պերած, իննըն ըս պերալ:

Վեզիրըն ասըմ ա,- Դ՞ուզ ա, թաքավերըն ապրած կենա:

Թաքավերը տըեսնըմ ա, վեր վեզիրը հըսկանըմ չի, կանչըմ ա տասսը մարթ, ամեն մին մարթի վըեննա մին վըեխճար ա կապըմ: Թաքուհին էլ ա ինըմ էտ տասը մարթին մեչին: Թաքուհին մընըմ ա առանց վըեխճար: Թաքավերըն ասըմ ա.- Ա՜յ մարթ, տըեսնըմ ը՞ս, վեր մին վըեխճար պըկասըմ ա, դե քյինի վըեխճարը պեր:

Վեզիրը ՞ւրան հետի դինջ-դինջ, ասիս լհա՝ վեջան չի, ասըմ ա.- Ատա, քու կընեգյըտ էլ, քու վըեխճարնիտ էլ: Շ՞ուտ կյար, մինին վըեննան էլ ինքյը փըռնար, մընար վեչ առանց վըեխճար:

Իտի էլ թաքավէրը կարից վէչ հըսկըցնի, վէր պէրած պիտէր տաար վըէխճար, վէչ թա իննը:

## 45.ԿԸՏԱԿԸ

Ղարաբաղի կյուղէրան մինըմը մին կյուղացի, անըմը Ծատուր, մըէ-ռէլիս վախտը դէրին կանչըմ ա, կըտակ անըմ:

-Կյիրի՛ հինգյ հազար մանէթ Մ՛նիշ՛կ անըմավէր ըխճըկանըս, իրէք հազար մանէթ Կյէվէրք անըմավէր տըղէս, վեց հազար մանէթ Զառի անըմավէր կընգանըս, էրկու-էրկու հազար մանէթ էլ էն մընացած քյուլփ՛թնէրէս, հազար մանէթ էլ քյըէզ:

Դէրը մտըածըմ ա, մըտածըմ ասըմ.- Պա յըէս քյըէզ լոխճան շատ սիրի՛մ, տու ինձ հազար մանէթ տա՛ս, պա իտի պէն կինի՛:

Ծատուրը մըտածըմ ա, ասըմ,- Ա՛ դէր, լ՛ավ, քյըէզ էլ էրկու հազար մանէթ ըմ կըտակըմ:

Տէրտէրը օռած, փըքված քյինըմ ա տոն, կընգանը ասըմ,- Ա՛ կընէգյ, պա ասել չը՞ս, Ծատին ինձ էրկուհազար մանէթ ա կըտակյալ, դէ էլ հի՞նչ դ՛րդ օնինքյ:

Կընէգյն ասըմ ա.- Պա Ծատին էտքան փողը ըշտըղա կըտա՛:

Դէրը մաննը տինըմ ա քունքին, ասըմ,- Ղորթ ըս ասը՛մ, բա ըշտըղան կըտա՛, դէ վէր իտի յա, քյինիմ հըրցընիմ, տըէսնամ ըշտըղան կըտա:

Քյինըմ ա նի մըննըմ Ծատուրէն տոնը, ասըմ,- Ա՛ Ծատուր:

Թա,- Հի՞նչ ա՛:

- Ա՛ Ծատուր, բա ըշտըղա՞ն կըտաս էրկուհազար մանէթը:

Ծատին յուր դան էն տական վըէնները հանըմ ա, նշանց տալավ ասըմ.- Վընէնըիս տական կըտամ, վընէնըիս տական:

## 46.ՓԸՌԹՈՒՇԸ

Էրկու ախպէր ըն ինըմ: Ըտր՛նք հ՛նձ՛ն կյամ ըն մին շոք, կանանչ ծառի տակյէ նըստըմ, վէր փըռթ՛ուշ օտին: Մըէծ քըթ՛ուլնէն քաշըմ ըն, յրա պըրծը-նըմ, վէր օտի՛ն: Ամմա պիծի ախպէրը խորամանգյ ա ինըմ. մըթկըմը օզըմ ա մին պաճճառ քըթէնա, վէր ինքյը շատ օտի էտ կյէվաթը լիքյը փ՛ուռթ՛ուշան:

Քըթոլը քաշ ա տինըմ, մըէծ ախպորը ասըմ.- Ա՛յ Պէտի, մէր հ՛ր հո՞ւնց մըէռավ:

Պետին քթոլը քաշ ա տինըմ, համավ, հոտավ, ղարարաղցուն ըզյո̀րա̀ նաղլ անըմ:

Մինչն նաղլ ա անըմ, պըրծընըմ, տըեսնըմ ա փըռթո̀ւշին կյեվաթը տերտակ: Սուս ա անըմ, եր կենըմ, քյինըմ հո̀նձ:

Մին օր էլ քյըսօրին, հո̀նձա̀ն ետ տըեռած, փո̀ւռթո̀ւշ օտելիս էհա կուծի ախպերը օզըմ ա խա̀փի մըեծ ախպորը, ինքյը շատ օտե: Ասըմ ա.- Ա՜ Պետ, էն օրը լա̀վ չի ըսկացե, ապան հո՜ւեց ա մըեռալ:

Մեծ ախպերըն ասըմ ա.- Հո՞ւնց ա մըեռա՜լ, փո՜ւհ ա ըրալ, մըեռալ, փո՜ւհ, ետնան էն փա̀ղի մեծ քըթո̀լներան մինը քըշիլավ յրա յա պըրծընըմ փըռթո̀ւշին:

## 47.ՏԱՓԱԿ ԱՐՏԵՆ ՄՈՍԻՆ

Ինիս ա̀, չինիս մին խան: Էտ ըպրես[1] ա ինիս Ստըփնոցեն խո̀ւթո̀ւմը: Մըհենզյ էլ էտ շենին տըեղը մա̀հլըմ ա: Մեր էս Տումա շենան էրկու վերստ հըեռե յա:

Էտ խանը, հիշքան չըրչըրրես ա ընիս ժուղուվուրթեն, էտ ո̀ւրա̀ն հեր-թեն, լոխ էլ իտի յըն ըլա̀լ ընես, ամմա էս մինը շատ փիսն ա իլա̀լ, շատ ա չըրչըրրես իլա̀լ ժուղուվուրթեն: Ըտրա նիետ մին տեղ, մին թա̀զա̀ օրենքյ էլ ար սըվըերալ: Էտ թորքեն խանը, վեր մինը կնեգյ չի ընե՜ս, սըվթա̀ քշերը ինքյն ա նիետը քոն ընիս:

Համ էլ, գյիղա̀ս ը՞ս հինչ կա, լա̀վա մաըթըս քըշեր-ցիրեկ չըրչարվե, քըըտըընքե, տո̀ւզնը մընա, տկլոր մընա, թա̀քյ լհա̀ ջըհիլին առաչին համավ թըքյա̀ն օրո̀ւշը հարամ չանե: Ըտրանա յըերը փի՜ս պեն չիկա:

Ղոչչաղ տըղեն մատաղ ըմ է՜, մատաղ ըմ:

Էտ վախտը էտ Տափակ աըտըմը ըլա̀ծ շենը մը Հերիքյնազ ընըմավ մին կնգա մին մաղար տղա յա ընիս, անըմը Մոսի: Մոսի, հինչ Մոսի՜, աստուծ ընդրա կուռներեն ղուվաթ տա՜:

Մոսին լհա̀ խոխա վըխտանց ա ըրվըցնես իլա̀լ, վեր մըծանար շատ

---

[1] *Տումի գյուղի խոսվածքում, որով գրի են առնված այս և հաջորդ հեքիաթները, r հնչյունը գործածությունների ճնշող մեծամասնության մեջ փոխել է իր որակը, նրա արտասանության ժամանակ լեզվի ծայրը բոլորովին չի հպվում առաջաքիմքին և չի թրթռում, այլ փոքր-ինչ բարձրանում է վեր՝ իր և քիմքի միջև ստեղծելով ազատ բացվածք, որի հետևանքով էլ նրա արտասանությունը խիստ թուլացել էլ Ր-ի այդ արտասանությունը գրության մեջ նշել ենք արամյան r-ով - Ծան . խմբագրի:*

ղոչչաղ ա իննանկան: Ամմա ընդրա մարը Հերիքյնազը, ին էլ ա մին ղոչչաղ կնեգյ իլա̈լ:

Վեր Մոսին իլա̈լ ա, հըրվանեն կընեգյըն էլ մին ախչիգյ ա պերալ: Ըտահանք հըրևան-հըրևան ուրուր խոսք ըն տա՛ս, վեր հիբը ըտահանք մըծանան, ուրուր նհետ փսակին:

Շատ ա ընցնես, խրեգյ ա ընցնես, խոխեքյը մըծընաս ըն: Բիդի հըրսանեքյ անին, ախճիգյը հըսած-փըսած ա ինիս, Մոսին էլ տըղամարթ, ամմա Մոսին ուզիս չի, վեր հըրսանեքյ անե:

Մարըն ըսես ա.- Ա՛ բա լամ, հինչ ա քյըեզ պըտահալ, խե" հըրսանեքյ չըս ընես:

- Ուզիս չըմ, վեր սըվթա̈ քշերը խանը կընեգյս տանե, նըհետը քոն ինի, էլ հոր ը՞մ փըըրկվես:

Մոսի, հի՞նչ Մոսի, ղարաբաղցե... Կոխկը հըստըցընես ա, կոխկեն չի ընցնես, թա Քյիրսը տըեղան տուրուր կիկյա, Մոսին էլ կոխկեն կընգնե: Մարը շատ ա մըտըծես, շա՛տ, չափ չիկյա՛: Հընգեր, հըրեվան մին անգյուն ըն ընցնես, վեր Մուսուն փըսակին, ա̈մա̈լ չի կյա̈ս:

Ըխճըկատարըն էլ մին ընգյունա̈ն, թա. - Մեր ախճիգյը մըծացալ ա, տընես ըք՝ տա՛րեքյ, տընե՛ս չըք, ուրուշու յընք տաս:

Մոսին լըհա̈ մին կլոխ վըենն ա կացալ, թա.-Թողեքյ ուրուշու տան, տըեսնամ հո՞ւնց ըն տաս:

Հերիքյնազն էլ թա.- Բա՛լա, hnr ըս էն մա̈րթին ըխճըկանը վըեննը կապալ, ուզիս չըս, թողե ուրուշու տան:

Մոսին էլ, հի՛նչ Մոսի՛, չոբան մարթ ըլի՛, կերած, խըմած, հանց ա ջանավար:

Մարը քյիս ա խանեն կոշտը, թա.- Ա՛ խան, պա խտի պեն կինի՛, էն տղան էն մա̈րթին ըխճըկանը վըեննը կապալ ա, էս ա̈ է՛ քանե՛ տարե յա ուրուր նհետ հըրըվընոթուն ընք ընես, աշխարքը գյիդա̈ս ա, վեր մուք էն մա̈րթին ըխճըկանը վըեննը կապալ ընք, վեր հի՛նչ բիդի Մոսին տանե, ամմա մըհենգյ էտ տղան վըենն ա կացալ, թա յըես հըրսանեքյ չըմ ընես, խե՞ հըրսանեքյ անիմ, վեր իմ քախցը թիքյա̈ն բիդի խանը օտե: Պա, մըհենգյ հինչ անի՞մ, վեր ճուրըն ընգիմ, հըշտեղ քյինի՞մ, հի՞նչ վըեղ կլխես տամ:

Խանը թա.-Քյինի ուռութանա քշերավ ուրա̈ն ըղարկե, կյա:

Մարը քյիս ա տոն, հունցու վեր խանն ա ասալ, ինդի էլ ինքյն ա Մոսուն

ըսես, թա.- Խանն ասալ ա, վեր թողե քշերավ, ինքյը կյա իմ կոշտըս:

Մոսին թա՝ լա՛վ:

Ուռութանա քշերավ, Մոսին եր ա կընաս, առանց հաց ուտելու, մին մըհակ յօր ունես, ընգես հըղեն, դե գյիդա՛ս ըք ըլի՛, վեր խիլլա՛ հըղն յա՛, կյետնըյեր, կյետնըյեր քյիս ա դուզ խանեն տոնը: Ամմա գյիդաս ը՞ս հինչ կա՛, էտ ղոչչաղը հըմընչիս չի, նի յա մըննես տոնը թա չէ, ըսես ա,- Խե յը՞ս ինձ ծեն տըվալ, խա՛ն:

Հա՛լբա՛թ մին պեն կա ըլի՛, վեր ծեն ըմ տըվալ:

- Հինչ կա՞:

- Թայղի մե ընգել, հա՛լա՛ դինջաց, յըետնան կա՛սիմ:

- Չէ, ո՛ւզիս չըմ, մըհենգյ ասե,

- Քըշերըս բիղի քյըիքյ Պուղուս աղեն սպանիքյ, տավարը պիրիքյ, կըկյա՛ս, թա չէ:

-Չէ՛:

- Խե՛:

- Ցըես ո՛ւզիս չըմ մա՛րթ ըսպանիմ, համ էլ, խե աշկըտ ծա՞կ ա, խա՛ն, պա համոթ չի՛: Էսքան հարուստ ըս, էսքան շընթկնեն քունն ա, լոխ քյզանա վըխես ըն, լոխճին հըrստոթունը տընես ըս քու տոնըտ, թըլընես ըս, մըհենգյ էլ էն խըեղճեն նհետ հինչ կո՞րծ օնիս, պա մեխկը չի՛, հի՛նչ օնե, լի՛ա՛ վիատա վեր անումը աղա յա, մըեծ հըրըստոթուն օնե, յա քու հըրստոթունըտ խըըեգյ ա՞, դե՛... Ամմա, գյիդա՛ս ըս հի՞նչ կա խա՛ն, քյզանա առաչ էլ շատ հարուստ մա՛րթիքյ ըլա՛լ, էլիա քյըեզ նըման իտի աշկը ծակ, ըշխարքաս հինչ ըն տա՞րալ, ըտրանք մըեռալ ըն, ընդրանց տոնը, տըեղը մնացալ ա ո՛ւրո՛ւշո՛ւ: Մըհենգյ տու վըս, մըհենգյանց տենը շատ ապրիս, մի քանե տարե, խե յը՞ աշկըտ ծակ պըհես է՛, աշխարքը քյըեզ ո՛ւշո՛ւնց ըն տաս, մինը թա կյառըս տարավ, մինը թա դան աս տարավ, մինը թա լա՛վ ծիս տարավ, մինը թա կյումաշըս տարավ, մինը թա ցոrենըս տարավ, մինը թա թա՛զա՛ շո՛րերըս տարավ, մինը թա բաղըս խլից» մինը թա արխեն ճուրը կտրից, բաղըս չուրացավ, մինը թա շատ խարջ ա ո՛ւնքյ ունես, մինը թա կընեգյըս տարավ, մինը թա տոնըս քա՛նդից, մինը թա վըեղերըս խըլից...: Ո՛ւրա՛նց էլ հինչ մնա՛ց տակեն, էլ թուղես չըս, թա մասուլը վըհաքին, առաչ քունըն ըս վիաքել տաս, ետնան ո՛ւրա՛նցը, ին էլ ետ ա ընգնես, լոխ փուչունաս, քյիս:

Խանն ըսես ա,- Գյիդմս ը՞ս հինչ կա, մըհետե քաշը ոււրմն ճուտերեն, վեր մըծացալ ըն, ոււզիս մ իլմլ թըռչըցնե, մարը ըսկսալ ա քարոզ տալը, թա գյիդմս ըք, հի՞նչ կա, թա, «Հինչ կա, ա մար»: Թա. «Վեր քյընիքյ, վեր մմրթ տըեսընաք, հիբը վեր մարթը կըռանա, հմլբմթ ուզիս ա քար յոր օնե տափան, տուք թըռչեցեքյ, փախեքյ: Ճօտերն ըսես ըն. «Պա, բմլի քարը ջուբումըն ա, իսկյի կըռացավ վեչ, էն վախտը հունց գյի՞դմնք»: Մարը թա. «Տուք ինձմնմ շատ ըք գյիդմս, քյըեցեքյ»: Մըհենգյ տու վըս, տու շատ պեն ըս գյիդմս, յըեք օրուշ պեն խոսիքյ, կլոոխըտ կտըըլականը՝ կտըըլական ըմ, ամմա հմլմ տըեսնամ հինչ ըս ըսես:

- Դե տու վըս ծեն տըվալ, ասե, տեսնամ խե՞յըս ծեն տըվալ:

- Ասի՛մ, խե՞յըմ ծեն տըվալ:

- Ասե:

- Խե մմրթին ախճիգյը տնե՞ս չըս:

Ըստեղ Մոսին մին պատառ սուս ա ընես, յըետնան ըսես.- Խե՞, տու գյիդմս չը՞՛ս, խան:

-Վեր մսիս կգյիդմմ:

- Տանիմ, հի՞նչ անիմ, վեր տանիմ, ըըվթմ քշերը տու բիդի քոն ինիս նհետը, ընդրանա ետը հի՞նչ ըմ ընես: Յըես ուրոււշոււ թըքյմ լուզողը չը՛մ:

- Կյիժ-կյիժ խոսել մե, քունը տանել չըմ, քյնի էն մմրթին ախչիգյը տար, հմլմմ հըրսըքավըտ էլ ինձ ծեն տո:

- Տըես, խան, վեր իտի մին պեն պտահե, յա յըես բիդի մնամ ըշխարքըմըս, յա տու:

Մոսին ըտի յա ըսես, պըծընես, տոււս կյաս, քյիս:

Մին շեբեթ ընցնես ա թա չէ, էտ շենըմը ուրխոթուն ա ընգնես, թա Մոսին հըրսանեքյ ա ընես: Էտ շենըմըն էլ լոխ սիրիս ըն Մոււսոււն, ընդրա հըետե, վեր դոչչաղ ա, վախ չօնե, ըրտավ ա, քանե-քանե հետ ա կյոդերան շենին տավարը խիլմլ, թուրքերեն ծեռքան հյերեն ըխճըկերքյը ըզադալ, հմլմմ ըսես չըմ, վեր հիշքան ա քյիսիբնոււն քյոմմգյ ինիս իլմլ:

Մըհենգյ մեր Մոսին, հըվըտացած, վեր խանը խոսկ ա տվալ, վեր կնեգյը տանիլ չի, հըրսանեքյ ա ընես, մին օր, մին քշեր: Էհմ վեր հըրսանեքյը պըըծընես ա, մըն էլ ա տըսնաս, մին յասաղուլ յըեկյավ ոււրմնց տռանը վեr յըեկյավ, մին թոխտ ծեrքեն: Թոխտը պեց ըն ընես, տըսնաս, վեr խանն ա կյրալ, թա թմզմ հարթնեն ըղըրկեցեքյ, կյա:

Հի՞նչ անե, հի՞նչ չանն՛, Մոսին մնաս ա մըտըծե՛ս, «Չէ, յըես կնեգյըս ըղըրկես չըմ», համ էլ մորը, թա. «Տըեսե՞ր, ազի, խանը հինչ օյին պերից կլո̈խըս»:

Մարն էլ թա.- Բալա, հինչ ա՞նիմ:

Դե գյիդա̈ս ըք իլի՛, վեր փիս խաբարը ճելլի յըն հսկընաս, լա̈վը՝ յըետե:

Շենին ջհլնեն հըվըքվես ըն, թա. -Մոսի, պա մունք գյիդացալ ընք, թա խանը խոսկ ա տուվալ քու կնեգյըտ տանե վեչ, էտ հունց ա՞ պըտահալ:

Մոսին, թա.- Գյավուր մարթին միար հի՛նչ...:

Թոխտը ստընաս ըն թա չէ, էտ օրախ մարթիքյ փուխվես ըն: Մոսին էլ ո̈ւրթո̈ւմ ա ուտես, ըսես.- Մին ա̈, յըես ո̈ւրա̈ն քշտեն խոսկըս ասալ ըմ, հունց վեր ասալ ըմ, օրենքյ ա, վեր յա յըես բիդի մնամ, յա ինքյը, հիբը մըզանա մինս մըեր խոսկը կըղարինքյ վեչ:

Յասաղուլը տըղանը սպսես ա պատասխաննե: Մոսին, վեր տըեսավ յասաղուլը քյիս չի, քյիս ա ըսես.- Քյինի, կըղարկիմ:

Յասաղուլը քյիս ա, խաննեն ըսես, թա.- Ասալ ա՝ կըղարկիմ:

Օրը մըթնես ա... Վախտը մուտընաս ա: Վեր մըթենը ընգավ, Մոսին եր կացավ ո̈ւրա̈ն կընգանը փըսակեն շո̈րերը կյըեց՛ավ, կո̈լխը շո̈րավ փըթաթի՛ց, տակավըն էլ մին լա̈վ խանչալ կապից, քյեցավ խաննեն տոնը: Խանը տեսավ, հի՞նչ տեսավ, մին պեցիր բոյավ, մըեծ-մըեծ ըշկերավ, սերուն կնեգյ ա:

Խանը թա̈.- Նի մըետ էն օթաղը, է կյաս ըմ:

Մոսին, վեր տեղ հըսավ, մըթեն ար: Նի մտավ օրո̈ւշ օթաղ, պարանը ընգավ, փաղի կարավաթեն յրա, խանչալը ծեռքեն, սպըսես աէ թա խանը հիբ նի կըմննե: Խանը կերած, խմած, քյեփը քյոք, բեղերը սղըլիլավ տոռնը պեց ըրավ, նի մտավ օթաղը, լհա̈ նի մտավ, թա̈ չէ, աշկերը տես-տեն ը-րավ, մին լա̈վ հազից, հունց վեր կերած, խմած ծի ինի, վեր բո̈ւրղա̈ն տա-նիս մին ծո̈րո̈ւշ կյուււմ, վըխճարեն մաչը, յա վըերցակ ինի, վեր բո̈ւրղա̈ն ծերքան տո̈ւս ա պրծընես, թըռչիս, սկսես ա պեցիր կըչկըչալը կա̈նչիլը:

Չոխան հընես ա, կախ տաս պատան, փափաղըն էլ մին օրուշ տըեղ ա կախ տաս, վըեններըը հընես, շո̈րերը հընես, թա̈զա̈ղան պոկը թիմըզցընես, բեղերը սղըլիլա̈վ, յորղանը պըցիրցնես, նի մննես հարթնանը ծոցը: Լհա̈ ուզիս ա թա̈ հարթնանը նհետ հինչ անե՛... Մոսին շոռ ա կյաս, պաղրաստ խանչալը մին դո̈նըմ խաննեն պըկավը քըշիս: Խանը վեչ ծեն ա հընես, վեչ

մին պեն, հոքյին տաս ա:

Մոսին էլ, յըեր ա կընաս, կընգանը շո̀րերը հընես, ո̀ւրա̀ն շո̀ւրերավը տոն կյաս, հանց տո̀ւս ա կյաս, վեր վեչ մինը գյիդա̀ս չի՛: Քյիս ա տոն, ըսես.- Ա̀զի, յըես էս շենան քյինն ական ըմ օրո̀ւշ շեն:

Մարը՝ թա.- Խե՞:

- Լհա̀ ընդի:

Մոսին թուղես ա ո̀ւրա̀նց շենը, կնեգյը յօր ունես, քյիս օրո̀ւշ տըեղ, կլո̀խը ըըլմըղալա հըեռե պըհելու միար:

Էէ՛՛, շատ վախտ ա ընցալ էս պենան, ամմա ժուղովուրթը միշտ էլ Մո̀սո̀ւն անըմը մըննան քցիս չի:

Հա՛, մըննաս ընգավ ասիմ, խանեն վեր սպնես չի՞ Մոսին, դո̀ւզ ա, մին քանե օրանը յըետը թա̀զա̀ն ըլա̀վ, ամմա ընդրա մնան փիսը չըլա̀վ: Համ էլ մին խիլլա̀ վախտ շատ ջհիլնե ո̀ւրա̀նց կնանոցը տա̀րըն իլա̀ն, լհա̀ սվթա̀ քշերան, էտ վըխտանը տեսը, էլ խանը վըխեցավ, դոչչաղ տըղերանց կնանոցը ծեռք չըտըրվավ:

Մըհենգյ, բա՛լա ջան, ըշխարքես կործը ըտի յա՛, թա դոչչաղ ը՞ս, քյզանա կըվախին, թա̀ թո̀ւլ ըս, վըեննու տակե քյիննա̀կան ը՛ս:

Մեր ժուղովուրթը ըսես ա,- Տու փիսո̀թուն մե անել սըվթա̀, ամմա վեր տեսնըմ ըս քյըեզ ուզիս ըն փիսո̀թո̀ւն ա̀նին, ուզիս ըն վըեննատակ քըցին, ճելլ ըրա, տու ո̀ւրա̀ն քըցի:

- Դե, Վա՛նես ջան, հո՛ ըրա, քշի՛ յըեզները, յըեզանը օսին մատա՛ղ, դոչչաղ տըղեն խընչալեն մատա՛ղ, փիս մարթեն հարը շոն տըեռնա՛, մեր ջհիլնեն ո̀ւրա̀նց կնանոցը տար տըեռնան:[1]

[1] *Հաջորդող հետնյալ նախադասությունը բանասացի հավելումն է(Ծ.Կ.).*

*-Ա՛ հընգեր վարժուհի, մըհենգյ Մո̀սո̀ւն անա հիշքան խուսեցե, հա̀լա̀ մին կյիրի՛, տանը էհա թազա պենեr կասիմ, կկյիrիս, էքյուց էլ կըկյաս օրո̀ւշը կասիմ:*

48.ՊԸՌՎԱԼԵՆՋ

Իլա՝լ ա, չիլա՝լ մին պառավ։ Էտ պառավը ըպրես ա իլա՝լ Հա՝դրո՛ւթա՝ ռայոնումը, Տումե շենումը, Գագիկ թաքավերեն վխտեն։ Գագիկին անըմը էնքան ա իլա՝լ եր իլա՝ծ, վըեր ինդրա՝ ընըմավը էտ շենին լա՝վ ա՝խպո՛ւրը «Թքյվերեն ախպո՛ւր» ըն ասալ։ Էտ թաքավերը կոըեվ ա իլա՝լ ընես թաթար-մոնղոլ զուրքերեն նհետ։ Պառավը միշտ քյիս ա իլա՝լ Մըսմլարեն ո՛ւնգյո՛ւնա՝ն թա՝զա՝ խըբըրնե պիրիս թաքավերեն հըետե։ Ըտրա հըմար թաքավերը շատ ա իլա՝լ հըրկես պռավեն։ Պառավը թաքավերեն հըետե պիրիս ա՝ լա՝լ, թա՝ Մըսմանլարը քանե թփա՝նգյ, թոփ, լա օրո՛ւշ պեներ օնե։

Ըտրա մըհար Գագիկ թաքավերը պաղբաստոթուն ա իլա՝լ տըսնաս, թաթար-մոնղոլնին կըրես չըն իլա՝լ, թա՝ Տումեն յօր օնին։

Թաքավերը պռավեն խոսկավը, ըտռա տված տեղեկութունավը միշտ Մըսմլարեն թրա՝փեն դշլաղնուն յըխնես ա իլա՝լ։ Պառավը թաքավերեն հետե պերած խըբըրնուն դա՝րդա՝ն վըեսկե փուլ ա իլա՝լ ըստընաս։

Վեր պառավը շատ քյիս ա Մըսմըլարը, յըետ կյաս, թորքերը կլո՛խ ըն ընգես, վեր ո՛ւրա՝նց խբրնեն էտ պառավն ա տնես թաքավերեն տաս։ Կլո՛խ ընգնելան յըետը, պռավեն խուսուցընես ըն։ Պառավը վըզա՝վ ա՝ ունես ո՛ւրա՝ն ըրածը։

Միենգյ էլ թորքերըն ըն պռավեն վըեսկե տաս, վեր քյինի թաքավերեն ո՛ւնգյո՛ւնա՝ն խա՝բա՝ր պիրի։ Պառավը իտի էլ ընես ա։

Մըսմըլարան խա՝բա՝ր ա պիրիս Տումե, թաքավերեն նըեստան փուլ ըստնաս, Տումա խա՝բա՝րը տնես ա Մըսմալար, ընդըղան վըեսկե ըստանաս։

Թաքավերը մընաս ա մա՝թա՝լ մնացած։ Ըսես ա.- Ախեր էս հինչ պե՞ն ա, խե՞ բիդի Մըսմալարը իմ խբըրնուս, զուրքերես տըեղը գյիդա՝։ Մըսմըլարեն մարթիքյը իմաստուն չըն, ըստեղ մին ասող կա՜։

Թաքավերը ըսկսես ա պռավեն յրա գյուման անելը։

Ըսես ա.- Բա՝լքյա՝ էս պառավըն ա ըսես Մըսմըլարեն իմ խբրնես։

Թաքավերը որոշիս ա պռավեն յրա հըսնե։

Մին օր, վըեր պառավը Տումա տո՛ւս ա կյաս, թաքավերը ընդրա հըետան մին ջա՝հիլ տղա յա ղըրկես, ըսես.- Թա վեր տու կարիս գյիդա՝ս, վեր իմ խբրնես պառավըն ա տնես Մըսմալարը, էտ վախտը հինչ ասիս, քյըեզ կտամ։

Էտ ջա՝հիլ տղան պռավեն հըետան հըրըքաշ, քուլերավը քյիս ա, նի

մըննես Մըսմալարը պռավեն նհետ։ Ըսկնաս ա, վեր պառավը ըսկըսից պատմելը թաքավերեն թաքուն խոսկերքը։ Ետնան Մըսմըլարեն ընդրա վըեսկե տվեն։

Ջա̀հիլը կյաս ա հինչու տըեսալ ա, պըտմես թաքավերեն։

Թաքավերը որոշիս ա պռավեն, հինչ ո̀ւզիս ա ինի, ըսպանե։

Մին օր պառավը քյիս ա Մսմալարը։ Վեր կյաս ա, թաքավերը էրկու մարթ ա ղըրկես, վեր պռավեն ըսպանին։

Ջա̀հիլնեն քյիս ըն, Կյարմո̀ւր քարեն կյըետեն էս թա̀րա̀փը կտրես։ Էնչանք կնա́ս ըն, վեր պառավը կյաս ա, թա̀ լենջին տակավը ընցնե, ջըհըլնո̀ւն մինը կռնավը թխես ա պռավեն քյիլլին, ըսպնես։

Էքյսը լո̀ւսը պնվա̀լա̀նը ետը մին քանե մա̀րթ նան կնեգյ քյիս ըն հսնես ընդեղ, պռավեն ընիծիլա̀վ մին փոս քնդիս, մաչին տըղվըրես, կյաս տոն։

Էն չըխանց միչև միենգյ էլ էդ լենջին ըսես ըն «Պռվալենջ»։

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.ՎՐԵՄԿԵ ԽՆՁՈՐԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մարգարիտ Գրիգորյանը (Սպանդարյանը) 1922 թվականի ձմռանը Շուշի քաղաքում:

Հեքիաթի գրառման բնագիրը պահպանվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում[1] (տես Մ.Գրիգորյանի ֆոնդ): Բանահավաք Մ. Գրիգորյանը ասացողի մասին թողել է հետևյալ ծանոթագրությունը. «Ասացող Ղումաշ Ավագյանը ծնվել է 1856թ., մահացել է 1928թ.: Հայրը դերձակ էր: Երեք եղբայրները Շուշում հասակ առնելուց հետո գնացել են Բաքու և երկար ժամանակ աշխատելուց հետո նորից վերադարձել Շուշի: Երբ Ղումաշը արդեն հասակն առած աղջիկ էր, եղբայրները երիտասարդ հասակում մեռնում են խոլերայից (ողջ է մնում միայն փոքր եղբայրը): Ինքն էլ այդ բոլորից հետո չի ամուսնանում, մնում է հոր տանը մինչև իր մահը և ապրում կարիքի մեջ: Ղումաշ Ավագյանը շատ տաղանդավոր, ընդունակ անձնավորություն էր, հրաշալի հիշողության տեր և լավ լեզու իմացող:

Նա ոչ միայն հեքիաթներ էր պատմում, այլև գիտեր շատ ժողովրդական երգեր ու ջանգյուլումներ: Նա վիճակախաղի երգեր էր սովորեցնում իրենց թաղի աղջիկներին, որոնք գալիս ու խնդրում էին տոնակատարության նախօրյակին: Այդ աղջիկները պատմում էին նրան իրենց իղձերի, ձգտումների մասին, և Ղ. Ավագյանը հորինում էր նրանց հոգուն մոտ ջանգյուլումներ ու խաղիկներ և սովորեցնում նրանց: Նա մեղմիկ ձայնով երբեմն արտասվելով երգում էր ջանգյուլումներից:

Թեկուզ անգրագետ էր Ղումաշը, բայց զարգացած ու նուրբ ճաշակի տեր կին էր. վեհանձն էր, բարեկիրթ, գեղեցիկը սիրող, խելոք ու ազնիվ:

Շուշի քաղաքի թարմ օդը, լեռնային արևը, սարերի հովն ու ծաղիկների բուրմունքը նրա առողջությունն ու գեղեցկությունը պահպանել էին. դեմքը ճերմակ էր, այտերը՝ վարդագույն, աչքերը՝ կապուտակ: Երբ նա հյուր էր գնում, իր կանաչ գույնի սնդուկից հանում էր թանկ կտորներից կարած իր տոնական զգեստները, գլխին զգում էր կապույտ գույնի

[1] *Այսուհետ՝ բանահյուսական արխիվ:*

«չարղաթ», որի տակից քիչ երևում էր սպիտակախառն մազերի մեջտեղից բացած սանրվածքը: Նա հագնում էր սրածայր, քունկով փայլեցրած սև կոշիկներ: Ամեն տեղ նա վայելում էր հարգանք ու ակնածանք՝ իր զուսպ, հանդարտ, միևնույն ժամանակ խոհուն ու հպարտ բնավորության համար:

Նա քթախոտ էր գործածում, բայց այնքան մաքրասեր էր, որ այդ բոլորովին չէր նկատվում:

Ավելի մեծ հասակում նա լուռ ու խոհուն, ծալապատիկ նստում էր իրենց սրահում փռած կարպետին, ներքնակի վրա և աչքերը կուչ ածելով՝ գուլպա էր գործում: Նա ամենից շատ սիրում էր ժողովրդական երգեր:

Գուլպա գործելիս հազիվ լսելի ձայնով երգում էր.

Բլբուլն ասեց՝ դեն մի գնա, յաղի կա,
Տու ի՞նչ գիտես, որ սրտումս դաղի կա,
Ես մի բլբուլ, սարի սըմբուլ,
Վարթս քաշած, թուրս դարտակ,
Էսօր-էքուց թաղի կա:

Ղումաշը ջահել հասակում նշանված է եղել և շատ է սիրել իր նշանածին, բայց հարսանիքի գիշերը նրան ասել են. «Ղումա՛շ, դու շատ սիրուն ես, առանց այն էլ դու մարդու կգնաս, թող քո հորեղբոր տգեղ աղջկանը տանք քո նշանածին»: Եվ «զանդըրրուկը» գցում են նրա հորեղբոր աղջկա գլխին, երեսը ծածկում ու ամուսնացնում:

Դրանից հետո Ղումաշը այլևս չի ամուսնանում: Հետագա տարիների սովը, ցավը, զաղթը նրա վրա շատ են ազդում: Նա դարձել էր լռակյաց ու էլ ավելի հպարտ, նա երբեք չէր տրտնջում, ոչ ոքից ոչինչ չէր խնդրում, թեկուզ կարիքի մեջ էր. ընդհակառակը, ցույց էր տալիս, թե ապահով է, և միշտ նստած էր լինում իր անկողնում: Նրա վրա շատ էր ազդել իր սիրելի, պաշտած ծննդավայրի՝ Շուշի քաղաքի ավերումն ու կործանումը, իր հայրական օջախի մարումը: Նա չդիմացավ այդ ցավին ու մահացավ 1928թ.:

Հեքիաթների գրառման հանգամանքների վերաբերյալ բանահավաքը իր ծանոթության մեջ գրել է. «Ղումաշ Ավագյանի ասած հեքիաթները ես լսել եմ ավելի մատաղ հասակում: Նա ավելի շատ էր սիրում պատմել «Վըեսկե խընձո̈րը», «Պըրա̈նա̈ն վա̈րթ, մա̈նիշա̈կ թա̈փվող ախճիգյը», «

Ծաղկած բախչան» և մի քանի ուրիշ հեքիաթներ, որոնք ես լսել եմ մի քանի անգամ: Նրա պատմած հեքիաթներից առաջին անգամ գրի եմ առել 1922թ. ձմռանը, Շուշում, առանց մտածելու, որ հետագայում ես ժողովրդական բանահյուսության հավաքող պիտի դառնամ: Փոքր հասակից սիրել եմ հեքիաթները և ձգտել եմ գրի անցկացնել դրանք, որ չմոռանամ: Այնուհետև ապրելով Բաքվում, ամառները եղել եմ Ղարաբաղում և ամեն անգամ այցելել եմ Շուշի քաղաքը, ուր ապրում էր Ղումաշը քաղաքի ներքևի մասում, վերանորոգված տանը: Այսպես, 1922, 1926, 1927 թվականների ընթացքում գրի եմ առել շուրջ տասնհինգ հեքիաթ»:

Ղումաշ Ավագյանի պատմած հեքիաթները զետեղված են սույն հատորի 1-16 համարների տակ:

## 2.ՍԻՆԱՆ ԹԱՔԱՎԵՐԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1922թ. ձմռանը Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ.Գրիգորյանի ֆոնդ):Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի N1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 3.ՎԸԵՍԿԵ ՂՈՉԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1922թ. ձմռանը Շուշի քաղաքում:Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի N1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 4.ՊԻՐԱ՛ՆԱ՛Ն ՎԱՐԹ, ՄԱ՛ՆԻՇԱ՛Կ ԹԱՓՎՈՂ, ԱԽՃԻԳՅԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ.Գրիգորյանը 1922թ. ձմռանը Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին

տեղեկությունները տե՛ս սույն հատորի №1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 5.ԿՈՋՆԻ ՏՂԱՆ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1926թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի №1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 6.ՄԱՐԹ 0ՏՈՂ ԱԽՃԻԳՅԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1927թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի №1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 7.ԴԸՌԴՌ̈ՏՎԱԾ ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1926թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի №1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 8.ԷՐԿՈՒ ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1926թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

9.ԱՂՎԵՍԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանր 1927թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

10.ԾՈ՜ւԿՆԻՆ ԾԵԾԱՂԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանր 1927թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

11.ԾԱՂԿԱԾ ԲԱԽՉԱՆ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանր 1927թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

12.ԽՈՍՈՂ ԾԻՆ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանր 1927թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի №1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

13.ՀԱԲԵԴ-ԿԱՐԱԲԵԴԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1926թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի №1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 14.ԼԱ՛ՎՈԹՈՒՆԻՆ ՏԸԵՂԸ ՓԻՍՈԹՈՒՆ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1926թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի №1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 15.ՊՈՒՃՈՒՐ ՀԱՐՍԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1927թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 16.ԻՄԱՍՏՈՒՆՆԻՆ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1927թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 17.ՎԸԵՐՍԿԱՆ ԱՎԵՏԻՍԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մարգարիտ Գրիգորյանը 1930թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

Բանահավաք Մ. Գրիգորյանը բանասացի մասին թողել է հետևյալ ծանոթագրությունը. «Ասացող Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը ծնվել է 1876թ. Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում: Փոքր հասակից սկսած նա սիրել է ուսումը: Այդ ժամանակ աղջիկների դպրոց չկար, և ընդունված չէր աղջիկներին կրթության տալը: Այդ էր պատճառը, որ նա զրկվել է կրթությունից: Հետագայում գրաճանաչ է դարձել այնքան, որքան որ պետք էր իր եղբայրներին նամակ գրելու համար: Եղել է շատ զգայուն,

տպավորվող, դիտող, սիրել է գրականություն, ժողովրդական բանահյուսություն: Ունեցել է լավ հիշողություն:Նա հեքիաթներ շատ գիտեր, մանավանդ երկար հեքիաթներ: Շատ հաճախ նրա տունն էին գալիս հարևանները իրենց ընտանիքներով, որպեսզի ձմռան երկար երեկոներին իրենց ժամանակն անցկացնեն, խնդրում էին նրան՝ հեքիաթներ պատմել:

Նա պատմել է Շուշու ենթաբարբառով: Երբ նա սկսում էր պատմել «համով, հոտով» ինչպես ժողովուրդն էր ասում, բոլորը զմայլված լսում էին, աչքները հառած նրա բարի, ծաղկատար դեմքին:Նա կարողանում էր գրավել լսողների ուշադրությունը՝ խոսքի ուժի միջոցով:

Ասես հմայում էր: Շատ հաճախ նրա պատմած հեքիաթները չէին վերջանում նույն երեկոյան և շարունակվում էին մյուս երեկոները: Պատահում էր, որ սկսած հեքիաթը շարունակվում էր երեք երեկո:

...Նա ասելու ժամանակ ոգևորվում էր, երազկոտ հայացքը դարձնում դեպի երկինք ու երբ տեսնում էր, որ աստղերից մի քանիսը «ծըլլում են», նա մտաբերում էր «Ծըլլալիս աստխերը» հեքիաթը և պատմում:

Պատահում էր նաև, որ նա, տարված իր ծննդավայրի գեղեցկություններով, նայելով մեկը-մյուսի թիկունքից բարձրացող կապույտ սարերին, հիշում էր «Գըմզըմ սարերը» հեքիաթը և պատմում:

Ամեն մի հիքիաթ այսպես նա պատմել է՝ կապելով հարազատ ու գեղեցիկ բնության հետ:

Փիրուզան ամուսնացած էր: Ամուսինը որմնադիր էր, մահացել է 1909թ.՝ Փիրուզայի խնամքին թողնելով հինգ հոգուց բաղկացած ընտանիքը: 1917թ. մինչև 1925թ. Փիրուզան աշխատել է որպես հավաքարար: Հետագայում բնակություն է հաստատում Բաքվում և ապահով ապրում զավակների խնամքի տակ:

Փիրուզան վախճանվել է 1940թ: Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը ասել է նաև հանելուկներ, շուտասելուկներ, առածներ և այլն: «Վըերսկան Ավետիսը» հեքիաթի վերջում ասացողը լիրիկական զեղում է կատարում Շուշի քաղաքի մասին:Այդ հատվածը զետեղում ենք ստորև:

«Դէ ըսօր էլ էն դա̈շա̈նգյ, էն աշխարքիս մեչին մին դա̈նա̈ Շուշի-դըլին էրիլին քըսան տարին ա, էն արմանք-զարմանք շըհա̈րին, էն լիգյը ծըփծըփըմ շըհարին, էն մըեծ-մըեծ հինգյըվեց ըտըժանի տըներին, վա̈րթ

նան մըխագյավ լիքյը՝ բախճոցը, վըեր ըտրանց վըետը աշխարքըս օնըմ ար, վըեր Քյիրսա̀ սարան զով քամեն ար կյամ, էն լիզը մազազիններին, էն լիզյը պըղվըլնիրեն, էն ափաթ տարած ըշկոլներին, տիպարաններին էրիլին քըսան տարին ա, ա բալեքյ... Ախեր տըեսած բիդիքյ վըեր գյիդաք, թա հինչ շըհա̀ր ա̀ իլա̀լ Շուշի-Ղալան, մին Պարիժ, մին Լոնդոն, էն չա̀րչա̀մբա կալած Լոնդոնը հինչ ա ընդրա քըշտին, մին ճաքված-տըրաք-ված, մին ղըրղըներավը եր տըեռնըմ, լափու տամ, էն պալատ տըներավը, էն լեն քյո̀ւչո̀ցավը, էն մարմար ժամերավը, էն ո̀ւրա̀ն գյիդնական, խելունք, սըերտը նան ծըեռքը պըեց լա̀վ, ո̀ւրո̀ւր հըսնող, դա̀րդ գյիդող ժողովուրթավը, վըեր համ ծըեռքերնին ա վըեսկե իլա̀լ, համ կըլխընին, ըսօր մընացալ ա տըեղը տըերտակ, մին յաբանի լենջ…

Էն վըեր սաղ Ղարաբաղին պահալ ա, էս սարին կըէխին նըստած, թաքուհու նման, նախշուն, դունյա գյոզա̀լի ա: Ա՜ բալեքյ, դե ըսօր իմ սըերտըս տխուր ա, ծըեզ խընձո̀ր չըմ տամ, թա̀քյ լիա̀ տուք օրախ ինիք, ըշտեղ ինիքյ, սաղ ինիքյ, ամմա մոռանաք վըեչ ծըեր տակռին, ծըեր պապական օջաղը, ծըեր թաքավերական լո̀ւզուն, ծըեր էն դա̀շա̀նգյ, էն մարալ-ջեյրան, էն հո̀ւրո̀ւ-փա̀րին, էն դունյա գյո̀զա̀լի Շուշի-Ղալան, էն վըեսկավ, պըռլանդավ, կանանչ-կյարմո̀ւր զա̀ռվա̀րա̀ղ, ալափըրա̀նգյի շո̀րերավ, շուլկ-ըտլասըմ կորած Շուշի-Ղալան վըեր էն սարին կըէխին, էէ պեցուր քըեռծին կըլխին թաքուհի ար, մըհենգյ էլ ընգած, մըեռած ա, տըեղը դուզ ա̀, մինա̀կ կյարունքը վըեր կյամ ա, կյըրեզմաննին կընչըցնըմ ա, լըցնըմ ծաղկով...»

## 18.ԱԼԱՄ ԹԱՔԱՎԵՐԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի դրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի N17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

19.ԱՐՄԵՆԸ ՆԱՆ ԶԱՐՄԵՆԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1933թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի N17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

20.ԹՌԵՎԱՎԵՐ ԾԻՆ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1938թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի N17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

21.ԾՈ̀ՒՎԻՆ ԾԱՌԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1933թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի X 17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

22.ԴԱ̀ՐՎԻՇԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 23.ՏԱՄՆԷՐԿՈՒ ՅԸՂՈՆԵԳՅԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 24.ԴՙԱՐՎԻՇ ԹԱՔԱՎԵՐԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 25.ԿՅԵՌԹՆՈՒԿ ԱԽՃԻԳՅԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1938թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 26.ԳԸՄԳԸՄ ՍԱՐԵՐԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի N 17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 27.ԿԸԼՈ̀ԽԸ ՆԱՆ ՍԸԵՐՏԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս նույն հատորի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 28.ՕՎՉԻ ՓԻՐՈ̀ՒՄԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1933թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս նույն հատորի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 29.ԽՈՍԿԻՆ ՕԺԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1938թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս նույն հատորի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 30.ԿՅԻՐԻՆ ԱՆՈՒՄԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1933թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս նույն հատորի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 31.ԾՈ̀ՒԿՆԻՆ ԿԸԼՈ̀ԽԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1933թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս նույն հատորի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 32.ԻՐԵՔ ԿԸԼՈ̀Խ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս նույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 33.ՂԱՐԱԲԱՂԵՆ ԱՐԱՂԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1938թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ.Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս նույն հատորի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 34.ԼՈ̀ԻՆ ՆԱՆ ՄԸԵԾԱԿԸ

Պատմել է Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս նույն հատորի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 35.ԿՅՈՂ ԹԱՔԱՎԵՐԸ

Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1938թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ.Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 36.ԿԸՆՁՄԸՆՁՈՒԿԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Շուշու շրջանի Քարին տակ գյուղի բնակիչ Արշակ Պետրոսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957թ. ամռանը Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

Բանահավաքը ասացողի մասին թողել է հետևյալ ծանոթությունը. «Ասացող Արշակ Պետրոսյանը ծնվել է Շուշու շրջանի Քարին տակ գյուղում, 1898թ. գյուղացու ընտանիքում: Շուրջ 25 տարի աշխատել է Քարին տակ գյուղի մետաքսագործական ֆաբրիկայում:

Քարին տակ գյուղը գտնվում է Շուշի քաղաքի ստորոտում: Շուշի քաղաքի «Քերծին կլոխ» կոչված բարձրությունը պատանման և ուղղաձիգ իջնում է մինչև ստորոտը, այդտեղ է տանում Քերծի գլխից սկսվող մի ծուռումուռ արահետ, ներքևում լսվում է գետի վշշոցը, աքլորների կանչը, մարդկանց բարձր «հե-հե»-ները: Քարին տակ գյուղի մյուս կողմից բարձրանում է իր կանաչ լանջերով Քիրսը՝ Ղարաբաղի ամենաբարձր լեռնային գագաթը Մռավ սարից հետո, որը միշտ ձյունածածկ է: Խոր ձորի հովտում է ընկած Քարին տակ գյուղը, հենց իր անունն էլ այդտեղից է ստացել: Գյուղն ունի բազմաթիվ երկհարկանի, կարմիր ներկած թիթեղյա տանիքներով տներ: Տները թաղված են թթենու և այլ պտղատու այգիների ու բանջարանոցների մեջ: Գյուղի միջով անցնում է Կարկառ գետի վերին ճյուղը: Արշակ Պետրոսյանին ճանաչում եմ 1956 թվից նա շատ հեքիաթներ է պատմել, որոնցից մի քանիսը մտնում են այս հատորի մեջ»:

## 37.ՉԸԿԱՄ ՀԸՐԵՎԱՆԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Շուշու շրջանի Քարին տակ գյուղի բնակիչ Արշակ Պետրոսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ, ամռանը Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի №36 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 38.ՔՅԱ̏ԼԱ̏ԳՅԲԱՁՆԵՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Շուշու շրջանի Քարին տակ գյուղի բնակիչ Արշակ Պետրոսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. ամռանը Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի №36 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 39.ԲԱԴԱՐԱՔՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Շուշու շրջանի Քարին տակ գյուղի բնակիչ Արշակ Պետրոսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. ամռանը Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 36 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 40.ԿՅՈ̏ւՔՈ̏ւՆ ՇԱ̏ՎԹԱ̏ԼԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Շուշու շրջանի Քարին տակ գյուղի բնակիչ Արշակ Պետրոսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. ամռանը Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 36 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 41.ԱՐՉԻՆ ՏՂԱՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Թամարա Շահրամանյանը, գրի է առել Մ.Գրիգորյանը 1956 թ. օգոստոսին, Շուշիքենդ գյուղում:

Բանահավաքը ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկություն չի թողել: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 42.ՄԱԴԱՐ ՏՂԵՆ ԲԱԽՏԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային (Ավագ Պողոսյան), գրի է առել Մ. Գրիգորյանը 1958թ. հուլիս ամսին, Շուշիքենդ գյուղում: Ասացողի մասին բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը: «Ավագ դային կոլտնտեսական է» չնայած ծեր հասակին (75 տարեկան), լավ աշխատող է:

Ավագ դային երկար հասակով, նիհար մարդ է, սիրում է զրուցել, զրույցը համեմում է «մասալներով ու պընզըլներով»: Նրա որդիները Բաքվում բանվորներ են: Դրանցից մեկի երեխաները Ավագ դայու, նրա կնոջ՝ Նախշունի մոտ էին ապրում: Վերջին տարում կինը՝ Նախշունը մեռավ և Ավագ դային մնաց մենակ: Շուշիքենդ գյուղն ունի գեղեցիկ դիրք, շրջապատված է ոչ բարձր լեռներով: Ունի մեծ քանակությամբ թթենու այգիներ և բանջարանոցներ, տեղի կոլտնտեսությունը հարուստ է:

Գյուղը աղբյուրներով առատ է, կլիման մեղմ է ու հով: Շուշիքենդ գյուղը մեծ գյուղ է, ունի պատմական հետաքրքիր անցյալ: Գյուղում այժմ կան տասնամյա դպրոց, ակումբ, նոր կառուցված փոստ-հեռագրատուն , գրադարան՝ պրոֆեսոր Արսեն Տերտերյանի անվամբ և այլ հիմնարկություններ»:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆանդ):

## 43.ՔՅԱ̀ՍԻԲ ՏՂԱՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային (Ավագ Պողոսյան), գրի է առել Մ. Գրիգորյանը 1958թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում: Ասացողի մասին տեղե-

կությունները տե՛ս N42 հեքիաթի ծանոթագրության մեջ: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 44.Ա̀ՐԱ̀ՋԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային (Ավագ Պողոսյան), գրի է առել Մ.Գրիգորյանը 1958թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում: Ասացողի մասին տեղեկություն-ները տե՛ս N42 հեքիաթի ծանոթագրության մեջ: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 45.ՄԱ̀ՐԴ ՆԱՆ ՆԱՄԱ̀ՐԴ ԱԽՊԵՐՔՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային (Ավագ Պողոսյան), գրի է առել Մ.Գրիգորյանը 1958 թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում: Ասացողի մասին տեղեկություն-ները տե՛ս № 42 հեքիաթի ծանոթագրության մեջ: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 46.ԸՐԱԾԸՏ ԱՌԱՉԸՏ ԿՅԱ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային (Ավագ Պողոսյան), գրի է առել Մ.Գրիգորյանը 1957թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում: Ասացողի մասին տեղեկություն-ները տե՛ս № 42 հեքիաթի ծանոթագրության մեջ: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ.Գրիգորյանի ֆոնդ):

## 47.ՇԱ̀ԳՅԻՐԴ ՄՈԻԽԱՆԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային (Ավագ Պողոսյան), գրի է առել Մ.Գրիգորյանը 1958թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում: Ասացողի մասին տեղեկություն-ները տե՛ս № 42 հեքիաթի ծանոթագրության մեջ: Հեքիաթի գրառման

բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ.Գրիգորյանի ֆոնդ):

### 48.ՔՈՍԱԿ ԱԽՊԵՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային (Ավագ Պողոսյան), գրի է առել Մ.Գրիգորյանը 1958թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում: Ասացողի մասին տեղեկություն-ները տե՛ս № 42 հեքիաթի ծանոթագրության մեջ: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ.Գրիգորյանի ֆոնդ):

### 49.ՏՎԸՐԱԾԵՆ ՏՂԱՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Խանաբադ գյուղի բնակիչ Մովսես Խաչատրյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1947թ. օգոստոսին, Շուշի քաղաքի հանգստյան տանը: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 50.ԱԽՃԻԳՅ ԹԱՔԱՎԵՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Խանաբադ գյուղի բնակիչ Խաչատուր Ծատուրյանը, գրի է առել Մ.Գրիգորյանը 1948թ. փետրվարին Ստեփանակերտում: Ասացողի մասին բանահավաքը հայտնում է միայն, որ տարիքով երիտասարդ է: Այլ տեղեկություններ չի հաղորդում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 51.ՄԻՆ ԿՆԳԱՆ ՄԻՆ ՏՂԱ ՅԱ ԻՆԻ՛ՄԻ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Տըռնա-վարզ գյուղի (այժմ Կարմիր գյուղ) բնակիչ Լուսավարդ Աղաջանյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1947 թ., Տըռնավարզ գյուղում:

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Տըռնավարզ (Կար-միր) գյուղը գտնվում է մի բարձր սարի լանջին: Հին գյուղ է, ունեցել է պատմական անցյալ:

Տները կառուցված են քաղաքի ձևով, երկհարկ, քարաշեն, թիթեղա-

ծածկ և պատշգամբներով: Գյուղը շրջապատված է թթենու այգիներով ու բանջարանոցներով»:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 52.ՔՅԻՆԱ՜ՑՈՂԸ ԵՏ ՉԻ ԵԿՈՂ ՍԱՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ղուլբուլաղ գյուղի բնակչուհի, ուսուցչուհի Աստղիկ Գրիգորյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1948թ. ձմռանը, Բաքու քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 53.ԾՈ՜ւԿՆԸ ՓՌՆՈՂԻՆ ՏՂԱՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Քյաթուկ գյուղի բնակչուհի Նուբար նանեն, գրի է առել Մ.Գրիգորյանը 1940թ. օգոստոսին Քյաթուկ գյուղում:

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը «Նուբար նանեն ծեր կին էր, գիտեր շատ հեքիաթներ:

Քյաթուկ գյուղը ունի հարուստ բանջարանոցներ, հայտնի է հատկապես Քյաթուկ գյուղի պղպեղը և այլն»:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 54.ԷՇԻՆ ԱՆԳՈՒՃԻՆ ՎԸԵՍԿԵՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Քյաթուկ գյուղի բնակչուհի Նուբար նանեն, գրի է առել Մ. Գրիգորյանը 1946թ. օգոստոսին - Քյաթուկ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 55.ՍՈՒՂՈՒՄՈՒՆ ԻՄԱՍՏՈՒՆԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Քյաթուկ գյուղի բնակչուհի Նուբար նանեն, գրի է առել Մ. Գրիգորյանը 1946թ. օգոստոսին Քյաթուկ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 56.ՀՈւ ՎԵՐ ՄԻՆ ՊԵՆԻ ՀԵՏԱՆ ԸՆԳՆԻ ԿԸՀՄՆԻ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Քյաթուկ գյուղի բնակչուհի Նուբար նանեն, գրի է առել Մ. Գրիգորյանը 1946թ. օգոստոսին-Քյաթուկ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 57.ՄԱԽՈՐԿԵՆ ՅԱ̈ՇԻԳՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Սարուշեն գյուղի բնակիչ, ուսուցչուհի Եվգենյա Պետրոսյանը, գրի է առել Մ.Գրիգորյանը 1951թ. օգոստոսին, Սարուշեն գյուղում: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը.»Սարուշեն գյուղը գտնվում է մի բարձ-րադիր լեռնալանջի, տներն իրար թիկունքի բարձրանում են սարնիվեր և մեկի բակը մյուսի կտուրն է, հեռվից թվում է, թե ծիծեռնակի մի մեծ բուն է լեռան լանջին կըպած:

Սարուշեն գյուղն ունի պատմական անցյալ»:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ) :

## 58.ՂՈՒԳՅԱ̈ՄԸ ՆԱՆ ՍՈՒՔՅԱ̈ՄԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղի բնակիչ Մայկո Բաղդասարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930թ. հոկտեմբերին Բաքու քաղաքում:

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Մայկո Բաղդասար-յանը ծնվել է 1899թ. Մոխրաթաղ գյուղում: Երիտասարդ հասակում ամուսնացել է Շուշեցու հետ, բնակություն է հաստատել Բաքվում:

Ընտանիքը բազմամարդ էր ու տնային աշխատանքը շատ, դրա համար էլ ոչ մի տեղ չի աշխատել: Մյուս կողմից էլ անգրագետ լինելն է խանգարել:

Նա պատմում էր, որ չքավոր գյուղացու աղջիկ է եղել, դրա համար էլ անուսում է մնացել:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

59.ԲԱԽՏԱՎԵՐ ՉՈԲԱՆԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղի բնակիչ Մայկո Բաղդասարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930թ. Բաքվում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

60.ԴԵՎԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղի բնակիչ Մայկո Բաղդասարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930թ. Բաքվում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

61.ՄՌՈՒԾԵՆ ՏՂԱՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղի բնակիչ Սիրանուշ Սարգսյանը, գրի է առել Մ.Գրիգորյանը 1958թ. օգոստոսին, Ներքին Հոռաթաղ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ.Գրիգորյանի ֆոնդ):

62.ՓԻՍ ԴԱՅԻՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղի բնակիչ Սիրանուշ Սարգսյանը, գրի է առել Մ.Գրիգորյանը 1958թ. օգոստոսին, Ներքին Հոռաթաղ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

63.ԹԸԵՎԱՎԵՐ ԿԸՆԵԳՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Չափար գյուղի բնակիչ Գյուլի Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950թ. օգոստոսին, Չափար գյուղում: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Գյուլի Ավագյանը բարձրահասակ ու գեղեցիկ դեմքով կին է, հագնվում է գյուղական տարազով: Քաղցրախոս է, խոսքով գերում է ունկնդիրներին և ստիպում լսել իրեն: Աշխատում է կոլտնտեսության մեջ:

Չափար գյուղը գտնվում է Մարդակերտի լեռնոտ վայրում»: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 64.ՂԸԼԵԳՅՉԻՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Չափար գյուղի բնակիչ Գյուլի Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950թ. օգոստոսին, Չափար գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 65.ԿԱԽԱՐԴԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Չափար գյուղի բնակիչ Գյուլի Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950թ. օգոստոսին, Չափար գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 66.ԱՃԿԸ ԾԱԿ ՄԱՐԹԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Մարդակերտ գյուղի բնակիչ Խաչատուր Կարապետյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950թ. ամառը, Մարդակերտ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 67.ՀԱԹԵՐՔԻՆ ՀԻԼԻՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Հաթերք գյուղի բնակիչ Շամիր Ղազարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950թ. ամառը, Շուշի քաղաքի հանգստյան տանը:Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 68.ՀԱԹԵՐՔԻՆ ԵՐԵՔ ԴԵՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Հաթերք գյուղի բնակիչ Շամիր Ղազարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950թ. ամառը, Շուշի քաղաքի հանգստյան տանը: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 69.ԱԺԴԱՀԱԿԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Չանախչի (Ավետարանոց) գյուղի բնակիչ Մարիամ Զաքարյանը (Մինա բաջին), գրի է առել Մ. Գրիգորյանը 1928թ. հուլիսին, Չանախչի գյուղում: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Մինա բաջին (Մարիամը) 62 տարեկան է, առույգ ու աշխույժ: Մինա բաջին ոչ ոք չունենալով շրջագայում էր գյուղից գյուղ, կամ բնակվում էր Շուշի քաղաքում: Չանախչի (Ավետարանոց) գյուղը հին գյուղ է, շենքերը իրենց վրա կրում են հնության հետքեր»:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում(տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 70.ՀԱՐՈՒՍԸ ՄԸՆ ԷԼ ՔՅԱ̀ՍԻԲԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Չանախչի (Ավետարանոց) գյուղի բնակիչ Մարիամ Զաքարյանը (Մինա բաջին), գրի է առել Մ.Գրիգորյանը 1928թ. հուլիսին, Չանախչի (Ավետարանոց) գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 71.ՔՈ̀ւՐԸ ՆԱՆ ԱԽՊԵՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Չանախչի (Ավետարանոց) գյուղի բնակիչ Մարիամ Զաքարյանը (Մինա բաջին), գրի է առել Մ.Գրիգորյանը 1928թ. հուլիսին, Չանախչի (Ավետարանոց) գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 72.ԴԱՆԳԼԱ ԿՆԵԳՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Չանախչի (Ավետարանոց) գյուղի բնակիչ Մարիամ Զաքարյանը (Մինա բաջին), գրի է առել Մ.Գրիգորյանը 1928թ. հուլիսին, Չանախչի (Ավետարանոց) գյուղում:Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 73.ՊԱՐՍԵՂԸ ՆԱՆ ԱՐՍԵՆԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում:

Ըստ բանահավաքի հաղորդման՝ ասացող Ա. Աթայանը երիտասարդ ուսուցիչ է:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 74.ԼԱՎ ՏԸՆԴԵԳՅՈՒՆԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 75.ՊԱՐԻ ԿՆԵԳՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 76.ԴԵՐ ՏԸԵՌԱԾ ՄԱՐԹԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 77.ՂՈՆԱՂԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

78.ՃԸԿԸՏԱԿՅԻՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

79.ՔԱՉԱԼ ՃՈՏԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

80.ԷՐԿՈՒ ԱԽՊԵՐ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

81.ԹԱ̀ՉԱ̀ ՓԸՍԱԾ ԽԸԽՈՐՅԸ ՀԵՏԵ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

82.ԵՐԵՔ ՀԸՐՍԱՆԵՔՅ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Շեխեր գյուղի բնակիչ Եղսան բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1937թ. օգոստոսին, Շեխեր գյուղում: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Եղսան բաջին 60 տարեկան կոլտնտեսուհի է: Ամուսինը եղել է չքավոր գյուղացի, ապրում է միահարկ, հին տանը: Եղսան բաջին հագնում է լայն բազմավոր հագուստ, գլխին կապում է թաշկինակ: Բնավորությամբ մեղմ և բարի կին է: Անգրագետ է:

Շեխեր գյուղը բաղկացած է երկու մասից, մի մասը լեռնալանջի

թեքվածքի վրա է, մյուս մասը ավելի հարթ տարածության վրա: Տները դեռևս հին, պապենական ձևի են, շատերը միահարկ, կան նոր կառուցումներ ևս:

Գյուղն ունի վարար ու ջինջ աղբյուրներ: Գյուղից ներքև՛ բավական հեռու, գտնվում են թթենու այգիները, բանջարանոցները, բայց ամենից առատը ցորենի արտերն են»:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 83.ԹԱՔԱՎԵՐԻՆ ՊՌԻՃՈՒՐ ՏՂԼԱՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ճեխեր գյուղի բնակիչ Եղսան բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1937թ. օգոստոսին, Ճեխեր գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 84.ԹԱՔԱՎԵՐԻՆ ՊՌԻՃՈՒՐ ՓԸԵՍԱՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ճեխեր գյուղի բնակիչ Եղսան բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1937 թ. օգոստոսին, Ճեխեր գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 85.ՃԸԿԸՏԱԿՏԻՐԸ ՍՈՏ Ա

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ճեխեր գյուղի բնակիչ Եղսան բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1937 թ. օգոստոսին, Ճեխեր գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 86.ՔԱՌԵՐԵՆ ԲԱԽՏԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ճեխեր գյուղի բնակիչ Եղսան բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1937թ. օգոստոսին, Ճեխեր գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում էբանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 87.ՉՈՒԲԱՆԵՆ ՍԵՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Մարգարիտ բաջին ծնվել է 1891 թ.: Նա, ջահել հասակում զրկվելով ամուսնուց, որը զոհ էր գնացել 1918-1920 թթ. կռիվներում, ձեռքի աշխատանքով պահում էր իր որբերին: Սրա-նրա համար հաց էր թխում, թել էր մանում, զորգ, կարպետ, գուլպա գործում: Ներքին Սզնեք գյուղը գտնվում է մի բարձրադիր սարահարթի վրա: Տները պարսպապատ են, լայն, կամարաձև դարբասներ ունեն: Գյուղի բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, մանավանդ՝ լոբու: Տղամարդկանց մեծ մասը դերձակներ են, կան և ոսկերիչներ: Զբաղվում են նաև առևտրով»:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 88.ՋԵՅՐԱՆԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 89.ԱՐՋԸ ՆԱՆ ԱԽՃԻԳՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 90.ՊՈՒԸՎՈՒՑ ԼԸ՛Վ ԱՊՐԵԼԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 91.ԷՐԿՈՒ ԳՈՂ ՑՈՐԵՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 92.ՀԱՎԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 93.ԹԸՌՉԿԱՆ ՀԱՐՍԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի բնակիչ Հեղինե Բաղդասարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1949թ. օգոստոսին, Սխտորաշեն գյուղում: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Հեղինե Բաղդասարյանը 64 տարեկան կոլտնտեսուհի է: Նա քաղցրախոս ու զրուցասեր կին է: Հագնում է լայն, գյուղական ձևի «դեյրա» գլխին կապում է թաշկինակ: Դեմքը նիհար է, կեռ քթով: Սխտորաշեն գյուղը մեծ գյուղ է, ունի ցորենի արտեր, գյուղացիներն զբաղվում են անասնապահությամբ: Տները երկհարկանի են, երկար ու լայն ներքնի հարկը շտեմարանն է, բակում՝ անասունների գոմը: Տները շրջապատված են քարուկրի պատերով կամ ցանկապատով»:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 94.ԹԱՔԱՎԵՐ ԾՈ̈ՒԿՆԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի բնակիչ Հեղինե Բաղդասարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1949թ. օգոստոսին, Սխտորաշեն գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 95.ՓԻՍ ԿՆԵԳՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի բնակիչ Հեղինե Բաղդասարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1949թ. օգոստոսին, Սխտորաշեն գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 96.ԱՂՎԵՍԸ ՆԱՆ ՓՙԱԼՙԱՆԳՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի բնակիչ Հեղինե Բաղդասարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1949թ. օգոստոսին, Սխտորաշեն գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 97.ՍԱՌԱՆ ԿՅԱՄ Ա՛...

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քերթ գյուղի բնակիչ Սարգիս Թավաքալյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1948թ. օգոստոսին, Շուշի քաղաքի հանգստյան տանը: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 98.ՄԱՐԹԻՆ ՏԸԵՂԸ ՈՙԼՐՙԱՆ ՀՈՔՅԻՆ ՏՎՈՂ ԿՆԵԳՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Հարավ գյուղի բնակիչ Ազիզբեկ Հակոբյանը, դրի է առել Մ. Գրիգորյանը 1951թ. հունվարին, Բաքու քաղաքում: Բանահավաքը հայտնում է, որ ասացողը երիտասարդ ուսուցիչ է:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 99.ՓԻՍ ՄԱՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Հերհեր գյուղի բնակիչ Մանիշակ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Հերհեր գյուղում: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Մանիշակ բաջին ծեր կին է, հագնում է «հայավարի» շոր, այսինքն՝ երեք փեշից բաղկացած, գլխին դնում է արծաթե դրամներից շինած «պալի»,

գլուխը կապում է դարձյալ «հայավարի» կոչված ձևով: Հերհեր գյուղի եկեղեցու մոտ կա հինավուրց մի ծառ, որի բնի մեջ կա մի մեծ փչակ, այդտեղ կարելի է տեղավորել սեղան, աթոռներ: Հին ժամանակ այդտեղ մոմեր էին վառում, որպես սրբատեղի: Հերհեր գյուղն այժմ հայտնի է իր հարուստ այգիներով ու բանջարանոցներով, խոշոր կոլտնտեսությամբ: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 100.ԱՄԾԱՏՈՒՐԸ ՆԱՆ ՎԱՐԹԻՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Հերհեր գյուղի բնակիչ Մանիշակ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. հունիսին, Հերհեր գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 101.ԿՈՐԱԾ ԵԶՆԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Հերհեր գյուղի բնակիչ Մանիշակ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Հերհեր գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 102.ԹԱՔԱՎԵՐԵՆ ԱԽՃԻԳՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Հերհեր գյուղի բնակիչ Մանիշակ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. հունիսին, Հերհեր գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 103.ԱՅԱՆ ԾԸԾԸՂԵՍ Ա

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քերթ գյուղի բնակիչ Ղույան Գարեգինը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1948թ. օգոստոսին, Շուշի քաղաքի հանգստյան տանը: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 104.ԱՐՋԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քերթ գյուղի բնակիչ Ղուլյան Գարեգինը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1948 թ. օգոստոսին, Շուշի քաղաքի հանգստյան տանը: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 105.ՀՈՆՁ ԸՆՈՒՂՆԻՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քերթ գյուղի բնակիչ Ղուլյան Գարեգինը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1948թ. օգոստոսին, Շուշի քաղաքի հանգստյան տանը: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 106.ԵՐԳՅԻՆՔՈ̈Ն ՎԵՐ ԸՆԳԸ̈Ծ ԽԱՆՉԱԼԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Գիշի գյուղի բնակիչ Վոլոդյա Անտոնյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1956 թ. հուլիսին, Գիշի գյուղում: Բանահավաքը թողել է հետնյալ ծանոթությունը. «Գիշի գյուղը գտնվում է մի լեռնալանջի վրա, որի հողային շերտը հեղեղների, քամիների պատճառով հետզհետե իջնում է, բացում ծառերի արմատները:

Գյուղի տները կառուցված են քաղաքի տների պես: Գիշին հարուստ գյուղ է, ունի առատ խաղողի և թթենու այգիներ: Խաղողը առաջնակարգ տեղ է գրավում, հայտնի է «Գիշի» անվամբ գինի: Գյուղի աղբյուրներից նշանավոր է Ոսկեխաչ աղբյուրը»:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 107.ՕԽԾԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Գիշի գյուղի բնակիչ Վոլոդյա Անտոնյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1956 թ. հուլիսին, Գիշի գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 108.ԹԱՔԱՎԵՐԻՆ ԱԽՃԻԳՅԸ ՆԱՆ ՈՒՐԱՆՑ ՆՈՔՅԱՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Վանք գյուղի բնակիչ Արծվիկ Ավետիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1952 թ. ամռանը, Վանք գյուղում: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթություն. «Վանք գյուղը գտնվում է Հադրութից ոչ հեռու մի բարձրության վրա: Ունի շատ գեղեցիկ դիրք: Գյուղի հետ կապված են մի շարք ավանդություններ»:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

# ՀԱՎԵԼՎԱԾ

## 1.ԳՅԱՆՔԻՆ ՕՐԵՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1927թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրի N 1 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 2.ԽԼԵԶՆԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ղշլաղ գյուղի բնակիչ Բեգլար Բաբայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ.Գրիգորյանի ֆոնդ):

## 3.ԹԱՔԱՎԵՐՆ ՆԱՆ ԽԵԼՈՒՆՔ ԱԽՃԻԳՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1938թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրի N 17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 4.ՍԵՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930 թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

### 5.ԾԸԼԼԱԼԻՍ ԱՍԹԽԵՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը: Գրի է առել Մ. Գրիգորյանը 1930թ. Շուշի քաղաքում: Ասացողի և հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

### 6.ՊԸՐԿԸ ՓՈԽԱՆ ԿԸՆԵԳՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ.Գրիգորյանը 1929 թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ:

### 7.ՋԱՆԱՎԱՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի №17 հեքիաթի ծանոթագրության մեջ :

### 8.ՕԺԱՎԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկու-

թյունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի N7 հեքիաթի ծանոթագրության մեջ:

### 9.ԸՌՈՒՍԵՆ ՏԸՂԱՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. Շուշի քաղաքում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի N7 հեքիաթի ծանոթագրության մեջ:

### 10.ԽԵԼՔԻ ՅԸՄ ԵԿԱ՛Լ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Շուշու շրջանի Սղնախ գյուղի բնակիչ Ավագ Հակոբյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը Սղնախ գյուղում, 1948 թ. Ամռանը:

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությանը. «Սղնախ գյուղը գտնվում է Քիրսի լանջին, Քարին տակ գյուղից ոչ հեռու: Ունի գեղեցիկ տեսք, առողջարար օդ: Տները մեծ մասամբ երկհարկ են և կարմիր ներկված թիթեղյա տանիքներով: Գլխավոր զբաղմունքը անասնապահությունն է»:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 11.ՍԸԵՐՏԸ ՔԱՐ ՄՐԱՔՈ՞ՒՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի №42 հեքիաթի ծանոթագրության մեջ:

### 12.ՄՈՐԸ ԿՈՌՆԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի №42 հեքիաթի ծանոթագրության մեջ:

### 13.ԱՌԱՆՑ ՀՈՐԸ ՆԱՆ ՄՈՐԸ ՊԱՀԱԾ ԱԽՃԻԳՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի №42 հեքիաթի ծանոթագրության մեջ:

### 14.ՄԱ̀ՐՋԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի №42 հեքիաթի ծանոթագրության մեջ:

### 15.ԿՅՈ̀ւԼԻՆ ՄՈՐԹԵՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկու-

թյունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի №42 հեքիաթի ծանոթագրության մեջ:

## 16.ՄՐՄԶԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Թամարա Շահրամանյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1956 թ. օգոստոսին, Շուշիքենդ գյուղում:

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին բանահավաքը տեղեկություններ չի թողել: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 17.ԴԵՐՎԻՇԸ ԳՅԻԴԿԱՆ ՉԱՐ, ԱՄՄԱ ԿԼՈ̀ԽԸ ԵԿԱԾ ԱՐ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Թամարա Մելքումյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1953թ. օգոստոսին, Շուշիքենդ գյուղում:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ): Բանահավաքը ասացողի մասին հայտնել է, որ «նա ուսուցչուհի է Շուշիքենդ գյուղի դպրոցում, տարիքով երիտասարդ է»: Այս հեքիաթը կիսով չափ զրույց-ավանդություն է՝ հյուսված Ղարաբաղի նշանավոր Մելիք-Շահնազարի մասին:

## 18.ՎԸԵՍԿԵ ՋԱՄԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Սարուշեն գյուղի բնակիչ, ուսուցչուհի Եվգենյա Պետրոսյանը, գրի է առել Մ.Գրիգորյանը 1951թ. ամռանը, Սարուշեն գյուղում:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 19.ՋՄՔՅԻ ԱՊԵՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ասկերան գյուղի բնակիչ Միքայել Բալայանը, գրի է առել Մ.Գրիգորյանը 1940 թ. հունիսին, Ասկերան գյուղում: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Ասկերան գյուղը գտնվում է համանուն բերդի մոտ, որը Լեռնային

Ղարաբաղի դարպասն է, նրա լայն ու ամուր պարիսպի շարունակության մեջ: Այդ բերդն ու պարիսպը հին կառուցվածք են՝ թշնամիներից պաշտպանվելու համար: Ասկերան գյուղն ունի առատ այգիներ, գտնվում է Ստեփանակերտ տանող ճանապարհի վրա»: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ.Գրիգորյանի ֆոնդ):

## 20.ՄԱՔՅԻ ԱՊՈՒՆ ՄՈՐՈՒՆ ՆԱՂԼԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ասկերան գյուղի բնակիչ Միքայել Բալայանը, գրի է առել Մ.Գրիգորյանը 1940 թ. հունիսին, Ասկերան գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 21.ՄԱՔՅԻ ԱՊԱՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ասկերան գյուղի բնակիչ Միքայել Բալայանը, գրի է առել Մ.Գրիգորյանը 1940 թ. հունիսին, Ասկերան գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 22.ԲԸ̀ԳԼԸ̀Ր ԹԱՔԱՎԵՐԻՆ ՊՈՉԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ղարաբուլաղ գյուղի բնակիչ Աշոտ Աղամյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950թ. օգոստոսին: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 23.ՉԱՐ ՊԱՌԱՎԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ղարաբուլաղ գյուղի բնակիչ Արաքսյա Համբարձումյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1949 թ. օգոստոսին, Ղարաբուլաղ գյուղում:

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Ղուլբուլաղ գյուղը գտնվում է մի սարահարթի վրա, ներքևում՝ խոր ձորում հոսում է հորդառատ գետը, գետի վրա ջրաղաց կա»: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 24.ՏԸՂԱՆ ՀՈՐԸ ՓԵՇԱԿԸՆ Ա ՍԸՎԵՐԸՄ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ղարաբուլաղ գյուղի բնակիչ Արաքսյա Համբարձումյանը, գրի է առել Մ.Գրիգորյանը 1949թ. օգոստոսին, Ղարաբուլաղ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ.Գրիգորյանի ֆոնդ):

## 25.ՍԻՐԱԿԱՆ ՊԱՀՈՂ ԿԸՆԵԳՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ղարաբուլաղ գյուղի բնակիչ Արաքսյա Համբարձումյանը, գրի է առել Մ.Գրիգորյանը 1949թ. օգոստոսին, Ղարաբուլաղ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ.Գրիգորյանի ֆոնդ):

## 26.ԱՇԿԸ ԾԱԿ ԽՈԽԱՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ղարաբուլաղ գյուղի բնակիչ Արաքսյա Համբարձումյանը, գրի է առել Մ.Գրիգորյանը 1949թ. օգոստոսին, Ղարաբուլաղ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ.Գրիգորյանի ֆոնդ):

## 27.ԳՅՈՒՎԱՄԻՇ ԿԵՎԱՆԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Չափար գյուղի բնակիչ Գյուլի Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950 թ. օգոստոսին, Չափար գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 28.ԱՂՎԵՍԸ ՆԱՆ ՃԸՂԱՑՊԱՆԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Չափար գյուղի բնակիչ Գյուլի Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950թ. օգոստոսին, Չափար գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 29.ՔԱՉԱԼ ԱԽՊԵՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Չափար գյուղի բնակիչ Գյուլի Ավագյանը, գրի է առել Մ.Գրիգորյանը 1950թ. օգոստոսին, Չափար գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 30.ԱՆԲԱԽՏ ԱԽՃԻԳՅԸ ԲԱԽՏԱՎԵՐՎՈՒՄ Ա

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Մարդակերտ գյուղի բնակիչ Սեդրակ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950թ. օգոստոսին, Մարդակերտ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 31.Ա̏ՌՈ̏ՒԾԻՆ ՆԱՆ ԿԱՏՎԻՆ ՀԱ̏ՔՅԱ̏ԹԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Մարդակերտ գյուղի բնակիչ Սեդրակ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950թ. օգոստոսին, Մարդակերտ գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 32.ԹԱՔԱՎԵՐԵՆ ԿՈՐԱԾ ԱԽՃԻԳՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Աշան գյուղի բնակիչ Վարդան Բալայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1951թ. հունիսին, Շուշի քաղաքի հանգստյան տանը: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 33.ՄԻՆ ԿՅՈՂՈՒ ՆԱՂԼԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Չանախչի գյուղի բնակիչ Մարիամ Զաքարյանը (Մինա բաջին), գրի է առել Մ. Գրիգորյանը 1928թ. հուլիսին, Չանախչի (Ավետարանոց) գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 34.ԷՇԻՆ ԲԱԴԱ ՏԱԼԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Չանախչի գյուղի բնակիչ Մարիամ Զաքարյանը (Մինա բաջին), գրի է առել Մ. Գրիգորյանը 1928թ. հուլիսին, Չանախչի (Ավետարանոց) գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 35.ՍԱԼԴԱԹԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Հերհեր գյուղի բնակիչ Մանիշակ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. հունիսին, Հերհեր գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 36.ՊՐՈՓԵՍՈՐԵՆ ՔԸ̀ՒՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

## 37.ԱՐՋԸ ՆԱՆ ՄԱՐԹԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ.Գրիգորյանը 1929թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ.Գրիգորյանի ֆոնդ):

## 38.ԴՈԼՄԱ ԻՓԻԼԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

39.ԿՅՈ̀ՒԼ ՏԸԵՌԱԾ ԿԸՆԵԳՅԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

40.ԱՇԸՂԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

41.ԱՐՋԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ քաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

42.ԱՇԿԱՎ ՏԱԼԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

43.ԽՈՐԹ ՄԱՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Սոս գյուղի բնակիչ Եսայ Եսայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1955թ. հուլիսին, Սոս գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

44.ԹԱՔԱՎԵՐԸ ՆԱՆ ՎԵԶԻՐԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղի բնակիչ Էդիկ Մելքումյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950թ. հուլիսին, Մյուրիշեն գյուղում: Ըստ բանահավաքի հաղորդման՝ ասացողը

երիտասարդ է: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 45.ԿԸՏԱԿԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղի բնակիչ Էդիկ Մելքումյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950թ. հուլիսին, Մյուրիշեն գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 46.ՓԸՌԹՈ̀ՒՇԸ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղի բնակիչ Էդիկ Մելքումյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950թ. հուլիսին, Մյուրիշեն գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 47.ՏԱՓԱԿ ԱՐՏԵՆ ՄՈՍԻՆ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Տումի գյուղի բնակիչ Աղաջան դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1953թ. ամռանը, Տումի գյուղում:

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Աղաջան դային հասակավոր, հողագործ կոլտնտեսական է: Տումի գյուղը գտնվում է մի գեղեցիկ լեռնալանջի վրա. մեծ գյուղ է: Գյուղի հետ կապված կան մի շարք ավանդություններ: Այստեղ կա մի քանդված եկեղեցի, որ կոչում են Գագիկ թագավորի աղջկա եկեղեցի: Գյուղի աղբյուրներից մեկը կոչվում է Թագավորի աղբյուր (Թիքյըլվերեն ա̀խպո̀ւրը): Գյուղից վերև բարձրանում է Տզափատը, որի ստորոտը անտառապատ և գագաթը միգամած սար է: Գյուղից ոչ հեռու կա մի բարձրություն, որ կոչվում է Ղլեն խութ:Դրա հետ կապվում են մի շարք ավանդություններ»: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

### 48.ՊԸՌՎԱԼԵՆՋ

Պատմել է Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Տումի գյուղի բնակիչ Աղաջան դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1953թ. ամռանը, Տումի գյուղում: Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ):

# ԲԱՌԱՐԱՆ

Ա

Աբասի - քսան կոպեկ

Աբուռ - ամոթ

Աղըմ - քայլ

Աղըմ-բաստըմ անել - գործը կատարել արագ, բայց անորակ

Ազադվել - ծննդաբերել

Ազափ - ամուրի

Ա̀զի - 1. տատ, 2. Մայր

Ազկ-ա̀վլա̀դ - ազգուտակ

Աթաղան-բաբաղան-հնուց սկսած, պապերից սկսած

Աթկազ - մերժում

Ալաճուկ - վրան

Ա̀լա̀մ աշխարք - ողջ աշխարհ

Ա̀լա̀մա̀թ - շատ լավ, հիանալի

Ալավ - բոց

Ա̀լա̀փռա̀նգյի - ֆրանսիացու, եվրոպացու ձևով

Ալլա̀ղ-սա̀լլա̀ղ ինիլ - հրաժարվել, ձեռք վերցնել

Ալլահյեթա̀ր - թափթփված, անշնորհք

Ալյեր (ա̀լլեր) - ալյուր

Ալչու - վեգի բարձր կողմը

Ալչու ա կագնալ վեքյը - գործերը հաջող են ընթանում

Ախեր - ախր

Ախմախ - հիմար

Ախրը վերչը - վերջապես, վերջիվերջո

Ախցան - աղցան

Ախցան անել - խիստ ծեծել, ջարդել

Აծեզյ - ածիկ

Ածել - նվագել

Ակուշկա - պատուհան

Ահետ - այնուհետև

Աղաք - առաջ

Աղվեսոթուն - խորամանկություն

Ա̀մա̀գյ - երախտիք
Ա̀մա̀լ կյա̀լ - 1. հնարավոր լինել, հաջողվել, 2. աճել
Ա̀մա̀լ պիրիլ - հնարավոր դարձնել, հաջողացնել, 2. աճեցնել
Ամանաթ - ավանդ, պահ տված բան
Ամանգյունիդը - վատ օրում եմ, խղճա
Ամարաթ - պալատ, ապարանք
Ամբար - պահեստ, շտեմարան
Ամի - հորեղբայր
Ամմա - բայց, միայն թե
Այա - տատ
Այազ - սառնամանիք, խիստ ցուրտ
Այբեջառ - տգեղ, անշնորհք
Ալին-օյին - 1. աննշան, անկարևոր, 2. թեթև կերպով
Այշի (այ քիշի) - այ մարդ
Անաբուռ - անամոթ
Անդար - անտեր
Անդար-ընդերու - բոլորովին անտեր, անտեր-անտիրական
Ա̀նդո̀ր-(ընդո̀ւր) - դրա համար
Անըմ - անուն
Անթեղնը անել - կրակը մոխրով ծածկել, որ չհանգչի
Ա̀նկյին (ա̀նգյին) - 1. թանկարժեք, անգին, 2. կնոջ անուն
Անջախ - հազիվ-հազ
Անուրի - անօրեն
Աշխանա - ճաշարան
Անջուկ - ականջ
Աշկ - 1.աչք, 2. մատանու ակ, 3. պահարանի դարակ
Աշկա ընգնել - աչքից ընկնել
Աշկա կորչիլ - աչքին չերևալ
Աշկաթող անել - անուշադրության մատնել
Աշկավ տալ - աչքով տալ
Աշկերը ա̀րո̀ւն կալած - կատաղած, խիստ բարկացած
Աչկերը ծիլի-վիլի արած - հարբած
Աշկը ծակ - ագահ

Աշկը յրան - դեռ չկշտացած, չհագեցած
Աշկը- ունքը յրա պիրիլ - մռայլվել
Աշկը ունքին կըլխան իլած - կատաղի, ինքնահավան
Աշկը օրիշի յրա - չքավոր, չունեցող
Աշկին սըվըսիպտ̀ա̀կը - մինուճար
Աշպազ - խոհարար
Աչառ - բանալի
Աչեռ - տե՛ս աչառ
Աջալ - վերջ, վախճան
Աջալը ծըրավել - վերջը, վախճանը հասնել
Ասըլ - խելոք
Աս̀թըխ - աստղ
Ասթըխը փռնել - դուր գալ, սիրվել,
Ասլան - առյուծ
Ասլան բալասի - առյուծի ձագ, ուժեղ
 Ա̀վ̀ա̀լ - անցյալում
Ատաժ - հարկ
Արխային - հանգիստ
Ա̀րշ̀ա̀ կյալ -1. ծնվել, գոյանալ, 2. աճել, հասունանալ
Ափաթ - զարմանալի
Ափաթ տանել - զարմանքն ազդելով ոչնչացնել ՝ մեռցնել
Ափաթը կտրել - ստիպել
Ափաշկարա - բացեիբաց
 Ափարիմ - կեցցես

Բ

Բաբ - համապատասխան
Բաբաթ - միջակ
Բ̀ա̀բ̀ի̀Լռ - առյուծ
Բ̀ա̀գյ - բեկ
Բադա տալ - իզուր տեղը կորցնել
Բադամ - նուշ
Բ̀ա̀դ̀ա̀ն - գոտկատեղ

Բաղարաքյ - պատարագ
Բաղարկա - նվեր
Բազար - շուկա
Բա̀զի - որևէ
Բաթմիշ անել - կորցնել
Բալամ - որդիս (կոչական)
Բա̀լի - գուցե
Բալկոն - պատշգամբ
Բա̀լքյա̀ս - գուցե
Բախշիլ - նվիրել
Բախչա (բախճա) - փոքր այգի
Բախրա - եղջերու
Բայդաղ - դրոշ
Բա̀ննա̀հ - որմնադիր
Բաշ - գլուխ
Բաշաբաշ - հավասար
Բաշիր չանիլ - անկարող լինել
Բաջի - քույր
Բա̀ստա̀միշ անել - պահել, պահպանել, պատվել
Բեդմա - պիտի
Բեխա̀րա̀ր - անտեղյակ
Բենամուս - անամոթ
Բեջիթ - շուտ
Բեքյեփ - տխուր, տրամադրությունը վատ
Բըհա̀մ կյալ - առաջանալ, գոյանալ, աճել
Բըղբըղալ - բղբղոցի ձայն հանել (կովի, եզան մասին, այլև նմանությամբ՝ մարդու մասին)
Բընո̀վրա - հիմք
Բըռնոթի - քթախոտ
Բըրիշիլ - հաշտվել
Բիբի - մորաքույր
Բիդի - պիտի

Բիդի - դեպի
Բիզբիզիլ - 1. հրել, հըրհրել, 2.հրահրրել, գրգռել
Բիժի-բիժի - կովին, հորթին կանչելու ձայնարկություն
Բիշի - զաթայի տեսակ
Բիշտի-բիշտի անել - 1. բոթել, բոթբըթել, 2. հրահրել, գրգռել
Բիչեր - կնոջ չսանրած մազեր
Բիջա̈րիլ - խնամել, աճեցնել
Բիրա̈դի - միանգամից
Բիրդա̈ն - միանգամից, հանկարծ
Բոզ - մոխրագույն
Բոզ - վարքը վատ
Բոթուլ - շիշ
Բոլ - 1. հերիք, բավական, 2. շատ, առատ
Բոլթա թակել, բոլթա թխել - 1. քայլելով անընդհատ ետ ու առաջ գնալ, 2. թրև գալ, անգործ ման գալ
Բոլլըղ - առատ
Բո̈լո̈ւկ - երամակ, խումբ
Բոխչա - կապոց
Բողազ - կոկորդ
Բոշ - թույլ
Բուդ - ազդր
Բուդուր-բուդուր կյալ - տանջվել հոգեկան կամ մարմնական ցավից
Բութա- 1. ժապավեն, 2. թանկագին, հյուսվածքների գորգերի առանձին նախշ
Բութկա - կրպակ
Բո̈ւլո̈ւդ - հախճապակե մեծ ու տափակ ափսե
Բուննան ա̈վա̈լա̈ - սրանից առաջ
Բուջի-բուջի անիլ - մատները մաշելով՝ դժվարությամբ տուն դնել
Բուսը պահիլ - ծածուկ հետևել
Բուրախ տալ - բաց թողնել
Բո̈ւրդա̈ն - տե՛ս բիրդան
Բուրջ կամ քյո̈ւնջ - անկյուն

Գ

Գյàքà - գորգ

Գյàղà - ծառա

Գյàմի - նավ

Գյàվակ (գյավակ) - գավակ

Գյղենե, գյղոտենքյ, գյաղեք - ծառաներ, սպասավորներ

Գյիդàլ - գիտենալ

Գյիլà - հատիկ

Գյիլàս - կեռաս

Գյիրàգյի - կիրակի

Գյիրթ - հանկարծ

Գյո̀զալ - գեղեցիկ

Գյոլ - լիճ, լճակ

Գյոմփիլ-դոմփիլ - շատ ծեծել

Գյոռ - գերեզման (գռեհկաբանություն)

Գյոռն չաթտասըն - քաջի հասցեին արվող գովասանական արտահայտություն

Գյրվանքա - գրվանքա

Գյո̀ւլբà - գուլպա

Գյո̀ւլլà - հրազենի գնդակ

Գյո̀ւլլàս - նույնն է՝ գյիլàս

Գյո̀ւլլո̀ւ բաղ - պտուղներով ծանրաբեռնված այգի

Գյո̀ւլո̀ւլ - կլոր սիսեռի չափ հատիկ

Գյուման անել - մեկի վրա կասկածել

Գյունաքար մընալ - զարմանքից ապշել, փոշման մնալ

Գյուվամիշ - ինքն իրեն գլուխը գովող

Գյո̀ւրգյ - գոգ

Գոգ - կոտ

Դ

Դàբբà տալ - վատություն, թշնամություն անել

Դաղարգյուն - թափառական, տնից-տեղից հեռացած

Դàլàլ - առևտրի միջնորդ

Դալդա - 1, թաքուն, 2. թաքուն տեղ

Դա̀լի - գիժ
Դա̀լլա̀ք - վարսավիր
Դալու - թիկունք
Դաղ - 1. սար, 2. վերք
Դաղվել - այրվել, խորովվել
Դա̀մքաշ (դա̀մը պահիլ) - փողահարի նվագի ձայնը պահել
Դայամիշ ինիլ - հոգնել, նեղանալ
Դայի - քեռի
Դա̀ն - հացահատիկ
Դանա - հորթ
Դա̀նա̀ - 1. հատ, 2. հատիկ (Մին դա̀նա̀ յա - աշխարհումս մի հատ է)
Դանգլա - հիմար, ապուշ
Դա̀նգյ անել - գլուխը ցավեցնել, անհանգստացնել
Դա̀ստա̀ - փունջ
Դա̀ստի - իսկույն, շուտափույթ
Դա̀վա̀ - ուղտ
Դավեր յա - վստահություն
Դավի տալ - վիճել
Դա̀րա̀ - 1. կողմ, սահման, 2. կիրճ. էտ (էս, էն) դարըմը - այդ (այս, այն) ժամանակ
Դարանդազ - տարանտաս, մեծ սայլ, ֆուրգոն
Դա̀րբա̀զա - դարպաս
Դա̀րդ - վիշտ
Դարյա (դերյա) - կանացի զգեստ, շոր
Դա̀րվիշ - դերվիշ
Դնդյո̀ւն - խաղատիկնիկ
Դեհա - շուտ
Դեհա հա դեհա - շուտ-շուտ
Դեր - տերտեր
Դըբետ-ետ: Դըբետ կաղնիլ - ետ կանգնել
Դըբըրեթկա (տաբուրետկա) - աթոռ
Դըբրո̀ւգյո̀ւն-իրիկնամուտ
Դըբրուգյունաչախը - իրիկնամուտին

Դընոտենքյ - հորթեր
Դըրդոռանչ - խարույկ, տյառն ընդ առաջ կրոնական տոնի անվանման աղավաղված ձնն է
Դըռնաղ, դըռաղն - սմբակ
Դըրդըհան ինիլ - դարդերը պատմել, դարդերից թեթևանալ

Ե

Եթիմ - որբ
Եխնել - հաղթել
Եխնվել - հաղթվել
Եմիշ - սեխ
Եշիլ - նայել
Ետավ - հետո
Ետ կյալ - 1. ուշքի  գալ 2.նյութականը փոքր-ինչ բարելավել, 3. առողջանալ
Ետնան - հետո
Ետ տըեռնալ, ետ տա̈ռնա̈լ - վերադառնալ
Եր (յըեր) ածել - թափել
Երի - վերևի

Զ

Զախոտ - արտաքնոց
Զակազ - պատվեր
Զա̈հլա̈ տանել  (զա̈հլա̈քո̈ւշ անել) - ձանձրացնել
Զա̈հմ - ահ, վախ
Զահման - սահման
Զա̈մբո̈ւլ - զամբյուղ
Զա̈նդյ - զանգ
Զա̈նգյո̈ւ - ասպանդակ
Զապիսկա - գրություն
Զա̈ռ - ոսկեթել, ոսկեգույն
Զա̈ռվա̈րա̈զ - ոսկեջրած
Զատ - բան, իր, խոսք
Զեմքուճ - զոքանչ
Զըեռ - մեծ

Զընգոլակ - փոքր զանգակ
Զըրթա̀րված - զարդարված
Զիբիլ - աղբ
Զիզի - գեղին գույնի վայրի բույս
Զիլ - բարձրաձայն
Զիլզիլա̀ն - հովասուն, հով (քամու մասին)
Զինքյը - իրեն
Զինքյը օտել - խիստ անհանգիստ լինել, ինքն իրեն ուտել
Զիրավ անիլ - զբաղեցնել, իրենով անել
Զիրավ յոլա քյինիլ - մի բանով մի կերպ ապրել
Զիրավ տալ - փաթաթել մի բանի վրայով (թել, գոտի, թոկ և այլն)
Զոլ - շերտ
Զոնթիկ - հովանոց
Զոննի քյինիլ - ուղիղ և արագ գնալ
Զոռի - ուժեղ
Զորբա - մեծ, ուժեղ
Զվանոկ - զանգ, զանգի ձայն
Զո̀ւլո̀ւմ - սարսափ
Զումբրուտ - 1. թանկագին քար՝ կանաչ գույնի, 2. կնոջ անուն, 3. թռչունի անուն
Զուռնա-ղավալ-երաժիշտներ՝զուռնա նվազող, թմբուկ խփող և դամ պահող
Զո̀ւրթնա̀նա̀լ - արթնանալ
Զո̀ւրո̀ւց - զրույց

Է

Էլհա - նորից
Էխշ- ոգևորություն
Էխշը հավաս - շնորհք
Էն բաշտան - էն գլխից, սկզբից, վաղ
Էն հանգին - այն ձևով
Էս հի՞նչ իլլա̀թ-միլլաթ ա - այս ո՞վ է, այս ինչ մարդ է
Էվո̀ւլ (ա̀վիլ) - ավել
Էրգյա̀ն - երկար

Էրիլ - այրիլ
Էրկու - երկու
Էրկուինջի (էրկունջի) - երկրորդ
Էրկու վըեննը մին չմշկում տինիլ - համառել, իր ասածին լինել
Էրկուվըննանե - մարդ
Էքսը - մյուս օրը
Էքուց - վաղը

Ը

Ըբ̀աստ - նեթ
Ըզետ - այդ
Ըզըզամըռ - սիրելին մեռած (անեծք է)
Ըթտըբաթտի ինիլ - կորչել
Ըլըբաստրակ - նապաստակ
Ըխպըհար - աղբանոց
Ըխպըրնե - աղբյուրներ
Ըղորթ - ճիշտ
Ըմբրնե - ամբարներ
Ընգուճումը խոսել - ծածուկ խոսել
Ընդետանը - դրանից հետո
Ընդի - այնպես
Ընդրա - նրա
Ընդ̀ուր - դրա համար
Ընըմավեր - անունով, նշանավոր
Ընչանք - այնքան
Ըշկըլ̀ուա̀նք - շնորհավորանք
Ըշկըճեպ - ակնթարթ
Ըշտափել - ուշաթափվել
Ըշտեղ - որտեղ
Ըչրնե - բանալիներ
Ըջըղվել - բարկանալ, հակառակվել
Ըռըշկեն (ըռաշկեն) - առաջը
Ըռըշկետան - գոգնոց
Ըռըշտոտալ - հորանջել

Ըռնել - աճել (սածիլի, պատվաստի սին)
Ըռնըթաթախ - արյունաթաթախ
Ըռնըփալալ - արյան մեջ ողողված
Ըռնիլ - արյուն գնալ
Ըռութանա - առավոտյան
Ըսես ըս թուղես կամ ասըմ ըս թողըմ - ասում ես թողնում
Ըսկի - բոլորովին
Ըսկուսուր - կեսուր
Ըստըեղ - այստեղ
Ըստեղերք - այս տեղերը
Ըստըկցնիլ - սատկեցնել
Ըստուծանա - աստծուց
Ըստուր - սրան
Ըստեղերք - այդ տեղերը
Ըրա̏զա̏վ ընգնիլ - երազ տեսնել
Ըրբա (ըրաբա) - սայլ
Ըրեսուն - երեսուն
Ըրըզնե - երազներ
Ըրըկյո̏ճի - իրականում
Ըրիքյնակ - արեգակ
Ըրխըյին - հանգիստ
Ըրկնցնել - երկարացնել
Ըրկոքան - երկուսով
Ըրկուհո̏ւքյիս - հղի
Ըրվաց - երևաց
Ըրփըվերի - այրի

Թ

Թաղարեքյ (թաղարեք) - պատրաստություն
Թա̏զա̏ - նոր
Թա̏զա̏դան - նորից
Թա̏զա̏գյա̏լա̏ն բեխաբար - անտեղյակ, անփորձ (ծաղր)
Թալակ - թակարդ, որոգայթ

Թալան - ավար
Թախկուճ - սանրելուց հետո մնացած մազեր
Թախտ - 1. գահ, 2. նստելու համար տախտակյա երկար կահույք
Թամահ - 1. մի բան ձեռք բերելու ձգտում, 2. ագահություն
Թա̀մո̀ւզ կամ թա̀մո̀ւզ-թա̀քյո̀ւզ - մաքուր
Թայղի - շտապ
Թայը թուշ - ընկեր, համապատասխան(մարդու մասին)
Թանավ - սպաս
Թա̀նթո̀ւլ - գազանի թաթ
Թա̀ռ - արևելյան երաժշտական գործիք
Թառանչ - հառաչանք
Թառլան - ջահել, գեղեցիկ, աշխույժ
Թառ ինիլ - թառ լինել
Թա̀վիլ (թա̀վո̀ւլ) տալ - գլորվիլ, գլոր-գլոր լինել
Թավլա - գոմ
Թա̀սա̀կ - գիշերային գլխարկ
Թա̀րա̀փ - կողմ
Թա̀րա̀քյամա - քոչ
Թա̀րգյը տալ - վերջ տալ
Թա̀րիփ - գովք
Թա̀րս - հակառակ
Թա̀րսին ծին եր ինիլ - հակառակվել
Թա̀փա̀ - կողմ, լանջ, գագաթ
Թափան - փորոտիք
Թա̀փա̀նչա̀ - ատրճանակ
Թափշուր անել - 1. պահ տալ, 2. հանձնարարել
Թափուր - դատարկ
Թեգյունք - թիկունք
Թեյնը տալ - թիկն տալ
Թեշտ - լվացքի թիթեղյա տաշտ
Թեփուր - փետուր
Թեքյ ընգնիլ - 1. պառկել, 2. անկողնային հիվանդ դառնալ
Թըլընես կամ թըլանըմ ըն - թալանում են

Թըխել կամ թխիլ - հարվածել, խփել
Թըկըմհակ - կռիվ, ծեծ
Թըմամել - լրանալ
Թըմաշա - հանդես, հանդեսի նայելը
Թըմըզվել կամ թամըզվիլ - մաքրվել
Թըռթըռալ - կենսուրախ լինել
Թըռմռշկել - թառամել
Թըվա̀նգյ - հրացան
Թըվյըլ-թավիլ ինիլ - թավալվել, գալարվել
Թըվքատոն - ջաղացի մի մասը
Թըփա̀նգյ - հրացան
Թըքըմոր տալ - ամոթանք տալ, թուքումուր տալ
Թիքյա̀ - կտոր, պատառ
Թո̀զ - փոշի
Թոթ - թութ
Թոխկա - գոտի
Թոխմախ - թութ թափելու փայտ, հաստ ձեռնափայտ
Թոխպ - ամպ, թուխպ
Թոխս - թուխս
Թոխտ - թուղթ
Թոշ - թուշ, այտ
Թոռ - անձրև
Թոռչի - ձկնորս
Թոր - թուր
Թո՞րն ըս քյինամ - ո՞ւր ես գնում
Թորնըսքյինամ, թորըզքյընամ - անգրագետ և անկիրթ (ծաղր)
Թոփ  թնդանոթ
Թոփազ  թանկագին քար
Թոփալ  հաստ և կարճ
Թոքը նի կենալ - 1. խիստ ծարավել, 2. խիստ բարկանալ
Թուբուն - խումբ, բոլորը
Թուպ ինիլ - գլորվել
Թո̀ւլ պենջա̀ր - թույլ կազմվածք ունեցող

Թումբ - բլուր
Թո̀ւնգյի - գինու չափ, գինու աման
Թո̀ւնդ - ուժեղ
Թո̀ւնի - խեղճ ու կրակ
Թո̀ւնի հարայ - ծաղր, ուղղված խեղճ ու կրակ, ծույլ, իրեն կորցրած մարդուն
Թուշ - ուղիղ, դիմացը
Թուշ ինիլ - հանդիպել
Թուրուն, թորեն - թոնիր
Թուփ անել - հավաքել
Թուփ տըեռնալ - հավաքվել
Թո̀ւքյ - շան, կատվի մազ

Ժ

Ժամ - եկեղեցի
Ժամ ասել - ժամերգություն անել
Ժա̀նգյա̀լ (ժենգյա̀լ) - կանաչի
Ժեժտ - թիթեղ
Ժեվ - ուլունք
Ժինջիլ - շղթա
Ժո̀ւլիգյ - 1. խաբեբա, խարդախ, 2. խորամանկ
Ժո̀ւլիգյվա̀չի - 1. խաբեբայությամբ, կեղծիքով, 2. խորամանկորեն
Ժուկ - ժամանակ

Ի

Իժան - էժան
Իժընանոց - էժանագին
Իլա̀լ - եղել
Իլա̀ծ-չիլա̀ծ - եղածը, ողջ ունեցվածքը
Իլա̀ջ - հնար, միջոց
Իլլա̀քյըմ - մանավանդ
Իծա̀րա̀ծ - այծ պահող
Ինա̀դ անել - կողքի ընկնել, համառել

Ինդի - այնպես
Ինիլ - լինել
Ինիս ա, չինիս - լինում է, չի լինում
Ինջիմիշ - նեղություն
Ինսան - մարդ
Ինքյ օնիլ (առնիլ) - գնել
Ինքյն ո̀ւրա̀ն հըվաքիլ - ինքն իր վրա իշխել, զգաստանալ
Իշեղ - շող, լույս
Իշկյա̀ր թա կյա̀ր - երանի թե գար, գուցե գար
Իշտա̀հ - ախորժակ
Իստի - այսպես
Իստիբուջաղ - դժոխք (անեծք)
Իտի - այդպես
Իրես - երես
Իրեսեն ճըրա̀վը - չօգտագործած, ձեռք չտված
Իրեսը պեց - համարձակ
Իրեսը պըրթըճիրավ լվացած - անամոթ
Իրեսը տինել վըեննի տակին - խոնարհվել
Իրեք - երեք
Իրեքտակ - եռապատիկ
Իրիքյնակ կամ ըրեքնակ - արեգակ

Լ

Լա̀գյա̀ն - պղնձի լայնաբերան աման
Լա̀զա̀թ - հաճույք, բավականություն
Լա̀զա̀թին - համով, հաճույքով
Լակ - 1. Փչացած, հոտած (ձվի մասին), 2. դատարկագլուխ
Լամբ - նավթե ճրագ
Լայըղ անել - բարեհաճել
Լանթ - ցնցոտի, կեղտոտ՝ մաշված փալաս
Լանթ ա - ծանրաշարժ է
Լանթ-լանթ անել - կոպիտ պատասխաններ տալ
Լանթըմիթել - մաշված, պատառոտված ու կեղտոտ անկողին

Լչչկ - կանացի եռանկյունի գլխաշոր
Լչչռ - սանձարձակ
Լապաթկա - բահ
Լցց- լաց
Լափ - բոլորովին, ավելի
Լափ առռէ (լափ առռի) - միանգամայն, բոլորովին
Լափու տալ - ալիքները ափին հարվածել, լափին տալ
Լէն - լայն
Լէնթ - ժապավէն
Լէնջ - լանջ
Լէշ - սատկած անասունի մարմին
Լըղ տալ - լող տալ
Լըղար - մաշված, նիհար
Լըղէ, լըղի - լեղի
Լըղէն ճաքել - վախենալ
Լընգլընգալ - աջ ու ձախ օրորվել
Լըվասկ - լվացք
Լո̈ւզո̈ւ - լեզու
Լո̈ւզո̈ւն փալթննգյ - կակազ

Խ

Խաբար - լուր, տեղեկություն
Խցզցզ - վայրի կանաչի՝ կծու համով
Խազալ - 1. փայտը ռանդայով տաշելուց առաջացած խոպոպաձև մնացորդները, 2. տերևաթափի չորացած տերևները
Խցզնց - 1. գանձ, 2. հարստություն
Խաթա - վտանգ, փորձանք
Խաթաբալա - անհաջողություն, փորձանք
Խալ - նշան մարմնի վրա
Խալաթ - 1. նվեր, 2. տնային լայն հագուստ
Խալաստոյ - ամուրի
Խալիս - զուտ, մաքուր
Խալխ - ժողովուրդ

Խալյար - եփելու ու տապակելու բույս, սխտորի համով
Խալվաթ - առանձին, թաքուն
Խամ - անփորձ
Խային - 1. նախանձ, 2. անուղղամիտ
Խանըմ - անվանի տիկին, հարուստ կին
Խանձող - կիսաայրված փայտ
Խաշիլ - տեղական հատուկ կերակուր՝ ձավարից, յուղից ու չորթանի թանից պատրաստած
Խասիլ - խսիր
Խասյաթ - բնավորություն
Խարաբա - ավերակ
Խե՞ - ինչո՞ւ
Խեր - օգուտ
Խըմելն ըբա̀ստ հա̀րփիլ - խմելուց անմիջապես հարբել
Խընձըռ(ն)ավըետ - այրված շորի հոտ, այրվածքի հոտ
Խընջլոզ - եփելու բույս
Խըռավիլ - խռովել
Խըռըզնըհատ ինիլ - անեծք
Խըռնըշփոթ - խառնաշփոթ
Խըտետ - գիրկ
Խըտտել - գրկել
Խըրաված - խորոված
Խըրեգյ (խրեկ) - քիչ
Խըփըխափի անել (անիլ) - շատ անգամ խաբել
Խյար - վարունգ
Խո̀լո̀ւնք (խելունք) - խելոք
Խոխա - երեխա
Խոխա ըախա (խոխա ըրախա) - երեխաներ
Խոնչա - 1. երկար, քիչ խորավուն փայտյա իր՝ խմորի գնդեր և հաց տեղափոխելու համար, 2. նշանի հարսանիքի խոնչա՝ կլոր պղնձե սինի՝ հարսի նվերներով:
Խոշկյա̀բա̀ր - չոր մրգեղեն
Խոսկը շըքյա̀րա̀վ կտրիլ - խոսքը ընդհատել մեղմ ձևով

Խոսկը տափը քըցիլ - խոսքը չկատարել, մերժել
Խորա̀զյ - կերակուր
Խուխատար - երեխատեր
Խուտուրու - չնչին, անկարևոր
Խուրջին - երկու իրար միացած պարկ է, բրդե թելից նախշերով գործած՝ ուսին գցելու համար

Ծ

Ծա̀խ - ձախ
Ծակ - անցք
Ծանդըր - ծանր
Ծասկել - ծածկել
Ծասկի-սատկի անիլ - թաքցնել
Ծեխ - ձախ
Ծեն - ձայն
Ծեն-ծպուտ - հազիվ լսելի ձայն
Ծեն տալ - կանչել
Ծերան - ծիրան
Ծեքյ - ծեզ, արևածագ
Ծեքյը տալ - արևը ծագել
Ծըզանա - ձեզանից
Ծըեռք - ձեռք
Ծըծըղատեղ ինիլ - ծաղրի առարկա լինել
Ծըմակ - անտառ
Ծըմերուկ - ձմերուկ
Ծըմըռնըհան ինիլ - ձմեռը անցկացնել,հասնել գարնան
Ծընդըրթիթև անել - 1. ձեռքով մի բանի ծանրությունը որոշել, 2. կշռադատել
Ծընեփակ - ուտելու վայրի բույս
Ծընըթկան - ծննդամայր
Ծըռոտենքյ - ծառաներ
Ծըռքաձուրը լա̀վ ինիլ - որակյալ արհեստավոր լինել
Ծըեռքըյայլեխ - թաշկինակ

Ծըվալ - բղավել
Ծըվանգյը կտրած - թույլ ձայնը կտրած
Ծըվվան - շվի, սրինգ
Ծըքյծըքյոտել - արևը դեռ նոր դուրս գալ, դեռ միայն շողերը երևալ
Ծի - ձի
Ծիյավեր - ձիավոր
Ծիքյ տալ - ձգել
Ծո՞ր - ձոր
Ծո՞ւլ - ծույլ
Ծո՞ւկնամըես - մարդու ոտների մկանները
Ծո՞ւկնը (ծուկուն) - ձուկ
Ծում պահել - ոչինչ չուտել ըստ կրոնական հին սովորության
Ծո՞ւն - ձյուն
Ծո՞ւրո՞ւնի - ծերունի

Կ

Կազան - գազան
Կախ տալ - 1.կախել, 2. կախաղան բարձրացնել
Կածան - նեղ ճանապարհ
Կահ - գահ
Կաղլեգյ (կաղլիկ) - կաղ
Կամնը - կալսելու գործիք, կամ
Կայք - կարողություն
Կանդրախդ - (կոնտր ակտ) պայման
Կանոխ - շուտ, վաղ
Կանվերթ - ծրար
Կապան փըռնած - կապից բռնած
Կապեկ - կոպեկ
Կապը կտրած - սանձարձակ
Կավ - կով
Կավազան - ձեռնափայտ, գավազան
Կարավաթ - մահճակալ
Կարկած - 1. դդում, 2. զանգ, զլուխ

Կարտ- խաղաթուղթ
Կարտի տալ - խաղաթղթով զբաղվել
Կեթ - կիթ
Կըեռեքյ (կըեռիքյ) - ատամ
Կըդարիլ - կատարել
Կըզնվիլ - բարկանալ
Կըզտի-պզտի - մանր-մունր, փոքր
Կըթնահունց - կաթով հունցած խմորեղեն
Կըլըկյ̀ապին անել - խաբելով ստիպել
Կըլխա տանիլ - գրավել, դեպի իրեն քաշել
Կըլխան ռադ անել - իրենից հեռացնել
Կըլըկոնձի տալ - գլխի վրա գլորվել
Կըլխըյեր - վեր, դեպի վեր
Կըլխըվեր - ներքև, դեպի ներքև
Կըլխին զոռ տալ- 1. իզուր մտածել, 2. Ավել-պակաս խոսել
Կըլխին ծի քացե տալ - անկարելի գործ բռնել, անձը վտանգի ենթարկել
Կըլխին յրան տնզվիլ - մեկին նվիրված ծառայել
Կլը̀ըխ - գլուխ
Կըլը̀ըխ ընգնիլ - հասկանալ
Կըլը̀ըխ տալ - բարևել, խոնարհվել
Կըլը̀ըխը բաղի տալ - վտանգի ենթարկվել իզուր տեղը
Կըլը̀ըխը թակ օտիլ - ծեծվել
Կըլը̀ըխը կըլխի տինիլ - ամուսնանալ
Կըլը̀ըխը մոշավ անել - գլխին մոշ ցանել (անմեղ անեծք է)
Կըլը̀ըխը յոր օնիլ կորչիլ - հեռանալ
Կըլը̀ըխը յոր չօնիլ - գլուխը չվերցնել
Կըլը̀ըխը շոռ տալ - գլուխը պտտվել
Կըլը̀ըխը պահիլ - մի կերպ ապրել
Կըլը̀ըխը պուք տալ - գլուխը պոկել, սպանել
Կըլը̀ըխը վարել - խաբել
Կըլը̀ըխը օռչիլ - շատ մտածել, մտածելուց հոգնել
Կըլը̀ըխը օտիլ - սպանել

Կըծըկրակ - 1. կայծակ, 2. բնավորությունը խիստ
Կըծուխուր - կծոխուրե կոչվող թփի պտուղը՝ մանր կարմիր, թթվաշ
Կընանչի - կանաչի
Կընդ - կենտ
Կընդ-կընդ - մեկ-մեկ
Կընձըմունձուկ - վայրի կանաչի
Կըչկըչալ - լիաթոք ծիծաղել
Կըռըզնոտ - զանգուր
Կըռըմեռ - ոլորապտույտ
Կըռըմո̈ւզո̈ւկ - դառն համով, վայրի, ուտելու բույս
Կըռնատակ - թևի տակ
Կըտըզ - փոքր
Կըրճալած-ըրգյնալած - կարճանալ-երկարանալ ծեծելու ժամանակ
Կիճի - փոքր
Կյալ - գալ
Կյրա̀մո̀ւր - կարմիր
Կյարունք - գարուն
Կյարունքացան - գարնանացան
Կյեզ - գազ, երկարության լափ
Կյեղել - թաքցնել
Կյենալի շո̈րեր - հագնելու շորեր
Կյեռթնուկ - գորտ
Կյեվաթ - գավաթ
Կյերի - գերի
Կյըետ - գետ
Կյըռկյոռալ - գոռգոռալ
Կյիզիլ - զզել
Կյին - գին
Կյիշըկյրող - շատ տգեղ
Կյիվող - եկող
Կյիր - գիր

Կյիրաղենքյ - հաստ աղիք
Կյիրին եշիլ տալ - գրքացի մոտ գնալ
Կյիրին սըեվը-սիպտակը զյիդա̀լ - գրել ու կարդալ իմանալ
Կյից - բուռ
Կյնա̀զո̀ւխ - ուտելու վայրի բույս
Կյող - գող
Կյողլը կենալ - թաքնվել
Կյոռալ - գոռալ
Կյոտե (կյոտիկ) - գոտի
Կյո̀տկատեղ - գոտկատեղ
Կյործել - գործել, հյուսել
Կյո̀ւթա̀ն - գութան
Կյո̀ւլ - գայլ
Կյո̀ւղ - գյուղ
Կյուղանալ - գողանալ
Կյում - գոմ
Կյումաշ - գոմեշ
Կյո̀ւշ - փայտե խոր աման
Կյո̀ւտ-կյո̀ւտ - կույտերով
Կունթոռուճ - տե՛ս քունթոռուճ

Հ

Հա̀յբա̀ - փոքր խուրջին
Հա̀ջա̀թ - գործիք
Հա̀ջա̀թ ա - պետք է
Հասար - քարուկրից ցանկապատ
Հասրաթ - կարոտ
Հավա - 1. եղանակ, 2. պարելու եղանակ
Հավալամիշ ինիլ - կատաղել
Հավան նստիլ - կատաղությունն անցնել, հանգստանալ
Հա̀վսա̀լա̀ - համբերություն
Հատե - ա՛յ
Հարամ - վատ, պիղծ
Հարամ կթնակեր - վատ մարդ, պիղծ մարդ

Հարամզադեքյ - վատ մարդկանց վատ զավակներ
Հարամի - թշնամի
Հարթնը - հարս
Հաց թըխցնել (հաց թըքցնել) - հնացած հացը կրակի վրա տաքացնել
Հափուռ - բուռ
Հա̀քյիմ - բժիշկ
Հեյվան - անասուն
Հենգյ - հինգ
Հեսաբ - հաշիվ
Հեռե - հեռու
Հետան -հետևից
Հետի - համար
Հերս - բարկություն
Հըեռ - ցավ
Հըզեր - հազար
Հըթիոթիլ - հոտոտել
Հըլբրի̀լ - իսկույն
Հըլլո̀րիլ - ոլորել
Հըղե - ճանապարհ
Հըղեցը - ճանապարհին
Հըղըցավեր - ճանապարհորդ
Հըճարե - հաճարի ծառ
Հըմանչիլ - ամաչել
Հըմբարիլ - հաշվել
Հընգերունք - ընկերներ
Հընդըստան - Հնդկաստան
Հընդրել - ընտրել
Հըռնուցանա - հեռվից
Հըռշնիլ - կարմրել
Հըրթնքատուն - հարսանքատուն
Հըրսանեքյ - հարսանիք
Հըրսո̀տված - ջղայնացած, բարկացած

Հիբ - երբ
Հիլի - հայելի
Հիմնիլ - հիմնել
Հինա̀ր - հնար
Հինա̀րռու - ուժեղ, շատ ուժեղ
Հինչ - ինչ
Հիշքան - ինչքան
Հո̀ջա̀թ - վեճ
Հոռ - ողնաշար
Հոռ անել - ուժ՝ ջանք գործ դնել մի բան անելու համար
Հովսա̀լա̀ - համբերություն
Հովուզ - ջրհոր
Հոր - որտեղ
Հոփ տալ - սեղմել, նեղը գցել
Հոքյնարք - հոգևարք
Հրաշկ - հրաշք
Հու - ով
Հո̀ւլի շա̀վթա̀լի - հուլի կոչված դեղձ
 Հո̀ւլլո̀ր-պո̀ւլլո̀ր անիլ - կլորացնել
Հո̀ւլո̀ւմա̀լա̀գյ - չտեսնված գեղեցկուհի
Հուլունք - ուլունք
Հո̀ւնա̀ր - ուժ, հնարք
Հունց - ոնց
Հունցու - ինչպես
Հո̀ւշըրներան քյինիլ - ուշաթափվել
Հու վա - ով է
Հո̀ւր - ում
Հո̀ւրթ - երթիկ, ծխնելույզ
Հո̀ւրի-փա̀րի - փերի, հավերժահարս, գեղեցկուհի
Հո̀ւքյըվըրթի - հոգնորդի, որդեգիր
Հո̀ւքյի - հոգի
Հո̀ւքյին տալ - շունչը փչել, մեռնել

Ղ

Ղաբ - բարձի աստառ

Ղաբուլ - համաձայնություն

Ղադիր - պատիվ, արժանապատվություն

Ղազ - սագ

Ղազաբ - ցավ

Ղազարի կյալ - հիվանդանալ, ցավի գալ

Ղազան - կաթսա

Ղաթ - արանք

Ղալ - չորս կողմը պատնեշած՝ անասուններ պահելու տեղ

Ղա̀լբ - 1.ծույլ, 2. կեղծ

Ղալիբ - կաղապար

Ղա̀մա̀ - սուր

Ղա̀միշ - եղեգ

Ղամշի - մտրակ

Ղայմաղ - կաթի սեր

Ղայսար - ցուրտ, սառնամանիք

Ղանջըղ շոն - էգ շուն

Ղա̀շա̀նգյ - գեղեցիկ

Ղաչաղ - ավազակ

Ղաչանք - աղաչանք

Ղաչանք, միննաթ անիլ - շատ խնդրել

Ղառի - ծեր թուրք կին

Ղասաբ - մսագործ

Ղասաբխանա - միս ծախելու տեղ, մսի խանութ

Ղա̀սիդ - դիտմամբ

Ղարաբաղու ճըրան խմել - Ղարաբաղի օղուց խմել

Ղարաչի - գնչու, բոշա

Ղարավաշ - աղախին

Ղարավուլ - պահակ

Ղարիբ - օտարական

Ղարկիլ - ուղարկել

Ղա̀փա̀զա - վանդակ

Ղափաղ - կափարիչ
Ղափան - քաղաք բերած մթերքների վաճառման հարկ վերցնելու, տեղը
Ղե տալ - կանչել
Ղեյնը - եղունգ
Ղըղըղա - արգելք
Ղըլեզչի - ամաններ կլայեկող
Ղըլմըղալ - աղմուկ, իրարանցում
Ղըմենե - սրեր, թրեր
Ղընամիշ անիլ - մեղադրել
Ղըռըխմիշ ինիլ - տխրել
Ղըսմա̀թ - արժան, արժանի
Ղըրաղ - առանձին տեղ
Ղըրղըղուլի խարդախ, նենգորեն գործող
Ղըրըլթու - սիլուետ
Ղորթ - ճշմարիտ
Ղըրկել - ուղարկել
Ղըրղնե կամ ղըրղընեքյ - ափեր, եզրեր
Ղինար-ղինար կըտորիլ - կտոր-կտոր անել
Ղոլ - կողմ
Ղոնախլըղ - հյուրասիրություն, ճաշկերույթ
Ղոնաղ - հյուր
Ղոշուն - զորք
Ղոչի - կռվարար, կատաղի անձնավորություն
Ղոչի տալ - ճակատ ճակատի խփել (ոչխարների մասին)
Ղոչչաղ - քաջ, աշխատասեր
Ղորմի - ողորմի
Ղորփեր - հորեղբայր
Ղուզի - գառ, բալիկ
Ղուզղուն - արծիվ
Ղութի (ղոթի) - ղազաղ
Ղուլ - ծառա
Ղումաշ - 1. նուրբ, 2.կնոջ անուն

Ղումար - մոլի խաղ (փողով)
Ղուշ - թռչուն
Ղուրբան - մատաղ
Ղուրուղ - արգելված արոտավայր
Ղուփուլ - կափարիչ

Ճ

Ճա̀թ - կորեկ հաց
Ճակատը կյումաշու կաշի - պնդաճակատ
Ճաղ - պողպատե բարակ ձող՝ գուլպա գործելու համար
Ճա̀շ - ճաշ
Ճապկե - վայրի ծառի մի տեսակ
Ճար - 1. դեղ, 2. թույն
Ճար տալ – 1. թունավորել, 2. բուժիչ դեղ տալ
Ճարել - գտնել
Ճարը կըտրած - ստիպված
Ճարը փիթիգյ անիլ - դեղ ու դարման անել
Ճելլի - շուտ, արագ
Ճեխ - ցախ
Ճեխկ - արանք
Ճեպռել - 1. չանգռտել, 2. ծառի պտուղը տերևախառն ու արագ պոկել
Ճըլըմկոտալ - հորանջելով մարմինը կոտրատել, ձգվել
Ճըլլո̀րել - թառամել
Ճըկըճոկե անել - մի աչքով չնայել, անհավասար վերաբերվել
Ճըկըտակյիր - ճակատագիր
Ճըղղալ - բղավել
Ճըղմաղենքյ - աղիք
Ճընապար - ճանապարհ
Ճընապարը թեքյ տըվավ - ճանապարհից թեքվեց, շրջվեց
Ճընթըռնի - ցնցոտիներ
Ճըպաղել - ճապաղել
Ճըպատ - ճիպոտ

ճըպըպորիլ - ավելի շատ չանգռտել
ճըպռտիլ - չանգռտել
ճըռ̀քյիլ - ուժեղ լույս արձակել
ճըռճըռկ - ջրալի բույս, օգտագործում են կոտապի համար
ճըռճռուփել - շատ պտուղ վերցնել
ճըվարան - կողով
ճըր̀վեր - ջրհոր
ճրրըկուտեմնը - ջրերի ափին աճող կոտեմ
ճըքճըքոտել - ճաքճքել
ճիթ - ողկույզ
ճինճի պումբի անել - որորվելով քայլել
ճինճի - ճոճ, ճոճանակ
ճինջիլ - ջնջել
ճիտ - վիզ
ճիտ անել - գրկախառնվել
ճիր̀քյ կամ ճըր̀քյ - ճրագ
ճոթ - 1. կտորեղեն, 2. կտոր (քու ճոթըտ ա - քեզ նման է, քո կտորն է, քո ընկերն է)
ճոթ անել, անիլ - բաժին անել, բաժան- բաժան անել
ճոխտ - ջուխտ, զույգ
ճոկ - առանձին
ճոկ պըեն - առանձնահատուկ բան, չտեսնված բան
ճողնը - ճյուղ
ճոնդ - ծայր
ճո̀րե - ջորի
ճո̀րեքյ (ճո̀րո̀տենքյ) - ջորիներ
ճուխտեքան - երկուսը միասին
ճուղուպուր - ընկույզ
ճո̀ւճո̀ւ անել - հավերին կանչել
ճում - հողի կոշտ, գունձ
ճուր - ջուր
ճուր տըեռնալ - քրտնել
ճուրն ա տըեռալ աշխադանքը - աշխատանքը իզուր է անցել

Մ

Մագազին - խանութ

Մադալյոն - մեդալյոն

Մա̀դա̀ն - հանք

Մադար - մինուճար

Մազադ - ծաղր

Մազադ անել - ծաղրել

Մազերան ճըլոլանք իլած - զարմացած

Մազերը բիզ-բիզ կագնել - սարսափել, վախենալ

Մազը ծըռվե վըեչ - վնաս չհասնի

Մա̀թ մընալ - զարմանալ

Մա̀թա̀լ մնալ - զարմանալ

Մախմուր - թավիշ

Մահլըմ անիլ - երևալ, նկատելի դառնալ

Մաղբուն ա իլա̀լ - իզուր կորել է, իզուր փչացել է, իզուր մեռել է

Մայա - մակարդ (մածնի, պանրի)

Մայա տինիլ - որևէ գործ ձեռնարկելիս կանխիկ փող դնել

Մայիլ ինիլ - հիանալ, զմայլվել

Մա̀նզզիլ - որոշ տարածություն

Մա̀նգյա̀նա - ճնշիչ մեքենա

Մանեթ - ռուբլի

Մանի պատճառ

Մաննը կըծել - գլխի ընկնել, հասկանալ գաղտնիքը

Մաշկ (մեշկ) - մեջք

Մաշկել - մորթին հանել (կենդանու)

Մաշկիտ հոռը կոտրի - (անեծք է) մեջքդ կոտրի, ծանր վիճակի մեջ ընկես

Մաշնակ - միջնեկ

Մաչ - մեջ

Մաչնըվեր - միջով

Մաջալ կամ մըջալ - ժամանակ

Մաջալ տալ - մի փոքր զազար տալ

Մար տալ - 1. գառը, հորթը մորը ծծել տալ, 2. կոճկել

Մարալ - 1. եղջերու, 2. գեղեցիկ
Մա̀րդ - նամուսով, ազնիվ, արդար
Մարթաբոյի - մարդու հասակի չափ
Մարիփաթ - շնորհք
Մա̀րջ - գրազ
Մա̀րջ կյալ - գրազ մտնել
Մա̀րջա̀ն - կարմիր գույնի թանկ ուլունք
Մարքարիդ - 1. մարգարիտ, 2. կանացի հատուկ անուն
Մեզար - մազե կամ բրդե թելից գործած մեծ սփռոց, որի վրա շարում են խմորի գնդեր, ինչպես և տաք հացերը՝ հովացնելու համար
Մելիք - 1. իշխան, 2. տղամարդու հատուկ անուն
Մեկալ - մյուս
Մեկալ օրը - անցած օրը և մյուս օրը
Մեկալնին - մյուսները
Մեհետ - մի անգամ
Մեյդան - հրապարակ
Մեյմուն - կապիկ
Մեյվա - միրգ
Մեշնակ (միջնակ) - միջնեկ
Մեշուկ - մեծ տոպրակ
Մզյա̀մ - ուրեմն
Մըեթկ - միտք
Մըեծ - մեծ
Մըեռուն - մեռոն
Մըեր - մեր
Մըզոված - նզոված, անիծված
Մըզո̀ւկ - ավելուկից, շեպից պատրաստած աղցան
Մըթեն - մութ
Մըթենը եր ա կոխալ - մթնել է
Մըթըն-մըթեն - մութ ժամանակը, մութով
Մըթնըքըշեր - մութ գիշեր
Մըժմա̀հի - սինի, մեծ, տափակ պղնձե աման

Մըլուքուր - մոլի քոր, կատաղի քոր
Մըհալ տինիլ - ուշադրություն դարձնել
Մըհակ - ձեռնափայտ
Մըհանա-շըհանա - պատրվակ
Մըհաասուր - մասուր
Մըհենգյ (մըհեկ) - հիմա
Մըհենգյանց տըենը - այսուհետև
Մըհենգյիս - այժմ, հենց նոր
Մըհետե - մի անգամ
Մըղակ - 1. գուռ, 2. շեմ
Մըղայիթ կենալ - պահպանել, զգաստ լինել
Մըղա̀փուն - ափսոս
Մըղմող - ցեց
Մընան - նման
Մընաս բըղըրյար - մնաս փոշման
Մընգյ էլ - մեկ էլ
Մընեշա̀կ կամ մա̀նիշա̀կ - 1. մանուշակ, 2. կնոջ անուն
Մըննա̀թ անել - խնդրել, աղաչել
Մըչանք - այնչափ, որքան
Մըջալ չօնիմ - ժամանակ չունեմ
Մըռթոտիլ - մռթոտել
Մըռնու - մեռելի
Մըսլըհաթ - խորհուրդ
Մըրզիլ - մզել
Մըրթաբա - պղնձե ափսե
Մըրթոթուն - մարդավարություն
Մըրչեմնը - մրջյուն
Մըտան քըցիլ - մոռանալ
Միթամ թա - կարծես թե, իբրև թե
Մին - մեկ
Մինա̀կ - մենակ
Մինտեղ - միասին
Մին բաշ - միանգամից

Մին դ̀ն̀ըմ - մի անգամ
Մին թ̀ավ̀ուր - մի տեսակ, փոխված
Մին թիքյ̀ա - մի կտոր
Մին թիքյ̀ա խըմել - մի քիչ խմել
Մին լ̀ավ կյոտիլ - Մի լավ ծեծել
Մին լ̀ավ տըմբըզել - մի լավ ծեծել
Մին լ̀ավ քյ̀ութ̀ակ տալ - մի լավ ծեծել
Մին խրեգյ (մըխրե) - մի քիչ
Մին հավուր ըսպասել - մի քիչ սպասել
Մին հետ - մի անգամ
Մին հետան (միհետան) - միանգամից
Մին ջըվար - մի մարդ
Մին ջուռա - մի տեսակ
Մին տոպ - մի կաթ
Մին փանդ - մի միջոց, մի հնար
Մինը մինին - մեկը մեկին
Միջիր - կոլեկտիվ կերպով որևէ գործ կատարելը (բուրդ զզելը, գորգ գործելը)
Մոկուն - մուկ
Մ̀ոհլ̀աթ տալ - ժամանակ տալ
Մ̀ոհքլ̀ամ - մեծ, ընդարձակ
Մոռ - ոխ
Մոռը պահիլ - ոխ պահել
Մորան ինիլ - ծնվել
Մոք - մուգ (գույն)
Մ̀ուքտ̀ա - ձրի
Մ̀ուլքյ - ունեցվածք, հարստություն
Մուկուն - մուկ
Մունթ - մոնթ
Մունուտ - րոպե
Մ̀ուշտ̀արի - գնորդ
Մուշտուլուղ (Մըշտըլեղ) - լավ լուր հաղորդողին տրվող նվեր
Մուրազ - նպատակ

Յ

Յա - կամ

Յաբանա - 1. ամայի, 2.լայնարձակ դաշտ

Յադ - օտար

Յալ - բարձունք

Յախա (յըէխա) - օձիք

Յախու - հատուկ բաղադրությամբ (ձվից, ալյուրից, յուղից պատրաստված) սպեղանի հատկապես ոսկորների ջարդվածքը բուժելու ժամար

Յաղի - թշնամի

Յաղուզ - ինչու

Յաման - շատ ուժեղ

Յան - կողմ

Յան-յան անել - որոնել, տարբեր կողմեր փնտրել

Յաշ - տարիք

Յա̀շիզ - արկղ

Յաշիլ (եշիլ) - նայել

Յասավուլ - ոստիկան

Յավաշ - կամաց

Յարա - վերք

Յարալամիշ ինիլ - վիրավորվել

Յարալու - վիրավոր

Յըէխնիլ - հաղթել

Յըէխտոտ - կեղտոտ

Յըէղ - յուղ

Յըէղածու (յըէղըրծու) - ձվածեղ

Յըէտվակէն - հետո բերած կին, երկրորդ կին

Յըէր տըէռած - թափված, անկանոն, չհավաքված, խառը

Յըղըըթաթախ - 1. յուղոտ, 2. չաղ

Յըղոնեզյ (յըղոնիկ) - աղավնի

Յոլա քյինալ - մի կերպ ապրել

Յո̀նջա - առվույտ

Յոր օնել - վերցնել

Յորղան - վերմակ
Յորղան-դոշակ - անկողին
Յրա հըսնել - վրա հասնել, օգնել
Յրա պըրծնել - հարձակվել
Յրան թըքանալ - 1. սիրահարվել, 2. լավ տրամադրվել մեկի, մի անձի նկատմամբ
Յրան հայիլ-մայիլ կտրել - զմայլվել, սիրահարվել
Յումբրուղ - բռունցք
Յումբրուղլամիշ անել - բռունցքով ծեծել

Ն

Նա̀զիր-վա̀զիր - պալատական պետական բարձր պաշտոնյաներ
Նալ - պայտ
Նալբա̀նդ - պայտագործ
Նախշուն - սիրուն, գեղեցիկ
Նահանց - նրանց
Նաղդ - կանխիկ
Նաղլ անել - պատմել
Նամ - խոնավ
Նամարդ - տմարդի, դավա՛ճան
Նան - և
Նա̀նա̀ - մայր
Նա̀նա̀ - դաղձի մի տեսակը
Նա̀շա̀ր - մեղավոր
Նա̀ռ - քարավանի առաջատար ուղտը
Նա̀րդի տալ - նարդի խաղալ
Նա̀փա̀ս - շունչ
Նեղ տեղն ընգնել - դժվարության և կարիքի մեջ ընկնել
Նենջ - նինջ
Նըհախ - իզուր
Նըհետ - միասին, հետը
Նըհըտնուն կամ նըհետնին - նրանց հետ միասին
Նի - ներս

Նի կապել - 1. երեխային օրորոցում կապել, 2. խփել

Նի կենալ - այրվել, վառվել

Նի կըցնել - վառել

Նի քըցիլ - 1. ներս զցել, 2. ափսեն կերակուր լցնել

Նիզյա̀րա̀ն - անհանգիստ

Նիհ ինիլ - բարձրանալ (ձի, ծառ)

Նիսյա յոր օնել - ապառիկով գնել

Նիախ տըեղը - իզուր տեղի

Նշան տինիլ - նշանել

Նշանտիրիքյ (նշընտիրիքյ) - նշանադրություն, նշանդրեք

Նշընվե - նշանավոր

Նոբաթ - հերթ

Նոթ - նավթ

Նոխտա - սանձ

Նոխուդ - սիսեռ

Նոռնը - նուռ

Նով - աղբյուրի առաջ քարից պատրաստած հարմարանք, որտեղից անասունները ջուր են խմում, նավ

Նորու - նորից

Նո̀քյա̀ր - ծառա

Նուբար անել - առաջին անգամ ճաշակել

Շ

Շա̀գյերդ - աշակերտ

Շադդաղ անել - ուրախություն անել

Շա̀լա̀քյո̀ւլա - ունեցած-չունեցած

Շալլեղ - մտրակ

Շալվար - անդրավարտիք

Շահի - հինգ կոպեկ

Շահմար օխծը - օձի թունավոր տեսակներից մեկը

Շաղ տալ - ցրել

Շաղված - խառնված, ցրված, շփոթված

Շամ - մոմ

Շամդան - մոմակալ
Շամփուր - մետաղի (երբեմն փայտի) հատուկ ձող, որին հագցնում են միսը խորովելու համար
Շամփուր-քըշեռք - աստղային համակարգություն է, շամփուրի և կշեռքի ձևով դասավորված
Շան նըհետ կապել - անարգել, երեսին խիստ խոսել
Շա̀շ - հիմար
Շառավ տալ - սուտ տեղը մեղադրել
Շա̀վթա̀լի - դեղձ
Շափաղ - փայլ, շող
Շեբեթ - շաբաթ
Շելակ - շալակ
Շեպ - ավելուկի պես բույս է, ավելի դառն համի, հյուսում ու չորացնում են ձմեռը եփելու համար
Շեվ -շիվ
Շեփտանը ետը - շաբաթից հետո
Շըլափկա - տղամարդու գլխարկ
Շըհանց տալ - ցույց տալ
Շըհա̀ր - քաղաք
Շըղըհարիլ (շըղարել) - թափահարել (հատկապես ծառը)
Շըղյըմաղյլի - շաղված, խառը, խառնաշփոթ
Շըմբալութ - շագանակ
Շըմփշըմփալ - առատ անձրև գալ
Շընըթկնե - գյուղեր
Շընըհավեր անել - շնորհավորել
Շընըմուռտառ անել - փչացնել, հարամ անել
Շըշկըլվել - սխալվել, շփոթվել, իրեն կորցնել
Շըռտըմոռտի անել - պտտվել, դես ու դեն գնալ
Շըքըռել - երկու ոտը իրարից հեռու դնել
Շիթիլ - սածիլ
Շիլ ընգնել - սխալվել
Շիլդի - աչքը շիլ

Չ

Չնդիր (չեղիր) - վրան

Չնդրն - չադրա

Չաթլակ - զույգ պտուղ, իրար կպած պտուղ

Չաթու - կարճ թոկ

Չալա - փոս

Չալթուկ - կեղևը չհանած բրինձ

Չախ - ժամանակ

Չախմախ - հրացանի հրահան, կայծհան

Չամենչ, չնմիչ - չամիչ

Չայ - թեյ

Չայնիկ - թեյաման

Չնննն - ծնոտ

Չննգյ - բուռ, թաթ

Չանգյալ - պատառաքաղ

Չանդյալ - Ղարաբաղի տարազի գլխաստրքն ամրացնող ոսկե կամ արծաթե զարդ

Չննչո̈ւլ - գազանի թաթ

Չանք (մչանք) - լափ

Չնրնզ - ընդեղեն (պնդուկ, չամիչ, աղանձ, արևածաղիկի սերմ և այլն) իբրև թեթև ուտելիք

Չարխ - անիվ

Չափար - ցանկապատ

Չնքյմն - կոշիկ (կարճ ճտքերով)

Չնքյո̈ւճ - մուրճ

Չեթվեր - մեծ շիշ

Չելը - մինչև

Չէ չէ մին - ոչ մի դեպքում

Չըգյիդնլը տինիլ - չիմացության տալ

Չըլըմըզ - նիհար

Չըխարակ - ճախարակ

Չըկամ - լավը չկամեցող

Չըղըցնել - չաղացնել

Չըմփալախ (սիլլա) - ապտակ
Չընդըլհաղի - առանց վարտիկի, կիսամերկ
Չըպռկել - բողբոջել
Չըվալ - ջվալ
Չըրու - մինչև
Չըքյելանը - մինչև
Չիմա̀ն - կանաչով ծածկված տարածություն
Չիքյիլա̀տո̀ւլ - մետաքսե նուրբ քող, որ ծառայում է իբրև կանացի գլխաշոր
Չոբան - հովիվ
Չո̀լ - ամայի մեծ տարածութ յուն, չոլ
Չո̀լը տո̀ւս կյալ - արտաքնից գնալ, դուրս գնալ
Չոռ - ցավ (անեծք է)
Չո̀ր չոփ տըեռնալ - նիհարել, մաշվել
Չո̀րք - չորս
Չո̀րք թըրա̀փա̀վը - չորս կողմովը
Չոփ - շատ բարակ փայտի, ճյուղի կտոր
Չուբուխ - չիբուխ
Չո̀ւնքյի - որովհետև
Չուռ անիլ - ողջը ուտել, ողջը ցրիվ տալ
Չուրքըպո̀ւլլոր - չորս կողմը, չորս բոլորը

Պ

Պաղարկա - նվեր
 Պաղվալ - ներքնատուն
Պազումք (բազում) - աստղային համակարգություն4 բաղկացած յոթ մեծ և շատ այլ մանր աստղերից
Պալկոն - պատշգամբ
Պակաս-պըռատը ասել - հայհոյել, վատաբանել
Պա-հո-վե́ - ցավա կցման, խոր ափսոսանքի բացականչություն
Պաչիլ - համբուրել
Պապաճըզտ - չվող փոքր թռչուն
Պառո̀ւցյո̀ւն - բարի երեկո

Պատալոկ - առաստաղ
Պատան - մեռելը փաթաթելու անլվա սպիտակ կտոր,պատանք
Պատիվ-հուրմաթ անիլ - պատիվ տալ
Պատկեր - նկար
Պատկերը քաշիլ - նկարել
Պատճառավեր - հղի
Պատրոն - սկեսրայր
Պատրոն - փամփուշտ
Պատրոնդաշի - փամփշտակալ
Պարախոդ - նավ
Պարան կյալ - փլվել, թափվել
Պարանց ընգնել - պառկել
Պարյօր - բարի օր, բարև
Պա̀րո̀ւր - բարուր
Պեխի կամ պեքյի - դառնահամ բույս է, աղ են դնում
Պեխի - բոխի (ծառի տեսակ)
Պեմբակ (պո̀մբակ) - բամբակ
Պեն - բան
Պենը պենան անց ա կացալ - որևէ գործ ուղղելն անհնար է, ուշ է, անցել է
Պենձիկ (պեզնիգյ) - կավե ամանի կտոր
Պենջակ - պիջակ
Պենջա̀ր - 1. ուտելու վայրի բույս,2. հարիսայի պես կերակուր է, որը պատրաստում են ո չխարի յուղալի մսից ու ձավարից և հյուսված ու չորացրած բանջարից
Պերակ - բարակ
Պերա̀ն - բերան
Պերիլ - բերել
Պըել - գիժ
Պըժա̀նիլ (պիժենել) - բաժանել
Պըլա̀նի - բանալի
Պըլենիքյ (պըլա̀նիքյ) - բանալին
Պըլթպըլթալ - եռալ

Պըլոկվել - 1. կողոպտվել, 2. կեղնահան լինել, մաշկը պոկվել
Պըծըպա̀ծին անել - փայլփլել, հուր- հըրատին տալ
Պըղոճ - միջատ
Պըճըրղվել - բացվել, կեղնահան լինել
Պըճըռանք - 1. բրդի կամ բամբակի մանր մնացորդներ, 2. փոքր ոչ փարթամ երեխա
Պընգըլ - հանելուկ
Պըչպըչորել - շատ անգամ համբուրել
Պռանչիլ - բառաչել
Պըռավու պոռտ - մի տեսակ բույս
Պըռոշ - շրթունք
Պըռտըռտո̀ւա̀ծ - շրջած աստառի վրա
Պըտատել - փաթաթել
Պըտոկ - ծայր
Պըտրիհան - պատի մեջ փոքր պահարան
Պըտրունանք - սկեսրայրենք
Պըրթպըրթոտ - բրդոտ, մազոտ
Պըրլյանդ - ադամանդ
Պըրկըփոխան - պարկաձև վարտիկ հագած
Պըրուժինավեր կարավաթ - զսպանակավոր մահճակալ
Պըրո̀ւտ - բրուտ
Պըրո̀ւրնե (պա̀րո̀ւրնի) - բարուրներ
Պըցրա̀նալ - բարձրանալ
Պիլիթ - բլիթ
Պիծապա - ավագ եղբայրը (իբրև հորից փոքր հայր)
Պիծի - փոքր
Պիծի օլաքա - փոքր անզգամը, փոքր մեռածը (անեծք է երեխաների հասցեին)
Պիճ - ապօրինի զավակ
Պիճի - փոքր
Պիճոթուն - խաբեբայություն
Պիրում - բերում
Պո̀զ - եղջյուր

Պոմկա - տակառ
Պոլ - հատակ
Պոլիգյ - պուլիկ
Պոլկ - գունդ
Պող - վառվող փայտածուխ
Պողվատ - պողպատ
Պոճախ - պուճախ, անկյուն (սենյակի, տան)
Պոչեր - վրացական տարազի գլխասաքի կավիքներ՝ այտերի երկու կողմերի խոպոպներ
Պոչերս կըտորիմ - զարմանքի և վշտի արտահայտություն
Պորցի - բաժին
Պրավակացյա - պրովոկացիա
Պրավերկա - ստուգում
Պրիկազչիկ - գործակատար, կառավարիչ
Պուզավեր, ընգուճավեր, հըքյվավեր - եղջյուրներով,ականջներով և պոչով, այսինքն անասուն
Պուժուժ - Ղարաբաղի երեք փեսյան տարազի գլխասարքի ոսկե կամ արծաթե կլոր ուլունքաձև ու գեղեցկաքանդակ զարդ՝այտերի երկու կողմերում
Պո̀ւլլո̀ր - կլոր
Պո̀ւլլո̀րք - թոնրի չորս կողմը
Պո̀ւլո̀ւրպատիկ - կլոր
Պո̀ւռթը կյիզիլ - բուրդը զզել
Պո̀ւրո̀ւմ (պերըմ) - բերում
Պուք տալ - պոկել

Ջ

Ջադու - կախարդ
Ջա̀հիլ - ջահել
Ջահիլ-ջըհո̀ւլ - երիտասարդներ
Ջա̀հտ ըրա - աշխատիր
Ջա̀հտ ըրա մաշկըտ կոտրին վէչ - աշխատիր քեզ չվնասեն (մեջքդ չկոտրեն)

Ջամ - պղնձե թաս
Ջա̀մբա̀ր ինիլ - ազատվել, հեռանալ
Ջա̀մդաք - լեշ
Ջա̀մը խարջիլ - թասը ծախել
Ջանա կյա̀լ - հոգնել, նեղանալ
Ջանավար - գազան, գայլ
Ջանգյո̀ւլո̀ւմ - Վարդավառի տոնի և համբարձման գիշերի
ժողովրդական երգեր, որոնք երգում են վիճակախաղի ժամանակ
Ջանը պահել - ինքն իր նկատմամբ հոգատար լինել
Ջանը ջափի չի տալ - իրեն նեղություն չպատճառել, ինքն իրեն
խնայել
Ջանը տո̀ղ ընգնել - վախենալ (մարմինը դող ընկնել)
Ջանլու - մարմնեղ
Ջա̀ռչի - մունետիկ, մի որևէ հրաման կամ հրահանգ բարձր
ձայնով ժողովրդին հայտարարողը
Ջահավիր - թանկագին քար
Ջավան - ջահել
Ջա̀րմա - տուգանք, վնաս
Ջափա - ծանր աշխատանք, նեղություն
Ջափաքեշ - աշխատանքի ծանրությունը, նեղությունը տանող
Ջեյրան - 1. եղջերու, 2. գեղեցիկ
Ջընըրներան ընգնիլ - վատառողջ դառնալ, թուլանալ
Ջիհիլ - հանդիպել, պատահել
Ջհանդամը գյոռը - անեծք է (դժոխք ու գերեզման)
Ջողաբ - պատասխան
Ջուբ - գրպան
Ջուհուդ - հրեա
Ջուռաբաջուռա - տեսակ-տեսակ

Ռ

Ռադ իլ - կորիր, հեռացիր
Ռազի կըենալ - համաձայն լինել
Ռամո̀ւզ - դեմքի միմիկա, տրամադրություն

Ռա̀նգյ - գույն
Ռա̀նգյռուշ - դեմքի գույն
Ռասչոտ - վերջնահաշիվ
Ռաստ կյալ - պատահական կերպով հանդիպել
Ռեդիկյո̀ւլ - կանացի ձեռքի պայուսակ
Ռեդիսկա՛ - ամսաբոդկ
Ռիսկ անել - համարձակ և ինքնավստահ որևէ գործ բռնել
Ռուշվաթ - կաշառք
Ռուջա̀հ ինիլ - պատահել

Ս

Սա̀բա̀բ - պատճառ, միջնորդ
Սա̀բիր կյալ - փռշտալ
Սազ - աշուղի նվազելու հատուկ գործիք
Սազ անիլ - հարմարեցնել
Սազանդար - նվագախումբ
Սազիլ - սազել
Սաթաշմիշ ինիլ - մեկին հետևել զըրկելու համար
Սաժին - երկարության հին լափ, սաժեն (երեք արշին)
Սալ - տափակ քար
Սալդաթ - զինվոր
Սաղ - ողջ
Սաղ սալամաթ - ողջ և առողջ
Սաղ սեյրու - ողջ և լավ
Սա̀մթ - 1. կողմ, 2.հարմարություն
Սա̀մթին կործը փըռնիլ - հարմար ձևով գործ կատարել
Սանդալ - ոտնամանի տեսակ
Սանդըր - սանր
Սանջեխ - քորոց
Սաջ - կլոր, տափակ չուգունե հարմարանք հաց թխելու, հատիկ բովելու համար
Սա̀ս - ձայն
Սա̀ս-սեմուր - ձայն-ծպտուն

Սարի արծիվ - քաջ, հպարտ, վեհ, ուժեղ, տղամարդ
Սարի պըտոկ - սարի գագաթի ամենավերին ծայրը
Սա̀րին - հով, զով
Սա̀րին հով - զեփյուռ, թարմ ու դուրեկան հով
Սա̀քյի թա - իբրև թե
Սեզնը - սզնի ծառի պտուղը
Սեկրետ - գաղտնիք
Սըեպ - սեպ
Սըեպերը տուս ա եկել - ատամները դուրս են եկել
Սըերտ - սիրտ
Սըերտ տալ - հորդորել, քաջալերել,սիրտ տալ
Սըերտը դաղվիլ, էրվիլ, վառվիլ - շատ տանջանքներ ունենալ
Սըերտըպերակ - զգայուն
Սըհաթ - 1. ժամ, 2. ժամացույց
Սըղըննական ա - առողջանալու է
Սըղըցընիլ - 1. առողջացնել, 2. Փողի գումար ամբողջացնել, էժան գնով լավթանկագին բան առնել
Սըմավար - ինքնաեռ
Սընդաքար - սանդի քար
Սըվայի - բացի
Սըվաքյիր - սնակիր, անբախտ, առանց ուրախության, միշտ տխուր
Սըվթա̀ - առաջին անգամ
Սըրըսար - սարեսար
Սըրտան տաս չի (սըրտան տամ չի) - չի ուզում
Սըրտեն սո̀ւթո̀ւն - միակը
Սըրտըքթո̀լ - կրծքի վանդակի փոսը
Սըրաըքթոլը նի կենալ - հոգեպես տանջվել
Սըփաթ - դեմք
Սըփառթնիլ - գունատվել
Սիլլա - ապտակ
Սիմ - լար
Սկուպոյ - ժլատ

Սո̈իբաթ - զրույց
Սողան - սոխ
Սովդաքյար - վաճառական
Սոր - սուր
Սոր խըղըցնիլ - սրով խաղալ
Սոքյ (սոք) - սուզ
Ստալավոյ - ճաշարան
Ստաքան - բաժակ
Ստոլ - սեղան
Ստոլ պեց անել - սեղան բացել
Ստրաժնիկ - պահակ
Սուբեհ - ստերջ
Սուդի տալ - դատի տալ
Սուդյա - դատավոր
Սութկա - օր
Սո̈ւթո̈ւն - սյուն
Սո̈ւրմա - ծարիր
Սո̈ւրմա̈ - կոճակ, Ղարաբաղի երեքփեշյա տարազի արծաթի կամ ոսկե կոճակներն են և զարդերից մի երկուսը
Սո̈ւրո̈ւ - հոտ
Սո̈ւրո̈ւն - սիրուն, գեղեցիկ
Սուփրա - սփռոց

Վ

Վա̈ղա̈ - ժամանակ
Վա̈զիր - վեզիր
Վա̈թա̈ն - ծննդավայր, հայրենիք
Վա̈հար - թարախ
Վասյաթ - կտակ
Վար - որ
Վա̈րա̈վո̈ւրդ անել - տնտղել
Վարցք - վարձք, հատուցում
Վացցուն - վաթսուն

Վեղրա - դույլ
Վեշչի - իրեղեն
Վեչ Ելուն ա եշըմ, վեչ Մոսուն - ոչ ոքի չի լսում, ոչ ոքի վրա ուշադրություն չի դարձնում
Վեջան չի - ուշադրություն չի դարձնում, հոգը չէ
Վէր - որ
Վէր - հոր
Վէր ածել - թափել
Վերստ - երկարության չափ, կիլոմետրից քիչ ավել
Վեքյի - վեգ
Վըեղ - հող
Վըեղս կըլխետ - հողս գլխիտ (անեծք)
Վըեղու ծնունդ - հողածին, մարդ արարած
Վըեննը-ծըեռք անել - ջանալ, ձգտել
Վըեննը-ծըեռքը տափան կտրած - վախեցած
Վըեննը կախ անել - քայլերը դանդաղեցնել
Վըեննը կոխած վըեչ - ոտը չդրած
Վըեննը կոխել - ոտը կոխ տալ
Վըեննը հղեցը - վարքը վատ
Վըեննը տո՞ւս - բարոյապես ընկած
Վըեննը ո՞ւրա՛ն վըեղումը տինիլ - վերադառնալ հայրենիք
Վըեննը փոխել - քայլել
Վըեննը փոշ չի մննի - վնաս չի հասնի
Վըեսկեռ - ոսկոր
Վըեստ - իլիկի վրա փաթաթվելուց դիզված թելը, ոստ
Վըետ - հոտ
Վըեր - որ
Վըեր ածած - 1. առատ, 2. ցաքուցրիվ, թափված
Վըերթի - որդի, զավակ
Վըերթնը - որդ
Վըերսկան - որսորդ
Վըղապեն - հողային աշխատանք
Վըսկըզօծ - ոսկեզօծ

Վըսկըշափաղ - ոսկեփայլ
Վըրդըեղ - որտեղ
Վըրըխկալի - վարար, հորդ
Վըրթիվեր - վարդավառ
Վիյ աման - զարմանքի, վախի, հիացմունքի բացականչություն

S

Sազ - կոնք, լագան (մետաղե)
Sազ անել - սուս անել
Sա̀լ - ամուսնու քույր
Sա̀լ - ճյուղ
Sալերք - ափսե
Sակռե - արմատ
Sահանք - դրանք
Sանավ-տեղավ - տնով-տեղով
Sար - տեր
Sարը մըեռածը - տերը մեռած (անեծք)
Sափ - դետին
Sեզյ - տիկ
Sեմ կենալ - 1.դիմանալ, 2.նեցուկ դառնալ
Sեմատեմ - դիմացը, դեմուդեմ
Sեմ տալ - իբրև հենարան գործածել
Sեմ քյինիլ - դեմ դնալ
Sենակ - դանակ .
Sեսնը - դաղձ
Sեսըտեն քյինիլ - այս ու այն կողմը գնալ
Sերտակ - դատարկ
Sըեղ - տեղ
Sըեղը մեխված - անշարժ, գամված
Sըեղը շըռտըմոռտի անել - այս ու այն կողմը շրջվել
Sըեղը քըցիլ - անկողինը բացել
Sըեռնը - տիրոջ
Sըժըրո̀թո̀ւն - դժվարություն

Տըկըկըլո̀խ - տակ ու գլուխ
Տըկլոր - մերկ
Տըհալ - տապակած միս ձմեռվա համար
Տըհենց - այդպես
Տըղամարթըն ո̀ւրա̀ն թքածը լո̀ւզիլ չի - տղամարդը իր խոսքը չի փոխի
Տըղեն յրա թըքացել ա - տղային սիրում է
Տըղնել - դեղնել
Տըղոթուն անիլ - իբրև տղա լինել
Տըղվարել - տեղավորել
Տըղտո̀ղալ - դողալ
Տըմակ - դմակ
Տըմանալ - դիմանալ
Տըմբըհան ինիլ - տեղից դանդաղ շարժվել
Տըմբլա - թմբուկ
Տըմբտըմբալ - հազիվ շարժվել, հազիվ քայլել
Տըմկել - խոնավությունից փափուկ, ճկուն դառնալ
Տըյեր - վերն
Տընա̀զ - ծաղր
Տընըստոն - ընտանիքով
Տըպակել - տապակել
Տըռանը ըռաշկեն (տըռանը առաչին) - դռան առաջ
Տըռզվիլ - փքվել, նեղանալ, խռովել
Տըռռոն - փոքր մեծ թռչուն, ասվում է և փոքր մեծ մարդու մասին
Տըսերա̀նը ետը - դասերից հետո
Տըսնա(յ)ս ըս (տըեսնըմ ը՞ս) - տեսնո՞ւմ ես
Տըվերան - ներքևից
Տըրաքվել - պատռվել
Տըրըկյուսիլ - տարակուսել
Տըրխատան (տըրխետան) - հյուսած հաստ թել՝ տրեխները կապելու համար:
Տըրո̀ւչը - տիրոջը
Տըփըկցնիլ - 1. տափակեցնել, 2. խիստ ծեծել, ծեծելով սպանել

Տըփըքըշերե - 1. փոքր մարմնով վայրի կենդանի, 2.կարճահասակ
Տիժեր - դժվար
Տոմբալան - կարտոֆիլի պես բույս է, աճում է այնտեղ, որտեղ ոչխարի հոտ և ուղտեր են նստում, սունկի համ ունի
Տոնը սրփիլ - տունն ավլել
Տո̈ռնը քըլլել - դուռը կողպել
Տո̈տա̈ - մորաքույր
Տո̈տա̈-տո̈տա̈ անել - մանկան պես հազիվ քայլել
Տոք (տո) - տուր
Տրախտ - դրախտ
Տո̈ւզնը - քաղցած
Տուպլի կոշիկ
Տո̈ւս - դուրս
Տո̈ւս օնել ջուբան - դրպանից հանել
Տուր կյալ - դուր գալ
Տո̈ւրմա̈ - բանա
Տուրութակ - կռիվ: Ծեծ
Տո̈ւրո̈ւր կյալ - շարժվել

Ց

Ցակատ- փայտ կտրելու մետաղե գործիք
Ցամաք աշկերով նի մննել կյիրեզման - անվիշտ գերեզման մտնել
Ցամաք հաց - միայն հաց
Ցավան նըհետ - ցավից
Ցավան նըհետ գյուղում չի թա հինչ անի - ցավից գժվում է
Ցավի-ցցի կյալ - հիվանդանալ, գլուխը ցցի վրա հանել (անեծք)
Ցենտր - կենտրոն
Ցենտր քյո̈ւչա̈ - կենտրոնական փողոց
Ցըեվք - 1.ժայռի դուրս ցցված մաս 2.զառիթափի վերնի եզրային մասը

Ու

Ուզուն - երկար
Ուզուն-ախմախ - հիմար
Ուղտապեռնը - ուղտի բեռ

Ումբր - կյանք
Ումեղ - հույս
Ունգյնա̏վեր - ունկ ունեցող
Ունգյունան - անկյունից
Ուշունց - հայհոյանք
Ուշուփնե (օշափնի) - վիշապներ
Ուռունց - առանց
Ուստա - վարպետ
Ուտեմ-տիտեմ - հյութալի ցածրիկ բույս
Ուտըլեղան - ուտելիք
Ո̏ւրա̏ն - իրեն
Ո̏ւրա̏ն ըգյո̏րա̏ - իրեն համապատասխան
Ո̏ւրա̏ն հա̏լո̏ւքը չի - իր ուժից վեր գործ է բռնում
Ո̏ւրթո̏ւմնը - երդում
Ո̏ւրթո̏ւմնը-հավատ - խիստ երդում
Ո̏ւրթո̏ւմնը օտել - երդվել
Ո̏ւրոտալ (ըրոտալ) - որոտալ
Ո̏ւրո̏ւգյո̏ւն - երեկո
Ո̏ւրուն անել - հովանավորել» պահպանել
Ո̏ւրփըրթա̏վուր - տխուր
Ո̏ւրփթա̏խոս - ուրբաթախոս
Ո̏ւրուրուր (ըրորոց) - օրօրոց
Ո̏ւփո̏ւլ (իփիլ) - եփել

Փ

Փա̏ղ - փայտ
Փալան - համետ
Փա̏լանգյ - առյուծ
Փա̏լա̏քյան - սանդուղք
Փալչի - գրբաց
Փակետ - ծրար
Փա̏հ-փա̏հ - հիացական, հաճելու բացականչություն
Փա̏հլա - բանվոր

Փա̀հլութուն - բանվորություն
Փա̀հլվան - լարախաղաց
Փահմ - կռահում
Փայ - բաժին
Փայ անել - բաժին-բաժին անել
Փայ հըվաքող - մուրացկան
Փայտոն - կառք
Փայտոնչի - կառապան
Փա̀նա̀ր - լապտեր
Փա̀նդ - հնար, ձև
Փա̀նդըփել - հնարք
Փա̀նջա̀րա̀ - 1. լուսամուտ, 2. լուսամուտի երկաթե ցանց
Փանտան - շատրվան
Փառչա-փառչա անել - պատառ-պատառ անել
Փարա - փող
Փարա - որոշ (մին փարա մարթիք - որոշ մարդիկ, ոմանք)
Փա̀րդա̀ - վարագույր
Փարթուկ - գոգնոց
Փա̀րի - փերի
Փարչ - գինի կամ ջուր խմելու աման
Փափաղ - մորթե գլխարկ
Փափաղը ծոռ տինիլ - անհոգ լինել
Փեշակ - արհեստ
Փեշկ - փեշ
Փեշքեշ- նվեր
Փըթըրոկ - ալյուրով եփած կերակուր
Փըլան-փըստան - այսինչ-այն ինչ
Փըլանքյա̀ս - ոմն
Փըլստրատին տալ - փայլփլել
Փըյտոննի - կառքեր
Փըշադ (փուշադ) - փշատ
Փըչեչ - խառն, չսանրած մազեր
Փըռթիլ - մանր- մանր կտրտել

Փըռթո̀ւշ (փըթո̀ւշ) - սառն կերակուր՝ մածնից, հացից, ջրից. երբեմն ավելացնում են նաև վարունգ, սամիթ
Փըռչըփարա անել - կտոր-կտոր անել
Փըսակվել - ամուսնանալ
Փըսնել - բուսնել
Փըսոտենքյ կամ փըսեքյ - փեսաներ
Փըսպարել - ապսպրել
Փըստ - անհաջողություն ակնարկող բացականչություն
Փըստ ա տըեռալ - անհաջողության է մատնվել
Փըստոն - հրապատիճ
Փիլա̀կ - կոճակ
Փիլոն - շուրջառ
Փիչ - վառարան
Փիս - վատ
Փիստա̀ - պիստակ
Փոխան - վարտիք
Փոկ - կաշվե բարակ շերտ, որով տրեխներ են գործում
Փոնջ - փունջ
Փոշտ - փոստ
Փոշտալյոն - փոստատար
Փոտ - արատ, պակաս կողմ (ունքամեչը փոտ ընգնիլ - մռայլվել:
Փոտ օնե - պակաս կողմ ունի)
Փուլ - փող
Փուլ (փոլ) կյա̀լ - փլվել
Փո̀ւհ ըրավ մըեռավ - շունչը փչեց, մեռավ
Փո̀ւսո̀ւնգյո̀ւ - բուք, բորան
Փուրգոն - քառանիվ ձիասայլ
Փո̀ւրո̀ւզա - թանկագին քար, 2. կանացի հատուկ անուն
Փուրումնա - հոր մահից հետո դեռ չծնված երեխա
Փո̀ւրփո̀ւտ (փիրփեթ) - եփելու բույս, ունի բուժիչ հատկություն ստամոքսային հիվանդությունների համար

Ք

Քաթ - զրույց

Քաթ անել - զրուցել

Քամակ - ետև

Քաշ - ագռավ

Քաշ - կշիռ

Քաշկ - քաջք

Քաշկոտ - քաջկոտ

Քաչալ - ճաղատ

Քառ - խուլ

Քավթառ - պառավ

Քարճիկ - թռչունի ստամոքս

Քափ - կերակրի (հատկապես մսի) եռման ժամանակ զատված փրփուրը

Քափ-քըռթնոնք - քրտինք

Քել - առ, վերցրու

Քեշկյա̀ր թա - երանի թե

Քըերծ - ժայռ, ժայռի գլուխ

Քըթենալ - գտնել

Քըթոթ անել - քջուջ անել

Քըլոլել - գլորել, չարչարել, զզզել

Քըծծիլ - բուրդը, բամբակը մատներով զզզել

Քըմըկ քամակ-ետ-ետ

Քընար հանել - հասկանալ

Քընենքյ - մտածմունք

Քընըհարամ - քունը խանգարված

Քըշաթոխպ - մեգ, մառախուղ, մշուշ

Քըշեռք - կշեռք

Քըշեր - գիշեր

Քըշըրհանա - վաղ առավոտյան

Քըշտին - մոտը

Քըռըթանթռուշ - մողեսի մի տեսակը

Քըռըքոռի տալ - կույրի պես գնալ, խարխափել

Քըսկարինք - եռոտանի
Քըվերք (քըվերտինք) - քույրեր
Քըրեհ - վարձ
Քըրթննքել - քրտնել
 Քիթա̀լ ա - գտել է
Քյա̀լա̀գյ - օյին, կազմակերպված վտանգ
 Քյա̀լլա̀ - գլուխ, գանգ
Քյա̀լլա̀ն թափ տալ - 1. խաբխբել, 2. մեկի գաղտնիքները՝ իմացածը լրիվ պատմել տալ
Քյա̀հրիզ - գմբեթաձև ջրամբար, աղբյուր
Քյամբախտ - անբախտ
Քյա̀նդիր - պարան, թոկ
Քյա̀շի - թաս, խոր աման
Քյա̀սիբ - չքավոր
Քյա̀վգյիր - մետաղե ծակծկոտ շերեփ
Քյար անիլ - ազդել, ազդեցություն ունենալ
Քյարվազ - կամուրջ
Քյարվան - քարավան
Քյա̀րփա̀թո̀ւն - աքցան
Քյըեփ - քեֆ, ճաշկերույթ
Քյըեփտ քյոք պահե - տրամադրությանդ բարձր պահիր
Քյըեփտ քյոք պահե, դամաղտ՝ չաղ - ուրախ և առողջ եղիր
Քյըսօր - կեսօր
Քյիլիդ - կողպեք
Քյիմսա̀ - սերունդ
Քյիմսամըեռ - սերունդը մեռնի (անեծք)
Քյիս ա (քյինըմ ա) - գնում է
Քյոթո̀ւկ - կոճղ
Քյո̀հլա̀ն ծի - արագավազ ձի
Քյո̀հնա̀ - հին
Քյո̀հնա̀  տերման մի քամել - հինը մի հիշիր
Քյո̀մա̀գյ - օգնություն
Քյո̀մբա - ջաղացի օջախի սալ քարին թխած հաց

Քյոռուղ - պատճառած նեղություն, վնաս
Քյո̀սա̀ - խաբեբա
Քյո̀սա̀գյա̀լի - ծաղրածու
Քյո̀շվո̀ն - հանդ, տեղավայր
Քյո̀րփա̀ (քյո̀լփա) - փոքրիկ (երեխա, հորթ և այլն)
Քյո̀փագյ - ծեր մարդ
Քյո̀ւթ - թմրած, դանդաղաշարժ, կոնդ
Քյո̀ւլ - մոխիր
Քյո̀ւլվիս տու - մոխրվես դու (անեծք)
Քյո̀ւլփա̀թ - երեխաներ
Քյո̀ւհի - միամիտ
Քյուքուցնել - չաղացնել
Քոլ - թուփ, թփուտ
Քոծ - աղախին
Քոն - քուն
Քոն իլ - քնիր
Քոն իլա̀ծ - քնած
Քո̀չիլ - քոչել
Քոռ - կույր
Քոռակ - քուռակ
Քոռըփեշմա̀ն ինիլ - փոշմանել
Քոսոտ - 1. քոս հիվանդություն ունեցող, 2. խղճուկ (վիրավորական արտահայտություն)
Քումմատաղ - քեզ մատաղ
Քունթռուճ - հին մաշված ավել, 2. խըեձորը, տանձը ուտելուց հետո դեն գցելու միջին մասը

О

Օբա - քոչ
Օբրուչ - օղակապ (տակառի)
Օ̀զգյա̀ (օգյա̀) - ուրիշ
Օ̀զգյա̀ բաբաթ - մի ուրիշ տեսակ, շատ լավ կամ շատ վատ
Օ̀զո̀ղ - ուզող, մուրացկան
Օթաղ - սենյակ

Օթի ծրփա̀թ - Քրիստոսի խաչման գիշեր,լույս ուրբաթ
Օժ - ուժ
Օ̀լում մահ
Օ̀լումը եկալ ա - մահը մոտեցել է
Օ̀խծ - օձ
Օ̀խտանաաուն (ուխտընաաուն) - յոթանաաուն
Օխտը - յոթ
Օխտը չափել, մին կըտրել - լավ մտածել, հետո կատարել
Օխտը պոռտ - յոթ սերունդ
Օղլըշաղ - կին
Օղտ - ուղտ
Օղտեն անգուճումը քոն - անտեղյակ, անտարբեր
Օմբա - կոնքի ոսկոր
Օյամիշ ինիլ - արթնանալ
Օյին - խաղ, փորձանք
Օնգատը ( ունգատը) ընգնել - հաջողվել
Օնգնը - կանթ, բռնելու կոթ
Օնե (օնի) - գնել, ծածկել
Օնինք - ունենք
Օնք - ունք
Օշ - ուշք, ուշադրություն
Օշը կլոխը հըվաքել - խելոք լինել, ուշքի գալ
Օշը տանել - ուշաթափվել
Օշնակ - կավե խոր աման է մածնի, յուղի և այլ բաների համար
Օռնոց - ոռնոց
Օռչիլ - 1. ուռչել, 2. նեղանալ, խռովել
Օս - ուս
Օսմանլու -Տաճկաստան
Օսուքը քըրցիլ - ուսով գցել
Օվ - որս
Օվչի - որսորդ
Օ̀վո̀ւլ (ա̀վիլ) - ավել
Օտել - ուտել

Օրախ - ուրախ
Օրաղ - մանգաղ
Օ̀րա̀նա̀ - ավեր, քարուքանդ
Օ̀րդա̀կ - բադ
Օրիշ (Օ̀րո̀ւշ) - ուրիշ
Օրիշ թա̀վո̀ւր - ուրիշ տեսակ
Օրիշ հանգի - ուրիշ ձևով
Օրկանցօր – օրեցօր

## «Արցախի ժողովրդագիտություն» մատենաշարի նախորդ հատորների բովանդակությունը

*Ազգագրություն, Հատոր 1(1), Ստեփանակերտ, 2019*


***Երկու խոսք*** ... 3

***Ներածություն*** ... 6

Լալայան Ե.
***Վարանդա. Նյութեր ապագա ուսումնասիրության համար*** ... 50

Константинович
***Шуши*** ... 238

Григоров Н.
***Село Саров Елисаветпольской губернии Джеванширского уезда*** ... 244

Давидбеков И.
***Село Гадрут Елисаветпольской губернии, Джебраильскаго уезда*** ... 251

Израелов Г.
***Домашнее воспитание армян Джеванширского уезда Елисоветпольской губернии*** ... 279

Израелов Г.
***Описание минерального источника Истису (Теплый ключ), Елисаветпольской губернии, Джеванширского уезда*** ... 280

Погосов М.
***Тамерлан по рассказам джеванширских армян*** ... 282

***Промысловыя занятия в некоторых населенных пунктах Закавказья*** ... 285

Зедгенидзе Я., Захраб-беков С., Тер-Егиазаров А.
***Город Шуши*** ... 285

Ибрагимбеков Б.
***Шушинский уезд: Агдамское общество*** ... 338

Погосов М.
*Шушинский уезд: селение Туг*
*Шушинский уезд. Селение Мухренес* ............................................ 343

Израелов Г.
*Джеванширский уезд. Селение Касапет* ........................................ 345

Давидбеков И.
*Джебраильский уезд. Село Гадрут* ............................................ 350

*Описание кавказского шелководства (Джеванширский уезд,*
*Шушинский уезд, Джебраильский уезд)* ........................................ 352

Израелов Г., *Село Касапет Джеванширского уезда*
*Елисаветпольской губернии* .................................................. 368

Мелик-Шахназаров Е.
*Из древностей селения Ченахчи*
*(Елисаветпольской губернии Шушинского уезда)* ................................ 379

Джейранов О.
*Селение Чайкенд Елисаветпольского уезда той же губернии* ..................... 383

Осипов Г.
*Селение Даш-Алты, Шушинского уезда,*
*Елисаветпольской губернии* .................................................. 409

Деконский А.
*Экономический быт государственных*
*крестьян в Шушинской и Джебраильской уездах*
*Елисаветпольской губернии* .................................................. 431

Хан-Агов А.
*Экономический быт государственных крестьян*
*Джеванширского уезда Елисаветпольской губернии* .............................. 568

Зелинский С.
*Материалы по народной медицине у армян*
*Ахалкалакского уезда Тифлисской губернии и Шушинского*
*и Зангезурского уездов Елисаветпольской губернии* ............................ 644

Заварян С.
*Экономические условия Карабаха и голод 1906-1907 гг.* ........................ 668

***Երկու խոսք*** .......................................................................... 3

Լիսիցյան Ստ.
***Լեռնային Ղարաբաղի հայերը (Ազգագրական ակնարկ)*** ............................ 5

Лисициан С.
***К изучению армянских крестьянских жилищ***
***(Карабахский карадам)*** ............................................................ 149

Кочарян Г.
***Нагорный Карабах*** ............................................................ 159

Петрушевский И.
***О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха*** ............ 243

Петров В.
***Этноботаника Нагорного Карабаха*** ............................................ 286

Սեյրան Գ.
***Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները***
***(Տնտեսական աշխարհագրություն)*** ................................................ 388

Բարսե (Բարսեղյան)Ս.
***Լեռնային Ղարաբաղ (Երկրագիտական համառոտ ձեռնարկ)*** ................ 461

Տեր-Գասպարյան Ռ.
***Շուշի քաղաքը*** .................................................................... 538

Կիսիբեկյան Ա.
***Հուշեր*** .......................................................................... 631

*Ազգագրություն, Հատոր 3(3), Ստեփանակերտ, 2020*

***Երկու խոսք*** ........................................................................3

Ղահրամանյան Կ.
***Օջախի գիրք.Նշխարներ*** ..............................................................5

Мкртчян А.
***Общественный быт армян Нагоного Карабаха (вторая половина XIX– начало XX в.)*** ........................................65

Тер-Саркисянц А.
***Армяне Нагорного Карабаха***...........................................................177

Բաղդասարյան Ն.
***Վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական կացությունը Ղարաբաղում 1813-1867 թթ.*** ..............................................455

Шахназарян Н.
***В тесных обьятиях традиции: патриархат и война*** ........................537

*Երկու խոսք* ……………………………………………………..………...….. 3

Կ. Մելիք-Շահնազարեանց
*Բուրդ զգելը և գորգ գործելը Ղարաբաղում* .....................................................4

Կ.Մելիք-Շահնազարեան
*Նիւթեր Ղարաբաղի հայ ազգագրութեան համար* ........................................ 7

А.Вартапетов
*Очерк жилищ и строительных кадров Нагорного Карабаха (Материалы поездки в Карабах летом 1933г.)*……………….........................…………. 19

Ռ. Տեր-Գասպարյան
*Շուշու բնակչությունը 18-րդ դարից մինչև մեր օրերը* …………………..…. 45

Н. Авакян
*Народная одежда армян Арцаха в XIX- начале XX в.* ……………………..…. 59

А. Тер-Саркисянц
*Современная семья у армян Нагорного Карабаха* ……………………..…….. 73

А. Тер-Саркисянц
*Новое и традиционное в современном быту армян Нагорного Карабаха* ….. 127

А. Тер-Саркисянц
*Динамика уровня образования армян Нагорного Карабаха* ……………. 139

*А. Тер-Саркисянц*
Современные этнические процессы у армян Нагорного Карабаха….…. 150

А. Тер-Саркисянц
*Некоторые тенденции этнокультурного развития армян Нагорного Карабаха* …………………………………………..…………. 211

А. Тер-Саркисянц
*Сельская семья у армян Нагорного Карабаха: основные тенденции развития*……………………………………………………………. 224

А. Тер-Саркисянц

*Тенденции развития сельской семьи у армян Нагорного Карабаха в постсоветский период*........................................................... 245

А. Тер-Саркисянц

*Современная политическая и этнокультурная ситуация в Нагорном Карабахе* ........................................................... 254

А.Тер-Саркисянц

*Этнографическая поездка в Нагорный Карабах* ............................... 289

Վ. Թաթիկյան

*Արցախի հատուկ խորհրդիմաստ արտահայտող ուղեգորգերը* .......... 300

Ժ. Խաչատրյան

*Խաղլացավի (դիվահարության) «բուժումը» պարով* ........................ 302

Մ. Սարգսյան

*Դիզակի աղբյուրները և դրանց կառույցների ճարտարապետությունը* .. 311

Б. Мирзоян

*Нагорный Карабах* ........................................................................... 318

Ս. Պողոսյան

*Արցախի ավանդական տարազը և նրա էվոլյուցիան* ......................... 337

Л. Валесян, Ю. Мурадян

*О некоторых итогах и проблемах экономического развития Нагорного Карабаха* ......................................................................... 346

А. Марутян, Г.  Саркисян, З. Харатян

*К этнокультурной характеристике Арцаха* .................................. 368

М. Карапетян

*Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г.* ......... 387

Վ. Բալայան

*Մետաքսագործությունը Լեռնային Ղարաբաղում 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը* ................................................ 401

Վ. Բալայան
*Սոցիալ-տնտեսական իրավիճակը Արցախում 19-րդ դարում ……..... 409*

Л. Аванесян
*Связь изображений армянских ковров с погребальным обрядом …..… 420*

Թ. Հայրապետյան
*Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկհակադիր ընկալումների շուրջ …………………………………………….………… 435*

Թ. Հայրապետյան
*Խաչենագետի ներքնահովտի վերաբնակ հայության ենթաէթնիկ շերտերը. վերամշակութայնացման հարցեր ……….….….. 447*

Ա.Դաբաղյան, Մ.Գաբրիելյան
*Շուշին 1992-2002 թթ.. հայերի վերադարձը ազատագրված քաղաք … 454*

Հ. Պիկիչյան
*Ավանդական հարսանեկան ծեսի երաժշտական կերտվածքը Դաշտային Արցախում …………………………………………………..… 525*

Լ. Գասպարյան
*Հյուսվածքագործությունը Սյունիք-Արցախ տարազում ……………..... 527*

Հ. Սարգսյան
*Լեռնային Ղարաբաղի բնակչության թվի և էթնիկ կազմի շարժընթացը XIX դարում ……………………………………………… 530*

Ա. Բաղդասարյան
*Արցախի ժողովրդական նվագարանային երաժշտության հարցեր …. 539*

Л. Варданян
*Из истории этнографического изучения Нагорного Карабаха (конец XIX- начало XX вв.)………………………….………………… 550*

Ա. Դաբաղյան
*Շուշիի հասարակական կյանքն ըստ «Կովկասյան տարեգրքի» …….... 557*

Ա. Թադևոսյան
*Դարբնի ծիսական կերպարի իմաստաբանությունը արցախցիների հավատալիքների համատեքստում (XIX-XX դդ.)* ........................ 561

Հ. Ալեքսանյան
*Շուշիի և Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը 1916-1926 թթ..* ......... 565

Կ. Բազեյան
*Շուշիի ասեղնագործական դպրոցը* ..........................................…... 574

Ս. Մկրտչյան
*Տոները ղարաբաղցիների ավանդական կենցաղում* ....................... 580

Ս. Սուջյան
*Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակը* .......................................................................... 586

Ա. Պողոսյան
*Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների տարածման արեալների մասին* ....................................................... 607

Ա. Պողոսյան
*Հարթակարով ասեղնագործական մշակույթի ավանդույթների մասին* .. 615

Ա. Պողոսյան
*«Ջրաբերդ» խմբի գորգերի ծագումնաբանական հարցերի մասին* .... 626

Ա. Պողոսյան
*Շուշին՝ գորգագործական մշակույթի կենտրոն* ........................... 642

Ա. Պողոսյան
*Արցախյան գորգագործական ավանդույթների տարածման արեալների ու Կովկասի հարավարևելյան գորգագործական կենտրոնների փոխառնչությունների մասին* ............................ 652

Ա.Այվազյան
*Ժողովրդագրական իրավիճակը Ղարաբաղում 1710-1720-ական թվականներին* ................................................................. 678

Լ. Հովհաննիսյան
*Արցախի բնակչությունն ըստ 1897թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալների* ........................................................ 687

Լ. Հովհաննիսյան
*Բռնի մահմեդականացված հայության բեկորները Ղարաբաղում* ....... 691

Ա. Առստամյան
*Ժողովրդագրական իրավիճակը և վերաբնակեցման քաղաքականությունը ԼՂՀ-ում (1991-2002թթ.)* .............................................. 698

Հ. Հարությունյան
*Շուշիի հայ երգարվեստի և երաժշտության անհայտ էջերից* ............ 707

Հ. Աբրահամյան
*Շուշիի համայնապատկերը* ........................................................... 716

Ն.Բաղդասարյան, Լ. Հովհաննիսյան
*Ժողովրդագրական տեղաշարժերը Լեռնային Ղարաբաղում Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի կնքումից հետո. հայրենադարձություն, պարսկահայերի ներգաղթ, ադրբեջանական շահարկումներ* .............................................. 732

Ա. Հարությունյան
*Հին Շուշիի արհեստները* ............................................................. 744

Ն. Ավագիմյան
*Ժողովրդագրական իրավիճակը Շուշիում 1813-1917 թթ..* ................ 753

***Երկու խոսք*** ………………………………………………………..………..….. 3

Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալյանց
***Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան*** ……………………………….. 4

Մ.Թաղիադյան
***Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան*** …………………………….. 127

А. Гакстгаузен
***Закавказский край. Заявки о сельской и общественной жизни и отношениях городов, обитающих между Черным и Каспийским морями*** …………………………………………………….... 148

Գ. Սրուանձտեանց
***Սյունյաց աշխարհ և Շուշի քաղաք*** ……………………………………… 153

Ա. Բաբախանյան
***Ուխտավորի հիշատակարանը*** …………………………………….. 160

Ա. Բաբախանյան
***Իմ հիշատակարանը*** …………………………………………………….. 195

Հայկունի (Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամյանց)
***Ուղեգնացական ակնարկներ*** ……………………………………... 407

Րաֆֆի
***Երկու ամիս Աղվանից և Սյունյաց աշխարհներում*** …………………... 565

Տիկին Բ. Շանտր
***Ռուսական Հայաստանի միջով*** ……………………………………... 623

Л. Сегаль
***Елисаветапольская губерния впечатления и воспминания*** …………… 661

М. Шагинян
***Нагорный Карабах*** ……………………………………………………….. 713

***Երկու խոսք*** …………………………………………………..…………………..... 3

Ս.Լիսիցյան
***Զանգեզուրի հայերը*** ……………………………………………………..….…..… 4

Հ.Հովսեփյան
***Ղարադաղի հայերը*** ………………………………………..………...…… 305

***Մատենագիտություն***
***Արցախի ազգագրության ուսումնասիրության*** ......................................... 645

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Երկու խոսք* ………………………………………………………………..... 3
*Ներածություն* ………………………………..………………………… 4

*Հեքիաթներ*
1. Վըեսկէ խնձորը ………………………………………………….. 18
2. Սինան թաքավերը ……………………………………………….31
3. Վըեսկէ ղոչը……………………………………………………….38
4. Պիրանան վարթ, մանիշակ թափվող ախճիգը……………..………42
5. Կոզնի տըղան…………………………………………………….50
6. Մարթ օտող ախճիգը……………………………………………….54
7. Դըողըտված առուտուրականը……………………………….. 59
8. Էրկու առուտուրական………………………………………….. 64
9. Աղվեսը…………………………………………………………….. 71
10. Ծուկնին ծեծաղը……………………………………………….. 76
11. Ծաղկած բախչան………………………………………….….. 80
12. Խոսող ծին……………………………………………………...... 97
13. Հաբեղ-Կարաբեղը………………………………………..….. 103
14. Լավոթունին տըեղը փիսոթուն …………………………..…… 110
15. Պուճուր հարսը………………………………………………….. 113
16. Իմաստուննին…………………………………………………..... 117
17. Վըերսկան Ավետիսը……………………………………..….. 118
18. Ալամ թաքավերը……………………………………………….... 128
19. Արմենը նան Զարմենը……………………………………………..139
20. Թըեվավեր ծին…………………………………………………….. 146
21. Ծուվին ծառը……………………………………………………….. 154
22. Դարվիշը……………………………………………………..….. 159
23. Տասներկու յըղոնեգյը……………………………………..….. 166
24. Դարվիշ թաքավերը……………………………………………….. 175
25. Կյեռթնուկ ախճիգյը……………………………………………….. 184
26. Գըմզըմ սարերը……………………………………………………….. 194
27. Կլոխն նան սըերտը……………………………………………….. 208
28. Օվչի Փիրումը…………………………………………………..... 213
29. Խոսկին օծը……………………………………………………….... 217
30. Կյիրին անումը……………………………………………………... 219

31. Ծո̏ւկնին կըլո̏խը........ 222
32. Իրեք կըլո̏խ........ 226
33. Ղարաբաղեն արաղը........ 230
34. Լո̏ւն նան մըեծակը........ 234
35. Կյող թաքավերը........ 237
36. Կընձմընձուկը........ 239
37. Չկամ հըրեվանը........ 243
38. Քյա̏լա̏գյբազնեն........ 249
39. Բաղարաքյը........ 253
40. Կյո̏ւքյո̏ւն շա̏վթա̏լը........ 256
41. Արչին տղան........ 257
42. Մաղար տըղեն բախտը........ 266
43. Քյա̏սիբ տըղան........ 274
44. Ա̏րա̏զը........ 279
45. Մա̏րդ նան նամա̏րդ ախպերքյը........ 283
46. Ըրածըտ առաչըտ կյա........ 286
47. Շա̏գյիրդ Մուխանը........ 289
48. Քոսակ ախպերը........ 294
49. Տվըրածեն տղան........ 296
50. Ախճիգյ թաքավերը........ 305
51. Մին կնգան մին տղա յա ինո̏ւմ........ 308
52. Քյինա̏ցող ետ չի եկող սարը........ 311
53. Ծո̏ւկնը փռնողին տըղան........ 317
54. Էշին անգուճին վըեսկին........ 324
55. Սուղումուն իմաստունը........ 326
56. Հու վեր մին պենի հետան ընգնի, կըհասնի........ 329
57. Մախորկեն յա̏շիգյը........ 333
58. Ղուգյա̏սը նան Սուքյա̏սը........ 338
59. Բախտավեր չոբանը........ 345
60. Դեվը........ 351
61. Ա̏ռո̏ւծեն տղան........ 353
62. Փիս դային........ 369
63. Թըեվավեր կընեգյը........ 372
64. Ղլեգյչին........ 378
65. Կախարթը........ 384
66. Աշկը ծակ մարթը........ 386

67. Հաթերքին հիլին … 395
68. Հաթերքին իրեք դերը … 397
69. Աժդահակը … 399
70. Հարուստը մըն էլ քյա̀սիբը … 410
71. Քո̀ւրը նան ախպերը … 414
72. Դանգլա կնեգյը … 416
73. Պարսեղը նան Արսենը … 418
74. Լա̀վ տընդեգյունը … 427
75. Պարի կնեգյը … 429
76. Դեր տըեռած մարթը … 433
77. Ղոնաղը … 435
78. Ճըկըտակյիրը … 437
79. Քաչալ ճոտը … 439
80. Էրկու ախպեր … 442
81. Թա̀զա̀ փըսած խըրխորցը հետե … 447
82. Իրեք հըրսանեքյ … 448
83. Թաքավերին պուճուր տըղան … 457
84. Թաքավերին պուճուր փըեսան … 461
85. Ճըկըտակյիրը սոտ ա … 463
86. Քառերեն բախտը … 465
87. Չոբանեն սերը … 467
88. Ջեյրանը … 471
89. Արչը նան ախճիգյը … 473
90. Պոըվուց լա̀վ ապրելը … 476
91. Էրկու գող ցորեն … 479
92. Հավը … 481
93. Թըռչկան հարսը … 482
94. Թաքավեր ծո̀ւկնը … 488
95. Փիս կնեգյը … 491
96. Աղվեսը նան փա̀լա̀նգյը … 494
97. Սառան կյամ ա՜… … 496
98. Մարթին տըեղը ո̀ւրա̀ն հոքյին տվող կնեգյը … 503
99. Փիս մարը … 506
100. Ասծատուրը նան Վարթին … 510
101. Կորած եզնը … 514
102. Թաքավերին ախճիգյը … 518

103. Այան ծըծըղես ա…………………………………………………… 522
104. Արչը……………………………………………………………… 525
105. Հոնձ ընուղնին……………………………………………….. 526
106. Երգինքա̀ն վեր ընզա̀ծ խանչալը……………………………… 527
107. Օխծը……………………………………………………………... 532
108. Թաքավերին ախճիգյը նան ո̀ւրա̀նց նո̀քյա̀րը……………...… 535

*Հավելված*

1. Գյանքին օրերը……………………………………………….. 538
2. Խըլեզնը ………………………………………………………… 539
3. Թաքավերը նան խելունք ախճիգյը……………………………… 541
4. Սերը……………………………………………………………… 544
5. Ծըլալիս աւթխերը……………………………………………… 546
6. Պըրկըփոխան կնեգյը………………………………………….. 546
7. Ջանավարը ……………………………………………………… 547
8. Օժավը…………………………………………………………… 548
9. Ըռուսեն տըղան………………………………………………… 549
10. Խելքի յըմ եկա՛լ……………………………………………….. 552
11. Սըերտը քար մրաքուրը……………………………….. 555
12. Մորը կոռնը…………………………………………………… 557
13. Առանց հորը նան մորը պաչած ախճիգյը…………………………… 560
14. Մա̀րջը ……………………………………………………….... 562
15. Կյո̀ւլին մորթեն…………………………………………….... 563
16. Ա̀րա̀զը………………………………………………………….. 564
17. Դերվիշը գյիդկան չար, ամմա կլո̀խը եկած ար…………………….. 565
18. Վըեսկի ջամը ………………………………………………….. 568
19. Ջա̀քյի ապերը………………………………………………….. 572
20. Ջա̀քյի ապուն մորուն նաղլը……………………………………….573
21. Մաքյի ապան…………………………………………………… 574
22. Բա̀զըյա̀ր թաքավերին պոզը………………………………….... 574
23. Չար պառավը…………………………………………………… 575
24. Տըղան հորը փեշակըն ա սըվերըմ…………………………………… 577
25. Սիրական պահող կնեգյը……………………………………….... 579
26. Աշկը ծակ խոխան ………………………………………...…. 580
27. Գյուվամիշ Կեվանը ……………………………………….…. 580
28. Աղվեսը նան ճղացպանը…………………………………………..582

29. Քաչալ ախպերը………………………………………………………... 585
30. Անբախտ ախճիգյը բախտավերվում ա………………………………588
31. Ա̀ռո̀ւծին նան կատվին հա̀քյա̀թը……………………………………591
32. Թաքավերեն կորած ախճիգյը ………………………………………592
33. Մին կյողու նաղլը ……………………………………………….... 598
34. Էշին բադա տալը…………………………………………………... 599
35. Սալղաթը……………………………………………………….... 600
36. Պրոփեսորեն քո̀ւրը ……………………………………………….. 602
37. Արչը նան մարթը…………………………………………………... 604
38. Դոլմա իփիլը……………………………………………………….. 605
39. Կյո̀ւլ տըեռած կընեգյը……………………………………………... 606
40. Աշըղը…………………………………………………………….. 607
41. Արչը……………………………………………………………… 608
42. Աշկավ տալը………………………………………………………. 608
43. Խորթ մարը………………………………………………………… 609
44. Թաքավերը նան վեզիրը……………………………………………. 610
45. Կըտակը…………………………………………………………... 611
46. Փըռթո̀ւշը…………………………………………………………… 611
47. Տափակ արտեն Մոսին………………………………………........ 612
48. Պըըըվալենջ………………………………………………………… 618

***Ծանոթագրություններ*** ……………………………..……………………….. 620
***Հավելված*** ………………………………………………………………….. 651
***Բառարան*** ……………………………………………………………..…. 662

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

## ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՏՈՐ 7(7)

*Աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ բ.գ.թ., դոցենտ,*
*ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Ա. Յու. Սարգսյանի*

*Համակարգչային*
*շարվածքը՝ Լիլյա Գրիգորյանի*
*Աննա Քոչարյանի*
*Հասմիկ Սուլեյմանյանի*
*Գայանե Մարգարյանի*

*Տեխնիկական*
*խմբագիր՝ Լիլյա Գրիգորյան*

Ծավալը՝ 46 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 150

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am